
ԼԵՎՈՆ ՇԱՀԽԱՏ

ԵՐԿԵՐԻ ԺԱՂՈՎԱԾՈՒ

V

ԳԻՐՔԸ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԲԱՐԵԲԱՐՆԵՐ
ԷԴՈՒԱՐԴ ԵՎ ՎԵՐԺԻՆ ՄՍԵՐԼՅԱՆՆԵՐԻ
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԻՆԸ ՀԱՏՈՐՈՎ

Ձ91.581

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

II
Ա 98297

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ
ՈՒՍՈՒՄ ՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ

ՀԱՅԿ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՀԻՄՆԱՐԿԱՅԻՆ ԴԱՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012

ՀՏԴ 37 (091)
ԳՄԴ 74 գ
Շ 301

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա
Ավ. Իսահակյան, Վ. Կիրակոսյան, Ս. Մարգարյան,
Ա. Մանուկյան, Ս. Սարինյան, Ե. Փամբուկյան

Հատորի խմբագիր՝ **Ս. Սարինյան**
Ընագիրը պատրաստեց և ծանոթագրեց **Ա. Մանուկյանը**
Առաջաբանը՝ **Գր. Շահինյանի**

Շանթ Լևոն
Շ 301 Երկերի ժողովածու/Լևոն Շանթ, խմբ. Ավ. Իսահակյան և ուրիշ. – Եր.: «Գիտություն» հրատ., 2012:
Հ. 5: Կրթությունը ընդհանրապես: Ուսում ու կրթություն դպրոցական/Խմբ.՝ Ս. Սարինյան.– 696 էջ:

ՀՏԴ 37 (091)
ԳՄԴ 74 գ

ISBN 978-5-8080-0871-7
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2012

ԼԵՒՈՆ ՇԱՆԹԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԵԱՑՔՆԵՐԸ

Լեւոն Շանթի մանկավարժութեան ծանօթանալու համար կարելի է վերլուծել իր երկերու վեցերորդ եւ եօթերորդ հատորները, քննական ակնարկ մը նետել իր հոգեբանական գրութիւններուն եւ հայերէնի դասագիրքերուն վրայ[1], ուսումնասիրել Հայ Ճեմարանի[2] կառոյցն ու պատմութիւնը:

Կարելի է նաեւ, եթէ մարդ յաճախած է ճեմարան եւ աշակերտած՝ Լեւոն Շանթին, անձնական տպաւորութիւններ, յիշատակներ ոգեկոչել եւ անոնցմով կենդանացնել տեսական վերլուծումները:

Ես բախտը ունեցած եմ չորս տարի աշակերտ եղած ըլլալու եւ երկու տարի ուսուցիչ ճեմարանի մէջ, երբ Շանթն էր ղեկավարը Հաստատութեան: Տպաւորութիւններս ու յիշատակներս կրնան նոյնքան առարկայական չըլլալ, որքան ադբիւրներու վրայ հիմնուած ուսումնասիրութիւնը, բայց կը կարծեմ, որ անոնք կը լրացնեն վերլուծումը եւ օգտակար կ'ըլլան մանկավարժ մարդը ճանչնալու տեսակէտէ:

---

[1] • *Լեւոն Շանթի երկերը, Կրթութիւնը ընդհանրապէս, վեցերորդ հատոր, Պէյրութ, 1951:*

• *Լեւոն Շանթի երկերը, Ուսում եւ կրթութիւն դպրոցական, եօթներորդ հատոր, Պէյրութ, 1952:*

• *Հոգեկան կարողութիւններու զարգացումը մինչեւ մարդ, Հրատ. Հայ Ճեմարանի Շրջ. միութեան, Պէյրութ, 1946:*

Սկզբունքով՝ Հոգեբանութեան այս եւ յաջորդ գրքոյկը պիտի կազմէին Լեւոն Շանթի երկերու 10-րդ եւ 11-րդ հատորները, բայց չեն տպուած այդ շարքին մէջ:

• *Այբբենարան*

• *Մանկական աշխարհ եւ Գրաւոր դասեր, չորսական հատոր:*

• *Հայրենի աշխարհ, չորս հատոր:*

• *Քերականութիւն արեւմտեան Հայերէնի, Հայերէնի բառակազմութիւնը եւ յուզական զէնքերը լեզուի:*

[2] *Ասիկա առաջին անունն է Համազգայինի Պէյրութի ճեմարանին: Յետագային ան վերակոչուած է նախ՝ Նշան Փալանճեան, Պէյրութի մէջ, ապա Մնձանքթոն եւ Հայկ Արսլանեան, Անթիլիասի:*

* * *

ՇԱՆԹԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ, իր ընդհանրութեան մէջ, հիմնական տարբերութիւն չունի իր ժամանակի առաջաւոր մանկավարժներու ըմբռնումներէն: Անոնց պէս ինք ալ կը հաւատայ ընդհանուր կրթութեան անհրաժեշտութեան, իրեն համար ալ մարմինի, միտքի եւ հոգիի – ինք կ'ըսէր «զգացումներու» – ներդաշնակ զարգացումը անհրաժեշտութիւն է, ինք ալ կը չեշտէ նախախնամական դերը կրթիչ անձերուն եւ անհրաժեշտութիւնը՝ անոնց գործակցութեան: Բայց Շանթ իւրայատուկ տեսակէտներ ունի եւ դուս անձնական մօտեցում՝ ընդհանուր այս համոզումներու գործադրութեան մէջ:

Ժ\Թ դարու գիտապաշտ սկզբունքներով սնած եւ զանոնք իւրացուցած՝ ան իր մանկավարժութիւնը ամբողջովին հիմնած է հոգեբանութեան վրայ, ինչպէս այս վերջինը՝ կազմախօսութեան: Հոգին, իրեն համար, յատիններու anima չէ, չունչը, այլ psyche՝ մարդ արարածի ուղիղի, ջիղերու եւ մկաններու գործունէութիւնը: Եւ մարդը ինքը կը դիտուի բնութեան տարրերու, բոյսերու եւ կենդանիներու չղթայի մը մէջ, կեանքի բնաշրջական ըմբռնումին համաձայն: Կրթութիւնը այս չղթայի մասերուն փոխուելու յարմարութիւնն է իրեն համար, «թաքուն ունակութիւններու կարողութեան վերածումը»: Երկաթին պողպատ դառնալը կրթութիւն է իր աչքին, ինչպէս մարդուն հանրահաշիւ սորվիլը: Քիչ մը պարզացնելով հարցերը՝ ան կ'ըսէր, թէ բոյսը քարէն կը զանազանուի աճելու կարողութեամբ, ինչպէս անասունը բոյսէն կը զանազանուի շարժումով եւ մարդը անասուններէն՝ բանականութեամբ:

Վարկաբեկիչ չէր գտներ այս ընդհանրացումը: Հակառակը: Մարդուն բացառիկ արժանիքը կը նկատէր կենդանական աշխարհին գլուխը կանգնած ըլլալը, իր ստեղծագործ խօսքով ու արհեստագիտութեամբ բնութեան տարրերու, բոյսերու եւ անասուններու մակարդակէն վեր հասած ըլլալը: Եւ անոր կրթութիւնը բարձրացում մը կը նկատէր, կատարելագործում մը.

Կրթուիլ կը նշանակէ քաղաքակրթուիլ, այսինքն հասնիլ իր չրջապատողներու կամ իր ժամանակի քաղաքակրթութեան աստիճանին[1]:

[1] *Լեւոն Շանթի երկերը, Ջ հատոր, էջ 16:*

Այս պատճառով ալ, շատ բարձր կը դնահատէր մանկավարժական գործունէութիւնը եւ անոր նուիրուող անձերը.

Մեծ պաշտօնները մեծ պարտաւորութիւններ կը դնեն մարդու վրայ, եւ մարդ պատրաստելը գուցէ ամենէն բարձր պաշտօնն է մարդու համար[1]:

ՇԱՆԹԵԱՆ ԴՊՐՈՑԻ նկարագրութիւնը կը գտնենք իր երկերու եօթերորդ հատորին մէջ: Վեցերորդին մէջ տեսականօրէն ուսումնասիրելէ ետք կրթութեան էութիւնը, բաժանումները եւ տեսակները[2], Շանթ է հատորին մէջ[3] կը ներկայացնէ դպրոցի իր ըմբռնումը՝ արտաքին ու ներքին կառոյցով, բաժանումներով, մթնոլորտով, դասանիւթերու բովանդակութեամբ ու դասաւանդումի կերպերով: Այսպէս կը ստեղծուի տեսական եւ գործնական ամբողջութիւն մը, որ ոչ միայն լրիւ գաղափար կու տայ Շանթի մանկավարժութեան մասին, այլ եւ կրնայ իբրեւ կենդանի նմուշ ծառայել տեսական ուսուցումի եւ դպրոցական գործելակերպի:

Այս դպրոցը ամբողջական երկրորդական վարժարան է, բայց ուրոյն բաժանումներով: Շանթ սովորական 10-ամեայ կամ 12-ամեայ հաստատութեան տեղ կ'առաջադրէ 11-ամեայ վարժարան մը երեք բաժիններով. տարրական նախակրթարան, 4 տարի՝ 7-էն 11 տարեկան մանուկներու համար, բարձր նախակրթարան, դարձեալ 4 տարի՝ 11-էն 15 տարեկաններու համար եւ 3 լսարան՝ 15-էն 18 տարեկաններու համար: Այս լսարանները բնականօրէն բազմանդամ չեն ըլլար, կը մտածէ, եւ հաւաքական որոշ դասեր կը նախատեսէ անոնց համար՝ նախահամալսարանական մօտեցումով:

Միասնական դասերը նուազ ծախս կ'ենթադրեն անշուշտ, բայց Շանթի խնայողական նպատակներով չէ, որ կ'ուզէ հաստատել

---

[1] *Լեւտն Շանթի երկերը, Զ հատոր, էջ 247:*

[2] *Կրթութիւնը եւ իր բնական բաժանումները, անվար կրթութիւն, ղեկավար կրթութիւն, հոգեկան կարողութիւններու զարգացման ղեկավարութիւնը, դաստիարակութիւն, ուսում, ինքնակրթութիւն:*

[3] *Դպրոցին արտաքին կազմը, ներքին կեանք, ոգի եւ դաստիարակութիւն, դպրոցական աշխատանքին կապուած ընդհանուր հարցեր, դպրոցական չորս շրջանները եւ ուսուցման նիւթերը, գիտութիւններու ուսուցածը, լեզուներու աւանդածը, գեղարուեստներու մշակումը, խաղ ու մարզանք:*

այս դրութիւնը, այլ զուտ մանկավարժական մտահոգութեամբ: Նոյն մտահոգութեամբ է, որ ան կ'ընդդիմանայ բազմամարդ դասարաններու գոյութեան: Իրեն համար դասարանի մը աշակերտներուն իտէալ թիւը 22 էր: 24-ը առաւելագոյնն էր, որուն կը յօժարէր: Ուսուցիչը, կը մտածէր, պէտք է ամբողջ դասարանով զբաղի եւ եթէ աշակերտներու թիւը անցնի ընդունելի այս սեմը, ան չի կրնար իր պարտականութիւնը լաւ ու լրիւ կատարել:

Միջադէպ մը, որուն պատահաբար ներկայ գտնուած եմ, կը ցուցնէ, թէ Շանթ որքան ամրօրէն կապուած էր այս սկզբունքին:

1951-ի վերամուտին ինք չէր կրցած անձամբ զբաղիլ ճեմարանի վերամուտով: Անկողինին գամուած՝ իր տունէն, որ ճեմարանին դիմացն էր, կը հետեւարէր դպրոցի գործերը: Աւագ ուսուցիչ Գառնիկ Բանեանին պարտականութիւնն էր գործադրել իր հրահանգները: Ամէն օր, դասերէն ետք, ան կը հանդիպէր Շանթին, կը զեկուցէր կատարուած աշխատանքին մասին եւ թելադրանքներ կը ստանար կատարուելիքին առնչութեամբ:

Ես ալ շաբաթը երեք-չորս օր կը հանդիպէի Շանթին՝ ընթերցում կատարելու համար: Այդ օրերուն ան Նարեկ մտիկ ընել կ'ուզէր եւ սովորականէն բոլորովին տարբեր մեկնաբանութիւն կու տար գիրքին՝ զայն նկատելով ըմբոստ մարդու մը խօսքը գինք վայելքներէ զրկել ուզող Աստուծոյ:

Օր մը, երբ միասին էինք Շանթի սենեակին մէջ, Բանեանը զեկուցեց օրուան աշխատանքներուն մասին: Շանթ բարկացաւ յանկարծ եւ ձայնը բարձրացուց անսովոր կերպով: Տարիներ ամբողջ աշակերտը եղած էի եւ կրտսեր գործակիցը, անգա՛մ մը նոյնիսկ վկայ չէի եղած իր բարկութեան: Եւ ահա բարեկիրթ ու հանդարտաբարոյ Շանթը ձայնը կը բարձրացնէր, կը պոռար.

– Քանի՛ անգամ ըսած եմ քեզի, որ դասարանի մը աշակերտներուն թիւը պէտք չէ 24-ը անցնի: Դուն ինչպէ՞ս աւելին ընդունած ես այդ դասարանին մէջ:

Անշուշտ, հիւանդութիւնն ալ կրնար պատճառ եղած ըլլալ այս բռնկումին, բայց կասկած չունիմ, որ մանկավարժական սկզբունքն էր մանաւանդ անոր տոն տուողը:

Շանթի դպրոցական յուշգքին մէջ մանկապարտէզը կու գայ լիշուած երեք բաժանումներէն առաջ եւ կ'ունենայ 2 դասարան՝ 5

եւ 6 տարեկան երեխաներու համար: Յիսունական թուականներուն, երբ ճեմարանը ունեցած էր վերջապէս իր մանկապարտէզը, կը թուի թէ Շանթ վերատեսութեան ենթարկած էր մանկապարտէզի իր պատկերացումը, քանզի երկերու է հատորին մէջ յաճախ կը խօսի մանկապարտէզի 3 դասարաններուն մասին:

Մանկապարտէզի բացումէն առաջ, ճեմարանը վարժոց մը ունէր, որ մէկ տարուան մէջ 6 տարեկան երեխաները կը պատրաստէր տարրական նախակրթարանի մթնոլորտին ու դասերուն:

Առօրեայ խօսակցութեան մէջ «տարրական նախակրթարան» չէինք ըսեր արդէն, այլ «պատրաստական կարգեր»: Ջորրորդէն ետք համրանքը կը վերսկսէր 1-էն եւ կը հասնէր 8-ի: Բուն «դասարան»ներն էին ասոնք:

Կասկած չունիմ, որ դպրոցի այս պատկերացումը եւ անոր կիրարկումը ճեմարանի մէջ Շանթի յղացումը եւ իրագործումն էին: Տնօրէնի պարտականութիւններուն, պատրաստուելիք մատեաններուն, դպրոցի պատասխանատուներուն, ուսուցիչներու եւ աշակերտներու հետ յարաբերութիւններուն վերաբերող մանրամասնութիւնները կը համապատասխանեն մանկավարժութեան դասերու ընթացքին մեզի սորվեցուցածներուն եւ վեցերորդ ու եօթերորդ հատորներու տարրերուն: Նիկոլ Աղբալեանը, որ տնօրէն խորհուրդի անդամ էր, համաձայն էր անշուշտ Շանթին, բայց որդեգրուած դրութեան համահեղինակը չէր:

Ճեմարանի պատասխանատու մարմինը Համազգային ընկերակցութեան Կեդրոնական Վարչութիւնն էր, որուն նստավայրը Գահիրէն էր: Երանգամ տնօրէն խորհուրդ մը Պէյրութի մէջ կը վարէր աշխատանքները, բայց Շանթը, իբրեւ գործադիր տնօրէն, կը զբաղէր բոլոր գործերով ու հերթական տեղեկագիրներ կը ղրկէր Կեդրոնական Վարչութեան նախագահ Համօ Օհանջանեանին: Այդ տեղեկագիրները մանրամասն ժամանակագրութիւնը կը ներկայացնեն Հայ ճեմարանի առաջին քսանամեակին:

Շանթեան դպրոցը աշխարհիկ է եւ երկսեռ: Կրկնակ այս ընտրութիւնը հիմնուած է յստակ սկզբունքներու վրայ, որոնք չատ ալ ըմբռնելի չէին երեսունական թուականներուն աւանդապահ հայութեան համար: Ինչպէ՛ս կարելի էր երեւակայել, աշխարհի առաջին քրիստոնեայ ազգին դպրոցը կրօնական կրթութիւն չտար

եւ արբունքի հասած տղաք եւ աղջիկներ միասին խմբէր խառն դասարաններու մէջ...

Շանթի տեսակէտը չատ պարզ էր:

Ան կը հաւատար, որ կրօնը խիղճի հարց է եւ անոր ուսուցումը ընտանիքին եւ կրօնաւորներուն գործն է, ոչ դպրոցին: Այս վերջինը կրնայ ազատ յետմիջօրէ մը նախատեսել դպրոցէն դուրս տրուելիք կրօնական կրթութեան համար, կրօնի աւանդումին տեղ ալ մանրամասն անդրադառնալ Հայաստանեայց եկեղեցիի ունեցած բախտորոշ դերակատարութեան մեր պատմութեան մէջ, մանաւանդ երբ, անկախութեան կորուստով, թագաւոր ու նախարար կորսնցուցած են իրենց վճռորոշ դերը եւ կրօնականները առանձնած են առաջնորդի պարտականութիւններ:

Երկսեռ դրութեան մասին ալ մէկ բացատրութիւն ունէր, ընտանիքը եւ ընկերութիւնը իրենք երկսեռ են, պատճառ չկայ արուեստական պատուարներ քաշելու աղջիկներու եւ տղաներու միջեւ՝ արգիլուած պտուղի հոգեբանութիւն ստեղծելով ու բարդոյթներու առաջացումին նպաստելով: Շանթ միշտ առաջ էր իր ժամանակէն: Երկսեռ դպրոցի սկզբունքին ալ պարագային: Իրմէ եւս ընթացիկ դարձան արդէն իր տեսակէտները, կրօնականներու կողմէ ղեկավարուած դպրոցնե՛րն իսկ երկսեռ դարձան:

ՄԱՐՄԻՆԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ առաջին տեղը կը գրաւէ մարդու պատրաստութեան եռաբաժին գործընթացին մէջ:

Հոս յատկապէս ուշադրութիւն կը դրաւեն մանրամասնութիւննները, որոնք առողջապահութեան կը վերաբերին եւ մարմնակրթանքի զանազան ձեւերու: Իր մանկավարժութեան ծանօթանալէ առաջ, կարելի է կարծել, թէ Շանթ ուսումին վրայ սիւրի ծանրանայ մանաւանդ ու գեղարուեստական կրթութեան եւ ընդհանուր խօսքը սիւրի ըսէ միայն մկաններու կրթութեան եւ մորթի առողջապահութեան մասին: Այդպէս չէ սակայն: Ան բարեխիղճ կերպով կ'անդրադառնայ առողջապահութեան կանոններու, մկաններու կրթութեան զանազան ձեւերու եւ անձնական համոզումի չեչտով ու յատակ բանաձեւումով կը ներկայացնէ իր կարծիքը անոնց մասին: Կը մտնէ նոյնիսկ մանրամասնութիւններու մէջ, որոնք կը զանցեն դպրոցական կեանքի նեղ պայմանները եւ առողջապահական

ընդհանուր թելադրանքի ձեւ կ'առնեն. այս է պարագան, օրինակ, երբ կը խօսի յաճախակի լոգանքի եւ մարմինը չփել-սրբելու անհրաժեշտութեան, կամ ննջարանի քովի սենեակին պատուհանը գիշերը բաց պահելու մասին: Իսկ դպրոցական մարզանքի մասին խօսած ատեն նկատի կ'ունենայ թէ՛ օրուան յարմար պահը եւ թէ՛ ժամանակ խնայելու անհրաժեշտութիւնը: Այս պատճառով ալ կը թելադրէ նախակրթարանի առաջին կարգերուն մէջ քանի մը դասարան միացնել եւ «չաբաթական երեք անգամ քսանական վայրկեան առաւօտները դասերէն առաջ օրընդմէջ»[1] քալուածքի, կեցուածքի եւ համակարգուած շարժումներու փորձեր կատարել, բայց կ'աւելցնէ նաեւ, թէ նախակրթարանի աւելի բարձր դասարաններուն համար լրիւ պահ պէտք է յատկացնել մարզանքին եւ յատուկ ժամանակ՝ մարզական խաղերուն:

Յատկանշական են մանաւանդ այս բաժինի սեռային կրթութեան յատկացուած էջերը: Շանթ չատ լաւ գիտէ, որ արեւելեան բարքերով յատկանշուող մեր կենցաղին մէջ, մայրերն ու հայրերը յաճախ կ'ամչնան ու կը խուսափին իրենց զաւակներու սեռային կրթութեամբ զբաղելէ եւ այդ կարեւոր պարտականութիւնը կը ձգեն պատահականութեան: Պատահականութիւնը, այս պարագային, չատ անգամ ընկերի մը կամ ընկերուհիի մը կերպարանքով կը ներկայանայ: Ան կիսատ-պռատ եւ արգիլուած պտուղի յատուկ գայթակղիչ չեշտերով կը խօսի մարզի մը մասին, որ յստակ ու ճշգրիտ վերլուծումի եւ բացատրութիւններու կը կարօտի: Ըստ Շանթի՝ այս պարտականութիւնը մասնագէտ բժիշկները պէտք է կատարեն, քանի մը դասախօսութիւն տալով դպրոցի աղջիկներուն եւ տղոց առանձնապէս: Ան կը չեշտէ նաեւ կարեւորութիւնը երկսեռ վարժարաններու մէջ կին հսկիչի մը ներկայութեան: Այս վերջինին պարտականութիւնը պէտք է ըլլայ յատկապէս հետաքրքրուիլ աղջիկներու սեռային առողջապահութեամբ եւ հարկ եղած խորհուրդը եւ օժանդակութիւնը տալ անոնց:

ՄԻՏՔԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ կամ ուսումի մարզին մէջ, Շանթ կը բախի հայ աշակերտի ծանրաբեռնուումի հարցին: Ան կ'ըսէր, թէ

[1] Լեւոն Շանթի երկերը, Է հատոր, էջ 295:

Ամերիկայի մէջ, օրինակ, աշակերտը պէտք չունի մէկէ աւելի լեզուներ եւ համապատասխան այլ դիտելիքներ իւրացնելու, քանի իր լեզուն, որ միջազգային է նաեւ, բաւարար է իրեն: Մերձաւոր Արեւելքի աշակերտներն ալ կը գոհանան իրենց մայրենին եւ միջազգային լեզու մը սորվելով, մինչ հայ աշակերտը պէտք է սորվի մայրենի լեզուն, ծննդավայրինը եւ միջազգային մէկ կամ երկու լեզու:

Ծիշդ է, պատմական դէպքերու բերումով հայը ստիպուած եղած է եւ յաջողած՝ աւելի խելացի եւ աշխատասէր ըլլալու, քան իր շրջապատի մարդիկը, բայց երբորդ կամ չորրորդ լեզուն, ինչպէս հայ աշակերտին յատուկ եղող յաւելեալ դասերը, բնաւ ըլլալէ չեն դադրիր իրեն համար:

Շաբթի ցրջօրէն կը մտածէր դպրոցի մը մասին, որուն ընդհանուր դասերը կանգ առնէին անմիջապէս կէսօրէն առք, որպէսզի աշակերտները հնարաւորութիւն ունենային ճաշէն առք իրենց նախասիրութիւններն ու հակումները զարգացնելու, դարձեալ դպրոցին մէջ, բայց արդէն ոչ դասարանային դրութեամբ եւ աւելի ազատ կազմակերպութեամբ[1]: Նման ծրագիր իրագործելու անկարելիութեան առջեւ, ան չանցած էր գոնէ նուազագոյնի իջեցնել դպրոցի աշխատանքի ժամերը՝ հասարակաց պահեր հաստատելով, դասի տեւողութեան հաճելի եւ դիւրին ձեւեր թելադրելով, աշակերտները մղելով անձնական մասնակցութեամբ կրճատելու դիտելիքներու իւրացման եւ խորացման ժամանակը՝ խոյզերու եւ զեկուցումներու համրով: Ի վերջոյ Համակերպած էր, սակայն, շաբաթական 36 պահի դոյութեան, երբ երկիրի պետական եւ մասնաւոր դպրոցներու պահերու թիւը առաւելագոյնը 32-ի կը հասնէր:

Լեւոն Շանթ անհրաժեշտ կը նկատէր մայրենի լեզուի կողքին ուսուցանել նաեւ հայ գրականութիւն, հայոց պատմութիւն, գրաբարի նախատարրեր: Լսարաններու մէջ ատոնց վրայ կ'աւելնային տակաւին հոգեբանութիւնը եւ մանկավարժութիւնը: Այս ամէնը պէտք էր սեղմել, միւս դասանիւթերուն հետ, շաբաթական չորս լման օրի եւ երկու կէս օրի մէջ:

---

[1] Ժամանակ մը նոյնիսկ փորձած էր կիրարկել այս դրութիւնը ճեմարանի մէջ եւ հարկադրուած էր շուտով հրաժարիլ անկէ:

Ան յատուկ կարեւորութիւն կ'ընծայէր գեղարուեստներու, յատկապէս նկարչութեան եւ երաժշտութեան, լուրջ ուսուցումին ղալրոցին մէջ:

Ընդհանուր կրթութեան պարտաւորութիւններուն մէջն է նաեւ գեղարուեստական ստեղծագործութիւններու ծանօթացումը եւ նոր հասնող սերունդներու հոգիին մէջ հաստատել այդ մուերիմ ծանօթութիւնը[1]:

Ասոր համար չէր գոհանար ցած դասարաններու մէջ տրուած ոչ-մասնագիտական դասերով, կ'ուզէր որ բարձր դասարաններուն մէջ ալ նկարչութիւն ու երաժշտութիւն ուսուցուին, եւ մասնագիտօրէն, աշակերտները երգընթերցում սորվին ու գործիք մը նուագեն ըստ իրենց նախասիրութեան: Կը հաւատար, որ կրթութիւնը «հաց ուտելու» չի ծառայեր, այլ մարդ դառնալու, եւ թէ լիարժէք մարդը պէտք է հասած ըլլայ արդի ընկերութեան կողմէ նուաճուած գիտութիւններու եւ գեղարուեստներու բարձրութեան: Եթէ իր պարտականութիւնն է ընկերութեան պահանջածը գիտնալը, իր իրաւունքն է նաեւ անհատական վայելք ստանալը գեղարուեստական գործերէն: Շանթ «Հանրային սուրբ պարտականութիւն» կը նկատէր ղալրոցին կողմէ ընձեռումը նման հնարաւորութեան:

Անխուսափելի ծանրաբեռնումի այս պայմաններուն մէջ, Լեւոն Շանթ կ'ուզէր որ յարգուին աշակերտներու հոգեբանական հնարաւորութիւնները: Օգուտ չունի, կը մտածէր, մանկապարտէզէն նոր փոխանցուած աշակերտները մէկ անգամէն մխրճելը ծանր աշխատանքի եւ անզիջող կարգապահութեան մթնոլորտի մը մէջ, ինչպէս անխմաստ է արբունքի սեմը անցած աշակերտը մասնակից չդարձնելը իր իսկ կրթութեան ու դաստիարակութեան գործընթացին: Ու կը թելադրէր տարրական նախակրթարանի առաջին դասարաններուն մէջ պահել մանկապարտէզի աւելի ազատ մթնոլորտը եւ բարձր նախակրթարանի վերին կարգերուն մէջ տեղ տալ աշակերտական խոյզերու, զեկուցումներու, կարծիքի փոխանակութեան հանդիպումներու:

ՀՈԳԻԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ, դաստիարակութիւնը Շանթի հայեացքներուն ամենէն յատկանշական երեսը կը կազմէ հաւանօրէն:

[1] Լեւոն Շանթի երկերը, Է հատոր. էջ 149:

Համազգայինը ստեղծուած էր եւ Ճեմարանը բացուած՝ նոր մտաւորականութեան մը պատրաստութեան նպաստելու նպատակով: Արեւմտահայ մտաւորականութեան ապանդէն եւ Հայութեան մէկ հատուածի մնացորդին ամբողջ աշխարհի մէջ սփռումէն ետք, անհրաժեշտ էր նոր տարրեր պատրաստել սփիւռքահայ գանգուածներու մշակութային սպասին համար: Անոնք պէտք է լաւ մարդիկ ու լաւ հայեր ըլլային, մտային ու հոգեկան ամուր արժանիքներու տէր:

Շանթ կ'ուզէր, որ այս նոր մտաւորականը ըլլայ մարդկային բարձր իդէալներով տոգորուած անձ մը, որ նուիրումով կ'աշխատի մարդկութեան եւ անոր ստեղծած քաղաքակրթութեան առաջընթացին համար: Կը ցանկար նաեւ, որ ան ըլլայ լաւ Հայ՝ ազգային դատին նուիրուած եւ իր սեփական հաւաքականութեան բարձրացումին համար աշխատող: Չէր փորձեր կաղապարուած քարոզներով ուղղափառացումի գործ կատարել, միշտ կը ձգտէր սեփական մտածումի եւ դատումի սէրը արթնցնել աշակերտներուն մէջ, ազատ ընտրութեան կը հրաւիրէր զանոնք:

Յաճախ «մարդակերտում»ի մասին կը խօսինք եւ «հայակերտում»ի՝ ակնարկելով այս կամ այն կրթական օճախի կամ մանկավարժի գործունէութեան: Լեւոն Շանթ պատրանքը չունէր կերտելու, ոչինչէն բան մը ստեղծելու, կը մտածէր, որ իր դերը, բոլոր մանկավարժներուն դերը, նպաստել է միայն աշակերտին մէջ մարդու կերտումին՝ աշակերտին իսկ մասնակցութեամբ եւ ընտանիքին օժանդակութեամբ:

Ան կը հաւատար ուսուցիչի եւ աշակերտի սերտ գործակցութեան՝ օրէնքի եւ կանոնի սահմաններուն մէջ: Աշակերտը, իրեն համար, մարդ էր եւ ընկեր, որուն լինելութեան իր գործօն մասնակցութիւնը պիտի բերէր ինք:

Ղեկավար կրթութիւնը հիմնուած է երկու կամքերու գործակցութեան վրայ[1]:

Որպէսզի կրթող եւ կրթուող այս կամքերը չընդհարին եւ ներդաշնակօրէն գործակցին, ղեկավարողը յստակ օրէնքներ պիտի մշակէ, որ ամենէն առաջ իւնք պիտի յարգէ: Իսկ ղեկավարուողը

---

[1] *Լեւոն Շանթի երկերը, Ջ հատոր, էջ 170:*

դիտակցօրէն պիտի ենթարկուի անոնց՝ վստահ ըլլալով, որ իր օգուտին համար ղրուած են անոնք:

Ղեկավարը հիմնական երկու միջոց ունի ազդելու. խօսքը եւ օրինակը: Շանթ աւելի կ'ազդէր անձնական օրինակով, քան ուղղակի միջամտութեամբ: Ամէն բանի մասին կարծիք չէր յայտներ, ամէն վայրկեան չէր միջամտեր մեր կեանքին, բայց գիտէինք, որ հոն է, տեսչարանի մէնութեան մէջ, եւ հեռուէն կը հետեւի մեր արարքներուն: Ու պղատոնական աստուածի մը պէս քաշողութիւն կը բանեցնէր մեր հոգիներուն վրայ, իր օրինակովը կը հմայէր ու կ'ոգեւորեր մեզ:

Տարին երկու անգամ, սակայն, կիսամեայ եւ ամավերջի քննութիւններէն ետք, դասարաններու եւ լսարաններու աշակերտներս բացառիկ առիթը կ'ունենայինք քանի մը վայրկեան գլուխ-գլուխի առանձին ըլլալու իրեն հետ: Կարգով կը մտնէինք տեսչարան եւ իր ձեռքէն կը ստանայինք մեր վիճակացոյցները:

Շանթ նստած կ'ըլլար գրասեղանին ետեւը, տեսչարանի ձախ պատին տակ: Կը մտնէինք, կը դառնայինք իր կողմը եւ սրտատրոփ կը սպասէինք ըսելիքին: Գոհունակութիւն յայտնէր թէ դիտողութիւն ընէր՝ կը խօսէր միեւնոյն մեղմ եւ յստակ ձայնով: Կ'առնէր վիճակացոյցը, վերէն վար ուշադրութեամբ կը քննէր, յետոյ իր վճիռը կ'արձակէր ըստ տեսածին.

– Ապրիս, տղաս (կամ աղջիկս), կ'ըսէր ու լայն ժպիտով մը վիճակացոյցը կ'երկարէր մեզի:

Կամ ալ մատնացոյց կ'ընէր տակար նիշ մը, նիշեր, պատճառը կը հարցնէր մեր տկարութեան եւ խորհուրդ կու տար աւելի ուշադիր աշխատելու տուեալ նիւթին, նիւթերուն համար:

Ինչ ալ ըլլար մեր ապահոված արդիւնքը, գոհունակութեամբ դուրս կու գայինք տեսչարանէն՝ մեր կեանքին բացառիկ պահերէն մէկը ապրած ըլլալու դիտակցութեամբ:

Ուրիշ պարագաներու, նորէն իր ներկայութեամբ կը տպաւորէր մեզ, բայց առանց խօսելու, լուռ դիտողութեամբ կարգի հրաւիրելով մեզ:

Քառասունական թուականներու կէսերուն պարոն Այյաս անունով ուսուցիչ մը ունէինք Ճեմարանի մէջ: Պետութեան կողմէ մեզի տրամադրուած արաբերէնի դասատու էր: Վստահաբար արա-

բերէն գիտէր, բայց սորվեցնելու արուեստէն զուրկ էր բոլորովին: Հեղինակութիւն ալ չունէր: Մեզմէ անմիջապէս վեր դասարանին մէջ կատակասէր աշակերտներ կային, որոնք ամէն առիթէ կ'օգտուէին խաղալու, դաս չընելու համար: Արաբերէնի պահը վերածած էին խաղի պահի: Յարութիւն Գազանճեանը կը պատմէր.

«– Երբ անկարգութիւնը շատ մեծ ըլլար եւ աղմուկ բարձրանար, Շանթը զուրս կ'ելլէր եւ լուռ կը ճեմէր մեր պատուհանի երկայնքին, առանց մեր կողմը նայելու: Յանկարծ կը լսուէր ահազանգ հնչեցնողի մը ձայնը.

«– Տղաք, պարոն Շանթը, պարոն Շանթը...

«Ահազանգողը առաջինը կ'ըլլար խելօք մը նստողը եւ բոլորս կրկնած կապիկներու պէս լուռ կ'անցնէինք մեր տեղերը»:

Պարզ է, որ նման դէպքեր յաճախ չէին պատահեր եւ բնորոշ չէին անօրէն-ուսուցիչ, անօրէն-աշակերտ յարաբերութիւններուն: Անոնք հիմնուած էին մէկ կողմէ հովանաւոր ազնուութեան, միւս կողմէ՝ յարգալիր վերաբերումի վրայ: Անկեղծ խօսքը, պարկեշտ կեցուածքը կը յատկանշէին այս յարաբերութիւնները: Տնօրէնը կը պատահէր իրեն նմանակայ անձերուն, անոնք կ'ապահինէին տնօրէնին: Թաքնամտութիւնը, կեղծ յարգանքը տեղ չունէին այս յարաբերութեան մէջ: Շանթ պատահական սխալներն ալ կը սրբագրէր մեղմօրէն, ներողամիտ ժպիտով, սխալողին չուարտումը կամ նուաստացումը կանխելու բացայայտ ձգտումով:

Չեմ մոռնար իմ ուսուցիչի առաջին մասնակցութիւնս մանկավարժական ժողովին: Աշակերտներու վարքուբարքին մասին կը խօսէինք եւ Գառնիկ Բանեանը տոմարին մէջ կ'արձանագրէր ամենէն յատկանշական եւ միաձայնութեան արժանացած նկատողութիւնները: Շանթը ինձմէ քանի մը աթոռ ան դին նստած էր եւ լուռ կը հետեւէր ժողովի ընթացքին:

Կարդը հկաւ աշակերտի մը, որ նախաձեռնութեան ոգի, ինքնուրոյն անհատականութիւն չունէր եւ կը հետեւէր ընկերներուն: Այս ըսել ուզեցի, բայց սխալ ձեւակերպեցի կարծիքս.

– Հետեւողական է՝ ըսի, երբ կ'ուզէի ըսել, թէ հետեւող է:

Մարդ չնկատեց ըսածս եւ արդէն ուրիշ կերպ ձեւակերպուեցաւ ընդհանուր կարծիքը: Բայց Շանթի ուշադրութենէն չէր վրիպած սխալս: Ինծի դարձաւ ու ցած ձայնով հարցուց.

– *Ինչպէ՞ս է այդ տղան...*

– *Հետեւող, ըսի:*

Ժպտեցաւ, ժպտեցայ ես ալ: Հասկցած էի սխալս, պէտք չկար յաւելեալ պնդումի:

Շանթ կը ձգտէր ինքնավստահ եւ նախաձեռնող անհատի կերպարը դարձնել ճեմարանականին իտէալը: Կ'ուզէր, որ համարձակ ըլլայինք, բայց ոչ սանձարձակ, հպարտօրէն վստահէինք մեր բարոյական արժէքներուն եւ ձեռք ձգուած գիտելիքներուն: Ամենէն աւելի «հպարտ» բառն է, որ կը գործածէր իր բանաւոր ու գրաւոր խօսքին մէջ, բայց ան ո՛չ գոռոզութիւն կը նշանակէր, ո՛չ ալ՝ ամբարտաւանութիւն: Իր ճակատագիրին տէր կանգնիլ ուզող հայ մարդը կը յատկանշէր, աղէտէն ու անկախութեան կորուստէն ետք հաւաքական նոր լինելութեան մը կերտումին լծուած գիտակից եւ պատասխանատու անհատը:

Շանթ իւրայատուկ պատկերացում մը ունէր դպրոցի մէջ օգտագործուելիք բարոյական զէնքերու մասին: Կը հաւատար բանաւոր ու չափաւոր վարձատրութեան չինիչ դերին, բայց կը մերժէր խստութեան եւ պատիժներու համակարգուած օգտագործումը:

Աշակերտները գնահատող պատուոյ տախտակ, կրծքանշան եւ վարքի նիշ չկար ճեմարանի մէջ: Ցուցադիր ձեւերը առհասարակ չնորհ չէին գտներ Շանթի աչքին: Հովանաւոր ժպիտ մը, սրտանց ըսուած «ապրիս» մը աւելի ազդու կը նկատէր ան, քան բոլորին առջեւ յայտարարուած առաջնութիւն մը կամ տրուած մրցանակ մը: Ամէն աշակերտ գիտէր արդէն ով ինչի մէջ լաւ է եւ մտերմօրէն կը դիմէր անոր օգնութեան, երբ հարկը ծագէր: Մրցակցութիւն, նախանձ գոյութիւն չունէր փաստօրէն, կար փոխադարձ օժանդակութիւն, միասին աշխատելու տրամադրութիւն, ընկերական մթնոլորտ:

Ցուցադիր վարձատրութեան պէս, խիստ պատիժն ալ չնորհ չէր գտներ Շանթի աչքին: Կը մտածէր, որ ան կը դառնացնէ ենթականը, կը չարացնէ, կը ցցէ պատժողին դէմ: Որոշ պարագաներու, անխուսափելի կը գտնէր պատիժի տնօրինումը, սակայն կը պահանջէր այն ատեն, որ բնական հետեւանքը ըլլար ան գործուած սխալին եւ չնուաստացնէր պատժուողը: Տգեղ խօսք

AE 98297

ըսող աշակերտը ներողութիւն պէտք է խնդրէր, ուրիշին գիրքը կորնչցնողը նոր գիրք մը պէտք է տար անոր, դասը տունը չսորվողը դպրոցը զբօսանքի ժամանակ պէտք է սորվէր գայն: Անշուշտ, կրնային աւելի լուրջ յանցանքներ գործուիլ, անոնց ալ պատիժը պէտք է բնական հետեւանքը ըլլար յանցանքին, մինչեւ, ծայրայեղ պարագաներու, դպրոցէն վտարում: Բայց միշտ պէտք է յարգուէր յանցագործին արժանապատուութիւնը, մինչեւ իսկ նիւթական պատիժ չկրէր ան, բայց զգար յանցաւոր ըլլալը:

Անդրանիկ Ծառուկեանը, որ ճեմարանի առաջին աշակերտներէն եղած է, օր մը հետեւեալը պատմեց ինծի.

Առաջին տարիներն են, Շանթն ու Ադբալեանը իրենց մէջ բաժնած են դասերը եւ ընտանեկան մթնոլորտի մէջ կը զբաղին աշակերտներու ուսումով ու դաստիարակութեամբ: Ծառուկեանը բանաստեղծութիւններ կը գրէ արդէն ու կը տպէ «Ա. Ծառ» ստորագրութեամբ:

Օր մը, Հրանդ Մուրատեանը ծառեր կը գծէ դրատախտակին վրայ եւ տակը կը գրէ՝ Ա.ծառ, Բ.ծառ, Գ.ծառ... Ծառուկեանը կը բարկանայ, կը սպառնայ.

– Կը բաւէ, Հրանդ, կը զարնե՛մ:

Հրանդը կը շարունակէ. Դ. ծառ, Ե. ծառ... Այն ատեն Ծառուկեանը չառաչուն ապտակ մը կը փակցնէ Հրանդի ճերմակ երեսին եւ այս վերջինը չունչը կ'առնէ Շանթին քով:

Լեւոն Շանթ հանդարտօրէն կը հարցնէ Ծառուկեանին.

– Անդրանիկ, ինչո՞ւ զարկիր:

– Զզարկի, պարոն, կը պատասխանէ Ծառուկեան:

Շանթ կը դառնայ Մուրատեանին ու նոյն հանդարտութեամբ կ'ըսէ.

– Իրաւ կրնամ ընել, տղաս, ապտակին կարմիրը կը տեսնեմ երեսիդ, բայց Անդրանիկը կ'ըսէ, թէ չէ զարկած: Պէտք է հաւատա՛մ իրեն:

Դէպքէն կէս դար եւոք, Ծառուկեանը կը շարունակէր մտածել, որ իսկական պատիժ էին այդ խօսքերը:

ԴՊՐՈՑԻ ՄԹՆՈԼՈՐՏԸ առաջնային կարեւորութիւն կը ներկայացնէր Շանթի աչքին: Հաւաքական անհատականութեան պէս

բան մըն էր ան, որ տնօրէնը, ուսուցիչները, ծնողներն ու աշակերտները միասին պիտի ստեղծէին ու գուրգուրանքով պահպանէին:

Աղբալեանը, ճեմարանի մասին մտածելով, աշխարհիկ վանք մը երեւակայած էր, ուր ամէն մարդ նուիրուէր մտաւոր աշխատանքի՝ միջնադարի կրթական կեդրոններու նմանութեամբ: Շանթի պատկերացումը աւելի գործնական էր եւ ան է, ի վերջոյ, որ իրականութեան վերածուած էր: Ճեմարանը աղգային փոքր հաւաքականութիւն մըն էր, ուր ուսուցիչ, ծնող եւ աշակերտ միեւնոյն նպատակին կը ձգտէին՝ նոր սերունդի առողջ կրթութեան ու դաստիարակութեան: Մեծ ընտանիք մը փաստօրէն, ուր իւրաքանչիւրը իր դերը ունէր եւ պատասխանատուութիւնը:

Գլխաւոր ղեկավարութիւնը, անշուշտ, ուսուցչական անձնակազմին վերապահուած էր եւ յատկապէս դաստիարակ ուսուցիչներուն, որոնք դասարանի աշակերտներուն ընկերային ու բարոյական կրթութեան պատասխանատուութիւնը ունէին: Շանթի պատկերացումով՝ ղեկավարութեան կամքը դասարանի մէջ արտայայտող անձեր էին անոնք, որոնք պէտք է մօտէն զբաղէին իրենց խնամքին յանձնուած դասարանի անդամներուն վարքով ու աշխատանքով, բայց նաեւ կապ պահէին ծնողներուն հետ եւ միասնական ջանքերով առաջնորդէին աշակերտները:

Ծնողները կրնային ծնողական ժողովներու եւ դպրոց այցելութիւններու միջոցով մասնակցութիւն բերել իրենց զաւակներու կրթութեան գործին, բայց նաեւ պէտք է իրենց յարկին տակ ընդունէին անոնց դաստիարակը եւ անոր հետ խորհրդակցելով մասնակցէին դպրոցի ընդհանրական աշխատանքին:

Լեւոն Շանթ մեծ կարեւորութիւն կ'ընծայէր դաստիարակի այս այցելութիւններուն: Անոնց չնորհիւ աւելի լաւ կը ճանչցուէին դպրոցի խնամքին յանձնուած անձերը, բայց նաեւ կը տեսնուէր ինչ միջավայրի, ինչ մթնոլորտի մէջ կ'ապրին անոնք եւ նկատի կ'առնուէին այդ պայմանները դաստիարակութեան անհատականացուած գործին մէջ:

Շանթի պատկերացուցած մարդաչափ դպրոցը, առաւելագոյնը 300 հոգի հաշուող, դիւրաւ իրագործելի կը դարձնէր նման ծրագիր: Դաստիարակը կրնար տարուան մէջ մէկ-երկու անգամ

այցելել իր աշակերտներուն տուները եւ կրթական գործը համակարգել ծնողներուն հետ:

Զարմանալի է, սակայն, որ այս գործին յարակցուած ծնողները չէին մասնակցեր, 1950-էն առաջ, գպրոցի ընկերային-հանդիսական հանդիպումներուն: Ամանորի եւ ամավերջի հրապարակային հանդէսներ տեղի չէին ունենար, աշակերտները եւ ուսուցչական կազմը առանձին կը կատարէին այդ արարողութիւնները:

Կաղանդի առիթով պղտասեղան սարքուած կ'ըլլար, աշակերտները դասարան առ դասարան խմբուած կ'ըլլային սեղաններուն շուրջ եւ որոշ աշակերտներ, բեմի մը վրայ կամ սրահի առաջամասին, բանաւոր նուէրներ կը բանաձեւէին, արտասանութիւններ կ'ընէին, խաղեր, ներկայացումներ:

Տարեվերջի հանդիպումը յաջողութիւնով վերապահուած կ'ըլլար: Ներկայ կ'ըլլային նաեւ չրջանաւարտներ եւ ճեմարանին մօտիկ անձեր: Պղտպղինի պատրաստուած կ'ըլլար եւ աղանդերներ, ճառեր կը խօսուէին, Հրաժեշտի խօսքեր կ'արտասանուէին: Երկրորդ յաջորդ յաջորդ աշակերտ մը բարի երթ կը մաղթէր չրջանաւարտներուն եւ երրորդ յաջորդն ալ ուրիշ մէկը ընկերներուն եւ իր անունով մնաք-բարով կ'ըսէր բոլորին:

Պարզ, բայց սրտալի հանդիպումներ էին ասոնք, որոնց ընթացքին անգամ մը եւս կը զգայինք որքան կապուած ենք մեր մայր Հաստատութեան, ուսուցիչներուն, ընկեր-ընկերուհիներուն: Բոլորս իրար կը ճանչնայինք ու կը սիրէինք եւ կ'անդրադառնայինք, որ ճեմարանը իսկապէս մեծ ընտանիք մըն է, որուն անդամները անքակտելի կապերով կապուած են իրարու:

Ճեմարանի երկրորդ կայքի տարիներուն, Ուսաոի Ապուժմիլ փողոցին ծայրը գտնուող երկյարկանի մեծ շէնքին մէջ, ընտանեութեան այս զգացումը աւելի չեչտուած էր: Յետոյ ուրիշ տեղ գացինք, աշակերտութեան թիւը աւելցաւ, պաշտօնական քննութիւնները սովորութիւն դարձան, մթնոլորտը հարկադրօրէն փոխուեցաւ եւ հետզհետէ կորնցուցինք մանաւոր այն ապրումը, որ ճեմարականի իւրայատկութիւնը կը կազմէր եւ հաճոյքը:

Բառասունական թուականներու կէսերուն, ճեմարանը յատկօրէն բաժնուած էր երկու բաժիններու: Բակին ամբողջ երկայնքը

բռնող գիւղացիական մէջ տեղաւորուած էին պատրաստական կարգերը եւ ծաղկոցը, վերի յարկը վերապահուած էր դասարաններուն եւ լսարաններուն: Այդ տարիներուն, Ճեմարանի ամբողջ աշակերտութիւնը 160-170 հոգիէ բաղկացած ըլլալու էր, շուրջ հարիւրը՝ վարի յարկը եւ մնացածը՝ վերի:

Հոն կեդրոնական սրահ մը կար եւ շուրջը չարուած դասարաններ: Ուսուցիչները առանձին սենեակ չունէին եւ կը հաւաքուէին սրահին մէջտեղը դրուած երկար սեղանի մը շուրջ, երբեմն ալ՝ անկիւնի փարաւանին ետեւը: Մենք առհասարակ վերը կը մնայինք, բակ չէինք իջներ պզտիկներուն քով եւ զբօսանքներուն կը խմբուէինք արտաքին երկար պատշգամին վրայ: Բոլորս իրար կը ճանչնայինք՝ առաջին դասարանէն մինչեւ երրորդ լսարան, բայց բնականօրէն աւելի սերտ յարաբերութիւններ ունէինք մեր տարիքի ընկեր-ընկերուհիներուն հետ: Ճեմարանական մեծ ընտանիքի մը իրողական գոյութիւնը չօշափելի փաստ մըն էր կարծես մեզի համար:

Անոր հանդէպ ունէինք երկիւղածութեան հասնող սէր մը, որ հաւանաբար Շանթի խօսքերէն եւ վերաբերումէն փոխանցուած էր մեզի: Ան ճեմարանի մասին, եւ առհասարակ դպրոցի, կը խօսէր կրօնական չեշտերով ու հանդիսաւորութեամբ.

Դպրոցը իր ամբողջութեամբ սրբավայր մըն է. Եւ սրբավայրի պէս պէտք է մտնեն ու ելնեն ամենքը[1]:

Է հատորի գլուխը դրուած այս բառերը զարմանալի կրնային թուիլ աշխարհիկ մտայնութեան տէր Շանթի գրիչին տակ ու բերանին մէջ, բայց խորունկ համոզումի մը, ապրումի մը արտայայտութիւնն էին: Աշխարհիկ մտածումն ալ իր սրբութիւնները ունի եւ Շանթի համար դպրոցը այդ սրբութիւններէն մէկն էր, ուր ամէն օր կը մտնէր հանդիսաւոր խոնարհութեամբ ու կը պատրաստէր աշխարհիկ քահանայի մը երկիւղածութեամբ: Իրեն համար՝

Դասն ալ, պաշտօնական հանդիսաւորութեան պէս, եկեղեցական արարողութեան պէս բան մըն է[2]:

Երբ դասարանի դուռը կը գոցէր իր ետին, արտաքին աշխարհը կը դադրէր կարծես գոյութիւն ունենալէ: Ամբողջութեամբ

[1] *Լեւոն Շանթի երկերը, Է հատոր, էջ 11:*

[2] *Լեւոն Շանթի երկերը, Է հատոր, էջ 93:*

կը տրուէր դասին եւ ոչ մէկ դինով կ'ընդունէր, որ արտաքին կամ ներքին դէպքեր խանգարեն անոր հանդիսաւոր ընթացքը: Այցելուներ եթէ դային դինք տեսնելու, պիտի սպասէին մինչեւ պահի վերջը, ո՛չ մէկ աշակերտ, ո՛չ մէկ պատճառով, արգելք պիտի ըլլար իր հանդիսավարութեան:

Այսքան սկզբունքային Շանթը կը հասկնար սակայն, որ աշակերտները այս կամ այն պատճառով կընան նոյնքան ուշադիր չըլլալ որոշ պարագաներու: Մանկավարժական յատուկ միջոցներու կը դիմէր այն ատեն ու կը վերահաստատէր խախտած կեդրոնացումը:

Առաջին լարանի մէջ երբ մանկավարժութիւն կ'աւանդէր մեզի, խեղճ դասարան մը ունէինք, որուն լապտրաթուար անունը կու տայինք՝ պահարանի մէջ դրուած քանի մը շիշերուն եւ տարբարանութեան դասին հոն տրուելուն պատճառով: Կեդրոնը երկար սեղան մը կար, որուն գլուխը կը նստէր ուսուցիչը եւ շուրջը կը տեղաւորուէինք մենք: Երկու առանձին սեղանիկներ ալ կային պատուհաններուն տակ, որոնք գրաւուած կ'ըլլային առանձին տեղ սիրող աշակերտներուն կողմէ:

Մեր դասը կէսօրուան դադարէն անմիջապէս առաջ էր: Երբեմն յոգնած կ'ըլլայինք, անօթի, եւ մեր կեդրոնացումը գոհացուցիչ չէր ըլլար: Այդ օրերուն, Շանթ աւելի աշխուժ կերպով կը դասաւանդէր, ուղղակի ուշադրութիւն կը պարտադրէր իր կենդանի եւ հետաքրքրական բացատրութիւններով:

Օր մը, ճիշդ իր քովը նստող աշակերտը, Վարուժանը, ուշադրութիւնը չէր կրնար կեդրոնացնել դասին վրայ: Հակառակի պէս ալ դասավարութեան զէնքերուն, ուշադրութեան մասին էր դասը:

«Երբեմն, այս կամ այն պատճառով, կեդրոնացումը կը պակսի, կ'ըսէր Շանթը: Այն ատեն ուսուցիչը ձայնին եւ ձեռքի անսովոր շարժում մը կ'ընէ՝ դարձեալ իր բուռը հաւաքելու համար դասարանը»:

Ինք ալ ձայնը փոխեց այդ պահուն եւ ձեռքը շարժեց Վարուժանին քիթին տակ: Ան ցնցուեցաւ, բոլորս խնդացինք եւ պահիկ մը եաք դասաւանդութիւնը ստացաւ իր բնական ընթացքը:

Մեր ժամանակ Շանթը ծեր էր, ութսունի դուռը հասած: Ջէր կրնար ոտքի դասաւանդել, ինչպէս պիտի ուզէր: Բայց հիներէն

լսած էինք, որ առաջ չէր նստեր, դասարանի առաջամասին մէջ ուղղակի կը բեմադրէ՛ր դասը, խորանին վրայ Հանդիսաւորապէս պատարագող քահանայի մը պէս:

Մեր օրերուն, զանգէն անմիջապէս ետք կու գար դասարան, դուռը մեղմօրէն կը դոցէր ետեւէն, ընդհանուր ակնարկ մը կը նետէր մեր վրայ, յետոյ նստելու կը հրաւիրէր մեզ եւ ինք ալ կը նստէր: Ոտքի կեցողի առաւելութիւնը չունէր վերէն տիրելու դասարանին, բայց կ'ենթարկէր մեզ իր հեղինակութեան՝ ձայնին հմայքով, դէմքի արտայայտութեան ազդեցութեամբ: Կարծես անտեսանելի Հոսանուտ մը կ'անցնէր իրմէ մեզի, կը պահէր մեզ իր կախարդանքին տակ:

Տարիներ ետք, երբ բեմին վրայ Հանգիստ նստած, բայց ներքին լարումով սրահին տիրող Սուրէն Քոչարի Գիքորը լսեցի, հասկցայ, թէ արուեստի ինչ ուժով ու արհեստավարժ մօտեցումով Լեւոն Շանթ կը տիրէր մեր հոգիներուն:

Լեւոն Շանթ ծնած էր ժթ դարու վերջին երրորդին, կազմաւորուած՝ ժամանակի գիտապաչտ դրութիւններու ազդեցութեան տակ, Հանգամանօրէն ծանօթացած՝ իրմէ առաջ եւ իր ժամանակ գոյութիւն ունեցող մանկավարժական մեծ տեսութիւններուն: Խորհրդածած էր մանաւանդ մարդու կրթութեան մասին եւ անձնական եզրայանգումներու հասած:

Վկան եղած էր իր ժամանակի մեծ գիւտերուն, տեսած՝ հիմնական փոփոխութիւնը մեր կեանքին ու քաղաքակրթութեան, իր մանկավարժական աշխարհայեացքին մէջ ներառած՝ օգտակար նորութիւններ: Երեսունական թուականներուն, երբ կը գրէր մանկավարժական իր հատորները եւ քառասունականներուն երբ կը դասաւանդէր անոնց բովանդակութիւնը, աչքերը յառած էր աշխարհի նոր նուաճումներուն՝ զանոնք օգտագործելու համար մանկավարժական իր կրթանքին մէջ: Շատ կը պատահէր, որ ապագայի մասին յայտարարութիւններ կատարէր, գուշակութիւններ ընէր: «Ըլա՛յ պիտի, տեսնէ՛ք պիտի» կ'ըսէր ներչնչումով, ու տարիներ ետք կը պատահէր որ տեսնէինք:

Յատկապէս կը յիշեմ երկու նախատեսութիւն՝ գրադարաններու մասին եւ ձայնի օգտագործումին՝ գիրի փոխարէն:

Քառասունական թուականներու վերջերուն, կը կրկնէր տաս-

նամեակ մը առաջ գրածը գրադարաններու ընդհանրացումին ու չարժական գրադարաններով ծայրամասային շրջաններ գիրքի սպասարկումին մասին: Տասնամեակ մը ետք, ես վկան եղայ նման գործունէութեան մը Պելճիքայի գաւառական մէկ քաղաքին մէջ: Ե՞րբ սկսած էր այդ ճիգը, ինչ արդիւնք կու տար: Գիտեմ միայն, որ ուսանողութեանս շրջանին նոյն երկիրին մէջ, 1952-էն 1956, նման բանի չէի հանդիպած:

Գիրի եւ ձայնի մասին խօսած ժամանակ, Շանթ կ'ըսէր, թէ ձայնը հետզհետէ սիրող պիտի դառնայ եւ պիտի մրցի գիրին հետ՝ ուսուցումի մարզին մէջ: Ձայնագիր գործիքներ կային անշուշտ այն աւեն, բայց անոնց գործածութիւնը ընդհանրացած չէր, մանաւանդ մուտք չէր գործած դպրոցներէն ներս: Այսօր հասարակ բան է արդէն համակարգիչի եւ խտասալիկի գործածութիւնը կրթական աշխարհին մէջ:

Ո՞ր օրերու մանկավարժն է Լեւոն Շանթ:

Պահպանողական իր ժամանակիցներուն համար չատ յառաջապահ էր աւեներին, իսկ հիմա իր դրոյթները հինցած չեն ընաւ, ժամանակակից են տակաւին: Կը հաւատամ որ պիտի ըլլան նաեւ վաղը: Ինք ալ կը հաւատար, երբ կը յայտարարէր.

Ես դուրսի իրականութիւնը նկարագրելու համար չէ,որ այս գիրքը կը գրեմ, այլ գծելու համար այն դպրոցը, ուր պիտի հասնինք[1]*:*

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ

[1] *Լեւոն Շանթի երկերը, Է հատոր. էջ 12:*

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

ԱՆՎԱՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՍՏ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԲԱՑՄԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄ

ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԱՆՎԱՐ, ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԻՆՔՆԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԳՐՎԱԾ Է ՈՒ ԴԱՍԱԽՈՍՎԱԾ
ՊԵՅՐՈՒԹԻ ՀԱՅ ՃԵՄԱՐԱՆԻՆ ՄԵՋ
1933 – 1950
ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐ ԲՆԱԿԱՆ ՔԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Ա. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆԳՈՐԾԱՐԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մարմին հատկություններու գումար մըն է: Այդ հատկություններուն մեկ մասը գործող, ազդող, երևցող հատկություններ են. և սովորաբար, երբ մարմնի մը հատկություններու մասին կխոսինք, այդ գործուն հատկությունները ունինք աչքի առաջ, ինչպես են մարմնի մը ձևը, գույնը, կշիռը, կարծրությունը, ողորկությունը, կազմը, համը, հոտը: Բայց ամեն մարմին ունի և բազմաթիվ ուրիշ հատկություններ, որոնք սկիզբը չեն երևար, չեն գործեր, չեն ազդեր, կարծես չկան, և որպեսզի երևան գան և ազդեն՝ պետք է մարմինը որոշ փոփոխության ենթարկվի: Այս թաքուն հատկությունները այն բոլոր կարելիություններն են, որ որոշ մարմին մը կրնա ունենալ: Եվ այդ թաքուն կարելիությունները կանվանենք ունակություն:

Այսպես, օրինակ, երկաթը իր բազմաթիվ մնայուն ու գործուն հատկություններու վրա ունի նաև պողպատ դառնալու ունակությունը, ահագին ծանրություններ բարձրացնելու և տեղափոխելու ունակությունը՝ դաշնակցելով ուրիշ ուժերու հետ, իբրև գործիք ու մեքենա: Այս բոլոր կարողությունները սովորական երկաթը ունի ու չունի. ունի թաքուն վիճակի մեջ իբրև ունակություն, իբրև կարելիություն. և այդ կարելիությունը կարողության վերածելու համար պետք է ենթարկվի որոշ փոփոխության և որոշ ազդեցություններու:

Ահա՛ այդ իր վրա կրած փոփոխությունը, որով մարմնի մը կարելի ու թաքուն ունակությունները երևան կուգան ու գործուն հատկություններ ու կարողություններ կդառնան, մենք կրնանք անվանել կրթություն:

Երկամբը երբ հուրով ու ծեծով կամրանա ու կդառնա պողպատ, կրնանք ըսել, թէ երկամբը պողպատի կրթութիւն առացած: Այդպէս ալ որոշ կրթութիւնով կվերածուի մագնիսի, մագնիսանալ՝ կինչանակէ մագնիս դառնալու համար անհրաժեշտ եղող կրթութիւնը առանալ, այսինքն կրնել այն փոփոխութիւնները, որոնք երկամբի մէջ եղած մագնիսական կարելիութիւնը կվերածեն մագնիսական կարողութեան: Նոյն երկամբը, որոշ ձեւի կրթութեան առանալով, կսրե իր կարելու կարողութիւնը, կդառնա դանակ, սղոց ու կացին և վերջապես մեքենա ըսածը չատ բարդ կամ, եթէ կուզեք, չատ բարձր կրթութեան առացած երկամէն է:

Հարը առչեն ու հղկելը կրթել մըն է իր տեսակի, և մեր այուններր, խոյակներն ու արձաններրը կրթված քարեր են, միայն չատ արտաքին կրթութիւն մը անշուշտ, քանի որ քարի էութիւնը չէ, որ ենթարկված է փոփոխութեան և կրթութեան, այլ միայն արտաքին ձեր: Բայց վերջապես ատիկա ալ կրթութիւն մըն է. բիչ չեն նաև մարդու կրթութեան մէջ այն դեպքերը, որ կրթվածը արտաքին ձևերն են միայն և ո՛չ ներքին էութիւնը:

Այս իմաստով՝ մարմնի մը կրած ամեն մեկ նոր տեսակի փոփոխութիւն կրթութիւն է, և կրթվիլ ըսելը նոր տեսակի փոփոխութիւն մը կրել բանել է:

ԲՈՒՅՍԵՐՈՒՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Միարջիջ բոյսերու ունեցած միակ հիմնական տարբերութիւնը անդորձարան մարմիններուն ան է, որ ձեռք են բերեր նոր հատկութիւն մը՝ աճելու կարողութիւնը, այսինքն չրջապատեն ձծել որոշ նյութեր, քիմիական որոշ փոփոխութիւններու ենթարկել իր մէջը և վերածել իր էութիւնը կազմող նյութին. ատով ալ հետզհետե մեծցուցեր է իր ծավալը, աճեր է ինքն իր մէջ, իսկ որոշ չափի մը հասնելեն ետքը բաժնվեր է երկու կտորի, որոնցմե ամեն մեկը չարունակեր է աճիլ ինքն իր մէջ և վերջը նորեն կիսվիլ՝ ծնունդ տալով նոր-նոր կտորներու, այսինքն աճիլ իրմեն դուրս և չարունակել աճելիութիւնը նոր սերունդներու գոյութեան մէջ: Աճիլ՝ կինչանակէ անանիլ ու սերունդ տալ:

Երբ նորածին սերունդները չեն հետանար իրարմե, կմնան

իրարու կալած՝ իրարու հետ հաղորդակցության մեջ իրարու սնունդն օգտակելու և իրարու օգնելու համար, բույսը կդառնա բազմաբջիջ: Այդ հավաքական բջիջային կենակցության ժամանակ հետզհետե կշնչուի աշխատանքի բաժանումը, բջիջներու ամեն մեկ խումբ, նայելով իր դիրքին ու տեղին, կկատարե տարբեր գործ մը և ինքն ալ հարմարվելով իր կատարած գործի պահանջներուն՝ քիչ-քիչ կփոխուի նաև ձևով ու կազմով:

Արդ՝ ամեն սաղմ իր հետ կբերե իր մայր բույսի և իր նախամայրերու ջանքերով ձեռք ձգված կարողություններուն գումարը թաքուն վիճակի մեջ, իբրև ունակություն, որոնք երբ պայմանները նպաստեն ու զործադրվին, կդառնան կարողություններ: Այդ ժառանգված ունակությունները, երկար-երկար դարերու և սերունդներու կատարած կրկնության իբրև արդյունք և խտացում, իրենց մեջ կկրեն հարկադրական մեծ ուժ՝ կրկնվելու և ճիշդ նույն ձևով կրկնվելու, ինչպես դարեր ու դարեր: Ուրիշ խոսքով՝ բույսի մը իր հետը բերած այդ բոլոր թաքուն ունակությունները կկազմեն բույսերուն պահպանողական ուժը, որուն վրա և հիմնված է բուսական տեսակներուն տևականությունը:

Բայց ինչքան ալ որ այդ ժառանգական ներքին մղումները հարկադրական ըլլան, դուրսի ու ներսի բազմատեսակ պատճառներով անկարելի է, որ անհատ բույս մը իր մորմեն ստացած բոլոր ունակությունները ճիշդ այն չափով ու ձևով կրկնե ու գործադրե, ինչպես իր մայրը: Որոշ հատկություններ առիթ կունենան շատ ու շատ գործածվելու, մյուսները՝ սակի քիչ կամ բնավ. կամ այդ կարողությունները կմշակվին տարբեր ուղղությամբ՝ հարմարվելով նոր անհատի նոր կյանքի պայմաններուն: Որով ամեն անհատ որոշ չափով մը անպայման կշեղի իր նախորդներեն. կփոխե և կլմնքի, նոր հավելում, նոր դասավորում, նոր տարբերակներ կառաջացնե, և ասով է, որ ժամանակի ընթացքին հետզհետե կշատնան բուսական տեսակները, կբազմազունին ու կբարդանան: Ժառանգված ունակություններու այս անհատական գործադրության բերած շեղումներն ու փոփոխություններն են, որ կկազմեն բուսականության հառաջդիմական սկզբունքը, առանց որուն տեղեն չարժվիլ չէր կրնար կյանքը և անկարելի կդառնար ամեն նոր ստեղծագործություն:

Շեղվիլ կարողանալու, հարմարվելու այս հատաջդիմական սկզբունքին վրա է հիմնված մեր այդիներուն, արտերուն, պարտեզներուն ու անտառներուն մեջ կատարվող գյուղատնտեսական անվերջ փորձերը, որոնց նպատակն է նոր տեսակներ առաջացնել մեր ուզած ձևի, գույնի, համի, հոտի, մեր ուզած ուղղությամբ տանել բույսի բնածին ունակություններուն զարգացումը: Ուրիշ խոսքով՝ այդ սկզբունքին վրա է հիմնված բուսական դաստիարակությունը, բուսական մանկավարժությունը, որովհետև այս ու այն պայմաններու տակ բույսի մը ունակություններուն այս կամ այն ձևով բացում մը կդառնա անոր ստացած կրթությունը:

Բույսի մը կրթությունը իր աճելական ունակություններու աճելական կարողություններու վերածվիլն է, որով և կհասնինք կրթության գազափարի բուսական ըմբռնումին. աճելական ամեն նոր ձեռքբերում կդառնա կրթություն:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Բույսի մը բոլոր գործարանները, ինպես և անոնց կատարած բոլոր գործերը, կապես կարելի է խմբել երկու մասի՝ աննզական և սերնդական գործարաններ. բույսը այդ երկուքին դուրս ունի միայն իրրև հենարան և պաշտպանության ծառայող գործարաններ:

Եվ այս բուսական գործարանները, ճիշդ բույսի մը նման, ունի ամեն մեկ կենդանի: Ամեն կենդանի բույս մըն է, որուն վրա ավելցած են նոր ընդունակություններ: Կենդանիներու մարսողական, շնչառական, շրջառառական և սեռական գործարանները ըստ էության հիմնական տարբերություն մը չունին բույսերու համապատասխան գործարաններեն: Իսկական տարբերություններ հոն է, որ ննջարկված են մկաններու և ջիղերու զեկավարության, որով ավելի սերտ է դարձած մասերու իրարու մեջ և ամբողջին հետ ունեցած կապը, փոխադարձ կախում մը և ազդեցությունը:

Ջիղ ու միան՝ ահա՛ այն երկու մեծ ու հիմնական նորություն, որ հետզհետե կատարելագործվելով և իրենց կատարած աշխատանքի աստիճանական նրբացումով ու ճյուղավորումով կատարյալնին զգայական, զգացական, մտածական, կամեցական

ու չարժումի բոլոր բարդ երևույթները և այդ երևույթներուն ծառայող գործարաններն ու կեդրոնները:

Ջղային ու մկանային կարողությունները միասին առած՝ մեկ բառով մը կանվանենք Հոգի: Բոլոր գործարանները իրարու կապող և ամբողջ օրկանիզմի գործունեությունը ներդաշնակող ու ղեկավարող այս հատուկ ու կեդրոնական բազմաբջիջյան Հոգին է, որ կպակսի բույսին: Թե չէ՝ բույսի ամեն մեկ բջիջը առանձին զուրկ չէ բջիջային Հոգիե մը, այսինքն այս կամ այն աստիճանի արտաքին ազդակներե ազդվելու և չարժում մը կատարելու կարողութենեն:

Արևածաղիկը, որ միշտ իր երեսը կդարձնե արևին, որոշ ծաղիկներ, որոնք լույսի հետ կբացվին ու մութի հետ կգոցվին, որսորդ ծաղիկը, որ կգոցե իր բաժակը, երբ միջատ մը մեջը նստի, չա՛տ պերճախոս օրինակներ են ո՛չ միայն բջիջային Հոգիներու գոյության, այլև այդ բջիջային Հոգիներու նույն ուղղությամբ խմբական գործունեության: Ճանճորս ծաղիկի բջիջներուն միասին կատարած որսը էական ո՛չ մեկ տարբերություն չունի գայլերու խմբական հարձակումեն որևէ անասունի մը վրա: Բայց մեկուսացած Հոգի, այսինքն բազմաբջիջ էակի մը բոլոր մասերը իրարու զոդող և այդ ամբողջությունը վերեն ղեկավարող զատված ու կեդրոնացած Հոգի ունին միայն բազմաբջիջ կենդանիները, և այդ է, որ մենք միշտ աչքի առջև ունինք, երբ պարզապես կըսենք Հոգի:

Մարմնի բոլոր գործարաններուն ղեկավարությունը իր ձեռքն առնելով և անոնց գործունեության, փոփոխության ու զարգացման վրա ազդելով՝ Հոգին կստանա բացառիկ ու տիրական կարևորություն ամբողջ օրկանիզմին մեջ նաև կրթական տեսակետեն: Այն աստիճան, որ մենք երբ կխոսինք կենդանիի մը կրթության մասին՝ կհասկնանք անոր Հոգեկան կարողություններուն կրթությունը: Շունը կկրթվի, այսինքն անոր Հոտառությունը, հիշողությունը, ուշադրությունը, որսալու չնորհքը, անոր զանազան խաղերն ու ճարպիկությունը: Ձին կկրթվի, այսինքն անոր քայլը, վազքը, իմացականությունը, զգացումները, կամքը և Հպատակիլը, ուրիշ խոսքով՝ բոլոր ջղային ու մկանային կարողությունները:

Անշուշտ կխոսինք նաև աղիքներու կրթության, գեղձերու ստացած վարժության և թոքերու մարզանքի մասին, բայց խոսքը

միշտ այդ բուսական գործարանները գրկող ու վարող մկաններու և ջիղերու մասին է և ո՛չ թե բուսական գործունեության՝ անկախ հոգեկանեն: Երբ կխոսինք գործարաններու զուտ բուսական կյանքի մասին, այլևս չենք գործածեր կրթության բառը, կըսենք՝ զարգացած ստամոքս ունի, առողջ կամ տկար թոքեր, զեղձերու առատ արտաշնորհում, ուժեղ ու զեղեցիկ ոսկորներ. և այդ բոլորը կկապենք առողջապահության, անդամագիտության ու բնախոսության հետ, բայց ո՛չ կրթության:

Եվ այսպեսով կհասնինք կրթության զաղափարի երրորդ իմրոնտին՝ կենդանական կրթության, ուր ամեն ինչ կկերրոնացած է հոգիին մեջ և հոգիին վրա: Կենդանիներու վերաբերմամբ կրթել համ կրթվիլ ըսելը հոգեկան կարողությունները գործածել ու կատարելագործել ըսել է: Հոգեկան ունակությունները հոգեկան կարողություններու վերածել:

ՄԱՐԴՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Մարդուս ունեցած տարբերությունը մյուս կենդանիներեն կապես կկայանա երկու կետի մեջ. առաջին՝ մարդը ատուն է, մինչ կենդանիները՝ անատուն, երկրորդ՝ մարդը կքալե երկու ոտքի վրա: Երկու չափազանց կարևոր տարբերություն, որովհետև մարդու մյուս կենդանիներեն ունեցած բոլոր առավելությունները և մարդկային բոլոր նյութական և հոգեկան ստեղծագործությունները արդյունք են այդ երկու տարբերության:

Կենդանիներն ալ իրար կհասկնան և՛ շարժումներով, և՛ ձայնով. տարբերությունը հոն է, որ անոնց ձայնը ընդհանուր հոգեկան արտադրություն մը կարտահայտե միայն: Մարդս, այդ կարողությունը զարգացնելով, իր արտաստանած ձայներովը ո՛չ միայն իր հուզումներն ու ցանկությունները կարտահայտե, ինչպես որ են մեր բացականչությունները, այլև իր ներքին պատկերացումները, մտածումները. մարդու հանած ամեն որոշ ձայնախումբ որոշ միտք մը կարթնացնե մեր մեջ: Միտք ունեցող ձայնախումբը կանվանենք բառ:

Արդ՝ այդ բառ ըսվածը չատ ավելի մեծ ու կարևոր գյուտ մըն է, քան սովորաբար կկարծենք: Բառը մեր մտածումներուն

մարմին կուտա, որով անոնք կրնան մեզմե անկախ, թեև մեզմե ծնած, ուրույն գոյութիւն մը: Մենք ո՛չ միայն հնար ունինք այդ բառերը իրար տալու և առնելու և այդ միջոցով իրարու ներքին աշխարհին մեջ կատարված խիստ նուրբ ու խիստ բարդ աշխատանքներուն ծանոթանալու և մասնակցելու, այլև հնարավորութիւն ունինք այդ բառերը իրար վրա բերելու, դատողութիւններ կազմելու, դիզելու և սերունդե սերունդ ահագին գանձարաններ առաջացնելու: Այս ճամբով հին սերունդը կարելիութիւն ունի իր դիտողութիւնները, իր փորձածն ու հասկցածը նոր սերունդին փոխանցելու, որ իր լրացումներովն ու հավելվածներով կհանճնե հաջորդ սերունդին, և այսպես սերունդե սերունդ կմեծնա մարդկային հոգիի խորքերեն փրթած այդ գլտորվող հյուսքը:

Բառի գյուտովը մարդկային մտածումը կազատվի մահեն: Եվ այլևս ամեն մարդ միայն ի՛ր համար չէ, որ կմտածե և միայն ի՛ր խելքովը չէ, որ կմտածե: Կմտածե բոլոր նախորդ դարերու միշտ ապրող մտածումներուն վրա և կմտածե բոլոր իր ժամանակակիցներուն հետ բոլոր ապագա դարերուն համար:

Մենք բառերուն կպարտինք մարդկային գիտութիւններն ու բանահյուսութիւնները իրենց բոլոր հարաճուն ճյուղերով: Մենք լեզվին կպարտինք, բառերով լեզվին, մարդոց մեջ ընկերական մոտիկ ու սերտ կենակցութեան այս աստիճանի զարգացումը, որ իր կողմեն բնականաբար և փոխադարձաբար կսրե ու կարագացնե լեզուներուն մշակումը: Մեր ընկերական կյանքի քիչ-շատ բարձր երևույթները անկարելի է, որ հաջողեին, ինչպես որ կենդանիներուն մեջ չեն հառաջացած և չեն կրնար հառաջանալ, եթե լեզվի միջոցով ձեռք բերած չըլլայինք մարդկային անհատական հոգիներուն միջև տեղի ունեցող այդ մտերիմ ու հարատև շփումը, այդ մշտական իրար ձեռք տալով և իրար բռնած բարձրացումը, որովհետև պետութիւն, կրոն, իրավունք, կրթութիւն, գիտութիւն և գեղարվեստ իրենց բազմազան ձևերովն ու ճյուղերովը մեծ առնչութիւն ունին լեզվի հետ: Բառը չաղախն է մարդկային ամբողջ քաղաքակրթութեան:

Գալով մարդու չիտակ քալելուն երկու ոտքի վրա ինքը երևույթը հետևանք է կենդանիներու առջևի երկու ոտքերը իբրև ձեռք գործածելուն մագլցելու ժամանակ, և ատոր հետևանքն ալ

առջևի ուղերուն մասնավոր զարգացումը և հարմարումը բռնելու համար՝ բուժի մասի զատվելովը մյուս մասներեն: Եվ այդ բռնող ձեռքի ստեղծագործություններն են մարդկային բոլոր գենքերը, գործիքները, ամաններն, հագուստները, զարդերը, շինքերը, արհեստները, արվեստները, նկար, արձան, գիր, այսինքն մեր քաղաքակրթության նյութական ստեղծագործությունները:

Հոգեկան ստեղծագործությունները մարմին են առած բառերու միջոցով, նյութական ստեղծագործությունները դարձյուն են առած մեր երկու ձեռքերուն միջոցով. մարդկային ամբողջ քաղաքակրթությունը հարուստ դարձնողը բառերն են ու ձեռքերը:

Կենդանիներն ալ ունին իրենց քաղաքակրթությունը. բույն ու որջ շինելը, չվելը, խմբական կյանքը, զույգերով ապրելը անշուշտ որ քաղաքակրթական երևույթներ են: Եվ այդ առավել կամ նվազ չնչուված քաղաքակրթական վիճակները հնարավոր են դարձած մեկ կողմեն կենդանիներու հոգեկան արտահայտության շնորհիվ չարժումներով ու ձայնով, մյուս կողմեն ալ շնորհիվ իրենց կտուցներուն ու դունչերուն, որոնք առջևի թաթերու օժանդակությամբ կկապան մեր ձեռքերուն դերը: Կարելի է խոսիլ դնչական ու ձեռական քաղաքակրթություններու մասին, իբրև նույն հիմնական երևույթի տարբեր աստիճանները:

Եվ ինչպես որ մարդկային խոսքը հոգեկան հարստությունները դիզվելուն կտանի, այդպես ալ մարդկային ձեռքերը անվերջ կկերտեն ու կդիզեն նյութական բազմատեսակ գանձեր: Եվ այդ դիզված նյութական հարստություններն ալ կավանդվին սերունդե սերունդ չահագործվելու, վայելելու և հետզհետե նորանոր ստեղծագործություններով ավելի ու ավելի հոխացած հաջորդ սերունդներուն փոխանցվելու համար:

Եվ օրե օր կուտակվող և ամեն կողմեն նոր սերունդները ընդգրկող այդ հոգեկան ու նյութական հարստություններու աղբյուրյան տակ անհատի բուսական ու կենդանական զարգացումը կտանա նո՛ր թռիչք ու նո՛ր մղում: Հոգեկան նրբացումը կհասնի այն բարձունքները, որ հոգին այլևս չի կրնար բավականանալ աճելիությանը ծառայող իր սորարաս դերովը և կսկսի ինքը նպատակ դառնալ, ինքը տերը և կձգտի աճելությունը ծառայեցնել իրեն, իր դգայական վայելքներուն, իր կամեցումներուն, իր իմա-

ցական Հանդուգն սլացումներուն, իր ներքին կապանքեն ազատ ըլլալ ուզող Հոգեկան ապրումներուն:

Եվ այս բոլորի հետևանքով մարդկային կրթութեան մէջ մասնաւոր կերպով կչեշտվի քաղաքակրթութեան ազդեցութիւնն ու դերը: Ժառանգված Հոգեկան ունակութիւններուն փթթումն ու զարգացման բռնելիք ուղղութիւնը չափազանց մեծ չափերով կախում կստանան անհատը շրջապատող քաղաքակրթութենեն: Ա՛յն աստիճան, որ մարդկային իմաստով կրթվիլ կնշանակե քաղաքակրթվիլ, այսինքն հասնիլ իր շրջապատողներու կամ իր ժամանակի քաղաքակրթական զարգացման աստիճանին:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՏԱՐԲԵՐ ԵՐԵՍՆԵՐԸ

Արդ՝ մարդկային քաղաքակրթութեան խտացումը իր բոլոր կողմերով հստակ ըմբռնելու և իր ուսումնասիրութիւնը որոշ կարգի մը տակ դնելու համար կրթութեան միջոցով ձեռք բերվելիք բանները կրնանք բաժնել երեք տեսակի:

Ամենեն առաջ՝ մարդկային բնական կարողութիւններու բացումը, նրբացումը և կատարելագործումը. թե՛ նեղ մտքով զուտ ղային կարողութիւններու փթթումն ու բարձրացումը, ինչպես են հիշողութիւնը, երևակայութիւնը, մտածողութիւնը, ուշադրութիւնը, կամքը, զգացումը, այսինքն մեր ղային կեդրոններուն մէջ տեղի ունեցող ներքին կատարելագործումը, և թե՛ այն հոգեկան կարողութիւնները, ուր ներքին ղային գործունեութեան զուգ կերթա նաև մկանային աշխատանք մը ավելի կամ պակաս կարևոր չափերով, ինչպես է, օրինակ, խոսելը, երգելը, քայլելը, պարելը, նվագելը, չմշկելը, գրելը և վերջապես մկանային ամեն կատարելագործում: Այս ամեն տեսակի հոգեկան կարողութիւններու բացումն ու մարզումն է, որ կանվանենք նեղ իմաստով զարգացում:

Կարողութիւններու այս բնական անհատական զարգացման զուգընթաց կերթա նաև կարողութիւններու որոշ ընկերական մշակում մը: Մարդը ընկերական կենդանի է, կապրի միշտ իր նմաններու հետ ու իր նմաններու մէջ: Առանց այդ մշտական ընկերակցութեան առաջանալ չէին կրնար ո՛չ հոգեկան, ո՛չ ալ նյութական

քաղաքակրթական բարիքները, որ հիմա կվայելեն մարդը իր ծնած օրեն մինչև իր մահը: Բայց իրարու հետ ապրիլը, մեծապես իրարմե օգտվիլը և իրարմով պայմանավորված ըլլալը մարդկային հավաքականութիւնները կվերածեն ավելի բարդ ու ավելի բարձր տեսակի միութիւններու, որ կանվանենք ընտանիք, համայնք, պետութիւն, որոնցմե ամեն մեկը իր պահանջները կդնեն իր բաղադրիչ մասնիկը կազմող անհատներուն վրա: Որպեսզի կարելի ըլլա կենակցութիւնը, միասին աշխատիլը ու միասին վայելելը, իրար օգնելն ու իրարմե օգտվիլը, անհրաժեշտ է, որ անհատը չարունակ աչքի առաջ ունենա, թե ինքը մենակ չէ, որ ուրիշներ կան շուրջը, և իր բրածն ու վարմունքը պետք է հարմարցնե իր կենակիցներու ուզածին ու հավնածին: Ամեն անհատ ուզե-չուզե պետք է գիտնա, թե իր շրջապատող հասարակութիւնը ինչ կպահանջե իրմե, թե ինքը ինչպես պետք է վարվի ու չարժվի՝ իբրև մեկ անբաժան մասնիկը ընկերական այդ ավելի բարձր միութիւններուն: Այս ընկերական կյանքի պահանջը եղող ապրուստի ձևերուն, վարք ու բարքի, քաղաքավարութեան, օրենքներու, կանոններու, սովորութիւններու և բարոյական սկզբունքներու իրացումն է, որ կանվանենք դաստիարակութիւն, հոգիի ընկերական կողմերու մշակումը:

Հոգիի բնական և ընկերական կողմերու այս մշակումեն զատ ինչ որ կմնա, յուրացում մըն է տեղեկութիւններու, ծանոթութիւններու, եղելութիւններու, ինչ որ մարդկութիւնը դարերու աշխատանքով գիտեր է, գտեր է, հասկցեր է, ինչպես և ծանոթացումը այն բոլոր բաներուն, որ մարդը կրցեր է հնարել, չինել և կազմակերպել և օգտագործել, այսինքն ամբարումը անհատի գլխուն մեջ մարդկային գիտութեան և իմաստութեան: Մեծավոր պաշարի այդ ձեռքբերումն է, որ կանվանենք ուսում:

Այսպեսով՝ մարդու համար կրթվիլը, քաղաքակրթական որոշ աստիճանի մը հասնիլը երեք երես ունի. կարողութիւններու զարգացում, դաստիարակութիւն և ուսում: Կրթութեան այս երեք կողմերը սերտորեն հյուսված են իրարու և իրարմով կզարգանան, իրարմե կպղպվին և իրարու գործակից են չարունակ, բայց և այնպես տարբեր բաներ են ատոնք իրարմե, տարբեր երեսներն են միևնույն երևույթի:

Բ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԲՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ

Ինչպես բույսերու, ինչպես կենդանիներու, այնպես ալ մարդկային անհատներու կրթութիւնը սկիզբը կառնե անհատի ծնունդին հետ, կշարունակվի անոր ամբողջ կյանքը անընդհատ և կղադարի անհատի մահով: Մարդուս կյանքին մեջ չի կատարվիր ոչինչ, որ այս կամ այն աստիճանի կարևորութեյամբ չազդե անոր որևէ մեկ կողմի կրթութեյան վրա: Ապրված ամեն դեպք, ամեն լսված ու տեսնված բան, կատարված ամեն գործ և գործադրված ամեն ճիգ միևնույն ժամանակ փորձ մըն է, վարժութեյուն մըն է, հարստացում մըն է, ճկում մը մարդկային զուտ հոգեկան ու մկանային կարողութեյուններուն, դաս մը, փորձառութեյուն մըն է ընկերական հարաբերութեյուններու մշակման տեսակետեն և վերջապես մտքի հարստացում մը: Կրթվիլը ապրիլ է, և ապրիլը՝ կրթվիլ:

Եվ որովհետև ապրիլը ինքը իր ամբողջ տևողութեյան ընթացքին հավասար թափով վազող հոսանք մը չէ, կրթութեյունն ալ անոր զուգահեռ հավասար թափ և ուժ չունի իր ամբողջ ընթացքի մեջ:

Աճումի և կրթական հոսանքի այդ անհավասար թափը արդյունք է երկու պատճառի. մեկը արտաքին, անհատական ու պատահական և կախված է արտաքին պայմաններու բերումեն ու դասավորումեն, արտաքին չփումներեն ու ազդեցութեյուններեն, օրենք չի ճանչնար և որու տարրերուն ուսումնասիրութեյունը գալու է հաջորդ գլուխներուն մեջ:

Մյուս պատճառը ներքին է և կախումն ունի մարդկային կազմի և աճելիութեյան էութենեն, և ատոր համար ալ շատ ավելի հաստատ է, ընդհանուր և ենթակա է հիմնական օրենքի մը: Եվ այդ օրենքը կըսե. աճելիութեյունն ու կրթութեյունը, այսինքն մարդկային մարմնի ու հոգիի կրած փոփոխութեյունները, հակառակ հարաբերական են տարիքի առաջացումին: Ինչքան թարմ է էակը, այնքան ուժեղ թափով աճում ունի, այնքան զորեղ է արտաքին տպավորութեյուններուն ենթարկվելու աստիճանը, և այնքան խոր ու դյուրին՝ իր կրած փոփոխութեյունները:

Ա՛ճելիության և կրթության տեսակետեն մարդկային կյանքը կարելի է հատվածել չորս աստիճանի:

Առաջին աստիճանը կյանքի հաստատացման տարիներն են, կյանքի առաջին երկու տասնամյակները, երբ էակը դեռ շատ թարմ է, աճելական բուռն ուժով և իր ամբողջ դոյությամբ փոփոխման, զարգացման, բացման ու կատարելագործման կ՛ձգտի: Կրթական տեսակետեն ամենեն ուժեղ և ամենեն կարևոր հատվածը մարդկային կյանքի: Ուժերու աճման և բացման շրջանը:

Երկրորդ աստիճանը կկազմեն երիտասարդացման և երիտասարդության տարիները՝ քսանեն մինչև մոտ քառասուն: Թե՛ մարմինը, թե՛ հոգին առած են արդեն իրենց վերջնական կաղապարը, մտքերն ու չահերը հետզհետե կկեդրոնանան որոշ ուղղությամբ, բայց դեռ բազմակողմանի են և բաց հետաքրքրություններու:

Ձևոններեց է, հանդուգն այս տարիքը, սեր ունի նորություններու, փոփոխություններու, ուժերու հորդումին տարիներն են. մարդը իր ուժերը չի խնայեր, պահանջ ունի ուժեղ հուզումներու ու ցնցումի: Եվ սերնդելու բնազդը սանձարձակ կտիրե և շրջանի կեսերուն կհասցնե ամուսնության, այսինքն սանձահարության, մանավանդ երբ կունենան մեկ-երկու երեխա: Եվ անհատը դադրած է արդեն պարզ անհատ մը ըլլալե, գործի ու կապերու որոշ շրջանակ մը ունի, իր նոր հյուսած բույնը ունի, որոնք հետզհետե չեչված կերպով և՛ կկեդրոնացում, և՛ միակողմանիություն կուտան իր զգացումներուն, իր մտածումներուն, իր վայելքին և հոգերուն: Այսինքն նվազած է արդեն շատ զգալի չափերով զարգացման թափը, և սահմանափակված է նորեն շատ զգալի չափերով զարգացման դաշտը:

Երրորդ աստիճանը կկազմեն այրացման ու առնության տարիները, ուրեմն երրորդ քսանամյակը՝ քառասունեն մինչև վաթսուն: Ամենեն հասուն ու խելահաս հատվածը կյանքի. աշխատանքի ու ստեղծագործության ամենեն բեղուն տարիները, և այդ աշխատանքն ու ստեղծագործությունը կդնեն իրենց կնիքը վերջնապես անհատի հետաքրքրություններուն և կեդրոնացման վրա: Զարմանքներն ու հափշտակումները կանգ կառնեն. ընդհակառակը, ուժեղ կերպով կընդգծվին բոլոր անհատական գծերը, անհատական սերերը, ճաշակները: Մարդը դեր ունի, դիրք ունի

արդեն որոշ և իր ազդեցության կնիքը դնելու պահանջը իր շրջապատին վրա: Ամեն բանի մեջ զգալի է սահմանափակումը, կողմնակի ճամբաներե և նոր փորձերեն խուսափումը: Եվ քանի հիսունեն կհեռանանք, այնքան կամրացնենք ներքին մայրաքաղաքը դիմացկուն պարիսպներով. արտաքին նորութիւններու մուտքը հետզհետե ավելի կդժվարանա. ամեն նոր եկող տեսութիւն, նոր արվեստ ու նոր տեսակի տպավորութիւն ու մտածում պետք է իր ինքնուրոյնը ապացուցանել կարողանա, որ ներս ընդունվիլը հնարավոր դառնա, հաճախ կպահանջվի մասնավոր ուժեղ հանճնարարականներ: Եվ մարդը իր այդ բերդին մեջ կամաց-կամաց բոլորովին կամփոփվի իր ընտանիքին, իր զգացումներուն, իր ծրագիրներուն վրա, ուրիշ կողմնակի զարգացումներու, փոփոխութիւններու և երազանքներու համար ոչ միայն փափագ չի մնար, այլև ժամանակ չի մնար:

Կյանքի չորրորդ և վերջին հատվածը կկազմեն ծերացման և ծերութեան տարիները՝ վաթսունեն անդին, աշխատունակութեան, արդյունավորութեան և կորովի աստիճանաբար խոնարհման տարիները մինչև դեպի ութսուն և դեպի ավելին: Աշխատանքը և պիտանիութիւնը դեռ կրնա չարունակվիլ երբեմն շատ երկար ու մինչև վերջին վայրկյանը, բայց միշտ հին, յուրացված ու սովորական դարձած ճամբաներով. կամաց-կամաց կարծես խուլ ու անզգա կդառնա մարդը դեպի նոր տեսակի հրապույրները, նոր շարժումները, նոր պայմանները: Սիրտը դեպի հինը կքաշե միշտ, հին հաջողութիւններով կոգևորվի: Թեթև փոփոխութիւններ, սրբագրութիւններ ու նորութիւններ հնարավոր են միայն շատ համեստ չափերով և ընդհանրապես արդեն իր հակումներու ու հետաքրքրութիւններու շատ որոշ գծված սահմանին մեջ: Ուժերը խնայելու և աշխատանքը տնտեսութեամբ տանելու շրջանն է: Եվ ավելի մտածելու, դիտելու և փիլիսոփայելու տրամադրութիւն կա, քան գործելու, գործուն մասնակցութեան:

Անշուշտ անհատե անհատ բավական զգալի տարբերութիւններ կան կյանքի այս չորս խոշոր հատվածներու սահմանագծումներու վերաբերմամբ, բայց այս չորս խոշոր հատվածները ընդհանուր առումով կան ամեն մարդու կյանքին մեջ: Մեկուն կամ մյուսին համար այս կամ այն հատվածը կրնա կարճիլ կամ

երկարիլ՝ առանց ընդհանուր օրինքին արժեքը պակսեցնելու: Ժառանգական գծերը և կյանքի պատահականութիւնները հոս մեծ դեր կխաղան, և առողջութիւնը՝ նմանապես: Առողջ, կենսունակ, զրկանքներն և վշտերն չկքած և իրենց երիտասարդութիւնը չվայելուչութիւններու մեջ չմաշած անհատներու հատվածական այս սահմանները բնականաբար հետ-հետ կերթան ավելի. ընդհակառակը, ժառանգական, տնտեսական, կենցաղական ու բարոյական թերութիւնները ու դժբաղդութիւնները այդ սահմանները շատ կմոտեցնեն իրարու և կկարճեն կյանքը ընդհանրապես:

ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ ԾՐՋԱՆՆԵՐԸ

Կյանքի այս բնական հատուածներուն վերջին երեք հատվածները աստիճանական թուլացում մը կներկայացնեն կենսական կորովի, աստիճանական նեղացում մը ցույց կուտան հետաքրքրութիւններու և շատ զգալի սահմանափակում կրթական դաշտի, և այս պատճառով ալ արդեն այդ երեք վերջին հատվածները իրարմե կզանազանենք՝ իբրև կրթական տարբեր աստիճաններ, բայց և այնպես այդ երեք վերջին աստիճանները շատ ավելի մոտիկ են իրար ու նման, եթե համեմատելու ըլլանք մարդկային կյանքի առաջին հատվածին հետ իրենց կրթական արժեքով:

Երեք վերջին հատվածները միասին առած կյանքի հասունութիւնը կներկայացնեն, մինչդեռ առաջին հատվածը կյանքի հասունացման տարիներն են: Այս հասունութեան տարիներուն ամենեն առաջին 4-5 տարիները միայն, այսինքն երիտասարդացման տարիներն են, որ բնական կերպով ամենեն ավելի մոտիկ ու նման կուգան հասունացման տարիներուն: Արդեն այդ քանի մը տարիները բնական փոխանցումը կներկայացնեն հասունացման ու հասունութեան տարիներուն միջև. իր որոշ գծերովը հասունացման անմիջական շարունակութիւնն է, ուրիշ գծերով հասունութեան տարիներուն սկիզբը:

Ահեղիութեան և կրթութեան ունեցած թափը առաջին հատվածին մեջ բնավ կարելի չէ համեմատել հաջորդ հատվածներուն հետ: Հաջորդ յուրաքանչյուր քսանական տարիներու տևողութեան սկիզբի, մեջի ու վերջին տարիներուն մեջ անշուշտ որ կան տար-

բերութիւններ և՛ թարմութեան, և՛ կրթունակութեան տեսակետեն, բայց այդ տարբերութիւնները ո՛չ այնքան կարևոր են, ո՛չ այնքան չեչուած և մասնաւոր գործնական կամ տեսական արժէք մը չեն ներկայացներ, որ այդ ներքին տարբերութիւնները իրարմէ զատենք ու իբրև նոր ներքին հատուածներ աչքի առաջ ունենանք: Այդպես չէ սակայն կեանքի առաջին քսանամեակին դիրքը:

Աճումը հոս այնքան ուժեղ ընթացք ունի, այնքան խոշոր ներքին ու արտաքին տարբերութիւններ կառաջացնէ, կրթութեան դերը այնքան մեծ է, այնքան արագ, և հոգու ու մարմնի կրած փոփոխութիւնները՝ այնքան կարևոր և աչքի զարնող, որ անկարելի է հասունացման տարիներուն վրա նայել մեկ ծայրեն մյուսը իբրև նույն ու միատեսակ ամբողջութեան վրա: Բազմաթիվ գործարաններ ու բազմաթիվ կարողութիւններ արագ ու իրարու քով ու իրարու մեջ կբացվին, բայց ո՛չ բոլորը միաժամանակ և ո՛չ բոլորը նույն թափով: Բոլոր գործարանները և բոլոր գործունեութիւնները կբանին իրարու զուգահեռ, բայց ոմանք՝ թեթև ու դանդաղ, տեսակ մը խարխափելով, մյուսները՝ հանգիստ, բայց հարաճուն կարևորութեամբ, ուրիշները հոսանք կառնեն առաջին գրեն և կընթանան խելագար վազքով: Այնպես որ, հասունցող տարիքին սկիզբի, մեջի ու վերջի տարիները չատ խոշոր և հիմնական տարբերութիւններ ունին իրարմե: Այդ հատվածը ամբողջութիւն մըն է այն իմաստով, որ անհատի դեռ չհասունցած վիճակն է, որ այդ երկու տասնյակ տարիներու ընթացքին ճիշդ այդ հասունացումն է, որ տեղի կունենա անգամ մը այս, անգամ մը այն մասերուն ու կողմերուն մեջ:

Ժողովուրդներու փորձառութիւնը, մանկավարժական դիտողութիւնը և պետական օրենքները բոլորն ալ քսան տարեկանին վրա կդնեն հասունութեան սահմանը: Անշուշտ ամեն մարդու համար, երկու սեռի համար և ամեն ցեղի ու տեղի համար ուղիղ քսան տարին բոլորովին ճիշդ ըլլալ չի կրնար, բայց մեկ-մեկուկես տարի ավելի ուշ կամ ավելի կանուխ՝ կարևորութիւն չունի երևութին համար, և ընդհանուր առմամբ ամենեն ավելի մոտիկ է իրականութեան քսան տարեկանին համար ընդհանրապես ընդունված սահմանը:

Այնպես որ թե՛ գիտական և թե՛ գործնական պահանջներով

Հարկ կըլլա մարդուս կեանքի այդ առաջին քսանամեայ հասուածը բաժնել քանի մը շրջաններու, կարելի է երկ-երկու տարիով տասը հասուած ընել, կարելի է երեք-երեք տարով յոթը կտոր ընել, բայց ամէնեն գործնականը, ամէնեն հարմարը և ամէնեն աւելի իրական վիճակին մոտիկ մնացողը հինգ շրջաններու բաժանելն է:

Հասունացման տարիներու այդ հինգ շրջաններն են հետեւեալները:

Կեանքի առաջին երեք-երեքուկես տարիները կկազմեն մարդուս երեխայական շրջանը: Այս միջոցին է, որ կըացվին ու կզործեն զգայարանները իրենց ամբողջ թափով, երեխան լեզու կելլե և կելլե ոտքի. տեսակ մը լրացման և մարզացման շրջան է: Ընկերական տեսակետեն ալ ամէնեն ցածի աստիճանը կկազմե. հոգեկան ամբողջ գործունեութեան առանցքը էապես ես-ն է. ամեն ինչ մանկական պետքին ու հաճույքին չուրջը կդառնա. մարզկային կակի ամէնեն եսական շրջանն է:

Երեք ու կեսեն մինչև յոթը տարեկանը կկազմեն երկրորդ շրջանը՝ մանկական շրջանը, մտաւոր կարողութիւնները ահագին ճամբա կկտրեն. միտքը կլցվի արտաքին աշխարհի մասին բազմաթիվ ու այլազան դիտողութիւններով, ծանոթութիւններով, զգայարանքներու վառ գործունեութեան շրջանն է: Եվ այդ զգայարանական դիզված և դիզվող հարուստ պաշարը դեռ ենթակա չէ ներքին արամաբանական ուժեղ փորձառութեան, որով շատ աւելի դյուրին և ազատ կերպով ատոնք կրնան իրարու կապվիլ ու իրարմե զատվիլ, այսինքն երևակայութիւնը մեծ չափերով դեր կխաղա մանուկ հոգիի մեջ: Զգայարաններուն կից անվերջ կգործեն մատները, բոլոր փորձերու գործադրիչն են անոնք, փոփոխութիւններ առաջացնելու, նորութիւններ մեջտեղ հանելու, զանազան բաներ չինելու և ստեղծելու հետզհետե վարպետ դարձող գործիքներն են ատոնք: Ընկերական տեսակետեն առանցքը ընտանիքն է, հարաբերութիւններ, համակրանք, զգացումներ և բարոյական ըմբռնումները հիմնված են էապես ընտանիքի վրա. ընտանիքը դարձած է տեսակ մը լայնացումը, ընդարձակումը անհատական ես-ի:

Հասունցող տարիներու երրորդ շրջանը կկազմեն 7-11 տարիքը՝ կեանքի տղայական շրջանը: Մտքի աշխատանքը շատ

կշեչովի. մեկ կողմեն կշարունակվի մտապատկերներու հարստացումը, մյուս կողմեն այդ բոլոր ամբարված պաշարը և փորձերը հետզհետե իրարու կկապվին, իրարու կհամեմատվին, կդասավորվին, կխմբվին. փնջելու և ամբողջություններ կազմելու ճիգը քանի կերթա, կմեծնա՝ այդ բոլոր ցրիվ և առատ տեղեկությունները դյուրությամբ գրկել և տիրել կարողանալու համար. ուրիշ խոսքով՝ դրսի աշխարհը մեր մտքին մեջ նոր կերպով կդասավորվի, բայց այդ բոլոր զատող ու կապող աշխատանքին մեջ դեռ վերացական հատկությունները չեն գլխավոր դեր կատարողը, այլ իրականին մոտիկ մնացող, գործնական կապակցություններ, և ընդհանրապես այս շրջանի մեջ տիրապետողը պատկերավոր մտածումն է, ամեն ինչի իրացի առումը: Մկանային հյուսքերն արդեն շատ զորացած են, և մկանային ճիգերուն ու շարժումներուն հաճույքը՝ խիստ չատցած: Նախորդ երկու շրջաններուն եռանդը, լինի ջղային թե մկանային, կսպառվեր գլխավորապես խաղի մեջոցով. աշխատանքն անգամ կիսախաղ էր: Հիմա տղայական այս շրջանին խաղն ու աշխատանքը իրար կհավասարին: Ընկերային տեսակետեն հետաքրքրությունը, ծանոթությունը, ինչպես և քաղաքավարական, իրավական ու բարոյական ըմբռնումները հետզհետե ընտանիքեն կանցնեն իր շուրջի տեղական ու ցեղական հասարակությանը, դեպի իր գյուղն ու քաղաքը. նորեն առանցքը ընտանիքն է, բայց արդեն կապված ավելի լայն ամբողջության մը. արթննալու վրա են համայնական զգացումները:

Հասունացման չորրորդ շրջանը կկազմեն 11-15 տարիները, որ կանվանեմ պատանեցման շրջան. դեռ պատանի չէ, բայց արդեն տղա ալ չէ: Այս շրջանի մեջն է, որ կսկսին հասուննալ ու արտադրել սեռական գեղձերը, ժամանակի այն միջոցը, որ արբունք կանվանենք: Տաք երկիրներու մեջ ավելի շուտ կուգա այդ հասունացումը, ցուրտ երկիրներու մեջ՝ ավելի ուշ, աղջիկներունը՝ քիչ մը ավելի կանուխ, քան տղոցը, ընդհանուր առումով՝ պատանեցման տարիներուն վերջը: Սեռական առաջին խլրտումներուն հետ կսկսի խորանալ զգացումներու աշխարհը, բայց դեռ ամեն ինչ շատ է մշուշոտ. տիրապետողը բնազդական որոնումն է, մեջեմեջ հուզում, արտասուք, որ ընդհանրապես ծածուկ կպահվի, կդառնան դյուրազգաց, որ կոպտություն կհագնի, նաև հաճախ երազկոտ: Մտավոր

աշխատանքի մեջ վերացականացման և ընդհանրացման հակումն է, որ հետզհետե կդարանա և շրջանին վերջը արդեն կգա ու կհավասարի պատկերավոր մտածումին. դեռ մեծ է, անշուշտ, պատկերավորի, իրացականի խաղցած դերը և անհատականի կարևորությունը, բայց աստր հյուսված միտքը արդեն կճգտի ամեն բան ընդհանրացնելու, գիտական դասակարգության ենթարկելու. դեռ բան գիտական շրջանը չէ, բայց արդեն գիտականացման շրջանն է: Մկաններու պնդացման և մարմնի զորեղացման զուգընթաց՝ շատ կսիրվին ուժի խաղերը, արհեստներով զբաղիլը, երկար թափառումները, արշավանքները: Բնությունը խուզարկելու, դուրը գիշերելու, արկածախնդրություններ փնտրելու սերը կմեծնա, ինչպես և բնակերով կապվելու և անոնց հետ խմբական ձեռնարկներու սերը: Անդրային տեսակետեն հասած ենք հայրենիքի ու ազգության բմբռնումին. իր ժողովուրդի ապրած երկիրը, իր ժողովուրդի հերոսները, անոնց գործերը, անոնց օրինակը, անոնց խեւապր, հետաքրքրության կեդրոնը հետզհետե իր ժողովուրդն է: Անհատր բնաանիքի ու համայնքի միջով հասած է ինքզինքը ավելի մեծ ամբողջության մը մեկ մասնիկը նկատելու: Գերագույն արրուժյուններ այդ մեծ ամբողջություններն է հիմա. ևս-ը հպարտ է անով և հպարտ է, որ այդ մեծ հավաքականության մեկ մասնիկն է ինքը. և կերազի իր գործերով, իր ձգտումներով ավելի ևս մեծցնել իր ժողովուրդի հերոսներուն և հերոսություններուն թիվը և ավելի ևս բարձրացնել իր ազգության ու հայրենիքը: Հերոսություն, արկածախնդրություն, կռվազանություն, անձնվիրություն և արժանապատվություն կհյուսվին իրար իր հոգիին մեջ:

Հասունցող տարիքի վերջին ու հինգերորդ շրջանը կկազմեն առաջին քսանամյակին վերջին չորս տարիները, 15-19, այսինքն մինչև կյանքի 19-րդ տարվան վերջը. պատանեկան տարիներն են անոնք: Արդեն հասած է մարդը զուտ գիտական հետաքրքրության, պատկերավոր մտածումը այլևս իբրև օրինակ կգործածվի, իբրև օժանդակ մը, իբրև հիմք մը, որուն վրա կկառուցվի վերացականություններուն չինքը. դասակարգումները կկատարվին այլևս ո՛չ ըստ գործնականի, այլ ըստ հատկություններու, ամեն ինչ սիմֆնամի բերելու պահանջը կշեշտվի, ամեն ինչ պատճառականության ենթարկելու և ամեն ինչ գիտականորեն ամբողջացնելու:

Մարմնի զարգացման տեսակետեն ուժեղ չարժումներու, ուժեղ մարզանքներու, ուժի ցուցադրութեան և մրցանքի շրջանն է, և ընկերներու մեջ վարողի, առաջնորդողի դերը կփնտրվի. և ամբողջ էութիւնը դեպի գործը կձգտի. և կաճի սերը աշխատանքի. նույնիսկ խաղերը աշխատանք կդառնան. առատ եռանդ կա սպառելու: Հանրային տեսակետեն հասած ենք մարդկայինին. տիրողը թեև միշտ իր աղգութեան հետաքրքրութիւնն է իր հոգուն մեջ, բայց այդ աղգային երազներն ու տենչանքները հետզհետե կկապվին նաև մյուս ժողովուրդներու բարձրացման ու բաղդավորութեան, համակարգային բարելավման և մարդկային ընդհանուր երջանկութեան մը մեջ կփնտրվի նաև իր ժողովրդի ապագա բաղդավորութիւնը. ազգայինն ու համամարդկայինը չարունակ կչփոթվին ու կխառնվին իրար. գործնականին մեջ երբեմն մեկը, երբեմն մյուսը կելլեն ջուրին երեսը՝ նայելով պայմաններուն: Ամեն պարագայի ընկերական մեծ ցավերը, ժողովուրդներու հոգեկան բարձրացումը, տնտեսական անհավասարութիւնը, տիրող ու տիրվածի «անիծված հարցերը» կզբաղեցնեն ամեն հասած պատանիի հոգին ավելի կամ նվազ չեչտված կերպով: Մեծ հանրութիւններու օգտակար ըլլալու, ամենուն բաղդավորութեանը ծառայելու, աշխարհիս երեսեն ցավն ու տառապանքը պակսեցնելու, ուրիշներու համար ապրելու ու մեռնելու ներքին որոշ-անորոշ պահանջները հոգիին խորքը անունդ կստանան ու կհյուսվին ընդհանրապես հեռվեն հեռու սիրվող էակի մը պատկերին ու աչքերուն կամ այդ տեսակի էակի մը ծարավին ու կարոտին: Բարոյական թռիչքներու, հասարակական վառ իտեալներու, «պղատոնական» սիրո և ոգևորված ամբողջական նվիրման բաղդավոր տարիներն են:

Այս կամ այն անհատի կյանքին մեջ կրնա մեկ կամ մյուս շրջանը շատ չեչտված ըլլալ՝ տեսակ մը կարծես ճուլվելով մասամբ նախորդ, մասամբ հաջորդ շրջաններուն, որով տևողութեամբ կրնան բոլոր շրջանները իրարու հավասար չգալ: Բայց և այնպես այդ բնական ու կանոնավոր հաջորդականութիւնը գոյութիւն ունի ու կկազմե մարդկային հոգու զարգացման բնական աստիճանները. և ատվար մեծամասնութեան համար համապատասխան վերը նշանակված տարիներուն:

Գ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԵՐԵՔ ՀՈՒՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ

Մարդկային էակի մը զարգացման վրա ազդեցություն ունեցող ամեն դեպք ու երևույթ կրնա ազդել երեք ձևով. կրթության գործադրությունը ունի երեք տեսակ:

Առաջին տեսակն է անվար կրթությունը, երբ ազդեցությունը կկատարվի բնական ճամբով, ինքնիրենը, պատահաբար, առանց որևէ մարդկային դիտավորության, առանց որևէ մեկուն կողմե նախամտածված հաշվի և ծրագրի, երբ չկա ո՛չ նպատակ, ո՛չ դիտակցություն, ո՛չ դեկավարություն:

Երկրորդ տեսակն է դեկավար կրթությունը, երբ ազդեցությունը կկատարվի ավելի կամ պակաս նախամտածված ճամբով մը, շրջապատողներու ավելի կամ պակաս դիտակից ընտրությամբ ու ցանկությամբ, շատ անգամ հատակ մտածված միջոցներով և որոշ նպատակի մը հասնելու դիտավորությամբ. այսինքն երբ անհատին վրա ներգործող ազդեցության մեջ կա այս կամ այն ատիճանի շրջապատողներու դիտակից դիտումը և կամավոր դեկավարություն:

Կենդանիներու մեջ սիրապետողը կանքի անվար կրթությունն է անշուշտ, բայց անոնք ալ ունին որոշ աստիճանի դեկավար կրթություն մը, ծնողներու կողմե «ավանդվող» կրթություն մը, «դիտավորյալ» ու «դիտակից» բաժին մը զարգացման նպաստելու, թեև անշուշտ շատ ավելի փոքր չափերով, եթե համեմատենք մարդու ստացած դեկավար կրթության հետ: Թռչունը բույն չինել կսորվեցնեն իր փոքրիկներուն, ուրիշները՝ զանազան խորամանկություններ, կատուն «որս կվարժ» իր ձագերուն հետ, և բոլոր բարձր կենդանիները կռիվ կվարժեցնեն իրենց նոր սերունդը: Բայց այս ամենուն մեջ դեռ շատ է նախնական դիտակցությունը, դիտավորությունը աղոտ է և շատ սերտ հյուսված կյանքի պատահական կրթության, ընդհանրապես դժվար է իրարմե զատել անվարն ու դեկավարը:

Այս բաժանումը կշեշտվի մարդկային քաղաքակրթության զարգացման դուզընթաց: Մարդուն սորվեցնելիք բանները սաստիկ

կչատնան, կբարդանան ու կնրբանան, երկար ժամանակ ու երկար ճիգեր կպահանջեն: Մյուս կողմեն ալ զարգացող տկար ու անխելահաս էակին օգնելու պահանջը գիտակից կդառնա. հասուն մարդու փորձառուությունը, զանազան հաշիվներն ու ցանկուբյուններըը մտածված կերպով մեջ կուգան նոր էակի կազմավորմանը վրա ազդելու, որոշ ուղղուբյուն տալու անոր և որոշ պատրաստուբյուն այսինչ կամ այնինչ տեսակի գործերու համար: Ժողովուրդ մը որքան ցած է կեցած քաղաքակրթական սանդուղին վրա, այնքան անկերպարան է իր տված դեկավար կրթուբյունը և այնքան ալ մոտիվ է ու նման անվար կրթուբյան: Ժողովուրդներուն կյանքը որչափ քաղաքակրթապես բարձրանա, այնքան ալ խոր արմատ կբռնե դեկավարուբյունը, կկազմակերպվի ու կտարածվի իբրև ժողովրդի հանրային կյանքին մեկ շատ կարևոր մասը:

Կրթուբյան իրականացմանը ծառայող կամ նպաստող ճամբա մըն է նաև ինքնակրթուբյունը՝ կրթուբյան երրորդ տեսակը: Աս ալ դեկավար կրթուբյուն է, բայց ո՛չ շրջապատողներու դեկավարուբյուն, ո՛չ ուրիշներու ընտրած ու տված կրթուբյունը. կրթվող էակի սեփական դեկավարուբյունը: Եվ ընդհանրապես իր անձնական գծերը շեշտելու, իր տաղանդը մշակելու, իր անհատական կարողուբյունները ուժեղցնելու համար:

Անհատը ինքն է, որ կծրագրե, կվարե, կհսկե ու կգործադրե իր անձին, իր հոգիին, իր մտքին կամ մկանային այս ու այն կողմի կամ թերիի զարգացման գործը: Շատ հաճախ ընտանիքեն մեկը, ընկեր մը, դեկավար դիրք մը, խորհրդատու գրասենյակ մը կրնա օգնուբյան գալ անոր թափած ճիգերուն, բայց ասիկա արդեն նախորդ ուրիշներու դեկավարուբյունը չէ. օտար խոսքը, օտար ցուցումը օժանդակ մըն է միայն. ուզողը, աշխատանքը ձեռնարկողը և գործադրուբյան դնողը անհատը ինքն է:

Հաճախ տկար կըլլա ինքնավար կրթուբյունը, ո՛չ հարատև, մեծ ընդհատումներով, բազմատեսակ խարխաբումներով կամ ո՛չ խոր, ո՛չ ամեն անգամ նույն պայծառ գիտակցուբյամբ և հստակ նախագծով, որոնք այնքան կարևորուբյուն ունին ձեռնարկներու հաջողուբյան համար: Ասիկա չիտակ է, բայց ուրիշներու դեկավարուբյունն ալ չի կրնար շատ հպարտանալ, թե ամեն բան կրնե հստակ բռնված ծրագրով մը, և ո՛չ ալ կրնա պարծենալ, թե ամեն

անգամ կհետևի իր նախագծած ծրագիրներուն, և որ իր բոլոր բայլերը մտածված են, դիտավորյալ ու դիտակից:

Ինքնակրթության ուժն ու հարատևությունը մեկ կողմեն ընտանության հարց է, կամքի կրթության, մյուս կողմեն ալ ատիկա արվեստ մըն է ինքնին, որ ընելով ու վարժվելով ձեռք կբերվի. ինքնաշխատության տևականությունն ու հաջողությունը ապահովելու համար անհրաժեշտ է՝ անհատը նախապես պատրաստված ըլլա իր ինքնակրթությունը վարելու, ուրիշ խոսքով՝ այդ անհրաժեշտ նախապատրաստության մասին ալ պետք է մտածեն ղեկավար կրթությունը և նախօրոք հող պատրաստեն:

ԺԽՏՈՒՄՆԵՐ

Կրթության այս երեք տեսակներուն գոյությունը և անոնցմե ամեն մեկուն դերն ու արժեքը ամենուն կողմե պարզ ու խոր չգիտակցվիր. թերի մտածումներ ու նախապաշարումներ կան:

Ա. Նախ ղեկավար և անվար կրթությունները չեն նկատվիր իրրև իրարու աշխատակից և իրար լրացնող երկու տեսակները կրթության, այլ կըմբռնվին ընթացիկ դատողություններու ժամանակ իրրև իրարու հակադիր, իրրև մեկը մյուսի ժխտումը: Շատ-շատերն են, որ կրթություն ըսելով կհասկնան միայն ղեկավար կրթություն, իսկ կյանքի ու բնության և ընկերական չփումներու աված լայն ու խորին ազդեցությունը, այսինքն անվար կրթությունը, չեն ընդունիր իրրև կրթության մաս, աւոնց մասին չեն մտածեր իրրև կրթիչ գործոնի կամ հարկ եղած չափով ուշադրության չեն առներ: Կրթության բարձր կոչումին արժանի կհամարեն միայն բնաւնիքի հոգածությունը, խրատը, դպրոցներու կարգապահությունը, ուսումները և պետական ու կրոնական բարոյականությունը: Անվար կրթության տվածը անոնց համար «անկրթություն» է:

Սակայն այնքան ալ փոքր չէ մյուս խումբին թիվը, որ հակառակ ուղղությամբ կղատան, որ խորապես ըմբռնելով ինքնին կատարվող բնական, հասարակական ու անտեսական պայմաններու ունեցած ահագին դերն ու ազդեցությունը անհատներու զարգացման վրա՝ ուսերը թոթվող արհամարհանք մը ունի միայն կամ առնվազն

խոշոր թերահավատութիւն մը ղեկավար կրթութեան «դպրոց»-ներուն ու «դաս»-երուն հանդէպ:

Կեանքի անվերջ փորձը, այսքան-այսքան կրթական հաստատութիւններու գոյութիւնը և օրե օր չատացումը, ինչպես և քիչիկ մը լուրջ մտածողութիւնը լիովին հերիք է ապացուցանելու համար, որ կրթութեան ղեկավար տեսակը միայն բույսերն ու կենդանիները չէ, որ կկատարելագործե և կօգտագործե: Նաև մարդկային մարմնի և հոգու բոլոր կողմերու զարգացման վրա խոշոր դեր ու կարելիութիւններ ունին գիտակից արվեստը, ընտրված միջավայրը, հարմարեցված միջոցները, նախամտածված ծրագիրը, սիսթեմով աշխատիլը և համառ ու կանոնավոր կրկնութիւնը, մեկ խոսքով՝ ղեկավարութիւնը:

Բ. Դպրոցական կրթութիւնը արհամարհելը սխալ մըն է չատ կոպիտ, և խորքը նայած՝ գուցե ավելի բողոք մըն է կրթական հաստատութիւններուն մեջ գոյութիւն ունեցող բազմապիսի թերութիւններուն դեմ, քան իսկապես արհամարհանք: Բայց ճիշդ այդ կարգի սխալ մըն է, և՛ կոպիտ, և՛ նեղմիտ, անվար կրթութեան դեմ եղած արհամարհանքը: Ինչպե՞ս կարելի է բանի տեղ չդնել կեանքի տված անվար կրթութիւնը, իբրև ցած տեսակի ու անչահ ապրանք մը նկատել, երբ մեզմե ամեն մեկուն ձևակերպման մեջ անիկա հսկայական դեր կկատարե, երբ մեր ամբողջ կեանքի ընթացքին մեկ ծայրեն մյուսը մեզի անդադար կփոխե, կհղկե, կծռե ու կշտկե: Նաև մարդուն համար կրթվիլը ապրիլ ըսել է, և ապրիլը՝ կրթվիլ: Ջուրթակի մը վրա նույն ձայնախաղերու միօրինակ ու ժամերով կատարված վարժութիւնը կեանք է, ջուրթակահարի ապրած կեանքին մեկ կտորը, երբեմն մեկ շատ կարևոր կտորը: Կրթութիւնը կեանքեն ու ապրելեն դուրս եղող բան մը չէ, իբրև անոր կցված հավելվածական կամ նախապատրաստական բան մը, ինչպես սովորաբար կմտածվի, երբ անվար կրթութեան գոյութիւնը կմոռնանք:

Շատ հին, շատ կրկնված և շատ խոր ճշմարտութիւն մըն է, որ դպրոցներեն ամենեն լավը կեանքը ինքն է: Մարդա չրջապատող կեանքն ու իրականութիւնը ճիշդ նույն իմաստով լայն ու բաց դպրոց մըն է, ինչպես մեր չորս պատերով նեղլիկ դպրոցները: Իրա՛վ է, կեանքի անվար կրթութեան մեջ չատ կան իրար

խաչաձևող, պիտանի ու անպիտան, օգտակար ու վնասակար աղղեցություններ: Բայց մի՞թե մեր դպրոցներուն ու դեկավարության մեջ քիչ կան ծուռ ու սխալ, աննպատակ ու վնասակար կողմեր ու գծեր:

Եվ եթե քիչ մը խորը նայինք՝ մեր մինչև հիմա ունեցած ընդհանրապես խեղճ դպրոցներուն մեջ աղղեցության լավագույն բաժինը կպարտինք նորեն այդ նեղ պատերուն մեջ բնակվող «կյանքի դպրոցին», այսինքն ուսուցիչներու կենդանի և աղատ օրինակին, ընկերներու բնական և անդեկավար չփումին, խմբական կյանքի ինքնահոս պահանջներուն և դպրոցի դրադարաններուն մեջ ավելի կամ պակաս պատահական կերպով իրարու քով շարված հատորներուն:

Գ. Ինքնակրթությունն ալ ունի թերի գնահատված ըլլալու իր բաժինը: Թեև ամենուն ծանոթ դիտողություն մըն է, որ շատ մարդիկ ինքնաչխատությամբ կտիրանան զանազան տեսակի կարողություններու, ուսումներու ու զարգացման, բայց ատիկա կհամարվի միշտ տեսակ մը բացառիկ վիճակ անոնց համար, որոնք սովորական ճամբով անցնիլ չեն կրցած, այսինքն կնկատվի դեկավար կրթության պակասը լրացնող ճարահատ փոփոխություն մը: Եվ ան ալ անհատի մը թափած ճիգերը շատ զգալի և չշափելի պիտի ըլլան, և ստացված արդյունքն ալ՝ շատ տեսանելի, որ իրենց վրա հրավիրեն ուշադրություն և առանձնացվին իբրև ինքնուրույն տեսակ մը կրթության, թեև չէ ինքնակրթության ավելի սովորական, ավելի տարածված և ընթացիկ մեղմ ճիգերն ու աստիճանները շատ դյուրությամբ կշփոթվին անվար կրթության հետ, կվերադրվին պատահականություններու, կյանքի բերումին ու «կյանքի դպրոցին»:

Շատ քիչերն են, որ ինքնակրթությունը կնկատեն ընդհանուր կրթական երևույթ մը և մշտական, հաստատ տեսակը մը կրթության: Եվ մինչև որ այս աչքով չնայինք ինքնակրթության վրա, ինքնակրթությունը ինքը չի կրնար ծառայել մեզի այն չափով և այն խորությամբ, որուն հնարավորությունը իր էության մեջ կա: Ճիշդ այնպես, ինչպես որ դպրոցներու միջոցով կրթության տալը երբեք չէր հասներ իր արդի բարձրության, եթե դեկավար կրթությունը չըմբռնվեր անհատներու զարգացման համար իբրև մեծ

կարևորություն ունեցող ընդհանուր երևույթ մը, իբրև ամենուն համար մեծ արժեք ներկայացնող կրթական հաստատուն զենք մը:

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ավելի ծայրահեղ ժխտում մըն է ընդհանրապես կրթութիւն ըսվածը բանի տեղ չդնելը: Ինչպես որ ինքնակրթութիւնը իբրև ոչինչ ու կարկտան բան մը կնկատվի դեռ շատերու կողմե, այդպես ալ ամբողջ կրթութիւնը ըստ էութեան ոմանց կողմե կհամարվի շատ տկար ու խեղճ խնդիր մը, որուն վրա գլուխ հոգնեցնել չարժեր:

«Ըսէ ինծի, ի՞նչ խնճորի կուտ է, որ կնեռես Հողին մեջ, և ես կըսեմ քեզի. թե ցանած սերմեդ ինչ ծառ պիտի բարձրանա, ինչ տեսքով, ինչ բարձրութեան, ինչ կարողութիւններով և ինչ գույնի խնճոր պիտի տա քեզի՝ կարմի՞ր, դեղի՞ն, նո՞ւրբ, թե՞ կոշտ մաշկով, ինչ բույրով. փափուկ ու մսե՞ղ, թե՞ ավելի ամուր կամ ջրիկ, անհա՞մ, քա՞ղցր, թե՞ թթվաչ: Ամեն ինչ կախված է սերմեն. մնացածը խիստ երկրորդական բաները են: Այո՛, շատ մեծ ճիգերով չնչին բաներ մը կարելի է փոխել թևթևակի, ան ալ երկար սերունդներու աշխատանքով, իսկ անհատի բնածին հատկութիւններուն դեմ այդ ճիգերը ըստ էութեան անզոր են»:

Այսինքն ժառանգութիւնը ամեն ինչ կանխորոշած է, գոնե ամեն ինչ, որ էական է ու կարևոր: Եվ կրթութիւն ըսվածը ինքզինքը մեծ բան մը կարծող անզորութիւն մըն է: Բարոյական գծերու, ընդունակութիւններու և տաղանդի հարցերու մեջ վիճելն ալ ավելորդ է: Տեղեկութիւններու, ուսումներու և արհեստներու տեսակետեն կարելի է քիչ մը օգնել, եթե բնական հետաքրքրութիւնը և շնորհքը կա, թեև կրթութիւնը ընդհանրապես ավելի կփճացնե, կծռե, քան կօգնե: Աս է ձևակերպումը լրիվ ժխտումի:

Թե ժառանգական օրենքը հիմքն է ամեն զարգացման՝ անշուշտ որ դուրս է ամեն վեճե, բայց ժառանգականութեան այսպես միակողմանի ընդգծումով կրթութեան մեծ ու շատ կարևոր դերը անտեսել ուզելը կարճատես ու վայրիվերո վարմունք է և արդյունք է կա՛մ չմարսված դատողութիւններու, կա՛մ նորեն բողոքի ձև մըն է դպրոցական և ընտանեկան կրթութեան անհեթեթ սխալներուն և ծռութիւններուն դեմ:

Նախ և առաջ ժառանգական ունակութիւնները պետք է բացվիլ կարողանան, որ դառնան ժառանգական կարողութիւններ, իսկ այդ կարողութիւններու լրիվ թե թերի, միակողմանի կամ մասնակի բացումը կախված է շրջապատող պայմաններեն: Խնձորի կուտեն որոշ տեսակի խնձորի ծառ ալիտի դա, այսինքն կրնա դալ, ունի այդ ունակութիւնը, բայց թե ինչ չափով կբացվին այդ ունակութիւնները, դիւրին, թե դժվար, խանգարված, թե նպաստաւորված, առիկա կախված է սերմի ցանված տեղի հողեն, կլիմայեն, մարդոց թափած խնամքեն ու միջատներու դարանակալ աշխատանքեն. ահա՛ ասոնց դումարն է խնձորի ծառին տուացած կրթութիւնը:

Կտեսնենք, որ տղան ունի իր մեջը նկարիչի մը, լեզվաբանի մը, բնագետի մը համար անհրաժեշտ եղող բոլոր տվյալները, բայց ինչքան-ինչքան չնորհներ, տաղանդներ և ընդունակութիւններ կկորչին ու կփճանան առանց նույնիսկ նշմարվելու, և ինչքան-ինչքանները զարգացման չեն հասնիր, կծռին ու կայլանդակին, թեև կզգան իրենց բնատուր չնորհքը , իրենց հակումը: Ժառանգական կարելիութիւններ իր մեջ ունենալը դեռ հերիք չէ. պետք է բացվին ու դործեն այդ կարելիութիւնները, որ արժեք մը ստանան, իսկ ասոնց բացումը ամբողջովին ենթակա է անհատի ստանալիք երեք տեսակի կրթութեան ընթացքեն:

Մինչև հիմա աչքի առաջ ունեի բնածին ունակութիւններուն վրթթումը, երբ դուբսեն անոնց դիմադրելու և փոփոխելու ո՛չ մեկ ծրագրված ու դիտավորյալ ճիդ չկա, կար միայն պատահականութեյան դիմադրութիւնը: Սակայն որչափ ավելի կփոխվին պայմանները, երբ գոյութիւն ունեցող այս կամ այն դեչ կամ աղեկ ունակութեյան մը զարգացման դեմ սիսթեմատիկ աշխատանք կտարվի խանգարելու, արգիլելու, փոփոխելու, «սրբագրելու» իմաստով: Եթե շրջապատող ազդեցութիւնները լավ մը ուսումնասիրվին, լավ մը օգտագործվին, ուզված ու ծրագրավորված կերպով դասավորվին՝ կարելի է շատ զգալի արդյունքներու հասնիլ. մեկ-երկու սերունդ նույն համառութեյամբ եթե հետապնդվին, հետզհետե կզառնան իրենք ալ ժառանգվող ու ժառանգված ունակութիւններ:

Այսինքն կրթութիւնը կրնա ժառանգութեյան էութեյան վրա ալ ազդել, ժառանգված գծերն ալ որոշ աստիճանական փոփոխու-

թյան ենթարկել, ժառանգություն և կրթություն զարգացման երկու երևույթներն են՝ սերտորեն իրարու հենված ու իրարմով ամբողջացող: Դարերու կրթություններն են, որ առաջացուցեր և պնդեցուցեր են ժառանգական գծերն ու հատկությունները, և այդ ժառանգված գծերն ու հատկություններն են հիմա խորքի հիմքը ամեն կրթության: Կրթությունը այդ ժառանգված հիմքի վրա կաշխատի՝ ընդհանրապես ժառանգական ունակություններու բացումին ու ծաղկումին նպաստավորելով, բայց մեջեմեջ ալ իր չուզած կողմերուն ու գծերուն դեմ մաքառելով ու դիմադրելով: Ժառանգություն և կրթություն ո՛չ միայն իրար չեն ժխտեր, այլ միայն իրարմով կիրակատնան և իրարմով կապրին:

ՏԵՍԱԿՆԵՐՈՒ ԲՆԱԿԱՆ ՀՅՈՒՍՔԸ

Ուրեմն կրթության երեք որոշ և ուրույն տեսակները կներկայացնեն անվար կրթությունը, ղեկավար կրթությունը և ինքնակրթությունը:

Սկզբունքով ղեկավար կրթության մեջ ամեն քայլ պետք է առնվեր նախապես ուսումնասիրված օրենքներու համաձայն, հաստատ կերպով որոշված նպատակներու համար և կանխորեն մշակված ձևով ու ճամբով: Բայց ասիկա տեսություն է. իրականապես ղեկավար կրթության գործին մեջ մեծ չափերով նորեն անվար ու չնախատեսված կրթություն ներս կխուժե: Շատ բաներ կկատարվին ո՛չ համաձայն ծրագրի, ո՛չ ամեն ինչ մտածված կերպով և ո՛չ ալ ամեն ինչ ըստ նախապես որոշված հաջորդականության: Շատ անգամ միայն խոշոր գծերն են նախատեսված հստակ կերպով՝ մնացածը թողնելով վայրկյանի ու անձի հայեցողության, առաջացնելով անվար ու կիսավար, չարունակ մեկեն մյուսը անցնող վիճակ մը:

Եվ փոխադարձաբար կյանքի կրթության մեջ ալ թեև սկզբունքով չկա մարդկային գիտակից ղեկավարություն, բայց իրականության մեջ կպատահին հաճախ դեպքեր, ուր շրջապատող անձերու ըրած պատահական ազդեցության մեջ այն աստիճան կշեշտվի ազդեցությունը ընդոդին կամքն ու մտածումը, որ անկարելի կդառնա ղեկավարության որոշ չափ մը ժխտելը:

Նույնպես ինքնակրթության ժամանակ, եթե օժանդակող անձերու մատնանշումները կըլլան տեսական ու քիչ-շատ մանրամասն կերպով, շատ կմոտենան ղեկավարության: Այլև փոխադարձաբար ղեկավար աշխատանքներ կան, ուր ինքնաշխատության բերած նպաստը այնքան կշեշտվի ու կարևորություն կստանա, որ դժվար կըլլա մեկը մյուսեն կտրուկ կերպով զատելը:

Սահմանային այս վեճերը սակայն, որ բնական մեկ հատկությունը կկազմեն ամեն տեսակի դիտական բաժանումներու, հիմնական օրենքեն չեն փոխեր ոչինչ: Կրթությունը կհոսի երեք ուղիներով:

Անվար կրթությունը էակի գոյություն առած վայրկյանեն մինչև անոր մահվան վայրկյանը, ամբողջ կյանքի ընթացքին անընդհատ, երբեմն արագ ու թափով, երբեմն ավելի դանդաղ ու թեթև, բայց մշտատև է: Կրթական գործի մեծ ազդակն է անիկա:

Ղեկավար կրթությունը կսկսի էակի ծննդյան վայրկյանեն և կտևէ ամբողջ հասունացման տարիներուն և ընդհանրապես քառամյակ մըն ալ փոխ առնելով երիտասարդացման տարիներեն: Բացառիկ բան մըն է անկե անդին ալ ղեկավար կրթության միջամտությունը:

Ինքնակրթությունը կսկսի սովորաբար պատանության տարիներեն, երբեմն նաև ավելի կանուխ՝ պատանեցման տարիներեն և կշարունակվի մինչև կյանքին վերջը:

Ուրեմն ղեկավարությունը սկիզբները ուժեղ, հետզհետե տկարանալով, երիտասարդական տարիներուն իր դերը բոլորովին կհանձնե ինքնակրթության, որ այլևս զույգ կերթա անվար կրթության մինչև վերջը ավելի կամ պակաս ընդգծումով:

Կրթության այս երեք հոսանքները մեկը մյուսի քովեն, հոս իրար հյուսվելով, հոն իրարմե անջատ, տեղ մը իրար սրբագրելով ու լրացնելով, տեղ մը իրար խանգարելով ու իրար հակադրվելով, առաջ կվարեն անհատներու զարգացման ընթացքը:

Անհամեմատ ավելի ընդարձակ ու տևական է կյանքի տված անվար կրթությունը, որ շատ քիչ չափերով միայն կրնա ենթարկվիլ մարդկային հսկողության: Մարդկային նոր սերունդներու զարգացման վրա այս կամ այն ուղղությամբ աղդել կարողանալու տեսակետեն մեզի համար գործնական մեծ կարևորություն ունեցողը

ղեկավար կրթություննն է. այս է պատճառը, որ շատերը կրթություն ըսկլով կըմբռնեն միայն կրթության ղեկավար մասըը: Իսկ անձնական գծերու, բնածին հակումներով և հատուկ ընդունակություններու բարձրացման և արժեքավորման տեսակետեն մասնավորապես կարևոր է ինքնակրթության խաղցած դերը:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԱՆՎԱՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ա. ԲՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ԾՈՎ ՈՒ ՑԱՄԱՔ

Անվար կրթության բազմաթիվ ու բազմատեսակ ազդակները կրնանք խմբել երեք տեսակի: Ամենեն առաջ մեղի չրջապատող բնության ազդեցությունը. բնական պայմաններու և բնական երևույթներու ազդեցությունը մարդկային էակի կյանքին ու կազմության վրա: Երկրորդ՝ մարդոց իրարու հետ ապրելեն, իրարու հետ ունեցած անձնական չփումեն բղխող ազդեցությունները ամեն մեկ անհատի զարգացման ու կազմավորման վրա: Երրորդ՝ մարդկային մտքի, սրտի ու ձեռքերու ստեղծագործությունը եղող իրերու, երևույթներու և հիմնարկություններու ազդեցությունը անհատներու կրթության վրա:

Ա. Ամենեն առաջ ուրեմն պետք է հաչվի առնել բնության ազդեցությունը:

Մարդը գործարանավոր էակ մըն է բուսական ու կենդանական կարողություններով օժտված, և իր ամբողջ գործարանավոր մարմինը, իր մարմնի բոլոր բուսական ու կենդանական հատկությունները առաջացած, զարգացած և իրենց արդի վիճակին հասած են իր մեջի ու չուրջի բնության ազդեցության տակ: Ինքն ալ արդեն մեկ կտորը, մեկ մասնիկն է բնության, և իր մեջ գործող ուժերն ալ նույն բնության նույն ուժերն են և ենթակա են միևնույն օրենքներուն: Եվ այդ ներքին ուժերը կձևավորվին, կաճին, կփոխվին ու կկատարելագործվին չրջապատող բնության ընձեռած պայմաններուն համեմատ: Եվ այդ պատճառով ալ մարդոց ու ժողովուրդներու ամենեն մեծ կրթիչը, ուսուցիչը և դաստիարակը ինքը մեծ բնությունն է:

Շրջապատի բնության ազդեցությունը հաստկորոշող առաջին հիմնական գործոնը տեղի մը աշխարհագրական դիմքն է, այսինքն

երկրագունդի երեսի ու ճակատի կնճիռները. ելքե՞ր են, ցայտքե՞ր, թե՞ խորք ու փոսեր, բարձր, հսկա կուտակումնե՞ր՝ ամպերուն հասած, թե՞ ցած ու թզուկ այտուցքներ, թե՞ բոլորովին հարթ ու տափարակ, թե՞ ծովեր են ու ծոցեր, այսինքն խորքեր՝ ջրերով լեցված:

Ասոնցմե ամեն մեկը բոլորովին տարբեր ուսուցիչ մըն է ու տարբեր կրթուելիք կուտա մեր աչքերուն, մեր ձեռքերուն, մեր զգացումներուն, մեր մտածումներուն, մեր աշխատանքներուն ու գործունեության:

Նախ ցամաքը. և առնենք երկու ծայրերը՝ համեմատությունը ցայտուն դարձնելու համար:

Հսկա բարձունքներու՝ իրար խաչաձևող շղթաներեն մեկուն մեկ հանգույցին մեջ ծնած ու ապրող մարդը լեռնցի մըն է, լեռան զավակը: Լեռները պատ կքաշեն իր աչքերուն ու իր մտքի տեսողության առջև, մոտակա գյուղերն անգամ շատ քիչ կերթա, ճմեռը կղադրի ամեն երթևեկ: Իր լեռներու հանգույցեն անդին օտարն է, հեռուն: Իրենն է միայն իր լեռներուն այն ատամնավոր ծիրը, որուն ամեն մեկ ատամը իր հստակ անունն ունի, իր հստակ ձևը և իր հատուկ պատմությունը, և որոնց ամբողջությունը մշտապես դրոշմված է անջնջելի և՛ իր աչքերուն, և՛ իր հոգիին մեջ: Լեռներու այդ շրջագիծն է իրենը, և այդ շրջագծին մեջ ինկած հողամասը՝ իր տեղը, իր գյուղը, իր տունը, իր բունը, իր մասնավոր հողը. լեռնցին ամբողջ հոգով կապված է հողի այդ հարազատ կտորին. կճանչենա, գիտե, կսիրե, ինչ որ կպատկանի այդ տեղին, ատիկա է իր աշխարհը, իր հայրենիքը, իր սրտին մոտիկը: Շատ նեղ հայրենիք մը ու նեղ հայրենասիրություն, բայց խոր ու հստակ ու միշտ կենդանի. ուր ալ երթա, իր հետ է այդ հայրենիքը, իր լեռներու ծիրը և այդ ծիրին մեջ՝ իր հողն ու իր տունը:

Իր աշխարհքին պես իր աշխարհայացքն ալ նեղ է նորեն, բայց ինչ որ կըմբռնե ու կղատե, հստակ կղատե ու որոշ: Իր լեռներուն ու իր լեռնանկյունին նման ինքն ալ իրեն համար լեռնանկյուն մըն է, զատ և որոշ. ինչպես իր դեմի լեռները և հոգիին մեջ ուրույն գոյություններ են ու կենդանի, այդպես իր հոգին ալ ուրույն լեռնացումն մըն է իր ընդգծված ես-ով, իր խելքով, իր ձևով:

Ապառաժներու այդ ծոցին մեջ մշակելի հողը քիչ է, բայց

խոտ կա, անասնապահ են, մասամբ և երկրագործ. պետք է հույսդ դնես թևերուդ և աշխատանքիդ վրա, եթե կուզես ուտեստիդ հորերը լեցուն ըլլան, ատոր համար ալ աշխատանքի պաշտամունքն ունի: Բնության հետ մշտական կռիվը դիմացկուն կղարձնե մարդը, չարքաշ, համառ ու պնդապլուխ:

Բ. Բոլորովին տարբեր են պայմանները, երբ անծայրածիր հարթություններու վրա է ծնած ու մեծցած մարդը: Սահման չկա աչքերուդ դեմ. ուր ալ նայիս, ուր ալ երթաս, նույն հարթ հողն է ու նույն հարթ երկինքը. աչքերուդ դեմը ճև չկա, մշտական անորոշություն մըն է դիմացդ ու շուրջդ. իզուր աչքերդ հանդչելու տեղ մը կփնտրեն, իզուր մտքերդ հենարան կորոնեն անորոշ կարոտով: Անվերջ փնտրտուք մը ունի հարթավայրերու բնակչի հոգին, կեցած տեղը վազք ընող մտածողություն մը և պատրաստ հող նոր հավատքներու, նոր աղանդներու, նոր վարդապետության, որոնք սակայն շուտով կվերածվին հինին:

Եվ այդ ընդարձակ միակերպության մեջ չկա բնականաբար ո՛չ ծննդավայրի, ո՛չ իր հատուկ անկյունի, ո՛չ ալ հայրենիքի հստակ ու շեշտված առանձնացումը: Հարթավայրերու մարդուն հայրենիքը իր անծայրածիր հարթությունն է, ան այդ հարթությունն է, որ կսիրե իսկապես և ո՛չ որոշ տեղ մը, հողի որոշ կտոր մը:

Ընդարձակ հարթավայրերու վրա հողի հանդեպ, նույնիսկ երկրագործներու հոգիին մեջ իշխողածի հոգեբանություն է տիրողը, տակավ է հողի անձնական սեփականության զգացումը, որ ան միշտ կշփոթե համայնական սեփականության հետ: Իշխողածի ու վրանաբնակի հին ու աղոտ ժառանգական հակումները դյուրություն կուտան ամբողջ բազմություններու իրենց տեղեն չարժվելու, հարթավայրերու գյուղացիությունն անգամ ավելի դյուրին կարելի է այս ու այն կողմ հոսեցնել, տահեցնել, գաղթեցնել ու տարածել:

Եվ այս ամենուն զուգընթաց հարթավայրերու մարդու հոգին լայն է, ավելի անփույթ կարծես: Շատ է հողը և պարարտ: Եվ այդ իրենց աշխարհի որոշ տահմանագծումներե զուրկ ընդարձակ տարածություններուն նման մարդոց ներքին աշխարհին մեջն ալ ավրված են խիստ ընդգծումները, նվազ հատու են անհատականության ուրույն խիստ գծերը, և շատ ավելի հանրային ու հոտային են ես-երը:

Լեռնագագաթներու և ընդարձակ հարթավայրերու այս հակադրության մէջ կան բազմատեսակ միջին աստիճաններ նայելով, թէ լեռնային մարդու ծննդավայրը նեղ ձո՞ր մըն է, թէ՞ ավելի լայն հովիտ մը, թէ՞ լեռներով եզերված ընդարձակ լեռնադաշտ մը, նայելով, թէ հարթավայրերը բերրի հող ունին ու դյուրի՞ն կհերկվին, թէ՞ խոտառատ տափաստաններ են կամ ճահճոտ անտառներ, թէ՞ անբույս անապատ: Ասոնցմե ամեն մեկը իր հատուկ կնիքը կդնե մարդու մարմնական կազմին, հոգեկան հատկություններուն, իր կատարած գործին ու իր վարած կյանքին ու ապրուստին վրա:

Գ. Հոսուն ջրերը բարձրություններու վրա աղբյուր են, վտակ ու գետակ, ջրվեժ ու լճակ, գեղեցկություն են ու հմայքը լեռներուն. առանց այդ ոստոստուն ջրերուն ժայռերու լերկ ու չոր կուտակում մըն է լեռնաշխարհ ըսվածը. այդ խայտուն ու կկլկլան ջրերուն կպարտինք ձոր ու հովտի մէջ տիրող և՛ կենդանություն, և՛ զարդարանքը՝ դալար ու խոտ, ծառ ու ծաղիկ: Բայց այդ հոսուն ջրերը, երբ իրենց բարձունքներեն վար կիջնեն ու վարի հարթություններուն վրա կուգան, իրարու կմիանան, կդառնան ահեղ գետեր, կդառնան միևնույն ժամանակ նաև բնական երակները մարդկային քաղաքակրթության, կգծեն մարդկային քաղաքակրթության տարածման ճամբաները: Գետը հարթության վրա այլևս ոռոգում ըսել է. ուր որ հասնին իր ճյուղերն ու ջրերը, հոն կյանք է ու աճում, ուր ինքը չհասավ՝ քայլ մը անդին չոր է, ավազ ու անապատ:

Ամենեն ավելի ճյուղավորում ու խաչաձևում ունեցող մասը իր հոսանքի ամենեն վարի՝ ծովը թափվելուն մոտիկ՝ գետաբերաններն են, քանի որ գետնի բարձրությունը կհավասարի գրեթե ծովի մակերևույթին, և իրենց կազմած ջրի ցանցով, ողողումներով կհարստացնեն հողը իրենց բերած պարարտ տիղմով ու փտող բուսական մնացորդներով, և այդ մասերու հողն ալ փխրուն է ու դյուրին մշակելի: Հոս, այդ հարուստ հողերուն վրա է, որ ուժ կստանա ու հիմնական աշխատանք կդառնա հողագործությունը, և անոր հետ ալ՝ ավելի բարձր մարդկային քաղաքակրթություն մը: Եվ գետին եզերքովը հետզհետե կչարվին բոլոր գյուղերն ու քաղաքները:

Մեծ գետերու վրա ապրողը ավելի լայն չփման ու հաղորդակցութեան մէջ է միչտ ու երթևեկի վրա, տիրողը քաղաքային կյանքն է ու քաղաքի հոգեբանութիւնը, այսինքն մարդկային մեծ կուտակումներ, եռուզեռ, բազմաթիվ պաչտոնյաներ, առուծախ, ավելի հոխ ապրուստ ու վայելք: Կեդրոններ են դարձած: Գետերու ճյուղերուն ու ճյուղիկներուն վրա ապրողները գավառացի են, գավառներուն մէջ տիրողը գյուղական կյանք է, ավելի կարված, ավելի համեստ ու ավելի միատեսակ: Եվ սակայն համեմատ ալ տարբեր է բոլորովին մեծ կեդրոններու վաճառականի մը, մեծ գործի տիրոջ մը, պետական դեր ունեցողի մը և պաչտոնյայի մը և՛ նիստ ու կացը, և՛ ըմբռնումները, և՛ կրթութիւնը, և՛ չահն ու ձգտումները, ինչպես և բոլորովին այլ պատկեր է գավառական կյանքի մէջ ապրած ու աճած մարդուն դիմքն ու հոգին:

Գալով ծովերուն՝ ով փոքր կղզիի մը վրա կապրի կամ խիստ ծովուն մէջ իրած ցամաքի կտորի մը վրա, անիկա միչտ ծովուն հետ կապրի, իր միջավայրը ծովն է, իր վախն ու վայելքը ծովն է, իր ճամբան ծովն է, իր սնունդի գլխավոր աղբյուրն ալ ծովն է: Ծովին ապրուստ հանողը, ծովուն վրա երթևեկողը պետք է ծովու քմայքներուն հետ պայքարի, և այդ պայքարը անվնհերութիւն կուտա մարդուն, կուտա վճռականութիւն, դիմադրել կսորվեցնե, հանդուգն կդարձնե ու ձեռներեց, և սակայն համեմատ ալ ուրիշ է բոլորովին ադի ջրերուն մէջ թրծված նավավարի մը, նավաստիի մը ու նավապետի մը և՛ կեցվածքը, և՛ դիմագծերը, և՛ վարմունքն ու բնավորութիւնը, և՛ իր հոգիին հակումները: Ծովերուն վրա առագաստ բացողը զնկը պինդ բռնած որոշ կետի մը կդիմե, ուր պետք է հասնի, և ասիկա կդառնա հիմնական դիծը ծովերու կերտած մարդուն ու ծովերու կերտած ժողովուրդներուն:

ԿԼԻՄԱ

Ա. Շրջապատող բնութեան ազդեցութիւնը հատկորոշող երկրորդ մեծ գործոնն է կլիման, որ արդյունք է մեկ կողմեն տեղի աչխարհագրական մակերեսին, մյուս կողմեն ալ հետևանք է աչխարհագրական գոտիին, այսինքն երկրագնդիս առանցքի որոշ անփոփոխ թեքութեան, որով արևին ճառագայթները հավասար

ուղղությամբ և հավասար ուժով չեն իյնար երկրիս բոլոր մասերուն վրա: Հոտկե կառաջանան այրեցյալ, սառուցյալ և բարեխառն գոտիները, հոտկե կառաջանան տարվան եղանակները այդ գոտիներուն մեջ տարբեր-տարբեր հատկություններով: Տա՞ք, թե՞ ցուրտ և թե ինչ աստիճանի, ինչ ելևէջներով, ինչ տևողությամբ: Եվ ինչ օդի հոսանքներ, ինչ ուղղությամբ, սարերե՞ն, հյուսիսե՞ն, թե՞ ծովերեն ու հարավեն խոնավությամբ ու ամպերով ծանրաբեռ:

Ջերմություն, խոնավություն և քամիներուն ուղղությունն ու որակը՝ այս երեքն են, որ իրարու հյուսված կներկայացնեն տեղի մը կլիման, և որու անմիջական ու չափազանց ուժեղ ազդեցության տակն են անխտիր ամեն բույս ու կենդանի, ամեն մարմին ու հոգի: Եվ հատկապես խոնավությունն ու ջերմությունը. ամեն արարած իր գոյության 3/4-ովը ջուր է, և մեր ամբողջ աճումը, փթթումն ու ծաղկումը արևին կնայի:

Արևը առատ ու ջուրը առատ երկիրները ստեղծագործական հորդություն ունին, հարստություն է ուտելիքի, տեսանելիքի, գույներու, ձևերու, փայլի, զգայություններու և մտապատկերներու և ատոնց վրա գործող երևակայության, բայց չարժումները կղանդաղին, և կամքերը, որ չուտով բռնկել գիտեն, չուտով ալ կնիրհեն, և մարդիկ կսիրեն նստել, դիտել ու մտածել. և դիտել ու զգալ իրենց ապրիլը: Ու կսիրեն կյանքը, որ դյուրին է, գրավիչ, ապրուստի պահանջն ու պակասը՝ քիչ: Ատոր համար ալ մեկ կյանքով չեն կշտանար, կհավատան, որ մեռնելեն ետքը նորեն պիտի գան աշխարհ՝ ուրիշ կենդանիներու մարմնին մեջ մտած նորեն ապրելու: Բնության առատությունը տված է անոնց ամեն բանի մեջ կրկնության սերը և՛ քով քովի, և՛ մեջեմեջ, իրենց փարթամ անտառներու թավուտներուն պես. պատմություններն ու հեքիաթները անվերջ են ու իրար մեջ հագցված՝ «Հազար ու մեկ գիշերներ». իրենց տաճարներուն գմբեթները իրարու քով ու իրարու վրա այնքան շատ են, որ հաշվել կարելի չէ. և պակոտաներու այդ գմբեթներուն նման իրենց Բուդդաներն ալ ուսերնուն վրա բազմաթիվ թևեր ունին ու ձեռքեր, ուրիշ տեղ ալ աստվածային տիկնոջ կուրծքը ծածկված է մեկ-երկու շարք ծիծերով: Մենք, որ բարեխառն գոտիի հոգի ու կրթություն ունինք, մեզի համար տգեղ ու հրեշային են այդ պատկերացումները:

Արևը ուժեղ, բայց խոնավը քիչ, իսկույն փարթամութիւնը կանգ կառնէ. մարդիկ կմերկանան հագուստեն, տպավորութիւններու բազմազանութենէն ու հոգեկան թռիչքէն. ուտելիքը դժուար կճարվի, մարդիկ կդառնան սակավապետ ու համակերպված իրենց համեստ գոյութեան: Հաճախ սով է ու երաշտ, ուժերը կվատնվին պատառ մը հացի համար, ու հոգիներուն կտիրե հացի փիլիսոփայութիւնը: Առատ է միայն արևուն լույսը, որ աչքերը կշլացնէ, և արևուն հուրը, որ միտքն ու մկանները կթմրեցնէ, ու կյանքը քունի է հակամետ:

Ջուրը առատ, արևը պակաս՝ ճահիճներու, մեգերու և տունտրաներու թագավորութիւնն է. ապրելու համար կպահանջե համառ ու հարատև պայքար բնութեան հետ, որ հեռանի պես կամքերը կսրե, պետք է աշխատին չարունակ և՛ ձեռքերը, և՛ խելքը: Վայելքները՝ դուսպ, հոգիները՝ խիստ: Սեր ունին որոնումներու, արշավանքներու, նոր երկիրներու ու փոփոխութեան: Եվ կարոտն ունին երազանքի. մեգերն ու մշուշը գրեթե մշտական վարագույր մը կքաշեն մարդուս զգայարանքներուն ու մտքին առջևը, որուն փեշը բարձրացնելու անվերջ ճիգը կընե մարդկային միտքը, և միտքը ինքն ալ կդառնա մշուշոտ, այսինքն միստիկ, չտեսնվող բաները որոնող, չհասկցված բաները սիրող: Քրքրելու, խորանալու և վերացականութեան դիմելու հակումով:

Բ. Ես չեչաեցի միայն ջուրն ու արևը: Բայց աւոնց կիջ, աւոնցմե ծնող կամ աւոնցմե անկախ ինչքա՜ն ուրիշ տարբերութիւններ կրերեն տեղի մը կլիման:

Ուրիշ է երկինքը հարավի. հազար գույներ, լույս ու ստվեր թափելով ամպերուն, սարերուն ու ծովերուն վրա. ուրիշ է անհատնում երկար գիշերները հյուսիսի և գորշ ցերեկները, երբ երկինք կոչվող ծուխերուն ու մշուշներուն մեջեն հավկիթի խոշոր դեղնուց մը կպատռի մեկ-երկու ժամ:

Ուրիշ է տարվան հաստատուն եղանակներուն ազդեցութիւնը մեր աշխատանքին, մեր սովորութիւններուն, մեր տրամադրութիւններուն ու բնավորութիւններուն կազմակերպմանը վրա, քան այն երկիրներուն ազդեցութիւնը, ուր ամառ ու գարուն, ձմեռ ու աշուն այնպես կշփոթվին իրարու, որ տարի մը ամբողջ երկար աշուն մըն է դրեթե կամ երկարաձիգ քմայնոտ ամառ մը: Ուրիշ է

հաստատ ու որոշ անձրևներով ու որոշ հովերով ղեկավարող կլիմաներուն ազդեցութիւնը մարդուս վարքին, գործին ու սկզբունքին վրա, ուրիշ է փոփոխական հովն ու անձրևը, որու պահանջներուն պետք է հարմարվիս օրը օրին՝ հետզհետե ինքդ ալ դառնալով էութիւն մը «օրը օրին, ըստ օրին», «ըստ հովին»:

Ուրիշ է այն աշխարհը, ուր բնութիւնը բուռն ցնցումներ ունի և կսիրե մեջեմեջ իր փեչերը թափ տալ, ուր անսովոր բաներ չեն փոթորիկը, հեղեղն ու կարկուտը, ողողումներն ու ալեկոծութիւնը: Եվ բոլորովին ուրիշ է այն կլիմաներուն ազդեցութիւնը, որոնք միայն մեղմ ու հանգիստ չարժումները կճանչնան և փոփոխութիւններուն թեթև ու աստիճանական անցումները:

Եվ այս ամենը ինչքան որ ճիշդ է ամբողջ ժողովուրդներու զարգացման ու քաղաքակրթութեան տեսակետեն, այնքան ալ ճիշդ է բնականաբար այդ ժողովուրդներուն մեկ մասնիկը կազմող ամեն մեկ անհատի մարմինին ու հոգիին համար:

ԲՈՒՅՍ ԵՎ ԿԵՆԴԱՆԻ

Շրջապատող բնութեան ազդեցութիւնը հատկորոշող երրորդ գլխավոր գործոնն է բուսական ու կենդանական աշխարհը, այսինքն երկրագնդիս կնճիռներուն վրա հագցված ապրող դիմակը: Այդ ապրող դիմակը ինքը մեծապես արդյունք է ու ենթակա նախորդ երկու բնական գործոններուն, քանի որ տեղի մը բույսերն ու կենդանիները ալ, մարդուն նման, կաճին, կզարգանան ու կդաստիարակվին իրենց աշխարահագրական դիրքի ու կլիմայի պահանջներուն ու պայմաններուն համեմատ: Բույսն ու կենդանին բնութեյան մյուս մասերեն շատ ավելի մոտիկ ու նման են մեզի, շատ ավելի չոշափելի կերպով հյուսված մեր գոյութեյանը, որով և իրենց ազդեցութեյունն ալ շատ ավելի ակնհայտնի:

Անտառները, արոտավայրերերը, արտերը, այգիներն ու պուրակները, ամեն մեկը իր ուրույն կյանքը ունի, ուրույն պայմաններ, տարբեր տեսակի մնունդ մարդուն համար, տարբեր տեսակի աշխատանք այդ մնունդը ձեռք բերելու, տարբեր վարք ու բարք, ապրուստ ու փորձառութեյուն: Ատոնցմե ամեն մեկը զանազան տեսակի գոյակներ են մարդկային քաղաքակրթութեյան:

Թռչուններով, գազաններով, կապիկներով վխտացող վայրի անտառ մը ուրիշ աշխարհ մըն է և ուրիշ հյութ, նյութ ու դաստիարակություն կուտա և՛ մեր ստամոքսին, և՛ մեր երևակայության, և՛ մեր աշխարհայացքին: Քաղաքային կյանքը, ուր թևավորներու հետ ունեցած մարդուս ծանոթությունը հավեն ու ճնճղուկեն չատ անդին չանցնիր, ու մարդու անատուն մտերիմը չունն է ու կատուն, և ավերիչ գազանն ալ մուկն է, բոլորովին սահմանափակ աշխարհ մըն է բուսակենդանական հարաբերություններու համար, այդ պատճառով ալ չափազանց աղքատ է իր բնակրթական արժեքը: Այդպես ալ հիմնովին տարբեր կրթական միջավայր մըն է, օրինակ, սարահարթերուն ու բարձր լեռներուն ճեղքվածքները, ուր անգղներն ու արծիվները կթևածին և ուր արջերու և կինճերու որսորդությամբ կզվարճանան մարդիկ:

Մեր զգայարաններն ու մեր զգացումները կկրթվեն մեր շուրջի բուսական ու կենդանական ձևերուն, գույներուն, կերպերուն ու դասավորության վրա, մարդիկ կճանչենան ու կսիրեն իրենց տեսածն ու իրենց ապրածը: Եվ ատոր համեմատ կզարգանա մարդու ստեղծած արվեստն ու գեղարվեստը: Ժողովուրդները բույսերեն ու կենդանիներեն են առած իրենց չենքերուն ճարտարապետությունը, եգիպտական սյուները արմավենիներեն կուգան և անոնց տաճարներուն սյունաշարերը արմավենիներու զույգ շարքի մը ընդօրինակություն է միայն. այդ սյուներուն գլխու զարդերն ալ Նեղոսի ջրերուն վրա բացված լոթոսի ծաղիկն է կամ ուրիշ տեղ մի խոյի մը գլուխն է, ուրկե կուգա և իր անունը՝ խոյակ: Այդպես ալ մարդոց չինած ամանները, զարդերը, գործիքները թռչուններ են, սողուններ, եղներ ու փիղեր ավելի նուրբ կամ կոպիտ նմանեցումով, մարդոց հյուսած կտորներն ու դորգերը իրենց վրայի նախշերով եղնիկներ են ու ձիեր, տերևներ են ու ծաղիկներ կա՛մ բոլորովին հարատած մնալու ջանքով, կա՛մ երևակայության հավելվածներով, և այդ «երևակայական» հավելվածներն ալ նորեն առնված են ուրիշ բույսերե ու կենդանիներե:

Գեղարվեստական ոճերը և ընդհանրապես ճաշակ ըսվածը պտուղն է բուսաբանական դաստիարակության: Տաք ու խոնավ երկիրներու բուսական ու կենդանական փարթամությունը չռայլության, կրկնության ու անկշռության ճաշակը կուտա հնդիկին,

այսինքն չափազանցության մը խորունկ սերը ինչպես ճարտարապետության, վիպերգության ու արհեստներու մեջ, այնպես ալ իր վայելքներուն, կիրքերուն, պատկերացումներուն ու ներհայեցումներուն մեջ: Հյուսիսի սառցադաշտերուն միօրինակ ճերմակության և ճերմակ արջերու դրացնության մեջ կուգա մյուս ծայրահեղությունը. սառած ու կարկամած միապաղաղ լրջություն մը մարդոց բարքին ու վարմունքին վրա և աղքատություն մը ճաշի ու պատկերի. և խոսքերուն ու մտածումներուն վրա կպակսին զարդերուն ու գույներուն հարստությունը: Այս երկու ծայրերուն մեջ բարեխառն գոտիներու ծնունդ է ամեն բանի մեջ չափը պահելու սերը՝ և՛ վայելքի, և՛ զգացման, և՛ մտածումի, և՛ արտահայտության: Ո՛չ հորդ ու շռայլ, ո՛չ ալ մերկ ու չոր, բայց զուսպ, կշռված. իտեալն է՝ ո՛չ ավելի, ո՛չ պակաս, և՛ կյանքի մեջ, և՛ ապրուստի, և՛ հոգեկան ապրումներու մեջ, և՛ ստեղծագործության:

Նույնն է իրողությունը նաև զուտ մտավոր աշխարհին մեջ, մարդոց հասկացողութիւնները կկազմվին, փիլիսոփայությունները կհաստուննան, կրոնները կճևավորվին, գիտությունները կմշակվին, պատմություններ կհյուսվին բույսերու, կենդանիներու և ժողովուրդներու շարժումները, կերպերը, գույները և անոնց էությունը դիտելով ու մեկնաբանել ուզելով: Մարդկային ամեն հոգեկան արտահայտության վրա իր շրջապատի բուսակենդանական կնիքը կա:

Եվ չէ՞ որ, վերջապես, մարդկային գլխու ու մարմնի մշտական զարդարանքն են եղած կենդանիներուն պոչերը, փետուրները, կոտոշները, ժանիքները, գանգերը, կաշին ու մորթին և բոլոր բույսերուն պտուղները, տերևներն ու ծաղիկները:

Բ. ԿԵՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՅՐ ԸՆՏԱՆԻՔ

Ա. Բնության զուգընթաց և մարդուս ամրողջ կյանքի ընթացքին, մեր ներքին ու արտաքին կարողութիւններու զարգացման և բռնելիք ուղղության վրա իր խոր դրոշմը ղնող երկրորդ մեծ ազդակը մարդկային կենակցությունն է: Նայելով թե ինչ մարդոց շրջանակին մեջ կգտնվինք, ինչ մարդոց օրինակին ու վարմունքին

ենթարկված կամ հանդիսատես կըլլանք, նայելով թէ ինչ տեսակի մարդոց հետ առաւել կամ նուազ պատահական չփման մէջ կուգանք, ատոր համեմատ ալ կկազմվին ու կձևավորվին մեր կրած տպաւորութիւնները, մեր ունեցած զգացումները, մեր ընաւորութիւնը, սովորոյթներն ու ըմբռնումները, մեր լեզուն, ճաշակը, գվարճութիւնները:

Ամեն անհատ, ինչպես իր ծագման ու ժառանգման, այնպես ալ իր զարգացման ու ծաղկման տեսակետեն, ամենեն էականը և ամենեն հիմնականը պարտական է իր ծնողներուն՝ իր հորն ու մորը նեղ մտքով, և ընդհանրապես իր ընտանիքին քիչ մը ավելի լայն իմաստով, այսինքն մարդկային էակներու այն խնամքին, որոնց ձեռքին տակ ինք աչխարհք կուգա, կբանա հետզհետե իր զգայարանքները, որոնց խոսքին և օրինակին տակ կձևավորվի իր իմացականութիւնը, կբացվի իր լեզուն և իր բոլոր կարողութիւնները: Հետագա շրջաններու ազդեցութիւններեն և ո՛չ մեկը համեմատվիլ չի կրնար իր խորութիւնով ու կարևորութիւնով մայր ընտանիքի ըրած տպաւորութեան հետ:

Նախ՝ որովհետև առաջին տպաւորութիւններն են ատոնք, որոնք ձևատու հիմքը կդառնան հաջորդ տպաւորութիւններու բյուրեղացմանը, երկրորդ՝ նոր էակի ամենեն թարմ, ամենեն զգայուն և ամենեն անդիմադրելի տարիներն են ատոնք, և ատոր համար ալ այս շրջանին է, որ ձեռք կբերվին մարդուս գոյութեան և էութեան համար ամենեն ավելի խոր արժեք ներկայացնող հատկութիւնները, որոնք մարդ անհատին իր ուրույն գույնն ու բույրը կուտան: Ժառանգականութեամբ ստացված որամադրութիւնները և առաջին տարիներու տպաւորութիւնները անտարակույս ամենեն խոր ու հատու դերը ունին կենդանի արարածի մը կազմավորմանը մեջ:

Փոքրիկներու կրթութեան վրա մայր ընտանիքի ըրած ազդեցութիւնը կբղխի երեք աղբյուրե, որ է՝ ընտանիքի կազմը, ընտանիքի վիճակը և ընտանիքի անդամներուն անհատական գծերը:

Բ. Ընտանիքի կազմութեան տեսակետեն առաջին հարցը իր բնականոն կամ փոխարինող մը ըլլալն է: Մեծացող էակը իր հարազատ հորն ու մոր գրկին մե՞ջն է, որ կմեծնա, թե՞ ուրիշ «խորթ» մայր մը կամ երկրորդ հայր մը կա. կամ կմեծնա մեծ մոր մը կամ

մորաքրոջ մը «կերցուցած հացով». կամ գուցե առնված է հանրային խնամքի տակ՝ որբանոցի մը կամ նման հաստատութեան մը մեջ: Այս պայմաններեն ամեն մեկը կդնե բացվող հոգիին վրա իր ուրույն կնիքը ամբողջ կյանքի համար: Եվ հարցը հոն չէ հիմա, թե ատոնցմե ո՞րն է լավը, ո՞րն է վատ կամ ի՞նչ չափով: Իրականին մեջ ատոնցմե ամեն մեկը և՛ շատ գեշ է, և՛ շատ լավ՝ նայելով պարագաներուն: Հիմա մեր չեչտել ուզածը այն է, որ ատոնք բոլորովին տարբեր միջավայրեր են, տարբեր հոգեբանական ազդակներ, տարբեր փոխադարձ հարաբերութիւններով, եթե նույնիսկ բոլորն ալ հավասարապես ընտիր հատկութիւններով օժտված ենթադրենք: Հարազատ հոր ու մոր ու իրենց զավակին կապը ուրիշ հոգեբանութիւն մը ունի մեջը և վարմունքի նուրբ ու խորին տարբեր բնականութիւն մը, որուն հավասարիլ չի կրնար երբեք ամենաբաննչելի մորաքույրը կամ մեծ մայրիկը կամ ով կուզե ըլլա:

Ընտանիքի կազմութեան երկրորդ հարցը ընտանիքի անդամներում բաղադրութիւնն է ու թիվը:

Բոլորովին այլ կերպ կմեծնա փոքրիկ մը, երբ մեկ հատիկն է տանը կամ երբ իրեն հետ եղբայր մը ունի, և լուրջ կարևորութիւն ունի՝ եղբայրը իրմեն մե՞ծ է, թե՞ իրմեն պզտիկ, և եղբա՞յր է, թե՞ քույր այդ իրմեն մեծ կամ պզտիկ եղողը: Աւոր համեմատ երեխան կվարժվի «պաշտպան» խաղալու կամ «պաշտպանյալ» կդառնա, հրամանատար կամ հրամանի տակ. մեկ կողմեն կչեչտվի կամքն ու հնարամտութիւնը, մյուս կողմեն՝ մեղմութիւնն ու կրավորական պահանջկոտութիւն մը: Իսկ կրթական բոլորովին ուրիշ միջավայր մըն է, երբ փոքրիկը կմեծնա իրմեն մեծ ու փոքր հինգվեց եղբայր-քույրերու եռուն հասարակապետութեան մը մեջ: Առօրյա սովորական իրողութիւն է, որ մինակ մեծցած երեխաներուն մեջ ընդգծված եսականութիւն մը կա, այլև մանկութեան մը պակասը. միշտ մեծերու հետ կմեծնան և կյուրացնեն մեծերու խոսքն ու ձևերը, կչարժվին մեծավարի: Եվ այդ եսականութեան ու մեծականութեան կից ունին նաև կա՛մ երես առած սանձարձակութիւն մը, կա՛մ ընկճված հլութիւն մը՝ նայելով իրենց շրջապատողներու բնավորութեան: Մինչդեռ եղբայր-քույրերու շրջանակին մեջ մեծցողը անհամեմատ նվազ կկրե մեծերու անմիջական մեծական ազդեցութիւնը և ավելի ալ բնական ու ազատ զար-

գացում մը կատանա իրեն հավասարներու շրջանակին մեջ, ուր ո՛չ իր քմայքներուն շատ ականջ կկախեն, ո՛չ իր լացերուն, ուր իր բնական ընդունակութիւնները և կյանքի բնական ընկերական օրենքները ավելի ազատ և ավելի անողոք կգործեն, որով ավելի բնական ու ավելի պիտանի նախապատրաստութիւն մը կուտա փոքրիկին կյանքի կռվին համար:

Այս մատաղահաս հասարակութենեն կարևորութիւն ունի ընտանիքին մեջ ծերունիներու և հասակավոր անդամներու ներկայութիւնը՝ մեծ հայր, մեծ մայր, հորաքույր, մորաքույր կամ ուրիշ ազգական մը, որ ընտանիքին մեջ կապրի: Ասոնք բոլորը ազդող տարրեր են թե՛ իրենց ներկայութեամբ, թե՛ իրենց փոխադարձ հարաբերութեամբ և թե՛ իրենց դաստղութիւններով, իրենց բոլոր չար ու բարի կողմերովը:

Ընտանիքի մշտական անդամներուն պես աչքի առջև պետք է ունենալ նաև դուրսը ապրող ազգականներուն և «գրեթե» ազգականներուն, ծանոթներուն, դրացիներուն և «բարեկամներուն» այն երբեմն նեղ, երբեմն լայն շրջանակը, որ սերտ կապեր, երթևեկ և հարաբերութիւն ունի պզտիկի մայր ընտանիքին հետ և կկազմե տեսակ մը անոր յայնագումը: Ինչքան որ ատոնց կապն ու երթևեկը տևական է ու հաճախակի, բնականորեն այնքան ալ մեծ է անոնց ազդեցութիւնը: Ուրիշ է քանի մը հոգիի ու սահմանափակ ազդեցութեան տակ մեծնալը, ուրիշ է զանազան տարիքի, դիրքի ու բնավորութեան տեր ազգակից ու բարեկամ մարդոց մշտական լայն ու բազմերանգ շփումն ու ազդեցութիւնը: Առաջինը միշտ ավելի միակողմանի է ու ավելի խոր կաշկանդող, երկրորդը, ընդհակառակը, ընդունակութիւններու զարգացման ավելի ընդարձակ ազատութիւն կուտա, ինչպես և փորձառութիւններու և զգացումներու մշտական շատ ավելի լայն դաշտ: Սակայն ունի իր անպատեհութիւնները, քանի որ լավ գծերուն հետ զեշերն ալ կյուրացվեն հավասարապես, լավ օրինակներուն դեմ պակաս չեն վատ օրինակները, աղվոր ու մաքուր լեզուներուն քովիկը հայհոյանքին կամ բամբասանքին աղը քիչիկ մը շատ սիրող լեզուները: Կա և անոնց երես տալը, զանազան «փոքրիկ նվերնները», քաղցրեղեն ու խմորեղեն, երբեմն չափազանց ցուցադիր, երբեմն, ընդհակառակը, ծածուկ ու գողունի, և անոնց անընդհատ համբույրներն ու

դռվանքը, ըլլա սրտանց ու գորովագին, ըլլա միայն ձևի համար ու կեղծաւոր: Ասոնք բոլոր դուտ մնաս են ինչպես փոքրիկի ստամոքսին ու առողջութեան, այնպես ալ անոր ճաշակին, զգացումներուն ու վարքին:

Ընտանեկան կազմին մեջ պետք չէ մոռնալ և ծառաները, դայակները, ծծմայրը, դաստիզպանը, պարտիզպանը, խոհարարը և այս կարգի մշտական կամ այցելու օժանդակ ու ծառայող անդամները ընտանիքի: Բոլոր այս օտար մարդիկը շատ բնորոշ ու բացառիկ դերը մը ունին. անոնք մեծ են, տարիքով մարդիկ են, բայց չունին ընտանիքի մյուս հասակավոր անդամներուն իրավունքն ու հեղինակութիւնը փոքրիկներուն վրա: Ինչպես պզտիկները, այնպես ալ ծառաները ենթակա են ընտանիքի հարազատ անդամներու հրամանին ու կարգադրութիւններուն. հոսկե կառաջանա վիճակի նույնութիւն մը, իսկ վիճակի նույնութիւնը դաշնակցութեան կտանի. փոքրիկներն ու ծառաները իրարու վրա կնային տեսակ մը իրար հավասարի վրա և հավասարի պես ալ կվարվին իրարու հետ. կխոսին դու-ով, կխաղան միասին ավելի սիրով և հաճախ կբացվին իրարու: Ընտանիքի խիստ ու շատ չսիրված անդամներուն դեմ եղած դժգոհութիւնները արտահայտութիւն կստանան ծաղրական ձևացումներով երեխայի ու ծառայի կողմեն և այլանդակ մականուններու գործածութեամբ, որ մյուսներուն անհասկնալի կմնա. կատարյալ դավադրութիւն: Եվ այս մթնոլորտին մեջ ծառան ու մանուկը կդառնան ընկերներ, որով և փոքրիկը կրկնակի չափով կենթարկվի այդ «օտար» մարդու ազդեցութեանը, ազդեցութիւն մը, որ շատ դժվար է հակելը կամ առաջն առնելը: Մեծերը միշտ դժգոհ են, միշտ կհանդիմանեն փոքրիկները, մեղմ կամ խիստ արգելքներու կդիմեն. «Չհամարձակիս առանց իրավունքի խոհանոց երթալու» կամ այս կարգի վրան բաց պատվերներ, որոնց հետևանքը նույնն է միշտ. երեխան իր թարմ սրտին բոլոր քնքշանքովը կկապվի իր սիրած ու արգիլված մեծ ընկերոջը և իր փոքրիկ հոգիին ամբողջ թափովը կբողոքե, կմաքառի, չեզոքացնել և դերև հանել կջանա իր սիրած անձի դեմ դրված «անիրավ» արգելքները:

Հարաբերութիւնը այսքան հեռուները երթա թե ոչ՝ ամեն պարագայի տակ ծառաներու և մանուկներու կապը բնական

երևույթ մըն է: Ընտանիքն ու ծառաները սովորաբար տարբեր դասակարգերէ կըլլան, տարբեր կրթութիւնեմբ, տարբեր տնտեսական վիճակով և աշխարհայացքով, և ճիշդ այդ պատճառով ալ թե՛ ավելի հետաքրքիր կըլլան մանուկներու համար, թե՛ ավելի դրավիչ, չէ՞ որ փոքրիկը նորանոր բաներ կըսե ու կսորվի անկե, մանավանդ իրմեն ծածկված կամ հեռու պահված բաներ, կյանքի և ընկերային հարաբերութիւններու վրա նոր ըմբռնումներ, նոր հայտնութիւններ. պզտիկ ուղեղը կսկսի փիլիսոփայել մարդկային անհավասարութիւններու, անարդարութիւններու, եսականութեան և նման խորունկ-խորունկ հարցերուն շուրջը:

Այսպեսով՝ տան ծառաները իրենց անճով, իրենց պատմածներով դուրսի աշխարհի մասին, իրենց ըմբռնումներով ու իրենց ամբողջ էութեամբ կրթական խոշոր գործոն մըն են պզտիկներու կյանքի առաջին տասնամյակին: Երկրորդ տասնամյակին չատ վտանգավոր կերպով այդ բոլոր ազդեցութիւններուն վրա կավելնա նաև սեռական հարցը: Երիտասարդ սպասուհիները հասունցող պատանիին համար և այր ծառաները օրիորդներու վրա եղող աղջիկներուն համար մեկե ավելի հրապույր ունին և տարօրինակ հետաքրքրութիւններ: Եվ այն բոլոր «գաղտնիքները», որոնց մասին ծնողները համառաբար և հիմարաբար կլռեն և խորհրդավորութիւններով կպարուրեն, ծառաները ահա, ըլլան հակասեռ թե համասեռ, կքողամերկեն ամենակոպիտ կերպով և հաճախ չատ դժ հետևանքներով:

Գ. Ընտանեկան ազդեցության երկրորդ գործոնն է ընտանիքին վիճակը: Եվ հոս ուշադրության առնվելիք առաջին բանը ընտանիքի աշխատանքն է, այսինքն թե ինչ գործի, ինչ զբաղումի, ինչ պաշտոնի տեր են ընտանիքի գլխավոր անդամները, մասնավորապես ընտանիքին հայրը, որովհետև այդ հարցին հետ սերտ կապված է և՛ ընտանիքին բարեկեցութիւնը, և՛ ընտանիքին կրթական աստիճանը, և՛ հասարակական դիրքը, և՛ ընտանիքին հարաբերութիւններուն ցանցը, ինչպես և անոր առօրյա ապրուստ ու կենցաղը, կարճ խոսքով՝ ընտանիքին ամբողջ կյանքը:

Նայելով տան մեծի արհեստին ու աշխատանքին՝ հիմնովին կփոխվի ընտանիքին մեջ տիրող աշխարհայացքը, դատողութիւնները, փորձառութեան պատեհութիւնները, բնավորութեան կազմա-

վորմանը վրա ազդող ու հակազդող առիթները: Տարբեր մթնոլորտ է գյուղն ու հողագործի ընտանիքը, տարբեր է քաղաքացի խանութպանի մը ընտանեկան միջավայրը, ուրիշ է դերասանի մը «տունը», ուրիշ է բժիշկի մը, քահանայի մը, պետական պաշտոնյայի մը, ձկնորսի մը կամ կոշկակարի մը հյուսած բույնը: Բոլորովին այլ նյութերու, հարցերու, հոգերու ու կռիվներու, սովորութիւններու և ձևերու մեջ կթավալի կյանքը, և ատոր համեմատ ալ բնականաբար ուրիշ կըլլա իր թողած կնիքը աճող մարդու հոգեկան ու մարմնական աշխարհի վրա:

Աշխատանքեն եառքը ընտանիքի վիճակը պայմանավորող երկրորդ կետը ընտանիքի դիրքն է, որ շատ-շատ կողմերով կախում ունի անշուշտ ընտանիքի մեծի վարած աշխատանքեն, բայց ո՛չ բացառաբար: Հոտ դեր կխաղա նաև նախորդ սերունդներու ունեցած աշխատանքը, գրաված դիրքը, հանրային գործունեութիւնը, ձեռք բերած անունը և վայելած հարգանքը, որոնք նյութական հարստութիւններու նման և անոնց հետ միասին կժառանգվին հաջորդ սերունդներեն: Գյուղին մեջ գյուղական ընտանիքները խոշոր տարբերութիւններ ունին իրարմե իրենց գրաված դիրքովը, իրենց ազդեցութիյամբ ու ձայնովը, նույնիսկ երբ տնտեսապես մեծ տարբերութիյուն մը չունին իրարմե: «Հին տունը», «ազգը», «ազնվականութիյունը», «անունը», համայնքի մեջ վայելած հարգանքը շատ խոշոր առավելութիյուններ են, որոնք ընտանիքի անդամներուն հենց սկզբեն կուտան բնական հպարտութիյուն մը, իրենց խոսքին ու շարժումին՝ որոշ շեշտ մը, կընձեռեն ազդեցիկ կապեր և առաջ շարժվելու դյուրութիյուններ, մինչդեռ արհամարհված ու վատանուն կամ պարզապես խոնարհ ու աննշան ընտանիքի մը մեջ մեծնալը կստեղծի ճակատագրորեն աննպաստ պայմաններ թե՛ հաջողելու, թե՛ առաջանալու, թե՛ լրիվ բացվելու և թե՛ հոգեկան հարուստ ապրումներ ունենալու տեսակետեն:

Ընտանիքի աշխատանքին ու դիրքին կից կերթա միշտ տնտեսական վիճակը: Եվ բացահայտ է ինքնին, որ մուրացկանութիյունը, չքավորութիյունը, աղքատութիյունը, ծայրը ծայրին ապրիլը, բարեկեցութիյունը, հարստութիյունը, շռայլութիյունն ու զեխութիյունը հիմնապես տարբեր պայմաններ ու վիճակներ կառաջացնեն անհատներու զարգացման առջև, բոլորովին ուրիշ հնարավորութիյուններու ճամ-

բաներ կրանան անհատներու կրելիք ազդեցութիւններու և՛ որակին, և՛ ծավալին, և՛ աստիճանին համար:

Կա նաև ընտանիքի մը նիստն ու կացը, վարքն ու բարքը, ապրուստն ու սովորութիւնները, հավատքն ու բարոյականութիւնը, գիտական ըմբռնումները, ճաշակը ու գեղարվեստական պահանջները, այսինքն ընտանիքի մը ամբողջ ուսումնական ու հոգեբանական վիճակը, որ անշուշտ մեծապես ենթարկված է վերի երեք գործոններու ազդեցութեանը: Բայց այդ հոգեբանական տվյալներն ալ իրենց կողմեն մեծ ազդեցութիւն կբանեցնեն ընտանիքի մեջ մեծցող նոր սերունդին վրա և վերի երեք ազդակներեն ավելի անմիջական եղանակով մը: Որովհետև հարստութիւնը, ընտանիքի մեծերուն գործն ու դիրքը ավելի դուրս են ու վերեն ներգործող ուժեր են, ոչ ամեն անգամ նկատելի ու չոշափելի, որոնք դույն և ուղղութիւն կուտան ընտանիքի տնտեսական, իմացական ու բարոյական վիճակին և այդ ճամբով միայն, տեսակ մը միջնորդաբար կազդեն ընտանիքը կազմող անհատներու ձևավորման վրա: Մինչդեռ ընտանիքին մեջ տիրող կենցաղը, դաստիանքը, ուսումը, ճաշակն ու հոգեբանութիւնը այն անմիջական մթնոլորտն է, ուր կաճի ու կշնչէ անհատը, ուրկե ծծած հյութերովը կկազմվի ու ձև կառնե անհատի էութիւնը:

Դ. Ընտանիքի կենցաղին ու հոգեբանութեանը սերտորեն հյուսված է մայր ընտանիքի ազդեցութիւնը պայմանավորող երրորդ գործոնը, որ է իր ամեն մեկ անդամի բնավորութեան, հատկութիւններուն և անձնական առանձնահատկութիւններուն ազդեցութիւնը մյուսներուն վրա և մասնավորապես աճող սերունդին վրա: Ծուլ ու դինեմոլ կամ չանասեր ու հոգածու հայր մը, թեթևաբարո ու իր զվարճութիւններուն հետևեն ինկած կամ ամբողջովին իր ընտանիքովն ապրող գործավարից մայր մը, բացքերան ու թափթփված կամ ջերմ ու անձնվեր մորաքույր մը, աղնիվ քեռի մը կամ կռվազան փեսա մը, չփացած ու լալկան քույր մը կամ, ընդհակառակը, ժիր ու մոր աչ թևը եղող քնքուշ քուրիկ մը, ամենուն հարգանքը վայելող և ամբողջ համայնքին տեսակ մը խորհրդատու եղող պատկառելի պապիկ մը կամ տատիկ ու ցնդած, միայն իր ուտելիքեն խոսող պառավ մը, – ասոնք բոլորը իրենց կյանքով, խոսքով ու գործով խորը հետքեր կփորեն մեծցող տղու

սրտին ու մտքին վրա և իրենց դրոշմը կդնեն անոր աշխարհայացքին ու ապագային վրա:

Ընտանիքի անդամներուն ամեն մեկ շարժումը, ամեն մեկ խոսքը, ամեն մեկ վարմունքը, թե՛ լավը, թե՛ գեշը և թե՛ անկարևորը, իզուր չի անցնիր և աննկատ չի մնար երբեք: Մեծերս բնավ զգաստ չունինք, թե ինչ աստիճանի սրատես և նրբատես էակներ են երեխաները: Մենք կզատենք մեր բթացած զգայարանքներով և կկարծենք, որ մանուկներն ալ ամենեն լավ պարագային մեղի չափ ու մեղի պես կտեսնեն ու կլսեն: Իսկ իրականին մեջ մենք շատ-շատ բաներ արդեն չենք նշմարեր, շատ-շատ բաներ մեր ուշադրությունը չի գրավեր կա՛մ մեզի համար արդեն խիստ սովորական ըլլալուն, կա՛մ մեզի համար կարևորություն չունենալուն համար. մինչդեռ այդ բոլորը կգրավեն փոքրիկներուն ուշադրությունը. անոնք ամեն ինչի կարևորություն կուտան, կհետաքրքրվին և ամեն ինչ ստանալու և յուրացնելու հետևեն են շարունակ: Իր բովանդակ թարմությամբ կբանի հոգեկան մեքենան այդ օրերուն, և մեծերս փոքրիկներու մշտական հսկողության տակն ենք այն միջոցին, երբ միամտություն ունինք կարծելու, թե մենք ենք, որ կհսկենք փոքրերուն վրա: Մեծերուն հսկողությունը ընդհանրապես միայն պաշտպանելու բնազդեն կառաջնորդվի, քիչիկ մըն ալ օգնելու, իսկ պզտիկներուն հսկողությունը՝ դիտելու, թափանցելու, հասկնալու և յուրացնելու հոգեբանական խորունկ պահանջեն, որ հիմքն է ամեն զարգացման ու կրթության: Մեծերու հսկողության կրթիչ արժեքը ընդհանրապես երկրորդական է, չեչտակի, զգուշացնող ու նպաստավորող միայն և շատ թերի ու անհարատև, ինչքան ալ որ մեր մանկավարժական մեծամտությունը չուզենա խոստովանիլ այս ճշմարտությունը: Փոքրիկներու միշտ արթուն հսկողությունն է, որ ունի մեծ ու անմիջական կրթիչ արժեք, թե՛ դրական և թե՛ բացասական իմաստով:

Եվ ճիշդ ասոր մեջն է ահա ընտանիքի անդամներուն անձնական, անհատական հատկություններուն խաղցած չափազանց կարևոր դերը. կրթության գործին մեջ ոչինչ հավասարիլ չի կրնա կենդանի օրինակի ըրած ազդեցությանը: Խրատը, քարոզը խոսք է, հով է, մեկ ականջեն կմտնե, մյուսեն կելլե, վարքն ու վարմունքն է, որ կխրվի հոգին, կդառնա պատճեն ընդօրինակման, յուրացման,

հիացման բարոյական կառուցման: Մեծ, չատ մեծ բաղդ ունին այն մանուկները, որոնք ազնիվ ու բարձր անհատականութիւններու կենդանի օրինակին դիմացը կմեծնան մայր ընտանիքին մէջ:

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Անհատի ամուսնութեամբ կազմված նոր ընտանիքը իր կրթական արժեքով համեմատելի չի կրնար մայր ընտանիքի ունեցած ազդեցութեան հետ, քանի որ նոր ընտանիքը կկազմվի մարդուս այն տարիքին, երբ մարդը ինքն իր կազմն ու ձևը ստացած է արդեն: Բայց և այնպես նոր ընտանիքն ալ իր դերը ունի ամեն անհատի վրա, իբրև կրթիչ ու դաստիարակիչ ազդակ:

Ա. Այս տեսակետեն ամենեն առաջ լուրջ հետևանքներով հարց մըն է՝ արդյոք անհատը նոր ընտանիք մը կազմե՞ր է, թե՞ ոչ: Ամուրի ապրող մարդու թե՛ ներքին դրդումները, թե՛ զգացական աշխարհը և թե՛ ամբողջ կյանքի ըմբռնումը ենթարկված է որոշ դունավորման իր ամուրի ըլլալուն պատճառով: Նոր բույն մը հյուսելը և նոր սերունդ մը մեծցնելը բնութեան դրած ամենեն մեծ կոչումն է մարդուս վրա, ինչպես և ամենեն առաջին պարտականութիւնը ընկերութեան հանդեպ: Թե՛ այր և թե՛ կին, երբ կխուսափին այդ պարտավորութենեն, կմնան զուրկ կյանքի լրիվ վայելքեն ու տառապանքեն, կյանքի լրիվ ըմբռնումեն: Զգացումներու, մտածումներու, հոգերու, պարտականութիւններու և անձնազոհութիւններու ամբողջ դեզեր կմնան իբրև գոց գիրք մը ամուրի ու անզավակ հոգիներուն համար: Այդ բոլորի մասին լսած, խոսած կամ կարդացած ըլլալը սառն ու վերացական մուխ մըն է միայն օդին մէջ, բայց ո՛չ կենդանի ապրումներու բոցն ու կրակը իրականութեան հողին վրա:

Ամուրի մարդու տեսակ մը չոր եսականութիւնը չատ խոսված, չատ դիտված և չատ հասկնալի երևույթ է: Մարդկային էակի կազմն ու կյանքը այնպես է, որ առաջին երկու-երեք տասնամյակները հատկացված են զլխավորապես ստանալու, յուրացնելու ու վայելելու համար: Կյանքի ծծող ու առնող եսական շրջանն է ասիկա, երբ հանրային հաստատութիւններն ու հոգատարութիւնը, երբ ծնողներու ճիգն ու խնամքը, երբ երիտասարդ սրտերու

սերը և ընդհանրապես ամենուն ջանքն ու գուրգուրանքը ուղղված են կարծես մեկ նպատակի մը՝ աճող ու հասունցող էակի պետքերուն, պահանջներուն ու բաղդավորութեանը ծառայելու: Մանուկը, տղան, պատանին և երիտասարդը իր առաջին տարիներուն ընդհանուր առումով և շատ բնական կերպով զբաղված է ու կլանված ինքն իրմով. ինքն է աշխարհիս կեդրոնը, իր անձը, իր ձգտումները, իր կրթութիւնն ու իր բարձրութիւնը: Իր եսին պահանջները բավարարելու համար է էապես, որ թարմ երիտասարդը կնետվի արկածախնդրութիւններու, ձեռնարկներու, հերոսութիւններու և ամուսնութեան գիրկը: Եվ իզուր չէ, որ թատերական ու վիպական բեմերուն վրա ամուսնութեան հետ կիջնե և վարագույրը. փակված է կյանքի առաջին մասը:

Եվ տարվե տարի զավակներու աճող թիվին զուգընթաց կծանրանա երիտասարդ ծնողներու ուսին վրա հոգերու, դժվարութիւններու և պարտավորութիւններու հետզհետե խոշորացող բեռը: Ամուսնութեան օրեն աննկատելի կերպով մարդը կդադրի ինքը ըլլալե իր մտածումներուն ու ջանքերուն կեդրոնը: Հետզհետե ամեն ինչ կդառնա նոր սերունդին շուրջը. հիմա անոնք են, որ կպահանջեն, հիմա անոնք են, որ կդառնան ծծող ու առնող եսական տարրը, իսկ հայր ու մայրը կմտնեն կյանքի երկրորդ հատվածը՝ այլասիրութեան շրջանը, երբ կապրինք ու կաշխատինք մեր զավակներուն համար, մեր սիրելիներուն համար, ուրիշներուն համար, երբ կապրինք տալու համար:

Բ. Ասիկա խորին բնազդ մըն է ամեն մարդու հոգիին մեջ և բնական ընկերային հարկադրութիւն մը և վերջը-վերջը թե՛ անհատական և թե՛ հանրային տեսակետեն շատ արդար և շատ առողջ, ինչքան ալ որ երբեմն- երբեմն ընտանեկան հոգերու և բեռներու տակ կքած մեր հին ես-ը ըմբոստացման փորձեր ընե և բողոքի խոսքեր:

Ամուսնական ընտանիքին մեջ անհատի կրած ազդեցութիւնը կճառագայթե երկու հնոցե: Նախ՝ ամուսիններուն փոխադարձ ազդեցութիւնը. մարդու ազդեցութիւնը կնոջ և կնոջ ազդեցութիւնը մարդուն վրա: Այս ազդեցութիւնը մեծ է միշտ և ընդհանուր ամեն վիճակներու մեջ, բայց հակում ունի շարունակ ավելի ու ավելի խորանալու, ինչ չափով որ բարձր ըլլան կեցած ամուսինները

զարգացման ու նրբացման անդուլին վրա: Հոգիի քաղաքակրթութեան ամենէն ցած աստիճաններուն վրա կինը կա՛մ աղախին մըն է, նոր աշխատաւոր մը տան համար, կա՛մ առուծախի ու զուարճութեան առարկա մը՝ նայելով տղամարդու տնտեսական ու ընկերային դիրքին: Աւելի նրբացած զգացումներու և աւելի բարձր հոգեկան պահանջներու ժամանակ կինը առանց կորնցնելու իր հաւկլայալ աշխատաւորի կամ, աւելի ճիշդ է, ընկեր՝ աշխատակցի հանդամանքը, առանց դադրելու «կեանքի ուրախութիւնը» ըլլալու, կդառնա նաև միևնոյն ժամանակ մտերիմ ընկեր մը իր ամուսնուն համար՝ անոր բոլոր ճիգերուն, հոգերուն, ծրագիրներուն և ոգևորութիւններուն մասնակից: Ասով ալ անոնց փոխադարձ ազդեցութիւնը կդառնա անհամեմատ աւելի բազմակողմանի, բարդ ու խոր: Աստուածային հին վճիռը՝ «Եվ եղեցին երկոքեան ի մարմին մի», հիմա մեզի համար թերի ու միակողմանի հասկացողութիւն է. նոր «Աստուածաշունչ» մը անշուշտ աւելի հակում պիտի ունենա ընդգծելու իրողութեան մյուս երեսը՝ «Եվ եղեցին երկոքեան ի հոգի մի»:

Ամուսնական ընտանիքին մեջ ամուսիններու կեանքին ու հոգիին վրա խոր կնիք դնող երկրորդ աղդակը զաւակներն են, նոր սերունդի ներկայութիւնը: Ընտանիքը երեխային համար է. ընտանեկան կենսակցութեան առանցքը, նպատակն ու իմաստը երեխան է, և հայրն ու մայրը կծառայեն երեխայի աճումին ու զարգացումին: Բայց և այնպես երեխաներն ալ իրենց կողմեն կրթող ու դաստիարակող լուրջ աղդակներ են իրենց ծնողներուն համար: Կրթելը կրթվիլ ըսել է. սորվեցնելով մենք ինքներս կսորվինք: Ինչքան-ինչքան դիտողութիւններ, մտածումներ, զգացումներ ու փիլիսոփայութիւններ կանցնին ամեն մեկ հոր ու մոր մտքեն ու սրտեն իրենց առօրյա հարաբերութիւններու միջոցին իրենց զաւակներուն հետ:

Զաւակ ունեցող ու զաւակ մեծցնող մարդու աչխարհայացքը բոլորովին տարբեր խորութիւն մը ունի կեանքի ու ընկերային խնդիրներու շուրջ. ամուսնական ընտանիքի բովեն անցած մարդը գերազանցապես ընկերային անհատ է, անհամեմատ աւելի հստակ ըմբռնող կեանքի էութիւնը, պահանջն ու պետքերը և աւելի պատրաստակամ համայնական ծառայութեան, քան իր պայման-

ներուն և իր վիճակին համապատասխանող դեռ «աշխարհ չմտած» մարդը:

Եվ զավակներու՝ իրենց ծնողներու վրա ունեցած այդ կրթիչ ազդեցությունը կշարունակվի ամբողջ կյանքի ընթացքին, քանի որ նոր սերունդի ամեն տարիք իր նորությունները, իր նոր փորձառությունները և նոր հարաբերությունները կբերի հին ու նոր սերունդներուն միջև:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Ա. Ընտանեկան կապերեն դուրս մարդոց մեջ եղած քիչ-շատ տևական ու մոտիկ հարաբերությունը կրյա երկու տեսակի՝ կա՛մ ընկերական, կա՛մ պաշտոնական:

Պաշտոնական հարաբերություններու ժամանակ մարդիկ են-թարկված են իրարու, այսինքն տարբեր աստիճան ու դիրք ունին իրարու հանդեպ իրավապես, և կամ իրարու հետ ունենալիք վար-մունքի եղանակը խոշոր գծերով որոշված է առաջվընե օրենքով ու սովորությամբ:

Ընկերական հարաբերությունները չունին իրենց վրա ո՛չ այդ ենթարկումը, ո՛չ ալ հարկադրանքը, այլ հիմնված են իրավա-կան հավասարության և փոխադարձ ազատության վրա: Ընկերներու մեջ ալ կան անշուշտ բնական ու քաղաքակրթական ամեն տեսակի անհավասարություններ, ինչպես և ամեն աստիճանի ենթարկում և հպատակություն ընկեր ընկերոջ, միայն թե այդ բոլորը հանձն է առնված կամովին, առանց ուրիշներու միջամտու-թյան, առանց հարկադրանքի և ամեն վայրկյան կրնա խզվիլ երկուստեք: Երբ ընկերներու մեջ եղած այդ ազատ ու կամովին ենթարկումը կսկսի պահանջի ու պարտավորության ձև առնել ու կվերածվի իրավական անհավասարության, ընկերական կապը կքակվի ու կիյնա: Անոնք այլևս միայն անունով են ընկեր, իրապես խորթ ու դժգոհ իրարմե և հաճախ ներքուստ թշնամի:

Այս բոլորի հետևանքով ընկերական հարաբերություններուն մեջ, որ հիմնված է ազատ ընտրության և կամավոր մերձեցման վրա, ամենակարևոր դերը կխաղան զգացումները, փոխադարձ համակրանքը, բնավորություններու իրար բռնելը, նույն հակում-

ներն ու նախասիրութիւնները ունենալը, նման խոհեմներու ու զաղափարներու տեր ըլլալը, ուրիշ խոսքով՝ հոգեկան ներդաշնակութիւնը: Մինչդեռ պաշտոնական հարաբերութիւններու մէջ, որ հիմնված է փոխադարձ պայմանավորման կամ հանրային պահանջներու վրա, բավական է լիովին արտաքին ներդաշնակութիւնը, այսինքն պատշաճութեան, քաղաքավարութեան, կանոններու և սովորութիւններու հարգանքը:

Եվ ասոր համեմատ ալ կըլլան հիմնապես տարբեր այդ երկուքի ունեցած ազդեցութիւնները անհատներու կրթութեան ու զարգացման վրա: Հարկադրանքն ու իր մեծավորութիւնը զգացնելը ամենացուրտ հովերն են, որ կասեցնեն հոգիները և կսառեցնեն կծկվիլ: Ինչքան ալ երկարատև և մտերիմ ըլլա միայն պաշտոնական հարաբերութեամբ իրարու կապված մարդոց չիումը, անոնց փոխադարձ կրթական ազդեցութիւնը միշտ սահմանափակված կմնա կյանքի արտաքին կողմերու վրա, քանի որ հոգիներուն փեղկերը ալինդ-ալինդ զոցված են իրարու դեմ: Բարձրադիր և ստորադաս պաշտոնյայի, վարպետի ու աշկերտի, ուսուցչի ու աշակերտի հարաբերութիւնները իրենց կրթական արժեքով այնքան ավելի կըարձրանան, ինչ չափով որ այդ պաշտոնական հարաբերութիւններուն մէջ սերտ զգացում ու մտերմութիւն մտնն, այսինքն ինչ չափով որ պաշտոնականութիւնը տեղի տա ընկերական հարաբերութեան:

Բ. Եվ ճիշդ ատոր համար ալ չափազանց մեծ ու կարևոր է ընկերներու իրարու վրա ունեցած ազդեցութիւնը: Բայց «ընկեր» ըսվածն ալ ամեն տեղ միևնույն արժեքը չի ներկայացներ ո՛չ իր սերտութեամբ, ո՛չ իր խորութեամբ և ո՛չ ալ իր բազմակողմանի ընդգրկումով: Եվ ինչքան ընկերական կապը թուլ ըլլա և անցավոր, այնքան ալ կըլլա միակողմանի, սահմանափակված որոշ գործունեութեան մը շրջանակին մէջ, կեդրոնացած որոշ նպատակի մը շուրջը. այսպես են մեծ մասով մեր բազմաթիվ խաղի ընկերները, մեր դասի ընկերները, որևէ ձեռնարկի մը շուրջը խմբված գործակից ընկերները, մեր կուսակցական ընկերները: Շատ-շատ են ատոնք, և մեզմե ամեն մեկը հարյուրավոր այդ տեսակի ընկերներ ունի, որոնք կեցած են արտակարգութեան սանդուղին զանազան աստիճաններուն վրա, միայն բոլորն ալ վարի աստիճաններուն: Բազ-

մակողմանի կերպով, տևապես ու լրիվ մեր հոգին գրկող մտերիմ ընկերը միշտ ալ հազվագյուտ բացառություն մըն է. ամեն մարդ հաղիվ երկու-երեք հատ կունենա իր ամբողջ կյանքի տարբեր շրջաններու ընթացքին, և ատիկա մեծ բաղդ մըն է ունեցողին համար:

Արդ՝ այս բոլոր տեսակի ու աստիճանի ընկերական կապերը խոշոր ազդեցություն ունին մեր զարգացման վրա: Այդ ընկերներեն ամեն մեկը մեյ-մեկ կենդանի օրինակ է և դրդիչ նմանվելու, հետևելու, կապկելու: «Ընկերներու բարերար ազդեցությունը», «ընկերներու գեշ օրինակը», «ընկերներու խոսքով ու ճաշակով չարժվելը» շատ ընդհանուր երևույթ է և սովորական խոսակցության նյութ ինչպես բոլոր ընտանիքներուն մեջ, այնպես ալ ամեն դպրոցական ու վարչական խորհրդակցություններու ժամանակ: Մեր տղաքն ու աղջիկները կհագվին, կշարժվին, կխոսին ու կդատեն, կհավնին ու կարհամարհեն իրենց ընկերներու խելքով, իրենց ընկերներու ճաշակով և իրենց ընկերներու բարոյական ըմբռնումով: Նույնն է անշուշտ իրողությունը նաև մեծերու վերաբերմամբ, երբ հարցերուն վրա քիչիկ մը բարձրեն կնայինք. ամեն մարդ ալ կդատե ու կշարժվի ըստ իր ճաշակին, ըստ իր կարդացած լրագրին, ըստ իր կուսակցության, ըստ իր սիրած ու հավնած մարդոց ճաշակին:

Եվ այս իրողության չուրջը միշտ վեճ կա և «անհասկացողություն» իրար հաջորդող սերունդներու մեջ. շարունակ տրտունջ կամ հանդիմանություն կա ընտանիքներուն գիրկը ծնողներու և զավակներու միջ: Ծնողները կուզեն, որ իրենց ճաշակով, իրենց խելքով, իրենց սկզբունքով ու իրենց փորձառությամբ նստի ու չարժվի իրենց զավակը և իրենցմե ավելի ո՞վ կրնա հոգալ, հասկըննալ ու խորհիլ իրենց զավակի իսկական օգուտն ու աղեկությունը: Բայց այս ամենուն հակառակ՝ կտեսնեն խորին վշտով, որ իրենց տղաքը կհետևեն «հիմար» տղու մը խորհրդին, «անպիտան» ընկերոջ մը օրինակին, «կապը կտրած» աղջկան մը խոսքին ու ճաշակին:

Այս խուլ նախանձը կամ բաց կռիվը ընտանիքի ու ընկերոջ միջև հավիտենական է ու միշտ պիտի ըլլա: Մեկ կողմե կխոսի արյան կապը և ժառանգականության իրավունքը, մյուս կողմեն կխոսի տարիքին կապը, նույն սերունդին պատկանիլը, այսինքն

նույն ու նման ապրումներ ու հիշողություններ ունենալը, նույն ու նման ըմբռնումներով և սկզբունքներու կախարդանքին տակ աճիլը, նույն ու նման որոնումներ, խարխաբումներ, անուրջներ ու ճիգեր փորձած ըլլալը, նույն խմորումը կրած ըլլալը, նույն հարմարումը իրենց օրերու մթնոլորտին: Հինի պահպանումին և նորի հարմարումին հավիտենական պայքարն է ասիկա ալ, որուն մեջնեն կհոսի կյանքը:

ՄԱՅՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՎ ՕՏԱՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

Ա. Ընտանիքը, ընկերը և պաշտոնական կապերը մարդկային շփման ու հաղորդակցության սեղմ շրջանակն է. այդ նեղ շրջանակենն դուրս կա տակայն շատ ավելի լայն շրջանակ մը մարդկային էակներու, որոնց հետ ամեն անհատ իր կյանքի ընթացքին շփման մեջ կուգա անշուշտ շատ ավելի հարևանցի ու պատահական կերպով: Ատոր համեմատ ալ ատոնցմե ամեն մեկուն թողած մասնավոր ազդեցությունը ընդհանուր առումով ո՛չ մեծ է, ո՛չ խոր, բայց այդ լայն շրջանի դիցուք և փոքր ու թեթև ազդեցությունները դումարելով իրարու վրա ու հաճախ կրկնվելով՝ կղառնան կրթական խիստ կարևոր ուժ:

Մեզմե ամեն մեկը իր ապրած գյուղին, քաղաքին, թաղին ու տեղին վրա, բացի իր ազգականներու ու գործակիցներու ավելի կամ սակաս խոշոր թիվենն, միչտ Հանդիպում ու տեսակցություն ունի ուրիչ բազմաթիվ համաքաղաքացի ծանոթներու, դրացիներու կամ իր երթևեկին վրա դտնվող ու կրկնվող դեմքերու հետ, որոնց մասին բան մը գիտե, որոնց մասին մտածած է, կհամակրի, հակակրանք ունի, հավատակորդ է, ուրիչ խոսքով՝ մտավոր ու զգացական պարզ ու բարդ կապեր ունի անոնց հետ, թեև ո՛չ դնալ-գալ ունի, ո՛չ ալ որևէ անմիջական հարաբերություն:

Ինչքան որ փոքր է անհատի ապրած տեղին բնակչությունը, ինչպես, օրինակ, գյուղը, այնքան ազգականը, ընկերը և համագյուղացին խառնված են իրարու: Փոքր համայնքի մեջ մանուկը իր ընտանիքի չորս պատերուն մեջ չի մեծնար, այլ համայնքի. իրեն խաղակից են գյուղի դրեթե բոլոր հասակակիցները և վերջն ալ

իրեն գործակից ու վիճակակից են բոլոր գյուղացիները, այդ պատճառով ալ փոքր համայնքներու մէջ մեծցող ամեն մեկ անհատ համայնքի ընդհանուր կնիքը կկրե իր վրա: Ավելի մեծ բնակչութիւն ունեցող ավաններու և քաղաքներու մէջ թաղերը կխաղան փոքրիկ գյուղերուն դերը, երբ իրենք իրենց մէջ տեսակ մը կլորցած ամբողջութիւն կկազմեն, կապրին նույն կամ իրար լրացնող աշխատանքով ու արհեստներով, և բոլոր անդամները մոտիկ չփման մէջ են իրարու հետ: Սովորական երևույթ է, որ նույն քաղաքի բնակիչները շատ հաճախ խոսելու ձևով, շարժուձևերու նրբութիւններով, լեզվի ու շեշտի առանձնահատկութիւններով, վարմունքի որոշ գծերով իսկույն կորոշեն մեկու մը ո՞ր թաղեցի ըլլալը, և այդ որոշիչ գծերն ալ ընդհանրապես մյուս թաղերու ծաղրին ու կատակին առարկան են միշտ: Այդպես ալ ամեն քաղաք, ամեն մեծ ամբողջութիւն ու շրջան ունի իր ընդհանուր գծերը, լեզվի, վարք ու բարքի իրեն հատուկ ձևերը, որով կզանազանվի մյուս իսոչոր ամբողջութիւններեն: Եվ այդ ամբողջութիւններուն պատկանող ամեն անհատ ծծած ու յուրացրած է այդ բոլոր ձևերն ու նրբութիւնները, ան իր վրա կկրե ի՛ր ավելի լայն հանրութեան կնիքը:

Բայց չկա գյուղ մը կամ քաղաք մը , ինչքան ալ փոքր ըլլա կամ մեծ, որ ապրի միայն ինքն իրմով և բազմաթիվ վարչական, տնտեսական ու քաղաքակրթական կապերով զոդված ու հյուսված չըլլա իր շուրջի կամ քիչ մը ավելի հեռուն գտնվող համայնքներու կյանքին ու վիճակին: Շարունակ կերթան ու կուգան գյուղացիք, առևտրականներ, պաշտոնյաներ, մյուս կողմեն ալ զինվորական ծառայութիւնը, կրթական հաստատութիւնները, կրոնական կազմակերպութիւնները, ուխտատեղիները, տոները ավելի ևս կնպաստին տարբեր կեդրոնները, տարբեր մասերը շարունակ իրարու հետ չփման մէջ դնելու: Եվ ամեն անհատ ինչքան ալ գամված ապրի իր տեղին, նորեն այս ու այն աստիճանի կչփվի իր գավառացիներուն հետ և իր հայրենիքի մյուս մասերուն պատկանող անհատներու հետ: Ինչքան քաղաքակիրթ է երկիրը՝ այնքան ավելի, ինչքան դյուրին են հաղորդակցութեան միջոցները՝ այնքան հաճախ, և ինչքան զարգացած են տնտեսական պայմանները՝ այնքան շատ: Եվ այսպեսով ամեն մարդ հաղորդակցութեան մէջ է ընդ-

Հանրապես իր ամբողջ հայրենիքին հետ և իր վրա կկրե իր մայր ժողովուրդի դրոշմը:

Արդեն ամեն անհատ որոշ ժողովուրդի մը որոշ ազգականներուն տակ ձևավորված էակ մըն է բնական պայմաններու մեջ: Ինչպես իր ծագումով, այնպես ալ իր ամբողջ կյանքի ընթացքով կպատկանի իր մայր ժողովուրդին, որովհետև այն ընտանիքը, ուր ինքը մեծցած է, որու ուժեղ ազդեցության տակ կգտնվի, այդ ընտանիքը ինքը իր հերթին զարգացած և ձևավորված է մայր ժողովուրդի ազդեցության տակ և հարազատ ժողովուրդի մեկ մասը կկազմե, որովհետև այն ընկերական ու պաշտոնական հարաբերություններու շրջանակը, ուր խաղցեր, սորվեր, գործեր, մտածեր ու զգացեր է անհատը, այդ շրջանակի ամեն մեկ անդամը իր հերթին ծնունդ ու արդյունք է ընտանիքի մը ու շրջապատի մը, որ նույն մայր ժողովուրդի ոգիին ու կրթութեյան մասն է ու պտուղը, և որովհետև այն համայնակից, գավառակից և հայրենակից մարդոց ավելի լայն շրջանակը, որոնց ազդեցության ենթարկված է անհատը, նույնպես նույն ժողովուրդի ստորաբաժանումներուն մասը կկազմեն և բոլորն ալ արդյունք են մայր ժողովուրդի ցեղագրական, տեղագրական, պատմական ու քաղաքակրթական այն որոշ պայմաններուն, որոնց ճնշման տակ աճած ու ձևավորված է մայր ամբողջությունը:

Մարդկության ստվար մեծամասնությունը, դոնե մինև հիմա, ապրած է այն տեսակ պայմաններու մեջ, որ անհատները իրենց ամբողջ կյանքի ընթացքին դուրս չեն գար մայր ժողովուրդի ցեղագրական ու տեղագրական սահմաններեն, և այնքան ցանցառ ու անցողակի երևույթ մըն է օտարականներու այցն ու անցը անոնց հողեն, և տեղի ունեցած չփումը՝ այնքան մակերեսային, որ կրնանք ըսել, թե անհատներու ստվար մեծամասնությունը, բայի իր մայր ժողովուրդեն, ուրիշ ժողովուրդներու անմիջական անձնական ազդեցությունը չի կրեր:

Բայց կան սահմաններ, ուր երկու ժողովուրդ իրարու դրկից կդառնան, կան պատմական շրջաններ, երբ օտար ժողովուրդ մը կուգա ու վերին խավի մը պես կնստե ընիկ ժողովուրդի անկախության, հոգիին ու հողին վրա, կան տնտեսական ու քաղաքական պայմաններ, երբ ամբողջ խումբեր ու հազարներ կստիպվին ձգելու իրենց հայրենիքը և երթալու հեռավոր աշխարհներ՝ ուրիշ ժողո-

վուրդներու գլխուկը իրենց բաղդը փորձելու, կան առուտուրով ու միջնորդի գբաղումներով ապրող դասեր, որոնք իրենց գործին բերումով մեկ ժողովուրդին մյուսը կանցնին շարունակ, և կան վերջապես բազմատեսակ այլ պատճառներե դրդված ուղևորություններ, որոնց միջոցին մարդս զանազան ժողովուրդներու հողեն ու ծոցեն կանցնի: Այս բոլոր պարագաներուն ալ անհատը չփման մեջ կմտնե օտար ժողովուրդներու հետ, ըլլա սերտորեն թե թեթևակի:

Այս օտար ազդեցություններեն մասնավոր կերպով և ամենեն առաջ պետք է ընդգծել տիրված ժողովուրդի կրած ազդեցությունը իր տիրողեն, որովհետև քաղաքական անհավասար դիրքը, ըլլա իր մայր հողին վրա, ըլլա ուրիշներու հողին վրա, իբրև գաղութ, միշտ իր հետը կբերե նաև տիրողի կամքին, լեզվին, վարք ու բարքին, ըմբռնումներուն, օրենքներուն և սովորություններուն տիրապետությունը, որովհետև այդ անխուսափելի, «բնական» մեծ ճնշումին կմիանա ավելի կամ նվազ զգալի կերպով նաև «արվեստական» ճնշումը մասնավոր արգելքներու, դպրոցներու և հալածանքներու միջոցով մոռցնել տալու համար տիրված ժողովուրդներուն իրենց ազգային անհատականությունը և ձուլելու-խառնելու տիրողի զանգվածին:

Երկրորդ տեղը կբռնեն հարևան ժողովուրդները, մանավանդ երբ քաղաքականապես ու աշխարհագրորեն վիճակակից կամ կապակից են իրար: Հարևան ժողովուրդներու ազդեցությունը չի կրնար հավասարիլ տիրապետող ժողովուրդի ազդեցությանը, քանի որ չկա մեջտեղը պետական ճնշում և բռնադատում, բայց նորեն խիստ մեծ է իր կարևորությունը, քանի որ միայն մեկ սերունդի մը վրա չէ, որ կբանեցնեն իրենց ազդեցությունը, այլ բազմաթիվ իրար հաջորդ սերունդներու: Շատ գծեր ու առանձնահատկություններ կանցնին անհատին ո՛չ միայն ուղղակի կերպով իր անձնական շփումովը օտարին հետ, այլև ժառանգաբար իր սեփական ազգի նախորդ սերունդներուն կատարած իրացումովը: Ինչպես ռուսը, այնպես ալ թուրքն ու վրացին հիմա կազդեն Կովկասի մեջ հայու կրթության ու հոգիին վրա ո՛չ միայն մեկ անհատի անմիջական անձնական հարաբերության չափովը, այլև անով, որ հայ ընտանիքին կյանքին, վարքին, լեզվին, երգին ու զվարճություններուն

մեջ արդեն չատ բան ծծված ու յուրացված է այդ ժողովուրդներու քաղաքակրթութենեն:

Տիրող և դրկից ժողովուրդներու հետ համեմատած՝ չատ ավելի տկար ու երեսանց է անշուշտ հետամնաց ժողովուրդներու հետ տեղի ունեցող կենակցության հետևանքը: Ինչքան կարճ ժամանակով ըլլա այդ կենակցությունը, այնքան ավելի մակերեսային կըլլա բնականաբար անոնց ըրած ազդեցությունը: Ինչքան երկար աատեն տեղացիներուն հետ ընտանեկան ու ընկերական կապեր պահվին, ինչքան մարդս անոնց դպրոցներուն ու համալսարաններուն մեջ կրթվի և անոնց գործերուն ու կազմակերպություններուն մեջ օգակվի, այնքան ալ կխորանա ու կմեծանա այդ օտար միջավայրի ազդեցության չափը: Բայց որքան ալ մոտիկ ու տևական ըլլա այդ կապը, նորեն չի կրնար հավասարիլ դրկից ժողովուրդներու փոխադարձ ազդեցության, քանի որ ցրիվ դեպքեր են և պայմանավորված են միայն մեկ սերունդի մը անձնական կապերով:

Ուրիշ ժողովուրդներու հետ հաղորդակցության մեջ գտնվիլը և անոնց ազդեցության ենթարկվիլը ընդհանուր առումով բարերար և օգտակար երևույթ է: Միայն իր ժողովուրդի ու իր սեփական քաղաքակրթության ազդեցության տակ մեծնալը առաջ կբերև չափազանց ընդգծում ազգային հատկություններու, հոգեկան միակողմանիություն, ինքնագոհություն, սնապարծություն և մտավոր հորիզոնի նեղացում: Կարծես աշխարհը կանգ կառնի քո ժողովուրդիդ ցեղագրական սահմաններուն վրա, և հոտկե անդին եղած ամեն բան կթվի տարօրինակ, անհեթեթ, ծիծաղելի ու չինծու: Մինչդեռ ուրիշ ժողովուրդներու հետ մշտական հարաբերության մեջ ապրիլը չատ տեսակի բարքերու, դավանանքներու, լեզուներու, տնտեսական ու կենցաղական տարբեր ձևերու, պետական ու վարչական այլատեսակ ըմբռնումներու, օտար մտքի, օտար դրականության ու արվեստներու չոչափումը կրած ըլլալը կխորացնե մարդուս դատողությունը, կլայնացնե ընկերային հասկացողությունները, ինչպես և կհարստացնե մարդոց մեջ համամարդկային թևերն ու առնչությունները: Եվ այս ամենուն խառնուրդը և պատվաստումը կուտա ազգային ընդունակություններուն և ցեղային գծերուն նոր ուղղություն, նոր թափ և նոր ծաղկում:

Միայն պայմանով մը, որ այդ բոլոր ազդեցությունները չանցնին որոշ սահմանե մը անդին, չխեղդեն անհատի ու ժողովուրդի ազգային ինքնուրյունը, չծռեն հոգիի բնական ու ազատ շարժումը և չզրկեն մայր Հողի ու մայր քաղաքակրթության մայրենի կենսատու հյութերեն: Հակառակ պարագային հետևանքը կրլլա կորուստ ազգային գույնի ու բնածին կերպարանքի, աղավաղում կենդանի, սեփական զգացումներու, և անհատը կկտրվի իր ծառեն՝ առանց միանալու, մեկ կենդանի ոստը դառնալ կարողանալու այն մյուս ժողովուրդներեն մեկն ու մեկուն:

Գ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Բնության ստեղծած իրերուն ու երևույթներուն կից՝ կան մեր չուրջը բազմաթիվ ու բազմատեսակ իրեր, չենքեր, հաստատություններ, կազմակերպություններ, հոգեկան կառուցումներ, մտավոր կերտուրյուններ, որոնք ծնունդ են առած մարդկային կենսակցութենեն ու գործակցութենեն և որոնք կկազմեն մեր չուրջը երկրորդ տեսակի բնություն մը՝ մարդուս ստեղծած բնությունը, մարդուս հնարած միջավայրը, ուր կմեծնան անհատները, ճիշդ այնպես, ինչպես զանազան կլիմաներու և զանազան գոտիներու ազդեցության տակ:

Մարդկային մտածողության ու ձեռքերուն ստեղծած այդ ամեն կարգի ու տեսակի արարչությունները կծառայեն երկու նպատակի՝ կա՛մ մարդուս գոյության ու ապրուստի արտաքին պահանջներուն, կյանքի գործնական պետքերուն, կա՛մ մարդուս հոգեկան ներքին պահանջներուն, հոգեբանական ինքնանպատակ պետքերուն:

Մարդկային կյանքի գործնական պետքերուն կծառայեն պետությունը, կառավարական մեքենան, իր պաշտոնյաներուն ու դինվորներուն բանակները, զենքեր, չենքեր, մթերքներ, օրենքներ, հարկ ու տուրք, դատական մարմիններ և տնտեսական հաստատությունները, արհեստ ու արվեստ, գործիք ու գործարան, փոխադրության միջոցներ, առևտրական տներ, ընկերություններ՝ իրենց պահեստներով, խանութներով, բանկերով ու գրասենյակներով, և այս

բոլորի արդյունքն ու արտադրությունը եղող բնակարանի, հագուստի և ուտեստի հազարավոր տեսակներ, մասեր և օժանդակներ: Այդպես ալ ընտանեկան, կրթական, առողջապահական, պաշտամունքի ու բարեգործության ամեն կարգի կազմակերպություններ, հիմնարկություններ, հարաբերության ձևեր, ծեսեր, բարքեր: Եվ քանի առաջ կերթա մարդկային քաղաքակրթությունը, այնքան ավելի կհարստանան ու կբարդանան այդ բոլոր շինված ու հորինված առարկաները, նյութերը, հաստատություններն ու ձեռնարկությունները:

Մարդկային ներքին հոգևկան պահանջներուն կծառայեն այն բոլոր նյութական, ձայնական ու մտածողական ստեղծագործությունները, որոնք կձգտեն մարդու զգացական պետքերը բավարարելուն, մարդուս ճաշակին, զգայարանքներուն, երազներուն և որոնումներուն չոյանք տալուն: Եվ կամ ճիգ կընեն գոհացնելու մարդուս հարցասիրությունը, հասկնալու, բացատրելու, պատճառները գտնելու և այդ իր դիտած երևույթները խմբելով՝ ամբողջական տեսություններ, դիտական համադրումներ ու դիտություններ, փիլիսոփայություններ ու կրոնական տեսություններ առաջացնելու:

Այս բոլոր գեղարվեստական ու դիտական ստեղծագործությունները մարդկության դարավոր որոնումներուն և երկունքներուն մեզի կտակած արդյունքն է, և ինչքան շատ որ ծանոթանանք, յուրացնենք, այնքան ավելի կազդվինք բնականաբար այդ ամենեն և այնքան կբարձրանանք քաղաքակրթության սանդուղին վրա: Քաղաքակրթության դիզած այդ գանձերուն անծանոթ ապրողը մինչևնույն է, թե ապրեր մարդկության մը մեջ, ուր այդ բոլոր գյուտերը, դիտությունները և ստեղծագործությունները դեռ գոյություն չունին:

Թեև ներքին ու արտաքին պահանջներուն ծառայող ստեղծագործությունները երկուքն ալ անխոհեմ մեծ նյութ կմատուցարարեն և խոշոր ազդակներ են մարդկային հոգիի բոլոր կողմերու զարգացման վրա, բայց և այնպես այդ երկուքը հավասար չեն իրարու իրենց կրթական կարևորությամբ: Սուվար մեծամասնության համար ապրուստի գործնական պետքերեն դրդված և յուրացված, այսպես կոչված մասնագիտական ծանոթությունները շատ նեղ ու սահմանափակ շրջանակի մը մեջ կպատնան և շատ են տոդորված

անձնական շահի հաշիվներով, իսկ գործնական պետքերուն ծառայող սպառողական իրերը, կյանքի հարմարութիւնները այն տեսակի բարիքներ են, որոնց տիրացումն ու վայելքը հոգեկան մասնավոր դժվարութիւն մը չունի, մասնավոր ճիգ մը չի պարտադրեր. դիրքի ու հարստութեան հարց է. ով ձեռքը դրամ ունի, այդ բոլորը կրնա ունենալ:

Խնդիրը կփոխվի հոգեկան ներքին պահանջներուն ծառայող հարստութիւններուն հանդեպ, որոնց ծանոթանալը, յուրացնելը և վայելել կարողանալը երկար ու լուրջ աշխատանք կպահանջե, կպահանջե մտքի ու սրտի լարում ու նրբացում, միևնույն ժամանակ շատ ավելի բազմակողմանի և խոր զարգացում մըն է, շատ ավելի լայն մարդկային դաստիարակութիւն մը, որ միմիայն իր անձնական շահերը չունի աչքի առաջ, այլ ընդհանրութեան օգտուն ու հառաջդիմութիւնը: Այս բոլորի հետևանքով ալ շատ ավելի խոր ու մեծ է գիտական ու գեղարվեստական երկերու քաղաքակրթական արժեքը:

Բ. Ամեն մեկ ժամանակաշրջանի արվեստներն ու գիտութիւնները հենված են անշուշտ իրենցմե առաջ եղած դարերու ճիգերուն, փորձերուն և ձեռքբերումներուն վրա և շատ մը բաներ ու մասեր այդ ճիգերեն ու գյուտերեն արդեն յուրացուցած, մարսած ու ամփոփած են իրենց մեջ: Բայց և այնպես ամեն մեկ ժամանակաշրջանի արվեստ ու գիտութիւն իր ըմբռնումներուն, բացատրութիւններուն, ճաշակներուն ու ձգտումներուն մեջ շատ խոշոր շեղումներ ու տարբերութիւններ ունի իր նախորդ շրջաններեն, երբեմն հիմնական հակադրութիւններ, նույնիսկ բացարձակ կռիվ ու թշնամութիւն հինին հետ:

Արդ՝ մարդիկ, նույնիսկ երկար տարիներ ուսում առած մարդիկ, առիթ ու ժամանակ և հետաքրքրութիւն չունին նախորդ դարերու ըմբռնումներուն, ճաշակներուն և երկերուն քիչ-շատ մոտիկեն ծանոթանալու, անցյալով ղբաղվելու: Եվ ընդհակառակը՝ ամեն կողմ իրենց չուրջը և իրենց ձեռքի տակն է օրվան արվեստն ու գիտութիւնը, ժամանակակից արտադրութիւններն ու երկերը, օրվան մտածումները, իտեալները, օրվան մոտան, օրվան ձևերը, օրվան տեսութիւնները: Բացի ձեռքի տակ ու մատչելի ըլլալե՝ օրվան գիտութիւնն ու օրվան արվեստը անմիջապես կապված են

մեր առօրյա կյանքին, մեր անմիջական պահանջներուն, տրամադրություններուն, ակնկալություններուն, մեր առօրյա չար ու բարիին, որով և մեզի համար կդառնա մասնաւոր կերպով չահագրգիռ, հետաքրքիր ու կարևոր: Այս պատճառով ալ անհատներու և բազմություններու զարգացման համար մասնաւոր աղդեցություն և ուժ կունենան օրվան «տեսությունները», օրվան «դպրոցները», օրվան «մոտան», օրվան երկերը, օրվան ուղղությունը դիտության ու գեղարվեստի բոլոր ճյուղերուն մեջ:

Եվ ինչքան որ մարդս թափով և առանց ետ ու առաջ նայելու իրված ըլլա իր դավանած վարդապետության մեջ, այնքան ավելի այդ վարդապետությունը կդառնա անոր համար բացարձակ ճշմարտություն և միակ ճշմարտությունը: Եվ այդ միակ ճշմարիտ սկզբունքին միակ բարակ թելը ինքն իր վրա փաթթելով մարդուս կենդանի ու ազատ հոգին կամաց-կամաց կդառնա կատարյալ չերամի բոժոժ մը, այսինքն իր մեջեն քաշած միակ ու անվերջ թելով մը պատանքված ու թմրած էություն մը: Եվ այդ կաշկանդումեն չի կրնալ ազատվիլ, մինչև որ ինքը ներքուստ հիմնովին չձևափոխվի, չծաղկի և չփճացնե այդ իր իսկ հյուսած պատյանը և դուրս չնետվի դեպի արձակ օդն ու արևը, իբրև բոլորովին նոր տեսակի թիթեռնիկ մը:

Այն համեմատաբար բացառիկները, որոնք միայն իրենց ժամանակի արվեստին ու ըմբռնումներուն ենթարկվիլ չեն ուզեր, որոնք իրենց մեղրը իրենք չինել կուզեն և մեղվի մը պես կերթան բոլոր հին ու նոր ծաղիկիներեն իրենց հյութերը հավաքելու, առոնք բնականաբար կունենան ավելի ինքնուրույն աշխարհայացք, ավելի բաց աչք և ավելի վստահելի ճաշակ, բայց առոնք ընտրյալներն են, քիչերը, «մասնագետները», ինչպես որ կանվանենք սովորաբար քիչ մը ծաղրով, և որոնք միշտ մեկուսի դիրք մը ունին կյանքի մեջ: Մինչդեռ մեծամասնությունը, այս կամ այն աստիճանի արվեստ և ուսում տեսած մարդոց ընդհանրությունը պինդ բռնված ու խճճված է իր ժամանակի տիրող գաղափարներուն ու ճաշակներուն ցանցին մեջ: Հոսկե ալ կառաջանա ժամանակակից փիլիսոփայության վարդապետություններու, իտեալներու ու հավատալիքներու չափազանց խոշոր դերն ու աղդեցությունը անհատներու և ժողովուրդներու կյանքին վրա՝ բոլորովին անկախ այդ ըմբռնումնե-

րու ճի՞շդ թէ սխալ, արդա՞ր թէ անիրաւ, գեղեցի՞կ թէ տգեղ ըլլալեն:

Եվ ամեն սերունդ ոտքի տակ կուտա իր նախորդ սերունդներու կուռքերը՝ այդ «չաստվածներուն» տեղը իր ճշմարիտ աստվածը դնելու համար, իր «հավիտենական ճշմարտությունը», իր «անանց գեղեցկությունը», իր «իսկական արդարությունը», մինչև որ ... մինչև որ Հորիզոնին վրա նկատվին հաջորդ սերունդի ժիր ու զանգուր գլուխները:

Դ. ԱԶԴԱԿՆԵՐՈՒՆ ՈՒԺԸ ԿՈՏՐՈՂ ԿԱՄ ՀԶՈՐՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Այս բոլոր տեսակի ազդակները կներգործեն միշտ մարդոց վրա, կազդեն, կփոխեն ու կրանան անոր ընդունակությունները ու կարողությունները մեկ կամ մյուս ուղղությամբ և կկազմեն յուրաքանչյուր անհատին կյանքին միջավայրը. ամեն մարդ ալ պտուղն է միշտ որոշ բնական միջավայրի մը, որոշ քաղաքակրթական միջավայրի մը:

Նույն ու նման միջավայրերու մեջ ապրող մարդիկ նույն ու նման ազդակներու բերած անվար կրթությամբ կդառնան իրարու նման ընդհանուր առումով, բայց այդ նմանությունը շատ տարբեր աստիճաններ ունի և բազմատեսակ չեղումներ, որովհետև այդ բոլոր ազդակները ամենուն վրա նույն չափով և նույն ձևով չեն ներգործեր: Եվ տարբեր չափով ու ձևով ներգործելուն պատճառները ալ կա՛մ արտաքին են, կա՛մ ներքին:

Արտաքին պատճառները էապես երկու հատ են՝ ազդեցության միակերպությունը և ազդեցության տևականությունը:

Ա. Ինչքան որ մարդ որոշ միատեսակ պայմաններու տակ ապրի, այնքան չնշված կըլլա իր մեջ այդ որոշ միատեսակ ազդակներուն բերած փոփոխությունը: Ինչքան իրար աննման, իրար խաչաձևող, իրար հակադիր, խառն ու բազմատեսակ վիճակներու ու պայմաններու տակ ապրի մարդ, անոր էության մեջ ազդեցությունները իրար կտկարացնեն ու կչեզոքացնեն և ավրված ու անհստակ կնիք մը միայն կթողնեն, իսկ բացառիկ կերպով նույն ու փոքրաթիվ վիճակներու մեջ ու պայմաններու տակ մարդիկ

կղառնան, ընդհակառակը, այդ միջավայրին տիպար ներկայացուցիչը:

Բոլորովին ուրիշ է իր լեռներեն վար չիջած մարդուն ստացած մարմնական ու հոգեկան դրոշմը իր լեռներեն ու իր լեռնային կլիմայեն. ուրիշ է հարթավայրի գյուղերեն, իր խրճիթեն ու իր արտերեն բնավ չդաւուած գյուղացի մարդու կրած ազդեցութիւնը մարմնին ու հոգիին վրա իր հարթերեն ու հողերեն, ինչպես որ բոլորովին տարբեր է քաղաքի նեղ փողոցներուն և ավելի ևս նեղ բնակարաններուն ու խանութներուն մեջ իր ամբողջ կյանքը անցուցած մարդու ներքին ու արտաքին կազմը:

Ընդհակառակը, այս բոլոր տիպական գծերը կսկսեն աղոտիլ ու աղաւոտիլ, երբ մարդ իր կյանքին մեկ մասը սարերուն վրա կանցնի, մյուս մասը՝ վարը՝ տափերուն վրա, կամ երբ քաղաքացին ամեն ամառ կերթա գյուղերը՝ բնութեան մեջ ու բնութեան հետ ապրելու, կամ, մանավանդ, երբ տևականորեն քաղաքեն գյուղ կփոխադրվի: Իսկ ով իր կյանքի ընթացքին շարունակ փոխած է իր բնակած միջավայրը, տարիներով ապրած է զանազան երկինքներու տակ, զանազան կլիմաներու և այլազան պայմաններու, կատանա ավելի ևս տարբեր ու տարօրինակ կրթութիւն մը, ուրիշ աշխարհայացք, ուրիշ ճաշակ, ուրիշ խմոր:

Այդպես ալ տարբեր է մարդը, երբ միայն որոշ ընտանեկան շրջանակի մը և որոշ ընկերական միջավայրի մը մեջ է ապրած ու մեծցած, կփոխվի ըմբռնումները, կեցվածքն ու վարքը, նույնիսկ իր կազմը, երբ մոտիկ կշփվի իր ժողովուրդի տարբեր ընկերային շերտերուն ու վիճակներուն, և երբ, մանավանդ, օտար ժողովուրդներու ընտանեկան ու հանրային կյանքին ու պայմաններուն ազդեցութիւնը կրելու պատեհութիւնը կունենա:

Նույնը և քաղաքակրթական ստեղծագործութիւններու տեսակետեն. ուրիշ է կրած ազդեցության մը խորութիւնը, երբ միայն մեկ, որոշ դպրոցի մը կամ հեղինակի մը շունչին տակ է հասունցած նկարիչը. տարբեր է ազդեցութիւնը, երբ շատ մը ուղղութիւններու և դարերու նկարչական ստեղծագործութիւններու վրա է կրթած իր աչքն ու ճաշակը. ամեն մեկ ազդակի ուժը կկորսնցնի անշուշտ իր խորութենեն, բայց կատանա նկարիչը ավելի բայց հոգի և ավելի լայն տեսութեան դաշտ:

Բ. Ազդեցութիւններուն տևականութիւնը շատ հաճախ կապված է ազդեցութիւններու միակերպութեան, բայց և այնպես մեկ առանձին կողմն է երևույթի և նախորդին նման բացահայտ:

Տարբեր բան է երկաթուղիի վակոնին մեջ նստած զանազան կլիմաներ, աշխարհներ ու «բնութիւններ» կտրել անցնելը, դիցուք և կրկնակի անգամներ. տարբեր բան է այդ ուրիշ-ուրիշ միջավայրերուն մեջեն ձիով, ոտքով ճամբորդելը պայուսակը մեջքիդ հատուկ տեսնելու, չփվելու, ճանչնալու նպատակով, ու տարբեր բան է այդ միևնույն միջավայրերուն մեջ առավել կամ նվազ երկար ժամանակ բնակութիւն հաստատելը: Այս բոլոր պարագաներուն ալ բոլոր միջավայրերը կազդեն մեր հոգեկան զանազան կողմերուն վրա, բոլորովին տարբեր չափով, տարբեր խորութեամբ ու տարբեր լրջութեամբ:

Իր ուղևորութիւններու միջոցին քանի մը անգամներ ծովն ու ծովափերը տեսած ըլլալը անշուշտ կարևոր պարագա մըն է անհատի մը համար: Սակայն անտարակույս շատ ավելի կրթական արժեք կստանա ծովը, երբ ծնած ես ծովեն ոչ հեռու և հաճախ առիթ ես ունեցեր ծովուն դեմ ու ծովուն վրա գտնվելու: Բայց ինչպե՞ս կրնաս համեմատիլ այն մարդուն հետ, որ ծնվեր է տնակի մը մեջ, երկու ժայռին մեջտեղը, ծովուն անվերջ աղմուկին տակ, որ իր տղայութիւնը անցուցեր է ծովու չրթունքին և առնութիւնը ծովուն վրա, որուն ամբողջ էութիւնը թաթխված է ծովուն աղի ջուրին մեջ:

Այսպես ալ անշուշտ կենակցութեան և անձնական շփումներուն տևականութիւնը. մարդուս մը, ընտանիքի մը, ժողովուրդի մը, կուսակցութեան մը հետ որքան երկար ժամանակ անհատ մը մոտիկ ու մտերիմ շփման մեջ գտնվի, բնականաբար այնքան մեծ կըլլա իր կրած ազդեցութիւնը, պատահական ու թեթևակի հանդիպումները, քանի մը այցելութիւն կամ ամառ մը եղած ըլլալը կամ միասին մեկուն հետ ճամբորդած ըլլալը անշուշտ շատ ավելի տկար ազդակներ են և այնքան ավելի տկար, որքան որ կարճ տևած ըլլան:

Ուրիշ է, երբ անգամ մը թղթատեր ես «Ոտիսականը» կամ «Աստվածաշունչը». ուրիշ է, երբ անգամ մը ծանր ու լուրջ կարդացած ես մեկ ծայրեն մյուսը. ուրիշ է, երբ կարդացեր ես մեկ-երկու

անգամ ուշադիր. ուրիշ է, երբ վանականը իր ամբողջ կյանքի ընթացքին իր խցիկին մեջ շարունակ կկարդա ու կքարոզե իր սուրբ գիրքը և ասկե դուրս գրեթե ուրիշ բան մը չի կարդար:

Գ. Այս արուեստին պատճառներուն չափ, հաճախ առանցմե ալ շատ ավելի զորեղ չափով կազդեն անվար կրթութեան աղդակներուն թողած ազդեցութեան ուժին ու ձևին վրա ներքին պատճառները, որոնք էապես նորեն երկու հատ են՝ ժառանգական հակում և առացական տրամադրութիւն:

Ինչ կվերաբերի ժառանգականութեան ունեցած դերին, երկար բացատրութեան կարիք չկա. ամեն անհատ իր ծնունդով իր հետ կբերե որոշ հատկութիւններ, հակումներ, դծեր, որոնք նպաստավոր են այսինչ տեսակի ազդեցութիւններու խոր ու արագ յուրացման. շուտ կենթարկվի, խոր կենթարկվի, կամ, ընդհակառակը, որոշ տեսակի ազդեցութիւններու հանդեպ անսիրող է, հակադրող է, խուսափող է. հետևանքը կըլլա, որ տարբեր մարդիկ տարբեր չափերով և տարբեր ձևերով կազդվին միևնույն միջավայրի միևնույն պայմաններուն մեջ:

Իսկ ի՞նչ բան է առացական տրամադրութիւնը: Ամեն մեկ նոր տեսակի շարժում, որ մենք կկատարենք արտաքին ու ներքին դրդումներու ազդեցութեան տակ, իսկույն ինքն ալ կդառնա նոր հակելված մը, նոր փորձ մը, նոր մարզանք մը, որ կմնա մեր մեջ և այդ միանի հաջորդող աշխատանքներու միջոցին իր ազդեցութիւնը կբաներնայնե՝ դյուրացնելով կամ խանգարելով նոր առնվելիք քայլերը: Ամեն նոր դիտողութիւն կամ զատողութիւն անգամ մը տեղի ունեցավ թե չէ, այլևս կդառնա մեր մեջ գոյութիւն մը, նոր ձեռքբերում մը, որ իր կողմեն կազդե հաջորդ ու ապագա մտածումներու առնվելիք ձևին և ուղղութեանը վրա:

Ուրիշ խոսքով՝ մեր արդեն մտածած մտքերը, մեր զգացած զգացումները, մեր երազած երազները, մեր կատարած շարժումները, գործերը, վարժութիւնները, կյանքի մեջ մեր ունեցած բոլոր առիթները, դեպքերը, պատահմունքները, փորձառութիւնները, հուզումներն ու ցնցումները, այսինքն մեր Հոգիին մեջ ամբողջ անցյալը կապրի ու կտևե մեր մեջ և կազդե մեր ներկային ու մեր ապագային վրա:

Այդ հին ապրումները կըլլան մեր Հոգիին մեջ երբեմն բոլո-

րովին արթուն վիճակի մէջ, երբեմն թմրած կամ կիսաթմիր, մերթ դիտակցութեան մակերեսեն վեր, մերթ այդ մակերեսեն վար. երբեմն ա՛յն աստիճանի վար, որ մենք բնաւ չենք ընդունիր, թէ այդ ապրումները դեռ կան ու կապրին մեր մէջ: Բայց անոնք կան, ընդունինք կամ չընդունինք, և զանազան աստիճաններով ու չափերով կազդեն մեր մտածումներուն, որոշումներուն, չարժումներուն և ցանկութիւններուն վրա:

Իսկ մեր անցեալի այն մասերը, որոնք ո՛չ թէ ավելի կամ պակաս պատահական գործողութիւններ են եղած ցան ու ցրիվ և անհետևողական, այլ կրկնված են հաճախ ու տևական կերպով, բնականաբար կստանան բոլորովին մասնավոր ուժ ու արժեք մեր նոր ապրելիք կեանքին ու գործերուն հանդեպ: Հայտնի է ամենուն մարդուս առօրեայ ապրուստին, նիստ ու կացին, սովորութիւններուն դրած կնիքը անոր էութեան վրա, մարդուս սիրած խաղերուն, զվարճութիւններուն և մանաւանդ առօրեայ զբաղումներուն թողած վճռական ազդեցութիւնը անոր մարմնական ու հոգեկան կազմին ու բնավորութեան վրա:

Ասլրուստի այդ սովորական ձևերը, ամեն օր կրկնվող աշխատանքը, ձեռք բերած հմտութիւնները, վարժութիւնները կդառնան մեր հոգիին մէջ նոր տեսակի ժառանգութիւն մը, անձնական ստացական ժառանգութիւն մը, որ ավելանալով ի ծնե ու պատրաստի ստացած ժառանգական ունակութիւններուն ու հակումներուն՝ կկազմեն «երկրորդ բնութիւն» մը և միջավայրի արտաքին ազդակներուն հանդեպ կխաղան ընտրողի, ընդունողի կամ մերժողի ու դիմադրողի դերը, կդյուրացնեն կամ կդժվարացնեն արտաքին ազդակներուն ներգործութիւնը:

Ե. ԱՆՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՆՔԵՐԸ

ԿՐԿՆԵԼՈՒ ՀԱԿՈՒՄ ՈՒ ՆՈՐՈՒԹՅԱՆ ՍԵՐ

Այս ստացական տրամադրութիւններու առաջացման, ուժեղացման և հետզհետե տիրական դառնալու ընթացքին, որ ըսել է՝ կեանքի տված ամբողջ կրթութեան ընթացքին, երկու հիմնական հատկութիւն բացառիկ դեր կխաղան մեր հոգիին մէջ՝ կրկնելու սերը և կապկելու սերը: Իսկ արտաքին աշխարհեն անմի-

Ջական ստացումներու միջոցին և ներքին մղումով աշխատութիւններ կատարելու ատեն հատկապես դեր կխաղան այդ երկու հատկութիւններուն հակադիր զգացումները՝ նորութիւններու հրապոյրը և ինքնուրոյն ըլլալու հակումը:

Այս չորս բնական դրդումներն են, որոնք և կկազմեն անվար կրթութեան գործածած հիմնական զենքերը, որոնցմով ան ժառանգութեան բերած կարողութիւնները և շրջապատի ընձեռած պատեհութիւնները կկցե իրար ու կկռե, կկոփե, կսրե, կբթացնե, կհղկե ու կկերտե հոգեկան բոլոր կառուցումները, բնաւորութիւնները և կրթական բոլոր յուրացումները:

Ուրեմն նախ կրկնելու հակումը:

«Ջուրը վազած ճամբովը կվազե», – այսպես է բնութեան տնտեսապիտութիւնը: Ուժը կհոսի միշտ նվազագույն արգելքի ճամբով: Ուղեղային դրդիռ մը որևէ կետե ծնունդ առած՝ միշտ հակում ունի այն ուղիներով և այն ուղղութեամբ փոխանցվելու մյուս կետերուն, ինչ ուղիներով որ առաջ անգամ մը անցեր է՝ փոխանակ նոր ճամբաներ փնտրելու:

Նոր ճամբա բանալը միշտ ավելի դժվար է և հոգնեցնող, մասնաւոր ճիգ ու աշխատանք կպահանջի և եռանդի հավելվածական սպառում: Երբ այդ ներքին ճիգը չկա, ո՛չ ալ մասնաւոր պատրաստակամութիւն՝ ավելի եռանդ վատնելու, դրդիռը բնականորեն կերթա իր արդեն անցած ավելի դյուրին և իրեն ավելի աժան նստող ճամբով: Եվ իր այս նոր հոսումով ավելի ևս դյուրին ու հարմար կդարձնե այդ հին ճամբան հաջորդ դրդիռներուն համար:

Բան մը ինչքան կկրկնվի, այնքան ավելի դյուրին կկրկնվի, այնքան ավելի նվազ ճիգերով ու հոգնութեամբ: Եվ այնքան ալ դժվար կդառնա այդ սովորական եղող ճամբեն դուրս դալը, որովհետև չատ մեծ ծախք կպահանջե արդեն պատրաստ պողոտային քովը նորեն ուրիշ ճամբա մը բանալու առաջարկը: Պետութիւններու մեջ և աշխարհքի վրա ճամբաները դարերով կապրին, մարդկային հարաբերութեան դլխավոր երակները՝ հազարամյակներով, և նոր ճամբաները չատ դանդաղ կստեղծագործվին. նոր ճամբա բանալու առաջարկները չատ երկար կպատին նախարարական սեղաններուն ու դարակներու վրա. մեծ տարբերութիւն մը չունի մեր հոգեկան աշխարհի տնտեսական վերաբերումը: Մեր՝ սովորու-

թյուն, վարժութիւն, վարք ու բարք ու քաղաքավարութեան պահանջ անվանած բանները այդ դարավոր ճամբաներուն կհամապատասխանեն, իսկ մեր հոգեկան անդրադարձ շարժումները, ինչպես և բնազդ ըսվածները, համեմատելի են ավելի հին բազմադարյան դլխաւոր ճամբաներուն:

Ջղային ու մկանային ամեն աշխատանք, որ անգամ մը տեղի կունենա, ատով իսկ կդառնա դրդիչ մը նույն աշխատանքը կրկնելու՝ ուժը ներկայանալուն պես: Քանի մը կրկնութիւններ կբերեն վարժութիւն, այսինքն ավելի արագ ու դյուրին կկատարվի նույն աշխատանքը: Վարժութիւնը նորանոր կրկնութիւններով այնքան կդյուրանա ու կզարգանա, որ կդառնա մեքենական: Իսկ մեքենականութիւնները, երբ ավելի կրկնվին, կդառնան հարկադրական, երբեմն այն աստիճան զորեղ, որ մեր բոլոր կամքին հակառակ այլ կերպ վարվիլ չենք կրնա. դարձած են արդեն բնութիւն:

Պարզ է հոսկե, թե ինչ բացառիկ ու կարևոր դեր ունի կրկնութիւնը մեր հոգեկան կարևորութիւններու և մեր հոգեկան պաշարի զարգացման համար. կրթութեան ամենեն առաջին և ամենեն դլխավոր զենքն է անիկա: Ինչքան բանվորի մը մատները միևնույն բանը վարժ ու արագ կրկնել կարողանան, այնքան կրթված են անոր ձեռքերը իր արհեստին համար: Ինչքան երգչի մը կոկորդին ձայնական թելերը ճիշդ ու մաքուր կրկնել կարողանան իր ըրած նախորդ մարզանքները և «սորված» կտորները, այնքան մշակված ձայն ունի անիկա: Ինչքան միտքը նույն ու նման դատողութիւնները, խնդիրները, բացատրութիւնները դյուրին ու թեթև կրկնել կարողանա, այնքան զարգացած է իր տրամաբանութիւնը: Լեզու մը գիտնալու համար պետք է այնքան կրկնած ըլլաս արտահայտութեան որոշ ձևեր, կապակցութիւններ, դարձվածքներ ու ասույթներ, որ մեքենական կերպով առանց մասնավոր ճիգի լեզվիդ ծայրը գան պետք եղած ատենը: Թվաբանական օրենք մը, հաշիվ մը, մտածելու եղանակ մը այնքան լավ գիտես, ինչքան որ արագ ու «մեքենաբար» կրնաս կատարել ամբողջ գործողութիւնը:

Եվ մեր ամբողջ կյանքի ընթացքին բան մը սորվելու, բան մը վարժվելու, կարողութիւն մը մարզելու, ունակութիւն մը ձեռք բերելու և մեր մտքի ամբարած պաշարը լավ գործադրելու և շահագործելու ամենեն հաստատ և ամենեն հիմնական միջոցը կրկնելն

է: Եվ ո՛չ միայն սորվելու, պահելու և օգտագործելու հիմնական ճամբան, այլև կատարելագործելու, քանի որ կրկնությունը միայն արագություն ու դյուրություն չէ, որ կ՚երթայ իր հետ, այլև կարողություն՝ միևնույն բանը ավելի ճիշդ, ավելի նուրբ և ավելի լավ կատարելու:

Բ. Կրկնությունը եթե հիմքն է զարգացման և կատարելագործության որոշ ուղղությամբ, անիկա միևնույն ժամանակ զսպում և դանդաղեցում մըն է զարգացման ուրիշ ուղղություններով, կրկնությունը հաճախ արգելք է կատարելագործության, քանի որ կրկնել միշտ նույնը, երթալ միշտ նույն ճամբով, մտածել չարունակ անդամ մը մտածած ձևով, ընել ամեն ինչ արդեն գիտցած ու վարժված ձևով, կտանի մարդկային կարողությունները միակողմանիության, սահմանափակման ու կաչկանդումի. ատիկա կնշանակէ սլինդ բռնել անդամ մը ձեռք բերված հինին պոչէն, կանգ առնել զարգացման որոշ ձևի մը ու աստիճանի մը վրա և ալ անկե անդին չատ դանդաղ չարժվիլ:

Կյանքը այդ ծայրահեղություններն ու քարացումեն խուսափելու համար և առոր հակազդելու համար ունի կրթության ուրիշ կարևոր դրդիչ մը՝ նորություններու սերը, նոր բաներու հրապույրը, նոր որոնումներու բնազդը:

Մեր զգայարանքներուն զարնող բազմաթիվ իրերեն, ձևերեն, երևույթներեն ու չարժումներեն անոնք, որ մեր հին ծանոթ տպավորություններեն կտարբերին ու կչեղին, և ինչ չափով որ կտարբերին ու կչեղին, այնքան ավելի կգրավեն մեր ուշադրությունը: Մեր դեռ չտեսած, դեռ չլսած ու դեռ չգիտցած բաները ամենեն ավելի կգրգռեն մեր հետաքրքրությունը: Մեր միտքը ավելի կանգ կառնե այդ նոր տպավորություններուն և անոնց նոր կողմերուն վրա, կհամեմատե նոր դիտածը իր նմաններուն հետ՝ տարբերություններն ու նմանությունները ընդգծել ջանալով, և առոր համեմատ ալ կդասավորե ու կհանե նոր դատողություններ, նոր եզրակացություններ , որոնք մինչև այդ օրը չկային մտքի մեջ:

Եվ այս բոլոր հոգեկան նոր գրգիռները, նոր կապակցությունները և նոր կառուցումները կբերեն իրենց հետ նաև նոր հուզումներ ու նոր հաճույքներ և կհրեն մեր միտքը այդ նոր ուղղություններով նոր դիտողություններու որոնումին, նոր ըմբռնումներու ետևեն,

նոր գիտական պաշարի նոր ուսումնասիրության և նոր ճամբաներու: Որով ո՛չ միայն նորութիւններեն կախորժինք, այլև նորութիւններու փնտրտուքեն. կհրապուրեն մեզի մտքի բյուրեղներն ու խոյանքը, հոգիին երազանքը, երևակայության խաղերը, նոր աշխարհներու բացումը, նոր գյուտերու հետապնդումը, նոր պատահարներու արկածախնդրությունը, նոր կառուցումներու ձգտումը, նոր հուզումներու և նոր զգացումներու ծարավը:

Նորութիւններու հրապույրը կյանքի կրթության հառաջդիմական զենքն է և ավելի ներգործական կողմը, մինչ կրկնությունը կրթության պահպանողական զենքն է և ավելի կրավորական կողմը: Կրթության գործին մեջ հինի կրկնությունը և նորի հետապնդումը կերթան ձեռք ձեռքի: Երկու հակադիր ուժերու գործակցությամբ ստեղծելը բնության հիմնական սկզբունքներեն մեկն է. տիեզերքը հիմնված է ձգողական ու վանողական հակադիր ուժերու մշտական գործակցության վրա:

Անշուշտ անհատե անհատ մեծ տարբերություններ կան կրթության այդ երկու չարժիչ ուժերու բաղադրության ու կապակցության տեսակետեն. մեկուն քով պահպանողական սկզբունքն է, որ կգերակշռե, մյուսին քով՝ նորութիւններուն սերը. տեղ-տեղ մեկը կամ մյուսը կիջնե կարծես նվազագույնի, և ասով ալ կկազմվին ու կշեշտվին տարբեր բնավորություններ:

ԸՆԴՕՐԻՆԱԿԵԼՈՒ ՀԱԿՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆՕՐԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԸ

Կրկնությունն ու նոր բաներու հրապույրը կկազմեն կրթական զենքերու առաջին հիմնական զույգը: Կրթությունը այդ երկուքին նման ունի երկրորդ հիմնական զույգ մըն ալ, նորեն իրարու հակադիր, իրարու լրացում, իրարմե անբաժան: Այդ երկրորդ զույգը կկազմեն ընդօրինակությունն ու ինքնօրինակությունը:

Ա. Ընդօրինակություն է, երբ մարդս կքալե ուրիշներու քալած ճամբով, կընե ուրիշներու ըրածը և ուրիշներու ըրած ձևովը, կմտածե ուրիշներու մտածման եղանակովը, կնմանի ուրիշներուն, կհետևի ուրիշներու օրինակին ու կկապկե ուրիշները: Ինքնօրինակությունը սիրող մարդը կփնտրե չկոխված ուղիներով ու արահետ-

ներով քալել, իր ձևով իր գործերը կարգադրել, իր խելքով դատել, նոր բաներ հնարել, նոր ձևերով կառուցել, նոր արուեստագիտութիւններ և կճգտեն ամեն բանի վրա իր մտքի, իր զգացումներու և իր անհատականութեան կնիքը դնել:

Ուրիշներուն հետեւելն ու նմանվիլը, ուրիշները կապկելը բնական արդյունք է ընկերական կենակցութեան: Միասին ապրող ու միասին գործող նույնայեղ կենդանիները կունենան բնականաբար կյանքի միևնույն պայմանները, շրջապատի միևնույն դրդիչները, միևնույն պահանջներն ու ցանկութիւնները, որով և նույն բաները նույն ձևով կատարելու ինքնաբեր իրողութիւնը: Ուրիշներուն հետեւելը շատ նման է կրկնութեան. ատիկա ալ կրկնութիւն մըն է հավաքականութեան տեսակետեն. հավաքական մարմնին մեկ անդամը կկրկնե մյուս անդամներուն ըրածը: Նմանվիլն ու հետեւելը նոր քայլ մըն է անհատի տեսակետեն, հին եղածի կրկնութիւնն է հանրային տեսակետեն:

Ինչքան քաղաքակրթութիւնը կբարձրանա ու կբարդանա, այնքան անհատը շատ բաներու մասին պետք ունի մտածելու, դատելու, եզրակացնելու, շատ մկանային նրբութիւններ ունի ձեռք բերելու, իբրև ճարպկութիւն, իբրև խաղ, իբրև արհեստ, այնքան ալ շատ մտավոր պաշարի պետք ունի չտեմարանելու իր գլխուն մեջ: Արդ՝ եթե այս ամենը իր անձնական որոնումներով ընել ուզե, իր միջոցներով, իր գծած ճամբաներով, ինչքան, ինչքան ավելորդ վորձեր, ավելորդ ջանքեր պիտի կատարե, ինչքան ապարդյուն խարխաբումներ, ինչքան ավելորդ ուժերու վատնում և ինչքան երկար-երկար ժամանակ: Ուժերը տնտեսելու բնական ձգտումը կմղե հոն, որ չգիտցողները նային գիտցողներու ըրածին, չհասկըցողները կրկնեն հասկցողներուն ըսածը, նոր սերունդը հետևի հին սերունդի ըրածին ու ըսածին, անոր ընելու և ըսելու ձևերուն և ինքն ալ կրկնե միևնույնը. ասով կվերանան ավելորդ խարխաբումները, անհարիր յուրացումները, կպակսին սխալները և անհարմար զալարումները. կտնտեսվի ահագին հոգեկան եռանդ, ասով ալ հետևելն ու նմանվիլը, ընդօրինակելն ու կապկելը կդառնա կրթական առաջնակարգ գենք ու միջոց:

Երեխաներուն շարժումներն ու խաղերը անվերջ կապակցութիւն մըն է, նմանվելու անդիմադրելի, ճիգ մը մնծերու ըրածին ու

խոսածին, ինչպես և կենդանիներու ձայնին ու ըրածին, մինչև անգամ անշունչ իրերու ըսածին և ըրածին, որովհետև երեխայի համար դեռ հիմնական տարբերություն մը չկա կենդանիի, բույսի և անկենդան իրերու միջև: Հոտկե կառաջանա, իմիջիայլոց, նաև մանկական լեզուն մեծերու օժանդակությամբ. երեխան կկապկե ամեն կենդանիի և զանազան առարկաներու հանած ձայները, ծնողները կկրկնեն նույնը՝ այդ կենդանին ու այդ առարկան հասկցնելու համար երեխային, որով երեխայի ձայնական կապկումները կդառնան երեխայական բառեր, արդեն այդ ճամբով է, որ նախնական լեզվի մեջ բառերու ստեղծագործության հիմք է դարձած ձայնանմանությունը:

Մանկական ամեն խաղ կապկում մըն է շրջապատող կյանքի. կխաղան հոր արհեստը, հոր գործը, մոր զբաղումները և տանու գործերը, դիմացի խանութպանին աշխատանքը: «Հա՛ֆ-հա՛ֆ» և արդեն շունն է, որ կկապկվի, խելագար ոստյուններով կսկսի ցատկռտել բոլորովին անկարգ ու անիմաստ: «Անկարգ ու անիմաստ» և սաստիկ անախորժ հայրիկ-մայրիկին և ընդհանրապես մեծերուն համար. թե չէ՝ այդ վայրենի ոստյունները կատարող երեխային համար շատ պարզ, շատ ճիշդ ու խորը իմաստ ունին, բնական շարունակությունը կկազմեն երեխայի խաղին. շունն է, որ կցատկռտե, կգլորվի, կգղվտի, կխածնե կամ ոսկոր մը առած կկրծե: Մինչդեռ մաքրասեր մայրը կբարկանա, թե գետնեն բերնով բան մը չենն վերցներ, փոշիներու մեջ չեն թավալիր, սեղանին ծածկոցը ակռաներով չենն քաշեր և այս կարգի մահացու մեղքեր: Խեղճ երեխան կանգ կառնե իր ոգևորության մեջ՝ ինքն ալ մեծերու վարմունքեն բան չհասկնալով, թե ինչո՞ւ իրեն ներելի չեն բաներ, որ իրենց չնիկի ամենօրյա գործն է սակայն:

Եվ ընդօրինակումը խաղով չի վերջանար: Լեզուն, բառերը, բառերուն կապակցումը, չեչտերը, արտահայտության նրբությունները, առոգանության երանգները, քաղաքակրթական ձևերը, ուտել-խմելու, նիստ ու կացի, հագուստի ու կապուստի, շարժուձևերու ու վարմունքի կերպերն ու եղանակները, զանազան աշխատանքներ կատարելու առանձնահատկությունները, մեկ խոսքով՝ բոլոր մարդկային ունակություններուն աստիճանական բացվիլն ու զարգանալը կկատարվի հետևելով մեծերու ըրածին, ընդօրինա-

կելով շրջապատը, նմանվելով ուրիշներուն:

Նույն աղբյուրեն կքաղին ծնողներու, ուսուցիչներու և ընդհանրապես մեծերու տված անձնական օրինակին չափազանց մեծ կարևորությունը տղու հասունցող հոգիին վրա:

Եվ մանկության ու պատանեկության անցնելեն ետքն ալ չի վերջանար կապկելու դերը: Կյանքի բոլոր աստիճաններու վրա և կյանքի բոլոր կողմերուն մեջ ան կգործե: Անշուշտ ինչքան թարմ է տարիքը, այնքան ավելի ուժեղ ու սանձարձակ է կապիկը, ինչքան կհասուննանք՝ այնքան կուզենք տեր դառնալ մեր ըրածին ու վարմունքին, բայց մեր ուզածին ու մեր կրցածին մեջ շատ մեծ է միշտ տարածությունը և հասուն տարիքն ալ շատ մեծ չափերով ենթակա է ուրիշներուն հետևելու, ուրիշներուն նմանվելու անդիտակից հարկադրանքին:

Հայտնի է, որ ամուսինները ինչքան երկար իրարու հետ ապրին, այնքան իրար կնմանին և՛ խոսելու եղանակով, և՛ վարմունքով, և՛ ձևերով, և՛ ճաշակով, նույնիսկ դեմքով: Նույն կուսակցության, նույն ակումբի, նույն խմբակցության անդամներուն վրա շուտով կերևա ամենուն համար ընդհանուր եղող դիծեր ու շեշտեր լեզվի, շարժուձևի, դատողության ու վարմունքի, նույնիսկ հագուստի և ուտեստի: Եվ վերջապես վարք ու բարք, բարոյականություն, պատշաճություն, ամոթ, քաղաքավարություն և նշանավոր ամենակարող մոտան պարզապես իրար կապկել ըսել է:

Այնինչ դերասանուհին այսինչ «սեզոնի» համար Փարիզ կամ Լոնտոն կհագնի այսինչ կտորե այսինչ ձևով կարած հագուստ մը, այսինչ կամ այնինչ պատճառով, և ահա ամողջ փարիզյան «բարձր շրջանակը» կհետևի անոր, անոնց հետևեն բոլոր մյուս շրջանակները, և այդ ձևերը ամեն «քաղաքակրթված» կնոջ համար արդեն պարտադիր է այդ ձևը և մոտավորապես այդ կտորը: Նույն է երևույթը և այր մարդկանց համար. մազերուն խուզվածքը, բեղ և մորուքի ձևափոխությունները, փողկապներուն և հագուստներուն գույնը, կոճակներուն դիրքը. ամենքը իրարու կնային, անխոս հրամանը կա՛մ կուգա պալատներեն, կա՛մ գեղարվեստի բեմերեն:

Եվ այսպես է ո՛չ միայն հագուստը, զվխարկը, կոշիկը, այլև կահկարասիները, բնակարաններուն դասավորումը, այցելությունները, զվարճությունները, պարերը, նվագը, խոսելու և վարվելու ձևը-

ծնքումները, բարևելու կերպերը և այլ մանր ու խոշոր իրողությունները մարդկային առօրյա ընկերական հարաբերություններուն մեջ:

Վերջապես մարդկային ամենեն բարձր ստեղծագործությունները, այսինքն գիտություններն ու գեղարվեստները, մեկ կողմեն ընդօրինակություններ են բնութենեն և բնության ձևերեն ու երևույթներեն, մյուս կողմեն ալ հետևողություն են իրենցմե առաջ նշած վարպետներուն, չատ անգամ նույնիսկ ոչ վարպետներուն, միջակություններուն: Ամեն գիտնական և ամեն արվեստագետ ընդօրինակած ահագին դեզի մը վրա է, որ կդնե իր մտածածը, իր գրածն ու հնարածը, իր չեշտը, իր ձևը, իր կառուցումը, որ և իսկույն կդառնա նյութ ընդօրինակության և հետևողության իրմե ետքը եկողներուն կողմե:

Ընդօրինակելով ու նմանվելով է, որ կսորվինք, կվարժվինք, կկրթվինք և մարդկային ամբողջ քաղաքակրթությունը իրար նմանվելով և իրար կապկելով է, որ կպահվի, կտարածվի, կամրանա ու կզարգանա:

Բ. Կրկնելն ու ընդօրինակելը հին երկու վարպետներն են կրթության. անոնց ձեռքով է, որ կկառուցվի կրթության շենքը իր ընդարձակ ու էական մասերով: Բայց այդ երկուքը ճիշդ իրենց այդ աստիճանի վարպետության պատճառով կդառնան վտանգավոր թե՛ անհատներու զարգացման համար և թե՛ ծողովուրդներու քաղաքակրթության: Ատոնք հին, կարող ու փորձված գլխավոր գործիքներն են կրթության, ավանդող, պահող, մարզող, վարժող: Բայց ինչպես որ նույն բաները կրկնելը, միշտ նույն ճամբաներով քալելը կաշկանդում է մարդուս մտքի ու շարժման ազատ խոյանքին և նոր վայրերով ու նոր ուղիներով մարդկային հոգիի թափառումին, այդպես ալ միշտ ուրիշներուն հետևիլը, ուրիշներուն նմանվիլը կդառնա կապանք ու շղթա մարդկային ոգիին. ամենքը իրարու նման ու իրար հետևող բանի մեջ. կխեղդվի անհատական թռիչքը, անհատական գծերն ու նորաձևումները, և կանգ կառնե զարգացումը, կխոնարհի քաղաքակրթությունը, որովհետև կկասի նորի ստեղծումը, նորի որոնումը, նորի գյուտը, նորի հավելումը, որ կրնա ծնունդ առնել միայն անհատական շեղումներեն, անհատներու մասնավոր հակումներեն և անհատներու ներքին պահանջեն ու անձնական դրդումներեն:

Եվ ինչքան այս անհատական գծերը, անհատական ձգտումները մարդուս մեջ ուժ առնեն, պահանջներ դնեն ու գերակշիռ դառնան, այնքան չնչուված ձևով երևան կուգա ընդօրինակության դեմ ինքնօրինակությունը, այսինքն իր անձնական կողմերը, իր առանձնահատուկ ունակությունները և իր ինքնությունը հնար եղածին չափ լայն ու խոր արժեցնելու ներքին ու խորին պետքը:

Ինչպես նորություններու սերն ու որոնումը, այնպես էլ ուրիշներու ըրածեն ու ըսածեն կարելի եղածին չափ խուսափիլ և տարբեր կերպով մը ըսել ու ընել ցանկալը կպահանջե շատ ավելի ուժի սպառում, և ատոր համար ալ նորություններու հետապնդումը և գործունեության ինքնօրինակությունը նշան է հոգեկան ուժի: Ուժեղ հոգիները ընդհանուր առումով շատ բարեկամ չեն ո՛չ կրկնության և ո՛չ հետևողության: Եվ հոսկե կուգա մեր արհամարհանքը դեպի կապկելն ու թուքթակելը:

Կրկնելն ու կապկելը են ու կմնան մարդկային կրթության երկու հիմնական ու պահպանողական միջոցները. ասոնց դեմ սակայն մշտական մաքառման մեջ են և մշտական մաքառման մեջ պիտի ըլլան նոր ուղիներու, նոր բացատրության, նոր կերտումներու փնտրտուքը և ինքնօրինակության ընդվզումն ու ըմբոստացումը, որոնք կկազմեն մարդկային կրթության երկու խիզախ ու հառաջդիմական զենքերը:

ԽԱՂ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ

Ա. Անվար կրթությունը իր այս երկու զույգ զենքերը գործածելու երկու ձև ունի, ավելի ճիշդը՝ այդ զենքերը տարբեր դրդումներով գործածելուն տարբեր անուններ կուտա. կանվանենք խաղ ու աշխատանք: Հոգեկան կարողություններու գործածությունը մենք կանվանենք աշխատանք, երբ կկատարվի մեր ու մերիններու պետքերն ու պահանջները հոգալու համար: Աշխատանքը հոգիեն դուրս եղող պետքի մը համար է, մեր ուղեղեն, մեր մկաններեն դուրս եղող պետքի մի համար և կծառայե գոյության կռվի մեկ որևէ պահանջին: Հոգիին գործունեությունը միջոց մըն է միայն այդ նպատակին հասնելու համար:

Բայց կան դեպքեր, բազմաթիվ ու անթիվ, երբ մեր ջղային ու մկանային դրութիւնները կաշխատին, կգործեն, թեև չկա մնջտեղը ո՛չ մեկ արտաքին դրդում, ո՛չ մեկ նպատակ: Երեխան պառկած է կռնակին վրա կուշտ, չոր, առողջ, բայց անդադար կշարժե ձեռքերն ու ոտքերը, հետն ալ կպոռա: Երկու շուն կհանդիպչեն իրարու, անգամ մը կհոտվտան իրարու դունչ, գլուխնին թափ կուտան և կսկսեն խելագար վազք մը ու ցատկոտուք մը իրարու հետ, մինչև հոգնին ու բաժնվին: Ծերունին, անկյուն մը նստած, ահագին սաթե տերողորմյան ձեռքը, կդարձնե ու կդարձնե անվերջ, ժամերով: Կատուն ձեռք է ձգեր թելի կծիկ մը, և ինչ ոգևորութիւն. կցատկե, կգլորվի, կնետվի, կվազե. ինչ ուժերու վատնում: Չորս մարդիկ, չորս շատ լուրջ ու շատ գործնական ու շատ պատուավոր մարդիկ, ամենալուրջ ու մտախոհ դեմքերով նստեր են կանաչ սեղանին չորս կողմը, թղթեր կքաշեն, թղթեր կնետեն, կհաշվեն, կվիճեն, կաղմկեն և կամ սրբազան արարողություն մը կատարողի պես խորհրդավոր ու խորին լռություն մը կպահեն:

Ասոնք և ասոնց նման գործածությունները մեր կենդանական ապարատի մենք չենք անվաներ աշխատանք, քանի որ չունին արտաքին նպատակ մը. կըսենք՝ կխաղան, կանվանենք խաղ: Բայց ինչո՞ւ համար են այս խաղերը: Եթե անոնք չունին նպատակ մը, պետք է ունենան գոնե պատճառ մը, քանի որ բնության ու կյանքի մեջ առանց պատճառի չկա ո՛չ մեկ երևույթ:

Իրողությունն այն է, որ կենդանական ապարատը, հոգին, որ հետզհետե կզարգանա և կուժեղնա մեր կյանքի պետքերուն ծառայելու համար, իր զարգացման և ուժեղացման զուգընթաց կառաջացնե ու կուժեղցնե իր սեփական պահանջները, կստանա իր հոգեկան օրենքները: Այդ օրենքներեն մեկն է, և գլխավորներեն մեկը, որ իր կուտակած ուժերը պետք է գործածե: Միայն որոշ չափով մը կրնա անգործ մնալ և պահել իր մեջ չգործադրված պահեստի ուժեր: Երբ մեր հոգեկան կարողություններեն ու գործարաններեն մեկն ու մեկը այդ որոշ չափեն նվազ գործե կամ ամենևին չը գործե, կսկսի մեզի նեղել, անհանգստություն պատճառել: Հավաքված եռանդը տեսակ մը կվթանե մեզի, մինչև որ չթափվի, չգործածվի, չսպառի. և այդ թափումը, գործադրումը,

սպառումը կդառնա հաճույք մը մեզի համար՝ ազատելով մեզի այդ ճնշումեն, խթանեն, անհանգստութենեն:

Երբ մեր մկաններըը երկար ժամանակ չգործեն, երկար առեն նստած կամ պառկած մնանք, կսկսինք նեղվիլ և կկոտրատվինք, կձգձգվինք. պետք է ելնենք, շարժվինք, քալենք, պտույտի երթանք: Եթե մեր միտքը անաշխատ մնա, երբ «պարապ ըլլանք», կզգանք ձանձրույթ, այսինքն կնեղվինք. պետք ունինք որևէ զբաղումի, ինչ կուզե ըլլա, միայն թե միտքը բանի:

Նույն են և զգացումները. մենք միշտ կարիք ունինք որոշ չափով հուզումներու, զգացական ցնցումներու: Եթե կյանքը այնպես բերե, որ որոշ տևողություն մը զուրկ մնանք ուրախություններեն, ինչպես և հոգերե ու ցնցումներե, մեր կյանքը կդառնա «գորշ», և կսկսի «անորոշ բաներու փնտրտուքը», «հեռավոր բաներու կարոտը», «համաշխարհային թախիծը»: Եվ բնականաբար ինչքան զարգացած ու սրված է այդ գործարանն ու կարողությունը, այնքան ավելի մեծ ու սուր է և պահանջը, այն պարզ պատճառով, որ մեր օրգանիզմի այդ մասին մեջ շատ եռանդ կհավաքվի: Ինչքան մարդս չաուախոս է, այնքան ավելի անտանելի է իրեն համար երկար ժամանակ լուռ մնալը:

Բ. Ուրեմն խաղ ըսվածը նորեն մեր կենդանական մեքենայի աշխատանքն է, մեր հոգևկան կարողություններու միևնույն գործածությունը, միայն ո՛չ արտաքին նպատակի մը հասնելու համար ծախսված, այլ ըրդված միայն հավաքված ուժը վատնելու պահանջեն, մեքենան գործածելու ներքին պետքեն: Բան մը ընել, չինել ո՛չ թե ուրիշ բանի մը ծառայելու համար, այլ միայն իր կարողությունները գործածելու համար, բան մը ըսելու, ընելու, չինելու համար միայն:

Բացի այդ նպատակեն խաղի ու աշխատանքի միջև չկա ուրիշ ո՛չ մեկ տարբերություն: Միևնույն հոգևկան կարողություններու միևնույն գործադրումն է: Կեցեր եմ, փայտի կտոր մը կտաշեմ. եթե ուրագիս կամ կացինիս կոթը փոխելու համար է, ըրածս աշխատանք է. եթե կտաշեմ «այնպես, միայն տաշելու համար», միայն ձեռքս զբաղեցնելու համար, ըրածս խաղ է: Ագռնիկը նստեր է, ժանյակ կքանի. եթե նպատակն է բանիլ սորվելը, մորը նվիրելը անոր տոնին օրը, կամ ծախել է մտադիր կամ իր հագուստին կարել,

ըրածը աշխատանք է. եթէ կըանի այնպես, որովհետեւ բանիլ գիտեն, իր հաճույքի համար, պարապ չնստելու համար, ըրածը խաղ է: Կերթամ դեպի չուկա. եթէ ընթրիքի համար բան մը ունիմ գնելու, երթալս աշխատանք է. եթէ կերթամ այնպես, պտույտ մը ընելու, ծանոթներու հանդիպելու, ժամանակ անցընելու, ըրածս խաղ է: Երեխան ծռվեր է եղբորը բաց ձգած գրքին վրա և մեծ ուշադրությամբ և հիգով կնայի մեջի տառերուն և կջանա ընդօրինակելու մատիտով, իր եղբոր ամեն օրվան ըրածը կապկելու համար, կըսենք՝ կխաղա. երբ տարի մը ետքը միևնույն բանը ընե գրել սորվելու համար, խաղը կդառնա աշխատանք:

Խաղն ու աշխատանքը այսպեսով բոլորովին միևնույն բաներն են և բոլորովին համարժեք են մեր հոգեկան կարողությունները գործադրելու, մարզելու և կատարելագործելու տեսակետեն: Աշխատանքի համար եղած գործունեությունը ունի այն մեծ առավելությունը, որ բացի գործարանը սրելեն ու կարողությունները մարզելեն, միաժամանակ կվարժեցնե կյանքի պետքի մը համար կատարել այդ բոլորը, կսորվեցնե իզուր չվատնել ուժերը, կվարժեցնե «գործնական» ըլլալ և կդաստիարակե միշտ որոշ կենսական նպատակի մը ուղղել մեր գործերն ու ջանքերը:

Խաղի համար կատարված գործունեությունը ունի այն անգնահատելի առավելությունը, որ ազատությունն է իրեն լծակից: Աշխատանքը ավելի կամ պակաս չափերով, բայց միշտ հարկադրանք մը, ստիպում մը ունի իր մեջ. պետք է սկսիս, երբ չես ուզեր, հաճախ պետք է անպատճառ հասնիս որոշ կետի մը, թեև արդեն հոգնած ես կամ տրամադիր չես այլևս այդ գործով զբաղվելու. և ընդհանրապես որոշ տեսակի գործեր բնավ քու սրտովդ չէ, բայց պե՛տք է և պետք է կատարես: Մինչ խաղը ընդհանուր առումով կսկսի, երբ կուզես, կդադրի, երբ կկշտանաս, կխաղաս, ինչ որ սիրտդ կքաշե և ինչպես որ տրամադրությունդ կթելադրե. և այս բոլոր ազատություններու և կամայականության պատճառով ալ շատ ավելի հաճելի է ու գրավիչ:

Գ. Կյանքի ու կրթության մեջ խաղը ունի չափազանց խոշոր դեր ու կարևորություն, քան մենք սովորաբար կկարծենք: Մեր կյանքի ամենեն թարմ, ամենեն տպավորվող և մեր ապագա զարգացման հիմքը կազմող առաջին վեց-յոթը տարիներուն մեջ մեր

Հոգեկան գործունեությունը գրեթե ամբողջովին կեդրոնացած է խաղի վրա, կկատարվի խաղի ձևով և կզարգանա խաղի միջոցով. ղրկել մանուկները այդ խաղի կյանքեն կնշանակե խամրել մանուկներու Հոգին, որովհետև ժամանակեն առաջ «գործնական» տեսակետներով առաջնորդվիլը և խաղի փոխարեն աշխատանք պարտադրիլը մանուկներու փթթող Հոգին ճմռտել ըսել է, Հոգնեցնել ու թոռմեցնել:

Իսկ յոթը տարեկանեն սկսած՝ ամբողջ դպրոցական շրջանին բնականորեն ու բնազդորեն խաղն ու աշխատանքը զույգ կերթան միշտ և պետք է զույգ երթան. սկիզբը խաղն է տիրապետող, Հետզհետե աշխատանքը կանցնի առաջ, բայց միշտ պետք է ըլլան երկուքն ալ իրարու հյուսված:

Խաղերը կամք կկրթեն, զգացումները կհրահրին, մկանները կվարժեն, կմշակեն Հանրային զգացումներ և ընկերային հարաբերություններ: Մենք ամեն վայրկյան կտեսնենք, թե ինչպես փոքրերը իրենց բոլոր սրտովը կձգտին խաղի, կտարվին խաղով: Արգիլել խաղը կնշանակե խեղդել տղու Հոգիի մեջ կենսուրախությունը, չարժման վայելքը, Հոգիին թափը, ձեռներեցությունը, կամքն ու Հանդգնությունը, այսինքն կյանքի պայքարին Համար պետք եղող ամենեն արժեքավոր Հատկությունները:

Անշուշտ որ մարդս լուրջ աշխատանքի պետք է վարժվի, և անշուշտ որ հիվանդ ծայրահեղություն մըն է, երբ կյանքը և կրթությունը «սպորտ»-ներու կվերածին, ինչպես որ Հիմա ամեն տեղ ալ սկսած է ծայր տալ՝ մեկ ծայրահեղութենեն մյուսը իյնալով: Բայց անհրաժեշտ է շեշտել ու ընդգծել, որ նույնքան Հանցանք է և հիվանդություն, երբ խաղն ու զվարճությունը կճզմվի և կարհամարհվի ընտանեկան և դպրոցական Հարկերու տակ:

Եվ դպրոցական տարիներով ալ չի վերջանար խաղը և պետք չէ վերջանա: Բաղդավոր են այն մարդիկը, որոնք խաղալ գիտեն և Հասուն տարիքին, որոնք խաղալ կուզեն, երբ մազերնուն մեջ վաղուց ճերմակը ինկած է, մանավանդ շարժուն խաղերը: Բնականաբար ամեն տարիք իր խաղերը և ամեն Հասակ իր նախասիրած զբոսանքներն ունի, ի՛ր զվարճությունները, բայց խաղը պետք է մնա ամեն տարիքի մեջ և ամեն պայմաններու:

Բնական պայմաններու տակ խաղն ու աշխատանքը Հյուսված

կըլլան իրարու, իրար կլրացնեն և իրար կհաջորդեն: Արտաքին պետքի մը համար կատարված գործունեութեան կհաջորդէ ներքին պետքերու համար կատարված գործածութիւնը, երբ կգործեն գլխավորապես հոգեկան այն կողմերը, որոնք աշխատանքի միջոցին անգործ էին մնացեր:

Խաղն ու աշխատանքը կներկայացնեն կեանքի կրթութեան երկու իրար լրացնող ձևերը, որով կգործածվին ու կզարգանան հոգեկան կարողութիւնները:

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՂԵԿԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԲՆԱԿԱՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ղեկավար կրթութիւնը, անվար կրթութեան նման, կրթել կուզէ մարդկային մարմինն ու մարդկային հոգին, որոնք կկառավարվին բնախոսական հաստատ օրենքներով, ուրկէ դուրս գալ չեն կրնար ո՛չ մեկը, ո՛չ ալ մյուսը:

Երկուքն ալ կրնան բանալ միայն ժառանգաբար ստացված ունակութիւնները, երկուքն ալ կառաջնորդվին նույն ժառանգական հնարավորութիւններով:

Այդ ժառանգական կարողութիւնները կբացվին կամ ոչ, կամ մասամբ միայն, ինչ չափով որ թույլատրեն շրջապատի բնական, ընկերական ու քաղաքակրթական պայմանները, ըլլան ատոնք բնական բերումով թե մարդկային դիտավորութեան մասնակցութեամբ:

Եվ մարմնական ու հոգեկան կարողութիւններու զարգացման ատեն ալ կգործադրվին միևնույն զենքերը թե՛ անվար և թե՛ ղեկավար կրթութեան ընթացքին, կրկնել ու կապկել ամենեն առաջ, նորութիւններու բնական հրապույրը և իր ներքին պահանջներուն հարմարելու նորին բնական դրդումը, ինչպես տեսանք:

Ուրեմն կրթութեան ենթական նո՛ւյն, զարգացման օրենքները նո՛ւյն, գործադրված զենքերը նո՛ւյն: Ատոնցմով չէ, որ ղեկավար կրթութիւնը կտարբերի անվար կրթութենեն. ընդհակառակը, անոնցմով անոնք սերտորեն կապված ու միացած են իրարու, նույն են ու նման:

Միակ տարբերութիւնը այդ միևնույն օրենքներն ու զենքերը տարբեր եղանակով մը գործադրելուն մեջն է:

Անվար կրթութեան ժամանակ ամեն ինչ կգտնվի պատահա-

կանուխյան ձեռքը. ո՞ր կարողություններն ու ընդունակությունները կբացվին, ինչ չափով կբացվին, ինչ ձևով և ուղղությամբ կբացվին, – ամեն ինչ կախված է պատահականության բերումեն:

Բայց պատահականություն անվանածնիս ինքը ունի արդեն ղեկավար մեծ սկզբունք մը, հիմնական օրենք մը, որ կանվանենք բնական ընտրություն: Ամեն ուղղությամբ և ամեն ձևով կատարված պատահական փորձերեն անոնք, որ բույսի ու կենդանիի զարգացման, բարձրացման, լավ սնունդին ու բավականության կծառայեն, կկրկնվին. ինչքան կրկնվին, այնքան կզորանան և այնքան պահանջ ու սովորություն կդառնան. կժառանգվին և սերնդե սերունդ ամրացած ձեռքբերումներու ու հատկություններու կվերածվին: Իսկ այն բոլոր պատահական փորձերն ու ճիգերը, որոնք չեն նպաստեր բույսի ու կենդանու զարգացմանն ու պահանջին, բնական կերպով չեն կրկնվիր, քիչ կկրկնվին, կթողնվին, կմոռցվին, իսկ եթե պատահի որևէ պատճառով մը, որ չմոռցվին ու կրկնվին, կենդանիի տկարացմանն ու փճացմանը կտանին: Բնական ընտրության այս օրենքին վրա են հիմնված բուսական և կենդանական աշխարհին մեջ բոլոր զարգացումները, բոլոր նոր առաջացումները, բոլոր փոփոխությունները, ուրիշ խոսքով՝ ամբողջ կրթությունը:

Բնական ընտրության այս օրենքին կպարտինք, որ բնության մեջ բոլոր ձևերն ու օրինակները այն աստիճան նուրբ ու ճիշդ կերպով կպատասխանեն բույսի ու կենդանիի պետքին ու պահանջին, և որ կյանքի առաջացուցած երևույթները այս աստիճան «խելացի» են: Եվ որ կյանքը իր ամբողջությամբ առած միշտ դեպի վեր կերթա, դեպի ավելի բարձրը և ավելի կատարելագործվածը:

Բնական ընտրությունը անշուշտ մեծ սկզբունք մըն է կրթական, միայն թե անոր գործունեության դաշտը շատ է ընդարձակ. ան բուսական ու կենդանական տեսակի, համայնի ու ամբողջության տեսակետեն կգործե ու կներգործե, ամբողջության լավացումը ունի աչքի առաջ: Անհատը անոր համար երկրորդական բան մըն է, կաթիլ մը միայն լայն ու խոր գետի մեծ հոսանքին մեջ: Անհատները կրնան կորչիլ ու փճանալ այդ պատահական բազմատեսակ ու ամեն ուղղությամբ կատարվող փորձերու ատեն. ինչ փույթ. իյնողը կվչնա, փճացողը կփճանա, իսկ կյանքը կերթա առաջ:

Բնական ընտրութիւնը կը գործէ անհատներու միջոցով ու կ'ներգործէ անհատներու վրա, բայց անհատներով քիչ կ'հետաքրքրվի. ով չիտակ ճամբան բռնեց՝ բնական ընտրութիւնը կ'օգնի անոր բարձրացումին, ով ծուռ ու աննպատակ ճամբան բռնեց՝ բնական ընտրութիւնը կ'հրի ու կ'տանի վերջնական փճացումի:

Ահա հոտ է, որ ղեկավար կրթութիւնը՝ մարդու գիտակից միջամտութիւնը, կուգա օգնելու անհատին, կ'յանքի այդ լայն բնական ընտրութեան քովը կ'դնե ավելի նեղ մարդկային արվեստական ընտրութիւն մը, կ'ջանա սահմանափակել անհատի զարգացման մեջ տիրող պատահականութիւնը, կ'ջանա որոշ ընտրութեան մը ենթարկել անհատին վրա ներգործող ազդակները և այդ ազդակներու ազդելու ձևերը: Մարդկային կամքով ու խելքով կատարված ընտրութիւն մը:

ՆՊԱՏԱԿԻ, ԱԶԴԱԿՆԵՐՈՒ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ղեկավար կրթութիւնը անվար կրթութենեն տարբերողը այդ արվեստական ընտրութիւնն է, և այդ ընտրելով գործ տեսնելն է, որ կ'թագավորե ղեկավար կրթութեան բոլոր կողմերուն ու երևույթներուն վրա:

Ամենեն առաջ կ'ընտրե իր ուզած կարողութիւնները և իր չուզած կարողութիւնները, իր ուզած մտքի պաշարը և իր ուզած զգացումները և իր չուզած բանները, որպեսզի իր ուզածներուն զարգացմանը աշխատի և իր չուզածներուն զարգացումը խափանե, ընթացք չտա, խեղդե, որչափ որ կրնա: Ուրիշ խոսքով՝ կրթութեան մեջ կ'մտցնե որոշ նպատակ, որոշ ուղղութիւն: Ղեկավար կրթութիւնը նպատակ մը և ուղղութիւն մը ունեցող կրթութիւն է: Եվ որչափ հստակ ըլլա իր նպատակը և ուղղութիւնը, այնքան ավելի գիտակից ու բարձր կ'դառնա ղեկավարութեան միջամտութիւնը:

Իր այդ նպատակին հասնիլ կարողանալու համար կ'կատարե երկրորդ ընտրութիւն մը՝ իրեն նպաստավոր եղող ազդակներուն ընտրութիւնը:

Կ'յանքի պատահականութիւններու հորձանքին մեջ մանուկը ամեն ինչ կ'տրվի տեսնելով ու լսելով, կ'րկնելով ու կապկելով, բայց

ի՞նչ է իր տեսածն ու լսածը, ի՞նչ է, որ կկապկե ու կկրկնե. ամեն ինչ կախված է դիպվածի բերումեն ու շրջապատի բազմատեսակ պարագաներեն: Կսորվի ու կյուրացնե բաներ, որ լավ է բնավ չսորվեր. կկրկնե ու կըսե բաներ, որոնք հաճախ իրար կխաչաձևեն ու իրար կխանգարեն: Այս պիտանի ու անպիտան, իրար հարմարող ու իրար չբռնող բաներուն միասին խառնվիլը, զարգացումը կտանին ոլոր-մոլոր ճամբով մը, խուճերու ու քարերու զարնվելով, ելքերով, ու էջքերով և շատ ավելի ուժերու վատնումով: Եթե նույնիսկ որոշ տեղ մը հասցնելու ալ ըլլան վերջ ի վերջո:

Ղեկավար կրթությունը ուրիշ տեսակ կվարվի. կընտրե ազդակներեն պիտանիներն ու կարևորները, որոնք մասնավորապես արժեքավոր են իր նպատակին հասնելու տեսակետեն, որոնք իրար կլրացնեն ու կուժեղցնեն, և ատոնց մասին կխոսի, ատոնք կցուցադրե ու կջանա, որ ատոնց հետ տղան մշտական շփում ունենա իր շրջապատի իրականության մեջ: Իսկ այն տեսակի ներքին ունակություններն ու արտաքին յուրացումները, որոնց ուժեղացումը մարդուս անբնական կամ ընկերական կյանքի հաջողության և ազնվացման տեսակետեն մասնավոր արժեք մը չեն ներկայացներ կամ նույնիսկ արգելք են ու վնասակար, ղեկավար կրթության կողմե կխափանվին. ղեկավարությունը ամեն կերպ կջանա, որ այդ անցանկալի ունակություններուն և յուրացումներուն զարգացման համար անհրաժեշտ եղող ազդեցությունները չքացվին, թուլացվին, որ չկրկնվին, չմշակվին, ուժի չգան:

Ուրիշ խոսքով՝ ղեկավարությունը իր ուզած ու չուզած նպատակները ընտրելեն ետքը կընտրե նաև այն բոլոր ազդակները, որոնք իր դիտողության ու փորձառության հիման վրա ամենեն ավելի հաջող կերպով կրնան հասցնել իր նպատակներուն:

Եվ այդ հաջողությունը ավելի ևս դյուրացնելու և զորացնելու համար կդիմե երրորդ տեսակի ընտրության մը՝ ժամանակի հետ կապված ընտրության մը: Անվար կրթությունը իր ընդօրինակումներն ու կրկնությունները կկատարե, երբ որ պատահմունքը բերավ, երբ որ պատահեցավ, երբեմն սաստիկ իրարու ետևե ու իրարու վրա, երբեմն իրարմե շատ ուշ, երկար ընդհատումներով, որով հին ճիգերը դրեթե կկորսվին, մյուսները թերի կմնան ու ձեռք չեն բերեր հարկ եղած ճշմարտությունը: Կստացվի ուժերու ավելորդ

ու կրկնակի սպառում, կղզրծադրե չատ ավելի երկար ժամանակ, չենք ունենար յանկացած նրբութիւնն ու վարպետութիւնը:

Ղեկավար կրթութիւնը իր սորվեցնել ուզած բաներուն համար կընտրե ժամանակն ու տևողութիւնը. երբ որ ինքը հարմար դատե: Ինչքան երկար որ ինքը հարմար դատե, ինքը կորոշե ընդհատումներու երկարութեան չափը և կրկնութիւններու ավելի կամ նվազ հաճախութեան աստիճանը: Այսինքն իր ամբողջ կրթական գործունեութիւնը կկապե ժամանակի հետ ու կենթարկե որոշ կարգ ու կանոնի:

Ինչքան որ ընտրված նպատակը հստակ ըլլա, ինչքան որ ընտրված ազդակները ուժեղ ու ճիշդ ըլլան, ինչքան որ անոնց ազդեցութեան ժամանակի պայմանները մտածված և կարգ ու կանոնի ենթարկված ըլլան, այնքան զորեղ կերպով կշնչուի ղեկավարութիւնը կրթութեան գործին մեջ: Ինչքան որ նվազին այդ պիտակիչ ընտրութիւնները, այնքան կմոտենա կրթութիւնը կյանքի տված անվար կրթութեան, նույնիսկ դպրոցներուն մեջ:

ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ո՛չ մեկ կարողութիւն, ո՛չ մեկ ուսում ու գիտութիւն ձեռք չի բերվիր մեկ անգամեն, մեկ ջանքով, այլ երկար-երկար ճիգերով, քիչ-քիչ, հետզհետե և կտոր-կտոր, և երբեք ո՛չ մեկ կարողութիւն, ո՛չ մեկ գիտութիւն վերջ ու զագաթ չունի իր զարգացման. միշտ կարելի է ավելի ու ավելի կատարելագործել, ինչ որ սովորաբար ավարտել, զագաթնակետ կամ կատարելութիւն կնկատենք՝ համաբաբերական արտահայտութիւններ են միայն:

Արդ կյանքի կրթութեան պատահականութիւններու հոսանքին մեջ այդ հետզհետե ձեռք բերվող կտորները, այդ հետզհետե իրարու եկող մասերը, կողմերը, հատկութիւնները ո՛չ մեկ ընտրութիւն չունին բնականաբար և ո՛չ մեկ կարգ ու կանոն իրենց յուբացման հաջորդականութեան մեջ, սառը համար ալ կապված կըլլան մեծ բացերու, ոստյուններու, ծուռ ու սխալ կտորներու, ավելորդ կցումներու, թևքումներու և այս բոլորի հետևանքով կունենան հավելյալ դժվարութիւններ ու կմնան միշտ թերի:

Ղեկավար կրթութեան գործադրած ընտրութիւններու չոր-

րորդ մեծ տեսակը կկազմե այդ հաջորդական ստացումներուն մեջ դրված կանոնավոր աստիճանավորությունը. ամեն անգամ նախորդ արդեն սորվածն ու կրցածը աչքի առաջ ունենալով և այդ կրցածին ու գիտցածին վրա ավելցնելով ճիշդ այնչափը, որ ամենեն ավելի դյուրին ու հաջող կերպով կարելի է ձեռք բերել:

Այդ խիստ կարևոր հաջորդականությունն է, որ չեչտել կուզե դեկավար կրթությունը, երբ կպահանջե, որ կրթական գործին մեջ անցնինք միշտ ծանոթեն դեպի նվազ ծանոթն ու անծանոթը, գիտցածեն դեպի նվազ գիտցածն ու դեպի չգիտցածը: Նույն մտածումով կըսենք նաև մոտավորեն դեպի հեռավորը՝ մոտավորը ավելի ճանչված նկատելով: Նույն իմաստով կըսենք նաև արտաքինեն դեպի ներքինը, քանի որ երևույթներուն արտաքինը ավելի շուտ և ավելի դյուրին ճանաչելի ու ծանոթ կդառնա, քան ծածկված ներքինը: Բայց պետք չէ մոռնալ, որ որոշ պայմաններու մեջ հեռավոր բան մը կամ ներքին բան մը կրնա շատ ավելի շուտ հայտնի ու ծանոթ ըլլալ, քան մոտավորն ու արտաքինը: Միշտ դեկավար սկզբունք պետք է ընդունիլ գիտցածեն դեպի չգիտցածը:

Այսպես ալ դեկավար կրթության մեջ ամեն ուսում և ամեն կարողություն ձեռք պետք է բերվի ավելի պարզ տեսակներեն, ավելի պարզ ձևերեն, ավելի պարզ վիճակներեն ու ըմբռնումներեն և ավելի պարզ գործադրություններեն դեպի քիչ մը ավելի բարդ և հետզհետե շատ ավելի բարդ կողմերը, ավելի բարդ գաղափարներն ու օրենքները: Բայց այս օրենքն ալ կգործե միայն այն ժամանակ, երբ ծանոթեն անծանոթը անցնելու սկզբունքին վրա է հիմնված, որովհետև գիտություններու մեջ շատ անգամ ամենեն պարզ վիճակները, աքսիոմները և ատոնց մոտիկ մնացող դիտողությունները ու երևույթները հասկնալը շատ ավելի դժվար է և շատ ավելի մեծ մտքի հասունություն ու նախապատրաստություն կպահանջե: Օրինակ՝ կենդանիներու կազմի մասին գաղափար տալու համար մանուկներու հետ կենդանաբանությունը միաբջիջ կենդանիներեն սկսիլը կըլլա կոպիտ սխալ: Այդպես ալ անձրևի, ձյունի ու ջուրի մասին խոսելու համար՝ չրածինեն ու թթվածինեն սկսելը: Գիտական պարզությունները մտքի երկար աշխատանքով ձեռք բերված վերացականություններ են: Երբ կըսենք պարզ ու բարդ, միշտ

աչքի առաջ պետք է ունենանք անհատի ըմբռնողության աստիճանը:

Ծանոթեն անծանոթի և պարզեն բարդի սկզբունքներեն կըշխի բնականորեն նյութականեն դեպի վերացականը անցնելու պահանջը, որ բոլորովին կհարթե նախորդ կետին մեջ մատնանշված դժվարությունը: Զգայարանքները մեր ուղեղին պատրաստ պատկերներ կուտան դուրսի աշխարհեն, իբրև որոշ ամբողջություններ, իբրև իրական, նյութական պատկերացումներ: Այս նյութական պատկերացումներուն վրայեն մարդկային միտքը կզատե անոր բաղադրիչ հատկությունները, անոր զանազան կողմերը, իբրև ուրույն ըմբռնումներ, և զատ անուն մը կուտա: Մտքի հորինած այդ առանձնացումներն են, որ կանվանենք վերացական գաղափար: Մինչև նյութական պատկերացումը չունենանք գլխուն մեջ, անկե չինված վերացական գաղափարը բնական ճամբով ունենալ չենք կրնար: Առանց նյութական հիմքի, երբ վերացական գաղափար մը պատրաստ ստանանք ուրիշներե, մեր ստացածը կըլլա միայն բառ մը, որ կրնանք կրկնել, բայց իսկապես մեր ըսածին խորքի էությունը չենք հասկնար կամ ծուռ ու սխալ կհասկնանք մեր ունեցած մյուս նման նյութական պատկերացումներու օգնությամբ: Այնպես որ նյութականեն դեպի վերացական ըսելը խորքին մեջ հասկցածեն դեպի դեռ չհասկցածը կնշանակե:

Ծանոթեն անծանոթին անցնելու մեկ ուրիշ տեսակն է, երբ կպահանջենք, որ անձնապես չհագրգիռ նյութերեն, գործերեն, տեղեկություններեն անցնինք դեպի նվազ անձնականը, դեպի նվազ չհագրգիռ նյութերը և դեպի բոլորովին անանձնական և իր մեջ շահի և օգուտի հրապույրը չունեցող երևույթներուն, դեպքերուն և նյութերուն: Այս միևնույն բանը կըսենք ըստ էության, երբ հաճելիեն նվազ հաճելին անցնիլ կթելադրենք, մինչև դեպի անտարբեր նյութերը, նույնիսկ մինչև տհաճելին: Այս միևնույն բանը կըսենք ըստ էության, երբ կուզենք, որ ուսուցումը ընտանեկան աշխարհեն անցնի քիչ-քիչ դեպի իր անմիջական շրջապատի համայնական աշխարհը և հոնկե ալ դեպի ավելի լայն ազգային ու հանրային կյանքը և դեպի ավելի ևս լայն ու հեռու՝ համամարդկային մտածումներն ու զգացումները:

Նույն աստիճանավորումը կգործե նաև գիտակցության վերաբերմամբ: Ուսուցման և դաստիարակության անգիտակից ու մեքենաբար կատարվող ձևերեն, երբ սորվողը պարզ գիտակցություն չունի, թե բան մը սորվելու վրա է, պետք է կատարվի աստիճանական անցումը դեպի կիսովին գիտակցված աշխատանքները, ուր գեթ մասամբ սորվողի կամքն ալ դեր ունի, դեպի հետզհետե շատ ավելի հստակորեն գիտակցված դատումներն ու յուրացումները ուսման ու վարքի, դեպի մտածված ու լիովին կամավոր ձեռնարկներն ու վարմունքները:

Այս միևնույն երևույթի ուրիշ մեկ երեսն է ինքնաղեկավարության աստիճանավորումը: Ամեն մտքի հարստացում և կարողություններու ամեն մարզում սկիզբը կըլլա ինքնին կյանքի անվար կրթությամբ կամ մեծերու ընտրությամբ, հսկողությամբ և առաջադրությամբ. փոքրիկի կամքն ու գիտակցությունը շատ քիչ դեր ունի այդ ղեկավարության մեջ: Հետզհետե սակայն անձնական կամեցողությունը, թեև մասամբ և ո՛չ տիրաբար, կսկսի մասնակցիլ իր կարողություններու զարգացումը ղեկավարող այդ ճիգերուն: Մինչև որ անհատը աստիճանաբար իր կրթության գործը իր հիմնական մասերով կառնե իր ձեռքը. ալ ինքն է, որ կխորհի ու կփնտրե իր վիճակի ու գիտցածի թերի ու խախուտ կողմերը և կջանա լրացնել ու սրբագրել ըստ իր նախասիրություններուն, ըստ իր հակումներուն ու հաչիվներուն ավելի կամ պակաս հարատևությամբ ու սիսթեմով:

ԴՅՈՒՐԻՆ ԵՎ ՈՒՐԱԽ ՁԵՎԵՐՈՒՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս բոլոր տեսակի ընտրությունները գործադրելու առեն ղեկավարությունը կկատարե նաև վերջին տեսակի ընտրություն մըն ալ, կընտրե այն բոլոր ձևերը, պայմաններն ու միջոցները, որոնք կդյուրացնեն և աշխուժ կուտան աշխատանքին, աշխուժ ու հետաքրքրություն կուտան ըմբռնումին, ստացումին, յուրացումին, գործադրումին:

Աւորը համար է, որ ղեկավարությունը իր ամբողջ գործունեությունը կհիմնե տղոց հոգեբանության վրա:

Ամենեն առաջ տղոց տարիքին դրած սահմաններն ու պահանջները կհարգե խստորեն և իր ամբողջ աշխատանքը կհարմար-

ցընն ամեն անգամ անոնց արդին ունեցած ուժերուն և հաստուն-
թյան աստիճանին: Եվ տարիքի աստիճանական փոփոխության
հետ և՛ ուսուցման ձևերը, և՛ վարմունքի ձևերը, և՛ աշխատանք-
ներու բարդությունն և տևականությունը շարունակ կփոփոխեն:

Ասոր համար է, որ ղեկավարությունը ամեն կերպ ընթացք
կուտա տղոց գործուն հոգեբանական պահանջին, որ միշտ բան մը
ընել, բան մը փոխել ու բան մը առաջացնել կձգտի: Կուզե, որ
տղան ինքը ընդ, ինքը դիտե, ինքը փորձե, ինքը մտածե, ինքը
գտնե ու արտահայտե, որչափ հնար է:

Եվ ամեն անգամ կհարգե ու կհետևի տղոց բնախոսության
ու հոգեբանության առօրյա պահանջներուն՝ չանալով խուսափիլ
ուժերու ավելորդ լարումե, ինպես և ուժերու նվազ գործածութենե,
և՛ ձանձրույթե, և՛ հոգնութենե և ընդհանրապես ամեն չափա-
զանցութենե և անառողջ պայմաններե:

Եվ տղոց ներքին այս դյուրացումներուն զուգընթաց կջանա
տալ նաև ամեն հնարավոր արտաքին դյուրություններ: Դիտել
տալու դյուրացումներ, ըմբռնելու դյուրացումներ, կրկնելու, վարժ-
վելու և արտահայտել կարողանալու դյուրացումներ: Ամեն քայլի
համար կմտածե, կփնտրե օրինակներ, համապատասխան պատմու-
թյուններ, փորձեր ու խաղեր: Կհնարե ու կգործածե նկարներ,
ձևացումներ, մոտելներ, գործիքներ ու տարապներ: Ու կտանի իր
փոքրիկները բնության գիրկը, տեսարաններուն դեմը, բնական ու
քաղաքակրթական երևույթներուն կեղրոնը և անմիջական թարմ
ու կենդանի չփման մեջ կդնե փոքրիկը անոնց հետ: Եվ այս բոլոր
ճիգերու, հնարներու, երթևեկի մեջոցին ղեկավարը զբաղեցնողը
միշտ մեևնույն սևեռուն միտքն է. ինչպե՞ս վարվի, ի՞նչ ընե և
ինչպե՞ս, որ փոքրիկները հնար եղածին չափ դյուրին կերպով հնար
եղածին չափ խոր յուրացնեն:

Դյուրին՝ կինչանակե ուժերու չափավոր գործածություն, իսկ
չափավոր կերպով գործածված ուժերը սիրելի են միշտ ու հաճելի,
դյուրություն փնտրողը հաճելին կփնտրե: Եվ ուրախությամբ կա-
տարվող աշխատանքը դյուրին կկատարվի: Ամեն աշխատանքի
մեջ ընդհանրապես և կրթության գործին մեջ հատկապես դյուրու-
թյան և ուրախության կձգտին ամենքը: Եվ ղեկավար կրթության
բնական պահանջն է, որ փոքրիկներուն աշխատանքը դառնա հե-

տաքրքիր, դրաւիչ, կենդանի, զվարթ, նաև հաճախ զվարճալի, որ անոնք ուզեն, փնտրեն ու կարօտին: Եվ որ ընդհանրապես փոքրիկ-ներու կյանքին ու գործին վրա ուրախութիւն թափի , ապրիլն ու սորվիլը, աշխատիլն ու կրթվիլը վայելք դառնա, լույս ու զվարթութիւն:

Բ. ՀԻՄՆԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՐԴԻՉՆԵՐ

Բայց ինչո՞ւ ղեկավար կրթութիւն մը իջած է ասպարեզ: Ի՞նչն է ստիպեր, որ ղեկավարները այդ դժվար ու բարդ դերը առնեն իրենց վրա. ի՞նչն է, որ դրդեր է ու կդրդե, որ մարդիկ իրենց փոքրիկներու կրթութիւնը զբաղվին, և ո՞վ են ատոնք, որ այդ խնդիրներով կզբաղին:

Ա. Ամենեն առաջ և շատ բնական կերպով ամեն էակի ծնողները, արյունակից մերձավորները, որ քիչ մը ավելի լայն իմաստով ընտանիք կանվանենք: Փոքրիկներու կրթութիւնը կհետաքրքրվին և այդ ուղղութիւնը ճիգեր կընեն ամեն մեկ անհատի սեփական ընտանիքին խելահաս անդամները:

Եվ այդ հոգածութիւն բնական դրդիչներն են նախ սերը, ետքը՝ չահը:

Ամեն ծնող կուզե, որ իր զավակը առողջ ըլլա, բարեձև ըլլա, ճարպիկ ըլլա, խելացի ըլլա, ամենուն կողմե գնահատվի և գովաբանվի: Այս բոլոր բանները կցանկան, որովհետև կսիրեն իրենց զավակը և կուզեն, որ ան հաճույք և հաջողութիւն ունենա իր շրջապատին մեջ. այս բոլորը կցանկան, որովհետև ծնողները կսիրեն ինքզինքնին. իրենց զավկին ուղղված գովասանքն ու գնահատութիւնը տեսակ մը անուղղակի կերպով կհասնի ծնողներուն և անոնց հպարտութիւնը կչոյե, բավականութիւն կպատճառե:

Բացի այս անմիջականեն՝ ծնողները շարունակ կմտածեն և վաղվան մասին. փոքրիկը պետք է մեծնա և պետք է պատրաստված ըլլա կյանքի կռվին մեջ հաջողելու համար, որ կարողանա բարձրանալ, հարստանալ, պատիվներու արժանանալ. ինչքան բարձր և ինչքան տաղանդավոր ըլլա, այնքան գերադասելի: Եվ ասիկա ալ կբաղձան ծնողները նախ դեպի իրենց զավակը ունեցած

սերեն դրդված, կցանկան անոր ապագա հաջողությունը, բաղդավորությունը, փառքն ու հաղթանակը: Բայց այդ բնական սիրո կից դեր կխաղա նմանապես նույնքան բնական կերպով հաշիվը. իրենց զավկին ապագա բարձրացումները, հարստացումը և հաջողությունները վերջապես նաև ամբողջ ընտանիքի հաղթանակն է ու բարձրացումը:

Արդ՝ այս բարձրացումներուն ու հաջողություններուն հասնիլ կարողանալու համար բազմաթեական հատկություններ ու կարողություններ կան, որոնք ինչքան բազմակողմանի կերպով ձեռք բերվին, այնքան կավելնան հաջողության հավանականությունները, իսկ այդ կարողություններուն ու հատկություններուն մեծագույն մասը անվար կրթությունը կա՛մ բնավ չի տար, կա՛մ ոչ ցանկացած չափով ու ձևով: Եվ ահա ծնողները ճիգ կընեն իրենց խոսքով, իրենց օրինակով, իրենց կրցած չափով այդ կողմերու և հատկություններու զարգացմանը նպաստելու: Բայց ինչ որ իրենց անձնական կարողութենեն վեր է սորվեցնելը, կդիմեն զոհողության, կվարձեն հատուկ մարդիկ, կղրկեն հատուկ ուսումնական կամ ուրիշ հաստատություններ, շատ հաճախ իրենց պետքերեն ու շատ անհրաժեշտություններեն ինքզինքնին զրկելով, ամեն նեղություն հանձն առնելով, որ իրենց զավակը կրթվի, զինվիլ ու պատրաստվիլ կարողանա այդ ապագա կռվին ու հաջողության համար:

Ահա՛ աս է առաջին և հիմնական դրդիչը դեկավարության. աճող անհատի ներկա և մանավանդ ապագա հաջողություններուն նախապատրաստությունը: Լավ ու բազմակողմանի զինված ըլլա, որոշ ուղղություններով հատկապես լավ մարզված ըլլա և անհրաժեշտ համարվող մտավոր պաշարը գլխուն մեջ ամբարած ըլլա:

Այսինքն անհատի ապագան, անհատի առավելությունները, անհատին հացն ու դիրքը, շահն ու հաջողությունը, անհատի հետ ալ բնականաբար անհատի ընտանիքին մասնավոր բարեկեցությունն ու բավականությունը:

Բ. Բայց մարդ միայն անհատ մը չէ ինքն իրմով լրիվ ու անկախ, ո՛չ ալ նույնիսկ միայն մեկ ընտանիքի մը մեկ անդամը: Մարդս շատ ավելի լայն իմաստով ընկերային ստեղծագործություն մըն է: Անոմն ամեն մեկը ինչ որ է, ինչ որ եղած է, ինչ որ կներ-

կայացնեն, չէ հասած այդ վիճակին ինքն իրմով, իբրև միակ անհատ մը, ո՛չ ալ միայն իբրև որոշ մեկ ընտանիքի մը զավակը, այլ իբրև շատ ավելի լայն ամբողջութեան մը մեկ մասնիկը, ընկերական շատ ավելի խոշոր խմբակցութեան մը մեկ անդամը, իբրև մեկ բջիջը ընկերային օրկանիզմի մեկ որոշ օրկանին: Ընկերային անհատին մեջ երկու տեսակի շահեր ու պահանջներ կկեդրոնանան՝ անձնական շահեր ու պահանջներ, իբրև անհատ և իբրև ընտանիքի մը անդամ մեկ կողմեն, մյուս կողմեն ալ՝ ընկերային կազմի մը շատ ավելի ընդհանուր շահերն ու պահանջները, իբրև մեկ անդամը այդ ավելի լայն ընկերական օրկանիզմին:

Քաղաքակրթական բոլոր երևույթները կպատկանին ընկերական ամբողջութեան. աւոնք բոլորն ալ արդյունք են խմբական կյանքի և հավաքական դարավոր աշխատանքի. ամեն ինչ կատարված ու ձեռք է բերված անհատներու ձեռքով, բայց շնորհիվ դարավոր ժառանգական հատկութիւններու և շնորհիվ այդ ավելի լայն հանրային կյանքի ընձեռած հարմարութիւններուն, դիզած նյութերուն և արդեն առնված նախորդ քայլերուն: Մանուկը իր ծնած վայրկյանեն չրջապատված է այդ ընդհանուր քաղաքակրթութեամբ: Իր շուրջը լեզու մը կխոսին ու կխոսեցնեն. հագված են ամենքը ու պատսպարված և կհագվեցնեն պզտիկն ալ, կփաթաթեն ու կխնամեն որոշ ձևերով, որոշ կարգով. և ընդհանրապես, որոշ սովորութիւններ, ըմբռնումներ, վարք ու բարք կտիրեն իր շուրջը եղած մարդոց մեջ, իր ընտանիքին մեջ: Եվ այդ ընտանիքն ալ, ինչքան ալ իր անհատական գծերը ունենա, իր բոլոր էական կողմերով մեկ նմուշն է բազմաթիվ իր նման ցեղակից ընտանիքներու, որոնց հետ միասին կկազմե ժողովուրդ մը նույն լեզվով, նույն բարքերով, նույն սովորութիւններով, նույն հակումներով, նույն ձգտումներով և նույն հոգեբանութեամբ:

Ամեն ժողովուրդ ունի իր քաղաքակրթութիւնը. անշուշտ այդ քաղաքակրթութիւնը իր ամբողջութեամբ միմիայն այդ ժողովուրդի մասնավոր սեփականութիւնը չէ. շատ բան ընդհանուր է ուրիշ ժողովուրդներու հետ, շատ բան փոխ է առնված ուրիշներեն, յուրացված է ուրիշ ազգերե: Բայց այս ամենը իրողութենեն չի փոխեր ոչինչ. մանուկը ի՛ր ժողովուրդի ծոցին մեջ կյուրացնե այդ բոլորը իբրև իր ժողովուրդի սեփականութիւնը, կծանոթանա

այդ ամենուն իր ժողովուրդի միջոցով և իր ժողովուրդի աչքով, հոգիով, լեզվով: Հաղորդ դառնալ մարդկային քաղաքակրթության՝ գործնականին ու իրականին մեջ կնշանակե հաղորդ դառնալ իր մայր ժողովուրդի քաղաքակրթության և այդ խողովակով նաև ուրիշ ժողովուրդներու կյանքին, մտքին և ստեղծածին. ասե՛ է ընդհանուր ու սովորական ընթացքը:

Եվ բնականաբար ծնող ժողովուրդը, մայր քաղաքակրթությունը պահանջ ունի, որ իր ծնած ու մեծցուցած անհատը մնա միշտ իր հարազատ անդամը. չըլլա հիվանդ կամ կտրված բջիջ մը իր մարմնին մեջ, որ ան գործե ի նպաստ ամբողջ օրկանիզմին, հօգուտ իր մայրենի ժողովուրդին ու քաղաքակրթության, չդառնա կորուստ մը իր ծնելական ու կրթական սպառած ուժերուն: Եվ դեռ ավելին՝ ժողովուրդը պահանջ ունի, որ այդ աճող անհատը խաղա իր ժողովուրդի ու քաղաքակրթության պահպանման ու բարձրացման համար այն դերը, որուն ամենեն ավելի պետք ունի ամբողջությունը, որ անհատը ծառայե հանրության պետքերուն, ազգային շահերուն, պետական հաչիվներուն:

Ամեն ժողովուրդ մեկ կողմեն կձգտի պինդ կերպով իրեն կապած պահելու իր ծնունդը եղող անհատները, մյուս կողմեն կջանա ուղղություն տալու անոնց հոգիին, գործերուն ու ձգտումներուն՝ հանրության պետքերուն համար: Հոսկե ալ կառաջանա ընդհանուր պահանջ մը դիտակից կերպով վարելու և ծրագրված աշխատանքով ուղղություն մշակելու անհատներու ստանալիք կրթության համար, ո՛չ թե անհատներու պետք ու օգուտը աչքի առաջ ունենալով, այլ ամենեն առաջ ամբողջության շահն ու կարիքը:

Եվ այսպեսով ղեկավար կրթությունը կառաջնորդվի երկու հիմնապես տարբեր ու հակադիր տեսակներով, որոնք սակայն գործնականին մեջ սերտորեն հյուսված են իրարու: Մեկ կողմեն անհատի անհատական զարգացումը, դյուրությունը, ապագան ու հացը, այսինքն անհատի շահը, մյուս կողմեն ժողովուրդի մը հանրային պետքերը, ձգտումները, ապագան ու բարեկեցությունը, այսինքն ազգային շահը: Ասոր համար է, որ անխտիր բոլոր ազգերու կրթական հաստատությունները իրենց վրա կկրեն խոր ազգային կնիք և կծառայեն այդ ուղղության որոնումներուն ու տենչանքներուն,

թեև միաժամանակ հիմնված են անհատներու ապրուստին ու ապագային ծառայելու համար:

Հայրն ու մայրը կուտան իրենց զավակը կրթվելու զավկի ու ընտանիքի մասնավոր օգուտը աչքի առաջ ունենալով գլխավորապես, պետութիւնները ու հանրութիւնները կմշակեն իրենց ծրագրերը ու կլանան իրենց հաստատութիւնները ամենեն առաջ ազգային պետական շահերը նկատի ունենալով: Իսկ ամեն կրթական պաշտոնյա, որ կուզե կեցած մնալ իր կոչման բարձրացման վրա, կրնանա ծառայել այդ երկու նպատակներուն միաժամանակ:

ԸՆՏԱՆԻՔ ՈՒ ԴՊՐՈՑ

Ա. Այսպեսով՝ նոր սերունդներու կրթութեան գործով ամենեն առաջ կհետաքրքրվի ու կզբաղի բնական անհրաժեշտութեամբ ընտանիքը:

Քաղաքակրթութեան զարգացման զուգընթաց՝ ընտանիքի չանքերուն կմիանա ու կավելնա հանրային միտքը, հասարակաց կարծիքը: Գիտական-մանկավարժական ուսումնասիրութիւններ, քննադատութիւններ, դասախոսութիւններ և զանազան ուղղութիւններու և ըմբռնումներու բերանը եղող պարբերական մամուլը քանի կերթա ավելի ու ավելի կզբաղին կրթական հարցերով, նոր պահանջներ, նոր տեսակետներ կղնեն մեջտեղ, կբերեն նոր առաջարկներ, կդրդեն, որ ծնողներն ու ոչ ծնողները լրջորեն մտածեն այդ հարցերուն վրա:

Հանրային մտքի այս չանքերուն զույգ կերթա ընդհանրապես պետութեան ավելի գործնական միջամտութիւնը: Երկրին կառավարութիւնը իր պետական խորհուրդով, իր ուսումնական ժողովներով, իր կուսակցութիւններով ու խորհրդարաններով ձեռք կառնեն կրթական վերին ղեկավարութիւնը, կմշակեն ծրագիրներ, սկզբունքներ, տեսակետներ և օրենքներ, որով պետք է գործադրվի կրթութեան գործը իրենց երկրին մեջ: Եվ այդ սկզբունքներու և տեսակետներու համեմատ ալ պետութիւնը կհիմնե ու կշատցնե զանազան աստիճանի ու ձևի վարժարաններ ու դպրոցներ ամեն տեսակ ուսումներու, արվեստներու և արհեստներու մշակման ու ավանդման համար:

Հանրային միտքը, հասարակաց կարծիքը, խորհրդարանն ու կառավարութիւնը կրթական գործին վրա կազդեն վերեն, հեռվեն, իսկ ամբողջական կերպով, օրը օրին ու անձնական չփումով այդ գործը վարողը կմնա միշտ ընտանիքը և դպրոցը: Կրթական դեկավարութեան երկու հիմնական գործադրիչ հաստատութիւններն են ուրեմն ընտանիքը և դպրոցը. սոսնձ են, որ պետք է իրականացնեն նոր սերունդներու զարգացման համար մտածված ու մատնանշված բոլոր թե՛ հանրային և թե՛ անհատական պահանջները:

Հոս ու հոն ուրիշ տեսակի հանրային կամ մասնավոր հիմնարկութիւններ ալ որոշ չափով մը կրնան գործնական տեսակետեն գործադրիչ դեր մը խաղալ, բայց ասիկա կըլլա միշտ երկրորդական, ի միջի այլոց, ո՛չ աստիճանական կարգով ու սիստեմով, ո՛չ հետևողական կերպով և կմնա միշտ իբրև պատահական ու հավելյալ երևույթ մը, ժամանակավոր փոխառութիւն մը դպրոցեն կամ ընտանիքեն կամ փոխարինութիւն մը ընտանիքին կամ դպրոցին. այսպես են, օրինակ, երիտասարդ տղոց ու աղջիկներու համար հիմնված կայանները, որբանոցները, մսուրները, որևէ առևտրական հաստատութեան կցված գործնական դասերը, տղաք ու պատանիները աշխատցնող ձեռնարկութիւններուն մեջ մտցված որոշ կրթական պահանջներ, պետական կամ եկեղեցական որոշ անձերու կողմե գործադրվող որոշ բարոյական հսկողութիւն, խրատ, օժանդակութիւն, քարոզ:

Բ. Թե՛ ընտանիքի և թե՛ դպրոցի աղդեցութիւնը կրնա գործադրվիլ որոշ չափով մը նաև հասուն տարիքի մեջ եղողներուն վրա, բայց իր բնական տեղն ու ասպարեզը հասունացման տարիներն են:

Եվ հասունացման տարիներու ընթացքին ալ իրարու նման ու համաչափ չէ այդ երկու գործադրիչ հաստատութիւններու դերն ու կարևորութիւնը:

Երեխայական ու մանկական շրջաններուն տիրապետողը ընտանիքն է եղեր: Մանկական տարիներուն ընտանիքին օգնելու և լրացնելու կուգա մանկական դպրոցը՝ մանկապարտեզը, և շատ լուրջ ու պիտանի օժանդակութիւն մըն է, որ կբերե և՛ ընտանիքին, և՛ հաջորդ շրջանին գալիք դպրոցին, բայց մանկապարտեզը ինքը

կկրե մեծ չափերով ընտանեկան կրթության կնիքը , բազմամանուկ ընտանիք մըն է կարծես, որ կյանքն ու կրթությունը շատ է նման ընտանիքի կյանքին ու կրթելու ձևերուն:

Տղայական ու պատանեցման շրջաններուն ընտանիքի ու դպրոցի ազդեցությունները հետզհետե կսկսին իրարու հավասարվիլ. տղայական շրջանին չնչտը, այսպես ըսենք, հեղինակության գերակշռությունը ընտանիքի կողմն է դեռ, որ պատանեցման շրջանին կամաց-կամաց կանցնի դպրոցական կրթության ձեռքը:

Եվ ալ ասկե անդին մինչև հասունցող տարիներու սահմանը և անկե ալ անդին երիտասարդացման շրջանի բարձրագույն կրթության տարիներուն քանի կերթա աստիճանաբար կնվազի ընտանիքի ազդեցությունը և՛ խորքով, և՛ ծավալով. ընդհակառակը, քանի կերթա կբարձրանա դպրոցական ղեկավարության օրինակին ու խոսքին դերն ու հեղինակությունը:

Ուրիշ խոսքով՝ հասունացման ամբողջ հատվածին մեջ ընտանիքն ու դպրոցը գործակից են իրարու հակադիր դասավորությամբ. ընտանիքի ազդեցությունը սկիզբը ուժեղ ու միահեծան, քանի կերթա, կմեղմի, կպակսի ու ետ կքաշվի. դպրոցի ազդեցությունը սկիզբը կրացակայի, քիչ մը ետքը կուգա, իբրև օժանդակ մը ընտանիքին, բայց շատ արագ կուժեղնա և շուտով կդառնա ազդեցիկն ու տիրապետողը:

Գ. Ընտանիքն ալ, դպրոցն ալ կհետաքրքրվին և կազդեն անշուշտ տղոց կրթության երեք կողմերուն ալ վրա, թե՛ կարողությունների բացման, թե դաստիարակության և՛ թե ուսման վրա: Բայց հոս ալ անշուշտ խոշոր տարբերություններ ունին իրարմե իրենց դերով:

Կարողությունների բացման նպաստելու տեսակետեն երկուքն ալ իրենց բաժինը ունին: Ընտանիքին ձեռքն է թարմ տարիքը իր առաջին խոր տպավորություններով: Բայց դպրոցը, որ սկիզբը իբրև օգնական մը միայն կուգա, քիչ-քիչ կսկսի շատ մեծ դեր խաղալ փոքրիկներու և մեծերու մտավոր կարողություններու, գգացումներու, ճաշակի և մկանային վարժումներու զարգացման գործին մեջ:

Դաստիարակության տեսակետեն շատ ավելի չնչտված է ընտանիքի կյանքին ու վիճակին ազդեցությունը տղոց վրա, շատ է

մոտիկ, շատ է սերտ, շատ առօրյա և զգացումներով իրարու հյուսված ծնողներուն ու իրենց զավակներուն չփումը և շատ ալ բազմակողմանի: Անշուշտ դպրոցն ալ իր կարգ ու կանոնով, տղոց հավաքական կենակցութիւնմբ, իր ուսուցիչներու օրինակով ու սիրով ու հեղինակութիւնմբ, ինչպես և դրքերեն հանվող օրինակներով, շատ լուրջ դեր կրնաղա դաստիարակութեան գործին մեջ: Բայց առաջ ու բնականն պայմաններու տակ և՛ թաղմ, և՛ ավելի հասուն տարիներու ընթացքին ընտանեկան սերտ ու մտերիմ կյանքին թողած աղդեցութիւնը տարբեր խորութիւն մը ունի, վարակիչ ու մնայուն ուժ մը:

Եթե կարողութիւններու բացման մեջ կրնանք այդ երկուքի աղդեցութիւնը իրարու հավասար նկատիլ, եթե դաստիարակութեան տեսակետեն նժարը ավելի ընտանիքին կողմը կթեքի, ուսում տալու տեսակետեն ծանրութեան կենդրոնը վճռաբար կանցնի դպրոցին կողմը:

Ընտանիքը շատ լուրջ կրնա հոգալ ու նպաստել առաջին տեղեկութիւններու ու դիտողութիւններու չտեմարանումի ատեն. դպրոցական միջին շրջաններուն կրնա որոշ նպաստ մը բերել դպրոցական ուսումներու յուրացման գործին, բայց միշտ օգնականի դերին մեջ է մնայն, իսկ վերին շրջաններուն մեջ այդ օգնականի դերն ալ մեջտեղեն կվերնա. օգնողներեն կպահանջվի մասնագիտական պատրաստութիւն. տղաքը սիրով չեն դիմեր այդ օգնութեան, և ծնողներն ու մեծ եղբայրներն ալ կխուսափին սխալ ու ծուռ բան մը ընելու վախեն կամ ուսուցչին գործը չխանգարելու զգուշութիւնմբ:

Ուսման ամբողջ գործը շատ արագ կերպով և տարեցտարի ավելի խիստ ընդգծումով կկապվի դպրոցին. արդեն դպրոցները առաջացած են ու կան ամենեն առաջ և հատկապես ուսում տալու համար:

Դ. Դպրոց և ընտանիք, ըլլա իրարու հավասար թե իրարու գերակշռութեան առջև խոնարհելով, կգործեն սակայն երկուքն ալ իրարու քովն ի վեր: Եվ շատ բնական է և անհրաժեշտ, որ գործի ավելի լրիվ հաջողութեան համար, հակասութիւններե խուսափելու համար, իրարու աշխատանքը չխաչաձևելու համար և փոքրիկներուն հոգիները խնայելու համար այդ երկու գնկավարութիւնները

մշտապես կապված ըլլան իրարու, տեղյակ իրարու կատարած գործին և բռնած ուղղութեան. ատով միայն հնարավոր կդառնա իրարու օգնելը և իրենց ընդհանուր գործունեութեան մեջ ներդաշնակութիւն մը մտցնելը:

Դպրոցի ու ընտանիքի այդ կապն ու գործակցութիւնը ձեռք բերելու կա երկու ճամբա:

Առաջին ճամբան ծնողական ժողովներն են. ամեն դպրոց պետք է ունենա միայն իր աշակերտներու ծնողներեն կազմված և պետութեան կողմեն օրինապես ճանչցված մնայուն կազմակերպութիւն մը, որ տարին մեկ-երկու անգամ պարբերաբար հավաքումներով քննութեան առնեն իրենց զավակներու դպրոցին հետ կապված ամեն տեսակի հարցեր. այս ժողովներուն պարտադիր կերպով պետք է մասնակցի ու ներկա ըլլա դպրոցի վարչութիւնը և տա հարկ եղած բացատրութիւնները, և միասին ալ խորհին ամեն տեսակի հնարավոր հնացումներու, լրացումներու կամ փոփոխութիւններու մասին, ինչ որ կյանքն ու ժամանակները կբերեն:

Այդ ժողովներուն մեջ կրլլան բնական կերպով և՛ տեսական վերլուծումներ կրթական խնդիրներու, և՛ գործնական առաջարկներ իրենց դպրոցի բարձրացմանը նպաստող, և՛ տնտեսական հոգածութիւններ աշակերտութեան կյանքը, անունդը, զվարճութիւնն ու առողջապահութիւնը նպաստավորող: Այս ժողովները մեկ կողմեն կըլլան մշտական ծանոթացում մը իրենց դպրոցի ուղղութեան, իդեալներուն ու պակասներուն՝ ծնողներուն համար, մյուս կողմեն ալ դպրոցական վարչութիւնը կտեսնե ծնողներուն բաղձանքներն ու ձգտումները և ատոնց ինչ աստիճան անհրաժեշտ ու անմիջական պետք մը դարձած ըլլալը:

Ծնողներու ու դպրոցի այս տեսական ու պարբերական չփումն ու խորհրդակցութիւնը ո՛չ միայն իր հետ կբերե իրար ճանչնալ, իրար հարգել ու գնահատել, այլ բնական կերպով ծնունդ տալ կենդանի չարժումի մը, նոր որոնումներու և չարունակ ավելի ու ավելի դեպի լավը դիմելու:

Երկրորդ ճամբան անձնական ծանոթութիւններն ու այցելութիւններն են: Մանկապարտեզի և տարրական նախակրթարանի դաստիարակ-ուսուցիչները պարտական են տարին մեկ-երկու անգամ այցելութեան երթալու ամեն մեկը իր դասարանի աշա-

կերտներուն տունը, ուր դպրոցի ու տան ու երեխայի մասին պետք է խոսիլ բոլորովին ընտանեկան շեշտով մը, պարզ ու մտերիմ՝ խուսափելով վիճաբանութենեն և քննադատական ձևերե: Եվ դպրոցին դռներն ալ ո՛չ դասարանական պահերուն բաց պիտի ըլլան ծնողներուն առջևը: Եվ լավ է նույնիսկ, որ ավելի սեր ու պատրաստակամություն ունեցող ծնողները որևէ դեր ու օժանդակություն բերել կարողանան հատկապես դպրոցի տնտեսական ու նման աշխատանքներուն: Եվ դպրոցական բոլոր հանդիսություններուն և տոներուն պետք է ներկա ըլլալ կարողանան ծնողներն ու եղբայր-քույրերը՝ միշտ մասնակից աշակերտներու ուրախության, խաղերուն և պատրաստած ներկայացումներուն:

Բարձր նախակրթարանին վերջերը և անկե ալ անդին, երբ ուսուցիչներու մասնագիտական պատրաստություն այս կամ այն ճյուղին մեջ կատանա առաջնակարգ կարևորություն, ո՛չ կարելիություն կլնա, ո՛չ ալ անհրաժեշտություն, որ ուսուցիները այցելել կարողանան իրենց աշակերտներուն. անձնական այցերը կղառնան պատահական, բայց պիտի մնա միշտ դպրոցի կապը ծնողներուն հետ, ինչպես և ծնողական ժողովները:

Որչափ ծնողները նային իրենց զավակի դպրոցին վրա իբրև իրենց հաստատության վրա, իբրև իրենց սեփական միջավայրի մը վրա, և որքան դպրոցի մը պաշտոնյաները նային իրենց աշակերտներու ընտանիքներուն վրա, իբրև իրենց դպրոցին հատուկ եղող ավելի լայն ընտանիքի մը վրա, այնքան կշահի և՛ դպրոցը, և՛ ընտանիքը, և՛ անշուշտ մանավանդ աճող փոքրիկը:

Գ. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընտանեկան կրթության առաջին առանձնահատկությունն է, որ ղեկավարության ենթակա էակը ընտանիքին հարազատ մեկ անդամն է, այնքան-այնքան խոր կապերով կապված է իր կրթությունը ղեկավարող անձերուն: Շատ ուժեղ բնազդներ, շատ խոր

զգացումներ և շատ մեծ ուշադրություն կկեդրոնանա ենթակա էակին վրա: Շատ մեծ չափերով հոգ, խնամք, չարչարանք, զրկանք ու անձնվիրություն պատրաստ են կրելու ծնողները իրենց զավկի սիրուն, անոր հաճույքին ու օգտին համար: Ո՛չ ժամանակ, ո՛չ ուժ և ո՛չ ծախք կխնայվի, և առանց կողմնակի ուրիշ հաշիվներու կամ որևէ ակնկալության: Դրդումը կուգա ներսեն. բնական պահանջ մըն է, բնական պարտավորություն մը, ուրկե չի կրնար խուսափիլ ղեկավարությունը. չկա ընտրություն՝ ուզելու կամ չուզելու, կրնալու կամ չկրնալու. ծնող է, ընտանիքին մեծը, ուրեմն պիտի վարե իր ծնունդին աճումն ու կրթությունը: Բնական ու բնազդական ղեկավարություն մըն է ընտանիքին կատարածը:

Ընտանեկան ղեկավարության երկրորդ առանձնահատկությունը սերտորեն ու մշտապես հյուսված ըլլալն է ընտանիքի առօրյա, հոսուն կյանքին. ո՛չ որոշ ժամեր կան, ո՛չ որոշ օրեր, ո՛չ ալ որոշ տեղ ու պայման: Ընտանիքի մեջ կրթական գործը զգալի չափով չի բաժնվիր առողջապահական, աննզդառական, պաշտպանական, զվարճական և ժամանցի համար կատարված մյուս ծնողական հոգածություններեն, մանավանդ առաջին իր ամենաուժեղ տարիներուն: Արդեն ընտանիքի ղեկավարությունը փոքրիկի երեխայական տարիներուն ավելի առողջապահություն է, քան իսկապես կրթություն, և հաջորդ տարիներուն ալ ու մինչև վերջը սննդելու, պաշտպանելու և առողջությունը խնայելու հոգերն ու մտածումները միշտ ավելի գերակշիռ են ծնողներու վարմունքին մեջ: Ամեն պարագայի տակ ընտանեկան ղեկավարությունը երբեք չի կրնար մասնագիտանալ, իր ուշադրությունը միայն իր զավկի հոգեկան կողմերու զարգացման վրա ուղղել և մնացածին վրա ուշ չդարձնել: Ան կհոգա ու աչքի առաջ կունենա իր սերունդին պետքերը ամեն կողմեն, ամեն տեսակետներե. ամեն-կողմունի ղեկավարություն մըն է ընտանիքին վարածը, և՛ ամենաժամ, և՛ ամենուրեք: Կյանքի բոլոր պահանջները, բոլոր տեսակի հոգածությունները, կրթականներն ալ միասին առած, անդադար իրար կխառնվին, իրար կընդհատեն և իրար կհյուսվին: Այդ պատճառով ալ ընտանեկան կրթությունը իր ներգործելու արտաքին եղանակովը շատ կնմանի կյանքի տված անվար կրթության: Եվ շատ անգամ շատ դժվար է որոշելը, թե ի՞նչ աստիճան գիտակցական էր առնված

քայլը, իրենչ չափով որոշ կրթական մոտածում մը կղեկավարեր ծնողին այս կամ այն վարմունքը, և իրենչ աստիճան նախապես ուղղված ու կշռված էր այդ մոտածումն ու վարմունքը:

Ընտանեկան կրթութեյան մեջ, առօրյա կյանքի հոսանքն ի վար իրար կկցվին դիտաւորյալը, ծրագրվածը, բնազդականն ու պատահականը: Ցրիվ ու ոստոստուն, ընդհատ ու ազատ դեկավարութեյուն մըն է, որ տեղի կունենա ընտանիքի ծոցին մեջ, ուր դժվար է հատակ տեսնելը դիտակցութեյան և սկզբունքի չափին ու մասնակցութեյունը:

Եվ ասով ալ կհասնինք ընտանեկան կրթութեյան երրորդ առանձնահատկութեյան, որ է գծված ու որոշված հատուկ ծրագրի մը բացակայութեյունը, առնվելիք քայլերու նախամոտածված հաջորդականութեյան մը պակասը: Ընտանեկան կրթութեյան մեջ ինչ որ հաստատ սկզբունքի կենմանի և ինչ որ տեսակ մը ավելի հարատև է, վճռական, շատ ավելի ժառանգական է ու բնազդական, քան դիտակից և ըմբռնված: Կրթական վարմունքներն ալ բոլոր մյուս կենդանական գործերու ու սովորութեյուններու նման, դարեդար ենթարկվելով բնական ընտրութեյան և սերունդե սերունդ կրկնվելով, դարձած են բնազդական արարքներ, որ ամեն անհատի մեջ կարթննան ու կգործեն, մասնավորապես երբ մարդս կդառնա հայր կամ մայր:

Ասով կբացատրվի ուսումե ու դիտակից վերլուծումե հեռու եղած բազմաթիվ անձերու ի ծնե ունեցած չնորհքն ու կարողութեյունը խելացի և առողջ կերպով վարելու՝ ըլյա իրենց, ըլյա ուրիշներու զավակներուն կրթութեյունը: Զավակ մը-երկու մեծցնելենետքը այդ ժառանգականին կհյուսվի քիչ-քիչ փորձառութեյան ու դիտողութեյան բերածը և կրնա դառնալ արդեն տեսակետ ու դիտութեյուն ու դիտակցութեյուն, թեև միշտ ալ իր հիմնական էութեյամբ կմնա բնատուր կարողութեյուն մը, կներկայանա իբրև մանկավարժական չնորհք ու տաղանդ, ճիշտ այնպես, ինչպես բոլոր մյուս ձիրքերն ու տաղանդները: Առանց սորվելու և առանց երկար դատողութեյան դիտե, թե փոքրիկին հետ ինչպես պետք է վարվի ու թե ինչ ու ինչպես պիտի ընե անհրաժեշտութեյունը ներկայանալուն պես:

Անշուշտ բնածին չնորհքին զատ որոշ աստիճանի դեր կխա-

դա նաև միջավայրի ազդեցությունը. ամեն ընկերական շրջանակ ունի իր մեջ տիրող հնամյա սովորություններ, վարվելակերպեր, ժողովրդական բերնե բերան ավանդվող կրթական հայացքներ, խորհուրդներ ու նախապաշարումներ, որոնց գումարը իր տեսակի մանկավարժական ուսում մըն է, և որուն տեր է միշտ այդ միջավայրին մեջ մեծցող ամեն անհատ առանց իրեն հաշիվ տալու և աղջիկները մասնավորապես իրենց մայրերու թևին տակ:

Այս գիտություններու ու փորձառություններու լրացումը, սրբագրումը և գիտակցական խմբումն է, որ կբերե գիտությունը, գիրքը, ուսումն ու համալսարանը և ավելի մասնագիտորեն մանկավարժության գիտությունը, որուն սակայն համեմատաբար շատ քիչ ծնողներ ծանոթ են լրջորեն: Միայն լսած, տեսած կամ կարդացած ու մտածած ըլլալը հերիք չէ դեռ գործադրության համար: Նույնիսկ շատ կրթված ծնողներուն իրենց ընտանիքին մեջ գործադրած մանկավարժությունը մեծ տարբերություն մը չունի վերը գծված ընդհանուր պատկերեն: Ընտանեկան կրթության մեջ ամեն ինչ ծփուն է, փոփոխական, ճկուն, շատ բան վայրկյանը վայրկյանին մտածված ու որոշված և ընդհանրապես թերի ու աղոտ մտածված, նույնիսկ մտածված բաներու գործադրությունը թերի կմնա սովորաբար ու անհետևողական:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցական ղեկավարության պայմանները շատ տարբեր են ընտանեկան կրթության պայմաններեն: Եվ ամենեն առաջ տարբեր է ղեկավարողին անձը, և չկա այլևս վարողին ու կրողին միջև արյան կապ և բնությենեն տրված հարկադրական կողմնակալություն, որով և դպրոցական ղեկավարությունը չունի ծնողներուն շատ սովորական եղող չափազանցված հոգածությունները, չափազանցված վախերը, անհանգստությունները և մանավանդ չափազանց սերը, որ ամենեն մեծ խանգարիչն է ընտանիքին մեջ չիտակ ու առողջ կրթության:

Այս պատճառով ալ դպրոցական ղեկավարությունը շատ ավելի հանգիստ է, արդար ու բնականոն: Մեկ կողմեն զերծ է

դրսեն երես տալն ու չփացնելն, մյուս կողմեն ալ՝ ավելորդ ու անվերջ հանդիմանություններն և տղուն կրցածեն ավելի բաներ պահանջելն: Շատ ավելի նվազ են անբնական դրդիչները՝ անտեղի գովասանք չռայլելու կամ անարդար պարսավ: Դպրոցական ղեկավարները շատ ավելի վարժված են ամենուն վրա հավասար աչքով նայելու, որով անոնց վերաբերումը փոքրիկներուն հանդեպ շատ ավելի միապաղաղ է ու հետևողական, և այդ պատճառով ալ դպրոցական կյանքը անհամեմատ ավելի առողջ է և մանկավարժորեն բնական:

Այս ամենուն վրա պետք է ավելցնել նաև դպրոցական ղեկավարներու ավելի մասնագիտական պատրաստությունը, փորձառությունը և նոր սերունդը վարելու ավելի ճեռնահասություն: Մարդիկ են, որոնք սորված, կարդացած ու մտածած են իրենց հանձն առած գործի մասին և որոնց համար ատիկա իմիջայլոց կատարվող բան մը չէ, այլ իրենց կյանքին կոչումը, իրենց դերը մարդկային աշխատանքի բաժանումին մեջ և իրենց հային ու ապրուստին աղբյուրը. մարդիկ, որ երկարամյա պաշտոնավորությամբ և կրկնությամբ մեծ վարժություն ու փորձառություն են ճեռք բերած ընդհանրապես:

Անշուշտ արդի իրականության մեջ դեռ շատ կան և՛ անպատրաստ, և՛ գործը չսիրող, և՛ անկարող մարդիկ դպրոցական պաշտոններու վրա, բայց մեկ կողմեն պետական հսկողությունը, ինչպես և մանկավարժական հետզհետե պահանջկոտ դարձող ըմբռնումները արագ կերպով մաղելու վրա են ցորենը որոմեն: Եվ վերջապես արդի հոգի պայմաններուն մեջն անգամ դպրոցական ղեկավարներուն միջինը անտարակույս շատ ավելի բարձր է ընտանեկան ղեկավարներու միջինեն: Դպրոցական կյանքի երկրորդ մեծ առավելությունն ու տարբերությունը ընտանեկանեն աշակերտական լայն ընկերակցությունն է: Ընտանիքի մեջ լավագույն պարագային չորս-հինգ եղբայր-քույրերու միասին ապրիլ մըն է, ուր հաճախ տարիքի զգալի տարբերություններ կան: Մեծ եղբայրն ու մեծ քույրը, որոնք շատ տեղ ստիպված են հայրն ու մայրը փոխարինելու, շատ հարմար խաղընկեր ու զաղափարակից չեն փոքրիկներուն համար և

իրենց խակ մանկավարժութեամբ չատ կչարչարեն փոքրիկները, ինչպես և իրենք ալ իրենց տարիքին ու տրամադրութեան չհարմարող այդ պաշտոնեն թէ՛ կձանձրանան, թէ՛ կտառապին. անտանելի բան մըն է, երբ չարաճճի «եղբայրիկի» մը վրա պիտի հսկես չարունակ, մինչ կարդալու հետաքրքիր գիրք մը ունիս սեղանիդ վրա, կամ սիրած ընկերուհիդ է քովդ իր անուշ շատախոսութեամբ, կամ վերջապես ինքդ մեծ ախորժակ ունիս քու հաշվիդ խաղալու և «չարաճճիութիւններ» ընելու:

Դպրոցներուն մէջ այս բաները չկան, ամեն հասակ ունի իր բնական ընկերական շրջանակը, իր հասակակից խաղընկերը, իր սրտակից դասընկերը: Եվ հոս փոքրիկները իրարու կապողը բնական ընտրութիւնն է, բնական համակրանքը, և անոնց իրար ենթարկվիլն ալ կկատարվի բնական հնազանդութեամբ ուժեղին, խելացիին ու ձեռներեցին: Այս շրջանակին մէջ ո՛չ փոքրիկի հիմար մեծամտութիւններուն կարևորութիւն տվող կա, ո՛չ իր թղկոցին ու լացին: Հոս ուրիշները իր քմայքին ենթարկվողը չեն, հարկադրված է ինքը իր շրջապատին հարմարվելու, իր ընկերներուն տրամադրութիւնը, կարողութիւններն ու ուժը հաշվի առնելու, այսինքն ամենեն չիտակ ու բնական ճամբան ընկերական դաստիարակութեան, իրավունքի ու պարտավորութիւններու ըմբռնումին, փոխադարձութեան անհրաժեշտութեան, ավելի մեծ ամբողջութեան մը ինքը միայն մեկ մասնիկ ըլլալու չատ կարևոր գիտակցումին:

Հասակակիցներու այս առօրյա կենակցութեան մէջն է, որ մանուկներու եսական ու եսամոլ գիծերը կտաշվին, կհղկվին և քիչ-քիչ կկազմվին, ընդհակառակը, հանրային զգացումներ. փոքրիկը ստիպված է մեկդի դնելու իր հնդկահավութիւնը, հարմարվող ու զիջող դառնալու, եթե կուզե իր ընկերներու համակրանքն ու խաղակցութիւնը: Հոս է, որ փոքրիկը կհասկնա, թե ստանալու համար պետք է տալ, հնազանդեցնելու համար պետք է հնազանդիլ: Եվ այս է պատճառը, որ ամենեն ընտիր ուսուցիչներու ձեռքին տակն իսկ և ամենեն բացառիկ ընտանեկան առավելութիւններու մէջն անգամ «տունը» կրթութիւն ստացած տղան զուրկ կմնծնա իր հասակին հատուկ առողջ ապրումներե ու կապերե, որ միայն առօրյա մտերիմ շփումը կրնա տալ հասակակիցներու

Հանրապետութեան մը մէջ: Հասակակիցներու այդ հանրապետութիւնը գոյութիւն ունի մեյ մը դպրոցը, մեյ մը վողոցը. երկրորդը անվար կրթութեան տված հանրապետութիւնն է իր բոլոր չար ու բարիով, իսկ առաջինը զեկավար կրթութեան հակոդութեան տակ գործող հանրապետութիւնն է մանկութեան:

Դպրոցի ընտանեկան զեկավարութենեն ունեցած երրորդ հիմնական տարբերութիւնը իր աշխատանքի մասնագիտացումն է: Ընտանիքը իր զավկին պատճառած հոգերեն զատ, ըլլա կրթական թե տարբեր, ունի և ուրիշ բազմաթիվ ընտանեկան և ոչ ընտանեկան խնդիրներ. մտածումներ, ձեռնարկներու աշխատանք, պարտավորութիւններ հայր, գործի, զվարճութեան և հանրային պահանջներու: Կրթական հարցը, ինչքան ալ կուզե կարևոր համարվի, ընտանիքի բազմաթիվ զբաղումներեն ու գործերեն մեկն է միայն և շատ հաճախ ո՛չ ամենեն զլխավորը:

Դպրոցի միակ ու բացառիկ գործը կրթութիւնն է: Եվ կրթութեան մէջն ալ մարմնի աճման, առողջութեան, անուղղին ու խնամքին շատ թեթևակի և շատ համեստ չափով մը միայն կրնա մտահոգվել: Իր բոլոր ուշադրութիւնը էապես կենդրոնացած է զգացումներու, կամքի, բարոյականի ու մտքի զարգացման վրա: Եվ իր այդ սահմանափակումին կրնկերանա բնական կերպով ավելի խիստ և հատակ ծրագրում մը իր ընկերին, ավելի կանոնավոր մշակում իր հաջորդական ընկերքներուն, նյութերու դիտակից ու հաշված ընտրութիւն, դասավորում ու բաշխում ամիսներու, օրերու ու ժամերու վրա: Այլև ուսումնասիրում, կանխորեն որոշում, թե ինչպես պետք է զարգացնել և մարզել փոքրիկներուն այս ու այն կարողութիւնները, և ինչ ճամբով ու եղանակով պետք է հարբատացնել անոնց միտքն ու ըմբռնումները:

Այսինքն կսկսվի լրջորեն ու խորեն մշակութեան ենթարկվիլ ո՛չ միայն իր տալիքի ու ընկերքի ինչը, այլև ինչպեսը: Էապես դպրոցական պետքերեն է, որ կծնի մանկավարժութիւնը՝ զեկավար կրթութեան նպատակին, նյութին, միջոցներուն ու եղանակներուն դիտական ուսումնասիրութիւնը, և այդ ուսումնասիրութիւններու լույսին ու պահանջներուն տակ անոր երբեցած գործադրութիւնն ալ կդառնա հետզհետե կատարելագործվող և դիտականացող բարձր արվեստ մը:

Դ. ԲՈՂՈՔ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՄ

ԲՈՂՈՔԻՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ չափով որ դպրոցները կշատնան ու կտարածվին, ինչ չափով որ կդառնան պետական հսկողության ու հոգածության առարկա և ինչ չափով որ մանկավարժությունը նուրբ արվեստ մը և լուրջ գիտություն մը կսկսի դառնալ՝ հոգեբանության և ընկերական գիտություններու վրա հենված, այնքան ավելի կչեչտվի դպրոցներու մանկավարժական գերազանցությունը: Եվ դպրոցներու բարձրացման ու կատարելագործման համար կատարված ճիգերուն քով մասնավորապես կսկսի աչքի զարնել ընտանեկան կրթության թերին, կիսատությունները ու տկարությունները: Ինչքան ատեն որ բնականոն ընտանիք մըն է մեր դեմը, որ իր ձեռքեն եկածը կընե՝ բարեխիղճ կերպով իր վրա դրված պարտականության տակեն պատվով դուրս գալու համար, ընտանիքի կրթական պակասությունները չատ աչք չեն ծակեր: Որոշ ներդաստություամբ կմոտենանք և հարգանքով՝ իր քանի մը բնական առավելությունները աչքի առաջ ունենալով և ենթարկվելով իր հնության, մշտականության և իր անվան ազդած վաղեմի պատկառանքին: Բայց այդ համակերպությունն ու ներողամտությունը ուժեղ պատուվածք մը կստանա, երբ ընտանիքը առողջ ու բնական պայմաններու մեջ չէ և երբ իր պարտավորությունը պարկեշտորեն չի կատարեր:

Այսպես, երբ ծնողները մեռած կըլլան, ու տղան կմնա որբ, ու իր կրթությունն ալ՝ ավելի կամ նվազ պատահական ու անհարազատ անձերու ձեռքը: Հոր ու մոր ներկայության ալ չատ անգամ դանազան տեսակի պատճառներով զավակներուն կրթությունը չի հանձնվի կամ կմնա կողմնակի անձերու, վարձու անհատներու կամ սպասուհիներու ձեռքը: Այդպես ալ, երբ կրթությունը վարողը թեև հայրն ու մայրն են, բայց անոնք իրենց զարգացումով, հակումներով ու բնավորությամբ իրար չեն հարմարիր, իրարու ազդեցություն կչեզոքացնեն, իրար կմեղադրեն ու կքննադատեն, երեխային երես կուտան և անոր բնավորությունը կփճացնեն կամ

ուղղակի կկուվին իրարու հետ, կհայհոյեն, տգեղ ու անբարոյական տեսարաններու տեղիք կուտան, որով ընտանիքի վարած կյանքը կդառնա վիրավից ու թունալից: Կամ ջղային, հոգեկան զանազան աւտիճանի թերութիւններ կունենան, որով ջղային ու հիվանդոտ կդառնա նաև ամբողջ ընտանեկան կյանքը: Այդպես ալ կպատահի, որ հայրը կամ մայրը ավելի կամ պակաս չափերով զուրկ կըլլան ծնողական առողջ սերե կամ կրթական առողջ բնազդե, ըլլա ի ծնե, ըլլա թերի կրթութիւնամբ, կամ պարզապես տարված կըլլան ուրիշ գործերով, իրենց զբաղումով կամ զվարճութիւնամբ կամ մոլութիւններով և քիչ կհետաքրքրին իրենց զավկի կրթութիւնամբ:

Այս բոլոր պարագաներուն թեև ընտանիքին մեջ կամ ընտանիքին շուրջը եղող շատ ուրիշ անձեր այս կամ այն չափով գուցե կարողանան մասամբ թեթևացնել ծնողներու թողած բացը և պատճառած վնասը, բայց լիովին բուժել և փոխարինել չեն կրնար երբեք: Փոքրիկը դիցուք և անվար կրթութեան ճամբաներով կամ հետագա դպրոցական կրթութեամբ կամ ինքնօգնութեամբ ճողոպրիլ կարողանա մասամբ իր ստացած վնասեն կամ սրբագրել կարողանա իր թարմ մանկութեան գնչ ազդեցութիւնները ու գնչ օրինակները, բայց և այնպես ընտանեկան կրթութեան կցված այս խոշոր թերացումները չեն դադրիր խոշոր բացեր ըլլալե և հաճախ այն աստիճան ընդգծված կըլլան, որ կմղեն խիստ քննադատութեան, բողոքի ու ըմբոստացման:

Ինչքան ատեն որ դյուղական նահապետական ընտանիքն է տիրողը ժողովուրդի մեջ, ընտանիքը բազմանդամ է, ուրեմն և մանուկը մեկ կամ երկու բացառիկ անձերու ազդեցութեան չի ենթարկված, այլ ամբողջ այդ բազմանդամ ընտանիքին, ուր շատ են բնականաբար և փոքրիկները, որոնք իրենց հատուկ կյանքով կապրին, հոր ու մոր թերութիւնները զգալի չափով կչեզոքացվին: Ո՛չ միայն դյուղական ընտանիքը բազմանդամ է, այլև սերտորեն կապված է իր ղրացի ու համադյուղացի մյուս ընտանիքներու կյանքին, փոքրիկները շատ ավելի լայն շրջանակի մը մեջ կմեծնան, կմեծնան դյուղին մեջ, դյուղի բոլոր երեխաներուն հետ, դյուղի ընդհանուր հոսանքով և կենթարկվին դյուղի ընդհանուր ոգիին, որով կսքողվի պակասավոր ընտանիքին թերութիւնը, և կտկարանա իր ըրած գնչ ազդեցութիւնը:

Պայմանը կփոխվի, երբ ընտանիքը քաղաքը կապրի, հողային տնտեսությունը կփոխարինվի դրամական տնտեսությամբ, և բազմանդամ ընտանիքը իսկույն կբաժնվի իր բաղադրիչ մասերուն. եղբայրները կզատվին իրարմե, և ընտանիքը կփոքրանա, Հորն ու մորը ազդեցությունը կրթական գործին մեջ կդառնա չափազանց տիրական, և իրենց թերի ու վնասաբեր կողմերը խիստ կշեշտվին ու աչքի կիյնան: Եվ ասոր դեմն է ահա, որ կսկսի բողոքը: Մնողներու գեշ ազդեցութենեն, ջղայնություններեն, գինեմոլութենեն, կռվզտուքեն, տգիտութենեն, անհասկացողութենեն, նախապաշարումներեն և այլ բազմատեսակ հոգեկան ու բարոյական պակասություններեն և ախտերեն ազատելու համար նոր սերունդը՝ ծայրահեղության տանող քննադատները կպահանջեն, որ ընտանիքը իրավունք չունենա իր զավակները ինքը կրթելու և մեծցնելու. այդ հոգը, –կըսեն,– պետք է ստանձնե պետությունը:

Եվ ավելի ևս ուժ տալու համար իրենց տեսակետին կընդգծեն, որ ընտանիքներուն մեջ հետզհետե զավակներուն թիվը պակսելու վրա է, և փոքրիկը շատ հաճախ զրկված կմնա բոլորովին հասակակիցներե և մինչև վերջը կապրի մեծերու շրջանակին մեջ, կլսե, կդիտե ու կկապկե մեծերը: Մանկականը կթոռմի, երեխան կդառնա վաղահաս, արվեստական ու թուխթականման, «մեծցած, մեծցած, պզտիկցած», – կըսե ժողովուրդը այս տեսակի պզտիկներուն:

Եվ վերջապես կշեշտեն, որ ինչպես ամեն բանի մեջ, կրթական գործին մեջն ալ պետք է աշխատանքի բաժանում մտցնել գործը կատարելագործելու և ազնվացնելու համար: Անմիտ բան է, – կըսեն,– որ մարդ, ամեն հայր ու մայր, շնորհք կամ հակում ունի թե ոչ, պարտավոր ըլլա կրթության նման նուրբ ու բարդ գործ մը ստանձնելու միմիայն անոր համար, որ դարձած է հայր կամ մայր, և ան ալ մանկան ամենեն ավելի զգայուն ու տպավորող տարիներուն մեջ:

Այնպես որ,– կառաջարկեն,– փոխանակ անհոգ, անկարող կամ տգետ Հորն ու մորը քմայքին թողնելու՝ ամեն նորածին հանձնվի իսկույն հատուկ պետական մանկանոցներու, որոնք օժտված կըլլան անշուշտ գիտական վերջին հարմարություններով, և ուր կահին ու կզարգանան փոքրիկները հատկապես այդ գործով

ղբաղվող և ատոր համար մասնագիտորեն պատրաստված կանանց ձեռքին տակ:

Այս պարագային կազատին նաև ծնողները, մանավանդ կանայք իրենց ծանր ու ավելորդ բեռնեն, խոհանոցի ու մանկանոցի գերութիւններն և լայն չափերով կնվիրվին իրենց սիրած ղբաղումներուն, արհեստին, դիտութեան, գեղարվեստին և ամեն տեսակի հանրային ու պետական ծառայութիւններու ըստ իրենց բնական հակումին և հաճույքին:

Զավակները մեծցնելու պարտավորութենեն ազատվիլը կուտա ամուսնութիւններուն մեծ դյուրութիւն ամուսնական կապերը խզելու, ամուսնական կյանքն ավելի առողջ կղառնա: Կինը համեմատաբար ավելի ազատ ու անկախ կղառնա, որով և քիչ-քիչ կվերանան ընտանիք կազմելու ատեն սովորական եղող կողմնակի հաշիվները, ասպարեզը կմնա հոգեկան ու բնաղդական բնական ընտրութեան, որով և արագ կերպով կաղնվանան ու կբարձրանան մարդկային նոր սերունդները, ուրեմն և մարդկութիւնը ինքը:

ՍՐԲԱԳՐԵԼՈՒ ՊԵՏՔԸ

Ա. Ա՛ս է աղվոր երազը: Եվ մտածումներու այս չարքին մեջ ճշմարիտ բաներ կան անշուշտ, բայց այս առաջարկը ինքը էապես կինչանակե ո՛չ թե ընտանիքը առողջացնել, այլ սպաննել. ինչի՞ է պետք ընտանիքը առանց երեխայի. ընտանիքը առաջացած է սերունդներ հասցնելու համար, այդ պարտավորութիւնը անոր վրայեն վերցնելուդ պես ընտանիքը այլևս գոյութեան իրավունք չունենար. լավագույն պարագային կղառնա սեռերու ավելի կամ նվազ տևական կենակցութիւն մը, որ հանրային տեսակետեն ո՛չ մեկ արժեք չունի:

Իսկ մեր արդի ըմբռնումները, պատմութեան մինչև հիմա բերածը և մեր հիմնական ընկերական ամբողջ հյուսվածքը այնպես կապված է ընտանիքի գոյութեան հետ, որ մարդս չի կրնար հաշտվիլ, թե այդպես մեկ զարկով ընտանիք ըսվածը մեջտեղեն վերանա: Ամեն պարագայի ատոր նման բան մը իրականանալ կարողանալու համար նախ պետք է հիմնական փոփոխութեան ենթարկվին մարդկային աշխատանքի ու տնտեսութեան պայմանները, ընկե-

րական հյուսվածքը և ատոր կապված կնոջ դերն ու դիրքը: Այս բոլոր փոփոխություններուն հետ անշուշտ որ ընտանիքն ալ կունենա իր կրելիք փոփոխությունները, պայմանով, որ խախտենք իր գոյության հիմքը, որ է իր կարևոր մասնակցությունը նոր սերունդներու կրթության գործին մեջ:

Կրթության որոշ մաս մը ամեն տեսակի ընկերական պայմաններու մեջ ընտանիքի հետ հյուսված պահելը ունի իր ընկերաբանական խոր իմաստը: Ինչպես որ ամեն մեկ անձի անհատական գծերն ու կողմերը չատ թանկագին դանձ մըն է մարդկային քաղաքակրթության զարգացման համար, և ատոր վրա է հիմնված կյանքի, հոգիի ու գործունեության հարստությունն ու բազմատեսակությունը, այդպես ալ ընտանիքները տեսակ մը ընկերական անհատականություններ են իրենց ուրույն գույնով, բույրով, զգայական ու մտածական առանձնահատկություններով և ապրելու եղանակով: Առողջ ու ներդաշնակ ընտանիքը ունի միշտ իր առանձին դիմագիծը, իր շեշտված կողմերը, իր չնորհքն ու հրապույրը: Մեծ կորուստ մը կըլլար մարդկային ընկերության համար այդ բոլորի չքացումը: Ճիշդ այնպես, ինչպես որ ազգերը մարդկային մեծ համախումբին մեջ իրենց լեզվի, բարքի, ըմբռնումի, բնազդներու, ճաշակի ու հակումներու բազմակի առանձնահատկություններով իրարմե տարբեր ամբողջություններ են, և զրկել մարդկությունը ազգություններու գոյութենեն և վերածել ամենքը մեկ տեսակի մարդկության մը նույն լեզվով, նույն բարքով և նույն հոգեկան հակումներով, կնշանակե աղքատացնել մարդկության ապրումներն ու զգացումները, մտածումները, իղձերն ու թռիչքները, և որուն դեմ կըմբոստանա մարդկային հոգին:

Գեղեցկությունը, զարգացումը, ձևերու ու տեսակներու հարստությունն ու աղնվացումը կստացվի բազմատեսակության ճանապարհով, բազմագույն և բազմաձև տարբերություններու մրցումին մեջեն: Գործարանավոր մարմիններու բնաշրջումը ատոր վրա է հիմնված, քաղաքակրթության զարգացումն ալ ատոր վրա է հիմնված. ընկերական կյանքն ալ մեկ ձևն է բնության:

Այնպես որ ազգությունը, ընտանիքը և անհատականությունը ջնջելու հակաբնական ու անպտուղ առաջարկներու փոխարեն մարդկային միտքն ու ջանքերը պետք է կեդրոնացնել ամեն երևույ-

թէ թերի կողմերը հղկելու, հիմանդագին վիճակները սրբագրելու աշխատանքին վրա, որ և քաղաքակրթական զարգացման բնական ուղին է: Եղածը ջնջելու ու քանդելու առաջարկները նեղլիկ ու տկար, բայց մոլեռանդ մտքի ծնունդ են: Առողջ հոգին և ստեղծագործ միտքը քանդելու մասին չի խորհիր, այլ շինելու, կճգտի նորը, լաւը, աւելի լաւը ստեղծելու: Երբ նոր ձևեր, նոր հաստատութիւններ կաստեղծվին, հիներուն մնջեն ինչ որ ջնջվելու և ինչ չափով որ ջնջվելու է, արդեն ինքնին կջնջվի առանց վայրենի ավերածութեան, բնական ընկրկումով ու տեղի տալով ուժեղ ու արժեքաւոր նորութեան առջև: Իսկ ինչ որ դեռ կենսունակ է ու պիտանի, կմնա ու կաւե նոր եկածին քովը՝ հարմարվելով ու ներդաշնակվելով նորին:

Ընտանիքի առողջացումը, ուրեմն և ընտանեկան կրթութեան բարձրացումը կապված է ամենեն առաջ ժողովուրդներու քաղաքական ու տնտեսական առողջացման հետ. անջատ ու մեկուսի հարց մը չէ: Քաղաքական, բարոյական ու տնտեսական ընդհանուր հիվանդվախ մեր պայմաններուն մեջ բնականաբար ընտանեկան կազմակերպութիւնն ալ իր վրա պիտի կրե շատ մը հիվանդ կողմեր:

Բ. Ընտանեկան կյանքի հիմնական առողջացումը թողնելով ուրեմն մեր ընկերական կյանքի ու պայմաններու ընդհանուր զարգացման բնական ընթացքին՝ մտածենք ինչ որ կարելի է ընել ու սրբագրել մեր արդի իրականութեան, մեր արդի պայմաններուն մեջ:

Ընտանիքներու կրթական արժեքը բարձրացնելու համար անհրաժեշտ է ամենեն առաջ, որ ամուսնացող զույգերը քիչ մը ավելի բարձր ուսում ունենան. կարելի չէ բավականանալ նախակրթարաններու տված վեց-յոթ տարիան պարտադիր ուսումով, պետք է ամենքը առնան միջնակարգ կոչվող կրթութիւնը, ամենքը պետք է հասնին մինչև համալսարանին դռները, որ քիչ մը ավելի միտքերը դիտական դառնան, և կյանքի երևույթներու ըմբռնումը քիչ մը ավելի խորանա:

Երկրորդ՝ այդ պարտադիր և ամբողջապես միայն կրթութեան նվիրված տարիներեն ետքը պետք է լուրջ կազմակերպել ինքնակրթութեան գործը: Եվ այդ ինքնակրթութեան մշակված ծրագիրներուն մեջ հատուկ ուշադրութիւն պետք է առնվին այն ուսումները,

որոնք սերտ կապ ունին նոր սերունդներու զարգացման գործին հետ, այսինքն քիչ մը ավելի խոր ծանոթություն կենսաբանության, առողջապահության, հոգեբանության, մանկավարժության, մանկատածության: Վերջին տասնամյակներու ընթացքին այս ուղղությամբ ջանքեր կկատարվին զանազան ժողովուրդներու մեջ ժողովրդականացված գիտական երկերով, բայց դեռ շատ ցրիվ ու թերի է այդ բոլորը, ո՛չ հարկ եղած լրջությամբ ու պարտադրանքով: Դուցե ծիծաղելի հնչե, եթե ըսեմ, որ հասարակության գերագույն օգուտը իրավունք ունի պահանջելու, որ ամուսնանալ ուզող զույգերը այս ուղղությամբ որոշ քննության մը ենթարկվին ու վկայական ստանան. շատ ավելի երկրորդական պաշտոններու համար կպահանջվի այդ քննությունն ու վկայականը:

Երրորդ՝ նույն նպատակով շատ օգտակար դեր մը կրնա կատարել նոր ընկերության մը հիմնարկումը պետական հակակշռի տակ, արդի Կարմիր խաչի կազմակերպության նման բան մը, տեսակ մը «Կրթության քույրերու ընկերություն», որուն գործուն անդամ կրնան ըլլալ միայն այն կիներն ու օրիորդները, որոնք դոնե ունին վերը հիշված կրթությունն ու ընթերցումը, եթե ոչ ավելին: Ամեն շրջանի ու կեդրոնի մեջ ընկերությունը կունենա իր մեջեն իսկ ընտրված ու վճարվող քույրեր, որոնք փորձառություն ունին ու կշրջին շարունակ իրենց շրջանին մեջ, հարաբերություն կպահեն նոր կազմված երիտասարդ ամուսնական հարկերուն հետ և կօգնեն դեռատի կնոջ և դեռ անփորձ մայրերուն ամեն տեսակի խորհուրդներով, ցուցմունքներով, գործնական այլ միջոցներով, որոնք կվերաբերին սեռական առողջապահության, մանկատածության, մանկավարժության և ընտանեկան բազմատեսակ նման հարցերու, հարկ եղած ժամանակ կմատակարարեն նաև որոշ նյութական օժանդակություն, բժիշկ, դեղեր, գրքեր: Այսինքն պատրաստված, փորձված, ապրած և հիմա ամբողջովին այս գործին նվիրված կանայք, որոնք տունե տուն պտտցնեն իրենց գիտական ու գործնական աջակցությունը և կռվին տգիտության, նախապաշարումներու ու անտեղյակության դեմ: Այդ ընկերությունը կրնա բնականաբար կազմակերպել նաև նույն նպատակին ծառայող դասախոսություններ, ցուցահանդեսներ և խոհանոցի, մանկանոցի

և ընտանեկան կրթութեան վերաբերող նկատելիք չուրջ դասընթացներ:

Զորրորդ՝ բնութեան գրկին մէջ, ապրուստի ու խաղի ամեն հարմարութիւններով օժտուած ընդարձակ հողերու վրա հիմնել դիշերօթիկ դպրոցներ հասունցող տարիքի բոլոր շրջաններուն համար:

Անհատի մը համար մեծ կորուստ մըն է իր ընտանիքեն կտրուած ապրիլը: Ընտանեկան ներքին մտերիմ կեանքը ունի առօրեա թանկագին հարաբերութիւններ, ապրումներ, զգացումներու շփում, լուրջ ու կատակ դէպքեր ու տպաւորութիւններ և այդ ամենուն թողած հիշողութիւնները, որ ընտանեկան կեանքի քաղցրութիւնն ու հրապոյրը կկազմեն: Հայրն ու մայրը, քոյրերն ու եղբայրները, ամեն մեկը իրենց հատուկ գծերն ունին, իրենց հատուկ դրաւչութիւնն ու իրենց հատուկ մտերմութիւնը, որոնց օր օրի ազդեցութենեն ու կենակցութենեն եթե դուրս ապրեցար, կնշանակէ այդ բոլորը չապրեցար: Եվ ամեն տարիք իրեն հատուկ շփումներն ու ապրումներն ունի ընտանեկան, որով հին ապրումները այս օրվանը փոխարինել չեն կրնար. հարազատներեդ բաժնըվելեն մինչև նորեն անոնց միանալը բաց մըն է, կորուստ մը, և նորեն հանդիպումն ալ հինի չարունակութիւնը չըլլար. երկու կողմերն ալ տարբեր կեանքերով են ապրած. նորեն նոր կապեր պիտի հաստատուին նոր հարազատութիւն մը առաջացնելու համար, այսինքն կատարվի կտրուած մտերմութիւն մը, տեսակ մը իրարու վակցված հարազատութիւն մը, որ ամբողջական չէ և արհեստական շաղար մը ունի իր վրա:

Ով ունի իր տաք ու բնական ընտանի բոյնը, անտարակոյս իրեն համար ամենեն մեծ ու անփոխարինելի բաղդավորութիւնն է՝ առանց այդ բնական ջերմութենեն զրկվելու հասակ քաշե և ստանա իր ուսումը. գուցե երթան միշտ իրենց հասունացման տարիներուն և՛ ընտանիքի մտերիմ կեանքը, և՛ դպրոցի ընկերական կեանքը՝ երկուքն ալ թանկագին և իրար լրացնող և իրարմով ավելի խորութիւն ու արժեք ստացող: Բայց երբ ատիկա անկարելիութիւն մըն է, կամ երբ ընտանիքը հիվանդ վիճակ մը ունի հոր և մոր որևէ պակասութիւնեմբ ու տկարութիւնեմբ, կամ ամուսնական աններդաշնակ հարկ մըն է, հարցը անշուշտ կփոխվի, և անշուշտ

որ դիշերօթիկ կրթարանը կդառնա անհամեմատ բարձր ու ազատարար միջավայր մը:

Արդի դիշերօթիկ դպրոցներու մյուս կարևոր պակասությունը հակառակ սեռի ներկայութենեն և ազդեցութենեն զրկված մնծնալն է: Թե՛ մանչ, թե՛ աղջիկ կդառնան անբնական կերպով ամաչկոտ, չարժուամներու և խոսքի չատ աչքի իյնող անհամարձակություն մը կատանան, կդառնան չատերը քաշված, իրենք իրենց մեջ կծկված: Կասկրին երազներու աշխարհի մը մեջ, ոտքը կտրած իրականեն, մյուս սեռը կդառնա անհասելի, անմերձենալի, մշուշներու հետևեն խորհրդավոր ու քաշող մագնիս մը, չափազանց իտեալացումը և տևականորեն երևակայություններու մեջ ապրիլը և կնոջական կամ այրական բնական գծերը չճանչնալը սխալ ու ծայրահեղ ըմբռնումներու կտանի պատանին ու պատանուհին և ետքն ալ պատճառ կդառնա անտեղի հիասթափություններու և մեկ ծայրահեղութենեն կնետե մյուս ծայրահեղությունը, ու կիյնան անսանձության գիրկը: Եվ ընդհանրապես բնավորություննները կդառնան ավելի չոր ու ձախլիկ:

Այս ամենը չիտակ է և այս ամենը մեծ թերություն է արդի դիշերօթիկ հաստատություններուն, որոնք միասեռ են միշտ և կուսակրոններու ձեռքի տակն են ընդհանրապես: Հիմնապես կտարբերի պայմանը, երբ դիշերօթիկ կյանքը կցված է ուսումը միասին ավանդող երկսեռ դպրոցի և ուսուցչական ընտանիքներու խնամքին ու հսկողության տակ: Տղաքը կունենան իրենց հարկաբաժինը իբրև ննջարան ու հանգստարան, աղջիկներն ալ՝ իրենց հարկերն ու բաժանմունքը, ամեն մեկը իր սեռի հսկողներու և վարիչներու խնամքին տակ: Իսկ իրենց ուսման պահերը, խաղի պահերը, ինչպես և սեղանն ու սերտարանը կունենան ընդհանուր, կըլլան միասին երկու սեռի ուսուցիչներով և անոնց ընտանիքներու մշտական ընկերակցությամբ և կենակցությամբ: Ով առանձնանալու պետք զգա, կունենա իր հարկաբաժնին մեջ բոլոր հարմարությունները: Այս տեսակ դիշերօթիկ կրթարանը, այսպես ըսեմ՝ ընտանիք-դպրոցը, չի կրնար փոխարինել հորն ու մորն ու հարազատներու ներքին ջերմությունը, բայց կըլլա անշուշտ ամենեն ավելի առողջ ու բնական միջավայրը, երբ ընտանիքը ինքը չունի այդ առողջությունը:

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՀՈԳԵԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՄԱՐՄՆԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ, ՄԿԱՆՆԵՐՈՒ ԵՎ ԿԱՇՎԻ ԽՆԱՄՔԸ

Կրթության առարկան մարդկային կարողություններն են. այդ կարողություններու զարգացման գործին մեջ ղեկավար կրթության ընել կրցածը ամփոփելու և դասավորելու համար կրնանք մարդկային բոլոր կարողությունները խմբել երեքի, որով կստանանք մարմնական կարողություններու կրթությունը, մտավոր կարողություններու կրթությունը և զգացումներու կրթությունը:

Մարմնի կրթությունը կձգտի ներքին գործարաններու առույգ ու ներդաշնակ գործունեության, մկաններու նուրբ ու բազմազիմի գործածության, կաշվի խնամքին և սեռական կյանքի բնական զարգացման:

Ներքին գործարաններեն մասնավոր կերպով ենթակա են արտաքին կամավոր ազդեցության երեք դրությունն՝ մարսողական դրությունը, շնչառական դրությունը և շրջանառական դրությունը:

Մննդառական ու մարսողական տեսակետեն ղեկավար կրթության կրցածը հետևյալ շատ կարևոր առողջապահական պահանջներու հետապնդելն է. 1) Խուսափիլ կլխախակ պտուղներեն, համեմներեն և չափազանց յուղոտ կերակուրներեն, առօրյա զբաղչռությունը տալ կանաչեղենի, պտուղներու և թեթև պատրաստված ուտելիքներու: 2) Մեկ անգամեն շատ բան չուտել. նախընտրելի է օրվան ընթացքին քանի մը անգամ և քիչ-քիչ սնունդ ստանալը. ամենեն աղեկը օրական հինգ անգամ՝ ակրատ, նախաճաշիկ, ճաշ,

նախընթրիք և ընթրիք 7, 10, 1, 4, 7 ժամերուն: 3) Մնունդ ստանալ միշտ միևնույն որոշ ու հաստատ պահերուն և այդ պահերեն դուրս երբեք ոչինչ չուտել, շաքարն ու քաղցրեղենը տալ փոքրիկներուն միայն կերակրի վրայեն: 4) Վարժվիլ ամեն կերակուր ուտելու: 5) Ուտելեն ետքը գոնե ժամ մը ո՛չ ուժեղ խաղեր, ո՛չ ալ լուրջ մտավոր աշխատանք: Լեցուն ստամոքսով պառկելու չերթալ և մանավանդ լողանալու չերթալ: 6) Ոգելից ըմպելիները ամեն պարագայի հաստնցող տարիքի համար չեն. գինին ու գարեջուրը շատ ուշ-ուշ և շատ քիչ քանակութեամբ՝ պարզապես արգելված ըլլալու հրապույրը վրայեն վերցնելու համար:

Շնչառութեան վերաբերմամբ ղեկավար կրթութեան ընել կրցածը հետևյալ պահանջներուն հետապնդումն է. 1) Քալելու և նստած ատեն վարժեցնել, որ միշտ կուրծքն ու գլուխը շիտակ ու բարձր պահեն: 2) Հնար եղածին չափ շատ գտնվիլ բաց օդի մեջ ո՛չ միայն խաղերու, այլև աշխատանքի պահերուն: 3) Սենյակներուն և սրահներուն մեջ մեկ կողմի լուսամուտները բաց ըլլան, կա՛մ ամբողջովին, կա՛մ գեթ լուսամուտներուն վերին մասերը, իսկ երբ հարկադրված ենք առժամանակ մը բոլորովին գոցելու, շուտշուտ պետք է մաքրել օդը: 4) Քունի ատեն միշտ մաքուր օդի մեջ, բայց պաշտպանված օդի հոսանքեն. ամենեն լավն է լայն բաց պահել ննջասենյակի դուռը և կից սենյակին պատուհանները: 5) Ամենօրյա քանի մը թեթև մարմնամարզական շարժումներով ու խաղերով վարժեցնել խոր արտաշնչելու: 6) Զծխել երբեք, ո՛չ իսկ խաղի համար:

Շրջանառութեան վերաբերմամբ ղեկավար կրթութեան տալ կրցած նպաստն է. 1) Ազատ ընթացք տալ հաստնցող տարիքի շարժման պահանջին՝ վազել, ցատկել, նետել, խաղալ՝ զգուշացնելով միայն չափազանցումն, վտանգ ու աղտոտութենե: 2) Խուսափիլ ամեն կերպով նստուկ կյանքե և՛ տղոց համար և՛ աղջիկներու, նստուկ աշխատանքներն ալ միջակիտել խաղերով, մարզանքով և պտույտներով: 3) Ամենօրյա թեթև քանի մը մարզական ձևերով ու խաղերով օգնել ներքին գործարաններուն մեջ արյան ազատ շրջանառության: 4) Վարժվիլ ընդհանրապես թեթև հագուստի, առանց ճգնավորի չափազանցութիւններու և ընդհանրապես վարժեցնել մարմինը ցուրտի ու տաքի և անոնց փոփոխութիւններուն:

Եվ 5) Հաճախակի պաղ լոգանքներ կամ գոլ ջրով, ցնցուղի տակ կամ բնութեան:

Գալով մկաններու կրթութեան՝ նախորդ պահանջներուն մեծ մասը մկաններու միջոցով կկատարվին և նաև ի նպաստ մկաններու են. վրան ահա պետք է ավելցնել քանի մը ուրիշներ ալ. 1) Որոշ խաղեր ու մարզանք՝ հատուկ որոշ մկանային խումբերու զարգացումը աչքի առջև ունենալով: 2) Կազմակերպել կամ ընել զանազան տեսակի տան, արհեստի ու պարտեզի աշխատանքներ ու գործեր, որոնք ճկունութիւն ու ճարպկութիւն կուտան մարմնին: 3) Վարժեցնել դէմքի ու մարմնի նուրբ արտահայտութեան, պարի, պլաստիկ պարերու, վայելուչ կեցվածքի ու շարժուձևերու, ինչպես և իմբական պատկերացումներու, շարժուձևերու և պարերու: 4) Վարժեցնել գնդակներով, այլ առարկաներով և զենքով խաղերու հատկապես մարմնին դյուրաթեքութիւնը, դիմացկունութիւնը և նշանառութիւնը զարգացնելու համար, հարվածի ու ցատի սորվեցնելու համար, համառութեամբ դիմադրել սորվեցնելու համար: 5) Կազմակերպել նույն նպատակով երկար պտույտներ, վերելքներ, լողալ և զանազան տեսակի ուժը լարող և ուժը վորձող մրցանքներ: 6) Հատկապես ուշ դարձնել մատներու ճարպիկութեանը ամեն տեսակի առիթներով և իրերով նոր-նոր բաներ շինելու ու ձևակերպելու՝ հյուսել, կարել, ձևել, կտրել, ծեփել, կոփել, կառուցել, նկարել, նվագել:

Ինչ կվերաբերի կաշվի խնամքին՝ 1) Առաջին պայմանը մաքրութիւնն է, որուն պետք է խիստ հետևիլ և խիստ վարժեցնել, դէմք, մազեր, ակռա, քիթ, ականջ, ձեռք, ոտք, եղունկ և ընդհանրապես ամբողջ մարմինը, սովորութիւն պետք է դառնա օրական քանի մը անգամ ձեռքերը օճառով լվանալը, ամեն օրյա մարմնի մասնակի լվացումներ և քանի մը օրը անգամ մը տաք ջրով ընդհանուր լոգանք. այս մաքրութիւնը պիտի պահանջվի միշտ նաև ներքին ու արտաքին հագուստներուն, զենքերուն, իր առարկաներուն, իր անկյունն ու շրջանակին: 2) Որքան հնար է՝ մարմինը ենթարկել անմիջապես արևի ազդեցութեանը և ընդհանրապես թեթև հագուստներու միջոցով և մասնավորապես որոշ պահերու ու խաղերու առեն կիսամերկացումով, բայց գլուխը միշտ արևեն պաշտպանված թեթև, լայնեղր գլխարկով: 3) Սովորութիւն դարձնել անկողին

մտնելէ առաջ և անկողնեն ելլելու ատեն քիչ մը մերկ մնալ ու շարժվիլ սենյակի մաքուր օդին մեջ և ամեն առիթե օգտվիլ, որ մարմինը ազատ օդի հետ շփման մեջ ըլլա, պայմանով, որ նախապես մարմինը տաքցած ու քրտնած չըլլա: 4) Գլուխն ու ոտքերը վարժեցնել տաքի, պաղի ու խոնավի. մեծ առավելություն է բոպիկ ոտքերով և բաց գլխով պտտելը, եթե նախապես ոտքերն ու գլուխը տաքցած չեն: 5) Հաճելի ու օգտակար սովորություն մըն է նմանապես առտու-իրիկուն ամբողջ մարմինը ամուր սրբել չոր ու կոշտ սրբիչով մը:

Ինչպես դյուրին է ըմբռնելը, այս ամեն տեսակի առողջապահական կանոնները բոլորն ալ կապ ունին իրարու հետ և կազդեն իրարու վրա: Մասնավոր կերպով մկանային շարժումները և կաշվի խնամքը մեծ ազդեցություն ունին ներքին գործարաններու բարվոք աշխատանքին ու գործունեության վրա. ինչպես առողջության, այնպես ալ առույգության ու զեղեցկության մշտական աղբյուր են առոնք:

ՍԵՌԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկային գործարաններու և անոնց գործունեության բնական զարգացմանը նպաստելու մասին երբ կխոսվի, հատուկ տեղ պետք է տրվի նաև սեռական կյանքի հետ կապված հոգածության:

Ա. Մարդկային մարմինը ծածկելը շատ հինեն կուգա, քաղաքակրթության շատ վարի աստիճաններեն. մասնավորապես սեռական մասերու մերկութենեն խուսափիլը ընդհանուր քաղաքակրթական երևույթ է: Քաղաքակրթական երևույթ է նաև սեռական կյանքի մասին հասարակության մեջ չխոսիլը, և ինչքան բարձր է մարդուն քաղաքակրթական աստիճանը, ինչքան նուրբ է ու կիրթ իր հոգին, այնքան ավելի չեշտված կըլլա սեռական կյանքի հետ կապված իր ապրումներու, զգացումներու և մտածումներու մասին չխոսելը. աս ալ տեսակ մը հոգեկան մերկություն է, ուրկե քաղաքակիրթ մարդը չախորժիր ու կլուծ. դռեհիկ ու ճաշակի հակառակ կզգա այդ ապրումներու մասին խոսիլը և անպարկեշտ, քանի որ միայն իրեն չեն վերաբերիր առոնք, այլև ուրիշի մը: Սեռական ամոթխածությունը քաղաքակրթության բերած բնական ու ազնիվ

զգացում մըն է և այդ ամոթխածութեան դեմ չէ, որ պետք է պայքար մղվի, ինչպես որ աչքն ու ձախեն երբեմն կլսվի, այլ ընդհակառակը, այդ ամոթխածութեան տկարացման դեմ, որ նշան է բարքերու կոպտացման և որ վերջերս շատ զգալի է ինչպես խոսքի, այնպես ալ մանաւանդ գրական ստեղծագործութիւններու մէջ:

Բայց սեռային ապրումներու և զգացումներու մասին չխոսիլ չի նշանակեր այդ ապրումներն ու զգացումները դէշ, ստորին ու աղտոտ բաներ նկատել. սեռական կեանքը իր բոլոր կողմերով ո՛չ դէշ, ո՛չ կեղտոտ, ո՛չ ալ ստորին ոչինչ չունի իր վրա. ընդհակառակը, կեանքի խթանն է անիկա և մարդկային հարատեւութեան անհրաժեշտ պահանջը՝ շատ խոր հուզումներու, հոգեկան տառապանքներու և հաճոյքներու հիւսւած: Մարդս շատ նախապաշարված կամ շատ անմաքուր գլուխ մը պիտի ունենայ սեռի ու սիրո հետ կապված խնդիրներուն մէջ կեղտոտութիւն կամ ստորնութիւն տեսնելու համար:

Բայց ամոթխածութիւնը իր իմաստը կկորսունցնէ և դժբաղդ ու վնասակար վախկոտութիւն մը կդառնա, երբ ծնողք ու դաստիարակ, որոնք հասունցող սերունդի կրթութեան պարտաւորութիւնը ունին իրենց վրա, չեն համարձակիր որևէ բան խոսելու, որևէ բացատրութիւն, որևէ խորհուրդ տալու սեռական հարցերու վրա ու կլռեն: Ծնողները իրենց պարտաւորութիւնը կնետեն դպրոցին վրա, դպրոցը իր պարտաւորութիւնը կնետե ծնողներուն վրա, և երկուքն ալ փախուստ կուտան տգէտ ու ողորմելի կերպով, մինչև բնութիւնը տարեցտարի կգործէ, կարթնցնէ գործարաններ, զգացումներ, որոնումներ, մտածումներ ու հարցեր, շատ խորունկ ու խորհրդաւոր խլրտումներ. շուրջը ամենքը սուտ-խոսլ են ու կլռեն: Չի լռեր միայն երևակայութիւնը, որ պատահական բառի կտորներէ, զանազան հայհոյանքներէ, կենդանիներու վրա կատարված դիտողութիւններէ կչինա ամբողջութիւն մը կերտել. օգնութեան կուգան վեպերը իրենց ըսված ու չըսված նկարագրութիւններով և նշանաւոր բազմակետերով. օգնութեան կուգան մանաւանդ ընկերները իրենց կասկածելի իմաստութեամբ՝ ընդհանրապես դէշ աղբիւրներէ քաղված, ուրեմն և դէշ ոգիով քաղված: Եվ հետևանքը կըլլա այն, որ հասունցող սերունդը կաճի, կմեծանա ու կդառնա «կրթված» ահագին մարդ և իր մարմինը մորակող ու

իր հոգին խռովող այդ սուր ու կարևոր հարցերուն վրա կա՛մ չնորհքով ու ազնիվ բան մը չգիտնար, կա՛մ կգիտնա սեռական կյանքի ծուռ, ախտավոր և իրապես անմաքուր տեսակը: Եվ այդ թշվառ պաշարով, այդ ողորմելի անտեղյակութիւնով, այդ գրգռված երևակայութիւնով և չզարգացած կամքով ինչքա՜ն, ինչքա՜ն անուղղելի սխալներ կկատարվին, որ իր հետքը կթողնե տղու ու աղջկա ամբողջ կյանքին վրա: Ինչքա՜ն սայթաքումներու, հիվանդութիւններու, հոգեկան տառապանքներու և ընտանեկան դժբաղդութիւններու առջևը հնարավոր կըլլար առնելը, եթե տղաքն ու աղջիկները քիչ-շատ լուրջ ու առողջ ծանոթութիւն ստանային աստիճանաբար իրենց տարիքի առաջացման հետ սեռական առողջապահութեան, սեռական մաքրութեան, սեռական վտանգներու և սեռական ապագա կյանքի խոր ու բարձր կարևորութեան մասին, իրենց կազմին ու զգացումներուն վրա խաղալիքի մը պես չնայեին, այլ իբրև բնութեան մեծ օրենքի և հանրային հիմնական պարտավորութեան մը վրա, ուրկե կախված է նաև խոշոր չափերով իրենց անհատական բաղդավորութիւնը:

Բ. Այս բոլորեն պարզ է արդեն ինքնին, թե ինչ է ծնողներու և դաստիարակներու պարտավորութիւնը: Ամենեն առաջ մեկդի դնելով «արագիլի», «ժամկոչի» կամ «գնչու կնոջ»՝ անտառեն կամ երկինքեն երեխաներ բերելու տխմար պատմութիւնները՝ տեղը եկած պարագային առանց ավելորդ ծեքծեքումներու ըսել պարզորեն, որ ամեն երեխա իր մորը պտուղն է: Երբ երեխան կիմանա, որ իր մոր մարմնեն է առաջացած, ինչպես և ամբողջ տարի մը անոր ստինքեն է սնած, միայն ավելի խոր սեր և ավելի քնքշանք կզգա դեպի մայրը և մասնավորապես դեպի իր մոր մարմինը:

Սկիզբը բնականաբար կարիք չկա սեռերու կապի մասին որևէ բան ըսելու, քանի դեռ հասունցած չէ փոքրիկը, բայց երբ կմոտենա արբունքին, ինքնին կամաց-կամաց մեջ կուգա և այդ կողմը հարցի. շատ անգամ թռչուններու և կենդանիներու օրինակը կբանա տղոց աչքը. բույսերու բեղմնավորվիլն ու պտուղ տալը ամենեն հարմար ու չիտակ ճամբան է հարցին ավելի խոր կերպով մոտենալու: Ինչքան իրողութեան վրա նայիս իբրև կյանքի բնական օրենք, իբրև ծնունդի ու աճելութեան հիմնական պայման ձվիկի ու սերմնիկի

ճուլումը, և ինչքան պարզ խոսիս, մտերիմ ու առանճին, այնքան խնդիրը կդյուրանա: Եվ մանավանդ բոլորովին մեկզի պետք է դնել այն միջնադարյան քրիստոնեական, վանական տեսակետը, որ մարմնի, սեռի, ծնունդի ու կենսունակության հետ կապված ամեն բանի վրա արհամարհանքով կնայի իբրև գեշ բանի մը վրա. անշուշտ եթե սերը, սեռը և ծնունդը մեղք կնկատես և հանցանք, բնականաբար պետք է լռես, պետք է շատ ամչնաս, պետք է փախչիս կյանքեն ու քաշվիս « ճղնելու», այսինքն մարմնիդ ու հոգիիդ բնական օրենքներուն դեմ կռվելու:

Իսկ քանի հասուն տարիքին վերջին սահմաններուն կմոտենանք, այնքան սեռական երևույթները կդադրեն գիտական բացատրության և դասարանական ուսումնասիրության նյութ՝ կենդանական տեսակներու առաջացման, բնական ընտրության, ժառանգականության, սաղմնաբանության, համեմատական կենդանաբանության և բնախոսության դասերու ընթացքին: Եվ պետք է խոսվի միշտ գիտական լրջությամբ ու գիտական հատակությամբ: Հոս այլևս ամոթխածություն բնավ տեղ չունի: Ամոթի զգացումը, ինչպես ըսի, կապված է անհատական ապրումներու, անհատական զգացումներու, որոնց մասին խոսիլ չենք սիրեր, մանավանդ բազմության առջև, բայց երբ կխոսինք գիտականորեն և ընդհանուր կերպով ու աստիճանական վերլուծումով, այլևս քաշվելու պատճառ չի մնար:

Գ. Մնողներու ու դաստիարակի երկրորդ պարտավորությունն է հնար եղածին չափ պաշտպանել իրենց սանիկը վաղաժամ սեռական զրգիռներե: Շատ հաճախ ընկերներն են, որ իրարու ուշադրությունը սեռական զգացումներու կողմը կմղեն, երևակայությունը կհրահրեն և գեշ օրինակ կուտան: Գեշ ընկերոջ ազդեցությունը կգիտակցի ամեն ծնող ու դաստիարակ, և ճիշդ ատոր համար ալ ընկերներու ընտրության և ընտրված ընկերներու հետ անցուցած տեղին ու ժամանակին վրա մշտական հսկողություն պահելը ղեկավար կրթության բնական պարտականությունն է:

Կենդանի ընկերներեն եառը մեծ կարևորություն ունին վիպական երկերը, պատկերները և շարժանկարը, որոնք կվառեն երևակայությունը, կարթնցնեն զգացումները և ժամանակին առաջ փոքրիկներու հոգին սեռական խնդիրներով ու զրգիռներով կլեց-

նեն: Զգուշ ընտրանքով պետք է տալ գրքերը փոքրիկներուն ձեռքը և շատ ավելի զգուշ պետք է ըլլալ շարժապատկերի խիստ հրապուրիչ ներկայացումներուն հանդեպ, որոնք դոնե առայժմ դեռ շատ հեռու են մանկավարժական կրթական արժեքե. շարժապատկերը դեռ շահադիտական հաստատութիւն մըն է, և սեռական լարերուն դպչիլը ամենեն հաստատ միջոցը կնկատվի «լեցուն սրահ» ունենալու: Տղայական ու պատանեկան հասակին համար պետք է ներկայացվին բոլորովին ուրիշ տեսակի նյութեր ու խաղեր:

Բայց առանց ասոնց ալ միտքը ինքնին բնականորեն կերթա դեպի սեռական մտածումները և կսկսի ինքզինքը գրգռել, եթե լեցված չէ ուրիշ ավելի առողջ զբաղումներով: Տղոց հոգին պետք չէ առանց զբաղումի մնա. ծուլութիւնը և անգործութիւնը միշտ ալ եղած են «մայր ամենայն չարյաց»: Կա՛մ խաղ, կա՛մ ընթացիկ աշխատանք, կա՛մ առողջ ընթերցանութիւն, կա՛մ կենդանի ուրիշ զբաղում մը: Առողջ ընթերցման նյութ կկազմեն ընտիր գրական գեղարվեստական երկերը, պատմական ու կենսագրական երկերը. ճամբորդութիւններ, բնութեան հետ հյուսված պատմութիւններ և հանրամատչելի գիտական երկեր, գյուտերու պատմութիւններ: Բայց մեծ է մասնավորապես սեռական տեսակետեն շարժուն խաղերուն, զանազան արհեստներուն, պտույտներուն և արշավներուն դերը: Եվ ընդհակառակը, նստուկ կյանքը, հաճախ մինակ մնալը, մանավանդ մինակ ու պարապ մնալը, առտուները արթուն անկողնին մեջ մնալը, ասոնք բոլորը ճամբա կբանան սեռական տրամադրութիւններու, երևակայութիւնն ու արյունը հուզելու:

Առողջապահութիւնն ալ նույն պատճառներով կպատվիրե պզուշանալ շատ առատ սնունդե, համեմատոր սնունդե, խմիչքե: Տղաքը պառկեցնել միշտ միևնույն ժամին և ուտելե մեկ-երկու ժամ ետքը և սովորութիւն դարձնել արթննալուն պես անկողնեն դուրս ցատկելն ու լվացվիլը: Եվ անկողինն ալ ո՛չ շատ տաք ըլլա, ո՛չ ալ շատ փափուկ: Ընդհանրապես բոլոր մեղկացնող բաները ավելորդ զգայնոտութիւն կբերեն: Առողջութիւնը, չափավորութիւնը, ղիմացկունութիւնը, շարժումն ու զբաղումը և աշխուժը սեռական զարգացմանը բնական ընթացք կուտան և կպաշտպանեն անժամանակ հասունութենե:

Գ. Եվ երրորդ՝ երբ արբունքը կհասնի, այսինքն երբ սեռային

զիղձերը արտադրել կսկսին, ղեկավար կրթութեան վրա պարտականութեան կավելանա, որ տղուն ու աղջկան հասկցնեն անոնց մեջ կատարվող փոփոխութիւններուն իմաստը և արտադրվող նյութերուն գերն ու կարևորութիւնը թե՛ անհատի առողջական տեսակետեն, թե՛ իր ապագա կյանքի բաղդավորութեան: Անշուշտ աստիճանաբար, բայց անպատճառ չհշտելով սեռական մաքրութեան ու ինքնազսպումի անհրաժեշտութիւնը, զգուշանալով անհոգի ու անսեր կապերե, որոնք վնասակար ալ են ու վայրկյանի մը մեջ կրնան ամբողջ կյանքը թունավորել, բայց առանց սեռական հիվանդութիւններու ալ կստորնացնեն մարդուս հոգին, կնվաստացնեն իր արժեքը իր աչքին և սիրո վրա ալ կնային կոպիտ զգացումներով, քանի որ կոչնչացնեն սիրո հետ կապված բոլոր հմայքներն ու հոգևկան նուրբ ու անփոխարինելի հրապույրները: Պետք է ըմբռնել տալ, որ ինքզինքը՝ իր մարմինն ու հոգին մաքուր պահելը ներկայի մեջ իր հպարտութիւնը, իր բարձրութիւնը և իր հոգևկան թարմութիւնը պահել կնշանակե, սիրո գեղեցկութիւնն ու հմայքը պահել կնշանակե, իսկ ապագային ալ իր կազմելիք ընտանիքի բաղդավորութեան գրավականն է:

Այս բոլորի մասին տղան ու աղջիկը պետք է լսեն, պետք է կարդան, պետք է գիտնան, որ պաշտպանվին: Բնազդը ինքը շատերը կպաշտպանե անկումե ու այլաթաքումե, ծնողներու և չրջապատի զուսպ ու հնավանդ ըմբռնումները նույնպես մեծ ազդակ մըն է մաքուր մնալու և ինքնազսպումի: Բայց սեռական կյանքի էութեան և անոր դրած պահանջներուն հստակ գիտակցութիւնը անհրաժեշտութիւն մըն է միշտ: Այդպես ալ սեռային կյանքի հանրային կողմին պարզ ու խոր գիտակցութիւնը. ամեն անհատ պետք է ունենա առողջ զսակներ ունենալու և իր ցեղին ազնվացումին ու բարձրացումին նպաստելու հպարտ ըմբռնումը. պետք է ներշնչել հասնող սերունդներուն այս հանրային մտածումները:

Բ. ՄՏԱԾՈՒՄԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ամեն մտավոր գոյութեյան հիմքը զգայութիւններն են, այսինքն արտաքին կամ ներքին որևէ ազդակե մեր զգայարանքներուն ծայրը առաջացած գրգիռը, որ կհասնի մեծ ուղեղը և հոն

կզգացվի իբրև որոշ զգայութիւն մը, իբրև զանազան գոյներ, ձևեր, համեր, հոտեր, չոչափումներ, շարժումներ: Այդ զգայութիւններու միասին ստացված փունջերն են, որ կանվանենք մտապատկեր, և այդ մտապատկերներու իրարու կապվիլը և իրար արթնցնելն է, որ կզառնա պատկերավոր մտածում:

Մտքի զարգացման տեսակետեն մեծ կարևորութիւն մը կներկայացնե նախ այդ զգայութիւններու և մտապատկերներու ստացումը, այսինքն թե ինչ աստիճան հստակ ու խոր է եղած անոնց տպավորութիւնը. երկրորդ կարևորութիւն ունեցող հարցը անոնց վերարտադրութեան եղանակն է, այսինքն թե ինչ աստիճան ճիշդ, կենդանի ու դյուրին կվերարտադրվին անոնք մտքին մեջ. և երրորդ կարևոր խնդիրը այդ բազմաթիվ մտապատկերներու իրարու հետ ունեցած կապակցութիւններն են, այսինքն թե ինչ աստիճան թեթևութեամբ կամ դժվարութեամբ ատոնք իրար կարթնցնեն ու իրար կհաջորդեն մտքին մեջ: Այս պատճառով ալ զգայութիւններու և մտապատկերներու առաջացումը, անոնց վերարտադրութիւնը և անոնց իրար զուգորդումը կզառնան ղեկավար կրթութեան հոգածութեան առարկան:

Ա. Ինչ կրնա ընել ղեկավար կրթութիւնը զգայութիւններու և մտապատկերներու հստակ դրոշմումին նպաստելու համար:

Պետք է միշտ չանալ մանուկի կյանքին առաջին իսկ տարիեն, որ ան նկատե, զանազանե ու դիտե իրեն ներկայացող իրերու, առարկաներու չափը, ծանրութիւնը, գույնը, ձևը, դիրքը, շարժումը, ուղղութիւնը, ձայնը, որ անոր համար սովորութիւն զառնա բոլոր զգայարանքներով, բայց մասնավորապես աչքով ու ձեռքով ամեն իրեն ներկայացող առարկաներու զննութիւնը, որ ան այլևս անկարող ըլլա անոնց քովեն անտարբեր անցնիլ և անոնց վրա ուշադրութիւն չդարձնել: Նկատելը, տեսնելը մյուս բոլոր հոգեկան կարողութիւններուն նման ենթակա է մշակման, վարժութեամբ ու կրթութեամբ կզորանա: Ուժեղցուցած կըլլանք մեր սանիկի անտարբերութիւնը, եթե ամեն տեսածի հանդեպ, եթե իր առջևի ու իր շրջապատի իրերու ու երևույթներու հանդեպ իր նկատելու, տեսնելու և դիտելու կարողութիւնը չմարզենք: Տեսնել գիտնալը, տեսնել կարողանալը չափազանց մեծ հատկութիւն մըն է և մեծ առավելութիւն մը հոգեկան զարգացման տեսակետեն և կյանքի

Հաջողութեան մէջ ալ շատ խոշոր դեր ունի: Ինչքա՜ն-ինչքաններն են, որ բաց աչքերով կույրերու կնմանին, ո՛չ բնութիւն կտեսնեն, ո՛չ ալ իրենց չուրջը հոսող կեանքին մեծագոյն մասը. գէշ տարված կրթութեան, միայն ուրիշներուն ըսածները գոց ըրած կրթութեան սովորական պտուղն է ատիկա: Շարունակ պետք է հետապնդել ու մատնացոյց ընել, որ նային, տեսնեն ու դիտեն, մշտական հարցերով պետք է առաջնորդել անոնց աչքն ու ձեռքերը և մյուս զգայարանքները և հաչիվ պետք է պահանջել իրենց տեսածի ու դիտածի մասին:

Պետք է կատարել տալ հատուկ փորձեր, մարզանք ու զանազան դիտողական խաղեր ու մրցանք: Սեղանին վրա բազմաթիվ և բազմատեսակ իրեր կշարվին, տղաքը վրան լուրջ ակնարկ մը նետելեն ետքը պիտի ըսեն՝ ինչ որ տեսան և ինչ մանրամասնութեամբ որ տեսան: Յուշց տալ պատկեր մը և հարցնել, թե ի՞նչ կտեսնես մանրամասն: Հանդեսե մը կամ հավաքութե մը նոր վերաղարձած հաչիվ պահանջել, թե ինչե՞ր տեսան ու լսեցին, ի՞նչ վիճակներու ու դիրքերու մեջ, ի՞նչ հաջորդականութեամբ, ի՞նչ փոխադարձ կապակցութեամբ: Կեցնել պատուհանին առջևը, բաց դռան դեմ, պատշգամը, բլուրի մը գագաթը և հարցնել, թե ի՞նչ կտեսնեն: Պուտյտե մը կամ տեղե մը դարձին պահանջել, որ նկարագրե իր եկած ճամբան, ճամբուն պատահարները և այն ամենը, ինչ որ ճամբան իր ուշադրութիւնը գրավեց: Համեմատել տալ նման կենդանիներ, ծաղիկներ, ծառեր, դեմքեր, դեպքեր, տեղեր ու խանութներ և ամեն տեսակի իրեր ու նյութեր:

Դիտողութիւնը մարզող ու սրող միջոց մըն է նաև զանազան առարկաներ ձևացնելը թուղթը կտրելով, թուղթը ծալելով, թուղթերը հյուսելով, զանազան գույնի թուղթեր իրար փակցնելով, թելեր հյուսելով, կավը ծեփելով, խմորով, մոմով, թուղթի վրա կարելով, կտորի վրա բանելով, ծակելով, չարելով, դարսելով, թաց դերձանով, վերջապես չոր ու թաց ներկերով, կավճով ու մատիտով: Բան մը շինելու, բան մը ձևացնելու ու նմանցնելու համար, բան մը նկարել կարողանալու համար պետք է դիտած ըլլաս. ձեռքի կատարած դերն ու վարպետութիւնը անշուշտ մեծ բան է, բայց հիմնականը լավ տեսած ըլլալն է: Ամբողջ կրթութեան ընթացքին անպակաս պիտի ըլլա հասնող սերունդին ձեռքեն մկրատը, ասեղը, ուրիչ զար-

ծիքներ և մանավանդ գույներն ու մատիտը: Եվ հատկապես մատիտը աչքի կրթութեյան ամենակարևոր գործիքն է, իսկ աչքի կրթութեյունը ամենեն կարևորն է մտապատկերներու ճշդութեյան ու պահպանման տեսակետեն: Պատկերավոր մտածումի համար մատիտը նույն դերը կխաղա, ինչ որ գրիչը կընե վերացական մտածումի համար՝ բառերով գործող հոգեկան կյանքի համար: Ամենանախնական մարդիկներեն և ամենաթարմ մանկական հասակեն սկսած չափազանց մեծ և բնազդական է նկարելու, նմանցնելու սերն ու պահանջը գրեթե ամենուն համար և մեծ սխալ մըն է այդ բնածին ձգտումը անխնամ ձգելը կամ արհամարհելը:

Բ. Գալով վերարտադրութեյան՝ զգայութեյուններն ու մտապատկերները որքան հստակ ու խոր ու տպավորված ըլլան հոգիին մեջ, այնքան ճիշդ, հստակ, կենդանի ու դյուրին կըլլա ընդհանուր առումով նաև անոնց վերստին կենդանացումը հարկ եղած ժամանակ. այնպես որ վերի պահանջները որքան ստացման, այնքան ալ պահպանման ու վերարտադրութեյան կծառայեն:

Հատկապես վերարտադրումը մարդելու համար այդ բոլորը պետք է կրկնել տալ աչքի առջևը չեղող, ձեռքին մեջ չգտնվող, այդ վայրկյանին իր զգայարանքներուն ենթակա չեղող իրերու, առարկաներու, շարժումներու ու տեսարաններու վրա: Ձևացնել խոսքով ու շարժումներով անցած դեպք մը, հին դիտված բան մը, ծանոթ պատմութեյուն մը: Շինել, ծեփել, կտրել, ներկել ու նկարել տալ աչքի առջև չեղող երկու ծանոթ իրեր, տեղեր, կենդանիներ: Նկարելեն, համեմատելեն ու նկարագրելեն ետքը բուն իրը նորեն աչքին առջև դնելը անշուշտ մեծ արժեք կստանա, իբրև ստուգում, իբրև սխալներու և անճշդութեյուններու սրբագրում, ինչպես և իբրև նոր ուրախութեյան աղբյուր, երբ հաջող ու համապատասխան է իր հիշողութեյամբ տվածը իրականութեյան:

Ինչ կվերաբերի մտապատկերներու զուգորդումին՝ որքան խոր է զգայութեյուններու և մտապատկերներու դրոշմը մտքին մեջ ստացման վայրկյանին, և որքան հեշտ ու արագ կկատարվի անոնց վերարտադրութեյունը, այնքան ալ սերտ կապված կըլլան անոնք իրենց հարակից, իրենց հետ բնականորեն կապ ունեցող մյուս մտապատկերներուն:

Բայց նախ՝ ճիշդ չէ ասիկա ամեն անգամ, շատ խոր տպավորութիւն մը կրնա ինքն իրեն համար առանձնակի մնալ մտքին մէջ. երկրորդ ալ՝ միայն բնականեն և ինքնին հարակցութիւններ ունենալը հերիք չէ. պետք է նաև արվեստական մշակում, մտքի հատուկ կրթութիւն, որ մտապատկերները նոր ու նոր կապեր ձգեն մատ ու հետու այլ մտապատկերներու հետ, հաճախ բնաւ չհնուսացված զարմանալի կապակցութիւններ: Ինչքան որ անմիջապես իրարու հետ կապ չունեցող բաներ իրար արթնցնեն և ինչքան որ արագ ու դիւրին այդ նոր զոդումը կատարվի, այնքան աշխուժ ու կենդանի է պատկերավոր միտքը. կ'նշանակէ՝ այնքան նոր տեսակի պատկերներ, նոր տեսակի պատկերավոր մտածումներ, նոր տեսակի կապակցութիւններ կստեղծվին մտքի մէջ:

Մտապատկերներու արագ զուգորդումը նպաստավորելու համար ղեկավար կրթութիւնը կրնա ընել տալ որոշ վարժութիւններ.

1) Ամբողջական մտապատկեր մը կամ զգայապատկեր մը վերածել իր բաղադրիչ մասերուն և ջանալ ամեն մեկը առանձին պատկերացնելու և մանավանդ հակառակը, զանազան բաղադրիչ պատկերներ տալով՝ դրդել ամբողջական պատկեր մը առաջացնելու: 2) Տալ կամ դնել դեմը մտապատկեր մը և ընթացք տալ, որ մտքին մէջ նոր ու նոր մտապատկերներ արթնցնե տղան, այսինքն անցնի մտքե միտք, միայն ո՛չ անսանձ ու աննկարդ ոստյուններով, այլ ընդհանուր իրականութեան մոտիկ ու համապատասխան մնալով: 3) Ձևի մը, դիրքի մը, երևույթի մը, չարժումի մը նմանութիւնները փնտրել, բանի մը նմանեցնել, այսինքն պատկերացում մը ուրիշ պատկերացումով մը ավելի կենդանի, ավելի դրավիչ և ավելի իմաստալից դարձնել: 4) Բանի մը պատկերներով կամ մտապատկերներով պատմութիւն մը հորինել, այսինքն այդ անջատ ամբողջութիւնները կապել իրարու դեմքերու ու դեպքերու ներքին կապակցութիւններու հնարումով, որ ավելի բարդ ամբողջութիւն ստացվի: 5) Տալ կիսատ պատկերացում մը, պարզ նկար մը, որոշ կեցվածք մը, օրինակ և պահանջել, որ լրացնեն, զեղեցկացնեն, հարստացնեն և իմաստալից դարձնեն:

Ա.. Բառերու ստեղծումին հետ կուգա վերացական մտածումը. իրար նման առարկաներուն մարդ կուտա միևնույն անունը, որով միևնույն հնչախումբը ահագին քանակութիւամբ առարկաներու կոչումը կդառնա, որոնք ինչքան ալ իրարու նման ըլլան, ունին բազմապիսի տարբերութիւններ իրարմե, հաճախ շատ խոշոր ու շատ կարևոր տարբերութիւններ, որով այդ առարկաները անվանող բառը հետզհետե այդ առարկաներուն իրար նման կողմերուն արտահայտիչը կդառնա, այսինքն բառը կդառնա հատկութիւններու գումար: Որչափ շատ հատկութիւններու գումար մը որ ըլլա, այնչափ դյուրին պատկերելի կըլլա. երբ մեկ կամ երկու հատկութիւններ միայն կներկայացնե, հստակ պատկերացնելը դժվար կդառնա: Պատկերներն ու մտապատկերներե առանձնացված այդ հատկութիւններուն կավելնան բոլորովին անպատկերելի, միայն մտքով ըմբռնելի գաղափարներ, հարաբերութիւններ, դիրքեր, թիվեր, կարգեր: Բառերու այսպես աստիճանաբար պատկերներե կտրվիլն ու հատկութիւն դառնալն է, որ կանվանենք վերացականացում և վերացական ըմբռնումներով կատարված միտքե միտք անցումն ալ կանվանենք վերացական մտածում:

Հակառակ պատկերավոր մտածման, որ միշտ պատկերե պատկեր կանցնի, վերացական մտածումը հատկութենե հատկութիւն կանցնի, հատկութիւններու գումարն մը ուրիշ հատկութիւններու կապակցում մը: Այսինչ անունը կրող առարկան այսինչ հատկութիւնը ունի՞, թե՞ ոչ. ուրի՞շ ինչ անուն կրող առարկաներն են, որ այս անունը կրող առարկային հատկութիւններն ունին. այսինչ հատկութիւններու գումարը եղող բառին տակ մը մտնե՞ն այսինչ առարկաները, թե՞ ոչ: Ահա այս տեսակի որոնումներն են վերացական մտածումին հիմքը, այսինքն հատկութիւններով իրարու կապված բառեր և հատկութիւններու հարաբերութիւամբ ստացված դատողութիւններ:

Ամեն մարդու գլխուն մեջ իրարու քով կան միշտ այդ երկու տեսակի մտածումներն ալ. ամեն մարդ ալ երբեմն պատկերավոր կմտածե, երբեմն վերացական և սովորաբար մտածելու ատեն հաճախ մեկեն մյուսը կանցնի: Կան մարդիկ, որոնք ավելի հակում

ունին վերացական մտածելու եղանակին, կան մարդիկ ալ, որոնց մեջ շեշտված է պատկերավոր մտածելու եղանակը. կան բոլոր հնարավոր խառնուրդները հատակութեան ամեն աստիճաններով: Պատկերավոր մտածումը կճգտի դեպի եզականը, անհատականը, մեկ հատը և շատ կենդանի է, կներկայանա իբրև դուբսի իրականութեան: Վերացական մտածումը անհատականին, հատականին թշնամի է, կփնտրե շատերուն, շատ-շատերուն, ընդհանրութեան մը պատկանող գծերն ու կողմերը և անմիջական արտաքին իրականութեան չէ, այլ այդ իրականութեան վրայեն մտքի աշխատանքով ձեռք բերված, առանձնացված հատկութիւնները:

Միայն պատկերավոր մտածումով մենք կենդանիներեն վեր բարձրանալ չենք կրնար, ինչքան ալ երկար ապրեինք, շատ դիտեինք ու խելացի ըլլայինք, որովհետև միշտ թաղված պիտի մնայինք հատականի ու անհատականի անսահման ծովուն մեջ: Այդ անծիր քաոսեն դուրս գալու, այդ անթիվ ու անհամար հատականութիւններուն վրայով մտքով տիրել կարողանալու համար մարդ պետք է նախ կարգ ու կանոն մտցնե այդ քաոսի վրա թողած տպավորութիւններուն մեջ, որոշ դասավորում և որոշ իրար ենթարկում: Ահա ատոր համար է, որ առարկաներու ընդհանուր, նման կողմերը կառանձնացվին և ըստ այդ հատկութիւններու կխնջվին ու կդասավորվին մտապատկերները: Մեկ բառով մը միլիոնավոր առարկաներ կանվանենք և անոնց մասին մեկ անգամով կմտածվի, կդատվի:

«Բույսերը կենդանիներեն կզանազանվին չարժման ու զգայութեան երկու հատկութիւններով»: Ահա «բույս», «կենդանի», «զանազանվիլ», «չարժում», «և», «զգայութիւն», «հատկութիւն»: Պատկերավոր մտածումով ինչպե՞ս կրնայինք մտածումի և ընդհանրացումի այս բարձրունքները սավառնիլ, ինչպե՞ս կրնայինք բույսի ու կենդանիի ամբողջ դիտութիւններ կառուցանել և զգայութիւններու և չարժման խորքը, հոգին ըմբռնել:

Բոլոր դիտութիւնները, բոլոր մտքի թռիչքները, բոլոր դաստդական դյուտերը պարտական ենք մտքի վերացական աշխատանքին, մտքի այդ ինքնահնար նոր տեսակի մտապատկերներուն: Բայց երբեք պետք չէ մոռնանք, որ վերացականի ամբողջ չենքը հիմնված է պատկերավոր ստացումներու վրա, դուբսի իրակա-

նուիրյան թողած տպավորութիւններու վրա: Ինչքան խոր ու լայն նստած ըլլա վերացականի չենքը հատականի, իրականի ու իրացականի վրա, այնքան ամուր ու անսասան կըլլա. ինչքան հեռանա ու կտրվի իրականեն ու իրացականեն, այնքան մեծ երկյուղ կա, որ չինվածքը կտապալի ամեն ուղղութեամբ փչող ուժգին հովերեն:

Բ. Արդ՝ վերացական մտածումը դեկավարելու և ուժեղցնելու համար առաջին բանը մտքի բառական մթերքը հարստացնելն է, բառերու չատացումը և անոնց իմաստին ճշդումն ու նրբացումը: Ղեկավարութիւնը այդ նպատակին ծառայելու համար կաչխատի թե՛ գործնական և թե՛ գիտական ճանապարհով: Գործնականը կսկսի մանկան կյանքին առաջին տարիեն, իսկ գիտականը սկիզբ կառնի նախակրթութեան տարիներեն՝ հետզհետե ուժեղնալով:

Գործնական ճամբով պետք է աչքի առաջ ունենալ հետևյալ կետերը.

1) Երեխայի հետ պետք չէ խոսիլ երեխայական լեզվով, այլ միշտ մայրենի կանոնավոր բարբառով, այդպես ալ պետք չէ աղավաղել երեխայի արտասանել չկրցած բաղաձայններն ու վանկերը. ան թող արտասանե, ինչպես որ կրնա, մենք պետք է արտասանենք միշտ ուղիղը. սխալի մեր կողմե ալ կրկնվիլը կուշացնե ու կդժվարացնե երեխայի կատարելիք ինքնասրբագրութիւնը:

2) Մանկան ծնողքն ու շրջապատը երբեք պետք չէ մոռնան, որ մայրենի լեզուն թանկագին գանձ մըն է զարաւոր սերունդներու աշխատանքով գոյացած ու մեզի ավանդված, և որ երբեք իրավունք չունինք անփույթ ու անխնամ ըլլալու, ծռելու և աղճատելու. ընտանիքը պարտական է միշտ մաքուր խոսելու, անճիշդ ու անշնորհք ձևեր պետք չէ գործածվին, ո՛չ ալ օտար ձևեր ու արտահայտութիւններ: Ժողովուրդ մը որքան հոգիով բարձրանա, և իր մեջ հպարտութիւնն ու արժանապատվութեան զգացումը զորանա, այնքան անոր համար բնական պահանջ մը կդառնա մաքուր, հարազատ, կանոնավոր ու գեղեցիկ խոսիլը իր մայրենի լեզվովը: Այս ազնվական պահանջը չունենալը արդեն ինքնին նշան է հանրային ձգտումներու ցածութեան, որ միշտ զույգ կերթա ստրկութեան, երկար դարերու հպատակութեան, տնտեսական թշվառութեան և մտավոր խեղճութեան:

3) Երբ պզտիկը թերի, ծուռ կամ սխալ կըսե բառն ու նախա-

դասուվթյունը, պետք է իսկույն ըսկել չիտակը. և պետք չէ երբեք մոռնանք, որ կյանքի մեջ մեկ-երկու անգամ լսելով բան սորվեցնել չըլլա. միևնույն բանը շատ անգամներ պետք է ըսվի ու սրբագրվի:

4) Երբեք պետք չէ մտածել, որ երեխան չի հասկնար, չի հետևիր ու չի լսեր քու ըսածդ իր խաղովը զբաղված. ականջները ստեղծված են լսելու համար և մանավորապես սուր են փոքրիկ-ներուն ականջները. անոնք կլսեն ամեն ինչ, և կդրոշմվի այդ ամենը անոնց թարմ ուղեղի մեջ իրենց ամբողջ կյանքին համար, միևնույն է՝ խոսքդ իրեն ես ուղղեր, թե ուրիշներուն, միևնույն է՝ ըսածդ կհասկնա, թե ոչ, միևնույն է՝ դուն ցանկաս, թե ոչ: Իր մայրենի լեզվին սերը ունեցողը, իր զավկին մաքուր ու աղվոր լեզու սորվեցնել ուզողը պետք է ըմբռնե, որ ամենեն առաջ ինքը մաքուր ու զնդեցիկ լեզու պիտի ունենա և միշտ ու ամեն տեղ պետք է խոսի ճիշդ, կռկիռկ, կանոնավոր և ուշադիր խնամքով:

Գ. Գալով լեզվի հարստացման ու նրբացման գիտական միջոց-ներուն՝ առոնք էապես դպրոցական աշխատանքի նյութ են, բայց կրթված հայրն ու մայրը ընտանիքի մեջն ալ որոշ բաներ կրնան ընել:

1) Դիտել, համեմատել և որոշել տալ մերձիմաստ բառերուն ներքին տարբերությունները և հոմանիշներու իրարմե ունեցած ինքնահատուկ նրբությունները:

2) Խմբել ու դիտել տալ բառի մը ունեցած բոլոր կամ գոնե դյխավոր իմաստները և տարբեր առումներով գործածությունները և ջանալ բացատրելու պատճառը, թե ինչո՞ւ և ինչպե՞ս մեկ իմաս-տեն լեզուն անցեր է մյուս իմաստներուն, Հանել բառին հիմնական, սկզբնական նշանակությունը իր փոխաբերական, այլաբանական ու հետագա գործածություններին:

3) Բառին եզրը տալ, այսինքն որոշել այն դյխավոր հատկու-թյունները, որոնց միացումը կառաջացնե այդ բառին էությունը:

4) Հանել բառին արմատը, ժողվել նույն արմատով կազմված ուրիշ բառեր և ջանալ այդ արմատի հիմնական իմաստը գտնելու, համեմատել իրարու նույնիմաստ ու մերձիմաստ արմատները:

5) Դիտել տալ կարևոր մասնիկները, անոնց առած զանազան նշանակությունները և այդ նշանակություններու իրարու հետ

ունեցած կապը, գիտակից դարձնել այդ մասնիկներուն դերը և որոնել, թե ի՞նչ արմատ են առաջացած:

6) Դիտել տալ բարդ բառերուն զանազան տեսակի կոզմերը և իրարու կապված արմատներուն իրարու հանդեպ ունեցած արժեքը, ինչպես և կրկնարմատներու արմատին կրած փոփոխությունները:

7) Պետք է տղոց հաճախ բառարան գործածել տալ և ներշնչել անոնց բառարանով խաղալու սերը. հին լեզվի, նոր լեզվի և բարբառներու բառարանները հավասարապես հետաքրքիր ու գրավիչ բաներ չատ ունին իրենց էջերուն մեջ, երբ անգամ մը համ կառնես բառերը քննելու և ուսումնասիրելու աշխատանքեն:

Այս տեսակետեն անշուշտ չատ մեծ է դերը գիտական արժեքով և լուրջ խնամքով կազմված բառարաններուն: Ջէ՞ որ լավ բառարանը եզր ուղող դիրքն է էապես, որով տրամաբանական մարզանք մըն է ինքնին բառարան թղթատելը:

Դ. Վերացական մտածումի ավելի բարձր աստիճանը այդ բառերու կապակցությամբ կազմված դատողություններն են, եզրակացությունները, վերլուծումները: Այս աստիճանի համար ալ ունինք նորեն նպաստելու գործնական ու գիտական ճամբաներ: Գործնական տեսակետեն պետք է հետևիլ, որ փոքրիկը իր մտքերը միչտ թե՛ իմաստով և թե՛ լեզվով ճիշդ արտահայտե, և նախադասություններն ու պարբերությունները որոշ, կտրուկ ու կանոնավոր ըլլան: Սխալները չտկել անմիջապես ըսելով՝ առանց որևէ փիլիսոփայության, քանի անգամ ալ որ սխալի: Պետք է ձգտիլ, որ հետզհետե վարժվին և ավելի երկարաշունչ կտորներով պատմեն, նկարագրեն, բացատրեն:

Վերացական մտածումի ավելի գիտական մշակումը կկատարվի դպրոցական աշխատանքով: Նախ քերականության բառահյուսական մասի լուրջ ավանդումով: Սովորաբար քերականության ուսումը հոլովման ու խոնարհման չուրջը կդառնա և առկե անդին քիչ կանցնի, մինչդեռ լեզվի մը ոգին ըմբռնելու և վերացական մտածման խորքը հասկնալու համար պետք է ուսումնասիրվին ժողովրդի մը դարերու աշխատանքով ստեղծած մտածումին կաղապարները: Ի՞նչ բան է նախադասությունը, նախադասության անդամներուն դերը, նախադասության տեսակները, ենթակայի ու

առորոշիչի կեդրոնական վիճակը և փոխադարձ կապը, խնդրառության օրենքները, այսինքն հոլովներուն գործածությունը, մակդիրներու և մակբայներու չարժիչ ուժը և շաղկապներու բերած չարն ու բարին:

Դպրոցին մեջ բոլոր ուսումներու ավանդման ժամանակ խստիվ պետք է հետևիլ աշակերտներու տված մեկնության, ըրած վերլուծական դատումին, հանած եզրակացության ճշդության, տրամաբանելու եղանակի հաստատության և այդ ամենուն հատուկ ձևակերպումին: Ոչինչ պետք չէ ըսվի մտաւորապես, իբրև ինքնին հասկնալի՝ վրայեն ցատկելով և, մանավանդ, ոչինչ պետք չէ թույլատրվի մեքենայական հիշողության: «Ինչո՞ւ», «ինչպե՞ս», «ինչեր պիտու», «ի՞նչ հիման վրա», –հիմնական հարցերն են ատոնք, որոնք մտածումին խորություն կուտան, որոնք անվերջ կկրկնվին և պետք է որ կրկնվին գիտական ամեն աշխատանքի միջոցին:

Գիտական մտածումի ավելի բարձր մշակումին կծառայեն չարադրություննները, ընկերական-աշակերտական դասախոսությունները, հավաքական վերլուծական քննադատությունն ու մաքրու վիճաբանական փոխանակությունը: Թե՛ բանավոր և թե՛ գրավոր կերպով պետք է մարզվի միտքը գիտական ավելի լայն ու ավելի բարձր շենքերու կառուցման, սիսթեմատիկ ու համադրական աշխատանքի, դիտողություններեն դեպի ավելի բարձր տեսակի ընդհանուր դատողություններն ու եզրակացությունները, ինչպես և հակառակ ճամբով՝ բացատրական, քննադատական, ապացուցական աշխատանքի արդեն կառուցված գիտական տվյալները, այսինքն եզրակացութենեն դեպի իր հաստիչ տարրերը:

Եվ վերջապես պատկերավոր ու վերացական մտածումներու ներքին ու արտաքին խոր տարբերությունները ավելի բացահայտ դարձնելու համար կարելի է պատկերավոր մտածումով ներկայացված կտոր մը վերացական մտածումով արտահայտել, ինչպես և վերացական կտորներ պատկերավոր արտահայտության վերածել կամ դոնե պատկերավորել. կարելի է փնտրել տալ վերացական համեմատություններուն, ասույթներուն, դարձվածներուն տեղը անոնց համապատասխան պատկերավոր ասույթներ ու համեմատություններ: Այս ամենը միտքը և՛ կսրե, և՛ կզվարճացնե, միևնույն

ժամանակ մտքին կատարած աշխատանքը հստակորեն տեսնել կուտա, այսինքն կկատարե նաև հոգեբանական ծառայություն մը: Եվ հոգեբանության ուսումն ալ արդեն գիտական հիմունքներ կուտա մեր մտքի կատարած բոլոր աշխատանքներուն, ինչպես և բացատրությունը մանկավարժական բոլոր պահանջներուն:

Գ. ՄՏԱԾՈՒՄԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Կան մտավոր կարողություններ ալ, որոնք մտքերու վերարտադրումին և անոնց կապակցումին այս կամ այն կողմը կներկայացնեն առանձնակի ուշադրության առնված, ավելի հստակ կերպով ուսումնասիրության նյութ դարձնելու համար: Ամեն մտածումի ժամանակ տեղի ունեցող և ամեն մտածումի հյուսված այդ մտավոր աշխատանքի կողմերը կկազմեն հիշողությունը, երևակայությունը, ուշադրությունը և կամքը:

Հիշել անվանածնիս միևնույն մտքերու իրար արթնցնելն է ըստ իրենց ունեցած հին կապակցության, միայն թե կապված է միշտ վերարտադրության միջոցին տեղի ունեցող դժվարության մը հաղթահարումին հետ, իբրև հակադրություն մոռնալուն, որ վերարտադրել չկարողանալ ըսել է, կապակցության բանուկ ճամբան տեղ մը խցված է, ավրված, որ կջանանք բանալու:

Հիշողությունը կանվանենք սուր, բութ, տկար կամ ուժեղ՝ նայած, թե ինչ աստիճան դյուրությամբ ու արագությամբ իրար կապված մտապատկերները իրար արթնցնելու կհաջողին, նայելով, թե զրգիռին հոսանքը ինչ աստիճան դժվարությամբ այդ արգելքները վերցընելու կհաջողի: Թեև որոշ հիվանդագին պայմաններու մեջ կրնա պատահիլ, որ ընդհանրապես ամեն տեսակի հիշում տկար կերպով կկատարվի կամ ուժեղ, բայց էապես հիշողության տկարն ու ուժեղը կապված է ո՛չ թե բոլոր մտածումներու ընդհանրության, այլ մտքին մեջ դոյություն ունեցող որոշ խմբերուն, այսինքն մտապատկերներու որոշ խումբի մը մեջ իրար արթնցնելը ավելի թեթև կկատարվի, մինչդեռ նույն անձի մտքին մեջ մտապատկերներու ուրիշ խումբեր դժվար կհիշվին՝ նայելով ստացված տպավորու-

թյուններու թարմութեան, հաճախակի վերարտադրութեան և մտքի որոշ ուղղութեամբ ձեռք բերած վարժութեան: Սովորական երևույթ է, որ մարդիկ թիվերու համար լավ կամ գէշ հիշողութիւն ունին, մինչդեռ զանազան լեզուներու բառերը, մարդոց անունները, դէմքերը, տեղերը, ձայները հակառակ կարողութեան են. չեն հոտառական հիշողութիւնը շատ ուժեղ է, դիտողականը՝ ո՛չ այդ չափով:

Ա. Արդ՝ դեկավար կրթութիւնը ինչ կրնա ընել, որ նպաստած ըլլա մտային զանազան կապակցութիւններու մէջ հոսանքի երթևեկին դիւրացում տված ըլլալու համար, մոռացման առջևը առնելու կամ տեղի ունեցած խզումը հաղթահարելու համար, ուրիշ խոսքով՝ ինչո՞վ կրնանք օգնել մտքի պատկերավոր և անպատկեր կապակցութիւններու մէջ հիշողութիւնը զորացնելու համար:

Զգայութիւններն ու զգայապատկերները ստացված միջոցին պետք է չանք գործ դրվի, որ իրարու հետ կապ ունեցող մտապատկերները մտքին մէջ հաստակ կերպով իրարու կապված մնան: Ինչքան որ պատահական ըլլա մտապատկերներու միասին ստացումը, ինչքան որ մեկին կամ մյուսին վրա ուշադրութիւն չդարձվի ստացման միջոցին, ինչքան որ կապակցութեան մեկ կամ մյուս մասը անհատին համար հետաքրքրութիւն չներկայացնէ, այնքան անոնց մէջ եղած կապը թույլ ու խախուտ կըլլա, այնքան վերջը ճամբան ավրված կզտնեն միտքը, արահետը կկորսնցնէ, երբ մեկեն մյուսը անցնիլ կուզե: Երկու կամ ավելի մտապատկերներ մեր մտքին մէջ դրոշմվելու միջոցին որքան մեր ուշադրութեան կեդրոնը ինկած ըլլա, որքան գիտակցորեն իրարու զոդված ըլլան, այնքան անոնց կապը ամուր կըլլա և տևական: Հարևանցի տեսնված, ուրիշ բազմատեսակ զգայութիւններու հորձանքին մէջ լսված, ուրիշ գործով մը զբաղված ատեն թեթևակի նկատված բաները դժվար կհիշվին ընդհանրապես: Անորոշ կերպով արտասանված, գրված, տպված, արագ կարդացված, իրարու մէջ խառնված ստացումները դժվար կհիշվին: Պարզ ու մաքուր գրված տող մը, հաստակ արտասանված խոսք մը, հանդիստ մտքով դիտված բան մը միշտ շատ ավելի հավանականութիւն ունի «մեր հիշողութեան մէջ մնալու», ինչպես որ կըսենք՝ հիշողութիւնը տոպրակի պես բան մը երևակայելով:

Երկրորդ միջոցը կրկնելն է. ինչքան հոսանքը որոշ կապակ-

ցուրյան մը մեջ նույն ճամբաներով երթա ու գա, այնքան ճամբան կհարթվի ու կդառնա սովորական և պարտադիր: Հաճախ կրկնել, գոնե մեջեմեջ կրկնել այն ամեն բաները, որ կուզենք մտքերնիս մնա, ըլլա ոտանավոր մը, ալճեպրայի տարազ մը, լեզվական զարգ-վածք մը, պատմական թիվ մը կամ անուն մը: Զգործածված ուղի-ները դաշտերուն վրա քիչ-քիչ խոտով ու հողով կծածկվին ու ալ չեն զանազանվիր շրջապատող մարգագետնեն.երբ հին տեղը երթալ ուզես, դաշտերուն մեջեն նոր ճամբաներ պիտի փնտրես:

Բ. Վերացական մտածման մեջ վերացական գաղափարներու համար հիշողության կնպաստե նաև, երբ պարզ իրական կապակ-ցուրյան կմիանա գիտական տրամաբանական կապակցումը, այսինքն ո՛չ միայն մեր մտքին մեջ երկու գաղափարներ կապված են իրարու, այլև գիտենք, թե անոնք ինչո՞ւ են կապված իրարու, ի՞նչ պատճառով, ի՞նչ նպատակով, ի՞նչ պայմաններու մեջ, ի՞նչ դատողություններու հիման վրա, երբ գիտենք, որ անոնք որոշ գիտական համակարգի մը, որոշ պատճառական շղթայի մը մեկ օղակը կկազմեն և ո՛ր օղակը: Բացի հիշելը դյուրացնելեն, այս գիտակցուրյունը այն մեծ առավելուրյունն ալ ունի, որ մոռացման պարագային դյուրավ կրնանք նորեն կառուցել մոռցվածը. այսպես, օրինակ, թվաբանական աղյուսակը, հանրահաշվի տարազ մը, քիմիական կապակցուրյուն մը: Բան մը առանց հասկնալու գոց ընելը միտք պահելու համար շատ ավելի մեծ ճիգեր կպահանջե. ինչքան խոր է հասկցված, այնքան միտք պահելը կդյուրանա, օրինակ՝ շատ ավելի դժվար է գոց ընելը օտար բառերով ոտանավոր մը, լավ չըմբռնված երկրաչափական ապացուցում մը:

Միտք պահելուն կնպաստե, եթե կապակցված մտապատկեր-ները և ինքը կապակցուրյունը մեզի համար հետաքրքրուրյուն մը ունին, ըլլա անձնական, ըլլա գրական-գիտական, ըլլա հանրային հետաքրքրուրյուն: Չհետաքրքրվիլ, անտարբեր ըլլալ կամ կարևո-րուրյուն չտալ, այսինքն որևէ կերպով մեզի չվերաբերող բան մը նկատել, արդեն կնշանակե մոռնալու ճամբան բռնել:

Կա վերջապես արվեստական միջոց մը հիշողության օգնու-թյան գալու. անուն մը, թիվ մը, մանրամասնուրյուն մը, դեպք մը միտքս պահելու համար կկապեմ ինձի լավ ծանոթ ուրիշ բառերու, իրերու ու հաշիվներու բոլորովին բռնի ու արվեստական կերպով:

Կյանքի մեջ լուրջ ու կատակ ձևերով հաճախ կկապվի թաչկինակին ծայրը կամ թելի կտոր մը ճկույթ մատին, կամ Տանցիկ քաղաքը հիշելու համար՝ «տանձ» բառին: Սակայն այս արվեստական արտաքին օգնությունը հիշողության զորացում չէ, ո՛չ ալ զարգացում, այլ մոռացության դեմ կռվելու վայրկենական միջոց. այն դներուն կնմանի, որ բժշկելու չեն ձգտիր, այլ անմիջական թեթևացման, մեղմացման: Մինչ դեկավարության չանքը հիշողությունը զորացնելն է:

ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ա. Մտածման հարակից երկրորդ կարողությունը երևակայությունն է. ան ալ միևնույն վերարտադրությունն է, միայն ո՛չ այն կապերով, որ առաջացած են ինքնին, իրականեն, բնականեն. միտքը ինքն է, որ կապեր կձգե բնականին մեջ իրարու չկապված մտապատկերներու կամ անոնց զանազան մասերուն միջև, միևնույն է՝ գիտակից թե անգիտակից ճամբով: Այդ նոր, մտահնար կապերու առաջացումը և ատով ալ նոր տեսակի մտապատկերային ամբողջություններ ստեղծվիլը կկոչենք երևակայություն:

Այնպես որ երևակայության մը բոլոր բաղադրիչ տարրերը իրականեն են առնված, ստեղծվածը նոր կապակցումներն են, նոր հաղորդակցություններ, նոր փնջումներ, մտքին առջև ներկայացված մտապատկերը մտքի կատարած նոր դասավորության արդյունք է, այս պատճառով ալ ամբողջ վերացական մտածման էությունը երևակայությունն է: Վերացական գաղափարը, վերացական մտապատկեր մը, վերացական դատողություն մը արդյն ղղայարանքներու բերածի իրականությունը չէ, այլ ղղայարանքներու բերածի տարրերովը մտքի չինած, հերյուրած, ենթադրած նոր գոյություն մը. ամեն վերացական ըմբռնում իր էությամբ երևակայություն է:

Եվ ճիշդ ատոր համար ալ երևակայությունները կրնանք բաժնել երկուքի՝ իրացական ու վերացական երևակայություններ: Իրացական է երևակայությունը, երբ ղղայություններու բերած պատկերներուն տարրերը տարբեր կերպով ու տարբեր չափերով իրարու կմիացնենք, և կառաջանա նոր մտապատկեր մը, որ իրա-

կանին մեջ չկա, կամ մենք չենք տեսած, բայց իբրև իրականության մեջ եղած կպատկերացվի և պատկերելի բան մըն է, այսպես, օրինակ, երեքաչքանի մարդիկ, թռչող դևեր, պոչավոր սատանաներ, թևավոր հրեշտակներ, ինքնիրենը բացվող սեղաններ և օդերուն մեջ սավառնող գորգեր:

Վերացական երևակայության պտուղ են մարդու հնարած բառերը, թիվերը, չափերը, տարածության ու ժամանակի ըմբռնումները, գիտություններուն կանոնները, գիտական դասակարգումները, պատճառականությունները: Իրացական երևակայությունները գեղարվեստական պատկերացումներ են, վերացական երևակայությունները՝ գիտական ըմբռնումներ:

Այս երկու տեսակի երևակայություններն ալ անհրաժեշտ են մարդուն. բոլոր հոգեկան ու նյութական ստեղծագործությունները, այսինքն մարդկային ամբողջ քաղաքակրթությունը պտուղ է մտքի երևակայական աշխատանքի: Ատով է, որ մարդը նոր բաներ կհնարե, կշինե, կստեղծե, բնության ստեղծագործություններուն քովը կդնե իր ստեղծագործությունները: Ամեն մարդու հոգիին մեջն ալ կան ու կգործեն միշտ այդ երկու ուղղությամբ գացող երևակայական մտածումները, բայց անշուշտ տարբեր չափերով ու տարբեր խառնուրդով:

Բ. Ղեկավար կրթությունը կրնա նպաստել պատկերելի երևակայության զարգացմանը՝ արվեստական ու ծրագրված կերպով գործադրել տալով ու մարզելով մանուկներու այդ կարողությունը:

1) Լսված կամ կարդացված կտոր մը երևակայել տալ հնար եղածին չափ հստակ ու մանրամասն. երևակայածը նկարագրել տալ՝ պահանջելով, որ ըսեն յուրաքանչյուր իրի գույնը, ձևը, դիրքը, հարաբերությունները, խոսքը, շարժումը, վիճակը :

2) Տալ մեկ-երկու պատկերի կտորներ կամ ամբողջ պատկերներ՝ պահանջելով, որ ասոնցմե նոր բան մը ստեղծեն, ըլլա խոսքով, մատիտով կամ որևէ նյութական կառուցումով, փակցնելով, հյուսելով, կարելով, շարելով: Նույնը կարելի է ընել մեկ-երկու պատմություններու վրա հենված, անոնց կտորներեն օգտվելով ու փոփոխելով նոր պատմություն մը շինել:

3) Կարդալ ու դիտել տալ ուշադիր առասպելները, հեքիաթները, ժողովրդական վեպերը, կրոնական ավանդությունները, ծաղ-

կանկարները, կենդանագրությունները, հանդերձյալ կյանքի մասին ժողովուրդներու ունեցած հավատալիքները՝ հին ու նոր, և հանել տալ, թե երևակայությունը ինչպես է ստեղծեր այդ բոլոր բանաստեղծական ու կրոնական պատկերացումները՝ հրեշներ, ճիվաղներ, հսկաներ, հրեշտակներ, դևեր ու աստվածներ, դժոխքներ, եղիսյան դաշտեր ու երկնային արքայություններ:

4) Կարդացնել տալ դյուտերուն պատմությունը, դյուտեր ընողներուն, հին ու նոր ճամբորդներուն, ձեռնարկիչներուն կյանքն ու գործը: Եվ ընդգծել անոնց աշխատանքին մեջ բանաստեղծական, այսինքն պատկերելի երևակայության խաղցած դերը: 5) Դրդել փոքրիկները, որ մանրամասն երևակայել չկանան նախամարդուն, այսինքն անասուն մարդուն ապրած կյանքը վայրի անտառներուն մեջ ցրված փոքրիկ խմբերով: Եվ դրդել, որ հնար եղածին չափ հստակ ու մանրամասն պատկերացնեն, թե ինչպես այդ վայրենի անասուն արարածը հետզհետե հնարեր է նոր-նոր զենքեր, գործիքներ, կրակ, ուտելիք, հագնելիք, բնակելու տեղ, ամաններ, զամբյուղներ, զարդեր, լեզու, երգ, պար, նկարչություն, ամեն մեկը ինչ ձևով, ինչ դրդումով, բնութենեն առածը և երևակայության վրան ավելցուցածը: Նույն ձևով կարելի է տանիլ նաև որսորդական կյանքի ու աշխատանքի պատկերացումը, խաչնարած կյանքը իր ներքին ու արտաքին վիճակներովն ու աշխատանքներովը, երկրագործ կյանքի աշխատանքներուն բերած նորությունները, այսինքն քաղաքակրթական աստիճանական զարգացման մանրամասն երևակայումը՝ կյանքի բոլոր կողմերը, բոլոր տեսակի իրերը, կառուցումները, կազմակերպություններն ու հնարքները աչքի առջև ունենալով, ինչպես, օրինակ, հաղորդակցության միջոցներն են՝ ճամբա, կամուրջ և տեղափոխության տեսակները ցամաքի ու ծովու վրա, կռվի պատերազմական արվեստին ձեռք բերած միջոցները, մեծ կեդրոններու, քաղաքներու առաջացումը: Ինչը բնութենեն է առնված, ինչը հնարված:

Ինչ կվերաբերի գիտական երևակայության զարգացմանը նպաստելուն՝ ղեկավար կրթության մեջ ինչ որ վերացական մտածումի ու դատումի ուժեղացմանը կօժանդակե, օժանդակություն մըն է նաև վերացական երևակայության զարգացմանը, քանի որ ամբողջ վերացական մտավոր աշխատանքը կկատարվի մտքի

չինած և ստեղծած պատկերներով՝ ըմբռնումներով: Ինչքան վերացական զաղափար մը չատ տարրեր ունի իր վրա իրականեն ու զգայականեն, այնքան աննկատելի ու քիչ է վերացական երևակայության գործն ու ներկայությունը. որչափ մտածումը տեղի ունենա ավելի լայն և ընդհանուր զաղափարներով և որչափ բարձր աստիճանի ընդհանրացումներով, այնքան ալ ավելի խոր կդառնա վերացական երևակայության թափը: Բարձրագույն գիտական ու փիլիսոփայական կառուցումներն ու վերլուծումները միևնույն ժամանակ բարձրագույն վերացական երևակայություններ են:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Մտավոր աշխատանքին կապված երրորդ կարողությունը ուշադրությունն է, այսինքն մեր մտքին դուրսեն ներկայացող զգայապատկերներեն կամ մեր մեջ վերարտադրված մտապատկերներեն որո՞նք կդառնան մեր հոգեկան ստեղծատանքին առարկան, որո՞նց վրա կկեդրոնանա մեր միտքը: Այս կեդրոնացումը կկատարվի անգիտակից և գիտակից եղանակով: Նախնականն ու հիմնականը անշուշտ անգիտակից և ինքնաբեր ուշադրությունն է, երբ զգայապատկերն ու մտապատկերը կդառնան մեր մտածման ու քննության առարկան իրենց իսկ ուժովը, իրենց հետաքրքրության պատճառով, առանց մեր կամքին ու ցանկության: Բայց բարձր կենդանիներու մեջ այդ ինքնաբեր ուշադրության կից կզարգանա նաև կամավոր ուշադրությունը, այսինքն երբ միտքը իր որոշումով, երբեմն նաև հատուկ ճիգերով մեր մեջ եղածի այս կամ այն մասը, կողմը իր դիտողության և զննության տակ կառնե: Եվ այս աստիճանին հասնելեն ետքը կենդանին ո՛չ միայն իր այս ու այն մտապատկերն ու գաղափարը կենթարկե իր ուշադրության, այլև իր մեջ կատարված բոլոր կենդանական աշխատանքները. կդիտե, թե ինչպես կդիտե, թե ինչպես կմտածե, ինչպես կբարկանա, ինչպես կհիշե, ինչպես կշարժե իր մկանները, այսինքն դիտողության և ուսումնասիրության նյութ կդարձնե իր իսկ հոգին, իր ուշադրությունը կդարձնե իր ներքին աշխարհի կյանքին վրա;

Ինչ կրնա ընել ղեկավար կրթությունը թե՛ ինքնաբեր և թե՛ կամավոր ուշադրության զարգացմանը նպաստելու համար, քանի

որ առանց ուշադրութեան մեր բոլոր հոգեկան ապրումներուն գիտակցութիւնը մեզի համար կըլլա աղուտ, խառնակ ու անկայուն:

Բ. Ինքնաբեր ուշադրութեան նպաստելու համար.

1) Պետք է աշխատինք որեւէ կերպով կապելու դիտուածն ու մտածուածը անձի անհատական պետքերուն, շահերուն, ծրագիրներուն, այսինքն դարձնելու հետաքրքիր: Ինչ որ մեզի հետ կապ ունի, ինչ որ մեզի կվերաբերի, միշտ կգրավե մեր ուշադրութիւնը, մեր մտածումները անոնց կուղղվին, անոնց վրա կկիզրոնանան, անոնք կզառնան առանցքը հոգեկան աշխատանքին:

2) Պետք է աշխատինք, որ ստացված տպավորութիւնները և արթնցած մտապատկերները իրենց վրա ունենան որեւէ անսովոր, ո՛չ առօրյա, բացառիկ կամ անակնկալ բան մը, դեռ չտեսնված, դեռ չհասկցված բան մը, որովհետև ամեն նոր բան, ամեն նորութիւն ավելի աչքի կիյնա ու կգրավե մեր ուշադրութիւնը: Սովորականն եղող և երևցող բաներուն վրայեն դյուրին կսահի մեր միտքը և ակամա կանգ կառնե դուրս ցցված ծայրերուն վրա:

3) Պետք է աշխատինք ամեն կերպ մաքրենք չրջապատը ամեն տեսակի ուշադրութիւնը իրենց քաշող զգայութիւններե ու մտապատկերներե: Քանի մը հետաքրքիր բաներ մեկ անգամեն ներկայացնել, ըլլա նույն զգայարանքին, ըլլա տարբեր զգայարանքներու, կնշանակե ցրվել ու տկարացնել ուշադրութիւնը: Հետաքրքիր կամ նոր կամ ուժեղ զգայութիւն մը պատճառել տղուն, երբ ան վերացական դատողութեան մը կամ կապակցութեան մը վրան կաշխատի, կնշանակե խանգարել անոր հանգիստ դատողական աշխատութիւնը: Երբ կենդրոնանալ կուզենք, կզոցենք աչքերնիս, կիջեցնենք վարագույրները, կառանձնանանք. և շատ շատերը կսիրեն մտքով աշխատիլ ուշ գիշերներու լռութեան ու մենութեան մեջ՝ լամպի մը ամփոփ լույսին տակ և ո՛չ առանց խորունկ պատճառի:

4) Պետք է աշխատինք դիտելիքն ու մտածելիքը զատ ու առանձին ուշադրութեան առնելու, անջատված ամեն կողմնակի միացումներե, հյուսկերե, խառնակումներե և միջամտութիւններե: Անջատումը հստակութիւն կբերե, հստակութիւնը՝ ըմբռնելու դյուրութիւն, որ շատ կնպաստե ուշադրութիւնը իր վրա պահելուն.

խառն, անորոշ ու խճճված բաներուն վրա ուշադրությունը կանգ առնել չսիրեր ինքնաբեր կերպով:

5) Պետք է աշխատինք հնար եղածին չափ ուժեղ ըլլա պատկերը, որուն վրա կուզենք, որ միտքը կեդրոնանա, և պայծառ ըլլա այն մտապատկերը, որ մեր ուշադրության առարկան կուզենք, որ դառնա: Դուրսեն եկող տկար գրգիռները և տկար ու պղտոր վերարտադրությունները հետաքրքրություն և ուշադրություն չեն կրնար քաշել իրենց:

6) Եվ պետք է աշխատինք, որ չափեն ավելի երկար չըլլա տևողությունը բանի մը վրա ուղղված ուշադրության, որովհետև հոգեկան բոլոր կարողություններու նման ուշադրությունն ալ հետզհետե կկորսնցնե իր ուժը, ինչքան երկար որ գործե անընդհատ. անընդհատ լարումը գործիքը կհոգնեցնե. պետք է աշխատանքը մեջեմեջ ընդհատես, որ գործիքը իր մաշած ուժերը վերստին լեցնել կարողանա արյուններն ստացվող սնունդով: Եթե բանի մը վրա երկար դիտողության պետք կա և երկար ժամանակ մեր մտածողության ենթարկելու անհրաժեշտություն, ամենեն բնական ու չիտակ ճամբան նույն բանը հաճախակի մեր դիտողության ու մեր դատողության ենթարկելն է, այսինքն որոշ ընդհատումներով կրկին ու կրկին մեր քննության տակ ձգելը: Ուշադրության մը երկարատևության չափը կախում ունի մեծ մասով վարժութենե. դիտելու, դատելու, միտքը կեդրոնացնելու անվարժ մարդիկ քիչ-շատ տևական կերպով չեն կրնար ուշադրություն դարձնել նույն բանին վրա և միայն նույն բանին վրա, մինչ դիտողություններու հաճախ առիթ ունեցողները կրնան շատ ավելի երկար ատեն ուշադրությունը լարված պահել, ավելի ևս անոնք, որոնք իրենց գործի բերումով որոշ ուղղությամբ իրենց ուշադրությունը արթուն պահելու են հարկադրված. անոնք թեթև հանգիստներով շատ ավելի երկար ժամանակ կրնան ուշադրությունը կեդրոնացնել: Թեև անշուշտ այդ ավելի երկար միջոցներուն ուշադրության ուժն ու թարմությունը նույնը չի մնար. ան կունենա իր ուժեղ ու թարմ սկիզբը, բավական երկար բավարար ուժեղություն մը, որ հետզհետե կնվազի: Հոսկե պարզ է, որ մանուկներուն ուշադրությունը կարճատև պիտի ըլլա և ոստոստուն:

Գ. Այս բոլորի վրա է ահա, որ կավելնա կամավոր տարրը,

կամքի ճիգը՝ ներգործաբար իր մտքերը այս ու այն կետին վրա պահելու ավելի կամ պակաս տևականորեն ու բացարձակորեն: Նախորդ պայմաններին զուտ ենթակային կողմն գործ դրված այս դիտակից ու կամավոր ճիգը չատ կնպաստե ուշադրության զորեղացման և ճիշդ իր այս բերած հավելված առավելության համար ալ ղեկավար կրթության կողմն խիստ կգնահատվի, և հատուկ ջանք կթափվի՝ կամավոր ուշադրությունը անհատի հոգևկան կյանքին մեջ ամրացնելու:

Այս նպատակով չարունակ կոչ կըլլա ուշադրությունը այս կամ այն կետի վրա կեդրոնացնելու. կպահանջվի, որ ուշադրությունը չցրվի և միայն ուզած կետին վրա իր մտքերը կեդրոնացնե, ուրիշ բանով չզբաղվի, այսինքն ճիգ ընե ուշադրությունը լրիվ լարելու:

Այս նպատակով կպահանջվի, որ ավելի ու ավելի երկար միջոցներով կեդրոնացնե իր ուշադրությունը միևնույն բանին վրա և հնար եղածին չափ լրիվ. ավելի երկար ժամանակ զբաղվի նույն աշխատանքով, առանց ուրիշ բաներու մասին մտածելու և առանց իր շրջապատին վրա ուշ դարձնելու:

Այս նպատակով կպահանջվի, որ իր ուշադրությունը կեդրոնացնե ո՛չ միայն հետաքրքիր բաներու վրա, որոնց հետ ինքը որևէ անձնական առնչություն ունի, ո՛չ միայն նորություն ունեցող հրապուրիչ բաներու վրա, այլև հետզհետե նվազ հետաքրքիր, ո՛չ նոր ու քիչ հրապույր ունեցող բաներու վրա: Կպահանջվի, որ աղմուկի մեջ, բազմության մեջ, բազմաթիվ առարկաներու և տպավորություններու հորձանքին մեջ իր ուշադրությունը իր գործին վրա պահելու ջանա: Նմանապես խառնակ ու խճճված, աղոտ ու անորոշ բաներու վրա ալ վարժվի ուշադրությունը պահելու:

Այս նպատակով կծրագրվի, որ անհատը որոշ գործերու, պարտավորություններու և ուսումնասիրություններու վրա տևական կերպով և պարբերական կանոնավորությամբ կեդրոնացնե իր ուշադրությունը. երկար- երկար ժամանակներ որոշ նյութերու և հարցերու շուրջ իր միտքը նորեն ու նորեն աշխատցնե՝ կարելիին չափ պահելով նույնիսկ նույն ժամերուն կրկնությունը: Այս տեսակետեն դպրոցական առարկաներու, պարտավորություններու, դպրոցական աշխատանքներու և ժամերու կանոնավոր դասավո-

րութիւնը, կանոնաւոր հաջորդականութիւնը և կրկնութիւնը չատ մեծ կարևորութիւն ունեցող մարզարան մըն է ուշադրութեան: Այդպես ալ աշակերտական ուսումնասիրութիւններուն նյութերը, շարադրական ավելի կամ պակաս երկարաշունչ վերլուծական կամ համադրական աշխատանքները. ասոնք ո՛չ միայն միտքը կհարստացնեն, ո՛չ միայն դատողութիւնը կսրեն և երևակայութեան մարզանք են, այլև կզորացնեն ուշադրութիւնը:

ԿԱՄՔ

Մտածողութեան կապված չորրորդ կարողութիւնն է կամքը: Շարժումները ավելի նպատակահարմար դարձնելուն մեջ կկայանա մտքի կատարած հիմնական դերը: Մտածումը ըստ էութեան կծառայե չարժումներուն: Մտածել մտածելու համար չատ ավելի ուշ ձեռք բերված և չատ ավելի երկրորդական վարժութիւն է:

Արտաքին կամ ներքին ազդեցութիւններու տակ վերարտադրված մտքերը կառաջացնեն որոշ ուղղութեամբ որոշ չարժումներ կատարելու հակում: Այդ հակումներեն մեկը կամ մյուսը, երբ կորոշվի դնել գործադրութեան, հակումը կդառնա կամք: Կամքը որոշ մկանային չարժումներու գործադրութեան որոշումն է: Ուղեղի զգայական կեդրոններուն մեջ որոշ մասերու գրգռված վիճակն է, ուրկե գրգիռը եթե բավական ուժեղ ըլլա, կհոսի ուղեղի չարժիչ մասերը և հոնկե ալ մկաններուն, որով կամքը կդառնա գործ:

Կամքի զարգացման տեսակետեն կարևորութիւն ունեցողը երեք կետ է: Նախ՝ որ մարդու մեջ կամքը ուժ ունենա, որ մարդը կամք ունենա, այսինքն արտաքին ու ներքին ազդակներու հանդեպ անտարբեր չգտնվի, այդ ազդակներուն պատասխանելե խույս չտա, ծուլ ու անտարբեր չըլլա, ընդհակառակը, պահանջ զգա չարունակ բան մը ընելու, չինելու, հարճակվելու, մեջ նետվելու ըստ ներքին դրդումի և արտաքին պահանջի: Աչխարհիս երեսին ամեն ինչ ճիգով կըլլա, աշխատանքով, ձեռներեցութեամբ և առաջ նետվելով. ով գործե կփախչի, կամենալու կդժվարանա կամ կվախնա, կտուժե իր կենդանութենեն, կտուժե կյանքի մեջ ունենալիք կարևորութենեն. ատոր համար է, որ բոլոր ժողովուրդները կարհամարհեն ծուլութիւնը և մահացու մեղքերու շարքն են դրեր:

Կամքի զարգացման տեսակետեն երկրորդ կարևոր կետը ընելիքը ճիշդ ու արագ գտնելն է: Կամք ունենալենետքը կարևորը ճիշդ կամենալն է, իր տեղին ու պետքին համեմատ կամենալը, այսինքն ներքին ու արտաքին դրդիչներուն տրվելիք հնարավոր պատասխաններեն ամենեն հարմարը և ամենեն նպաստավորը ընտրել կարողանալը: Եվ ինչքան արագ ու դյուրին որ ընտրել կարողանաս այդ ճիշդն ու պիտանին, այնքան ավելի նպաստավորված կըլլաս կյանքիդ մեջ, այնքան ավելի հաջող ու հառաջադեմ ապրուստի, ձգտումներու և պահանջներու պայքարին մեջ:

Կամքի գործադրության երրորդ կարևոր կետը ինքնազսպումն է: Ինչպես որ մեծ ձախորդություն մըն է հոգիի համար ներքին ու արտաքին դրդումներուն հանդեպ ծույլ ու անտարբեր ըլլալը և պատասխան տալ չուզենալը, նույնպես ալ մեծ դժբաղդություն մըն է անհատին համար ներքին ու արտաքին ամեն դրդումի անմիջապես ու ամեն պարագայի պատասխանել ուզելը: Ծուլության չափ և դույզ ծուլութենեն ավելի վտանգավոր է այդ խոշոր թերություննը, որ ծուլության հակառակ ծայրը կներկայացնե և ինքզինքը զսպել չկրնալն է: Ամեն դրդումի պատասխանելը ձեռնտու չէ, ամեն դրդումի անմիջապես պատասխանելը՝ ավելի ևս. պետք է գիտնաս ե՞րբ գործես, ի՞նչ ձևով և երբ՝ ոչ: Հաճախ ներքին ու արտաքին դրդիչները և առհասարակ հյուսված հաճելիի ու հահաճության զգացումները այնքան խոր կըլլան ու այնքան բուռն, որ հոգևկան մեծ ճիգերու, մեծ դիմադրության ու պայքարի կկարոտին՝ անմիջապես զրգիռին կամ հրապույրին չենթարկվելու համար, կամքի ուժգին զարգացում և համոզումներու ամրություն կպահանջեն՝ ինքզինքը զսպել կարողանալու համար:

Եվ ճիշդ առար համար ալ ղեկավար կրթության մեջ մեծ տեղ կբռնե ինքնազսպումի յուրացումը, պայմաններու և դրդումներու հոսանքին դեմ կենալու վարժությունը, այսինքն իր ներքին մղումները, իր բնազդները, իր ներքին բնածին վազքը կասեցնելու կամ դեթ դանդաղեցնելու, մեղմելու, ուշացնելու վարժությունը՝ հպատակելով իր մտքի ավելի հեռատես դատողություններուն, ավելի փորձառու խորհուրդներուն:

Ղեկավար կրթությունը մեծ համառությամբ կհետապնդե կամքի ինքնազսպումին ամրացումը, քանի որ կյանքի մեջ ինքզինքը

զսպելը այնքան մեծ դեր կխաղա անհատի բարձրումբյան, ուրիշ-ներու հետ ապրելու հնարավորութեան և իր ամեն տեսակի ձեռ-նարկներու հաջողութեան տեսակետեն: Ամեն մարդկային ընկերա-կան խմբակցութիւն, ամեն ընկերական կեանք ինքնազսպում կպահանջէ, և ինչքան ընկերութիւնը բարձր է ու զարգացած, և քաղաքակրթական վիճակը՝ խոր, այնքան աւելի չեչոված կըլլա ու մեծ նաև այդ պահանջը: Քաղաքակրթութիւն ըսելը ինքնա-զսպում ըսել է ընկերական հարաբերութիւններու տեսակետեն. ուրիշներու շահերը, պետքերը և զգացումները խնայելու համար պիտի չըննես, ինչ որ բնազդներդ ու քու հաճույքդ ընել կուզեն: Օրենք, կանոն, արգելք, բարք ու սովորութիւնը կպահանջեն մեզմէ չընել այս ու այն բանը, երբ մեր ներքին ցանկութիւնները ընել կզրդեն մեզի: Խիղճ, գութ, այլասիրութիւն, բարոյականութիւն կոչվող բաներն ալ նորեն ինքնազսպում ըսել է ուրիշներու օգտին, և ասիկա արդեն այն տեսակ բաներու համար, որ նույնիսկ օրենքն ու քաղաքավարութիւնը արգիլել չեն կրնար. քաղաքակրթական ամենեն նուրբ ու բարձրագույն արգելքներն են ատոնք:

Իրաւ կրնա ընել ղեկավար կրթութիւնը կամքի այս մեկը մյուսեն կարևոր երեք կողմերու զարգացմանը նպաստելու համար:

Առաջին ընելիքը իր ուշադրութիւնը միշտ տղոց ըրածներուն վրա պահելն է, անոնց գործին, վարմունքին, խաղին ու աշխա-տանքին վրա, անոնց հարաբերութիւններուն վրա իրենց ընկեր-ներուն հետ, մեծերուն հետ, ծանոթներուն ու անծանոթներուն հետ և միշտ հետևիլ, որ իր սանիկը անտարբեր չըլլա, ծուլութիւն չընե և որ վարժվի ճիշդ ու արագ ընտրելու իր ընելիքը և որ վեր-ջապես ինքզինքը զսպել գիտնա ու չընե այն բաները, որ կյանքը, ընկերային կարգերը, հանրային բարքն ու բարոյական ըմբռնում-ները կպահանջեն, որ չընե:

Եվ չբավականանալով կյանքի բերած պատեհութիւններովը՝ ձգտիլ նաև հոգեկան այս կողմերուն համար արվեստական կրկնու-թյան ու մարզանքի, որ ըսել է՝ առիթներ ստեղծել, պատեհութիւն-ներ ճարել, խնդիրներ հարուցանել, վիճակներ առաջացնել, ըլլա տղոց ընկերական չփումներու ատեն, ըլլա խաղերու միջոցին, ըլլա ամեն տեսակի անոնց հարաբերութիւններուն ու առօրյա գոր-ծերուն մեջ, որ մեր ցանկացած կամքի կողմերը հաճախ գործածու-

թյան գան մեր պահանջներուն համապատասխան եղանակով մը և մեր հսկողության տակ: Թև որոնք են այդ պահանջները՝ ավելի մանրամասն կխոսվի դաստիարակության մասին եղած հաջորդ հատվածին մեջ:

Դ. ԶԳԱՑՈՒՄՆԵՐՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐՔԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԳԱՑՈՒՄՆԵՐ

Զգացում կանվանենք մեր հոգեկան ամեն տեսակի աշխատանքներուն կապված ախորժի ու անախորժի զգայությունը: Մեր բոլոր զգացումները կրնանք խմբել երեքի՝ 1) ներքին ընդհանուր զգացումներ, 2) արտաքին զգայարանական զգացումներ և 3) ընկերական զգացումներ:

Ներքին ընդհանուր զգացում կանվանենք մեր բոլոր գործարաններու կատարած աշխատանքին, աշխատելու պահանջին, աշխատելու չափին, աշխատելու եղանակին, աշխատանքի բերած փոփոխություններեն առաջացող հաճելիության և տհաճության զգացումները:

Բուսական գործարաններեն եկող այդ մկանային ու չոչափական զգացումները ընդհանրապես և՛ թույլ կգիտակցվին, և՛ աղոտ են, անորոշ և հատուկ կետի մը վրա չտեղադրված. ավելի ընդհանուր զգայության մը բնույթը կկրեն, երբեմն շատ բուռն ու խուլ զգացում մը ախորժի կամ անախորժի, երբեմն ավելի բարձր դրգռումների առեն չափազանց սուր և ուժեղ հաճույքի կամ տհաճության զգացում մը, որ կրնա հիվանդագին վիճակներու հասնիլ:

Արտաքին ոսկրային մկաններու գործունեությունը ավելի որոշ տեղադրում ունի, բայց որովհետև քիչ թե շատ կարևոր մարդկային աշխատանք մը անհամար մկանային թելերու և բազմաթիվ մկանային խմբակցություններու համագործակցություն կպահանջե, ատոնց ամեն մեկուն կապված ախորժն ու անախորժն ալ նորեն իրարու կձուլվին, և մեր ունեցածը կդառնա նորեն ընդհանուր զգացում մը ախորժի ու անախորժության առանց շատ հստակ տեղադրության:

Նույն է իրողությունը նաև ջղային վերջավորություններու,

ջիղերու և ուղեղային կեդրոններու մէջ կատարված աշխատանքներուն արդյունքը եղող ախորժն ու անախորժը, այդ ջղային աղբյուրներեն բղխող զգացումներն ալ իրար կգումարվին, և մենք կունենանք ընդհանուր հոգեկան զգացում մը, և շատ անգամ նույնիսկ երկար ինքնաղննումով անկարող կըլլանք որոշելու, թե ներքին ո՞ր մասերու դրդիռեն ու աշխատանքեն ծագում է առած այս հոգեկան պայծառ զգացումս, կամ ինչո՞ւ այսպես ամեն ինչ դորշ ու անհրապույր կթվի հիմա ինծի: Հոգեբանական ինքնավերլուծումներու բավական վարժված մեկը երբեմն կհաջողի գտնել թաքուն պատճառները այդ ինչուներուն, բայց երբեմն միայն, ան ալ հաճախ ենթադրաբար և շատ թերի չափով մը:

Ընդհանուր առումով մեր գործարանական ներքին զգացումները, որոնք հիմքը կկազմեն մեր առօրյա ուրախություններուն, վայելքներուն և տրտմություններուն, լավ չտեսնվող, իրարմե որոշակի չզատված ընդհանուր զգացումներ կներկայացնեն և գիտակցության հետախուզություններուն դժվար կենթարկվին: Բնազդական, տարերային և կեսինքնիշխան գոյություն մը կվարեն մեր հոգիին մեջ, և այդ պատճառով ալ ղեկավար կրթությունը ուղղակի կերպով մեծ բան մը ընել չի կրնար այդ ներքին ընդհանուր զգացումներու այս կամ այն ուղղությամբ զարգացման տեսակետեն:

Գլխավորապես իր ընել կրցածը չափազանցություններուն առջևը առնելու ճիգեր են: Ջափ մը դնել ուտելու հաճույքին՝ որկրամոլներուն համար, խմիչքի հաճույքին՝ գինեմոլին համար, սեռական չափազանցության՝ շվայտին համար, զգուշացնել թմրեցուցիչ նյութերու ազդեցութենեն, այսինքն պայքարել մոլություններու դեմ և ընդհանրապես ընկճել գիտնալ իր ուժեղ կիրքերն ու հուզումները: Եվ խուսափիլ ամեն տեսակի մարմնական ու հոգեկան խաղերու, մարզանքներու, զվարճություններու, ճիգերու և աշխատանքներու չափազանցումեն: Վարժեցնել անհատը չափի ամեն բանի մեջ, չափավորությունը դարձնել բարոյական սկըռնք: Եվ ատոր համար՝ 1) Դիմում կատարել գիտակցության և հասկցնել այդ չափազանցումներեն առաջացող թե՛ մարմնական, թե՛ հոգեկան և թե՛ ընկերական ավերները: 2) Զորացնել կամքը ընդհանրապես, որ դիմադրել ու պայքարիլ կարողանա նախնական բնազդներու տիրապետության դեմ: 3) Զբաղեցնել միտքն ու

մարմինը ուրիշ գործերով, գրավել հոգին ուրիշ տեսակի հաճույքներով ու վառել հոգիին մեջ ուրիշ ավելի աղնիվ ու բարձրացնող տեսակի կրքեր, ինչպես են՝ գործի, արվեստի ու ստեղծագործության սերը, դիտողության հափշտակությունը, մեծ գաղափարով մը տարվիլը, հանրային գործունեության նվիրումը:

Այլև չափավորության կից վարժեցնել անհատը, որ սանձել ու խեղդել կարողանա իր մեջ ամեն տեսակի վախերն ու բարկությունները և ամեն տեսակի ստորին զգացումները՝ նախանձ, ատելություն, չարախնդություն, որ հոգին դեպի վեր խոյանալ կարողանա:

ԱՐՏԱՔԻՆ ԶԳԱՅԱՐԱՆԱԿԱՆ ԶԳԱՑՈՒՄՆԵՐ

Զգացումներու առանձին տեսակ մը կկազմեն մեր զգայարանքներու դուրսի աշխարհեն բերած զգայություններուն ու պատկերներուն առաջացուցած ախորժն ու անախորժը: Եվ մեր զգայարանքներեն ալ մասնավոր կարևորություն ներկայացնողը բարձր զգայարանքներն են՝ աչքն ու ականջը, որոնք հեռվեն կգործեն և այնքան մեծ դեր ունին մեր պատկերացումներու և մտածումներու կառուցման գործին մեջ. նույնն է իրողությունը մեր զգացումներու վերաբերմամբ:

Բարձր զգայարանքներու բերած տպավորություններուն հյուսված մեր զգացումներու առաջացման մեջ աչքի առաջ պետք է ունենալ միշտ անոնց երեք գլխավոր աղբյուրները: Նախ՝ ամեն մեկ զգայության չափեն, ուժեն և այլ առանձնահատկություններեն առաջացող հաճն ու տհաճը: Երկրորդ՝ զանազան զգայարանքներով կամ նույն զգայարանքի զանազան կողմերով միաժամանակ առաջված զգայություններու կապակցությենեն առաջացող ընդհանուր հաճույքն ու տհաճությունը, զանազան իրերու և առարկաներու իրարու հետ փնջումեն, իրարու հանդեպ բռնած դիրքեն, իրարու հյուսումեն և անոնց ամբողջությենեն առաջացող հաճույքն ու տհաճությունը: Եվ երրորդ՝ այդ առարկաներու շարժումեն, տեղափոխությենեն, գործունեությենեն, փոփոխություններեն և այդ շարժումներու, գործերու և փոփոխություններու հաջորդականությենեն առաջացող հաճույքն ու տհաճությունը:

Ամեն մարդ իր զգայարանքներով զգացական նույն ունակությունները չունի և նույն զգայարանքների բոլոր կողմերով հավասար զարգացում չունի: Ինածին զանազանություններ կան, որոնք միայն շատ համեստ չափերով կարելի է որոշ սրբագրության և մշակման ենթարկել: Մասամբ ալ սակայն այդ զգայարանքը կամ զգայարանքին այդ կողմը որոշ ուղղությամբ գործածված չըլլալուն հետևանքն է թերությունը: Արտաքին իրերեն ու երևույթներեն հաճույք ու տհաճություն զգալն ալ շատ խոշոր չափերով նորեն վարժության հարց է: Ինչպես որ առարկաներն ու անոնց հարաբերությունները տեսնելն ու չտեսնելը, աս ալ կապված է նմանապես կրթության. զգացումներն ալ կրթությամբ կնրբանան ու կմշակվին:

Արտաքին զգայարանական զգացումներու՝ ինչ աստիճանի և ինչ ձևով մշակված ու զարգացած ըլլալը կանվանենք ճաշակ: Ճաշակը կրթելու համար ղեկավարության ունեցած գլխավոր միջոցները հետևյալներն են.

1) Ինչպես ինքնաբեր զգայություններու ու պատվերներու ներս խուժած միջոցին, այնպես ալ կամավոր դիտողություններու ժամանակ միշտ ալ պետք է դրդել մանուկն ու պատանին, որ ուշադրություն դարձնե նաև անոնց զգացական արժեքին, այսինքն պետք է պահանջենք, որ հաչիվ տա իրեն թե՛ տեսածն ու լսածը ինչ զգացում կառաջացնեն իր մեջը, կախորժի՞, կսիրե՞, ինչ չափով:

2) Դիտել տալ իրերուն, երևույթներուն, տեսարաններուն գույները, լույսերը, խառնուրդները, ձևերը, դիրքերը, դասավորումն ու փնջումը, նույնպես ձայներն ու եղանակները, պահանջել անոնց մեջի նրբություններուն զանազանումը և անոնց բերած զգացումներուն զանազանությունը:

3) Փոփոխելով ու փոփոխել տալով իրերուն գույնը, ձևը, դիրքերը, հյուսքերը, կառուցումը՝ հարմարեցնել իրենց ճաշակին: Դիտելով մոտեն, հեռվեն, դեմեն, քովեն, վարեն, վերեն՝ գտնել իրերուն ամենեն գեղեցիկ դիրքն ու վիճակը:

4) Վարժեցնել հատուկ ուշադրությամբ նայելու բնության մեջ կատարվող ամեն տեսակի շարժումներուն, փոփոխության, կյանքի առաջացմանն ու աճումին, հետևել ու դիտել սիրով ու խորանալով, մտերմորեն:

5) Շրջապատել հասունացող սերունդը գեղարվեստի գործերով, հնարավորություն տալ տեսնելու և լսելու մշտական ու տևական պարբերականությամբ նկարչական ու երաժշտական լավագույն ստեղծագործությունները, օգտագործել այդ ուղղությամբ և լայն չափերով շարժապատկերների ու ձայնագիր մեքենաներու տված առավելությունները: Հետն ալ միշտ բացատրելով գեղարվեստական տարբերությունը, առանձնահատկությունը, արժեքը և նույն կտորները ցուցադրելով և ունկնդրության դնելով չատ ու չատ անգամներ՝ ամենաթարմ հասակեն սկսած:

6) Այդպես ալ մշտական չփման մեջ պահել նոր սերունդը գրական բարձր արժեքով գեղարվեստական երկերու հետ: Ընտրանքով ու աստիճանական ընթերցումով, կանոնավոր, տևական ու պարբերական ընթերցումով, խոսելով կարդացածի մասին, փնտրել տալով կարդացածին մեջ ամենեն ավելի գեղեցիկ, ազնիվ ու բարձր զգացքերը, դեպքերը, գործերը, արտահայտությունները:

7) Եվ վերջապես՝ կանոնավոր ու չափավոր պարբերական աշխատանքով վարժեցնել պատանին աշխատության վայելքին. դիտելը, մտածելը, սորվիլը, հասկնալը, թափանցել կարողանալը պետք է դառնա հաճույքի աղբյուր, այդպես ալ արվեստներու և արհեստներու վրա թափած աշխատանքը և իր հոգին ու մտածումները ձևավորել ու արտահայտել կարողանալու համար գործադրվող աշխատանքը: Հաճույքի աղբյուր են ընելը և ըրածին հաջողիլը, և այդ բոլոր աշխատանքներուն և հաջողանքներուն մեջեն դուրս կելայտն ինքնին կյանքի գեղեցկության զգացումը, գոյության հրապույրը, ապրելու ուրախությունը: Ամեն հոռետեսություն և ամեն տևական տխրություն կա՛մ հիվանդության արդյունք է, կա՛մ անգործության:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶԳԱՑՈՒՄՆԵՐ

Ընկերական զգացում կանվանենք այն ախորժն ու անախորժը, որ կառաջանա մեր մեջ ուրիշ մեղի նման արարածներու անձին, կյանքին, գործին կամ ստեղծագործություններուն հետ ունեցած չփումներեն: Այդ ընկերական զգացումներուն այլազանությունները չատ են, բայց հիմնական էությունը նույն է միշտ.

եթե ախորժ է՝ կըսենք սեր. անախորժները ատելի են, կցանկանք ատել, այսինքն կտրել, կտրվիլ իրենցմե:

Ընկերական կյանքի զարգացման ու սերտացման տեսակետեն, մարդկային բաղդավորութեան և քաղաքակրթութեան բարձրացման տեսակետեն չատ մեծ կարևորութեուն ունի ընկերական զգացումներուն ծավալումն ու խորացումը, այսինքն երբ մարդ անհատը իր ամեն տեսակի մարդկային շփումներու ատեն անտարբեր ու անզգա չի մնար, այլ կկապե այդ բոլոր հարաբերութեուններուն հաճի ու տհաճի ավելի կամ պակաս կենդանի զգացումներ: Այդ զգացումները որքան հաճախ որ ընկերանան իր ընկերական հարաբերութեուններուն, ինչքան ջերմ ու դյուրին առաջանան և ինչքան խոր ու մնայուն ըլլան, այնքան անհատը կանվանենք դյուրազգաց ու ընկերական:

Փոքրիկներու հոգին դյուրազգաց, դյուրահաղորդ, ջերմ ու ընկերային դարձնելու իր ճիգերուն մեջ ղեկավար կրթութեունը ունի գլխավորապես հետևյալ միջոցները.

1) Նախ՝ սերն է, որ սեր կծնի. ինչպես ամեն բանի մեջ օրինակն է վարակիչն ու ազդողը, իր հետևեն քաշողը. ասիկա ավելի ևս ճիշդ է զգացումներու աշխարհին համար. տաք ու խորունկ զգացող և սրտանց կապվող հոգիներն են, որ ամենին ավելի կազդին անձնական շփումով: Ինչքան չոր, քաշված ու պաշտոնական է ընտանիքի անդամներուն ու դաստիարակներուն հոգին, այնքան խեղճ է իրենց դերը զգացումներու կրթութեան տեսակետեն: Միայն թե, ինչպես ամեն բանի մեջ, հոս ալ ներքին բնական էութեունը պետք չէ շփոթել արտաքին արվեստական ցույցերու և զեղումներու հետ: Սեր ունենալու, ջերմորեն կապվելու և խորապես ազդելու համար բնավ կարիք չկա այդ զգացումներու մասին խոսելու, չողոքորթութեուններ, գովասանք ու փաղաքշանքներ շռայլելու. իսկական զգացումը միշտ կթափանցե առանց արտաքին որևէ ցույցի և միշտ կկրթե առանց աղմուկի ու ցուցամոլութեան: Իսկ այդ ցուցադիր արտահայտութեունները զգացումի կա՛մ կեղծ կըլլան, կա՛մ իբրև կեղծ կզգացվին և ընդհանրապես հակառակ արդյունքը կառաջացնեն:

2) Սեր, համակրանք, կարեկցութեուն և հոգեկան մերձեցում առաջացնելու երկրորդ միջոցը շրջապատող անձերուն հոգեկան

աղվոր գծերը, դրավիչ կողմերը, գնահատելի հատկութիւնները, գեղեցիկ ունակութիւնները, արժանիքները տեսանելի ու գիտակից դարձնելն է փոքրիկներուն համար: Նույն պատճառով ալ ուրիշներու մասին խոսած խծբծանքներն ու բամբասանքները հանցանք մըն են պարզապես՝ ուղղված ինչպես քննադատող անհատի անձին, այնպես ալ այն անհատներուն հանդեպ, որոնց ներկայութեան այդ ցածութիւնները կկատարվին, որովհետև տղոց հոգիներուն մեջ հակակրանք, անոտիութիւն, չարութիւն ու թշնամութիւն կսերմանեն: Իսկ երբ մեզմե անկախ կերպով ուրիշներու թերիներուն ու զեշ կողմերուն կամ արարքներու մասին հարց ծագի, դաստիարակի պարտավորութիւնն է զեշ տպավորութիւնը մեղմել ներողամիտ վերաբերումով և ընդգծելով, որ թերի կողմեր ու սխալանքներ ունին ամենքը: Կոչտ ու անկիրթ հոգիներն են, որ ուրիշներու պակասութիւնները մեծացնելու հակումը ունին և, ընդհակառակը, մարդոց աղվոր կողմերուն վրայեն սահելով կանցնին:

3) Մարդոց առավելութիւններուն հանդեպ բաց աչք ունենալը և թերութիւններուն հանդեպ ներողամտութիւն ունենալը այնքան ավելի կշեշտվի մարդուն մեջ, որքան չատ որ դիմացինիդ կյանքին պայմանները, հոգեկան վիճակը, իր անցյալն ու ներկան ծանոթ ըլլան մեզի, այսինքն ինչ չափով որ խոր թափանցել կկարողանանք մեր դիմացինի հոգին ու դրութիւնը: Եվ ճիշդ այդ պատճառով ալ ուրիշի հոգին մտնել և ուրիշի հոգին ըմբռնել կարողանալը չատ կարևոր կրթիչ միջոց մըն է ղեկավար կրթութեան ձեռքը: Այս տեսակետեն բացառիկ է գրական երկերու ընթերցման դերը. այդ ընթերցումները կվարժեցնեն մեզի ուրիշներու հոգերով հուզիլ, ուրիշներու ուրախութիւններով ուրախանալ, խառնվիլ ուրիշներու հոգիներուն, անոնց ապրումներուն, խարխաբումներուն ու վշտերուն: Ուրիշի մը վիճակը մտնել արդեն ներել ըսել է, ներելն ու ըմբռնելն ալ առաջին աստիճանն է սիրելուն:

4) Հայրենի ու ազգային զգացումներու զարգացման համար մեծ ազդակ մըն է հայրենի հողիդ աչքի իյնող վայրերը, պատմական կարևոր կետերը, բնութեան ցուցադրած գեղեցկութիւնները, տնտեսական դիւսավոր կեդրոնները, ազգային հին գծերը պահած անկյունները և ընդհանրապես գյուղ ու քաղաք հաճախ այցելած,

թափառած, տեսած ու կենակցած ըլլալը: Նույն նպատակին կծառայեն ժողովուրդիդ պատմությանը մոտիկեն ծանոթ ըլլալը, ժողովուրդիդ քաղաքակրթական գրական ու գեղարվեստական երկերուն հետ մշտական մտերիմ հարաբերության մեջ գտնվիլը: Վերացական հայրենիք մը և վերացական ժողովուրդ մը կարելի է միայն վերացականորեն սիրել: Եվ հայրենիքի ու սեփական ժողովուրդի սերը այնքան խորունկ կըլլա, որքան որ խոր ու տևական է եղած անհատի ու իր հանրության այդ բնական կապն ու շփումը:

5) Իսկ համամարդկային զգացումներու ամրացման համար ալ շատ կնպաստեն օտար ժողովուրդներու հետ մարդուս ունեցած քիչ-շատ տևական ու մոտիկ հարաբերությունը, անոնց կյանքովը ապրած ըլլալը: Հոս ալ կարևոր դեր կխաղա շարժանկարը, որ բոլոր ժողովուրդներու կյանքն ու կենցաղը իրար կխառնե: Շատ ավելի խոր կերպով կկատարեն նույնը գեղարվեստները, գրականությունն ու պատմությունը: Այսինքն լայն մտավոր զարգացումը, որ հիմնված է միշտ բոլոր ժողովուրդներու գիտության, արվեստին, փիլիսոփայության, տնտեսության և բարոյական պայմաններուն ավելի կամ նվազ հիմնական ծանոթության վրա:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ԻՐ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԱՆՁԻ ՎԱՅԵԼՉՈՒԹՅՈՒՆ

Մարդը միշտ մարդոց մեջ է, միշտ մարդոց հետ կապրի, միշտ չփման մեջ է իր նմաններու հետ և անոնցմե կազդվի և ինքն ալ փոխադարձաբար իր մարմնական ու հոգեկան էութիւնեմբ կազդե իր նմաններուն վրա այս կամ այն չափով, նպաստավոր կամ աննպաստ կերպով: Այս պատճառով ալ ամեն անհատ պետք է գիտնա՝ ի՞նչ և ինչպե՞ս ընե , որ ուրիշներուն անախորժ չըլլա, ինչպե՞ս վարվի, որ ուրիշներուն հաճելի ըլլա, առանց որուն անկարելի է մտերիմ ու բարեկամ կենակցութիւնը: Իր նմաններուն անհաճո եղողը խիստ պարագաներուն կչեզոքացվի ու կարտաքսվի ընկերութենեն, իսկ ավելի թեթև պարագաներուն կդառնա ենթակա ծաղրի, հալածանքի, արհամարհանքի և իր ձեռնարկներուն մեջ՝ դժվարութեյան ու անկարողութեյան:

Թե՛ իր օգտին համար, թե՛ իր նմաններու օգտին համար արդեն անհատը պետք է գիտնա՝ ինչպե՞ս վարվի այս ու այն պարագային, պետք է գիտնա՝ թե ինչ կպահանջվի իրմեն իր նմաններուն կողմե անոնց հետ ունեցած իր չփման, իր հարմարութեյուններու և կենակցութեյան միջոցին, պետք է գիտնա, թե իր միջավայրին քաղաքակրթութեյունը, իր շրջապատի ըմբռնումները ի՞նչ պարտականութեյուններ կդնեն իր վրա, իր վարք ու բարքին, իր վարմունքին վրա:

Մարդկային քաղաքակրթութեյան յուրացումը չի լրանար կարողութեյուններու մշակումով և ուսումներ ամբարելով. անհրաժեշտ

է նաև յուրացումը մարդկային կենցաղավարութեան և բարոյականութեան: Մարդկային կրթութիւնը լրիվ դառնալու համար կարողութիւններու և գիտութիւններու մշակման պետք է միանա վարմունքի ընկերական մշակումը, կարողութիւններու զարգացման և ուսման պետք է ընկերանա դաստիարակութիւնը:

Մեր նմաններուն մէջ ապրելու համար պահանջված ձևերը, մեր նմաններուն հետ վարվելու եղանակները կանվանենք դաստիարակութիւն:

Մարդկային կենակցութեան և հարաբերութիւններու միջոցին ամեն քիչ-շատ կրթված անհատե սպասված վարվելակերպի պահանջները, ուրիշ խոսքով՝ ղեկավար կրթութեան ներարկել ցանկացած դաստիարակութեան պահանջները կբաժնենք երկուքի՝ վարմունքի արտաքին պահանջներ և վարմունքի ավելի խորին ներքին պահանջներ:

Արտաքին տեսակի վարմունքի պահանջները սովորաբար կարտահայտենք քաղաքավարութիւն բառով և կրնանք խմբել չորս տեսակի՝ անձի վայելչութիւնը, շարժուձևերու վայելչութիւնը, արտահայտութեան վայելչութիւնը և պայմանական պահանջներ:

Հանրութեան մը ամեն մեկ անհատեն պահանջվող առաջին բանը իր անձին վայելչութիւնն է, որ իր ներկայութիւնը իր ընկերներուն մէջ որևէ կերպով անախորժութեան աղբյուր չդառնա: Այս տեսակետեն ամեն անձե եղած առաջին պահանջը մաքրութիւնն է. աղտոտութիւնը ամենազզվելի բանն է ընկերական չփման մէջ. ո՛չ մեկ հարգանք ու պատկառանք երկար դիմանալ չի կրնար անձի մը մարմնեն ու հագուստեն եկող նողկանքին դեմ:

Մաքրութենեն ետքը մեծ կարևորութիւն ունեցող խնդիր է նաև վրա-գլխի կոկիկութիւնը. անխնամ, քրքրված, վայրիվերո ու մասերը իրար չբռնող վրա-գլուխը միշտ անախորժ զգացումներ կարթնցնե մեր մէջ, ինչքան ալ որ մեզի զսպել ուզենանք շատ մը զանազան պատճառներով, զգացումներ, որոնք կարեկցութենեն սկսած տարբեր աստիճանի հակակրանքներու վրայով կհասնին մինչև ատելութիւն: Բոլոր ազգերը և բոլոր դարերը լուրջ ու կատակ ձևերով շեշտած են միշտ հագուստի կարևոր դերը ընկերական հարաբերութիւններու ժամանակ: Հագուստի վերաբերմամբ կա անփութը, թափթփածը, կոկիկը, ճաշակավորը, խիստ ընտրողը,

բծախնդիրը, սեթևեթը, վարթամը՝ իրենց բոլոր դրավչությամբ ու ծիծաղելիություններով:

Մաքրության ու կոկիկության կից՝ անձի վայելչության պայման մըն է նաև շրջապատի հասկացողության համեմատ հագվիլն ու զարդարվիլը: Զարդարանքի ու հագուստի վրա ամեն չեղում ու այլաձևում շրջապատի սովորություններեն կնկատվի անճաշակություն, ցուցամոլություն կամ ըմբոստացում: Եթե թեթևակի են այդ մեղանչումները, կպատժվին հեգնանքով ու բամբասանքով. եթե քիչ մը ավելի չեշտվին, անհատը բազմության մեջ կենթարկվի անախորժ ցույցերու, հետ նայվածքներու, նույնիսկ հալածանքի ու թշնամանքի:

ՇԱՐԺՈՒՆԵՎԵՐՈՒՆ ՎԱՅԵԼՉՈՒԹՅՈՒՆԸ

Վարմունքի արտաքին պահանջներուն երկրորդն է շարժուձևերուն վայելչությունը, այսինքն նիստ ու կեցվածքի, քալվածքի վայելչությունը:

Այս տեսակետեն դաստիարակության հիմնական պահանջը զուսպ ըլլալն է. նստիլ, կենալ ու շարժվիլ արտասովորություններե ու չափազանցումներն խուսափելով: Կիսապառկած դիրքեր, ոտքերն ու թևերը չհած նստիլ, ոտքերը դիմացի աթոռին երկարել, ցատկելով տեղեն ելլել, մարմնի կոտրտուքը, զանազան մարմնամարզական ձևերը, որ մարդս կընե հաճախ իր առանձնության կամ մտերմության մեջ, օտարներուն առջևը կզգացվի իբրև կոպիտ ու անպատկառ: Եվ ընդհանրապես ամեն դիրք, շարժում ու կեցվածք, որ մարմնի զանազան մասերը խիստ ցայտուն կերպով դուրս կցցե և ուշադրություն կգրավե, կզարնե ամոթի զգացումին, կնկատվի իբրև անամոթ կամ իր անսովոր ցուցադրությամբ ծիծաղ կառաջացնե ու ծաղրի կտանի:

Բայց ընդհանրական ու բնական դիրքերն ու շարժումները շատ բազմատեսակ են. միշտ ալ կարելի է ատոնց մեջ ընտրություն մը, նախասիրություն մը ունենալ և որոշ մշակում՝ ավելի դրավչություն և ավելի գեղեցկություն տալու համար անոնց: Ինչպես որ զարդարվիլը, հարդարվիլն ու գեղեցիկ հագվիլը հոգեկան բնական պահանջ մըն է, այնպես ալ իր մարմնի բռնած դիրքին, ելլելուն,

քալելուն ու շարժումներուն մեջ հրապույր մը դնելը բնական հոգեկան անհրաժեշտություն մըն է. այնպես որ շարժուձևերուն վայելչության երկրորդ պահանջը կղառնա ճաշակը, գեղեցկության զգացումին դոհացում տալը: Խուսափիլ ամեն կերպ այն տեսակ կեցվածքն ու շարժուձևերե, որոնք թեև ո՛չ արտառոց են, ո՛չ ալ կոպիտ, բայց շատ գեղեցիկ չեն, և ընդհակառակը, բռնել նույն սովորական ձևերուն ավելի նուրբը, ավելի ճկունը, ավելի կենդանին, ավելի իր մեջը աչխուժ և զգացում պարունակողը:

Կան մարդիկ, որոնց մեջ բնականեն ուժեղ է շարժուձևերու այդ ճաշակը, ոմանք իրենց գործի բերումով հատուկ կուսումնասիրեն ու կզարգացնեն իբրև արվեստ. թատրոնի ու ֆիլմի մեծ հրապույրներեն մեկն է այդ արվեստը: Կան մարդիկ ալ, ըլլա մանուկ թե հասուն, որ բնականեն անճկունություն մը ունին, բնական անօգնականություն մը. չգիտե՝ ո՞ր ուղքին վրա կենա, չգիտե՝ ինչպե՞ս նստի, չգիտե՝ ձեռքերը ո՞ւր պահե և ի՞նչ ըսե ու ընե. կան բնականեն անտաչ շարժումներով մարդիկ, դանդաղ ու դժվար շարժումներով մարդիկ, որոնք և սովորաբար իրենց ընկերներու մեջմ կատակներուն նյութ են միշտ:

Ընդհանուր առումով սակայն ինչպես զուսպ ըլլալը, այնպես ալ շարժուձևերու մչակումն ու գեղեցկացումը զույգ կերթան հոգեկան նրբացման հետ, այլև մեծ չափերով հյուսված է առողջության, զվարթության, հաչողության և իր ուժերու գիտակցության: Գործերը հաչող, իր խոեալներով հափչտակված և իր ապագայով խիզախ ու հպարտ մարդուն շարժումները անշուշտ որ ավելի գեղեցիկ կըլլան ու ավելի առույգ, քան երբ մարդուս գործերը ծուռ կերթան, երազները կխորտակվին, կամ երբ հիվանդ է կամ ուժասպառ:

Նիստ ու կեցվածքի երրորդ պահանջը բնականություննն է: Թե՛ ինքզինքը զսպելը, թե՛ գեղեցկացնելը երկուքն ալ հղկում մըն է, սրբագրություն մըն է ներսեն եկածի. արդ՝ այդ հղկումն ու զսպումը շատ դյուրին է չափազանցության տանիլը, անբնական ճամբով տանիլը կամ էությանդ չհարմարող եղանակով մը տանիլը, որուն հետևանքը կըլլա շարժուձևերու արվեստականությունը, չինծու ու կեղծ ըլլալը: Ուրիշներու վրա գեղեցիկ եղող ու գրավիչ շարժում մը, երբ քու կերպարանքիդ ու կազմիդ չի հարմարիր, ծիծաղ ու ծաղր միայն կառաջացնե: Ամեն զսպում, ամեն հղկում

պիտի կատարվի քու բնական հակումներուդ և կազմվածքիդ հարմարվող ուղղութեամբ՝ առանց քու բնականութիւնդ ու էութեանդ անմիջականութիւնը խաթարելու:

ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՎԱՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկային չարժումներուն մէջ մեծ մասը կկատարվի իբրև հոգիի արտահայտութիւն կամ կընկերանայ հոգիի՝ խոսքով կատարված արտահայտութեան: Դիմքի կծկումներ, գլխու տատանումներ, ձեռքերու անվերջ խաղը գրեթե միշտ զուգ կերթա խոսակցութեան, երբեմն խիստ արտահայտիչ, երբեմն ավելի անորոշ ու վայրկիվներո ձևով մը մեր միտքն ու զգացումները թարգմանելով. երբեմն ամբողջ մարմինը կմասնակցի պատմվող բանի մը կենդանի պատկերացման, որով պատմութիւնը իր կարևոր կետերուն մէջ կդառնա ներկայացում:

Եվ դաստիարակութիւնը այս արտահայտչական չարժումներուն ալ վայելչութեանը կձգտի: Եվ հոս ալ առաջին պայմանը չափավորութիւնն է. խոսելու ատեն անընդհատ դիմախաղը կապկային է, ձեռքի անընդհատ չարժումները քաղաքակրթութեան ավելի վարի աստիճաններուն է հատկանիշ, իսկ չարունակ ամբողջ մարմնով խոսիլն ու ներկայացնելը վայրենի մարդուն է հատուկ: Պետք է զսպվին ու պետք է մեղմացվին այդ արտահայտական հորդ չարժումները հնար եղածին չափ շատ, մանավանդ երբ դադրած են արդեն որոշ մտածումի մը կամ որոշ զգացումի մը ինքնաստիպ արտահայտութիւնը ըլլալե և դարձած են միշտ նույն կերպով կրկնվող մեքենական ցնցումներ: Որչափ քիչ և որչափ հատուկ արտահայտական արժեքով գործածվին չարժումները, այնքան մեծ կըլլա իրենց ազդեցութիւնը թե՛ հուզելու, թե՛ զվարճացնելու և թե՛ հասկցնելու տեսակետեն:

Երկրորդ պայմանը այդ արտահայտիչ չարժումներու ճաշակավորումն է. պետք չէ վիրավորեն դիմացինի զգացումները: Կդառնան վիրավորիչ, երբ իրենց հանկարծական ուժեղ պոռթկումներով կվախցնեն, երբ մեծ աղմուկ կհանեն ոտքով, ձեռքով, բռնած իրով մը, երբ թուք կցատկեցնեն, երբ տգեղ և անմաքուր բան մը կինմանեցնեն կամ կակնարկեն, երբ հայհոյական խոսք մը կփոխարինեն,

այսինքն բոլոր աղտոտ, աղմկոտ, կոպիտ ու հայհոյական արտահայտությունները՝ ըլլա ձեռքերով, աչք ու դեմքով թե մարմնով:

Բ. Մարդկային հոգիի արտահայտությանը կծառայեն նաև բացականչություններն ու դիմառնությունները, որոնք նմանապես մարդե մարդ ու ժողովուրդե ժողովուրդ կտարբերին իրենց հաճախությամբ, բայց ամենուն շրթունքին ալ կան: Հոս ալ վայելչության հիմնական պահանջը չափավորությունն է. նախնական մարդու լեզուն բաղկացած է գրեթե բացառապես բացականչություններե. վայրենիներու լեզվին մեջ երկու-երեք բառեն մեկը բացականչություն է. քաղաքակրթության ավելի բարձր աստիճաններուն հասած ժողովուրդներուն ալ ամենեն նվազ քաղաքակիրթ չերտերն ու անհատները ամենեն շատ կգործածեն բացականչությունը. ամեն հրաման, ամեն զարմանք, ամեն հուզում, ամեն զատողություն իր առջևեն ու հետևեն «ախեր», «օֆեր» ու «վախեր» ունի և անվերջ դիմառնություններ՝ ծո՛, պե՛, քա՛, ձա՛գա, ջա՛նս, գեչ ու ու աղեկ, նուրբ ու կոպիտ տեսակներով:

Վայելչությունը կպահանջե այս բոլոր դիմառնություններն ու բացականչությունները իջեցնել առնվազն չափի, և այն ժամանակ է, որ իրապես խոր իմաստ և զգացումներու ճշգրիտ արտահայտություն կստանա ամեն բացականչություն, ամեն դիմառնություն: Երբ ամեն մարդու «հոգիս» կըսես, «թանկագինս», «սիրելիս» և ամեն չնչին պարագայի «ավա՛ղ», «ափսո՛ս» ու «երանի՛» կկանչես, ատոնք կդառնան իմաստե և զգացումե զուրկ ձայնի մեքենական արտաբերում, ձեռքի միատեսակ ու անիմաստ շարժումներու նման:

Բացականչություններու և դիմառնություններու երկրորդ պայմանն ալ նորեն գնեցկությունն է ու ճաշակի դեմ չերթալը: Իր արտասանությամբ կամ իր իմաստով տգեղ ու անվայել եղող ամեն բացականչություն պետք չէ ելլե կրթված շրթունքներե. ատոնք նշան են հոգեկան կոպտության ու գռեհկության, երբ մինչև անգամ հատկապես ծիծաղեցնելու համար կըսվին: Ժողովրդական վարի խաւերու առօրյա և հայհոյանքներով լեցուն լեզուն հարուստ է նաև այս կարգի կոպիտ բացականչություններով, ձայնանմանություններով և տգեղ, հաճախ օտարազգի դիմառնություններով:

Գ. Մարդկային հոգիի արտահայտության երրորդ միջոցը և

արդեն հաստատված մարդկային միջոցը բառերն են, բառերու լեզուն, խոսիլը: Խոսքը մարդուս հնարած ամենեն խոր ու սուր զենքն է և ամենեն բարձր ու նուրբ ստեղծագործությունը: Եվ խոսքը մեծ ուժ է, և խոսելը՝ մեծ արվեստ: «Անուշ լեզուն օձը ծակեն կհանե» և «ոչ մեկ սուր լեզվի նման չի խոցեր»: Խոսքի ուժով մարդիկ աշխարհքը կդարձնեն, և խոսքի զարգացման է կապված բանականության ալ զարգացումը: Շատ մեծ առավելություն է այս տեսակ զենք մը աղվոր գործածել գիտնալը, նուրբ գործածել գիտնալը և վայելուչ կերպով գործածել գիտնալը: Աղվոր ու նուրբ գործածության հոգը ուսուցման վրա է, վայելուչ գործածության հոգը՝ դաստիարակության:

Եվ դաստիարակության առաջին պահանջն է պարզությունն ու հստակությունը խոսելու ատեն թե՛ հնչելու և թե՛ իմաստի տեսակետեն: Երբ այնքան արագ կխոսիս, որ բառերն իրար կճուլվին, կղզվին ու չեն հասկցվիր, երբ այնքան ցած ու անորոշ կխոսիս, որ բառերը հստակ չեն լսվիր, երբ որոշ հնչյուններ այնքան իրարու նման կհնչեն կամ արտառոց ձևով մը, կամ որոշ հնչյուններ գրեթե բնավ չեն հնչեր, երբ բերնիդ խորքը կամ շրթունքներուդ թափթփելով, աղավաղելով կարտասանես բառերը, բնականաբար ըսածդ չի հասկացվիր պետք եղածին պես, իսկ խոսքը մտածումդ ուրիշներին հաղորդելու համար է ստեղծված. եթե իր այդ դերը չի կատարեր, կդառնա դժգոհության ու անախորժության աղբյուր:

Նույնը և իմաստի տեսակետեն. երբ անսովոր, հինցած, մաշված, ուրիշ լեզուներեն առնված բառեր կգործածես, երբ նախադասությունները կիսատ, անկանոն ու անկերպարան կկազմես՝ երկմտություններու ծնունդ տալով, երբ ակնարկություններ կընես քեզի հայտնի, դիմացինիդ անծանոթ դեմքերու ու դեպքերու մասին, երբ կարճ խոսելու ջանքով ըսելիքդ անորոշ ու մութ կթողնես կամ, ընդհակառակը, ըսելիքդ կերկնցնես՝ չորս, հինգ հարցեր մեջտեղ իրար խառնելով ու մտածումիդ թելը խճճելով, բնականաբար ըսածիդ հետևիլը կդժվարեցնես և մեծ անախորժություն և ժամավաճառություն կպատճառես ուրիշներուն:

Վայելչության, քաղաքավարության և բնականության պահանջն է բոլոր տառերը և բոլոր վանկերը հնչել հստակ, ըստ լեզվի օրենքներուն համաձայն, իմաստքով ու պարզ կազմել նախա-

դասուլթյունները և հնար եղածին չափ կարճ ու կտրուկ, կենդանի նախադասութիւններ, ո՛չ թե իրարու հյուսված անվերջ որ-երով. և երբեք հարցերը իրար չխառնել, ջանք ընել միշտ պարզ, հստակ, ճիշդ ու կանոնաւոր արտահայտութեան, որ միևնույն ժամանակ կդառնա նաև ինքնին գեղեցիկ ու ազդու:

Վայելուչ խոսվածքի երկրորդ պահանջը բնականությունն է, խուսափում ամեն արվեստականութենեն ու արվեստակութենե նորեն թե՛ հնչական տեսակետեն, թե՛ իմաստի: Ամեն տեսակի հնչական ծեքծեքումներ, դիտավորյալ երկարացումներ, ոստնումներ, խոսքը կիսատ թողնելներ, ճառախոսական շեշտեր, կեղծ ելևէջներ ու չինծու զգացական թրթիռներ և նման եղծություններ «ազդելու» և «զեղեցկացնելու» չանքով ամենակոպիտ ազդեցություններ են և միայն զզվանք ու արգահատանք կազդեն քիչիկ մը ճաշակ ու առողջ բնազդներ ունեցող մարդուն:

Այդպես ալ երբ դիտմամբ հազվագյուտ ու դյուրին չհասկըցվող բառեր կփնտրվին, արտահայտական տարօրինակություններ, երբ բնական շարահյուսության փոխարեն կնախընտրվի ոլորուն, մեջեմեջ ու ցատկռտուն ոճ մը ավելի խորհրդավոր ու նրբաճաշակ ըլլալու դիտավորությամբ, հետևանքը կըլլա միշտ նույնը. լեզվի ու գրականության տեղյակ մարդուն արգահատանքը կչարժե, այդ բոլորեն շատ բան չհասկցողին ալ զարմանքը, բայց ո՛չ մեկուն սիրտն ու միտքը: Կեղծիքը, արվեստականությունն ու անբնականությունը ամեն տեղ ալ ստորին բան մըն է, որովհետև ամեն տեղ ալ բուն արժանիքի պակասը սքողելու կճգտի: Իսկապես մեր սրտեն խոսել ուզողը, իսկապես մեր մտքին ըսելու բան մը ունեցողը իսկույն կգտնե և՛ սրտի լեզուն, և՛ մտքի, ավելորդ փնտրտուքներու ու ծռմռումներու կարիք չունի. այդ կարիքը կառաջանա, երբ բան մը ըսել կուզես և ըսելիք չունիս, երբ սրտի զարնել կուզես և պետք եղած ներքին ապրումները չունիս:

Լեզվի վերաբերմամբ դաստիարակության երրորդ պահանջը այդ ազնիվ զենքը միշտ սուրը պահելն է: Կիրթ ճաշակը և ազնիվ հոգին չի կրնար երբեք իր շրթունքները ու իր մայրենի թանկագին բարբառը հայհոյանքով կեղտոտել և ընդհանրապես անմաքուր բառեր, գռեհիկ ոճեր ու խոսքի ձևեր գործածել:

Դաստիարակության չորրորդ ու վերջին պահանջն է չգոր-

ծածել այդ բարձր մարդկային ստեղծագործութիւնը չատախոսութեան ու դատարկաբանութեան վրա. խոսիլ խոսելու համար, լեզուին եկածը դուրս տալու համար նվաստացում մըն է և՛ խոսքի, և՛ խոսողի: Նոսն, երբ խոսք ու խոսելիք ունիս, երբ բան մը արտահայտելու ներքին պահանջ ունիս. մի՛ խոսիր միայն խոսած ըլլալու համար. լռելը այս պարագային խոսքի ամենաազնիվ տեսակն է:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Բացի այ տեսակ մը բնական և ընդհանրական արտաքին վայելչութեան պահանջներեն, ամեն ժողովուրդ և ամեն ժողովուրդի խաւերն ու շերտերը ունին նաև արտաքին վարմունքի բազմաթիվ ավելի կամ պակաս կամայական, բայց արդեն հասարակութեան կողմեն ընդունված ձևեր, որ չդիտնալը, որուն դեմ երթալը վայելչութեան դեմ մեղանչել կնկատվի, բարեկիրթ հասարակութեան մեջ ինքզինքը պահել չդիտնալ կսեպվի:

Ասոնք ընդհանրապես այցելութեան, տեսակցութեան ու հանդիպումներուատեն ինչպես կենալու, ինչպես վարելու, ինչպես խոսելու մանրամասնութիւններուն կվերաբերին, բարևելու ու հարգանքի արտահայտութիւններուն, ուտելու ու խմելու ատեն դրծադրվելիք պայմանականութիւններուն և վերջապես պարագային հարմար հագված ըլլալու պահանջներուն: Այս բոլոր պայմանական կոչված պահանջները էապես հարկե մը, պետքե մը առաջացած պարտադրանքներ են սկիզբը, իրենց ժամանակի իրենց ստեղծող արքունի, ազնվական, քաղքենի կամ դյուղական միջավայրերու անհրաժեշտութեան ճնշումին տակ, որոնք սակայն քաղաքական ու տնտեսական պայմաններու փոփոխութեամբ, հաճախ նաև տարածութիւններու և դարերու սահմաններեն անցնելով՝ մեզի համար դարձած են երբեմն «անիմաստ» սովորութիւն, երբեմն ավելորդ պայմանական պարտադրութիւն կամ քարացած քաղաքավարական բռնութիւն: Թեև ատոնց մեջ կան շատ բաներ, ուր հիմա ալ պարզ է և՛ իմաստը, և՛ անհրաժեշտութիւնը, ատոնք կա՛մ ազդեցութիւններու առաջն առնել կուզեն, կա՛մ քեզի ու դիմացինդ անհարմարութիւններն ազատելու կձգտին:

Այսպես թե այնպես՝ ատոնք ամբողջ ժողովուրդներու և դա-

սակարգերու կողմե կհամարվին արտաքին վարմունքի քաղաքավարական պահանջ, այդ պատճառով ալ ուզենք-չուզենք պետք է ծանոթ ըլլանք այդ պահանջներուն, իսկ ծանոթ ըլլալեն ետքը գործադրելն ու չգործադրելը կախումն ունի շրջապատեդ կամ շրջանակեդ: Մեկդի դնելով համեմատորեն ավելի երկրորդական ու մանրակրկիտ բանները՝ մնացածը ընդհանուր առումով պետք է գործադրվի: Ավելորդ ազատամտութեյան հովեր առնել և դիտավորյալ կերպով հակառակ վարվիլ ուզել և դգալ մը ջուրի մեջ փոթորիկ բարձրացնելը ո՛չ մեկ իմաստ չունի. կվիրավորե դիմացիններուդ անձնասիրութեյունը, որ ինքնին կոպտութեյուն մըն է. կարծես ըսել կուզե. «Դուք բոլորդ նախապաշարված ու հնամիտ մարդիկ եք. ես եմ ձեր մեջը հասկցողը և իմ վարմունքիս ազատութեյունը պաշտպանողը»:

Իսկ ինչ որ արդեն շատ է հինցած, շատ է անիմաստ դարձած, շատ է դուրս ինկած տեղեն ու ժամանակեն, արդեն բնական կերպով կզադրի իրական պահանջ մը ըլլալե և կանցնի կամավոր գործադրումներուն բաժանմունքը. ով կուզե՝ կգործադրե, ով կուզե՝ ո՛չ, որով և կզադրի վիրավորիչ ըլլալե, մինչև որ մեկ-երկու սերունդ ետքը բոլորովին դուրս կիյնա գործադրութենե՝ տեղի տալով նոր ձևերու, նոր ըմբռնումներու ազդեցութեյան տակ:

Բ. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԻՐ ԱՆՁԻ ՀԱՆԴԵՊ

Մինչև հիմա մեր հիշած վայելչութեյան բոլոր պահանջները կանվանենք մարդկային վարմունքի արտաքին մասը, որովհետև տեսանելի են և կգործադրվին մկանային շարժումներով. անշուշտ որ ատոնց շարժման մեջ դնողը ներքին զգացական ու մտածական աշխարհն է, և ատոնց մեկ խոշոր մասն ալ արդեն ուղղակի կկատարվի այդ հոգեկան աշխարհը արտահայտելու համար: Այդ բոլորը թեև հոգեկան կյանքի ծնունդ և հոգիի արտացոլում, բայց ներքին հոգեկան կյանքը ինքը չէ:

Դաստիարակութեյունը սակայն ո՛չ միայն կհետաքրքրվի և ազդել կուզե հոգեկան կյանքի արտացոլումին ու արտահայտումին

վրա, այլ նույնիսկ հոգեկան կյանքի ներքին շարժումներուն, ներքին դրդիչներուն, ներքին որոշումներուն ու ձգտումներուն վրա, մարդկային հոգիի հիմնական հատկութիւններուն և ատոնց դումարը ներկայացնող բնաւորութեան վրա: Ասոնք դուրսեն չեն երևիր, թեև ատոնց ազդեցութեան արդիւնքն է մարդկային ամբողջ գործունեութիւնը:

Դաստիարակութեան մշակել ու զարգացնել ուզած այդ ներքին դրդիչները կրնանք խմբել երեքի: Նախ՝ ինչպե՞ս պետք է ըլլա անհատ մը իր հոգիին մէջ ինքն իր հանդէպ և ատոր համեմատ ալ իր ամբողջ վարքն ու վարմունքը արտաքին աշխարհի մէջ. դաստիարակութիւնը ի՞նչ պահանջներ կդնէ անհատին վրա՝ դեռ միայն անհատը աչքի առաջ ունենալով: Երկրորդ՝ ի՞նչ մտածումներ և զգացումներ պետք է տիրող ըլլան անհատի հոգիին մէջ և ատոր համեմատ ալ իր կյանքին ու գործունեութեան մէջ իր նմաններուն հանդէպ. դաստիարակութիւնը ի՞նչ պահանջներ կդնէ անհատներուն վրա ուրիշներու վերաբերմամբ. ինչպե՞ս պիտի ըլլա անհատի մը մտածումը, զգացումն ու կամեցումը ուրիշ անհատներու համար: Եվ երրորդ՝ մարդս ինչպե՞ս պիտի պահէ ինքզինքը և՛ իր հոգիին մէջ, և՛ իր վարմունքին մէջ հանրութեան մը հանդէպ. ի՞նչ պիտի զգա ու մտածե. ի՞նչ պիտի ընէ և ի՞նչ պիտի չընէ, երբ իր նմաններու խումբով մըն է շրջապատված, երբ ինքը իբրև մեկ անդամը կներկայանա որոշ հավաքականութեան մը:

Նախ ուրեմն անհատի մը կեցվածքը իր սեփական անձին հանդէպ:

Ա. Այս տեսակետեն դաստիարակութեան առաջին պահանջն է ինքզինքը ճանչնալը: Ամեն անհատ մարդկային բազմատեսակ ներքին ու արտաքին կարողութիւններու ընդհանուր դումար մըն է. որոշ հատկութիւններ ու շնորհներ չեչուված են մեջը, ոմանք երբեմն չափազանց սուր կերպով, ուրիշ կարողութիւններ ու տաղանդներ ավելի քիչ են զարգացած, շատ ավելի տկար են, երբեմն այն աստիճան խեղճ, որ կդառնան համազոր բացակայութեան: Արդ՝ ամեն անհատ ինչքան տարիքը կառնէ, ներքին ու արտաքին բազմաթիվ փորձերով հետզհետե կըմբռնէ իր ուժեղ ու տկար կողմերը, ինչպես և իր բնականոն, այսինքն մէջէն ընդունակութիւնները: Բայց այս ըմբռնումը վրա կհասնի հաճախ շատ ուշ

տարիքի մեջ, շատ անգամ կըլլա աղոտ ու անհաստատ, երկար ատեն իր այդ թերութեան կամ առավելութեան հստակ գիտակցութիւնը չունենար, շատ անգամ ալ թեև կգիտակցի, բայց հավատալ չուզեր, ընդունիլ չուզեր և դիտմամբ մշուշի մեջ կթողնե:

Իր առավելութիւններուն անգիտակցութիւնը կամ մշուշոտ տարտամութիւնը անվստահութիւն կներշնչե անհատին, անվստահութիւն ինքը իր ուժերուն ու կարողութիւններուն դեմ, վարանոտ ու կասկածոտ կդարձնե անհատը, կզրկե համարձակութենե, ձեռնարկութենե, որոնք հիմնական պայման են ամեն հաջողութեան, և այս պատճառով ալ հաջողութիւններով հարուստ չըլլար այդ անձերուն կյանքը. «ձախորդ աստղի տակ ծնած» կնկատե ինքզինքը, միևնույն ժամանակ մյուսներեն նվաստ ըլլալու զգացումը կզարգանա իր մեջ, որ չարունակ անհատը դեպի վար կքաշե: Ամչկոտութեան, անտեղի համեստութեան, քաշվելու և առանձնանալու հակումը, ծածկվելու, գոցվելու, չերևալու, մեջ չքաշվելու, աչքի չիյնալու բնազդական բան մը միշտ զույգ կերթա այդ զգացումին: Ուրիշ խոսքով՝ իր առավելութիւնները, կարողութիւնները և չնորհները չտեսնելն ու անտեսելը կպակսեցնե մարդուս կենսունակութիւնը, գործունեութիւնը և ատոնց հյուսված բոլոր ուրախութիւնները:

Կա և հակառակ երեսը. ինքզինքը աղեկ չճանչնալը, իր ունեցած կարողութիւններուն որակն ու չափը չըմբռնելը շատ դյուրութեամբ սխալանքներու և ծուռ ուղղութիւններու կտանի, մարդ ինքզինքը այսինչ գործին ու չնորհքին տեր կհամարե, այդ ուղղութեամբ ճիգեր կթափե ու զարմանքով կտեսնե, որ իրմեն համեմատ ավելի նվազ ճիգեր ու ժամանակ վատնելով՝ ուրիշները իրմեն աղեկ կհաջողին. ինքը կմնա ետ մնացողներուն մեջ, բնականաբար դառնութեան և հուսալքութեան բաժակը ճեռքը. և որևէ կերպով իր դժգոհութիւնը թափելու համար կա՛մ հաջողած մրցակիցներուն անպետքութիւնն ու բաղդը կընդգծե, կա՛մ կյանքի ծուռ ու անարդար ըլլալու փիլիսոփայութեան կապավինի: Եվ այս ամենը ուժերու ավելորդ վատնում է և հոգիի իզուր ստորնացում, պտուղը իր ուժերը սխալ գնահատելուն:

Շատ ավելի դաժան բան է իր թերութիւններուն ու անկարողութիւններուն անգիտակցութիւնը. ծաղրի ու ծիծաղի աղբյուր

է անիկա ամեն տեղ: Որոշ չնորհքի մը զուրկ ըլլալ, բայց միևնույն ժամանակ կարծել, որ այդ կարողությունն ու ուժը ունի ինքը, արդեն հիվանդոտ հոգեկան վիճակ մըն է և ցույց կուտա ներքին առողջ գիտողության ու դատողության պակաս, մտքի տկարություն: Տկար մտքին պետք է օգնենք, որ կարողանա ճիշդ ըմբռնել. երբ ինքը իր չունեցածը ունեցած կկարծե չարունակ, մենք ալ քովին վրան խնդալու համար նույնը կկրկնենք ու սուտ կդովենք, ինչպես որ կըլլա ընդհանրապես կյանքի մեջ, խեղճ մարդու հոգիին մեջ սուտն ու իրավը այնպես կխառնվին իրարու, որ ապուշի սահմաններուն կմոտենա:

Դաստիարակության առաջին ճիդն է, որ ամեն մարդ լավ գիտնա իր թերությունները ու առավելությունները, իր տկար և իր ուժեղ կողմերը: Այս գիտակցության անմիջական հետևանքներեն մեկը կըլլա, որ անհատի մեջ կզորանա հարգանքը իր անձին ու իր էության դեմ. ինչքան ալ մարդուս կարողությունները համեստ ըլլան, և չնորհները՝ միջակ, միշտ բարձրացնող զգացում մըն է, երբ գիտես, թե այս ու այն բաները կրնաս ընել, որ ալիտանի ես այս ու այն բաներուն մեջ. այս ճշմարիտ գիտակցությամբ անհատը կդառնա անձ. և անհատի մը իր անձի հանդեպ ունեցած հարգանքը կանվանենք արժանապատվություն:

Բ. Երբ մարդուս ունեցած առավելություններուն և չնորհքին գիտակցությունը կշեշտվի, և իր անձի ունեցած արժեքը հոգիին կողմեն կգնահատվի, մարդը կդառնա հպարտ: Հպարտությունը մեծ և ստեղծագործ ուժ է: Այդ աշխարհքը վարող ուժը ամեն անհատի հոգիին մեջ վառելը դաստիարակության հետապնդած երկրորդ գլխավոր պահանջն է, որ առաջինեն կըղխի:

Բայց ուրիշ բան է իր ուժերը զգալ ու իր կարողությունները գիտնալ, իր տաղանդը չափել, ուրիշ բան է այդ բոլորը ցուցադրել և ցուցադրելով գլարճություն զգալ, իր առավելությունները ուրիշներուն աչքը կոխել, իր չնորհներու մասին չարունակ խոսիլ, պարծենալ, գովաբանել կամ գովասանք մուրալ և ատով մեծամտիլ: Այս ցուցամոլությունը, մեծամտությունը, պարծենկոտությունը և գովաբանությունը ստորին զգացումներ են, և եթե պատահի, որ միանան ներքին բնական արժեքին, անշուշտ որ հպարտությունը կդարձնեն ավելի ցած տեսակի, ավելի նվաստ զգացում մը: Բարե-

բաղդաբար իրենց արժանիքն ու տաղանդը ճանչցող և հոգիին խորունկեն հպարտ եղող մարդիկ չափազանց կխուսափին ու կատեն այդ բոլոր ցած տեսակի սնոտիութիւնները: Այդ ամեն տեսակի սնապարծութիւններն ու սնամտութիւնները կբռնանին հոն, ուր կպակսի իսկական ներքին հպարտութիւնը, իրական ներքին մեծ ուժը, բուն տաղանդն ու արժանավորութիւնը: Եվ արդեն հաճախ այդ ներքին պակասը ադողելու համար են այդ բոլոր խեղճութիւնները:

Իրենց արժեքը գիտցող մարդիկ խորքին մեջ ամոթ կզգան գովքեն, ցույցերեն ու փառքեն:

Այդ ամենը կվիրավորե իրենց ներքին հպարտութիւնը, իրենց արժանիքին համեստութիւնը: Հպարտութիւն ու համեստութիւն իրարու հակադիր չեն, այլ իրար լրացում. մեկը իր չնորհներու և ընդունակութիւններու արժեքը գիտնալն է և ատկե զգացած ներքին գոհունակութիւնը, մյուսը այն խոր գիտակցութիւնն է, որ այդ ամենը տուրքն է ու պարգևը բնութեան, ժառանգականութեան և կյանքի պատահականութիւններու խաղին: Կրնա, դիցուք, բնութիւնն ու ժառանգականութիւնը մեծամտիլ, կամ ցեղն ու ժողովուրդ մը պարծենալ իր դարավոր ճիգերու արդյունավորած պտղովը, բայց անհատը ինքը շատ քիչ բաժին մը միայն ունի իր չնորհներու կազմավորման մեջ: Ան չնորհակալութիւն ու երախտագիտութիւն միայն կրնա ունենալ իր ցեղին, իր բաղդին ու բնութեան հանդեպ, այլև խորին պարտավորութիւն մը՝ անոնցմե ստացած իր արժեքները արժեքավորելու, իր ունեցած չնորհները արդյունավորելու: Կյանքեն ու բաղդեն նպաստավորված ըլլալը, իր ցեղին ու բնութեան հանդեպ երախտիք զգալը մեծամտութիւն ծնիլ չի կրնա, այլ խոնարհութիւն, պարտականութիւն և ստեղծելու ծարավ և՛ իր փոխարեն, և՛ բոլոր անոնց փոխարեն, որ այդ կարողութիւնները այդ չափով չեն ստացած բաղդին ու բնութենեն:

Գ. Ինքզինքն ու իր արժանիքները ճանչնալեն, այդ արժանիքներով ոգևորված ու մտրակված ըլլալեն կբղխի նաև մարդուս՝ ինքն իր էութեան հանդեպ ունեցած կամ ունենալիք երրորդ մեծ հատկութիւնը, որ չիտակութիւն կանվանեմ: Ով իր վրա կնայի որոշ արժանիքներով, որոշ ընդունակութիւններով ու պարտա-

վորութիւններով օժտված անձի մը վրա, անիկա այլևս իր մեծ ու փոքր բոլոր վարմունքներուն մէջ հարկ չի զգար իր կերպարանքը փոխելու. գիտե, որ կարելիութիւն չունի այլ կերպ ըլլալու և ցանկութիւն չունենար իր արժէքները խաթարելու, իրեն անհարազատ և օտար ծպտումներով դիմակավորելու: Այդ պատճառով ալ իր կարողութիւնները գիւտցող և հպարտ մարդը կըլլա նաև չիտակ բնավորութեան տեր, այսինքն կըսե, ինչ որ կզգա ու կմտածե, իր բոլոր շարժումներուն ու գործերուն մէջ ցույց կուտա ինքզինքը այնպես, ինչպես որ է, իր չունեցած բաները ունենալ չի ձևցներ, ուրիշները իր վերաբերմամբ սխալեցնելու չաշխատիր, այսինքն ո՛չ միայն չի ստեր, չի խաբեր ու չի կեղծեր, այլև ազնվութեան ու բարոյական բարձրութեան հետ չհարմարվող բան մը կնկատե ամեն չպար, ամեն դիմակ, ամեն երկերես վարմունք, ամեն չողոքրթութիւն, ամեն քծնանք:

Դ. Կենդանական ամեն կարողութիւն իր էութեան մէջ բնական դրդում մը ունի գործադրվելու, բանելու ու կատարելագործվելու. գործիքի ու գործունեութեան փոխադարձ կապին վրա է հաստատված այդ օրենքը, որով բնականեն ամեն մարդ գործելու է տրամադիր իր կարողութիւններու ուղղութեամբ ու չափով, մյուս կողմեն ալ իր վրա պարտավորութիւններ զգացող մարդը նույնպես կմղվի գործելու. այսպեսով բնական ու բարոյական պատճառներ միասնաբար գործի կդրդեն, աշխատանքի. աշխատասիրութիւնը կդառնա մարդուս էութեան ու վարմունքին ամենեն գլխավոր պահանջներեն մեկը, և ատոր հակադրութիւնը՝ ծուլութիւնն ալ կդառնա մարդուս բարձրացման, հաջողութեան ու բաղդավորութեան ամենադլխավոր արգելքներեն ու թերութիւններեն մեկը: Աշխատասիրութեան հետևեն քալող հատկութիւններ են չհուսահատիլը, համառ ձգտումը, վճռականութիւնը, ձեռներեցութիւնը, անհողդողդ մնալը, ձախորդութիւններեն չընկճվիլը, հաջողելու հավնտքը, բարձրացումներու սերը և լավատեսութիւնը: Ծուլութիւնը լքում կբերե և հոռետեսութիւն թե՛ իր անձի նկատմամբ և թե՛ ուրիշներու թափած չանքերուն ու ձգտումներուն:

Ե. Աշխատասիրութեան չատ նման և անոր վրա հենած չատ կարևոր հատկութիւն մըն է ինքն իր անձին ու գործին հանդեպ խստապահանջ ըլլալը: Այսինքն զգալ, մտածել, ուզել ու գործել

ըստ իր ըմբռնումներուն, ըստ իր գիտակցած ու հանձն առած պարտավորութիւններուն: Գործել միշտ այդ ուղղութեամբ և չչեղիլ երբեք այդ ուղղութենէն, այդ անգամ մը ընդունած բարոյական-ընկերական օրէնքներէն, ինչքան ալ ծանր ու դժվար ըլլա ու մեծ զոհողութիւններ պահանջէ. իր անձի հանդէպ ցուցադրած այս անզիջող, խստապահանջ վերաբերումն է այն հիմնաքարը, որու վրա կբարձրանան հոգեկան մեծութիւններու, աչքառու բնաւորութիւններու և ականավոր մարդոց անդրիները:

Զ. Դաստիարակութեան հետապնդած կարևոր պահանջ մըն է անհատի ինքն իր դեմ ուղղած կարգապահութիւնը, կարգ ու կանոնի սերն ու ենթարկումը: Կարգ ու կանոն մտածումներուն մէջ, գործի ու աշխատանքի մէջ, կյանքի ու ապրուստի մանրամասնութիւններուն մէջ և ընկերական հարաբերութիւններուն մէջ: Կարգ ու կանոնը շատ կդյուրացնէ ամեն աշխատութիւն, կարագացնէ, այսինքն կխնայէ ուժ ու ժամանակ, կբավարարէ հոգիին գեղարվեստական ու տրամաբանական պետքը և վերջապես հնարավոր կդարձնէ բազմաթիվ կամքերու ու տարբեր ուղղութեամբ վազող ցանկութիւններու միասին ու ներդաշնակ կենակցութիւնը:

Է. Կարգ ու կանոնի մեկ ուրիշ ձևն է չափավորութեան պահանջը, որ դաստիարակութիւնը նորեն ամեն կերպ կաշխատի անհատներու հոգիին մեջ ամրացնելու. ըլլալ չափավոր ամեն բանի մեջ՝ և՛ իր հաճույքներուն, և՛ իր զվարճութիւններուն, և՛ իր խոսքին ու արտահայտութիւններուն մեջ: Զգայութիւններուն նման մեր բոլոր հոգեկան կարողութիւնները գործադրութեան ու լարման նվազագույն աստիճանե մը վար կտկարանան, կնահանջեն, կտուժեն և գործադրութեան, կրկնութեան ու լարման որոշ աստիճանե մը վեր կհոգնին, կթուլանան, կկորսնցնեն իրենց հրապույրն ու առույգութիւնը, ուրեմն նորեն կտուժեն, իսկ շրջապատողներուն համար ալ ձանձրալի ու անախորժ կդառնան և իբրև բեռ կզգացվին: Կենդանական ամեն հատկութեան, կարողութեան և գործունեութեան համար այդ վարի ու վերի որոշ սահմաններուն մեջ մնալը, իր սահմանները ճանչնալը և այդ սահմաններեն անդին չանցնելը խիստ մեծ տեսական ու գործնական առավելութիւն մըն է անհատին համար: Թե՛ կենակցութեան, թե՛ գեղարվեստի, թե՛

առողջության և թե՛ հաջողության տեսակետներեն չափը գիտնալը ու չափը պահելը «սկիզբն է իմաստության»:

ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՊ

Ա. Անհատի մը մտածումներուն, զգացումներուն և վարմունքին մեջ ուրիշներու Հանդեպ ունենալիք վերաբերումին ամենեն առաջին ու ամենեն հիմնական պահանջն է Հարգանքը:

Հարգանք ուրիշի անձին Հանդեպ, անոր մտածումներուն, զգացումներուն, դավանանքին, Հավատքին ու Համոզումներուն Հանդեպ, ըլլա Համոզումը անձնական, կուսակցական, կրոնական, քաղաքական, ինչքան կուզե այդ բոլորը մանկունակ թվի, սխալ կամ Հակադիր քո սեփական Հոգիիդ ու դատողությանդ: Պետք չէ երբեք մոռցվի, որ ամենքն ալ մեյ-մեկ մարդ են ու մեյ-մեկ անձ, ճիշդ մեզի պես, և ամեն անձ իր ժառանգածի, իր կյանքին ստացածի ու իր կրթության Համեմատ միայն կրնա զգալ ու դատել: Իրմեն ինչ որ պահանջել կրնանք, չիտակությունն է ու անկեղծությունը և իր Համոզումներուն Համեմատ գործելը:

Հարգանք ուրիշներու բոլոր իրավունքներուն Հանդեպ, ինչոր մենք մեզի Համար թանկագին կՀամարենք ու կպահանջենք, պետք է գիտնանք, որ ուրիշներուն Համար ալ այդ իրավունքները թանկագին են ու քաղցր. պետք չէ խռովենք ու խանգարենք ուրիշներուն ազատությունը, Հանգիստը, աշխատանքը, ժամանակը, զվարճությունը, անոր ձեռք բերած առավելությունները, Հարմարությունները:

Հոգևկան իրավունքներեն ետքը՝ նաև Հարգանք իր նյութական ստացվածքին ու սեփականության. Հարգել, ինչ որ ուրիշին կպատկանի, ձեռք չտալ, չառնել, չօգտվել ու չգործածել երբեք ուրիշին ունեցած բաները առանց տիրոջ գիտության ու Համաձայնության. ամեն մեղանչում այս ուղղությամբ, ինչքան ալ չնչին ըլլա առնված իրը կամ օգտագործված նյութը, գողություն մըն է. ձվի գող՝ ձիու գող:

Բ. Ուրիշներու Հանդեպ դաստիարակության արմատցնել ուզած երկրորդ պատվերն է՝ մի՛ ցանկար ուրիշին գեչություն, մի՛ ուզեր ուրիշին մնաս, ձախորդություն, անՀաջողություն և մի՛ առ-

ներ որևէ քայլ ուրիշի մը անախորժութիւն պատճառելու դիտաւորութեամբ, ծածուկ կամ հայտնի, անմիջականորեն կամ կողմնակի ոլորուն ճամբաներով կամ երրորդ անձերու միջոցով:

Մի՛ որոներ քո հաջողութիւնդ ուրիշներու ձախորդութեան մէջ, քու դիրքիդ բարձրացումը ուրիշի մը անկումին մէջ, քու զվարճութիւնդ ուրիշի մը կրելիք վշտին ու ցաւին մէջ, մի՛ հիմներ քու վայելքդ ուրիշներու զրկանքի վրա: Եվ ասիկա առօրեայ ամենաչնչին մանր-մունր բաւականութիւններէն, խաղերէն,կատակներէն ու զվարճութիւններէն ու վայելքներէն սկսած մինչև կեանքի ու հացի խնդրի դաժան ու բուռն պայքարներուն մէջ:

Ուրիշը չխնայելու, առաջ չարժվելու համար աջ ու ձախ անփույթ աղմկելու և իր բարձրացման համար ուրիշներու վիճակն ու զգացումները արհամարհելու անկարեկից հոգեբանութիւնն է, որ հետզհետե զօրանալով՝ եսականութեան հենարանը կդառնա և հանցագործութիւններուն և ոճիրներուն առջև ճամբա կհարթե: Ընկերական կենակցութեան հիմքը ուրիշի մասին մտածելն է, քաղաքակրթութեան հիմնական արտահայտութիւնը ուրիշի մասին հոգալն է, և քաղաքավարութեան բոլոր ձգտածը՝ ուրիշներուն անախորժութիւն չպատճառելը: Ուրիշին գէշութիւն ցանկալ կամ չարիք մը ընել ուզելը ժխտումն է քաղաքակրթութեան՝ վայրենութիւն է: Եվ կանխամտածումով գործող ոճրագործը գազան մըն է:

Նոյնիսկ միայն իբրև կատակ, խնդալու և զվարճանալու համար ուրիշին ցաւ, ամօթ կամ ստորնացում պատճառելը հանցանք է. իրաւունք չունիս ուրիշին հաշվին զվարճանալու, ներելի չէ հեգնել ու ծաղրել ընկերը, ձեռք առնել, հիմարեցնել ու վրան խնդալ, ուրիշներու վարկն ու հմայքը կոտրող կատակներն ու սրախոսութիւնները կա՛մ բնականեն չար հոգիին նշան են, կա՛մ գէշ դաստիարակութիւն կմատնանշեն:

Գ. Թեև խորքին մէջ միշտ նույն, բայց և այնպես խոշոր տարբերութիւններ կան մեր վարմունքին մէջ՝ նայելով, թե կարողութիւններով, դիրքով կամ տարիքով մեզմե բարձր ա՞նձ մըն է մեր դիմացինը, թե՞ իր արժանիքով, պաշտոնով կամ տարիքով մեզմե վար գտնվող անհատ մը:

Արժանիքով, դիրքով ու վիճակով մեզմե բարձր եղողներուն հանդիպիլ հիմնական պահանջներն են.

1. Ջնախանձիլ, այսինքն չմտածել երբեք, թե ան ինչո՞ւ համար այսինչ բաները ունի, ինչ լավ կըլլար, որ չունենար, քանի որ ես չունիմ այդ նույն բաները: Ասիկա է, որ կանվանենք չար նախանձ, և ստորին ու ապարդյուն, գէշ զգացում մըն է, ուրկե չարիք ու ոճիր կրնա ծնիլ, բայց բարիք մը՝ երբեք: Տարբեր է բարի նախանձ ըսվածը, որ իսկապես նախանձ չէ, այլ մրցում, ձգտում, երբ դիմացինիդ անկումն ու կորուստը չէ, որ կուտնչաս, երբ դիմացինդ չէ, որ իսկապես քեզի կհետաքրքրե, այլ անոր հասնելու, անիկա դերազանցելու բուռն պահանջ մը. դիմացինդ տեսակ մը համեմատութեան չափ մը կդառնա, և այդ համեմատությունը կրնա հառաջդիմութեան ուժեղ զսպանակ մը դառնալ, եթե միայն տենչ ու երազ չմնա, այլ անոր զուգակցի այդ ուղղութեամբ տևական ձգտում ու աշխատանք:

2. Ջհուսահատիլ դիմացինիդ կարողութիւններուն, բարձրութեան կամ հարստութեան առջև, չհամարել դիմացինիդ անհասելի ու անհամեմատելի քեզմե տարբեր մարդկային էակ մը, չընկճվիլ ու չզլալ քու անձդ խեղճ ու անպետք: Պետք է միշտ մտածես, որ դիմացինդ ալ քեզի նման անհատ մըն է՝ մարդկային խեղճութիւններով ու թերութիւններով, երբեմն շատ մեծ ներքին թշվառութիւններով բեռնավոր, թեև որոշ ուղղութեամբ հոգևկան կամ մարմնական կամ նյութական մեծ առավելութիւններով օժտված: Այս մարդկային ըմբռնումը կպահպանե աչքերդ ավելորդ շացումե և հոգիդ ալ ավելորդ հուսահատութենե և ընկճումե:

Մեծ դժբաղդութիւն մըն է, երբ մարդս իր վրա կնայի հուսահատութեամբ ու արդահատանքով: Պետք է հաշտ ըլլանք այն բնական ու անփոխարինելի օրենքին հետ, որ աշխարհս լեցուն է և՛ մեզմե վեր, և՛ մեզմե վար անհամար արարածներով, մեր որ կողմը և որ կարողութիւնն ալ որ աչքի առաջ ունենանք: Հավասարութեան երազանքը հակաբնական և հակահառաջդիմական մտածում մըն է և խորքին մեջ միևնույն բանն է, ինչ որ նախանձը:

Եվ անոր պես չարիք մըն է, երբ քեզմե բարձրերը վար քաշել, ճղմել ու քեզի հավասարցնել կփորձես. բարիք մը կդառնա միայն այն ժամանակ, երբ ճիգեր կընես ինքդ քու անձիդ վրա անոր բարձ-

րութեանը հավատարմելու համար, երբ հավատարութեան երազը կզառնայ մրցումի խթան:

Ինչ հավատք պետք է ունենայ, որ դուն մեծ արժեք մըն ես միշտ և՛ կյանքի համար, և՛ հանրութեան համար, և՛ քուկիններուդ համար, և՛ քեզի համար, ինչքան ալ կուզե լեցուն ըլլայ աշխարհը և՛ քեզմե բարձրերով, և՛ քեզմե ցածրերով: Ամեն մարդ ալ իր տեղը ունի և իր դերը: Այսպես կմտածե առողջ հոգին, որ բնավ հուսահատիլ չգիտեր:

3. Ջնվաստեցնես երբեք քու այդ մարդկային արժեքդ ու արժանապատուվութեունդ զանազան նյութական ակնկալութեուններու, դիրքերու, նվերներու և առավելութեուններու հույսով քեզմե ավելի բարձր թառած կամ ավելի հարուստ եղող անձերու առաջ: Պահե միշտ քու անձիդ մարդկային արժեքը և հոգիիդ հպարտութեունը, նույնիսկ երբ բան մը խնդրելու հարկին մեջ գտնվիս: Սուտ գովասանք, կեղծավորութեուն, չողոքորթութեուն ու քծնանքը թող երբեք չարատավորեն շրթունքներդ. վերջը ինչքան ալ համեմ, համադամ ու թանկագին նյութեր ներս լեցնես այդ շրթունքներեն, անոնց փակած գարշանքը սրբել չես կրնա:

4. Ատոր փոխարեն հարգանք ունեցիր միշտ ինչպես ընդհանրապես բոլոր արժեքներու առջև, այնպես ալ քեզմե ավելի բարձր եղող կարողութեուններու ու վիճակներու առջև, այդպես ալ քեզմե ավելի բարձրադիրներու, քեզմե ավելի տարիքավորներու հանդեպ:

Ինչ կվերաբերի քո անմիջական բարձրադիր պաշտոնակալին, եղիր հետը միշտ ղուսպ և զգաստ և միշտ պաշտոնական. մտերմութեյունը հոտ իր տեղը չէ, ինչքան ալ որ ինքը մտերմական շեշտ մը առնե. ան ինչ որ իրեն կներե և տեսակ մը ազնվութեյուն պիտի նկատե իր կողմեն, քեզի երբեք չի ներեր և հանդգնութեյուն պիտի նկատե: Պատասխանե միայն եղած հարցերուն և չհարցված բաներու պատասխան մի՛ տար: Երբեք մի խառնվիր իր դատողութեյան և անոր գործը դյուրացնելու և օգնելու ձևեր չառնես. ատոնք միայն կզայրացնեն ու կգրգռեն. երբեք խորհուրդներ չտաս քու փորձառութեյամբ իր անփորձութեյանը ծառայելու դիտավորութեյամբ. ատով գործին կրնաս վնասել, բայց օգուտ տալու չես հաջողիր: Եթե իր հաչվին կամ ըրածին մեջ կարևոր սխալ մը նկատես, մատանիչ

ըրև մեծ զգուշութիւամբ, կասկածի ձևով՝ իր ուշադրութեան ենթարկելով և կարծես կարևորութեան չտալով: Այս բոլորը անտեսելը և հավասար հավասար վարվիլ փորձելը անկարելի կդարձնեն պաշտոնական հարաբերութիւնը: Ատիճանով մեկը մյուսին ենթարկված ըլլալու և մեկը մյուսին վրա ունեցած հեղինակութեան անխուսափելի պահանջներն են սոսկ, տեսակ մը պաշտոնական քաղաքավարութիւն:

Դ. Գալով քեզմն վար եղողներու հետ հարաբերութեան ու վարմունքին՝ եթե հարցը ընդունակութեան ու շնորհքի կվերաբերի, վերը արդեն տեսանք, առավելութիւններդ պետք չէ կոխես ուրիշներուն աչքը, պետք չէ խոսիս քու մասին և պետք չէ ուրիշները ստիպեցնես քեզմով:

Եթե հարցը դիրքի, պաշտոնի ու վիճակի բարձրութեան կվերաբերի, ազնվութեան ու դաստիարակութեան պահանջն է պարզութիւնն ու մարդավարութիւնը: Նախատենչակը դիտմամբ ապատեցնել տալ, խիստ ստրատված ըլլալու ձևեր առնել, դանդաղ ու արվեստական խոսվածք մը յուրացնել և չարժուձևներն ու վարմունքը վիճափառ մշուշի մը մեջ պարուրել, – այս բոլորը պաշտոնական վրան բաց կեղծիք մըն է, որ ամենքը կտեսնեն և չտեսնել կձևացնեն քու մոտ՝ եռևեռդ քեզի ծաղրելու և քիչ մըն ալ ատելու համար: Պարզ, սովորական չարժուձևերը, բնական ու ընկերական վերաբերումը իր ստորադասներուն հետ ո՛չ միայն ազնվական ու սիրելի կդարձնեն անձը ամենուն աչքին, այլև խիստ կդյուրացնեն ընդհանուր աշխատակցութիւնը:

Եթե հարցը կվերաբերի տարիքով քեզմե փոքրերուն հետ բռնվելիք ընթացքին, դաստիարակութեան պահանջն է՝ օգնել, ինչով որ կարող ես՝ խորհրդով, սովեցնելով, պաշտպանելով, կազմակերպելով, աշխատակցելով ու խաղակցելով: Ջափազանց մեծ է մանավորապես պզտիկներուն վրա իրենցմե ավելի մեծ եղող ընկերոջ օրինակն ու ազդեցութիւնը. այս կետը պարտական են իրենց դիտակցութեան մեջ պահելու արդեն հատուցնալու վրա եղող տղաքն ու աղջիկները:

Երբ կխոսինք մեզմե փոքրերու հետ հարաբերվելու մասին, հատուկ պետք է ընդգծվի, որ փոքրիկները մեծերու խաղալիքը չեն: Հանցանք է իր ավելի ուժեղ ըլլալեն օգտվիլը կամ խաղի ու

ժամանցի համար փոքրիկները զանազան ձևերով խաբելը, վախցնելը, ղարնելը, չարչրելը, ծուռ ու տգեղ խոսքեր ու ձևեր սորվեցնելը կամ անոնց միամտութենեն օգտվելով՝ գողության, լրտեսության և նման ստորնություններու գործիք դարձնելը:

ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Հավաքականությունները կազմված են անչուշտ անհատներե, բայց արդեն ուրույն կազմություն մըն են իրենց հատուկ փոխադարձ պարտադրություններով ու պահանջներով: Ինչքան հավաքականությունը տևական տեսակի ըլլա, ինչպես դպրոցն է, ընտանիքը, կուսակցությունները, ակումբները, կամ ինչքան հաճախ որ կրկնվի անոնց իրարու գալը մոտավորապես նույն ձևով ու կազմով, ինչպես խաղերն են, զանազան ձեռնարկները կամ այցի ու տեսակցության պարբերաբար հանդիպումները, այնքան ալ հարկադիր կդառնան դաստիարակության պահանջները անհատի վրա հավաքականության հանդեպ:

Ա. Եվ իր դրած պահանջներեն առաջինն է՝ ենթարկվիլ առանց այլևայլության այդ հավաքականության մշտական ու իր անդամներուն պարտադրած կարգկանոնին ու սովորություններուն: Եթե բան մը փոխելու կամ սրբագրելու հարկը զգացվի, երբեք անհատը իրավունք չունի իր խելքով ու իր քմայքով ուզածին պես վարելու. փոփոխություն մը կարելի է ստանալ միայն հարցը ընդհանուր քննության ու որոշման ենթարկելով. անհատը միայն կրնա հարց հարուցանել և այդ քննությունը պահանջել, ան ալ որոշ զգուշությամբ. իր իրավունքն է իր տեսակետը պաշտպանելը. եթե մեծամասնություն չհեցավ՝ աղեկ, եթե ո՛չ՝ պետք է ենթարկվի և հավատարմորեն ղործադրե մեծամասնության որոշումը: Միայն այս ճամբով հնարավոր է հավաքականությունը ապրող ու կենսունակ ամբողջության մը վերածել: Միայն անհատի ենթարկումովը հանրային կամքին հնարավոր է ստեղծել ընկերական կյանք ու անոր բարիքները: Կարգ ու կանոնին և ընդհանրության պետքերուն ենթարկվելը, որ տիսսիպլին կանվանենք, ամեն օրվանական մարմնի, ուրեմն և ընկերական կազմակերպություններու հիմնական պայմանն է:

Ո՛չ միայն պետք է ենթարկվիս, հարգես ու պահես քու հավաքականութեանդ կարգ ու կանոնը, սովորութիւնները ու որոշումները, այլև հատակ պետք է գիտակցես, որ ամեն չեղում ըմբռստացում մըն է, թշնամանք ու խզում, եթե բացահայտ կկատարվի, և որ դաւ մըն է ու դավաճանութիւն, եթե ծածուկ կկատարվի: Բացահայտ ըմբռստացումը ունի այն մեծ առաւելութիւնը, որ հավաքականութիւնը գիտե, թե իր երբեմնի ընկերը արդեն կտրված է իրմե, և աւոր համեմատ ալ կվերաբերվի ու կպաշտպանվի: Դավաղրութիւնը և՛ կքանդե, և՛ կծածկե, հնար չի տար, որ պաշտպանվիս, կմոլորցնե, կմատնե համբուրելով, որով անհամեմատ ավելի վտանգավոր է հավաքականութեան համար:

Ըմբռստացումը, խզումը, բաժանումը պատուղ է կա՛մ ներքին մասնավոր դժգոհութիւններու, կա՛մ զաղափարներու փոփոխութեան: Թեև միշտ իր վրա ցավոտ, խախուտ ու հակակրելի բան մը ունի, բայց անբարոյական վարմունք մը չէ անշուշտ, մինչդեռ խաբելով, երկու երեսանիութեամբ թշնամութիւն ընելը իր պատկանած հավաքականութեան ամենեն հանցավոր ու ամենեն պարշելի ընկերական վարմունքն է:

Հավաքականութեան մը դրած երկրորդ պահանջը կենդանի մասնակցութիւնն է: Ամեն անհատ պետք է հետաքրքրվի ու զբաղվի իր հավաքականութեան վերաբերող խնդիրներով, պետք է հոգա և օժանդակե իր հավաքականութեան բարձրացմանն ու բարգավաճմանը: Ո՛չ մեկ անհատ իրավունք չունի իր ընկերներու ջանքերեն ու աշխատանքեն օգտվելու՝ առանց ընդհանուր գործին մեջ իր աշխատութեան բաժինը ունենալու և իր այդ բաժինը խղճմտորեն կատարելու: Պետք է մասնակցիս խորհրդակցութիւններուն, պետք է ընտրես, ընտրվիս, պետք է ջանաս, որ քո համոզումդ անցնի: Անտարբերութիւնը, անհոգութիւնը, անհետաքրքրութիւնը, «ինծի ինչը», «թող ուրիշները ընեն» մտածելը խուսափիլ է իր պարտավորութենեն, չհագործել ըսել է ընկերներուն պարտաճանաչութիւնը և մեղանչում մըն է հավաքականութեան հանդեպ, որուն անդամն ես:

Բ. Հավաքականութեան հիմնական պահանջներեն մեկն է՝ չձգտիլ երբեք հավաքականութեան տիրանալու: Ամեն խմբակցութեան մեջ քանի մը հոգի միշտ աչքի կիյնան իրենց ձեռներեցու-

թյամբ, լեզվով, ճարպիկութեամբ ու հնարամտութեամբ հաճախ ատոնց մեջն ալ գլխավոր դերը կխաղա մեկը: Ասիկա բնական երեւույթ մըն է, և ինչքան ատեն որ այս ամենը կկատարվի բնական ընթացքով, ընդհանուր հաճույքով և տեսակ մը լռիկ փոխադարձ համաձայնութեամբ, խնդիր չկա: Բայց երբ գլխավոր դեր խաղացողը, մասամբ չափազանցելով իր ստացած կեդրոնական կարևորութեյունը, մասամբ իր բնավորութեյան տիրակցութենեն քաջալերված, կսկսի ո՛չ թե գլխավոր դերը խաղալ, այլ պարզապես տիրապետողի դերը խաղալ, կսկսի ինքը ընտրել ու հրամայել, ինքը կբաժնե ամենուն ըսելիքն ու ընելիքը իր ուզածին ու իր քմայքին համաձայն և կսպասե, որ ամենքը իր հրահանգներով շարժին, անխուսափելի կերպով ընկերներու հոգիներուն մեջ ծագում կառնե բողոքն ու ըմբոստութեյունը: Տիրացման ձգտողի նույնիսկ խելացի կարգադրութեյունները անարդար ու անտեղի կզգացվին, և ան ինքն ալ փոխանակ հավաքականութեյան համար ամենեն շատ աշխատող մը նկատվելու, կնկատվի մեծ կամ փոքրիկ բռնակալ մը, որ քիչ-քիչ ատելութեյան ու ծաղրանքի առարկա կդառնա՝ նայելով տիրացող անձի հոգեկան արժեքին:

Իսկ հավաքումներուն մեջ ամեն բան ինքը ըսել, ինքը ընել ու կարգադրել ուզելը, ամեն բանի մեջ շարունակ հրապարակ նետվիլը և մանավանդ ուրիշներու ձեռքեն ու շրթունքեն անոնց սկսած գործը, խաղը և խոսքը խլելը մեծ պակաս մըն է դաստիարակութեյան և քաղաքավարութեյան: Մարդավարութեյունը կպահանջե, որ ամենուն ալ ճամբա տրվի, որ ամենուն ալ խոսք հասնի ու շարժում, և որ ամենքն ալ չեշտ մը ավելցնեն ընդհանուր կենդանութեյան և ուրախութեյան: Հավաքութեներու մեջ հոն է իսկական զվարթութեյունը, երբ անխտիր բոլոր ներկաները առաջ կքաշվին, և երբ մանավանդ իրենք առաջ կնետվին իրենց չնորհքը, իրենց գիտցածն ու կրցածը ընդհանուրի տրամադրութեյան տակ դնելու:

Ինչքան որ մեկուն տիրապետութեյունը անախորժ բան մըն է ամենուն համար, այդքան ալ անախորժ է ու անհամ հավաքումներու մեջ ատոր մյուս ծայրը ներկայացնող չփանալն ու ծեքծեքումը. «գիտեմ-չգիտեմ», «կրնամ-չեմ կրնար», «հազ եմ, հարբուխ եմ, չգիտեմ՝ ինչ եմ»: Հավաքումի մը մեջ ըլլալը իր պարտավորութեյունները ունի, ուրկե փախուստ տալու իրավունք չունի

ոչ ոք: Մարդիկ իրարմով ըլլալու համար է, որ կուգան իրարու, իրարու օգնելու, իրարու բավականութիւն պատճառելու, իրարու հետ հաճելի ժամանակ անցընելու կամ խորհուրդ ու կարծիք փոխանակելու: Ժողովի մը մեջ քուրմի պես նստիլ առանց բերանը բանալու և ուրիշներու ըսածներուն քիթով ու աչքով ընել՝ կրթութեան պակաս է, արհամարհելու պես բան մըն է. նույնն է, երբ տեղ մը հյուր կերթաս, կնստիս լուռ ու անշարժ՝ սպասելով, որ ուրիշները քեզի ղբաղեցնեն, կարծես սինեմա գացած ըլլայիր:

Շատ հաճախ այս «քաչվիլը» ու մեջ նետվելէ խուսափիլը բնաւորութեան թերութիւն է: Ամաչկոտ հոգիներն են ատոնք, և դիխաւորապես երեք աղբյուրե կըղխի այդ ամաչկոտութիւնը՝ իր մարմինն ու հոգին ցուցադրելու ամոթխածութիւններեն, իր ուժերուն ու կարողութիւններուն վրա ունեցած անվստահութիւններեն և երկար ժամանակ միայնակ ապրած ըլլալու սովորութիւններեն: Եվ այդ «ամաչկոտները» ո՛չ միայն հավաքոյթներու մեջ կքաշվին, այլ ուղղակի հավաքոյթներե կքաշվին, առանձնութիւն կսիրեն և իրենց մտորումներու նեղ շրջանակը: Բայց մարդս մասն է հանրութեան, և ընկերական չփումը մեծ դրդիչ մըն է բազմակողմանի փորձառութեան, մեծ վայելք մըն է և մեծ մխիթարութիւն, և այս ամենեն զրկվիլը խոշոր բաց մը կձգե անհատի ապրումներուն մեջ. այդ փախուստով բաց մը նաև կգոյանա ընկերութեան համար, ինչքան ալ որ համեստ ըլլա փախուստ տվող շնորհքը:

Գ. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՆՔԵՐԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակութեյան առաջին հիմնական ու խիստ կարևոր գործիքը վարժութեյունն է. մեր ուզած աշխատանքը, մեր ուզած վարմունքը և մեր ուզած ձևը ընել տալը սովորութեյուն դարձնել: Փոքրիկը վարժվի այսինչ բանը այս ձևով կատարելու, այսինչ պարագային այս կերպով վարվելու պարզապես սովորութեյամբ, առանց որևէ դատողութեյան, առանց ուրիշ կերպ վարվիլ մտքեն անցնելու. կամ եթե մտքեն ալ անցնի, կամ ուրիշի մը վրա տեսնե տարբեր ձևի վարմունք մը, տարօրինակ թվի իրեն, ծուռ ու անբնա-

կան, այսինքն իր սովորութիւններեն դուրս, անկիրթ ու ժխտելի:

Ա. Կայանքի բոլոր աստիճաններու վրա, բոլոր տարիներու մէջ ալ սովորութեան ազդեցութիւնը խիստ մեծ է, միշտ ալ մեր վարմունքներուն մեջ խոչոր տեղ կբռնե այդպես տեսած, այդպես լսած և այդպես ըրած ըլլալը: Ինչքան ալ մարդու մեջ գիտակից վերաբերումը զարգացած ըլլա, ինչքան ալ գիտակցաբար վարել ուզենա իր հարաբերութիւնները իր նմաններուն հետ, միշտ ալ մեծ քանակութեամբ վարմունքներ կկատարվին նորեն պարզապես սովորութեամբ, և նույնիսկ գիտակցորեն վարված միջոցին ալ իր ընտրութիւնն ու ղեկավարութիւնը առաջնորդողը կըլլան սովորաբար հինեն լսածները, հինեն տեսածները, հին վարժութիւնները, հին սովորութիւնները, որոնք խելացի, բնական ու կիրթ կթվին ընդհանուր առումով: Վարմունքի նոր ձևերը, մուտային հագուստներու պես, սկիզբը տարօրինակ ու անշնորհք կզգանք, նույնիսկ ծիծաղելի, մինչև վարժվինք, մինչև որ մեր աչքին ու հոգիին համար դառնա սովորական: «Սովորութիւն՝ երկրորդ բնութիւն», – կըսե հին առածը:

Սովորութեան դերը սակայն կրկնակի մեծ է մասնավորապես փոքրիկներուն համար: Ինչքան անհատը տարիք առնե, այնքան կշատնան ու բազմակողմանի կդառնան անհատի մը անձնական դիտողութիւններն ու փորձառութիւնները, և նույն չափով ալ կշեշտվի անհատի մը անձնականութիւնը, դատողութիւնը, ընտրութիւնը իր այս ու այն ընելիքին հանդեպ: Ինչքան փոքր է անհատի ընկերական փորձառութիւնը, ինչքան փոքր է իր տարիքը, այնքան ալ տկար է իր անձնական ճաշակն ու դատումը, որ ամեն բանի մեջ չի միջամտեր, որով և փոքրիկը կուրորեն ու անվերապահ կենթարկվի մեծերու ըսածին և ուզածին: Մինչև առաջին տասնամյակին վերջերը փոքրերը քիչ միայն դիմադրութիւն մը կցուցադրեն մեր ներարկած սովորութիւններուն, և ատոր համար ալ այդ տարիքը մասնավոր կերպով հարմար է սովորութեամբ դաստիարակելու համար, մեծերու ընտիր ու ազնիվ համարած վարմունքի կերպերը փոքրիկներուն մարմնին ու հոգիին մեջ մեքենական վարժութիւն ու սովորութիւն դարձնելու համար, «երկրորդ բնութիւն» մը կազմելու համար: Ասիկա ճիշդ է դաստիարակութեան բոլոր պահանջներու վերաբերմամբ, բայց հատ-

կապես կշնչուի արտաքին վարմունքի համար, մարմնի, խոսքի, կեցվածքի, շարժուձեւերու ու հարգանքի բազմատեսակ յուրացումներու համար, որոնց քաղաքավարութիւն ընդհանուր անունը կուտանք:

Արդ՝ այս կամ այն ձեւի վարմունքը մանկան հոգիին մէջ խոր ու մնայուն դարձնելու և արմատ բռնած սովորութեան մը վերածելու միջոցը կրկնութիւնն է, հնար եղածին չափ նոյնաձեւ կրկնութիւնը: Առանց որևէ բացառութեան փոքրիկներուն պետք է պահանջվի, առանց պիջումի, առանց թերանալու, առանց ձանձրանալու: Թերացում է, երբ մտածենք, թե «այս անգամ ալ վնաս չունի, թող այլ կերպ ըլլա», այսինքն երբեմն կստիպենք, երբեմն ալ աչք կգոցենք: Եվ մանաւանդ փոքրիկին ամբողջ շրջապատը միշտ նոյնը պիտի պահանջն և նոյն ձևով: Այս միակերպ, մշտական ու անփոփոխ կանոնը շատ կդիւրացնի թե՛ մեծերուն աշխատանքը և թե՛ փոքրիկներուն առանց դժվարութեան ենթարկվիլը. շատ շուտով փոքրիկը կյուրացնե ու գիտե, թե այսինչ պարագային ինչպես պիտի վարվի: Իսկ ընդհակառակը, երբ անգամ մը այս կերպ կպահանջենք, անգամ մը՝ այլ կերպ, երբ անգամ մը մեծ կարևորութիւն կուտանք, ուրիշ անգամ մը կմոռանանք ու կարևորութիւն չենք տար, երբ մեկս այս ձևով կպահանջն, մյուսները՝ այլ ձևով, նախ՝ չափազանց կդժվարացնենք փոքրիկին գործը. խեղճը չիմանար՝ ե՞րբ և որո՞ւն ուզածը ընե, և ո՞րն է իսկապես իր ընելիքը. երկրորդ ալ՝ անկարելի կդարձնե դաստիարակին գործը, զենքը ձեռքեն կիյնա, ուզած վարվելակերպը չարմատանար, չվերածվիր մեքենական վարժութեան:

Բ. Այս մեքենական նոյնաձև կրթութեան մեկ ինքնահատուկ տեսակը կներկայացնն ժամանակի պարբերականութիւնը, մարդուս ընելիքները որոշ ժամանակի հետ կապելու սովորութիւնը: Ամենեն առաջ՝ նույն ժամուն նույն գործերը կատարելը կկազմե հիմքերեն մեկը կարգապահութեան: Այսինչ ժամուն ելլել անկողնեն, այսինչ ժամուն անկողին մտնել, նույն ժամուն նախաճաշել, ճաշել ու ընթրել, որոշ ժամերուն աշխատիլ՝ որոշ դադարներով, որոշ ժամերուն խաղ կամ հանդիստ: Ասոր վրա է հիմնված ընտանեկան, դպրոցական և պաշտոնական բոլոր ժամացուցակները, այսինքն ժամացույցով գործ տեսնելու թանկագին սովորութիւնը: Գիշեր-

նները անկարդ պառկիլ զանազան ժամերու, երբեմն ուշ ուտել, երբեմն չուտ, գործը տեսնել երբ պատահեցավ, ինչպես պատահեցավ, – այս բոլորը մեծ արգելք է կանոնավոր աշխատանք արտադրելու և կյանքը արդյունավոր անցընելու: Ժամանակի կանոնավոր բաժանումը ու կանոնավոր պարբերական կրկնությունը աշխատանքի ստեղծագործ ուժ է և առողջապահական լուրջ պայման:

Միտքն ու տրամադրությունը կեղրոնացնելը, ինչ որ ներշնչում կանվանենք, սովորությամբ ու պարբերականությամբ ամրացող բան մըն է. որոշ ժամերուն աշխատանքի նստելու սովորած մարդը այդ որոշ ժամերուն ալ իր տրամադրության գալը կզգա, ինչպես որ որոշ ժամի մը ճաշի նստող մարդուն ախորժակն ալ նույն ժամերուն կբացվի, ինչպես որ որոշ ժամի մը անկողին եյլելու վարժվողը նույն ժամուն ալ կարթննա. քունը անմիջապես կկոխե փոքրիկներուն աչքերը, որոնք վարժված են միշտ նույն ժամուն պառկելու. քանի մը օր խանգարե այդ կարգը, և պզտիկին քունը այլևս չի գար այդ ժամուն:

Ո՛չ միայն որոշ ժամերուն որոշ աշխատանքի պետք է վարժեցնել, այլև միշտ պետք է ճիշդ ըլլալ, չուշանալ զանգին, դասին, գալուն ու ժամադրության, ըլլալ ճշդապահ ամեն բանի մեջ. ասալ չատ պիտանի սովորություն մըն է թե՛ իրեն համար և թե՛ ընկերության, որ նորեն վարժությամբ ձեռք կբերվի: Սկսիլ և ընդհատել որոշ ժամերուն ո՛չ միայն ճշդության կմարզե մարդկային հոգին, այլև կարևոր նպաստ մըն է առողջության:

Ժամանակը կանոնավոր կերպով բաժնելու և ճշդապահ ըլլալու սովորության զույգ կերթա բնական կերպով իր ժամանակը համաչափ տնօրինելու կարիքը. ով ժամացույցով կչարժվի, հարկադրված է իրար հյուսելու իր աշխատանքի, խաղի, ընկերային պարտավորություններու և հանգստի պահերը՝ ամեն մեկուն որոշ տևողություն հատկացնելով, որով և հետզհետե համաչափություն մը կմշակվի աշխատանքի, հանգստի և թեթև զբաղումներուն հատկացված ժամերուն միջև: Ինչքան թարմ հասակեն ձեռք բերվին այս վարժությունները, այնքան խոր կըլլա անոնց ազդեցությունը անհատի կյանքին ու գործունեության վրա:

Անքենական վարժեցումեն ետքը դաստիարակութ[յ]ան երկրորդ միջոցը օրինակն է, այսինքն շրջապատող անձերու ըրածին ու վարմունքին ընդօրինակութ[յ]ունը հետևողականութ[յ]ան բնական օրենքով, նմանվելու և կապկելու բնազդական պահանջով, ընդհանրապես անգիտակից կրկնութ[յ]ամբ ուրիշներու ըրածին, երբեմն ալ այս կամ այն աստիճանի դիտավորյալ նմանութ[յ]ամբ:

Ուրիշները, որոնց վարմունքը կընդօրինակենք, կա՛մ կենդանի ապրող էակներ են, որոնց հետ մենք հեռվեն ու մոտեն չփման կուգանք մեր կյանքի ընթացքին, կա՛մ եղած են ապրող էակներ, բայց հիմա մեռած ու անցած են, բայց որոնց գործերը, վարքն ու բնավորութ[յ]ունը պահված է պատմութ[յ]ան էջերուն մեջ, ավանդութ[յ]ան ու հիշողութ[յ]ան մեջ, և կա՛մ դեմքեր են ու մարդիկ, որոնք իրականութ[յ]ան մեջ ապրած չեն, ապրած են տաղանդավոր մարդու մը երևակայութ[յ]ան մեջ և հոնկե անցած են գեղարվեստական ստեղծագործութ[յ]ուն:

Ա. Մեզի հետ անմիջական չփման մեջ եղող, ապրող անձերը կրնան ըլլալ հաճախակի ու տևականորեն մեզի կապված մարդիկ՝ իբրև ազգական, ընկեր, հարևան կամ ավելի պատահական կերպով մեզի հետ չփման եղող դեմքեր, իբրև համաքաղաքացի ու ազգակից, իբրև պատահական ճամբորդ, և վերջապես ատոնց մեջ են նաև խումբ մը մարդիկ, որոնք սերտորեն կապված են մեր հասունցող տարիներուն և մեր կրթութ[յ]ունը վարողներն են, այսինքն մեր ծնողներուն ու դաստիարակներուն կենդանի օրինակը:

Բացահայտ է, որ ինչքան տևական ու սերտ է կապը, այնքան ալ մեծ է ընդօրինակութ[յ]ան հնարավորութ[յ]ունը, այդ պատճառով ալ դեկավարութ[յ]ունը միշտ կրնանա իր հսկողութ[յ]ան ենթարկել փոքրիկներու կապերն ու հարաբերութ[յ]ունները՝ հնար եղածին չափ դէպ օրինակներեն հեռու պահելու համար: Ընկերներու և միջավայրի այս հսկողութ[յ]ան և ընտրութ[յ]ան միջոցին դեկավարները մոռնալու չեն սակայն, որ ամենեն առաջ իրենք են ամենեն կարևոր օրինակները, և իրենց դրոշմն է, որ կդրվի փոքրիկներու հոգիներուն վրա, որ կազդեն իրենք իրենց խոսքով ու չարժուձևերով,

իրենց վարմունքով, իրենց զգացումներով, իրենց դատելու եղանակով, իրենց սկզբունքներով ու ձգտումներով:

Ամեն ծնող ու դաստիարակ պարտական է միշտ աչքի առաջ ունենալու սակայն խոսքի ու գործի մէջ եղած մեծ տարբերութիւնը ընդօրինակութեան և հետևողութեան տեսակետեն: Փոքրիկները մեր վարմունքին ու մեր անձին կնային, մեր ըրածին և ո՛չ թե մեր տված աղվոր-աղվոր խրատներուն ու ճառին: Երբ ինքդ կծխես ու տղուդ կըսես՝ մի՛ ծխեր, շատ կարճ խելքի տեր մարդ մըն ես: Երբ ինքդ տեղը եկած ժամանակ չես քաշվիր սուտեր գլորելե ու փոքրիկիդ կքարոզես, որ սուտ չխոսի, ապարդյուն ու հիմար ձևականութիւն մըն միայն կկատարես, և ասոր հետևանքը կըլլա ան, որ կամաց-կամաց փոքրիկդ կսկսի բանի տեղ չդնել քու խոսքդ: Երբ կտիպես փոքրիկիդ, որ հարգանքով մոտենա ու համբուրե հյուր եկած հոգևորականի մը ձեռքը, մինչդեռ նախորդ գիշեր ժամերով նստեր, բամբասեր ես այդ միևնույն անձը, ծաղրեր ես ու հայհոյեր, հիմա ի՞նչ կուզես, որ մտածե խեղճ փոքրիկդ: Անոր առողջ դատողութիւնը կհանե իսկույն բնական եղրակացութիւնը, և պետք չէ զարմանաս, եթե հաջորդ օրը սկսի հիմար պատմութիւններ հորինել քո մասին, իր եղբայր-քույրերու մասին կամ ուրիշ եկող-գնացողներու մասին, այնպես, չեղած, չըսված անխելք բաներ:

Երբ խոսքն ու գործը զույգ չեն քալեր, ինչպես մենք՝ մեծերս, այնպես ալ փոքրիկները զործերուդ կհետևեն, ո՛չ խոսքերուդ: Խոսքը կդառնա այնպե՛ս, բանաստեղծութիւն, ճարտասանութիւն: Մարդիկը վարակելու, մարդիկը իր հետևեն քաշելու, մարդիկը կրթելու ու բարձրացնելու համար պետք եղածը գործով տված օրինակն է: Խոսքն ալ մեծ ուժ է անշուշտ և կազդե, բայց միայն այնքան ատեն, որ կներկայանա իբրև թարգման գործին: Գործեն զատվելուն պես խոսքը կդառնա անբարոյական դրդիչ մը, անբարոյականութիւն քարոզող զենք մը, ինչքան ալ կուզե մեծ ու աղվոր ու ազնիվ խոսք ըլլա: Եվ որչափ բարձր է խոսքիդ դրած բարոյական պահանջը, և ինչքան հեռու է քու գործդ ու վարմունքդ այդ բարձրութենեն, այնքան ալ խոշոր է քու պատճառած բարոյական ցավերդ, որովհետև կեղծիքի, սուտի, խաբեութեան, չողոքորթութեան ու ցածութեան է, որ կվարժեցնես:

Բ. Գալով արդեն անցած-դացած իրական դէմքերուն՝ չփուռը կկատարվի բանաւոր ու գրաւոր պատմութիւամբ, երբեմն ալ նկարաւոր նկարագրութիւամբ: Նախ՝ ազգային պատմութիւնը, անոր ետևեն ալ՝ ազգերու ընդհանուր պատմութիւնը անսպառ թանգարան մըն է ազգային, մարդկային ու համամարդկային ամեն տեսակի մեծութիւններու, ազնվութեան, անձնվիրութեան, աշխատանքի, անկոտրում ձգտումներու, այդ մարդոց կատարած ու երազած գործերուն, անոնց բաղդին, հաջողութեան ու տառապանքներուն: Այդ պատճառով ալ ազգային պատմութեան և ազգերու պատմութեան կենդանի ու պատկերելի ուսուցումը, ընթերցումը և մոտիկ ծանոթացումը ո՛չ միայն իբրև դիտութիւն, իբրև ընկերական երևոյթներու ըմբռնում կարևոր է, այլև իբրև դաստիարակութեան առաջնակարգ միջոց:

Մասնավորապես մեծ է ազդեցութիւնը մեծ մարդոց կենսագրութիւններուն, ըլլա գիտական, գրական, գեղարվեստական, պետական, կրոնական, քաղաքական, քաղաքացիական, առևտրական ու արդյունաբերական բոլոր ասպարեզներուն մեջ: Խիստ գրգռիչ է ու հմայիչ ամեն տեսակի գյուտերու պատմութիւնը, ուղևորական արշավանքները ծովերով ու ցամաքներով ու նոր երկրներու, նոր ժողովուրդներու բացումը, պայմանով, որ այդ մեծ դէմքերուն գործն ու հոգին իսոր ու կենդանի նկարագրված ըլլա: Այսպես ալ դաստիարակչական մեծ արժեք ունին գանազան մասնավոր ու կարևոր դեպքերու ճշգրիտ նկարագրութիւնները, մենագրութիւնները, ուր կպատկերացվին մարդոց ձգտումները, մաքառումները, դժվարութիւնները, անձնվիրութիւնն ու վճռականութիւնը:

Այս իրական պատմութիւններուն ետևեն կուգան գեղարվեստի ստեղծագործութիւնները, այսինքն նորեն մարդկային հոգիի, վարմունքի ու գործունեութեան նկարագրութիւններ, բայց ո՛չ իրապես ապրած անհատի մը, այլ այնպես, ինչպես որ գեղարվեստագետի մը հոգիին մեջ կպատկերանա: Իրական պատմութիւնները իրական ըլլալու մեծ առավելութիւնը ունին իրենց վրա. գեղարվեստական պատմութիւնները աղնիվ ու բարձր իմացականութեան մը դիտած, մշակած, փնջած ու լրացված պատկերացում-

ներ են իրականութեան, ավելի ցայտուն ու ավելի ամբողջական, որով և ավելի գեղեցիկ ու գրավիչ:

Այս կարգի ստեղծագործութիւններուն մեջ առաջին տեղը կը բռնեն ամբողջ ժողովուրդի մը և ամբողջ պատմական շրջանի մը տեսակ մը ընդհանուր պատկերացումը եղող ժողովրդական ստեղծագործութիւնները, ինչպես են դիւցազներգութիւնները, անգիր վեպերը, ավանդութիւնները: Ուրկե եւոքը կուգան մասնաւոր հեղինակներու ստեղծած հանրային կամ անհատական ըմբռնումով պատկերացված «հերոսներուն» կյանքերը, այսինքն պայքարող, ազատող, սիրող, ճգտող ու երազող մարդկային հոգիներուն նկարագրութիւնը վիպական կամ թատերական եղանակով՝ կարդացվելու կամ ներկայացվելու դիտաւորութեամբ:

Գեղարվեստական ստեղծագործութեան ծնունդ եղող այս մարդոց վարքն ու բարքը, բարոյական դրդիչներն ու ընկերական ըմբռնումները կղառնան վարակիչ օրինակ ընթերցողին ու հանդիսատեսին, կքանդակվին խորապես ընթերցողներու հոգիին մեջ ճիշդ իրենց լավ մշակված, կատարյալ, գեղեցիկ և արվեստի բոլոր հրապույրներով օժտված ըլլալուն համար և կդնեն իրենց կնիքը անհատի վարմունքին և ըմբռնումներուն վրա, կղառնան ընդօրինակութեան անփոխարինելի պատճեններ: Գեղարվեստական երկերը, բացի մեծ մխիթարութեյուն, ազնիվ ժամանց և մարդկային հոգիներուն խորքը նայելու հնարաւորութեյուն տալեն, կուտան նաև ուրիշներու հոգերովը, ցաւերովը, ուրախութիւններովը վարակվելու կրթութեյունը, ուրիշներու հետ և ուրիշներու համար հուզվելու, ճգտելու և մտածելու վարժութեյունը, այսինքն չատ կնպաստեն անհատը իր եսական կեղևեն քաշելու, դեպի այլասիրութեյունը բարձրացնելու, ազնվացնելու, բարոյականացնելու: Այնպես որ մեկերկու ուղղութեյամբ չատ մեծ է գեղարվեստական խոր երկերու դաստիարակչական արժեքը:

ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ

Դաստիարակութեյան երրորդ ու վերջին գենքն է դատողութեյուններու, ըմբռնումներու և համոզումներու մշակումը անհատներու հոգիին մեջ, որպեսզի անկե եւոքը դառնան անոնք իր վար-

մունքին ու գործունեության ղեկավարը: Սկզբունքներու տիրապետությունը, այսինքն դիտակցաբար ըստ բարոյական պահանջներու վարվիլը, ուժ կստանա անշուշտ ավելի հաստուն տարիքի մեջ, բայց իր հիմքերը կդրվին շատ ավելի կանուխեն, շատ մատղաշ հասակեն:

Ա. Մեքենական վարժությամբ կատարվող վայելչությունը, քաղաքավարությունը և բարոյականությունը բացարձակ մեքենական կըլլան միայն բոլորովին թարմ առաջին տարիներուն. արդեն երեք-չորս տարեկանին բան մը պատվիրելու ու պահանջելու ատեն երբեմն այս կամ այն չափով մենք կդիմենք նաև փոքրիկի զգացողությանը, կփորձենք բացատրելու անոր խելքին մատչելի ձևով մը, թե ինչու այս ձև պետք է վարվի, թե ինչ անտեղություններ կառաջանան, եթե այդ ձևով չվարվի, մատնանիշ կընենք այլ կերպ վարվելուն բերելիք գեշ ու վնասակար հետևանքները և, ընդհակառակը, մեր պահանջած ձևին տալիք աղվոր և օգտակար արդյունքը, ուրիշ խոսքով՝ մեքենական պահանջին հետզհետե կփաթթենք դիտակցությունը, ըմբռնումը, համոզումը:

Ինչքան տղուն տարիքը աճի, այս բացատրություններն ու մեկնությունները, հետևանքներու այս վերլուծումը, պատճառի ու հետևանքի այս սերտ կապը և աղեկ ու գեշ վարմունքներուն այս ուսումնասիրությունը քանի կերթա կընդգծվի:

Պահանջներուն կկցվին խրատը, հորդորը, բացատրություններ տալը, քարոզը և սկզբունքներու մշակումը: Իսկ հաստնացման մոտեցող տարիներուն մեջ կարելի է ըսել, որ գրեթե երբեք չենք դիմեր պարզ ու չոր պահանջներու. կջանանք միշտ ինչուն միասին տալու և մինչև այդ ժամանակը միայն մեքենական վարժությամբ կատարած բաներուն անգամ ինչուն հիմա կջանանք իրեն բացատրելու, որ սովորության ուժին ավելցնենք նաև համոզումին ուժը:

Մեծ ուժ է անշուշտ մեքենական սովորությունը դաստիարակության գործի մեջ. հիմնական լծակն է անիկա հաստնցող տարիներու առաջին կեսին: Բայց դաստիարակության ձգտածը անհատը հետզհետե իր սեփական ոտքերուն վրա կեցնելն է, դաստիարակի մը ղեկավարությենեն ազատելն է, իր խելքով ու իր կամքով գործել ու վարվիլ տալն է, այդ պատճառով ալ ղեկավարությունը կձգտի

կամաց-կամաց ամեն ինչ գիտակից դարձնելու, ամեն ինչ սկզբունքի վերածելու, ամուր ու հաստատ բարոյական դատողություններու, որ մարդս այլևս ուրիշ կերպ վարվիլ չկարողանա, երբ ինքը իր խելքին ու իր կամքին հետ առանձին մնա:

Հին ու արմատացած սովորություններուն ուժը անտարակույս միշտ ալ մեծ է, և յուրացված սովորությունները յուրացված են ընդհանրապես ամբողջ կյանքի համար, մարդս անոնց հարկադրանքեն շատ դժվար դուրս կուգա: Բայց այս բոլոր ուժն ու հարկադրանքը տեսակ մը բռնություն կզգացվի, տեսակ մը կույր հպատակություն ուրիշներու սորվեցուցածին և հին սերունդներու դատողության: Բարոյական այդ նվաստ վիճակեն ազատ ու բարձր վարմունքի վիճակին հասցնելու համար պետք է որ անհատը իր շատոնց սորված ու մեքենաբար կատարած բաներուն իր համոզումովն ալ համաձայն ըլլա, իր մեքենականությունը և իր գաղափարականությունը իրար համաձայնեցուցած ըլլա:

Բ. Ինչ որ ճիշդ է մեքենական վարժությամբ ստացված դաստիարակության համար, ճիշդ է նաև հետևողությամբ ու նմանվելով, ընդօրինակելով կատարված դաստիարակության համար: Օրինակումը կկատարվի շատ մատաղ տարիներու մեջ առանց որևէ գիտակցության, մտածումը դեր չունի, գլխավոր դեր խաղացողը հրապույրն է, հաճելի ու սիրելի ըլլալը, եթե բոլորովին մեքենական կապկում մը չէ. մինչև վերջն ալ այս սիրո, համակրանքի ու հափշտակության ազդեցությունը մեծ է, երբ ուրիշներու օրինակին կենթարկվինք, երբ բան մը կընենք ուրիշներու օրինակին հետևելով:

Սրտի այս մասնակցության կամաց-կամաց կավելնա մտքի որոշ մասնակցություն մը: Նույնիսկ փոքրիկներու ընդօրինակումին մեջ բացի կենդանական կապկելու բնազդեն, բացի սիրելեն, հավնելեն ու հափշտակութենեն դեր կխաղա նաև մտային տարր մը. փոքրիկը հետզհետե ավելի հստակ կերպով կտեսնե, որ կընդօրինակե. գիտե, որ կսիրե և անոր համար կընդօրինակե, և քիչ-քիչ ավելի պարզ կգիտակցի, որ իր հերոսին կամ սիրած ուսուցչին վարմունքը, կեցվածքը, խոսվածքը գեղեցիկ է, ազդու, այսինքն դատողությունը կուգա ընդօրինակումը գործացնելու և ավելի կչիռ տալու:

Հաստնցող տարիներու երկրորդ կեսին ասոնց կմիանա բարոյական սկզբունքներու մշակումը: Այդ մշակումը կկատարվի երեք ճամբով՝ կրնանք անվանել գործնական, գրական ու գիտական:

Գործնական ճամբան չրջապատող հասարակութեան՝ դարեր դար մշակած ու մեզի հասցուցած բարոյական դատողութիւնները են, որ իբրև խրատ, իբրև առած, իբրև իմաստութիւն, իբրև բարոյական տեսութիւն չարունակ մեր շուրջը կկրկնվի շրթունքներու վրա ու գրութիւններու մեջ կկազմե որոշ ժողովուրդի մը, որոշ ժամանակի մը բարոյական օրինագիրքը:

Գրական ճամբան կապված է իրական ու գեղարվեստական պատմութիւններու բարոյական վերլուծութեան. թե՛ ընտանիքի մեջ, թե՛ դպրոցը ամեն ընթերցումե ետք բնական կերպով կփնտրվի, թե այս կամ այն հերոսի վարմունքի մեջ ի՞նչն էր, որ սիրեցինք, ինչո՞ւ սիրեցինք, ի՞նչ տեսակի վարմունքները սիրելի են մեզի, և ի՞նչ տեսակի վարքն ու բարքը չենք սիրեր, չենք ախորժիր, կատենք, այսինքն կենդանի օրինակներուն վրայեն փոքրիկներուն հանել կուտանք քաղաքավարութեան, կենցաղավարութեան և բարոյականութեան հիմնական ըմբռնումները, հիմնական սկզբունքները:

Դպրոցական վերջին շրջանին ասոնց կավելանա նաև գիտական ճամբան. բնախոսական, կենսաբանական, բարոյագիտական և ընկերաբանական դիւրամատչելի գիտական ուսումնասիրութիւններու ընթերցումով և հավաքական վերլուծումով չանք կթափվի՝ անոնց բերած նոր լույսին տակ ըմբռնել տալու ընկերական օրենքներու ու բարոյական ըմբռնումներու սերտ կապերը ժողովուրդի մը աշխարհագրական, տնտեսական ու վարչական տարբեր վիճակներուն ու պայմաններուն հետ, այսինքն մեկ կողմեն կընտելանան ընկերական, բարոյական հարցերու ավելի խոր ու գիտական մերձեցման, մյուս կողմեն ալ ավելի գիտակից կերպով կըմբռնեն ու կյուրացնեն բարոյական օրենքներու և իտեալներու էութիւնը:

Դ. ԵՐԿՈՒ ԿԱՄՔԵՐՈՒՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կրթելու համար ղեկավարողը պետք է կարողանա վարվիլ իր ըմբռնածին ու ծրագրածին համեմատ, կրթվողը պետք է գործի այն ձևով ու ճամբով, որ կրթողի կարծիքով անհրաժեշտ է ցանկալի արդյունքին հասնելու համար: Եվ հոս է ահա, որ կուգա խոչոր դժվարությունը. կամեցողը դուն ես, այս կամ այն ձևով ընել տալ ուզողը դուն ես, իսկ ընողը բոլորովին ուրիշ մըն է, ուրիշ մը, որ նույնպես իր ներքին ուրույն աշխարհը ունի, իր ներքին ու արտաքին բազմատեսակ դրդիչներն ունի և իր սեփական կամքն ունի: Ղեկավար կրթությունը հիմնված է երկու կամքերու գործակցության վրա և որպեսզի ղեկավարությունը արդյունք տա, պետք է որ զարգացման ենթակա անհատին կամքը հպատակի զարգացումը վարող կամքին: Այս հպատակումն է, որ կանվանենք հնազանդություն:

Այս հնազանդությունը գործադրելն ու մշակելը մեծ արժեք ու կարևորություն ունի ո՛չ միայն այդ վայրկյանին կրթական գործի դյուրացման տեսակետեն, այլ շատ ավելի խոր ապագա հանրային կյանքին իբրև հրամայական պահանջ մը: Իրականին մեջ անհատ մը երբեք ինքն իրեն համար անկախ, ազատ ու առանձնակի գոյություն մը չէ, ան միշտ բազմապատիկ կերպերով ծնած օրեն մինչև իր կյանքին վերջը կապված է հավաքականության մը, երբեմն քանի մը տեսակ ու քանի մը աստիճանի հավաքականություններու միաժամանակ. այսպես, ամեն անհատ անդամ է պետության, ժողովուրդի մը, կուսակցության մը, համայնքի մը, արհեստակցության մը, ակումբի մը: Մարդկային անհատը իր զանազան կողմերովը հանրային բարդ ցանցի մի քանի ուղղությամբ վազող շղթաներուն հագցված օղակ մըն է: Եվ այդ շղթաները կհարկադրեն, որ անհատը իր ամբողջ կյանքի ընթացքին ենթարկվի այդ հավաքականություններու պահանջներուն, շահերուն, տեսակետներուն ու նախապաշարումներուն՝ հաճախ իր կամքին հակառակ: Անհատը իր այդ բազմապատիկ կապերուն մեջ իր ամեն ուզածը ընել չի կրնար, շատ բան իր չուզած ձևովը

պիտի ընեն, և շատ մը բաներ ալ բոլորովին արգիլված են օրենքով, կենցաղական կանոններով, սովորութեամբ, պատշաճութեամբ, բարոյական պահանջով, անսաստողը կատաժէ ու կպատժվի, անհատը իր թարմ տարիքեն վեռք է վարժվի այդ ավելի բարձր կամքին հնազանդիլ և՛ իր, և՛ հանրութեան օգտին համար:

Այս հնազանդութիւնը, բյա կրթվելու նպատակով թե հանրային պահանջով, կրնանք զանազանել չորս տեսակի, չորս աստիճանի:

Առաջինը, ամենեն ընդհանուրը, ամենեն աննկատելին և ինքնին կատարվողը այն պարագան է, երբ մեկը կենթարկվի ուրիշի մը կամքին առանց մտածելու, իբրև բնական հպատակութիւն իրմե շատ ավելի ուժեղին: Այսպես է մեծերու հպատակութիւնը պետական կարգ ու կանոնին, այսպես է փոքրիկներու ենթարկվիլը ծնողներու և մեծերու հրամանին, առանց քննելու, իբրև աշխարհի բնական կարգ, իբրև հետևանք իրենց տկարութեան և մանկութենեն առացած վարժութեան, տեսակ մը մեքենայորեն: Հատկապես պզտիկներու կրթութեան համար ամենեն պարզ, անմիջական ու դյուրին ձևը այս է հնազանդութեան, այսպես ըսենք՝ կամքին ինքնաբեր ու բնական հնազանդութիւնը:

Հնազանդութեան երկրորդ տեսակն է հոժար հնազանդութիւնը, երբ հպատակողը ուզելով, հարմարելով, համակերպելով կենթարկվի դեկավարի կամքին կամ անոր պահանջին դեմ մասնավոր առարկութիւն մը չունի, առնվազն հակառակ ուղղութեամբ գործող դրդում մը չունի, և կամ հրամայողը մոտիկ, սիրելի մեկն է, և իր սիրած դեկավարին հաճելի ըլլալու համար, անոր սիրտը չկոտրելու համար է, որ կհնազանդի. կամ վերջապես կենթարկվի, որովհետև անոր խոսքը բարձր կգնահատե, մեծ համարում ունի անոր խելքին և իմաստութեան, չի համարձակվիր անոր հետ բախումի գալու և ավելի հարմար կգտնե անոր հրահանգներուն տակ մնալը, նույնիսկ կրնա հպարտութիւն զգալ այդ տեսակի առաջնորդի մը ձեռքին տակ գտնվելուն համար, կրնա անով հավիշտակվիլ: Հոժար հնազանդութիւնը կառաջանա սեփական ու տարբեր կամեցութեան մը բացակայութենեն և կամ համակրանքի, սիրո, մտերմութեան, հարգանքի, հեղինակութեան ու հավիշտակութեան ազդեցութեան տակ:

Հնազանդության երրորդ տեսակն է գիտակից հնազանդությունը, երբ անհատը հասած է որոշ աստիճանի հասունության և կը ննն, կ՚ներըլուծե հրամայողի պահանջը և իր դատողության, իր կազմած սկզբունքներուն համաձայն կգտնե. չ՚ենթարկվիլը թե՛ իր և թե՛ շրջապատողներուն համար վնասակար կ՚նկատե, առնվազն անհարմար, դուցե և վտանգավոր ու անխոհեմ իր շահերու տեսակետեն, իր ապագայի տեսակետեն և կ՚ենթարկվի:

Կամ, ընդհակառակը, դիմացինի պահանջը իր շահին, իր վիճակին, իր սկզբունքներուն. իր արժանապատվության, իր զգացումներուն հակառակ կգտնե ու չ՚ենթարկվիր, չ՚ուզեր ենթարկվիլ: Կ՚ըսենք «տրտունջ», եթե իր դժգոհությունը անորոշ կերպով մը կարտահայտե: Կ՚ըսենք «բողոք», երբ իր դժգոհությունը կ՚ձևակերպե բացահայտ, թեև դեռ կ՚ենթարկվի: Կդառնա «ըմբոստացում», երբ դիտակից կերպով կմերժե ենթարկվիլ եղած հրամանին: Կդառնա «ապստամբություն», երբ ո՛չ միայն կդադրի պահանջը կատարելե, այլև կ՚ձգտի քանդել ու մեջտեղեն վերցնել այդ տեսակի հրամանները կամ այդ կարգի հրամայողները:

Հնազանդության, ավելի ճիշտ է ըսենք՝ անհնազանդության այս երրորդ տեսակը արդեն կազմակերպված հոգեկան կյանք կ՚ենթադրե և կգործե սովորաբար հասուն տարիքի մեջ, միայն պետք չէ կարծել, որ մանուկ ու տղա տարիներուն մեջ բնավ դեր չունի, նույնիսկ խիստ մատղաշ հասակը ունի իր գիտակից կամ կիսագիտակից բողոքը, դիմադրությունը և ըմբոստացումները, և որոնց պետք է մեծ զգուշությամբ մոտենալ, որովհետև ինքնին նշան է ուժեղ կամքի և զորեղ անհատականության, որոնք թանկագին արժեքներ են կյանքի կուլին համար:

Հնազանդության չորրորդ տեսակն է ակամա հնազանդությունը, երբ հրաման մը կատարողի շահին, հաճույքին, պետքին կամ ցանկության հակառակ կուգա կամ կվիրավորե անոր զգացումները, սկզբունքները և չուզեր կատարել, բայց ստիպված կըլլա կատարելու վախե դրդված. կվախնա դիմացինի ուժեն, իրավունքեն, սպառնալիքներեն, գալիք հետևանքեն, զրկանքեն, հոգեկան ու մարմնական խոշտանգումեն: Հնազանդության ամենեն ստորին և անախորժ տեսակը և՛ հնազանդողին համար, և՛ այդ հնազանդությունը պահանջողին համար:

Ղևկավար կրթութեյան համար պիտանի եղողն ու յանկալին հնազանդութեյան առաջին երևք աստիճաններն են. ինչ կվերաբերի ակամա ու վախե ղրղված հնազանդութեյան, միշտ ալ չատ ծանր բան մըն է, և՛ վտանգավոր, և՛ վնասակար: Ինչքան ծնողն ու դաստիարակը բարձր են հոգեպես, այնքան դյուրին է փոքրիկներուն ալ, մեծերն ալ հնազանդեցնելը սովորութեյամբ, սիրով, հեղինակութեյամբ ու համոզելով, անոնց պարտականութեյան և արժանապատվութեյան զգացումներուն դիմելով, անոնց ընկերական զգացումները արթնցնելով:

ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ

Հնազանդութեյունը դյուրացնելու և հնար եղածին չափ դիմադրութեյունը պակսեցնելու և խնդիրը ակամա հնազանդութեյան չհասցնելու համար ղեկավարութեյունը պետք է գիտնա նախ՝ պահանջելու արվեստը, և երկրորդ՝ ավելի ևս հակելու արվեստը:

Պահանջելու արվեստին առաջին հիմնական պայմանը երբեք ավելորդ բան չպահանջելն է, հնար եղածին չափ պահանջներուն թիվը փոքրացնելն է և պահանջել միայն իսկապես անհրաժեշտ եղածը: Վարք ու վերաբերումի այն ամեն մանրամասնութեյունները, որ կարելի է կատարել նաև այլ կերպ, առանց լուրջ անպատեհութեյան, պետք չէ պահանջ դառնան, պետք է ձգտին վարժութեյան ու մեքենականացման և այդ ճամբով մեր ուշած ձևին հասնին, դիցուք քիչ մը ավելի ուշ ու դանդաղ: Որչափ քիչ բան պահանջվի, իբրև հիմնական քաղաքավարական ու դաստիարակչական անհրաժեշտութեյուն, այնքան հավանականութեյուն կա պահանջվածները իրագործած տեսնելու: Երկրորդական ու երրորդական պահանջներուն վրա ուղենք-չուղենք երկրորդական կնայինք և անոնց չկատարելուն ալ բնականաբար այն կարևորութեյունը չենք տար և նույն խստութեյամբ չենք հետևիր, իսկ մանուկը մեր այս դվխավոր ու երկրորդական տարբերութեյունները չի հասկնար, կտեսնե միայն, որ պահանջները կարելի է նաև չկատարել կամ այնպես կիսովին կատարել և ո՛չ միշտ, ամեն ատեն, և ասիկա արդեն չատ ձախորդ եզրակացութեյուն մըն է դաստիարակութեյան հաջողութեյան տեսակետեն:

Պահանջելու արվեստին երկրորդ պայմանն է տեղավորել տղոց հոգիներուն մեջ բոլորովին ուրիշ համոզում մը, թե ծնողներու և ուսուցիչներու դրած պահանջեն անկարելի է չեղիլ, թե անոնք պիտի հետևին, պիտի հսկեն, պիտի հարցնեն և փոքրիկներուն օձիքը ազատ ձգելու չեն, մինչև որ իրենց ըսած ձևով կատարվի պահանջվածը, ուրիշ խոսքով՝ պահանջելու մեկ անհրաժեշտ մաս է կազմելու հետևիլը, հետապնդելը ու կատարել տալը:

Անշուշտ հետևիլը ու սիրով, բայց հարատևությամբ հետապնդելը շատ եռանդ և ժամանակ սպառող բան է, մինչև որ տղան ղխուն մեջ ամուր համոզում դառնա, թե խուսափիլ անկարելի է, և շատ-շատերը կա՛մ համբերությունը չունին, կա՛մ վճռականությունը, կա՛մ տրամադրելի ժամանակը տղու ու դաստիարակի միջև եղած հարաբերությունը այս աստիճանին հասցնելու համար, և այդ պատճառով ալ շարունակ վեճ, աղմուկ, բարկություն, պատիժ ու ծեծ անպակաս է անոնց փոխադարձ հարաբերություններուն մեջ, այսինքն ուժն ու ժամանակը նորեն կվատնվի՝ միայն զուգորդված շատ ավելի խոր դառնության և իրարմե շատ ավելի մեծ դժգոհության և շատ ավելի թշվառ մանկավարժական արժեքով:

Պահանջելու արվեստին երրորդ հիմնական պայմանը միշտ ու ամեն կողմեն և նույն ձևով միևնույն բանը պահանջելն է, որ արդեն տեսանք: Երբ հայրը այսինչ վարմունքը կպահանջե, և մայրը՝ ուրիշ, երբ ուսուցչին մեկը այս կանոնին կհետևի, մյուս ուսուցիչները շատ կարևորություն չեն տար այդ կանոնին, տղու ղխուն մեջ կկորսվի իր ընելիքի հստակ գիտակցությունը, և պահանջվածն ալ կկորսնցնե իր բարոյական արժեքեն շատ բան: Շատ ավելի գեշ է պարագան, երբ դաստիարակը ինքը երբեմն այս ձև կպահանջե, երբեմն այլ ձև, երբեմն խիստ, երբեմն թուլլ, նայելով իր տրամադրության ու շրջապատին, անշուշտ հիմնովին աղարտելով տղու հոգիին մեջ կազմվող բարոյական սկզբունքները, այսինքն դաստիարակությունը բոլորովին դուրս կելլե իր ճամբեն, և դաստիարակը դաստիարակ ըլլալե կդադրի. իր խոսքին և սկզբունքին արժեքը ինքը պահել չկրցողը դաստիարակելու իրավունք չունի, նախ ինքը պետք ունի դաստիարակության:

Անուշտ դաստիարակութեան խորին ցանկութիւնն է, որ տղաքը կատարեն իրենցմէ պահանջված բոլոր բաները ամեն տեղ ու ամեն ժամանակ, նոյնիսկ երբ վրանին հսկող մը չկա, մանաւանդ երբ դիտեն, որ իրենց վրա հսկող աչք մը չկա, դաստիարակութիւնը աւտոր կձգտի, կցանկա՝ իր ներշնչել և յուրացնել տալ ուզածդ բոլոր օրէնքներն ու կանոնները միս ու արիւն դառնան տղոց մէջ, տղան այդպես վարվի նաև հեռու իր դաստիարակեն ու անկախ իր դաստիարակեն:

Այս աստիճանին կարելի է հասնիլ սակայն կամայ-կամաց, տարիներու դաստիարակչական համառ ջանքերով. սովորութիւնները պետք է խիստ ամրացած ըլլան, դաստիարակի հանդեպ ունեցած սերն ու հարգանքը չատ ուժեղ պիտի ըլլա, և կամ անոր հեղինակութիւնը՝ չատ մեծ, որ փոքրիկը նաև իր դաստիարակի բացակայութեան վարժվի միշտ այնպես, ինչպես իրմեն կպահանջվի: Այս զսպիչ ուժերը անշուշտ կգործեն միշտ հասունցող տարիքի բոլոր աստիճաններուն վրա, բայց դեռ հասած չեն այն ուժին և այն երկաթեայ անհրաժեշտութեան, որ վստահանանք միայն անոնց դրած սանձին: Փոքրիկները պետք ունին նեցուկի մը, ուրիշ հենարանի մըն ալ. զեկավար մեծերը պետք է միշտ օգնեն, պետք է դյուրացնեն անոնց վարմունքը. մեծերու տված այդ օժանդակութիւնն է, որ կանվանենք հսկողութիւն:

Հսկելը դաստիարակի առաջին պարտաւորութիւններեն մեկն է. հսկողութեան չափերն ու ձևերը կփոփոխվին, բայց կան միշտ հասունցող տարիքի բոլոր աստիճաններուն վրա: Եվ չնորհիվ այդ հսկողութեան միայն դաստիարակը հետապնդել կրնա իր պահանջներուն իրագործումը իր ուզած ձևով և չնորհիվ այդ հսկողութեան միայն կրնա կատարել իր դերը խաղաղ ու արդյունաւոր կերպով, առանց վայրենութիւններու և անբնական պատիժներու օգնութեան դիմելու:

Հսկողութեան մէջ ամենեն ավելի արժեք ունեցող բանը սխալներու և սայթաքումներու առջևը առնելն է. չթողնե, որ սխալը գործվի, չթողնե, որ տղան մեղանչե, չթողնե, որ անկարգութիւնը կատարվի. ամեն սայթաքում, ամեն կատարված անկարգութիւն,

ամեն բարոյական մեղանչում կորուստ մըն է ձեռք բերված վարժութեան և դիւրացում մը հաջորդ նմանօրինակ քայլերու. ճաք մըն է, որ կատանա բարոյական անոթը: Դիմել ամեն միջոցի, որ առիթ ու հարմարութիւն չստեղծվի անկարգութեան, սուտի, կեղծիքի: Պետք է ճանչնալ իր փոքրիկներուն հոգեկան կազմն ու թերիները և ատոր համեմատ առաջվընն խորհիլ, հոգալ և դիւրութիւններ տալ: Եվ այս ամենուն հակառակ, երբ անկարգ, անվայել և անբարո վարմունք մը ծայր տալու ըլլա, անմիջապես միջամտել, կանխել և արգելք հանդիսանալ սխալանքի ու անկարգութեան իրագործմանը. ասիկա է հսկողութեան դերը և ո՛չ թե սխալի կատարումեն ետքը պոռալ-կանչել, հանդիմանել, բարկանալ ու պատժել: Հանդիմանութիւնն ու պատիժը գրեթե միշտ նշան են թերի ու դէշ հսկողութեան:

Հսկողութիւնը սկզբի մանկական տարիներուն մշտական է ու անմիջական, այսինքն ծնողն ու դաստիարակը գրեթե բնաւ չեն հեռանար փոքրիկներուն քովեն, միասին կխաղան, միասին կաշխատին ու միասին կապրին: Եվ շատ ավելի ալ չեչուած է մեծերու մասնակցութեան չափը փոքրիկներու բարոյական ճիգերուն իրենց տված օրինակով, խոսքով, քաջալերանքով կամ դգալ տալով իրենց դժգոհութիւնը:

Հաջորդ՝ տղայական ու պատանեցման տարիներուն հսկողութիւնը նորեն մոտիկեն է ու տևական, բայց ո՛չ մշտական. ամբողջ օրը և ամեն տեղ ալ կա այդ հսկողութիւնը, բայց ո՛չ անընդհատ, անձնապես ներկա, տեսակ մը կուգա-կերթա, բայց տղոց տեսակետեն անիկա միշտ կա: Այսպես ալ դպրոցական այս ուղթը տարիներուն քիչ-քիչ կպակսի մեծերուն անմիջական մասնակցութիւնը փոքրիկներու ամբողջական կյանքին ու վարմունքին վրայեն. հիմա տղաքը հետզհետե շատ ավելի ազատ կձգվին կենակցելու, խաղալու և աշխատելու առեն իրենք իրենց, բավական է, որ կարգ ու կանոնին ու բարոյական պահանջներուն դեմ երթալու փորձ մը չկա: Երբ ընդհանուր պահանջներեն չեղումի մը առիթը կստեղծվի կամ կասկած կա, որ առիթը կրնա ստեղծվիլ, դաստիարակը կմոտենա, որ իր ներկայութիւնեմբ, երբեմն կատակով, երբեմն թեթևակի նկատողութիւնեմբ առաջքն առնե անկարգութեան և մղե տղաքը դեպի

չիտակ համբան. միշտ մտերիմ, հարազատ և օգնող ներկայություն մը:

Անձ արվեստ է հակել պիտնալը այն ձևով, որ ամենքը զգացումը ունենան, որ դուն միշտ հոն ես, որ ամեն ինչ կտեսնես, բայց միևնույն ժամանակ ոչինչով չխանգարես անոնց փոխադարձ կապերն ու հարաբերությունները, անոնց անկաշկանդ խաղերը, անոնց ազատ աշխատանքն ու իրար օգնելը: Երբ դաստիարակ և դաստիարակվող այս աստիճանի ընտելացած են իրար, բնական կերպով կառաջանա անոնց մեջ ընտանեկան մտերմություն մը, և ալ անկե եառը թե՛ ուսման և թե՛ վարմունքի որևէ դժվարության պարագային փոքրիկները իրենք կդիմեն դաստիարակի օգնության ու խորհրդին:

Փոքրիկները պետք չէ նային դաստիարակին ու անոր հսկողության վրա իբրև բռնակալ ոստիկանության մը վրա և պետք չէ վախ ունենան դաստիարակեն ու անոր հսկողութենեն՝ իբրև ամեն կենդանություն կաշկանդող և ամեն չարժում արգիլելու սահմանված սարսափելի աչքի մը, այլ պետք է սիրեն հարազատի մը պես, ջերմ համակրանքով պետք է փնտրեն և վստահությամբ ու հավատքով պետք է դիմեն միշտ անոր օգնության. ո՛չ թե ձեռքերը անշարժանան, և հոգիները պնդին, երբ հսկիչի սովերը նշմարեն: Հաստնցող սարիքի վերջին քառամյակը հսկողությունը կդառնա մեջընդմեջ այլ մը, հնար եղածին չափ հեռվեն գործող, առանց հաճախ տղոց խոսքին ու վարմունքին խառնվելու: Վերին աչք մը, որ կհսկե գործերու ընդհանուր ընթացքի կանոնավորության և վայելչության ու բարոյականության պահանջներու բարվոք գործադրության, կարելիին չափ ուշ-ուշ, երբ անհրաժեշտությունը կհարկադրե, կուգա քանի մը խոսքով, խորհրդակցությամբ, խրատով իր դժգոհությունը հայտնելու և ավելի լավ ըլլալու ուղիները մատնանիշ ընելու: Տղաքը պետք է գիտնան, որ իրենց վարմունքին վրա հսկողը իրենք են այլևս իսկապես, իրենք են պատասխանատու իրենց պարտաճանաչության և բարոյական բարձրության առջև, հսկիչը դիտող բարեկամ մըն է սխալանքը մատնանիշ ընող և հարկադրելով, որ մտածեն իրենց ըրածին վրա, ազնիվ ու բարձր հոգի մը, որ միշտ ավելի ու ավելի բարձրերը կդրդե ու դեպի մարդկային ու վերմարդկային ազնվություններն կկանչե:

Այսինքն ամենեն պզտիկներու մշտական ու մասնակից հսկողության համար տարիքի թարմություն ունեցող անձեր են պետք, առատ եռանդով, չմաշված ջիղերու լայն համբերությամբ և երեխաներու հոգին մտնելու բնական կարողությամբ. ասոր համար է, որ մանկական վարժարաններու մեջ թարմ աղջիկներ են ընդհանրապես այդ դերը կատարողը:

Տղայական ու պատանեցման տարիներուն հսկողութենեն կպահանջվի ավելի ամուր կամք, ավելի վճռական կեցվածք, անպայման հոգեկան բարություն և սեր ու նվիրում դեպի տղաքը: Կամքն ու սիրտն են էականը, որ նախակրթարանական ուսուցիչներեն կպահանջվի: Մտավոր կարողություններու ներկայությունը անտարակույս շատ բան կավելցնե անոր համայքին ու ներշնչած համակրանքին, որով և գործը շատ ավելի ալ կդյուրացնե:

Հասունության մոտեցող պատանեկան հոգիները ղեկավարելու համար ամենեն առաջ անհրաժեշտ եղող բանը հոգեկան բարձրությունն է, վարմունքի անկաշառ չիտակություն և փիլիսոփայական բարոյական թռիչք, այսինքն հոգեկան հարստություն: Հոս ալ անշուշտ սիրտը և բարությունը իրենց կարևոր դերն ունին միշտ, բայց գլխավորը հեղինակությունն է, դաստիարակի բարոյական արժեքները և մտավոր աչքի իյնող կարողություններն ու պատրաստությունը:

ԲՆԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐ

Պահանջել գիտնալը և հսկելը մեծ առավելություններ են փոքրիկները հնազանդության մեջ պահելու համար, բայց ինչքան ալ լավ տարված ըլլան, անկարող են կարգապահության, քաղաքավարության և բարոյականության դեմ մեղանչումները իսպառ չեզոքացնել: Նախ՝ որչափ ալ խիստ ու ամենուրեք կատարվի, նորեն անկարելի է ամենքը և ամենուր և ամեն ինչ աչքի տակ պահելը: Երկրորդ՝ աչքի տակ եղած ժամանակն է շատ հաճախ, որ կգործվին մանր-մունր սայթաքումներ, երբեմն և ավելի լուրջ թերացումներ ու հանցանքներ: Այնպես որ դաստիարակության մեջ, մանավանդ երբ հարյուրավոր փոքրիկները միասին կչարժին, առօրյա երևույթ

մըն է, որ դաստիարակը կգտնվի կատարված սխալի մը, անհրաժեշտության մը, կոպիտ վարմունքի մը կամ բարոյական թերացման մը դեմ:

Դաստիարակը շատ անգամ կատարված սխալանքը չտեսնելու կուտա քանի մը տարբեր դիտավորություններով. մերթ կորոշն տղու այդ կողմը մասնավոր կերպով իր դիտավորության տակ պահել, առանց տղուն ոչինչ ըսելու. երբեմն կհուսա, որ տղան ինքզինքը կսրբագրե, եթե իրեն ժամանակ տանք. երբեմն ավելի հարմար կգտած ավելի ցայտուն պարագայի մը հետաձգել այդ մասին տղու հետ խոսիլը կամ ազդեցություն բանեցնելը:

Ամեն առիթով, ամեն տեղ և ամենուն առջև ամեն թերացումի համար նկատողություն ընելը, հանդիմանություններ թափելը, բարկանալն ու պոռալ-կանչելը խելացի վարմունք չէ դաստիարակի մը համար. ինչքան հաճախ հանդիմանես ու բարկանաս, այնքան կնվազի հանդիմանության ու բարկության թողնելիք տպավորությունը: Հնար եղածին չափ պետք է կրճատել դաստիարակի սուր միջամտությունը և միջամտության աստեն ալ պետք է գիտնալ միջամտության չափը և նուրբ աստիճանավորումները պահել:

Եվ այդ միջամտությունը պետք է կատարվի միմիայն մեկ նպատակով՝ վերադարձնել տղան կարգապահական կամ բարոյական պահանջին, որուն դեմ մեղանչած է: Միջամտությունը կկատարվի մտածել տալու, ըմբռնել տալու համար, որ սխալ է գործած, և որ սխալները իրենց եւևեն կբերեն իրենց բնական անախորժությունները, որ ամեն սխալ ընող ինքզինքը կպատժե: Դաստիարակության կողմեն տրված պահանջներուն կարևորություն չտալը կամ անոնց անճիշտ ու թերի գործադրումը անպատճառ իր հետևեն բերելու է իր բնական պատիժը. մեկ-երկու անգամ, դիցուք, տղան պատահական կերպով խուսափիլ կարողանա, չնկատվի կամ թեթևակի անցնի, բայց վերստին կրկնվելու պարագային վերջապես գալու է կատարված սխալի բնական հետևանքը:

Այս բնական պատիժները, այսինքն կատարված սխալի մը բնական հետևանքը եղող անախորժությունները ըստ էության երկու տեսակ են. կա՛մ հավելյալ նոր պահանջ մըն է, նոր զրկանք մը, որ կբղխի անմիջապես իր կատարած թերացումեն, իր թերացումը փոխարինելու դիտումով. կա՛մ վերաբերումի փոփոխություն

մըն է սխալը գործողին հանդեպ՝ նորեն իբրև անմիջական հետևանք իր կատարած անկարգութեան կամ վատութեան:

Ա. Փոխարինութեան բնական պատիժներն են.

1. Ամեն անգամ, որ տղան իր աշխատանքի և ուսման պարտավորութիւնները չէ կատարած, կպահանջվի իրմեն անպայման, որ այդ թերին լրացնե, և կրնա պահանջվիլ զանազան աստիճանի խստութեամբ: Ամենեն մեղմն է, երբ լրացնելու ժամանակը իրեն կձգվի. ավելի ընդգծված է, երբ ժամանակը կորոշվի, բայց լայն ու հանգիստ բռնած, ավելի ևս խիստ է, երբ կպահանջվի, որ խաղի ու ազատ պահերուն նստի մեր աչքին տակը և իր թերին լրացնե. չատ ավելի կխստանա, երբ օրվա աշխատանքներեն ետքը չենք ձգեր, որ Հեռանա, մինչև իր թերի պարտականութիւնը լրիվ կատարած չըլլա: Աշխատանքներն ու պարտավորութիւնները պետք է կատարվին. եթե տղան չի կատարեր ծուլութեամբ ու անփութութեամբ՝ իրեն համար կստեղծվին հավելյալ անախորժութիւններ՝ պարտադրանք և անժամանակ հոգնութիւն՝ իր թերացումին բնական հետևանքը:

2. Եթե անկարգութիւն մըն է տղուն ըրածը, երբ եղած կարգ ու կանոնին հակառակ կխոսի, կշարժի, ընկերներուն արգելք կդառնա, խաղը կխանգարե, աշխատանքի կանոնավոր ընթացքը կխառնարկե, այս կարգի կարգապահական չարութիւններուն առջևն առնելու համար առժամապես կզրկվի իր չարաչար գործածած իրավունքեն ու ազատութենեն: Այսպես, օրինակ, դասի ատեն անհանգիստ է, կզբաղեցնե ու կշեղե ընկերներուն ուշադրութիւնը կամ կխոսի՝ կհանենք իր սովորական տեղեն և կնստեցնենք հեռուն ու մեկուսի, որ անշուշտ անախորժ վիրավորանք մըն է, բայց կըղխի իր վարմունքեն բնական անհրաժեշտութեամբ: Խաղալու ատեն կհրմշտկե իր ընկերները, կնեղե և չենթարկվիր խաղի օրենքներուն, եթե չափն անցուց ու համը հանեց, կզրկվի առժամապես իր ընկերներուն հետ խաղին մասնակցելու իրավունքեն: Պտույտի մը կամ այցի մը եղած ատեն իրեն անվայել կպահե, քմայքներ կընե ու մեծերուն նեղութիւն կպատճառե՝ հաջորդ պտույտին ու այցին մեծերը կմերժեն այդ անկարգը միասին տանել: Փոքրիկն իր հարևան ընկերոջը տունը կերթա միասին խաղալու, պայմանով, որ ժամը ճիշդ վեցին տուն պիտի վերադառնա. ժամը յոթը կերթա,

դեռ տղան եկած չէ. իրեն կարդիլլի մյուս անգամ ընկերոջ մը տուն երթալը, մինչև որ սովորի ժամադրությունը ճշդությամբ հարգել:

3. Փոխարինության երրորդ ձևն է, երբ փոքրիկի անհոգությամբ, անզգուշությամբ ու կոպտությամբ պատճառած մեկ վնասը իրեն դարմանել կուտանք: Կորնյուցեր է ընկերոջը մատիտը՝ պետք է անպատճառ փոխարենը մատիտ մը բերե: Հրեց ընկերը, ու կուրնցավ դռան ապակին՝ իր հաշվին պետք է նորոգվի դռան ապակին: Մեյան է թափեր ընկերոջը դասագրքին վրա՝ պետք է իր գիրքը տա ընկերոջը և աղտոտված գիրքը առնե իրեն:

Եթե նյութապես փոխարինել կարելի չէ իր պատճառած վնասը, այնպես պետք է ընել, որ ըմբռնե իր վարմունքին դէշ ու տգեղ կողմը, ներքին անհանգստություն ու խղճահարություն զգա և կարիք զգա ցավ հայտնելու, քաղցր խոսք մը ըսելու, ներողություն խնդրելու, այսինքն իր վատ վերաբերումը որևէ կերպով փոխարինելու: Նույն է իրողությունը, եթե նյութական վնաս մը չէ իր պատճառածը, այլ կոպիտ խոսք մըն է, վայրենի վարմունք մը, պատշաճության հակառակ վիրավորանք մը, հարգանքի և ուշադրության պակաս մը, ըլլա ընկերոջ, ծնողքի, բարեկամի մը կամ օտարի հանդեպ: Բարոյական մեծ բարձրացում է, երբ մարդս իր սխալը կտեսնե, կցանկա չտկել, ըրկանքը կրողին սիրտը առնել կամ ներում խնդրել: Միայն թե պետք է աղեկ գիտնանք, որ ներում խնդրելու բոլոր արժեքը հոն է, որ ներսեն գա ու անկեղծ ըլլա, թե չէ՝ արվեստական կերպով պարտադրված և փորձանքեն ազատվելու համար շրթունքին ծայրովը ներում խնդրելը ավելի վնաս է, քան օգուտ. կեղծավորության կտանի, աներեսության, և իր հոգիին մեջ բոլորի քթին կխնդա՝ և՛ իր զոհի, և՛ իր դաստիարակի, և՛ բոլոր ներկաներու:

Բ. Անկարգության, անվայել ու հակաբարոյական վարմունքներու դեմ իբրև բնական պատիժ կներկայանա շրջապատողներու վերաբերումին մեջ մտած փոփոխությունը և մանավորապես ծնողին ու դաստիարակի վարմունքին մեջ զգացած փոփոխությունը:

Հոս ամենեն սովորականը և ամենեն բնականը մեծերու դէշ կամ աղեկ գնահատանքն է փոքրիկներու շարժմունքին ու վար-

մունքին հանդեպ: Լավ կատարված գործ մը, վայելուչ շարժուձև մը և մանավանդ բարոյական արժեք կրող խոսք ու կեցվածք մը անխուսափելի կերպով կառաջացնեն «ապրիս» մը մեծերու շրթունքեն և ջերմ համակրանք մը նայվածքներուն մեջ, երբեմն նաև շոյանք մը: Այս բոլորը ինքնին կատարվող անդրադարձություններ են, շատ բնական և շատ ալ պիտանի. փոքրիկները պետք է լավ գիտնան, թե ինչը կսիրվի իրենց ղեկավարներուն կողմն և ինչը կգնահատվի. ինքնաբեր, բնական ու կրթիչ վարձատրություն մըն է ասիկա: Այդպես ալ կրթիչ ու բնական ու ինքնաբեր պատիժ մըն է, երբ տղուն գեչ մեկ խոսքին, կոպիտ մեկ վարմունքին և աննեղելի մեկ վերաբերումին դեմ պարսավի բացականչություն մը կթռչի մեր շրթունքեն՝ «Ամոթ քեզի», «Հավնեցա՞ր ըրածդ», «Հիմա ինչի՞ ես նման», և դժկամության ու հիասթափումի արտահայտություն կառնե մեր դեմքը: Այնպես որ վերաբերումի փոփոխությամբ կատարվող բնական պատիժը ու բնական վարձատրության առաջին ամենեն պարզ ձևը փոքրերու վարմունքին դեմ մեծերու բարոյական գնահատության այս արտահայտությունն է:

Ասոր ավելի ուժեղ ձևն է, երբ տղու ավելի լուրջ բարոյական մեկ թերության հետևանքով կփոխվի անոր հանդեպ մեծերուս վերաբերումը՝ իբրև բնական հետևանք իր թերության: Տղան սուտ կխոսի՝ զգալ կուտանք, որ իր ըսածին այլևս վստահություն չունինք, կասկածով կվերաբերինք, պետք է տեսնե, որ հավատքնիս խախտած է: Կամ կոչտ է, լեզուն զսպել չի գիտեր՝ պետք է տեսնե, որ կխուսափինք հետը մոտ ու մտերիմ ըլլալե և տեսակ մը պաշտպանողականի վրա ենք կարծես իր կոպտութենեն խույս տալու համար: Ուրիշի սեփականությունը հարգել ու ինայել չգիտե՝ իրեն բան մը տալու կամ հանձնելուատեն նախազգուշություններ կառնենք, մեր տալեն առաջ փոքրիկ առաջաբանի մը պետք կըլլա, երբեմն և կմերժվի՝ փճացումե վախնալուս համար: Այս բոլորը անտարակույս շատ վիրավորիչ ու սուր զենքեր են, բայց բնական ու անհրաժեշտ, որովհետև թերություններն ալ շատ ցած տեսակի են. տղան պետք է տեսնե իր վարմունքին բերած արձագանգը. դառն է, բայց առողջ:

Ավելի ևս ուժեղ ձևն է, երբ վարմունքի փոփոխության կընկերանա նաև խոսքով մեր դժգոհության արտահայտությունը. ան ալ կանվանենք խրատ, եթե ավելի համոզելու ու բացատրելու ձևով

կկատարվի, կանվանենք Հանդիմանություն, եթե խրատին կմիանա նաև Հանցանքը երևսով տալու առավել կամ նվազ ուժեղ քննադատություն մը. եթե քննադատությունը զերակշռե խրատին՝ կդառնա պարսավանք. եթե Հանդիմանությունն ու խրատը կկատարվին ապագա սպառնալիքով մը որոշ կամ անորոշ տեսակի՝ Հանդիմանությունը կանվանենք զգուշացում:

Հանդիմանության այս զանազան տեսակները բոլորն ալ ունին իրենց աստիճանավորությունները: Նախ՝ մեր արտահայտության եղանակով. կա մտերիմ Հանդիմանություն, կան ընկերական, բարեկամական Համակրանքով օծուն Հանդիմանություններ. կա մեղմ պաշտոնական, տեսակ մը ցավելով, որ ստիպված է Հանդիմանելու, կա պարզ կամ զուսպ չոր Հանդիմանություններ, կա խիստ և ազդարարող Հանդիմանություն, և կա վերջապես սպառնալից Հանդիմանություն:

Ինչքան մեղմ է ու մտերիմ, այնքան բացատրության ու խոսակցության դուռն ունի Հանդիմանությունը. ինչքան կխստանա, այնքան մեղադրանքի, օրենքի ու պարտականության վրա կկեդրոնանա և շատ երկար չի խոսիր. մեկ-երկու Հարց ու ազդարարություն: Ավելի երկար կտևեն Հանդիմանությունները, երբ տղու բնավորությունը կվերլուծես՝ անոր թուլլ ու տկար կողմերուն վրա բերելու Համար Հանցավորին ուշադրությունը:

Եվ այս կարգի Հանդիմանությունները կարելի է ընել միայն առանձին, աչք-աչքի, առանց երրորդ անձերու ներկայության: Եվ ընդՀանրապես ամեն տեսակի Հանդիմանությունները լավ է, որ կատարվին առանձնության մեջ, ուր միշտ կխնայվի տղոց արժանապատվության զգացումը, ուր բոլորովին ավելորդ կդառնան ամեն դնով ինքզինքը պաշտպանելու, անփույթ, Հեգնական կամ ուղղակի անզգամ ձևանալու կերպերը, որ Հաճախ կպատահի, երբ նկատողությունն ու Հանդիմանությունը ուրիշներու, մանավանդ տղու ընկերներուն առջևը կկատարվի. իր ընկերներուն առջևը Հերոսանալու, աքլորանալու և դիմադարձելու ջանքը սովորական երևույթ է: Եթե Հարկ ըլլա ուրիշներուն առջևը Հանդիմանել՝ մեծ սխալ է խոսակցության ու բացատրություններու մեջ մտնելը. պետք է կարճ ու կտրուկ ըլլալ, կարելի է լուրջ, կարելի է կես-կատակ, բայց միշտ խիստ զուսպ: Հուզված ըլլալը ծածկելու կարիք չկա,

բայց բարկութիւնը պետք է զսպվի անպատճառ: Բարկացած մարդը խելոք չի մտածեր, պետք եղածեն ավելի բաներ կըսե և անարժեք ու վատարժեք խոսքեր կըսե, որոնք միշտ ըսողին կզարնեն և հանցավորի մեղքը կթեթևացնեն թե՛ հանցավորի, թե՛ անոր ընկերներուն աչքին. ներկաներուն համակրանքը աննկատելի կսահի հանցավորի կողմը, որ ըսել է՝ դաստիարակը իր նպատակին մեջ խայտառակ կերպով կվրիպի: Վրդովված ըլլալը առավելութիւն մըն է և հանդիմանութեան ուժը կավելցնե, բարկացած ըլլալը պակասութիւն մըն է և հանդիմանութեան ուժը կտկարացնե:

Վերաբերումի փոփոխութեան բնական պատիժներեն ամենեն խիստը տղան մասնավոր հսկողութեան ենթարկելն է՝ երբեմն իրեն հայտնելով, երբեմն առանց ոչինչ ըսելու, բայց զգալ տալով: Շատ անախորժ ու նեղիչ բան մըն է, երբ կզգաս, որ դաստիարակը չարունակ իր ուշադրութիւնը քու վրադ է պահած ու կհետևի քեզի և՛ դուրսը՝ խաղի ատեն, և՛ ներսը՝ դասի միջոցին, և՛ դուրսը՝ կյանքի մեջ, ուր որ իրար հանդիպիք, և շուտ-շուտ հարցեր կուտա ու մեջ-մեջ բացառիկ տեղեկութիւններ կպահանջե, որոնք միշտ կապ ունին տղու թերացումին հետ: Այս խստութիւնն ու հսկողութիւնը շատ ավելի կծանրանա, երբ բոլոր ուսուցիչներուն կողմե միակերպ կկատարվի փոխադարձ համաձայնութեամբ: Միայն թե այս աստիճանի խստութիւնը անշուշտ որ շատ բացառիկ տղոց համար է և բացառիկ պայմաններու համար:

Ե. ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐԸ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԱԿ

ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԻԺ

Ծնողներուն և ուսուցիչներուն համար լիովին հերիք են նախորդ գլխուն մեջ հիշված միջոցները, որ փոքրիկները հնազանդութեան մեջ պահվին և ենթարկվին ղեկավարութեան պահանջներուն, պայմանով, որ կարողանան օգավիլ ինչպես հարկն է պահանջելու, հսկելու և բնական պատիժներու ընձեռած զենքերեն:

Բայց ընդհանրապես այդ զենքերը շատ տեղ ու շատ անգամ հերիք չեն գար տղան հնազանդութեան մեջ պահելու, դաստիարա-

կուլթյան պահանջներուն համեմատ վարվիլ տալու և կարգ ու կանոնի դեմ չմեղանչելու համար: Եվ հերիք չեն զար գլխավորապես երկու պատճառով:

Առաջին և հիմնական պատճառը անշուշտ ուղղակի ինքը՝ դաստիարակն է: Ծնողներն ու ուսուցիչները երբ անտեղյակ են կրթուլթյան բարդ արվեստին, անպատրաստ են ու չգիտեն հոգեբանական ուժերեն և մարդկային ներքին ազդակներեն օգտվիլ, կդիմեն բնական կերպով ամեն տեսակ կոպիտ միջոցներու՝ փոքրիկները սանձել կարողանալու համար: Այսինքն մեղավորը ղեկավարն է. կա՛մ ցած է իր ուսման աստիճանը, մտքին պաշարը՝ աղքատիկ, և մանկավարժական հորիզոնը՝ նեղ, կա՛մ իր բնավորուլթյամբ ու հակումներով կրթական գործին նվիրվելիք մարդ չէ, նեղսիրտ է, ցրված, փուխրոխական, բարկացկոտ, չունի կրթական պաշտոնյայե մը պահանջված հատկուլթյունները, դիցուք և ըլլա ուսում առած և ուզենա ըլլալ պարտաճանաչ:

Երկրորդ պատճառը ավելի ընդարձակ է. ուսուցիչը ինքը արժեքավոր է թե ոչ, կղառնա երկրորդական, երբ ան կգործե այն տեսակ հաստատուլթյան մը մեջ, ուր մանկավարժական ըմբռնումները շատ համեստ են կամ գործնականին մեջ դեչ կկիրարկվին: Ուր, օրինակ, կույր ու հլու հնազանդուլթյունը իտեալ է, ուր դիսիվորական կարգապահուլթյուն կպարտադրվի, ուր կգործե ծնծն ու բանտը, ուր ամբողջ հարաբերուլթյունը խիստ է, չոր ու պաշտոնական կամ ուր կտիրե մեկուն-մեկալին քմայքն ու բարի հայեցողուլթյունը, ուր կեղծավորուլթյուն, լրտեսուլթյուն ու քսուլթյուն կմշակվի կամ հինեն եկած կրթական ձևեր, նախապաշարումներ և տգիտուլթյուն: Այս պարագային մեղքը կիյնա ուսուցչի անձեն ավելի հաստատուլթյան ընդհանուր ուղղուլթյան վրա, թեև անշուշտ նորեն բնավ անկարևոր չէ ուսուցչի անձնական գծերուն ունեցած ազդեցուլթյունը:

Կպատահի նաև, որ առողջ, սիրով ու հեղինակուլթյամբ տարվող կրթական հաստատուլթյուններու մեջ ալ երբեմն երևան արվեստական պատիժները: Ասիկա նախ կպատահի ընդհանրապես ծածուկ, որ շատ աչքի չիյնա, տեսակ մը գողունի. ուսուցիչներեն մեկն ու մյուսը, դուրսեն բերած իր սովորուլթյունը և իր նեղսրտուլթյունը զսպել չկարողանալով, կդիմե արվեստական պատիժներու

և հատկապես ծեծի: Երբեմն ալ դպրոցական վարչության կողմեն բացառիկ անձերու դեմ ու բացառիկ կերպով կգործադրվի, իբրև հակաթույն: Տղան կուգա ձեր հաստատությունը մանկավարժական նուրբ ազդեցություններե շատ չհասկցող ձեռքերու տակ արդեն կոչտացած հոգիով, արդեն վարժված կոպիտ պատիժներու սուր ու ցցուն ազդեցության և արհամարհանքով կնայի ձեր հոգեբանական նրբություններուն վրա. նոր միջավայրին մեջ պետք է բավական երկար ապրի, որ կամաց-կամաց ընտելանա նոր մթնոլորտին, և հոգեկան չփումը կարողանա ներգործել. ահա այդ փոխանցման երբեմն շատ երկար շրջանին տղան դպրոցեն հեռացնել չհարկադրվելու համար պետք կըլլա խոսիլ իրեն հետ անգամ մը իր հասկցած լեզվով, օրինակ՝ տնտեսի ձեռքով և անպատճառ առանձին աղվոր մը ծեծել տալ՝ հաստատության հանդեպ նորադավանին «հարգանք ներշնչելու» համար:

Արվեստական կանվանենք այն բոլոր պատիժները, որոնք ինքնին չեն բղխիր կատարված զանցառութենեն կամ հանցանքեն, սխալանքի բնական ու անմիջական հետևանքը չեն, այլ հանցանքին կամ անկարգության արվեստական կերպով կցված անախորժություն մը, որ տղան վախնա մյուս անգամ նույն արարմունքը կրկնելե:

Սո՞ւտ կխոսի՝ բերանը պղպեղ կլեցնեմ: Դասը չի՞ սորվիր՝ ճաշին միայն ցամաք հաց կուտամ: Հրամանս չի՞ կատարեր՝ ապտակ մը կիջեցնեմ կամ կքաշեմ ականջը:

Եվ այսպես ալ արվեստական վարձատրություննները: «Եթե խելոք նստիս, քեզի շաքար կուտամ». «եթե այսօր բարի ըլլաս, հինգշաբթի օրը քեզի սինեմա կտանիմ». «Եթե դասդ լավ գիտնաս, շաբթվան վերջը անունդ կգրեմ դպրոցի մեծ տախտակի վրա կամ քեզի գովասանքի «նիչ» կուտամ, որ ամենուն ցուցնես ու հպարտանաս»: Եվ այսպես անվերջ:

Վարձատրություններով, խոստումներով և վախ ու ծեծով փոքրիկները մեր կամքին ենթարկելու ճիգը վնասակար ու գեչ բան մըն է շատ մը կողմերով: Պատիժներն ու սպառնալիքները, մանավանդ եթե հաճախ կրկնվին ու զուգորդված ըլլան հայհոյանքի ու բարկության, կա՛մ վախկոտ կդարձնեն պզտիկը, կա՛մ ստահակ: Քիչ և ավելի զգուշ գործադրված պարագային ալ չեն սորվեցներ, որ հնազանդիլը

ընկերային պարտավորութիւն մըն է, և այսինչ կամ այնինչ բանը չընելը՝ բարոյական անհրաժեշտութիւն. այլ ընդհակառակը, կվարժեցնեն, որ փոքրիկն այդ հարցերուն մոտենա իր շահի տեսակետեն՝ վարձի մը ակնկալութեամբ կամ վախնալով հորը բռունցքեն: Ուրիշ խօսքով՝ արիւնատական պատիժներն ու վարձատրութիւնները չեն ծառայեր անհատներու բարոյական բարձրացման, անոնց կամքի ընկերային կրթութեան, ինչպես ճշմարտաբար շարունակ կկրկնվի: Պատիժները ստիպողաբար մեծամասնութեամբ բարկութեան ծնունդ են և ավելի ազնիվ միջոցներով ազդելու անկարողութեան, և շատ անգամ այդ պատիժը տվողն է արժանի պատժի, քան պատիժը կրողը:

Կամքի կրթութեան ու բարոյականութեան դրական ազդակ մը չըլլալեն զատ, ընդհակառակը, բացասական ազդակ մըն են: Ինչքան շատ պատժես, մանաւանդ ինչքան անիրաւ պատժես, անտեղի պատժես, չափազանց պատժես ու վայրենի պատժես, ինչ որ շատ սովորական է բարկութեան պահուն և պատժելու սովոր մարդոց դիւրագրգիռ բնաւորութեան հետևանքով, այնքան ավելի պատժվողները աներես կդառնան, այնքան վրեժխնդիր ու չար, այնքան դիտմամբ հակառակը կընեն մեծերը բարկացնելու, ծիծաղելի դարձնելու ու խայտառակելու համար, ուրկե կառաջանան թե՛ ընտանիքի և թե՛ դպրոցներուն մեջ տղոց աներևակայելի վատ ու զզվելի անկարգութիւնները, երբեմն ուղղակի սրիկայութիւնները: Մեծերը կսպլչին հաճախ իրենց զավակներուն ու սաներուն այդ աստիճանի անսիրտ ու քինոտ վարմունքեն՝ մոռնալով, որ իրենք են այդ բոլորը տնկեր անոնց հոգիներուն մեջ իրենց պատիժներով, ծեծերով, ծաղրով, հեգնութիւններով և մանկավարժական այլ մեղանչումներով:

Ամեն պարագայի բնական երևույթ մըն է հետևյալը. ինչքան որ ընտանիքն ու դպրոցը ծեծի ու պատիժներու վրա կհենվի, այնքան կրթող ու կրթվող իրարու հանդեպ թշնամական դիրք կունենան, առնվազն ոստիկանի ու ավազակի փոխադարձ հարաբերութիւն կստեղծվի, հալածող ու հալածվող կողմեր ու զգացումներ, որ հետզհետե խորանալով՝ կհասնի բացահայտ ատելության ու վրեժխնդրութեան:

Իսկ վարձատրութիւններով հնազանդութեան բերելու հավելվածական դեչութիւնը հոն է, որ բացի բացասական բարոյականու-

թյուն մը մշակելէ, կզօրացնէ միևնոյն ժամանակ փոքրիկներուն սնափառութիւնը, կվարժեցնէ հիմնական ներքին արժէքը թողած՝ արտաքին ցուցամոլութիւններուն կարևորութիւն տալ և տղոց մէջ կսերմանէ փոխադարձ նախանձ ու գէշ զգացումներ՝ իրար վնասելու, իրար բամբասելու, իրար վար քաշելու, որ անոնց անկումներուն վրա կերտեն իրենց բարձրացումը: Եվ Հետևանքը կըլլա հոգեկան ծռութիւն, մանրացում, կեղծութիւն. կդառնան զուրկ ամեն մեծ թռիչքե, սնոտի խորքով ու սնամիտ. փոխանակ գործերու ներքին մեծութիւնը և վարմունքներուն ընկերական բարձրութիւնը փնտրելու և գնահատելու՝ կփնտրեն ու կգնահատեն արտաքին փայլը, շլարը, երևույթներու խեղճ ու ցուցադիր կողմերը:

ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Արվեստական պատիժներն ու վարձատրութիւնները կըլլան շատ զանազան տեսակի և տարբեր աստիճաններով վտանգավոր, համեմատաբար թեթև ու նվազ վնասակարներեն մինչև բոլորովին խոտելիները:

Պատիժները կարելի է խմբել չորս տեսակի՝ սպառնալիք, զրկանքներ, անպատվում և խոշտանգում:

Սպառնալիքները գալիք դառնութեան մը, ապագա անախորժութեան մը վախով փոքրիկը հնազանդութեան բերել կձգտի: Ասոր մեկ զզվելի տեսակն է բոլորովին թարմ մանուկները «պապուվի», «սատանայի», «խառախոնճոլոսի» ու նման ապուշութիւններով վախցնելը, ինչ որ քիչ-շատ ամեն ընտանիքի մեջ ալ կգործադրվի՝ առանց երկար-բարակ հետևանքներուն վրա մտածելու. այս ճամբով է, որ սնահավատութիւն ու վախկոտութիւն կամրացնենք փոքրիկ հոգիներու մէջ, որ այլևս ամբողջ կյանքին համար հոն իր կնիքը կդնե, նույնիսկ երբ տղան խելահաս մարդ կդառնա և այդ ամենուն վրա իբրև թե կխնդա, հոգիին մեջ միշտ հին ծալքը կմնա՝ հիմար հավատք մը ամեն տեսակի դևերու, ոգիներու և նման սնոտիութեան, այլև բնազդական վախ մը երևակայութեան ստեղծած այդ սին պատկերացումներեն:

Քիչ մը ավելի տարիքով մանուկներուն ու տղոց հետ ավելի սովորականը նյութական սպառնալիքներն են, ուտելիքե, հագնելիքե,

վարճուխնեն մը գրկելու սպառնալիքը, որոնք ընդհանրապես ավելի թեթեւ տեսակի վնաս են նյութական տեսակետեն. իրենց վնասը բարոյական կողմնն է. մանուկը չընար բան մը ո՛չ թե անոր համար, որ պետք չէ ընե, այլ որ ճաշին չղրկվի անուշեղենե մը կամ իրիկվան պտույտեն. ատիկա մոր ու դայակին համար կրնա անմիջական թեթեւացում մը բերել, բայց մանկան կրթութեյան տեսակետեն բարոյական նահանջ մըն է ու թերացում, թող որ շատ անգամ սպառնացողին համար ալ լուրջ թեթեւացում մը չէ, որովհետեւ սպառնալիք ըսվածը նոքին գալիք բան մըն է, և պզտիկները շատ դրական մարդուկներ են և նոքեն գալիք բաներուն մեծ կարեւորութեյուն չեն տար ընդհանրապես, ներկա վայրկյանն է ամենեն ավելի արժեք ունեցողը, մանավանդ որ այդ սպառնալիքները հարյուրին իննսունն վերջը չեն գործադրվիր. պզտիկը շուտով փորձառու կըլլա, որ ատոնք կա՛մ բոլորովին պարապ խոսքեր են միայն, կա՛մ շատ-շատ վերջը քծնանք մը, սուտ ներողութեյուն մը ու ժպտուն խոստում մը հնարիք են հարցը կարգադրելու համար:

Շատ ավելի ողորմելի են սովորաբար հուսահատութեյան ընկերացող, «աչքերը փորելու», «մազերը փետտելու», «չանսաւոակ ընելու», «կտոր-կտոր մանրելու» և նման անիրագործելի տխմար սպառնալիքները, որոնք միայն սպառնացողի տկարութեյունը և ինքզինքը զսպելու անկարողութեյունը կմատնեն և վախ ազդելե ավելի հեգնութեյուն ու չարութեյուն կառաջացնեն փոքրիկներուս հոգիին մեջ: Եվ եթե ազդեցութեյուն մըն ալ ընեն, ըսողի բարկացած շեշտերեն է, որ կվախնան, ո՛չ թե անոր ըսած անմիտ խոսքերեն. ամեն պարագայի ամենեն կարուկ միջոցներն են ատոնք սերն ու հարգանքը դուրս վռնդելու կրթական գործին մեջեն:

Պատիժներուս երկրորդ խումբը իրական գրկանքներն են, այսինքն փոքրիկը իրեն համար հաճելի բանե մը գրկելով՝ կուզեն վիշտ պատճառեն, որ մյուս անգամ զգուշանա և հնազանդ մնա: Ընդհանրապես նյութական մեծ վնաս մը չունին ատոնք, եթե մեջեմեջ և ուշ-ուշ պատահին, հաճախ կրկնվող պարագային կամ երբ կգործադրվի մեծ չափերով ու երկարատև, կրնան վնասել տղոց աճումին և առողջութեյան: Այսպես, օրինակ, ամբողջ օրով ուտելիքե գրկել կամ երկար ժամանակ պտուղ ու քաղցրեղեն չտալ, որ այդ տարիքի համար մասնավորապես անհրաժեշտ է, կամ տևականորեն

զրկել չարժուն խաղերե, կամ կոխել մութ անկյուն մը միս-մինակ ու անգործ. այդ մենութենեն և անգործութենեն կծնի ձանձրույթ, և ձանձրույթեն՝ ամեն տեսակ ծուռ վարմունք, ծուռ ծրագիրներ և գեշ բնավորություն: Ասոնք կկրթեն միայն տղոց համառությունը, ոխակալությունը և կսրեն անոնց մեջ օրենքե դուրս ըլլալու, օրենքի դեմ ըլլալու չատ վտանգավոր զգացումները ընկերական տեսակետեն:

Անպատվելու պատիժները մանուկը խելքի ու հնազանդության բերել կուզեն ամոթահար ընելով, անպատվելով և ուրիշներուն առջև խայտառակելով: Ասոր ամենեն սովորական ձևը հանդիմանությունն է՝ երբեմն ճառի ու խրատներու հյուսված, երբեմն բարկության ու կատաղության և միշտ ընկերներուն առջևը, որ լսեն, տեսնեն ու իրատվին: Ընկերները հոտկե ո՛չ մեկ խրատ չեն հաներ, ինչպես կյանքի փորձը ցույց կուտա. այդ բոլոր աղմուկին հետևանքը կըլլա փոքրիկի հպարտության ու ինքնասիրության տկարացումը և հոգեկան նվաստացում, այսինքն մեր տխմարությամբ տղան բարձրացնելու դիտավորություններով օրե օր ավելի վար կբաշենք ու կկոչտացնենք իր հոգին:

Այսպես՝ ընտանեկան շրջանակի մեջ ողորմելի տգիտություն մըն է կամ ներքին չարամտություն մը, երբ փոքրիկի կատարած մեկ սխալը կամ գեշ արարքը երկար-բարակ կպատմվի օտարներուն և հյուրերու առջև, իբրև թե հանցավորը կրթելու և խելքի բերելու համար: Այդպես ալ դպրոցներուն մեջ հատուկ հավաքված աշակերտության առջև հանցավորը «դատապարտության սյունին գամելը» և այլ ամեն տեսակի հրապարակային խայտառակությունները, երեսին թքելը, անունը սև տախտակին անցընելը, – ասոնք բոլորը կրթության հակառակ ու կրթությունը քանդող ոճիրներ են: Եվ հաճախ սուտ է, որ իբրև թե կրթելու դիտավորությամբ կկատարվին. ատոնք կկատարվին ընդհանրապես ղեկավարի խայթված ինքնասիրությանը հագուրդ տալու համար, բռնակալ դասուհարակի մը կարճամիտ սկզբունքները պանծացնելու համար և վերջը-վերջը այս կամ այն ձևով վրեժ հանելու համար:

Այսպես և նաև արվեստական պատիժներուն վերջին խումբը, որ ընդհանուր անունով մը կանվանենք ծեծ, հին փալախկայեն, «դավազանավ երկաթյավ» զարնելեն, բարակ ու ճկուն ճիպոտնե-

ըն սկսած մինչև բռունցքի հարվածները, ապտակները, մազերն ու ականջները ոլորելը, մինչև կամիճն ու աքացին և ասոնց ավելի նրբացած ձևերը ասեղով, սուր փայտով, պղպեղով:

Շնեը վայրենի բան մըն է, որ հավասարապես կանպատվե ու կնվաստացնե և՛ ծեծողը, և՛ ծեծվողը. անասուններուն անգամ զարնելը իր մեջ ստորնություն ունի: Եվ ատոր համար բոլոր արվեստական պատիժներեն ավելի կկոչտացնե փոքրիկներուն բնավորությունը և հոգին դաժան կդարձնե, կպատրաստե կամակոր, չարախնդաց ու նենգամիտ անհատներ: Ով հանգիստ ու մտածված կերպով կծեծե, միմիայն իր հանգիստը մտածող եսական մըն է. ով ինքզինքը դապել չի կրնար ու զրգռվելով կծեծե, ջղայնոտ դժբաղդ մըն է. ով ուրիշ կերպ ազդել, խոսք քալեցնել ու իր հեղինակությամբ ազդել չի կրնար ու ատոր համար կծեծե, իր ընտրած արհեստին համար անպիտան մեկն է: Եվ ամեն պարագայի ասոնք երեքն ալ այն մարդիկը չեն, որ հասունացող մարդկության զգացումները սլիտի աղնվացնեն:

ԸՆԹԱՑԻԿ ՎԱՐԺԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գալով արվեստական վարժատրություններուն՝ կրնանք խմբել երկու տեսակի՝ նյութական ու բարոյական վարժատրություններ:

Նյութական ամեն տեսակի վարժատրությունները և վարժատրության խոստումները կրթական գործի մեջ անմիջապես կվնասեն տվողի ու խոստացողի հեղինակության ու վարքին: Փոքրիկը հնազանդության բերելու համար որևէ բան մը տալը կամ խոստանալը ինքնին խոստովանություն մըն է, որ իր խոսքը կատարել տալ չի կրնար առանց այդ կաշառքին: Եվ չատ շուտով կաշառք խոստանալը կդառնա անհրաժեշտ պայման մը ամեն հրամանի ու ամեն պահանջի գործադրության: Եվ կամաց-կամաց հնազանդությունը կդառնա բացարձակ առևտուրի նյութ: Կա՛մ քաղցրեղեն, կա՛մ սիրված կերակուր մը, կա՛մ խաղալիք ու հագուստեղեն, կա՛մ միասին հյուր երթալու խոստում, կա՛մ ամենեն գեշը՝ դրամ՝ քանի մը դահեկան: «Եթե կուտաս՝ կընեմ, եթե ոչ՝ ա՛յ, կտեսնես, ա՛յ կտեսնես»: Եվ պոռալ, ոտքերը գետին զարնել, դիտմամբ պահանջ-

վածին հակառակը ընել, և հետևեն ալ՝ ծնողքին բարկությունը, հայհոյանք ու ծեծ: Շատ ընթացիկ է այս տեսարանը նյութական վարձատրություններ գործածող դժբաղդ ընտանիքներուն մեջ իբրև հիվանդության միջոց:

Այս բոլոր նյութական բարիքներն ու զվարճությունները մեծ մասով փոքրիկներուն իրավունքն է, և անոնք պետք է ստանան և զարմանալու ալ բան չկա, որ փոքրիկներու ու մեծերու միջև շատ անգամ տարակարծություն առաջ կուգա ատոնց վայելքին, չափին ու տեղին չուրջը. այս ամենը բնական երևույթ է ընտանիքի մեջ: Անբնականը և գեշը հոն է, որ ատոնք բնավ և ո՛չ մեկ կերպ պետք չէ կապվին հնազանդության հետ: Ավելի խելքի մոտիկ է, թեև նորեն ո՛չ շատ հանձնարարելի, երբ կատարված հաջող աշխատանքի մը կամ հավելյալ օգնության մը փոխարեն, կամ անսպասելի կերպով փոքրիկի կողմեն գլուխ բերված գործի մը իբրև գնահատության արտահայտություն տրվին այդ զանազան տեսակի նյութական վարձատրությունները: Բայց իբրև կարգապահության միջոց, իբրև հնազանդության պայման՝ երբեք պետք չէ տրվին, նորեն ծնողներու հոգնությունն ու տկարությունն է պատճառ ընդհանրապես, վայրկյան մը հանգստի պահանջն է, որ այդ միջոցին դիմելու կդրդե. տղոց կրթությունը չէ, որ աչքի առաջ կունենան, այլ այդ վայրկյանի հանգիստը: Հանգիստ մը սակայն, որ նույնիսկ իրենց համար շատ սուղ կգնվի, որովհետև քանի կերթա, իրենց զավակներու հետզհետե խորացող պահանջներուն ուղղակի գերին կդառնան ծնողները և շատ կտառապին:

Բարոյական արվեստական վարձատրություններեն ամենեն սովորականն ու հաճախադեպը գովքն է, որ ինքնին բնական արտահայտություն մըն է, ինքնաբուխ և ո՛չ արվեստական, երբ անմիջապես սրտե կուգա և առանց հետին նպատակներու: Գովքը կդառնա արվեստական այն չափով, որ ավելի կամ պակաս դիտավորությամբ կվերածվի ցուցադիր ու հրապարակային հանդիսավորության մը: Ծնողները եկող-գացող հյուրերուն կպատմեն փոքրիկ հերոսի ներկայության անոր այնինչ նշանավոր գործը, հաջողությունը, քաջությունը՝ իբրև թե ավելի սիրտ տալու համար: Դպրոցի մեջ ալ, երբ աշակերտության առջև կկատարվի նույնը իբրև օրինակ տալու համար կամ իբրև արդար վարձատրություն անոր թափած

ճիգերուն, կամ երբ կզրեն անունը ոսկեշրջանակ հատուկ տախտակի մը վրա:

Սկիզբը փոքրիկները սատիկ ամոթ կզգան այս տզնդ ու տգետ արարողութենեն, և կվիրավորվի իրենց ամոթխածութիւնը. կկարմրին, փախչիլ կուզեն: Բայց կամաց-կամաց «կզաստիարակ-վին», կսկսին համ առնել, նորեն կկարմրին, բայց արդեն հաճույքի կարմիրն է և ո՛չ թե ամոթի: Մեկ կողմեն կզարգանա անոնց Հոգիներուն մեջ անափառութիւնը, միշտ գովաբանելու ու չողոքորթելու պահանջը, մյուս կողմեն ալ կզորանա թե՛ իրենց և թե՛ ընկերներու Հոգիներուն մեջ նախանձը, ծածկված ատելութիւնը, անպիտան տառապանք մը, երբ իրմեն զատ ուրիշ մը կհաջողի, երբ իրմեն զատ ուրիշի մը կերթա այդ գովաբանութիւնը:

Այս ցուցադիր վարձատրութիւնները ունին և իրենց ավելի առօրյա ձևերը, որոնք դեռ կգործածվին դժբաղդաբար շատ մը դպրոցներու մեջ: Այսպես, դասարանին մեջ բարի վարքի առաջնութիւնը որո՞ւն պատկանիլը, որ կհայտարարվի, երկրորդ տեղը և երրորդ տեղը որուն պատկանիլը: Այդպես ալ զանազան գույնի ու աստիճանի «բարենիշներու» գործածութիւնը, որ փոքրիկը տանի տուն, ցույց տա ծնողներուն ու ազգականներուն և հավաքածուներ կազմե սնապարծութեան: Ասոր մեկ ուրիշ ձևը կներկայացնեն զանազան չքանչանները, կրծքեն կախվելիք խաչերը, օղերը, մետալիոնները և ժապավեններ՝ վրան ոսկի տառերով ու բառերով: Ասոնք բոլորը կրթական տեսակետեն շատ անչահ ու վարնոց ապրանք են:

Տղան այսինչ բանը ընել կամ չընել պիտի սորվի, որովհետև արգելված է, որովհետև զեղ վարմունք է, որովհետև բարոյական պահանջ է, և ո՛չ անոր համար, որ կրծքեն մետաղի ու ժապավենի կտոր մը կախե ու ամենուն աչքը կոխե: Այս բոլոր ողորմելի պաճուճանքները ողորմելի զգացումներ կսնուցանեն և ողորմելի բարոյական դրդիչներ կաճեցնեն մեծցող սերունդի Հոգիին մեջ. ամեն ինչ ցույցի համար, ուրիշներեն չարունակ գովասանք ու հիացում մուրալու համար, փոխանակ ինքն իր վարմունքին մեջ, ինքն իր Հոգիին մեջ իր ուրախութիւնն ու բարոյականութիւնը գտնելու և վերջապես փոխանակ իր սիրելիներու նայվածքին ու

համակրանքին մեջ իր գնահատութիւնը կարդալու տարակոյսով ու բաղդավորութիւնմբ:

Պատերազմի մեջ քաջութիւնմբ կռվողին կամ գետակեն աղջնակ մը ազատողին չքանչան մը կկախեն, որ ամենքը տեսնեն, դիտնան, որ Հանրապետութեան կողմե գնահատված մըն է, և ատոր համեմատ վարվին հետը: Այս պարագային չքանչանը մուրհակի կամ հանձնարարականի նման փոխարինութիւն մըն է, որ կամքի կրթութեան և բարոյականութեան հետ գործ չունի. այդ քաջ պատերազմիկը և աղջիկն ազատող լուղորդը կրնա շատ խեղճ, շատ ցած բարոյականի տեր մարդ մը ըլլալ. ինչքա՜ն-ինչքան բարոյապես շատ վատ տեսակի կրծքեր, վիզեր ու փորեր կան՝ խաչերով, աստղերով և լայն ժապավեններով չքանչանված: Եվ բարոյապես բարձր զգացումներու հասած անձ մը, որ Հանրութեյան համար կաշխատի իբրև իր պարտավորութիւնը, իբրև իր կոչումը, շատ մեծ հաճույք չզգար իր այդ վարմունքին համար չքանչան մը իր կրծքին վրա պատեցնելեն, իր վարմունքի այդ կոպիտ ցուցադրումեն. թե՛ ամոթ կզգա և թե՛ իր Հորճանքին մեջ այդ զանազան ձևի «բարենիշները» բացասական բան մը ունին իրենց վրա, էժան ու տափակ բարոյականութիւն մը: Իսկ կրթական գործին մեջ ատոնք բնավ իրենց տեղը չեն:

ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՈՒՍՈՒՄ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՄ

ԱՐԴԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Ա. Քաղաքակրթության ստորին աստիճաններուն վրա միայն ընտանիքն է ղեկավար կրթողի դերը կատարողը, դպրոցը գոյություն չունի: Բայց հետզհետե հանրային կյանքի քիչ մը ավելի զարդացած պայմաններու տակ՝ կրոնական, հարկային, ջրաբաշխական և այլ պետքերու համար պահանջ կղզացվի այն տեսակի մասնագիտական պատրաստություն ունեցող մարդոց, որոնք գրել-կարդալ ու հաշիվ գիտեն: Եվ ահա այդ կարողություններուն տիրացած մարդիկ, գլխավորապես հոգևորականներ և որոշ պաշտոնյաներ, իրենց շուրջը կհավաքեն պատանիներ և կսորվեցնեն անոնց իրենց գիտցածը: Որով և գոյություն կստանա դպրոցը, դպրանոցը, դպիրներ պատրաստող հաստատությունը. դպիր՝ կարդացող ըսել է:

Դպրոցը ուրեմն սկիզբ կառնե կրոնական ու կառավարական պետքերե դրդված, կծառայե մասնագիտական պահանջներու և շատ փոքրաթիվ խումբի մը համար է միայն: Բայց կրոնական, վարչական ու տնտեսական նոր զարգացումներու զուգընթաց՝ կամաց-կամաց կմեծանա գիր ու հաշիվ ու գծագրություն գիտցող պաշտոնյաներուն պահանջը. կմեծանա նաև այդ պաշտոնյաներեն պահանջվող մասնագիտական ծանոթություններուն և ավելի բարձր տեղեկություններուն չափն ու ծավալը, որ բնականաբար ավանդելու համար ալ շատ ավելի երկար ժամանակ կպահանջե. ով կուզե, օրինակ, հոգևորական բարձրաստիճան դեմք մը դառնա, աստվածաբան մը կամ բժիշկ, դատավոր ու փաստաբան, պետք է հավելյալ քանի մը տարիներ՝ գրել-կարդալ սորվելեն ետքը համառ աշխատի մասնագետի մը ձեռքին տակ կամ «ոտքերուն քովը», ինչպես կըսեին հին ժամանակ: Ասով ալ գրել-կարդալ սորվեցնող

դպրոցը կդառնա տեսակ մը նախապատրաստություն շատ ավելի բարձր մասնագիտական նախապատրաստության: Միջին դարերուն դպրոցը այս վիճակին մեջն է. բացառիկ մարդոց համար է, և միշտ ալ խրթին մասնագիտություն մըն է համարված գրել-կարդալու, հաշվելու ու գծելու արվեստը:

Նոր դարերուն և գլխավորապես առևտրի զարգացումով, երբ մանավանդ քաղքենի առևտրական դասակարգը թիվով ու ազդեցությամբ կբարձրանա, զգալի կերպով կաճի նաև մեծ քաղաքներու մեջ գրել-կարդալ սորվիլ ուզողներուն թիվը, և ատոր համեմատ ալ դպրոցներուն թիվն ու վիճակը: Դպրոցները կջանան մանավանդ առևտրական պահանջներուն բավարարելու և ավելի լայն հասարակության մը պետքերուն հարմարվելու. իրենց ծրագրին մեջ կմտցնեն աշխարհագրություն, իր ժողովուրդի անցյալի մասին որոշ տեղեկություններ, գեղագրություն և թեթևակի չփում գեղարվեստներու: Եվ այդ բոլորին հասնիլ կարողանալու համար դպրոց կընդունվեն արդեն տղաքը իրենց տղայական տարիքեն, այսինքն ընդհանրապես իրենց առաջին տասնյակը հազիվ լրացուցած:

Բ. Դպրոցական տարիքի ասկե ավելի վար սահիլը և դպրոցական հաստատություններու ավելի տարածվիլը պտուղ է ժողովրդավար կառավարություններու հետզհետե ընդհանրացման, որ հատուկ է մեր նորագույն ժամանակներուն. այդ շարժումը սկիզբը կառած ԺԹ դարու առաջին մասեն և դեռ իր բնական զարգացման ընթացքին մեջն է:

Հետզհետե ամեն տեղ տիրող գաղափարն այն է, թե երկրի մը, պետության մը տերն ու տիրականը այդ հողին վրա ու այդ պետության մեջ ապրող ժողովուրդին ամբողջությունն է, և ժողովուրդն է, որ պիտի կառավարե իր երկիրը այս կամ այն ձևով ընտրած ներկայացուցիչներու միջոցով. ամեն օրենք ժողովուրդի ամբողջության շահեն պիտի բղխի և ժողովուրդին պիտի ծառայե. ամեն գիտություն, ամեն հարմարություն, ամեն գեղարվեստ ու ամեն վայելք մատչելի պիտի դառնա ամենուն համար:

Այս ըմբռնումին մեկ արդյունքն է նաև կրթական հաստատություններու ընդհանրացումը. ամեն կողմ, գյուղ ու քաղաք, դպրոցներ կբացվին, որ գիր ու ընթերցման, հաշվի ու գիտություններու գաղտնիքը բացվի ամենուն համար: Քաղաքային դպրոցնե-

րուն մեջ արդեն սովորական եղող կրոնքի, պատմության ու աշխարահագրության վրա կավելնան ժե դարուն հետզհետե տիրական դիրք ստացող բնական պատմության ու բնական գիտություններուն տարբերքը: Եվ դպրոցները կսկսին արդեն տղոց յոթը տարեկանեն սովորաբար:

Յոթը տարեկանեն դպրոց երթալը բնական կերպով իր հետևեն կբերե նաև մինչև յոթը տարեկաններու դպրոցական կրթության մասին ալ լրջորեն խորհելու հարցը, քանի որ մեր արդի տնտեսական ու քաղաքացիական պայմաններու բերումով ժողովուրդներու սովար մասին գավակները շատ դուրկ կմնան քիչ շատ լուրջ ընտանեկան խնամքե ու կրթուեենե՝ իրենց ծնողներու աղքատության, տգիտության ու անկարողության պատճառով: Ոիչ մը ավելի բարեկեցիկ և ավելի բարձր կրթությամբ ծնողներու ալ մեկ շատ զգալի տոկոսը ինքը կփափաչի իր կրթական պարտավորություններեն՝ իր գործերու, զբաղումներու կամ զվարճություններու հետևեն ինկած:

Տունն ու վողոցը աղմկող ու անհանգստություն պատճառող երեխաներու ներկայութենեն հնար եղածին չափ ազատ մնալու ցանկությամբ, մասամբ ալ երեխաներու համար ավելի աղեկ հսկված և իրենց հասակակիցներուն հետ ավելի հաճելի և օգտակար ժամանց մը կազմակերպելու մտածումով, մասամբ նաև կրթական գործի ավելի լուրջ ու ավելի խոր ըմբռնումով, հետզհետե կտարածվի պահանջը կարելի եղածին չափ կանուխեն նույնիսկ մանուկներու կրթությունը ծրագրված, մշակված և իրենց տարիքին հարմարցըված եղանակով մը վարելու այդ տարիքին հատուկ զբաղումներով և մասնավոր կերպով փորձված անհատներու ձեռքով: Ասով ալ կառաջանան մանկական դպրոցները՝ մանկապարտեզները՝ նախ սահմանափակ թիվով, որոնք սակայն արագ կընդհանրանան: Ջորս տարեկանին դեռ չհասած կամ հազիվ հասած՝ երեխան կսկսի դպրոց հաճախել:

Գ. Այսպեսով տնտեսական, գիտական ու քաղաքակրթական պայմաններու զարգացման զուգընթաց, հետզհետե, նախկին ընտանեկան դեկավարության քումնիվեր, կառաջանա դպրոցական դեկավարություն մը: Սկիզբը միայն հասունցող տարիքի վերջին տարիներուն մեջ, որ սակայն քիչ-քիչ վար սահելով՝ կիջնե ու

կհասնի մինչև մանկական երեք, չորս տարեկան հասակը, այսինքն կբռնե հասունցող տարիքին գրեթե ամբողջ երկայնքը՝ չմիջամտելով միայն նորածինի առաջին տարիներու կրթութեան գործին:

Դպրոցը կառաջանա նախ կրոնական ու պետական որոշ պաշտոնյաներ հասցնելու պահանջեն, որուն կավելնա կամաց-կամաց երրորդ դասակարգի առևտրական-արդյունաբերական կյանքին բնրած կարդալ-գրել գիտնալուն պահանջը: Զարգացման երրորդ աստիճանին կհասցնեն ժողովրդավար-Հանրային ըմբռնումներուն բնրած պահանջները, որուն կմիանան չուտով գիտական-մանկավարժական սկզբունքային պահանջները:

Եվ դպրոցները արագ կչատնան, կկատարելագործվին ներսով ու դուրսով ու խիտ ցանցով մը կպատեն բոլոր քաղաքակիրթ եվրոպական երկիրները, անոնց գաղութները և եվրոպական ազգերու ազդեցության տակ գտնվող վայրերը: Դպրոցը կդանա ամեն գյուղի ու քաղաքի անհրաժեշտ մեկ հաստատությունը, շատ տեղ նույնիսկ անոր հպարտությունը իր շենքին գեղեցկությամբը, ներքին հարմարություններովը, իր կրթական դերովը և իր ճեռք բերած մանկավարժական հռչակովը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Ա. Դպրոցները անշուշտ որ մեծ դեր ունին ինչպես տղոց հոգեկան կարողություններու բացման ու զարգացման տեսակետեն, այնպես ալ անոնց դաստիարակության տեսակետեն, բայց կրթության այդ երկու կողմերուն վրա ունեցած իր ազդեցությունը միշտ զույգ կերթա ընտանիքի գործած ազդեցության. այդ երկու ուղղությամբ մեծ է նաև ընտանիքի խաղցած դերը: Բոլորովին տարբեր է պայմանը կրթության երրորդ կողմի վերաբերմամբ, որ է մտավոր պաշարի ամբարումը, և որ ուսում կանվանենք: Ուսում տալու գործին մեջ անհամեմատ ավելի երկրորդական է ու տկար ընտանիքին ունեցած գիտակից ու ղեկավար մասնակցությունը և, ընդհակառակը, դպրոցներուն մեջ ամենեն ավելի աստիկա է չեչտվածը. ուսում տալն է դպրոցներուն ամենեն աչքի իյնող առաջին գործը: Սիսթեմատիկ ու ծրագրված կերպով բան մը սորվեցնող հաստատություններն են, որ կանվանենք դպրոց: Այն աստիճան ընդգծված

է ուսման դերը դպրոցներու մեջ, որ չատ-չատերու ուշադրությունեն կվրիպի դպրոցներու դաստիարակչական արժեքը և անոր ունեցած ազդեցությունը տղոց հոգևկան այլ կարողություններու բացման ու զարգացման վրա, և այդ պատճառով ալ դպրոցին վրա կնային միայն, ինչպես ուսում վաճառող խանութի մը վրա:

Դպրոց և ուսում սերտորեն կապված են իրարու, և հատկապես դպրոցներու առանձնահատուկ աշխատանքը ուսուցումն է: Այդ պատճառով ալ բնական կերպով ի՞նչ և ինչպե՞ս ուսուցանելու հարցը կներկայանա դվսավորապես իբրև դպրոցական խնդիր:

Մարդկությունը հազարավոր տարիներու աշխատանքով դիտեր, դատեր, իրարու կապակցեր, դիզեր ու բազմատեսակ դիտություններ է կերտեր: Այդ ուսանելի նյութերու զանգվածներուն մեջ կան բաներ, որոնք հիմնական են և անխուսիր ամեն մարդու համար պիտանի, հաճախ անհրաժեշտ, և առանց այդ բոլորի յուրացման մարդուս դատումն ու ըմբռնումները կզադրին իր ժամանակին համապատասխանող մտածում ըլլալե. ծանոթացումներ ու տեսություններ, որոնցմով պետք է հետաքրքրվի ընկերության ամեն մեկ անհատ, և որ ձեռք բերել կրնա անխուսիր ամեն մարդ, առանց բացառիկ ընդունակություններու կամ մասնավոր հակումներու:

Եվ ընդհակառակը, այդ ուսանելի հսկայական դեզերուն մեջ մանրամասնություններ կան, խորացումներ, նրբացումներ, տեսական ու գործնական, որոնք հետաքրքիր ու պիտանի են միայն քիչերուն, համեմատաբար չատ քիչերուն, միայն անոնց, որոնք իրենց կյանքն ու աշխատանքը նվիրած են այդ ճյուղին ու առարկային և որու համար իրենք ունին հարկ եղած հետաքրքրությունը, հակումը կամ շնորհքը:

Այսպեսով՝ բոլոր ուսումները, դիտություններուն բոլոր ճյուղերը սահման մը ունին, մինչև ուր որ պետք է ամենքը անպատճառ հասնին, իսկ այդ սահմանեն անդին կսկսի անսահմանություն մը, որ ամենուն համար չէ, այլ որոշ փոքրաթիվ մասնավորներու համար՝ կա՛մ իրենց գործի ու ապրուստի դրդումով, կա՛մ անձնական հակումի և ընդունակության բերումով:

Ուսման բոլոր ճյուղերուն մեջ ամեն մարդու զարգացման

համար անհրաժեշտ նկատվող այդ մասերուն միացումը կանվանենք ընդհանուր ուսում, ուրկե դուրս, ուրկե վեր մնացող խորացումներն ու մանրամասնությունները և այլ կարողություններն ու ձեռքբերումները կդառնան մասնագիտական ուսում:

Բ. Արդ՝ ընկերության մը բոլոր անդամներուն համար անհրաժեշտ նկատված այդ ընդհանուր ուսումը ավանդող դպրոցներն են, որ նեղ մտքով ու պարզապես կանվանենք «դպրոց»: Մասնագիտական կրթություն տվող դպրոցական հաստատությունները այդ ընդհանուր դպրոցներեն ավելի հստակ զանազանելու համար ընդհանրապես չենք ըսեր «դպրոց», կըսենք «վարժարան»՝ առևտրական վարժարան, նկարչական վարժարան, ուսուցչական վարժարան, քիմիական բարձրագույն վարժարան:

Ուրեմն նեղ մտքով «դպրոց» կանվանենք այն կրթական հաստատությունները, որոնց տված ուսումը եվրոպական քաղաքակիրթ ժողովուրդներու ընդհանուր ըմբռնումով անհրաժեշտ կհամարվի հասարակության մը բոլոր անդամներուն համար անխտիր և նույնիսկ օրենքով կպարտադրվի: Այդ հաստատություններուն մեջ կուսուցվին այն մասերը գիտություններու և այն ամեն կարողությունները, որոնք անխտիր ամեն «կրթված» անհատի համար կարևոր կհամարվին: Աչակերտներու ապագա մասնագիտական գործունեությունը, պաշտոնը, հացի ու հակումներու պահանջած հատուկ խորացումներն ու վարժությունները «դպրոցը» աչքի առաջ չունի: Թեև անշուշտ տղոց սորված բոլոր բաները այդ ընդհանուր կրթարաններուն մեջ ապագային կրնան հիմք ծառայել անոնց մասնագիտական աշխատանքներուն և տեսակ մը անոնց տարրական նախապատրաստությունը նկատվիլ շատ անգամ: Դպրոցը մասնագիտականեն կխուսափի, բայց դնելով նոր սերունդներուն հոգիին մեջ ընդհանուր զարգացման հիմքը, դյուրացուցած ու նախապատրաստած կըլլա մասնագիտական կառուցումներուն բարձրացումը այդ հիմքերի վրա:

Իսկ «վարժարան» կըսենք ուրեմն նեղ իմաստով այն կրթական հաստատություններուն, որոնք հատկապես հիմնված են որոշ տեսակի գործի մը, պաշտոնի մը, արվեստի մը, գիտության մը պահանջած ուսումներն ու կարողությունները որոշ խումբ մը անհատներու մեջ մշակելու համար. այդ մասնագիտական հաստա-

տուժյուններու մեջ մեկ կողմ են դրված մարդու մը հոգեկան և ընկերական զարգացման մյուս կողմերը. ընտրված և առնված են այն ուսումները, որոնք կծառայեն հատկապես ցանկալի նպատակին խոր ու մանրազնին ուսումնասիրությանը:

Անշուշտ մասնագիտական վարժարաններուն մեջն ալ աշակերտներու խմբական կենակցությունը դաստիարակչական որոշ ընդհանուր պահանջներ կդնե, որոնք նույն են բոլոր դպրոցներու համար: Նույնպես մասնագիտական վարժարաններու ուսումներուն ու մարզանքներուն մեջ շատ բաներ կան, որ ամեն մարդու համար ալ հետաքրքիր են ու պիտանի, այսինքն ընդհանուր դպրոցական կրթության սահմաններուն կքսվին, բայց ասիկա կըլլա բնական պատահականությամբ: Հաճախ մասնագիտական վարժարանները դիտակցորեն կմտցնեն իրենց ծրագրին մեջ մեկ-երկու ոչ մասնագիտական առարկաներ ընդհանուր ընկերային պահանջի մը ճնշումին տակ, բայց ասիկա կզգացվի միշտ իբրև քաղաքական կամ ազգային պարտադրանք մը, որ մասնագիտական վարժարաններու էությենեն չի բղխիր:

Եթե ընդհանուր դպրոցը կճգտի ուսումն ու կրթությունը կրցածին չափ ժողովուրդի մը լայն շերտերուն մեջ տարածելու, կճգտի ընդհանրության բարձրացմանը, մարդոց իրարու մոտենալուն, իրար հասկնալուն, հնար եղածին չափ իրար հավասարվելուն, ընդհակառակը, մասնագիտական վարժարանները իրենց միակողմանի խորացումով ու ճյուղավորումով կծառայեն մարդվային մտքի ու գործի բազմազանումին, հարստացումին, նոր թռիչքներու, նոր աշխարհներու բացումին, նոր ուղիներու հայտնագործումին:

Դպրոցը իր ընդհանուր կրթությամբ կծառայե հանրության պահպանողական պետքերուն, մինչ վարժարանները իրենց բազմազան մասնագիտական աշխատանքներով կծառայեն հանրային զարգացման հառաջդիմական կողմերուն: Եվ ինչպես կյանքի, այնպես ալ կրթության մեջ պահպանողական ու հառաջդիմական այդ ղույգ գործոններու իրարու հյուսվելովն է, որ կենսունակ ամբողջությունը կկազմվի:

Գ. Դպրոցի տակ ուզած ընդհանուր կրթությունը քաղաքակրթական և ավելի նոր հասկացողություն է, մինչ մասնագիտական

վարժարաններու ջամբած ուսումը շատ ավելի դյուրին ըմբռնելի բան մըն է՝ սերտորեն կապված դիրքի ու հաջողության խիստ չոչափելի առավելություններու հետ: Մարդկային բարձրացման, աղգային աղնվացման և հանրային խորացման իտեալները ամենուն համար նույն չափով և նույն ձևով հասկնալի չեն: Նույնիսկ այն վայրերու մեջ, ուր ընդհանուր կրթուլթյան հատկացված հաստատությունները, ինչպես են նախակրթարաններն ու մանկապարտեզները, օրե օր կշատնան, դեռ հետևանք չէ ատիկա ընդհանուր կրթուլթյան մեծ կարևորության ըմբռնումին, այլ ընդհանրապես արդյունք է փոքրաթիվ վերին չերտի մը համառ ջանքերուն, որոնք իրենց համոզումները կուզեն պարտադրել լայն հասարակուլթյան:

Ստվար բազմուլթյուններ լուրջ զանազանուլթյուն մը դնել չեն կրնար ընդհանուր դպրոցի և մասնագիտական վարժարաններուն միջև և հացի ու պաշտոնի չափերով կմոտենան նաև ընդհանուր դպրոցներուն: Ատոր համար է, որ հասարակուլթյան լայն չերտերը լավ չեն հասկնար, թե ինչացո՞ւ են մեր նախակրթարաններուն մեջ ուսուցվող շատ մը «խենթ-մենթուլթյունները», և միշտ ալ հազիվ զսպված տրտունջով մը կչեշտեն, թե դպրոցներուն մեջ կբացակային շատ մը մասնագիտական և «գործնական» տեսակետեն չափազանց պիտանի ուսումներ ու վարժուլթյուններ: Կցանկան, որ ընդհանուր ուսման նվիրած հաստատուլթյուններուն մեջն ալ մասնագիտուլթյունը գործին տիրապետե և իհարկե անպատճառ խոսողին սեփական եղող գործին մասնագիտուլթյունը: Այսինքն հոգեկան ու մտավոր ընդհանուր զարգացումը կրճատվի և ատոր փոխարեն պաշտոնի մը, արհեստի մը գործնական կողմերուն ուժ տրվի:

Եվ շրջապատի այս կարգի ճնշման տակ դպրոցները հոս ու հոն ենթարկված են նման ուղղուլթյամբ փորձերու: Այսպես, օրինակ, քաղաքային նախակրթարաններու մեջ հոս ու հոն մտցված են առևտրական հաշվապահուլթյուն, առևտրական նամականի, սղագրուլթյուն, մեքենագրուլթյուն: Ուրիշ տեղ մը դպրոցին մեջ բացված են կոշկանոց, գլխարկի ու խոիրի հյուսարան, ատաղձագործի աշխատանոց: Գյուղերուն մեջն ալ ցանկացած են նախակրթարանը վերածել երկրագործական վարժարանի՝ իր փորձնական դասերով ու դաշտերով: Ասոնք բոլորն ալ դժբաղդ չափա-

զանցութիւններ են և անգործնական, թեև ընդհանրապես չատ գործնական ըլլալու մտահոգութիւններէն կծնին:

Այս բոլոր ճիգերը նման են վարդի կոկոնը փչելով բանալուն. ատով երբեք վարդ չես ստանար, այլ խամրած ու ճմռտած ծաղիկ մը: Ամեն տարիք իր հետաքրքրութիւններու շրջանը ունի, իր հակումները. հաջորդ շրջաններուն կատարվելիքը նախորդ շրջաններուն մէջ չի կատարվիր. եթե հարկադրենք, կստացվի խեղաթիւրված ու անշահ բան մը: Նախակրթարանին մէջ երեք-չորս տարիներու ընացքին չատ թերի կերպով սորված մասնագիտական-գործնական բան մը տղան դպրոցը թողնելեն ետքը քանի մը ամսվան մէջ կրնա սորվիլ և չատ ավելի լուրջ ու լրիվ՝ իրական աշխատանոցի մը մէջ: Այս աստիճան գործնական ըլլալ ուզողները ավելի չիտակ քայլ մը առած կըլլան, եթե իրենց փոքրիկը ուղղակի տանին արհեստավորի մը քով և ուղղակի դնեն գործի՝ փոխանակ դպրոց տանելու. տղու ընդհանուր կրթութիւնը խանգարելեն ետքը գոնե սորված արհեստը բանի մը նման կըլլա: Որովհետև նախակրթարաններուն այդ նշանավոր արհեստանոցներն ու գյուղատնտեսութիւնը և նման փորձերը միչտ ավելի կամ պակաս խաղալիք բաներ են և չինծու ըլլալու կնիքը կկրեն իրենց վրա. ավելի ձևականութիւն է արտաքին, քան իրական աշխատանք: Դպրոցներուն մէջ եղող արհեստանոցներն ալ ընդհանուր կրթութեան պետք է ծառայեն, ո՛չ մասնագիտութեան:

Ասոր նման վերացական բան մըն է նաև դպրոցը տեղական ընթացիկ արտաքին աշխատանքին հետ կապված պահելու պահանջը, եթե ատով ըսել կուզվի, որ ընտանիքի մը գավակը իր ուժերու ներածին չափ պետք է օգնե իր ծնողներուն՝ ըլլա տունը, խանութը թե արտն ու այգին, մանավանդ որոշ ատիպողական օրերուն, ասիկա ինքնին կատարվող բան մըն է արդեն ամեն տեղ առանց աղմուկի և իրարանցումի: Իսկ եթե ատով ըսել կուզվի, թե դպրոցը հանրային աշխատանքներու գործադրութեան մէջ կազմակերպված օղակ մը դառնա՝ իր վրա առնելով, իբրև դպրոց, հանրային աշխատանքային մեկ որոշ բաժինը, ան ալ տեսական եղանակով մը, կուզանք, կհասնինք միևնույն հիվանդութեան: Դպրոցը կվտանգարենք իր գործը կատարելե և կդարձնենք գործատեղի, օժանդակ բանվոր մը: Աղմուկը, վազվզուքը, ճաւերն ու ցուցամոլութիւնները՝ չատ,

իսկ իր տված իսկական արդյունքը, բերած Հանրային օժանդակությունը՝ շատ խեղճ ու անլուրջ:

Ամեն բան իր ժամանակին: Դպրոց ըսվածը սորվելու, պատրաստվելու տարիներն են: Եվ կրթության բույնը: Սորվելու, պատրաստվելու և կրթվելու համար պետք է թողնենք փոքրիկները հանդիստ ու ազատ, որ իրենց պատրաստության տարիները պատրաստության նվիրեն. չանանք լայն, խոր ու լավ պատրաստելու, որ վերջը իրավ որ պիտանի անդամ դառնան Հանրության և ո՛չ թե հիմա անմիջապես մեծերու կյանքին մասնակից ըլլալու խոչոր պահանջներով խանգարենք ու աղճատենք անոնց աչխատանքն ալ, պատրաստությունն ալ, անոնց հոգին ալ, մանկությունն ալ: Մանուկներուն իրավունքն է մինչև իրենց հասուննալը ազատ ըլլալ հանրային լուրջ պատրաստություններե, ամբողջապես վայելել իրենց մանկության ազատությունը և բազմակողմանի զարգացման ամբողջ հնարավորությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒՍՈՒՄ

Ա. Եվրոպական ոգիով քաղաքակիրթ երկիրներու մեջ ո՛չ միայն արդեն ընդունված ու տարածված են ընդհանուր ուսման նվիրված դպրոցները, այլև պետական օրենքով ընդհանուր կրթությունը դարձած է պարտադիր, ամեն ծնող պարտական է հոգալու իր զավակներուն այդ ընդհանուր դպրոցական կրթությունը, հակառակ պարագային կենթարկվի դատական հետապնդումի :

Բայց ի՞նչ պիտի հասկնանք «ընդհանուր կրթություն» ըսելով, դպրոցին ո՞ր մասերը և մինչև ո՞ր տարիքը օրենքը կհամարե պարտադիր:

Այդ պարտադրությունը չի տարածվիր հասունցող տարիքի մեկ ծայրեն մինչև մյուսը: Պետական օրենքով և հասարակության ըմբռնումով ժողովուրդի մը բոլոր անհատներուն համար անհրաժեշտ նկատված ու պարտադրված կրթության չափը դեռ շատ համեստ է, կամ ավելի ճիշդ խոսքով՝ հասարակության մը ամեն մեկ անհատի իրավունքը չի համարվիր դեռ լրիվ չափով ուսում ստանալը:

Արդի գոյություն ունեցող ամեն տեսակի ուսումնասիրու-

թյունները դրեթե ամեն տեղ ալ կրաժնվին չորս աստիճանի՝ ա) մանկական դպրոցներ՝ 4-7 տարեկան պզտիկներու համար. բ) նախակրթարան տեղ-տեղ 7-11, բայց ընդհանրապես 7-13 տարեկաններու համար. գ) միջնակարգ վարժարաններ կա՛մ ընդհանուր կրթական ծրագրով, կա՛մ մասնագիտական՝ 13 տարեկանեն վեր 5-6 տարի տևողությամբ. և վերջապես բարձրագույն վարժարաններ ու համալսարան՝ 19-են սկսած 4, 5 տարվան ծրագրով:

Ասոնցմե բարձրագույն կրթության հատկացված հիմնարկությունները մեկդի դնենք, որ միշտ մասնագիտական են ըստ էության և միշտ ալ շատ սակավաթիվ փոքրամասնության մը համար են, այլև հասունացման տարիքի սահմաններն անդին կգտնվին: Հասունացման տարիքի սահմաններուն մեջ գտնվող տարիներու ընթացքին ո՞ր դպրոցներն են իրապես ընդհանուր և պարտադիր, նույնիսկ ամենեն քաղաքակիրթ երկիրներու համար:

Նախ՝ մանկապարտեզի շրջանը դուրս է դեռ պարտադրության սահմաններեն. ատիկա տեսակ մը շռայլություն կնկատվի տակավին, մանավանդ եթե քիչ մը ավելի լուրջ ու չնորհքով է կազմակերպված և միայն անունով չէ մանկապարտեզ. ատոնք դեռ մասնավոր հաստատություններ են և լավ վճարողներուն համար: Իրավ է, որ հետզհետե նախակրթարաններուն կից շատ տեղ սկսած են արդեն բացվիլ նաև մանկապարտեզներ, որոնք հավանորեն շատ չանցած պետք է ընդհանրանան, քանի որ տղոցմեն ավելի անոնց ծնողներուն թևթևացումը այդպես կպահանջե, այսինքն եթե ոչ փոքրերու, գոնե մեծերու հարմարության համար: Բայց դեռ մինչև հիմա ո՛չ ընդհանուր կրթական ծրագիրներու մեկ լուրջ ու հաստատ մասն է, ո՛չ ալ պարտադիր՝ ծնողին ու փոքրիկին և դեռ նոր բան է, փորձվելու վրա: Այնպես որ պարտադիր ըսված կրթությունը կսկսի նախակրթությամբ: Ետ ինկած և աղքատ անկյուններեը կտևե միայն չորս տարի, դժվար կրարձրանա ուրիշ տեղերու մեջ սովորական եղող վեցամյակին: Օրենքով պահանջված ընդհանուր ուսումը նախակրթարանի առաջին վեց տարիներն են:

Միայն ավելի մեծ ու կեդրոնական վայրերու մեջ և ավելի ալ հավելվածական կերպով մը և քիչ-շատ պատահական հաջողությամբ այդ վեց տարիներուն վրա կավելնա նաև մեկ, երբեմն նույնիսկ երկու տարի, որով ընդհանուր ուսման շրջանը կիսապար-

տագիր եղանակով մը կհասնի պատանեցման տարիներուն վերջը՝ մինչև արբունք: Եվ հոս արդեն կանգ կառնեն վճռական կերպով:

Միջնակարգ կրթությունը շատ ավելի քիչերու համար է, լավ վճարել կարողացողներու համար, անոնց համար, որ համալսարան երթալ կծրագրեն, որ բարձրագույն մասնագիտական վարժարանները մտնելու կպատրաստին, և անոնք, որ պետական, արդյունաբերական ու առևտրական միջին աստիճանի պաշտոններու կձգտին, ավելի հաստատ ու չահավետ դիրքերու: Այսինքն միջնակարգ վարժարանը, ինչպես արդեն անունն ալ կմատնանշե, փոխանցիկ տարիներ են և հինեն՝ իրենց ծագման օրերեն դեռ կպահեն իրենց հատկանիշ գիծը: Դիրքի ու պաշտոնի համար անհրաժեշտ եղող որոշ նախապատրաստություն մը ընդհանուր կերպով: Այդ «ընդհանուր կերպով» ըլլալուն համար է, որ մասնագիտական վարժարաններու մեկ տեսակը չեն համարվիր, և այդ «ընդհանուր կերպով» ըլլալուն համար է, որ հետզհետե անոնց ավանդած ուսումներն ալ իրավ որ օր օրի ընդհանուր կրթության դույն ու ձև կառնեն: Թե չէ մինչև վերջերս, դեռ մինչև հիմա ալ տեղ-տեղ գիտություններով աղքատ և հին լեզուներով խճողված հաստատություններ էին՝ վերին չերտի մը զավակներու խոսքին ու դատողության «դասական» ու գրենական փայլ մը տալու համար:

Բ. Ուրեմն ընդհանուր կրթությունը հոս ու հոն 7-11 տարեկաններու համար է, ավելի սովորականը՝ 7-13 տարեկաններու համար, բացառիկ ու հավելվածական կերպով մը՝ մինչև 15 տարեկանը լրացնելը: Այսինքն ուսումը կանգ կառնե ճիշդ հոն, ուր տղոց մտքերը սկսեր են բացվիլ, ուր իրացական մտածումով հավաքված նյութը ժամանակն է սիսթեմի վերածելու և տղոց ձեռք բերած նախապատրաստական ծանոթություններուն և տեղեկություններուն վրա մեր արդի իսկական գիտությունները կառուցանելու: Կես մնացած ու խեղճ մտավոր ու հոգեկան պատրաստություն մը նույնիսկ այն դպրոցներուն մեջ, ուր մեծ ճիգով, բարեխղճությամբ ու մանկավարժական ըմբռնումներով ավանդված է ամեն ինչ: Եվ ողորմելի կրթություն մըն է, երբ դպրոցին մեջ պաշտոնյաները ո՛չ գիտական, ո՛չ ալ մանկավարժական հարկ եղած պատրաստությունը չունին, ո՛չ ալ իրենց բարեխղճության չափն է վստահելի:

Այս շատ թերի ուսումը չի տար նաև այն անհրաժեշտ նա-

հասպատրաստական հիմքը, որուն վրա ինքնաչխատութիւնը կարողանար մնացածը լրացնել, մանաւանդ պահանջ ու դրդում զգար մնացածը լրացնելու: Այդ մղումը հետին թիվով դռնե տալու, այդ թերին դռնե փոքր չափով մը լրացնելու, այդ բացը դռնե կարկտանով մը գոցելու հուսկերով կդիմեն մարդիկ կրթական լրացուցիչ հաստատութիւններու. կիրակնօրյա դպրոց կկոչվին ատոնք, երեկոյան դասեր կկոչվին ատոնք, ժողովրդական համալսարան կկոչվին, երբեմն ուռուցիկ անունով մը կամ պարզապես պարբերական դասախոսութիւններ:

Այս ամեն տեսակի լրացուցիչ դասախոսութիւններու անպատեհութիւնները շատ են: Ամենեն առաջ՝ այդ հավաքույթներուն մեջ կկոսվի մարդոց, որոնք աշխատանքի բեռին տակ ճզմված են չարաչար. ամբողջ օրվան ծանր աշխատանքեն ետքը խեղճ պատանին կամ մարդը պատառ մը զվարճութեան ու հանգստի միայն կարիք ունի. դասախոսութեան ատեն իր բոլոր ջանքերուն հակառակ կքնանա աչքերը գոց կամ բաց: Երկրորդ՝ այդ բոլոր խոսված նյութերը շատ են պատահական, կտոր-բրդուճ, ցրիվ, քիչ և շատ քիչերու համար: Եվ խոսողներն ալ պատահական մարդիկ են, որոնք կկոսին նայելով փչող հովերուն, պիտանի ու անպիտան, դվխավոր ու երկրորդական բաներու մասին և կկոսին կա՛մ շատ բարձրեն, դրքի ու դպրոցի լեզվով, կա՛մ շատ ցածեն, անմշակ, անփույթ ու խառնակ, կկոսին իրենք, մինչդեռ սորվելու համար հիմնական կարևորութիւն ունեցողը սորվիլ ուզողի աշխատանքն է: Բայց այդ տեսակետեն եթե քիչիկ մը լրջորեն մոտենալ ուզենաս գործին, եթե քիչ մը դաս պատրաստել ու միասին աշխատիլ պահանջես, իսկույն լսարանդ կհալի. անոնք կուգան միայն լսելու համար, իրենց հետաքրքրութիւնը դյուրին ու առանց ճիգի հագեցնելու համար:

Անշուշտ որ այս բոլոր տեսակի լրացուցիչ կազմակերպութիւնները բոլորն ալ շատ ազնիվ ջանքեր են, բայց խիստ համեստ արդյունքով. հոտ ավելի արժեք ունեցողը սորվելու կամ սորվեցնելու ձգտումն է, քան իսկապես սորվածն ու սորվեցուցածը: Այս դասերն ու դասախոսութիւնները մեկ կողմեն աղեկ են սիրտցավ ու կրթված մարդոց խիղճը հանգստացնելու համար, թե ահա՛, ինչ որ կրնայի, ըրի. բան մըն է վերջապես, հաճելի ալ արարողութիւն մը, իր

գիտցած բաներեն խոսիլը ուրիշներուն առաջ միշտ ալ հաճելի է, և անուն ու ժողովրդականութիւն վայելելն ալ արհամարելի բան մը չէ: Իսկ պատանիներու կողմեն ալ ցույց կուտա անոնց բնական ներքին պահանջը, ներքին խոր ծարավը՝ իրենք ալ բարձրանալու, իրենք ալ դարու դիտական լույսեն մեկ-երկու ճառագայթ ստանալու, ուրիշներու սորված ու գիտցած ուսումներեն քանի մը փշրանք ալ իրենց բերանը նետելու: Թե՛ մեկուն խղճահարութիւնը և թե՛ մյուսներուն հոգեկան ծարավը հրահրել արժե, և ատոր համար է, որ հոս ու հոն կան այդ լրացուցիչները, թեև ո՛չ մեկ լուրջ մարդ. լուրջ կրթական արդյունք մը չսպասեր հոտկե:

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԸ

Այս ամենը աչքի առաջ ունենալով՝ աջեն ու ձախեն չարունակ ձայներ կբարձրանան, թե միջնակարգ կրթութեյան դռներն ալ պետք է բաց ըլլան ամենուն համար պարտադիր կերպով և առանց վճարի: Այս պահանջին դեմ կբողոքեն շատ շատերը. նախ՝ պյուտճեական «անհաղթելի» առարկութիւններով, երկրորդ՝ պատանեկան տարիները, – կըսեն, – պետք է հատկացվին գործի ու պաշտոնի աշխատանքին, որ մարդ չուտով առաջ շարժվիլ կարողանա, և երրորդ՝ այդ տեսակ քայլ մը կհամարեն ուղղակի վնասակար հանրային տեսակետեն: Ատոր հետևանքը կըլլա,– կըսեն,– տեղերու ու պաշտոններու համար պատրաստված անհամար մեծ ախորժակներ, որոնց համար չկա սակայն այդչափ պաշտոն, դիրք ու ռոճիկ:

Այս երեք առարկութիւններն ալ շատ զորեղ են և ատոր համար ալ քմծիծաղ կառաջացնեն միշտ գործը հասկցողներու, գործը վարողներու և «գործնական» մարդոց շրթունքին: Եվ անոնք իրավունք ունին մեր արդի տնտեսական պայմաններուն մեջ և մեր արդի կրթական հասկացողութիւններու տեսակետեն: Ինչքան ատեն որ ընկերութիւնը իր անդամներուն հացը ապահոված չըլլա ուրիշ կերպով մը, և ինչքան ատեն որ կրթութիւն տալուն նպատակը, մանավանդ պատանեկան տարիներուն կրթութիւնը հատկապես, իբրև հարուստ հացի և յուղալի պաշտոններ ունենալու միջոց նկատվի, անշուշտ որ միջնակարգ կրթութիւնը ընդհանուր

պարտադիր ուսման մաս կազմել չի կրնար: Արդեն հիմա այս վիճակի մեջ անդամ մտավոր պատրաստված մարդոց թիվը ավելի է, քան անոնց համար գոյություն ունեցող դիրքերն ու պաշտոնները: Եվ այդ անհաց մնացած ու անգործ մտավորականությունը մշտական թթխմոր մըն է ամեն տեսակի աղմուկի, տակնուվրայության, հեղափոխությունները և ընկերական ցնցումներու, ուրկե ինքը կորնցնելիք ոչինչ չունի, օգտվելու ալ հույսը կրնա ունենալ:

Բայց մարդկային զարգացումը օր օրի կերթա առաջ. հետզհետե ձեռք բերվող նոր գյուտերը, հետզհետե կատարվող կյանքի նոր փորձերը կամաց-կամաց կկատարելագործեն և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ բարոյական մեր հասկացողությունները, ինչպես և ապրուստի մեր կարգերն ու ձևերը: Որչափ որ ապրուստի պայմանները բարձրանան ու մարդկայնանան, այնքան կրթությունն ստանալը կդատվի հայց ճարելու միջոց մը ըլլալե, կրթությունը կըլլա հոգևկան բարձրացման համար, թե՛ անհատի և թե՛ հանրության հոգեկան մակերեսի բարձրացման համար:

Դիտությունները և գեղարվեստները արդի հասած բարձրությանը բերել անխոիր ընկերության բոլոր անդամները կդառնա հանրային սուրբ պարտավորություն մը, կդառնա ամեն մեկ անհատի մարդկային ամենագլխավոր իրավունքներեն մեկը: Թե չէ՝ ինչի՞ է նման մեր այսօրվան հասարակությունը, ուր միևնույն երկրի ու պետության տարբեր դասերն ու տարբեր գործի ու վիճակի մարդիկը բոլորովին տարբեր-տարբեր դարերու կրթություն ունին և իրարմե հիմնովին տարբեր աշխարհայացք: Մեծ մասը միջին դարերու կրոնական ու պետական գաղափարներով ղեկավարվող դլուխ մը կպատոյնե իր ուսերուն վրա. չատ մը բաներու մեջ իր հոգին կատարյալ վայրենի հոգին է դեռ, քանի մը բաներու մեջ միայն կեցած է օրվան բարձրության վրա, օրվան քաղաքակրթության իբրև զավակ:

Մարդս իր լի արժեքը ստանալու համար պետք է ըլլա իր դարու ու իր ժամանակի մարդը՝ իր ատենվան դիտական բարձրության վրա կեցած. եթե կարողանա ավելի բարձր մագլցիլ, դար մը երկու ավելի առաջ անցնիլ իր տաղանդով, իր հեռատեսությամբ ու իր համառ աշխատանքով, ատիկա կըլլա իր բացառիկ արժեքը,

որովհետև կդառնա իր հետևեն եկողներուն ջահակիրը, կդառնա անոնց ճամբան լուսավորողը: Ինչ խեղճություն է նախորդ, անցած ու գացած դարերուն պատկանող գլուխ մը ունենալը: Ամեն անհատի բացարձակ իրավունքն է պահանջելը իր ծնող ու մեծցնող շրջապատեն, որ տան իրեն իր դարուն կրթությունը, որ դարձնեն իր հոգին ու միտքը իր ապրած դարու գիտություններու և գեղարվեստներու բարձրության հասած էակ մը:

Երբ այս ճշմարտությունները խոր արմատ բռնեն հանրային դատողություններուն մեջ, այն ատեն ընդհանուր կրթության սահմանը կհասնի անտարակույս մինչև հասունցող տարիներուն վերջը, գոնե մինչև միջնակարգ վարժարաններուն վերջը, գուցե և որոշ բաներ համալսարաններեն ու բարձրագույն մասնագիտական վարժարաններեն կուգան ու կմիանան ընդհանուր կրթարաններու ծրագրին:

Ընդհանուր կրթությունը և լուրջ ուսումը հաց ուտելու համար չէ, այլ մարդ դառնալու համար է: Հաց ուտելու տեսակետեն ալ սակայն ինչքան կրթությունը ընդհանրանա ու բարձրանա, այնքան մարդկային հոգիները կամրանան, այնքան անոնց պահանջները կհասուննան ու կլրջանան ու այլևս անկարելի կդարձնեն արդի կյանքի նման տնտեսական ստրկային կարգերը: Նեղ ու խեղճ մտածում է մարդոց տնտեսականը փոխել ու բարվոքել ուզելը, եթե միաժամանակ չի մտածվիր նաև անոնց հոգեկան կրթության բարձրացման մասին. այս երկուքը սերտորեն իրարու կապված հարցեր են: Ինչքան հասարակություն մը հոգեպես բարձրանա, այսինքն ինչքան հասարակության բոլոր անհատները իրենց ժամանակի գիտական մտքի ճիգերուն ու որոնումներուն մոտեն տեղյակ ու մասնակից դառնան, այնքան ալ կմեղմանա մարդոց ապրուստին մեջ եղած այս զարհուրելի անարդարությունն ու անհավասարությունը:

Հետզհետե հաց ստանալու պահանջեն ավելի կարևոր պահանջ պիտի դառնա կրթություն ստանալու պահանջը, և մարդկային քաղաքացիական բոլոր իրավունքներեն բարձր պիտի դասվի իր ժամանակի բարձրության համապատասխան ուսում ստանալու ամեն բարձր իրավունքն ու պահանջը: Եվ մեծագույն հանցանք մը պիտի համարվի հասնող անհատին թերի, խեղճ ու ցած աստի-

ճանի կրթութիւն մը տված ըլլալը, որովհետև բոլոր մյուս պահանջներուն իրագործումը և լավագույն իրագործումը մտքի ու սրտի բարձրութենեն ու լուսավորութենեն է կախված. ինչքան խոր ու բազմակողմանի տեղյակ ըլլա մարդ իր շուրջի իրական պայմաններուն, իր զրկանքին և իր իրավունքներուն, այնքան բարձր ու անզիմադրելի կերպով կպահանջե ու կտիրանա իր իրավունքներուն: Բռնակալությունները և շահագործումները հաստատված են խաբեություններու ու տգիտության վրա: Եվ ճեռք բերված քաղաքացիական իրավունքներեն միայն անոնք իրական արժեք մը ունին, որոնք զարձած են արդեն գիտակից ըմբռնում և հոգեկան պահանջ. իսկ գիտակից վերաբերումն ու հոգեկան մարսված տենչանքները սերտորեն կապված են ուսման տեսակին և աստիճանին:

ՈՒՍՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Մարդուս սորվելիք բաները բնականորեն կբաժնվին երեք տեսակի:

Նախ՝ միայն մտքով սորվելիք բաներ, այսինքն երբ էապես մտավոր կարողություններեն են, որ կաշխատին՝ դիտել, համեմատել, եղրակացնել, խմբել, հիշել, երևակայել, հասկնալ, ըմբռնել, ուր շատ չնչին է համեմատաբար մկաններուն դերը և բոլորովին ծառայական, և այդ դերն է հնարավոր զարձրել դիտելու, ուշադրություն զարձնելու, փորձելու համար անհրաժեշտ եղող շարժումները կատարելը. բուն ու միակ նպատակը մտքի հարստացումն է, իմացական նոր ճեռքբերումները:

Երկրորդ՝ այն տեսակ բաներու յուրացումը, ուր հավասարապես կաշխատին միտքն ու մկանները և կճգտին մտքի ու մկաններու զարգացմանը այս կամ այն ուղղությամբ. մկանները միայն կողմնակի ծառայական օժանդակ մը չեն, այլ բուն գլխավոր դերակատարը և աշխատանքի հիմնական նպատակներեն մեկը. այդպես ալ միտքը միայն այդ շարժումներուն հրամանը տվողը չէ, իբրև կողմնակի անհրաժեշտ գործիք մը, այլ այդ մկանային գործադրությունները խորունկ կապեր ունին նաև մտքի զարգացումին

ու հարստացումին հետ, մտքի աշխատանքներուն ու ձգտումներուն հետ: Այս խումբի բոլոր աշխատանքները կծառայեն մտքերու և զգացումներու արտահայտութեան, այսպես՝ խոսիլ, կարդալ, նկարել, երգել նվագել, այսինքն լեզու ու գեղարվեստ:

Երրորդ՝ այն տեսակի սորվելիք բաներ, ուր բուն նպատակը մկանային որոշ ուղղութեամբ զարգացումն մըն է, ուր մտքի մասնակցութեյունը ավելի ծառայական է, շարժումներուն համար հարկ եղած հրամանները տալը: Անշուշտ այդ հրամանները տալով միտքը որոշ վարժութեյուն ու փորձառութեյուն ձեռք կբերե ինքն ալ, քանի որ ջղային ու մկանային դրութեյունները անխզելի կապված են իրար, և առանց մեկուն մյուսը գործել չի կրնար. մանավանդ մկանները առանց ջղային կեդրոններու հրահանգին հավիտյան անշարժ են. բայց և այնպես մտքի այդ որոշ ուղղութեյամբ շարժումներու ղեկավարութեյան մարզվիլը երկրորդական բան մըն է իրեն՝ մտքին համար. բուն օգտվողը մկանային աշխատանքն է, կարևորը այդ մկանային նրբութեյուններուն տիրանալն է: Այսպես են բոլոր արհեստները և արվեստները, մկանային վարպետութեյուններն ու ճարպիկութեյունները, քալել, ցատկել, զանազան խաղեր, կեցվածք, շարժումներու վայելչութեյուն: Ասոնք և ասոնց նմանները ըստ էութեյան մկանային նուրբ ու բարդ գործածութեյուններ են, նուրբ ու բարդ որոշ հաջորդականութեյամբ:

Եվ ատոնց տիրացումը ընդհանուր անունով կանվանենք արվեստական արհեստ: Կըսենք արվեստ, ինչքան որ շատ ըլլա մեջը մտքի աշխատակցութեյան բաժինը, բացի շարժումները հրամայելեն, ինչքան մեծ ըլլա բուն մտածումի ու արտահայտութեյան բաժինը: Կըսենք արհեստ, ինչքան որ պակսի այդ բուն մտային ու արտահայտական մասնակցութեյունը, ինչքան որ մտքին դերը միայն շարժումներուն հրամայելը մնա: Բոլորովին բացակայում մտքի ու զգացումի անկարելի է. հոգին ամբողջութեյուն մըն է. կարելի չէ որևէ շարժում արտաքին, առանց հոգեկան ներքին կողմերու գոնե թեթև, գոնե երեսանց ու հարևանցի մասնակցութեյան:

Արդ՝ այս երեք տեսակի սորվելիք բաները միասին առած մեկ բառով մը կըսենք «ուսում»: Ուսում ստանալ կնշանակե սորվելիք բաները սորվիլ: Թեև անշուշտ գլխավոր տեղը վարժված ենք տալու մտքով սորվելիք առաջին տեսակի յուրացումներուն,

քիչ մը ավելի նվազ կարևորությամբ կնայինք լեզուներու և գեղարվեստներու վրա, այսինքն հոգեկան արտահայտության ուսումներուն, իսկ մկանային գերիշխանությամբ կատարվելիք յուրացումներուն չատ ավելի դժվարությամբ ուսում անունը կուտանք, կըսենք մարզանք, վարժություն, վարպետություն, շնորհք, բայց անունը չի փոխեր ոչինչ. ուսում մըն են ասոնք ալ:

Այդ ուսումներուն մեկ չատ խոշոր մասը կուտա մանուկին շրջապատող կյանքը, առանց որևէ ծրագրի ու դեկավարության. մասամբ կուտա և ընտանիքը ուզելով ու դիտակցաբար, բայց առանց հաստատ ծրագրի ու կանոնավոր դեկավարության. դպրոցներն են, որ կուգան կարգի բերելու, ամբողջացնելու, որոշ ու հաստատ ծրագրով ու հաջորդականությամբ վերստին կերտելու տղոց՝ տունեն ու դուրսեն ձեռք բերած ուսումներն ու վարժությունները: Եվ դպրոցական ծրագիրներուն մեջն ալ ուրեմն ուսումները բնական կերպով կբաժնվին երեք խումբի. ա) գիտական ուսումներ, բ) արտահայտական ուսումներ և գ) մկանային ուսումներ:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ ԵՐԵՔ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ղեկավար կրթության մեջ ուսման առաջին նպատակն է հետևապես մտավոր պաշարի բազմակողմանի հարստացումը: Երկար դարերու ընթացքին մարդկության կատարած բոլոր կարևոր գիտողությունները, փորձերը, ենթադրությունները, տեսությունները դիզվեր են իրարու վրա. կապվեր են իրարու պատճառական կապերով ավելի խոր մտածող գլուխներու աշխատանքով, հետզհետե լրացվեր են ու դարձեր ամբողջական ուրույն գիտություններ, գիտական ուրույն ճյուղեր: Եվ գիտական ուսման բնականեն գծված նպատակն է այդ բոլոր գիտություններու հիմնական մասերուն, հիմնական ըմբռնումներուն և հիմնական տեղեկություններուն տեղյակ ու գիտակ դարձնել նորահաս սերունդը: Սակայն պաշարի հարստացման ու խորացման այս աշխատանքը միևնույն ժամանակ կմարզե ու կարե բնականաբար անհատներու մտավոր կարողությունները, ինչպես և անոնց ճաշակն ու զգացումները:

Այս բոլոր իրարու կապված, իրարու մեջ մտնող, իրար լուսավորող, իրարմե փոխառություններ ընող և իրարու վրա հենվող

գիտութիւնները հատակութեան համար կրնանք բաժնել երեք խումբի:

Առաջին խումբը կկազմեն այն գիտութիւնները, որ իրերու և իրականութեան վրա գործադրվելիք հաշիվները, համրանքը, չափերն ու կշիռը կուսումնասիրեն, բուն նյութի հետ գործ չունին և ամբողջովին մարդկային մտածումին ու վերացականացումին ծնունդ են, մարդկային տրամաբանական պահանջ և դարձած են բոլոր մյուս գիտութիւններու ուսումնասիրութեան առեն անհրաժեշտ պայման, քանի որ ամեն ինչ թիվով ու հաշվով վարժված ենք արտահայտելու: Այս հաշվական գիտութիւններն են թվաբանութիւնը, հանրահաշիվը, երկրաչափութիւնը, եռանկյունաչափութիւնը, մեքենագիտութիւնը, նույնիսկ տիեզերագիտութիւնը. վերջին երկուքը թեև բնական գիտութիւններ են ըստ էութեան, բայց խիստ մեծ չափերով հենված են հաշվական ուսումնասիրութիւններու վրա:

Գիտութիւններու երկրորդ խումբը բնական գիտութիւններն են, այսինքն ուսումնասիրութիւնը բնութեան բոլոր երևույթներուն և ուժերուն և անոնց բոլոր կողմերուն, մարդն ալ իհարկե մեջը հաշված: Իր գլխավոր ճյուղերն են՝ բնագիտութիւնը, տարրագիտութիւնը, հանքաբանութիւնը, բուսաբուծութիւնը, կենդանաբանութիւնը, բնախոսութիւնը և հոգեբանութիւնը: Բնութիւնը ուսումնասիրող այս բոլոր զուտ գիտութիւնները բոլորն ալ ունին իրենց վրա հենված իրենց գործնական գիտութիւնները և ան ալ քանի մը տեսակի, որոնց մեջ կուսումնասիրվին, թե բնական այս կամ այն երևույթը, ուժը, իրը, բույսն ու կենդանին ի՞նչ ձևով մարդու կողմեն կօգտագործվին, ինչե՞ր կպատրաստեն, ինչո՞ւ կպատրաստեն, ինչպե՞ս կպատրաստեն:

Երրորդ խումբը կկազմեն ընկերական գիտութիւնները, երեք տեսակ ունին: Առաջին տեսակը կուսումնասիրե մարդու հանրային համայնական կողմերը և ստեղծագործութիւնները, առանձին առած, իբրև ուրույն գիտական ուսումնասիրութիւն, ինչպես են պետութիւն, դասակարգեր, կրոն, իրավունք, տնտեսութիւն, արդյունաբերութիւն, կրթութիւն, վարք ու բարք, բարոյականութիւն և անոնց ամեն մեկուն հիմնված հաստատութիւններն ու կազմակերպութիւնները՝ աչքի առաջ ունենալով անոնց ծագումը, կրած

աստիճանական փոփոխությունները, տարբեր տեղերու տարբեր ձևերը մինչև անոնց արդի զարգացման աստիճանը:

Երկրորդ տեսակը խառնուրդ դիտություն մըն է, մեկ ոտքով բնական դիտություններուն մեջն է իր տեղը, մյուս ոտքով ընկերական դիտություններուն մեջը. իր նյութն է մեր այս աշխարհի ուսումնասիրությունը իր տիեզերական դիրքով, իր ներքին ու արտաքին ձևով ու կազմով, իր բերքով ու հագուստով, ինչպես և մարդոց կազմած բաժանումներով, ճամբաներով, արդյունաբերության ուսումնասիրությամբ, մարդկային լեզուներու, կրոններու, պետություններու ներքին կազմի տարբերություններով և այլ ամեն տեսակի մարդկային կազմակերպություններով ու հաստատություններով, այնպես, ինչպես որ այսօր մեզի կներկայանա:

Ընկերական դիտություններու երրորդ տեսակը ընդհանուր պատմություն է, մարդկության կենսագրությունը. ինչպե՞ս առաջացեր են մարդկային ընկերական երևույթները, ինչպե՞ս առաջացեր են մարդկային ցեղերն ու ազգերը, ամեն մեկը ի՞նչ գործեր է կատարած, ի՞նչ քաղաքակրթական վիճակներ է անցած, որո՞նք են իր գլխավոր դերակատար դեմքերը և անոնց կատարած գործերը մինչև մեր օրերը դարե դար անցնելով և հնար եղածին չափ բոլոր վիճակներու և փոփոխություններու ինչուն ու ինչպիսը փնտրելով:

Այս ամբողջությունը ընդհանուր անունով մը կանվանենք ընդհանուր պատմություն, որ երկու որոշ հատված ունի, մեկը՝ ըստ ազգերու և պետություններու կազմության կատարված պատմական ուսումնասիրություններ, որ կրնանք ժողովուրդներու պատմություն անվանել, մյուս հատվածին մեջ կիյնա քաղաքակրթական զարգացման այս կամ այն հատուկ կողմերու պատմական ուսումնասիրությունները առանձին առած, օրինակ՝ առևտուրի պատմությունը նախնական օրերեն մինչև մեր օրերը, ըլլա մեկ ժողովուրդի մը, ըլլա ընդհանուր բոլոր ժողովուրդներու համար. այդպես ալ նկարչության պատմությունը, ղրկանության պատմությունը, պետական կազմության պատմությունը, կրոններու պատմությունը, հանրային խաղերու պատմությունը և այսպես բազմաթիվ:

Հոգիի արտահայտութ֊յան կծառայեն ամենեն առաջ լեզուները և ետքը գեղարվեստները, և գեղարվեստներեն մասնավորապես երևքը՝ բանահյուսութ֊յուն, երաժշտութ֊յուն և նկարչութ֊յուն:

Մարդկային մտավոր զարգացումը, ինչպես և մարդկային ընկերական կյանքը այս աստիճանի բարձրութ֊յան հասնիլ չէր կրնար, եթե մարդը հնարած չըլլար, իր նմաններու հետ հարաբերելու, իր նմաններու մտքերն ու զգացումները հասկնալու և իր դիտողութ֊յունները, դատողութ֊յունները և ներքին ապրումները իր նմաններուն հայտնելու նուրբ արվեստը ձեռք բերած չըլլար, որ լեզու կանվանենք: Եվ լեզուներուն մեջ ամեն մարդու համար ամենեն առաջ արժեք ու կարևորութ֊յուն ունեցողը բնականաբար իր մայրենի լեզուն է, որ ան սորված է իր մոր շրթունքեն կյանքի ամենաթարմ օրերեն սկսած, որ ան լսած է ու խոսած իր ընտանիքին մեջ, իր գյուղին ու քաղաքին մեջ և այն կրթական հաստատութ֊յուններուն մեջ, ուր առած է իր ուսումը: Մեծ է մայրենի լեզվի դերն ու ազդեցութ֊յունը ամեն մարդու հոգեկան կազմին ու զարգացման վրա. ամեն ժողովուրդ տարբեր կերպով արտահայտութ֊յան իր եղանակներն ունի. մայրենի լեզվով մը խոսիլ՝ կնշանակե քու ժողովուրդիդ, քու ընտանիքիդ, քու հայրենակիցներուդ մտածելու եղանակով խոսիլ, անոնց խելքով մտածել: Եվ խոսքը ինքը կզարգանա ժողովուրդի ու անհատի զուգընթաց զարգացումով. գիտական ամեն բարձրացում, գրական ամեն ծաղկում իր հետ կբերե մտածելու և արտահայտելու նոր ու որոշ մշակում, որոշ ձև ու եղանակ, և փոխադարձաբար որչափ լեզուն նրբանա, ճշդվի ու ճկուն դառնա, այնքան գիտական ու գրական արտահայտութ֊յունները հստակութ֊յուն ու խորութ֊յուն կստանան:

Լեզվի ուսումը չավարտվիր սակայն իր ժողովուրդի լեզվի յուրացումով: Ուրիշ ժողովուրդներու գրական ստեղծագործութ֊յուններուն մտնեն ծանոթ ըլլալու ձգտումը, ուրիշ ժողովուրդներու հետ հաղորդակցելու գործնական պահանջը, ինչպես և դրացի և մանավանդ տիրող ցեղերու բռնի կամ ինքնին գործադրված ճնշումը կհարկադրեն, որ գրեթե ամեն տեղ բացի իրենց մայրենի լեզվեն

մարդիկ սորվին հաճախ նաև մեկ, երկու, նույնիսկ ավելի օտար լեզուներ ավելի ու նվազ խորությամբ: Մինչև ժողովուրդի մը լեզուն չնորհքով չդիտնաս, չատ դժվար է այդ ժողովուրդի հոգին ճանչնալը, նույնիսկ եթե այդ ժողովուրդի մեջ ապրիս. կենդանի խոսքի, առօրյա գրություններու և գրականության մեջն է, որ ժողովուրդի մը հոգին իրապես կբացվի:

Մեր հուզումներու, զգացումներու, սպասումներու, ցանկություններու, բառերու միջոցով կատարված կառույցումները, բառերով գծված ու դիմադրված նկարները, բառերով քանդակված արձաններն ու շենքերը, բառերով ներկված բնության նկարագրությունները, բառերով հյուսված երաժշտությունը և բառերով ներկայացված կյանքի ու հոգիի կտորները կանվանենք բանահյուսություն:

Գույներով ու գծերով, արտաքին բնության իրերն ու տեսարանները նմանցնելով մեր հոգին պատմելը, մեր զգացումները արտահայտելը, մեր հուզումները եղանակել կարողանալը կանվանենք նկարչություն:

Իսկ ձայնի ելևէջներով, ձայներու հաջորդականությամբ հոգիին մեջ անցածն ու հոգիին հուզումները պատկերելը, պատմել, զգացնել, ներշնչել ու վարակել կարողանալը կանվանենք երաժշտություն, ամենեն առաջ մարդկային ձայնով, հետո նաև գործիքներով, ժամանակակից աշխարհի համար գլխավորապես ջութակով ու դաշնակով:

Կան ու կրնան ըլլալ բազմաթիվ ուրիշ գեղարվեստներ ալ, որոնք երբեմն իսկապես զուտ գեղարվեստական բարձունքները կհասնին, բայց ընդհանրապես ավելի արվեստ են, քան գեղարվեստ, և վերի գլխավոր երեք գեղարվեստներն ալ երբ պետք եկած չափով ու խորությամբ չըլլան, հոգիի արտահայտությունը կդառնա արվեստ, երբեմն նույնիսկ արհեստ, այսինքն տիրողը կըլլա մկանային աշխատանքը, վարժությունը, կրկնությունը, հետևողությունը կամ կողմնակի հաշիվներ: Գեղարվեստ ընել ուզելը հերիք չէ, գեղարվեստը հոգիեն, զգացումներեն և հուզումներեն պետք է հոսի, ո՛չ դիտավորությենեն: Խելքն ու վարժությունը պիտի գան միայն ներքին մղումին ղյուրություն և հնարավորություն տալու:

Գեղարվեստաներու ուսման մեջ երկու շատ տարբեր կողմեր կան: Առաջինը՝ այս կամ այն հատուկ միջոցով իր հոգին արտահայտել կարողանալը, այսինքն գեղարվեստի մը գործադրութեան տեր ըլլալը, բանահյուսել, երգել ու նկարել կարողանալը կամ գործիքի մը վրա նվագել: Երկրորդը՝ երբ ինքը կարող չէ արտահայտել իր հոգին այդ գեղարվեստով ցանկալի կամ տանելի չափով մը, բայց վարժված է, կիրթ ականջ ունի ու աչքեր, հարկ եղած ճաշակի զարգացումը ձեռք է բերած՝ ուրիշներու կատարած գեղարվեստական արտահայտութիւնները ըմբռնելու, հասկնալու և վայելելու:

Անշուշտ որ առաջինը շատ ավելի դժվար է և շատ ավելի երկար ճիգերու պետք ունի, և լուրջ աստիճանի մը հասնելու համար պետք ունի նաև մասնավոր տրամադրութեան ու հակումի: Երկրորդը ձեռք բերել համեմատաբար ավելի դյուրին է. շատ լսել երաժշտական ընտիր կտորներ, շատ տեսնել մեծ նկարիչներու ու քանդակագործներու ստեղծած գործերը և գեղարվեստական-գրական երկերու հաճախակի ընթերցումը հերիք է ճաշակի կրթութեան ու վայելքի համար:

Թե՛ ընել կարողանալը և թե՛ հասկնալ կարողանալը հաճույքի մեծ աղբյուրներ են, անշուշտ երկու տարբեր տեսակի հաճույքներ, բայց երկուքն ալ մեծ ուրախութիւններ են, կյանքին թեւ ու մխիթարութիւն կուտան և հոգիին երջանկութիւն:

Որոշ չափով մը ամեն մարդ ալ կարողութիւն ունի և՛ բանահյուսելու, և՛ նկարելու, և՛ երգ ու նվագի, և այդ չափով արժեք մըն է, որ ամեն մարդ ալ քիչիկ մը գեղարվեստել կարողանա. ստվար մեծամասնութիւնը ատով գեղարվեստագետ չի դառնար, և պետք ալ չկա այդ ուղղութիւնով ավելորդ ճիգեր ընելու, բայց այդ տարրական կարողանալը ձեռք բերելով, նախ՝ ավելի խոր կհասկնա ու կգնահատե գեղարվեստական աշխատանքն ու երկը, և երկրորդ ալ՝ այդ գեղարվեստական ներքին տարրական ծանոթութիւնը շատ է պիտանի կյանքի առօրյա հոսանքին մեջ և բազմատեսակ այլ աշխատանքներու գործադրութեան ընթացքին և բազմատեսակ խաղերու և զվարճութիւններու ընթացքին:

Գլխավորապես մկաններու աշխատանքով և մկաններու զարկվիճ կրթութիւնամբ մարդու սորվելիք բաները չորս տեսակի են՝ շարժուն խաղեր, մարմնի մարզանք, զանազան ձեռարվեստներ և արհեստներ:

Ասոնց մեկ մասը կսորվինք ու կկրկննենք հատկապես մկանները զործածելու նպատակով, մեր մկանային ուժերը գործադրած ըլլալու բավականութիւնի համար էապես, այսինքն նպատակը ինքը մկանային աշխատանքն է, զանազան խաղեր, շարժում, պտույտներ կկատարենք պարզապես մարմնական մարզանք ունենալու համար:

Ավելի հաճախ այդ խաղերուն, մարզանքներուն և արհեստի աշխատանքներուն վրա մկանային հաճույքեն զատ կան նաև առողջապահական տեսակետներ. արյան շրջանառութիւն, շնչառութիւն, այս կամ այն ուրիշ ներքին գործարանի մը մկաններուն ակտրութիւնը արթնցնելու ցանկութիւն, այսինքն երկու նպատակի կծառայեն միաժամանակ:

Իսկ բազմատեսակ ձեռարվեստները, ինչպես են՝ հյուսել, կարել, բանել, ձևել, փակցնել և մասներու այլ ամեն տեսակի կրթութիւնամբ կատարվող ավելի կամ նվազ կարևոր աշխատանքներ արդեն մկանունքի համար չեն: Այդպես ալ գեղարվեստներու գործադրութիւնի համար հարկ եղած մկանային մասը, ուր նույնպես ձեռքի ու աչքի մկաններն են գլխավորապես գործողն ու կրթվողը: Բայց մկանունքին կրթութիւնը արդեն իրեն մկանունքին համար չէ, այլ մկանունքեն դուրս ուրիշ նպատակի մը իրականացման համար կատարված աշխատանք է:

Ինչպես մտքի ուսումը երբեմն մտքի հարստացման համար է, մտքի ճկունացման ու խորացման համար էապես. ուրիշ անգամ մը ատոր կիյ կերթա նաև գործնական տարբեր նպատակ մը. ուրիշ անգամ ալ մեր ապրուստն ու մեր հացը հանելու մտահոգութիւնեն կղեկավարվի: Ճիշդ այդպես ալ լեզուները և գեղարվեստները երբեմն բուն իրենց նպատակին կծառայեն միայն, այսինքն հոգեկան ներքին աշխարհի և հուզումներու արտահայտութիւնը միայն,

մինչ ուրիշ անգամներ այդ արտահայտությունը կկատարվի որևէ կողմնակի նպատակով մը կամ շահի իբրև աղբյուր:

Ընդհանուր առումով շարժուն խաղերը կուտան հավելյալ կերպով ճկունություն ու ճարպիկություն մարդուս բոլոր շարժումներուն ընդհանրապես, այլև կամքի կրթություն, արագ դատելու և արագ ընտրելու վարժություն, ընկերական զգացումներու ամրացում և փոխադարձ պարտավորություններու ավելի խոր ըմբռնումը:

Մարմնամարզը առողջապահական մեծ կարևորություն ունի միշտ, այլև կեցվածքին ու շարժումներուն վայելչություն կուտա, խմբովին շարժումներու ճաշակը կուտա և այդ շարժումները նուրբ ու զուսպ գործադրելու կրթությունը կուտա:

Ձեռարվեստներուն դերը մեծ է իբրև ամեն տեսակի գեղարվեստներու և արվեստներու գործադրության հիմնական մկանային անհրաժեշտ մասը, այլև ընդհանրապես մատներուն նրբություն կուտա և զգայարանքներուն՝ սրություն:

Արհեստները երբ ուսուցման մեջ կառնվին, ընդհանրապես աչքի առաջ կունենանք նստուկ կյանքի դեմ հակազդելու իբրև միջոց, մտավոր խիստ լարումի դեմ հակադրվող իբրև մկանային աշխատություն, որ միայն խաղ ու վազվզուք չըլլա, այլ ավելի լուրջ բան մը, որով հնարավոր է զբաղվիլ նաև մինակ եղած ժամանակ: Երկրորդ մտածումն ալ «գործնական» է. այսինքն սորվեցնել այն տեսակ բան մը, որ տա մարդուս արհեստներու վերաբերյալ քանի մը հիմնական վարժություն ու ծանոթություն՝ իբրև պիտանի ընդհանուր նախապատրաստական աշխատանք մը իր ապագա ընտրելիք գործին ու ասպարեզին համար:

Գ. ՈՒՍՈՒՄՆԵՐԸ ԱՎԱՆԴԵԼՈՒ ԵՐԿՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

ՊԱՏՐԱՍՏ ՏԱԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Ա. Այս ամեն տեսակի գիտություններն ու գիտելիքները, անոնց գտած ու հանած ամեն տեսակի կանոններն ու օրենքները նոր սերունդին սորվեցնելու և յուրացնել տալու երկու հիմնական ուղղություն կա: Ուսումներու ավանդումը հոգեբանորեն ունի երկու եղանակ՝ պատրաստ տալու եղանակը և գտնել տալու եղանակը:

Բան մը սորվեցնելու առեն ամեն ինչ պատրաստ ու մշակված ձևով ներկայացնել ու յուրացնել տալը ամենեն առաջ ժամանակի մեծ խնայողութիւն է: Փոխանակ զանազան որոնումներով և խարխաբումներով աջ ու ձախ ուժ ու ժամանակ վատնելու՝ կուտաս նոր սերունդին անմիջապես, ինչ որ իմաստուն ու մանագիտ մարդիկ դարերու աշխատանքով, փորձելով ու մտածելով կրցած են դիտնալ, կրնալ, հասկնալ ու ձևակերպել:

Ո՛չ միայն արագութիւն է պատրաստ տալուն առավելութիւնը, այլև իր տվածի կոկ, զեղեցիկ ու նրբորեն ճիշդ ըսված ու ձևակերպված ըլլալը: Բազմաթիվ աշխատավորներ, բազմաթիվ ձևերով արտահայտած, ճշդած ու արբադրած են միևնույն բանը, մինչև որ տարազի մը, օրենքի մը, բացատրութեան մը ձևակերպումին մեջ խտացույցեր ու կաղապարներ են իրենց գիտցածը:

Ուսման բոլոր առարկաներու չնորհքով դասագրքերը այդ տեսակի խնամված խտացումներ են, մաքրված ավելորդ չեղումներեն, ամեն ինչ համաչափ ու զեղեցիկ դասավորված իրենց տրամաբանական հաջորդականութեամբ: Այս պատճառով ալ ուսուցման օժանդակ գրքերու միջոցով և ուսուցչի շրթունքեն խնամքով ավանդվող դասերը կրթական մեծ ուժ ունին իրենց մեջ. ատոնք աքանչելի օրինակներ են մարդկային մտածման ու արտահայտութեյան, որոնք կվարժեցնեն չիտակ ու զեղեցիկ դատելու և մտածելու կերպերուն և կուտան ճիշդ, նուրբ ու գիտական արտահայտութեյուն ձևռք բերելուն արվեստը:

Այս անհատական-անձնական օգուտեն կբղխի նաև ուրիշ և նորեն չատ կարևոր ընկերական օգուտ մը: Նույն աղբյուրներեն ու նույն ձևակերպումով յուրացնելու, ինչպես և նույն ձևով ու նույն եղանակով մտածելու և արտահայտելու վարժված ըլլալը մարդկային անհատներուն հոգիները կմոտեցնեն իրարու, կվապն իրարու: Մարդիկ կդառնան դաղափարակից, նույն մտածելակերպը ունեցող, նույն լեզուն ու արտահայտութեյան ձևերը գործածող, որով իրարու ավելի կհավնին, ավելի կհամակրին, չեչտված կերպով կզգան, թե իրարու համարժեք են, իրարու հավասար: Միևնույն բանները միևնույն կերպով պատրաստ առացած ու իր գլխուն մեջ տեղավորված ըլլալը կդառնա մերան մը, որ մարդոց ընկերական զգացումները կմակարդի նույն հակումներով, որով հոգիները ավելի

մեծ դյուրութեամբ կմիանան իրարու, կգործակցին իրարու, կձեռնարկեն միասին հավաքական գործունեութեան: Որովհետև խմբական աշխատակցութիւնը կպահանջէ, որ մասնակցողները իրար գնահատեն, իրարու վրա հավատք ունենան, իրարու մտածելակերպին հավնին, նույն ըմբռնումներով և նույն հակումներով խմորված ըլլան:

Բ. Սակայն այս երեք կարևոր առավելութիւններն ալ ունին իրենց հակառակ կողմը. կյանքի մեջ ամեն ունակութիւն երկսայրի է, ամեն գոգավորում իր ետևի կողմը այտուցք մը կառաջացնե:

Ուսումը պատրաստ տալու եղանակին մեջ ինչ որ արագութենեն կշահինք, խորութենեն կտուժենք: Ուրիշներու մտածած, ուրիշներու ձևակերպած, ուրիշներե պատրաստ ստացված բանները ընդհանրապես իրերու խոր ըմբռնումը չեն տար հոգիին, շատ անգամ երեսանց կըլլան և ավելի ալ դյուրութեամբ կմոռցվին: Ջմոռցված ու մնայուն մասերն ալ սովորաբար չեն գնահատվիր իրենց իսկական արժեքով. շատ բան իրենց արժեքեն կկորսնցնեն դյուրին, պատրաստ կամ անճիշդ ստացված ըլլալուն համար: Շատ բան ալ, ընդհակառակը, մեծ, կարևոր ու խրթին կթվի, իր արժեքեն բարձր գնահատանքով, որովհետև լավ չէ մարսված, և հստակ յուրացնել չենք կրցած ուրիշներուն մտածած ու ձևակերպած իմաստութիւնները:

Ինչ որ արտահայտութեան ու խմբագրութեան կոկ ու մշակուն վերջնական ձևեն կշահինք, ինչ որ մտածելու և դատելու որոշ պատրաստ եղանակներեն կշահինք, մեր մտքի բնական ու ինքնուրույն աշխատելու վարժութենեն կտուժենք: Ամեն բան պատրաստ ու կաղապարված ստանալը այս կամ այն չափով կկասեցնե մեր մտքի որոնող լարումը:

Եթե ուղղակի գոց ընել կուտանք դասագրքի և ուսուցչի ըսածներն ու բացատրութիւնները, տղաքը բոլորովին կկորսնցնեն բնական ու ընկերական երևույթները դիտելու և վերլուծելու սովորութիւնը: Իրենց ամբողջ կյանքին մեջ ամեն մտածում ու կարծիք ուրիշներեն կսպասեն և թութակի պես կսիրեն կրկնել ուրիշներուն ըսածը:

Իսկ հոն, ուր ուղղակի գոց ընել չեն տար և բարեխիղճ կերպով կջանան բացատրել և ամբողջ նյութը լիովին ըմբռնել տալ, բայց

միշտ ուսուցումը կտանին պատրաստ տալու եղանակով, ասոնք ալ կտկարացնեն ու կքնացնեն աշակերտներուն մեջ ո՛չ թե դիտութիւնն ու գաղտղութիւնը ընդհանրապես, այլ ինքնուրոյն դիտելու, իր խելքով գաղտելու, իրերուն ու երեւոյթներուն վրա ազատ ու անկախ կերպով մտածելու սովորութիւնն ու ընդունակութիւնը, որ սակայն բոլոր իսկական ստեղծագործութիւններուն, գյուտերուն ու բարձրացումներուն հիմնական պահանջն է:

Ամեն ինչ ամեն կողմե պատրաստ ու նույն չափած-ձևած կերպով ստացումը, եթե մեկ կողմեն զոդող ընկերական կապ կղառնա և նպաստ մըն է ընկերական համագործակցութեան, մյուս կողմեն ալ սակայն կմաշե մարդոց անհատական ձեռներեցութիւնը, կպակսեցնի անձնական թափը: Տևականորեն ուրիշներուն պես ըսելու, ընելու և ըլլալու սովորութիւնը կկուտրե ինքնաբուխ և ինքնուրույն հոգեկան շարժումներուն պահանջն ու կարելիութիւնը, հոգիներու խլզակ ու ինքնաբեր թռիչքը կնվազի ու կնվազի: Ինչ որ կշահինք ընկերական տեսակետեն, կկորսնցնենք անհատական խոյանքեն:

ԳՏՆԵԼ ՏԱԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Ա. Ամեն ինչ պատրաստ տալու այս խոր ստվերոտ կողմերն են, որ դրդեր են ու կդրդեն կրթութեյան գործով զբաղվող մարդիկը նոր ուղիներու որոնումին: Եվ բոլոր հին ու նոր հնարված կամ ցանկացված ուղիները բոլորն ալ կտանին միևնույն տեղը, կհասնին միևնույն եզրակացութեյան, կուզան ուսուցման գտնել տալու սկզբունքին:

Ո՛չ թե ամեն ինչ պատրաստ տալ, չափած, ձևված ու վերջապես խմբագրված, այլ ընդհակառակը, այդ ամբողջ աշխատանքը ծայրե ծայր աշակերտներուն կատարել տալ: Աշակերտը ինքը դիտե իրերն ու երևույթները թե՛ բնական, թե՛ ընկերական. աշակերտը ինքը համեմատե, փնջե ու եզրակացութիւններ հանե. ինքը գտնե ու ձևակերպե օրենքներն ու կանոնները. ինքը հետզհետե այդ ամենը կապակցե իրարու ու ամբողջացնե, համադրե: Ամեն բան աշակերտը ինքը իր ջանքերով, իր որոնումներով ձեռք բերե: Ուսուցչի դերը կղառնա դեպի այդ աշխատանքները դրդելը, զուցե հոս ու

հոն թեթևակի օգնելը, հսկելը, այսինքն վերեն ու հեռվեն ղեկավարելը:

Այս սկզբունքով կատարվող ուսուցման եղանակին ունեցած առավելությունները բացահայտ են:

Մարդուս ամենեն սիրած բանը միշտ, բայց մանավանդ հասունցող տարիքին, եռանդով ու կարողություններով հորդող օրերուն մեջ, ամեն բան ինքը ընելն է, ըլլա մարմնով, ձեռքով, խելքով թե զգացումով: Ինքը ընե, ինքը փորձե, ինքը գտնե ու գտնելը ո՛չ միայն հաճելի ու դրավիչ, այլև ամենեն պտղատու բանն է ամեն մարդու համար: Ինքը դիտե ու մտածե, ինքը գտնե ու չինե՝ կնշանակե զգայարանքներու զարգացում, մտքի ու դատողության զարգացում, զգացումներու ու ճաշակի զարգացում, այսինքն հոգեկան կարողություններու սրում, բացում ու բարձրացում: Մյուս կողմեն ալ՝ իր ըրած, իր մտածած, իր գտած ու հասկցած բաներն ալ մարդուս հոգիին մեջ խոր կնստին, ո՛չ կմոռցվին, ո՛չ կկորսվին: Եվ վերջապես իր ջանքերով ու անձնական ճիգերով ձեռք բերված բաներն են, որ հոգիին կողմե հատկապես կզնահատվին. այդ տեսակի բաներուն է, որ ամենքս ալ մասնավոր սեր ու արժեք կուտանք:

Հետո, քու դիտած, քու գտած, քու փնտրած բաներդ բնական կերպով կկատարես քու շնորհքիդ, քու հակումներուդ, քու կարողություններուդ ու քու առանձնահատկություններուդ համեմատ, այսինքն գործադրելով քու անհատական գծերդ ու քու անձնական հոգեկան կապերդ: Իսկ այդ սեփական գծերու ու կողմերու տևական գործածությունը հետզհետե կուժեղցնե ու կամրացնե քու անձնական մասնավոր կողմերդ ու կարողություններդ. ատով ալ օր օրի շեշտած ու մշակած կըլլաս քու անհատականությունդ:

Եվ միևնույն ժամանակ հավատք ու վստահություն կտանաս քու անձիդ արժանիքին, քու ունեցած կարողություններուն և քու անհատականությանդ շնորհքներուն և առավելություններուն վրա: Ձեռք կբերես ինքնագիտակցություն և ինքնավստահություն, որ թանկագին զգացում մըն է և սուր խթան մը ամեն տեսակի ձեռնարկություններու և ամեն տեսակի ստեղծագործություններու մեջ:

Բ. Ասոնք բոլորն ալ առավելություններ են, որոնց արժեքը

չափազանց բարձր է թե՛ կյանքի մեջ հաջողելու տեսակետեն և թե՛ գիտական ու գեղարվեստական բարձրացման և ստեղծագործության տեսակետեն: Սակայն այս բոլոր առավելություններն ալ ունին նորեն անխուսափելի կերպով իրենց կապված թերություններն ու դժվարությունները:

Նախ և առաջ կան նյութերու ընդարձակ տեսակներ, որ վինտրել ու գտնել տալու եղանակով ուսուցանել կարելի չէ, պետք է սկզբեն պատրաստ տրվին՝ վերջը քննության ու վերլուծության ենթարկվելու համար. այսպես են կատարված իրողություններու պատմությունները, գրական ու գեղարվեստական ստեղծագործությունները և լեզուներու ուսուցումը: Այլև բոլոր գիտություններու մեջ ալ կան որոշ մասեր, տեղեկություններ և իրողություններ, որոնք մարդուս անձնական գիտողության ու դատողության ենթակա դառնալ կարողանալու համար նախ պետք է իրենց հիմնական կողմերով պատրաստ ստացվին:

Կան նաև շատ մը հարցեր, փորձեր և իրողություններ, որոնք թեև կրնան ենթարկվիլ աշակերտներու քննության ու որոնումներուն սկզբունքով, բայց գործնականապես կապված են այնքան անհարմարություններու, դժվարություններու, երբեմն նույնիսկ լուրջ ծախքի ու վտանգի, որ ուսուցման գտնել տալու եղանակը կդառնա անցանկալի կամ անգործնական:

Ասկե զատ, մեր ազգի ուսուցումը հիմնված է հավաքական աշխատանքի վրա, շատ մը աշակերտներ միասին ու միաժամանակ կսորվին նույն դեկավարի ձեռքին տակ: Ինչ որ մեկ աշակերտի մը հետ դյուրին ու հաջող է դիտել, դատել ու ընել տալը թե՛ բնության և թե՛ ընկերական կյանքի իրականության հանդեպ, շատ ավելի մանրամասն ու բծախնդիր կերպով կդառնա բարդ ու անհարմար և չափազանց ժամանակ վատնող հավաքական աշխատանքի համար: Որով կհարկադրվինք որոշ սահմանափակումներու, որոշ կրճատման, որոշ զիջումներու ենթարկել ամեն ինչ գտնել տալու մեր ցանկությունը, որովհետև առաջ կուգա առողջ սկզբունք մը չափազանցության ու ձևականության չվերածելու պահանջը:

Ծայրահեղությեն զգուշանալ կպահանջե նաև հարցի ընկերական կողմը: Անհատական գծերն ու անհատական կարողությունները զարգացնելը շատ կարևոր հարց է անշուշտ, բայց երբ

պետք եղած չափը անցնինք, դյուրին կդառնա անճնասիրութիւն, եսասիրութիւն, ինքնահավանութիւն: Ձեռներեցութիւնը կդառնա ուրիշներու մասին չմտածել, հրել ամենքը արմունկներով իրեն ճամբա բանալու համար: Այսինքն կտկարանա նոր սերունդին մեջ հավաքական գործունեութեան սերն ու հակումը, կթուլնա ընկերական զգացումն ու ոգին, որ չարիք մըն է մանավանդ մեզի նման ժողովուրդի մը համար, որ քաղաքական կյանքե ու պետութենե զուրկ ամբողջ աշխարհի երեսին ցրված՝ ստիպված ենք մաքառելու մեր ազգային-հավաքական գոյութեան համար: Անհատական ձեռնարկներու մեջ հայը հաջող է ընդհանրապես, մեր հանրային ձեռնարկներն են ավելի խեղճ, անգործնական ու անօգնական:

Եվ վերջապես դպրոցական կյանքը կպահանջե որոշ չեղում ամեն ինչ տղոց ընել ու դտնելու սկզբունքեն նաև ուրիշ բնական պատճառով մը: Ինչպե՞ս կարելի է զրկել աշակերտները ուսուցիչներու կենդանի խոսքեն ու ոգևորութիւնեն. անոնց պատմելու, նկարագրելու ու բացատրելու ձևերեն, անոնց հոգիին թափեն ու շնորհքեն: Անոնց համոզումներուն ուժը, անոնց սերն ու հափշտակութիւնը իրենց ըսածին ու պատմածին՝ մեծ վարակիչ արժեքներ են. հանցանք է, եթե չօգտագործենք այդ թանկագին օրինակները ամեն ինչ տղոց ընելու տալու պատճառաբանութեամբ:

ԵՐԿՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՀՅՈՒՍՔԸ

Ա. Մինչև հիմա դպրոցներուն մեջ տիրող եղած է և հիմա ալ է ուսուցման պատրաստ ավանդելու եղանակը:

Կարելի է ըսել, որ դասավանդման մեր արդի ձևին մեջ աշխատանքին ամենեն կրթող ու զարգացնող մասը ինկած է ուսուցիչներուն վրա: Ան է, որ կմտածե, որ կպատրաստե, որ կդասավորե, վերջն ալ կըսե ու կբացատրե աշակերտներուն, և ան է, որ իսկապես կսորվի ու կկատարելագործվի: Աշակերտները ընդհանրապես լուռ ու մունջ են ու կլսեն առավել կամ պակաս կեդրոնացումով, հաճախ ցրված մտքով և կիսով ուշադիր: Եվ շատ անգամ ալ բոլորովին բացակա հոգով. իրենց մտածումները դուրսերն են, ուրիշ տեղեր: Լավագույն պարագային աշակերտներուն ըրածը ավելի կամ պա-

կաս հաջողությամբ վերապատմել մըն է ուսուցչի խոսքին կամ դասագրքին մեջ ըսվածին:

Ասիկա դասավանդման կրավորական ձևն է, այսինքն աշակերտներու հոգևկան ճիդն ու աշխատանքը հասցուցած ենք նվազագույնին: Եվ ատոր համար ալ եռանդն ու ոգևորությունը պակաս է միշտ աշակերտներուն մեջ, և իր սորվածի հանդևպ ունեցած հետաքրքրությունն ալ՝ շատ ժժգույն ու թոշնած: Կերպ մը, բաներ մը կսորվին, որովհետև ծնողները ղրկած են ղպրոց և ամեն կողմեն կպահանջեն: Շատ բացառիկներն են, որ կսորվին սորվելու հաճույքին համար, իրենց ուժերն ու կարողությունները գործադրած ըլլալուն համար, իրենց մտքի հորիզոններուն լայնացումը զգալնուն համար, իրենց հոգևկան բարձրացումը դիտակցելնուն համար: Ուսուցումը այս եղանակով կարծես ավելի բևռ մըն է միայն ու ակամա պատրաստություն մը մեր հասունցող սերունդին համար:

Այս ճանապարհով մենք կհասունցնենք միշտ ուրիշին ենթարկված սերունդ մը, որ ինքը վարժված չէ իր խելքով, իր ձեռքով և ինքնուրույնաբար գործելու, միշտ ուրիշի ըսածին կնայի, պետք ունի միշտ թևեն բռնողի մը: Թևև, թռիչքն, նախաձեռնությենե ու վստահությենն զուրկ սերունդ մը: Եվ այս քիչ հետաքրքիր, անմասնակից, անարի ու ենթակա ուսուցման ձևը մեկն է անշուշտ այն գլխավոր պատճառներեն, որոնք մեր արդի պատմության ստվար մեծագույն մասը կհրեն ուսումեն ու հոգևկան զարգացումեն հեռու և, ընդհակառակը, կմղեն դեպի ամեն տեսակի մարմնական խաղերն ու սպորտները, վազքերն ու կռիամարտիկները: Թարմ հոգին չարժում կուզե, գործոն մասնակցություն ամեն բանի մեջ և անհատական ուժերու գործադրում:

Պատրաստ տալու ձևով ուսման այդ խոչոր թերություններու դեմ է, որ կծառանա ուսուցման երկրորդ եղանակը, որ հետզհետե կպահանջվի կրթության գործին մեջ «անհատականություն», «ինքնապաշտպանություն», «ձեռներեցություն», «անձնական որոնում», «անձնական ճիդեր», «ամեն մեկը իր ձևով», «ազատ թափով» և «գործելով, գործադրելով, գործնական»:

Եվ այս դատողություններեն կծնին ավելի կամ նվազ հանդուգն փորձեր ու ծրագիրներ, որոնք այլևս չեն սղմիր մեր արդի դպրոցներուն մեջ: Մեր արդի մեծ խումբերով կատարվող ուսու-

ցումը տեսակ մը անհատական կամ մանր խմբական գործակցութեան կվերածեն անտառներու, պարտեզներու և ընդարձակ կալվածներու մէջ, ուր անվար կրթութիւնն ու ղեկավար կրթութիւնը կշփոթվին իրար, և ուր ուսուցիչները քիչ կմնա, որ ղեկավարողն դառնան իրենց աշակերտներեն ղեկավարվող մը: Ծայրահեղութեան դէմ եղած բողոքը ծայրահեղութիւն կծնի:

Թե՛ պատրաստ տալու եղանակը և թե՛ գտնել տալու եղանակը իրենց ուրոյն ու զուտ վիճակին մէջ երկուքն ալ միակողմանի են, ամեն մեկը իր առավելութիւններով ու թերիներով: Առողջ ուսուցումը ո՛չ թե մեկուն կամ մյուսին լրիվ ժխտումն է, այլ այդ երևույթի լավագույն կողմերուն միասին հյուսքը, այդ երկու հիմնական սկզբունքներուն ձեռք ձեռքի գործակցութիւնը:

Ուր հնար է ու հարմար անշուշտ տղուն ընել, դիտել ու գտնել տալով, տղու որոնումներով ու նախաձեռնութեամբ: Ուր որևէ պատճառով մը անկարելի է, անբնական կամ տված օգուտեն ավելի ժամանակ կվատնե ու բարդութիւններ կստեղծե կամ իր կենդանի խոսքով թափ ու խորք տալ կուզե դասին, ուսուցիչը կանցնի իսկույն պատրաստ տալու եղանակին:

Կարևորն ան է, որ տղան մարզված ըլլա ինքնուրույն մտածելու, չորս կողմը դիտելու, փորձեր ընելու ու որոնելու: Կարևորն ան է, որ վարժված ըլլա իր հույսը իր վրա դնելու, իր ուժերն ու կարողութիւնները գործածելու, իր անհատականութիւնն ու իր ինքնաշխատութիւնը արժեքավորելու:

Երբ այս խնամքը տարված է և մշտական լուրջ հոգածութեան առարկա է ուսուցման ակտիվ եղանակը, ալ աւելի անդին ամեն ինչ ու միշտ միայն այդ ուղղութեամբ տանելու ճգտումն ու առաջարկը կդառնա ավելորդ ու վնասակար ձևապաշտութիւն և անիրագործելի մոլեռանդութիւն մը:

Բ. Եվ վերջապես պետք չէ մոռնանք՝ ինչպես գտնել տալը, այդպես ալ պատրաստ տալը ամեն տեղ միևնույն ձևով, միևնույն աստիճանը չունի:

Տղուն գտնել տալու զանազան ձևերը կրնանք չորս իրարմե լավ տարբերվող աստիճաններու բաժնել:

1. Կձգտենք, որ տղան ինքն իր ներքին պահանջով սկսի դիտել, փնտրել ու գտնել: Ո՛չ դրդում կուտանք, ո՛չ ալ որևէ օժան-

դակութիւն. միայն կ՚ըսեմ՝ այն տեսակ պայմաններու ու շրջապատի մէջ դնենք տղան, որ կրնայ ստանալ այդ դրդումը: Եվ տղան ինքը պահանջ զգա մեր խորհուրդին ու վավերացման իր աշխատանքի որոշ կողմերուն համար: Մեր դեկավարութիւնը այս աստիճանի վրա կղառնա չափազանց նուրբ, չափազանց հեռատես, և ինքը պիտի քալե աշակերտին հետևէն:

2. Մեր որոշումով ու մեր ընտրութեամբ հարցն ու նիւթը կդրվի մեջտեղ և մեր տված քանի մը խորհուրդներուն հետ կթողնենք ազատ, որ տղան երթա դիտե, փնտրե, փորձե և եզրակացութիւնը ձևակերպած բերե մեզի, որ միասին քննութեան նիւթ դարձնենք: Այսինքն ուսուցչին տվածը նիւթն է, նիւթերուն համաչորդականութիւնը և վերջնական վավերացումը, կարելի է որոշ հղկում: Բուն աշխատանքը ամբողջովին ու ազատորեն տղուն վրա է, ինչպես և իր ըմբռնումին պաշտպանութիւնը:

3. Ո՛չ միայն նիւթերուն ընտրութիւնն ու համաչորդականութիւնը կուգա ուսուցչեն, այլև աշխատանքը վարելու որոշ խորհուրդներ, քանի մը մատնանշում, սահմանագծում բռնվելիք ուղղութեան: Եվ վերջն ալ տղու հավաքած նիւթերուն մշակումը իր ընկերներու ալ հավաքած նիւթերուն ու եզրակացութիւններուն հետ զուգադրելով, ուր ուսուցիչը դեկավարողի դերը կկատարե:

4. Ինչպես նիւթերուն ընտրութիւնը, այնպես ալ ամբողջ նիւթին մշակումը կկատարվի ուսուցչին հետ: Ուսուցիչը ծրագրողն է, հարցերը տվողը և խոսքը վարողը, բայց դիտելու, դատելու, փորձելու, արտահայտելու ու վերջնական խմբագրութեան ամբողջութիւնը կմնա աշակերտներուն վրա:

Պատրաստ ստանալու եղանակն ալ կրնանք նորեն չորս գլխավոր աստիճաններու վերածել:

1. Գտնել տալու եղանակին ամենեն ավելի մոտիկ կուգա, երբ տղուն տված ենք դրվածք մը, կարծիք մը, տեսութիւն մը քննելու, վերլուծելու, հանելու ճիշդն ու անճիշդը, թերին ու առավելութիւնները: Այսինքն իր արդեն ձեռք բերած դիտողութիւններն ու դատողութիւնները համեմատութեան դնել կուտանք հեղինակի մը ըմբռնումին, մտածումին ու ձևակերպումին հետ: Ուսուցչին դերը քննվելիք նիւթերը ընտրելն է՝ ամեն աշակերտի չնորհքը, ճաշակն ու հակումը աչքի առաջ ունենալով: Եվ վերջն ալ թե՛

տղու խմբագրած աշխատանքը և թե՛ ամբողջ հարցը ամբողջ դասարանի քննութեան առարկա դարձնելն է, ու քննադատողը կամ վերլուծողը իր բոլոր հայտնած կարծիքները ստիպված է փաստերով և ապացույցներով պաշտպանելու:

2. Պատրաստ ստացումը շատ ավելի կչեչտվի, երբ ուսուցիչը տված է տղուն մեկ կամ քանի մը աղբյուրներ, որոնց մէջեն պետք է հանեն որոշ հարցի մը պատասխանը, որոշ խնդրի մը էութիւնը, որոշ տեսութեան մը, օրենքի մը, ըմբռնումի մը ձևակերպումը: Ինքը տղան իրմեն նոր բան մը չունի դիտելիք կամ ըսելիք. իր ըսելիքը ըստ էութեան կա արդեն իրեն տրված աղբյուրներուն մեջ: Իր կատարելիք աշխատանքը դուրս հանելն է արդեն եղածը: Բայց ամենը հանել փնտրտուք կպահանջե, դատել և ստուգել, խորքի իսկականը գտնել ու ձևակերպել: Այս ջանքերուն մեջն է, որ կսրվի տղուն անհատականութիւնն ու ինքնիշխանութիւնը:

3. Ինքնութիւնն ու որոնումը ավելի կնվազի, երբ տղուն տված ենք հոդված մը, գլուխ մը, կտոր մը, որուն հիմնական մտքերն ու գաղափարները պիտի հանե ու կապակից ներկայացնե մեզի: Աշխատանքի գործոն ու անհատական տարրը ընտրելուն ու գատելուն մեջն է գլխավորապես:

4. Պատրաստ ստացումը կհասնի իր լրիվ չափին, երբ կպահանջվի, որ տղան ուսուցչի բերնեն լսածը կամ դասագրքին մեջ կարդացածը հասկցած ըլլա ու մեզի կրկնել կարողանա: Կհասնի իր հիվանդ ու ծայրահեղ աստիճանին, երբ կպահանջենք, որ իր լսածն ու կարդացածը նույն հաջորդականութեամբ, գրեթե նախադասութիւն-նախադասութիւն մեզի ըսել կարողանա՝ առանց ուշադրութիւն դարձնելու, թե տղան ինչ աստիճան հաստակութեամբ մարսած է իր սորվածը և ինչ չափով շիտակ կհասկնա:

Այս բոլորեն պարզ է, որ գտնել տալն ու պատրաստ տալը այդպես դյուրին մեկ զարկով իրարմե գատել չենք կրնար: Երկու եղանակներն ալ իրենց տարբեր խտացումներն ու ձևերը ունին: Եվ այս բոլոր աստիճաններուն վրա ալ թե՛ գտնել տալու, թե՛ պատրաստ տալու զանազան ձևերը հաճախ իրարու կհաջորդեն կամ իրարու կփաթթվին:

Պատրաստ տալու մէջողին չարաշրջական աշխատանքներ կան, քերականական կամ այլ վարժութիւններ կան, հաշվական

խնդիրներ կան, դասեւիք կամ ընեւիք բաներ, ուր կրաւորական ուսուցումը ներգործական կդառնա: Եւ ընդհակառակը, գտնել տալու միջոցին ալ, երբ աշակերտը քիչ մը ավելի ենթարկվի իր աղբյուրներուն, իր ուսուցչին կամ ուրիշներու դատողութեանը, առանց նկատելու բռնած կըլլա պատրաստ ստանալու ճամբան:

Բիչ մը խորը նեթե դիտենք, ուսուցման մեջ այդ երկու ավանդման եղանակները առաջ կերթան թեւ թեւի:

Դ. ՆՅՈՒԹԵՐՈՒՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՄԱԿԵԴՐՈՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՎ

Դպրոցական ընդհանուր կրթութեյան տասներեք-տասնչորս տարիներու ընթացքին ուսման բազմատեսակ խմբերուն ու տեսակներուն ո՞րը առաջ պիտի ավանդենք և ո՞րը վերջը, ի՞նչ կարգով:

Հիմնական տեսակներուն համար առաջ ու ետ չկա. պիտի սորվեցնենք բոլորը միասին՝ բոլոր հիմնական գիտութեյունները, բոլոր հիմնական դեղարվեստները և հիմնական մայրենի լեզուն, պիտի ավանդենք զարգացման բոլոր շրջանակներուն մեջ և բոլոր տարիներուն:

Եթե քիչ մը ուշադրութեյամբ դիտենք, ինչ որ կկատարվի կյանքի մեջ բնական ճանապարհով, միակ ուղին ատ է. զուգընթաց ուսուցումը բոլոր հիմնական ուսումներու, անընդհատ, հասունացման բոլոր տարիներուն:

Ամեն գիտութեյուն, ամեն դեղարվեստ և ամեն լեզու ունին մասեր, կողմեր և խնդիրներ, որ պիտանի ու հասկնալի են կյանքի ամենաթարմ տարիներու մեջ ալ. կան մասեր ու նյութեր, որ հարմար են զպրոցական տղայական տարիքին. ամեն ճյուղերու մեջ ալ կան բաներ, որ կպահանջեն արդեն բացված միտք, ավելի մարզված դատողութեյուն և ուշադրութեյան ավելի համառ կենդրոնացում, որ պատանեցման տարիներեն առաջ սորվեցնելը և՛ դժվար է, և՛ վաղահաս: Իսկ հաջորդ պատանեկան տարիներուն հետաձգելն ալ կարելի չէ. պետք է հաջորդ աստիճանի յուրացումներուն համար իբրև հիմք:

Ուրիշ խոսքով՝ ուսման բոլոր տեսակները պիտի ավանդվին իրարու հաջորդող բոլոր շրջաններուն ու տարիներուն մեջ ալ՝ նյութերուն երբեմն այս, երբեմն այն մասը առաջ քաշելով, տարվե

տարի տղոց արդեն գիտցածը լայնացնելով, լրացնելով, խորացնելով և ամբողջացնելով, ուրեմն բոլոր տեսակները միշտ իրարու կից և իրար զուգընթաց: Ուսման նյութերու դասավորության այս եղանակն է, որ կանվանենք ուսուցում համակեդրոն շրջանակներով:

Կեդրոնական կետի մը շուրջ քաշված է շրջանակ մը, այդ շրջանակին մեջ ուսուցման բոլոր տեսակներեն կան նյութեր, մասեր ու հատվածներ, որ պետք է ուսանին տղաքը առաջին մեկ-երկու տարիներու ընթացքին: Վերի կեդրոնական նույն կետեն քաշված է ավելի լայն շրջանակ մը, որուն մեջ կերկարին ու կշարունակվին նախորդ բոլոր տեսակները՝ բնականաբար ամեն մեկը ավելի լայն տեղ գրավելով, քանի որ մեծցած է շրջանակին տարածությունը. նորեն մեկ-երկու տարիներու ուսանելի նյութերն են ասոնք: Նույն կեդրոնին շուրջ քաշված հաջորդ զուգահեռ շրջանակներուն մեջ կերկարին ու կծավալին միշտ բոլոր նախորդ ուսման տեսակները հետզհետե ավելի լայնանալով, մինչև հասունացման տարիներուն վերջը: Եվ բարձրագույն ըսված կրթությունն ալ վերջիվերջո մեկ կամ երկու աստիճանի լայնացումով նոր շրջանակներ են նույն կետին շուրջը, ուր մյուս տեսակներու ավանդման տեղը բաց է ձգված՝ միայն մեկ-երկու ճյուղերու զարգացմանը նվիրելով իր ժամանակը:

Ասիկա է ուսման նյութերու դասավորության բնական ընթացքը: Այս ձևով կգործե կյանքի բնական անվար կրթությունը, և այս ձևով է իր նյութը բաշխելու ղեկավար ուսումը հասունացման տարիներուն վրա: Միայն պետք չէ իյնալ մեկ ծայրահեղությենեն մյուսը, և առաղջ սկզբունքը պետք չէ դարձնել մեքենականություն: Համակեդրոն շրջանակներով ուսուցանել չի նշանակեր տարին տարիի հետևե միևնույն բաները կրկնել դիցուք քիչիկ մը ավելի մանրամասնություններով: Օրինակ՝ լեզվի մը քերականությունը. այո՛, ամեն տարի կխոսվի ու պիտի խոսվի այդ լեզվի օրենքներու և առանձնահատկություններու մասին, ամեն տարի ալ խոսքի կուգան և՛ անուններու ուսումնասիրություն, և՛ բայերու, և՛ նախադասության ուսում, և՛ բառակազմ, բայց ո՛չ քերականության նույն օրենքները և բոլոր օրենքները ամեն տարի: Կանոններ ու վարժություններ կան, որոնք առաջին տարիներուն համար են. հաջորդ շրջանի տարիներուն մեջ քերականության տարբեր կողմերը կուգան

ուսման, քերականական բազմատեսակ ըմբռնումներ և խորացումներ կան, որ միայն ուսուցման վերջին տարիներուն կուգան լրջորեն խոսքի և ուսումնասիրության: Այս հաջորդական բաշխման ընթացքին կրնա պատահիլ անշուշտ, որ որոշ կողմեր, օրենքներ ու դեպքեր տարիներու ընթացքին մեկ-երկու անգամ քննության առնվին՝ ամեն անգամ մոտենալով հարցին բոլորովին տարբեր տեսակետե կամ տարբեր խորությամբ: Տղոց հոգեկան հասունությունը և նյութերու ներքին առանձնահատկություններն են, որ կորոշեն նյութերու բաշխումին գործնական մանրամասնությունները:

Ասով ալ արդեն կհասնինք նյութերու հաջորդական դասավորության երկրորդ հիմնական սկզբունքին: Ամեն չրջանի ու ամեն տարվան ուսման նյութերու ընտրությանատեն պետք է ղեկավարվինք տղոց տարիքի դրած պահանջներով, որ և միակ բնական ու առողջ ուղին է, եթե տղոց հոգեկան կարողություններու բնական զարգացումը խանգարել ու խաթարել չենք ուզեր, եթե տղոց միտքն ու ուշադրությունը պետք եղածեն ավելի լարել ու վնասել չենք ցանկար և եթե ղրկել չենք ուզեր տղաքը իրենց ուժերու բնական գործադրությամբ ստացված բավականութենեն ու հրապույրեն:

Հասունացման տարիներուն տղոց մտավոր զարգացումը աստիճանական բնական բացում մը ունի, որ պետք է ուշադրությամբ աչքի առաջ պահվի միշտ: Առաջին չրջանը զուտ զգայարանական է: Երեխայական տարիներուն հոգեկան գործունեության մեջ տիրապետողը զգայարանքն է և անոնց բռնած զգայությունները: Մանկական տարիներուն տիրողը նորեն զգայություններն են, որոնց սակայն հետզհետե ամուր կփաթթվի կամավոր կերպով ուշադրության կեդրոնացումը. նայիլը կդառնա դիտել, որով և զգայաբանական տպավորություններու ստացումը կվերածվի դիտողության: Տղայական տարիներուն դիտողություններու հարստացման զուգընթաց՝ կկատարվի այդ հարստություններու դասավորումը հոգիին մեջ, այսինքն դիտողությունները կդառնան հետզհետե դատողություններ, միայն դեռ էապես իրացական դատողությունները՝ դեռ միշտ կապված և հենված արտաքին ճշգրիտ իրականության: Պատանեցման տարիներուն դատողությունը իրացականեն կանցնի վերացականին, մասերու արտաքին կապակ-

դութենեն կանցնի իրերու և երևույթներու ներքին ըստ հատկութիւններու կապակցութեան, բայց դեռ ո՛չ խիստ սիստեմ կա և ո՛չ գիտական խիստ ամբողջութիւն. գիտականացման շրջանն է, ո՛չ գիտական: Ջուտ գիտական դասակարգումը, գիտական մտածելակերպը, պատճառաբանութիւններու որոնումը կզառնան տիրող հատկութիւններ հասունացման վերջին տարիներուն, գիտական հասունութիւնը կուգա պատանեկան շրջանին:

Մտավոր զարգացման այս բնական սանդուղին և անոր դրած պահանջներուն պետք է հարմարցնե դեկավար կրթութիւնը իր ավանդելիքին ինչն ու ինչպեսը: Ամեն տարիքի տալու ենք իր պահանջած նյութերը և իր պահանջած չափով ու ձևով, ուրիշ խոսքով՝ տալու ենք տղոց հոգին այդ աստիճանին վրա զբաղեցնող, անոնց հետաքրքրութիւններուն համապատասխանող, անոնց մտքի որոնած ու պարտադրած եղանակով մը, ասով և ուսուցումը կզառնա թեթև աշխատանք մը, սիրելի, գրավիչ և ուրախութիւն պատճառող:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Համակեդրոն ուսուցման և ըստ տարիքի դեկավարութեան այս երկու հիմնական սկզբունքներու պարտադրանքով հասունացման տարիքի յուրաքանչյուր շրջան կունենա բնական կերպով իր հատուկ դպրոցը ընդհանուր կրթութեան համար:

Մանկական շրջանի դարոցը սովորաբար կանվանենք մանկապարտեզ, սովորաբար 5 տարեկանեն սկսած մինչև 7 տարին լրացնելը, այսինքն երկու իրարմե բավական տարբեր ու անջատ տարիներ:

Տղայական շրջանի դպրոցը կանվանեմ տարրական նախակրթարան, 7-են մինչև 11 տարեկաններու համար. ներքին բաժանումով կվերածվի երկու երկամյակի՝ 7-9 և 9-11 տարեկաններու համար: Յուրաքանչյուր երկամյակի երկու տարիները չատ ավելի սերտ հոգեբանական նմանութիւն ու կապեր ունին իրարու հետ, քան մյուս երկամյակը, թեև կպատկանին նույն հիմնական կյանքի շրջանին չորս տարիները միասին:

Պատանեցման շրջանի դպրոցն է բարձր նախակրթարանը,

11-են 15 տարեկաններու համար, ուրիշն նորեն չորս տարի, նորեն ներքին երկու երկամյակներու բաժանումով 11-13 և 13-15 տարեկաններու համար:

Պատանեկան շրջանի դպրոցը կանվանեմ լսարան, ընդհանրապես երեք տարվան ընթացքով, 15-են մինչև 18 տարեկանի լրացումը:

Անոնց համար, որոնք բարձրագույն ուսման չեն երթալու, լավ է, որ տարին մըն ալ ըլլա հավելյալ լսարան մը, կա՛մ կիսօրյա, կա՛մ դոնե իրիկուններըը երկուսական ժամ աշխատանքով:

Ե. ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՉՈՐՍ ՇՐՋԱՆՆԵՐԸ ԱՆՋԱՏ ՈՒ ՄԻԱՑԱԾ

Ընդհանուր կրթութեյան չորս շրջաններեն ամեն մեկը կրնա առանձին դպրոց մը կազմել իր տեղովն ու վարչութեյամբ՝ բոլորովին կտրված մյուս շրջաններու վարժարաններեն:

Ամենեն հաճախ պատահողը մանկապարտեզի առանձնացումն է. մասնավոր սեր ու տրամադրութեյուն պահանջող գործ է և ինքնամփոփ գործ մը, չենքի ու պարտեզի մասնավոր հարմարութեյուններ պահանջող և շատ ավելի հակում ունի իբրև մասնավոր անձի մը ձեռնարկութեյունը երևան գալու: Ե՛վ ծրագրային տեսակետե, և՛ վարչական կեդրոնական հսկողութեյան տեսակետե մանկապարտեզի հանդիպ ավելի լայն ու թույլատու վերաբերում մը եղած է մինչև հիմա և հավանորեն նաև ասկե ետքը:

Տարրական նախակրթարանը՝ իբրև առանձին դպրոցական հաստատութեյուն, արդյունք է սովորաբար տնտեսական խնայողութեյան. դպրոցական հաջորդ տարիները շատ ավելի մեծածախս են. դրամական նեղ պայմաններու մեջ գտնվող կամ իր ընելիք ծախքերը բավականաչափ չարդարացնող գյուղական կամ թաղային դպրոց մը կբացվի միայն տղայական շրջանի փոքրիկներուն կրթութեյունը հոգալու համար, ուրիշն չորս տարվան ծրագրով. որուն հաճախ միացած կըլլա նախապատրաստական դասարան մը մանկապարտեզի բացակայութեյունը կերպ մը փոխարինելու համար: Այս անջատ տարրական դպրոցները կհիմնվին իրենց

ավարտականը հաջորդ տարին ղրկելու համար մոտակա գյուղի կամ թաղի, այսպես ըսեմ, կեդրոնական բարձր նախակրթարանը:

Բարձր նախակրթարանի քառամյա շրջանը շատ ավելի քիչ կպատահի, որ անջատ դպրոց մը ըլլա. ընդհանրապես կապված կըլլա կա՛մ նախորդ շրջանի տարիներուն, կա՛մ հաջորդ: Բացառիկ պայմաններու մեջ սակայն անկարելի բան մը չէ, որ այդ շրջանի աշակերտության ուսումն ու կրթությունը որևէ պատճառով մը իբրև առանձին հաստատություն մը կազմակերպվի:

Վերջին շրջանի երեք լսարաններուն առանձին կազմակերպումը ավելի բնական է, իբրև տնտեսական կեդրոնացում, քանի որ ավելի մասնագետ ուսուցիչներու կարիք ունի և դասավանդման տարբեր կերպեր կպարտադրե. տեսակ մը նախնական նմանեցում համալսարանական աշխատանքի: Փոխանակ քաղաքի մը մեջ ուսուցիչները մեկ-երկու տեղ թաղե թաղ վազցնելու, այլև հարմար շենքերու և այլ պահանջներու կրկնակի ծախքեր ընելու, կարելի է քանի մը թաղերու կամ համայնքներու համար շատ ավելի մեծ հարմարություններով և ուսուցչական ընտիր ու մնայուն խումբի մը աշխատակցությամբ բանալ առանձին կեդրոնական վայրի մը վրա հատուկ լսարանական ծրագրով դպրոց մը:

Բայց կյանքի գործնական դրդումները ավելի սովորական կղարձնեն մեկ շենքի ու մեկ վարչության ձեռքին տակ ուսուցման տարբեր աստիճաններուն միացումը: Եվ ամենեն սովորականը՝ հասունացման շրջաններուն զույգ-զույգ միացումը:

Շատ տարածված է տարրական ու բարձր նախակրթարաններուն միացումը նախակրթական անվան տակ, երբեմն բարձր նախակրթարանեն միայն երկու տարի միասին առած, երբեմն երեք, երբեմն ալ լրիվ չորս տարիները:

Այդպես ալ ընդհանուր կրթության վերջին երկու շրջանները կրնան միանալ, և հատկապես պատանեցման շրջանի երկրորդ երկամյակը, որ շատ ավելի սերտ առնչություններ ունի հաջորդ՝ լսարանական տարիներուն հետ, և սովորաբար այդ հինգ տարիներն են, որ ըմբռնված են իբրև «միջնակարգ կրթություն»: Այնպես որ մեծ դյուրությամբ կարելի է միացնել նույն շենքին ու նույն վարչության ձեռքին տակ բարձր նախակրթարանն ու լսարանական տարիները իբրև յոթը տարվան ամբողջություն մը, որ

կրնանք անվանել ուսումնարան նախակրթարաններն ավելի հստակ անջատելու համար:

Բայց շրջանները կրնան իրարու միանալ չենքով ու վարչութեամբ նաև երեք-երեք: Երբ երեք առաջին դպրոցական աստիճանները կմիացվին նույն տեղին վրա և նույն վարչութեան ձեռքին տակ, կստանանք մանկապարտեզ և երկշրջան նախակրթութիւն: Երբ վերին երեք շրջանները կմիացվին նույն տեղին ու նույն վարչական միութեան տակ, կստացվի լրիվ նախակրթարան ու լսարան, այսինքն ամբողջ դպրոցական ընդհանուր կրթութիւնը առանց մանկապարտեզի:

Վերջապես երբ նույն վարչութեան և նույն չենքերուն մեջ կվերդրոնանան չորս շրջաններն ալ, կստանանք ընդհանուր կրթութեան հաստատութիւն մը՝ բաղկացած մանկապարտեզե, տարրական ու բարձր նախակրթարաններե և երեք լսարանե:

Այս շրջանները, ըլլան միացած թե բաժնված, լիովին կամ մասնակի, կունենան անշուշտ վարչական ու տնտեսական որոշ առավելութիւններ ու տարբերութիւններ, բայց ծրագրի, դասավանդման եղանակներու և կարգապահական տեսակետներեն յուրաքանչյուր շրջանին հատուկ առանձնահատկութիւններուն մեջ զանազանութիւն մը չի մտներ:

ՍԵՌԵՐՈՒ ՋԱՏ ԿԱՄ ՄԻԱՍԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական կրթութեան առաջին երկու շրջաններուն մեջ մանչ ու աղջկա միասին մեծնալը ո՛չ մեկ անպատեհութիւն չունի, շատ բնական է, և իր դեմ որևէ առարկութիւն չկա: Մանկապարտեղի մեջ անոնք միշտ միասին են, տարրական դպրոցի մեջ խառն են, երբ աշակերտութեան թիվը չի ներեր երկու զուգահեռ դպրոցներ ունենալ, և սովորաբար զատ են, եթե աշակերտութեան թիվը մեծ է: «Քանի որ զուգահեռ դասարաններ պետք է կազմվին վերեն վար, լավ է, որ ամեն սեռ զատ ըլլա», – կմտածվի. ուսուցչական և վարմունքի որոշ դյուրութիւններ կհուսան ունենալ այդ ճամբով: Գործնականապես լուրջ դյուրացում մը կամ թեթևացում մը կամ դասավանդական լուրջ տարբերութիւն մը չկա մեջտեղը, և շատ ավելի խելացի ու մանկավարժական բան մը կըլլան այդ բազմա-

չակերտ դպրոցներուն մէջ, եթէ զուգահեռ դասարանները, փոխանակ հինէն եկած ավելորդ ու անիմաստ սեռական հիմքի վրա կազմվելու, կարողութիւններու հիման վրա կազմվին: Առանց զգալ տալու՝ ավելի ուժեղ կարողութիւնները մեկ դասարանի մը մէջ և ավելի նվազ եղող կարողութիւններն ալ իր զուգահեռ դասարանին մէջ՝ առանց սեռերուն խոիր դնելու: Ասիկա, իրավ որ, կազդեր և կօգներ դասավանդման եղանակներուն և կըլլար շատ զգալի թեթևացում մը և՛ ուսուցչին, և՛ աշակերտութեան:

Բարձր նախակրթարանի հետ շատ ավելի լրջութեամբ կուգա խառն կրթութեան հարցը սեղանի վրա, և առարկութիւնները ու մտահոգութիւնները կչատնան: Եվ կարելի է ըսել, թէ դեռ շատշատ տեղեր տիրող և ընդունված ձևը սեռերու անջատ դրութիւնն է: Վերին երկու շրջաններուն մէջ երկու սեռերու միացած կրթութիւնը դեռ նոր պահանջ է:

Այս իրողութեան մեկ պատճառն այն է, որ երբ դպրոցները սկսան ընդհանրանալ վերջին երկու դարերու ընթացքին Եվրոպայի մէջ, մասնավորապես այդ տարիքի միջնակարգ կրթութիւնը հոգևորականներու ձեռքն էր, հետևաբար և կուսակրոն ըմբռնումներով ամեն սեռ իր սեռի կրթութեամբ միայն կրնար զբաղվիլ: Երկրորդ պատճառը կրթական գործին հացի խնդրի տեսակետով մոտենալն է. այդ տարիքի համար դպրոցները հիմնելու ատեն մանչերը եղած են միշտ աչքի առաջ, գործի մարդ պատրաստելու ջանքերով. կանանց կրթութիւնը եկած է ետքը, հավելվածորեն, տղոց դպրոցներու օրինակին հետևելով, իբրև առանձին հաստատութիւն, անջատ կերպով:

Եվ պատմութեան բերած այդ վիճակը ընդհանուր առումով դեռ կչարունակվի: Նախ՝ որովհետև այդ հաստատութիւնները ծրագրող, հիմնող ու վարող մարդիկը իրենք այդ ձևով են տեսած ու կրթված և, ինչպես հայտնի է, մարդուս ստացած կրթութեան ձևը, տեղը, պայմաններն ու եղանակները շատ մեծ ազդեցութիւն ունին անհատի ապագա մանկավարժական հասկացողութիւններուն վրա:

Եվ երկրորդ ալ՝ հատկապես ընդհանուր կրթութեան այս վերջին երկու շրջաններուն է, որ կամաց-կամաց կարթննան, կհուզեն ու տիրող կղառնան սեռական զգացումներն ու խարխաբում-

ները: Ամենքը անախորժություն մը ունին այս հարցերուն դեմ ու վախ և կզերադասեն, որ սեռերը իրարմե անջատ ուսանին:

Բայց ջայլամային մանկավարժություն է ասիկա. դպրոցի մեջ կզատես, իսկ տունն ու փողոցը ինչպե՞ս պիտի զատես: Ճիշդ հակառակը, աղջիկ ու տղա միշտ միասին պիտի մեծնան, որ անոնց միասին ըլլալեն վախ չունենաս:

Աւտոր փոխարեն պետք է պահանջենք, որ դպրոցը խոսի, բացատրե մեր զավակներուն սեռային կյանքի էության ու կարևորության մասին թե՛ անհատի, թե՛ հանրության, թե՛ ցեղային աղնվացման ու բարձրացման տեսակետեն. դպրոցը պետք է հասկցնե մեր զավակներուն մաքուր ապրելու, մաքուր սիրելու և մաքուր ընտանիք կազմելու և՛ բաղդավորությունը, և՛ պարտականությունը: Ասիկա կըլլա առողջ պահանջ մը:

Այս բոլոր բացատրություններուն կից դպրոցին մեջ պետք է հսկող աչք ըլլա, գոնե այնչափ, որչափ որ ընտանիքի մը մեջ կհետեւին ծնողները իրենց տղոց ու աղջիկներուն: Դպրոցական վերին երկու շրջանները պետք է ունենան հատկապես աղջիկներու հետ մշտական շփման մեջ եղող վարժուհի մը, որ հաճախ առիթ ունենա խոսելու անոնց զուտ կանացի հարցերու շուրջ, գործնական խորհուրդներ տա և հարկ եղած պարագային դիմե դպրոցի բժիշկին:

Բացի այդ մայրական հոգածութենեն, անհրաժեշտ է, որ աշակերտները՝ տղա ու աղջիկ, ենթարկվին պարբերական բժշկական քննության, որուն միջոցին բժիշկը պարտական է տալու իր հարկ համարած խորհուրդները հատկապես նաև սեռական տեսակետեն:

Լսարանական շրջանին պետք է տեղի ունենան մեկ-երկու դասախոսություններ դպրոցական բժիշկի կողմեն տղոց ու աղջիկներուն առանձին-առանձին, ուր բացատրե սեռական գործարաններուն կազմն ու բնախոսությունը և առողջապահությունը: Ծիծաղելի է վերջապես. բնախոսության դասերուն կխոսվի մարդկային բոլոր գործարաններու ու ֆոնկսիոններու մասին, իսկ սեռական կազմի ու կյանքի մասին ո՛չ մեկ խոսք. կարծես սեռ ըսվածը գոյություն չունենար:

Ճշմարիտ կրթությունը կպահանջե, որ տանք մեր զավակ-

ներուն դիտակից դիտական պատրաստուԹյուն, որ անոնք ճանչնան իրենց էուԹյունը, իրենց հուզումներն ու զգացումները, պատշաճուԹյան ու խոհեմուԹյան սանձերը ձիգ պահելու վարժվին և ազնիվ ու գեղեցիկ կողմին մոտենան աղջիկ ու տղու փոխադարձ ու հավիտենական ձգողուԹյան:

Ինչպես տան ու ընտանիքի մեջ, ինչպես համայնքի ու ընկերուԹյան մեջ, այդպես ալ ամեն աստիճանի կրԹարաններու մեջ մանչ ու աղջիկ պետք է միասին ապրին ու աշխատին ու միասին հասունենան: Աս է բնականը, առողջը, օգտակարն ու գեղեցիկը:

ԴՊՐՈՑԻ ԴԵՄՔՆ ՈՒ ՈԳԻՆ

Դպրոցներու աստիճանն ու տեսակն անկախ կրԹական ամեն հաստատուԹյան մեջ կա բան մը, որ դժվար է բռնելն ու արտահայտելը և որ սակայն ամեն քիչ Ժե շատ արժեքավոր կրԹարան կկրե իր վրան ու իր մեջը, և որ հոս պետք է հատկապես հիշել ու մատնանիշ ընել:

Երկու դպրոցական հաստատուԹյուն կրնան ըլլալ բոլորովին նույն աստիճանի և գրեԹե նույն ծրագրով, կարգ-կանոնի տեսակետեն ալ կարծես աչքի զարնող տարբերուԹյուն մը չկա մեջտեղը, բայց ամենքը կզգան ու կտեսնեն, որ ներքին խոր բանով մը կտարբերին իրարմե:

Ամեն ժողովուրդ իր հատուկ կնիքը կդնե ինչպես իր ամեն հաստատուԹյան, այդպես ալ հատկապես իր դպրոցներուն վրա: Ընտանիքեն եկող վարքի, բարքի, մտածման, հակումներու և ըմբռնումներու ինքնահատուկ դրոշմով մը և ատոր համեմատ ալ կըլլա չենքը, կահավորումը, ժամերուն դասավորումը, դասերուն ընԹացքը, ավանդման նրբուԹյունները, ուսուցիչներու արտաքինն ու հոգին, անոնց վարմունքն ու վերաբերմունքը և աշխատելու ու աշխատցնելու եղանակները:

Եվ միևնույն ժողովուրդի ծոցին մեջն ալ տարբեր են գյուղական ու քաղաքային նույն աստիճանին վրա գտնվող դպրոցները. տարբեր է հոգևորականուԹյան ձեռքին տակ եղող դպրոցը, տարբեր է պետական դպրոցը, տարբեր են անհատական հաստատուԹյունները: ԿաԹոլիկ դպրոցը բոլորովին ուրիշ կերպարանք ունի

ու ներքին ոգի, բոլորովին տարբեր բողոքական համայնքի ու պաստորի մը վարչության տակ գտնվող դպրոցի կերպարանքեն ու էութենեն:

Աշխարհիկ դպրոցներուն մեջն ալ կարևորություն ունի, թե ինչ դասի, խումբի, կուսակցության հովանիին տակն է դպրոցը, ատոր համեմատ տարբեր կըլլան ո՛չ միայն իր ըմբռնումներու ու ձգտումներու, այլև նիստ ու կացի, վարք ու բարքի շատ մը նրբությունները. տարբեր սրբություններ կսիրվին, տարբեր բաներ կգնահատվին, տարբեր քաղաքավարություն է ու տարբեր փոխադարձ վերաբերում:

Այսինչ հաստատություն մեջ կտիրե «դրամական» ոգի, երազը հարստանալն է, ամեն ինչ դրամով կչափվի, առևտրական բարեմասնություննները կհարգվին, և արդյունաբերական չնորհքն է, որ կգովաբանվի: «Ժամանակը ոսկի է» և բոլոր սկզբունքները, քիչ մը խորքը որ նայիս, միշտ ոսկիին շուրջը կդառնա և անձնական ապագա հարստացման, բարձրացման և բաղդավորության. բնական կերպով ամեն մանր ու մեծ բաներուն վրա կերևա ու կզգացվի ոսկի հորթին այդ պաշտամունքը և եսական գծերու գնահատումը: Ուրիշ հաստատության մը մեջ ամեն բան հանրության անունով կդատվի, հանրության բարձրացումը, ժողովրդին ծառայելու իտեալը կպաշտվի, ամենեն բարձր բանը անձնվիրությունը կներկայանա, նսի զոհումը. և բաղդավորությունը կճգտի, որ հիմնվի ուրիշներուն բաղդավորության վրա:

Այսպեսով՝ ամեն ազգ, ամեն խմբակցում, ամեն դասակարգային զանազանություններ, ամեն կառավարական տարբերություն, ինչպես և դպրոցը պահող բոլոր տեսակի իրավական տերերը, այդպես ալ դպրոցին տնօրենությունը և ուսուցչական կազմը, – այս բոլորը միասին զանազան չափերով կազդեն դպրոցական հաստատության վրա և կուտան անոր հատուկ կնիք մը, որոշ դույն մը, ինքնահատուկ ներքին ու արտաքին կերպարանք մը՝ անկախ իր աստիճանեն, տեսակեն ու ծրագրեն:

Կրնա շատ ուժեղ ըլլալ դույնն ու կերպարանքը, և մենք արդեն կխոսինք դպրոցին մեջ տիրող ոգիին մասին, դպրոցը վարող չունչի մասին: Կրնա շատ սկար ըլլալ այդ դույնն ու չունչը, մասնավոր տպավորություն մը չընել, կըլլա սովորական դպրոց մը,

ոչինչով չտարբերվող դպրոց մը, կրնա ըլլալ անհետաքրքիր դպրոց մը, նույնիսկ անշունչ, անհոգի դպրոց մը, կրնա ըլլալ անկերպարան դպրոց մը:

Ինչպես որ մարդկային անհատներուն մեջ կան չեշտված անհատականություններ, խոր գծերով այս կամ այն ուղղությամբ, կան և անձեր ավելի սովորական արտաքինով ու ներքինով, որոնք մասնավոր կերպով ոչինչով չեն տարբերվիր ուրիշներեն, նման են ուրիշներուն և ատոր համար ալ նվազ ուշադրություն կդրավեն, այդպես են նաև հանրային հաստատությունները: Կան դպրոցներ չատ չեշտված որոշ կերպարանքով, հոն մեծցող և ուսում առնող տղան կարծես իր վրան կկրե հաստատության կնիքը և ո՛չ միայն դպրոցին մեջ աչակերտ եղած միջոցին, այլև ամբողջ կյանքի մեջ ավելի կամ պակաս ընդգծված կերպով: Կան և անհոգի և անշունչ դպրոցներ, ուր կերթան տղաքը ուսում առնելու, ինչպես որ կմտնեն խանութ կոշիկ գնելու. դպրոցը չունի իր մեջ ներքին մղիչ ուժ, չունի որոշ իտեալ, սկզբունքի մը, ճգտումի մը մասնավոր պաշտամունքը. անդեմ դպրոց է: Այս տեսակ անդեմ հաստատությունները այն մեծ տարբերությունը ունին կոշիկի խանութեն, որ քառորդ ժամվան մը համար չեն. տղան, տասնյակ մը տարի այդ անդեմ ու անշունչ հաստատության մեջ մեծնալով, առանց ազդեցություն կրելու դուրս չի գար այդ հաստատութենեն, միայն թե այդ ազդեցությունը կըլլա բացասական. տղուն հոգեկան գծերը, ճգտումները և բարոյական ըմբռնումները դարձած են իրենք ալ անդեմ ու անհոգի:

Դեմք, չունչ, ոգի ունեցող հաստատությունը անշուշտ որ հանրային կարևորություն ունեցող գործոն մըն է կենդանի: Ջա՞ր, թե բարի ուղղությամբ, ատիկա արդեն կախումն ունի տիրող չունչի ու ոգիի տեսակեն և միշտ ալ որոշ չափով տարբեր խումբերու կողմե տարբեր գնահատություն կկրե: Շունչ ու ոգիի տեսակետեն խեղճ եղող հաստատությունները անուժ են, զուրկ են վարելու և կյանքին ուղղություն տալու դրդիչներեն. խորքի զսպանակը թուլցած է կամ կոտրած է և ատոր համար ալ լարում չունի և իր աչակերտներու պրկումն ալ կթուլցնե ու կբազմացնե անզսպանակ, անիտևալ մարդոց թիվը , կուտա սերունդներ, որոնց համար միևնույն է՝ աստղնկ է եղեր, թե անաղնկ է եղեր, իրե՞ն ինչ:

Դիմավոր հաստատութիւններէ ելլողները միշտ աշխարհքը փոխելու, կեանքը կատարելագործելու և իրենց հասկցած ձևով շտկելու հետևե ինկած մարդիկ են, ուր ալ երթան՝ հանգիստ չեն մնար, հանրային կեանքին մեջ անհանգիստ տարրը են, ամեն տեղ կմիջամտեն, աղմուկ ու կենդանութիւն կբերեն: Դիմազուրկ հաստատութիւններն ելողները անտարբեր դեմքեր են, հանրային գործունեութեան վրա արհամարհանքով կնային, իբրև իրենց գործին չվերաբերող պարապ բաներ: Իսկ երբ բռնի կերպով կքաշես թևերեն ու մեջտեղ կբերես, որ իրենց ուսումովն ու պիտցածովը պիտանի ըլլան նաև հանրութեան համար, իսկույն նկատելի կդառնա, որ անկարող են, չունին հարմարութիւն. կպակսի ներքին կրակը:

Զ. ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՏԵՐԸ

ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Միջին դարերուն դպրոցները շատ քիչ էին թիվով, համեմատաբար քիչ տարիներով և ավելի հասուն տարիքի համար էին, դպրոցներու պետք ուներ պետութիւնը որոշ պաշտոնյաներ հասցնելու համար և հոգևորականութիւնը նույն նպատակով, և այդ երկու հաստատութիւններն էին, որ նվերներով, կտակներով ու տուրքերով գոյացած միջոցներ ունեին միջնակարգ ու բարձրագույն վարժարաններու պահանջած ծախքերը հոգալու համար:

Նոր դարերուն հետ քաղքենի դասակարգի առաջացումով հետզհետե կշեշտվի կարդալ-գրել գիտնալու կարիքը, և դպրոցներու թիվը կսկսի շատնալ, դպրոցներու տևողութիւնը կերկարի, և հարկ կզգացվի նոր սերունդին համար ավելի բազմակողմանի նախապատրաստութեան. ուսման առարկաներու թիվը կշատնա, և առաջ կուգա դպրոցական ուսումը մանկական ավելի թարմ հասակեն սկսելու անհրաժեշտութիւնը:

Այս ավելի վարի, ավելի նախնական ու նախապատրաստական վարժարաններու բացումով ու պահպանումով քիչ էին հետաքրքրված հոգևորականներն ու կառավարութիւնները. այդ երկուքեն շատ ավելի մեծ չափերով հետաքրքրված էր ինքը նոր ուժի

հկող քաղքենի դասակարգը իր պետքերուն, իր զավակներու կրթութեան և ձեռնարկներու հաջողութեան համար, այդ պատճառով ալ նախնական վարժարաններու բացումն ու վարչութիւնը մինչև ժթ դարուն կեսերը կգտնվեր անհատական ու համայնական մասնավոր նախաձեռնութեան ձեռքը, պետութիւնը ղրամ ծախսել չէր մտածեր այդ հետզհետե չատցող և իրեն անմիջապես պետք չեղող հաստատութիւններուն վրա. ատոնց հոգը քաշելը ավելորդ բեռ մըն էր, երբ դեռ մեջտեղ չկար այդ նախակրթարաններու պետական կարևորութեան գիտակցութիւնը:

Բայց ժողովրդավար սկզբունքներու ծավալումով, հանրապետական կառավարութիւններու ընդհանրացումով և կրթութեան հետզհետե ավելի լայն շերտերու մեջ տարածումով քանի կերթա, մանկական ու տարրական դպրոցներու դերը կդառնա ամենուն համար, քանի որ ժողովուրդի մը բոլոր խավերը կստանան այդ կրթութիւնը, և ամեն անհատ իր ամենաթարմ տարիներեն սկսած գտնե մինչև արբունքի հասակը: Եվ կամաց-կամաց բոլոր երկիրներու խորհրդարաններն ու կառավարութիւնները կսկսին չեշտել, պահանջել և իրենց ձեռքը կեդրոնացնել պետութեան ամբողջ դպրոցական կազմակերպութիւնը՝ իբրև մեկ ամբողջութիւն մը, և կրթական գործին վրա կսկսին նայիլ իբրև պետութեան գլխավոր իրավունքներեն ու պարտավորութիւններեն մեկը:

Եվ ժթ դարու վերջերեն սկսած՝ քիչ-շատ ամեն տեղ ալ դպրոցներու վերին ղեկավարութիւնը կպետականանա ու կկեդրոնանա, բայց, նայելով ժողովուրդներու ցեղային և հոգեբանական կազմին, նայելով քաղաքակրթական ըմբռնումներուն և պատմական ավանդութիւններուն, ինչպես և երկրի տնտեսական պայմաններուն, այդ պետական կեդրոնացումը կկատարվի տարբեր արագութեամբ և տարբեր աստիճանի խորութեամբ:

Գրեթե ամեն տեղ ալ կառավարութիւնը իր ձեռքը կառնե եղած դպրոցներուն ընդհանուր հսկողութիւնը, նորերը բանալու պայմաններն ու թույլտվութիւնը և կդնե որոշ մանկավարժական պահանջներ և ընդհանուր կերպով կազմված դպրոցական կանոնագիր մը, ուսման ծրագիր, կնշանակե ու կհավաքե հատուկ կրթական տուրք և ըստ իր հայեցողութեան կնպաստե այս ու այն դպրո-

ցական հաստատութեան, բայց այդ հաստատութիւններու ներքին կեանքին ու գործունեութեան գործնականապես չի խառնվիր:

Շատ ավելի խիստ է պետականացումը, երբ որոշ օրենքներ կմշակվին ուսուցչական իրավունքի, ուսուցչական վճարներու, դպրոցական կարգ ու կանոնի և շատ ավելի հստակ կերպով ճշդված ծրագիրներ կմշակվին հատկապես ընդհանուր կրթութեան համար, թե ինչ առարկաներ և ինչ չափով պարտավորիչ են ընդհանուր դպրոցներու մեջ: Այս ծրագրով և ուղղութեամբ և իր ծախքով շատ տեղ ինքը կբանա դպրոցներ և իր նշանակած պաշտոնյաներու ձեռքով կվարե այդ դպրոցները: Բայց արդեօք չի դներ, որ թաղերն ու համայնքներն ալ կամ մասնավոր ընկերութիւններ ու անհատներ իրենց ծախքով ու միջոցներով բանան դպրոցներ. կպահանջե միայն, որ իր դծած օրենքներուն, կանոններուն և ծրագիրներուն համաձայն շարժվին:

Պետականացումն ու կեդրոնացումը կհասնի իր գագաթնակետին, երբ կրթական նախարարութիւնը իր ձեռքը կառնե դպրոցական ամբողջ գործի վարչական, տնտեսական և ուսումնական անմիջական ղեկավարութիւնն ու գործադրութիւնը: Ինքը իր պաշտոնյաներու միջոցով կբանա ու կհսկե բոլոր դպրոցները: Մասնավոր անհատներ և ընկերութիւններ գործնականապես իրավունք չունին դպրոց բանալու: Ինքը կհոգա շենքը, կայքը, ծախքը, ինքը կնշանակե ուսուցիչները և ինքը կվճարե. դպրոցական բոլոր աշխատավորները այսպէսով կդառնան պետական պաշտոնյա: Ինքը կմշակե դպրոցներու կազմի, նիստ ու կացի, կարգ ու կանոնի բոլոր պահանջները, կմշակե մանրամասն ծրագիրներ բոլոր առարկաներու դասավանդման համար. ինքը կհրապարակե հարկ համարած դասագրքերը և իր հրահանգներով և բացատրութիւններով կառաջնորդե ուսուցիչներու նուիրիսկ դասավանդման եղանակը և աշխատանքի մանրամասնութիւնները: Ամբողջ պետութեան դպրոցական գործը վերածելով տեսակ մը պետական միակ դպրոցի մը, մեկ տնօրենութեամբ, մեկ կամքով ու հոգիով, հսկայական միակ դպրոց մը, որ կգործե ամբողջ պետութեան մեջ ցրված հարյուրավոր ու հազարավոր շենքերու մեջ:

ՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԿԵԴՐՈՆԱՑՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կառավարությունը, իր ձեռքը ունենալով երկրի մը ամբողջ իշխանությունը, իր որոշումներն ու հրահանգները կրնա ամենուն պարտադրել, և ասիկա է իր առաջին մեծ առավելությունը: Կառավարությունը, իր ժողովուրդեն հատուկ կրթական տուրք գանձելով, կապահովե իր կրթական հաստատություններուն ու վարչություններուն բոլոր ծախքերը, և ասիկա է իր երկրորդ մեծ առավելությունը: Կառավարությունը իր վարչության մեկ հիմնական բաժինը դարձնելով կրթական գործը՝ հատուկ նախարարի մը և հատուկ բարձր պաշտոնյաներու ձեռքով տևական ու սիստեմատիկ կերպով կղբաղվի կրթական գործի ուսումնասիրությամբ բոլոր կողմերով, ծրագիրներ ու հատակագիծեր մշակելով և այդ բոլորի համեմատ ամեն աստիճանի ու տեսակի դպրոցներու ամբողջ ցանց մը նետելով երկրին բոլոր անկյունները, և ասիկա է իր երրորդ մեծ առավելությունը: Եվ վերջապես կառավարությունը իր պետքերուն և սկզբունքներուն համեմատ կհիմնե բարձր ու միջնակարգ վարժապետանոցներ՝ իր ուզած պատրաստությամբ ուսուցիչներ հասցնելու համար, և այդ ուսուցիչներն ալ գործի կդնե դպրոցներուն մեջ իր մշտապես շրջող տեսուչներու անմիջական հսկողության տակ, և ասիկա է իր չորրորդ մեծ առավելությունը:

Այս առավելություններով օժտված դպրոցական կեդրոնական վարչության մը հետ ոչ ոք մրցիլ չի կրնար: Եթե կառավարությունը ուզե որևէ տեղի վրա իր ձեռքը առնել գործը՝ կառնե, ամենքը պետք է տեղի տան: Միայն հոն, ուր կառավարությունը տնտեսական հաշիվներով կարևորություն չտալով, հանրային մասնակցության նկատումներով կամ որևէ այլ տեսակի ներողամտությամբ թուլլատրե կամ աչք գոցե, միայն հոն կրնան ուրիշ տեսակի ո՛չ պետական հաստատություններ առաջանալ:

Բայց այս տեսակի կեդրոնացած պետական վարչությունը ունի և իր բոլոր պակասությունները:

1) Առաջին մեծ պակասությունը՝ այդ բացարձակ կեդրոնացումը ինքը ամեն բան, ամեն մտածում ամեն հոգածություն, ամեն

փոփոխում և սրբագրում, ամեն ծրագիր ու մշակում, ամեն հրահանգ, ամեն քայլ ու կարգադրություն կապասի վերեն, կառավարության բարձր պաշտոնյաներեն, նախարարութիւններեն: Իսկ ասիկա հետզհետե անհոգ, չհետաքրքրող ու մեքենական կդարձնէ բուն գործը վարող ենթակա պաշտոնյաները: Կրավորական մասնակցութիւնը, կրավորական տրամադրութիւնը կդառնա տիրող պաշտոնեութեան հոգիին մեջ: Եվ ամեն պարագայի կխեղդէ անհատական ձեռներեցութիւնը, մասնավոր ճիգերն ու փորձերը, նոր ճամբաներու որոնումը գործադրողներու կողմե. ուսուցիչը փոխանակ ստեղծագործող մը ըլլալու՝ կդառնա հրամաններ գործադրող:

2) Սկզբունք կդառնա միաձևութիւնը. ամեն տեղ, ամեն կողմ միևնույն կերպով, միևնույն հաջորդականութեամբ, միևնույն գրքերով կգործադրվի աշխատանքը, գրեթե նույն ժամացուցակով ու կարգով, որ բնականաբար կտանի դեպի կենդանութեան նվազումը, դեպի ռութին, քարացում ու ձևապաշտութիւն: Շատ կդանդաղին նոր քայլերն ու նոր փորձերը, նոր հանդգնութիւնները. կրթութիւնը իր վրա կստանա հնութեան և հնաձևութեան կնիք. ետ կմնա միշտ օրվան գիտութեան աստիճանեն, օրվան հնարավորութիւններեն: Եղած բարենորոգութիւններն ալ կարկտանի ձևով կտոր-կտոր կփակցվին այդ հնաձև ու մաշված պատմուճանին վրա, որով շատ անգամ խայտաճամուկ բան մը կստացվի, ո՛չ հինը կբավարարվի, ո՛չ նորը:

3) Ինչպես կեդրոնացման ատեն ամեն ինչ կկարգադրվի գրավոր հրահանգներով, շրջաբերականներով, տեղեկագրերով, բացատրականներով ու հարցարաններով, այսինքն կտիրե թղթերու երթն ու եկը՝ փոխանակ անմիջական ու տեղական կենդանի որոշման, կտիրե ձևականութիւն. բուն գործի էութեան մասին քիչ կմտածվի. բավական է, որ լրացված ըլլան բոլոր պահանջված ձևաներպութիւնները, և թղթերը կարգին ըլլան: Գործին տեղը շատ անգամ կբռնե թուղթը, և ատոր համար ալ թուղթին վրա շատ զեղեցիկ կարգադրութիւններ ու հաշիվներ իրականին մեջ շատ համեստ ու խեղճուկ արդյունք մը միայն կուտան կամ ուղղակի դժբաղդ արդյունք մը կքողարկեն:

4) Այս վարչական ու մանկավարժական թերութիւններուն

վրա պետք է ավելցնել նաև քաղաքական պայքարներու բերած մեծ չարիքը պետութեան ձեռքը կեղրոնացած դպրոցական գործին:

Ինչ չափով որ երկրի մը մեջ իրարու բախին զանազան տնտեսական ուղղութիւններ,տարբեր դասակարգերու տարբեր շահեր, կրոնական հարևանութիւններ ու քաղաքական տարբեր տեսակետներ, այդ չափով ալ կշեչովի դպրոցներուն տեր դառնալու կարևորութիւնը. ամեն ուղղութիւն ու կուսակցութիւն կառավարութեան գլուխը գալուն պես իր աչքը կդարձնե իր ձեռքին տակ գտնվող այդ դպրոցներուն վրա՝ իր համոզումներուն ընթացք տալու և իր մարդիկներուն ճամբա բանալու համար, և դպրոցական գործը կնկատվի տիրող կառավարութեան գլխավոր զենքերեն մեկը: Եվ իսկույն կձեռնարկվի հին ծրագիրներու, հին հրահանգներու, հին կարգ ու կանոնի, հին ոգիի սրբագրութեան կամ արմատական փոփոխութեան: Եվ այդ սրբագրութիւններուն մեջ զուտ կրթական տեսակետները չեն, որ կդառնան ավելի մտահոգութեան առարկա, այլ կուսակցական հաշիվն ու կուսակցական ըմբռնումները: Մանկավարժական գիտութիւնն ու արվեստը, փոխանակ դեպի խորքը առաջանալու, կալեկոծվի օրվան կրքերուն, օրվան պայքարներուն և օրվան տիրապետող մոտայի ծանծաղուտին վրա:

ՀԱՆՐԱՅԻՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Այս բոլոր ձախորդ կողմերը միացած պետական միահեծան դեկավարութիւնը կդարձնեն խիստ ծանր թաթ մը, որ կճնշե կրթական գործին վրա և շատ կխաթարե անոր բնականոն զարգացումը:

Որոշ համապետական շահերու և տեսակետներու պաշտպանութիւն պետութիւնը ունենալու է միշտ կրթութեան վրա անխուսափելի կերպով, որոշ բարձրագույն հսկողութիւն և հակակշիռ պետք է ունենա նմանապես. զուտ իր վարչական կարիքներուն համար իր սեփական վարժարանները պիտի ունենա անիկա միշտ. նմանապես անոր պիտի պատկանի կրթական տուրքի գանձումն ու այս կամ այն ձևով բաշխումը կրթական հաստատութիւններուն: Բայց ասկե ավելի անդին կրթական գործը իրեն ենթարկելը և անձամբ ինքը վարելը և ամբողջ պետութեան հազարավոր հաստատութիւններու ներքին ու արտաքին կազմը, գործունեութիւնը,

ուղղութիւնն ու տնտեսութիւնը իր մատներուն մէջ պահելը և անոնց բոլոր մանրամասնութիւնները հեռավոր կեդրոնի մը հրամանագրերով դործադրել տալը ամբողջ կրթական աշխատանքը կդարձնեն թելերով շարժվող պուպրիկներու թատրոն:

Կրթական դործի արագ պետականացմանը զուգընթաց կզարդանա նաև բողոքը պետական այդ չափազանցութեան դեմ. բողոքը կլսվի շատ կողմերէն, և անտարակոյս մուտիկ ապագան այդ ուղղութեամբ շատ բան ունի փոխելիք: Դժվար չէ նախատեսելը, որ պետութեան անմիջական միջամտութիւնը կրթական դործին մէջ քանի երթա, պակսի պիտի, քիչ-քիչ ետ պիտի քաշվի՝ ավելի ու ավելի տեղ տալով համայնական և անհատական նախաձեռնութեան:

Բոլորովին տարբեր բան է, երբ կրթութեամբ հետաքրքրվող և տարիներու փորձառութեամբ այդ դործին սերտորէն կապված մեկը իր մէջը պահանջ կզգա դպրոցական կրթութիւնը քիչ մը այլ կերպ վարելու, իր հասկցած ձևով դպրոց մը ունենալու, ըստ իր սկզբունքներուն, ըստ գիտական ու փորձառական նոր տվյալներուն, ըստ կյանքի ու տեղի նոր պահանջներուն. կձգտի նոր ուղիներ բանալու, դպրոցական կյանքին, վարքին ու ծրագրին ավելի կամ նվազ չեչտված չափերով նոր ընթացք մը տալու և կբանա մասնավոր դպրոց մը իր միջոցներով կամ ծնողական խումբի մը կամ համայնքի մը կամ որոշ հաստատութեան մը, ընկերութեան մը աջակցութեամբ:

Անշուշտ բոլոր մասնավոր վարժարանները այս ոգիով չեն բացվիր. անհատական կրթական հաստատութիւններուն մէջ ալ չեն պակսիր խանութի հաշիվներով, արտաքին աչքի զարնող փայլով, ուռուցիկ բառերով, ինչպես և պետերու ու մեծերու առջև քծնելով չահադիտական ձեռնարկութիւնները: Բայց նույնիսկ այս պարագային անհատական վարժարանը ունի իր մեկ խիստ նպաստավոր առանձնահատկութիւնը. անհատին չահը կապված է դործի հաջողութեան, հռչակին ու բարձրացմանը հետ, և ինչքան ալ արտաքին բաներու վրա հենվիլ ուզենա, ներքին ու մանկավարժական կողմերը բոլորովին լքել չի կրնար: Իսկ երբ ձեռնարկող անհատականութիւնը քիչ մը ավելի խոր ու բարձր տեսակի է, այդ մասնավոր վարժարաններուն հատուկ եղող նպաստավոր

կողմը շատ ավելի կչեչտվի: Անհատը ինքը պիտի հարթե իր ճամբան և հաջողելու համար պետք է ամեն բանի վրա ուշադրություն դարձնե. շարունակ նոր փորձեր ընե, փոխե, կատարելագործե, մշտական ստեղծագործություն մըն է իր աշխատանքը. միայն այդ ճամբով կրնա մաքառիլ քարացած հանրային կարծիքներու դեմ, պետական հաստատություններու արդեն ընկալյալ ձևերուն դեմ, հին ու նոր նախապաշարումներուն դեմ: Եվ այս մշտական լարված ճիգերուն ու փորձերուն համար դուրսի վրա հույս դնել չի կրնար. ամեն ինչ ինքը պիտի դիտե, մտածե ու գործադրե և հաճախ մեծ ղժվարությամբ, երբեմն մեծ զրկանքներով իր բռնած ուղղության առավելությունները պիտի պարտադրե հասարակության և ստիպե, որ նույնիսկ պետական հաստատությունները ուշադրության առնեն:

Պարզ է, որ այս տեսակ աշխատանք մը կըլլա անհամեմատ ավելի գործոն, ավելի ստեղծագործ և արդյունավոր, որ նորություններ ու բարձրացում կբերե կրթական գործին: Նույնիսկ իր սխալներն ու սայթաքումները կղառնան հետաքրքիր: Վերին մանրամասն հրահանգներով և ամեն ինչ չափված ու գծված սահմաններու մեջ գործող պաշտոնյա մը ինչքան ալ խելացի ըլլա, դիտող ու ձեռնարկող, չի կրնար նույն արդյունքը տալ. շարունակ իր գործունեությունը կխաչաձևվի: Եվ զարմանալու ոչինչ կա, որ մասնավոր հաստատություններեն կուգան սովորաբար նոր գաղափարները, նոր փորձերն ու նոր համարձակությունները:

ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ինչպես կյանքի բոլոր երևույթներուն մեջ, կրթական գործունեության համար ալ ամենեն առողջ ու ամենեն կենսունակ դրությունը կստեղծվի երկու հակադիր սկզբունքներու գործակցությամբ. մեկ կողմեն բոլոր ազատ հնարավորությունները տալով անհատական ու խմբական ջանքերուն, ձգտումներուն և ավելի խիզախ գործունեության, մյուս կողմեն ալ այդ բոլոր ջրիվ ու մասնավոր ճիգերը կառավարության ձեռքին տակ իրար համակարգելով և ընդհանուր կապակից ամբողջություն մը առաջացնելով, տեսակներու և ուղղություններու կեդրոնացում մը փոկուսի մը մեջ:

Ուրիշ խոսքով՝ կրթական գործի կատարելագործության համար անհրաժեշտ է, որ կեդրոնացումն ու ապակեդրոնացումը մշտապես զուգորդվին իրարու: Խոսքս մասնավորելով ընդհանուր կրթության վերին կազմակերպության վրա՝ կկարծեմ, որ այդ գործակցությունը ամենեն ավելի բնական կերպով հնարավոր կդառնա հետևյալ հիմնական պայմաններու տակ:

1. Պետական օրենքով որոշված սահմաններու մեջ ամեն մարզ, ամեն մլուքյուն, ամեն համայնք ու ամեն հաստատություն, ինչպես և պետությունը ինքը հոս ու հոն կրնան բանալ ընդհանուր կրթական հիմնարկություններ ամեն տեսակի ծրագրով, ամեն աստիճաններով և մանկավարժական իրարմե տարբեր ուղղություններով: Ծնողներուն և հասարակության կմնա ընտրությունը, թե աոոնցմե որուն ղրկեն իրենց զավակը: Ամեն դպրոց իր հաջողության չափովը, այսինքն իր աստիճանին ու իր աշակերտության թիվին համեմատ կստանա օժանդակություն պետական գանձարանեն:

2. Այս բոլոր դպրոցներու ներկայացուցիչներեն և այդ դպրոցներուն կից օրինապես վավերացված ծնողական ժողովներու ներկայացուցիչներեն, օրինակ, երեք տարին անգամ մը կանոնավոր կերպով կկազմվին շրջանային մանկավարժական ժողովներ, ուր նկատի կառնվին ու կքննվին այդ շրջանին մեջ դպրոցին կապված մարդոց և ծնողներու բոլոր պահանջներն ու ցանկությունները: Այդ շրջանային ժողովներեն ընտրված ու ղրկված որոշ թիվով ներկայացուցիչներու հավաքումը պետական կեդրոնին մեջ քանի մը օրով՝ կկազմե այդ երկրի կրթական ընդհանուր ժողովը, որ իր ներկայացուցիչներու բերած կամ արծարծած բոլոր հարցերն ու առաջարկները դպրոցական ամեն տեսակի խնդիրներու շուրջ կենթարկե ուսումնասիրության և թեր ու դեմ կհանե իր եզրակացությունները, որ կղրկվին դպրոցական կեդրոնական վարչության ուշադրության և նկատառության:

3. Դպրոցական այդ կեդրոնական վարչության անդամներուն դիցուք երկու երրորդը կընտրվի դպրոցական և ծնողական ներկայացուցիչներու ընդհանուր կրթական ժողովեն, իսկ մեկ երրորդն ալ կնշանակվի կառավարության կողմե: Թե՛ ընտրվածները, թե՛ նշանակվածները, օրինակ, երեք տարին անգամ մը կենթարկվին

նոր ընտրութեան կամ վերընտրութեան, մաս-մաս:

Դպրոցական բոլոր օրենքներու վերջնական ձևակերպողը դպրոցական բոլոր հաստատութիւններուն վրա ընդհանուր հսկողութիւն պահողը, դպրոցական բոլոր հիմնարկութիւններուն նպաստողը, կրթական ամեն տեսակի ընդհանուր հարցերու, ընդհանուր ծրագիրներու մշակողը, ինչպես և իր խորհուրդներով և օգնութեամբ ամեն կրթական ձեռնարկի օժանդակողը այս կեդրոնական մշտական վարչութիւնն է: Իր մշակած բոլոր նոր առաջարկներն ու պարտադրութիւնները պետք է վավերացվին կառավարութեան կողմե օրենք դառնալու համար: Կառավարութեան կողմե օրինագծի մը մերժումը պետք է կատարվի պատճառաբանված: Տասնյակ մը տարիներու ընթացքին միևնույն օրինագծի երրորդ անգամ առաջարկումը կառավարութիւնը պարտական է վավերացնելու:

Դպրոցական վերին ղեկավարութեան այս տեսակի ըմբռնում մը սակայն դեռ շատ հեռու է իրականութենեն. առայժմ տիրապետողը ընդհանրապես ամեն տեղ և մոտավորապես կես դարե ի վեր ամեն ինչ պետականացնելու իտեալն է, այսինքն կրթական անխտիր ամեն գործ ու ձեռնարկ, ամեն հոգ ու մտածում հանձնել տասնյակ մը մարդոց որոշման ու բարեհայեցողութեան, մարդիկ, որոնք այդ բացառիկ դիրքին ու դերին կհասնին ավելի կուսակցական քուվրնտի հաշիվներու բերումով, քան կրթական գործի երկարատև անձնական խորունկ փորձառութեամբ:

Այս անառողջ վիճակը պետք է փոխվի: Կրթական գործի ղեկավարութիւնը պետք է հանձնվի կրթական գործով ապրող մարդոց և զավկի տեր ծնողներու ամբողջութեան ընտրելիներուն, որոնք պետութեան կողմե նշանակված մասնագետ անձերու գործակցութեամբ վարեն երկրի մը դպրոցական գործը:

Է. ՈՒՍՈՒՑԻՉ

ԴԱՍՏԻԱՐԱԿ ԵՎ ԴԱՍԱՏՈՒ

Դպրոցական գործի հիմն ու առանցքը ուսուցիչն է: Ծրագիր, կանոնագիր, վարչութեան հրահանգ ու որոշում, շենք ու հարմարութիւններ՝ ասոնք բոլորը շատ կարևոր բաներ են, և ատոնց գիչ

կամ աղեկ ըլլալեն կախված է շատ բան, բայց այս բոլորեն վեր և այս բոլորին վրա իր կնիքը դնողը ուսուցիչն է, ուսուցիչներու աղեկ ու դիչ հատկութիւններուն ու կարողութիւններուն դումարը: Ամեն գործի մեջ ալ մարդն է միշտ էականը և գործը վարող մարդոց ընդունակութիւններեն ու կարողութիւններեն է կախված գործի հաջողութեան չափն ու ձևը: Ասիկա շատ ավելի շեշտված կերպով չիտակ է կրթական գործին մեջ, ուր ամեն ինչ հիմնված է կրթողի ու կրթվողի անմիջական փոխադարձ հարաբերութեան վրա: Ուսուցչի ամբողջ անձը, անոր մտավոր, մասնագիտական, վարչական, զգացական, բարոյական, նույնիսկ մարմնական ու արտաքին բոլոր պակասութիւններն ու առավելութիւնները իրենց բոլոր կողմերով անմիջական դեր կխաղան կրթական գործին մեջ: Կրթութեան գործը հանձն առած մարդը իր պաշտոնի կիրարկման համար պետք ունի իր ամբողջ էութեան, կգործածե իր ամբողջ էութիւնը՝ իր ներքինը, ծածուկը, խորունկը, ինչպես և իր արտաքինն ու մակերեսը: Ուսուցչի հագուստը, դեմքը, կերպարանքը, շարժումները, կեցվածքը-խոսվածքը, շեշտերը, խորհելու, տրամաբանելու առանձնահատկութիւնները, պատմելու-նկարագրելու եղանակը, մտքերը արտահայտելու ձևերը, իր բարոյական դծերը, կամքը, զգացումները, ճաշակն ու բարոյական ըմբռնումները ամենը, ամեն ինչ օրինակ է և նմանելու, հետևելու կդրդե, կազդե, կքաշե ու կկապկվի: Հոսկե ալ կառաջանա բնականաբար կրթութեան գործին մեջ մասնավոր ուշադրութիւն մը դեպի ուսուցչի անձը, դիրքը, վիճակը և այն հատկութիւնները, որ ան պետք է ունենա:

Ամենեն առաջ ուսուցիչ ուսուցչի վրա մեծ տարբերութիւններ ունի իր անձնավորութեան տեսակետեն. անմիջապես պետք է իրարմե զատենք դաստիարակ-ուսուցիչը միայն դաստատու ուսուցիչեն: Առաջինը ամբողջովին նոր սերունդի զարգացմանը նվիրված անձն է, երկրորդը զբաղված է միայն մեկ որոշ կարողութեան, մեկ որոշ ճյուղի կամ արվեստի մշակման գործով: Առաջինը կապված է իր աշակերտուներուն դպրոցական գրեթե բոլոր ժամերու ընթացքին, երկրորդը օրական մեկ-երկու պահ է, կուգա, սորվելիքը կսորվեցնե ու կերթա և տակն անդին շատ քիչ կհետաքրքրվի թե՛ տղոցմով, թե՛ դպրոցով: Առաջինները բուն կրթական գործը ղեկա-

վարող անձերն են, մյուսները անոնց կարևոր օժանդակներն են, անոնց ջանքերուն լրացումը:

Հասունցող տարիքի առաջին կեսը գրեթե բացառապես դաստիարակ-ուսուցիչներու ձեռքն է, քանի դեռ առանձին մասնագիտական մեծ ծանոթություններու պետք չկա. երկրորդ տասնամյակին հետզհետե մասնագիտական պատրաստություն ունեցող անձերու պահանջը կմիացնե դաստիարակ-ուսուցիչներուն նաև քանի մը հատ մասնագետ մարդիկ, բայց ընդհանրապես ատոնցմե քիչերն են, որ դպրոցի մը ու որոշ խումբի մը սերտորեն կապված կմնան. թե՛ տնտեսական և թե՛ հոգեբանական դրդիչներ ավելի ազատ, ավելի վազվզող վիճակ մը կստեղծեն անոնց համար, և կառաջանա այցելու ուսուցչի, դասատուի տիպարը, որոնց թիվը ավելի ևս կավելնա միջնակարգ ուսման շրջանին՝ ատոր համապատասխան պահանջները կամ սահմանափակելով դաստիարակ-ուսուցիչներուն թիվը:

Անտարակույս որ շարունակ իր աշակերտներուն հետ եղող և ամբողջությամբ որոշ խումբի մը նվիրված անձը ավելի խոր ու բազմակողմանի կճանչնա իր աշակերտները և ավելի ալ առիթ, հետաքրքրություն և հնարավորություն ունի ավելի խոր ազդեցություն բանեցնելու անոնց վրա: Մեր արդի պայմաններուն մեջ դեռ դժվար է, որ ամեն ուսուցիչ այդպես սերտորեն ու ամբողջովին կապված ըլլա կրթական որոշ հաստատության մը և աշակերտական որոշ խումբի մը, որ ամեն ուսուցիչ անխտիր ըլլա «մնայուն», բայց ընկերական ու տնտեսական նոր կարգերը պիտի դարձնեն այդ պահանջը իրականություն:

ՍԵՌ ՈՒ ՏԱՐԻՔ

Խնդրի առարկա է եղած նաև ուսուցիչներուն սեռն ու տարիքը:

Կրթական գործին մեջ երկու սեռերն ալ հավասարապես կարևոր դեր ունին. ինչպես մայրն ու հայրը ընտանիքին մեջ, այնպես ալ ուսուցչուհին և ուսուցիչը դպրոցներուն մեջ:

Եվ այդ երկուքի դերն ու ազդեցությունը բոլորովին նույն տեսակի չէ, քանի որ այրերու և կանանց հոգեկան կազմը, զգալու,

խորհելու և վարվելու եղանակները բնական տարբերություններ ունին իրարմե: Եվ ճիշդ այդ բնական տարբերություններուն մեջն է նաև անոնց ամեն մեկուն ունեցած առավելությունները հասունցող սերունդի զարգացման վրա:

Աճող սերունդներու կազմավորման վրա պետք է ըլլա երկու սեռերու ալ աղդեցությունը դպրոցին ու ընտանիքին մեջ մեկ ծայրեն մյուսը: Բայց բնական կերպով մանուկ տարիներուն մեջ գերակշիռ է կնոջ աղդեցությունը, որ հետզհետե հաջորդ շրջաններուն կհավասարի և վերջն ալ տեղի կուտա այր մարդու աղդեցությանը: Ընդհանուր առումով մանկական կրթարանները բացառապես կին ուսուցիչներու ասպարեզն է: Տարրական նախակրթարանին մեջ երկու սեռերն ալ տեղ ունին, բայց կնոջ գերիշխանությունը դեռ զգալի է միշտ: Երկու սեռերու մասնակցությունն ու աղդեցությունը ուսուցչական պաշտոնի մեջ իրարու կհավասարին բարձր նախակրթարանի մեջ, ուր շրջանին վերջերը զգալի կդառնա այրերուն գերակշռումը. միջնակարգ կրթության շրջանին այրերու աղդեցությունն ու թիվը կդառնա բացարձակ տիրող:

Գալով տարիքին՝ վարի սահմանը հասունացման տարին է՝ ուրեմն քսան տարեկանի չուրջը. վերեն սահման քաշողը հոգնությունն է ու տկարացումը. նորեն կլոր թիվով մը կրնանք դնել 70 տարեկանը: Ուրիշ խոսքով՝ կոչում ու սեր ունեցողը ամբողջ կես դար իր շնորհքն ու ուժերը կրնա նվիրել նոր սերունդներու պատրաստության բացառիկ մեծ ու ազնիվ գործին:

Երիտասարդ տարիները, մոտավորապես 20-35, բնականաբար ոգևորության, ուժերու առատության, ինքզինքը չխնայելու և լավատես վստահության ու մեծ դեր մը խաղալու ձգտումին շրջանն է, և ճիշդ այդ պատճառով ալ վարակող, քաշող, հափշտակող տպավորություն կընեն թարմ հոգիներուն վրա. մեծ եղբոր, հասուն ընկերոջ նման բան մը, ուր ավելի ջերմ կկապվին իրար կրթող ու կրթվող:

Հասունության տարիները, մոտավորապես 35-60, մարդկային ուժերու, կարողություններու ու շնորհքի գագաթնակետն է և իր արդյունքովը ամենեն ավելի կարևոր. թեև չկան առաջին

շրջանի հափշտակություններն ու խենթ ոգևորությունը, բայց փոխարենը ամեն բան շատ ավելի մարսված է ու մշակված, և առնված քայլերը՝ շատ ավելի դիտակից, վարժ ու ինքնավստահ. թե՛ ավելի դիտություն կա, թե՛ ավելի արվեստ իր գործունեության մեջ. լուրջ գործունեության շրջանն է և լուրջ ու խոր ազդեցության: Նոր սերունդը երբեմն դիտակից, երբեմն բնազդորեն կենթարկվի անոր ուժին, կհետևի անոր վարմունքին, նոր սերունդի օրինակն է ան և իսկական ուղղություն տվողը:

Ուսուցչի մը կյանքին վերջին կրթական տարիները, մոտավորապես 60-են անդին, արդեն ծերակուտականին ազդեցությունն է հարգանքի ու պատկառանքի խառնուրդ զգացումով մը. ուժերը կվնասվին, բայց խոսքը կվորանա, և կյանքի իմաստությունը կվոսկի: Կրթողն ու կրթվողը տեսակ մը իրարմե կարծես կհեռանան թե՛ տարիքի մեծ տարբերությամբ, թե՛ եռանդի ու աչխուժի տարբերությամբ և թե՛ գրեթե ամեն բանի մեջ ճաշակներու տարբերությամբ, բայց ճիշդ ատոր համար իրար ավելի կզնահատեն: Կրթողը իր հոգիին ու մտքին լավագույնը ու ազնվագույնը տալ կձգտի հասնող նոր սերունդին, կրթվողը լավագույնն ու ազնվությունը յուրացնել կձգտի մեկնող սերունդեն: Ատոր համար է, որ մեկ կամ երկու տարիքավորներու ներկայությունը կրթական ազդեցության կշիռը կբարձրացնե և դժվարությունները կպակսեցնե:

Կին ուսուցիչներու համար մասնավորապես անհարմար տասնամյակ մը կա 25-են 35-ի մեջ, երբ իր սեփական զավակներուն ծնունդը և անոնց առաջին տարիներու պահանջած հատուկ խնամքը շատ-շատերը կհարկադրե քաշվիլ ուսուցչական ասպարեզեն կամ շատ թեթևակի կապ մը միայն պահել օրական մեկ-երկու ժամ դասով: Եվ շատերը ամուսնությամբ կկտրվին դպրոցեն, և քիչերն են, որ տասնամյակ մը ետքը նորեն դառնալ կհաջողին իրենց հին, սիրած գործին. ժամանակն ալ, մարդն ալ փոխված կըլլան: Հետևանքը կըլլա, որ ուսուցչուհիներուն մեկ ստվար մեծամասնությունը կա՛մ թարմ օրիորդներ են, կա՛մ մինակ մնացած կիներ:

Ինչքան աւելն որ դպրոցին վրա նայինք քանի մը զործնական տեղեկութիւններ ու թարմութիւն ձեռք բերելու տեղի մը վրա կամ տան մէջ երեխաներու ազմուկին ու տաղտուկին ազատուելու հարմարութեան մը վրա, բնականաբար «վարժասէնտ» կրնան նկատուիլ տատիկները, վարպետ-տուտուները, ծառաները, հին դասերուն տղաները և ամեն մարդ, որ քիչ մը թվաբանութիւն ու քերականութիւն ունի գլխուն մէջ և ուրիշ համբով իր հացը հանելու պատեհութիւն չէ ունեցած: Բայց երբ դպրոցի ու կրթութեան վրա կակսինք նայիլ իբրև մարդն ու մարդկութիւնը բարձրացնելու, ազնվացնելու համար անհրաժեշտ ու առաջնակարգ աշխատանոցի մը վրա, իսկույն և հիմնապես կփոխվին նաև մեր պահանջները այդ աշխատանոցին մէջ գործող քանդակագործին վերաբերմամբ:

Մարդկութիւնը ազնվացնելու նման պարտականութիւն մը երբ կդրվի անձի մը վրա, անկե շատ մեծ չափերով հոգեկան խորութիւն ու բարձրութիւն կպահանջվի: Մարդկութիւնը բարձրացնելու նման պաշտոն մը երբ կհանձնվի անձի մը, բնականաբար անկե մեծ մտքի ուժ, հասունութիւն ու պատրաստութիւն կպահանջվի: Եվ օրե օր մեծնալու վրա է հասկութիւններու այն ցանկը և այն չափը, որ դիտութիւնն ու քաղաքակրթութիւնը կսկսեն պահանջել կրթական պաշտոնյայե մը:

Ուսուցչի մը համար անհրաժեշտ նկատվող պայմանները կարելի է խմբել երեքի. առաջին խումբը կապված է ուսուցչի կոչումին, երկրորդ խումբը՝ ուսուցչի պատրաստութեան, երրորդ խումբն ալ՝ ուսուցչի մասնավոր դրսևորութեան:

Ուսուցիչ ըլլալը մասնավոր շնորհք կպահանջե, իրեն հատուկ կարողութիւններ, հոգեկան որոշ թեքում ու մտավոր որոշ հակումներ, ուսուցչութիւնը բնատուր տաղանդ մըն է, ինչպես նկարչութիւնը, երաժշտութիւնը կամ այս ու այն գիտութեամբ տարված ըլլալը. բռնադատելով, սորվեցնելով ու մասնագիտական վարպետութիւններով բան դլուխ չի գար, եթե բնականեն չկա մարդու էութեան մէջ: Ինչքան մարդիկ կան, որոնք ի ծնե ունին իրենց մէջ վոքրիկներու հետ վարվելու և իրենց ուզածին պես մեծցնելու

կերպը, բան մը բացատրելու և համոզելու չնորհքը, առանց որևէ հատուկ ուսման ու կրթության, և ինչքա՜ն մասնագետ «մանկավարժներ» կան, համալսարան կամ վարժապետանոց ավարտած, որոնց համար չարչարանք մըն է դպրոցը, և իրենք ալ չարչարանք մըն են աշակերտներուն համար:

Ուսուցչությունը բնատուր չնորհք մըն է և, ինչպես ամեն չնորհք, այս ու այն չափով անշուշտ դպրություն ունի ամեն մարդու մեջ: Ինչպես ամեն մարդ ալ երգել, նկարել ու մաթեմատիկ սորվիլ կրնա առանց երգիչ, նկարիչ կամ մաթեմատիկոս մը դառնալու, այդպես ալ ամեն մարդ այս կամ այն չափով ունի պզտիկներուն հետ վարվելու և անոնց բան մը սորվեցնելու հնարամտությունը առանց դաստիարակ մը ըլլալու: Ուսուցիչ ու դաստիարակ կոչվելու արժանի դառնալու համար իր այս կարողություններուն աստիճանը բարձր պիտի ըլլա. ուսուցչության համար հարկ եղող ընդունակությունները ինչքան տկար են մարդու մը մեջ և քանակով քիչ, այնքան անպետք է ան այդ պաշտոնին, և ինչքան ուժեղ են ու բարձր չեչտված այդ ընդունակությունները, այդքան այդ գործին մարդն է անիկա:

Ուսուցչությունն ալ կոչում մըն է, ինչպես ամեն գործ ու արվեստ, երբ բնական ընտրությամբ կկատարվի և ըստ ներքին ունակություններու: Ուսուցչական-դաստիարակչական կոչումը ունենալու համար պետք է ախորժիլ ուրիշներու հոգին մտնելե, ուրիշներու վիճակը ըմբռնելե և հատկապես փոքրիկներու, պետք է համբերություն ունենալ և լայնասրտություն միևնույն բանը անթիվ անգամներ կրկնելու և ըսելու. պետք է բավականություն զգալ ուրիշներու բարձրացմանը նվիրվելե, պետք է հաճույք զգալ թարմ հոգիներու հետ մշտական շփման մեջ ըլլալե և այդ թարմ հոգիներու հետզհետե բացումը դիտելե, ինչպես հաճույք կզգանք ծաղիկներուն բացվիլը երբ կտեսնենք: Պետք է հպարտություն ունենաս այն մտածումեն, որ այդ բացումի առած ուղղության վրա ազդած ես դուն, որ մասամբ քու գործդ է ատիկա. պետք է բավարարություն զգաս սորվեցնելե, բացատրելե, վարժեցնելե, սրբագրելե ու ճևակերպելե:

Ստեղծագործություն մըն է ուսուցչությունը իր տեսակի, ստեղծագործություն մը, որ չի կատարվիր անշունչ իրերու ու

մետաղներու վրա, այլ կենդանի ու մեղի նման էակներու վրա: Բուսական ու կենդանական էակներուն վրա ազդել կարողանալը արդեն ինքնին շատ գրավիչ ու հետաքրքիր նորակերտություն մըն է հաճախ, բայց որչափ ավելի կշեշտուի և՛ գրավչությունը, և՛ հետաքրքրությունը, երբ ուղղակի մարդկային հոգիներու, մարդկային թարմ ու մանուկ հոգիներու վրա է, որ կկատարվի այդ քանդակումը, այդ ճևակերպումը, այդ խորակերպումը:

Ով այս կարգի աշխատանքներն հաճույք չզգար, ով ներքին մղում չունի այս տեսակի ստեղծագործական ճիգերու, անիկա կոչված չէ ուսուցչական ասպարեզին համար:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Բայց հերիք չէ բնական հակում և անհրաժեշտ հատկություններն ունենալը: Բնական կոչումը անշուշտ հիմնական նախապայման է ամեն իրական հաջողության, բայց որպեսզի թափված ճիգերը տան լրիվ իրենց պտուղը, և ուսուցիչը իրապես արժանի ըլլա այդ անվան, բացի կոչումը ունենալե, պետք է ունենա նաև այդ կոչումը գործադրելու համար անհրաժեշտ եղող նախապատրաստություննը: Եվ այդ նախապատրաստությունը երեք տեսակի է՝ ընդհանուր, մասնական և մանկավարժական:

Ամեն անձ, որ նվիրվիլ կուզե կրթական գործին, պետք է տեր ըլլա որոշ աստիճանի ընդհանուր կրթության, պետք է գտնվի ժամանակակից ուսման բարձրության վրա, պետք է տեղյակ ու ծանոթ ըլլա մեր քաղաքակրթության վիճակին, ընկերական երևույթներուն, գիտություններու արդի տվյալներուն և արվեստներու ստեղծագործություններուն: Ինչքան խոր է ու լայն այդ ընդհանուր ծանոթությունն ու տեղեկությունը, այնքան մեծ է ուսուցչի խոսքին կշիռը և աշակերտներուն մտքին վրա ըրած ազդեցությունը. ինչքան նեղ է իր մտավոր պաշարը և անմշակ իր աշխարհայացքը, այնքան խեղճ կըլլա բնականաբար իր թողած տպավորությունը և իր տված օգուտը:

Առնվազն միջնակարգ կրթությունը լրիվ ավարտած ըլլալը պետք է հիմնական պայման ըլլա ուսուցչական ասպարեզը մուտք գործելու համար, իբրև նախակրթարանի ուսուցիչ: Նախակրթա-

բանի բարձր կարգերուն և անկե վեր եղող ամեն հաստատութեան մեջ պաշտոնավարել կարողանալու համար անպատճառ պետք է պահանջվի բարձրագոյն կրթութիւն: Այս չափը տեսականին մեջ ընդունված է հիմա ալ, բայց միայն տեսականի մեջ: Ամեն տեղ ալ կան ուսուցիչներ անհամեմատ խելոք կամ թևերի պատրաստութեամբ, իսկ մեր աղգային ավելի ևս խելոք պայմաններուն մեջ շատ են այն ուսուցիչները, որոնք զուրկ են լուրջ ընդհանուր կրթութենեն և նախ իրենք պետք ունին աշակերտական նստարաններուն վրա նստելու դիտական, գրական և ընկերային ամենատարրական ծանոթութիւններու տեր դառնալու համար: Հիվանդ վիճակ մը, ծնունդ հիվանդ պայմաններու և հին կրթական հասկացողութիւններու:

Այս ընդհանուր մարդկային զարգացումեն գատ ամեն ուսուցիչ պետք է ունենա հատուկ մասնագիտական որոշ նախապատրաստութիւն մը այն առարկաներուն համար, որ ավանդել կուզե: Եվ ինչքան նախակրթարանի վերին կարգերուն հասնինք և անկե անդին, այս պահանջը այնքան ավելի կշեշտվի ու կդառնա բացահայտ, բայց նույնիսկ վարի կարգերուն համար ալ այդ մասնագիտական ավելի խոր նախապատրաստութիւնը միշտ կարևոր պահանջ կմնա: Ուրիշ կըլլա բանի մը ուսուցումն ու ավանդումը, երբ առատ ու հանգամանորեն տեղյակ մտքե մը կհոսի. ուրիշ է բոլորովին այն մարդուն դասավանդումը թե՛ իբրև վստահութիւն, թե՛ իբրև ազդեցութիւն և թե՛ իբրև խորութիւն, երբ իր ըսածեն ու բացատրածեն անդին ինքն ալ ավելի մեծ բան մը չգիտեր, երբ դասագրքին մեջ եղածը հասկցնելու հազիվ կհասնի իր ունեցած մասնագիտութիւնը: Աշակերտները լուրջ բան մը յուրացնել չեն կրնար այդ տեսակ ուսուցիչեն, և ուսուցիչը ինքն ալ շատ պիտի տառապի իր աշակերտներեն, որոնք գուցե ամեն բան ներել կրնան, բայց իր չգիտցած բանները սորվեցնել ուզելը չեն կրնար ներել և շատ արդար կերպով:

Ընդհանուր կրթութեան տեր ըլլալ և իր ավանդելիք առարկաներն ալ բավարար աստիճանով մը մասնագիտորեն ուսած ըլլալ՝ ուսուցչին կուտան ուսուցիչ ըլլալու կարողութիւնը, և ան կրնա առաջ նետվիլ մնացածի մասին իր հույսը դնելով անձնական ճիգերու ու փորձառութեան վրա: Եթե մանավանդ բնականեն կոչում ունեցող ուսուցիչ մըն է: Բայց անհամեմատ կբարձրանա իր

աշխատանքին արժեքը, և անհամեմատ կդյուրանա իրեն համար իր գործը, եթե ստացած ըլլա նաև հարկ եղած մանկավարժական նախապատրաստուԹյունը, այսինքն երբ առաջվեն գիտնա նաև դարերու վարձառուԹյամբ ու խորհրդածուԹյամբ մեծ ուսուցիչներու և մանկավարժներու տված պատասխանները այդ հարցերուն, գիտնա հասունցող հոգիի աստիճանական բացումը և ամեն մեկ աստիճանին վրա այդ աստիճանին ամենեն ավելի հարմար ազդելու միջոցները, գիտնա դաստիարակելու, ուսուցանելու և կարգապահուԹյունը դյուրացնելու ձևերն ու եղանակները:

Շատ են այն ուսուցիչները, որոնք չնորհքով գիտեն իրենց առարկան, բայց բավական իզուր կչարչարվին ավանդելու եղանակը ծուռ տանելնուն համար, ավելի դյուրին ու բնական ճամբաները չգիտնալուն համար, կամ չեն հասնիր այն արդյունքին, որ սպասելի էր, նորեն մանկավարժական թերացումներու պատճառով: Մեծ դյուրուԹյուն, մեծ առավելուԹյուն և մեծ հաճույք մըն է, ինչպես ամեն արհեստի, այնպես ալ կրթուԹյան արվեստի մարդուն համար, երբ գիտե իր չինելիքը, ինչպես չինելիքը իր բոլոր մանրամասներով և հաջորդական աստիճանավորուԹյամբ, մանավանդ երբ այդ կերտվելիքը ապրող ու բարդ ու նուրբ մարդկային հոգիներ են, որոնց զարգացման օրենքներուն համեմատ գործել կարողանալը և այդ օրինքներու պահանջած միջոցներն ու եղանակները գործադրել գիտնալը ճշմարիտ որ մեծ արվեստ մըն է:

Ամեն ուսուցիչ ուսուցչուԹյուն ընելու հրավունքը ունենալու համար պետք է նախապես տեսական ու գործնական նախապատրաստուԹյուն ստացած ըլլա հատկապես ուսուցչական ասպարեզի համար պատրաստող հաստատուԹյան մը մեջ երկու-երեք տարի:

Լայն ընդհանուր կրթուԹյամբ, մասնագիտական լուրջ պաշարով և մանկավարժական տեսական ու գործնական նախապատրաստուԹյամբ և բնականեն ալ կոչում զգացող մարդիկ միայն երբ մտնեն դպրոցներու մեջ ուսուցչական պաշտոնի, անշուշտ որ բոլորովին կփոխվի դպրոցներուն և՛ դերը, և՛ արժեքը, և՛ առաջացուցած հանրային հետաքրքրուԹյունը: Պայմանով մը սակայն, որ ուսուցիչը չբավականանա երբեք «ստացած» մանկավարժուԹյամբ, իր «հետը բերած» ուսման պաշարով և իր «դպրո-

ցական» ընդհանուր կրթութեամբ, այլ կյանքի ու գործի մեջ անընդհատ կարդալով, խորհելով, դիտելով ու փորձելով շարունակ ընդլայնել ու խորացնել իր ինքնակրթութիւնը այդ երեք ուղղութիւններով ալ՝ թէ՛ իբրև ընդհանուր զարգացում, թէ՛ իբրև մասնագիտութիւն և թէ՛ իբրև մանկավարժական ըմբռնումներու հաստնացում:

Այն ուսուցիչը, որ չի քալեր գիտութիւններու զարգացման ղուգահեռ, որ պիրքն ու ընթերցումը ձեռքեն կձգե և որ շարունակ մանկավարժական հարցերու խորացումով իր միտքը չաշխատացներ, ան իրավունք չունի իր պաշտոնովը հպարտ ըլլալու, կղառնա ավելի կամ նվազ վարպետ արհեստավոր մը, ավելի կամ նվազ բարեխիղճ վարձվոր մը, որ իր պաշտոնը կկատարե և ուրիշ ոչինչ:

Սորվեցնել ուզողը շարունակ պիտի սորվի, բարձրացնել ուզողը շարունակ պիտի բարձրանա, և կրթութեան նվիրվիլ ուզողը շարունակ պիտի կատարելագործե իր արվեստը նոր ու նոր փորձերով, ճիգերով և ուսումնասիրութեամբ:

Մեծ պաշտոնները մեծ պարտավորութիւններ կդնեն մարդու վրա, և մարդ պատրաստելը գուցե ամենեն բարձր պաշտոնն է մարդու համար:

ԳՐԱՎՉՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

Կոչումն ու պատրաստված ըլլալը ըստ էութեան հերիք են ուսուցչի մը համար, որ իր հանձնառութիւնը պատվավոր կերպով կատարել կարողանա, այդ երկուքն են ուսուցչական արվեստին հիմքը: Սակայն չատ զգալի կերպով կնպաստավորին այդ երկու հիմնական պահանջները, և կդյուրանա ավելի ուսուցչին գործը, և հաճելի կղառնա աշխատանքը, երբ այդ երկու հիմնական պայմաններուն վրա կավելնա ուսուցչի հրապույրը. այսինքն իր ստանձնած պաշտոնին հետ ըստ երևույթին կապ չունեցող ուսուցչի բոլորովին կողմնակի առավելութիւններն ու շնորհները:

Ամենեն առաջ՝ իր բնավորութեան ցայտուն գծերը: Ուրախ մարդ է, խոսող, կատակող, խնդուն ու լավատես: Սրտի մարդ է, քնքուշ հոգիով, նրբազգաց ու մարդամոտ: Մտքի մարդ է, խելացի,

ուժեղ դատողության տեր և իմաստուն: Գործի մարդ է, արագ դիտող, արագ ձեռնարկող և միշտ ուղիղ ճամբան ու ելք մը գտնող: Կենդանի մարդ է, ամեն բանով հետաքրքրվող, ամեն գործի մեջ նետվող, տղոց հավնելուն ու խաղերուն մասնակցող: Երազանքի մարդ է տարօրինակ արտահայտություններով, զարմանալի համեմատություններով, թևավոր խոսքերով, աշխարհքե կտրված նայվածքով: Բարի մարդ մըն է՝ անհիշաչար ու լայնախոհ ներողամտությամբ, միշտ պատրաստ ամենուն բանով մը օգտակար ըլլալու: Հավիտակված մարդ մըն է, իր գործով, իր ձեռնարկով, իր ուսուցչական պաշտոնով, իր դասավանդած առարկայով: Ասոնք բոլորը և ասոնց նմանները մեծ հրապույրներ են մարդուս էության վրա, որ կքաշեն փոքրիկներուն համակրանքն ու սերը:

Բնավորության այս ավելի ընդհանուր հրապույրներեն ետքը կուգան ամեն տեսակի անձնական շնորհները, տաղանդները, հաջողություններն ու հանրային գնահատանքները, որ ուսուցիչը իր անձին վրա կկրե. լավ ձայն ունի ու երգել գիտե, շնորհալի նկարիչ է, հայտնի հռետոր է կամ դասախոս, ճանչցված գրական դեմք մըն է, բանաստեղծ մը, գիտնական մը, լուրջ հանրային գործիչ մըն է, պետական դիրք ունի, քաղաքական անցյալ ունի կամ վերջապես որևէ գործի մեջ արժեք ցույց տված և ընդհանուր գնահատանքի արժանացած դեմք մըն է: Ասոնք բոլորը հրապույրներ են, հավելյալ արժեքներ, որոնց տեր եղողը կրկնակի դյուրություն ունի բոլոր թարմ հոգիները իր առջև բաց գտնելու:

Դեր ունին և ուսուցչի հարաբերություններուն վրա ազդեցություն կրնեն նաև ուսուցչի արտաքին գրավիչ կողմերը՝ հաճելի ձայնը, արտահայտիչ դեմքը, վառվող աչքերը, զեղեցիկ կերպարանքը, նուրբ ձեռքերը, պարզ ու վայելուչ շարժ ու ձևերը, քաղաքավարի խոսքն ու վարմունքը, ճաշակավոր հագուստը և բծախնդիր մաքրությունը: Ասոնք բաներ են, որոնց հանդեպ արհամարհող ըլլալը մեծ սխալ մըն է միշտ նույնիսկ վերի ավելի բարձր հոգեկան հատկություններու տեր անձերուն համար: Այս ավելի արտաքին գրավիչ հատկությունները ազդեցիկ են անխտիր ամեն հասակի համար, բայց մանավորապես շեշտված է իրենց ազդեցությունը փոքրերուն համար: Հասուն մարդը և հասուն դարձող աշակերտը այդ արտաքին հրապույրներուն պակասը կրնա անտեսել և

արտաքին թերութիւններն ալ կրնա արդարացնել ու մեղմացնել իր ուսուցչի ավելի բարձր կողմերն ու գիծերը աչքի առաջ ունենալով: Մանուկն ու տղան չատ ավելի դժվար և չատ ավելի վտքը չափերով կատարվին այդ տեսակի ներողամտութեան: Անոնք չատ ավելի անմիջական են, չատ ավելի ենթակա վայրկյանի զգայականական ազդեցութեան, որով և չատ ավելի աններող:

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՐՔԸ

Ուսուցիչը իր արվեստով գրքի ու մտածումի մարդ է. ինչքան մեծ է իր ուսուցչական արժեքը, այնքան ալ ավելի բարձր է իբրև մտավորական անհատ: Շատ հաճախ նաև գրական մարդ է, կաշխատակցի լրագրութեան, զանազան գրական ու գիտական պարբերականներու կամ առանձին գրքեր կհրատարակե:

Թե՛ իր գործի բերումով, թե՛ իր լայն ընթերցումով և թե՛ իր ունեցած փորձառութեան պատճառով հաճախ հարկադրված է խորհուրդ տալու ո՛չ միայն աշակերտներուն, այլև զանազան բացատրութիւններ, դրդում ու գաղափար տալու անոնց ծնողներուն. չատ անգամ հարկադրված կըլլա այս ու այն խնդրի վերաբերմամբ հայտնելու իր համոզումը, իր տեսութիւնը թե՛ անհատաբար, թե՛ մասնավոր շրջանակի մեջ և թե՛ հրապարակով:

Այնպես որ հասարակութիւնը բնական ճանապարհով արժեքավոր ուսուցչի մը անձին մեջ ո՛չ միայն իրենց զավակին կրթիչն ու դաստիարակիչը կտեսնի, որ արդեն ինքնին չատ մեծ բան է, այլև մեծերու համար մեկնիչ խորհրդատու մը, տեղյակ մը հանրային, գրական ու գիտական բազմատեսակ հարցերու մեջ: Որով խելք ու հեղինակութիւն ունեցող ուսուցիչը կամաց-կամաց կդառնա հանրային դեմք մը թե՛ դպրոցական չփումներու միջոցին, թե՛ ընտանեկան հարաբերութիւններու ժամանակ և թե՛ հասարակական ձեռնարկներու, ժողովներու և խորհրդակցութիւններու ատեն:

Սա այն դիրքն է, որ հնագույն դարերեն ունեցեր է հոգևորականութիւնը ժողովուրդին մեջ. մինչև ժե դար իր գործով ու արհեստով մտածումի ու գրքի հետ կապ ունեցող և ժողովուրդի հետ մշտական չփման մեջ եղող մտավորականը եղեր է եկեղե-

ցական դասակարգը: Ժ-Թ դարեն սկսած՝ դպրոցներու և մամուլի ժողովրդականացումով և լրագրութեան տարածումով, ինչպես և պետութիւններու հետզհետե ստացած կուսակրութիւնով բարձրացած է ու կը բարձրանայ շարունակ աշխարհական մտավորականներու դիմքն ու դերը հասարակական կեանքի մէջ, որով և ավելի ու ավելի կշեռավի նաև ուսուցչի դերն ու կարևորութիւնը, որ աշխարհիկ նոր մտավորականութեան մեկ խոշոր մասն է:

Ինչքան ատեն որ ուսուցիչը միայն մէջնակարգ ու բարձր վարժարաններու մէջ գոյութիւն ուներ, և մանկական ու նախակրթական վարժարաններ չկային, ուսուցիչը կտրված էր ժողովուրդի լայն խավերեն: Բայց ինչ չափով որ դպրոցները կընդհանրանան ամեն գյուղ ու քաղաք, ամեն ետ ընկած անկյուն, այնքան կշեռավի ուսուցչի դերը ժողովրդական խաւերու մէջ: Սկիզբները ընդհանրապես հոգևորականն ու ուսուցիչը զույգ կերթան իրարու՝ քիչ-միչ իրար ընդհարվելով, բայց ընդհանուր առումով իրար հետ հաշտ, տեսակ մը իրար լրացնող, իբրև իրար պաշտոնակից: Բայց հետզհետե հոս ու հոն այդ երկու տեսակի մտավորականները լրջորեն կբախին իրարու իրենց գիտական, փիլիսոփայական և հանրային ըմբռնումներով. կառաջանա մրցակցութիւն և աղդեցութեան պայքար, պայքար մը, ուր բնական կերպով քանի կերթա կշեռավի աշխարհիկ ուսուցչի դերն ու կարևորութիւնը՝ աշխարհիկ ըմբռնումներու, գիտական զարգացման և կրթական խոհեմներու նոր պահանջներուն զուգընթաց:

Ուսուցչի այս հետզհետե աճող հանրային դիրքը բնական կերպով իր կնիքը կդնե նաև ուսուցչի հանդեպ ժողովուրդի ունեցած վերաբերումին վրա: Իր զավակներու բարձրացումն ու ազնվացումը հոգացող և շատ մը հարցերու մէջ ծնողներու օգնականն ու խորհրդատուն նկատվող ուսուցչի վրա հասարակութիւնը բնական կերպով կդնե որոշ պահանջներ, ինչպես որ ան դարեր շարունակ դրեր է նման պահանջներ հոգևորականութեան վրա:

Ուսուցիչը պետք է ըլլա բարձր բարոյականի տեր. սովորական անհատներու վերաբերմամբ մատներու մէջեն նայված վարմունքները ներելի չեն ուսուցչին: Ուսուցիչը պիտի ըլլա առաքինի, պիտի ապրի մաքուր, պիտի ըլլա օրինակելի անհատական, ընտանեկան և հանրային տեսակետեն, պիտի ըլլա մարդ մը, որու դեմ բացատրիկ

պահանջներ կան: Պահանջ մը, որ խիստ արդար է, և հանրային հարգանքին ու գնահատանքին կամ վստահության արժանացող մը պետք է ըլլայ իր արժանիքը պահել: Առաքինի և օրինապահ բյալը բնական տուրք մըն է, որ պետք է վճարեն ամեն աչքի լույնող ու բարձր գնահատանքի հասնող անձ իր շրջապատողներուն:

Անշուշտ հոս ալ դժվարություններ կան: Շատ անգամ զգալի կերպով կտարբերին լայն հասարակության ըմբռնումները մտավորական մարդոց հասկացողութենեն. առաքինության և բարոյական բարձրության պատկերացումը ամենուն համար միևնույնը չէ: Այս տեսակ պարագաներուն ուսուցչեն կպահանջվի մեծ նրբազգացողություն, վարմունքի զգուշություն և առողջ դատողություն, որ մեկ կողմեն չվիրավորե հասարակության զգացումը, քանի որ ինքը հասարակական ծառայության մը մեջ է, ժամանակի պայմաններեն առաջ վազելու ցույցեր չընե, բայց մյուս կողմեն ալ չանա բարձրացնելու հասարակության մտայնությունը գիտություններու լույսով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Ուսուցչե այս տեսակ բարդ ու բարձր հատկություններ պահանջելը անիմաստ բան է, եթե իր բարձրացման ու ազնվացման հետ չբարձրացնենք նաև անոր տնտեսական վիճակը: Արդի իրականությունը այդ տեսակետեն շատ է տխուր ու վայրենի. բարձրագույն և տեղ-տեղ ալ միջնակարգ վարժարանները մեկդի թողած, որոնց պաշտոնյաները վերջապես բանի մը նմանող, բայց միշտ դեռ շատ պակաս վճար մը կստանան, և երբ աչքի առաջ ունենանք նախակրթարաններու մեջ աշխատող ուսուցիչներուն ստացած վճարը, կտեսնենք, որ ուղղակի ողորմելի է վիճակը:

Եվ ողորմելի ամսականները բնականաբար ողորմելի ու ամեն բանի կարոտ կյանք մը կբերեն իրենց ետևեն, տնտեսական ստորին դիրք մը, ընտանեկան դժվարություններու մեջ տապլտկող անձ մը, որ ո՛չ ժամանակ, ո՛չ ալ միջոցներն ունի իր կատարելագործման մասին մտածելու, ո՛չ ալ նույնիսկ կրթական հարցերով լրջորեն զբաղվելու: Ասոր հետևանքն ալ ան կըլլա, որ ինքզինքը հարգող և իր մեջը ուժ ու կարողություն զգացող մարդիկ չեն մտներ, չեն

կրնար մտնել ուսուցչական մասլարեզը, և ճամբան կբացվի ձախորդ, անկարող, երկրորդական ու ամեն դործի մեջ ետ մնացող անճարակ մարդոց առջև:

Ուսուցիչներու համար տնտեսական բարեկեցիկ ու բարձր վիճակ մը ստեղծելու մասին պետք է հոգան թե՛ պետությունները, թե՛ հետզհետե գիտակցության եկող ծնողները և թե՛ ամեն անգամ հասարակության, որ անդամ մը ըմբռնած է իսկական ուսուցչի խիստ կարևոր դերն ու գործը հասունցող սերունդներու, ուրեմն ամբողջ ազգի բարձրացման ճիգերուն մեջ:

Առանց ուսուցչի տնտեսական պայմաններու հիմնական փոփոխության՝ վերի ամեն տեսակի պահանջները կդառնան պարապ խոսք և անիրագործելի բարի ցանկություններ, ուսուցիչ կոչվելու արժանի մարդոց թիվը կըլլա բացառություն, իսկ մեկ ծաղիկով գարուն չի գար: Ինչքան ատեն որ մարդիկ իրենց խոհարարին ավելի կվճարեն, քան իրենց զավակներու ուսուցչին, և այս վիճակը չատ բնական կզտնեն, ինչքան ատեն որ ձիերու խնամքին ու կրթության համար մասնագետ մարդ մը կփնտրեն մարդավարի վճարով, բայց մարդկային սերունդներուն խնամքն ու կրթությունը կհանձնեն առաջին պատահող մարդուն և անոր ալ մարդավայել ապրուստ մը ապահովել չեն ուզեր, դպրոցները պիտի քալեն չատ դանդաղ և միշտ պիտի մնան հետնյալ, նույնիսկ ավելի նոր շենքերու մեջ, ավելի նոր ծրագիրներով և ամենանոր վերին հրահանգներով: Պետք է նորել մա՛րդը:

Նոր ստեղծվելիք տնտեսական կարգերը և հանրային կյանքի ավելի բարձր կազմակերպությունը չատ բան ունին փոխելու և աղնվացնելու նաև կրթական դետնի վրա: Պիտի դա անշուշտ կրթության էության ավելի խոր ըմբռնումը և այդ գործը վարողներուն բացառիկ կարևորության գիտակցությունը: Եվ այս բարձրացումներուն զուգընթաց նաև ուսուցիչներու տնտեսական վիճակին բարձրացումը, որ ունենան ուսուցիչները իրենց դիրքին վայել կյանք ու ապրուստ և անձնական հոգերե բոլորովին ազատ՝ ամբողջապես նվիրվին իրենց բարձր կոչումին և իրենց բացառիկ հանրային աշխատանքին:

ՅՈԹՆԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ա. ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնակրթություն անվանածնիս ղեկավար կրթություն է, բայց ո՛չ ուրիշներու ձեռքով կատարվող ղեկավարություն մը, այլ իր ձեռքով իր սեփական անձի ղեկավարությունը:

Եվ չափազանց մեծ է իր սեփական անձին գիտակից ղեկավարությամբ տարված այդ ինքնակրթության դերն ու կարևորությունը:

Եվ կարևոր է երկու ուղղությամբ. նախ՝ իբրև չարունակություն ընտանեկան ու դպրոցական ղեկավարության, և երկրորդ՝ իբրև ընդգծումը անհատական ընդունակության:

Ընտանեկան ու դպրոցական կրթությունը, ինչքան ալ ուշադիր եղած ըլլա և դիցուք բռնե հասունացման բոլոր տարիները մինչև համալսարանի դուռը, նորեն միայն հիմք մը կըլլա, հաջող և ամուր դրված հիմք մը. չատ-չատ ավելի կամ պակաս լրիվ կերպով ձևավորված գետնահարկ մըն ալ հետը, որուն վրա դեռ պետք է բարձրացվի իսկական շենքը, բուն վերին հարկերը:

Եվ այդ շենքը կառուցողն ու բարձրացնողը միայն ինքը անհատը կրնա ըլլալ, ուրիշ ոչ ոք, քանի որ արտաքին ղեկավարությունը դպրոցական վերջին տարիներուն հետ դադրած է ու ետ է քաշված արդեն. և քանի որ կառուցվելիք շենքը անհատի մը անձն է, անհատի մը ներքին ուրույն կերպարանքը:

Ինչ օգուտ ունի դիցուք և հրաշալի կերպով դրված հիմքը ու գետնահարկը, եթե ատոր վրա բարձրանա միայն անխնամ ու անշուք կառուցում մը. հիմքին վրա թափված աշխատության և վատնված ժամանակին իմաստը անոր վրա կառուցվելիք շենքն է:

Եվ խեղճ կըլլա այդ չինքը, որ ամեն մարդ իր ամբողջ Հասուն տարիներու ընթացքին և իր կյանքովը բարձրացնելու կձգտի, եթե մարդուս մտքին, վարքին ու կարողությունններուն զարգացումը կանգ է առած դեռնահարկի մակերեսի վրա:

Բարձր խոյանքը, ազնիվ չինվածքը և հոյակապ կառուցումները Հասուն տարիներու երկար, համառ ու ժրաջան աշխատանքով միայն կկերտվին, կամաց-կամաց, քար քարի վրա չարելով, քարը քարին զգուշ չաղախելով, հաճախ նույնիսկ չինելով ու քանդելով, շտկելով ու նորեն նոր կառուցելով:

Ամեն մարդու կյանքին ու գործին արժեքն ու հրապույրը խիստ մեծ չափերով կապված է իր բարձրացման համար թափած ճիգերուն ու չանքերուն: Մարդը, իսկապես արժեքավոր մարդը իր ամբողջ կյանքի ընթացքին կձգտի իր բարձրացման, իր կատարելագործության, ավելի Հասուն, ավելի գիտուն, ավելի նուրբ և ավելի ազնիվ դառնալու, իր ամբողջ կյանքի ընթացքին կձգտի ավելի ու ավելի Հարստացնելու իր միտքն ու իր զգացումները՝ ավելի ու ավելի չփվելով գիտություններուն, արվեստներուն, կյանքին ու իր նմաններուն:

Ինքնակրթության Հետևիլը և իր ինքնակրթությունը Հոգալն ու մշակելը բնավորության գծերը կրթող և Հոգիները խորացնող ամենեն կարևոր գործն է. Հունձքի մանգաղները սրող Հետանն է ան: Բոլոր մեծ մարդիկ, բոլոր մեծ տաղանդները ամեն աստիճաններու վրա, բոլոր գիտնականներն ու արվեստագետները միաբերան կկրկնեն, որ իրենց բարձրացման և Հաջողության մեծագույն մասը կպարտին ամբողջ կյանքի ընթացքին իրենց գործադրած գիտակից ու կանոնավոր ինքնամշակման: Եվ ինքնակրթության Համար թափվող այդ չանքերը միևնույն ժամանակ Հաստատ վկայություն մըն են գործադրող անձի Հոգեկան մեծության և քաղաքակրթության բարձրության:

Ինքնակրթության առաջին դերը ուրեմն մարդը բարձրացնելն է իբրև մարդ, իբրև կրթված մարդ, իբրև անՀատական ու Համրային արժեք, իբրև իր ժամանակի քաղաքակրթության բարձրություններուն Հասնելու տենչացող մարդ, այսինքն ղեկավարության տարիներեն ետքն ալ կշարունակվի միշտ ղեկավար կրթության կատարած գործը:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳԾԵՐՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ

Ինքնակրթության երկրորդ մեծ դերը անոր ունեցած մեծ ազդեցությունն է հատկապես անհատական ընդունակություններու, անհատական կարողություններու և անձնական գծերու զարգացման վրա:

Ուրիշներուն ղեկավարությունը ինչքան ալ որ աչքի առջև ունենա անհատներու ներքին կազմը, ներքին դրդումներն ու հակումները, միշտ ալ շատ տկար է անոր այդ կողմը: Եթե քիչ-շատ ճիգ կըլլա կյանքի առաջին տասնյակին մեջ գտնվող մանուկներու ներքին աշխարհը թափանցելու և անոնց անհատական գծերը օգտագործելու, երկրորդ տասնամյակին չափազանց կնվազի այդ ճիգը, ամեն պարագայի գործնականապես շատ քիչ ազդեցություն ունի մեր ավանդելիք ծրագիրներուն և ավանդման եղանակներուն վրա:

Ուրիշներուն ղեկավարությունը իր հիմնական գծերով անհատականություններու մեջին թիվի մը կարողությունները և մեջին թիվի մը հոգեբանությունը ունի աչքի առջև և անով կղեկավարվի: Ամեն մեկ աշակերտի առանձնահատկություններուն ու մեկուսի գծերուն ու հակումներուն խոր ու լուրջ կերպով հետևելու ո՛չ ժամանակը ունի, ո՛չ ծրագիրը:

Այլևս մարդկային հոգին շատ գոց ու խրթին անկյուններ ունի, շատ զարմանալի անակնկալներ ու խորունկ տենչանքներ, ուր չեն կրնար թափանցել ուրիշներուն աչքերը, ինչքան ալ ղեկավարը փորձված ըլլա և հոգեբանական ուսումնասիրություններով պայծառացած միտք մը ունենա. իրականությունը հարուստ չէ այդ բարձրության կեցած ղեկավարներով:

Եվ վերջապես դուրսեն եկած ղեկավարությունը իր սեփական իտեալներն ունի, իր գերազասած ուղղությունը սանիկներու ներկային ու ապագային համար և բնական կերպով դեպի այդ ցանկալի հորիզոնները կուղղե շարունակ իր նավուն ցառուկը, որ ամեն անգամ մանկան անհատական ձգտումներուն հետ աղեկ չեն բռներ իրար:

Թե՛ ժամանակի տիրող հայացքները, թե՛ յուրաքանչյուր ժողովուրդի կյանքին պայմանները, թե՛ դասակարգային ու վիճա-

կային ըմբռնումները և թե՛ իրեն ղեկավարին հոգեկան-մտավոր կազմը խոշոր բաժին և աղդեցություն ունի ղեկավարության դործին մեջ: Եվ այս բոլոր աղդակները կրթվող էակի ներքին կառուցումին նպաստավոր չեն ամեն անդամ. երբեմն կարհամարհվին նկատված կողմերը, երբեմն կանտեսվին, երբեմն բնավ չեն նշմարվիր, և կրթությունը շատ հաճախ քովեն կանցնի մանուկներու նուրբ ու առանձնահատուկ կողմերուն ու խորքերուն վրայեն կամ ուղղակի դեմ կերթա անոր բնական հակումներուն, անոր ներքին բնական պահանջներուն, անոր բուռն որոնումներուն:

Ուրիշներուն ղեկավարությունը, ուզենք թե չուզենք, ամենքը իրար մոտեցնելու, ամենքը իրար նմանցնելու, իրար հավասարեցնելու և ամենուն վրա միևնույն աչքով նայելու պահպանողական ճամբուն կհետևի, իր խորքը համայնական է և կենտրոնաձիգ, դեպի ընդհանուր կեդրոն մը կքաշե և ընդհանրապես ամենուն համար պիտանի նկատված բաներու ամրացմանը կաշխատի:

Այս ամենուն հակադրությունն է ինքնակրթությունը: Երբ ես-ն է, որ ինքզինքը կրթել կուզե, ամենեն առաջ կղեկավարի ես-ին սիրելի, ես-են բաղխող, իր բնական հակումներուն հարմարող, իր ներքին պահանջներուն բավարարություն տվող աշխատանքներով: Եթե միջավայրի աղդեցության տակ կամ արտաքին գործնական պետքերու առջև վիզը ծռելով իրեն շատ չհետաքրքրող, իր ներսեն չեկող բաներով ալ զբաղվելու հարկադրվի, միշտ ալ այդ աշխատանքը կմնա երկրորդական գծերու վրա, իբրև անխուսափելի չարիք, իբրև փորձանք ու բեռ, երբեք ինքնակրթության իբրև հիմնական նյութ:

Ինքնակրթությունը բնական անհրաժեշտության համը իր ընդունակություններու լայն ու լրիվ զարգացմանը կձգտի, իր ունակություններու լայն ու լրիվ բացմանը: Գիտակից թե անգիտակ՝ ինքնակրթությունը գլխավորապես անհատական կողմերու ուժեղացմանը կաշխատի, իր բնական կազմին, իր չնորհքներեն ու առավելություններեն համ ու հաճույք կդգա և կտեսնե, որ հատկապես այդ կարգի աշխատանքներուն մեջ կհաջողի, և ատոնց վրա աշխատելու ատեն նոր-նոր բաներ, նոր-նոր մտքեր, նոր-նոր կառուցումներ կգոյանան իր դատողության և իր երևակայության դեմ և իր մատներուն տակ:

Ինքնակրթությունը խնամոտ ու գուրգուրացող մայրն է բոլոր տաղանդներուն, բոլոր բնածին հակումներուն, բոլոր սովորականին չեղող ու բարձրացող շնորհքներուն և ընդունակություններուն:

ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՎԵՍՏ

Ինքնակրթությունն ալ իր տեսակի արվեստ մըն է, ղեկավար կրթության նման, որոնք, ինչպես բոլոր մյուս մարդկային արվեստները, կլացվին ու կկատարելագործվին մարզանքով, վարժությամբ, գործադրելով:

Ամեն մարդ ալ բնականեն ունի որոշ չափ մը ներքին պահանջ իր զարգացման մասին խորհելու, երբ հասուն տարիքին կհասնի, բայց ընդհանուր առումով ինքնակրթությամբ զբաղվելու ներքին բնածին ու չեչտված հակումը բացառություն կարելի է նկատել, ինչպես բացառություն են մեծ տաղանդները ամեն գործի ու արվեստի մեջ:

Կյանքի պայմաններն ու շրջապատն ալ այդ ուղղությամբ կազդեն ու կդրդեն որոշ չափով մը ընդհանրապես, բայց անվար կրթության բոլոր մյուս տված բաներուն պես այս ինքնակրթության դրդումներն ալ կապված կըլլան միշտ պատահականություններու, խոշոր բացերու, անհեռևողական են, ոստումնավոր ճիգեր են, փոքր ու մեծ ընդհատումներով, որով և թերի:

Եվ ինչպես բոլոր հոգեկան երևույթներու զարգացման մեջ ընտանեկան ու դպրոցական գիտակից ու կանոնավոր ղեկավարությունը կարևոր դեր մը ունի միշտ, այդպես ալ նույնն է իրողությունը նաև ինքնակրթության վերաբերմամբ : Ղեկավար կրթությունը հասունցող տարիներու ընթացքին պետք է հոգա նաև մարդկային հոգիի այդ կողմի զարգացման մասին: Ո՛չ միայն պիտի հոգա, այնպե՛ս, իմիջայլոց, այլ իր ամենեն հիմնական նպատակներեն մեկը պիտի դարձնե իր սանիկներու հոգիին մեջ ինքնակրթության պահանջն ու կարողությունը զորացնելը:

Ղեկավար կրթության առաջին անմիջական նպատակն է իր սաներու հոգեկան կարողությունները մշակելը, դաստիարակելը և մտավոր որոշ պաշարի մը ամբարումը անշուշտ, բայց ամեն

դեկավար կրթության երկրորդ մեծ պարտավորությունն է, և միշտ պիտի ըլլա, սորվեցնել այն ճամբան, որով հոգեկան կարողությունները կմշակվին, և մտավոր պաշարները կամրարվին, և դնել անոնց հոգիներուն մեջ այն խոր ու այլուղ պահանջը, որ ապագան այլևս ընդմիշտ ձգտում դգան իրենց կարողություններու ու գիտության կատարելագործմանը և իրենց հոգեկան պաշարի անվերջ հարստացմանը:

Ղեկավար կրթությունը իր արժեքով այնքան բարձր է, որքան որ խոր կերպով հաջողած է հրահրել իր սանիկներու կրծքին տակ այդ մշտական ու անդադար ինքնազարգացման վառ կրակը և ինչ չափով որ վարժեցուցած է քալելու հարատև ինքնազարգացման այդ ճամբուն վրա և սորվեցուցած է քալելու ալ եղանակը:

Ղեկավար կրթության պարտականությունն է՝ 1) կրթել անհատներու հոգիին մեջ ինքնաչխատությունը, 2) կրթել անհատներու ընթերցասիրությունն ու ընթերցանությունը և 3) կրթել ինքնակրթությամբ զբաղվելու գիտակցությունը:

Բ. ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

ԿՐԹԵԼ ԻՆՔՆԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ինքնաչխատությունը կրթելու առաջին պայմանը աշխատանքը սիրցնելն է:

Սիրցնելու առաջին պայմանն ալ աշխատանքը հաճելի դարձնելն է: Իր ուժեն վեր գործերը, իր տարիքի հետաքրքրություններեն դուրս եղող աշխատանքները, վերացական զբաղումները, բարդ ու խառնակ ու խճճված խնդիրները և ամեն ինչ, որ մեծ ճիգերով ու դժվարությամբ ձեռք կբերվի կամ աղոտ ու անորոշ կերպով կհասկցվի, տհաճություն կառաջացնե փոքրիկներու հոգիին մեջ. ուրկե անոնք բնական կերպով կխուսափին և իրենք իրենց կամքով բնավ այդ տեսակ բաներով չեն զբաղվիր: Ընդհակառակը, իրենց տարիքին համապատասխան նյութերով ու կենդանի դիտողությամբ հոգեկան աշխատանքները, իրենց ուժերուն համեմատ և իրենց համար հետաքրքրություն ունեցող ձեռական,

մարմնական և մտավոր զգացական զբաղումները, դյուրին կատարվող և հաջողելու բավականությունը տվող գործերը, ինչպես և ծիծաղ ու զվարճության հետ կապված բաները միշտ ցանկալի և միշտ գրավիչ են ինչպես մեծերու, այնպես ալ փոքրիկներու համար. անոնց փնտրած և ընել ուզած բաներն են:

Աշխատանքը սիրցնելու երկրորդ հիմնական պայմանն է, որ հնար եղածին չափ ամեն ինչ իրենք ընեն: Մարդս ամենեն ավելի իր ըրածեն համ ու ախորժ կստանա. իր թերի ու ծուռ կատարածը այս տեսակետեն անհամեմատ ավելի արժեքավոր է, քան ուրիշներուն վարպետ գործադրությունը: Ինչպես արդեն չեշտած եմ նախորդ գլուխներուն մեջ, ամբողջ ուսուցման հիմքը պիտի կազմե ո՛չ թե բացատրել, ըսել ու տալ ամեն ինչ պատրաստ, որ անոնք ալ յուրացնեն ու կրկնեն, այլ առաջնորդել, դրդել ու ղեկավարել, որ տղան ինքը դիտե, ինքը դատե, ինքը խմբե ու եզրակացնե, ինքը օրենքները գտնե ու հանե. ինքը վճռե, ինքը երևակայե, ինքը զգա, ինքը չինե, ինքը ընե, ինքը գործադրե, միշտ ինքը, ուր որ հնար է, ինչ որ հնար է: Արդեն երեխաները չարունակ կպահանջեն, որ իրենք ընեն. պետք է ընդառաջ երթալ, պետք է օգտագործել անոնց այդ բնական պահանջը և ավելի ուժեղցնել: Թե՛ ուսումը ատով ավելի խոր կըլլա, թե՛ աշխատանքը հաճելի և թե՛ ինքնաշխատությունը արյուն ու սովորություն կդառնա :

Աշխատանքը սիրցնելու երրորդ պայմանը աշխատանքը հարգել ու գնահատելն է: Միշտ հարգանքով ու գնահատանքով պետք է վերաբերվիլ փոքրիկներու զբաղումներուն ու արտադրածին. սխալը երբեք ծաղրանքի նյութ պետք չէ դառնա. ամեն հաջող ու ճիշդ քայլ պետք է ընդգծվի ու գնահատվի, թերությունները միշտ մեղմությամբ ու խոր ներողամտությամբ պետք է ճշդվին ու սրբագրվին. անկարողությունն ու ձախողանքը նորնոր փորձերով, սիրտ տալով ու կատակով պետք է չտկվի, և մեր տված օգնությունն ու լրացումներն ալ լավ է միշտ սքողված մնան, իբրև երկրորդական բան մը անոնց ըրածին վրա:

Ինչպես որ մենք հարգանքով ու գնահատանքով կվերաբերվինք անոնց ըրածին, ըսածին ու չինածին, այնպես ալ իրենք միշտ հարգանքով ու գնահատանքով պետք է խոսին ու վերաբերվեն իրարու ըրածին, ըսածին ու խոսածին վրա: Սրտանց ու անկեղծ

ուրախությամբ. դեմ պիտի դան միշտ փոքրիկները իրենց ընկերներու հաջող քայլերուն, հաջող ըսածին, հաջող չինածին, ուրախություն պիտի զգան ամեն հաջողության դեմ: Նախանձը ամենեն ոգեղ ու վատ զգացումն է. ամենուն հաջողությունները տեսնել, վայելել ու գնահատելն է, որ կբարձրացնե հոգիները և հոգիներուն մեջ հյուսվող կապը. լավը գնահատելը լավը ընելու ճիգ ըսել է, մրցում է ու մղում դնպի վեր: Իր աշխատանքը և իր ընկերներուն աշխատանքը սիրելն ու գնահատելը աշխատության թև կուտա: Աշխատանքին հաջողը, աշխատանքին ընտիրը ճանչնալն ու գնահատելը աշխատանքին ազնվություն կուտա:

Բ. Ինքնաշխատությունը կրթելու կարևոր պայման մըն է իր աշխատանքը ինքը վարելու վարժեցնելը: Ընտանեկան ու դպրոցական ղեկավարությունը տարվե տարի ետ պիտի քաշվի, ու հետզհետե ավելի ու ավելի մեծ ու կարևոր մասերով աշխատանքին գործադրությունը տղոց ձեռքը պիտի հանձնվի:

Մանկապարտեզի շրջանին կրթական ամբողջ գործի անմիջական ղեկավարությունը ուսուցչի ձեռքն է, և բոլոր աշխատանքները կկատարվին ուսուցչի հետ և ուսուցչի աչքի տակ:

Տարրական նախակրթարանի մեջ կշատնան կամաց-կամաց դուրսը, տունը կատարվելիք մասերը, բայց միշտ ավելի դյուրին, ավելի կրկնություն եղող մասերը, ինչպես արտագրություններն են, զանազան վարժություններ, ընթերցման կրթություն, սորվելու և ըմբռնելու հիմնական աշխատանքը դեռ միշտ դասարանին մեջն է և ուսուցչի հետ միասին:

Բարձր նախակրթարաններու մեջ դասերուն պատրաստությունը ամբողջովին կնետվի տղոց վրա, առանց դյուրինն ու դժվարը փնտրելու. դասարանին մեջ դասերու ամենեն հիմնական մասերը միայն կմշակվին ուսուցչի հետ և մեյ մըն ալ դուրսը կատարված աշխատանքին ստուգումը, վավերացումը: Դաս սերտելը, այսինքն իր սորվելիքը դիտել, մտածել ու յուրացնելը, ինչպես և այդ յուրացման կապված բոլոր փորձերն ու գործադրությունները և կատարվելիք բոլոր բանավոր ու գրավոր վարժությունները կձգվի տղոց վրա. իրենք պիտի ընեն իրենց «պարտավորությունները», իրենք պիտի ըլլան իրենց աշխատանքը վարողն ու հսկողը. ուսուցչին կմնա նախօրոք իր անհրաժեշտ համարած խորհուրդները տալ գործը

ավելի դյուրացնելու կամ արագացնելու համար:

Իսկ ընդհանուր կրթութեան լսարանական շրջանին շատ ավելի կխորանա ու կընդլայնի տղոց և՛ ինքնաչխատութիւնը, և՛ ինքնավարութիւնը: Ուսուցումը տեսակ մը երկու մասի կբաժնվի, շատ ավելի մեծ չափերով, քան նախորդ տարիներուն: Նախ՝ ամբողջ դասարանին համար պարտադիր եղող մաս մը ամեն առարկայե, որ ընդհանրապես ուսուցիչը ազատ կդասախոսե, գրքեր ու էջեր կնշանակե և յուրացման բոլոր աշխատանքը կթողնե աշակերտներուն վրա: Կա երկրորդ մաս մը ամեն առարկայի համար, ուր ամեն մեկ աշակերտ առանձին կամ մեկ-երկու ընկերոջ հետ խմբովին կլծվի որոչ մասնավոր ուսումնասիրութեան մը, հարցի մը որոնումին, նյութի մը դիտողութեանն ու քննութեանը: Այս մասնավոր ուսումնասիրութիւնները կկատարվին արդեն աշակերտներու լիովին ազատ աշխատանքով ու ղեկավարութեամբ: Աշխատանքը ընտրողը, ծրագրողը, թե՛ տեսական և թե՛ գործնական մասերը վարողն ու մշակողը տղաքը իրենք են: Եվ աշխատանքին արդյունքն ալ վերջը կներկայացվի ամբողջ դասարանին և կենթարկվի ընկերներու քննութեան, որու միջոցին ուսուցիչը վավերացնող, գնահատող մըն է միայն, գուցե և որոչ կետերու մեջ լրացնող մը:

Այսինքն ամեն կրթական հաստատութիւն աշխատանքը սկրել տալու իր մշտական ճիգերուն կից՝ դպրոցական տարիներուն մեկ ծայրեն մյուսը ուշադիր կերպով պետք է հետևի , որ տղաքը ձեռք բերեն իրենց կատարած աշխատանքը վարել գիտնալու վարժութիւնը, ինքնաչխատութեան գործադրութիւնը: Այս վարժութիւնը ամենեն թանկագին նպաստն է, որ կրնա տալ ղեկավարութիւնը ապագա ինքնակրթութեան:

Գ. Ավելի ևս կչեչտվի ղեկավար կրթութեան տված նպաստին արժեքը, եթե դպրոցն ու ընտանիքը այդ դպրոցական տարիներուն ամեն կերպով աշխատին և օգնեն, որ տղաքը ո՛չ միայն կերպով մը, ընդհանրապես վարժվին ինքնավար աշխատանքի, այլ վարժվին ու ձեռք բերեն ինքնաչխատութեան ամենեն ավելի նպաստավոր և արդյունավոր ձևերը գործադրութեան: Պետք է աչքի առաջ ունենալ հատկապես երեք կետ , որոնց մասին խոսված է արդեն, բայց ավելորդ չէ հոս կրկնելը:

Առաջին՝ ինչպես դպրոցին մեջ ամեն ինչ որոշ ժամերով կկատարվի, այնպես ալ սովորութիւնն պետք է դառնա, որ ամեն տղա իր տանու աշխատանքները ենթարկէ որոշ ժամանակացոյցի. օրինակ, ենթադրենք, իր աշխատանքներուն համակացնէ իրիկունները ժամը 5-7. ուրեմն՝ նախ դասերու պատրաստութեան և, եթէ ժամանակ մնա, ազատ ընթերցման: Այս որոշումեն ետքը ալ ամեն կերպ ջանալու է, որ այդ երկու ժամերը գործադրվին լրիվ կերպով միայն և միայն այդ աշխատանքներուն վրա, և իր ընտանիքն ալ, եթէ կսիրէ իր զավակը և իր զավկի ներկա ու ապագա հաջողութիւնները կցանկա, իր ձեռքին եկածը պիտի ընէ և տա տղուն այն պայմանները, որ տղու աշխատանքը չընդհատվի ու չխանգարվի, ծուլացումներու և թերացումներու պարագային ալ հենարան ու դրդիչ ըլլա, որ որոշված ժամերը ճիշդ հարգվին և լրվին հարգվին : Նույն ձևով ալ դիտուք առտուները ժամ մը, օրինակ՝ 6-7: Գիշերօթիկ դպրոցներու փորձառութիւնը ցույց կուտա, որ նույն ժամերուն հաստատ կերպով կրկնվող «սերտողութիւնները» զգալի կանոնավորութիւն կուտան անհատներու աշխատելու տրամադրութեան, որ անկե ետքը ամբողջ կյանքի համար անհատին վրա կմնա:

Երկրորդ կարևոր կետը կեդրոնացած կերպով աշխատելու վարժվիլն է իր մտավոր բոլոր ուժերը հավաքած, ո՛չ թե կես խոսելով, կես մը ուրիշներու խոսակցութեան հետևելով, կես մը փոքրիկ եղբորը հետ խաղալով կամ պարզապես մատիտը կրծելով ու երկինքը դիտելով: Չափազանց մեծ արժեքով առավելութիւն մըն է ամեն անգամ ամբողջ հոգիով իր առջևի գործին նվիրվիլ պիտանյը:

Այդ կեդրոնացումը հնարավոր դարձնելու համար պետք չէ բնական սահմանեն ավելի երկար միտքը լարած պահել. երկու ժամվան աշխատութեան ժամանակը, օրինակ, տասը վայրկյանի դադարով մը պետք է ընդմիջվի, և ընդմիջումի ատեն պետք չէ մնա իր նստած տեղը, պետք է ելլե բաց օդը, եթե հնար է, պետք է շարժվի, խաղա, բոլորովին ուրիշ տեսակի բաներով զբաղվի, խոսի ու կատակե: Եվ երկրորդ՝ իր որոշած ժամեն ավելի պետք չէ իր գործին վրա մնա, ժամանակը որ լրացավ, պետք է արագ կետի մը հասցնել և ընդհատել, չարունակել ուզելը օգտակար աշխա-

տուժյուն չէ. այսօր երկար աշխատողը վաղն ալ կկրճատեւ. ով տևական աշխատիլ կուզե իր ամբողջ կյանքին համար, պետք է ժամերը խիստ հարգն և ժամերուն հետ ալ շատ կարևորուժյուն տա կեդրոնացած աշխատուժյան:

Կեդրոնացման նպաստելու համար մեծ կարևորուժյուն ունի և տեղը. ինչքան մեկուսի, ինչքան առանձնացած ու գոց դուռով ըլլա իր «աշխատանոցը», այնքան բնականաբար կդյուրանա կեդրոնացումը:

Երրորդ՝ արդյունավոր աշխատուժյան համար կարևոր կետ մըն է նաև իր ամեն անգամվան աշխատանքին մեջ որոշ կարգ ու կանոն մտցնելը և իր դրած կարգը ճշդիվ պահելը: Ո՛չ թե ինչպես պատահհեցավ՝ թվաբանուժյան խնդիր մը, եռևեն ալ ընթերցանուժյան դրքեն մեկ-երկու երես, եռևեն ալ վարժուժյուն մը փրանսերեն և եռքը նորեն խնդիր մը թվաբանուժյան, ինչպես որ պատահի: Ո՛չ: Աշխատանքը սկսելե առաջ պետք է աչքի առաջ բերել ինչ-որ ունի այսօր ընելիք. ընելիքներեն լավագույն է ամենեն դժվար համարածը դրվի ամենեն առաջ, անկե եռքն ալ որոշվի երկրորդն ու երրորդը և անմիջապես ձեռնարկվի դրված որոշումներու գործադրուժյան: Տրված որոշումները լավ է միշտ, որ երբեք չխախտվին. մինչև մեկ աշխատանքը լրիվ չավարտի, պետք չէ անցնիլ ուրիշ աշխատանքի և մանավանդ ավելի դյուրին, ավելի սիրած ու հաճելի աշխատանքները պետք չէ առաջ քաշվին, ինչպես որ ներքին նախասիրուժյունները հաճախ կթելադրեն: Եվ մանավանդ, ազատ ընթերցանուժյամբ կամ իր կողմնակի ուրիշ աշխատանքով պետք չէ զբաղվիլ, մինչև որ իր դպրոցական պարտավորուժյունները լիովին ավարտած չըլլա:

Աշխատելու ատեն ինքն իր վրա դրված այս պայմանները հարգված պահելը շատ ավելի մեծ կարևորուժյուն ունեցող հարց մըն է, քան մենք սովորաբար կրնանք ենթադրել: Այսինքն իր վրա դրված ու պահված կարգն ու կանոնը կդյուրացնե աշխատանքը, շատ ավելի արդյունավոր կդարձնե աշխատանքը, աշխատելու մեքենական կամքը, և այս բոլորի հետևանքով կանոնավոր աշխատանքի լծված մարդը իր հոգիին մեջ հպարտուժյուն կզգա ու արժանապատվուժյուն. գիտե, որ ինքը արժեք մըն է:

Ինքնակրթության ամենեն գլխավոր գործիքը ազատ ընթերցումն է, հաճախ գրքերն են ինքնակրթության միակ գործիքը: Տղաքը գրքերուն կապելը և գրքերը գործածել վարժեցնելը հատուկ պահանջ է ուրեմն ինքնակրթության և հիմնական պարտավորութիւնը ընտանեկան ու դպրոցական ղեկավար կրթության:

Ընթերցանութիւնը սիրցնելու և տղաքը ընթերցանության կապելու միակ իրական միջոցն ալ հարատև ընթերցումն է, այսինքն դպրոցական տարիներու ամբողջ ընթացքին մեկ ծայրեն մյուսը տալ տղոց չարունակ ընթերցանութեան բոլոր հաճույքը, հրապոյրը, դեղեցկութիւնն ու հետաքրքրութիւնը: Այդ հարատև, ջերմ ու մտիկ չփումն է միայն գրքերու հետ, որ ընթերցման սերը կներշնչէ տղոց իրենց ամբողջ կյանքին համար և խորին պահանջ մը կզարձնե մշտապես ընթերցանութեան վայելքներն ունենալը և ընթերցանութենեն մշտապես օգտվիլը:

Տղաքը դեռ հազիվ լեզու ելած, մոտավորապես երեք տարեկանեն սկսած մինչև անոնց 7-8 տարեկան դառնալը պետք է կարդան ընտանիքին մեծերը, մայրը հատկապես, փոքրիկ պատմութիւններ սովորաբար անոնց ծանոթ կենդանիներու կյանքեն առած կամ նմանցուցած և կամ երեխաներու իրենց սեփական կյանքեն և իրենց անմիջական ծանոթ շրջապատեն քաղված նյութերով. պետք է կարդան ներսով և դուրսով գեղեցիկ ու գրավիչ գրքերու վրա՝ մեջը լեցուն պատկերներով՝ և՛ միագույն, բայց մանավանդ գույնզգույն պատկերներով: Գիրքը երեխաներուն ձեռքը ամենեն սովորական խաղալիքներեն մեկը պիտի ըլլա՝ իրենց զարգացման գլխավոր գործիքը դառնալե առաջ:

Այդպես ալ այդ միևնույն մանկական շրջանին մանկապարտեզի վարժուհիները, անկախ իրենց պատմած ընթացիկ պատմութիւններեն, հատկապես գիրքը սիրցնելու համար պետք է կարդան մեջեմեջ ընտիր ու գեղեցիկ կտորներ ու պատմութիւններ՝ գեղեցիկ տպած ու պատկերազարդ գրքերու վրա, պատկերները ցույց տալով, ու միասին խոսակցութեան նյութ դարձնելով:

Այս մեջընդմեջ ընթերցումները տարրական նախակրթարանի առաջին երկամյակին մեջ կվերածվին արդեն կանոնավոր կրկնու-

թյամբ ընթերցանության շաբաթական մեկ-երկու պահով: Կկարդա վարժուհին ինքը, նախապես իր ընթերցումը խնամքով պատրաստած ու մտածած. կկարդա սրտանց և իր հնարավոր չափովը պարզ ու գեղեցիկ ընթերցումով, ուրկե ետքը իր պատմածը կդարձնե խոսակցության նյութ՝ գրվածքի գեղեցկություններն ու խորությունները ավելի ընդգծելու ջանքով: Մնջեմեջ դպրոցական սերտողություններու պահերուն վարժուհին կուտա շատ պարզ և ընտանի նյութերով և առատ պատկերներով պատմություններ աշակերտներեն մեկուն-մեկալին իբրև առանձին ընթերցման առաջին փորձ, առաջին հրապույր:

Եվ ալ անկե ետքը տարրական նախակրթարանի կեսերեն սկսած մինչև ընդհանուր կրթության վերջը տարվե տարի ընթերցումը դառնա պիտի անհրաժեշտ ու խնամված մեկ կողմը դպրոցական կրթության: Ընտանիքն ալ անշուշտ կրնա օժանդակել, բայց լավ է, որ ղեկավարությունը գտնվի դպրոցին ձեռքը:

Բ. Եվ դպրոցական այդ ղեկավարությունը կկատարվի երկու ճամբով, որ կրնանք անվանել պարտադիր ընթերցում և ազատ ընթերցում:

Ամեն առարկայի ուսուցիչ իր ավանդած դասերուն իբրև լրացում կուտա գրքեր կամ էջեր զանազան գիտական կամ ավելի լայն հասարակության համար խմբագրված լուրջ երկերե, հավաքածուներե կամ պարբերականներե: Ամբողջ դասարանը որոշ ժամանակի մը ընթացքին պետք է կարդա նշանակված կտորը, և ամենքն ալ պետք է հանեն գրվածքեն ուսուցչի տված հարցերուն պատասխանները: Կրնա պատահիլ, որ հանվելիք հարցերը բաժանված ըլլան, տարբեր խումբերու տարբեր հարցեր կամ ամեն մեկ աշակերտի զատ խնդիր մը: Երբ բանավոր կամ գրավոր կերպով պատրաստված են աշխատությունները ըստ պատվերի, որոշված օրը դաս մը կնվիրվի ստացված արդյունքը լսելուն աշակերտի բերնեն իր ընկերներու ներկայության, և որ կդառնա ընդհանուր դատողության նյութ: Երբեմն ալ կարդացված կտորը կդառնա ուղղակի միասին կատարվելիք վերլուծության մը նյութ:

Իսկ ազատ ընթերցանության ղեկավարությունը պետք է գտնվի յուրաքանչյուր դասարանի դաստիարակ-ուսուցչին ձեռքը: Դաստիարակ-ուսուցիչը շաբաթական անգամ մը, երկու կժողվի իր

տղաքը և կվտոսի այդ տարիքի ու այդ դասարանի համար կարևորութիւն ունեցող ամենեն արժեքաւոր գրքերու նյութին ու գիտեցկութիւնը մասին, կջանա հետաքրքրել ու դրդել կարդալու. տղաքը իրենք ալ կդիմեն անոր խորհրդին, և ուսուցչի հետ միասին կընտրվի գիրքը, որ տղան այլևս բոլորովին ազատ կառնն ու կկարդա: Կարդալեն ետքն ալ սովորաբար և բնական կերպով խոսակցութեյան նյութ կրնա դառնալ, ըլլա ուսուցչին հետ, ըլլա ընկերներուն, ըլլա ամենքը միասին: Եվ դաստիարակը կհետևի, թե ամեն մեկը ինչ կկարդա, ինչպե՞ս կկարդա և ինչ չափով կկարդա: Մասնաւոր խոսակցութեյամբ կուտա իր խորհուրդներն ու դրդումը ու կջանա, որ տարվան ընթացքին միջին հաշվով ամիսը գիրք մը անպատճառ կարդացած ըլլա ամեն մեկը: Լսարանական շրջանին կամաց-կամաց գրքերու ընտրութեյունն ալ ու ազատ ընթերցումն ալ կանցնի բնական կերպով ամեն մեկ աշակերտի ինքնաղեկավարութեյան. լսարանական վարիչի միջամտութեյունը քանի կերթա, ավելի մեղմ կդառնա և ավելի հեռվեն. վորձված ու կարդացած հարգելի մարդու մը կարծիքը:

Գ. Հերիք չէ միայն կարդացնել տալը. կարևոր է նաև ինչպե՞ս կարդալը: Պետք է ընդգծվին հետևյալ կետերը:

1. Պառկած չկարդալ, ուղքի վրա չկարդալ և մանավանդ քալելով չկարդալ, այլ միշտ աթոռի վրա և գիրքը դրասեղանին. կես մուխի մեջ երբեք չկարդալ. լավ է՝ միշտ լույսը ձախ կողմեն: Ով ամբողջ կյանքը կարդալ կուզե,պետք է աչքերը խնայե:

2. Ընթերցումն ալ, դասերու նման, պիտի ըլլա պարբերական, չաբաթական քանի մը ժամ, հնար եղածին չափ նույն օրերուն և մանավանդ նույն ժամերուն: Պետք է տևե ամեն անգամ ժամէ մը ո՛չ շատ ավելի: Շատ գեշ ընթերցում է ամբողջ կիրակի օր մը գրքի մը վրա նստիլը անհարմար անկյուն մը կծկտած. վնաս է մարմնին, մտքին ալ մեծ օգուտ մը չկա: Շատ սխալ հասկցված հպարտութեյուն մըն է, թե ամբողջ գիշերը նստեցա ու ավարտեցի: Ասիկա ընթերցում չէ, այլ գրքի մը էջերուն վրայեն վազել:

3. Արագ չկարդալ երբեք, շտապելով չկարդալ, շուտով վերջին հասնելու անհամբերութեյամբ չկարդալ. շատ վատ տեսակի ընթերցում է վերջը ինչ եղած ըլլալը հասկնալու համար կատարված

ընթերցումը: Շատ թարմ տարիքեն պետք է վարժվին պզտիկները գրքերուն հետ ապրելու: Միայն հանգիստ ու ծանր ընթերցումը, հաճախակի ընդհատումով, հոս ու հոն կենալով ու վրան մտածելով, կուտա և՛ վայելք, և՛ օգուտ: Հաճելի կտորները երկրորդ կամ երրորդ անգամ կարդալ, չհասկցված բան մեջը չթողնել և էջերուն ու զանազան կարգի նկարագրություններուն ու բացատրություններուն վրայեն չցատկել, հեղինակը որ գրեր է՝ պատճառ մը ունի:

4. Այդպես ալ գիրքն ավարտելեն ետքը՝ առանց այլևայլության մեկդի չնետել և չանցնել ուրիշ գրքի: Քանի մը օր նոր ընթերցման պետք չէ անցնել. ժամանակ պետք է տալ, որ միտքը իր ազատ պահերուն դառնա կարդացած գրքի հերոսներուն, գործերուն, տեղերուն ու դեպքերուն շուրջը, կշռե իր հավնածն ու չհավնածը և մտածե լրջորեն իր այդ գրքեն նոր լսած ու սորված երևույթներու մասին և կամա թե ակամա համեմատե իր՝ նախորդ նման նյութ ունեցող ընթերցումներուն հետ: Ինչքան որ շատ միտքը գրքի մը վրա որոճա, այնքան մեծ է իր ստացած օգուտը: Արագ կարդալուն նման՝ արագ կերպով մեկ գիրքեն մյուսը ցատկելը թեթև ու թեթևամիտ ընթերցում է:

5. Աղվոր սովորություն է պատանեցման տարիներեն սկսած ընթերցման ատեն ձեռքին տակը թուղթ ու մատիտ ունենալը: Որևէ նկատողություն, հիշելու կետեր, մտածողություն մը, համառակ կարծիք, ջերմ զգացումի մը արտահայտություն կամ որևէ ուրիշ բան, որ ուշադրությանդ հանճնել կուզես, իսկույն երկու բառով կնշանակես թղթիդ վրա և քովն ալ գրքին էջը: Ընթերցումեն հետքը, մանավանդ գրքի ամբողջական ընթերցումեն հետքը, իր այդ նկատողություններուն համեմատ բանալ նշանակված էջերը և ստուգել իր տպավորությունը, ճշդել կամ ժխտել իր ունեցած մտածումը և՛ շատ հետաքրքիր, և՛ շատ կրթիչ, և՛ բազմատեսակ օգուտներ ունեցող սովորություն մըն է: Բայց գրքի էջերուն վրա պետք չէ դրվի երբեք ո՛չ մեկ գիծ, ո՛չ մեկ բիծ և ո՛չ մեկ բառ:

Այս նիշ առնելը կդառնա անշուշտ պարտադիր, երբ կարդացած գրքեդ հարց մը պիտի հանես կամ որոշ խնդրի մը լուծման պիտի հետևես ատոր համեմատ ետքը գրավոր կամ բանավոր հաշիվ տալու համար ուսուցչին կամ դասարանին:

6. Սիրված և հատկապես հանձնարարված երկերը, մասնավոր արժեք ունեցող գրքերը պետք է կարդալ քանի մը անգամ: Քանի մը անգամ կարդացողը միայն դիտե, թե մեկ ընթերցումի առեն ինչքա՜ն-ինչքա՜ն բաներ չեն նկատվիր. խոր զեղեցկութիւնները, խորունկ մտքերը կրկնակ ընթերցումներու առեն կարծես կրկնակի կ'խորանան: Շատ դիրք կարդացած ըլլալը ծանծաղ ջուրերուն կնմանի, ծավալ ունի, խորք չունի. անհամեմատ ավելի արժեքավոր է քիչ թիվով գրքեր կարդացած ըլլալը, բայց կարդացածը իսկապես կարդացած, վերակարդացած ու գրքին հետ ապրած ըլլալը:

9. Կմնա վերջին հիմնական խնդիրը ընթերցման տեսակետեն. ինչ պետք է կարդան տղաքը իրենց դպրոցական երկար տարիներու ընթացքին, ո՞վ պետք է կատարե այդ ընտրութիւնը ազգային ու միջազգային գրականութեյան անհավասար արժեքի դեղերուն մեջեն: Այդ ընտրութիւնը պետք չէ թողնել պատահականութեյան և ո՛չ ալ ծնողներու և ուսուցիչներու անձնական ճաշակին: Ծնողն ու ուսուցիչը ընթերցանութիւնը դեկավարողն են, պետք է դիտենան ընթերցումը դեկավարել, բայց ինչ կարդացնելու հարցին մեջ անոնց պետք է լրջորեն օգնել: Ինչպես որ դպրոցները իրենց որոշ մշակված ծրագիրներն ունին պետականորեն հաստատված, այնպես ալ պետք է ըլլան ընտիր ու հանձնարարված գրքերու մանրամասն ցուցակներ մասնագետ հանձնաժողովներու ձեռքով խնամքով ընտրված և պետականորեն վավերացված: Այդ ցուցակները պետք է դառնային ամեն ծնողքի ձեռք և ամեն ուսուցչի:

Այդ ցուցակներուն մեջ պետք է առնվին մայրենի լեզվով ինքնագիր կամ թարգմանական այն բոլոր գրքերն ու հրատարակութեյունները, որոնց ընթերցումը կհանձնարարվի նոր սերունդին:

Այդ բոլոր գրքերը պետք է դասավորված ըլլան ըստ տարիքի, հավիտ խոսիլ սկսող երեխային սկսած մինչև երիտասարդացման հասակը, այսինքն ընտանեկան ու դպրոցական կրթութեյան ամբողջ տևողութեյան համար:

Եվ յուրաքանչյուր տարիքի համար նշանակված գրքերն ալ պետք է զատված ըլլան երեք աստիճանի: Առաջին աստիճանը հատուկ նշանով մը, որոնց ընթերցումը այդ տարիքի համար մաս-

նավոր կերպով կհանձնարարվի, իբրև շատ արժեքավոր: Երկրորդ աստիճանի գրքերը, նորեն հատուկ նշանով մը, կնկատվին իբրև նորեն շատ լավ գրքեր ու արժանի ընթերցման, առանց սակայն մասնավոր ընդգծումի: Երրորդ աստիճանին մեջ կհյնան այն բոլոր գրքերը, որոնք ունին գեղեցիկ էջեր ու կողմեր և կրնան կարդացվիլ հաճույքով և օգուտով, եթե ժամանակ մնա, կամ եթե ուսուցիչն ու ծնողք որևէ պատճառով նախապատուվություն տալ ուզենան:

Ամեն դասարանի համապատասխանող ցուցակները կախված պիտի ըլլան միշտ դասարանին մեջ, ամենուն աչքի տակ. ամեն տղա ու աղջիկ ծանոթ պետք է ըլլա այն հեղինակներուն ու երկերուն, որ իրենց չարունակ կհանձնարարվին և՛ ցուցակներեն, և՛ ուսուցչեն, և՛ ծնողներեն:

Ամեն պարագայի ընթերցումը պետք է ըլլա ընտանեկան ու դպրոցական ղեկավարության մշտական ու հատուկ հոգածության առարկան. պետություն, դպրոցական վարչություն և ընտանիք բոլորն ալ պետք է մտածեն և հետևին նոր սերունդներու ընթերցանության գործին, ինչ չափով որ կզբաղին ու կհետևին դպրոցական ուսուցման գործին:

Եվ վերջապես ջանք պետք է գործ դրվի նաև բացասական ուղղությամբ, որ տղաքը չհյնան իրենց չհանձնարարված գրքերուն ետևեն, որ դուրսը ամեն ձեռք ինկած գիրք չկարդան, ո՛չ ալ հաջորդ տարիներու գրքերուն մագլցին: Պետք է վարժվին վստահությամբ ու կամովին, հոժարությամբ հետևելու ցուցակներու մատնանշումին և իրենց ղեկավարներու խորհրդին: Եվ տարիքի հետ հետզհետե խոր համոզվին, որ ընթերցումը մեծ բարիք է և մեծ ու ազնիվ զվարճություն, եթե արժեքավոր ու հանձնարարված գրքեր է, որ կկարդան, իսկ չհանձնարարված գրքերու ընթերցումը այս կամ այն ձևով միշտ վնաս կբերե փոքրիկ ընթերցողին. ամեն գիրք իրենց համար չէ:

Ընթերցումը շատ սուր դանակ է, որ պետք է գործածենք և շատ պետք է գործածենք մեր հասունանալու տարիներուն, բայց պետք է շատ զգուշ կերպով գործածենք չվիրավորվելու համար, և այդ զգուշությունը անշեղ կերպով հետևելուն մեջն է նոր սերունդներու ընթերցման համար կազմված հատուկ ցուցակներուն:

Ինքնակրթութեան ուժեղացման համար անհրաժեշտ է նաև դիտակից վերաբերում մշակել տղոց հոգիներուն մէջ ղեկի իրենց ինքնակրթութեան գործը: Ո՛չ միայն սեր աշխատանքի, սեր ընթերցանութեան և վարժութեան, այլև գիտակից ու հաստակ ցանկութիւն իր ինքնակրթութեամբ զբաղվելու:

Արդեն բնականեն ինքնին տղոց հոգիներուն մէջ բարձր նախակրթարանի տարիներուն կսկսի արթննալ անձնական միջամտութիւն մը իրենց կրթութեան գործին: Ամեն տղու մէջ ալ կսկսի չեշտվիլ աղոտ պահանջ մը իր ներքին հակումներուն և իր բնական առաւելութիւններուն համաձայն ուղղութիւն մը տալ իր դպրոցական դասերուն և աշխատանքներուն, թէ ինչի վրա մասնաւոր կերպով կեդրոնացնի իր ճիգերը, իր ավելորդ ժամանակը, իր ընթերցումը: Տղու մը հոգիին մէջ ավելի ընդգծված կերպով, մյուսի հոգիին մէջ ավելի պղտոր ու անորոշ, բայց բոլորի մէջն ալ կա այս անքնական միջամտութեան զարթոնքը, երբեմն նույնիսկ տարրական նախակրթարանի տարիներեն սկսած:

Եվ աննկատելի կերպով ու աստիճանաբար կմշակվի անհատական ծրագիր մը ընդհանուր դպրոցական ծրագրին քովն ի վեր: Այս անհատական ծրագիրները երբեմն մոտիկ ու հաշտ կըլլան դպրոցի ընդհանուր ծրագրին, երբեմն ալ բոլորովին հակառակ իրեն պարտադրված ուսումներու մեծ մասին. սովորաբար կըլլան աչքի իյնող չեղումներ ընդհանուր ծրագրեն:

Ինքնակրթութեան այսպես ասպարեզ իջնելը ընդհանուր առումով կկատարվի հուշիկ ու թեթև քայլերով. անձնական ծրագիրներու այդ մշակումը նախ կիսագիտակից է ու վարանոտ, շատ հաճախ երազանքի պես բան մը, կարծես ցանկալի բանի մը որոնումը: Բայց երբ անդամ մը արմատ կնետե հոգիին մէջ, հետզհետե կդառնա գիտակից պահանջ, վրան մտածված և որոշված նպատակ. անշուշտ տղա տղու վրա շատ տարբեր, տարբեր աստիճանի լրջութեամբ և պարտադրանքով:

Ղեկավար կրթութեան պարտականութիւնն է՝ հետևիլ, տեսնել տղու հոգիին մէջ զարգացող այդ բնական ուժը և ո՛չ միայն չհակառակիլ ու չխանգարել, այլ օժանդակել, սիրտ տալ և դյու-

րութիւններ՝ աշխատելով միևնոյն ժամանակ, որ դպրոցական ընդհանուր ծրագիրը շատ չպատռվի ու շատ չտուժե:

Ինքնակրթութեան ներքին պահանջներուն միջամտութիւնն է, որ կհարկադրե դպրոցական միջին տարիներուն մեջ ընթացք տալ ազատ խմբական աշխատանքներու՝ տարբեր-տարբեր ուղղութեամբ հոգեկան ձգտումներեն ամեն մեկուն իր բնական ուղղութեամբ հոսում տալու համար առանց ընդհանուր կրթութեան ծրագիրներուն ձեռք տալու:

Բացի այս գործնական համակերպումեն, դեկավար կրթութիւնը ամբողջ դպրոցական տարիներու ընթացքին պիտի ջանա նաև տեսական ճամբով ուժեղցնելու տղոց հոգիներուն մեջ ինքնակրթութեան բարձր գնահատումը, ինքնակրթութեամբ զբաղվելու ներքին ու խորին անհրաժեշտութեան գիտակցութիւնը:

Ե՛վ կենդանի խոսքով ու զրդումով ամեն հարմար առիթե օգտվելով, և՛ պատմական դեմքերու օրինակներով, և՛ մեծ մարդոց կենսագրութեամբ շարունակ պետք է ցուցադրվի, ընդգծվի և դառնա խորունկ համոզում տղոց համար, որ իրենց իսկական ուսումը և իրենց իսկական արժեքը վերջը իրենք պետք է ձեռք բերեն դպրոցական տարիներեն ետքը իրենց հարատև և համառ աշխատանքով, իրենց ամբողջ կյանքը զրկող գիտակից ինքնակրթութեամբ: Ով դպրոցով միայն կրավականանա, թերուս մըն է. ով ինքնաաշխատութիւնն ու գիրքը ձեռքեն վար կդնե, անուս մըն է. ետ մնացած մարդիկ են ատոնք:

Պետք է ամեն միջոցներով ամրացնել տղոց հոգիներուն մեջ այն խորին համոզումը, որ բոլոր մեծութիւններուն հասնելու ճամբան ինքնակրթութիւնն է, որ բոլոր մեծ վայելքներու ճամբան գիտութիւններով, գեղարվեստներով ու արվեստներով տարված ու հափշտակված ըլլալն է, գոնե ատոնց հետ մշտական չփման մեջ գտնվիլն է: Ինքնակրթութիւնն է բնավորութիւնները բարձրացնողն ու ազնվացնողը, մշտապես ինքզինքը կատարելագործող աշխատանքը ուրախութեան հորդ աղբյուր է. գիտակից ընտրանքով տարված ընթերցումը և՛ միտքը կհարստացնե, և՛ զգացումները կնրբացնե, և՛ զվարթութիւն կուտա, և՛ համայք կյանքին, և՛ հաճելի ու բարձր ժամանց՝ մեր ազատ ժամերուն:

Այս ոգիով և համոզումներով մեծցող տղան, երկար տարի-

ներով ինքնաշխատութեան և կանոնաւոր ընթերցման մարզված տղան անշուշտ որ շատ ավելի մեծ հավանականութիւններ ունի, որ իր դպրոցական ավարտականի տարիներուն մտոհիկ արդեն քիչ-քիչ բոլորովին իր ձեռքը կառնե իր ուսման ու զարգացման ամբողջ գործը՝ իր հակումներուն, իր դաւոումներուն և իր կամքին վրա հենած:

Գ. ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ամբողջ կրթական գործը, այնպես ալ ինքնակրթութեան հարցը սերտորեն կապված է ժողովուրդի մը քաղաքական պայմաններուն և տնտեսական վիճակին:

Պետք չէ, որ օրվան հացին աշխատանքը բոլորովին քամե և ուժասպառ ընե ու զրավի բոլոր ժամանակը մարդուն: Այդպես ամբողջովին բռնված ու չարաչար աշխատանքի վրա եղող անհատը բնականաբար ուրիշ բանի մը համար այլևս պետքի զալ չի կրնար. ան միայն հանգստի ու քունի կարիքը կունենա և մնջեմեջ ալ, երբ ավելի կամ պակաս պատահական դադար մը տեղի ունենա, անոր միակ ցանկութիւնը կըլլա դյուրին հաճույքի մը կամ սուր վայելքի մը եռևեն վազել:

Իր ամբողջ օրը ծախած և պատառ մը հացի հոգերուն տակ խեղդված հոգիներուն մեջ ինքնակրթութեան պահանջը աճելու հոգ չունի, շատ-շատ կրլլա կարոտ մը ավելի լավի, կրլլա նախանձ մը ավելի լավի, կրլլա ատելութիւն մը ավելի լավին: Ամեն պարագայի այս տեսակ պայմաններու մեջ ինքնակրթութիւնը գործադրվելու հնարավորութիւն չունի:

Մինչև որ մարդուս ապրուստին համար թափած աշխատանքը չսահմանափակվի հիմնականին հետ համեմատած շատ ավելի քիչ ժամերով, մարդիկ իրապես մարդ դառնալ չեն կրնար: Մարդս մինչև իր հոգիին բոլոր կարողութիւնները չզարգացնե, մինչև իր հոգիին ավելի կարող կողմերը չկատարելագործե, չի դառնար այն էակը, որ պետք է ըլլար, ինչ որ բնութիւնն ու ժառանգութիւնը տված են իրեն, որ ըլլա: Արդի տնտեսական պայմանները մարդկութեան ստվար-ստվար մեծամասնութիւններու համար գո-

ցած են ճամբան բարձրացման, նրբացման ու աղնվացման: Ինքնակրթութեան դերը այն չափով կշեշտվի և այն չափով կեդրոնական կարևորութեան կտանայ, որ չափով որ պակսին օրվան հացը հանելու համար կատարված ամեն մարդու պարտադիր աշխատանքին ժամերը, որչափ որ ապրուստին հոգը քիչ ճնշէ, չխեղդէ և ուրիշ ամեն ինչ մոռցնել չտայ:

Երբ ժողովուրդները քիչ մը ավելի խելացի ու մարդավարի կազմակերպված տնտեսական գոյավիճակ մը ստեղծել կարողանան, երբ պետութիւն կոչվող կեդրոնական ղեկավարութիւնը իրավ որ ժողովուրդի բարօրութեան ու հոգեկան բարձրացման համար հոգա ու անհատի, այն ժամանակ միայն ժողովուրդներու և անհատներու զարգացման ու ինքնազարգացման համար կբացվին լայն հնարաւորութիւններ: Մինչև մեր հոտ հասնելը ինքնակրթութեան գործն ալ պիտի կաղա, պիտի ըլլա փոքրամասնութեան մը համար, ինչպես ուրիշ ամեն ինչ, և մեծ չափերով կախված զանազան պատահականութիւններու խաղին:

Այս կետը միշտ պետք է աչքի առաջ ունենանք, բայց և այնպես ինչքան ալ թերութեան, պատահականութեան և փոքրամասնութեան հետ կապված ըլլա, հիմա մեր արդի պայմաններուն մնջն ալ պետք է լուրջ ճիգ թափվի ու աշխատանք և՛ ղեկավար, և՛ ինքնավար կրթութիւնը հնար եղածին չափ նպաստավորելու համար: Որքան մտքերու և հոգիներու զարգացումը չեշտվի ու տարածվի ժողովուրդի մը մեջ, այնքան ալ կարագանա ավելի բաղդավոր և ավելի առողջ տնտեսական ու քաղաքական պայմաններու գալն ու հաղթանակը:

Ամեն քիչ թէ շատ կրթութիւն ստացած մարդ, ամեն քիչ թէ շատ տանելի կրթական հաստատութիւն և ամեն քիչ-շատ սիրտ ու հոգեկան թռիչք ունեցող պետական անձ պետք է ընե, ինչ որ կրնա ընել մեր արդի պայմաններու մեջ՝ կրթական գործը և ինքնակրթութիւնը բարձրացնելու, ընդհանուր պետք մը դարձնելու համար:

Պետք է խոսիլ, բացատրել, դրդել ու միջոց տալ, որ մարդիկ լրջորեն զբաղվին իրենց հոգեկան բարձրացման գործով, բոլոր անոնք, որ որևէ հնարավորութիւն ունին, որևէ չափով այդ ուղղութեամբ աշխատելու:

Իսկ անոնք ալ, որ ունին արդեն ինքնակրթութեան պահանջը և կրնան ու կցանկան զբաղվիլ իրենց զարգացման գործով, անոնք ալ բնականաբար բոլորը նույն լրջութեամբ և նույն բարձրութեամբ չեն ըմբռներ հարցը և ո՛չ ալ մանավանդ նույն լրջութեամբ և նույն հետևողականութեամբ չեն վարեր իրենց ծրագրած աշխատանքին գործադրութեունը:

Ինքնակրթութեամբ զբաղվիլը մեր արդի իրականութեան մեջ, հավանորեն նաև ապագաներուն մեջ, կարելի է վերածել երեք աստիճանի:

Առաջին աստիճանը ամենեն սովորականն է և ամենեն նախնականը: Կիսագրագիտական, կիսագիտակից ու անորոշ է իր նպատակը, իր ձեռք բերել ուզածը, ինչի որ կձգտի: Ունի հակումներ, ունի կարոտ ու երազանք այսինչ բանը սորվելու, այսինչ դիրքին հասնելու, բայց չկա ո՛չ պարզ ու կտրուկ որոշում, ո՛չ ալ որոշ ծրագիր: Նայելով, թե ինչ դիրք ձեռքը ինկավ, կամ ո՛ր բարեկամին հետ ինչ ուղղութեամբ գնաց խոսակցութեունը, կամ ո՛ր ընկերոջ օրինակը իր վրան ազդեց, ժամանակ մը կզբաղի այդ ուղղութեամբ և ան ալ անշուշտ ո՛չ տևական ու կանոնավոր կերպով, երկար ընդհատումներով:

Ավելի հաստուն է և ավելի բարձր անտարակույս երկրորդ աստիճանը, ուր ներքին պահանջքն ալ, իր սիրածն ու ցանկացածն ալ շատ ավելի հստակ է, շատ ավելի հետևողական, բայց դեռ միշտ անծրագիր ու ցրիվ: Գիտե, թե իրեն ինչ կպակսի, քիչ մը ավելի խախուտ կերպով գիտե նաև, թե ինչ պիտի ընե այդ պակասը լրացնելու համար, գրքեր, ամսագրեր կբերե ու կտանե, որոնք օրերով կմնան իր գրասեղանին վրա՝ թղթի կտոր մը մեջը իբրև նշան դրած: Ժամանակ մը կարծես լրջորեն կզբաղի կամ զբաղի պիտի. գործերը կվատնգարեն. զալ շաբթու, արձակուրդին: Այսինքն անկանոն ու թեթևակի հետապնդում մը որոշ ուղղութեամբ իր զարգացման մեկ որոշ թերին լրացնելու ցանկութեամբ:

Ինքնակրթութեունը վարելու երրորդ աստիճանը կներկայացնե խիստ սահմանագծված, որոշ ու հաստատ ծրագրով տարված կանոնավոր ու կեդրոնացած ինքնաշխատութեունը:

Ընտրված է որոշ ճյուղ, որոշ հարց, որոշ կողմ, մտածված ու գծված է աշխատանքին ընդհանուր ընթացքը, կարդացվելիք գրքերը, կատարվելիք աշխատությունները, և այդ բոլորի գործադրության համար նշանակված են հատուկ ժամեր կանոնավոր պարբերականությամբ: Եվ ճիգ կթափվի, որ հաստատ պահվին թե՛ նյութի, թե՛ սիսթեմի, թե հաջորդականության և՛ թե որոշված ժամերուն ճշգրիտ գործադրությունը: Ամեն որոշված պահ, որ արտաքին արգելքով մը կամ ներքին թուլացումով նախագծված աշխատանքին չի հատկացվիր, խղճի խայթ կպատճառե, իբրև կորուստ կնկատվի իր գործեն, իբրև տկարացում իր խոսքին ու որոշման: Այս լրջության հասած ինքնակրթությունն է, որ իրոք կդառնա չարունակությունը ղպրոցական ուսման և սիսթեմատիկ կերպով կհարստացնե միտքը, կլարե հոգիին ուժը ու կբարձրացնե անձի մը իր վրա ունեցած համարումն ու արժեքը:

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնակրթության ջանքերը իրարմե կտարբերին ո՛չ միայն իրենց խորությամբ ու լրջությամբ, այլև իրենց բռնած ուղղությամբ:

Մարդիկ կան, որ կսիրեն միայն իրենց մասնագիտական ինքնատարբացումով զբաղիլ: Կկարդան միայն իրենց գործին կապված, մասնավոր կերպով իրենց հետաքրքիր եղող գիտական երկեր՝ իրենց գործն ու արվեստը ավելի ևս խորացնելու, լրացնելու, իր մասնագիտության հետ կախված բոլոր հարցերուն ավելի հանգամանորեն տեղեկանալու համար, այսինքն դիտավորյալ մեկուսացում մը հնար եղածին չափ ավելի խոր փորելու համար:

Կան մարդիկ, որ, ընդհակառակը, իրենց օրվան գործեն, իրենց մշտական զբաղումներեն, իրենց արվեստի, արհեստի, իրենց ճյուղի նեղ սահմաններեն դուրս ելլել կուզեն, կսիրեն կարդալ գիտական, գրական, գեղարվեստական, քաղաքական, փիլիսոփայական, տնտեսական, պատմաբնկերական գրքեր, որ տեղյակ մնան օրվան նորություններուն, մարդկային բոլոր ասպարեզներուն վրա առնված ու առնվող քայլերուն, ճիգերուն, կառուցումներուն, դյուտերուն և ըմբռնումներուն:

Կան վերջապես մարդիկ ալ, որ երկու ուղղութեամբ ալ քալել կցանկան. և՛ իբրև մասնագետ լրանալ ու բարձրանալ կուզեն, և՛ իբրև ժամանակի մարդ. իբրև հանրային դէմք, իբրև հասարակութեան անդամ մոտիկ ծանոթ ըլլալ կուզեն գիտական, տնտեսական ու գեղարվեստական խնդիրներու օրվան վիճակին: Այդ ամենուն որոշ չափով մը տեղյակ ըլլալ կուզեն կյանքի մեջ իրենց դիրքը գիտակից կերպով ընտրել կարողանալու համար, կյանքին մեջ իր առջևը ներկայացող բազմատեսակ հարցերուն մոտածված կերպով պատասխան մը տալ կարենալու համար. և վերջապես իր մասնագիտական աշխատանքներն ու ճիգերը ընդհանուր շարժումներուն և որոնումներուն կապել կարողանալու համար, մյուս գիտութիւններուն լույսովը իր սեփական գործը ավելի պայծառ լուսավորելու համար:

Այս երեք տեսակի մարդիկն ալ կան ու միշտ պետք է ըլլան, որովհետև ամեն տեսակի գործ ու աշխատանք հավասար չափով մասնագիտական մեծ ու հարաճուն պահանջներ չի դներ, որովհետև ամեն մարդ նույն բնաւորութիւնը չունի. ոմանք նեղ ու խոր կփորեն, ոմանք լայն ու տարածուն, ոմանք ալ որքան խոր կերթան, այնքան հարցերը լայն բռնելու, կյանքը լայն ընդգրկելու պահանջը կզգան:

Բ. Այս մասնագիտական և ընդհանուր կրթական ինքնաշխատութիւններուն կից կա ինքնակրթութեան երրորդ տեսակ մըն ալ, որ արդեն դժվար է ինքնակրթութիւն անվանելը: Ատոնք այն տեսակի աշխատանքներն են, որոնց հատուկ նպատակը բան մը ընելն է, ժամանակը հաճելի զբաղումով մը անցընելը, ձանձրույթէ խուսափիլը, մինակութիւնը լեցնելը: Ավելի խաղ մըն է ասիկա, քան աշխատանք, քան մանավանդ ինքնակրթութիւն: Բայց ինչպես որ դեկավար կրթութեան մեջ խաղն ալ ձև մըն է, միջոց մըն է, որով կրթութիւնը կգործադրվի, նույն է երևույթը նաև ինքնակրթութեան մեջ. հոս ալ չենք կրնար անտեսել, դիցուք, ժամանցի ու ձանձրույթի համար կատարված ընթերցումները, ձեռագործները, ջութակահարութիւնը կամ այս ու այն արհեստը, որոնք սակայն կկրթեն մտքները, աչքերը, ճաշակը, միտքը կլեցնեն նկարագրութիւններով, անձերով, տեղերով, հարցերով ու արծարծված խնդիրներով, ասոնք բոլորը հոգիի զարգացման ու կազմավորման

վրա ունին իրենց ազդեցությունը, երբեմն շատ, երբեմն քիչ, երբեմն լավ, երբեմն վատ: Այնպես որ մասնագիտական և ընդհանուր կրթական ուղիներուն կից կա ժամանցի ինքնակրթություն մը, ուզենք թե չուզենք:

Այս երեք ուղիները կվազեն իրար կողքի կյանքին մեջ: Ամենեն դյուրինը և ամենեն ալ ավելի ձեռքի տակ եղողը անշուշտ որ ժամանցի համար կատարվող ինքնաչխատութիւնն է՝ ամենեն շատ տարածվածը մեր արդի պայմաններուն մեջ:

Ընդհանուր կրթության ծրագիրներով կատարված ինքնաչխատութիւնը շատ ավելի հասուն, շատ ավելի նախապատրաստութիւն պահանջող և հոգեկան խորութիյան կապված իրողութիւն մըն է, որով և շատ ավելի նվազ տարածված:

Իսկ բացառիկներն են իսկապես, որ տարված կըլլան զուտ մասնագիտական ինքնաչխատութիյամբ. մեծ գիտնականներու, մեծ արվեստագետներու, իրենց գործին ու որոնումներուն մեջ խորասուզված խոր մարդոց ինքնակրթութիյունն է անիկա ըստ էութիյան:

Սակայն այս ճամբաներուն վրա կա և տարիքի ազդեցութիյունը: Եթե անհատի մը ամբողջ կյանքին ընթացքը աչքի առաջ ունենանք, կտեսնենք, որ կա ընդհանուր բնական զարգացում մը ինքնակրթական աչխատանքի:

Մանկական, տղայական ու պատանեկան տարիներուն լայն է ու ցրիվ հետաքրքրութիյունը մարդկային հոգիի, ատոր համեմատ ալ ընդհանուր է ու բազմակողմանի այդ տարիքի կրթութիյունը. մարդկային բոլոր կողմերուն վրա, բոլոր կարողութիյուններուն և դիտողական բոլոր ուղղութիյուններով. ինքնակրթական ճիգերն ալ, ինչպես և ազատ ընթերցումը, կերթան նույն ճանապարհով:

Երիտասարդական տարիները ընդհանուր հետաքրքրութիյուններու և մասնագիտական աչխատանքի զույգ վազք մըն է, իրարու հյուսվիլ մը և մրցում մը այդ երկուքին մեջ:

Այրական տարիներուն մեջ համայնագիտական վազվզուքը տեղի է տված մասնականին, մասնագիտականին, ու սահմանավորված ու խորացած ճիգերունն է աւսպարեզը էապես:

Կյանքի խոնարհման տարիները ինքնակրթութիյան ալ խոնարհման տարիներն են. ինքնակրթութիյուն ըլլալեն ավելի կա՛մ ինքնամոռացումի կծառայեն, կա՛մ ինքնախորացումի:

Ուրիշն ընդհանուր հոսանքը կվազն լայնեն, ընդհանուրեն ու համայնեն դեպի հետզհետե ավելի մասնականն ու մասնադիտականը, դեպի նեղացում ու խորացում:

Դ. ՀԱՆՐԱՅԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ

ՊԱՏԱՀԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ինքնակրթությունը որոշողը, իր ճյուղերը ընտրողը, իր աշխատանքը ծրագրողը, այդ ծրագիրը գործադրելու տեղը, ժամանակը և այլ պայմանները պարտադրողը, միջոցները ճարողը և գործադրության հակողը անշուշտ որ ինքը անհատն է: Բայց չատ քիչ հանդիպող բացառիկ բան մըն է, որ անհատը իր այդ երկար աշխատանքներու ընթացքին իրմեն դուրս որևէ խորհուրդ, օգնություն, դյուրություններ և միջոցներ չստանա, մանավանդ իր ինքնաշխատության առաջին ամենեն դժվար տարիներուն, երբ ինքը դեռ նոր կազմակերպելու սկսող անձ մըն է, դեռ անչափահաս մը կամ նորահաս մը, երբ փորձառություն չունի դեռ անկախ ու ինքնուրույն գործավարության, երբ անտեղյակ է իր աշխատանքը դյուրացնող աղբյուրներուն, իր բռնելիք ամենեն կարճ ու չիտակ ճամբուն և երբ տնտեսապես ալ չատ համեստ պայմաններու մեջ է ընդհանրապես և կամ ուղղակի ուրիշներու ձեռքին կնայի դեռ:

Այս պայմաններուն մեջ անհատը չատ մեծ չափերով պետք ունի և՛ խորհուրդի, և՛ հիմնական քանի մը դեկավարության, և՛ գրքերու, և՛ գործիքներու: Եվ իրավ ալ, այս բոլորը կստանա անիկա իր շրջապատեն. անհատի ինքնազարգացման բռնած ուղին ու թափը խոշոր չափով մը կձևավորվի ու կպայմանավորվի իր շրջապատի ընձեռած օժանդակություններեն:

Այս տեսակետեն առաջին հաշվի եկող մեծ օժանդակը կամ խանգարիչը անհատի մայր ընտանիքն է, այսինքն այն նեղ միջավայրն ու այն քանի մը հարազատ անձերը, որուն ծոցին մեջ ինքը աշխարհ է եկած, աճած ու հասունցած: Այդ անձերուն տեսակետները, ըմբռնումները, կարծիքն ու գնահատանքը միշտ աղդեցություն ունին անհատի կրթության, ապագայի, երթալիք ճամբու

ընտրության միջոցին, ուրեմն և ինքնակրթության բռնելիք ուղղության վրա: Երբեմն խիստ կտրական կերպով, երբեմն իբրև ազդող տարրերեն մեկը, երբեմն անհատի կողմեն հոժար և համոզկեր, երբեմն անհատի ներքին պահանջներուն բախելով, իբրև պարտավորություն, իբրև խղճի պարտք: Որչա՜փ մարդիկ իրենց հոգիի սիրած գործերը կթողնեն և կերթան ուրիշ գործերու ու պաշտոններու միմիայն իրենց ծնողներուն թեթևություն տալու, անոնց սիրտը չկոտրելու կամ իր տան կարիքներուն հասնելու մտահոգությամբ: Եթե ծնողները քիչ-շատ կրթության և ուսման տեր են, անոնց ազդեցությունը շատ զգալի կըլլա նաև անհատի ինքն իրեն համար մշակած ծրագրի այս ու այն մանրամասնություններուն մեջ, ինչպես և իր աշխատելու եղանակին մեջ, այսինքն հին ընկերական դեկավարությունը մեղմացած և խորհրդականի վերարկուն ուսերուն նետած անհատի քովն ի վեր դեռ միշտ կշարունակե իր ազդեցությունն ու հսկողությունը:

Ինքնաշխատության ընտրության և վարվելակերպին վրա ընտանիքեն շատ ավելի մեծ է դպրոցին ազդեցությունը, և հատկապես վերջին տարիներուն կազդեն իրենց սաներու ինքնակրթության գործին նախ դպրոցին մեջ տիրող ոգիովը՝ նայելով, թե ինչ առարկաներու, ինչ ճյուղերու և ինչ տեսակետներու մասնավորապես կարևորություն կտրվի, ինչ ուղղությամբ և ինչ եղանակով դպրոցական աշխատանքները կտարվին. այդ բոլորը կծծվի ու կյուրացվի անհատին կողմե առանց իրեն որոշ հաշիվ տալու: Երկրորդ ալ՝ արդեն տեսանք, որ դպրոցը իր նախապատրաստող աշխատանքով, ինքնակրթության կարևորությունը շեշտելով, աշխատանքի և զարգացման սերը ներարկելով անոնց հոգիներուն մեջ. մեծ ազդեցություն կունենա ինքնակրթության տարածման ու գործադրության վրա: Եվ երրորդ՝ բարձր կարգերու ուսուցիչներեն մեկ աշակերտի վրա այս, մյուս աշակերտի վրա այն անձը մեծ տպավորություն կընե իր հեղինակությամբ, իր գործավարից վարմունքով այդ աշակերտին կամ ընդհանրապես աշակերտության հանդեպ և առանց դուրսեն երևնալու շատ մեծ դեր կրնա խաղալ ավարտողներու ինքնակրթության գործին մեջ թե՛ ընտրության տեսակետեն, թե՛ դեկավարության և թե՛ գործադրության:

Բ. Ընտանիքեն ու դպրոցեն ետքը կա նաև ընկերներու

օրինակը և զանազան բարեկամներու և պատահական ծանոթներու «փորձված խորհուրդները», որոնք այս կամ այն չափով կուգան անհատի ինքնակրթության ճիգերը նպաստավորելու կամ չփոթելու: Ասոնց վրա պետք է ավելցնել նաև ինքնակրթության վերաբերող կամ այդ հարցին հետ առնչություն ունեցող դասախոսություններու, հոդվածներու, գրքերու թողած տպավորությունը, ատոնք բոլորն ալ ինքնաշխատությունը կազմակերպել չկրնացող և ատոր ճամբաներն ու միջոցները որոնող անհատին վրա անշուշտ որ ազդեցություն կ'ընեն, պետքի կուգան, գաղափար կուտան, կօգտագործվին:

Այս բոլորի մեջ չնշվածը սակայն ինքնակրթության ճյուղի ընտրությունն է և աշխատանքը վարելու եղանակը: Այս երկուքեն ետքը կուգա ինքնակրթությունը իրականացնելու համար անհրաժեշտ եղող միջոցներու, գլխավորապես անհրաժեշտ գրքերու, քարտեղներու, նկարներու, ալպոմներու, ուղեցույցներու, ամսագրերու և այլ հրատարակություններ ճարելու խնդիրը, ինչպես և բազմատեսակ նյութեր ու գործիքներ: Այս տեսակետեն ալ անհատը իր ծրագիրներու իրականացման համար կապված-կաշկանդված է իր տեղի պայմաններեն: Ո՛չ մեկը հնար չունի այդ բոլոր անհրաժեշտ գրքերն ու իրերը բոլորը գնելու, ինքնազարգացման ձգտող անհատներեն չատերը նույնիսկ կարողություն չունին ամենեն անխուսափելի մեկ-երկու տասնյակ գրքերն անդամ գնելու, որով և ամբողջովին կախված են իրենց շրջապատի իրականութենեն: Ընտանիքին մեջ գրադարան մը կա՝ ի՞նչ տեսակի գրքեր են մեջը, իր ծանոթներն ու բարեկամները գրքի տե՞ր մարդիկ են և ի՞նչ տեսակի գրքեր: Ի՞նչ կներկայացնե կամ ի՞նչ կներկայացներ իրենց դպրոցական մատենադարանը, իր ապրած քաղաքը հանրային գրադարան դոյություն ունի՞, ի՞նչ աստիճանի հարուստ և գլխավորապես ի՞նչ ճյուղերու:

Ասոնք հարցեր են, որ մեր արդի իրականության մեջ մեծ կարևորություն կստանան ինքնազարգացման հնարավոր ըլլալու կամ չըլլալու տեսակետեն, ինչպես և անոր զարգացման բռնելիք ընթացքին ու եղանակին տեսակետեն: Զարգացման ձգտողը այս պարագաներուն մեջ հարկադրված է կարդալու ինչի որ ձեռքը կհասնի, ինչ որ գտնել կարողանա, այսինքն ո՛չ թե ինչ որ կուզե

ու կինտրե, այլ ինչ որ կգտնե, ինչ որ գտնվի: Հոր գրադարանին մեջ վեպեր են, արկածախնդրական ու ոստիկանական պատմուԹյուններ, հասունցող պատանին ատոնք է, որ կյափե. իրենց տեղի դյուղական, Թաղային կամ դպրոցական գրադարանին մեջ դլխավորապես Հայրենասիրական-ազգային երկեր կճարվին կամ միայն կուսակցական հրատարակուԹյուններ կամ, չատ-չատ, մեկերկու պատմական ու գրական արժեքավոր գործեր և մնացածը նորեն բարակ պրոշյուրներ ու վիպակներ անարժեք: Այս նյուԹերով ինքնակրԹուԹյունը Հեռու երԹալ չի կրնար. ատով կրլլա գեչ կամ աղեկ ժամանց ընԹերցանուԹյուն մը, լավագույն պարագային քիչ մը ավելի ընտրանքով տարված և քիչ մը ավելի վրան մտածելով ընԹերցանուԹյուն մը, բայց ո՛չ իսկական ինքնակրԹուԹյուն:

Հոսկե պարզ է, որ անհատը ինչպես ամեն բանի մեջ, այնպես ալ ինքնակրԹուԹյան Հարցին մեջ, միշտ սերտորեն Հյուսված է ու կապված իր շրջապատին, իր շրջապատի ՀետաքրքրուԹյուններուն, իր շրջապատի ունեցած միջոցներուն: Միայն անհատի կամքն ու ձգտումը Հերիք չէ. ատիկա մեծ բան է, և բացառիկ անհատներ իրենց վճռականուԹյամբ կերպով մը ճամբա կբանան, կգտնեն միջոց մը, դիցուք և մեծ դժվարուԹյուններով և զոհողուԹյուններով իրենց որոշումը իրականացնելու, բայց սովար մեծամասնուԹյան Համար չուրջի իրականուԹյունը անհաղԹելի պարիսպ մըն է, ուրկե անդին անցնիլ անհատը չի կրնար: Եվ ատոր Համար ալ մեր արդի չատ դժբաղդ Հանրային պայմաններուն մեջ ինքնակրԹուԹյան լավագույն որոշումները չատ չուտով ԹևԹափ կղատնան ու կհանդին սովորական ու պատահական ընԹերցանուԹյան:

ԻնքնակրԹուԹյան տարածումն ալ, կարևորուԹյան ըմբռնումն ալ սերտ կապված է Հանրային կյանքի քաղաքակրԹուԹյան բարձրուԹյան Հետ: Ինչքան միջավայրը բարձր է քաղաքակրԹուԹյամբ, այնքան անհատը ավելի Հնար ունի ձգտելու ինքնակրԹուԹյան և այնքան ավելի միջոց ունի Հասնելու ՀաջողուԹյան: Եվ ընդհակառակը, որչափ Հանրային շրջապատը ցած է քաղաքականապես, Հետամնաց ու աղքատ, այնչափ դժվար է անհատներու Համար իր ինքնազարգացման և՛ ձգտիլը, և՛ կազմակերպելը, և՛ միջոցներ ձեռք բերելը, և՛ Հաջողիլը:

Բայց լավագույն պայմաններու մեջ անգամ Հանրության

բերած օժանդակութիւնը ինքնակրթութեան գործին դեռ շատ է պատահական, մասնակի, ցրիւ և անկազմակերպ: Մինչդեռ պետք եղածը կանոնաւոր գործող, մշտական, ընդհանուր կազմակերպութիւն մըն է:

Այդպես էր և դպրոցական գործը արևմտեան երկիրներու մէջ ասկե հազիւ դար մը առաջ. այսօր այդ բոլոր երկիրներու հանրային ու պետական բարձր մարմինները իրենց մշտական խնամքին և հատուկ ուշադրութեան առարկան են դարձուցած դպրոցական կրթութիւնը:

Հանրային կարծիքն ու պետութիւնները հետզհետե հասնին պիտի այն ըմբռնումին, որ ղեկավար կրթութենեն ետքը նոյն կազմակերպված խնամքն ու հատուկ հոգածութիւնը անհրաժեշտ է տարածել նաև ինքնաւար կրթության վրա, եթե հասնիլ կուզենք աւելի գիտակից ու աւելի հասուն մարդկութեան մը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինքնակրթութեան գիտակից կերպով օժանդակելու փորձեր կկատարվին արդէն արևմտեան քաղաքակիրթ երկիրներու մէջ. մեծ պետութիւններու մէջ կան ու կգործեն ընդհակառակ ուսում տվող հաստատութիւններ: Մեկը ինքնակրթութեամբ այս կամ այն գործին ու պաշտոնին համար պատրաստվիլ կցանկա կամ կուզե ներկայանալ այսինչ բարձր մասնագիտական վարժարանի մուտքի քննութեան. ուրիշ մը այսինչ լեզվի ու գրականութեան մեջ կատարելագործվիլ կուզե, երրորդ մը նկարչութեան մեջ քիչ մը վարժվիլ կամ աւելի առաջանալ կփափագի: Ամենքն ալ կդիմեն գրութեամբ մը հաստատութեան կեդրոնին ու կհայտնեն իրենց ցանկութիւնը, կվճարեն պահանջված գումարը և կստանան տպված հրահանգներ ու աշխատանքի օրինակներ, որոնց հետևելով կկատարեն եկած հրահանգները ու կղրկեն կեդրոն, ուր այդ աշխատանքները կը սրբագրվին մեկնութիւններով ու խորհուրդներով ու կղրկվին նոր հրահանգներ: Այսինքն թղթակցութեամբ դաս կուտան, կաշխատցնեն և աստիճանե աստիճան կհասցնեն ցանկացված բարձրութեան, և որովհետև հազարավորներու հետ նույն կերպով կպարապին, շուտով ձեռք կբերեն փորձառութիւն և կդտնեն արագ

ու հաստատ կերպով հաջողելու չիտակ ճամբաները, ինչպես և իրենց դիմող անհատներու ինքնաշխատութիւնը խթանելու միջոցները:

Ասոր նման բան մը ըլլալու է նաև ինքնակրթութեան լայնորեն օժանդակելու համար ապագա հանրային կազմակերպութիւնը, միայն չատ ավելի բազմաթիվ ղեկավար ուժերով, չատ ավելի աժան կամ ձրի ու դյուրամատչելի:

Նախ՝ անհրաժեշտ է, որ գտնվի պետական հսկողութեան ու պաշտպանութեան տակ՝ պետական պյուտճեեն իր հատուկ բաժինը ունենալով: Գործին վերին ղեկավարութիւնը պետք է գտնվի բոլոր ուսումներու ու արհեստներու ճյուղերեն առնված համուտ անձերու լուրջ թիվով խորհուրդի մը ձեռքը, որ իր պարբերական նիստերուն մեջ կուսումնասիրի ինքնակրթութեան հետ կապված ամեն տեսակի հարցերը իրենց բոլոր կողմերով և հանած որոշումներուն գործադրութիւնը կհանձնե իր կեդրոնական վճարված ու մնայուն մարմնին: Այս գործադիր կեդրոնը ո՛չ միայն իրեն դիմող անհատներուն հատուկ ուսուցիչներու միջոցով խորհուրդ ու աջակցութիւն կհասցնե, այլև մամուլի, մասնավոր նամակներու և իր հատուկ շրջուն ներկայացուցիչներու միջոցով կդրդե և կմղե ամենքը, որ երբեք մոռացութեան չտան ինքնակրթութեան իրենց պարտավորութիւնը և օգտվին ինքնաշխատութեան ծառայող կազմակերպութիւններեն:

Ամեն կեդրոնին դիմող անմիջապես հարաբերութեան մեջ կդրվի իր ցանկութիւններուն համապատասխանող մասնագետի մը հետ, որ մնայուն ու վճարված ու փորձված մեկ պաշտոնյան է այդ կազմակերպութեան: Եվ այդ ղեկավարն է, որ ավելի մանրամասն ու հանգամանորեն ծանոթանալով դիմողի պետքին ու ցանկութիւններուն՝ կղրկե անոր այդ ճյուղին վերաբերող մանրամասն առաջնորդ ու տեղեկատու գրքեր, որ ամբողջ իր սկսելիք գործին վրա լրիվ ու բազմակողմանի գաղափար ունենա: Եվ ալ անկե ետքը անհատը կրնա դասի նման աշխատիլ՝ միշտ իր մասնագետեն հրահանգ, խնդիրներ ու պատվերներ ստանալով և իր աշխատութիւնները սրբագրութեան ղրկելով որոշ ժամանակ մը: Անհատը կրնա և՛ բավականանալ իր ստացած ուղեցույց գրքերով, և՛ ինքը իր ուզածին պես տանիլ իր աշխատանքները, միայն թե կեդրոնի մասնագետը երբեք բոլորովին աչքե թողնելու չէ այդ

ինքնիրենը աշխատող անհատը. մեջեմեջ դիմելու է ու տեղեկանալու ո՞ւր հասած ըլլալը, գործի ի՞նչ վիճակի մեջ գտնվիլը՝ չանալով միշտ արթուն պահել իր խնամքին հանձնված անհատի հետաքրքրությունը, հնարավոր թերլիներն ու դժվարությունները հարթելով ու թուլացող կամքերը խթանելով և աշխատությունը ավելի հրապուրիչ դարձնելով:

Ինքնակրթության այս վերին կազմակերպությունը պետք է հոգա ու հասնիլ կարողանա ինչպես մասնագիտական ամեն տեսակի խոր պահանջներուն, այնպես ալ ավելի լայն ընդհանուր կրթության՝ մշակելով ընդհանուր կրթության համար ալ ուղեցույցներ, ցանկեր ու ցուցակներ՝ ավելի լայն կամ ավելի նեղ տարածքով, ավելի խոր ու ավելի թեթև մերձեցումով:

Այդ ընդհանուր ինքնակրթությամբ զբաղվող կազմակերպության հոգածության նյութ պիտի ըլլա նաև «ժամանցի համար» կատարվող ընթերցումներու և աշխատություններու ընտրությունը. պետք է մշակվին ամեն հասակի, ամեն սեռի և ամեն հոգեկան տրամադրություններու համապատասխանող գրքերու, խաղերու, զվարճություններու, ձեռական աշխատանքներու ցանկեր, նկարագրություններ, ցուցակներ:

Հատկապես կարդացվելիք գրքերու արժեքն ու հետաքրքիր կողմերը մատնանիշ ընելով և ամեն կերպ հասկցնելով, որ չհանճնարարված գրքերու ընթերցումը անօգուտ է, կրնա ըլլալ նաև անառողջ ու վնասակար:

Ինքնակրթության օժանդակող այդ կազմակերպությունը ինչպես որ պիտի հոգա ինքնազարգացման հոգեկան կազմակերպումը, այդպես ալ հոգալու է ինքնազարգացման նյութական միջոցներուն հնարավորությունները, որ գործը իրապես դրվի լայն չափերով իրականացման հողին վրա:

Ամենեն առաջ ինքնակրթության կենդրոնական մարմնի տրամադրության տակ պետք է ըլլան ինքնազարգացման զանազան ճյուղերուն ու տեսակներուն համար անհրաժեշտ եղող բոլոր երկերն ու հրատարակությունները, որ իր պահեստներեն դրկե իրեն կապված անհատներուն չափազանց թեթև գներով:

Բայց ինչքան ալ աժան ըլլան, ամեն գիրք գնել կարելի չէ, և գրքերուն մեծագույն մասը գնելը իմաստ ալ չունի. կա՛մ անգամ

մը թղթատվի պիտի, կա՛մ այս ու այն կտորը անգամ մը օգտագործվի, կա՛մ ամսագրեր, գիտական, պետական, համալսարանական հրատարակութիւններ և զանազան տեսակի պարբերականներ, ալպոմներ, քարտեզներ ու նման երկեր, որ գնելու և ունենալու հարմարութիւն ալ չկա: Այս տեսակի երկերեն նվազ հազվագյուտ նղողներուն համար, ինչպես և զանազան գործիքներու ու կազմվածներու հայթայթման համար կըլլան փոխատու պահեստներ միշտ կեդրոնի հսկողութեան տակ, ուրկե որոշ թեթև վճարի մը փոխարեն կղրկվի պետք եղածը որոշ ժամանակ մը օգտագործելու և վերադարձնելու պայմանով:

Իսկ ավելի լայն ընթերցանութեան համար կազմակերպութիւնը մեծ կեդրոններու մեջ կբանա աժանագին վաճառքով գրախանութիններ, իսկ ցրված տեղերու համար ալ՝ շրջուն գրախանութիններ վակոններու, օթոներու և օդանավերու մեջ, որոնք խիստ մատչելի գներով ամեն անկյուն կհասցնեն կազմակերպութեան ցուցակներուն հանձնարարված գրքերն ու նյութերը՝ գիղեցիկ կազմով ու պատկերազարդ, հրապուրիչ հրատարակութեամբ: Այս բոլորը հիմա երազ, չուտով դառնալու է իրականութիւն:

Ասիկա է կրթական գործի բարձրացման գլխավոր պայմաններեն մեկը: Կկրկնեմ. ինքնակրթութիւնը իր բոլոր կողմերով պետք է դառնա հանրային-պետական հոգածութեան, խնամքի և մշտական ուսումնասիրութեան առարկա ճիշդ նույն չափով, ինչ չափով որ դարձած է արդեն դպրոցական կրթութիւնը:

ՈՒՍՈՒՄ ՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ

ԴՊՐՈՑԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԿԱԶՄԸ

ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔ, ՈԳԻ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԿՍՊՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՉՈՐՍ ՇՐՋԱՆՆԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ԼԵԶՈՒՆԵՐՈՒ ԱՎԱՆԴՈՒՄԸ

ԳԵՂԱՐՎԵՍՏՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ

ԽԱՂ ՈՒ ՄԱՐԶԱՆՔ

ՈՒՍՈՒՄ ՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԳՊՐՈՑԱԿԱՆ

ԳՐՎԱԾ Է ՈՒ ԴԱՍԱԽՈՍՎԱԾ
ՊԵՅՐՈՒԹԻ ՀԱՅ ՃԵՄԱՐԱՆԻՆ ՄԵՋ
1933 – 1950
ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾ

ԴՊՐՈՑԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԿԱԶՄԸ

Ա. ԴՊՐՈՑԻՆ ՎԱՅՐԸ

I. ԾԱՌԱՍՏԱՆ, ՊԱՐՏԵԶ, ԲԱԿ, ԽԱՂԱՂԱԾՏ ԵՒ ԽԱՂԱՏԵՂԻ

1. Դպրոցը շրջապատող քաղաքի աղմուկեն և դրացիներն ալ դպրոցի աղմուկեն ազատ պահելու համար շատ մեծ կարևորություն ունեցող խնդիր է դպրոցի վայրին շրջապատը: Դպրոցը իր ամբողջությամբ սրբավայր մըն է, և սրբավայրի պես պետք է մտնեն ու ելնեն ամենքը: Մանուկներու սրբավայրն է:

2. Այդ սրբավայրի ամենեն գրավիչ և ամենեն սիրելի մասը պետք է կազմե ծառաստանը, այսինքն արդեն հինավուրց ծառերու փունջ մը, որ իրար դրկած թավուտ մը կկազմեն կամ քիչ մը երկարած ուղի մը:

Մեծ է պարտեզի այս մասի հմայքն ու ազդեցությունը. այդպես տարիներ-տարիներ այդ ծառափունջին տակ նստող, պտտող աշակերտուհյան հոգիին վրա ամենեն մեղմացնող, ամենեն մտերիմ և ամենեն թարմ հուշերու կապուկ մըն է, որ կմնա:

3. Ծառաստանեն անկախ պարտեզն է: Պարտեզ այսինքն խոտով ծածկված, ծաղիկներով ծածկված, ընդհանրապես պտղատու ծառերով ծածկված դպրոցական շենքեր շրջապատող տարածությունն է, որուն մեկ մասը շենքը կզատե արտաքին աշխարհեն վարագույրի մը պես, և մյուս մասն ալ զանազան քար կամ ավազուտ ուղիներով, շենքը շրջապատող տարածության մասերը կկապե իրար, որ կծառայե մուտք ու ելքի ու շրջագայելու: Սա սովորական պարտեզն է, որուն մեկ մասը հնար եղածին չափ առանձնացված պիտի կապվի մանկապարտեզի շենքին, առանձին ցածրիկ ցանկապատով մը ծածկված: Ավելի խոր տեղ մը, ավելի պաշտպանված

բանջարանոցն է մանկապարտեզի համար: Բանջարանոցն է, ուր երեխաները իրենք կանկեն ու կխնամեն, ուր մի քանի պզտիկ կենդանիներ, ճագար, նապաստակ, հավ և այլն կպահվին, այդ կենդանիներու սովորութիւններուն հարմարցված հատակով և անջատված իր կտուրով:

4. Խաղադաշտ կանվանենք պարտեզին այն մասը, որ հատուկ դնդախաղերու համար, ինչպես պասքետպոլի, վոլիպոլի և այլն, հարմարցված կազմածներ ունի և հատկացված է միայն այդ խաղերուն կամ մարզանքի: Խաղատեղին մեր դպրոցներու առջև եղած սովորական բաց մասն է, ամուր հատակով, ուր տղաք կվազվզին բոլորովին ազատ իրենց հաճույքին: Առանց որևէ դործիքի, ուր խմելու և ձեռք լվալու հարմարութիւններ կան և հնար եղածին չափ մեծերու և պզտիկներու թեթևակի անջատումով մը:

5. Մեր արդի խնդիր պայմաններու մէջ, նույնիսկ եվրոպական չատ մը դպրոցներ աչքի առաջ ունենալով, վերի ամբողջ դրվածը չատ-չատերու շրթունքին ազվոր ժպիտ մը պիտի հանե, թե այս մարդը ինչ կըսե, և մեր չուրջի իրականութիւնը ինչ է: Սակայն ես դուրսի իրականութիւնը նկարագրելու համար չէ, որ այս գիրքը կզրեմ, այլ գծելու համար այն դպրոցը, ուր պիտի հասնինք, եթե կուզենք մարդկային աստիճանական բարձրացումն ու զարդարումը

II. ՇԵՆՔՆ ՈՒ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Մանկապարտեզը լավագույն է ունենա իր ուրույն շենքը իր առանձնացված պարտեզով, իր ծաղկոցովն ու բանջարանոցով, իր անասուններով և իր զանազան տեսակի հատուկ խաղի դործիքներով:

Զանազան պարագաներու տակ հարկ կըլլա երբեմն, որ մանկապարտեզն ալ տեղավորենք բուն դպրոցական շենքի մեկ հարկին կամ մեկ թևին վրա մեր կամքին հակառակ: Անշուշտ որ մանկապարտեզը բավական խանդարե պիտի մեր դպրոցական աշխատանքը, ինչպես որ մեր դպրոցական ելումուտներն ու շարժումներն ալ պիտի խանդարեն մանկապարտեզը:

2. Բուն մանկապարտեզի պահանջված սրահները փոքրիկ-

ներու սրահը, ավելի մեծերու սրահը, երգի, պարի և ռիթմի հատկացված սրահը, ուսուցիչներու սրահը, լայն լվացարանը իր ցած դուռերով և միջանցք մը, որ այդ մասերու դռները իրարու հետ հաղորդակցութեան մէջ դնէ:

3. Ընդհանուր սկզբունք է, դպրոցական բոլոր աստիճանի շէնքերուն համար, սենեակներ ընդարձակ, պայծառ գույներով, լայն լուսամուտներով և խիստ մաքուր հատակով: Հնար եղածին չափ քիչ սանդուղ, եղածն ալ ցած ոտքով և լայն աստիճաններով: Հնար եղածին չափ քիչ ոլոր-մոլոր կամ անկյունավոր տեղեր: Հնար եղածին չափ ամեն մեկ աստիճանի համար ամբողջական բաժին մը, որուն բոլոր դռները կբացվին լայն և երկար, լուսավոր միջանցքի մը վրա: Հնար եղածին չափ պարզ, հատակեն քիչ մը ավելի բարձր բռնած լուսամուտներով, որոնք գրեթե միշտ բաց են:

4. Տարրական նախակրթարանի ներքին բաժանումներն ու սրահները ըստ էութեան մեծ տարբերություն մը չունին մանկապարտեզի սրահներեն ու բաժանումներեն: Մանկապարտեզն ու տարրական վարժարանի առաջին երկամյակը դեռ շատ նմանութիւններ ունին իրարու: Եվ երբ կյանքի պայմանները կատիպեն, մեծ անպատեհութիւն մը չկա , որ դպրոցական առաջին տարին, դուցե և երկրորդը, հարմարցվին մանկապարտեզի հետ: Ընդարձակ ու մեկ-երկու հարկանի շենքի վարի հարկը կըլլա սովորաբար մանկապարտեզը, պայմանով որ սենյակին հատակը դուրսի հողեն գոնե մեկ մեթր ավելի բարձր ըլլա և գիտական բոլոր միջոցներով բացարձակապես ապահովված ըլլա անձրևներու խոնավութենեն:

5. Բարձր նախակրթարանը, երբ առաջին հարկը չէ շենքի, կներկայացնե շենքին երկրորդ հարկը: Կպարունակե բացի հարկ եղած թիվով դասարաններե, մութ սենյակ մը սինեմայի համար, այլև սենյակ մը քիմիի և ֆիզիքի փորձերուն համար, ինչպես և իր բոլոր հարմարութիւններով ճաշակավոր և հանգստավետ ուսուցչանոց մը: Այս բոլոր սենյակներու դռները կբացվին լայն ու լուսավոր միջանցքի մը վրա: Հնար եղածին չափ կողմնակի անցքեր, նեղ միջանցքներ և ավելորդ անկյուններ չըլլան: Լվացարաններն ու հարակից բաժինները պետք է գտնվին կա՛մ գլխավոր շենքեն դուրս, կա՛մ վարի հարկին վրա, իրենց դռները բակեն և ներսի շենքեն բոլորովին կտրված:

6. Գալով յարաններուն՝ մեծ առաւելութիւն է, երբ ունին միայն իրենց հատուկ, միայն իրենց հատկացված չենք մը կամ առնուազն հարկ մը, որուն մյուս կեան ալ հատկացված կըլլա տեսչութեան, անջատ յարանական բաժնեն:

Բացի դասարաններէն, աշակերտական մասը պետք է ունենա երեք յարաններու միասին խմբումին համար, անոնց ժողովներուն համար, անոնց ազատ հանդիպումներուն համար, անոնց տեսակցութեան ու զվարճութեան համար ընդարձակ սրահ մը կանոնաւոր կահաւորումով:

Պետք է ունենա աշակերտներու աշխատութեան հատկացված քիմիական աշխատանոց մը: Սրահ մը երաժշտական ու նման աշխատանքներու հարմարցված կամ դյուրին կերպով հարմարվող աշխատանքներու համար:

Սրահ մը իբրև գրադարան-թանգարան: Բարեղներ, կենդանաբանական պատկերներ, դանազան ալպոմներ, դանազան նկարներ, բնագիտական հավաքածոներ, հնաբանական կտորներ, տարբեր դարերու ձեռագիրներ, պատմական այլ պատահական բեկորներ, ինչպես և բույսերու, միջատներու և անաթոմիք հրատարակութիւններու հավաքածոներ: Կից բաժինն ալ կըլլա գրադարանը: Ինչպես ըսի, յարանական չենքին մյուս կեսը հատկացված կըլլա, բոլորովին անջատված աշակերտական բաժնեն, տեսչի և ընկերներու աշխատանքին՝ իբրև տեսչական բաժին:

III. ԿԱՀԵՐ ՈՒ ԶԱՐԴԱՐԱՆՔ

Առողջապահական տեսակետեն, բոլոր հատակները կա՛մ քարեղեն ու աղյուս, կա՛մ իրարու հագցված ու ներկված փայտ. որ կարելի ըլլա ամեն օր ապահնեխիչ ջրով սրբել:

Թե՛ դասարանները և թե՛ ամենուր ավելորդ կահեր պետք չէ դնովին, այլ գործնականապես ու անմիջապես ամենեն անհրաժեշտ կարասիները միշտ տղոց տարիքին համապատասխան և հարմարցված անոնց հասակին:

Գեղարվեստական զգացումներու կրթութեան ու ճաշակի զարգացման համար ծաղիկներն ու գեղեցիկ նկարները պետք չէ խնայվին: Ամենեն կարևոր և ամենեն առաջին զարդը բացարձակ

մաքրութիւնն է ամբողջ շէնքին մէջ՝ և՛ պատեր, և՛ հատակ, և՛ կահեր, և՛ պատի պատկերներ, և՛ ծաղիկ, ամէն բան:

Մանկապարտեզի սեղաններն ու աթոռները, որուն վրա կաշխատին, պատերուն վարի մասերուն պահարանները և անոնց վրայի բոլոր իրերը պետք է ըլլան ճաշակավոր ու նորի պես միշտ փայլուն: Գղրոցներեն վեր մանկապարտեզին պատերը պետք է ունենան հատուկ պատեր, որ դյուրութիւն կուտա շարունակ փոփոխելու վրան գնդասեղած նկարները ըստ օրվա պահանջին, որոնք մի՛շտ ըլլալու են, մի՛շտ անպայման կերպով, և՛ գիտական, և՛ գեղարվեստական բարձր արժեքով: Միջակ ու հասարակ նկարներ ամոթ է դպրոցական հաստատութեան մը պատին վրա:

Մանկապարտեզի աշխատութեյան սենյակներուն հատակները պետք է ամբողջովին ծածկված ըլլան քաուչուկի հաստ շերտե կազմված սիրուն գորգով, թե՛ աչքի գրավիչ և թե՛ գետին նստելու առեն ապահովված ամեն պաղառութենե: Վարժուհիներուն սենյակը, բացի իրենց հարկ համարած կահերեն, անպատճառ ամբողջ հասակով կռնակի վրա պառկելու հարմարություն ունեցող դիվան մը պետք է ունենա:

3. Տարրական նախակրթարանը մանկապարտեզեն խիստ կերպով զատողը գրասեղաններու գոյութիյունն է, որ անհրաժեշտ կդառնա գրել-կարդալու և հաշվելու աշխատանքները սկսելուն պես:

Ամեն աշակերտի համար հատուկ պահարան մը ունենալը կդառնա քիչ-քիչ երկրորդական, քանի որ փոքրիկներեն շատերը քույր-եղբայր ունին միջին կարգի կարգերուն մէջ և անոնց հետ միասին իրենց դուրսի հագուստները կախելու հարմարություն:

Քույր-եղբայր չունեցողները կրնան կախել իրենց դասարանին մէջ, իրենց վարժուհիին հետ: Առաջին ու երկրորդ պատրաստական դասարանները, հին սովորությամբ ալ, իրենց ուտելիքի սակառը կրնան գետեղել այդ պահարանին տակը:

Երրորդ պատրաստականեն սկսած այդ սակառները կհանձնվին սեղանատուն, և ճաշն ալ կընեն երկրորդ երկամյակի բոլոր աշակերտները միասին:

Ամեն դասարան ունի իր ուսուցչական սեղանը մեկ-երկու գզրոցով, ուր կպահվին պաշտոնական մեկ-երկու տետրակները: Այլև կունենա հատուկ դարակ մը, ուր կպահվին դասարանին մէջ

պետք եղող ամեն տեսակի թուղթերը, թելերը, ասեղները, ուրիշ ձեռագործները, ինչպես և վարժուհիի ձեռքի տակ անհրաժեշտ եղող այլ իրերը և դասարանին մեջ կա՛մ ուսուցչուհիի, կա՛մ աշակերտներու կողմե այդ տարվա ընթացքին կարդացվելիք կամ թղթատվելիք գիրքերը:

Դասարանի պատերուն հարմարցված է գրատախտակը, խոսակցական պատկերներ օտար լեզուներու համար, դասերուն հետ կապված նկարներ և վերջապես մեկ-երկու գեղարվեստական նկար:

4. Իսկ երրորդ-չորրորդ նախապատրաստականներու մեջ պատերուն տիրողը քարտեզներն են, բնապատմական աթլասները, բայց չեն պակսիր նաև պատմական, գեղարվեստական արժեքավոր գործեր ալ: Ամեն դասարան ունի իր հատուկ գրադարանը, որուն վերին դարակը հատկացված է տարվա ընթացքին կարդացվելիք գիրքերուն: Ամեն դասարան պետք է ունենա իր այդ տարվան կարդացվելիք գիրքերուն երկու-երեք օրինակը:

Դասարաններուն զվարթությունը, մաքրությունը և գրավչությունը, ինչպես և կահ-կարասիներու նորությունը և հրապույրը մշտական պահանջ է ինչպես ամբողջ դպրոցի, նաև մասնավորապես այս երկրորդ երկամյակի ընթացքին :

Բ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՏՈՒԿ ՎԱՐԻՉ ԱՆՁԵՐ

Դպրոցներու տերը կրնա ըլլալ պետությունը, համայնքը, ընկերություն մը, ծնողական խումբ մը, կրոնական, առևտրական կամ այլ հաստատություն մը և վերջապես անհատներ: Տերն է, որ կհիմնե դպրոցը, կհոգա ծախքերը, կճշդե դպրոցին աստիճանը, ուղղությունը և ծրագիրը իր հիմնական գծերով, բայց այդ բոլորի գործադրությունը ինքը չէ, որ կիրատարե:

Դպրոցական ներքին առօրյա բուն աշխատանքը կհանձնվի այդ գործին համար հատուկ պատրաստություն և իրավունք ունեցող և հատկապես այդ գործով ապրող մարդոց: Ատոնց բոլորի

ճիգերն ու աշխատանքները սերտորեն կապված են իրարու, իրար կլրացնեն և կենդանի ամբողջութիւն մը կառաջացնեն: Բայց և այնպես այդ ընդհանուր ու բարդ աշխատանքը պետք է բաժնենք երկու որոշ տեսակի՝ վարչական գործունեութիւն և ուսուցչական գործունեութիւն:

Հոս առայժմ մեզի զբաղեցնողը վարչական կողմն է ու վարչական գործերը, այսինքն դպրոցը վարող, դպրոցը դարձնող, դպրոցի կարգ ու կանոնին հսկող գլխաւոր դէմքերը, առանց որուն թէ՛ դպրոցի կազմակերպութիւնը, թէ՛ դաստիարակութիւնը և թէ՛ ուսուցումը կդառնա անկարելի:

Ա. ՏՆՕՐԵՆ

Տնօրենը ներկայացուցիչն է դպրոցի տեր եղող մարմնին, այսինքն զոդող կապն է իրավատեր և գործադիր մարմիններին միջև, Հանգոյցն է դպրոցեն դուրս կատարվող գործունեութեան և դպրոցեն ներս թափվող աշխատանքին:

Նայելով դպրոցի տիրոջ ինչ տեսակի ըլլալուն՝ խիստ կնեղնա կամ կլայննա տնօրենի մը իրավասութեան սահմանները և ատոր համեմատ ալ անոր գործունեութեան ազատութիւնը, ձեռներեցութեան չափը և ստեղծագործ աշխատանքին չափը:

Ամենեն կաշկանդվածը և ամենեն ավելի «սև աշխատավորի» մը դիրքին մեջ եղողը գործավար տնօրենն է, երբ վերեն տեր մարմնեն, կուգա ամեն հրահանգ ու որոշում, հաճախ իր բոլոր մանրամասնութիւններով, ամեն պարագայի մեջ իր բոլոր կարևոր կողմերուն ու գծերովը. տնօրենին կմնա ըստ այդ հրահանգներուն կատարել ու կատարել տալ ամբողջ գործը՝ չթողնելով, որ շեղում կամ զանցառութիւն տեղի ունենա: Այսպես են պետականացած վարժարաններուն տնօրենները ընդհանրապես, այսպես են համայնական վարժարաններու տնօրենները, երբ համայնքի ընտրած խնամակալ, հոգաբարձու կամ ուսումնական մարմին կոչվող ժողովները հիմնապես ձեռք են առած գործի ամբողջ կազմակերպումն ու հոգածութիւնը. այսպես են զանազան ընկերութիւններու, կրոնական միաբանութիւններու և արդյունաբերական հաստատութիւններու բացած վարժարաններուն տնօրենները, երբ այդ

Հաստատութիւնը կամ միաբանութիւնը իրենք կուզեն իրենց ձեռքին մէջ պահել իրենց դպրոցին իսկական ղեկավարութիւնը. տնօրենը անոնց որոշումներն ու հրահանգները գործադրող վարձական պաշտոնյա մըն է, ինքնուրոյնութենէն զուրկ. քիչ-շատ լուրջ հարց ու դեպք, որ նոր վճիռ կպահանջի, պետք է երթալ այդ վերին կեդրոնը:

Իր խելքով, կամքով ու փորձով անհամեմատ աւելի օգտակար կրնա ըլլալ դպրոցական գործին տնօրենը, երբ բաւարար չափով մը մասնակից է և ազդել կրնա թէ՛ վարչական, թէ՛ ուսումնական ու դաստիարակչական որոշումներու և թէ՛ գործադրութիւններու կայացման վրա՝ ըլլալով վերի օրենսդիր մարմնին մեկ անդամը կամ դէթ իր ընտրութեամբը դառնալով այդ վերին մարմնի խորհրդակից անդամը, այսինքն ո՛չ միայն գործավար պաշտոնյա մըն է, այլև խորհրդակից մը, վարչակից դէմք մը:

Ամենեն աւելի կշնչուի տնօրենի անձնաւորութիւնն ու դերը, երբ դպրոցի տեր հաստատութեան կողմե լայն լիազորութիւններով իր խելքին ու իր համոզման կհանձնուի դպրոցին ու գործին ղեկավարութիւնը, և կամ որ ինքն է իր դպրոցին իրաւական տերը: Եվ կշնչուի թէ՛ դէշ և թէ՛ աղեկ իմաստով: Գեշն ան է, որ գրեթէ զուրկ է հակակշռե, և ամեն ինչ իրմեն է կախված, մանաւանդ իր հաստնութեամբ, փորձառութեամբ, մասնագիտական պատրաստութեամբ և ընդհանուր կրթութեամբ խոր հոգի մը չէ: Բայց այդ ազատ շարժվելու կարողութիւնն է, որ հնար կուտա նոր փորձերու, հանդգնութիւններու, հնութիւններուն պոչը կտրելու, կարճ ճամբան իր որոնելու, կատարելագործելու: Ուրիշ խոսքով՝ սուր զենք մըն է երկսայրի, և՛ վտանգաւոր, և՛ թևաւոր:

Բ. ՏՆՕՐԵՆԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնօրենի մը դերը, ինչ աստիճանի ալ որ կաչկանդված կամ ազատ ըլլա, չորս ուղղութեամբ կգործե:

Նախ՝ տնօրենին պարտականութիւնները դպրոցին տերը նղող վերին մարմնի հանդեպ: ա) Գործակցիլ վերին մարմնի տալիք որոշումներուն կամ փոխութիւններուն առնվազն դիմումներ կա-

տարելով, բացատրություններ տալով, անհրաժեշտությունները մատնանիշ ընելով և առաջարկներ տանելով: բ) Պահել դպրոցական գործունեության բոլոր հաշիվները, մատյանները, արձանագրությունները և վարել դպրոցին վերաբերող գործերուն թղթակցությունը: գ) Կատարված գործերու և վիճակի մասին պարբերաբար հաշիվ ու տեղեկագիր ներկայացնել իրավատեր մարմնին: Եվ դ) Դպրոցին մեջ ան է փոխարինողն ու ներկայացուցիչը իրավատեր մարմնի կամքին ու խոսքին:

Երկրորդ՝ առանձին խումբ մը կկազմեն տնօրենին պարտավորությունները դուրսի աշխարհին հանդեպ՝ ծնողներու և հասարակության հանդեպ: ա) Ան է ամեն տեղեկություն ու բացատրություն տվողը դուրսեն եկող ամեն դիմումներուն իր դպրոցին հետ կապ ունեցող բոլոր հարցերու վերաբերմամբ: բ) Ան է աշակերտներու ընդունելությունը վարողն ու որոշողը: գ) Դպրոցի վիճակի մասին պարբերաբար հասարակության ու ծնողներուն հաշիվ ու տեղեկագիր ներկայացնողը: դ) Ան է դպրոցի ներկայացուցիչը պետական, հանրային ամեն կարգի խորհրդակցություններու և հավաքույթներու պարագային :

Տնօրենի պարտավորություններու երրորդ խումբը ուսուցչության հանդեպ է: ա) Ան է իր ուսուցիչներն ընտրողը կամ գոնե իր ուսուցիչներու ընտրության այս կամ այն աստիճան լրջությամբ մասնակցողը, երբ ընտրությունը իրավատեր մարմինը ինքը կկատարե: Դպրոցական գործի հաջողության և ներքին համերաշխության տեսակետեն ամենեն գերազասելի ձևը այն է, որ տնօրենի կողմեն ընտրվին և վերին մարմնի կողմեն հաստատվին կամ որ նույն ըսել է՝ տնօրենի առաջարկով ընտրվին ուսուցիչները, տնօրենի ու վերին մարմնի խորհրդակցությամբ: բ) Տնօրենի պարտավորությունն է նախագահել ուսուցչական ամեն տեսակի ու աստիճանի ժողովներուն և վարել այդ ժողովներուն աշխատանքը: դ) Տնօրենի պարտավորությունն է հսկել ուսուցիչներու գործունեության թե՛ ուսումնական, թե՛ դաստիարակչական և թե՛ վարչական տեսակետեն՝ հետևելով, որ անոնց ամբողջական աշխատանքն ու վարմունքը համաձայն ըլլա դպրոցի կանոնագրին, ուսումնական ծրագրին և մանկավարժական ժողովներու հանած

որոշումներուն: դ) Ըլլալ օգնող ու խորհրդատու նոր ու նվազ փորձառու ուսուցիչներուն:

Տնօրենի պարտավորություններուն վերջին խումբը կկազմե դպրոցի աշակերտության հետ ունեցած իր իրավական կապերը: ա) Ան է աշակերտության համար դպրոցական ամբողջ կարգ ու կանոնի վերին հսկողը և վարչական գործադիր վերին ատյանը: բ) Ան է աշակերտության վերին հենարանը և խորհրդատուն ամեն տեսակի անձնական ու բարոյական հարցերու մեջ, ինչպես և ամեն տեսակի վնասներու և թյուրիմացություններու առեն վերջին իրավարարը: Բոլոր քիչ թե շատ ծանր անկարգություններու պարագային կդիմե իր ընկեր մյուս վարիչ անձերու խորհուրդին և ավելի ծանր պարագաներուն՝ նաև վարչական ուսուցչական ժողովներու:

Գ. ՏՆՕՐԵՆԻՆ ԿՐՃԱՏՈՒՄԸ

Երբեմն կպատահի, որ տեր մարմնի հեռավորության կամ այլ պատճառներով կինչանակվին տնօրեն երկու-երեք հոգի, որոնք կվարեն հաստատությունը ընդհանուր խորհրդակցությամբ, երբեմն պարբերական հերթապահությամբ, բայց ասիկա բացառիկ բան մըն է և ներքին բարդություններու տեղիք տվող. միշտ լավ է, որ գործադիր իշխանության սանձը մեկ մարդու մը ձեռքը գտնվի, և վերջնական կարգադրություններն ու ընդհանուր վերին հսկողությունը ամբողջ գործի և ամենուն վրա մեկ մարդու մը պատկանի:

Փոքրաթիվ աշակերտություն ունեցող դպրոցներու մեջ, ուր տասնյակի մը չափ են ուսուցիչներուն թիվը ընդամենը, աշխատանքի վրա տեսչի գործը բնականաբար շատ կպակսի և առանձին տնօրեն մը ունենալը կդառնա ավելորդ. այս պարագային տնօրենի իրավունքները քիչ մը սեղմված կարգով կտրվին ուսուցիչներեն մեկուն, որ և սովորաբար կանվանենք ավագ ուսուցիչ: Գյուղական ու թաղային վարժարաններուն մեջ ծախքը կրճատելու հոգերով, նույնիսկ վեց ու ավելի դասարաններե կազմված և քանի մը հարյուր աշակերտություն ունեցող դպրոցներու համար ալ կպատահի, որ տնօրենի փոխարեն ավագ ուսուցիչով կբավականանան: Բայց գործնականին մեջ որչափ

աշակերտութեան և ուսուցչութեան թիվը մեծնա, այնքան հարցը կուգա ու կկենա անունի վրա, որովհետև ավագ ուսուցիչը հետզհետե կծանրաբեռնվի տեսչական պարտավորութիւններով և հետզհետե կհարկադրվի իր դասերը պակսեցնելու, կդառնա տնօրեն. քիչ մը դիրքը կըլլա ավելի համեստ, քիչ մըն ալ ռոճիկը, բայց ո՛չ իր դերն ու աշխատանքը:

Մասամբ դրամական հաշիվներով, մասամբ ալ համայնավարական տեսակետներով և հավասարութեան հեռանկարով հափշտակված՝ եղած են առաջարկներ տնօրենը կամ ավագ ուսուցիչը բոլորովին մեջտեղեն վերցնելու և վարչական գործադիր ու վերահսկող իշխանութիւնը դնելու ուսուցչութեան վրա. մանկավարժական ընդհանուր ժողով մը ինքն իր մեջ կբաժնե տնօրենի մը բոլոր աշխատանքները կամ կնշանակե հերթապահութիւն. բոլոր ուսուցիչները կարգով կամ շաբաթական որոշ օրեր կվարեն տեսչի դերը: Այսինքն կըլլա և՛ օրենսդիր, և՛ գործադիր իշխանութիւն:

Բայց այս բոլոր առաջարկները, որոնք վերացական և միակողմանի դատողութիւններե կբղխին կամ շատ մանր շահերե, չեն համապատասխաններ դպրոցական գործի իրական և մանկավարժական պահանջներուն: Օրենսդիր մարմինը երկար խորհրդակցութիւններ կսիրե, հավասարազոր գլուխներ և աշխատանքի միակերպութիւն. վարչական ու վերահսկիչ գործերը, ընդհակառակը, կեդրոնացում կպահանջեն, արագութիւն կպարտադրեն և որոշ աստիճանի իրար ենթարկում: Գործադիր գլուխներու շատութիւնը և պարբերաբար փոփոխումը ընդհարումներ կառաջացնե, անվերջ ու ավելորդ չփումներ, իրարմե անտեղյակ կամ իրար հակառակ կարգադրութիւններ, հարցերուն տարբեր տեսակետներով և ոգիով մերձեցում, ինչպես և ուղղակի ներքին վեճեր, դավեր, թշնամութիւն և մրցակցութիւն: Երբ մարդիկ վարչականորեն իրարու հավասար նկատվին, այլևս իրարու չեն հնթարկվիր և չեն ընդունիր իրարու հակակշիռ, որով գործնականապես վերահսկողութիւնը կվերնա դպրոցին վրայեն, իսկ ամենալավ ուսուցիչներն անգամ այլևս չեն աշխատիր այն կանոնավորութեամբ, որ անհրաժեշտ է. հսկողութեան վերացումը կամ նվաստացումը անմիջապես կիջեցնե աշխատանքին և՛ որակը, և՛ քանակը:

Վարչական ամբողջ գործը դպրոցին մէջ պետք է կեդրոնանայ մեկ մարդու մը ձեռքը բնականոն պայմաններու մէջ, բայց դասարաններու և աշակերտութեան թիվը քանի կբարձրանայ, այնքան կշեշտվի վարիչ օգնականներու պահանջը:

Երբ դպրոցական հաստատութիւնը շատ ընդարձակ է, ունի քանի մը շէնքերով ու բաժիններով, տնօրէնը կունենայ հաճախ իր օգնական տնօրէնները, այսինքն իր ընտրած և իրմէն լիազօրված մարդիկ, որոնք իր վոխարէն կկատարեն աշխատանքի մեկ որոշ հատվածը իրեն հետ խորհրդակցելով և իրեն հաշիվ տալով. այդ օգնականները կրնան և ընտրված ըլլալ վերին իրավատեր մարմնի կողմէ, բայց միշտ գտնվելով տնօրենի կարգադրութեան և հսկողութեան տակ:

Եթե դպրոցական հաստատութիւնը ունի նաև իրեն կից տնտեսական ու փորձնական ձեռնարկներ, արհեստանոց կամ դիշերօթիկ բաժին, այս զանազան տեսակ մը առանձնացված գործերը կրնան ունենալ իրենց մասնավոր վարիչները, որոնք որոշ սահմաններու մէջ կգործեն տնօրենի մը իրավունքներով ու պարտավորութիւններով, բայց միշտ կգտնվին ընդհանուր տնօրենի մը վերին հսկողութեան տակ:

Տնօրենի ձեռքին տակ աշխատավոր մըն է նաև դպրոցին ընդհանուր քարտուղարը, որ տնօրենի հրահանգով կհետևի բոլոր մատյաններու կանոնավոր պահպանման, հաշիվներու գրութեան, կազատաատե ու կնկարկայացնե թղթակցութիւնները և կպահե դպրոցական արխիվը :

Ամեն մի նշանակված վարչական գործ մըն է դպրոցական հաստատութեան մէջ հսկիչը՝ այն անձը կամ անձերը, որ անմիջապես կհետևի դպրոցի մը որոշ հարկին, որոշ տեղին և մասին մէջ կամ որոշ ժամերուն կարգ ու կանոնի ճշդրիտ գործադրութեանը, բացակայութիւններուն, բարեկարգութեան և բարեկրթութեան: Ասոնք դպրոցներու մէջ՝ մեկը կին :

Դպրոցի մը մնացած բոլոր ուսուցիչները վարչական գործերուն կմասնակցին որոշ գծված սահմանի մը մէջ, ուր դաստիարակութիւնը սերտորեն կհյուսվի վարչական պարտավորութեան: Եվ այդ պարագաները հետևյալներն են.

ա) Դասավանդման միջոցին դասարանին մեջ ամեն ուսուցիչ միևնույն ժամանակ և՛ վարիչ մըն է, և՛ կարգապահության, և՛ մարդավարության, և՛ բարոյականության հսկողը: Ան պիտի կատարե իր այդ վարչական գերը համաձայն դպրոցի մեջ ընդունված կարգերուն և իրենց մանկավարժական ժողովներու որոշումներուն: Երբ մասնավոր դժվարության մը հանդիպի, կդիմե ընդհանուր հսկիչին, դասարանական դաստիարակին կամ վերջապես տնօրենի օգնության:

բ) Շատ տեղ, մանավանդ վարի կարգերուն մեջ կամ հարմարվելով չենքի դրած պայմաններուն, ուսուցիչներուն վրա կմնա նաև աշակերտները դասարան տանիլը, դասարանեն հանիլը, պարապ պահերուն հսկելը, սերտողություններուն օգնելը: Այս բոլոր պարագաներուն ուսուցիչը հսկիչի ու տնօրենի օգնականին գերը ունի իր վրա:

գ) Եվ ընդհանրապես դադարներուն, խաղերու միջոցին, նույնիսկ դպրոցի չենքեն դուրս՝ փողոցն ու այլուր, հսկիչի ու տնօրենի օգնականի պաշտոնը կատարելը թեև անմիջապես իր պարտավորություններուն մեջ չէ, բայց և այնպես ո՛չ մեկ ճշմարիտ ուսուցիչ անտարբեր նայիլ չի կրնար, երբ անկարգություն մը կկատարվի վայելչության, մարդավարության և դպրոցի կարգերուն հակառակ: Այս տեսակ պարագաներուն լավագույնն է, խաչաձևումներե խուսափելու համար՝ իր անմիջական միջամտությամբ անկարգությունը կեցնելեն ետքը, ինքը դատ ու դատաստան չկատարե, այլ հարցի ուսումնասիրումը և վերջնական կարգադրությունը հանձնե դպրոցի վարչական մարմնին:

դ) Այն դպրոցները, ուր մասնավոր հսկիչ չկա, բնականաբար հսկիչի մը բոլոր վարչական աշխատանքները կիյնան ուսուցիչներու վրա, ուսուցչական ու վարչական պարտավորությունները կձուլվին իրար. փոքրիկներու հետ բնական վիճակ մըն է ասիկա, բայց միջին և ավելի ևս բարձր դասարաններու համար շատ ավելորդ ու դժվար բեռ մըն է. կխանգարե ուսուցչին գործը:

ե) Միջին և վերին կարգերուն մեջ ուսուցչությունը հնար նպածին չափ պետք է ազատել վարչական ու կարգապահական պարտավորություններե, բայց ամեն ուսուցիչ, որ բավարար ժամերով դաս ունի դպրոցական հաստատության մը մեջ, պար-

տական է մեկ դասարանի մը աշակերտներուն տևական դաստիարակը ըլլալ, ճանչնալ իր կարգի տղոց ընտանեկան, տնտեսական և այլ պայմանները, ուսումնասիրել տղոց բնավորութիւնը, ջանասիրութիւնը, թերութիւններն ու առաւելութիւնները և ջանալ ամեն կերպով օգտակար ըլլալ անոնց հոգևկան կրթութեան ու բարձրացման:

II. ՈՒՍՈՒՑԻՉ ԵՎ ՎԱՐԻՉ

Այս հատուկ վարչական անձերեն զատ անշուշտ որ ամեն ուսուցիչ դեպքը բերած ժամանակ իր վրա ունի որոշ վարչական պատասխանատուութիւն :

Այսպես, ինքն իր դասարանին մեջ, երբ աշակերտներուն հետ կպարապի, այսպես, երբ դասարան մը առած կտանի որևէ հաստատութիւն ցույց տալու կամ պտոյտի և զվարճութեան, այնպես, երբ պատահական կերպով աշակերտներու խումբ մը և ուսուցիչը իրար կպատահին որևէ տեղ:

Այս և նման պարագաներուն ամեն ուսուցիչ ալ իր ուսուցչական պարտավորութեան մասը պիտի ըլլա որոշ վարչական խնդիրներ կարգադրելը:

Մանաւորապես դաստիարակ-ուսուցիչները շատ մեծ և խոր աղդեցութիւն ունին աշակերտութեան վրա, և որոնց մասին պիտի խոսվի առանձին:

Անհատ անձերն և անհատ ուսուցիչներե դուրս մանկավարժական ժողովներն են, որոնք վարչական դեր ունին և վարչական որոշումներ ալ կկատարեն: Այսպես, օրինակ, աշակերտութեան վարքն ու բարքը դնահատողը մանկավարժական ժողովներն են, ինչպես և դասարանական կազմերն ու ավարտականները որոշողը և ընդունելողներն ու հեռացողները վավերացնողը:

III. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Ա. ՏԵՍԱԿՆԵՐԸ

Դպրոցական գործի դեկավարութեան մեջ տնօրենութեան կից երկրորդ մարմինն է մանկավարժական ժողովը, այսինքն դպրոցի մը բոլոր ու սուցիչներու պաշտոնական խորհրդակցութիւնը:

Նայելով դպրոցի իրավական տերերուն և անոնց միջամտութեան չափին և ըմբռնումներուն՝ չատ կտարբերին իրարմե տնօրենութեան և մանկավարժական ժողովներուն փոխհարաբերութիւնները: Կրնանք որոշել իրավական չորս հիմնական վիճակ. կա տնօրենութեան գերադասութիւնը, կա մանկավարժական ժողովներուն գերադասութիւնը, կա երկուքի ալ ստորադասութիւնը, կա վերջապես երկուքի ալ հավասարադասումը:

Երբ տնօրենին իրավասութիւնն է գերադաս դպրոցին մեջ, ուսուցչական ժողովները կդառնան աչակերտներու վարք ու բարքը դնահատող և անոնց աշխատանքին նիշերը ճշդող հավաքական աշխատակցութիւն մը, որուն վրա ավելի կամ պակաս պատահականութեամբ կավելենան երբեմն զանազան ուսումնական և դաստիարակչական հարցերու շուրջ կիսապաշտոնական մտքերու փոխանակութիւններ: Ուրիշ խոսքով՝ չատ նեղ սահմաններու մեջ աշխատող մանկավարժական ժողովներ են ասոնք և քնավ մասնակցութիւն չունին դպրոցի կազմութեան, ուղղութեան և վարչութեան վերաբերող հարցերու մեջ: Ասիկա կնշանակե, որ դպրոցի իրավական տերը անհատ մըն է անկախ կամ իրավական տերերու կողմեն նշանակված և լիազորված անձ մը: Այս պարագային ուսուցիչներու ընտրութիւնն ալ կդտնվի տնօրենին ձեռքը, որ կվարե գործը տեսակ մը միապետական սկզբունքներով:

Երբ մանկավարժական ժողովներու իրավասութիւնն է գերադասողը, այդ ժողովներուն ձեռքը կրլլա կեդրոնացած և՛ գործերու բուն վարչութիւնը, և՛ ամեն որոշում ու վճիռ, և՛ ամեն նոր առաջարկներու, և՛ կարգերու մշակումը, և՛ ամեն հակակշիռ: Դպրոցական ամեն պաշտոնյա ենթակա է ժողովի որոշումներուն իր ամբողջ գործունեութեամբ, կգործադրե ժողովի հրահանգները և պատասխանատու է ժողովի առաջ, և դպրոցի տիրոջ առջև ալ պատասխանատու է ամբողջ ժողովը: Տնօրենը, եթե կա, ինչպես բոլոր վարչական պաշտոնյաները, բոլոր մյուս ուսուցիչներուն նման իրենց հրահանգները կստանան ժողովեն:

Տնօրենը սովորաբար ընտրված կրլլա, մյուս ուսուցիչներու նման, իրավատեր մարմնի կողմեն, բայց կրնա և ընտրված ըլլալ ուսուցչական ժողովի կողմեն: Առաջին պարագային նորեն որոշ իրավական անկախութիւն մը կմնա վրան ժողովի հանդեպ.

երկրորդ պարագային ան պարզապես ժողովի ներկայացուցիչն է և ժողովի որոշումներուն գործադրութեան հսկողը, եթե ընտրված է տևական կերպով. տնօրենութիւնը իր ուրույն կերպարանքը բոլորովին կկորանցնե, երբ կդառնա հերթական ու ժամանակավոր:

Դպրոցական ղեկավարութեան այս ձևերը ծնունդ են ժողովրդապետական սկզբունքներու հետևողութեան, երբ ամեն գործ ժողովներով տեսնելը կտիրապետե կառավարական մեքենայի բոլոր անիվներուն մեջ և անոր նմանութեամբ ալ ամեն տեսակի հաստատութիւններու վարչութեան մեջ: Ամեն ինչ ժողովներու ձեռքը կեդրոնացնելու այս ծայրահեղութիւններուն հասնելեն ետքը՝ բնական կերպով հարց կծագի, որ բոլոր դպրոցական պաշտոնյաները ընտրողն ու արձակողը դառնա միաժամանակ օրենսդիր, գործադիր, ընտրող և ընտրվող միակ իսկական տերը, գործնականապես առանց որևէ հակակշռի և անփոփոխելի, քանի որ գործնականապես կդառնա անկարելի ուսուցիչ մը հեռացնելը, և ուսուցչութիւնը անխուսափելի կերպով կբաժնվի ներքուստ մեկերվու հակամարտ խմբակներու՝ իրենց ուզած մարդիկը պահելու և դպրոցի վրա տիրապետելու բուռն ու համառ պայքարով:

Այս կարգի հիվանդութիւններե դպրոցական մթնոլորտը ազատ պահելու համար բուն վարչական-ընտրական գործերը երբեք պետք չէ դնովին ուսուցիչներուն ձեռքը. բուն ուսուցչի գործը դաստիարակութիւնն է և ուսուցումը, և անոր այդ աշխատանքին վրան ալ միշտ պետք է գտնվի հակակշիռ անձ մը, որուն ընտրողն ու լիազորողը պետք չէ ուսուցչութիւնը ըլլա:

Տնօրենութեան և մանկավարժական ժողովներու գործունեութեան մեջ կաշկանդված ստորադասութիւն մը կառաջանա միաժամանակ և հավասարապես, երբ վերին իրավատեր մարմինը մանրամասն կանոնագրերով կբաժնե աշխատանքը այդ երկու կողմերուն միջև՝ ամեն մեկուն ընելիքը ճշդիվ որոշելով. երկու կողմերն ալ ինքը կնշանակե և կպահանջե, որ մեքենան բանի ճիշդ իր լարածին պես՝ իր մեջեմեջ ղրկած ընդհանուր դիտողութիւններու հակոդութեան տակ:

Այսպես կըլլա ընդհանրապես պետականացած և խիստ կեդրոնացման ենթարկված կարգ ու սարքի մեջ. իրավազրկութեան բերած հավասարութիւնն է ասիկա և՛ տնօրենին համար, և՛

ուսուցչության. երկուքն ալ պարզապես պետք է շարժին ու կատարեն կեդրոնին եկող հրահանգները կեդրոնի մատնանշած ձևով ու եղանակով:

Շատ ավելի բնական և առողջ հավասարեցում մըն է տնօրենութեան և մանկավարժական ժողովներու իրավասութեան, երբ դպրոցին տերը, ըլլա պետութիւնը, համայնք մը, ծնողական խումբ մը, կընտրե իր տնօրենը և տնօրենի մատնանշումով կհրավիրե իր ուսուցիչները: Տնօրենին կհանձնվի բոլոր զուտ վարչական հարցերուն գործադրութիւնը անկախ ուսուցչական ժողովեն, դիցուք և երբեմն խորհրդակցելով անոնց հետ, իսկ մանկավարժական ժողովին կհանձնվի ուսուցման ու դաստիարակութեան վերաբերող բոլոր հարցերուն մշակումը, ծրագրումը և որոշումը. տնօրենը կըլլա նախագահը այդ ժողովներուն և հակողը անոր տված որոշումներու գործադրութեան և այդ մասով ալ պատասխանատու մանկավարժական ժողովի առջև:

Ասիկա երկու կողմերու հավասարակշռում մըն է աշխատանքի բնական բաժանման վրա հենված: Բուն մանկավարժական խնդիրներու մեջ իրավական գերադասութիւնը կմնա մանկավարժական ժողովին ձեռքը, իսկ զուտ վարչական, ընտրական և հակակշռի իր պարտաւորութիւններուն մեջ կմնա տնօրենը լիովին անկախ ուսուցչական ժողովեն:

Մանկավարժական ժողովներեն անջատ ծանրակշիռ հարցերու կամ բացառիկ փոփոխութիւններու պարագային կրնան տեղի ունենալ իրավատեր մարմնի նախաձեռնութեամբ և իրավական ուսուցչական լրիվ կազմերու մասնակցութեամբ խառնընդհանուր ժողովներ ընդհանրապես խորհրդակցական բնույթով:

Ասկե զատ իրավատեր մարմինը երբեմն կցանկա ներկայացուցիչ մը պահել մանկավարժական ժողովներուն մեջ խորհրդրդակցական ձայնով, երբեմն ալ նույնիսկ վեթոյի իրավունքով: Նույնը կարելի է պահանջել շատ ավելի խորին իրավունքով ծնողական ժողովի կողմեն ընտրված մեկ կամ երկու խորհրդականի համար մանկավարժական ժողովներու մեջ:

Ծայրագույն ազատամտութեամբ տարվողները կպահանջեն նույնիսկ, որ դպրոցի մը աշակերտութիւնն ալ իր ներկայացուցիչները ընտրե ուսուցչական ժողովներուն մասնակցելու համար:

Անշուշտ այս վերջինը հասկացողութիւններու պարզ չփոթութիւն մըն է արդեն և խառն ժամանակներու բերած հոգեփոխական տակնուվրայութիւններու արդիւնք: Կրթութիւն՝ կնշանակէ մեծերու զեկավարութիւնը փոքրերու վրա. կրթվողներու դերը ենթարկվիլն է, եթե խաղ ու կատակ չէ կատարվածը: Եվ անշուշտ մեծերու պարտավորութիւնն է դիտնալ աշակերտութեան հոգիին մէջ և շուրջը անցած-դարձածը և այդ բոլորը աչքի առաջ ունենալ իր ծրագիրներու և աշխատանքներու մէջոգին: Բայց այդ բոլորին ծանոթանալու շատ ուրիշ տեղեր ու հարմարութիւններ կան, քան երկու ներկայացուցիչները մանկավարժական ժողովին մէջ:

Ե՛վ պետութիւնը, և՛ հանրութիւնը, և՛ ծնողները մասնավորապես, շատ ցանկալի է, որ հետաքրքրվին ուսուցչական ժողովներու աշխատանքով և ուղենան գուցե աչք ու ականջ մը ունենալ այդ ժողովներուն մէջ. միակ տարբը, որ հոս տեղ չունի և չի կրնար ունենալ, աշակերտութիւնն է. հիմնդ մտածում է զեկավարող մարմնին մէջ զեկավարվող մը նստեցնելը:

Բ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ ԶԲԱՂՈՒՄՆԵՐԸ

Նախորդ բացատրութիւններեն պարզ է, որ մանկավարժական ժողովներուն զբաղումներուն թե՛ տեսակները և թե՛ ամեն մեկ տեսակի խորքն ու լայնքը շատ է տարբեր՝ նայելով դպրոցի իրավական տիրոջ տված ազատութեան չափին:

Սակայն ընդհանուր առումով մանկավարժական ժողովներու զբաղումներուն նյութերը կրնանք բաժնել չորս խումբի՝ ուսումնական հարցեր, դաստիարակչական հարցեր, վարչական հարցեր և աշակերտական գնահատումներ:

Ըլլա խորհրդակցական ձևով ու սահմանափակ թվով, ըլլա ազատ որոշումներու իրավունքով և անհամեմատ լայն սահմաններով, բայց միշտ այս չորս տեսակի նյութերն են, որ կուգան ու կրնան գալ մանկավարժական ժողովներու սեղանին վրա: Վարչականորեն գեչ կազմակերպված դպրոցներուն մեջն է միայն, որ ուսուցիչներու մէջ եղած անձնական անախորժութիւնները, շահերը, բողոքները, մեղադրանքները և ներքին այլ հակամարտութիւնները կզառնան նյութ այդ ժողովներուն՝ հիմնապես խաթարելով դպրոցին հանդիստը, ուսուցիչներու ընկերական հարա-

բերությունները և կրթական գործունեությունը: Վերի չորս տեսակի նյութերեն դուրս եկող հարցերը պետք չէ գան մանկավարժական ժողովները, ատոնց կարգադրության տեղը տնօրենի առանձնասենյակն է, կամ կհասնին վերին իրավական մարմնին:

Մանկավարժական ժողովներու զբաղումներու ուսումնական նյութերը կրնան ըլլալ. 1) Ծրագրային մշակումներ, սրբագրություն, փոփոխության առաջարկներ, նոր առարկաներու հավելում. 2) Նյութի այլ ձևի կամ այլ չափով բաշխումի աշխատանքներ, մեկ տարիեն մյուսը փոխանցում, զանազան հավելումներ, հապավումներ, ձուլումներ տարվան մը մեջ ավանդվելիք նյութերու. 3) Դասավանդման եղանակներու տեսական ու գործնական սրբագրություններ, լրացումներ և ուսումնասիրություններ. 4) Դասագրքերու ընտրության ամեն առարկայի ու ամեն դասարանի և այդ ընտրության ղեկավար սկզբունքներուն մշակումը. 5) Պարբերական ծանոթացում ընկերներու արդեն կատարած աշխատանքին, անոնց կրած դժվարություններուն, նոր փորձերուն և հաջողության պատճառներուն:

Զբաղումներու դաստիարակչական նյութերը կրնան ըլլալ. 1) Ընդհանուր ուսումնասիրություններ կրթական-դաստիարակչական հարցերու. 2) Դպրոցի մեջ նկատված թերություններուն ընդգծումը և անոնց առաջն առնելու միջոցներուն ուսումնասիրությունը վարքի, քաղաքավարության, կարգապահության ու բարոյականության տեսակետեն. 3) Աշակերտներու հոգեբանական, ընտանեկան, տնտեսական վիճակի մասին խորհրդակցություններ և հոգեբանական փորձեր. 4) Աշակերտներու ընկերական հարաբերություններուն շուրջ վերլուծումներ, ինչպես և աշակերտ-ուսուցչական հարաբերություններու քննությունը. 5) Աշակերտական խաղերու, ազատ աշակերտական դասախոսություններու և այլ աշակերտական ամեն տեսակի կազմակերպություններու և ազատ գործակցության նպաստելու հարցեր ու առաջարկներ:

Մանկավարժական ժողովներու վարչական նյութերն են. 1) Աշխատանքի ժամերուն դասավորությունը, հաջորդականությունը և տևողությունը. 2) Բացակայություններուն և ուշացումներուն հետևելու եղանակներ. 3) Աշակերտներուն կարողությունները գնահատելու միջոցներուն քննությունը. 4) Աշակերտներու

ընթերցանութիւնը դեկավարելու լավագոյն ձևերուն որոնում. 5) Դասարանը կառավարելու արվեստը. խաղերու ու զբաղմունքներու ատեն հսկել ու աղդել կարողանալու ձեռնարկումներ. և 6) Դպրոցներու ընդհանուր կազմութեան, դպրոցական իրավասիրութեան և վերին վարչական խնդիրներու սկզբունքային ուսումնասիրութիւններ, ինչպես և դպրոցական տարիներու, ընդհատ կրթութեան բռնելիք ուղղութեան և այդ ամենը դեկավարելու տեսութիւններ: Զբաղումներու վերջին խումբը կկազմեն՝ 1) Աշակերտներուն ամեն մեկուն բնաւորութեան դծերուն, վարք ու բարքին, աշխատասիրութեան և ընդունակութեան ճշդումը. 2) Այդ գնահատումներուն վրա հիմնված հանել դասարաններու և ընդհանուր դպրոցին գնահատումը, թերութիւններն ու առաւելութիւնները և որոնել ատոնց պատճառը. 3) Գտնել այդ պակասութիւնները սրբագրելու միջոցներ և առաւելութիւնները խորացնելու ձեռնարկներ. և 4) Այդ նիշերու և գնահատումներուն վրա հենված՝ կատարել դասարանի դասարան անցումները և ավարտականներուն բաշխումը:

IV. ՎԱՐԻՉ ՄԱՐԴՈՑՄԵ ՊԱՀԱՆՋՎԱԾ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարչական գործ մը կատարող բոլոր դպրոցական պաշտոնյաները պետք է տիր ըլլան որոշ վարչական հատկութիւններու, առանց որուն մեծ դժվարութիւններ կստեղծվին և՛ իրենց համար անձնապես, և՛ դպրոցական վարչութեան համար ընդհանրապես:

Առաջին պահանջը ինքնազսպութիւնն է. իր ջիղերը զսպել չգիտցող նեղսիրտ, նեղմիտ, բերնին եկածը խոսող, տեղի-անտեղի բարկացող, հանդիմանող ու դյուրագրգիռ մարդոց գործը չէ դպրոցական վարչութիւնը. ուրիշները կառավարելու եկած մարդը ամենեն առաջ պետք է տորմած ըլլա ինքզինքը կառավարելը՝ իր հուզումները, իր շարժումները, իր խոսքերը. ամենաճանր վայրկյաններուն իր սառնութիւնը պահել կարողանալը, իր խոսքին ու վարմունքին աղնվութիւնը պահել կարողանալը թե՛ վարչական և թե՛ կրթական մեծ առաւելութիւն է:

Երկրորդ պահանջը հոգիի բնական բարութիւնն է, երբ ամենքը կզգան, որ իրենց օգտին համար է, որ վարիչը այս կամ

այն կարգադրությունը կընե, որ չկան ուրիշ անձնական կամ կողմնակի շիլ հաշիվներ: Այդ բնական բարութենե կըղխի նաև վարիչ անձի ներողամիտ վերաբերումը միշտ առանց թույլ ըլլալու կամ կարգապահութենեն չեղելու: Հոգին կըղխի նաև վարիչ անձերու արդարամտությունը ամեն հարցի մեջ, անոնց չիտակ վերաբերումը առօրյա մեծ ու պզտիկ խնդիրներու ու վեճերու ժամանակ, և մանավորապես անոնց հավասար վերաբերումը բոլորի հանդեպ առանց նախասիրությունների, կողմնակալության կամ երես տալու:

Երրորդ պահանջն է՝ վարվիլ միշտ հարգանքով աշակերտներուն հետ: Հայհոյանք, արհամարհանք, տգեղ խոսքեր, ծաղր ու հեգնություն հանցանք է վարիչ անձի մը շրթունքին, և միայն ատելություն կծնին: Ըլլալ քաղաքավարի և ուշադիր փոքրիկներուն և աշակերտներուն հանդեպ, հարգել անոր անձը, խոսքը և զգացումները և արժանապատվությունը բնականորեն միայն հարգանք կծնին ու համակրանք փոխադարձ կերպով: Իսկ հարգալից ու համակիր մթնոլորտի մը մեջ ամեն խնդիր դյուրին կկարգադրվի, հարաբերություններն կըլլան պարզ և պատահական անհամութությունները կհարթվին արագ ու թեթև: Անտարբեր մթնոլորտի մը մեջ ամեն ինչ պաղ կանցնի, որով և ավելի դժվար կըլլա անախորժ շփումները հարթելը: Հակակիր մթնոլորտի մեջ ամեն չնչին խնդիր իսկույն կըարդանա, ոչինչ հարցերը կմեծնան և բոլորովին դեպքին չհամապատասխանող դժգոհություններու ծնունդ կուտան, որոնք հարաբերություններն ու անհասկացողությունները ավելի ևս կըարեն ու մնայուն ու համառ հակասություններու կվերածվին:

Չորրորդ պահանջը վարչական չիտակություն է, վարիչի մը վարմունքին հոգեկան անկեղծությունը:

Հակելու, կարգադրություններ ընելու և ղեկավարելու երկու հիմնական ուղղություն կա՝ բնականաբար սերտորեն հյուսված մարդոց բնավորության:

Ոմանք ավելի հակված են կրթնելու օրենքին, իրավունքի, հնդինակության ու խորության վրա: Դպրոցական վարիչ անձերեն և դպրոցական կարգապահութենեն կպահանջեն, որ երբեք չճկի, տեղի չտա, ամեն ինչ խիստ հնազանդությամբ և առանց երկարբարակ բացատրություններու, դինվորական ոգիով, կարգապա-

հուժյան ու դաստիարակութժյան հիմքը կհամարեն կույր հնազանդութժյունը: Եվ իրենք թեև միշտ աշակերտութժյան մեջն են, բայց միշտ տեսակ մը քաշված կմնան անոնցմե, միշտ տարածութժյուն մը կպահեն իրենց և աշակերտութժյան միջև և ամեն մտերիմ մոտեցում կհամարեն թերացում մը իրենց պաշտոնին: Ըլլալ միշտ արթուն, հսկել, ամեն հարցի մեջ վճիռը տալ արագ, ըլլալ արդարամիտ, ամեն կարգ ու կանոն կատարել ու պահանջել խստիվ, ցույց չտալ իր զգացումները և ընդհանրապես խուսափիլ շատ խոսելե: Ուրիշ խոսքով՝ ասոնք մարդիկ են, որ կամքով ու խելքով կուզեն իրենց գործը վարեն և ավելի զորանոցային ըմբռնումներ ու կեցվածք ունեին դպրոցի մեջ:

Վարչական երկրորդ ուղղութժյունը, ընդհակառակը, և անշուշտ նորեն վարիչի բնավորութժենեն հոսելով՝ հակված է մեղմութժյան, ավելորդ կհամարե այդ ցից խստութժյունը, կուզե սիրով, մտերմութժյամբ, փոխադարձ զգացումներու վրա հենվելով և հաճախ տղոց դիտակցութժյան դիմում ընելով վարել իր գործը՝ միշտ խառնվելով աշակերտներուն, մոտենալով անոնց հոգիներուն, անոնց մեծ ու պզտիկ ցավերուն, սիրտ տալով և ընկերական չեչտ մը դնելով իր հարաբերութժյան մեջ:

Անշուշտ որ կրթական տեսակետեն ավելի արժեքավորը երկրորդ ուղղութժյունն է, բայց այս երկու ճամբաներն ալ միշտ եղեր են ու միշտ կան, քանի որ տարբեր խառնվածք ու բնավորութժյուն կբերեն, տարբեր չարժում և ըմբռնում: Եվ եթե անկեղծ խորքեն կուզան, այդ երկու ուղիներն ալ տեղ կհասցնեն, և այդ բոլորովին տարբեր ոգիով վարիչներն ալ կհաջողին ու հարգանքի կարժանանան:

Զախորդը հոն է, երբ իրեն չոր ու բարձր դիրք մը տալը հոգիին աղքատութժյունը ծածկելու համար է կամ անտիառութժյուն, երբ իր անճկուն խստութժյունը տղոց հոգին հասկնալու անկարողութժենեն կառաջանա և իր վարչական տկարութժյունը պզտիկ կուզե: Եվ ճիշդ այդպես ալ ձախողանք միայն կբերե և բարոյական ավեր, երբ մեղմութժյունն ու մտերմութժյունը ներքին բնական ջերմութժենեն չի հոսիր, այլ կկեղծվի, կցուցադրվի հրապուրելու համար, աշակերտները իր կողմը քաշելու որևէ ձևով մը չահագործելու համար. կամ վերջապես իր բարոյական կամ մտավոր

թերինները փաղաքշանքով ու կեղծավորութեամբ փոխարինելու համար: Բայց այս բոլորը իզուր ճիգեր են, շատ շուտով կզգացվին աշակերտութեան կողմեն, կմերկացվին, կարհամարհվին ու կծաղրվին: Ինչպես ամեն տեսակի ստեղծագործութիւններու մէջ, այնպես ալ կրթական ու վարչական գործի մեջ ներքին չիտակութիւնը, բնական իրականութիւնը և վարմունքի անկեղծութիւնը ամենեն ազնիվ արժանիքն է միշտ և հաջողութեան գլխավոր լծակներեն մեկը:

Այս բոլոր ընդհանուր վարչական հատկութիւններուն վրա մասնավորապես դպրոցի մը տնօրենը իր պաշտոնակից ընկերներեն ավելի պետք է ունենա մեկ-երկու առավելութիւն ալ:

Իր ընկերներուն և ամենուն հարգանք պարտադրելու համար պետք է ունենալ անպայման բարձր կրթութիւն, մանկավարժական փորձառութիւն և հոգեկան բնական բարձրութիւն: Պետք է ըլլալ ազատ մանր զգացումներե, սնափառութենե, մեծամտութենե, տիրակալութենե: Պետք է ունենա բայց հոգի ամեն հայտնված կարծիքի դեմ և արտագին գնահատանք՝ ամեն ուժի ու արժանիքի դեմ: Բոլոր իր պաշտոնակից ընկերներուն պետք է մոտենա գործի հաջողութեան տեսակետեն տարված: Տնօրենին մանր հոգեբանութիւնը հարաբերութիւնները կծանծաղեցնե, իսկ տնօրենին կողմե իր անձի ու իր օգտի տեսակետեն առած քայլերը անխուսափելի կերպով երկպառակութիւն, դավ ու խառնակութիւն կմտցնե ուսուցչական կազմի անդամներուն մէջև: Եվ վերջապես վարչութեան մը գլուխը կեցող անձը պետք է ունենա բնական կարողութիւն մը՝ ավելորդ հարցերու առջևն առնելու, ծագած վեճերն ու խնդիրները իրենց նեղ սահմանին մեջ պահելու, կիրքերն ու շփումները մեղմելու, բարդացման առջևը պատ քաշելու և ընդհանրապես արագ ու կտրուկ հարցերը կարգադրելու: Եվ այս ամենուն մեջ ինքզինքը շատ ցույց չտալու: Վարչական մեծ շնորհք է վարել գործերը այնպես, որ ուրիշները կատարեն քու ուզածդ ինքնին իրենց կողմեն, առանց արտաքին պահանջի ու ճնշումի. տեսակ մը իրենցմե գա կարծես և՛ որոշումը, և՛ գործադրութիւնը: Ամենեն ազնիվ ու ամենեն հաջող վարչութիւնն այն է, որ ամեն մեկուն իր դերն ու իր գործը ճշդիվ կատարել կուտա, առանց ինքը ըստ երևույթին մեջ խառնվելու:

Գ. ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ

Ի. ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ

1. Ինչքան քիչ պահանջք դնենք դպրոցի վրա և ուսուցչի, այնքան հնար կա միևնույն կարգին մեջ միացնել երևսուն-երեսուն-հինգ, քառասուն և ավելի աշակերտներ, հանձնել ատոնք մարդու մը, որ հսկէ ատոնց վրա, չընենն չափազանց վայրենի բաներ և վերջապես կրկնելով քանի մը տարիներու ընթացքին, սորվեցնել քանի մը կտոր բան:

Բայց երբ դպրոցեն առանձնապես կսպասենք, որ հոգեկան բարձր որակով մտավոր շատ ավելի խոր կարողությամբ և չնչուած անհատականությամբ մարդիկ պատրաստե, մարդկության ստիճանական զարգացման ու բարձրացմանը ծառայելու համար, այլևս անհրաժեշտ կդառնա փոքրացնել ուսուցչի աշխատանքին ու ջանքերուն հանձնված աշակերտության թիվը՝ մեր պահանջները իրագործելու հնարավորություն ունենալու համար:

2. Փորձն ու դիտողությունները ցույց կուտան մեզի, որ դասարանի մը կազմության ամենեն նորմալ միջին թիվը քսան հոգին է: Քսան աշակերտներե կազմված դասարան մը լեփ-լեցուն և աղվոր դասարան մըն է: Կյանքն ու շրջապատող պայմանները սակայն դեռ շատ կստիպեն, որ այդ թիվը մինչև 22-ի հասնի, իսկ տնտեսական զանազան հարկադրանքները կքաշեն, կհասցնեն մինչև 24 հոգիի:

24 հոգին պետք է համարել վերջին սահման, ուրկե անդին անցնելու իրավունքը չունինք, եթե կուզենք, որ մեր ուսուցիչները ուսուցիչ ըլլան բառի իսկական իմաստով, և մեր աշակերտներն ալ աշակերտ ըլլան նմանապես բառի իսկական իմաստով: Հատատատ գիտնանք, որ դասարանին մեջ 24-25-26 թիվ աշակերտներուն ներկայությունը միշտ ալ ավելորդ և ուսուցիչներու կողմե սաստիկ ծանր զգացվող բեռ մըն է, որ իր բազմատեսակ դժվարություններն ու անախորժությունները կբերե իր հետ:

3. Արդ՝ վերջին բնական սահմանը 22 հաշվելով, մանկապարտեզի երկու կարգերուն լրիվ թիվը կըլլա 44. պատրաստական

Նախակրթարանի 4 կարգերու թիվը կըլլա 88. բարձր նախակրթարանի չորս կարգերուն ընդհանուր թիվը կրլյա ուրեմն նմանապես 88, իսկ լսարաններու երեք կարգերը միասին քիչ կպատահի, որ հասնին 60-ի: Ասոնց գումարը կընե 280: Այս է ըրիվ թիվը միջնակարգ վարժարանի մը, որ բոլոր դպրոցական աստիճանները ունի և ոչ մեկ զուգընթաց դասարան:

Այդ թիվը մինչև 300 աշակերտի քաշել-հասցնելու ճիգը հնարավոր է միշտ դպրոցի աշխատունակութեան և ներքին բարեկարգութեան աստիճանը քիչ մը ցածացնելով: Դպրոցի մը մեջ, երբ կհպարտանան, թե օրինակ, իրենց հաստատութիւնը 560 աշակերտութիւն ունի, հպարտանալու ոչ մեկ հիմք կրնան ունենալ: Միայն այն պարագային հպարտ ըլլալու իրավունքը ունին, երբ միևնույն ժամանակ ավելցնեն, որ այդ աշակերտութիւնը բաժնված է, օրինակի համար, 26 դասարաններու մեջ, թե չէ 15-18 դասարաններու մեջ հավաքել, ճզմել աշակերտները պարզապես դրամ շորթել ըսել է:

II. ՏԱՐԻՔ

1. Կյանքն ու իրականութիւնը հետզհետե ճշդած ու որոշած են դպրոցական կարգերուն պահանջած տարիքը: Մանկապարտեզի երկու տարին կյանքի հինգերորդ և վեցերորդ տարիներն են, այսինքն հինգը լրացածեն մինչև յոթը լրացնելը:

Տարրական նախակրթարաններուն երկամյակներուն տարիներն՝ յոթեն ինը և իննեն մինչև տասնմեկ:

Բարձր նախակրթարանինը՝ 11-են 13 և 13-են 15:

Լսարաններուն՝ 15-են 18:

Ուրեմն, բնականոն պայմաններու մեջ, ամեն աշակերտ հինգ տարեկանը լրացուցած կուգա մանկապարտեզ և կավարտե դպրոցը 19-ը տարեկանը հազիվ ոտք կոխած. եթե այդ տասներեք տարիներուն ընթացքին անգամ մը դասարանը կրկնած ըլլա, միջնակարգ կրթութիւնը կլրացնի 20 տարեկանին թևակոխած:

Դասարանը մնալը բացառութիւն մըն է միշտ, մանավանդ մանկավարժական պահանջներով ղեկավարվող բարեկազմ կրթական հաստատութեան մը մեջ: Բայց շատ հաճախ արտաքին են

պատճառները, հանրային կամ ընտանեկան և դպրոցական անփութութեան կամ թերութեան արդիւնք չեն, ոչ ալ իրապես աշակերտի անկարողութեան:

2. Կեանքի իրականութեան բերումով տարիքի վերը հիշած թիվերը որոշ չեղումներ կունենան բազմատեսակ պատճառներով. այնպես որ միջին և լաբարանական կարգերուն մէջ մինչև տարի մը, երբեմն քիչ մը ավելի իրարմէ մեծ ու պզտիկ եղող տղաք իրարու քով կրնան դալ նոյն դասարանին մէջ առանց մեծ անպատեհութեան:

Սակայն մանկապարտեզի և տարրական նախակրթարանի առաջին երկամյակին մէջ տարիքի խնդրին հանդեպ չատ ավելի խստապահանջ ըլլալ է անհրաժեշտ: Այդ կարգերուն մէջ, քանի մը ամիսով մեծ ու պզտիկ ըլլալը «դասարանին մէջ», աշխատանքներու միջոցին, իսկույն աչքի կ'իյնա և վարժուհիին մեծ դժվարութիւններ ու անախորժութիւններ կպատճառէ:

3. Մանաւորապես ծնողներու և մանկապարտեզի վարչութեան մէջ անախորժ հարց առաջ կուգա այս պատճառով. մայրը կուզէ, որ անպատճառ իր չորսուկես տարեկանին մոտեցած փոքրիկը «ընդունվի» դպրոց: «Եղբա՛յր, մեկ-երկու ամսվան տարբերութիւնը ի՞նչ կարևորութիւն ունի, տարին դեռ կես չեղած՝ փոքրիկը կդառնա հինդը լրացուցած, և երեխաս չատ հասուն միտք ունի ու աչքաբաց է»:

Այո՛, մտքի հասունութիւնը, ընտանիքի կյանքն ու ապրելակերպը, ծնողներու մանկավարժական որոշ ճիգերն ու թափած աշխատանքը իրավ է որ երբեմն կրնան փոխարինել քանի մը ամիսներուն պակասը: Միայն թե ծնողները չատ լավ պիտի ըմբռնեն, որ իրենք արդար դատավոր մը ըլլալ չեն կրնար իրենց փոքրիկի շնորհքներն ու կարողութիւնները դատելու համար: Եվ այդ կարդի վկայութիւններու վրա հիմնված, կամ երեխայի արտաքին ժիր ու արթուն տեսքեն խաբվելով՝ ժամանակեն առաջ ընդունված խեղճ երեխաներն են, որ կտուժեն և կկրեն իրենց մոր կամ դպրոցի վարչութեան առած սխալ քայլի հետևանքները: Ամբողջ տարին կ'աշչքչվին դասարանի ետևեն՝ առանց կատարվող աշխատանքներեն խոր հաճույք մը առնելու, ու կդառնան «հետ-

յալ մը», որ հաճախ կմնա աշակերտին վրա նույնիսկ հաջորդ կարգերուն մեջ:

Ծնողներուն ստիպելը չատ անգամ եսական բնույթ ունի. ո՛չ թե երեխան է, որ կմտածեն, ոչ ալ դպրոցը. մայրը իր տանու հանգիստը միայն կմտածե, փոքրիկի եղբայրներն ու քույրերը կևրթան դպրոց. «Օ՛ֆ, ասիկա ալ առեք վերջանա»: Կամ որչափ կարելի է չուտ զավակը ավելի փոքր տարիքով վերին կարգերը հասցնելն է «տարի չահելու» մնծամիտ ու սխալ հաշիվներով:

Ինչ ալ կուզե ըլլա դրդիչը, մանկապարտեզի վարչությունը երբեք տեղի տալու չէ. փոքրիկները կընդունվին պետական ինքնության թուղթի համաձայն, իրենց ծննդյան հինգերորդ տարին լմնցուցած՝ հոկտեմբեր ամսին:

Պետք չէ երբեք մոռնանք մանկավարժական այն իրողությունը, որ դասարանական աշխատանքները այնքան ավելի հաճելի ու կենդանի կըլլան աշակերտներու համար, երբ քով-քովի նստած են տղաք ու աղջիկներ, որոնք իրենց տարիքով ու կարողություններով և արդեն յուրացուցած պաշարով գրեթե հավասար են իրար:

III. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

1. Աշակերտները դպրոց պետք է ընդունվին դպրոցական աշխատանքները չսկսած, անպայման տարեշրջանի սկիզբը: Ատկե մեկ-երկու ամիս ետքը «բաց տեղ ունինք, կընդունինք» սխալ է, իսկ երկու-երեք ամիս ուշ ընդունված տղան բեռ ու դանդաղեցում մըն է ամբողջ դասարանին համար, եթե ուսուցիչները լրջորեն չանան նորեկը դասարանին հարմարցնելու: Եվ անիրավություն մըն է նորեկի հանդեպ, եթե ավելի կամ նվազ իր բաղդին ձգվի ան ու իր սեփական ճիգերուն:

2. Երբ դասարանի մը մեջ մեկ-երկու հատ նախորդ տարիեն մնացած կարգը կրկնողներ կան և մեկ-երկու հատ ալ այսպես ուշ ընդունված և կերպով մը հարմարցուցած նորեկներ՝ դասարանը կդառնա հիվանդանոց, կգոյանա «ծույլերու», «անընդունակներու», «տարիքավորներու» փոքրամասնություն մը, որ թե՛ կարգապահական և թե՛ ուսուցման տեսակետներեն կդառնա մշտական

հոգնութեան և սրտնեղութեան աղբիւր ուսուցչին համար: Պետք է խնայենք մեր ուսուցիչները և անոնց առանց այդ ալ ծանր հանձնառութիւնը ավելորդ անախորժութիւններով չավելցնենք:

3. Նոյնիսկ տարվան սկիզբը կատարված նոր աշակերտներ ընդունիլը շատ ձախորդ բան մըն է բոլոր կարգերու համար ալ, բացի մանկապարտեզի նոր եկող հինգ տարեկաններեն: Որովհետև այդ բոլոր նորեկները կուգան ուրիշ դպրոցական հաստատութիւններե, ուր թե՛ ուսուցման եղանակները և թե՛ կյանքի ըմբռնումները և թե՛ կարգապահական ձևերը կրնան շատ խոշոր տարբերութիւններ ունենալ մեր հաստատութեան մեջ գործածված ուղղութիւններեն և ձևերեն: Հաճախ շատ երկար ժամանակ և շատ ավելորդ ջանքեր կպահանջվին այդ նորեկները քու կրթական հաստատութեանդ մթնոլորտին վարժեցնելը: Ասիկա դպրոցի տեսակետեն:

4. Շատ ավելի դժբաղդ է իրողութիւնը աշակերտի տեսակետեն, երբ տղա մը, որ հաստնացման տարիներուն երկու կամ երեք դպրոց կմտնե ու կելնե դպրոցե դպրոց անցնելով. մեկ դպրոցի մեջ չարունակ աղոթքի ու եկեղեցական արարողութիւններու մեջ թաթխված, մյուս դպրոցի մեջ չուկայիկ հոգեբանութեամբ թրծված և միայն գործնական տեսակետներով առաջնորդվող, երրորդ դպրոցի մը մեջ ալ Աստված գիտե ուրիշ ինչ նոր հոտերով և ընկերաբանական ամենաավերջին նորույթ վարդապետութիւններով ոսկած, կրնաք երևակայել, թե ինչ խառնակութիւն, հակասութիւն և բարոյական սկզբունքներու ինչ արհամարհանք մը կտիրե այդ թարմ ու դժբաղդ հոգիին մեջ:

Մնծ բաղդավորութիւն մըն է, երբ փոքրիկը նույն կրթական հաստատութեան մեջ հասակ կընտե մեկ ծայրեն մյուսը, ինչքան ալ խոշոր թերութիւններ ունենա դպրոցը, ինչքան «հետամնաց» ըլլա, դիցուք, կամ միջնադարյան ըմբռնումներով թաթխված կամ, ընդհակառակը, խակ ու միակողմանի վարդապետութիւններով ոսկած, միշտ ալ գերադասելի կմնա մեկ որոշ ու նույն մթնոլորտին մեջ մեծցած ըլլալը:

5. Այս ճշմարտութեան հակառակ սակայն կյանքի բազմատեսակ պայմանները, գործնական անհրաժեշտութիւնները կհար-

կազբեն ծնողները երբեմն իրենց տղաքը դպրոցե դպրոց փոխադրելու և դպրոցական վարչութիւններն ալ կստիպեն, որ չափազանց խիստ չըլլան այս տեսակետեն:

Սակայն աչալուրջ ըլլալ կպահանջվի միշտ նոր աշակերտի մը ընդունելութեան պարագային, ինչքան տարիքի համապատասխան ըլլալուն, այդպես ալ ինչքան կարելի է մտավոր պաշարի և մտքերու զարգացման հնարավոր հավասարութիւն մը պահել կարողանալու համար, այդպես ալ տղուն ուրկե գալը, մինչև եկած օրը ինչ կաթով սնած ըլլալը, լրջորեն ուշադրութեան առնվելիք բաներ են նորեկ մը մանավանդ ավելի բարձր կարգերուն մեջ ներս ընդունելե առաջ:

6. Այսպես ալ լուրջ խնդիր է աշակերտ մը դպրոցեն հեռացնելու պարագան, ըլլա կարգապահական թե ուսումնական պատճառներով:

Նախ, երբ աշակերտը քու դպրոցիդ մեջն է հասակ քաշեր, շատ բացառիկ բան մըն է, որ ավարտելեն առաջ հեռացնելու հարց ծագի: Եվ ինչ կուզե ըլլա իրողութիւնը, բնական կերպով մեղադրանքը կիյնա դպրոցական վարժութեյան և ուսուցչութեյան վրա շատ ավելի մեծ չափերով, քան աշակերտի: Ուսուցիչներու հին սխալներուն արդյունքն է միշտ անկարգ իրողութիւնը:

7. Դպրոցեն հեռացնելու սովորական պատճառը երկու տարի իրարու վրա նույն դասարանը փոխել չկրնալն է: Առաջին անգամ դասարանը մնացող աշակերտին դպրոցը թե՛ իր միջոցով և թե՛ ծնողներու հետ խորհրդակցաբար կդիմե միջոցներու՝ տղուն թերի առարկաները ուժեղցնելու, խորացնելու համար: Այդ բոլորեն վերջը, երբ աշակերտը նորեն դասարան փոխել չկարենա, դպրոցը հարկադրված է աշակերտը իր հաստատութեենեն հեռացնել: Տարիքի արդեն շատ զգալի զարծող տարբերութիւնը, տղու հոգիին մեջ անգամ մը առաջացող տկարութեյան և նվաստութեյան զգացումը տղու հեռացումը անհրաժեշտ կդարձնե:

Բացի այս, հեռացումն ալ պետք է կատարվի մեծ զգուշութեյամբ. նախ՝ երբեք պետք չէ հեռացնել տարվան ընթացքին, այլ անպատճառ տարվան վերջը, բոլոր կիսամյակները տրվելեն և մանկավարժական ժողովին որոշումը առնելեն ետքը:

Պետք է կանչել ծնողքը և անոր արդեն շատոնց ծանոթ իրողու-

թյուններդ բացատրելով և հասկցնելով, որ այլևս իր զավակը չարժե, որ դպրոց տանի, խորհուրդ տալ, որ դնե արհեստի մը կամ ուրիշ գործի, որով տղան ինքզինքը թողած կըլլա դպրոցը՝ առանց դպրոցին հետացված ըլլալու պիտակը իր վրա կրելու:

Դպրոցական օրերուն զանազան պիտակներ կես լուրջ, կես կատակ, տղոց փակցնելը շատ գեշ բան է. «բութ է», «մարդ չի դառնա», «խելոք է միտքը», «ծուլ է» և նման վճիռներ, ճիշդ ըլլա թե սխալ: Պետք չէ երբեք մոռնանք, որ դպրոցի մեջ շատ միջակ կամ ուղղակի խելոք նկատված աշակերտներ վերջը կյանքի գիտութեան կամ գեղարվեստներու մեջ մեծատաղանդ դեմքեր են եղած:

IV. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՏՅԱՆՆԵՐ ՈՒ ԱՐԽԻՎ

Ա. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ

1. Ինչպես ամեն հաստատութեան, այդպես ալ դպրոցը իր ներկա ու իր անցյալ վիճակները պարզ ու հստակ միշտ աչքի առաջ ունենալու համար, անցյալ իր աշխատանքները համեմատաբար ճշդութեամբ կատարել կարենալու համար պարտականութեան ունի քանի մը շատ կարևոր գրքերու պահպանման, որոնց մեջ գրված ու ջնջված և փոխված տողեր ունենալ չէ պետք չէ ըլլան: Այդ մատյաններու մեկ մասը աշակերտութեան կվերաբերի, անոնց վիճակը պարզելու, մյուս մասը՝ ուսուցչական մարմնի ու պաշտոնեութեան վիճակը, ինչպես և բոլոր տնտեսական հաշիվները:

2. Աշակերտական առաջին հիմնական մատյանը «Մայր» մատյանն է, ուր կգրվի անմիջապես ամեն նորեկ ընդունված աշակերտի անունը, ազգանունը, ծննդյան տարիքը ու տեղը, ո՞ր դպրոցեն մեր դպրոցը եկած ըլլալը, և որ տարիներ ետքն ալ դիմացը պետք է գրվի, թե ո՞ր տարին և ո՞ր դասարանեն մեր դպրոցեն մեկնած ըլլալը:

3. Երկրորդ տետրակն է աշակերտներու դասարանական կազմը, ուր կգրվի ամեն տարի դասարանին մեջ քանի՞ հոգի և որո՞նք եղած են, անունն ու ազգանունը, այլև քովը ավելցնելով՝ հինեն կկրկնե, նորե՞կ աշակերտ է, թե՞ տվորական փոխադրված:

4. Աշակերտական երրորդ մատյանը վարք ու բարքի տետրակն է: Ամեն տարի, ամեն դասարանի համար, իր դասարանի

ուսուցիչները տարվան մեջերը ժողովի կուգան, և ուր ամեն մեկ աշակերտի ընդունակության, աշխատանքին, լրջության իր թիվերը, իր առավելությունները և իր կազմին հատուկ գծերը կփնտրվին ու կխտացվին քանի մը կարճ ու սեղմ բառերուն մեջ: Միշտ խուսափելով չափազանցություններե, խիստ արտահայտություններն և մանավանդ վաղաժամ ու խախուտ վճիռներե:

5. Չորրորդ աշակերտներու մատյանը թիվերու մատյանն է, այսինքն երկու կիսամյակներու թիվերը, որ յուրաքանչյուր աշակերտի համար ուսուցիչը պարտական է ներկայացնելու մանկավարժական ժողովին իր ամեն մեկ ավանդած առարկային համար: Առաջին կիսամյակի ժողովը ուրեմն տարվան կեսերուն, երկրորդը՝ ամավերջին: Եվ այդ թիվերու հիմքի վրա է, որ մանկավարժական ժողովը կորոշե աշակերտի մը հաջորդ կարգը անցնիլը կամ մնալը:

6. Աշակերտական հինգերորդ մատյանը ավարտականներու տետրակն է, ուր յուրաքանչյուր տարեշրջանին վերջը իր տարեթվին տակը կնշանակվի ավարտող աշակերտներուն անունները:

Բ. ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՏՅԱՆՆԵՐ

1. Ուսուցչական գլխավոր մատյանը յուրաքանչյուր տարվան մեջ դպրոցի բոլոր ուսուցիչներու ընդհանուր ցուցակն է, ուր ամեն ուսուցչի անվան դեմ կնշանակվի. թե քանի՞ տարի աշխատած է այդ հաստատության մեջ իր պաշտոնավարության ընթացքին:

2. Ուսուցչական երկրորդ կարևոր մատյանը ուսուցչական ժողովներու արձանագրություններն են շատ սեղմ, և միայն որոշումներն են գրված: Չորս աստիճանով դպրոց մը կրնա ունենալ մինչև հինգ տարբեր-տարբեր մանկավարժական ժողովներ տղոց տարիքի և աստիճանական զարգացման համեմատ:

Մանկապարտեզի վարժուհիները իրենց հարկ դատած միջոցին կունենան իրենց ընդհանուր խորհրդակցությունները: Դպրոցական առաջին երկամյակին ուսուցիչները կրնան իրենց հատուկ մանկավարժական-պարբերական հանդիպումները ունենալ, ուր իրենց զույգ կարգերու աշակերտության վարք ու բարքի, ուսման նյութերու և ուսման եղանակներու մասին կունենան հաճախ մտավոր փոխանակություն:

Տարրական նախակրթարանի երկրորդ երկամյակն ալ կունենան իր ձեռով, իր ուսուցիչներու, նման մանկավարժական խորհրդակցութիւնները:

Բարձր նախակրթարանի կարգերուն համար կկազմվի, իր ուսուցիչներեն, նմանապես հատուկ մանկավարժական ժողովներ, որոնք սակայն տարիքի բարձրացման, սովորութիւններու ընտելացման և ուսուցիչներու շատ ղբաղված ըլլալուն հետևանքով հետզհետե նվազ հաճախ կըլլան: Այս բոլոր աստիճանի ժողովներն ալ իրենց արձանագրութիւնները կպահեն, ուր կգրվին ժողովի մեջ տեղի ունեցած որոշումները, ներկաներուն անունները և ամսաթիվը:

Արձանագրութիւններուն մեջ պետք չէ մտնեն ոչ մեկ մասնավոր կարծիք և ոչ մեկ վիճաբանական կտոր, այլ միայն ընդհանուրի առած որոշումը, հնար եղածին չափ կարճ ու ամփոփ:

Հաջորդ ժողովի կամ ժողովներու օրակարգը կորոշե ինքը ժողովը, ինքն ալ հարկ եղած պարագային կրնա փոփոխել, կաշկանդված չէ: Արձանագրութեան տետրակները կպահվին ժողովի քարտուղարութեան ձեռքը, իսկ քարտուղար կըլլան փոխնիփոխ ամենքը:

Տարվան վերջը այդ բոլոր ժողովները, ստորագրված իրենց նախագահեն և քարտուղարեն, կհանձնվին ընդհանուր քարտուղարին՝ արխիվը մտնելու համար:

3. Երրորդ ուսուցչական «տետրակը դպրոցական» բոլոր պաշտոնութեան այդ տարվան ստացած առճիկներուն ցանկն է: Ուսուցչական վարչական առճիկները զատ պահած՝ մյուս ամեն կարգի մեծ ու փոքր պաշտոնյաներուն ստացած գումարներուն հաշիվները քիչ մը ավելի վարը:

Գ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՏՅԱՆՆԵՐ

1. Առաջին դրամական առօրյա ամենեն կարևորը մուտքի և ելքի օրը օրին, տեղվույն վրա պահված «անտուկի» հաշիվն է, ամեն անգամ որ գումար մը կմտնե կամ գումար մը կելնե: Երկրորդ տետրակը եռամսյա կամ վեցամսյա «բալանսներու» տետրակն է և այդ բալանսներու վրայեն հանված տարեշրջանի վերջին

Հակակշիռները, որոնք նմանապես տարվե տարի պետք է կանոնավոր կերպով պահվին ամեն քննութիւն, համեմատութիւն և ստուգում հնարավոր դարձնելու համար: Երրորդ առանձին մատյան մը «նպաստընկալներ» անունով պետք է պահվի, ուր ամեն տարի կնշանակվի՝ քանի՞ ընկերութիւն, քանի՞ աշակերտ և ո՛ր աշակերտները կպահե. քանի՞ անհատ իր հաշվույն աշակերտ մը կպահե առանց ծնող կոչվելու, ուր առանձին կնշանակվին՝ ո՞ր աշակերտներեն և ինչո՞ւ համար վճար բնավ չառներ դպրոցը: Զորրորդ՝ դեղչերու մատյանը, ուր կնշանակվին, թե ո՞ր աշակերտին ինչ պատճառներով ինչ զեղչ է եղած սովորականեն դուրս: Հինգերորդ մատյան մըն ալ պետք է դպրոցի կողմե կամ դուրսեն եղած հատկացումով մը այն գումարներուն համար, որոնք դրված են որոշ նպատակի մը գործադրութեան համար, ուր մեկ կողմը կնշանակվի եղած գումարը, գործադրութեան պայմանները, իսկ դեմը կնշանակվին այդ գումարին գործադրութիւնը, ամբողջութիւնը կամ մաս-մաս, մինչև գումարը գոցվի:

Դ. ԱՐԽԻՎԱՅԻՆ

Բոլոր տետրակները, հաշիվները, մատյանները, որոնց միջի գործառնութիւնը լրացած ու փակցված չէ, կմնան ընդհանուր քարտուղարի ձեռքը: Երբ տետրակը այլևս ընելիք չունի, և իր եզրակացութիւնը հանված է, կերթա արխիվ, ուր նմանապես ամեն ինչ կարգով ու խնամքով պահված կըլլա՝ ամեն քննութիւն, ամեն ստուգում կարելի դարձնելու համար, երբ հարկը կպահանջե: Այդպես ալ տնօրեններու, եթե մեկեն ավելի է տնօրենը, որոշումներուն մատյանը, որոնք երբ կլեցվին, կիջնեն արխիվ: Արխիվին մեջ է, որ կպահվի դպրոցին կանոնագիրը, հատուկ այդ դպրոցի համար մշակված ծրագիրը և վերջապես արխիվի մեջ կմնան դասագրքերու մատյանը, որ ամեն մեկ դասարանի մեջ գործածութեան եղած բոլոր դասագրքերուն ցուցակը կղնե մանրամասն կերպով, ինչ հեղինակ, քանիերորդ տպագրութիւն և ո՛ր թվականին: Եթե որևէ տեղ դասագրքի փոփոխութիւն տեղի կունենա, անմիջապես պետք է մտցվի այդ մատյանի մեջ, թե այս թվականեն սկսած, այսինչ թվականի հին դասագրքին փոխարեն մտցված է այսինչ դասագիրքը իր անունով և իր տպագրութեան թվականով:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔ, ՈԳԻ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ի. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դպրոցը ուսում ծախող խանութ չէ: Դպրոցը մարդկային ընկերական կյանքի մեկ խոշոր ու կարևոր կողմն է: Ընկերային օրենքներու բարոյական պահանջներուն վրա հիմնված հաստատություն մըն է, հատկապես կրթելու, դաստիարակելու, մարդը բարձրացնելու նպատակով: Ընտանեկան կրթության վրա բարձրացող, շատ ավելի լայն, շատ ավելի մասնագիտական, շատ ավելի ամբողջական և շատ ավելի ընկերական կենակցություն մը:

Դպրոցական կենակցության մեջ ոչինչ կարելի չէ ձգել բնազդին, պատահմունքին. ամեն հարաբերություն, ամեն քայլ ինչ ձևով և ինչ չափով ալ առնվելու ըլլա, լրջորեն պետք է նախապես խորհված, իրարու կապված և ճիշդ իր տեղը դրված ըլլա: Իր նպատակը մարդ պատրաստելն է, ազնիվ մարդ, բարձր հոգիով մարդ և բարոյական ճգտումներով մարդ ու ատոր համար ալ հոգեկան զարգացման ամեն կողմերուն վրա մշտական ազատություն կպահանջե:

2. Դպրոց ըսածնիս երկու հիմնական տարրերու կենակցությունն է ու գործակցությունը: Մեկը՝ ուսուցչությունը, որ կրթել և ուսուցանել կուզե ու կվարե գործը, մյուսը՝ փոքրիկները, աշակերտությունը, որ վերի, մեծերի ձեռքին տակ եկած է հասունանալու և մարդ դառնալու: Որով բնական կերպով դպրոցական այդ կենակցության մեջ կատաջանա երեք տեսակի ընկերային չփում և փոխադարձ հարաբերություն. ա) Ուսուցիչներու կենակցությունը ու վերաբերումը իրարու հետ, ուսուցիչ-ուսուցչուհիի հետ: բ) Ուսու-

ցիչներու և աշակերտներու փոխադարձ չփումն ու վերաբերմունքը, և գ) Աշակերտներու՝ իրարու հետ ունեցած կյանքն ու ապրումը, չփումն ու վարքը:

3. Ուսուցիչներու փոխհարաբերութեան և կենակցութեան տեսակետեն առաջին հիմնական հարցը ամբողջ ուսուցչական մարմնի համերաշխութեան խնդիրն է: Դպրոցը չէ այն հաստատութիւնը, ուր ուսուցիչները իրարու հետ կապ «չունենան», որ դասի ատեն կամ դուրսը ակնարկեն կամ հասկցնեն տղոց, որ իրենց ընկերն ու մյուս ուսուցիչը «ինչքան սխալանքի մեջ է», «ետամնաց է», «խեղճ մարդ է» կամ նման այլ թերութիւններ, «հաստատլուխ», «բան չհասկցող»:

Ապուշութիւն է երևակայելը, որ իրարու հետ կռվզտուքը, իրար մեղադրող, իրար քննադատող, մեկ-երկու խումբի բաժնված և իրարու դեմ կեցած քաղարի մարտիկներե կազմված ուսուցչական մարմին մը կրնա որևէ բարոյական կրթութիւն տալ իր աշակերտներուն: Ան միայն կրնա իր չուրջը ատելութիւն սերմանել և բարոյական ստորնացում:

4. Ասոր մեկ ուրիշ չարաբաստիկ տեսակն է, երբ դպրոցին մեջ արտաքուստ կարծես ոչինչ չկա, բայց «քսը-փսը» անկյունները բրոբականտա մը կամ վերջապես ամենքն ալ գիտեն, որ այսինչ ուսուցիչը դուրսը աչքառու դեմք մըն է այնինչ կուսակցութեան, մինչդեռ այն մյուս ուսուցիչն ալ կկարծվի բոլորովին տարբեր վարդապետութեան հետևող մը, ըլլա քաղաքական, ըլլա կրոնական, ըլլա նույնիսկ գիտական: Ասոնք ընդհանրապես ավելի տակեն կգործեն, ավելի կեղծավոր են ու դիմակով, բայց դիմակով ըլլան թե անդիմակ, բոլոր աշակերտութենեն ճանչցված են և բոլոր աշակերտութեան մեջ կռիվ, նախանձ ու թույն կտարածեն:

Ասոր համար է, որ քիչ-շատ դպրոցի նմանիլ ուզող հաստատութիւնները ուզեն-չուզեն կպատկանին այսինչ կամ այնինչ կուսակցութեան՝ արտաքուստ արտահայտեն թե ոչ: Որովհետև միայն զաղափարակից մարդոց մեջ կարելի փոխադարձ հարգանք, որովհետև միայն զաղափարակից մարդիկ կրնան սրտանց իրարու հետ գործակցիլ: Կաթոլիկ ֆրերը իր նման գործակիցներ միայն կառնեն իր հաստատութեան մեջ, միևնույն է՝ պարեգոտ հագած ըլլա թե ոչ: Այսպես ալ «լայիք» դպրոց մը իր համոզումներուն

տեր եղող ուսուցիչներ կինտորն, և վերջապես բոլոր տեսակի կուսակցութիւնները մինչեւյն բանը կընեն: Եվ առողջ վիճակն ալ ասիկա է: Ասիկա չի նշանակեր, թէ դպրոցը այսինչ կամ այնինչ կուսակցության համար բրոբականտա կընեն. ասիկա կնշանակե միայն, որ առողջ դպրոց մը դոյացնելու համար սրտով ու մտքով իրար համակրող և հասկցող մարդիկ պետք է որ դան իրար: Ուրիշ կերպով ներդաշնակութիւն չի դոյանար:

5. Երբ ուսուցչական մարմնին մեջ համերաշխութիւնը խանդարող այս ավելի արտաքին և կոպիտ տարրը չկա, կմնա հարաբերութիւններու ջերմութեան աստիճանը:

Դպրոցի մեջ տանելի և ուսուցչական հարաբերութեան նվաղադույն աստիճանը քաղաքավարութեան աստիճանն է: Այսինքն բոլոր ուսուցիչներեն ամեն մեկը իր պարտականութիւնը կկատարե զլուխը կախ՝ իր պաշտոնակից ընկերներու հետ առօրյա քաղաքավարութեան վրա հիմնված հարաբերութիւն պահելով:

6. Իսկ երբ տարիներու ընթացքին, դպրոցական նևրքին կյանքի մեջ այս փոխադարձ հարգանքի և հնդհինակութեան վրա հիմնված ու պատշաճութեան և քաղաքավարութեան պահանջները հարգելով, մտավորական մարդոց մեջ կչարունակվի այս հարաբերութիւնը, առանց կուգա տանելի մթնոլորտ մը, որ չունի սակայն ջերմութիւն, ո՛չ ալ խոսակցութիւններու և աշխատանքի եռանդ ու թափ, ո՛չ ալ այն բնածին ուրախութիւնը, որ սրտակցութենեն կծնի:

7. Բոլորովին կփոխվի դպրոցական ոգին, երբ ուսուցչական մարմնին մեջ ավելի կենդանի ընկերական կյանք մը կտիրե իրարու հետ, ավելի մտերիմութիւն, մտերմութիւն, երբ ամենքը կզգան, որ իրենց զաղափարակից մարդիկ են լծված բացառիկ ազնիվ ու բարձր գործի մը, որ կրթութիւն կկոչվի: Բնական կերպով ավելի սրտանց կապված կըլլան ամեն մեկը իրենց գործին և իրենց դպրոցին շատ ավելի մեծ նվիրումով և առանց նկատելու, շարունակ իրար վրա ազդելով և իրար ոգևորելով: Այս տեսակ ուսուցչական մարմին մը անշուշտ շատ ավելի կրթական արժեք կստանա, ու կառաջանա դեպի վեր խոյացող կենդանի չունչ մը, որ կվարակե ամբողջ դպրոցն ու աշակերտութիւնը: Եվ կստացվի բացառիկ բարձր որակով ու բացառիկ աշխատունակ հաստատութիւն մը:

8. Այս ուսուցչական մտերիմ կապը կառաջանա ամենեն առաջ ուսուցիչներու բնական խոսվածքեն և հոգեբանական կազմեն, երբեմն դուրսը տիրող ժամանակի ազդեցութիւններեն, երբեմն որոշ դպրոցի մը մեջ տարիներով ինքնին մշակված ոգիեն, որուն կամա թե ակամա կենթարկվի ամեն նորեկ ուսուցիչ:

II. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՀԵՏ

Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

1. Ուսուցիչներու վարմունքին մեջ միակ ձև մը կա, որ աշակերտները սիրով կըմբռնեն, վարմունք մը, որ հենված ըլլա ո՛չ բռնութեան, ո՛չ ծեծի ու բանտի, ո՛չ զորանոցի, ո՛չ մեծութեան ու անհասելիութեան հովերու և ո՛չ ալ գիտութեան և իմաստութեան վերջին բառը կլլած ըլլալու մեծամտութեան վրա: Ասոնք բոլորն ալ շատ ստորին ապրանք են կրթական գործին մեջ և բացարձակապես խոտելի:

2. Ուսուցչի վերաբերումը դեպի աշակերտները երկու հիմնական գաղափարի վրա կկայանա. աշակերտը մարդ մըն է և ընկեր մը:

Ամեն ծնող ու դաստիարակ իր փոքրիկին ու իր զավկին հանդեպ երբեք մոռնալու չէ, որ իր դեմը կեցողը տարիքով դեռ փոքրիկ, փորձառութեամբ դեռ տկար, բայց իր սեփական հոգիով, իր սեփական դատումով արդեն շատ ու որոշ աստիճանի կազմակերպված մարդկային անհատ մըն է, որ իր հակումները ունի, իր բնավորութեան գծերը ունի, իր ձևի մտածելու եղանակը ունի, իր սերերն ու ատելութիւնները ունի: Եվ արդեն երեք-չորս տարեկանեն իսկ սկսած՝ մանկապարտեզի տարիքեն, երբեմն չափազանց չեշտված անհատականութեամբ, երբեմն նույնիսկ ըմբոստ արտաքին ազդեցութիւններու դեմ, երբեմն ալ ընդհանրապես շատ ավելի մեղմ և պատրաստ ամեն հաճելի մերձեցումի, երբեմն հեգնոտ, երբեմն անվստահ, երբեմն ալ հլու կեղծավոր:

Այս տեսակ բազմատեսակ հոգեկան աշխարհներու տեր էակներուն, երբ առանց դեմի արարածի հոգին ճանչնալու և երկար ու խոր մտածութեան նյութ դարձնելու և միայն հրամաններով,

սպառնալիքներով ու անասնապահի մը մարակով մոտենալու ըլլանք, իրավ որ թե՛ ինքներս և թե՛ փոքրիկները կիջեցնենք անասունի աստիճանին: Անասունի հետն անգամ ներելի չէ, կենդանիի հոգևկան պահանջները աչքի առաջ չունենալով հետը վարվիլը, եթե մեր ցանկությունն է անասունը մարդուն մոտեցնել և որոշյալ աստիճանի քաղաքակրթել:

3. Առանց դեմի փոքրիկ մարդու հոգևկան կյանքին ու էության թափանցած ըլլալու, այլ մեր խելքի կամ բուռն բնավորության թելադրած ձևով փոքրիկները կրթել ուզելը ո՛չ մարդկայնորեն կզարգացնե և ո՛չ ալ կբարձրացնե. կրնա անոր անբնական ծուռություններ տալ և շատ մը հոգևկան նուրբ թելեր ընդմիշտ փճացնել: Փոխանակ զավկի մը բնական զարգացմանը նպաստելու կվանդարևնք, կժվարացնենք իր բացումն ու աճումը, երբեմն նույնիսկ չարաչար կայլանդակենք. ասիկա է ամենեն մեծ վնասը, որ կհասցնենք փոքրիկին:

4. Շատ կարևոր է նաև մեր գործի համար, տանտապատիկ ու հարյուրապատիկ կդյուրացնենք մեր դաստիարակչի աշխատանքը, երբ աշակերտներու վրա կնայինք իբրև արդեն գույն ու ձև առած մարդկային անհատներու և կմոտենանք անոնց, ինչպես կմոտենանք մեծերուն, և ամեն խոսքին ու շարժումին մեջ չենք մոռնար այդ իրողությունը: Երբ մանուկներու կմոտենանք, ինչպես վայել է մոտենալ ամեն մարդու, իր մարդկային արժանիքները հարգելով, սրտագին բարեկամեցությամբ, սերե ու սիրվելու որոշ ձգտումով, անոնք ալ ճիշդ մեզի պես կմոտենան մեզի, նույն տրամադրությամբ և սրտբացությամբ, որով դյուրին կըլլա ազդելը, որոշ ուղղությամբ հղկել ու սրբագրելը: Որովհետև բռնությունն ու կամայականությունը, հավերժական խոժոռությունը փոխանակ կըլլանք սիրով, համակրանքով, մտերմությամբ, փոխադարձ հասկացողությամբ, մտքի, տաղանդի ու փորձառական առավելությամբ:

Բ. ՈՒՍՈՒՑԻՉ-ՎԱՐԻՉ

1. Ինքնին արդեն կըլլա և լավ է, որ գիտակցաբար ալ այդ ուղղությամբ աշխատվի, որ ուսուցիչները ընդհանրապես քիչ խառնվին վարչական գործերուն. հնար եղածին չափ վարչական

Հարց մը ծագելուն պես դիմեն կա՛մ վարչութեան, կա՛մ դաստիարակ-ուսուցչին, որովհետև անոնք տղու բնաւորութեան և պայմաններուն ավելի ծանոթ, ավելի հանգիստ և ավելի արդար հարցը կկարգադրեն: Մյուս կողմեն ալ մեկ-երկու ուսուցիչ եթե մեջ կխառնվին, միշտ տեղի կունենան խաչաձևումներ, ավելորդ նկատողություններ, ավելի իրարանցում:

2. Բայց ասիկա չի նշանակեր, որ ուսուցիչները իրենց այդ մեծ պարտավորութիւններեն բոլորովին պիտի խուսափին, և խուսափիլ ալ կարելի չէ: Նախ՝ ուսուցիչ մը դասարան մտած թե չէ, անխուսափելի կերպով դասարանի տերն ու վարիչը ինքը ուսուցիչն է, ուզե թե չուզե: Եվ բոլոր այն ուսուցիչները, որոնք դասարանը պահելու անկարող, կվազեն դասարանեն դուրս, ընդհանուր հսկիչի օգնութեան կամ տեսչութեան՝ ըսելով, թե իրենք եկած են բան սորվեցնելու և ոչ թե ոստիկանութիւն ընելու, այդ պարոնները չարաչար կսխալին: Ամեն ուսուցչի պարտականութիւնն է ինչպես իր դասերը ավանդելը, այնպես ալ դասարանի կարգն ու կանոնը պահելը. այն ուսուցիչը, որ դասարան մը ղեկավարել չի կրնար և արտաքին ուժերու օգնութեանը կկարոտի աշակերտը գուսպ պահելու համար, այդ տեսակ ուսուցիչը պարզապես ուսուցիչ չէ:

3. Եվ ո՛չ միայն դասարանին մեջ, ուսուցիչները հաճախ վարը, բակը, խաղատեղը, պարտեզը պետք է մշտական չփման մեջ ըլլան աշակերտներու հետ և առանց վարչական գործերու խառնվիլ ուզելու, շատ անգամ դեպքեր կպատահին, որ կամ ուսուցիչը ինքը ուզե-չուզե մեջ կնետվի, իր խորհուրդով, վարմունքով, և շատ անգամ ալ իրենք երեխաները կվազեն ուսուցչի վրա: Նույնիսկ դպրոցի շրջապատեն դուրս, ուր ընդհանրապես ուսուցիչները միայն սիրալիր բարևով, հեռվեն դիտելով կբավականանան և որևէ միջամտութիւն ընել չեն սիրեր, նույնիսկ դուրսը դեպքեր կպատահին, որ պարտաճանաչ ուսուցիչ մը չի կրնար աուսիկ-փուսիկ քովեն անցնիլ. կամաց մը աննկատելի կերպով ստիպված է կանչել տղաներեն մեկն ու մյուսը և առանց օտարներեն նկատվելու ըսել. «տղա՛ք, զգո՛ւշ եղեք, ամո՛թ է», բայց միայն մեկ-երկու բառով և առանց բարկութեան և արտաքին ցույցերու տղաքը կարգի կհրավիրե:

Այնպես որ ամեն ուսուցիչ ալ խորքին մեջ ինքզինքը կապված

պիտի ղժա իր Հաստատութեան, և բոլորովին անտարբեր մնալ կարելի բան չէ: Բայց և այնպես ամենքն ալ և իրավացի կերպով բնականեն խուլս կուտան աշակերտներու դլխուն դատավոր, Հանդիմանող, սպառնացող և կամ նման դիրքեր բռնելու և դեպք մը պատահած միջոցին Հարցը առանց որևէ աղմուկի և իրարանցումի կղնեն դասարանական ուսուցչին և, ինչպես ըսի, թե՛ իր Համայքը աշակերտներու աչքին չկորսնցնելու և թե՛ օտար մարդուն առջևը ներքին խնդիրներ չքրքրելու Համար անհրաժեշտ է, որ ուսուցչի միջամտութեան պարագային ուսուցիչը այդ աշակերտի Հետ խոսի զգուշ, մեղմ և մեկուսի:

Գ. ԴԱՍՏԻԱՐԱԿ-ՈՒՍՈՒՑԻՉ

1. Մինչև Հիմա խոսքը կվերաբերեր բոլոր ուսուցիչներու Համար անխտիր, բայց կա ուսուցիչներու մեջ ընտրված խումբ մը, որոնց ազդեցութիւնը աշակերտներու վրա բոլորովին բացառիկ է:

Ամեն դասարան պետք է ունենա իր դաստիարակ-ուսուցիչը՝ տարվան սկզբին փոխադարձ Համաձայնութեամբ տեսչութեան կողմե նշանակված: Ընդհանրապես նշանակումը կըլլա մեկ տարվան Համար, բայց որևէ անտեղութիւն չկա, բացի օգուտն, եթե տարրական նախակրթարանի դասարաններու մեջ երկու տարի խաղա այդ դերը միևնույն կարգին: Բացառիկ պայմաններու մեջ կրնա նույնիսկ երեք-չորս տարի նույն ուսուցչի վրա մնալ այդ դերը, բայց Հանձնարարելի բան չէ, կըլլա միակողմանի ազդեցութիւն: Լավ է, որ դպրոցական այդ քանի մը տարիներու ընթացքին ամեն աշակերտ և ամեն դասարան անցնի գոնե երեք դաստիարակ ուսուցչի ձեռքի տակեն:

Դաստիարակ-ուսուցիչ ըսածնիս այդ դասարանի մեջ դասեր ունեցող ուսուցիչներեն մեկն է, ընկերոջ նման բան մը, այդ դասարանի աշակերտներուն մեջը Հաճախ եղող, ընտանիքի անդամի պես բան մը: Իր պարտավորութիւններն են. նախ՝ աշակերտներու Հետ միասին, մոտ ու մտերիմ Հարաբերութիւն պահել, խոսիլ, կարելի եղածին չափ Հաճախ պտույտներու երթալ անոնց Հետ և՛ զվարճութեան, և՛ ուսման ծրագիրներով. խոսիլ անոնց Հետ և՛ դուրսի կյանքի Հարցերուն մասին, որ Հասարակութեան կյանքը

այդ վայրկյանին կալեկոծեն, և՛ դպրոցական ներքին կյանքի մասին, միշտ ճգտելով տղոց պարզ ու հասկնալի դարձնել, թե ինչո՞ւ համար է կարգն ու կանոնը, ամեն կարգ ու կանոն ինչ առավելություն կըներե իր հետ միասին, այդպես ալ դպրոցի և շուրջը տիրապետող ընկերական ու բարոյական պահանջներու մասին, միշտ իբրև խմբական խոսակցություն: Այս մշտական չփումով և այս հարցերու քննությամբն ու վերլուծումովը բնական կերպով այնքան խոր կապ կառաջանա այդ ուսուցչի և աշակերտներու մեջ, որ ինքը կրնա մոտենալ աշակերտի մը կամ կղչուրացնե, որ աշակերտը ինքը մոտենա իրեն և խոսի անձնական ու ընտանեկան այն տեսակ խնդիրներու մասին, որ սովորաբար աշակերտները ուսուցիչներուն չեն երթար: Անփոխարինելի է այս անձնական մտերմության չեշտը և անասելի չափերով կավելցնե ուսուցչի մը բարոյական արժեքն ու ազդեցությունը երեխաներու վրա:

2. Իր երկրորդ պարտականությունն է՝ տարվա մեջ գոնե մեկ-երկու անգամ այցելել աշակերտներուն տուները և անպատճառ տղու հետ միասին, որպեսզի տղու դեմ դավի ճևեր չառնե, նախ՝ պարզապես ծանոթանալու համար ընտանիքի անդամներուն և պայմաններուն, երկրորդ՝ ամեն կերպ ջանալով, որ ծնողները հետաքրքրե ու կապե իր հաստատության և հետզհետե ծանոթանա ինչպես ինքը անոնց ընտանեկան հոգիին, այնպես ալ անոնք ծանոթանան դպրոցի մեջ տիրող կրթական ոգիին: Որով կենդանի կապ կղառնան տան ու դպրոցի մեջ և նույնիսկ առանց զգալ տալու կաղդեն ընտանեկան կյանքի բարձրացման ու ազնվացման:

3. Երրորդ՝ դաստիարակ-ուսուցչի շատ կարևոր դերերեն մեկն է տղու ընթերցանության ղեկավարությունը: Դաստիարակ-ուսուցիչը պետք է ունենա իր տրամադրության տակ շաբաթական գոնե երկու ժամ հավաքելու իր շուրջը իր դասարանը և աչքի առաջ ունենալով այդ դասարանի՝ այդ տարվան համար նշանակված գրքերը՝ կսկսի խոսիլ գրականության մասին, մեր արդի գրվածքներու ուղղության մասին բոլորովին ընկերաբար և ջանալով հնար եղածին չափ կենդանի հետաքրքրություն առաջացնել այս ու այն հարցի, այս ու այն գրքի, այս ու այն հայ կամ օտար ստեղծագործության համար և տեսակ մը դրդել, որ այդ գրքերը կարդան անպայման, որ արդեն իրենց ընթերցանության գրքերու

ցուցակն է, որ կախված է դասարանեն և որուն Հատորները կգտնվին դասարանի մեջ կղպված պահարանին մեջ, և պահարանի բանալին ալ՝ իր ձեռքը:

Մեկ-երկու գիրք կարդացվելենետքը կխոսվի բնական կերպով կարդացված գրքի մասին, աղվորն ու գեղեցիկը, գրավիչը, բարձրն ու գրականը առաջ կքաշվի: Օտար գրականութենեն առնված կտորներու ինչու համար առնված ըլլալը կբացատրվի տղոց, ու ինքնին վճճռը կծագին տղոց և ուսուցչի մեջ՝ ո՞րն է մեր գրականության լավագույն երկը իրենց դասարանի համար նշանակված:

Մինչև այս կերպով չվերաբերվինք մեր գրականության, մեր գրքերը խոսիլ չեն սկսեր, և մեր տղաքն ալ մեր գրականութենեն չեն ներշնչվիր:

4. Դպրոցական առաջին երկամյակին, երբ երեխաները դեռ իրենք իրենց ուժով չեն կրնար կարդալ չնորհքով, այդ դերը կկատարե դաստիարակ-ուսուցիչը: Բայց շատ հաճախ, պատկերազարդ գրքեր իրենց լավ կազմած Հատորիկներով կամ պատկերազարդ երեսներով, աղատ ժամերուն դաստիարակ-ուսուցիչը դիտմամբ կդնե անոնց ձեռքը, որ թղթատեն. թե՛ տեսակ մը ընթերցումի նման բան մըն է անիկա, պատկերներուն նայելով թղթատելը, թե՛ երեխան ուրախ է, որ ինքը կկարդա և թե՛ գրքի հետ վարվելու կվարժվի դեռ գրքերը չկարդացած:

III. ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԻՐԱՐՈՒ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ԶՈՒՏ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՇՓՈՒՄՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՊԱՐՏԱԴԻՐ ՇՓՈՒՄ

1. Աշակերտներու՝ դպրոցի մեջ ունեցած ներքին չփումն ու փոխադարձ ազդեցությունը, որ չատերը դպրոցին կատարելիք գլխավոր դերը, այդ ընկերական չրջանակը ստեղծելն ու ղեկավարելը կհամարեն՝ դասերուն և ուսումներուն երկրորդ տեղը տալով: Առանց այդ կարգի չափազանցություններու ալ դպրոցական ամեն գործիչի համար շատ պարզ Հայտնի է, որ աշակերտական կենսակցությունը և առօրյա ընկերական ապրումներն ու գործակցությունը չատ մեծ դեր կխաղա Հասունացման տարիքի բոլոր տարիներուն մեջ:

Եվ աշակերտական այդ հարաբերությունները բնավ երբեք միակերպ և միաձև կերպով կրկնվող ճանճրալի հանդիպումներ չեն իրարու հանդեպ կամ պարապ խոսվռտուք մը, այլ շատ ավելի բազմատեսակ հոգեկան չփումներ են հաճախ, խոր թռիչքով ու բարձր խոյանքով:

2. Քիչ մը ավելի խորը նայիլ կարողանալու համար այդ հոգեկան չփումներու թողած ազդեցության վրա՝ ես աշակերտական բոլոր տեսակի հարաբերությունները կբաժնեմ երկու խումբի. ա) պարտադիր կենակցություն ու գործակցություն և բ) ազատ ընկերական կապեր ու աշխատանքներ:

3. Պարտադիր գործակցության ամենեն սովորական առաջին տեսակն է աշակերտական, դասարանական պարտադիր աշխատանքը, որուն ամբողջ դասարանը կմասնակցի՝ միասին մտածելով, միասին դիտելով երևույթ մը և միասին փնտրելով տրված հարցերուն պատասխանը և միշտ ուսուցչի ղեկավարության տակ: Կարևորություն չունի, թե որոշ սենյակի մը մեջ կկատարվի այդ աշխատանքը թե պարտեզը, խաղատեղը. բավական է, որ ամբողջ դասարանը մասնակցի այդ միևնույն խնդրի լուծումով և միշտ ուսուցչի ղեկավարության տակ:

Դասարանական այս աշխատանքներու ատեն, ուսուցչի տված հարցերուն տակ ամեն աշակերտ իր գլխուն մեջ կպատրաստե իր տալիք պատասխանը, բայց իսկույն կլսե նաև իր մյուս ընկերներուն տված պատասխանները, շատ անգամ բոլորովին տարբեր մտածելու եղանակով, հաճախ շատ անգամ ուրիշ եզրակացություններու հանգելով, երբեմն ավելի սուր, քան թե իր պատասխանը, երբեմն ավելի տարբեր:

Արդ՝ դասեդաս և օրեօր դասարանական աշխատանքներու այդ մարզանքներն ու փորձերը կկատարվին, և աշակերտները ահագին հոգեբանական փորձառության տեր կդառնան՝ առանց որևէ արտաքին միջամտության: Ամեն աշակերտ կսկսի հասկնալ նախ մութ կերպով, քիչ-քիչ ավելի հստակ իր բոլոր ընկերներու մտածելու եղանակը, անոր դատողական թերին ու առավելությունները: Կըմբռնե, որ նույն բանի մասին շատ ճամբաներով կարելի է մտածել ու դատել և կվարժվի Հարգելու ամեն կարծիք, ամեն ընկերոջ կարծիք և ո՛չ թե տղայական մեծամտությամբ

անվերջ ի՛ր մտածածը կկրկնեն խելագար համառությամբ: Մտքի շիտակ ու առողջ զարգացման համար մեծ արժեք է դասարանական այդ մեծ խումբով կատարվող դիտողություններն ու ուսումնասիրությունները:

4. Դալրոցական պարտադիր ընկերական չվման երկրորդ ձև մը դասարանական ու խմբային ձևերու ճուլումն է: Դասարանական ընդհանուր աշխատանքին մեկ հարցը ուսուցիչը փոխանակ անմիջապես սեղանի վրա դնելու՝ նախ կհանձնե երեք կամ չորս աշակերտե կազմված խումբի մը՝ պատվիրելով, որ չորսեն ամեն մեկը ինքը երթա դիտե երևույթը, երթա ուրիշներեն նոր տեղեկություններ հավաքե, եթե կրցավ, և կազմե իր քանի մը տողանի դրավոր պատասխանը: Խումբի երեք-չորս ընկերները իրենց ընտրած օրը կուգան իրարու, ամեն մեկը կկարդա իր եղրակացությունը մյուսներուն, բնականաբար կհամեմատեն, կվիճեն և վերջը-վերջը կջնջեն այդ երեք-չորս պատասխանները իրար լրացնելով ճուլել մեկի կամ շատ-շատ երկուքի: Ուսուցիչը այդ միակ պատասխանը երբ ձեռքը կունենա, հարցը կներկայացնե դասարանին և կենթարկե դասարանական քննության և վերջնական վավերացման:

Թե՛ անհատական մասը աշխատանքի, թե՛ խմբական մասը և թե՛ դասարանականը հնարավորություններ կուտա ընկերական չվման, մտավոր չվման և զգացական չվման ապրումներուն:

5. Ասոր մեկ ուրիշ ձևը և շատ ավելի պարզ տեսակն է դալրոցական միջին կարգերեն սկսած արդեն գործադրելի, երբ դասարանական ընդհանուր աշխատանքին մեկ կողմը կամ մեկ կտորը ուսուցիչը կհանձնե նախ աշակերտի մը ուսումնասիրության, որ իր դիտողություններու և զատողություններու հետ կներկայացնե դասարանին քննության ու վավերացման:

6. Պարտադիր կերպով կատարվող, բայց հաստատ աղբյուր են աշակերտական չփումներու նաև դալրոցական ու աշակերտական հանդիսները: Գրեթե ամեն դալրոց դալրոցական տարվա ընթացքին կունենա մեկ կամ երկու աշակերտական հանդիսություն, երաժշտական, երգեցողություն, նվագ, արտասանություն, ներկայացում թատերական ու պարեր: Ամեն ինչ աշակերտներու համար և աշակերտներուն միջոցով: Դալրոցական վարչությունը հարմար

դասարաններէն կկանչէ երկու-երեք տղա ու աղջիկ և անոնց հետ խորհրդակցելով կկազմէ մնայուն աշակերտական Հանճնախումբ մը, որ կորոշէ անկէ ետքը Հանդեսի տեսակը, ընթացքը, օրակարգը, դերերու ու դիրքերու բաժանումը և Հանդեսի օրն ալ կղեկավարէ, այսինքն հյուրընկալի դերը կկատարէ և կջանայ ամեն տեղ ուրախութիւն փռել:

Բ. ԱԶԱՏ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՇՓՈՒՄ

1. Ազատ ընկերական չփումն ու ազդեցութիւնը դպրոցի մէջ կըլլա խմբական և անհատական: Խմբական կապակցութիւններու առաջին տեսակը կկազմեն ավելի պատահական խմբումները, որոնք անշուշտ որ Հնարավոր են ու բազմակողմանի տղոց իրարու վրա ազդելու տեսակետեն, բայց բնական կերպով չունին դիտակից և նպաստավոր խմբումներու արժեքը:

Դասարանին մէջ վերջին գրասեղաններուն վրա նստած աշակերտութեան մէջ չատ Հաճախ մասնավոր խմբակցութիւն մը կկազմվի, որ պարտեզն ալ, փողոցն ալ երբեմն զգալի կդառնա:

Նույն թաղը բնակող չորս-Հինգ աշակերտ, առտու իրիկուն իրենց երկար ճամբան միասին երթալ գալով, որոշ չափով մը մոտիկ խմբակցութիւն մը կդառնան, որ իր կրկնվող խոսակցութիւններովը, տեսակետներովը իրարու վրա ազդել և ըմբռնումներ առաջացնելու կտանին:

Տարվան առաջին շրջանին այսինչ խաղը մոտա կիյնա դպրոցին մէջ, եթե քանի մը անգամ նույն տղաքը իրարու Հետ խաղալու և մանավանդ Հաճույքով ու Համով խաղալու վարժվին, ալ անկե ետքը այդ խումբը բնական կերպով իրար պիտի կանչեն, իրար պիտի փնտրեն և խաղալ ուզենան:

Անգամ մը խումբ մը ընկերներ պատահմամբ իրարու կուգան և կերթան դիցուք ծովուն եզերքը լուսնի գիշերով պտույտ մը ընելու, երգ, կատակ, սրախոսութիւն, նույնիսկ մենապար, ծածկված չնորհները երևան կուգան: Համը կմնա բերաններին, և կսկսին մտածել պտույտներ կազմակերպելու մասին: Իսկ պտույտը ըսել է՝ խոսիլ, կատակել, երգել, կարծիքներու փոխանակութիւն ունենալ և զգացումներու չփում ընել, այսինքն իրարու Հոգին թափանցել և իրարու Հոգիին ենթարկվիլ:

2. Խմբական ազատ շփման երկրորդ ձևը ավելի մտածված, ավելի ընտրված, ավելի փոխադարձ համակրանքի ու նույն զգայությեան վրա հիմնված մեկ-երկու հոգինոց խումբեր կազմել է՝ միշտ ալ որոշ նպատակ մը հետապնդելու համար: Այս գիտակից խմբումները կկազմվին ըլլա զանազան քանի մը խաղերու համար, ըլլա ուրիշ տեսակի խաղերու համար, ըլլա պարբերական կանոնավոր պտույտներու համար, ըլլա լողալ սորվելու կամ նավակ վարելու նպատակով, ըլլա գիտական կամ գրական դիրք մը և կամ գրական որոշ մասեր, որոշ ճյուղ, որոշ հատված միասին ուսումնասիրելու ցանկությամբ կամ, օրինակ, նոր լեզու մը սորվելու կամ նոր արհեստ մը, բան մը յուրացնելու համար:

Այս ամեն տեսակի գիտակից խմբումները մեծ կրթական արժեք ունին և իրենց առաջին մեծ արժեքին արժեքն այն է, որ տղոց ինքնուրույնեն և բնական շնորհներու ներքին պահանջեն կրգխին: Եվ խումբն ու խումբերը կդառնան բոլորովին ազատ ու անկախ ընկերական կապակցություններ:

Ամեն կրթական հաստատություն պետք է ամեն կերպով նպաստե այս կարգի ազատ խմբումներու կազմակերպության՝ օգնելու համար, որ անոնք դյուրությամբ բոլոր հարկ եղած տեղը, ժամանակը, միջոցներն ու հարմարությունները ունենան:

Անհատական հակումներուն ուժ տալը և տղոց ինքնուրույն ու ինքնավար ձեռնարկներուն նպաստելը ամեն կրթական հաստատության գլխավոր պարտավորություններեն մեկն է:

3. Ազատ աշակերտական խմբումի երրորդ տեսակը կկազմե լսարանական համայնքը: Լսարան հաճող տղաքը կամաց-կամաց կսկսին իրենց վրա նայիլ արդեն իբրև հասուն մարդու վրա և շատ գոհ կմնան, երբ մենք ալ հետզհետե կսկսինք լուրջի առնել իրենց այդ շատ դյուրագրգիռ զգացումը: Մյուս կողմեն ալ առաջին օրեն միշտ ձգտում է եղած աշակերտները դրդել ու վարժեցնել ինքնաբուխ ձեռնարկություններու:

Այս երկու պահանջները լսարանական տարիքին կհանդիպին իրարու, և դպրոցը առոր համեմատ ալ ինքնավարության ավելի լայն հնարավորություններ կձգտի տալ լսարանական աշակերտներուն:

Լսարանական համայնք կանվանեմ ես այն կազմակեր-

պութիւնը, որ պիտի ղեկավարե երկք լսարաններու ինքնավար ձեռնարկները: Լսարանական համայնքը տարվան սկիզբը ինքը կընտրե տարվան մը համար իր դիվանը, նախագահը՝ իր երկու քարտուղարներով, և նախագահը փոխարինող ընկեր մը նախագահի բացակայութեան: Համայնքը իբրև պարզ ընկեր-անդամ իր մեջը կառնե իր իսկ ընտրութեամբ իր դպրոցի ուսուցիչներեն մեկը:

Համայնքը կկազմակերպե դպրոցական ժամերեն և աշխատութիւններեն դուրս և անհատական խմբակցութիւններեն բոլորովին անկախ ամեն տեսակի խաղեր, պտոյտներ, ուսանողական դասախոսութիւններ, երաժշտական և գեղարվեստական երեկոյթներ, ընկերական ընթերցումներ և պարզ հանդիպումներ դրոյցի համար: Այս բոլորը միայն և միայն իր անդամներուն համար. գոց ակումբ է, դուրսեն ոչ ոք. թե՛ որոշող, թե՛ գործադրող, թե՛ վայելող միմիայն է՛ լսարանական համայնքը: Իրենց պարբերական համայնական ժողովներու մեջ կորոշեն այն ամեն տեսակի ձեռնարկները, որ կուզեն իրականացնել, իսկ ձեռնարկի որոշումեն ետքը անոր գործադրութիւնը կհանձնվի համայնքի դիվանին, որուն կօգնեն անշուշտ ընկերները, երբ որ կկանչվին:

Նախագահ ընկերոջ պարտականութիւնն է՝ որոշման մը գործադրութենեն գոնե շաբաթ մը առաջ հայտնել իրենց որոշումը դպրոցի տեսչութեան և ստանալ անոր վավերացումը, նախ՝ որպեսզի չնախատեսված անպատեհութիւններու առաջքը առնվի, երկրորդ՝ խաչաձևում տեղի չունենա, և երրորդ՝ որ դպրոցի վարչութիւնը իր կողմեն ամեն կերպ նպաստելու հնարավորութիւն ունենա:

Իսկ դիվանի քարտուղար անդամները պարտավորութիւն ունին տարին երկու անգամ տեղեկագիր ներկայացնել տեսչութեան՝ տեսչական տարեկան տեղեկագրին միացվելու համար, թե այդ երկու կիսամյակներու ընթացքին համայնքը իր ժողովներուն մեջ ինչ որոշումներ անցուց և այդ որոշումներեն որո՞նք և ի՞նչ ձևով իրականացան. շատ ամփոփ, բայց իրողութիւնները չանտեսող գրութիւն մը:

4. Ազատ չփումներու վերջին ձևը անհատական կապերն են, ազատ կերտումով, երբ երկու աշակերտ չուտ-չուտ միասին կըլլան, կխոսին իրարու ամեն բան և ինչ որ կընեն, կընեն իրարու

հետ խորհրդակցելով: Իրար կապվելու և իրար վրա մեծ ազդեցութիւն ունենալու այս բոլորովին ազատ ձևը կանվանեմ մտերմութիւն: Մտերմութիւն, որ նմանապես նախ իր շատ ավելի մակերեսային և պատահական ձևերը ունի, բայց և իր ավելի խոր կապերը: Երբ երկու աղջիկ նույն նստարանի վրա են, և երկուքն ալ շաղակրատել կսիրեն, միևնույն ժամանակ ձեռագործով մըն ալ զբաղվիլ, քիչ-քիչ այդ քչփչալը կդառնա սովորութիւն, իրարմե զատվիլ չեն ուզեր, սանդուղներեն վար, վեր միշտ իրար գրկած, և միշտ նույն քչփչոցը: Հետզհետե ամենուն վրա այն տպավորութիւնը կընեն, որ իրար շատ սիրող և իրար շատ կապված մտերիմներ են: Բայց այդպես չէ. ամառային արձակուրդ մը հեռու կլինան իրարմե, և դպրոցական վերաբացը, կտեսնես, բնավ ետ չի բերեր նախորդ ջերմութիւնն ու կապը:

Երկու տղա միշտ միասին կերթան-կուգան դպրոց, տուներնին իրար մոտ են. տունը և հաճախ իրարու հետ երթալ-գալը և մեջեմեջ ալ իրարու հետ պտույտներ ընելը՝ աշխարհքը դիտելու, աշխարհքը հասկնալու, իրենց ընտանիքներու և իրենց դպրոցի մեջ հանդիպած բոլոր անիծված հարցերը միասին քննելով: Մեկ խոսքով՝ հաճախ կերևան միասին, կըլլան իրարու տուն և նորեն այն տպավորութիւնը կընեն, որ անբաժան մտերիմներ են կապված իրարու, մինչև որ օր մըն ալ կնկատես, որ այլևս իրարու հետ չեն երևիր, բաժնված են, այսինքն արտաքին նպաստավոր պայմաններու հետ իրարու կուգան և պայմաններու հետ ալ վերջ կգտնեն իրենց կապը:

5. Տարբեր է խոր, տևական և իսկական մտերմութիւնը. արտաքուստ ցուցարար ոչինչ կա, շատ-շատերը բնավ չեն ալ նկատեր, որ այդ երկու աշակերտներու մեջ մասնավոր մտերմութիւն մը գոյութիւն ունի: Փորձված դաստիարակը միայն կնշմարե տարօրինակ նայվածքի մը, անսովոր կերպով կանչված անունն մը:

Ինչպես բոլոր աշակերտները, անոնք ալ կհանդիպին իրարու, կխոսակցին, երբեմն միասին կմնան, բայց շատ հաճախ ուրիշներու հետ ալ: Սակայն միևնույն է՝ իրար քով ըլլան թե իրարմե հեռու, անոնք միշտ իրարու հետ են, իրենց բնավորութեան, իրենց կազմի, իրենց հոգեկան աշխարհները կապված են իրար: Երբեք պարապ ու սովորական բաներու մասին չեն խոսիր իրարու հետ. իրար

գալու պես ձեռքի սեղմում, և անմիջապես լուրջ խնդիր մը դրված է մեջտեղ. խնդալով ըլլա թե կռվելու ձևով, ամեն բան իրավ և կարծես ամեն բան իրար ըսելու խորին պահանջը ունին. և այս իսկական գուտ մտերմությունները կչարունակվին դպրոցին մեջ տարիներով և դպրոցեն ալ անդին: Եվ իրապես, ով որ այս տեսակի ընկեր մը ունի դպրոցեն ներս կամ ետքը, ամենեն մեծ բաղդը ունի աշխարհիս երեսին: Կյանքի ամենեն մեծ բաղդավորությունն է հոգիներու մտերմությունը երկու հոգիի մեջ:

Ընդհանրապես երկու տղա կամ երկու աղջիկ այս խոր մտերմության կկապվին իրարու: Բայց կարծվածեն շատ ավելի է տղու մը և աղջկան մը մեջ ինկած այդ խոր մտերմությունը: Ինոր կապ մը հոգեկան, որ դուրսեն չերևար և որ կլեցնե երկու բաղդավոր հոգիներ: Ինոր կապ մը, որ իր մեջը սիրաբանություն չունի բացարձակապես դպրոցին մեջն ալ, դպրոցեն ետքն ալ և սովորաբար ատոնք կամուսնանան բոլորովին ուրիշ մարդոց հետ առանց իրենց հոգիներու այդ կապը երբևիցե ժխտած ըլլալու:

6. Մեր արևելյան քիչ մը ցոփ միջավայրին մեջ և մեր հայ ընտանիքի դարերու բերած խստության մեջ այս տեսակ աղջիկ ու տղա հարաբերությունը բնավ չի հասկցվիր: Եվ կգերազասե, որ տղան ու աղջիկը իրարմե հեռու մնան, որ հանկարծ փորձանք մը չի պատահի՝ առանց գիտնալու, որ այդ փորձանքը պատահեր է վաղուց, եթե մտերմությունը փորձանք է:

Բայց մի՛ զարմանաք, եթե ըսեմ, որ Ամերիկայի մեջ, օրինակ, դպրոցական վարչությունը, նույնիսկ արտաքին արվեստներով, կջանա տղա ու աղջիկ իրարու հրելու, իրարու վարժեցնելու, որպեսզի անոնց մեջ արդեն կես կեղծ, կես չիտակ ամաչկերները մեջտեղեն վերնան: Եվ ինչքան դրուստ է, երկու սեռերը պարզ ու ամենօրյա չփման մեջ գտնվին իրարու հետ, ինչպես որ նույն պարզ ու առօրյա չփման մեջ կգտնվին իրենց սեռակիցի հետ: Օրինակ՝ ամերիկյան դպրոցներու մեջ սովորություն է, որ դասարանի մը աշակերտները դուրսը պահարան մը պետք է ունենան տրամադրելի, երթալ փոխվելու, երբ խաղի պիտի երթան կամ իրենց հագուստները կախելու. այդ դիտմամբ մեկ պահարան դրված է երկու հոգիի, մեկը՝ տղա, մյուսը՝ աղջիկ, երկու աշակերտներն ալ ունին միևնույն բանալին, ուրիշ խոսքով՝ դասե դաս, առտու-

իրիկուն անոնք պիտի վազեն միևնույն պահարանը, բնականաբար կակի կատակ, խոսք, խնդալ, իրար ծաղրել, իրար հագուստ չհավնիլ, կատակով թեև լուրջ ատոնք իրարու կվարժվին քանի մը օրերու մեջ, ինչպես տան մեջ քույր ու եղբայր:

Ատոնք անշուշտ շատ բարդ հարցեր են և այսպես դյուրին չեն կարգադրվիր, մանավանդ տարբեր ազգերու մեջ: Ատոր համար որոշ քաղաքակրթական աստիճաններով պետք է անցնի ժողովուրդ մը և թուրք ու պարսիկի նման տներեր չի պիտի ունենա իր դլխուն՝ ինքն իր կարողությունները, ինքն իր ազատ մտածումը և ինքն իր վարքն ու բարքը ստեղծագործել կարողանալու համար:

Բ. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի. ԴՊՐՈՑԻ ՀԱՆԴԵՊ

ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցը և ուսուցումը հավաքական աշխատանք է:

Եվ հավաքական ամեն աշխատանք ու ընկերական ամեն կենակցություն հնարավոր է միայն իր անձը ենթարկելով որոշ պահանջներու և հանձն առնելով որոշ պարտավորություններ:

Այդ ընկերական պահանջներն ու պարտավորությունները երբեմն կարգ ու կանոնի, կարգապահության ձև կառնեն, երբեմն իբրև քաղաքակրթություն կներկայանան, երբեմն իբրև բարոյական պարտականություն, երբեմն նույնիսկ իբրև մտածելու ու աշխատելու եղանակ:

Ուսուցումը տարբեր մեկ կողմն է կրթության, և դաստիարակությունը՝ մեկ ուրիշ կողմը, բայց երկուքն ալ կրթության անխզելի մասերն են և չարունակ իրարու հյուսված, իրարմով բարձրացող և իրար լրացնող:

Ուսումնական հաստատություն մը, ուսուցման աշխատանք մը անկարելի է կատարել առանց այդ կարգ-կանոնի, առանց որոշ վարք ու բարքի, առանց պարզ ու մաքուր աշխատանքի և որոշ բարձր բարոյական ըմբռնումներու:

Բուն ուսուցման անցնելե առաջ անհրաժեշտ է, իբրև դպրոցական կյանքի անհրաժեշտ պայման, հակիրճ ակնարկ մը նետել

ու հիշեցնելը դպրոցական ամեն աշակերտի այդ պարտավորութիւններուն վրա:

Աշակերտները հաճախ լավ չեն ըմբռներ դպրոցական այդ պահանջներուն խորքի շատ լուրջ իմաստն ու անհրաժեշտութիւնը: Երբեմն իբրև կամայական կզգան մեծերու կողմեն իրենց վրա դրված այդ արգելքները, երբեմն իբրև բռնութիւն, ճիշդ այնպես, ինչպես դուրսը կյանքի մեջ ոստիկաններու վրա կնային քաղաքացիներեն չատերը:

Դպրոցն ու ուսուցիչները պարտական են հետզհետե զգալ, գիտակցիլ մանավանդ, որ այդ բոլոր պահանջները բարիք ու անհրաժեշտութիւն մըն են ու անհրաժեշտ պարտավորութիւն մը ամեն ազնիվ ու քաղաքակիրթ կյանքի ու գործի համար: Անշուշտ որ օրենքներն ու արգելքները դնող վարչութիւններն ալ երկար մտածելով ու չատ զգուշավոր կերպով պետք է դրած ըլլան դպրոցական այդ բոլոր պահանջները: Ամեն վարչութիւն պետք է գիտնա, որ սխալ, անտեղի ու ավելորդ պահանջներն են, որ ընդհանրապես ամենեն ավելի իրենց նեղութիւն կպատճառեն ամեն տեսակի հաստատութիւններու մեջ:

Երբ կարդ ու կանոնի և դպրոցական պարտավորութիւններու վրա չես նայիր իբրև անհրաժեշտ ընկերական երևույթի մը վրա, բնական կերպով ինչքան մեծնաս ու տարիքդ առնես,ատոնցմե խուսափիլ կկռանաս: Սովորական երևույթ է, որ աշակերտները վերին կարգերուն մեջ ազատամիտ հովեր կառնեն ու իրենց «արժանապատվութեան» դեմ կնկատեն «պզտիկներու» համար «հնարված» այդ «կաշկանդումները»:

Դպրոցի և ուսուցիչներու պարտականութիւնն է՝ աստիճանաբար և տարվե տարի ավելի խոր ըմբռնել տալ կարգ ու կանոնի, քաղաքավարութեան պատշաճութիւնն ու բարոյականութեան դրած այդ արգելքներուն արժեքն ու նշանակութիւնը և հասկցնել, որ մեծցողներն ու մեծերը չատ ավելի մեծ չափերով և չատ ավելի հստակ գիտակցութեամբ պարտական են այդ բոլոր պահանջները խստիվ կատարելու, տեսակ մը օրինակ դառնալով ավելի փոքրերուն: Դասարանական դաստիարակներու հատուկ պարտավորութիւններեն մեկն է կարգի, կանոնի և օրենքի մեծ քաղաքակրթական դերը զգալ ու ըմբռնել տալը տղոց:

Քաղաքակրթական վարի աստիճաններուն վրա և կրթական աստրին պաշարով մարդոց համար ուժն ու կամայականությունն է տիրող օրենքը. քաղաքակրթական ավելի վերին աստիճաններուն վրա և կրթական ավելի բարձր ըմբռնումով մարդոց համար օրենքն է տիրող ուժը:

Այս պատճառով ալ բուն ուսուցման անցնելե առաջ լավ է ու անհրաժեշտ, որ հակիրճ ակնարկ մը նետենք դպրոցական բոլոր աշակերտի այդ ընտիր պարտավորություններուն վրա:

ԺԱՄԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Աշակերտը, առաջին՝ պարտավոր է ճիշդ ժամանակին դպրոցը գտնվիլ և լավագույնը դնե քանի մը վայրկյան ավելի կանուխ՝ ժամացույցներու տարբերության և ուրիշ ամեն կարգի պատահականության առջևը առնելու համար:

Ամեն ուշացում, նույնիսկ մեկ-երկու վայրկյանով, մեծ թերացում է և՛ կարգապահական, և՛ բնավորության և դուրսը ընդհանուր հսկիչին կողմե միշտ պետք է նշանակվի:

Ներելի չէ մեկ-երկու ժամով, կես կամ ամբողջ օրով բացակայիլը դպրոցեն, ամեն բացակայություն հսկիչի կողմեն պիտի նշանակվի, և տղու վերադարձին պետք է իմացվի պատճառը, և այդ պատճառները պետք է ըլլան շատ լուրջ և ծնողներու պահանջով. հարկ եղած պարագային ծնողներեն բացատրություն կուզվի բանավոր կամ գրավոր: Առանց ծնողներու գիտության բացակայիլը բացարձակ արգիլված է և հակառակ է աշակերտական կոչումին: Բացակայության տետրակին մեջ հատուկ կընդգծվին չարդարացված բացակայությունները միշտ ուշադրության տակ ունենալու համար:

Դպրոցեն հեռանալը որոշված ժամանակեն առաջ արգիլված է նմանապես. բացառիկ պայմաններու մեջ կրնա տեղի ունենալ և միայն ընդհանուր հսկիչի կարգադրության կամ թույլտվության:

Դպրոցին մեջն ալ ամեն դասի ու աշխատանքի սկզբին զանգը տալուն պես ամեն աշակերտ անմիջապես պետք է ընդհատե խաղը, ըրաղումը, խոսակցությունը և պիտի չտապե զանգին կանչած վայրը առանց ոտքը քարչ տալու ու դանդաղելու ծուռ ու չիտակ պատրվակներով: Զանգը տալեն ետքը լվացարան ու պետքարան

վազել չկա. այդ բոլորի մասին նախօրոք պետք է մտածվի: Մեծ դաշարներուն լավ է բուն զանգեն մեկ-երկու վայրկյան առաջ նախանշան մը տրվի, որ խաղերը ընդհատին, հագուստ ու դեմք կարգի բերվին կամ լվացվին: Բոլոր աշակերտները իրար ետևե կմտնեն դասարան կամ աշխատանոց, որոնց ետևեն կմտնե ուսուցիչը, և դուռը կգոցվի: Դուռը գոցվելեն ետքը դասարան մտնելը կոպիտ անկարգություն մըն է, և՛ խանգարիչ, և՛ անքաղաքավարի, ինչքան ալ զգուշ ու համեստ կատարվի:

Եվ ո՛չ միայն դպրոց գալու և դասերուն հասնելու, այլ ամեն տեղ և ամեն գործի մեջ, նախապես որոշված ժամադրության, ըլլա խաղի թե աշխատանքի համար, ըլլա մեկ-երկու հոգիի թե խումբի համար, ճշդապահ ըլլալը, ճիշդ ժամին ներկա գտնվիլը կիրթ մարդու հատկանիշն է, որովհետև ժամանակը գնահատել կնշանակե, ուրիշները չսպասցնելու և անոնց ժամանակը չգողնալու մտահոգությունն ունի:

Թե՛ կարգապահական, թե՛ բնավորության և թե՛ գործերու հաջողության տեսակետներեն անփոխարինելի առավելություն մըն է դպրոցին մեջն ալ, դուրսն ալ ամեն բան իր ժամանակին կատարելը, այսինքն սովորություն դարձնել ամեն գործի, խաղի և զբաղումի համար որոշ ժամանակ հատկացնել, դպրոցի պահերուն նման, և այդ պահերուն զբաղվիլ միայն այդ գործով:

Թվաբանության դասին գաղտուկ նկարչություն ընել, լեզվական աշխատանքներու միջոցին սերտողության նստած ատեն պարապ բաներու մասին մտածել, ընթերցանության սրահին մեջ ընկերոջ հետ խոսակցության բռնվիլ, խաղերու ու դադարի հատկացված վայրկյաններուն դասագիրք մը առած վազվզողներուն մեջտեղը դաս սերտել, ժողովի միջոցին մեկուն հետ մասնավոր խնդրի մը կարգադրությամբ զբաղիլ, ուտելու ատեն լրագիր ու գիրք կարդալ, – ասոնք բոլորը և ասոնց նմանները թե՛ անկարգություն են, թե՛ անքաղաքավարություն և թե՛ վնաս բնավորության կամ առողջության:

Մասնավորապես կարևոր է օրվան դասերուն և պարտավորություններուն պատրաստության Հատուկ և ամենեն թարմ ու հարմար ժամանակը նշանակելը և այդ պահերուն միայն դասերու պատրաստությամբ զբաղիլը: Եվ մեծ արժեք ունեցող բան է, որ

օրը օրին անպայման կերպով տրված պարտականությունները կատարվին և չհետաձգվին երբեք, որ աշխատանքին մեջ կանոնավորություն և հարատևություն մտնե. այդ կանոնավոր ու հարատև աշխատության մեջն է հաջողություններու բանալին: Տաղանդն ու ընդունակությունը մեծ բան է, բայց կարժեքավորվի միայն համառ ու կանոնավոր օրը օրին կատարված աշխատանքով: Եվ ատ է, որ կանվանենք աշխատասիրություն:

Ըլլալ միշտ ճշդապահ, հատկացնել ամեն գործի իր որոշ ժամանակը և զբաղվիլ միշտ բոլորանվեր իր բոլոր ուժով ու բոլոր ուշադրությամբ. ասիկա կնշանակի ժամանակին օգտվիլ գիտնալ, ժամանակը գործածել գիտնալ, կնշանակե տիրել ժամանակին:

ԻՐԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Իրերու հանդեպ ամեն աշակերտի առաջին պարտավորությունը խնամոտ վերաբերվիլն է, որ չկոտրե, չվնասե, չխախտե, չփճացնե, չվատնգե իզուր տեղը: Ե՛վ իր սեփական գրքերն ու պիտույքները, հագուստ ու կոշիկ, և՛ իր ընկերներուն ու ուրիշներուն պատկանող իրերն ու առարկաները, որոնք իր ձեռքին տակն են կամ փոխ է առած գործածության համար, և մանավանդ դպրոցին պատկանող, այսինքն հանրային սեփականություն եղող իրերը, ինչպես են դպրոցի դրադարանին գրքերը, քարտեզները, նկարները, ալբոմները, գործիքները, այդպես ալ նստարաններն ու սեղանները: Անպիտանություն է ու հանցանք ատոնց վրա գրելը, փորփրելը, խազմռելը, այդպես ալ շենքի պատերուն, այուներուն, դռներուն ու փեղկերուն վրա խնդիրներ լուծելը, պատկերներ քաշելը, տետրակ չորցնելը. այդպես ալ մելանի հետ անփույթ վարվիլը և ամեն կողմ մելանի ցայտեր ու արատներ ձգելը: Ամեն իր ու առարկա կա՛մ ծնողներու ճակտի քրտինքով ու հաճախ մեծ զոհողություններով ձեռք է բերված, կա՛մ հանրային դժվար հավաքվող դրամներով են գնված. չմտածող, չգնահատող ու կոպիտ հոգիներն են միայն, որ անփույթ են ու կփճացնեն. ամեն բանի հանդեպ խնամոտ վերաբերում ունենալը նշան է հոգեկան ազնվության:

Անխիղճ վերաբերում է, երբ վայրկյանի մը քու հանգիստ նստածքին համար գիրքը կռնակին վրա կդարձնես, որ բռնելը դյուրին ըլլա, ընթերցումը ընդհատելու առեն թղթի կտոր մը

չփնտրելու համար էջին ձգերքը կծալես, եղունգովդ նշաններ կընես, ծուլանալով ոտքի ելլելու՝ կնետես գիրքը, տետրակը, դասարանին կավիճը իբրև ծծուն կգործածես, որով այլևս գրատախտակին վրա գրել անկարելի կըլլա. նստարանները կքաշքշես այս ու այն կողմ ամեն հիմար քմայքով, երկու նստարաններու ծայրերեն բռնած կօրորվիս ու մարզական փորձեր կընես՝ առանց խղճահարվելու, որ անոնց պտուտակները կթուլցնես: Եվ այսպես անվերջ: Ասոնք բոլորը, ըստ երևույթին, շատ մանր ու չնչին բաներ են անփույթ ու անզգա մարդուն համար, բայց այդ բոլորը «չնչին» բաները երբ կընեն հարյուրավոր տղաք և հարյուրավոր օրեր, կրնաք ըմբռնել, թե որքան բան կփճացվի բռնի ու ավելորդ կերպով իր բնական մաշումեն զատ: Եվ այս բոլոր վնասներուն վրա ամենեն ավելի թանկագին վնասվող բանը տղոց բնավորութիւնն է: Զգիտակցի՛ր իրեններուն և ուրիշներուն ըրած զոհողութիւնները, չանդրադառնա՛ր ու չըմբռնե՛ր ուրիշներուն իրավունքը, չգնահատե՛ր թափված քրտինքն ու աշխատանքը, ծախսված ժամանակն ու դրամը: Այս բոլորը կաթիլ-կաթիլ կմաղեն այլասիրութիւնը և կզորացնեն եսականութիւնը. տղան կմտածե միայն այդ վայրկեանի իր քմայքը, իր հաճույքը, իր պետքին բավարարութիւն տալը:

Իրերու վերաբերմամբ դպրոցին մեջ, ինչպես և անշուշտ ամեն տեղ, երկրորդ պահանջն է՝ ամեն ինչ իր տեղը դնել: Նախ ամեն ինչ պետք է ունենա իրեն հատկացված որոշ տեղ մը ըստ գործածութեան պահանջներուն և ըստ իր բնական կազմին: Գիրքն ու տետրակը գործածութենեն ետքը պիտի ըլլան գպրոցին մեջ. դասագիրքը սեղանին վրա թողած հեռացող աշակերտը թափթփած և անկարգ աշակերտ մըն է. աշխարհագրութեան դասեն ետքը քարտեզը գրատախտակի գամեն կախված ձգելով դասարանեն հեռացող օրապահը իր պարտականութիւնները գէշ կատարող ու անկարգ օրապահ մըն է. բայց գրադարանեն գիրք մը առնելեն և օգտվելեն ետքը չտապով գիրքը գրադարանին մեջ նետելը կամ դրքերու շարքին մեջ պատահած տեղը կախելը անկարգութիւն մըն է և վատութիւն, որովհետև եթե գիրքը իր շարքին ու թվին պահանջած տեղը որ չդնես, քեզմե ետքը այդ դրքեն օգտվիլ ուզող աշակերտը այլևս գտնել չի կրնար, երկար փնտրտուքներու կկատրոտի և գրապետին բոլորվին ավելորդ և հոգնեցնող աշխատանք մը կպարտադրե:

Ամեն իր պետք է դնես հոն, ուրկե որ առած ես, ճիշդ ու բծախնդիր կերպով իր տեղը, և պետք է դնես խնամքով և զգուշութեամբ, որ չծալվի, չկոտրվի ու վերջը վար չիյնա, պետք է նախատեսել և հոգածու ըլլալ. երկար կոթով գործիք մը երբ կդնես սեղանին եզերքը կոթը դեպի դուրս, կատեղծես վիճակ մը, որ քովեն անցնողը զպչի ու վար ձգե. հով եղած ատեն դասարանին հանդիպակաց դռներն ու պատուհանները երբ բաց կձգես ու կհեռանաս, հովը զարնե պիտի ու ապակին կոտրե:

Եվ վերջապես ամեն բան որոշ դասավորութեամբ, որոշ կարգով ու չարքով իր պատշաճ տեղը դնելը նաև ճաշակի ու զգացումի պահանջ է, որ երբեք պետք չէ մոռացութեան դրվի:

II. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐ ԱՆՁԻՆ ՀԱՆԴԵՊ

ԱՐՏԱՔԻՆԸ

Դպրոցականի մը իր անձով ցուցադրելիք առաջին պարտավորութիւնը բծախնդիր մաքրութիւնն է. մաքրութիւն մարմնի, հագուստի, ճերմակեղենի, իրերու, պիտույքներու, անկիւնի ու շրջապատի. զտեհիլ ու անքաղաքակիրթ ըլլալու նշան է անմաքրութիւնը. ամեն մեղանչում իր անձի մաքրութեան դեմ մեղանչում մըն է դպրոցականի վայելչութեան դեմ:

Իր արտաքինի վերաբերմամբ դպրոցականի մը երկրորդ պարտավորութիւնն է՝ ըլլալ կոկիկ, պարզ ու բնական. անփույթ հագվիլը, չսանտրված մազերը, չխնամված եղունգները, փրթելու վրա եղող ու կախված կոճակը և ընդհանրապես իր վրան ու շուրջը ամեն թափթփածութիւն անպարկեշտ է և հակառակ դպրոցի կարգին: Մազի սեթևեթ հարդարումներ, պոռոտ գույներով ու ցուցամոլ հագուստներ, մոտային հետևելու ճիգեր, չքեղութիւն ու պերճանք ծախել, ներկվիլ, փոշի գործածել, անքոտվիլ, ինչքան ալ նուրբ ու համեստ չափերով կուզն ըլլա՝ դպրոցի համար չեն և ընդհանրապես թարմ տարիքի համար չեն: Նուրբ ու կիրթ հոգին և ազնիվ ճաշակը բնականութեան, թարմութեան, մաքրութեան և պարզութեան մեջ կփնտրեն գեղեցկութիւնն ու գրավչութիւնը իրենց անձի:

Այդպես ալ սուգ ու աժան զարդարանքները՝ մատնիք, օղ, մանյակ, ապարանջան, զանազան փայլուն ասեղներ, ուժեղ գույներով ժապավէններ ու ժանյակներու փարթամութիւն դպրոցի համար չեն: Դպրոց եկողը վրան թանկագին զարդեր կամ թանկագին ձևացող զարդեր պետք չէ ունենա, ոչ ալ զանազան նշանակներ ու զարդանիշեր, ինչքան ալ սիրելի ու հարգելի կազմակերպութիւններու և գաղափարներու նվիրված ալ որ ըլլան ատոնք: Միակ բացառութիւնը կրնա ըլլալ ի՛ր դպրոցի հատուկ նշանակը, եթե կա:

ԼԵԶՈՒՆ ՈՒ ՇԱՐԺՈՒՁԵՎԵՐԸ

Մաքուր, զուսպ ու բնական ըլլալը կպահանջվի ինչպես աշակերտի մը երևութեն, այնպես ալ անոր լեզվեն ու խոսվածքեն: Հայհոյանքը կեղտոտ բան է, կոշտ ու կոպիտ խոսվածքը՝ գռեհկութիւն, իսկ ավելորդ խոսվածքն ու շատախոսութիւնը տափակացումն է մտածումին ու արտահայտութեան: Աշակերտի մը շրթունքեն հայհոյանք, կեղտոտ ու անպատկառ խոսքեր երբեք պետք չէ լլլեն. ատոնք ո՛չ միայն աշակերտը կստորնացնեն, այլև անոր պատկանած հաստատութիւնն ու համայնքը: Իսկ անփութի, խառնակ և անճաշակ խոսվածքը տգեղութիւն կուտա և՛ խոսողին, և՛ հանդուրժող շրջապատին: Իսկ ամեն տեսակի ծեքծեքումները, կոտրտուքները, սուտ նազանքներն ու սուտ ամաչկոտութիւնը կեղծ ղրամ են ու կեղծ զարդարանք. ծիծաղ ու արգահատանք կշարժեն:

Լեզուն զսպելը դպրոցական կարևոր պահանջ մըն է նաև զուտ կարգապահական տեսակետեն. իրարու հետ խոսիլը արգիլված է դպրոցին մեջ, երբ խմբված են աշակերտները որևէ նպատակով, ինչպես և սերտողութեան և ընթերցանութեան պահերուն: Իրարու հետ խոսիլը արգիլված է մասնավորապես և խստորեն դասարանի մեջ ուսուցչի ներկայութեան, ինչքան ալ կարճ, զգուշ ու մեղմ ըլլա խոսակցութիւնը երկու հոգիի մեջ, նույնիսկ միայն նշաններով, անկարգութիւն մըն է միշտ և անքաղաքավարութիւն ուսուցչի հանդեպ, կխանգարե ընդհանուր աշխատանքը, կվրդովե ուսուցչի հանգիստը և ավելորդ ջղայնութիւն կպատճառե:

Լեզվին կից կուգա մարմնի շարժուձևերուն ու կեցվածքին պարկեշտությունը: Աշակերտ մը փողոցներուն մեջ տունն դպրոց ու դպրոցն տուն երթևեկելուատեն պետք չէ վազվզե, ցատկռտե, մագլցի պատերուն կամ պայուսակը պատին տակ դրած խաղալու սկսի: Ավելի ևս դիշ փողոցներուն մեջ իրար հրմշտակելը, կռվզտուքը, վնճ ու աղմուկ, ատոնք ուղղակի կանպատվեն դպրոցը, որովհետև լայն հասարակությունը աւտով կզատե դպրոցի մեջ տիրող դաստիարակությունը: Ամեն տեղ կոկիկ, պարկեշտ, կարգին ու քաղաքավարի ըլլալ անհրաժեշտ է, բայց մանավանդ լայն հասարակության մեջ:

Իսկ դպրոցին մեջն ալ վազվզուքն ու աղմուկը արգիլված է սանդուղներուն վրա ելուէջքի ատեն, սրահին մեջ ներս ու դուրս ըրած միջոցներուն և դասարաններուն մեջ, միևնույն է՝ հսկող ըլլա, թե ոչ. պահանջը ավելի մեծ է, եթե հսկող չկա: Շարժումին տեղը բակն է, բակերը. չենքի սմին ոտք դրվեցավ թե չէ, եկեղեցի մտնելու պես է, այսինքն հանդիսատ ու կանոնավոր քալվածք, առանց իրար դիպչելու, առանց իրարու առջևը կտրելու, առանց աղմուկի ու բարձր խոսակցության. կատակներու, խաղերու և աղատ շարժումներու տեղը չէ այլևս:

Դասարանին մեջ մինչև ուսուցչին գալը, սերտողության ատեն և ընթերցանության պահերուն արգիլված է տեղեն ելլելը: Այդպես ալ դասի միջոցին ոչ ոք պետք չէ տեղեն շարժվի առանց ուսուցչի հրավերին. իսկ արգիլված է բացարձակապես դասարանեն ելլելը. չատ բացառիկ պարագաներուն, ցավի ու նեղության ատեն պետք է ուսուցչեն թույլտվություն խնդրվի առանց որևէ բացատրության տալու. ուսուցիչը ետքը դուրսը կրնա հետաքրքրվիլ, եթե տեղեկանալ ուզենա: Վարի կարզերուն ներս մտնելը, դասարան գալը և իրենց տեղերը անցնիլը և վերջն ալ ոտքի ելնելն ու դուրս գալը լավ է մեկ անգամ ընդմիշտ որոշ ձևի տակ դրված ըլլա, որ դառնա մեքենական. թե՛ դյուրության է, թե՛ հարմար: Մնծերուն պետք է թողնել շարժումներու բնական ազատությունը:

Իսկ բակը, որ խաղի, վազքի, մարզանքի ու շարժումներու ազատության վայրն է, պետք է արգիլված ըլլան կոպիտ ու անկիրթ շարժումները, իրար հրելը, իրարու վրա ցատկելը, իրարու թևերեն ու հագուստներեն քաշկռտելը, տգեղ ու վտանգավոր խաղեր ընելը

և կռվզտելը: Խաղը, վազվզուքն ու ազատութիւնն ալ իրենց քաղաքավարութիւնն ունին և իրենց պարկեշտութիւնը: Արգիլված են բոլոր թաւալվող, փոշոտող ու հագուստները կեղտոտող խաղերը, ինչպես և ուրիշներուն խաղն ու հանգիստը խանգարող հրմշտուքը. արգիլված են ամեն տեսակի առուծախի, շահ ու վաստակի հետապնդումով տարված խաղերը: Արգիլված է թքնելը, խածնելը, աքացելը, զարնելը. ասոնք անասուններուն կվայելեն:

Արգիլված է ավելորդ աղմուկն ու պոռչտուքը. խաղ մը ինչքան լավ ու վարպետ խաղացվի, նույնքան քիչ աղմուկ կելլե. ամենեն շատ ճվճվացողները ամենեն գեչ խաղացողներն են, կա՛մ տգեղ կռկետութիւն է ըրածնին, կա՛մ պարզապես պոռալ կվխաղան, այսինքն մտած են խաղին մեջ պոռալու համար. երկուքն ալ շատ գեչ. պոռալու տեղ չէ դպրոցին բակը: Բոլորովին տարբեր բան է բնական խաղերու, ազատ շարժումներու, իրար կանչելու և խոսակցութեան բնական ու կենդանի խժլտուքը. ատիկա գեղեցկութիւնն է դպրոցի բակին:

Երգելը նմանապես, ըլլա անհատական թե խմբական, արգիլված է բակին մեջ: Երգը իր չափը ունի, իր ելևէջը, իր խմբումը և համաչափութիւնը, ղեկավար կուզե և շրջապատի բացարձակ լռութիւն. բակին մեջ չէ՛ իր տեղը, ո՛չ ալ այդ վազվզուքին մեջ, այլ վերը, իր հատուկ սրահին մեջ, ուսուցչի ղեկավարութեան տակ: Բակին մեջ բռնկած երգերը ճվոց են, մեկը ետ կմնա, մյուսը՝ առաջ կանցնի, կիսատ կմնա, անախորժ ձայներով և տգետ ու կախ մնացած վերջերով և շատ հաճախ դիտմամբ իրար խանգարելով:

Որոշ կարգ ու կանոն կապված է նմանապես ուտել-խմելու ձևին ու տեղին հետ: Նախ՝ արգիլված է դասարանի մեջ, սրահը, բակը որևէ բան ուտելը. ուտելու պետք է հատկացվի հատուկ ճաշասենյակ մը, ուր մինչև իր հացն ու պտուղը չվերջացնե, բակ ելլելու իրավունք պիտի չունենա տղան: Պանիր-հացը ձեռքը վազվզելը, խնճորը խածնելով ցատկռտելը կամ ձեռքը շարունակ բերնեն դրպանը, գրպանեն բերանը տանիլ-բերելով մուկի պես չոր պտուղ մը կրելը վայել չէ ընդհանուր խաղատեղիին, հետն ալ աղտոտութիւն կբերե. կաղինին կեղևները, նարինջին մաշկը, ուտելիքին փշրտուքը կթափթփին բակը, մինչդեռ բակը, այդքան բազմութեան շարժվելուն հակառակ, սրահի մը պես մաքուր պիտի ըլլա: Հոն ալ

պիտի ըլլան զամբյուղներ ավելորդ թելերն ու ուրիշ անպետք իրերը մեջը նետելու համար:

Եվ ուտելու ձևն ալ կարգ ունի: Հացը խածնելով չփրցնել, խոշոր կտորներով բերանը չկոխել, ձայնով չծամել, դանակ, պատառաքաղ չնորհքով բռնել, ափսեցը մաքուր պահել, անձեռնոցիկն օգտվիլ գիտնալ, ուտելիքը ազահությամբ չափեն ավելի չվերցնել, որ ամանին մեջ վերջը ավելորդ չմնա, սեղանի ատեն ու սեղանի շուրջը զսպել ամեն հանկարծական ու բուռն շարժում, ուտել առանց ավելորդ շտապի, ո՛չ ալ ուտելը խաղի վերածել, ուտելու ատեն քիչ խոսիլ և հանդիստ խոսիլ, որ ոլոր չերթա, ու ծամելը տգեղ կերպով չխանգարվի, նստիլ ու ելլելու ատեն աթոռը ազմուկով չքաշել: Եվ ասոնց նման բազմաթիվ մանր բաներ կան, որուն եթե ուտող մը ուշադիր չըլլա, թի՛ ինքզինքը կկեղտոտե կամ իրեն անախորժ կըլլա, կա՛մ անախորժ է ու տգեղ ուրիշներուն, սեղանակիցներուն. կթափե, կկոտրե, կկեղտոտե և վնաս կուտա, ավելորդ աշխատանք կստեղծե և ուտելիք կվատնե իզուր տեղը կամ զզվանք կառաջացնե: Եվ ասոր համար ալ հակառակ է քաղաքավարության ու վայելչության:

Կան որոշ թթու-կծու ուտելիքներ, որ փոքրիկներու համար չեն, մանավանդ ոգելից ըմպելիներ, սուրճը և ուրիշ խմիչքներ. ասոնք սովորական և օգտակար սնունդ չեն և միայն մեկեմեջ բացառիկ կերպով, համը առնելու համար, փորձած ըլլալու համար պըզտիկներուն կկրնան տրվիլ: Իսկ ծխելը իր բոլոր ձևերուն տակ բնավ աշակերտի համար չէ և՛ առողջական տեսակետեն, և՛ անպիտանության տեսակետեն: Բայց տղաքը վերի կարգերուն մեջ, երբ հետզհետե «մեծերու» հովը առնել կսկսին, ծխելն ալ իբրև արգիլված բան, իբրև մեծերու հատկանիշ ու առանձնահատկություն, անպատճառ փորձել կուզեն ընկերները իրար վարակելով և սովորաբար ծածուկ: Իսկ երբ կսկսին ծխել նաև հրապարակով, փողոցներու մեջ, ուրիշներու ներկայության, ծխելը կդառնա ո՛չ միայն անառողջ ու արգելքի դեմ առնված քայլ մը, այլև տգեղ ու անվայել հանցանք մը, քանի որ դպրոցին կարգերը ցուցադիր կերպով ոտքի տակ կառնվին: Մեղադրելի կդառնա ո՛չ միայն ծխելը, այլ դպրոցի դրած ծխելուն արգելքը արհամարհել ուզելը: Առողջապահական մեղանչումը կդառնա կարգապահական մեղանչում:

Գալով քու գործիդ, դասերուդ ու պարտավորութիւններուդ կատարումին՝ առաջին պայմանն է՝ սիրով ու սրտանց մոտենաս քու բոլոր աշխատանքներուդ: Ամենեն ծանր համարած աշխատութիւնդ անգամ անհամեմատ կթեթևանա, երբ ընելիքիդ վրա սիրով կնայիս, հաչտ հոգիով ու պատրաստակամ. ամեն դժկամութիւն, ամեն լարում ու հակառակութիւն սկսելիք գործիդ դեմ քեզի չազատեր քու պարտավորութիւննդ, բայց շատ կծանրաբեռնե ավելորդ տեղը քու ընելիքդ: Քանի որ հանճն ես առած կամ քանի որ պարտական ես կատարելու, չանա՛ թեթևցնես, չանա՛ դյուրացնես կատարելիքդ և դյուրացնելու ամենեն հիմնական ու ամենեն առաջին պայմանը սրտանց աշխատելու, սիրով կատարելու ներքին տրամադրութիւնդ մոտենալն է ամեն գործի:

Երկրորդ պայմանը և՛ բավականութիւն զգալու համար, և՛ հաջողութիւն ունենալու համար վարե՛ ամբողջ աշխատանքդ նվիրումով ու կեդրոնացած ուշադրութիւնդ: Տող մը գրել, տող մը ուրիշ բաներ մտածել, նախադասութիւն մը շարադրել և հետն ալ քովն ի վեր փողոցի անցուդարձը դիտել, խնդիր մը վճռելու նստիլ և միևնույն ժամանակ շուրջդ կատարվող խոսակցութեան հետևիլ կամ աչքերդ երկինք նետած մտամոլոր մատիտիդ ծայրը կրծել. ո՛չ, ասիկա աշխատանք չէ՛, ո՛չ լուրջ արդյունք մը կրնա տալ, ո՛չ ալ բավականութիւն, այլ միայն ձանձրույթ և հոգնութեան զգացում: Միայն կեդրոնացած մտածումն է, որ կըմբռնե, կզատե, կհասնի իր որոնածին, կգտնե, կհնարե, գյուտեր կընե և կզգա խորին ուրախութիւն: Նվիրումով, կեդրոնացած և ամեն բան մոռնալով իր աշխատութեանը փարիլ գիտցող մարդը մեծ բաղդավորութիւն մը ունի իր ձեռքը իր ամբողջ կյանքին մեջ և հաջողելու ամենեն մեծ հավանականութիւնը:

Գործդ դյուրացնելու և հաջողութիւններդ շատցնելու հաջորդ պայմանը կանոնավոր աշխատիլն է: Կանոնավորութիւն ամեն բանի մեջ, ինչ որ կապված է աշխատութեանդ: Խնամքով պատրաստված ու ձեռքի տակ ունենաս այն բոլոր իրերը, որ պետք է գործածես: Խնամքով ընտրած ըլլաս տեղդ, ուր պիտի աշխատիս: Խնամքով ընտրած ըլլաս աշխատութեանդ ժամանակը: Խնամքով հետևիս մտքիդ կատարած աշխատանքին, ծանր քալվածքով և

բնական հաջորդականութիւնամբ, առանց մտքի ցատկոտուքներու, հնար եղածին չափ ամբողջական ըլլալու ճիգով առանց մոռացումներու, առանց թերացումներու, առանց պակասաւոր ու չտապ վերջաւորութեան:

Մեծ առաւելութիւն մը, երբ վարժվիս միշտ միևնոյն ժամերուն աշխատանքի նստելու և միշտ միևնոյն տեղը քու աթոռիդ վրա, քու սեղանիդ առջևը: Այս վարժութիւնը աշխատելու որոշադրութիւնը կբանա: Պատահած տեղը, պատահած ժամանակ ու պատահական ևեռղութեամբ աշխատելու նստիլը աշխատութեանդ պատահական բնոյթը կուտա, կըլլա ընդհանրապես ընդհատումներու ու խանգարումներու հյուսված, հաճախ կյկտուր, չտապ ու վայրիվերո արդյունքով, առանց լուրջ կեդրոնացման:

Կանոնաւորութիւն պիտի պահվի նաև աշխատանքի տևողութեանդ մեջ: Պետք չէ շատ արագ աշխատանքը ընդհատել վազվզուքով, ուտելով ու պարապ խոսակցութեամբ, բայց և մնաս է ու պետք չէ չափեն ավելի երկար անընդհատ աշխատիլը. ժամն մը ավելի անընդհատ մտաւոր աշխատանքի մը նստիլը ծայրահեղութիւն է ընդհանրապես, բայց մանաւանդ դպրոցական տարիքի համար: Մեծ առաւելութիւն ունի և մեծ թարմութիւն կուտա քառորդ ժամվա դադար մը, երբ կշարժվիս, դուրս կուգաս սենյակեդ, կխոսիս, կկատակես, կխաղաս, կզբաղվիս բոլորովին ուրիշ տեսակի բաներով ու անկե ետքը նորեն կերթաս, կնստիս, նորեն ժամվան մը չափ գործդ ավարտելու կեդրոնացած մտածումով:

Դպրոցականի մը համար մինչեև հաշվով օրական այս երկու ժամվան աշխատութիւնը հերիք է դասերն ու դպրոցական պարտաւորութիւնները կատարելու համար, անշուշտ օրը օրին աշխատելով. դեչ սովորութիւն է թողնելը, որ գրութիւնները, խնդիրները ու վարժութիւնները դիզվին իրարու վրա քանի մը օր և վերջը մինչև կես գիշեր նստիլ կերպ մը ծայրը ծայրին բերելու համար: Այս տեսակ և՛ շտապ, և՛ թերի կատարված գործերը երբեք չեն կրնար համեմատվիլ հանգիստ կերպով օրը օրին, աստիճանաբար կատարված աշխատանքին ու յուրացման հետ: Օրը օրին կատարված, ամեն օր, կանոնաւոր կերպով դաս պատրաստելը ո՛չ միայն ամենեն ճիշդ եղանակն է դպրոցական աշխատանքի, այլև այդ

ճամբով է, որ մարդիկ ձեռք կբերեն ապագա կանոնավոր ինքնաշխատութեան վարժութիւնը:

Եվ ընդհանուր առումով դասերը պատրաստելու ամենեն հարմար ժամանակը իրիկունն է: Դպրոցական ժամերու ավարտումեն և մեկ-երկու ժամվան զբոսանքեն կամ հանգիստեն ետքը, այսպես՝ 5-են 7 կամ 6-են 8՝ նայելով ընտանիքի ընթրիքի ժամին: Ընթրիքեն ետքը աշխատանքը մնասակար է առողջութեան, կխանգարե մարսողութիւնը, և երբեք կարելի չէ նույն լրջութեամբ միտքը կեդրոնացնել. վնասակար է նմանապես անկողին մտնելե առաջ միտքը չարչրկելը, քանի որ ամբողջ օրվան մը աշխատանքներեն, խաղերեն ու ընթրիքեն ետքը կես-թմրած ուղեղը գործ տեսնելու ստիպելը պարզապես իր միտքը չարչրկել և առողջութիւնը մաշել ըսել է:

Իսկ իրիկունը խաղով տարվիլ՝ հույսը դնելով հաջորդ առտուն կանուխ ելլելու ու աշխատելու վրա, կա՛մ պարզապես ինքնախաբեութիւն է ու խոսքի ձև, կա՛մ իրոք դիտավորութիւն է ու հաստատ որոշում. և այս պարագային կխանգարե հանգիստ քունը և պատճառ կդառնա ժամանակեն շատ կանուխ արթննալու, այլև դպրոցեն անմիջապես առաջ այդ հավելյալ աշխատութիւնը հավելյալ հոգնութիւն մըն է, և կատարված աշխատանքն ալ իր վրա կունենա չտապած ըլլալու բոլոր նշանները:

Աշխատիլ օրը օրին, կանոնավոր կերպով, իրիկվան գործը առտվան չթողնել, աշխատիլ կեդրոնացած ուշադրութեամբ և աշխատիլ սիրով ու նվիրումով: Աշխատիլ գիտնալն ալ իր տեսակի արվեստ մըն է, և այդ արվեստը լավ մը յուրացուցած ու գործադրելու վարժված ըլլալը մեծ առավելութիւն մըն է թե՛ դպրոցական տարիներուն և թե՛ կյանքի մեջ:

III. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՊ

ՄԵԾԵՐՈՒ ԱՌԱՋ

Մնծերու հանդեպ և մասնավորապես իրենց ուսուցիչներուն հանդեպ աշակերտութեյան առաջին պարտավորութիւնն է հարգանք ցույց տալը: Անշուշտ բուն կարևորը հարգանք զգալն

է, բայց ինչպես բոլոր զգացումները, հարգանք ղգալն ալ պարտադրել ու պահանջել չըլլար, և որքան աշակերտի հոգիին, այնքան և ավելի կախում ունի ուսուցչի անձին ու վարմունքին: Սակայն հարգանք ցույց տալը վարմունքի նղանակ է արդին և քաղաքավարության ու կարգապահության պահանջ, և այդ հարգանքը կպահանջվի ամեն տեղ ու ամեն պարագայի:

Դպրոցի մեջ, սրահներուն ու անցքերուն մեջ կամ բակը ամեն անգամ ուսուցչին դեմ գալու առեն պետք է քիչ մը ետ քաշվիլ ու ճամբա տալ կամ մեղմել շարժումը, եթե խաղալու վրա է: Եվ բնական կերպով իր մեծերու ներկայության չատ բարձր ու ազատ ծիծաղը քիչ մը կզսպվի, բարձր խոսակցությունը նմանապես և կեցվածքն ու շարժումները նմանապես սանձում կառանան: Առանց ուշք դարձնելու ուսուցչի գալուն կամ ներկայության իր խնդալը, իր ազատ խոսվածքը, վազքն ու կատակը շարունակելը կա՛մ կոպտություն է, կա՛մ անպատկառություն: Քիչ մը բացառություն են անշուշտ օրվան հսկիչներն ու հերթապահ ուսուցիչները, որոնք աշակերտներուն հետն են բակի շարժման մեջ կամ խաղակից, և բնական կերպով աշակերտներու այդ մասնավոր ուշադրությունը կթուլնա՝ առանց բոլորովին վերնալու: Իսկ ուսուցչի մը դասարան մտնելու և ելլելու պահուն աշակերտները խմբովին կհարգեն՝ բոլորը միասին ոտքի ելլելով առանց իրարանցումի, հանդիստ ու անձայն:

Դուրսը, փողոցը, բակը, սրահը կամ դասարանին մեջ, երբ ուսուցիչը աշակերտի մը հետ խոսքի բռնվի, աշակերտը երբեք պետք չէ մոռնա, որ դեմինը իր ուսուցիչն է, ինչքան ալ ուսուցիչը պարզ մեկը ըլլա և ընկերական, նույնիսկ երբ ուսուցիչը կատակներ կընե ու կխոսի մտերմորեն: Այդ պարզությունն ու մտերմությունը կրկնակի պարտք կդնեն աշակերտի վրա ինքզինքը զուսպ ու համեստ պահելու և հարգելու իր ու խոսակցին մեջ եղած բնական սահմանը: Պետք է թողնել ուսուցչին, որ հարցերը ընդհանրապես ան տա. հարցերուն պատասխանել կարճ ու կտրուկ, կեցվածքին, ձայնին, բառերուն և ոգիին մեջ ինքնահոս հարգանքը պետք է տիրե: Երբ աշակերտը ինքը բան մը կհարցնե, և՛ մտեցումը, և՛ արտահայտությունը, և՛ ամեն ինչ պետք է ըլլա համեստ ու քաղաքավարի: Ձեռքերը ետևը կապած կամ ձեռքին մեկը գրպանը դրած կամ ձեռքին բութ մատերը անուխին տակ անցուցած

ուսուցչին դեմ կենալը կա՛մ կոպիտ անկրթություն է, կա՛մ արհամարհանք, որ չներվիր երբեք դպրոցին կյանքին մեջ: Ուսուցչի հետ վիճաբանության մտնել, անփույթ շեշտերով պատասխաններ տալ, նենգ ու երկմիտ բաներ հարցնել, ուսուցչին սխալը բռնելու ձևեր առնել, այն տեսակ բառեր գործածել դասի ատեն, որ ակնարկություն մը ըլլա և դասարանի ծիծաղը շարժե, ո՛չ միայն մեծ վիրավորանք է դպրոցի կարգապահության դեմ և բացարձակապես անհանդուրժելի, այլև նշան մըն է ատիկա աշակերտի ապերախտ ու ցած հոգիին թե՛ իր դպրոցին հանդեպ, թե՛ իր ուսուցչիներուն. և զարմանալի բան չէ, որ այդ տեսակ աշակերտը վարչության կողմե անտանելի նկատվի դպրոցին մեջ: Մեկ անգամ ընդմիշտ պետք է խոր ըմբռնվի, որ ուրիշները հարգելը, ըլլա ծնող թե ուսուցիչ, ոչինչ չունի իր մեջ հակառակ աշակերտի արժանապատվության, հարգանքի պարտադրությունները ստորնացում չեն, ինչպես կոչտ զգացումներով տղաքը շատ անգամ կմտածեն կամ կձևացնեն, ընդհակառակը, հարգանք ցույց տվողի հոգեկան ազնվության ու բարձրության նշան են, ամեն հարգանքի արտահայտություն հարգողին հարգը կբարձրացնե իբրև կիրթ ու ազնիվ, իբրև կարգերը պահող, քաղաքավարի ու վարվիլ գիտցող տղա:

Իրենց մեծերուն հանդեպ դպրոցին մեջ պահանջված երկրորդ կարևոր պարտավորությունը հնազանդությունն է. բացարձակ հնազանդություն ուսուցչին ըսածին ու պատվիրանին, նույնիսկ երբ աշակերտը իր հոգիին մեջ համոզված է, որ ուսուցչին պատվերը անտեղի է, սխալ է, անիրավ է: Նախ՝ անպայման կատարել ուսուցչի հրամանը առանց դիմադրության, իսկ կատարելեն ետքը սառը մտածումով եթե աշակերտը կմնա միշտ իր համոզումին, թե սխալ մը, անիրավություն մըն է իրեն պարտադրված՝ նայելով հարցի տեսակին ու աստիճանին, կրնա դուրսը առանձին խոսիլ կա՛մ այդ ուսուցչին հետ միշտ համեստ, միշտ առանց որևէ վիրավորիչ ակնարկի, միշտ առանց բարկության ձևերու, կա՛մ կրնա դիմել իր դաստիարակ-ուսուցչին եղելությունը բացատրելու և անոր թողնել հարցի կարգադրությունը, կա՛մ բացառիկ ծանր պարագաներուն դիմել ուղղակի տեսչության և հայտնել իր կրած անիրավությունը՝ չիտակության, պարզության և պատկառանքի բոլոր պայմանները հարգելով:

Առանց բացարձակ հնազանդության չի կրնար կատարվիլ ո՛չ մեկ հավաքական ու կազմակերպված գործ, ավելի ևս անկարելի է կրթական գործը, որ հիմնված է կամքերու ենթարկումին վրա: Հնազանդությունը անխուսափելի պայմանն է ամեն կրթական ղեկավար աշխատանքի, հնազանդության թավալումը դաստիարակության թավալում է և ուսուցման: Եվ հնազանդելու վարժված ըլլալը մեծ բարոյական արժեք է: Հնազանդիլ գիտցող մարդիկն են, որ վերջը իրենց հերթին հնազանդություն կպարտադրեն տեսակ մը ինքնին, բնական կերպով. հնազանդեցնելուն եղանակը գիտնալու համար նախ պետք է հնազանդիլ գիտնալ:

Դպրոցական հնազանդությունը հոգիները չի ճմռտեր, աշակերտներուն արժանապատվությունը չի նվաստացներ, այլ կամքերը կկրթե և կամքերու գործակցությունը կդյուրացնե, որով կծառայե բարոյականության թե՛ անհատական և թե՛ հանրային տեսակետներեն:

ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՀԵՏ

Դպրոցին մեջ և դպրոցեն դուրս ամեն դպրոցականի իր ընկերներուն, դասընկերներուն ու խաղընկերներուն հետ հարաբերվելու կանոններուն ու պահանջներուն ամբողջությունը բարոյականություն կանվանենք: Այսինքն աշակերտները իրենց ընկերական հարաբերություններու ատեն պետք է ղեկավարվին բարոյականության գծած օրենքներով, ճիշդ այնպես, ինչպես մեծերու հարաբերությունը մեծերու հետ: Այնպես որ աշակերտական փոխադարձ չփումներուն կանոնները գծել ամբողջական բարոյականության պահանջները կրկնել ըսել է, որոնք բոլորն ալ կձգտին մեկնույն նպատակին՝ սանձել եսականությունը, ինչքան հնար է ուժ տալ մարդոց հոգիին մեջ այլասիրության զգացումին:

Տհաս տարիքի անհատներու համար այդ բարոյական պահանջները կարելի է յուրացնել հետևելով քանի մը գործնական պատվիրաններուն:

Օգնե՛ միշտ ամենուն, ինչով որ կրնաս, ուր որ կրնաս, պիտանի՛ եղիր ընկերներուդ, ձե՛ռք տուր, սորվեցո՛ւր, սի՛րտ տուր, պաշտպան կեցի՛ր տկարներուն, քեզմե փոքրիկներուն, քեզմե թույլերուն. մի՛ թողներ, որ դեռ չբացված ուժերը ճնշեն: Եղի՛ր

միշտ պատրաստակամ ծառայութիւն մը մատուցելու, այնպես ալ մանաւանդ ընկերներուդ: Աչխատե՛ միշտ պիտանի ըլլաս, ինչպես տանդ մէջ, նոյնպես ալ դասարանիդ մէջ, այնպես ալ դպրոցի բակին մէջ և ընկերական ավելի նեղ շրջանակիդ մէջ, և ինչ որ կընես, ըրե՛ սրտանց ու հոժարութեամբ:

Զիջե՛ միշտ ընկերներուդ. խաղի ատեն ամենեն հետաքրքիր դիրքերը միայն քեզի մի՛ պահեր, խաղին բոլոր սանձերը միշտ քու ձեռքդ մի՛ պահեր, ուտելու ատեն ամենեն համով պատառները և ամենեն խոշոր ու հասած պտուղները քեզի մի՛ զատեր, քովդ ուրիշներ ալ կան. վեճի ու խոսակցութեան միջոցին միայն քու ըսածդ անվերջ մի՛ կրկներ, թող որ ուրիշներն ալ վարեն, վայլեն, խոսքի գան ու իրենց կարծիքներն հայտնեն: Ասիկա խոհեմութիւն մըն է և բնական անհրաժեշտութիւն մը, երբ ուժով ու կարողութեամբ քեզմե հասուններուն հետն ես, որովհետև չեն թողներ անոնք քեզի քու կամքիդ, և կյանքն ու խաղը անվերջ կռիվ կդառնա: Իսկ երբ քեզմե տկարներու, անվարժներու և անհամարձակներու հետ ես, զիջելը ազնվութիւն է, օգնել է, բավականութիւն պատճառել է, բարոյական պատվեր է:

Խնայե՛ միշտ ընկերներուդ անձը, ուժը, ունեցածը, անոնց թերի ու ծիծաղելի կողմերը, անոնց չգիտնալն ու չկրնալը: Ծաղրի նյութ մի՛ դարձներ ընկերդ երբեք. սիրտը կծակես, և ալ երբեք քեզի ներել չի կրնար: Մի՛ բամբասեր ուրիշները, այսինքն գեշ ու հիմար պատմութիւններ մի՛ տարածեր ընկերներուդ մասին, սուտ ու կես-սուտ եղածները հանցանք է կրկնելը. նույնիսկ իրավ եղածը, եթե անախորժ բան մըն է, կարիք չունիս կրկնելու և տարածելու: Եվ դատավոր ու մեղադրող մի՛ ըլլար երբեք ընկերներուդ ամեն գործին ու վարմունքին և, մանավանդ, դյուրին-դյուրին մի՛ դատապարտեր. շատ դժվար արվեստ է դատավոր ըլլալը, ան ալ արդար դատելը և բնավ քու պարտավորութիւններուդ մեջը չէ: Եվ ընդհանրապես շատ մի՛ հետաքրքրվիր ուրիշներու մասին եղած պատմութիւններով, քու ուշադրութիւնդ քու պարտավորութիւններուդ և քու ընելիքիդ վրա պահե: Խստապահանջ եղի՛ր քեզմե, բայց ներողամիտ և արդարացնելու տրամադիր՝ դեպի ուրիշները: Ինքդ մի՛ վիրավորեր երբեք ընկերներդ, իսկ քեզի դեմ եղած վիրավորանքներն ալ ընկերոջ մը կողմեն դյուրին մոռցի՛ր ու ներե՛:

Հարգի՛ ընկերներուդ ամենուն ալ անձը, խոսքը, սեփականութիւնը, կարծիքը, տեսակետը և անհատականութիւնը նույն չափով, ինչ չափով որ կուզես հարգված տեսնել քո՛ւ ունեցածդ, քո՛ւ համոզումներդ և քո՛ւ անկախութիւնդ: Եվ ինչքան կրնաս քիչ խոսե քու անձիդ, քու հատկութիւններուդ, քու կարողութիւններուդ ու առավելութիւններուդ մասին: Շարունակ իր մասին խոսիլը, մանավանդ ծածուկ կամ հայտնի գովասանքով խոսիլը հիմարութեան նշան է. կա՛մ պոռոտախոսութիւն է, կա՛մ իբրև պոռոտախոսութիւն կզգացվի, որ միշտ ծաղրելի է և աղնվական բան չէ: Ամենեն բարձր և ամենեն արժեքավոր մարդիկը ամենեն համեստն են միշտ և ամենեն ավելի չեն սիրեր իրենց մասին խոսիլը: Ատոր փոխարեն գնահատե՛ միշտ և արտահայտե՛ անկեղծորեն ուրիշներուն վրա տեսած առավելութիւններդ, անոնց ջնորհքը, տաղանդը, խելքը, գնղեցկութիւնը, ուժը, ճարպիկութիւնը, անվախութիւնը. և՛ սրտանց, և՛ ուրախանալով և անոնց նմանելու և անոնց հավասարելու ներքին բնական տենչանքով: Այդպես ալ քեզի հանդեպ ցույց տրված ամեն օգնութեան, ամեն աջակցութեան, ամեն նպաստի և ամեն պիղումի համար մի՛ մոռնար երբեք հայտնելու քու երախտագիտութիւնդ ու քու չնորհակալութիւնդ:

ՀՍԿԵԼ

Մանկապարտեզի մեջ կարդ ու կանոնի և դաստիարակութեան հիմքը սովորութիւն դարձնելն է: Սովորութիւն դարձնելու և սովորութիւնը ամրացնելու և գործադրումը դյուրացնելու միակ միջոցն ալ հսկելն է:

Կարելի է ըսել, որ փոքրիկներու հավաքական-ընկերական կյանքին միակ իրական սանձը հսկողութիւնն է: Վարժուհիին աչքը միշտ բաց պիտի ըլլա և միշտ փոքրիկներուն վրա, միայն խիստ պարզ ու բնական ձևով մը, որ փոքրիկները չզգան այդ նայվածքին ու այդ մշտական հսկողութեան ճնշումը, որ չբռնադատեն իրենց շարժումները, չկեղծեն ու չծածկեն իրենց վարմունքը: Վարժուհիին ներկա է միշտ, քովերնին կամ հեռուն, բայց այդ ներկայութիւնը մասնավոր կերպով պետք չէ ուշադրութեան առնվի փոքրիկներու կողմեն, մանավանդ իբրև արդելք, իբրև հանդիմանութիւն, իբրև հրաման. վարժուհին կարծես ինքը իր

գործով, պզտիկները իրենց գործով: Վարժուհին ո՛չ միայն պետք չէ շարունակ անոնց մասնավոր ու ազատ խաղերուն միջամտե ու խառնվի, այլ երբ փոքրիկներեն մեկը կամ մյուսը զանազան գանգատներով գա ու վարժուհիի միջամտությունը խնդրե, ինչ որ շատ հաճախ կպատահի, եթե վարժեցնենք, վարժուհին պետք չէ քաջալերե, պետք չէ ընթացք տա, եթե լուրջ բան մը չէ եղածը: Լավ է միշտ, որ փոքրիկները իրենք իրենց գլխուն գգան, իրենց գործերը իրենք կարգադրեն. միայն թե վարժուհիի աչքի տակ, վարժուհին այդ ամենը տեսած պիտի ըլլա, հետևած պիտի ըլլա, առանց շատ զգացնել տալու:

Փոքրիկները ղեկավարողի առաջին ամենեն մեծ և ամենեն ալ դժվար պարտականությունը այդ մչտական զգուշ և չցուցադրված հսկողությունն է: Ատով է, որ ան իր փոքրիկներու հոգիները խորապես կրնա ճանչնալ և օգտակար ըլլալ ամեն մեկուն: Ատով է, որ առաջը կառնվին զրեթե բոլոր անկարգություններուն, կարգ ու կանոնի դեմ մեղանչումներուն և տղայական մեծ ու փոքր չարություններուն: Ինչ օգուտ ունի հանցանքը կատարվելեն ետքը հանդիմանելը, բարկանալը, նույնիսկ պատժելը. խնդիրը հոն է, որ հանցանքը չգործվի, որ փոքրիկները վարժվին հանցանքը չգործելու, անկարգությունը չընելու: Հաճախ բավական է վարժուհիին քիչիկ մը ավելի մոտենալը կամ կարծես պատահաբար ձեռքը դրգռված փոքրիկի գլխուն կամ ուսին դնելը, երբեմն ժպտուն կատակ մը կատարվող դեպքին շուրջ կամ փոքրիկներու ուշադրությունը ուրիշ կողմ դարձնող հարց մը, որ սկսվող անհամությունը, կռիվը կամ անկարգության մը բռնկած ծայրը խկույն մարի, հատնի ու կորսվի:

Ինչ չափով որ փոքրիկներու կրթությամբ զբաղող անձը խոր ու լայն կերպով հսկել գիտե, ինչ աստիճան որ ճիշդ ժամանակին և շատ բնական ու թեթև կերպով մը փոքրիկներու վարմունքին միջամտել ու հարթել գիտե անախորժությունները, և ինչ չափով որ իր միջամտությունը փոքրիկներու կողմեն պարզ ու բնական զգացվի, և ճնշող ու խանգարող չըլլա իր ներկայությունը, այնքան բարձր է այդ անձին մանկավարժական արժեքը, այնքան անիկա իր արվեստին մարդն է:

Փորձված ու կարող վարժուհին կրնա խոսիլ, գրել, ծնողները ընդունիլ կամ խաղալ ու վազվզել և միևնույն ժամանակ հետևիլ

իր փոքրիկներու ըրածին ու թողածին: Աչքերը ամեն անգամ այդ կողմը չեն նայիր, բայց ականջները կգործեն. չարունակ կսրթա, կուզա, և՛ ներան է, և՛ դուրսը, պատշգամը, և՛ ամեն տեղ, և՛ ոչ մեկ տեղ: Եվ առանց ծածկելու, առանց լրտեսական վարպետութեան-ներու ու կեղծիքի, այլ պարզ ու բնական:

Հակել դիտնալը անկարգութեաններուն արմատը կտրել ըսել է, փոքրիկները ուժեղ ու բնական տիսցիպլինի վարժեցնել ըսել է և միևնույն ատեն ինքզինքը իմացնել ըսել է: Ամենեն շատ պոռացող, հանդիմանող և անվերջ անհամութեաններու դեմ գտնվող կրթիչ-ները անոնք են, որ ամենեն ավելի քիչ կհակեն և զիչ կհակեն, որ կանոնավոր և հանդիստ հակել չեն դիտեր:

Այնպես որ իսկապես հանդիմանութեան ու պատժի արժանին իրենք են իրենց այդ մանկավարժական մեծ թերացումին համար և իրավ ալ ամենեն ավելի իրենք են, որ կչաչափրվին, կպրգռվին ու հոգեպես կպատժվին իրենց հակողութեան պակասեն:

ՀԱՆԴԻՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏԻԺ

Բայց մարդս, ինչքան ալ նվիրված ու պարտաճանաչ ըլլա, ամեն տեղ ու ամեն վայրկյան հակել չկրնար, նույն ուշադրութեամբ հակել չկրնար և վերջապես նույնիսկ հակելու միջոցին ալ միշտ կրնան պատահիլ այս կամ այն աստիճանի լուրջ չեղումներ կարգա-պահական ու դաստիարակութեան պահանջներեն:

Ինչքան բարձր է մանկապարտեզը իր կրթական արժեքով, այնքան քիչ են այդ չեղումները և այնքան թեթև ու մանր: Իսկ մանկապարտեզի կրթական արժեքը կախված է իր վարժուհիներու անձնական ու մանկավարժական բարձրութենեն:

Բայց ինչ պատճառով ալ կուզե ըլլա, երբ հանցանք մը գործվի եղած կարգին ու պահանջներուն հանդեպ՝ ամենքն ալ ընդհանրա-պես այն կարծիքի են, որ «լռել» ու «անպատիժ» թողնել կարելի չէ: Հանցանքը պետք է պատժվի, որ օրենքի ուժը ամենքը զգան, և որ փոքրիկը վախնա և ուրիշ անգամ չհամարձակի:

Այս բոլոր դատողութիւնները մեծերու կյանքին կուգան, դա-տարան ու ոստիկանութեան կհոտին. մեծերը հիմա թողնենք մեկ կողմ, ամեն պարագայի փոքրիկներու հետ այդ չէ վարվելու եղա-նակը:

«Լռելը» և «չտեսնելու տալը» շատ անգամ պարտականութիւնն է վարժուհիի, «բայց չտեսնելու տալը», ո՛չ թէ չտեսնելը կամ չտեսնել ուզելը. լռելը, ա՛յո, ու ոչինչ չըսելը, բայց ոչ թէ զգալ չտալը. շատ անգամ տեսնելը ու ոչինչ չըսելը շատ աւելի խոր կրթիչ ազդեցութիւն ունի, քան աւելորդ պոռալ-կանչելը, քան թթու-կծու կամ երկար-բարակ հանդիմանութիւնները: Հանդիմանութիւն ուտող երեխան, լա թէ չլա, միշտ իր մեղքը քաւած կ'համարէ և, ընդհակառակը, տնսակ մը ինքը կարծես պահանջատեր կդառնա, երբ մանաւանդ իր կարծիքով հանդիմանութիւնը պետք եղածեն աւելի ուժեղ էր: Եվ այդ մասին ալ չի մտածեր:

Իսկ երբ կտեսնե, որ տեսար իր անկարգութիւնը, բայց ոչինչ չըսիր, սխալ մը գործած ըլլալու զգացումը կմնա իր հոգիին մեջ, և ինչքան ազնիվ է փոքրիկի հոգին, այնքան աւելի ուժեղ կերպով ինքն իր ըրածին դեմ կխղճահարի և վարժուհիին դեմ իր դիրքը բարձրացնելու ճիգեր կընե, ստիպված է մտածելու իր ըրածի մասին:

Մեղմ և սիրով ու խղճի միջոցով կատարված հանդիմանութիւնները աւելի ուժ ունին, քան հաճախակի ու աղմկոտ հանդիմանութիւնները: Եվ ինչքան քիչ ու բացառիկ ըլլան, այնքան ազդեցիկ կըլլան: Շատ հանդիմանելը աներես կդարձնե, կվարժվին:

Դալով պատիժներուն՝ արժեք ունին միայն բնական պատիժները, այսինքն տղու սխալանքին անմիջական բնական հետևանքը եղող պատիժները. կխանգարե իր խաղի ընկերները՝ կըսես, որ խաղն դուրս ելլա, բան մը պատռեր է կամ մնասեր՝ կպահանջես, որ փոխարինե, սուտ կխոսի՝ զգալ կուտաս, որ դադրած ես իր ըսածներուն հավատալե:

Արվեստական պատիժները, այսինքն չարիքի մը փոխարեն իրեն ուրիշ չարութիւն մը ընելը՝ հացե զրկել, պտույտե զրկել, անպատվել, հայհոյել, զարնել, հանցանք է նույնիսկ կենդանիներու հանդեպ, ուր մնաց մարդու հանդեպ, ան ալ երեխայի:

Այս վայրագութիւնները կրթական իսկապես չարիքներ են, որովհետև ո՛չ թէ հոգին կբարձրացնեն, այլ ընդհակառակը, կկոշտացնեն հոգին ու կստորնացնեն:

Վախ ու սարսափ ազդելով, ուժ ու բռնութիւն գործածելով կարելի է անսիրտ մարդիկ առաջացնել, բայց ազնիվ բան մը ստեղծել կարելի չէ:

Մանկապարտեզի կարգին ու պահանջներին չշեղելու համար կմնան միայն հետևյալ միջոցները.

1) Ջընել անկարգություն, որովհետև այդպես վարժված են, մեքենաբար, սովորությամբ, արյան մեջ է մտած:

2) Իր վարժուհիի խոսքը հարգած ըլլալու համար, անոր սիրտը չկոտրելու համար, իր վարժուհին սիրելու համար, իր վարկը վարժուհիին աչքին չձգելու համար:

3) Իր դպրոցականի պարտավորություններուն հակառակ վարժված չըլլալու համար, իր սիրելի հաստատության կանոններուն և պահանջներուն դեմ վարված չըլլալու համար:

4) Իր ընկերներու իրավունքին, զգացումին դեմ վարված չըլլալու համար:

5) Իր ծնողներուն անախորժություն չպատճառելու համար:

Ատոնք շատ ավելի ուժեղ զենքեր են ու արգելքներ, քան սովորաբար կկարծվի:

Իսկ երբ սխալ մը գործված է, վարժուհին, նայելով գործողի անձին, սովորական վարմունքին.

1) Կրնա չտեսնելու տալ, իբրև պատահական սխալ:

2) Կրնա չտեսնելու տալ, բայց կհետևի ու կմտածե՝ ինչ ընե, որ չի կրկնվի, ինչ միջոցի դիմե:

3) Տղուն զգալ կուտա, որ տեսավ, բայց ոչինչ չըսեր:

4) Զգալ կուտա առանց խոսքի, որ ինքը շատ դժգոհ մնաց:

5) Կրնա որևէ կերպ միջամտել ու որևէ անհրաժեշտ կարգադրություն մը ընել, սխալը չտևելու համար, առանց որևէ հանդիմանության:

6) Դեպքին տեղը ոչինչ չըսեր, բայց վերջը մեկ կողմ կքաշե և կհայտնե իր դժգոհությունը առանց խոշոր խոսքերու, բնական վարմունքով:

7) Շատ բացառիկ պարագաներուն կկանչե նորին առանձին և ավելի խիստ ձևով ու պաշտոնական կերպով կըսե իր ըսելիքը:

8) Շատ քիչ պատահող ու լուրջ դեպքերուատեն կխորհըրդակցի տեսչուհիին հետ, և եթե հարկ եղավ, կկանչվի նաև ծնողը՝ խորհրդակցելու, թե ինչպես չտևին փոքրիկի թերին կամ գնչ կողմը:

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԿԱՊՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ

Ա. ԴԱՍԵՐՈՒ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Ի. ՏԱՐՎԱՆ ՍԿԻԶԲԸ

Դասավանդման առաջին պայմանը դասերու խնամքով ու մանրամասն նախապատրաստութիւնն է: Եվ այդ պատրաստութիւնը երեք աստիճան ունի, երեք ժամանակ:

Առաջին պատրաստութիւնը տարվան սկիզբն է, երբ ամեն առարկայի ուսուցիչ ամեն դասարանի համար հատկապես իր դպրոցի պայմանները աչքի առաջ ունենալով կգծե ամբողջ այդ տարվան իր աշխատանքին ընդհանուր ծրագիրը: Դպրոցական ծրագիր անշուշտ կա, նույնիսկ հաճախ այդ ծրագրի համեմատ պատրաստված դասագիրք մը, բայց և այնպես անհրաժեշտ է, որ ուսուցիչը, դոյութիւն ունեցող իրական պայմանները աչքի առաջ ունենալով, ինչպես և իր ըմբռնումներեն ու գործը վարելու եղանակեն առաջնորդվելով, բաժնե ծրագիրն ու դասագիրքը որոշ հատվածներու, նշանակե հապավելիք ու ավելցնելիք կտորները և այդ բոլորը վերածե դասական ամբողջութիւններու և ճշդե մոտավորապես ամեն մեկ դասական ամբողջության հատկացնելիք ժամանակը, որպեսզի ծրագիրը կիսատ չմնա տարվան վերջը, կամ տարին չլրացած նյութը չսպառի, կամ հարկադրված չըլլա ավելի կարևոր մասերու վրայեն թեթևակի անցնելու՝ ավելի երկրորդական մասերուն վրա պետք եղածին ավելի համեցած ըլլալուն համար:

Անհրաժեշտ է, որ ամեն ուսուցիչ միշտ պարզ կերպով աչքին դեմը ունենա իր ամբողջ տարվան ընելիքը, ինչ որ արդեն կատարված է և ինչ որ դեռ պիտի կատարվի: Եվ գործը հաստատ բռնելու համար տարին պետք է հաշվել երեսուներեք աշխատանքի չաբաթ, այսինքն դպրոցական 198 օր. ո՛չ ավելի. մնացածը արձակուրդ է, տոներ, կիրակի և քանի մը հատ աննախատեսելի կորսված օրեր:

II. ԱՄԵՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Ուսուցչի երկրորդ պատրաստութիւնը տեղի կունենայ յուրաքանչիւր դասական ամբողջութիւն սկսելն առաջ շատ ավելի մանրամասն, դասավանդման բոլոր կողմերը աչքի առաջ ունենալով. կղատուն իր բացատրելիք մասերը, միասին հանվելիք եզրակացութիւնները, քանի պահերու մեջ տղմեցնելը, իրար հաջորդող պահերուն ամեն մեկուն մեջ կատարվելիք աշխատանքը, կորոշ դուրսի տալիք մասերը, կատարվելիք փորձերը, դրվելիք չարադրութեան նյութերը: Որպեսզի գործադրութեան միջոցին միշտ հստակ գիտնայ ամեն դասին, թե ի՞նչ է ընել ուզածը, ինչը արդեն ըրած է և ինչն է, որ դեռ կմնայ ընելիք. պատահականութեան ու մոռացման ու չփոթութեան պետք չէ տեղ տրվի. ամեն ինչ որոշ պիտի ըլլա, և ատոր համար ալ աղեկ է, որ գրավոր կերպով նշված ըլլա, նույնիսկ եթե հարկ ըլլա բաներ մը փոխել, լրացնել կամ սրբագրել, պետք է փոփոխութիւնն ալ կատարել կշռելով ու մտածելով և ո՛չ թե վայրկյանի բերած տպավորութեան տակ: Նոր ու անփորձ ուսուցիչները անշուշտ ավելի մանրամասն և ավելի հանգամանորեն ստիպված են մտածելու ու շատ բան գրի առնելու, որ սակայն մեծ օգուտներ տվող աշխատանք մըն է և կատարելագործում: Բայց ամենաւիորձված ուսուցիչներն անգամ պետք չէ ինքզինքնին ազատ համարեն դասական ամբողջութեան մը այդ նիշ առնված նախապատրաստութենեն:

III. ԴԱՍԻՆ ՆԱԽՈՐԴ ԻՐԻԿՈՒՆԸ

Ուսուցչի երրորդ պատրաստութիւնը անմիջապես ամեն դասի նախորդ իրիկունն է: Ամեն ուսուցիչ իր հաջորդ օրվան տալիք դասերուն վրա պետք է անշուշտ անգամ մը մտածե, ճշդե մտքին մեջ դասի ամբողջ հաջորդականութիւնը, նշանակե տալիք ամբողջական խնդիրներուն համարները, որոշե վարժութիւնները, բացատրվելիք բառերն ու հարցերը, կատարվելիք, պատմվելիք, սրբագրվելիք կտորները և դուրսը կատարվելիք պարտավորութիւնները:

Ասիկա ո՛չ միայն ուսուցչի մը պարտականութիւնն է իր աշակերտներուն հանդէպ, իր դպրոցին ու իր վարչութեան հանդէպ, այլ ի՛ր իսկ անձին հանդէպ: Իր հանգիստը, իր դիւրութիւնը, իր հաճոյքն ու վայելքը մեծ չափերով կախված է այդ նախապատրաստութիւններեն և հատկապես վերջինեն: Առով ուսուցիչը ձեռք կբերե ինքնավստահութիւն, որովհետև գիտե իր ընելիքը, գիտե իր ուզածը, և ոչինչ չկա իր դեմը անորոշ ու հանկարծակի: Վստահութիւնն ետքը կավելնա հետաքրքրութիւնը: Երբ մարդս բանի մը վրա լուրջ ու երկար խորհած է ամեն կողմեն ու մանրամասնութիւնները աչքի առաջ ունենալով, չի կրնար չհետաքրքրվիլ անոր գործադրութեամբը, թե ինչ աստիճան ճիշդ ու հաջող էին իր նախատեսութիւնները, ինչը իրականացավ, և ո՞ւր դժվարութեան հանդիպեցավ և ինչո՞ւ: Իր հաջողութիւնը իբրև չնորհք կզգա, իբրև խելացիութիւն և իբրև ձեռք բերված վարպետութիւն, իսկ ասոնք բաներ են, որ ուրախութիւն կբերեն և կբարձրացնեն ինքնագիտակցութիւնը: Իր դասը լրիվ պատրաստած ուսուցիչը անհամբեր դասը սկսելու զանգին կսպասե. բավականութիւն մըն է իրեն համար դասարան մտնելը, և ատոր համեմատ ալ կվառին տղոց աչքերը, դասարանի մեջ ըսված ամեն բառ, ամեն հարց, ամեն չարժում իմաստ կստանա և գրավչութիւն, և չեն զգար, թե ինչ արագութեամբ ժամը կսահի և ճիշտ զանգի հարվածին հետ այդ օրվան ծրագրվածն ալ կլրանա:

Մինչդեռ դասը չպատրաստած ուսուցիչը միշտ սեղմված հոգիով կմտնե դասարան, եթե չըսեմ վախով. միշտ անակնկալի մը սպասումը ունի, տղոց հարցերուն տակը գեչ հետին մտքեր կնշմարե, իր պատասխաններն ալ կա՛մ շատ հախուռն կըլլան, կա՛մ լավ չմտածված, կա՛մ վարանոտ. միշտ կարիք ունի դասագրքին նայելու դասն ալ զարմանալի կերպով կերկարի, կարծես վերջանալիք չունի. կարդացվելիք կամ պատմվելիք նյութը ժամանակեն առաջ կհատնի, և դասին վերջին մասը չգիտե ինչով լրացնե. կլեցվի հաճախ դատարկաբանութեամբ, չմտածված բացատրութիւններով, անտեղի կրկնութիւններով, որոնք իսկույն կզգացվին աշակերտներուն կողմե իբրև պարտութիւն և չափազանց կնպաստեն ուսուցչի վարկը նվաստացնելուն: Եվ շատ հաճախ ծրագիրն ու գործադրութիւնը զույգ չեն քալեր. կա՛մ դասագիրքը կսպառի, ու

ծրագիրը կավարտվի տարին չլրացած, կամ ընդհակառակը, տարին վերջանալու կմիտուն, իսկ դեռ չեն անցած ծրագրի կեսն անգամ:

Բ. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՐԵՔ ԲՆԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Ամեն դասական ամբողջության ավանդում բնական կերպով երեք աստիճանե կանցնի: Նախ՝ պիտի ստանա աշակերտը նոր նյութը, երկրորդ՝ ստացված նյութը զանազան տեսակի կրկնություններով պետք է յուրացնի, և երրորդ՝ ստացված նորը պետք է կապվի այդ առարկային մասին կամ նման առարկաներու մասին իր ունեցած տեղեկություններուն ու գիտության հետ, այսինքն դասական ամեն ամբողջության ավանդում կանցնի ստացման, յուրացման և խորացման աստիճաններեն:

I. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՍՏԱՑՄԱՆ

Ստացումը երկու որոշ մաս ունի. նախապատրաստող կարճ աշխատանք մը, որուն նպատակն է տղոց մտքերը կեդրոնացնել ավանդվելիք նյութին վրա և շարժել անոնց հետաքրքրությունը, այլև տղոց վերահիշել տալ այդ նյութի մասին իրենց արդեն ունեցած տեղեկությունները, որոնք և կպատռնան տեսակ մը միջնորդ կապ նորի ընդունելության: Անկեետքը կուգա բուն նորի ստացումը:

Այդ նախապատրաստող աշխատանքին մասերը կկազմեն ուրեմն.

1. Ամենեն առաջ՝ վերնագիր տալը. ամեն նոր ամբողջություն պետք է ունենա իր վերնագիրը, այսինքն մեկ-երկու բառով և շատ որոշ կերպով պիտի ըսեք, թե ինչ է ըլլալու իրենց նոր սովելիք նյութը: Առաջին վայրկյաններն տղաքը պետք է գիտնան, թե ի՞նչ գործի վրա են, ինչի՞ մասին է խոսելու: Մեծ սխալ մըն է, երբ ուսուցիչը կուգա ու կսկսի խոսիլ կամ զանազան հարցեր կուտա, և տղաքը չգիտեն, թե ինչո՞ւ համար է, ուսուցիչը ուր կուղղե իր գնկը. տղոց մտքերը պատահականության կհետևի կամ ենթադրություններու, չեն կրնար կեդրոնանալ, չգիտեն հարցերուն որ կողմեն մոտենան, զարմանք ու դժգոհություն կունենան հոգիներուն մեջ, և մտքերը կշեղին տարբեր ուղղություններով, և այդ պատճառով ալ հաճախ կստացվին շատ տարօրինակ պատասխաններ:

Ուսուցչի առաջին ընելիքը, բերանը բանալուն պես, վերնագիրը տալն է, և այդ վերնագիրը պետք չէ ըլլա ձևական ու ընդհանուր խոսքով, օրինակ՝ «այսօր պիտի խոսինք կովու մասին», այլ կարելիին չափ որոշ ու սահմանագծված՝ «կովու կենդանական կազմի մասին», «կովու՝ մարդուս տված օգուտներու մասին», «առւտուրի մէջ կովու խաղցած դերի մասին»: Ինչքան հստակ ճշդված ըլլա վերնագիրը, այնքան մտքերը ճիշդ ուղղութիւնը կըռնեն և հաջորդող հարցերուն բնական ու պիտանի կերպը կդառնան:

Եվ վերնագիրը տալը անհրաժեշտ է ո՛չ միայն դասական ամբողջութեան մը սկիզբը, իբրև ընդհանուր վերնագիր, այլև ամեն դասի սկիզբը, իբրև ենթավերնագիր, թե իրենց արդեն ծանօթ նյութի ո՞ր մասը, ո՞ր կողմը, ո՞ր վարժութիւնը պետք է ըլլա իրենց այդ պահուն աշխատանքը: Նույնիսկ դասի մը միջոցին, երբ աշխատութեան մեկ ձևեն մեկ ուրիշ ձևին կանցնվի, լավ է միշտ այդ անցումը բացահայտ կերպով ընդգծելը: Ասիկա կնշանակե գործի մը, մտածումի մը, աշխատանքի մը բռնած ճամբան մշտապես լուսաւորել և թույլ չտալ, որ մութի մեջ քալեն:

2. Վերնագիրը ըսելեն և փոքր դասարաններուն մեջ մեկինմյուսին անգամ մը» երկու կրկնել տալեն ետքը ընդհանրապես կանցնվի քրքրող ու քննող հարցերու, նախապատրաստական խոսակցութեան: Վերնագրի մեջ ամփոփված բառերեն առաջնորդվելով՝ հարցեր կդրվին թափ տալու համար այդ խնդրի շուրջ տղոց արդեն տեսածն ու գիտցածը, սխալ, ճիշդ՝ միևնույն է, ինչ որ գիտեն: Ուսուցիչը ոչինչ սրբագրելու չէ, ոչ մեկ բացատրութեան տալու չէ. խոսողը, արտահայտողը միայն տղաքն են. ուսուցիչը տղոց մտքին ու արտահայտութեան դրդում տվողն է միայն: Տղոց պատասխանները կրնան իրար հակասել, իրարու չկապվիլ, խնդալու առիթ տալ. ոչինչ, այդ բոլորը կլսվի. միայն պետք չէ թույլատրվի որևէ չեղում վերնագրեն և անկե անմիջապես բղխող հարցերեն: Վարժ ուսուցիչը իր հարցերը և մտքերու այս քրքրումը կրնա այնպես տանիլ, որ հետագա պատմելիքի կամ բացատրելիքի համար թե՛ մեծ հետաքրքրութիւն կառաջացնե և թե՛ մեջտեղ կհանե խնդրին բոլոր ծածուկ ու հիմնական կողմերը:

Այս նախապատրաստող խոսակցութիւնը, որ փոքրիկներու

կարգերուն մեջ դրեթէ անխուսափելի մաս մըն է, ամեն նոր ամբողջութեան սկիզբը և երբեմն կրնա բաւական ժամանակ խլել, 5-10 վայրկեան, միջին կարգերուն, մեջեմեջ որոշ առարկաներու և որոշ ամբողջութիւններու սկիզբը միայն կկատարվի և ավելի արագ, որովհետև քանի մը տարիներու ընդհանուր աշխատանքով աշակերտներուն դիտացածն ու մտածելակերպը հասած է որոշ հավատարեցման մը, և որուն վիճակը շատ լավ ծանօթ է, իսկ դպրոցական վերջին տարիներուն, երբ քիչ-քիչ դասատուվութիւնը կվերածվի դասախոսութեան, այս կարգի նախապատրաստական աշխատանքի մը բոլորովին տեղ ու կարիք չի մնար առացման աստիճանի առեն. ուսուցիչը կուտա իր նոր նյութի վերնագիրը և անմիջապես կանցնի բացատրութեան:

3. Փոքրիկներուն հետ, երբեմն նաև միջնակ կարգերուն մեջ տեղի կունենա նաև ուրիշ տեսակի նախապատրաստական հարց ու պատասխան մը, կանխող խոսակցութիւն մը: Իր հաջորդ պատմելիքին մեջ «վաշխառու» բառը կա, օրինակ, և «պատզարակ». ուսուցիչը չուզեր, որ իր պատմելու միջոցին այդ բառերը բացատրելու ստիպվի և պատմութեան ամբողջականութիւնը վնասե. բայց բացատրել պետք է այդ բառերը, որոնք տղոց գլուխն մեջ, գիտե ուսուցիչը, որ հատակ չեն. կդիմի ահա՛ իր բուն դասը սկսելեն առաջ այդ կանխող խոսակցութեան: «Գիտե՞ք ինչ բան է պատզարակը». «Ո՞վ կրնա ըսել, ո՞ր մարդուն կըսենք վաշխառու»: Կամ տղոց պատասխանը, կրացնի ինքը, եթե հարկ է՝ կրնա նկարել կամ նկարը ցույց տալ, և երբ այդ արդիւնք եղող զաղափարները պարզված են, կանցնի իր բուն դասին:

II. ԲՈՒՆ ՍՏԱՑՈՒՄԸ

Այս հնարաւոր նախապատրաստական աշխատանքներեն ետքն է, որ կուգա դասին նոր նյութը: Եվ նոր նյութը տալու երեք հիմնական ձև կա:

1. Առաջին ձևը նորեն խոսակցական հարց ու պատասխանն է ամբողջ դասարանի մասնակցութեամբ. միայն թե դիտել, դասել: Այս խոսակցութիւնը հիմնապես տարբեր է նախորդ նախապատրաստական աշխատանքեն: Նախորդի մեջ թե՛ հարցերը և

թե՛ պատասխանները համեմատաբար ավելի պատահական են և տեսակ մը աշակերտներու դիտցածեն ու ըսածեն կղեկավարվին: Իսկ այս բուն ստացման հարց ու պատասխանները ավանդվելիք նյութի ներքին անհրաժեշտութենեն կբղխին և ուսուցչի կողմեն նախապես մտածված ու ճշդված են, նույնիսկ հաճախ հաջորդականությունը գծված: Նախապատրաստական խոսակցության մեջ ուսուցչի մեկնությունը և լրացումը չկար, իսկ այս ստացման հարց ու պատասխանին մեջ ուսուցիչը խստորեն կառարկե ամեն սխալ ու անճիշդ պատասխանի, ճիշդն ու խելացին կընդգծե, պակասները ինքը կլրացնե և նոր բացատրություններ կուտա: Եվ ամենեն ետքն ալ այս ընդհանուր աշխատանքով ձեռք բերվածը իբրև ամփոփ, կապակից ու զեղեցիկ ամբողջություն մը ինքը կպատմե տղոց առջև:

Ստացման այս խոսակցական ձևը շատ ժամանակ կխլե, բայց վերին աստիճանի կենդանի է, միտք հասունցնող, տրամաբանության վարժեցնող և երևույթներու պատճառականությունը ըմբռնել տվող. տղոց մասնակցությունը կրավորական չէ. ասիկա իսկապես նոր դասը ստանալ չէ, այլ նոր դասը հանել, նոր նյութը դիտել, դատել, ենթադրել ու եզրակացնել. և ճիշդ ասոր համար ալ մեծ է իր մանկավարժական արժեքը բոլոր տարիքներու համար, երբ նոր ավանդվելիքը շատ մը կողմերով բավականաչափ ծանոթ է տղոց կյանքին ու նախորդ սորվածներեն, և մնացածը դիտելն ու եզրակացնելը մեծ դժվարություն մը չներկայացներ:

2. Ինչ նյութ որ հնար է տղոց միջոցով, տղոց դատելով և դիտողությամբ ստանալը՝ պետք է ավանդվի այդ ձևով: Ուր որ կարելի չէ ստացման այս ձևը գործածելը, ինչպես պատմություններն են, օրինակ, որ ո՛չ կրնան դիտել, ո՛չ ալ ուսումնասիրել, մինչև որ իրենց չպատմվի նախապես կամ այն ամեն բաները, որոնց բացատրությունները գտնելն ու հնարելը տղոց ուժեն վեր է կամ շատ ժամանակ կխլե ու շատ խարխաբումներ կառաջացնե, այդ ամենուն ավանդումը կկատարվի ստացման երկրորդ ձևով. ուսուցիչն է, որ ամբողջը կոկիկ, կապակից ու հստակ կպատմե, կնկարագրե, կբացատրե, կփորձե ու կապացուցե դասարանին առջև, տղաքը լուռ լսողի ու ստացողի դերին մեջն են իրապես:

Այդ պատմություններու խմբագրումը մասնավոր խնամքով ու կենդանի լեզվով, մասերու մտածված կապակցությամբ պիտի

ըլլա ուսուցչի մասնաւոր հոգածութեան առարկան. ո՛չ մեկ ավելորդ խոսք ու հատուած, ո՛չ մեկ պիղում, ո՛չ մեկ անճիշդ ու անփութի դարձուածք: Ուսուցիչը իր այդ իբրև նոր դաս պատմածներուն այնքան խնամք ու մշակում պիտի հատկացնէ, ինչպես բարեխիղճ հեղինակ մը իր գրած երկասիրութեան: Հստակ, կտրուկ, ճիշդ ու գեղեցիկ արտահայտութիւնը հիմնական պայման է ստացման պատմուածքներուն:

Նույնը նաև եթե պատմութիւն չէ, այլ բացատրութիւն, մեկնութիւն, գիտական նկարագրութիւն, օրենքի մը ապացուցումը, փորձը, եղրակացումը:

Նախորդ հատկութիւններու վրա կավելնա գիտական խիստ հաջորդականութեան և բծախնդիր արտահայտութեան պահանջը: Եթե այդ բացատրական ու գիտական նյութը երկար փորձ, կողմնակի լրացումներ ու խոսակցական մասեր ունի իր մեջը, անհրաժեշտ է ամբողջը ավարտելեն ետքը ուսուցիչը անգամ մը նորեն վերապատմե ամփոփ ու կտրուկ ձևով՝ դասի ստացումը լրացած նկատելու համար:

3. Նյութի խմբական մշակում ուսուցչի ղեկավարութեամբ կամ նյութի պատրաստ ավանդում ուսուցչի կողմեն. այս երկուքն են դասավանդման առաջին աստիճանի երկու հիմնական ձևերը: Կա նվազ արժեքով երրորդ ձև մըն ալ, որ է դասագրքեն կամ այլ գրքի մը վրայեն ընթերցումը դասարանին առջև իբրև նոր դաս. երբեմն ալ աշակերտներեն մեկուն-մյուսին կարդացնել տալը դասագրքին վրա իբրև նոր դաս: Բացառիկ պարագաներու մեջ լեզվի որոշ դասերուն կրնա այս ձևն ալ իր օգտակարութիւնն ունենալ, բայց ընդհանուր առումով թերի ձև է, որովհետև կենդանի խոսքին փոխարինել չի կրնար կարդալը կամ կարդալ տալը, որ տղաքը հետևին: Բոլորովին տարբեր է այն խոսվածքն ու պատմվածքը, ուր նայվածքները իրարու մեջ կկսրին, և ուր խոսքը անմիջապես հոգիեն կբղխի և ո՛չ թե թղթեն: Ընթերցումը հիմնական ձևն է ինքնակրթութեան և հաճախ նաև անհատական դասավանդութեան:

Ո՛չ թե ստացման առանձին ձև, այլ ուղղակի ձախորդ հարկադրանք մըն է, երբ ուսուցիչը դասագրքի չգոյութեան կամ այլ պատճառով մը նոր դասը ո՛չ թե կպատմե կամ կբացատրե, այլ կթելադրե տղոց, որ տղաքը դուրսը կարդան ու սորվին: Պատմել

ու ետքը թելադրել անչուշտ ավելի կյանք ունի մեջը, բայց չափազանց շատ ժամանակ կխլե, իսկ առանց պատմելու ուղղակի թելադրելը միայն Հասուն տղոց կարելի է, փոքրերուն՝ երբեք, և դասավանդման ամենեն չոր ու ձանձրալի ձևն է:

III. ՅՈՒՐԱՅՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Նոր ամբողջության լրիվ պատմելեն, բացատրելեն և ամփոփելեն անմիջապես ետքն է, որ կսկսի դասավանդության երկրորդ աստիճանը, ստացված նոր նյութի յուրացումը, սեփականացումը, մարսումը, որ կկատարվի զանազան ձևի կրկնություններով:

Նախ՝ անփոփոխ կրկնությունները, որոնք երեք տեսակ են. ա) Անմիջական կրկնություն. ուսուցչի պատմելեն կամ բացատրելեն ետքը տղոցմեն մեկը կամ մյուսը բերնե բերան մաս-մաս կկրկնեն ուսուցչի ըսածը կարելիին չափ նույնությամբ և կարելիին չափ ճիշդ ու լրիվ ուսուցչի հսկողության տակ: բ) Սերտողություն-կրկնողությունը. աշակերտները դասագրքին վրա, տետրակին նայելով կամ հիշողությամբ իրար օգնելով կսերտեն, կկրկնեն իրենց նոր սորված նյութը դուրսը, տունը, առանց ուսուցչի: գ) Քննական կրկնությունը. հաջորդ դասին ուսուցիչը նորեն ըսել կուտա իր նախորդ դասին ավանդածը՝ ստուգելու համար, որ տղաքը ճիշդ ու գեղեցիկ յուրացուցած են արդեն նոր նյութը:

Այս գրեթե միշտ միաձև տեղի ունեցող անփոփոխ կրկնություններուն կմիանան նաև ավելի կամ նվազ անհրաժեշտությամբ սքողված կամ փոփոխված կրկնությունները: Կրնանք որոշել քանի մը խումբեր, իբրև առանձին տեսակներ:

1. Սեղմած, կրճատած, միայն էականը առած կրկնություն կամ հակառակը, քիչ մը ավելի ընդլայնած, մեկ-երկու օրինակով ու հավելյալ նկարագրություններով կենդանացված կրկնություններ:

2. Պատմել ու բացատրել նույն օրենքն ու երևույթը կամ դեպքը որոշ պայման մը դեղչելով կամ նոր պայման մը ավելցնելով կամ դիրքերը փոխելով, դերերը կամ դերակատարները որոշ փոփոխության ենթարկելով:

3. Պատմել, բացատրել ու նկարագրել նոր նյութ մը բոլորովին

սորվածին նմանելով, այսինքն հետևողութեամբ, ընդօրինակելով մտածման և հաջորդականութեան եղանակը:

4. Ամեն տեսակի խնդիրներ, փորձեր ու վարժութիւններ ընել տալ, օրինակներ փնտրել տալ նոր սորված օրենքն ու կանոնը լիապես յուրացնել տալու համար:

IV. ԽՈՐԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Նոր դասական ամբողջութեան լիակատար յուրացումեն ետքն է, որ այդ կրկնութիւններուն կհաջորդեն երրորդ աստիճանի աշխատանքները՝ խորացման աշխատանքները, որոնց նպատակն է նոր յուրացուցած նյութը դարձնել իր հոգեկան պաշարին մնջ ապրող ու անբաժան մասը: Նոր ստացածը պետք չէ մնա մտքի ցանցին մնջ իրեն համար առանձին ու մեկուսի, այլ բազմաթիվ կապերով պետք է օղակվի իր մյուս գիտցածներուն թե՛ նույն նյութի մասին, թե՛ նման նյութերու և թե՛ ընդհանրապես, որ ավելի պարզ ու հասկնալի դառնա ինքը նոր ստացածը և որ իր բերած նոր լույսով նպաստե մտքի նախորդ ստացումներու ավելի պայծառացմանը և որ այդ բոլորը, չփվելով ու ցանցվելով իրար, բոլորի ալ ըմբռնումը դառնա ավելի խոր ու հաստատ, և դոյանա իրարու ձուլված ամբողջութիւն մը և ընդհանուր աշխարհայեցք:

Խորացման այս աշխատանքներն ալ կարելի է խմբել երեք տեսակի:

1. Կապել նույն առարկայի, նույն երևույթի, նույն անձի մասին նախորդ դասերուն ու կյանքեն առած մեր ուրիշ գիտցածները, ինչպես և ուրիշ առարկաներու դասերու ատեն ձեռք բերած մեր տեղեկութիւնները իրարու, երբ ատոնք առնչութիւններ ունին փոխադարձաբար:

2. Նոր սորվածը համեմատել ուրիշ նման նյութերու, կանոններու, դեպքերու և եղելութիւններու հետ, հանել ընդհանուր եղող գծերը, ընդգծել իրարմե տարբեր եղող հատկութիւնները ու կողմերը:

3. Տեղավորել նոր սորվածը գիտական չղթային մնջ իրեն պատկանող տեղը՝ ընդգծելով պատճառական կապերը, կազմել տալ ցանկերը, տոհմային ճյուղագրութիւններ, աշխարհագրական համադրող տախտակներ, խմբել պատմական օրենք մը հաստատող

օրինակներ, ժամանակագրական ցուցակներ, տնտեսական քարտեզներ, լեզվական ու գրական առնչութիւններու ճյուղանկարներ:

4. Լուծել տալ խնդիրներ, կատարել վարժութիւններ ու փորձեր, ուր նորը խառնված է հին գիտցածներուն, այսինքն ընդհանուր համադիր մարզանքներ:

5. Այս աստիճանի բոլոր մարզանքները խմբական են, հիմնված աշակերտներու անմիջական մասնակցության վրա: Մեկ մասը կրնան դուրսը առանձին ալ պատրաստել, բայց վերջը պետք է ենթարկվին դասարանի վերաքննութեան:

Գ. ԴԱՍԻՆ ՄԱՍԵՐԸ

Դասական ամբողջութիւն մը կրնա այնքան փոքր ըլլալ, որ անոր երեք աստիճաններն ալ անցնինք մեկ հատիկ պահի մը միջոցին: Սովորաբար դասական ամբողջութիւն մը երկու-երեք պահերու ընթացքին կլրանա, բայց կան և դասական ամբողջութիւններ, որոնց ավանդման ամեն մեկ աստիճանը մեկէ ավելի պահեր կպահանջէ: Ընդհանուր առումով երկու-երեք պահերու ընթացքին լրանալու կճգտին տարրական շրջանի դասական ամբողջութիւնները: Բարձր նախակրթարանի դասական ամբողջութիւնը ավելի երկար է. միջին հաշվով երեք-չորս պահ կպահանջէն: Լսարանական դասական ամբողջութիւնները ավելի ևս երկար են, չորս-հինգ պահ և ավելի. անկարելի չեն միջին ու վերի շրջաններուն ալ կարճ ամբողջութիւնները երկու կամ երեք պահով և բացառիկ կերպով նույնիսկ մեկ պահու մեջ լրացող դասական ամբողջութիւններ. բայց ընդհանրապես նյութերը ավելի երկարաշունչ են ինքնին և ավելի շատ դուրսի աշխատանք, կրկնութիւն, վարժութիւն ու խնդիրներ ու ամփոփում կպահանջեն բազմակողմանի:

Դասական ամբողջութեան մը ավանդման ընթացքին բնական կերպով ուսուցիչը կջանա դասին աստիճանները հարմարցնե դասի պահուն. հնար եղածին չափ ամեն մեկ աստիճանին լրիվ պահ մը կամ լրիվ երկու ու երեք պահ, եթե շատ խնդիրներ ու վարժութիւններ կան: Վարի կարգերուն մեջ ավելի հնարավոր է գործը այնպես տանիլ, որ այս ամեն մեկ աստիճանի բնական հատումը պահվի

կարելի եղածին չափ հաճախ: Բայց աշխատանքներու բնական ու գործնական ընթացքը թույլ չի տար ընդհանրապես, որ ավանդման աստիճաններուն ու ժամանակի պահերուն հատումները իրարու զուգահեռ երթան: Մնջ կուգա հինի ու նորի տարբերությունը, այսինքն ամեն աստիճան չի լրանար ամբողջապես իր սկսած պահուն, այլ այդ աստիճանի վարժություններուն, կրկնություններուն և մանավանդ ստուգումներուն ու սրբագրություններուն մեկ մասը կմնա ու կկատարվի հաջորդ պահուն, որով նոր պահը կունենա հին աստիճանին լրացումը եղող մաս մը և հաջորդ աստիճանին պատկանող նոր աշխատանքներ:

«Հին դասի» ու «նոր դասի» իրարու կցումը շատ սովորական երևույթ է, և բնական կերպով նախ կկատարվի հինեն եկող կրկնությունը, մարզանքը, ստուգումը, և այդ բոլորը լրացնելեն ետքը կանցնինք նոր մասին՝ «նոր դասին» և լավ է, որ ամեն անգամ շատ հստակ կերպով զգալ տանք մեկեն մյուսին անցումը: Բայց շատ անգամ գործնականին մեջ կշրջվի այս բնական հաջորդականությունը, նոր դասը հինեն առաջ կանցնի, և քանի մը դործնական պատճառներով:

1. Տղոց միտքը նվազ հոգնեցնելու և ավելի թարմություն մտցնելու համար ուսուցիչը կսիրե բանավոր, գրավոր և ընթերցման աշխատանքները իրար փոխանակվեն նույն պահու ընթացքին, որու համար դիտմամբ հինն ու նորը կխառնե իրար: Ուսուցիչը կվստահի խոսակցական աշխատանքով վերջացող հին դաս մը խոսակցական նոր դասով սկսելու, այդպես ալ գրավորը, և հարկ կըլլա հաճախ հին դասին վերջին կտորը դիտավորյալ կերպով նետել դասին վերջը նոր դասի ավանդումեն ետքը:

2. Նույն տեղափոխությունը կկատարվի երբեմն պարզապես աշակերտներու թարմութենեն օգտվելու դիտումով, նոր դասը իր ամբողջությամբ մշակել կարողանալու ձգտումով նույն պահու ընթացքին, միգուցե ժամանակը չհերիքի, երբեմն դասին հրապույրը ավելցնելու համար. այս բոլոր պարագաներուն հին դասը ետև կնետվի, մանավորապես եթե ստուգում մըն է կամ սրբագրություն մը գրավոր վարժություններու, խնդիրներու, հարցերու:

3. Երրորդ պատճառ մըն է տեղափոխության, երբ փորձերու ու ցուցադրություններու անհարմարություն ունի տեղը. նոր ու

Հին աշխատանքները կվերջանան, և անկե ետքը կկատարվի մեկ-երկու գրքի, օրինակի կամ նկարներու ցուցադրումը իր անհրաժեշտ բացատրությամբ, տեսակ մը հավելվածորեն, իբրև լրացում:

Ամբողջություններու դասավանդման մեկ անբաժան մասը կկազմեն նաև դուրսի աշխատանքը, այսինքն առած դասը սերտելը և տրված պարտավորությունները կատարելը: Երեք աստիճաններն ալ ունին իրենց անհրաժեշտ դուրսի մասերը, բայց գլխավորապես երկրորդ աստիճանը և անկե ետքը երրորդ աստիճանն է, որ դուրսի աշխատանքներ չատ կպահանջեն: Լսարանական ճյուղային աշխատանքներու առեն է, որ ստացման աշխատանքները էապես դուրսը կկատարվին ինքնաշխատությամբ:

Դուրսի աշխատանքներն ու պարտավորությունները տալու առեն ուսուցիչը չատ զգուշ պիտի ըլլա ամեն թյուրիմացության առջևն առնելու համար. արդեն սովոր մարդոց համար չատ պարզ ու ինքնին հասկնալի երևցող բաները հաճախ աշակերտներուն համար ո՛չ պարզ է և ո՛չ ինքնին հասկնալի, և ինչքան փոքր են աշակերտները, այնքան ավելի հոգածու պիտի ըլլա ուսուցիչը:

Դուրսի աշխատանքներուն այդ պատվերները երբեք պետք չէ տրվին դասի միջոցին, ի միջի այլոց, այլ հատկապես դասեն վերջը:

Այդ պատվերները երբեք պետք չէ տրվին, երբ տղաքը կես մը ոտքի են արդեն, կես մը նստած, կամ խելքերնին դուրսն է արդեն ու իրար հետ կխոսին: Նախ պետք է հայտարարվի, թե ըսելու է իրենց կատարելիք պարտավորությունները, և պետք է խոսի ու տա իր պատվերները, երբ բոլորը նստած իրեն կսպասեն կատարյալ լռության մեջ:

Այդ պատվերները պետք է տրվին հստակ խոսվածքով, ո՛չ մեկ ավելորդ բառ, խրատ, կատակ կամ որևէ նկատողություն. և՛ կարճ, և՛ որոշ, և՛ միշտ միևնույն ձևով. ընելիքը ուրկե ուր, գրքին էջը և վարժություններուն համարները, ուրիշ ոչինչ. ամեն անփութություն ու ավելորդ խոսքեր հաջորդ դասին սխալ հասկացողություններ կբերեն:

Բոլորովին փոքր դասարաններուն մեջ ավելի լավ է, որ ուսուցիչը գրե գրատախտակին վրա երկու բառով իր պատվերը, էջն ու համարները և աշակերտներուն ալ արտագրել տա, մինչև որ լավ

մը վարժվին և առանց դրատախտակի ալ կարողանան իրենք իրենց համար նշանակել:

Դ. ՍԽԱԼՆԵՐՈՒՆ ՍՐԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի. ԲԱՆԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՏԵՆ

Աշակերտական սխալի մը սրբագրությունը շատ պարզ է բանավոր աշխատանքի ժամանակ. կարդալու, պատմելու, բացատրելու կամ հարցի մը պատասխանելու ժամանակ ինչ որ սխալ ըլլա, կսրբագրվի անմիջապես տեղն ու տեղը:

Եվ կրնա սրբագրվիլ երեք ձևով: Կա՛մ ուսուցիչը կըսե իսկույն չիտակը և սխալած տղուն կրկնել կուտա: Կա՛մ կհարցնե տղու ընկերներուն և անոնց միջոցով չտկել և ինքն ալ նորեն սխալ ընողին ճիշդը կրկնել կուտա: Եվ կա՛մ, վերջապես, սխալ ընող տղուն ուշադրությունը կեդրոնացնելով և օժանդակ հարցերով հինը հիշեցնելով, կմղե, որ սխալ ընողը ինքը սրբագրե իր սխալը:

Ամենեն լավ ձևը անշուշտ վերջինն է սխալողին համար և դասարանին համար, երեք չափեն ավելի ժամանակ չի խլեր. դասարանին մեջ մասնավորի մը վրա կատարված աշխատանքը որոշ սահմանե մը անդին պետք չէ անցնի: Առաջին ու երկրորդ ձևերը համարժեք են. ուսուցչի անմիջական սրբագրությունը ավելի հաստակ կըլլա և ավելի արագ. ընկերներուն սրբագրությունը ավելի մասնակցություն ու կենդանություն կուտա դասարանին: Բայց շատ անգամ երկար խոսքի նյութ կդառնա, որ կվնասե դասի ամբողջության. տղոց բերնով կատարված կարճ ու շիտակ սրբագրություն մը անշուշտ որ ավելի ցանկալի է, քանի որ դասարանը ինքզինքը կսրբագրե:

Սակայն կետ մը կա, որ ուսուցիչը միշտ պետք է աչքի առջև ունենա: Ընկերներուն սրբագրությունը պետք է կատարվի շատ բնական կերպով և պարզամտությամբ. աշակերտներեն մեկը կամ մյուսը ավելի գիտցողի ձևեր երբ կառնե՝ տեսակ մը կարծես ուսուցիչը փոխարինելով, կսկսի մեծամտիլ, երես առնել, մյուս կողմեն ալ կառաջանա դասարանին մեջ ներքին գժգոհություն, նախանձ: Ասոր համար ալ միշտ պետք է զգուշանալ, որ սրբագրությունները չարունակ նույն տղու միջոցով չկատարվին, այլ մասնակցի ամբողջ դասարանը, սրբագրողը ըլլա երբեմն մեկ, երբեմն մյուս ընկերը:

Կա և երկրորդ կետ մը աչքի առաջ ունենալիք: Կատարվող դասարանական աշխատանքը պետք չէ ընդհատվի պատահական սխալի մը երկար-բարակ սրբագրությամբ ու բացատրությամբ, օրինակ՝ բան մը կպատմի և պատմելու ատեն լեզվական սխալ մը կընէ կամ չարադրական անշնորհք կապակցություն մը, երբեք ներելի չէ պատմությունը ընդհատելով այդ սխալ կազմված նախադասության մասին խոսիլը: Ուսուցիչը անմիջապես ինքը կըսե չիտակ ձևը, տղուն կրկնել կուտա, ու աշխատանքը կշարունակվի: Շարադրության դասին կամ քերականության դասին, եթե հարկ դատե, կրնա անդրադառնալ այդ կատարված սխալին, եթե ինքն է նորեն ուսուցիչը. կամ շատ-շատ դասեն վերջը իր գործը ավարտելեն ետքը հավելվածորեն կրնա վերադառնալ այդ լեզվական հարցին, եթե ինքը լուրջ կարևորություն կուտա. «Դուն դասի միջոցին այսպես ըսիր. ես սրբագրեցի այս ձևով. ինչո՞ւ, ո՞րն է օրենքը, ի՞նչ հիման վրա»:

II. ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՐԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ավելի բարդ է գրավոր աշխատանքներուն սրբագրությունը, որովհետև այդ աշխատանքներուն ստվար մեծագույն մասը դուրսը կկատարվի, դասարանին մեջ կատարված մասն ալ ուսուցչի մասնակցությամբ չի կատարվիր, այլ ամեն մեկը իր համար: Միայն ուսուցչի հսկողության տակ և անոր աշխատակցությամբ գրատախտակին վրա գրված բան մը տեղն ու տեղը կարելի է սրբագրել բանավորի նման:

Առանց ուսուցչի մասնակցության կատարված գրավորներու սրբագրությունը երկու խոշոր բաժանում ունի. ուրիշ է սրբագրության եղանակը, եթե բոլոր աշակերտները միևնույն բանն են գրած և միևնույն ձևով, այսինքն բոլորն ալ միևնույն ձևով պետք է գրած ըլլային, եթե չսխալեին. ուրիշ է սրբագրության եղանակը, եթե աշակերտները բոլորովին տարբեր նյութերու մասին են գրած, կամ նյութը դիցուք նույնն է, բայց նյութը մշակելու ձևը, դասավորությունը և գաղափարները ազատ է, ամեն մեկը իր ուզած ճամբով: Այս երկրորդ ձևը՝ ավելի ազատ գրություններու սրբագրության մասին, կխոսինք չարադրություններու ուսումնասիրության միջոցին: Հոս առայժմ աչքի առաջ կունենանք միայն նույն

նյութի, նույն ձևով կամ դրեթե նույն ձևով եղած դրութիւններու սրբագրութիւնը, ինչպես է արտագրութիւնը, թելադրութիւնը, քերականական վարժութիւնները, թվաբանական խնդիրներու լուծումը, տրված հարցերու պատասխանները պահանջելը ըստ նոր ու նախորդ տրվածին: Այս սրբագրութիւնը կարելի է կատարել չորս ձևով:

Առաջին՝ եթե ուսուցիչը այդ սրբագրութեան մասնավոր կարևորութիւն կուտա, հաջորդ դասին նույն բանը դրել կուտա գրատախտակին աշակերտներեն մեկուն՝ իր տետրակին նայելով, և վերջը ինքը կատուգն ու կսրբագրե գրատախտակին վրա եղածը, որուն նայելով՝ ամեն աշակերտ կսրբագրե իր գրածը՝ հայտնելով ուսուցչին իր ունեցած տարբերութիւնն ու չեղումը: Այսինքն դասարանական ամբողջական սրբագրութիւն գրավորներու: Շատ ժամանակ խլող բան է այս ձևը (երբ մեկը գրատախտակին վրա կանցընե իր գրածը, մյուսները պետք է ուրիշ բանով մը զբաղված ըլլան): Օրենքի մը, կանոնի մը, ուղղագրական շատ կարևոր պարագաներուն միայն արժե այս լրիվ սրբագրութեան դիմելը, պայմանով որ տախտակին վրա գրվելիք կտորն ալ շատ երկար չըլլա:

Երկրորդ՝ փոխանակ դասարանին մեջ ամբողջ գրութիւնը նորեն գրատախտակին վրա գրել տալու, գրել կուտա միայն այն երկու տողը, այն նախադասութիւնը, որ կսրբագրեն տղաքը ամեն մեկը իր գրածը՝ նախապես հայտնելով ուսուցչին իր գրածի տարբերութիւնը: Այսինքն դասարանական մասնական սրբագրութիւն գրավորներու. ամենեն գործնական ձևը լուրջ սխալներու սրբագրութեան համար, որ սովորաբար կապված կըլլա օրենքի կրկնակի բացատրութեան հետ:

Երրորդ՝ երբ ուսուցիչը կճանչենա իր դասարանի կարողութիւնը, և տղաքն ալ արդեն վարժված են մասնավոր գրավոր սրբագրութեան, ուսուցիչը կրնա կատարել ու բավականանալ միայն բանավոր մասնական սրբագրութեամբ: «Այսինչ բառը ինչպե՞ս է գրված». «ի՞նչ է ստացեր պատասխանը»: Տղան կըսե իր տետրակին նայելով, տարբեր գրութիւն կամ պատասխան ունեցողները իսկույն կհայտնեն, և ուսուցիչը կա՛մ սխալողին հարցնելով, կա՛մ ընկերներուն, կա՛մ ուղղակի ինքը բացատրելով կճշդե, թե ո՞րն է ճիշդը և ինչո՞ւ: Եթե ընկերներու կողմեն առարկութիւն չկա, խո-

սելու ալ բան չմնար, կնչանակե բոլորն ալ նույն ձևով են գրած: Այն կտորը, այն բառը, որ հարկը պահանջե, կրնա անմիջապես գրատախտակին գրել տալ և ենթարկել ընդհանուր ստուգման ու բացատրության, այսինքն անցնիլ նախորդ ձևին:

Չորրորդ՝ ուսուցիչը տետրակները կժողվե, կտանի տուն, բոլորը կկարդա, բայց կբավականանա միայն սխալներուն տակը դիծ քաշելով: Ինքը ոչինչ չի սրբագրեր. տղաքը ետքը իրենք պիտի սրբագրեն ամեն մեկը իր համար: Միայն մասնավորապես կարևոր համարած կամ չատերուն կողմե կրկնված սխալները կդարձնե դասարանական խոսակցության առարկա: Ստուգման այս ձևը կգործադրվի մեջեմեջ տղոց կատարած աշխատանքին և աշխատելու եղանակին մոտիկեն մանրորեն ծանոթանալու համար և մշտական հսկողության տակ պահելու համար անոնց տետրակները:

III. ԳՐԱՎՈՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Այս գրվոր աշխատանքները տղաքը պետք է կատարեն միշտ ամեն առարկայի համար առանձին հատկացված տետրակին մեջ. այդ տետրակին մեջ բացի ուսուցչի տված պարտավորություններեն ուրիշ ոչինչ պետք չէ գրվի: Եվ ամեն ինչ պետք է գրվի որոշ կարգով ու ձևով, դասերը, մասերը հատուկ կերպով իրարմե զատած, ամեն մեկը իր ամսաթվով: Պետք է պահանջվի մաքուր ու կանոնավոր գիր, ուշադրություն տառասխալներուն, նոր տողերուն, գլխագրերուն և տառերու ու թիվերու հստակ ու զեղեցիկ, ցայտուն ըլլալուն. անընթեռնելի, անորոշ ու երկմտի գրեր չընդունիլ. սղագրություն և գրության կրճատումներ թույլ չտալ: Եվ վերջապես խիստ պետք է պահանջվի, որ մաքուր պահված ըլլան ինչպես տետրակին երեսը, նույնպես ալ մեջի էջերը:

Գալով գրվածքի ներքին ճշդության, իմաստի, լեզվի ու տառասխալի տեսակետեն, ամեն հնար ու դյուրություն պետք է տալ աշակերտներուն, որ սխալ չհաշվեն, սխալ չգրեն, սխալ չընեն: Սովորություն պետք է դարձնել, որ տղաքը երբ որևէ կասկած ունին, իսկույն հարցնեն ուսուցչին, ընկերներուն, ուրիշին, նային դասագրքին կամ թղթատեն բառարանը: Հիմար բան է տղու ձեռքն ու աչքը սխալ գրելու վարժեցնել և ետքը տանիլ տետրակը

և սխալներուն տակը կարմիր-կարմիր գծեր քաշել, վերադարձնել տղուն ու վհատեցնել:

Դրութիւն տալու, գրել տալու և սրբագրելու ժամանակ երբեք պետք չէ մոռնանք, որ այդ բոլոր աշխատանքը՝ և՛ վարժութիւնները, և՛ խնդիրներ, և՛ հարցեր, և՛ թելադրութիւններ, անոնց ընել կուտանք, որ սորվին. մեր բոլոր ջանքերը սորվեցնելու համար են, ո՛չ թե քննութիւն կատարելու և տղու գխուն հանդիմանութիւն թափելու համար:

Այո՛, տարվան մեջ մեկ-երկու անգամ կարելի է և պետք է դրել տալ և քննելու նպատակով, ստուգելու համար, թե նախորդ սորվածներեն ի՞նչեն է տղան յուրացուցեր, և ի՞նչեն է դեռ խախուտ: Այս քննութիւնը շատ կարևոր է ուսուցչի համար և հետաքրքիր նաև տղուն համար: Եվ այս կարդի քննական գրութիւններու ատեն բնականաբար ո՛չ բան հարցնել կա, ո՛չ ալ դասագրքին ու բառարանին օգնութիւնը: Բոլորովին տարբեր բան է քննութիւնը, տարբեր բան է ուսուցումը, խիստ կերպով այդ երկուքը պետք է իրարմե զատենք, և դասերը, տանու աշխատանքները ու գրավոր պարտավորութիւնները պետք չէ քննութեան վերածվին. քննութիւնը անհոգի բան մըն է, ան կուզե միայն գիտնալ՝ ինչը յուրացուցած ես, ինչը՝ ոչ, իսկ դասավանդումը իր բոլոր ուշքն ու կարողութիւնը ուղղած է սորվեցնելու, հասկցնելու, յուրացման նպաստելու, կենդանի ու սրտագին աշխատանք մըն է հարատև:

Ե. ԴԱՍԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1. ՋԲԱՂՎԻԼ ԱՄԲՈՂՋ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԵՏ

Արդյունավոր դասավանդութեան չափազանց նպաստող ու դյուրացնող կամ չափազանց վնասող ու խանգարող գլխավոր պայմանն է նաև դասը վարելու արտաքին եղանակը: Պետք է այդ տեսակետեն ընդգծվի մասնավորապես չորս հիմնական պահանջ:

Առաջին ամենեն կարևոր պահանջն է, որ ուսուցիչը դասարանական ամեն աշխատանքի միջոցին զբաղվի միշտ ամբողջ դասարանի հետ, ո՛չ թե երբեմն մեկ, երբեմն մյուս աշակերտի ու խմբի հետ առանձնակի՝ երեսի վրա թողնելով դասարանին մնացած մասը: Ամբողջ դասի ընթացքին երբեք ոչ մեկ աշակերտ անզբաղ

պիտի չմնա, կատարվող խոսակցութենեն ու աշխատութենեն կտրված պիտի չըլլա, բոլոր աշակերտներուն միտքն ու ուշադրութիւնը պետք է շարժվի դասին դուգընթաց: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

1. Ուսուցիչը խոսելու և բացատրելու ժամանակ իր հայացքը պետք է ուղղե փոխնիփոխը ամենուն. նայվածքին դերը մեծ է ազդելու և գրավելու համար, նույնիսկ չիտակ հասկցվելու համար: Աչքերը գոց ու գլուխը կախ պատմելը, ինչպես և հայացքը լուսամուտեն դուրս հորիզոններուն նետած խոսիլը վայրկյանի մը համար կրնա ըլլալ բնական, բայց երբ քիչ մը կերկարի, կդառնա արվեստական ու անախորժ. խոսելու բնական սրտաբաց ձևը աչքը աչքին է. ուրեմն դասարանի հետ աչք աչքի: Նույնիսկ երբ աշակերտներեն մեկը կպատմե կամ գրատախտակի վրա բան մը բացատրելու վրա է, ուսուցիչը պետք չէ միայն անով կլանված ըլլա և միայն անոր կամ անոր գրածին նայի. իր աչքերը շարունակ պտտին պիտի ամբողջ դասարանին վրա, և տեսակ մը ամբողջ դասարանի հավանութիւնամբ պիտի վավերացվի պատմողին կամ բացատրողին ճիշդն ու սխալը, նույնիսկ երբ նստած աշակերտները բնավ չխոսին լեզվով. անոնց աչքերն ու անոնց մտքերը խոսին պիտի շարունակ պատմողին հետ, պատմողին դեմ, ուսուցչի ուղղած սրբագրութիւնին հետ, ընկերոջ մը տված նկարագրութեան հետ:

2. Ուսուցիչը իր հարցերը ուղղե պիտի միշտ ամենուն. այդ հարցերու մեկ մասը արդեն ինքնին հարկը կստիպե, որ ամենուն ուղղված ըլլան, բայց երբ հարցը կառաջանա մեկ տղու մը սխալեն կամ ըսածեն, երբ տախտակի վրա աշխատողին կվերաբերի կամ դասը պատմողին, միևնույն է, այս բոլոր պարագաներուն ալ հարցը այն ձևով պետք է տալ, որ ուղղված ըլլա ամենուն, ամբողջ դասարանի ուշադրութիւնը գրգռե, և բոլոր ուղեղները միաժամանակ տրված հարցին պատասխանը փնտրեն, և ո՛չ թե ուսուցչի այսինչ կամ այնինչ հարցը մասնավորի մը ուղղված նկատվի, որ մյուսներուն չվերաբերիր:

Տղաքը պետք է գիտնան ու վարժվին, թե ոչ մեկ հարց չի տրվիր դասարանին մեջ, որ անխտիր ամենուն ալ չվերաբերի, և որուն ամենքն ալ մտքերուն մեջ պատասխանելու պարտավոր են, թեև լեզվով պիտի պատասխանե բնականաբար միայն մեկը: Եվ

այդ մեկը կրնա ընտրվիլ ուսուցչի կողմեն և ցանկացողներուն մնջեն. ցանկութիւնը կարտահայտվի ձեռքի թեթև բարձրացումով՝ ցուցամատը բաց, երբե՛ք բառով ու խոսքով: Այդ մեկը կրնա նշանակվիլ ուսուցչի կողմեն առանց աշակերտի ցանկութեան: Ցանկութեան վրա հենված հարցնելը միշտ ավելի լավ է, ավելի պատրաստ ու կոկիկ պատասխան կստացվի ընդհանրապես. հանկարծակիի եկած կամ առանց ցանկութիւն հայտնած ըլլալու ուղքի ելլել, բառեր մը ծամծմել կամ ինչ ըսելիքը չգիտնալով մոլորած մնալը անշուշտ որ շատ ծանր կճնշե ամենուն վրա: Ամեն պարագայի մատ չբարձրացնողին պետք է հարցնել շատ զգուշութիւնով, անհատը ճանչնալով: Բայց ինչ ալ ըլլա, ուսուցիչը բավականանալ չի կրնար մատ բարձրացնողներով, չբարձրացնողներն ալ պետք է մնջ քաշե. նախ՝ որպեսզի ամենքն ալ արթուն մնան, և երկրորդ՝ կան աշակերտներ, որ մատ բարձրացնելու բարի սովորութիւնը չունին, երբ նույնիսկ պատասխանը պատրաստ է գլխուն մեջ: Ասոր հակառակ՝ կան աշակերտներ ալ, որ ուսուցիչը իր հարցը չվերջացուցած իսկույն մատ կբարձրացնեն և սովորաբար հիմար կամ շատ թերի պատասխան մը միայն կուտան: Մեծ արվեստ է ուսուցչի կողմեն, որ ան կարողանա վարժեցնել իր աշակերտը. ա) որ ամեն հարցի պատասխանեն անոնք մտովի, բ) որ մատ բարձրացնելու չծուլանան, անտարբեր չըլլան, երբ պատասխանը ձևակերպված է արդեն մտքի մեջ և գ) որ մատ չբարձրացնեն երբեք, եթե պատասխանը որոշ ու հստակ ձևավորված չէ մտքին մեջ: Ծուռ, կիսատ ու անկարգ պատասխանը միշտ ամոթ պիտի համարվի: Ասոնք շատ կարևոր խնդիրներ են ամբողջ կյանքի համար:

3. Հարցի մը պատասխանողը կնստի իսկույն. հաջորդ հարցին լավ է ուրիշ մը պատասխանե. ինչքան շատեր որ իրենց պատասխաններով մասնակցին, այնքան հետաքրքրութիւնը կկեդրոնանա, այնքան կտաքնա դասարանը: Անշուշտ կրնա պատահիլ, որ երկու կամ երեք հարցի իրար ետևե պատասխանե նույն աշակերտը իր կեցած տեղեն. միայն պետք է զգուշանալ ավելի երկար նույն աշակերտին հետ հարց ու պատասխան փոխանակելէ, որ դասը խոսակցութեան կամ հարցաքննութեան ձև չստանա: Ընդհանուր օրենք է՝ հարցը միշտ ուղղված ամենուն, կպատասխանեն փուփոխակի, հնար եղածին չափ շատերը խոսքի գալով, որ պատասխանն ալ

տեսակ մը ընդհանուր բնույթ ստանա, դառնա դասարանի տված պատասխանը, ո՛չ թե այս կամ այն աշակերտի:

4. Կարդալու, պատմելու կամ բացատրելու ժամանակ բնականաբար անհատ աշակերտը խոսելու է քիչ մը ավելի երկար, բայց հոս ալ ուսուցիչը ջանք պիտի ընե դասարանի միտքը լարված պահելու: Նախ՝ պետք չէ կարդացնել տալ խոշոր կտորներով. պատմվելիքն ալ պետք է լրացնել քանի մը կտորով բերնե բերան, անշուշտ հոգ տանելով, որ յուրաքանչյուր կտոր ինքն իր մեջ ամբողջություն մը ներկայացնե. իմաստը չլրացած պատմությունը պետք չէ ընդհատվի: Գրատախտակին վրա բացատրություններն ու ապացուցումները պետք չէ շատ երկարին. բացատրության զանազան մասերը կարելի է պահանջել տարբեր աշակերտներե՝ միշտ օգտվելով տրամաբանական ու բնական տրոհումներեն: Այլև ամեն հատվածի բացատրութենեն ետքը կարելի է դիմել դասարանին, թե ինչ կրնա ավելցնել, ինչն էր անճիշդ կամ թերի, ավելորդ, ուրիշ ինչպե՞ս կարելի է ձևակերպել միևնույն բանը ավելի գեղեցիկ:

Եվ շատ անգամ տղաքը իրենք մատ կբարձրացնեն իսկույն, երբ տախտակին վրա աշխատողը թերի կամ սխալ բան մը կըսե կամ կըընե: Ուսուցչի դատումեն է կախված մատ բարձրացնողին հարցնելը կամ նոր հարցումով մը տախտակին վրա աշխատողին օգնելը, որ ինքզինքը սրբագրե: Կարելի է նաև մատ ցույց տվողին առաջարկել, որ փոխանակ ինքը սրբագրելու, այնպես հարց մը տար, այն տեսակ հիշում մը, որ սխալողը ինքը անդրադառնա իր սխալին:

5. Գալով դասարանական գրավոր աշխատանքներուն, ինչպես թելադրությունն է, խնդիրները լուծելը, որոշ հարցերու գրավոր պատասխանելը, քերականական զանազան տեսակի վարժություննները, գիտական տարազներու, օրենքներու ձևակերպումը, ամբողջության մը ամփոփումը և նման գրավոր աշխատանքներ, այս բոլորը պիտի կատարեն անպատճառ բոլորը: Մեկը կուգա գրատախտակին վրա կատարելու, մյուսները կկատարեն իրենց սեագրության տետրակներուն մեջ: Եվ երբ ամենքը կավարտեն, գրատախտակի գրվածի վրա կկատարվի ստուգումը ամբողջ դասարանի կենդանի մասնակցությամբ, քանի որ աշակերտներեն

ամեն մեկը նույն հարցին վրա մոտածած է և նույն բանը գրած ունի իր տետրակին մեջ: Ամեն մեկը կրան իր ունեցած տարբերութիւնը, ամբողջ դասարանի մասնակցութիւնամբ կորոշվի ճիշդն ու սխալը, ավելի ընտիրն ու գեղեցիկը և աւոր համեմատ ալ ամեն մեկը կարթագրե իր գրածը:

II. ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԱՆՇԵՂ ԸՆԹԱՑՔ

Դասավարութեան երկրորդ մեծ պահանջն է՝ երբեք չշեղիլ նյութեն և նյութի մշակման բնական ընթացքեն և ամեն կերպ աշխատիլ, որ աշխատանքը միաձուլ մնա ու չընդհատի:

Նախ՝ երբեք չխոսիլ դասեն դուրս որևէ նյութի մասին, ինչքան ալ հրատապ և հուզիչ հարցեր ըլլան աւոնք: Շատ-շատ դասը լրիվ ավարտելեն և ավարտած ըլլալը հայտարարելեն նոքը խոսիլ այդ մասին: Այդպես ալ տոներուն նախորդող և արձակուրդներուն հաջորդող օրերը , երբ «տոնական» տրամադրութիւնը կտիրե, տղաքը օգտվիլ կսիրեն պարապ կամ կողմնակի խոսակցութիւններով ժամանակը անցընեն: Այդ տեսակ խոսակցութիւններու համար ուսուցիչը կրնա ընտրել դասեն դուրս ժամանակ մը, եթե հարկ զգա. բայց դասը ինքը պետք է ըլլա դաս. դասը կարելի է զեղչել, չպարապիլ, բայց դաս ընել ու դասին մեջ ուրիշ բաներով լրացվիլ հիմանդ երևույթ է և դասի գաղափարը կնվաստացնե:

Դասն ալ պաշտոնական հանդիսավորութեան մը պես, նկեղեցական արարողութեան պես բան մըն է. ունի իր հաստատ ընթացքը և պահանջները, որ երբեք անպատիժ կարելի չէ վիրավորել: Դասի հետ ու դասի ժամանակին հետ կարելի չէ խաղեր ընել առանց դասի «սրբութիւնը», դասի անձեռնմխելիութիւնը և դասավանդութեան գաղափարը վիրավորելու: Աշակերտներուն պետք է ներշնչել խորին հարգանք ընդհանրապես ամեն աշխատանքի հանդեպ, մասնավորապես ամեն հավաքական կազմակերպված աշխատանքի հանդեպ և հատկապես կրթութիւնն ու ուսումը իրականացնող աշխատանքի հանդեպ:

Երկրորդ պետք է խուսափիլ ամեն կերպ դասի հանդիսաւոր ընթացքը խանգարելե: Դասը ձգել հեռանալը կամ խոսակցութեան բռնվիլ դռան առաջ քանի մը վայրկյան ինչ պատճառով կուզե

ըլլա և որու հետ կուզե ըլլա՝ ներելի չէ ուսուցչին. դաղարները եղած են և՛ հանդիստի, և՛ այդ կարգի կողմնակի հարցերը կարգադրելու համար. դասարանը ձգելը և ամեն մուտք ու ելք աշխատանքի միջոցին պետք է ըլլա խիստ բացառիկ պատահականութեան մը, բացառիկ անհրաժեշտութեան մը կապված: Այդպես ալ դուրսեն պետք չէ խանգարվի դասը. դասի միջոցին մտնել ու բաներ հարցնել, աշակերտ մը դուրս կանչել, ուսուցչի ականջին գալ բան մը փսփսալ՝ անկարգ ու անտեղի բաներ են, ով ալ կուզե ըլլա կատարողը:

Ընդհատող ու խանգարող բան մըն է և հյուրերու պարագան, այսինքն երբ դասատու ընկերը կամ դուրսեն որևէ պաշտոնական կամ անպաշտոն անձ մը ներկա ըլլալ կուզե դասավանդութեան. գեչ է, երբ դասի միջոցին այդ անձերը ներս կմտնեն կամ ներս կրերվին, կարճ ու երկար ճառ մըն ալ կըսեն ու կձգեն կերթան: Այս այցելութիւններուն մեկ մասը բնավ պետք չէ, որ տեղի ունենա և իզուր տեղը դասը խանգարե: Ամեն պարագայի ամեն անոնք, որ դասի մը ներկա ըլլալ կուզեն ու կթուլլատրվին, լավագույն է, երբ դասարան կմտնեն ուսուցչի հետ և կհեռանան ուսուցչի հետ, դասեն վերջը և դասի միջոցին ոչինչով զգալ չեն տար իրենց ներկայութիւնը, մանավանդ խոսքի չեն խառնվիր: Եթե այցելուն բարձրաստիճան, հարգված ու ճանչցված հանրային դեմք մըն է և կուզե անպատճառ քանի մը համակրանքի ու սրտի խոսք ընե, ատոր միակ տեղը դասին վերջն է, երբ ուսուցչի հետ դասարանը թողնելու կպատրաստվի:

Երրորդ՝ դասի ընթացքին ալ պետք է ամեն կերպ աշխատվի, որ դասավանդման նյութի մչակմանն ու վերլուծմանը կարելիին չափ չխառնվին ըստ կարգի, կողմնակի կարգապահական խոսքեր. «Դո՛ւն ըսե», «կրնա՞ս ինծի բացատրել, Հակոբյա՛ն», «թող Մինասը չարունակե», «իսկ դուն եկուր տախտակին», «Հանեցե՛ք հիմա ձեր սևագրութեան տետրակները, վարժութիւններ պիտի գրենք»: Այս բոլորը և ասոնք նման անվերջ կրկնվող բառեր, հրամաններ ու անուններ մեծագույն մասով կրնան փոխարինվիլ ձեռքի ու գլխու թեթև նշանով մը: Տված ես հարց մը՝ տղաքը մատ կբարձրացնեն, մատնանիշ կընես մեկը՝ տղան կելլե ու կպատասխանե, ձեռքի նշան մը՝ կնստի, գլխով նշան մը՝ կչարունակե ընկերը, մատի որոշ չարժում մը դեպի գրատախտակը՝ և մատնանշված

տղան կանցնի դրատախտակին, կբարձրացնես դասագիրքը՝ տղաքը լուռ կհանեն գրչոցին իրենց գրքերը: Այս ամենը և ասոնց նմանները պարզապես սովորութեան հարց է. շատ չուտով արդէն տղաքը պիտեն, թէ իրենցմէ ինչ կպահանջվի և ինչ ձևով. ամեն անգամ երկար-բարակ բացատրութիւններու, հրամաններու ու դիմառնութիւններու կարիք չկայ, հետն ալ լուրջ ու կատակի ուրիշ կողմնակի խոսքերու: Իտեալն է, որ դուրսեն ականջ դնող մը լսի միայն դասի նյութի անմիջական վերաբերող հարց ու պատասխան, ընթերցում ու պատմութիւն ու թելադրութիւն և ատկե դուրս ուրիշ ոչ մեկ խոսք ու հրահանգ. բոլոր քուլիսային կարգադրութիւնները կկատարվին ձեռքի, գլխու, աչքի թեթև շարժումներով:

III. ԱՌԱՆՑ ՀՈԳՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՁԱՆՁՐՈՒՅԹԻ

Դասավարութեան երրորդ պահանջն է՝ դիմել ամեն միջոցի, որ տղաքը չհոգնին, չձանձրանան: Դասարանին աշխուժն ու ոգևորութիւնը ամենաթանկագին բանն է ուսուցչի համար իր դասի ատեն, վառ հետաքրքրութիւնը և փայլող աչքերը իրենց կարգին ավելի կներշնչեն ուսուցիչը և նոր եռանդ կուտան անոր մտածումին ու խոսելածքին, որով աշակերտ և ուսուցիչ իրար կբարձրացնեն, իրար արժեք ու աշխատանք: Եվ ընդհակառակը, հոգնածութիւնը, ցրվածութիւնը և ձանձրույթը կկոտրեն ուսուցչին թևերը, դասարանին թռիչքը և ծնունդ կուտան անկարգութիւններու և անհամութեան:

Դասարանը հնար եղածին չափ հոգնութենեն ու ձանձրույթե ազատ պահելու և հոգնութեան երևալեն եռքը կարելիին չափ տղաքը սթափ պահել կարողանալու համար աչքի առաջ պետք է ունենալ հետևյալ միջոցները:

1. Ո՛չ ինքը ուսուցիչը երկար կարդա ու անընդհատ խոսի, ո՛չ ալ տղաքներեն մեկն ու մեկը, պետք է անցնիլ շուտ-շուտ մեկեն մյուսը. լլկել-նատևում, ձայնի, շեշտի ու արտահայտութեան եղանակի այս արագ փոփոխութիւնները իրենց դերը ունին, մանավանդ փոքրերուն համար, բայց մեծերու համար ալ զուրկ չեն բոլորովին իրենց ազդեցութենեն:

2. Պետք չէ երկար ժամանակ աշխատանքի մեկ ձև մը

շարունակվի դասարանին մեջ. միայն կարդալ, միայն պատմել, միայն բացատրել, միայն արտագրել, այլ պետք է աշխատանքը տեսակ մը ալիքավորել, մեկ ձևի աշխատանքեն ուրիշ ձևի աշխատանքի անցնիլ: Միայն լսելը, մանավանդ տաք ու գոց սենյակին մեջ, քուն կբերե, կօրորե. պետք է դիմել ավելի գործուն ձևի մը, որ է գրելը, քանի որ բոլորը միասին կաշխատին, և կա մկանային գործակցություն: Այլև տետրակներ հանել, գրելու պատրաստություններ տեսնել, գրքերը հանել, բանալ, վերջն ալ ժողվել ու նստելու ղիրքերը փոխել, այս ամենը արթնություն տվող, սթափեցնող տարրեր են:

3. Դասերու նախապատրաստության ժամանակ այս բոլորի մասին պետք է մտածվի և աւոր համեմատ ընտրվի ու մանուածվի պահու մը միջոցին ավանդվելիք աշխատանքը և կատարվելիք վարժություններըը, հարց ու պատասխանին, պատմելիքն ու բացատրական կտորները: Եվ վերջապես այդ նախապատրաստության աւոեն պետք է աչքի առաջ ունենալ նաև նյութերու ունեցած բնական հետաքրքրությունը կամ բնականեն նվազ հետաքրքիր ըլլալը հատկապես իր միջավայրի և իր դասարանի հոգեբանական տեսակետեն և աւոր համեմատ ալ մանրամասնել կամ սեղմել որոշ բացատրություններ և մարզանքներ:

4. Նախընտրել փորձեր ունեցող նյութերու դասավանդումը ցուցադրություններով, համեմատական տախտակներու նկարումով, նկարներ, մոտելներ ցույց տալով, որչափ հնար է վերացական մտածումը օրինակներով ու համեմատություններով իրացականի վերածելով: Եվ ընդհակառակը, չատ պարզ ու դյուրին եղող նյութերու յուրացումը դրեթե ամբողջապես տղոց վրա նետելով, որ իրենք մտածեն, իրենք հանեն ու իրենք ընեն ամեն բան, դրեթե առանց ուսուցչի, որովհետև չատ դյուրին ըլլալն ալ ձանձրույթ կառաջացնե՝ նորություն մը չունենալով իր մեջը:

5. Փոքրերու դասարաններուն մեջ ընդհանուր հոգնածություն մը, ընդհանուր անուշադրություն մը երբ նկատվի, նախ կարելի է իսկույն ուռքի հանել ամենքը առանց իրենց տեղեն հեռանալու. քանի մը անգամ նստիլ ու ելլելը, իրեն ընկերացող բնական ծիծաղին հետ գոնե քանի մը վայրկյանի համար կցրվի թմրությունը. փոխանակ ելլելու-նստելու՝ կարելի է իրենց կեցած տեղը

մեկ-երկու մարզական չարժումներ ընել տալ: Շատ ավելի ազդու է աշխուժ ու սիրված երգ մը կրկնել տալ և վերջը շարունակել ընդհատված աշխատանքը: Եթե քանի մը առարկաներու ուսուցիչը նույն է, հոգնություն զգացվելու պարագային, փոփոխության համար կրնա ժամանակին կեսը հատկացնել ուրիշ առարկայի ավանդման, և այս փոփոխությունը լուրջ արժեք կներկայացնե միայն այն ժամանակ, եթե հոգեկան ուրիշ կողմեր աշխատության սլիտի դան, հատկապես մկանային աշխատանքներ, գրել, արտագրել, նկարել, հյուսել, ձևել, կաղապարել: Եթե զանգը տալուն շատ ժամանակ չէ մնացած, և կտեսնվի դասարանին վրա ընդհանուր հոգնածություն, առանց զանգին սպասելու պետք է աշակերտները հանել բակը, բայց դուրսը տղոց քովը մնալ, խոսեցնել, չթողնել, որ աղմկեն մինչև զանգին տալը: Ասոր մեկ ուրիշ ձևն է՝ դասին շարունակությունը տանիլ պարտեզ, եկեղը, երթալը և հոն տեղավորվիլը և՛ շարժում է, և՛ մեկ-երկու վայրկյանի դադար, ուրկե եռքը կարելի է հոն ծառերուն տակ ընդհատված բանավոր աշխատանքին թելը նորեն ձեռք առնել:

Չ. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Աշակերտական պատասխանները, պարտավորությունները, աշխատելու և արտահայտելու եղանակները ուսուցիչը բնական կերպով շարունակ հարկադրված է գնահատելու և հայտնելու, թե ինչ աստիճան ճիշդ է, լրիվ և հաջող: Այդ գնահատությունը դպրոցական առօրյա կյանքի և առօրյա դասարանական աշխատանքներու ընթացքին կկատարվի կենդանի խոսքով. այդ միևնույն գնահատանքի ավելի պաշտոնական ձևն է թիվ դնելը՝ նիշը:

Ընտրված է թիվը, իբրև ավելի կարճ ու պարզ արտահայտության եղանակ մը, որ մեծ հարմարություններ կուտա անմիջապես դյուրին համեմատվելիք ստորաբաժանումներու ենթարկելու, ինչպես և ամեն տեսակի ստատիստիկ եզրակացություններ հանելու անոնց մեջեն թիվերու վրա հենվելով:

Գործածության մեջ կան, նայելով երկրին և հաստատության, 1-5-ի, 1-10-ի, 1-20-ի և 1-100-ի մանրամասնությամբ գնահատումներ: 1-5-ի դրությունը գործնականապես երեք աստիճանի տարբե-

րութիւն կղնեն իր գնահատանքին մէջ, քանի որ 1-ն ու 2-ը բացասական գնահատում է: 1-100-ի գործածութիւնը շատ է նուրբ և դեղաբանական կշիռքով. ո՛չ պետք, ո՛չ ալ կարելիութիւն կա այդ աստիճանի բարակ զանազանութիւններ դնելու հատկապես ընդհանուր կրթութեան ժամանակ, որով ամենեն գործածականը կա՛մ 1-10-ի, կա՛մ 1-20-ի սահմաններուն մէջ չարժվիլն է: 1-10-ի գործածութիւնը իսկապես հինգ աստիճանի տարբերութիւններ կրնա դնել, քանի որ վեցեն պակասի գնահատանքը բացասական գնահատութիւն է արդեն: Եվ այդ հինգ աստիճանով տղոց աշխատանքը գնահատելը ընդհանուր կրթութեան մէջ կատարելապես հերիք է, և 10-ի վրա համեմատութիւններ ընելն ու միջինները հանելը մեծ դժուրութիւն ունի:

Աշակերտներու աշխատանքներուն նիշ դնելու դեմ աջեն ու ձախեն հաճախ բողոք կլսվի: Եթե քիչ մը ուշադրութեամբ դիտենք, բողոքը իսկապես նիշի դեմ չէ, քանի որ միևնույն է՝ քու գնահատանքդ թիվո՞վ ես հայտնած, տառե՞ր ես դրեր, թե՞ խոսքով կարտահայտես. խելքը գլխուն մարդը չի կրնար բողոքել, որ ուսուցիչը իր կարծիքն ու գնահատութիւնը չտա տղոց կատարած աշխատանքներուն այս կամ այն ձևով: Բողոքը նիշի չարաչար գործածութեան դեմ է, գնահատանքի մեքենական կերպով կատարելուն դեմ է. բողոքը արդյունք է այն վախի, որ տղոց կարողութեան գնահատութիւնը անոր ըրած սխալներուն թիվին վրայեն հանված մեքենականութիւն մը չդառնա. բողոքը արդյունք է այն վախին, որ տղաքը չվարժվին աղվոր թիվի համար աշխատելու, այլ կրթվելու, բարձրանալու գիտակից ճիգով, որ տղաքը չվարժվին միութիւն մը ավելի կամ միութիւն մը պակասի սին համեմատութիւններով, նախանձներով ու ատելութիւններով զբաղվելու անվերջ:

Նիշերու հետ կապված այս թերին դժվար չէ սակայն չեզոքացնելը, եթե նիշերու հետ քիչ մը ավելի ժուժկալ ըլլանք և քիչ մըն ալ վարժվինք նվազ մեքենական կերպով անոնց հետ:

Նախ՝ մանկապարտեզի փոքրերուն համար բացարձակապես ավելորդ բան մըն է նիշ դնելը. հոն դեռ պաշտոնական գնահատանքի պետք չկա, իսկ առօրյա բնական և ընթացիկ գնահատութիւններու առեն ալ ավելի քաջալերանքը ունին վարժուհիները

աչքի առաջ, քան կշխուին ավելն ու պակասը:

Տարրական նախակրթարանի մեջ նորեն բոլորովին ավելորդ, նույնիսկ վնասակար բան մըն է առօրյա դպրոցական կյանքի ընթացքին նիշեր դնելն ու նիշերով խոսիլը: Նիշերը այդ աստիճանին վրա ամեն մեկ աշխատանքին, ամեն մեկ պարտավորութեան պատասխանի համար չեն, և կարելի ալ չէ արդեն. ընդհանուր խմբական ճիգերով ու գործակցութեամբ կկատարեն աշխատանքներեն շատերը. վարժուհիին ջանքը դրավել, հետաքրքրել, ուշադրութիւնները լարել և ըմբռնումը դիւրացնելու վրա է կեդրոնացած և ընդհանրապես դասարանին ամբողջութիւնը ունի աչքի առաջ, ամեն մեկ աշակերտի այս ու այն պարագային քիչ մը ավելի կամ քիչիկ մը պակաս ըլլալը ո՛չ կարիք կա չեչտելու, ո՛չ ալ իսկապես ցանկալի է, որ շատ չեչտվի:

I. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՆԻՇ

Սակայն ինչ որ պետք չէ ու ցանկալի չէ դասարանական ու դուրսի աշխատանքներու այդ առօրյա չփումներու ու աշխատանքներուատեն, ինչ որ ավելորդ է ուսուցչի և աշակերտներու փոխադարձ հարաբերութիւններու միջոցին, պետք մը կզառնա և անհրաժեշտութիւն մը դպրոցական վարչութեան և մանկավարժական ժողովներու վերաբերմամբ: Ամեն պարագայի համար ամեն ուսուցիչ տարին գոնե երկու անգամ պետք է արտահայտե նիշերով իր գնահատանքը եռամսյակի ընթացքին յուրաքանչյուր աշակերտի կատարած աշխատութեան մասին:

Եվ պարբերական կերպով կատարված այս նիշերով գնահատութիւնները պետք է մանկավարժական ժողովներու մեջ պաշտոնապես վավերացվին, որ տեղյակ ըլլան բոլոր մյուս ուսուցիչները և համեմատել կարողանան իրենց դրած նիշերու հետ, որ վարչութիւնը գիտնա պաշտոնապես, եղրակացութիւններ հանել կարողանա թե՛ ամեն մեկ դասարանի և թե՛ ընդհանրապես ամբողջ դպրոցի մասին: Այդ պաշտոնական թիվերը պետք է հաղորդվին ծնողներուն, որ անոնք ալ տեղյակ ըլլան պաշտոնապես իրենց փոքրիկներու կարողութեանն ու թերութիւններուն: Եվ վերջապես այդ թիվերը պաշտոնապես պետք է հայտնվին նաև ամեն մեկ

աշակերտի, և այդ մասին պետք է իրենց հետ խոսվի առանձին-առանձին, որ գիտնան իրենց ավելի ու պակաս կողմերը և իրենց ուսուցիչներուն կարծիքը:

Ուրեմն դպրոցական տղայական շրջանին թիվ կդրվի ամեն մեկ աշակերտի ու ամեն մեկ առարկայի համար տարեկան միայն երկու կամ երեք անգամ՝ նայելով մանկավարժական ժողովի տված ընդհանուր որոշման: Գործնականապես և ընդհանրապես բավ է երկու անգամը՝ երկու կիսամյակներուն վերջը:

Բարձր նախակրթարանի մեջ ընդհանուր առումով նույնն է վիճակը. ամեն աշակերտի ամեն առարկայի դնել նիշ մը յուրաքանչյուր կիսամյակի բոլոր աշխատանքները և բոլոր պարտավորությունները և բոլոր գրավորները աչքի առաջ ունենալով:

Կա միայն նոր նրբություն մը. ինչքան տղան կբարձրանա դասարանե դասարան, նույնքան ուսուցիչները կչատնան, և այնքան ալ ամեն ուսուցիչ քանի մը դասարաններու հետ դաս կունենա և ամեն դասարանի մեջ համեմատաբար քիչ ժամերով. այնպես որ ավելի դժվար է իրեն համար առօրյա տպավորություններու գումարով միայն կիսամյակներ դնել կարողանալը. վստահ չէ այլևս միայն հիշողությամբ պահված իր տպավորություններուն վրա, և ավելի արդար ըլլալու և տղոց կարողությունները ավելի ճիշդ գնահատել կարողանալու համար պետք կզգա իր ծոցի տետրակին, ուր օրը օրին կնշանակե իր հիշողության համար տղոցմե ստացած իր տպավորությունները, գրավորներուն արժեքները և տղոց տված բացատրություններուն ու պատասխաններուն գնահատությունը, այսինքն ուսուցիչը շարունակ թիվերը կդնե իրեն համար և առանց այդ թիվերուն մասին աշակերտներուն ոչինչ ըսելու:

Այս առանձնահատկության կավելնա նաև երկրորդ մը, մանավանդ շրջանի երկրորդ երկամյակին, երբ հետզհետե կշեշտվի տղոց անհատականությունը գրավոր պարտականություններու կատարման ատեն, և հարկ կըլլա ավելի որոշ կերպով ամեն մեկուն հայտնել ամեն անգամ իր գրածի քիչ մը ավելի հստակ գնահատությունը: Շատ մը ուսուցիչներ ավելի պարզ ու հարմար կգտնեն և ավելի դրդիչ այդ պարտականություններուն տակը իր արժեքը նշանակելը: Եթե այդ թիվերը շատ մեքենական կերպով դրված

չեն և առանց վրայեն ալ նոքը դուս մնքննական կերպով միջիններ պիտի չհանվին իբրև կիսամյակ, այդ մասնավոր նիշերը որևէ անտեղություն չունին: Հավելյալ հիշեցում մըն են ուսուցչի համար, հավելյալ հենարան մը: Բուն պաշտոնական նիշերը կմնան երկու կիսամյակներուն նիշերը:

Լսարաններուն մեջ արդեն բացարձակ կերպով կմնան մեջտեղ երկու կիսամյա նիշերը: Ընդհանուր ուսումներու համար, որ ինքը կուտա իբրև դասախոսություն, ուսուցիչը հարկադրված է հանելու իր դնելիք կիսամյա նիշերը կիսամյակի ընթացքին իր դրել տված քանի մը պարտավորություններուն ու գրավորներուն վրայեն. և բնավ կարիք չունի ինքն ի համար իր դրած մասնավոր նիշերու մասին որևէ բան տղոց հայտնելու. միայն անհամ խոսակցություններու տեղի կուտա ընդհանրապես: Իսկ գործնական ճյուղային աշխատանքներու համար ամեն ուսուցիչ այնքան մոտեն ու խորեն կճանչնա իր աշակերտներուն կարողությունը, որ ուղղակի կրնա դնել իր կիսամյակներուն նիշերը. աշխատանքներու միջոցին նիշի մասին ո՛չ խոսք կա, ո՛չ կարիք:

Ուրիշ խոսքով՝ նիշ կդրվի էապես տարին երկու անգամ դպրոցական բոլոր շրջաններուն:

Նիշը պարբերական ու պաշտոնական գնահատություն մըն է աշակերտի կարողության ամեն մեկ առարկայի համար զատզատ: Եվ ամենեն առաջ կարողության գնահատություն է, թեև հաճախ ուսուցիչներու կողմե և շատ բնական կերպով հաշվի կառնվի նաև աշակերտի թափած ջանքերը, այսինքն նաև աշխատասիրությունը. աշակերտին թափած ճիգերը անշուշտ որոշ չափով մը կմեղմեն արդյունքին պակասավորությունը, ինչպես և լուրջ ու կանոնավոր և օրը օրին կատարված աշխատանքին բացակայությունը կնվազեցնեն միայն բնատուր շնորհքով ձեռք բերված հաջող արդյունքը:

Բայց ինչքան ալ որ խոստովանինք աշխատասիրության ու թափած ջանքերուն արժեքը և ինչքան ալ բարձր դասենք կանոնավոր աշխատանքին կարևորությունը, վերջ ի վերջո ստիպված ենք ըսելու, որ նիշերը կտրվին էապես ըստ կարողության. ուրիշ կերպ վարվիլ կըլլա անիրավ ու հակաբնական:

Այդ ուսման նիշերը դնելու առեն կընդունինք ուրեմն, որ

չափ մը ազդեցություն կբանեցնեն թափած ջանքերը աշակերտի, բայց պետք է զգուշանանք, որ ուրիշ ո՛չ մեկ բան ազդեցություն չբանեցնեն, իր համակրանքներով կամ հակակրանքներով տարված նիշ դնելը մեծ սխալ մը կըլլա ուսուցչական կոչումին դեմ: Խոշոր սխալ մըն է նմանապես աշակերտի անկարողության իբրև պատիժ իր ուսման նիշը պակսեցնելը, ինչպես և իր «խելոք կենալուն» համար բան մը ավելի դնելը: Վարքն ու բարոյականը ուսման ու կարողության հետ պետք չէ երբեք չփոթել:

II. ՎԱՐՔ ՈՒ ԲԱՐՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աշակերտի դաստիարակության, վարքի ու բնավորության համար շատ մը դպրոցներ առանձին նիշ կդնեն, այսինքն գնահատություն մը տղու ամբողջ կիսամյակի ընթացքին ունեցած բարեկրթության ու կանոնավորության. տեղ-տեղ նույնիսկ առանձին գնահատական նիշեր կուտան տղու աշխատասիրության, նույնիսկ կանոնավոր դպրոց հաճախելուն ու մաքրության համար:

Այս բոլորը արդեն չափազանցություններ են անշուշտ: Այդ նիշերը, ուզեն-չուզենք, չինծու բան մը կունենան իրենց վրա. անկարգությունը, բարոյականության դեմ մեղանչելը, բարոյակրթություններն ու ուշացումները, հանգիստ կամ անհանգիստ կենալը, շատախոսելն ու մունջ մնալը, ազնիվ վարմունքը կամ կոպիտ գծերը բոլորը միասին իրար բերել և թիվով մը արտահայտել ցանկալը ոչ մեկ իմաստ չունի. թե՛ մեջը շատ անարդարություն կսպրդի մեր կամքին հակառակ և թե՛ շատ կոպիտ ու շատ խախուտ արտահայտություն մը միայն կստացվի:

Մանկավարժական ժողովները ինչպես որ ամեն աշակերտի ամեն մեկ առարկայի մեջ ունեցած վիճակով կզբաղվի գոնե տարին երկու անգամ և կլսե ուսուցիչներուն կարծիքներն ու կարճանագրե, այնպես ալ ան պարտական է գոնե նորեն տարին երկու անգամ լսելու ամեն աշակերտի վարքի, բարքի, բնավորության նրբություններ, առավելություններն ու թերիները, դպրոցական կարգապահության դեմ ունեցած թերացումները. թեր ու դեմ ասոնք ալ պետք է հիշվին, և կարևոր դիտողություններն ու նկատողությունները պետք է արձանագրվին:

Մանկավարժական ժողովներուն մեջ ընդգծված թերություն-

ներու մասին դպրոցին տնօրենութիւնը անհրաժեշտ կերպով պետք է խոսի այն տղուն հետ, որուն կվերաբերի՝ միևնոյն ժամանակ տալով իր խորհուրդներն ու նախազգուշացումները: Քիչ-շատ լուրջ պարագաներուն, մանաւանդ երբ մանկավարժական ժողովը այդ մասին հարկ տեսած ըլլա, խնդիրը կհայտնվի նաև ծնողքին:

Ուսուցիչները բոլորն ալ գիտեն ուրեմն խոսվածները և աչքի առաջ կունենան հաջորդ կիսամյակներուն. տնօրենութիւնը գիտե նույնպես և խոսած է մանրամասն տղու հետ. տղան ալ գիտե հիմա իր սխալը, թերութիւնը, ուսուցիչներուն կարծիքը և անոնց տված խորհուրդները, ծնողները տեղյակ են նմանապես: Այսչափը լիովին հերիք է, եթե աշակերտի օգուտն է մեր նպատակը. իր վիճակացույցին վրա խախուտ նիշ մը ավելցնելով ոչինչ չի փոխվիր:

III. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ԸՆԹԱՑԻԿ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քննութիւնը միջոց մըն է այսինչ կամ այնինչ բանի մեջ մեկուն ունեցած կարողութիւնը քանի մը հարցով քիչ-շատ ծանոթանալու համար, իսկ աշակերտները, որոնց կարողութիւնները ծանոթ են մեզի, պետք է որ ծանոթ ըլլան մեզի, կարիք չունին որևէ քննութեան: Ինչքան փոքր են, այնքան ավելորդ բան մըն է աստիճան, որովհետև բազմաթիվ պահերով մեկ կամ երկու ուսուցչի ձեռքին տակն են անոնք:

Մանկապարտեզի մեջ ինչպես նիշը, այնպես ալ քննութիւնը ծիծաղելի խոսք մըն է: Նախակրթարանի մեջ, ըլլա տարրական, ըլլա բարձր, կրնա միայն «մուտքի քննութեան» մասին խոսք ըլլալ. երեխան կուգա մեր դպրոցը մեզի անծանոթ ուրիշ հաստատութենե մը, և չգիտենք հաստատ, թե մեր որ կարգը դնենք. անհրաժեշտ կըլլա մեկ-երկու ամեններն ավելի դժվարութիւն ներկայացնող առարկաներե քանի մը հարց ու փորձ, գրութիւն մը, հաշիվ մը իր նստելիք դասարանը որոշելու համար:

Ասկե անդին ուրիշ ոչ մեկ քննութեան պետք չկա. տարվան վերջը իր երկու կիսամյա նիշերուն և իր ուսուցիչներու տված բա-

ցատրութիւններուն վրա հենած մանկավարժական ժողովը կփոխադրե տղան հաջորդ դասարանը: Բոլորովին ավելորդ ներկայացում մըն է ամեն տարի դասարանե դասարան աշակերտ մը փոխելե առաջ ավելի կամ նվազ հանդիսավոր ու հանրային քննութեան մը ենթարկել աշակերտները: Ոչ մեկ օգուտ չունին աշակերտները այդ ավելորդ խաղեն ու վախեն: Իսկ եթե ատիկա ուսուցիչներու աշխատանքը չափելու համար է, նախ՝ բավական մակերեսային չափ մըն է, երկրորդ՝ չափողը ո՞վ է և երրորդ՝ ի՞նչ է աշակերտութեան հանցանքը: Ուսուցիչներու աշխատանքին հետևելու համար տեսուչ կա. վարչական մարմինները պետք է հենվին ու վստահին իրենց նշանակած տեսչին:

Դասարանե դասարան անցումը կկատարվի ուրեմն դպրոցի մեկ ծայրեն մյուսը կիսամյակներու և ուսուցիչներու տված բացատրութիւններու հիման վրա: Եթե տկարութեան, բացակայութեան կամ անբավարար աշխատանքի հետևանքով տղուն հաջորդ դասարանը անցնելը օգտակար չի նկատվիր մանկավարժական ժողովին կողմե, տղան կմնա նույն դասարանը և հաջորդ տարին: Եթե ընդհանրապես բավարար է, բայց մեկ կամ երկու առարկաներու մեջ պետք եղածին չափ ուժեղ չէ, մանկավարժական ժողովը կվճռի, թե ինչ կերպով կրնա տղու ուժեղացմանը նպաստել: Բացի ծնողներուն և իրեն աշակերտին տրված խորհուրդներեն, սովորական միջոց մըն է նաև վերաքննութիւն նշանակելը, այսինքն տղու թույլ եղած առարկաներեն ուսուցիչը մանրամասն կննչանակե, թե ամառվան արձակուրդներուն գրքին ո՞ր երեսները, ո՞ր հարցերը, ո՞ր խնդիրները և ուրիշ ինչ աշխատանք պետք է կատարե. նոր տարեշրջանին սկիզբը ուսուցիչը թեթև հարցաքննութեան մը կենթարկե տղան՝ ստուգելու համար, թե ի՞նչ չափով և ի՞նչ արդյունքով օգտագործած է ամառնային արձակուրդը: Վերաքննութիւնը միջոց մըն է տղուն որոշ ուղղութեամբ աշխատեցնելու. քիչ կպատահի, որ ամառնային այդ աշխատանքեն ետքը տղան նորեն նույն դասարանը պահվի, թեև ընդհանրապես մեծ հառաջդիմութիւն մը չեն բերեր տղաքը աշնան, բայց օգտված կըլլան միշտ: Մնացածը ուսուցիչը կրնա լրացնել տալ նոր դասարանին մեջ:

Մուտքի քննութենեն, վերաքննություններեն և դասարան փոխելու ավելի կամ նվազ ձևական ու ցուցադրական քննություններեն դուրսը կմնա միայն ավարտման քննությունը, այսինքն դպրոցական ամբողջ շրջանը լրացուցած աշակերտներուն տված քննությունը, որ ստանան ավարտականի վկայական:

Նախ՝ սկզբունքով կընդունվի, որ տղաքը պետք է քննվին դպրոցի մեջ սորված բոլոր առարկաներեն և բոլոր ստիճաններուն վրա. բան մը, որ բարեբաղդաբար անկարելի է իրագործել, ո՛չ աշակերտը կրնա տարիներ առաջ սորված բանները հարկ եղած չափով ու ձևով պատասխանել, ո՛չ ժամանակ և հնարավորություն ունի այդ բոլորը նորեն կրկնելու և աչքե անցընելու, ո՛չ ալ ուսուցիչը կամ քննիչը կարելիություն ունի քառորդ ժամվան մը մեջ այդ բաներուն մոտենալու և հարցաքննելու: Գործնականապես ավարտականները կքննվին իրենց վերջի տարվան մեջ սորված նյութերուն վրա, որոնց եթե բավարար պատասխանեն, կենթադրվի, որ նախորդ տարիներու սորվածներն ալ անշուշտ յուրացուցած են, այսինքն ավարտական ըսված քննություններն ալ կղառնան նորեն դասարան փոխելու քննություն, վերջինը:

Անոնք, որ ժամանակի ու հասկացողություններու աստիճանական փոփոխումով կամաց-կամաց կհամակերպին, որ ձեռք վերցնենք դասարանե դասարան ամեն տարի կատարված հանդիսավոր քննություններեն, կպահանջեն, որ այս ավարտականի քննությունները գոնե պահեն իրենց բոլոր ուժը և բոլոր հանդիսավորությունը: Բայց այդ հանդիսավորությունները ամենեն ավելի հոս են վնասակար ու ավելորդ: Եթե իրավ մեր ուզածը տղոց կարողությունները չափելն է, պետք է խուսափինք ամեն բանե, որ անոնց կեդրոնացումը կրնա ցրվել, կրնա ավելորդ վախ ու հուզում պատճառել և պատահականություններու խաղը չատցնել: Եթե քննություն պիտի կատարվի, հնար եղածին չափ ճշմարտության մոտիկ և արդար ըլլալու համար ձեռք պետք է քաշենք ամեն հանդիսավորութենեն և ցուցադրություններե: Երես երեսի քննող ու քննվող, բարյացակամ ու հանդիստ խոսվածքով, որուն զույգ կերթան գրավոր քննությունները:

Արդ՝ այդ հանգիստ ու լուրջ ավարտական քննութիւնները իմաստ մը ունին միայն հոն, ուր հացի, արվեստի և արհեստի տեսակետեն կարևորութիւն ներկայացնող վկայական մը պիտի տրվի. այդ բացառիկ առավելութիւնները տվող վկայականը ունենալու համար անչուշտ որ պետք է մանրամասն քննութենե մը անցնել և ան ալ ո՛չ պատահական ու ցուցադիր և անարժեք քննութիւններե, այլ պետական օրենքով որոշված և հսկված, իսկոտ լուրջ քննութիւններե, բացառապես գործեն հասկցող մասնագետ մարդոց ձեռքով: Երբ մասնագիտական վարժարան մը պիտի վկայե, թե այսինչ անհատը այսինչ գործը վարելու կարող է, պետք է հաստատ գիտնա, որ այդ անհատը իսկապես տիրացած է պետք եղած կարողութիւններուն. այսպես կպահանջե հանրութեան շահը:

Գ. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական վարժարաններու մեջ թե՛ դասարանե դասարան անցնող տարեկան քննութիւնները արժեք և իմաստ ունին, թե՛ մանավանդ մասնավոր կերպով կարևորութիւն կներկայացնեն ավարտական քննութիւնները, որոնց հիման վրա վկայական պետք է տրվի քննվողին ձեռքը: Եվ ինչքան մասնագիտական վարժարանը բարձր աստիճանի է, այնքան ավելի անհրաժեշտորեն ծանր ու խիստ և մանրամասն կըլլան իրենց քննութիւնները, քանի որ անոնք կհայթայթեն պետութեան ու հանրութեան համար ամենաբարձր հեղինակութիւններն ու վարիչները:

Բայց հարցը տարբեր է ընդհանուր կրթութեան վերաբերմամբ. այդ կրթութիւնը ամենքը կստանան և ամենքը պետք է ստանան. մասնավոր իրավունքներ և առավելութիւններ չի տար ոչ ոքի. ամենուն համար է, ուրեմն և պետք չունի մասնավոր քննութիւններու և մասնավոր վկայականի: Այո՛, ինչքան աւելն որ դպրոցները իրենց բոլոր շրջաններով պարտադիր չեն ամենուն, և ինչքան աւելն որ ընդհանուր կրթութեան վրա ալ կնայվի հաց ու ապրուստ ճարելու միջոցի մը վրա, բնական է, որ ընդհանուր կրթութեան համար ալ վկայական մը ստանալը պահանջ կդառնա, ինչպես որ է այս վայրկյանիս: Բայց ինչ չափով որ ընդհանուր կրթութիւնը իր բոլոր աստիճաններուն վրա հացի խնդիրը իրմեն

հեռացնել և մարդկային բարձրացման ճգտող վայր դառնա, այնքան ավելորդ բան մը կդառնա ավարտական քննութիւնը և անոր վրա հենված վկայականը:

Ընդհանուր կրթութիւնը եթե որևէ պատճառով պետք ղջա վկայական մը տալու իր ավարտականին ձեռքը, ատոր համար ան ունի վերջին երեք լսարաններու մեջ ամեն առարկայի համար տարեկան երկու կիսամյա նիշ. այդ երեք լսարաններու ընթացքին կրնա տալ պարտադիր կերպով ամեն առարկայե քանի մը հատուկ դրաւորներ. այս բոլոր նիշերեն հանված միջին մը շատ ավելի հաստատ ու արդար վկայութիւն մը կուտա, քան որևէ ավարտական քննութիւն, ինչքան ալ որ ղժուշ ու խնամքով կատարված ըլլա:

IV. ՎԿԱՅԱԿԱՆ

Նիշ, քննութիւն ու վկայական իրարու հյուսված դաղափարներ են. մեկուն մասին երբ կխոսինք, գոնե մասամբ խոսած կըլլանք նաև մյուսի մասին:

Մանկապարտեզի մեջ ուրեմն խոսիլ պետք չէ որևէ նիշի, քննութեան ու վկայականի մասին: Փոքրիկները տարվե տարի կանցնին իրենց երեք կարգերեն և կուգան նախակրթարանի առաջին բաժանմունքը առանց այլևայլութեան:

Դպրոցական հաջորդ երեք շրջաններուն նիշը կիսամյա է, տարին ընդամենը երկու նիշ, ուսուցչի՝ իր դլխուն կամ ծոցի տետրակին մեջ դրած շատ մը մասնավոր նիշերու վրայեն քաշված:

Արդ՝ այդ կիսամյա նիշերը պետք է հայտնվին ծնողներուն նաև գրավոր կերպով: Ամեն տարրական նախակրթարանի աշակերտ լավ է ունենա իր վիճակացույց գրքույկը՝ փոքրադիր ու սիրուն կազմով ուրը կիսամյակներու համար հատկացված հատուկ էջերով, ուր դասարանական ուսուցիչները ամեն կիսամյակի վերջը կը գրեն տղուն նիշը, որ վարչութեան կողմե կկքննվի: Ասով թե՛ տղաքը և թե՛ ծնողները կունենան միշտ իրենց աչքին առջև մինչև առաջին շրջանին վերջը բոլոր նիշերը պարզ ու հստակ ամեն համեմատութեան համար և մտածողութեան:

Նույն ձևով բարձր նախակրթարանի ամեն մեկ աշակերտ

կունենա իր բարձր նախակրթարանի վիճակացույց գրքույկը առանձին՝ նորեն բաղկացած ութը հատուկ էջերե ութը կիսամյակներու համար:

Նույն ձևով ալ նաև գրքույկ մը լսարանական շրջանի համար, ուր կնշանակվին երեք լսարանական տարիներուն իր կիսամյակները, ուր նշանակված կըլլան իր ո՛ր ճյուղին պատկանիլը, ճյուղի ուսուցչին հատուկ վկայությունը յուրաքանչյուր կիսամյակի համար, թե ինչ աշխատանքներ է տղան կատարած և ինչ աստիճան հաջողությամբ:

Որով ավարտական տղա մը և անոր ծնողքը պաշտոնապես կունենան ամբողջ դպրոցական կիսամյակներու հավաքածուն, որ շատ ավելի թանկագին բան մըն է և շատ ավելի բան կըսե ու կբացատրե, քան որևէ ավարտական վկայական: Եվ կըսե ու կբացատրե իրեն՝ տղուն և իրեններուն. անշուշտ որ այս վիճակացույցները հանրության համար չեն:

Ինչքան ալ բոլոր դպրոցները երևակայենք, որ նույն ծրագրով, նույն օրենքներով և նույն պահանջված կրթությունը ունեցող պաշտոնյաներու ձեռքով ղեկավարված ըլլան, նորեն դպրոցները շատ ու շատ բաներով իրարմե զգալիորեն տարբեր կըլլան, և ավարտողներեն շատերը կրնան ցանկալ, որ ունենան հաստատում մը, թե իրենք այսինչ դպրոցին մեջ լրացուցած են իրենց ընդհանուր կրթությունը: Եվ ամեն աշակերտ իրավունք ունի այս տեսակ վկայող թուղթ մը պահանջել իր դպրոցի վարչությենեն: Եվ այս վկայականին մեջ, որ նաև հանրության համար է սահմանված, ո՛չ մեկ հառաջդիմության, ո՛չ մեկ վարք ու բարոյականության խոսք ըլլալու չէ, ո՛չ ալ որևէ նիշ: Այսինքն ինքնության թուղթի նմանող կրթական ինքնության թուղթ մը: Պարտադիր ու լրիվ ընդհանուր կրթության ժամանակ դպրոցական ավարտական վկայականը ուրիշ բան ըլլալ չի կրնար:

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՉՈՐՍ ՇՐՋԱՆՆԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

Ա. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

Ի. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Մարդուս սորվելիք բանները բնականորեն կբաժնվին երեք տեսակի:

Նախ՝ միայն մտքով սորվելիք բաներ, այսինքն երբ էապես մտավոր կարողություններն են, որ կաշխատին՝ դիտել, համեմատել, եզրակացնել, խմբել, հիշել, երևակայել, հասկնալ, ըմբռնել, ուր շատ չնչին է համեմատաբար մկաններուն դերը և բոլորովին ծառայական, և այդ դերն է հնարավոր դարձնել դիտելու, ուշադրություն դարձնելու, փորձելու համար անհրաժեշտ եղող շարժումները կատարելը. բուն ու միակ նպատակը մտքի հարստացումն է, իմացական նոր ձեռքբերումներ:

Երկրորդ՝ այն տեսակ բաներու յուրացումը, ուր հավասարապես կաշխատին միտքն ու մկանները և կձգտին մտքի ու մկաններու զարգացմանը այս կամ այն ուղղությամբ. մկանները միայն կողմնակի ծառայական օժանդակ մը չեն, այլ բուն գլխավոր դերակատարը և աշխատանքի հիմնական նպատակներեն մեկը. այդպես ալ միտքը միայն այդ շարժումներուն հրամանը տվողը չէ, իբրև կողմնակի անհրաժեշտ գործիք մը, այլ այդ մկանային գործադրությունները խորունկ կապեր ունին նաև մտքի զարգացումին ու հարստացումին հետ, մտքի աշխատանքներուն ու ձգտումներուն հետ: Այս խումբի բոլոր աշխատանքները կծառայեն մտքերու և զգացումներու արտահայտության. այսպես՝ խոսիլ, գրել, կարդալ, նկարել, երգել, նվագել, այսինքն լեզու ու գեղարվեստ:

Երրորդ՝ այն տեսակի սորվելիք բաներ, ուր բուն նպատակը

մկանային որոշ ուղղությամբ զարգացում մըն է, ուր մտքի մասնակցությունը ավելի ծառայական է, շարժումներուն համար հարկ եղած հրամանները տալը: Անշուշտ այդ հրամանները տալով միտքը որոշ վարժություն ու փորձառություն ձեռք կբերե ինքն ալ, քանի որ ջղային ու մկանային դրությունները անխզելի կապված են իրար, և առանց մեկուն մյուսը գործել չի կրնար, մանավանդ մկանները առանց ջղային կեդրոններու հրահանգին հավիտյան անշարժ են. բայց և այնպես մտքի՝ այդ որոշ ուղղությամբ շարժումներու դեկավարության մարգվիլը երկրորդական բան մըն է իրեն մտքին համար. բուն օգտվողը մկանային աշխատանքն է, կարևորը այդ մկանային նրբություններուն տիրանալն է: Այսպես են բոլոր արհեստները և արվեստները, մկանային վարպետություններն ու ճարպիկությունները՝ քալել, ցատկել, զանազան խաղեր, կեցվածք, շարժումներու վայելչություն: Ասոնք և ասոնց նմանները ըստ էության մկանային նուրբ ու բարդ գործածություններ են, նուրբ ու բարդ որոշ հաջորդականությամբ:

Եվ ատոնց տիրացումը ընդհանուր անունով կանվանենք արվեստ կամ արհեստ: Կըսենք արվեստ, ինչքան որ շատ ըլլա մեջը մտքի աշխատակցության բաժինը, բացի շարժումները հրամայելեն, ինչքան մեծ ըլլա բուն մտածումի ու արտահայտության բաժինը: Կըսենք արհեստ, ինչքան որ պակսի բուն մտային ու արտահայտական մասնակցությունը, ինչքան որ մտքին դերը միայն շարժումներուն հրամայելը մնա: Բոլորովին բացակայում մտքի ու զգացումի՝ անկարելի է. հոգին ամբողջություն մըն է. կարելի չէ որևէ շարժում արտաքին, առանց հոգեկան ներքին կողմերու գոնե թեթև, գոնե երեսանց ու հարևանցի մասնակցության:

Արդ՝ այս երեք տեսակի սորվելիք բանները միասին առած մեկ բառով մը կըսենք «ուսում»: Ուսում ստանալ՝ կնշանակե սորվելիք բանները սորվիլ: Թեև անշուշտ գլխավոր տեղը վարժված ենք տալու մտքով սորվելիք առաջին տեսակի յուրացումներուն, քիչ մը ավելի նվազ կարևորությամբ կնայինք լեզուներու և գեղարվեստներու վրա, այսինքն հոգեկան արտահայտության ուսումներուն, իսկ մկանային գերիշխանությամբ կատարվելիք յուրացումներուն շատ ավելի դժվարությամբ ուսում անունը կուտանք. կըսենք

մարզանք, վարժություն, վարպետություն, չնորհք, բայց անունը չի փոխեր ոչինչ. ուսում մըն են ասոնք ալ:

Այս ուսումներուն մեկ շատ խոշոր մասը կուտա մանուկին շրջապատող կյանքը, առանց որևէ ծրագրի ու ղեկավարության, մասամբ կուտա և ընտանիքը ուզելով ու գիտակցաբար, բայց առանց հաստատ ծրագրի ու կանոնավոր ղեկավարության. դպրոցներն են, որ կուզան կարգի բերելու, ամբողջացնելու, որոշ ու հաստատ ծրագրով ու հաջորդականությամբ վերստին կերտելու տղոց՝ տունեն ու դուրսեն ձեռք բերած ուսումներն ու վարժությունները: Եվ դպրոցական ծրագիրներուն մեջն ալ ուրեմն ուսումները բնական կերպով կբաժնվին երեք խումբի. ա) գիտական ուսումներ, բ) արտահայտական ուսումներ և գ) մկանային ուսումներ:

II. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ ԵՐԵՔ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ղեկավար կրթության մեջ ուսման առաջին նպատակն է, հետևապես, մտավոր պաշարի բազմակողմանի հարստացումը: Երկար դարերի ընթացքին մարդկության կատարած բոլոր կարևոր դիտողությունները, դատողությունները, փորձերը, ենթադրությունները, տեսությունները դիզվեր են իրարու վրա, կապվեր են իրարու պատճառական կապերով ավելի խոր մտածող գլուխներու աշխատանքով, հետզհետե լրացվեր են ու դարձեր ամբողջական ուրույն գիտություններ, գիտական ուրույն ճյուղեր: Եվ գիտական ուսման բնականեն գծված նպատակն է այդ բոլոր գիտություններու հիմնական մասերուն, հիմնական ըմբռնումներուն և հիմնական տեղեկություններուն տեղյակ ու գիտակ դարձնել նորահաս սերունդը: Մտքի պաշարի հարստացման ու խորացման այս աշխատանքը միևնույն ժամանակ կմարզե ու կսրե բնականաբար անհատներու մտավոր կարողությունները, ինչպես և անոնց ճաշակն ու զգացումները:

Այս բոլոր իրարու կապված, իրարու մեջ մտնող, իրար լուսավորող, իրարմե փոխառություններ ընող և իրարու վրա հենվող գիտությունները հատակության համար կրնանք բաժնել երեք խումբի:

Առաջին խումբը կկազմեն այն գիտությունները, որ իրերու և իրականության վրա դործադրվելիք հաշիվները, համրանքը,

չափերն ու կշիռը կուսումնասիրեն. նյութի հետ գործ չունին և ամբողջովին մարդկային մտածումին ու վերացականացումին ծնունդ են, մարդկային տրամաբանական պահանջ և դարձած են բոլոր մյուս գիտություններու ուսումնասիրությանատեն անհրաժեշտ պայման, քանի որ ամեն ինչ թիվով ու հաշվով վարժված ենք արտահայտելու: Այս հաշվական գիտություններն են՝ թվաբանությունը, հանրահաշիվը, երկրաչափությունը, եռանկյունաչափությունը, մեքենագիտությունը, նույնիսկ տիեզերագիտությունը. վերջին երկուքը թեև բնական գիտություններ են ըստ էության, բայց խիստ մեծ չափերով հենված են հաշվական ուսումնասիրություններու վրա:

Գիտություններու երկրորդ խումբը բնական գիտություններն են, այսինքն ուսումնասիրությունը բնության բոլոր երևույթներուն և ուժերուն և անոնց բոլոր կողմերուն, մարդն ալ իհարկե մեջը հաշված: Իր գլխավոր ճյուղերն են՝ բնագիտությունը, տարրագիտությունը, հանքաբանությունը, բուսաբանությունը, կենդանաբանությունը, բնախոսությունը և հոգեբանությունը: Բնությունը ուսումնասիրող այս բոլոր զուտ գիտությունները բոլորն ալ ունին իրենց վրա հենված իրենց գործնական գիտությունները և ան ալ քանի մը տեսակի, որոնց մեջ կուսումնասիրվին, թե բնական այս կամ այն երևույթը, ուժը, իրը, բույսն ու կենդանին ինչ ձևով մարդու կողմեն կօտագործվին, ինչե՞ր կպատրաստեն, ինչո՞ւ կպատրաստեն, ինչպե՞ս կպատրաստեն:

Երրորդ խումբը կկազմեն ընկերական գիտությունները, երեք տեսակ ունին: Առաջին տեսակը կուսումնասիրե մարդու հանրային համայնական կողմերը և ստեղծագործությունները առանձին առած, իբրև ուրույն գիտական ուսումնասիրություն, ինչպես են՝ պետություն, դասակարգեր, կրոն, իրավունք, տնտեսություն, արդյունաբերություն, կրթություն, վարք ու բարք, բարոյականություն և անոնց ամեն մեկուն հիմնած հաստատություններն ու կազմակերպությունները՝ աչքի առաջ ունենալով անոնց ծագումը, կրած աստիճանական փոփոխությունները, տարբեր տեղերու տարբեր ձևերը մինչև անոնց արդի զարգացման աստիճանը:

Երկրորդ տեսակը խառնուրդ գիտություն մըն է, մեկ ոտքով բնական գիտություններուն մեջն է իր տեղը, մյուս ոտքով՝

ընկերական դիտուԹյուններուն մեջ. իր նյուԹին է մեր այս աշխարհի ուսումնասիրուԹյունը իր ամեներական դիրքով, իր ներքին ու արտաքին ձևով ու կազմով, իր բերքով ու հագուստով, ինչպես և մարդոց կազմած բաժանումներով, ճամբաներով, արդյունաբերուԹյան ուսումնասիրուԹյամբ, մարդկային լեզուներու, կրոններու, պետուԹյուններու ներքին կազմի տարբերուԹյուններով և այլ ամեն տեսակի մարդկային կազմակերպուԹյուններով ու հաստատուԹյուններով այնպես, ինչպես որ այսօր մեզի կներկայանա:

Ընկերական դիտուԹյուններու երրորդ տեսակը ընդհանուր պատմուԹյունն է, մարդկուԹյան կենսագրուԹյունը. ինչպես առաջացեր են մարդկային ընկերական երևույԹները, ինչպես առաջացեր են մարդկային ցեղերն ու ազգերը, ամեն մեկը ինչ գործեր է կատարած, ինչ քաղաքակրԹական վիճակներ է անցած, որոնք են իր գլխավոր ներակատար դեմքերը և անոնց կատարած գործերը մինչև մեր օրերը դարե դար անցնելով և հնար եղածին չափ բոլոր վիճակներու և փոփոխուԹյուններու ինչուն ու ինչպեսը փնտրելով:

Այս ամբողջուԹյունը ընդհանուր անունով մը կանվանենք ընդհանուր պատմուԹյուն, որ երկու որոշ հատված ունի. մեկը՝ ըստ ազգերու և պետուԹյուններու կազմուԹյան կատարված պատմական ուսումնասիրուԹյուններ, որ կրնանք ժողովուրդներու պատմուԹյուն անվանել. մյուս հատվածին մեջ կիյնան զարգացման այս կամ այն հատուկ կողմերու պատմական ուսումնասիրուԹյունները առանձին առած, օրինակ՝ առևտուրի պատմուԹյունը նախնական օրերեն մինչև մեր օրերը, ըլլա մեկ ժողովուրդի մը, ըլլա ընդհանուր բոլոր ժողովուրդներու համար. այդպես ալ նկարչուԹյան պատմուԹյունը, գրականուԹյան պատմուԹյունը, պետական կազմուԹյան պատմուԹյունը, կրոններու պատմուԹյունը, հանրային խաղերու պատմուԹյունը և այսպես բազմաթիվ:

III. ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂ ՈՒՍՈՒՄՆԵՐ

Հոդիի արտահայտուԹյան կծառայեն ամենեն առաջ լեզուները և եաքը՝ գեղարվեստները և գեղարվեստներեն մասնավորապես երեքը՝ բանահյուսուԹյուն, երաժշտուԹյուն և նկարչուԹյուն:

Մարդկային մտավոր զարգացումը, ինչպես և մարդկային

ընկերական կյանքը այս աստիճանի բարձրութեան հասնիլ չէր կրնար, եթէ մարդը հնարած չըլլար, իր նմաններու հետ հարաբերելու, իր նմաններու մտքերն ու զգացումները հասկնալու և իր դիտողութիւնները, դատողութիւնները և ներքին ապրումները իր նմաններուն հայտնելու նուրբ արվեստը ձեռք բերած չըլլար, որ լեզու կանվանենք:

Եվ լեզուներու մէջ ամեն մարդու համար ամենեն առաջ արժէք ու կարևորութիւն ունեցողը բնականաբար իր մայրենի լեզուն է, որ ան սորված է իր մոր շրթունքեն կյանքի ամենթարմ օրերեն սկսած, որ ան լսած է ու խոսած իր ընտանիքին մէջ, իր գյուղին ու քաղաքին մէջ և այն կրթական հաստատութիւններուն մէջ, ուր առած է իր ուսումը: Մեծ է մայրենի լեզվի դերն ու ազդեցութիւնը ամեն մարդու հոգեկան կազմին ու զարգացման վրա. ամեն ժողովուրդ տարբեր կերպով արտահայտութեան իր եղանակներն ունի. մայրենի լեզվով մը խոսիլ՝ կնշանակե քու ժողովուրդիդ, քու ընտանիքիդ, քու արյունակիցներուդ մտածելու եղանակով խոսիլ, անոնց խելքովը մտածել: Եվ խոսքը ինքը կզարգանա ժողովուրդի ու անհատի զուգընթաց զարգացումով, գիտական ամեն բարձրացում, գրական ամեն ծաղկում իր հետ կբերե մտածելու և արտահայտելու նոր ու որոշ մշակում, որոշ ձև ու եղանակ, և փոխադարձաբար որչափ լեզուն նրբանա, ճշդվի ու ճկուն դառնա, այնքան գիտական ու գրական արտահայտութիւնները հստակութիւն ու խորութիւն կստանան:

Լեզվի ուսումը չավարտիր սակայն իր ժողովուրդի լեզվի յուրացումով: Ուրիշ ժողովուրդներու գրական ստեղծագործութիւններուն մոտեն ծանոթ ըլլալու ձգտումը, ուրիշ ժողովուրդներու հետ հաղորդակցելու գործնական պահանջը, ինչպես և դրացի և մանավանդ տիրող ցեղերու բռնի կամ ինքնին գործադրված ճնշումը կհարկադրեն, որ գրեթե ամեն տեղ բացի իրենց մայրենի լեզվեն մարդիկ սորվին հաճախ նաև մեկ, երկու, նույնիսկ ավելի օտար լեզուներ ավելի ու նվազ խորութիւնով: Մինչև ժողովուրդի մը լեզուն չնորհքով չգիտնաս՝ շատ դժվար է այդ ժողովուրդի հոգին ճանչնալը, նույնիսկ եթե այդ ժողովուրդի մէջ ապրիս. կենդանի խոսքի, առօրյա գրութիւններու և գրականութեան մէջն է, որ ժողովուրդի մը հոգին իրապես կբացվի:

Մեր Հուզումներու, զգացումներու, սլաստումներու, ցանկութիւններու, բառերու միջոցով կատարված կառուցումները, բառերով գծված ու դիմագրված նկարները, բառերով քանդակված արձաններն ու շենքերը, բառերով ներկված բնութեան նկարագրութիւնները, բառերով հիւսված երաժշտութիւնը և բառերով ներկայացված կեանքի ու հոգիի կտորները կանվանենք բանահիւսութիւն:

Գույներով ու գծերով արտաքին բնութեան իրերն ու տեսարանները նմանցնելով մեր հոգին պատմելը, մեր զգացումները արտահայտելը, մեր Հուզումները եղանակել կարողանալը կանվանենք նկարչութիւն:

Իսկ ձայնի ելևէջներով, ձայներու հաջորդականութեամբ հոգիին մէջ անցածն ու հոգիին հուզումները պատկերելը, պատմել, զգացնել, ներշնչել ու վարակել կարողանալը կանվանենք երաժշտութիւն. ամենեն առաջ մարդկային ձայնով, հետո նաև գործիքներով, ժամանակակից աշխարհի համար գլխավորապես ջութակով ու դաշնակով:

Կան ու կրնան ըլլալ բազմաթիւ ուրիշ գեղարվեստներ ալ, որոնք երբեմն իսկապես զուտ գեղարվեստական բարձունքները կհասնին, բայց ընդհանրապես ավելի արվեստ են, քան գեղարվեստ, և վերի գլխավոր երեք գեղարվեստներն ալ, երբ պետք եղած չափով ու խորութեամբ չըլլան, հոգիի արտահայտութիւնը կդառնա արվեստ, երբեմն նույնիսկ արհեստ, այսինքն տիրողը կըլլա մկանային աշխատանքը, վարժութիւնը, կրկնութիւնը, հետևողութիւնը կամ կողմնակի հաշիվներ: Գեղարվեստ ընել ուզելը հերիք չէ, գեղարվեստը հոգիեն, զգացումներեն և հուզումներեն պետք է հոսի, ո՛չ դիտավորութիւնեն: Խելքն ու վարժութիւնը պիտի գան միայն ներքին մղումին դյուրութիւն և հնարավորութիւն տալու:

Գեղարվեստներու ուսման մէջ երկու շատ տարբեր կողմեր կան: Առաջինը՝ այս կամ այն հատուկ միջոցով իր հոգին արտահայտել կարողանալը, այսինքն գեղարվեստի մը գործադրութեան տեր ըլլալը, բանահյուսել, երգել ու նկարել կարողանալը կամ գործիքի մը վրա նվագել: Երկրորդը՝ երբ ինքը կարող չէ արտահայտել իր հոգին այդ գեղարվեստով ցանկալի կամ տանելի չափով մը, բայց վարժված է, կլերթ ականջ ունի ու աչքեր, հարկ եղած

ճաշակի զարգացումը ձեռք է բերած՝ ուրիշներու կատարած գեղարվեստական արտահայտությունները ըմբռնելու, հասկնալու և վայելելու:

Անշուշտ որ առաջինը շատ ավելի դժվար է և շատ ավելի երկար ճիգերու պետք ունի և լուրջ աստիճանի մը հասնելու համար պետք ունի նաև մասնավոր տրամադրութեան ու հակումի: Երկրորդը ձեռք բերել համեմատաբար ավելի դյուրին է. շատ լսել երաժշտական ընտիր կտորներ, շատ տեսնել մեծ նկարիչներու ու քանդակագործներու ստեղծած գործերը և գեղարվեստական գրական երկերու հաճախակի ընթերցումը հերիք է ճաշակի կրթութեան ու վայելքի համար:

Թե՛ ընել կարողանալը և թե՛ հասկնալը կարողանալը հաճույքի մեծ աղբյուրներ են, անշուշտ երկու տարբեր տեսակի հաճույքներ, բայց երկուքն ալ մեծ ուրախութիւններ են, կյանքին թև ու մխիթարութիւն կուտան և հոգիին՝ երջանկութիւն:

Որոշ չափով մը ամեն մարդ ալ կարողութիւն ունի և՛ բանահյուսելու, և՛ նկարելու, և՛ երգ ու նվագի, և այդ չափով արժեք մըն է, որ ամեն մարդ ալ քիչիկ մը գեղարվեստել կարողանա. ստվար մեծամասնութիւնը ատով գեղարվեստագետ չի դառնար, և պետք ալ չկա այդ ուղղութեամբ ավելորդ ճիգեր ընելու, բայց այդ տարրական կարողանալը ձեռք բերելով նախ՝ ավելի խոր կհասկնա ու կգնահատե գեղարվեստական աշխատանքն ու երկը, և երկրորդ ալ՝ այդ գեղարվեստական ներքին տարրական ծանոթութիւնը շատ է պիտանի կյանքի առօրյա հոսանքին մեջ, և՛ բազմատեսակ այլ աշխատանքներու գործադրութեան ընթացքին, և՛ բազմատեսակ խաղերու, և՛ զվարճութիւններու ընթացքին:

IV. ՄԿԱՆԱՅԻՆ ԳԵՐԱԿՇՌՈՒԹՅԱՄԲ ՈՒՍՈՒՄՆԵՐ

Գլխավորապես մկաններու աշխատանքով և մկաններու դերակշիռ կրթութեամբ մարդու սորվելիք բաները չորս տեսակի են՝ շարժուն խաղեր, մարմնի մարզանք, զանազան ձեռարվեստներ և արհեստներ:

Ասոնց մեկ մասը կսորվինք ու կկրկնենք հատկապես մկանները գործածելու նպատակով, մեր մկանային ուժերը գործադրած

ըլլալու բավականութեան համար էապես, այսինքն նպատակը ինքը մկանային աշխատանքն է. զանազան խաղեր, շարժում, պտոյտներ կկատարենք պարզապես մարմնական մարզանք ունենալու համար:

Ավելի հաճախ այդ խաղերուն, մարզանքներուն և արհեստի աշխատանքներուն վրա մկանային հաճույքին զատ կան նաև առողջապահական տեսակետներ. շրջանառութիւն, շնչառութիւն, այս կամ այն ուրիշ ներքին գործարանի մը մկաններուն տկարութիւնը սրբագրելու ցանկութիւն, այսինքն երկու նպատակի կծառայեն միաժամանակ:

Իսկ բազմատեսակ ձեռարվեստները, ինչպես են՝ հյուսել, կարել, բանիլ, ձևել, փակցնել և մատներու այլ ամեն տեսակի կրթութեամբ կատարվող ավելի կամ նվազ կարևոր աշխատանքներ, արդեն մկանունքի համար չեն: Այդպես ալ դեղարվեստներու գործադրութեան համար հարկ եղած մկանային մասը, ուր նույնպես ձեռքի ու աչքի մկաններն են գլխավորապես գործողն ու կրթվողը, բայց մկանունքին կրթութիւնը արդեն իրեն մկանունքին համար չէ, այլ մկանունքեն դուրս ուրիշ նպատակի մը իրականացման համար կատարված աշխատանք է:

Ինչպես որ մտքի ուսումը երբեմն մտքի հարստացման համար է, մտքի ճկունացման ու խորացման համար էապես, ուրիշ անգամ մը ատոր կից կերթա նաև գործնական տարբեր նպատակ մը. ուրիշ անգամ ալ մեր ապրուստն ու մեր հացը հանելու մտահոգութիւնեն կղեկավարվի: Ճիշդ այդպես ալ լեզուները և գեղարվեստները երբեմն բուն իրենց նպատակին կծառայեն միայն, այսինքն հոգեկան ներքին աշխարհի և հուզումներու արտահայտութեանը միայն, մինչ ուրիշ անգամներ այդ արտահայտութիւնը կկատարվի որևէ կողմնակի նպատակով մը կամ շահի իբրև աղբյուր:

Ընդհանուր առումով շարժուն խաղերը կուտան հավելյալ կերպով ճկունութիւն ու ճարպիկութիւն մարդուս բոլոր շարժումներուն ընդհանրապես, այլև կամքի կրթութիւն, արագ դատելու և արագ ընտրելու վարժութիւն, ընկերական զգացումներու ամրացում և փոխադարձ պարտավորութիւններու ավելի խոր ըմբռնումը:

Մարմնամարզը առողջապահական մեծ կարևորություն ունի միշտ, այլև կեցվածքին ու շարժումներուն վայելչություն կուտա, խմբովին շարժումներու ճաշակը կուտա և այդ շարժումները նուրբ ու զուսպ գործադրելու կրթությունը կուտա:

Ձեռարվեստներուն դերը մեծ է իբրև ամեն տեսակի գեղարվեստներու և արվեստներու գործադրության հիմնական մկանային անհրաժեշտ մասը, այլև ընդհանրապես մատներուն նրբություն կուտա և զգայարանքներուն՝ սրություն:

Արհեստները երբ ուսուցման մեջ կառնվին, ընդհանրապես աչքի առաջ կունենանք նստուկ կյանքի դեմ հակազդելու իբրև միջոց, մտավոր խիստ լարումի դեմ հակադրվող իբրև մկանային աշխատություն, որ միայն խաղ ու վազվզուք չըլլա, այլ ավելի լուրջ բան մը, որով հնարավոր է զբաղվիլ նաև մինակ եղած ժամանակ: Երկրորդ՝ մտածումն ալ «գործնական» է, այսինքն սորվեցնել այն տեսակ բան մը, որ տա մարդուս արհեստներու վերաբերյալ քանի մը հիմնական վարժություն ու ծանոթություն, իբրև պիտանի ընդհանուր նախապատրաստական աշխատանք մը իր ապագա ընտրելիք գործին ու ասպարեզին համար:

Բ. ԴՊՐՈՑԻ ՏԱՐԲԵՐ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՈՒ ՎՐԱ ԻՐԱՐՈՒ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Արդեն չեշտած եմ տարիներու մեծ ազդեցությունը կրթական գործին վրա, բայց դպրոցի մասին խոսիլ անկարելի է առանց նորեն անգամ մը չեշտելու, որ ուսման չորս աստիճանները բոլորովին ոգիով և գործադրությամբ իրարմե տարբեր կրթական հաստատություններ են, ամեն անգամ հարմարցված աշակերտներու տարիքին, հոգեբանական զարգացման և մտավոր կարողության:

2. Ո՛չ միայն դասավանդումը, ո՛չ միայն նյութերը ուսման, այլև նիստ ու կացի ձևերը, վարմունքի նրբություննները, ուսուցչի և աշակերտներու կապն ու հարաբերությունը, իրարու խոսիլ, վարվելու ձևերը, իրենց երթալ-գալու նրբություննները, ժամերը,

նույնիսկ իրենց պատասխանները աստիճան աստիճան չատ զգալի կերպով կփոխվին, և՛ մեծ, և՛ խոշոր սխալ մը կըլլա նախակրթարանին պզտիկներուն հետ վարվիլը վերին նախակրթարանի տղոց հարմարցնելով:

3. Անշուշտ չատ-չատ կետեր կան, որոնք բոլոր աստիճաններու վրա ալ էսպես նույն են, բայց ամեն տեղ նրբութիւններ կան և չատ արժեքավոր նրբութիւններ, որոնք սակայն պետք է անպատճառ հարգվին:

Պետք է միշտ աչքի առաջ ունենանք, որ տղան ինքզինքը կզգա ավելի հաստունցած, գիտակից, ուսուցչին մոտեցած. այս ամենը պետք չէ մոռնանք, ատոնք թանկագին բաներ են մեր աղղեցութիւնը ավելի կենդանի կերպով բանեցնելու համար:

Տարրական նախակրթարանը, ինչպես անունն ալ կընդգծե, նախապատրաստութիւն մըն է ամբողջովին, մեկ ծայրեն մյուսը, նախապատրաստական աշխատանք մը, այսինքն ճեռք կբերե դրելկարդալու անհետաձգելի արվեստ, հաշվելու տարրական չորս գործողութիւնները և մյուս բոլոր դեղարվեստական և գիտական ուսումներուն ալ ավելի պարզ նախնական վիճակները:

Բարձրագույն նախակրթարանը արդեն իսկապես դպրոցն է, ուր բոլոր գիտութիւններուն հիմքը կդրվի, ուր տղաքը արդեն հետզհետե այնքան մեծցած են, որ հարաբերութիւնը պիտի սկսի արդեն ընկերական դառնալ ընկերներու և ուսուցչի մեջ. ընկերական-ուսուցչական իհարկե: Իսկ լսարաններու մեջ կատարվածը արդեն լուրջ գիտական աշխատանք է և տղոցը ո՛չ թե «դաս» պիտի տանք, ո՛չ թե «դաս» պիտի պահանջենք, այլ անոնց պիտի վարժեցնենք իրենց բոլոր գիտութիւնները հետզհետե ճեռք բերելուն եղանակները: Ամենեն կարևորը գիտականորեն աշխատանքին մոտենալն է. եթե ըսեմ համալսարանի ամենեն մեծ արժեքը ատիկա է, սխալած չեմ ըլլար:

Լսարանի աշակերտներու վրա, ինչքան ալ պզտիկ երևան երբեմն ատոնք, իրավունք չունինք աշակերտի մը վրա նայելու. անոնց վրա պիտի նայինք ուսումնեն հասկցող և ուսման ճևերը յուրացնելու համար մեզ մոտ եկող թարմաթարմ երիտասարդներ, և երբ այսպես կնայինք լսարանական աշակերտներու վրա, աշխա-

տուիչյան բոլոր ծանրութիւնը կնետվի տղոց վրա. ամեն բան իրենք պիտի փնտրեն, ամեն բան իրենք պիտի ընեն, իրենք պիտի հանեն իրենց գրքերեն. ուսուցիչը իրենց քովն է՝ այդ աշխատանքներու ատեն ուղղութիւն տալու, օգնելու, միջոցները ճարելու, լրացնելու, օժանդակելու և իր անձնական օրինակով, ջերմութիւնամբ ու սիրով դնպի իր գործը տղոց սիրտը վառելու համար դնպի գիտութիւն: Այնպես ալ կյանք ու վարքի մեջ, մարդու մը հետ որչափ շուտ սկսիս իբրև մարդ, իբրև խորհրդակից, իբրև ընտանիքի անդամ վարվիլ, խորհրդակցիլ, այնքան շուտ կհասունանան պատանիները. ընտանիքներ կան, ուր տղաքը կստանան միշտ ամեն բան պատրաստ և մինչև քսան-քսանմեկ տարեկանը կմնան պոնպուլոչ: Այդպես ալ կա ատոր հակառակը և շատ ավելի տարածված: Բարեբաղդաբար մեր Հայ ընտանիքի զավակը, առողջ պայմաններու մեջ տաս-տասնմեկ տարեկանեն սկսած, ընտանիքի անդամ է հաստատ: Խոսակցութիւններուն կխառնվի, խորհուրդներուն կխառնվի, ասանկ չընենք, անանկ ընենք, անանկ չընենք, ասանկ ընենք, և անիկա ինքզինքը կատարյալ հասուն մարդ կզգա, չուկայի գործերեն ալ կհասկնա: Կբերենք դպրոց, կնստեցնենք լսարան, թե դուն աշակերտ մըն ես, դեռ բան մը չգիտես, այս ուսումներեն ալ բնավ չես հասկնա, այնպես որ նստե՛, այսինչ բանը շարադրե՛, այնինչ բանն ալ արտագրե՛. այսինքն տղան մտքին մեջը վրադ կխնդա, որովհետև շատ-շատ բաներու մեջ դուրսի կյանքը քեզմե աղեկ կճանչնա, քու ճաշերուն և դատողութիւններուն կարևորութիւն չի տար, որովհետև դպրոցեն դուրս գալուն պես պետք է վազե իր ընտանեկան ժողովին: Այս ծուռ, անբնական վիճակեն դուրս գալու միակ ճամբան՝ լսարանական կյանքը բոլորովին զատես դպրոցի մյուս մասերեն իբրև առանձին աստիճան մը, ուր արդեն հասակ նետած մարդիկ կուգան միասին աշխատելու, միասին զվարճանալու, միասին իրենց պատանեկութեան օրերը անցընելու, անոնց տրամադրելով, ինչպես ուրիշ տեղ ըսի, մեկ-երկու սենյակ ու ամեն տեսակի հարմարութիւններ: Դուք այսպե՛ս մեծցուցեք տղաքը և այսպե՛ս պահեցեք տղաքը, որպեսզի իսկապես կրթված պատանիներ ունենաք:

Կյանքի առաջին օրերը ամեն մարդ չփման կուգա և՛ բնական երևույթներու, և՛ լեզուներու, և՛ գիղարվեստի, և՛ խաղի: Որով այն ավելորդ հարցը, թե ո՞ր ճյուղը առաջ պիտի սորվեցնել և ո՞ր ճյուղը վերջը, մեջտեղեն կվերնա:

Զորս մեծ ճյուղերն ալ կտևեն անընդհատ ուսման առաջին տարիներեն մինչև հասունացման տարիքը:

Անշուշտ ո՛չ ամեն տարի միևնույն բանը, ո՛չ ամեն տարի միևնույն չափը. քիչ մը կոպիտ կերպով կրնանք ըսել, որ մանկապարտեզին մեջ տիրապետողը խաղն է, բայց միայն տիրողը և ո՛չ ավելի: Լեզուն ահագին դեր կխաղա հոն, գիտությունները նմանապես, գեղարվեստները նմանապես, և պետք չէ մոռնանք, որ երբ գեղարվեստ կըսեմ, միասին կհասկնամ գրական գեղարվեստ:

Տարրական նախակրթարանի մեջ, նորեն կոպիտ կերպով կրնանք ըսել, տիրողը լեզվի ուսուցումն է, միայն տիրողը, այսինքն մյուսներեն ավելի ժամանակ իլողը:

Բարձր նախակրթարանը այդ յոթը-ութը տարիներու ընթացքին քիչ մը ավելի ցրիվ կերպով հետզհետե կկապե իրարու, կվինջե և գիտություններուն ընդհանուր կապը ցույց կուտա: Իսկ լսարանները արդեն, ինչպես տեսանք, գիտություններու յուրացման տեղն է իրենց՝ աշակերտներու ձեռքով և ժամանակի սուվար մեծագույն մասը կխլե (գիտական և գրական բաժին):

Երկրորդ հարցը, որ կուգա, շաբաթական ժամերու թիվն է: Եվ հոս մեջ կուգա բոլորովին նոր և տարբեր խնդիր մը:

Թե՛ մեր, թե՛ օտար փորձերը նկած-հանգած են այն եզրակացության, որ առավոտյան աշխատանքները, թե՛ մեր և թե՛ օտար երկրամասի համար, առավոտյան ժամը 8-են կսկսի. կարելի է ավելի շուտ սկսիլ, ուր որ կլիման կթույլատրե, ուր որ կյանքի հարմարությունները կպահանջեն. ավելի կարևորը՝ թե ե՞րբ կվերջանա:

Հոս հիմնական հարց մը մեջ կուգա. բոլոր այն բաղդավոր ժողովուրդները, որոնք իրենք իրենց տերն են և ազատ են ուրիշ լեզուներ սորվեցնելու պարտադրանքեն, մեծ առավելություն ունին. ինչ որ մենք հայերս հարկադրված ենք ութը ժամվան մեջ դժվարությամբ գլուխ բերելու, ազատ ազգերը կրնան դյուրությամբ

վեց-վեցուկես ժամվան մեջ գլուխ բերել: Ջեք կրնար երևակայել ինչ մեծ տարբերություն է ասիկա գործնական կյանքին մեջ: Նախ և առաջ՝ այդ պահված մեկուկես ժամերը կրնաս բոլորովին արձակել, տղան նետել կյանքի մեջ, երկրորդ՝ այդ ժամերու մեկ մասը կրնաս պահել դպրոցին մեջ և անոր սորվեցնել շատ մը նոր փորձեր, նյութեր, որ մենք՝ հայերս, հնարավորություն չունինք, ժամանակ չկա, և երրորդ՝ ինչ մեծ թեթևություն է տղոց համար և ինչ ինքնության ավելում, երբ օրական փոխանակ ութը ժամի՝ վեց-վեցուկես ժամ միայն կմնա: Եվ գլուխնին չեն լեցներ զարգացում տվող լեզուներով, այլ կլեցնեն երեք-չորս ազգերու բառերը իրարու կապելով, այսինքն արվեստական և անօգուտ սնունդ:

Այնպես որ, այս պայմաններու մեջ, մեր բաղդավոր մարդընկերները թողնելով մեկ կողմը, անոնք կկազմեն իրենց համեմատական տախտակը, մեզի ձգելով մեր երկու-երեք լեզուներու մեջ տապլկելու հոգը. ես կանգ կառնեմ մեր պայմաններու մեջ, որով դպրոցական օրաժամը կըլլա ութը ժամ: Կուզես սկսին 7-ին, 7½-ին, 8-ին կամ ավելի ուշ, եթե պայմանները այդ կպահանջեն, ութը ժամվա համար դպրոցական աշխատանքը պարտադիր է այն դպրոցներու համար, ուրտեղ երկու օտար լեզու կսորվեցնեն:

Մեր դպրոցներու մեջ հոն, ուր մանկապարտեզ կա, անկարելի է, որ ութեն սկսին, և անկարելի է փոքրիկները յոթ-ութ ժամ պահել, անոնց ուժեն վեր է: Առավոտյան ժրութիւնը, ուրախութիւնը, թարմութիւնը իսկույն կտեսնաս սպառված է բոլորովին, ատոր համար ալ մանկապարտեզի փոքրիկներուն ժամերը պետք է քիչնան, մոտավորապես ամենեն հարմարն է իննեն մինչև երկուքուկես, որ ըսել է հինգուկես ժամ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ա. ՀԱՇՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համրանքն ու թիվը, չափն ու կշիռը և քանակը առարկաներու հատկութիւններուն մէջ ամենեն ավելի դժվար առանձնացող տեսակներեն են: Երկու կաղինը, այո՛, իրողութիւն է, բայց «երկու» անունը առարկայի վրա չերևցող, չեզոք հատկութիւն մըն է և դժվար է իրըև առանձին գոյութիւն մը պատկերացնելը և այդ առանձնացված պատկերացումները իրարու հետ հարաբերութեան մէջ դնելով՝ անոնց հետ զանազան տեսակի գործողութիւններ կատարելը:

Այս պատճառով ալ հաշվական գիտութիւնները իրենց էութեամբն իսկ խիստ վերացական են, տեսակ մը բնութենեն կտրված, զուտ դատողական ստեղծագործութիւն մը, ատոր համար ալ ո՛չ շեղում կճանչնան, ո՛չ բացառութիւն. տրամաբանական անթերի կառուցում մը:

Հաշվական գիտութիւնները տեսակ մը աննյութ են, դարձած են սակայն մեր բոլոր նյութական գիտողութիւններուն հիմնական մեկ պայմանը: Համրել, չափել, կշռել գիտնալը և այդ քանակութիւններով զանազան հաշիվներ տեսնելը թե՛ գործնական առօրյա կյանքի մեջ և թե՛ ամեն գիտական ուսումնասիրութեան ատեն անխուսափելի անհրաժեշտութիւն մըն է:

Եվ քանակութիւններու այդ գործողութիւնը հարկ է իրերը դիտելու առաջին իսկ օրեն: Եվ այդ պատճառով ալ թիվի ու քանակի խիստ վերացական ու զուտ մտածական ըլլալուն հակառակ՝ ստիպված ենք շատ կանուխեն զբաղեցնել փոքրիկները այդ խրթին հաշիվներով:

Սկիզբները հնար եղածին չափ կջանանք թիվն ու իրը իրարու կապած պահելու, կարծես տեսակ մը իրարմե անբաժան, մինչև որ քիչ-քիչ իրերը կդառնան երկրորդական ու կծառայեն իբրև օրինակ, իբրև իրացականացման և կենդանացման միջոց: Իսկ հանրահաշվի մեջ թիվը ինքը արդեն կգոլորշիանա, մեջտեղ կմնա անորոշ քանակութիւններու փոխադարձ հարաբերութիւններուն զուտ տրամաբանական խաղը:

Ասոր համեմատ ալ հաշվական գիտութիւններուն ուսուցումը երեք բնական աստիճան ունի. 1) Նյութեն անբաժան նախնական ծանոթացում մը, այսինքն նախապատրաստական իրացական թվաբանութիւն. 2) Բուն թվաբանութիւնը ինքը և 3) Քանակութիւններու հանրահաշվական ուսումնասիրութիւնը:

Այս երեք աստիճաններուն վրա քանակութեան զույգ կերթա միշտ տարածութեան ուսումը, մինչև հանրահաշիվ ավելի համեստ չափերով և առանց զատվելու թվաբանութենեն: Հանրահաշվի ուսուցման առեն տարածութիւններուն հաշիվները կզատվին իբրև առանձին գիտութիւն մը, որ և կանվանենք իր հինեն եկող գործնական անունով՝ երկրաչափութիւն:

Նախապատրաստական-իրացական թվաբանութեան տեղը մանկապարտեզն է, երկրորդ ու երրորդ տարիներուն մեջ, երկուական պահ չաբաթը՝ երկրորդ տարին, երեքական պահ՝ երրորդ տարին: Բուն թվաբանութիւնը կուգա անոր եռևեն ու կբռնե երկար ժամանակ, դպրոցական վեց առաջին տարիները, ուր կավանդվին թվաբանական չորս գործողութիւնները ամբողջ ու կոտորակ ամեն տեսակի թիվերով: Այդ վեց տարիներուն ալ չաբաթական չորսական պահ անհրաժեշտ է հիմնապես տիրանալու համար թվաբանական օրենքներուն և մանավանդ բազմաթիվ ու բազմատեսակ խնդիրներ վճռել կարողանալու համար:

II. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

1. Մանկապարտեզի մեջ երկու կարգ կա՝ պզտիկներն ու մեծերը, պզտիկները ամբողջ տարվան ընթացքին պետք չէ անցնին հինգ թվի սահմանեն և միշտ առարկաներու հետ միասին. չկա չորս, հինգ, այլ երեք աթոռ, հինգ գիրք, երկու մատիտ և այլն:

Տարվան վերջերը միայն բնական կերպով տղաքը արդեն կսկսին իրենք երեք, չորս, հինգի առանց առարկայի. ուսուցիչը պետք չունի համրելու, ճիշդ ուսման ընթացքը ուր է, հոս պիտի հասնինք: Մանկապարտեզի մեջ մեկ-մեկ բարձրանալը և մեկ-մեկ իջնալը, մեկով դումարելը, մեկի բազմապատիկները առնելը այսինչ կամ այնինչ թիվի մինչև հինգ, այս բոլորը կկատարվի իրարու հյուսված, որևէ դումարելու, հանելու խնդիրներ չկան, թվաբանության քերականություն չկա, այլ գործնական հաշիվ, մեկեն մինչև հինգ, և օրական անպայման պահ մը պետք է հատկացնել հաշվի, առանց ձեռական դասերու, որոշված ժամերու և այլն, այլ ազատ, երբ որ ուսուցչին հարմարի, իսկ եթե ուսուցչին կհարմարի միշտ միևնույն պահը, ատոր արգելք մը չկա: Թվաբանության խնդիրները, որ պետք է լուծեն հինգի սահմանին մեջ, վարժուհին պետք է կազմե իր շուրջի առարկաներեն, իրենց ապրած կյանքեն, պիտի ինքը չանա այդ խնդիրները անոնց կազմել տալու. մեկ-երկու հատ երբ ինքը կազմե, երեխաները գլխի կուգան, իրենք ալ կկազմեն:

2. Մանկապարտեզի երկրորդ տարին հատկացված է մեկեն մինչև տասի ուսուցման. մեկեն յոթ-ութ հատատ պետք է յուրացնեն արդեն, իննեն տասն ալ մեղքս վրան: Ուսուցման եղանակն է սանդուղ-սանդուղ բարձրանալ վեր, այսինքն երեքի ամեն տեսակ աշխատանքները յուրացնելն ետքը անցնիլ չորսին. մեկեն չորս ամեն տեսակի գործողություններ ընել տալեն, վարժեցնելեն, խնդիրներ ընել տալեն ետքը անցնիլ հինգին. կարևորություն չտալ, թե արդեն նախորդ տարին կատարված է. շատ-շատ քիչ մը արագ կկատարվի: Մասնավոր ջանք ընել 3x3, 3x4, 4x3, այսինքն 12-ի վրա, որ շատ հնարավորություն կուտա զանազան տեսակի գործողություններու և խնդիրներու լուծման: Մանկապարտեզը ձգողը պետք է կարողանա ըսել, թե մեկեն տասը հաշվել գիտե, թեև միշտ 8-ի և 9-ի մեջ կռիվ կա, և տղաքը այդ երկուքին մեջ դեռ կվարանին քիչ մը, այդ տեսակ բաներեն չպիտի հուսահատիլ: Դեռևս քանի տարի ունի հառաջանալու: Երկրորդ մասին մեջ անպատճառ ամեն բան առարկայի մը կապելու այլևս անհրաժեշտությունը չկա, բայց լավ է դասարանի մեջ ունենանք առանձին հաշվող գործիք մը, մեկեն մինչև տասը երկաթի վրա անցուցած խոշոր գնդերով, հինգը՝ տարբեր գույնի և հինգը՝ տարբեր, որ ամեն անգամ դժվարանալու

պարագային երեխան դա և այդ գնդիկներով իր ըսած ճիշդն ու սխալը ստուգե:

Դպրոցի առաջին երկու տարիներուն մեր նպատակն է վարժեցնել տղան այդ գումարումներուն, հանումներուն և բազմապատկութեան ու բաժանումին գործողութիւններուն՝ արդեն նախորդ տարիներեն սորվածը ամրացնելու համար:

III. ԹՎԱԲԱՆՈՒԹԻՒՆ

1. Այս երկու դասարաններուն մեջ է, որ կամաց-կամաց մանկական թվաբանութենեն դուրս կուգանք և արդեն կմուտենանք սովորական մտքով թվաբանութեան դասավանդման: Հոս աչքի առաջ պիտի ունենալ անտարակույս՝ մեկ անգամ, երկու անգամ պետք կըլլա դիտմամբ հարյուր հազարներու և միլիոններու գումարումը, հանումը, տեսակ մը իբրև օրինակ, բայց պետք է հաստատ գիտնանք, որ երկար թիվերը, բացի միտք խանգարելեն, ուրիշ ոչ մեկ օգուտ չունին թվաբանութիւն սորվեցնելու համար: Կյանքի հաշվական բոլոր խնդիրները կղառնան միավորներու, հազարավորներու և տասնյակ հազարավորներու միջև, սահմանը՝ հարյուր հազար. այո՛, կպատահի ավելի, միլիոնի մասին ալ խոսք կըլլա, բայց ատոնք իրական կյանքեն դուրս, այնպես բացառիկ պայմաններ են. ըսեր եմ քառասուն միլիոն չահեցավ, թե ըսեր եմ քեզի յոթը միլիոն չահեցավ, քու հաշիվներու տեսակեն բան մը չի փոխվիր, թիվ մը ավելի պիտի բազմապատկես, որ ավելորդ բեռ է ու դժվարութիւն ուսուցչի համար:

2. Երկրորդ կետը, որ չեշտեցի, վարժութեան համար եղած խնդիրներն են, որ կուտանք արագ հաշվիլ սորվեցնելու համար. խիստ կերպով պետք է զանազանենք իսկապես խնդիրներեն անոնք, որոնք մեր միտքը մտածել կվարժեցնեն:

3. Սովորութիւն չինել, վարժեցնել, որ իրենք խնդիրներ բերեն, իրենց չինած խնդիրները. չատ օգտակար և չատ սրամիտ աշխատանք է:

4. Եվ որ ամենեն կարևորն է ու անհրաժեշտը, ինչպես մինչև հիմա, ասկե ետքն ալ դասագրքերեն չի հանել օրենքները, ո՛չ ալ ուսուցիչը բացատրե անոնց օրենքը: Ուսուցիչը այնտեղ է, որ

նպատակ անունց արդեն սորվածի հիման վրա հանել եզրակացություններ, որոնք օրենքներն են քերականության: Միավորը միավորի հետ պիտի գումարենք, տասնավորը տասնավորի հետ, ասիկա ինքը պիտի գտնեն, ուզան:

5. Բարձր նախակրթարանեն անցնելեն տարի մը, ամենեն շատ երկու տարվա ընթացքին պետք է ավարտի թվաբանությունը: Թվաբանական բոլոր օրենքներուն ուզան տեղյակ պիտի ըլլա իր փորձերով, իր հաշիվներով:

Որով մոտավորապես երրորդ դասարանեն սկսած արդեն թիվերը կփոխարինվին վերացական թիվերով, կզատնա ալճեպրա և երկրաչափությունն, որով ավելի շատ կապված են հաջորդ շրջանի պիտույան հետ, քան թե նախորդ թվաբանության, թեև իրենց արմատները թվաբանության մեջն են ու միշտ:

IV. ՀԱՇԻՎ ՈՒ ԽՆԴԻՐ

Ա. ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Թվաբանությունը կճգտի երկու նպատակի՝ կսորվեցնեն հաշիվ ընել և կվարժեցնեն խնդիրներ լուծելու. հաշիվ ընելն ու խնդիր լուծելը հիմնովին տարբեր բաներ են, թեև միշտ սերտորեն հյուսված են իրարու:

Հաշիվ սորվիլ՝ կնշանակե ամենեն առաջ իր ուշադրությունը կեդրոնացնել առարկաներու քանակին վրա և ըմբռնել թիվի գաղափարը, կնշանակե համրել դիտոնալ և ըմբռնել տասնյակներուն խաղցած դերը, կնշանակե գաղափար կազմել ամբողջի ու կոտորակի և ծանոթանալ քանակությունները չափելու գլխավոր միջոցներուն՝ երկարության, ծանրության, տարածության և արժեքի չափերուն. կնշանակե գիտնալ թիվերուն վրա կատարվող չորս գործողությունները՝ գումարելն ու հանելը, բազմապատկելը, որ կրճատված գումարում մըն է, և բաժնելը, որ կրճատված հանում մըն է:

Ահա՛ ասիկա է հաշվելը, հաշիվ գիտնալը, այսինքն թիվերուն քերականությունը, թիվերուն գործնական քերականությունը, ուր ո՛չ միայն կուսումնասիրվին թիվերուն հետ կապ ունեցող ամեն կանոն և օրենք, այլև ընել կուսուն այդ կանոններով և օրենքներով

բազմատեսակ վարժութիւններ, արագ ու ճիշդ հաշվելը լավ մը յուրացնել տալու համար:

Խնդիր լուծել՝ կնշանակէ մեկ-երկու հայտնի պայմաններու ու քանակութիւններու միջոցով գտնել անհայտ քանակութիւն մը, այս որոնումներն ու վերջնական գյուտը կարելի չէ ընել առանց հաշիվ գիտնալու. քանակութիւններուն վրա զանազան գործողութիւններ կատարելով է, որ պետք է հասնինք մեր որոնած անհայտին: Խնդիր լուծելը հնարավոր է հաշիվներու միջոցով, բայց խնդիր լուծելը ինքը հաշիվներու այդ գործադրութիւնը չէ. խնդիր լուծելը իր խորքով տրամաբանական դատողութիւններու շարք մըն է որոշ կամ անորոշ քանակութիւններուն շուրջը և այդ դատողութիւններեն հանած անհրաժեշտ եզրակացութիւն մը: Այդ դատողութիւնները կրնամ կատարել հաստատ թիվերով, այսինքն որոշ քանակութիւններով, կրնամ կատարել պայմանական տառերով, այսինքն անորոշ, ընդհանուր քանակութիւններով, կրնամ կատարել որոշ ձևերով ու գծերով, այսինքն համեմատական քանակութիւններով: Խնդիրներու լուծման համար ամենեն էականը քանակութիւններուն վրա հարկ եղած հաշվական գործողութիւնները կատարելը չէ, այլ ինչ կատարելիքը գիտնալը: Խնդիր լուծելուն հիմքը դատողական աշխատանք մըն է. այդ առաջին աշխատանքեն ետքը և ըստ այդ դատողական պահանջներուն եղած թիվերը զանազան գործողութիւններու ենթարկելը կզառնա խնդիր լուծելուն երկրորդ մասը՝ հաշվական մասը:

Տեսականորեն, գիտական տեսակետեն, մտածելու, դատելու ու հասկնալու տեսակետեն ամենեն էականը անշուշտ խնդիրը լուծելու այդ առաջին՝ տրամաբանական մասն է, հաշվական մասը գիտական ու դատողական տեսակետեն երկրորդական կարևորութիւն ունի. անոր կարևորութիւնը գործնական է, քանի որ այդ հաշիվները կատարելեն ետքն է, որ կրնամ գտնել փնտրած քանակութիւնս: Հաշիվ գիտնալը շատ սուր ու անհրաժեշտ գործիք մըն է, որով կտաշեմ, կփորևմ, կծակեմ և զանազան բաներ կշինեմ, ատիկա որոշողը խնդրի մը լուծման առաջին դատողական մասն է:

Հաշվի ու խնդրի մեջ եղած այս խիստ մեծ տարբերութիւնը պետք է ուսուցիչը միշտ աչքի առաջ ունենա: Ով ուժ կուտա ամբողջ

ու կատարակ թիվերու չորս գործողութիւնը ըմբռնելուն և վարժ գործադրելու, բայց կանտեսե կամ երկրորդութեամբ կմոտենա խնդիրներու լուծման, նախ՝ կյանքի մէջ շարունակ պետքի գալիք մտածելու եղանակները խոպան կձգէ, և երկրորդ՝ ընդհանրապես ձեռքե վախցուցած կըլլա տղու տրամաբանական զարգացման համար ամենեն աղվոր պատեհութիւններեն մեկը: Ով ուժ կուտա, ընդհակառակը, խնդիրներու տրամաբանական վերլուծումին ու բացատրութիւններուն, բայց շատ կարևորութիւն չի տար զուտ հաշվական մարզանքներուն և հաշվական կանոններու խոր յուրացմանը, անիկա անշուշտ մշակած կըլլա մտքի դատելու եղանակները, բայց ծանրաքայլ ու կաղլիկ կմնան խնդիրները լուծելու հաշվական կողմերը. դանդաղ կհաշվե, սխալներ շատ կընե, վերցնել չի կրնար կարճ ուղիները և օգտվիլ չի կրնար հնարավոր կրճատումներեն: Այնպես որ թե՛ տեսական և թե՛ գործնական տեսակետներեն անհրաժեշտ է հաշվելու և խնդիր լուծելու վարժութիւնները հավասարապես մարզել ու մշակել:

Բ. ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿ ԽՆԴԻՐՆԵՐ

Խնդիրները ուսուցման ընթացքին մէջ կուգան բոլորովին տարբեր երկու դերերով: Իրենց առաջին դերը ծառայական է. բացատրված է հաշվական կանոն մը, թվաբանական գործողութեան մեկ նոր մանրամասնութիւն մը, բացատրվածը մեկ-երկու թվական վարժութիւններու վրա փորձել ու կրկնել տալեն ետքը ուսուցիչը կսկսի խնդիրներ տալ, որ լուծեն. իր նպատակը նոր սորվեցուցած կանոնը գործադրել տալն է, իր նպատակը տրամաբանական մտածման նոր եղանակ մը ըմբռնել տալը չէ. նպատակը հաշվական է. հոս խնդիրը ինքն իրեն համար չէ, այլ պարզապես մարզանքի նոր ու ավելի կենդանի ձև մըն է, տղու նոր սորված կանոնը ավելի քողարկված ու ավելի հաճելի կերպով կրկնել տալու համար է միայն:

Այս տեսակի ծառայական խնդիրներու կհանդիպինք գլխավորապես դասավանդման յուրացման աստիճանին վրա, երբեմն նաև խորացման աստիճանին վրա, երբ քանի մը իրարու զուգորդված կանոններու գործադրութեան համար է շինված խնդիրը:

Խնդիր լուծելու երկրորդ դերը արդեն ինքնիշխան է. ո՛չ թե հաշվական օրենքի մը յուրացմանը կծառայե, այլ խնդիրներ լուծելու զանազան մտածելակերպերու մշակմանը կաշխատի, այսինքն երբ խնդիրը ինքն իրեն կծառայե դատողութեան զարգացմանը: Այս ալարազային մտածողութեան նոր ուղին ինքը կդառնա օրվան դասը, ինքը կըլլա առանցքը իրեն հատուկ երեք աստիճաններով: Նախապատրաստական աշխատանքե մը ետքը կբացատրվի դատողութեան նոր եղանակը ու կկրկնվի. կուտանք շարք մը նույնակազմ խնդիրներ, որոնք նույն ձևի դատողութեուն ու լուծում կպահանջեն: Խորացման աստիճանին վրա կհամեմատվին նույն տեսակի խնդիրներու այլ կերպ լուծումներուն հետ կամ նախորդ այլ տեսակի խնդիրներու լուծումներուն հետ ունեցած իր նմանութիւններն ու առնչութիւնները: Այս բոլոր համեմատութիւնները խորացնող նոր խնդիրներ կտրվին լուծելու ու բացատրելու, և կդրդենք, որ աշակերտները իրենք այդ նոր սորված եղանակով խնդիրներ չինեն իրենցմե:

Ընդհանուր առումով դպրոցական առաջին երկամյակին խնդիրները իրենց ծառայական դերովը կուգան. տարրական նախակրթարանի երկրորդ երկամյակին է, որ տարվան ընթացքին մեջեմեջ քանի մը անգամ դասին հիմքը կդառնա խնդիրներ լուծելու կերպերուն ուսումնասիրութիւնը, որ բարձր նախակրթարանին մեջ արդեն հետզհետե չատ ավելի ընդարձակ տեղ կգրավե:

Երբ խնդիրները իրենց ծառայական դերովը մեջ կուգան, պահանջելի է, որ պարզ ըլլան անոնք որչափ հնար է, հենված միայն առողջ տրամաբանութեան վրա, որ դատողական երկար բացատրութիւններու կարիք չմնա, իրենց արտահայտութեամբն ալ ըլլան չատ հստակ ու դյուրին ըմբռնելի: Ամեն դժվարութեուն ու բարդութեուն ու ոլոր-մոլոր բաներ պետք է զգուշութեամբ հեռացվին, որ անոնք անմիջապես կարողանան ծառայել իրենց ստանձնած դերին, այսինքն նոր սորված կանոններու գործադրութեան ու յուրացման:

Անտարակույս ինչքան ալ ծառայական դերով եկած ըլլան, նորեն կնպաստեն անոնք իրենց գոյութեամբն ու իրենց մտածումովը տրամաբանական դատողութիւններու մարզանքին ու նրբացումին, բայց ասիկա կկատարվի արդեն ինքնիրենը. անկարելի է բան մը

մտածել առանց մտածման կարողությունը չափ մը ավելի մարզած ու կատարելագործած ըլլալու:

Գ. ԽՆԴԻՐՆԵՐԵՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանրապես բոլոր խնդիրները պետք է առնվին մանուկներու շրջապատի իրականութենեն, մանուկներուն ծանոթ աշխարհեն և մանուկներու տարիքին մատչելի նյութերեն ու օրինակներեն: Անոնց չգիտցած, աղեկ չգիտցած աշխարհներու, վիճակներու, ապրանքներու, անոնց խելքը աղեկ չհասած եղելություններու վրա հյուսված խնդիրները կմնան օդի մեջ առվախ, քանի որ կվտսին փոքրիկներու չգիտցած, չհասկցած բաներու մասին:

Սուտ, անիրական, իրենց շուրջի կյանքին մեջ սովորական չեղող կամ ընդհանրապես կյանքի մեջ չպատահող չինծու խնդիրներ պետք չէ երբեք տրվին: Ընդհակառակը, այնպես պետք է ընտրենք խնդիրները, որ բացի իրենց թվաբանական դերը խաղալեն, տան ու ամրացնեն մանուկներու մտքին մեջ կյանքի համար իրական ու պիտանի եղող շատ մը ծանոթություններ, ինչպես են ընթացիկ ու սովորական առարկաներուն գինները, անոնց ճշմարիտ ու կարևոր հատկություններ, առարկաներու պատրաստության ու բաղադրության ձևերն ու հաշխինները, արհեստներու ու գործարաններու աշխատանքին հետ կապված շատ մը պիտանի ու հետաքրքիր տեղեկություններ ու հաշխիններ և այլ բազմատեսակ օգտակար ծանոթություններ:

Գալով ծանրության կշիռներուն, երկարության ու տարածության չափերուն և դրամական միության՝ այն երկիրներուն մեջ, ուր ընդունված են ու գործածության մեջ են նաև տասնորդական հիմքով չափերը՝ մեթրը և ֆրանքը, առաջին օրեն լավ է բոլոր խնդիրները կազմել այդ միություններով և զանց ընել տեղական մյուս չափերը: Բայց եթե երկրին մեջ ընթացիկ չեն ատոնք և ծանոթ ալ չեն ընդհանրապես այդ տասնորդական սիսթեմով չափերուն, իրական հողեն չկտրվելու համար հարկադրված ենք տեղական չափերով խոսելու: Բայց միշտ լավ է գոնե բարձր նախակրթարանին մեջ կցել երկրի տեղական չափերուն նաև խնդիրներ տասնորդական դրությամբ չափերով՝ անշուշտ չարունակ տեղականի հետ համեմատության դնելով:

Պետութիւններու մէջ հետզհետէ ծանրութեան կեդրոնը կանցնի տասնորդական հիմքով չափերուն, գիտութիւններու մէջ շատ աւելի չեչտուած կերպով, և տրամաբանական առաւելութիւնն ալ անոնն է, քանի որ մեր արդի թուաբանութիւնը ամբողջովին հիմնուած է տասնեակներու վրա, որ մեր երկու ձեռքերու մատներուն թիւին է:

Բ. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բնական իրերու, ուժերու և երեւոյթներու ուսումնասիրութիւնը նմանապես երեք աստիճան ունի: Բոլոր բնական երեւոյթները կուսումնասիրվին նախ ճանչնալու, հասկնալու, ըմբռնելու համար, մարդուս կատարած բոլոր դիտողութիւնները կարգի բերելու, դասաւորելու համար և անոնց մէջ նկատվող օրէնքները գտնելու ու բացատրելու համար, այսինքն զուտ գիտական հետաքրքրութեամբ: Բայց այդ ուժերու ու երեւոյթներու ճանաչումեն անմիջապես կառաջանան այս կամ այն ձեւով ատոնք օգտագործելու պահանջները. ատոնք այնպես մը դնելու, հարմարցնելու կամ փոփոխելու, որ մեր պետքերուն ծառայեն և մեզի օգուտ մը տալ կարողանան, կամ այդ դիտողութիւններու ներշնչած գաղափարներով ատոնցմե չինել ու առաջացնել կարողանանք այն տեսակի բաներ, որոնք ինքնին բնութեան մէջ չկան կամ այդ ձեւով չկան:

Եվ դարերու աշխատանքով, մարդկային մտքի համառ ու հարատեւ ջանքերով և բնութեան ուժերն ու իրերը աւելի ու աւելի խոր օգտագործելով առաջացած է ահա մարդկային ամբողջ նիւթական քաղաքակրթութիւնը: Թե մարդը ի՞նչ ձեւով, ի՞նչ չափով բնութեան այս ու այն իրն ու երեւոյթը կրցած է օգտագործել, ինչե՞ր է չիներ ու հնարեր և ի՞նչ ձեւերով հիմա ատոնցմե կօգտվի, ա՛ս ալ կկազմե նորեն բնական իրերու և երեւոյթներու ուսումնասիրութեան մեկ մասը, մեկ շատ կարեւոր մասը, անոր գործնական մասը: Այդ երկուքին մեջը կգոյանա երրորդ աստիճան մը, երբ մենք այդ գործնական ձեռքբերումներն ալ ճանչնալ կուզենք:

Բնութեան զանազան կողմերը ճանչնալը և ատոնց համար

և ատոնց համեմատ զանազան տեսակի գործնական նյութեր կամ հաստատություններ կամ նոր տեսակի մարդկային միջոցներ առաջանալը կկատարվի շատ կտոր-կտոր, ամբողջ կյանքի ընթացքին և որոշ աստիճանական խորացումով: Ատոնց մեջեն նախ կղխուին ավելի պարզ և դյուրին երևույթները, մոտիկն ու անմիջականը՝ ավելի հեռավորին ձգելով ներքին ըմբռնումը. բան մը հոս, բան մը հոն, մեկ կողմը հիմա, մյուս կողմը վաղը, ինչպես որ մեր սովրեցնելու հարմարությունները մեզմե պահանջե. այնպես որ բնական գիտություններու ուսուցումն ալ մաթեմատիկի ուսուցման նման տեսակ մը երեք աստիճան կանցնի: Ցած ու ցրիվ դասավանդումը, որ ուրիշ տեսակ կապերով կկապվի դասարանի աշխատանքին, ոչ իր ներքին բնապատմական ըլլալուն համար, այլ օրվան նյութին հարմարվելուն համար, իրենց դպրոցին քովը գտնվելուն համար, մեկ շատ աղվոր զեղեցիկ փորձ ըլլալուն համար և այլն, և այլն. ասիկա կկատարվի մանկապարտեզի մեջ:

Երկրորդ աստիճանի տիրապետության տեղը տարրական նախակրթարանի դասարաններն են, ուր նյութը ցած ու ցրիվ է, բայց աշակերտների տարիքի զարգացման զուգընթաց հետզհետե կուժեղանա տղոց դիտողությունն ու դատողությունը, և իր շրջակա ամեն տեսակ առարկաներու, զլխավորապես մարդոց քաղաքակրթական արտադրություններու աչքի իյնող խոշոր միջոցները կուսուցվին. երբ քիչ մը երկաթուղիի մասին կխոսվի կամ նավային երթևեկի, ուզես-չուզես գիտական թել մը մեջեն կանցնի, ինչքան կուզես գործնական հողի վրա մնա:

Գիտական ուսումնասիրության երրորդ վիճակը արդեն դեպի զուտ գիտականացում կերթա՝ սկսելով երրորդ ու չորրորդ դասարաններեն, մինչև կամաց-կամաց կերթա դեպի զուտ գիտական աշխատանք:

Որովհետև ինչ չափով որ մեր ձեռք բերած դիտողությունները կշատնան, և մեր միտքը կվարժվի քիչ-քիչ գիտականորեն մտածելու և հետզհետե գիտականության վարժվելու, անխուսափելի կերպով պահանջ կզգա այդ հավաքված նյութերը իրար միացնելու, իրար օղակելու և օրինքները հանելու, որուն վերջնական գործադրումն է լսարաններու աշխատանքը: Դպրոցի բարձր տարիները

ավելի գիտականացման տարիներն են, իսկ լսարանները գիտական տարիներն են:

II. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Մանկապարտեզի մեջ գիտությունն ըսվածը դուրսի աշխարհի, երկնքի ու երկրի մեջ գտնվելնիս է, որ իր բոլոր կողմերով կշրջապատե երեխան, և ճանչնալ, հասկնալ կուզե: Առաջին վայրկյաններն հայտնեմ, որ ուսուցչի շրմունքեն պատմված գիտական ծանոթությունները չատ երկրորդական արժեք ունին: Գիտության մեջ ինչ որ կարևորն է, որ երեխան յուրացնե, երևույթները դիտել սորվիլն է, երևույթներու երևցող ու չերևցող մասերն է, մանավանդ երևցողներեն չերևցող եթե կղառնա կամ հակառակը: Այսպես, օրինակ, երբ որ իրենց փորձով կուգա, որ ծովու ջուրը աղի է եղեր. «իրենց փորձերովը» անոնց վարժեցնել, որ տեսնեն, բայց չեն տեսներ: Կաթսան երբ որ կրակին կդնես, կսկսի գոլորշիանալ, երբեմն չատ բարձր աստիճաններու և հոտկե ո՞ւր կերթա, ծայրը չիտակ ամպերն ու արևը, չիտակ ձմեռն ու ձյունը, բայց ամեն բան ինքը, ինքը, ինքը. մինչև անգամ ուսուցչի՝ բան մը մատնանիշ ընելը գիտական աշխատանքի անարատությենեն բան մը կզրկե:

2. Պետք է քննության առարկա դարձնել երեխային իրեն ամենեն ավելի հաճախ հանդիպած, հաճախ տեսած չատ սովորական եղող բաներ: Հնությենեն ծով, անտառ և ո՛չ ալ ծաղիկներու ետևեն վազվզել, թեև եթե մեջեմեջ այնպես պատահի, որ ծաղիկ մը քիչ մը ավելի ուշադրություն դառնա, իհարկե մեծ մեղք մը չի կատարվիր, բայց ի միջի այլոց:

Պուլյոնները պետք չէ շփոթել գիտական ուսումնասիրության մը համար կատարված այցելության մը հետ: Պիտի չեչտենք ամեն կերպով, տղաքը պիտի գիտնան, որ հիմա կերթանք փորձ մը ընելու, բան մը բերելու. ասոնք անհրաժեշտ բաներ են գիտական զարգացման համար:

3. Մանկապարտեզի մեջ դեռ չկա բուսաբանություն, կենդանաբանություն և հանքաբանություն և կամ այլ տարբերություններ, ասոնք բոլորը միասին պարզապես գիտություն:

Պիտի աշխատվի, ինչ որ նյութ է, մանավանդ զեղեցկություն ունի իր վրա, ինչ կուզե ըլլա, հավքել դաշտեն ու շրջակայքեն,

ճարել ու բերել լեռներեն, ծովու ափեն, որոնք միշտ ձեռքի տակ չենք կրնար ունենալ, կունենանք սակայն աչքի տակ:

Նախակրթարանի մեջ մեր ավանդելիք բնական գիտությունը երկու ուղղությամբ միայն կրնա ըլլալ: Ավելի նյութերու կմոտենանք այդ չորս տարվա ընթացքին և հետզհետե ամեն մեկ նյութի վրա քիչ մը ավելի կհամեմենանք զանազան տեսակի փորձերով, անոնց օգտագործման վրա, որով ավանդումը կդառնա ավելի հարուստ ու հետզհետե բաղմակողմանի: Իսկ նախակրթարանի մեջ, որուն վարի կարգերը տեսակ մը շարունակություն են մանկապարտեզի աշխատանքին, հետզհետե բնականաբար կթեքին դեպի կեսերը, դեպի գիտականացում. կթեքի դեպի կյանքի ուսումնասիրությունը: Հատ-հատ ծաղիկներ և կենդանիներ պատահած է, որ ուշադրության առնեն: Բայց ինչ է բույսը և ինչ է կենդանին, բուսական ու կենդանական հիմնական տարբերությունները ինչ են, այս բոլորի մասին չատ բան խոսած չեն և ահա առաջին և երկրորդ տարիներուն մեջ, նախորդ բոլոր աշխատանքներուն կմիանան նաև այս ուսումնասիրությունները: Նախորդ բոլոր ուսումնասիրություններուն վրա կուգա կավելնա և այս կողմը գիտության, որ հետզհետե տիրական կդառնա գիտության մեջ, լսարաններու մեջ:

Գ. ԸՆԿԵՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընկերային կյանքի երևույթներուն ուսումնասիրությամբը զբաղվող գիտությունները երկու խոշոր բաժանում ունին դպրոցի մեջ՝ աշխարհագրական ուսումներ և պատմական ուսումներ:

Աշխարհագրական ուսումներու տիեզերական ու բնական մասերը նեղ մտքով բնական գիտություններու մեկ մասն են, միայն թե այն աստիճան սերտորեն հյուսված են մարդկային կյանքին, մարդկային կազմակերպություններու, արդյունագործության և այլ ստեղծագործություններուն, որ անխզելի ամբողջություն մը կկազմեն, և հարկադրված ենք դնելու ընկերական գիտություններու տակ, քանի որ իր ուսման մեծագույն մասը զուտ ընկերական երևույթներ են և ընկերական երևույթներուն բոլոր տեսակները՝

կրոն, լեզու, պետություն, ցեղ, տնտեսագիտության բոլոր կողմերը, կուլտուրական ամեն տեսակի կազմակերպություններ ու հաստատություններ, հիշատակարաններ, նույնիսկ զուտ բնական մասերու ուսումնասիրության խորքի իմաստը այդ տնտեսական, կուլտուրական ընկերային երևույթներու պատճառներուն բացատրությունն է, տեղին ու պայմաններուն ճշդումը: Այնպես որ աշխարհագրություն անվանածնիս, հակառակ իր զուտ բնագիտական անունին, անխտիր բոլոր ընկերական գիտություններեն առնված կտորներ են՝ հյուսված երկրի ներքին ու արտաքին բնական կազմության:

Աշխարհագրության մեջ ուսումնասիրվածը ընկերային երևույթներու, կազմակերպություններու և այլ իրողություններու արդի գոյություն ունեցող վիճակներն են աշխարհիս զանազան մասերուն վրա՝ տարբեր-տարբեր ժողովուրդներու կյանքին մեջ: Պատմական ուսումները ընկերային կյանքի ու գործունեության արդի վիճակը չէ, որ կուսումնասիրեն, այլ այդ ամենուն ե՞րբ և ինչպե՞ս առաջացած, ի՞նչ փոփոխություններով ու ի՞նչ ճամբով արդի վիճակին հասած ըլլալուն ուսումն են:

Աշխարհագրությունը ընկերական վիճակներու և երևույթներու ներկայումն է, որ կհետաքրքրվի, կնկարագրե, կդասավորի ու կբացատրե. պատմությունը ընկերական վիճակներու և գործերու անցյալումն է, որ կհետաքրքրվի, անոնց ծագումն ու զարգացումը և պատճառական կապերու բացատրությունը:

2. Մանկապարտեզին չրջանին ընկերային երևույթներու մասին չատ ցրիվ, մեկը մյուսեն անկախ կերպով խոսքի ու ուշադրության նյութ կդառնա գիտության ենթարկվող առարկաներուն մեկ մասը, և ուր բնականի ու ընկերականի տարբերությունները դեռ չեն ընդգծվիր: Այսպես, օրինակ, աշխարհագրական բնական մասին պատկանող դիտողություններուն զուգընթաց կտրվին մարդկային աշխատանքներուն, հաստատություններու մասին բացատրություններ. բնականն ու արվեստականը, բնությունն ու քաղաքակրթությունը կներկայանան իբրև իրարմե անբաժան, իրարու հյուսված ամբողջություն մը:

Իսկ ընկերային անցյալ երևույթներու ու գործերու մասին մանկական դպրոցին մեջ խոսք կդառնա չատ ավելի պատահական

կերպով, առանց հատուկ դիտավորության: Ամերակի մը, տոնի մը, հանդիսավորության մը առթիվ ըսված ու լսված խոսքեր. այդպես ալ մանավանդ հնքխաթներու պատմվելուն հետ կապված է միշտ դեպքերու հետացում մը և կենցաղի ու կյանքի տարբերություններ, որ իբրև անցած կըմբռնվի, ո՛չ արդի և ո՛չ «իրական»:

Ընկերական երևույթներու ավելի գիտակից և ավելի սիստեմատիկ ուսուցումը սկիզբ կառնե տարրական նախակրթարանի մեջ: Առաջին երկամյակին դեռ չեն ներկայանար անոնք իբրև առանձին դաս, կկազմեն իրագիտական նյութին մեկ խոշոր մասը, ինչպես տեսանք. երկրորդ երկամյակին է, որ կզատվին, իբրև հայրենագիտության ուսուցում: Պատմական դեպքերը նմանապես առաջին երկու տարին դյուսվոր տոներուն ու տարեդարձի հետ կապված քանի մը խոսք է տարին քանի մը անգամ, այլև ընթերցանության բացատրություններուն կապված քանի մը հիմնական ըմբռնումներ անցյալ ժամանակներու և անցյալ պայմաններու տարբերություններու մասին: Երկրորդ երկամյակին կսկսվի բուն պատմությունը առանձին դասով՝ հայոց պատմության դյուսվոր դեմքերն ու դեպքերը :

Բարձր նախակրթարանի չորս տարիներուն ընդհանուր աշխարհագրությունն է, որ պետք է լրիվ ու ամփոփ տեղեկություն տա աշխարհագրական բոլոր հիմնական խնդիրներու և բոլոր երկրամասերու մասին: Ազգային պատմությունը կավանդվի լրիվ ու սիստեմատիկ չորս տարվան ընթացքին, սկիզբեն մինչև մեր օրերը: Բարձր նախակրթարանի երկրորդ երկամյակեն կսկսի ընդհանուր պատմության հատուկ դասավանդումը, որ պետք է տևե հինգ տարի շարունակ մինչև դպրոցական ընդհանուր կրթության վերջը:

Լսարանական երեք տարիներուն ընդհանուր պատմության զուգընթաց կավանդվի հայոց պատմության հիմնական շրջաններու քաղաքակրթական-համեմատական ուսուցումը: Այլև առանձին դասերով հայ գրականության պատմությունը, ընդհանուր գրականության պատմությունը, մտքի ու գեղարվեստներու պատմությունը: Իսկ աշխարհագրությունը կդառնա լսարանական առաջին երկու տարիներուն մեջ բնական ու ընկերական համեմատական աշխարհագրություն, այլև առանձին դասերով հայրենի երկրի

ավելի մանրամասն աշխարհագրությունը: Երրորդ տարվան մեջ չկա ընդհանուրին համար:

Դասարանի բոլոր աշակերտներուն համար պարտադիր եղող ընդհանուր դասավանդման կից գրական պատմական ճյուղին հետևող աշակերտները կունենան նաև գործնական ճյուղային աշխատանքներ:

II. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՐ

Ա. ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տարրական նախակրթարանի առաջին երկամյակին մեջ աշխարհագրական դիտողությունները մաս կկազմեն գիտության դասերուն, ինչպես տեսանք. նույն ձևով կարելի է շարունակել նաև չրջանի երրորդ տարին: Բայց կարելի է նույնպես երրորդ տարվան գիտության երեք ժամերեն մեկը կանոնավոր կերպով հատկացնել իր շրջապատի աշխարհագրական պայմաններու ավելի լրիվ ու ավելի հստակ ըմբռնումին, իբրև նախապատրաստություն հաջորդ տարվան հայրենագիտության. ասով հնարավոր կդառնա չորրորդ տարվան հայրենագիտական նյութը քիչ մը ավելի լայն բռնելու:

Իր հիմնական գծերով հետևյալն է շրջանի վերջին տարվան հայրենագիտության նյութը. 1) Մեկ-երկու պտույտ տարբեր ուղղություններով մոտակա գյուղերն ու տեղերը՝ հեռավորություններուն համեմատությունն ու ըմբռնումը ավելի հստակ դարձնելու համար. թե՛ ճամբուն վրա և թե՛ դպրոցը փորձեր կընեն իրենց անցած ճամբան ու տեղերը թղթի վրա գծելու. ուսուցիչը ավելի ճիշդ կերպով նույնը կպատրաստե գրատախտակին վրա, ուրկե տղաքը կարտագրեն: 2) Նախորդ նկարածի հետ համեմատությունները տարբերությունը ընդգծելով՝ կկախե պատեն իրենց հայրենի աշխարհին ուրվագիծը ներկայացնող մեծ քարտեզ մը ձեռքով պատրաստած, կանվանե բնական սահմանները և հարևան երկիրները. տղաքը կնկարեն ուրվագիծը որոշ մեծության թուղթի մը վրա ամենքը նույն չափով և նույն ձևով և կավելցնեն անպայման ուսուցչի ցույց տված տեղը պարզ ու սովորական գիրերով և անպայման ուսուցչի գրած ուղղագրությամբ սահմաններուն և դրացի երկիր-

ներուն անուննները: 3) Պատի քարտեզին կավելցվի գլխավոր լեռնային շղթաներն ու գագաթները դասեն առաջ, և դասի ատեն ուսուցչի բացատրութիւններենետքը տղաքն ալ կավելցնեն իրենց քարտեզներուն վրա և կգրեն հիշված անուննները, միշտ ուսուցչի ցույց տված տեղն ու ձևով և անսայման ուսուցչի տառադարձութեամբ: 4) Նույն ձևով ալ գլխավոր գետերն ու լիճերը: 5) Որևէ տեսակետե կարևոր համարված բնակութեան վայրերը: Այս աստիճանին հասնելեն ետքը պատեն կարելի է կախել հայրենի երկրի խոշոր ու մեծադիր քարտեզը, որ համեմատութեան կդրվի մյուս ձեռակերտ քարտեզին հետ:

6) Ուսուցիչը իր պատի քարտեզին վրա կավելցնե ամենեն կարևոր ճամբաները, հետզհետե նաև համեմատաբար ավելի երկրորդականները. կգծվի նաև երկաթուղային ամենեն կարևոր գծերը, և այս բոլորը տղաքն ալ կանցընեն իրենց քարտեզներուն վրա՝ միշտ ուսուցչի հրահանգին ու հսկողութեան տակ:

Ուրիշ ետքը կուգան՝ 7) բնակչութեան թիվը, տարբեր մասերու տարբեր խտութիւնը, տարբեր ցեղերու կենսակցութեան պարագային ամեն մեկուն բռնած տեղը, լեզուն ու կրոնը:

8) Կնկարեն նահանգներու բաժանումը, և կբացատրվի նահանգային ու գավառական վարչութեան ամենեն գլխավոր դեմքերը: 9) Կնկարագրվի ներքին վարչութեան կեդրոնական գլխավոր մարմինները:

10) Պետական կեդրոնական մարմինը, իր ամենեն հիմնական բաժանումները, ամեն մեկուն դերն ու իրավունքը: Կառավարութեան պետական ձևը, օրվան կառավարական պետը: Հանրապետութեան նախագահ:

11) Ո՞վ և ինչպե՞ս կհոգա պետական ծախքերը. ո՞վ կդնե օրենքներն ու հարկերը: Ինչ է հարկը, չափն ու գլխավոր տեսակները. ո՞վ կհանե դրամը, ինչ ձևով:

12) Որո՞նք են հայրենի երկրի գլխավոր աշխատանքները. ինչ կարտադրեն երկրին զանազան մասերը. ինչ կարտահանեն, ինչ ճամբով և ո՞ւր, ինչ կներմուծվի, ո՞ր երկիրներեն:

13) Թղթատար, հեռագիր, հեռախոս: Ոստիկանութիւն, դատարան, կրոնական և կրթական հաստատութիւնները իրենց գլխավոր չենքերով. գեղարվեստական հաստատութիւններ ու չենքեր:

Բժշկական, առողջապահական ու փոխադարձ օժանդակության Հանրային Հաստատություններ:

Գալով դասավանդման եղանակին՝ կրնա երթալ երկու ուղղությամբ՝ նայելով նյութի տված Հարմարության:

Առաջին ճամբով ստացումը կկատարվի խոսակցությամբ և ընդհանուր աշխատանքով, կկատարվի հնար եղածին չափ իրականին դիմացը, դիտելով, պտտելով, այցելելով և տեսվածն ու դիտվածը քարտեզը մտցնելով: Այս կերպով ստացված նյութը ուսուցիչը կամփոփե իբրև ձևավորված ամբողջություն մը, կպատմե ու պատմել կուտա: Վերջն ալ այդ պատմվածքի սեղմ բովանդակությունը կգրե տախտակին և արտագրել կուտա տղոց Հայրենագիտության Հատուկ տետրակի մը մեջ:

Նյութի լավ մը յուրացումեն ետքը կուգան խորացման աշխատանքները, որոնք այս աստիճանին վրա գլխավորապես երեք տեսակ են. ա) Ընթերցում մեկ-երկու ճամբորդական հուշերու, կտորներ վեպերեն, երկրի այս կամ այն տեղին կամ իրողության կապված բանաստեղծություններ, նկարագրություններ. կկարդա ինքը ուսուցիչը դասարանի համար: բ) Լուսարձակով կամ պատկերներու վրա ցույց կուտա նոր սորված տեղերուն, շենքերուն, հիշատակարաններուն և վարչական ու տնտեսական վիճակներուն բազմատեսակ պատկերները, ինչպես և Հանրային և ընտանեկան տեսարաններ, տիպեր ու տարազներ: գ) Նկարել կուտա Հայրենի երկրին տեսակ-տեսակ քարտեզներ, միայն բնական, միայն ճամբաներ, միայն կարևոր քաղաքներ, նախ՝ նայելով իրենց քարտեզներուն, վերջը՝ նաև միայն հիշողությամբ և միշտ ջանալով, որ Հեռավորություններն ու համեմատությունները ճիշդ պահված ըլլան: Ամեն անգամ ալ նկարը լրացնելեն ետքը պահանջելով, որ գրեն նաև Հարկ եղած բոլոր անունները, միշտ նույն ձևով և նույն տառադարձությամբ:

Բանավոր խորացնող Հարցերու ընդհանրապես տեղիք չի մնար այս ճամբուն վրա, քանի որ ստացման աստիճանի խոսակցության միջոցին բոլոր կարևոր Հարցերը պատասխանված կըլլան արդեն:

Եթե ավանդելիք նյութը անմիջական դիտողության ենթար-

կելը դժվար է կամ անկարելի, դասավանդման բռնած ճամբան կշրջվի:

Սահմանումը կդառնա, քանի մը նախապատրաստական հարցերուն եզրը, ամբողջական ու պատրաստ պատմություն մը ուսուցչի շրթունքին, կարելիին չափ կոկիկ, կենդանի ու մչակված: Որուն կհաջորդեն աշակերտներեն մեկ-երկուքին կրկնությունը պատմվածին: Եվ եզրը գրավոր բովանդակության արտադրությունը դասարանին մեջ:

Եվ խորացման աստիճանին վրա է, որ արդեն յուրացուցած նյութին շուրջը և լուսարձակի նետած պատկերներուն դեմը կսկսի դասողական ու համեմատական հարց ու պատասխանին արդեն սորվածը ավելի խոր ու ավելի կենդանի ըմբռնելու, իր նախորդ գիտցածներուն հետ զուգորդելու և երևույթներուն պատճառներն ու առաջացումը որոնելու ջանքով. այս խորացման որոնումներու առեն է, որ հետզհետե հստակ կդառնա բնական, տնտեսական և քաղաքակրթական երևույթներու իրարու հետ ունեցած սերտ առնչությունը:

Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բարձր նախակրթարանի չորս տարիներուն մեջ ավանդվելիք աշխարհագրական նյութը ունի նախ ընդհանուր ծանոթացում մը, որ է. ա) Երկրագունդի տիեզերական էությունը, թեքությունը և շարժումները. լայնության ու երկարության գիծեր. երկրագունդի կլորաձև քարտիզացումը. բ) Երկրագունդի չորս մայրցամաքները և երեք մեծ օվկիանոսները իրենց ծովերով ու ծոցերով. բևեռային ջրեր ու հողեր. երկրագունդի գոտիները գ) Չորս մայրցամաքներուն շրջագիծը, լեռնային մակերեսը և ջրաբաշխությունը. դ) Չորս մայրցամաքներուն պետական քաղաքական բաժանումները:

Ուրկե եզրը կսկսի յուրաքանչյուր պետության բնական, քաղաքական, վարչական, տնտեսական, արդյունաբերական ու կուլտուրական ավելի մասնավոր ներքին ուսումնասիրությունը: Լավագույն է սկսիլ Ամերիկայեն, անցնիլ Աֆրիկա, Ասիա ու Եվրոպա: Յուրաքանչյուր պետության հետ նաև իր բոլոր գաղութներն ու իր տիրապետած երկիրները:

Դասավանդման եղանակը. ստացման աստիճանը ընդհանուր առումով պատրաստ տալ. լուսարձակի նետած ցայտուն ու մեծադիր քարտեզներուն վրա և անոր ցուցադրած տեսարաններուն ու մասնավոր նկարներուն դիմաց կպատմե ուսուցիչը՝ հնար եղածին չափ ամեն ինչ ցույց տալով. հնար եղածին չափ քիչ անուններ ու թիվեր, բայց հիշված թիվերն ու անունները պետք է կրկնվին հաճախ, ցանկեր ու ցուցակներ պետք է կազմվին՝ ամրացնելու համար աչքերուն մեջ ու լեզվին ծայրը:

Յուրացումը անհատական, դուրսը, հարուստ դասագրքի մը վրա: Բայց հարստութիւնը անուններու ու թիվերու չատութեան մեջ չէ, այլ աշխարհագրական բնական ու կուլտուրական երևույթներու էութիւնն ու պատճառականութիւնը խոր ու հստակ ըմբռնել տալուն մեջն է: Արժեքավոր գրքերե հանված քաղվածքներ, գեղեցիկ նկարագրութիւններ ու նկարներ. ամեն տեսակի հարցերով, խնդիրներով և կատարվելիք աշխատանքներով լեցուն: Աշխարհագրութեան դասագրքին վրա պետք չէ նայիլ իբրև չոր բառարանի մը վրա, ուր խտացված է ուսուցչին պատմածները միայն՝ վերջը ստուգել կարողանալու համար միայն: Դասագիրքը պետք է պարունակե չատ ավելի նյութ, քան ուսուցչի տվածը, պետք է լրացնե, պետք է կողմնակի լույսեր ավելցնե, պետք է բերե նոր մանրամասնութիւններ և նոր կեդրոնացում: Եվ պետք է կարդացվին պարտադիր կերպով այդ բոլոր հավելյալ մասերը. գեչ սովորութիւն մըն է ուսուցչի չըսած բաներուն վրայեն խաչ մը քաշելն ու անցնիլը:

Եվ հաջորդ դասին ալ կարիք չկա, որ աշակերտը անպատճառ ամեն բան գրքին պես պատմե կամ ուսուցչին պես, բայց անհրաժեշտ է, որ ուսուցչի տված բոլոր հարցերուն ճիշդ ու չիտակ պատասխանել կարողանա, որ յուրացուցած ըլլա, գիտնա: Ուսուցիչը հաճախ ամբողջ սորվածեդ միայն մեկ որոշ կետ մը կհարցնե, որ իրեն պատմես կամ բացատրես, և աշակերտը, իր պարտավորութիւնը լրիվ կատարած աշակերտը պետք է կարողանա պատմել ու բացատրել չնորհքով:

Ստորացման աստիճանին վրա, աշխարհագրութեան վրա դասերուն ամենեն սովորական և ամենեն արդյունավոր միջոցն է նոր սորված երկրին պայմանները համեմատութեան դնել արդեն սորված մյուս երկիրներու պայմաններուն հետ՝ թե՛ բնական վիճակ-

նները, դիրքերն ու բերքերը, թե՛ կլիման, թե՛ սահմանները և հարևան պայմանները և թե՛ կառավարության ձևը, պետական կազմը, ցեղական խառնուրդը, ժողովուրդի տիպը, բնավորության գծերը, աշխատելու եղանակը, իր չնորհները, թե՛ տնտեսական, արդյունաբերական և առևտրական զանազանությունները, և ջանք ընել, որ տղաքը հանել կարողանան այդ տարբերություններուն և զանազանություններուն պատճառները: Եվ այդ համեմատությունները վրա հենվելով՝ հանեն հետզհետե ընկերական և քաղաքակրթական հիմնական սկզբունքները աշխարհագրության:

Խորացման աստիճանի երկրորդ մեծ միջոցը նորեն ընթերցումն է. ուղևորական, նկարագրական, բնապատմական անչափ նյութեր կան, ինչպես և մարդաբանական, առևտրական, լեզվագիտական, սաստիկ հետաքրքիր ու պարզ էջեր տնտեսական, դրամական, երկրագործական և այլ արդյունաբերական հարցերու չուրջ, չափազանց առատ ու բազմակողմանի նյութ, վերին աստիճան կրթիչ ու հետաքրքիր: Դժվարը առանց դուրս հանելն է հատորներուն ու պարբերականներուն դեղերուն մեջեն և դնել մեկ-երկու հատորներու մեջ, որ դառնա դյուրին մատչելի աշակերտներուն, որ դասե դաս ու կտոր-կտոր կարդալ ու օգտագործել կարողանան իրենց ուսուցչի ղեկավարությամբ: Նկատ մեծ է այս տեսակ աշխարհագրական «ընտիր էջերու» դերն ու պետքը ընդհանուր կրթության համար:

Երրորդ միջոցը լուսարձակն է նորեն ու չարժապատկերը. կուսական անտառներու, ծովերուն խորքերուն, սառցապատ անտառներուն, ավազուտ անապատներուն դեղեցիկ նկարները, անոնց ծոցին մեջ ապրող բույսերով, կենդանիներով ու ժողովուրդներով, այդ ժողովուրդներուն կենցաղը, տիպերը, ապրուստը, ուրախությունները ու տառապանքները, պարերը, հանդեսները, առօրյա կյանքն ու աշխատանքը հանքերուն խորքը, դաշտերուն վրա, խանութներուն ու դրամատներուն մեջ, քաղաքներու գեղեցիկ արվարձաններն ու կարևոր շենքերը. անվե՛րջ, անվի՛րջ չարժում ու պատկեր՝ և՛ գրավիչ, և՛ կրթիչ: Ինչքան որ անհամ ու անհոտ բան մըն է փիզիքայի ու քիմիայի դասավանդումը առանց փորձերու, նույնքան և ավելի անհամ ու խեղճուկ բան մըն է աշխարհագրության դասավանդումը առանց հարուստ ալպոմներու, ամեն մեծության

ու գունավոր նկարներու և մանավանդ ու հատկապես առանց լուսարձակ գործիքի ու շարժապատկերի լայն ու մշտական գործակցության:

Չորրորդ միջոցը քարտեզներու նկարելն է: Աշակերտը ո՛չ մեկ մայրցամաք, ո՛չ մեկ ծով ու ծոց, ո՛չ մեկ երկիր ու պետություն, ո՛չ մեկ լեռ ու գետ, ո՛չ մեկ նահանգական բաժանում, ո՛չ մեկ կլիմայական բաժանում, ո՛չ մեկ արդյունաբերական մանրամասնություն և ո՛չ ալ որևէ տեղ ու քաղաք պետք չէ անվանե, պետք չէ միայն կրկնե ու պատմե առանց չարունակ այդ բոլոր սորվածի ու սորվածներու քարտեղները գծելու, երբեմն նույն բանը քանի՛-քանի անգամներ դասագրքի գեղեցիկ օրինակներուն վրայեն, պարզած, համառոտած, բայց ճիշդ. ձեռքը այնքա՛ն պետք է վարժվի, որ կարողանա բոլոր էական քարտեզները գծել ուղղակի հիշողությամբ:

Գ. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԸ ԼՍԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԵՋ

Լսարանական չրջանին ընդհանուր կրթության նյութն է ամենեն առաջ հայրենի աշխարհի հատուկ ու մանրամասն ուսումնասիրությունը բնական, տնտեսական, ընկերական ու քաղաքական ամեն տեսակետներե: Հայրենի աշխարհի հետ նաև այն պետության բազմակողմանի ու լուրջ աշխարհագրական ուսումնասիրումը, որուն որ քաղաքականապես կապված է հայրենի երկիրը՝ իբրև այդ պետականության մեկ բաղադրիչ մասը: Լսարաններուն մեջ աշխարհագրության հատկացված ժամանակի մեկ երկրորդը կտրամադրվի հայրենի երկրի այս հատուկ ուսման:

Մնացած երկու երրորդ ժամանակը կհատկացվի համեմատական ընդհանուր աշխարհագրության. ո՛չ թե երկիր-երկիր կամ պետություն ու պետություն առանձին առած ուսումնասիրել հայրենի աշխարհի պես աշխարհագրական ամեն տեսակետներե, այլ բնական, տնտեսական, վարչական, պետական, լեզվական, կրոնական, մարդաբանական, արտադրական, առևտրական ու քաղաքակրթական բոլոր կողմերուն մոտենալ իրար ետևե, առանձին-առանձին և աչքի առաջ ունենալ միաժամանակ բոլոր երկիրներու մեջ եղած տարբեր ձևերը, տարբեր վիճակները, տարբեր թիվերն

ու համեմատութիւնները: Այսինքն համեմատական ընդհանուր աշխարհագրութիւն մը, որուն մեկ մասը, գրեթէ մեկ երրորդ մասը կկազմէ ընդհանուր բնական աշխարհագրութիւնը, իսկ մնացած երկու երրորդը կներկայացնէ մարդկային ընդհանուր ընկերաբանական աշխարհագրութիւն մը, ուր մարդկային համայնական կեանքի բոլոր կարևոր կողմերն ու երևոյթները կուգան ուսումնասիրութեան իրենց արդի ունեցած վիճակով ու տարածականութեամբ երկրիս երեսին վրա:

Ասիկա գործնականապես կնշանակէ զբաղվիլ ու ծանոթանալ ընկերաբանական բոլոր գիտութիւններու հիմնական հարցերուն ու դլխավոր սկզբունքներուն հետ. լեզվագիտութիւն, տնտեսագիտութիւն, վարչական ձևերու ուսում, պետականութիւն, կրոններու ուսում, օրենսդիտական հիմնական ըմբռնումները, կրթութեան ձևերը զանազան երկիրներու մեջ, ժողովուրդներու հոգեբանութիւնը, հարկային դրութիւնները, զբամական ու բանկային հաստատութիւններու դերը, հաղորդակցութեան ձևերն ու չափերը և դլխավոր գիծերն ու ուղղութիւնը. միջազդային տնտեսական կապեր և միջազդային իրավունք:

Երկու լսարաններու երեքական ժամերեն մեկը հատկացնել հայրենի աշխարհագրութեան և երկու ժամ բնական ու ընկերային համեմատական աշխարհագրութեան:

Գալով նյութի ավանդման եղանակին՝ թե՛ մեկի և թե՛ մյուսի համար ամենեն բնականը դասախոսութեան ձևն է: Ուսացումը ուրիմն ուսուցչի ազատ խոսքով, յուրացումը ինքնաշխատութեամբ, ուսուցչի ցույց տված դրքերուն վրայեն և իր դասախոսելու ատեն տղոց առած նշումներու դեկավարութեամբ: Դաս պատասխանել չկա. ուսուցումը կկատարվի պարբերական դրավորներով քանի մը դասը անգամ մը քառորդ ժամերով կամ մեկ-մեջ ամբողջ ժամ մը հատկացնելով:

Իբրև խորացում ուսուցիչը կուտա որոշ հարց, որոշ խնդիր, որոշ մտածելու, դիտելու ու դատելու նյութ, որուն պատասխանը պետք է պատրաստեն աշակերտները դրավոր, մեկ-երկու երեսի վրա խտացուցած. երբեմն կպատահի, որ բոլորին կուտա միևնույն նյութը, կրնա պատահիլ, տարբեր խումբերու տարբեր հարցեր

կամ ամեն մեկուն հատուկ հարց մը: Ժամ մը կնվիրվի պատասխաններուն կարդալու և կարծիքներու փոխանակութեան:

Իբրև խորացում կընտանեկ արժէքաւոր երկեր, գլուխներ կամ էջեր, որ կարդան, կրնա նորեն դարձնել աշակերտական դասախոսութեան մը նիւթ կամ կարևոր էջը դարձնել ընդհանուր վերլուծական ընթերցում:

Իբրև խորացում տղաքը պիտի պատրաստեն զանազան համադրող ու համեմատող ցուցակներ, վիճակացույց տախտակներ, նկար ու քարտեզ՝ որոշ եզրակացութիւն մը, որոշ երևոյթ մը պատկերաւորելու, ապացուցանելու կամ ստատիստիկները կազմելու համար:

Իբրև խորացում պետք է նկատել տարեկան մեկ-երկու ճամբորդութիւն խմբովին, ուսուցչի հետ որոշ ծրագրով՝ որոշ հարցերու պատասխանը բերելու համար տեղն ու տեղը կատարված դիտողութիւններով և ուսումնասիրութեամբ:

Դ. ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՐ

Ի. ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԴԵՄՔԵՐ

Ա. ԱՎԱՆԴՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Տարրական շրջանին մէջ փոքրիկներուն պատմական եղելութիւններ ավանդելուն առաջին նպատակն է սեր ու հետաքրքրութիւն արթնցնել փոքրիկներու հոգիին մէջ դեպի իր ժողովուրդի անցյալը: Պատմութեան ավելի սիսթեմատիկ ու ավելի գիտական ավանդումը հաջորդ շրջանի նյութ է, ուր տղուն միտքը ավելի բացված կըլլա և դեպքերու շղթայավորումը և պատճառական կապակցութիւնները ըմբռնելու շատ ավելի հաստնցած: Առաջին շրջանի այս երկրորդ երկամյակին մեջ ավանդվելիքը ո՛չ այնքան մտքին կդիմե, որքան սրտին:

Եվ այդ սերն ու հետաքրքրութիւնը առաջացնել կարողանալու համար անհրաժեշտ է կենդանի ու մոտիկ ծանոթացում այն մարդոց հետ, որոնք գործած են ու տառապած իրենց ժողովուրդի կյանքն ու գոյութիւնը պաշտպանելու համար, որոնք իրենց խելքն ու քաջութիւնը, իրենց կյանքն ու տաղանդը նվիրած են իրենց

ժողովուրդի զորացմանն ու բարձրացմանը: Ուրիշ խոսքով՝ ազգային պատմութեան այս առաջին աստիճանի դասավանդման նյութը կկազմեն ազգային պատմութեան մեծ ու կարևոր դեմքերը իրենց կյանքով ու գործով:

Այս շրջանի ազգային պատմութեան երկրորդ նպատակն է բնականաբար հող ու առաղձ պատրաստել հաջորդ շրջանի ավելի ամրողջական ու ավելի կապընթաց դասերուն: Ո՛չ միայն հող ու առաղձ, այլև ավելի հասունութիւն ու խորութիւն: Երբ պատմական մեկ-երկու տասնյակ կարևոր դեմքերու պատկերը կա ազգ ղլխուն մեջ, անոնց գործերը, անոնց ժամանակի պայմաններուն կենդանի պատկերացումը, այս ամենը անշուշտ շատ կնպաստեն հաջորդ շրջանի քաղաքական ու քաղաքակրթական բացատրութիւններու ըմբռնումին. այդ պատկերներն ու պատկերացումները մեկ կողմեն կենդանութիւն կուտան ու արդեն պատրաստ հետաքրքրութիւններ կբերեն նոր աշխատանքին, ինչպես և տաք զգացումներ իրենց ծանոթ հին հերոսին:

Այս անջատ-անջատ, ինքն իր համար իբրև առանձին ամբողջութիւն մը ներկայացնող կենսագրութիւններու շարքի ավանդման երրորդ նպատակն է ազգայինի միջոցով ու ազգայինի վրա ընդհանուր պատմական ըմբռնումներ մշակելը. պատմական բազմաթիվ ու բազմատեսակ զաղափար ճշդելը, քաղաքակրթութեան առաջացման հիմնական գծերը տալը, ինչպես և պատմական լեզու և արտահայտութիւն զարգացնելը: Այսինքն այս կենսագրական նախնական պատմութիւնը ո՛չ միայն հաջորդ շրջանի ազգային պատմութեան համար հիանալի նախապատրաստութիւն մըն է, այլև ընդհանուր պատմութեան տեսակետեն արժեքավոր օժանդակութիւն մը: Մեղի շրջապատող և մեզի հետ դարերու ընթացքին չփման մեջ եղող բազմաթիվ հին ու նոր ժողովուրդներու մասին կհիշվի, բազմատեսակ ընդհանուր պատմական երեույթներու և շարժումներու մասին կխոսվի, ինչպես, օրինակ, նախաբարբարական ավատական կապերն են կամ խաչակիրներու արշավը, հումանատնական մրցակցութիւնը, քրիստոնեութեան ու մահմետականութեան ծագումը և ուրիշ:

Բ. ՆՅՈՒԹԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կմնա ազգային պատմության էջերեն հանենք մեր մեծ դեմքերը, ընտրություն մը, որ մեծ մասով վեճի առարկա չէ, այնքան ակնհայտնի է անոնց անձին, գործին ու կյանքին՝ հանրության վրա ունեցած ազդեցությունը: Քանի մը դեմքերու ընտրությունը միայն կրնա որոշ տատանումի ենթարկվիլ ըստ պատմագրի և ուսուցչի ըմբռնողության:

Պետք է ընտրել բնականաբար քիչ-շատ ամբողջություն մը ներկայացնող, հստակ գծագրություն ունեցող և պատմելու նյութ մատակարարող մեծ դեմքերը. գործ ու չարժուամ քիչ պարունակող պատմություններ փոքրիկները վայելել չեն կրնար: Եվ դեմքն ու պատմությունը միշտ կշահին, երբ զաղափարի մը մարմնավորումը կներկայացնեն կամ ժամանակի մը առանցքը:

Մեր առասպելական կամ կիսառասպելական դեմքերեն ամենեն ավելի գեղեցկություն և իմաստ ունին 1) Հայկ ու Բելի պատմությունը. 2) Արա Գեղեցիկն ու Շամիրամը. 3) Տիգրան ու Տիգրանուհին, 4) Արտաշես ու Սաթենիկ և 5) Արտավազդ:

Հին դարերու պատմութենեն՝ 1) Տրդատ ու Գրիգոր Լուսավորիչ, 2) Արշակ Թագավոր ու Մանվել Մամիկոնյան, 3) Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց, 4) Վարդան Մամիկոնյան և Վասակ Սյունի, 5) Գայլ Վահան:

Միջին դարերու պատմութենեն՝1) Սմբատ Բագրատունի, 2) Աշոտ Երկաթ, 3) Սենեքերիմ Արծրունի, 4) Թորոս Լևոնի, 5) Լևոն Թագավոր, 6) Հեթում ու մոնղոլներ, 7) Լևոն Վերջին Լուսինյան:

Անիշխանության դարերեն՝ 1) Դավիթ-Բեկ, 2) Արթին ամիրա, 3) Ներսես Աշտարակեցի, 4) Ներսես Վարժապետյան և Խրիմյան Հայրիկ, 5) Սասունի ապստամբությունը՝Հրայր ու Գևորգ Ջավուշ, 6) Արամ Վանի ու Երևանի, Վանի Հերոսական դիմադրությունը և Երևանի մեջ հայ պետականության հիմնվիլը:

Գ. ՊԱՏՄԵԼ ՈՒ ՊԱՏՄԵԼ ՏԱԼ

Նոր դասը պետք է պատմե ուսուցիչը, անընդհատ ու գեղեցիկ. ամեն հարց, ամեն միջանկյալ բացատրություն և ամեն ընդհատում

կրնասե ընդհանուր տպավորութեան: Եվ առանց որևէ թղթի ու գրքի, անկաշկանդ խոսվածքով, հայացքը տղոց հայացքին. ուսկնդիրներու հոգին բռնելու առաջին պայմանը կենդանի խոսքն է հոգիեն ըղխող ու կենդանի նայվածքը, որ բնական կերպով կվառի ու կմարի նյութին համընթաց:

Ուսուցիչը պատմելու առեն գիրք ու թուղթ պետք չէ ունենա, բայց տունը իր պատմելիքը պետք է պատրաստած ըլլա մեծ խնամքով. գրած պետք է ըլլա ամբողջ նյութը վիպակի մը նման իր ամբողջ մանրամասնութեամբ, գրած, արբագրած, կոկած ու զեղեցկացուցած, և այդ մշակված գրութիւնն է, որ պետք է պատմի դասարանին մեջ: Եվ այդ մշակման հիմնական պայմանն է դպրոցական այս շրջանին համար կենդանութիւնը: Առանց մանրամասնութիւններն ու կրկնութիւնները վախնալու, առանց ժամանակը խնայելու պետք է պատմվի ամեն ինչ տեղնուտեղը. պետք է նկարագրվի գործող անձերուն դեմքը, տեսքը, շարժումները, առանձնահատկութիւնները, այղպես ալ իր շուրջիններուն ու տեղերուն նկարագրութիւնը: Անհրաժեշտ է, որ ամեն բան պատկերի պես նկարվի ու կենդանանա տղոց երևակայութեան առջև: Պետք է մեջբերվին խոսակցութիւններ, մեկուն ըսածը, մյուսին առարկութիւնը և այն ամեն մանր-մունր գծերը, որոնք անձերուն բնավորութիւնը կըզացնեն:

Ուրիշ խոսքով՝ տարրական դպրոցի պատմութեան դասերը վեպի կնմանին. արդեն պատմութեան ավանդական շրջանի առասպելները վեպեր են ու վեպի կտորներ, որ երգեր են մեր հին բանաստեղծները արքունիքներու մեջ ու ու ժողովուրդի առջև, և հաջորդ շրջաններու բոլոր դեմքերն ալ պետք է վեպի վերածվին, պետք է կենդանացվին, եթե կուզենք, որ փոքրիկներու սրտին խոսին ու հետաքրքրեն՝ անշուշտ միշտ հավատարիմ մնալով պատմական աղբյուրներուն և պատմագիտութեան տվյալներուն:

Իր պատմելեն հետո ալ, երբ կսկսի տղոց պատմել ու կրկնել տալ, միշտ պետք է պահանջն ուսուցիչը կանոնավոր ու լրիվ արտահայտութիւն և ճիշդ ու արտաբին վերարտադրութիւն: Ինքնին, բնական կերպով տղոց պատմածին մեծագույն մասը կըլլա ուսուցչի գրեթե բառացի կրկնութիւնը, բայց և այնպես ուսուցիչը

պետք չէ պարտադրել, որ տղաքը ամեն ինչ իր խոսքերով և իր ձևովը ըսեն. և հնար եղածին չափ պետք չէ ընդհատել տղոց պատմածը դանադան հարցերով ու սրբագրություններով և պետք չէ շոտպլեցնել. պետք է թողնել, որ ազատ ու հանգիստ վիպել կարողանան:

Եթե լեզվի կամ բառի սխալ մըն է տղուն ըրածը, առանց ավելորդ մեկնություններու ըսել ճիշդ ձևը, որ տղան բնականորեն կրկնե: Եթե տղան կանգ առավ, չարունակություն եղող կապը չի գտներ, ուսուցիչը հուշարարի մը պես ծայրը կուտա մեկ-երկու բառ կամ նախադասություն: Եթե կտոր մը մոռցավ կամ այլակերպ ըսավ, որ անճիշդ է, տղու պատմելը վերջացնելեն ետքը ուսուցիչը կդիմե դասարանին, թե ի՞նչը մոռցավ, ի՞նչը անճիշդ ըսավ կամ ո՛չ շատ գեղեցիկ:

Քիչ-շատ երկար պատմությունները բնական կերպով պետք է պատմել տալ մաս-մաս, բերնե բերան, հնար եղածին չափ առանց ավելորդ խոսքերով պատմությունը ընդհատելու. ձեռքի թեթև շարժում մը և մատնանշում մը՝ պատմողը կնստի, ու կշարունակե ընկերը: Եվ կարիք չկա միևնույն պատմությունը մեկ-երկու անգամ իրար ետևե պատմել տալու ամեն անգամ, մանավանդ եթե պատմությունը բավական երկար է: Բայց աստր փոխարեն մեջեմեջ շաբաթներ հետո լրացած դասի մը վերջի ազատ վայրկյաններեն օգտվելով կամ քաղի նման հատուկ պահ մը հատկացնելով պետք է կրկնել տա. «Ո՞վ կպատմե ինծի այսինչ պատմությունը» կամ «այսինչ կտորը»: Այս հնռավոր կրկնությունները և՛ հրապուրիչ են, և՛ շատ օգտակար. ո՛չ միայն հիշողության մեջ կամրացնեն, այլև ավելի խոր ըմբռնել կուտան դեմքն ու դեպքը:

Հիշողության նպաստելու, իրենց ամբողջ տարվան աշխատանքը ավելի գիտակից դարձնելու և դուրան ալ տղոց հնարավորություն տալու համար, որ մեջեմեջ թղթատեն, հիշեն ու մտածեն, ուսուցիչը պատմելեն, պատմել տալեն ետքը, երբ տղաքը արդեն յուրացուցած են նոր դասին նյութը, կուտա անոնց իրենց նոր սորվածի խիստ սեղմ բովանդակությունը. կրնա գրել գրատախտակին ու արտագրել տալ, կրնա գրել տալ զատ թուղթի մը վրա և տալ տղոց, որ ձեռքէ ձեռք դուրսը իրենք արտագրեն:

Դ. ԽՈՐԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Խորացման աստիճանին վրա կատարվելիք աշխատանքներն են. 1) Համեմատե՛լ նոր հերոսը նախորդ պատմութիւններու հերոսի մը կամ հերոսուհու հետ: Համեմատել վարմունք մը, դեպք մը, կռիվ մը, վիճակ մը, հոգեբանութիւն մը նախորդ նման դուգակշիռ երևույթներու հետ և հնար եղած չափով տարբերութիւններուն պատճառը փնտրել:

2) Ենթարկե՛լ գործող անձերուն վարքն ու խոսքը գնահատութեան. ի՞նչ էր լավ, ինչո՞ւ էր լավ, ինչո՞ւ դժգոհ մնացին, ինչպե՞ս կուզեին, ինչո՞ւ համար այդպես չէ եղած: Ամենեն ավելի ի՞նչ բանն էր այսինչ անձի բնավորութեան մեջ ամենեն ազնիվը, ամենեն գրավիչը, իրենց համար ամենեն սիրելին: Ինչո՞ւ: Ինչո՞ւ համար այսինչ անձը, վարմունքը, գործը հակակրելի է մեզի: Ո՞րն է պատմութեան մեջ ամենեն գեղեցիկ կտորը, ամենեն ուժեղ կտորը:

3) Կարդա՛լ հատվածներ նոր սորված անձի շուրջ, պատմական էջ մը ժամանակակից աղբյուրներեն կամ արդի նշանավոր հեղինակե մը կամ պատմական վեպ մը. կկարդա ինքը ուսուցիչը դասարանին դեմ:

4) Ցո՛ւյց տալ թե՛ հերոսներուն և թե՛ այդ ժամանակը կենդանացնող պատկերներ՝ միշտ ալ հայտնելով, թե ո՞վ չինած կամ ուրկե է հանված այդ պատկերը:

5) Գծե՛լ մեծադիր Սև, Կասպից, Պարսից ու Միջերկրական ծովերուն մեջ ինկած լեռնային զանգվածը իր հիմնական ուղղութիւններով, նշանակել մեծ լիճերն ու կարևոր գետերը, արտագրել տալ տղոց և ամեն անգամ նոր տեղի մը անուն երբ հանդիպի, ավելցնել տալ իրենց նկարածին վրա:

6) Դիտողութեան նյութ դարձնել՝ օգտվելով նոր սորված պատմութեան տված հարմար առաղձնեն, զանազան դասակարգերու գոյութիւնն ու փոխադարձ կապը, ժողովուրդներու գլխավոր աշխատանքները, թե ինչպե՞ս կապրին, ի՞նչ զվարճութիւններ ունին, իրենց երթևեկի միջոցները և գլխավոր ճամբաները, զինվորական կազմը, կռիվներուն ու զենքերուն ձևերը, իշխանական բերդերը, թագավորական պալատին մեջ կյանքը, ժողովուրդի հին ու նոր կրոնները, սովորութիւնները, հագուստները:

Դիտե՛լ տալ շրջապատող պետութիւններու փոփոխվիլը, ամեն մեկուն տիպարը, հագուստը, բնավորութիւնը, լեզուն, կրոնը, իշխանութեան ձեւը, երկիրը, անոնց ու մեր փոխադարձ հարաբերութիւնները. ե՞րբ են թշնամի, ե՞րբ են բարեկամ, տիրող ու տիրված: Եվ ցույց տալ բնորոշ նկարներ:

II. ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բարձր նախակրթարանի չորս տարիներու ընթացքին ազգային պատմութեան նյութին է հայրենի աշխարհի սիստեմատիկ ու լրիվ պատմութիւնը. ավանդման նպատակն է ճանչնալ իր ժողովուրդի անցյալը, իր բոլոր չարն ու բարին և խմորվիլ այդ ամենուն հոգիով ու էութեամբ:

Սխալ մըն է այս շրջանի դասավանդումը պատմական տեսութիւններու, քննադատութիւններու և տնտեսական ու քաղաքական ուսումնասիրութեան վերածելու ճիգը. պատանեցման այս տարիքին համար այդ տեսակի գիտական մերձեցումը չոր է ու անհետաքրքիր. այս շրջանին ալ սրտին ու երևակայութեան խոսիլը մեծ կարևորութիւն ունի: Պետք է ամեն ինչ ներկայացնել կենդանի անձերով, ապրող ու մնայուն պատկերացումներով և հստակ ու պայծառ նկարագրված դէպքերով:

Պատմութիւնը վեպ մըն է նաև այս շրջանին, միայն թե ամբողջ ժողովուրդի մը ամբողջական և իրական վեպը: Ինչքան զեղեցիկ, հստակ ու կենդանի կազմվի ու պատմվի այդ վեպը, այնքան խորունկ ազդեցութիւն կընե թարմ հոգիներու վրա, և ինչքան իրականութիւնը ճիշդ ու խոր ըմբռնելով պատմվի ու ներկայացվի այդ վեպը, այնքան բարձր կըլլա իր պատմական ու գիտական արժեքը:

Պատմվածքին հիմքը պիտի ըլլան իրողութիւնները, մարդիկ ու իրենց գործերը, ժողովուրդներու խլրտումներն ու շարժումները. հնար եղածին չափ քիչ դատողութիւն: Այդ իրողութիւններու դիտողութիւնեն իրենք աշակերտները պետք է հանեն հետզհետե հարկ եղած որոշ պատմական դատումներ ու տեսութիւններ խորացման աստիճանի աշխատանքներու առեն:

Նախորդ շրջանի պատմութենեն այս շրջանի ունեցած հիմնական տարբերութիւնը ուրեմն պատմական երևույթներու

կապակցումն է, իբրև անընդհատ ամբողջություն մը, դարերու բնական հաջորդականությամբ ժամանակի թելին վրա: Երկրորդ շեշտված տարբերությունն է տղոց հասունացումը, որով պատմական դեպքերն ու երևույթները անհամեմատ ավելի խոր կհասկցվին ու կդիտվին շատ ավելի բազմակողմանի և շատ ավելի լայն ակնարկով:

Դալով դասավանդման եղանակին՝ ստացումը կկատարվի ուսուցչի շրթունքեն, յուրացումը դուրսը դասագրքի մը օգնությամբ. Հարուստ ու զեղեցիկ կազմված դասագրքի մը պահանջը այս շրջանի համար մեծ է նաև պատմության դասավանդումին մեջ: Իբրև ուսուցում՝ երբեմն պատմել կուտա ամբողջ դասը, երբեմն այս ու այն կտորը, երբեմն որոշ հարցերու պատասխանը կպահանջն, երբեմն ամբողջի հակիրճ ամփոփումը. մեջեմեջ կրնա դրել դասը ամբողջ դասարանին:

Խորացման աստիճանը քանի կերթա, այնքան ավելի խորք ու կարևորություն կստանա, իբրև հաջորդ շրջանի աշխատանքներուն համար հիմնական արժէք ունեցող նախապատրաստություն:

Դեմքերը, դեպքերը, վիճակներն ու պայմանները չարունակ իրարու կհամեմատվին, և երևույթներու նմանության ու տարբերության պատճառները կփնտրվին, և կըլլան առաջին փորձերը պատմական օրենքներ հանելու:

Կգծվին պատմական քարտեզներ համապատասխան յուրաքանչյուր ժամանակի քաղաքական վիճակին թե՛ ներքին և թե՛ արտաքին սահմաններու ճշդումով, ու կհամեմատվին ատոնք իրարու:

Կկազմվին դրամներու հավաքածուներ, կդիտվին դրամներու կազմն ու նկարները. ի՞նչ կնկարեին դրամներու վրա, ինչո՞ւ. և կհամեմատվին տարբեր ժամանակներու դրամները իրարու, և կճշդվին տարբեր դեմքերու արտահայտիչ գծերը, որ կհամեմատվի ավելի ուշ եկող արվեստագետներու երևակայածին ու գծածին:

Հատուկ ուշադրության կառնվին որոշ ժամանակաշրջանի մը հագուստները, զենքերը, շենքերն ու քաղաքները, կռիվներուն եղանակները, տնտեսական պայմանները, վարչական կարգերը լուսարձակի օգնությամբ:

Կհանձնարարվի արժեքավոր պատմական երկերու ընթերցումը թե՛ վիպական ու թատերական և թե՛ զուտ գիտական, բայց ավելի լայն հասարակութեան համար գրված: Այս երկերեն մեկը, մյուսը կրնա ենթարկվիլ նաև ընդհանուր դասարանական վերլուծութեան. գրքերեն մեկ մասին ընթերցումը կըլլա պարտադիր. մեկ ավելի խոշոր մասը, որ ուսուցիչը կհանձնարարե ու կնշանակե, կմնա ազատ ընթերցման նյութ:

III. ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՈՒՍՈՒՄԸ

Լսարանական երեք տարիներուն մեջ ազգային պատմութեյունը երրորդ անգամ մը կենթարկվի ուսումնասիրութեյան շատ ավելի գիտական ձևով, իբրև ժողովուրդի մը կյանքին հաջորդական քաղաքական-կուլտուրական աստիճաններուն բազմակողմանի ուսուցումը:

Այլևս պատմութեյան վրա չենք նայիր իբրև որոշ անձերու ու որոշ դեպքերու անջատ նկարագրութեյուն, ինչպես էր տարրական նախակրթարանի մեջ, ո՛չ ալ իբրև պատմական եղելութեյուններու ու դերակատարներու հաջորդական շարան մը ժողովուրդի մը գոյութեյան առաջին օրերեն մինչև մեր ժամանակը: Անձերն ու դեպքերը, որոնց արդեն ծանոթ են աշակերտները, կքշվին խորքը, այդ անձերուն և անոնց գործերուն վրայեն ջանք կըլլա հանելու որոշ ժամանակներու ընդհանուր կյանքը, ձգտումը, հավատքը, ապրումտին կերպերը, մաքառումները և ստացված հետևանքները: Աշխատութեյան և ուսումնասիրութեյան նյութը կդառնա ազգային պատմութեյան իրարմե տարբերվող գլխավոր դարաշրջանները: Այսինքն ժողովուրդի մը ծագման, զարգացման և դարեդար կրած կարևոր ու բնորոշ փոփոխութեյուններուն բազմակողմանի և գիտական ամբողջական նկարագրութեյունը:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի ներքին ուսումնասիրութեյան անցնելե առաջ կգծվի նախ արտաքին ընդհանուր պատմական վիճակը. ինչ ժողովուրդներ, ինչ քաղաքակրթութեյուն և ինչ ձևերով կտիրեն հայրենի երկրի չորս կողմը, ինչ սահմաններով, ինչ ձգտումներով և ինչ ընդհատումներով իրարու հետ: Եվ հայ-

բենի երկրի հարաբերութիւնը այդ տիրող ազգութիւններուն հետ, ըլլա դիմադրական պայքարով, ըլլա տիրելով ու տիրվելով, ըլլա կուլտուրական ազդեցութիւնը, ըլլա տնտեսական կապերով:

Եվ հայրենի երկրին մնջ ինչ իշխանութիւններ կան, ո՞ւր, ինչ բաժանում, ըլլա ազգային թե օտար. կպատրաստվի աւտոնց քարտեզը, ինչպես և կգծվի իր հիմնական գծերով ժամանակի ընդհանուր պատմական քարտեզը: Կհանվի պետական ձևը, վարչական եղանակը, դասակարգերը, աշխատանքի ձևերը, ինչ ապրանքներ կարտահանվին, ինչե՞ր դուրսեն կբերվին, ինչ ճամբաներով, ինչ ներքին հարկեր և ինչ արտաքին պետական տուրք:

Կյանքի եղանակը պալատին մնջ, պետական դվխավոր կնդրոններուն մնջ, իշխաններուն կյանքն ու ապրուստը, Հասարակ ժողովուրդի ապրուստն ու վիճակը, քաղաք ու գյուղ: Պատերազմական կարողութիւնը, զորքին կազմը, զենքի տեսակները, ռազմական ոգին ու արվեստը: Կրոնը, կրոնական դասակարգ, Հավատալիքներ, դվխավոր կրոնական կնդրոնները. Հոգևոր և աշխարհիկ ուժերու չփումը, լեզվի վիճակը, կրած ազդեցութիւններն ու փոփոխութիւնները: Ինչ գրականութիւն և ինչ դեղարվեստներ:

Եվ որոնք են այդ ժամանակաշրջանի ուսումնասիրութեան Համար մեր աղբյուրները. ինչ չափով են լրիվ և ինչ արժեքով: Եվ տալ աղբյուրներուն հետ այդ շրջանին մնացած ավերակներուն, դրամներուն, ամաններուն, զենքերուն և ամեն տեսակի մնացորդներուն իրական պատկերը, ինչպես և երևակայութիւնով լրացված ձևացումները: Եվ լուրջ դաղափար մը կազմելու չափ բավարար ծանոթացում ժամանակի գիտական ու դեղարվեստական կարևոր դործերուն:

Դասավանդման եղանակը լսարանական ազատ խոսքն է ուսուցչական ամբիոնին, իրրև ստացում, յուրացումը՝ ինքնաշխատութիւնով, քանի մը նշանակված դրքերու վրայեն, ստուգումը՝ պարբերաբար ու դրավոր:

Խորացման աստիճանի հիմնական աշխատանքներն են՝ 1) Համեմատական դուգադրութիւն տարբեր ժամանակներու մնջ նույն երևույթներու ստացած վիճակներուն, որով հետզհետե կգծվի պատմական երևույթներու ծագման ու զարդացման ընդհանուր ընթացքը: Եվ կնշմարվին ժողովուրդի ամբողջ կյանքին մնջ տիրող

և բոլոր շրջաններուն մէջ երևցող առանձնահատուկ կողմերը և այդ տիրող գիծերը առաջացնող պատմական և բնական պայմանները:

2) Ընթերցում ու վերլուծում դասարանական՝ ժամանակակից աղբյուրներէ էջեր ու կտորներ, ինչպես և գլուխներ արդի պատմական ուսումնասիրութիւններէ: Քիչ մը ավելի երկար եղող նյութերուն ընթերցումը՝ դուրսը, դասարանի մէջ կկատարվի միայն կարդացվածի վերլուծումը:

3) Թափառումներ ուսուցչի ղեկավարութիւամբ հայրենի երկրի զանազան կողմերը՝ պատմական վայրերը և պատմական մնացորդները տեղն ու տեղը տեսնելու համար:

IV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մինչև բարձր նախակրթարանի կեսը ազգային պատմութեյան դասերու ընթացքին շատ հաճախ խոսք կըլլա ուրիշ հարևան և ոչ հարևան ժողովուրդներու մասին, երբեմն նույնիսկ բավական երկար ու մանրամասն, որով օտար ժողովուրդներու անցյալի ու քաղաքակրթական պայմաններու մասին տղաքը բաներ մը լսած են և տարրական գաղափար մը ունին:

Մարդկային պատմութեյան ընթացքին մէջ կարևոր դեր խաղացող ժողովուրդներու կյանքին ու գործերուն մասին սիսթեմատիկ, բազմակողմանի ու ամբողջական ուսումնասիրութեյունը, իբրև ազգերու ընդհանուր պատմութեյուն, իբրև ուսման առանձին առարկա իր հատուկ պահերով, պետք է սկսի ղալրոցի մէջ բարձր նախակրթարանի կեսերուն, ո՛չ ավելի առաջ: Պետք է տղան հասած ըլլա որոշ տարիքի մը օտար ժողովուրդներու կյանքեն շատ մը բաներ ճիշդ ու չնորհքով ըմբռնելու համար, պետք է ազգային պատմութեյան քանի մը տարիներու աշխատանքով նախապատրաստված ըլլա՝ օգտակար կերպով հետևիլ կարողանալու համար ընդհանուր պատմութեյան մը լուրջ դասընթացին: Եվ ավելի կանուխ սկսելու համար ալ բնավ կարիք չկա. բարձր նախակրթարանի կեսեն մինչև ղալրոցական կյանքին վերջը հինգ տարի է, և այդ հինգ տարին լրիվ հերիք է ընդհանուր պատմութեյան ամբողջ ընթացքը ավանդելու համար մարդկային պատմութեյան նախնական օրերեն մինչև

մեր արդի ժամանակը. հինգ տարի՝ շաբաթական մեկ-երկու ժամ աշխատանքով:

Գրեթէ բոլոր եվրոպական լեզուներով միջնակարգ վարժարաններու համար կան կազմված մեկը մյուսեն բավարար, երբեմն նույնիսկ ընտիր դասագրքեր, և գրեթէ բոլորն ալ հինգ տարիներու բաժանումով, որով ընդհանուր պատմության նյութի մասին հոս խոսելու կարիք չի մնար: Միայն կարևոր է, որ հետևյալ կետերը հատկապես ընդգծենք:

Նախ՝ ընդհանուր պատմությունը սկսելեն առաջ պետք է տղոց հասակ ըմբռնելի դարձնել, որ մարդը երբեմն եղած է անասուն և ապրած բոլորովին անասունի կյանքով ու վիճակով: Հարց ու պատասխանի կենդանի ձևով պետք է դրդել տղոց միտքը, որ պատկերացնեն մանրամասն այդ անասուն մարդու կյանքն ու ապրուստը և փնտրեն, թե ինչո՞ւ և ինչպե՞ս մարդը հետզհետե կսկսի ընտանիք կազմել, բնակարան ճարել, լեզու զարգացնել, կրակ վառել, զենք ու գործիք հնարել, ամաններ, հագուստներ, դարդեր չինել և ինչո՞ւ: Եվ թե ինչպես հետզհետե իր սնունդն ու զբաղումները կփոխվին, կըլլա որսորդ, անասնապահ և երկրագործ և ի՞նչ պատճառներով: Այս վիճակներեն ամեն մեկը ի՞նչ փոփոխություններ կրերե հետը թե՛ կենակցության, թե՛ լեզվի, թե՛ կրոնական ըմբռնումներու, թե՛ սովորություններու, թե նիստ ու կացի և՛ թե նյութական ձեռքբերումներու տեսակետեն: Ինչպե՞ս կառաջանան իշխաններ և որոշ նպաստավոր պայմաններու տակ՝ իշխաններու իշխաններ, ինչպես կկազմվի ու կկայննա պետական կազմը, զինվորական ուժ, բերդեր, քաղաքներ, դասակարգեր, տաճարներ և հոգևորականություն, դերեզմաններ, հսկայական, ընդարձակ հողատիրություն ու ճորտություն և ջրանցքներ, ճամբաներ: Այսինքն պետք է ապրիլ ու երևակայել տալ տղոց հնար եղածին չափ մանրամասն այն նախապատմական շրջանն ու կյանքը, որ տևեր է տասնյակ հազարավոր տարիներ, և որու մեջեն մարդկությունը հասեր է վերջապես մեզմե չորս-հինգ հազար տարի առաջ իր պատմական շրջանին. ընդհանուր պատմությունը նեղ մտքով կզբաղվի այդ պատմական դարերով. ընդհանուր պատմությունը սակայն պարտական է զբաղվելու նաև նախապատմական դարերով և պարտական է զբաղվելու լրջորեն:

Այս ամենուն մասին տղոց հետ երկար-բարակ խոսիլը, այս բոլոր իրարմէ կարևոր ու մեծ գլուխերու՝ մարդու ձեռքով ու խելքով հետզհետե կծիկի թելի մը պես քակվիլը չափազանց հետաքրքիր ու հափշտակող բան մըն է տղոց համար, չափազանց աչք ու միտք բացող, հաջորդ երևույթներու բացատրության ժամանակ շատ հաճախ պետքի եկող, և տղոց սիրտն ու միտքը մեկ անգամեն և սիրով կկապեն ընդհանուր պատմության դասերուն: Այս խիստ ու թանկագին ու կենդանի նախապատրաստական աշխատանքին համար պետք չէ բնավ ժամանակ խնայել. կարելի է հանգիստ սրտով առաջին երկու-երեք ամիսները անոր հատկացնել, ուրկե ետքը արդեն կարելի է անցնիլ գիտային քաղաքակրթություններուն: Ժամերու ավելի ազատ շարժում ունենալու համար այս նախապատրաստական աշխատանքին կարելի է հատկացնել երկրորդ դասարանին վերջը քանի մը ամիս շաբաթական երկ-երկու ժամով՝ երրորդ դասարանին սկիզբը անմիջապես սովորական ընդհանուր պատմության անցնելու համար:

Երկրորդ՝ անշուշտ որ ընդհանուր պատմությունը իր ուրույն ընթացքը ունի, և պետք է մեջ գան ու իրենց դերը պատմեն բոլոր ժողովուրդները, որ այդ ընթացքին մեկ քիչ-շատ կարևոր մասը կկազմեն: Բայց շատ բնական կերպով տարբեր-տարբեր ժողովուրդներուն դպրոցները շատ տարբեր ծրագիրներով կմոտենան պատմության ավանդվելիք ընթացքին: Ամեն ազգ ինչքան ալ չեզոք ըլլա ու չիտակ խոսիլ ուզենա, նորեն կամա թե ակամա իր խաղացած դերին մասնավոր կարևորություն մը կուտա կամ գոնե իրեն հետ կապ ունեցող դեպքերուն ավելի ընդարձակ տեղ կհատկացնե: Մենք ալ բացառություն կազմել չենք կրնար. մենք ալ մեր դերը շեշտել կուզենք համամարդկային պատմության մեջ, այլև մեզի հետ կապ ունեցող ժողովուրդներու ու դեպքերու վրա ստիպված ենք ավելի երկար կանգ առնելու:

Ասիկա գործնականապես կնշանակե՝ 1) Մեզմե հեռու եղող ու մեր երկրի ու շրջապատի վրա ազդեցություն չունեցող ժողովուրդներու կյանքին ու արտաքին շփումներուն վրայեն համեմատաբար թեթև ու արագ անցնիլ՝ շատ բան զանց ընելով, ամենեն ցայտուն և կարևոր երևույթներուն վրա միայն կանգ առնելով. 2) Ընդհակառակը, մեր մոտը, մեր չուրջը, մինչև մեզի երկարող

ժողովուրդներու գործերուն, արշավներուն և քաղաքակրթական պայմաններուն վրա ավելի երկար կանգ առնել, ավելի տեղ ու ժամանակ տալ. 3) Մասնավորապես մեր մասնակցությունը իր մեջը ունեցող կետերուն ու դեպքերուն վրա ավելի ուշադիր ըլլալ և ավելի մանրամասն, օրինակ՝ բյուզանդական պատմության հայ կայսրներու չրջանը, օրինակ՝ Կիլիկյան Հայության դերը խաչակիր արշավանքներու ընթացքին. և 4) Ընդհանրապես մեր Հարևան ժողովուրդներու պատմությունը և քաղաքակրթական պայմանները ավելի խոր չափերով ուշադրության առնել և լուրջ ժամանակ հատկացնել: Այս տեսակետեն ինչքան ալ Հայոց և ընտիր կազմված ըլլան ֆրանսական ու գերմանական պատմության դասագրքերը իրենց երկրի մէջնակարգ վարժարաններու պետքին համար. անոնք մեր դպրոցներուն մեջ գործածության դրվելու համար մեծապես թերի են, մեզի հատկապես հետաքրքրող բաներու վրայեն սահելով կանցնին և մեզի համար չատ քիչ կարևորություն ունեցող երևույթներուն հաճախ երկար էջեր կնվիրեն: Ամեն ժողովուրդ ինքն իր պետքերուն համար կշինե իր պատմության դասագրքերը մասնավորապես:

Գալով դասավանդման եղանակին՝ ընդհանուր պատմության ուսուցումն ալ էական ոչինչով տարբեր չէ ազգային պատմության դասավանդման եղանակեն համապատասխան կարգերուն մեջ. ինչ որ ազգային պատմության ավանդման մասին ըսվեցավ, տեղին է նաև ընդհանուր պատմության համար չատ երկրորդական մանր տարբերություններով, որոնք մեծ մասով ինքնին հասկնալի են:

V. ԳԵՂԱՐՎԵՍՏՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Գեղարվեստական երկերը կան ու ստեղծված են հանրային վայելքին համար, բայց վայելել կարողանալու համար նախ պետք է գիտնալ անոնց գոյությունը, պետք է ճանչնալ անոնց արժեքը և պետք է իմանալ անոնցմե օգտվելու կերպն ու եղանակը: Բնության տված վայելքներեն ետքը գեղարվեստներու տված վայելքներն են ամենեն բարձրը և թանկագինը:

Ընդհանուր կրթության պարտավորություններուն մեջն է նաև գեղարվեստական ստեղծագործություններու և նոր հասնող սերունդներու հոգիին մեջ հաստատել այդ մտերիմ ծանոթությունը:

Գործնականապես այդ սերն ու մտերմությունը կհաստատվի գրականության համար ընթերցումով, որ պետք է մեծ խնամքով վարել տղոց հասունացման տարիներու ընթացքին: Պլաստիկ ստեղծագործություններու համար լայնորեն պետք է օգտագործել լուսարձակը. դպրոցական վերջին հինգ տարիներու ընթացքին կանոնավոր, անխաբան երկու չաբաթը անգամ մը դասերն դուրս ժամ մը պետք է հատկացվի գեղարվեստական գծով, գույնով ու նյութով կերտված ստեղծագործություններու ցուցադրության ուսուցչի մեկնաբանող բացատրություններուն կից, իբրև անհրաժեշտ մեկ մասը դպրոցական պարտավորության և անխզելի մեկ երեսը դպրոցական կյանքին: Այդպես ալ դպրոցական վերջին հինգ տարիներու ընթացքին նույն ձևով երկու չաբաթը անգամ մը ժամ մը պետք է հատկացվի երաժշտական երկերու կանոնավոր ունկնդրության ուսուցչի մեկնաբանող դեկավարությամբ:

Իսկ այս գործնական ծանոթացումին ավելի խորք ու գիտակից վերաբերում պետք է տան այդ գեղարվեստական երկերու առաջացման պայմաններուն և անոնց ստեղծողներուն կյանքին սիստեմատիկ ու վերլուծական ուսումնասիրությունը հատուկ դասերով, այսինքն գեղարվեստներուն պատմությունը:

Լաբրանական երեք տարիներուն մեջ ամեն տարի չաբաթական երկու պահ պետք է հատկացվի ազգային գրականության պատմությանը, ազգային երաժշտության, ազգային նկարչության, ազգային քանդակագործության և ազգային ճարտարապետության պատմությանը: Նույն այդ երեք լսարաններու ընթացքին ամեն տարի չաբաթական երկու ժամ պետք է հատկացվի ընդհանուր գրականության պատմությանը, ընդհանուր երաժշտության, ընդհանուր նկարչության, ընդհանուր քանդակագործության ու ճարտարապետության պատմությանը: Թե՛ ազգային և թե՛ ընդհանուրի համար ժամանակին 2/3-ը հատկացնելով գրական գեղարվեստին, 1/3-ն ալ՝ տեսողական ու ձայնական գեղարվեստներու ուսումին:

VI. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏ

Գրականության գիտական, պատմական և այլ ոչ գեղարվեստական ստեղծագործություններու մասին հարկ եղած ընդհա-

նուր ծանոթութիւնները կորվին գիտական դասերուն կից կամ ազգային ու ընդհանուր պատմութեան դասերուն մէջոգին, իսկ ավելի խոր անոնց ուսումնասիրութիւնը կմտնէ մասնագիտական վարժարաններու ծրագրին մէջ: Որոշ չափով մը կմտնէ անշուշտ նաև գեղարվեստներու պատմութեան մէջ. շատ հաճախ նոյն հեղինակը և՛ գեղարվեստական, և՛ գիտական-բանասիրական այլ երկեր ունի թողած. այլև ժամանակի մը սիրող ոգին ու սկզբունքները ըմբռնելու համար, գեղարվեստական գանազան ուղղութիւններու առաջացումը բացատրելու համար հարկ կըլլա ոչ գեղարվեստական երկերու ալ բովանդակութիւնը ըզգալով:

Ընդհանուր կրթութեան մաս կազմող թէ՛ ազգային և թէ՛ ընդհանուր գեղարվեստներու պատմութեան մէջ ո՛չ ամէն հեղինակ հիշելու կարիքը կա, ո՛չ ալ մանավանդ ամէն հեղինակի ամէն երկ: Պետք է տալ ժամանակի ընդհանուր սկզբունքները, ընդհանուր ձգտումները, ընդհանուր մտահոգութիւնը, պետք է տալ գլխավոր հեղինակներուն ստեղծագործական դեմքը և իր ամէնէն կարևոր երկերու վերլուծութիւնը: Իսկ գեղարվեստներու ընդհանուր պատմութեան ընթացքին խոսիլ միայն գեղարվեստորէն մասնաւոր արժէք ներկայացնող ժողովուրդներու մասին և այդ ժողովուրդներու ալ ամէնէն կարևոր ժամանակաշրջանները միայն հիշելով, հեղինակներէն ալ ամէնէն կարևորները և անոնց ալ երկերուն գլուխ- գործոցները: Եվ լայն տեղ տալ ժողովրդական ստեղծագործութիւններուն:

Ամէն ժողովուրդի մասին խոսիլ ուզել, ժողովուրդի մը պատմութեան բոլոր շրջանները աչքի առաջ ունենալ, շրջանի մը բոլոր հեղինակները թվելու ձգտիլ և մեծ հեղինակներու ալ բոլոր երկերուն վրա կանգ առնել՝ սխալ է և հակառակ ընդհանուր կրթութեան ծրագրին ու պետքին. ատոր տեղը համալսարանն է:

Գեղարվեստներու պատմութեան այս դասավանդութիւններուն ուսուցման եղանակը նոյն ճամբան է, որով կքալէ ազգային և ընդհանուր պատմութիւնը ընդհանուր կրթութեան պատանեկան շրջանին: Սոցացման աստիճանը՝ ուսուցչի շրթունքին սպառ դասախոսութիւն. յուրացման աշխատանքները՝ ամէն աշակերտ իր համար դասի առնն առած նշումներուն վրայէն և ուսուցչի մատնանշած գրքերու օգնութեամբ. առուգումները՝ պարբերական ու դրա-

վոր: Հատուկ խնամք և լուրջ օգտագործում խորացման աստիճանի դասարանական և դուրսի աշխատանքներուն:

VII. ԸՆԿԵՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Վերջին լարանին մեջ ընկերական գիտութիւններուն հետևիլ ուզողները կրնան բաժնվիլ երկու ճյուղի. անոնք, որ ավելի գրական հետաքրքրութիւններ ունին, կկազմեն գործնական աշխատանքներու գրական ճյուղը. անոնք, որ ավելի ընկերային հարցերու գիտական խորացումով կհետաքրքրվին, կկազմեն գործնական աշխատանքներու պատմական ընկերագիտական ճյուղը:

Երկու ճյուղերուն համար ալ պարտադիր են պատմական գործնական աշխատանքները, չաբաթական երկու պահ: Աշխատանքները անհատական ու հավաքական եղանակներու բնական ձուլումն է:

1) Որոշ պատմական շրջանի մը, որոշ դեմքի մը, որոշ դեպքի մը, որոշ երևույթի մը ուսումնասիրութիւնը. տղաքը նախապես դուրսը կկարդան հարկ եղած երկը, կհուշագրեն կամ կգրեն տրված հարցերուն իրենց տալիք պատասխաններն ու փաստերը և վերջը հավաքական աշխատանքներու պահերուն կպաշտպանեն իրենց տեսակետները և կճևակերպեն միասին վերջնական եզրակացութիւնը:

2) Աշակերտներեն ամեն մեկուն վերջին երկու տարիները պատմութեան ուսուցիչը կուտա որոշ խնդիր ուսումնասիրութեան, որ գրավոր կերպով պետք է մշակեն, և որոնք կրնան նյութ դառնալ ընդհանուր քննութեան:

3) Որոշ պատմական երկեր, գլուխներ, էջեր ու կտորներ կդառնան խմբական ընթերցման և խմբական վերլուծման նյութ ուսուցչի ղեկավարութեամբ:

Գրական-պատմական ճյուղին պատկանողները այս պատմական աշխատանքներուն կից կունենան նաև գրական-գործնական աշխատանքներ չաբաթական երկու պահ:

Այս գրական-գործնական աշխատանքներու ընթացքին.

1) Կուսումնասիրվին գրական որոշ շրջաններ, հարցեր ու

հեղինակներ, ըլլան ազգային թէ ընդհանուր գրականութենէն հանած. գլխաւոր աշխատանքը՝ դուրսը, ամէն աշակերտ իր համար. հաւաքաբար և ուսուցչի ղեկավարութեան տակ կկատարվի մտքերու և տեսակետներու փոխանակութիւնը և եղրակացութեան ձևակերպումը:

2) Ամեն աշակերտ կառանա գրական որոշ երկ մը, ուղղութիւն մը, շրջան մը, գրական տեսակ մը, հարց մը հատուկ ուսումնասիրութեան. արդիւնքը գրաւոր կերպով խտացուցած պետք է ներկայացնե խումբի ընկերներուն և ուսուցչին. 3) Գրական ուսումնասիրութեան նվիրված հին ու նոր երկ մը ամբողջ խումբի աշակերտներուն կողմե առանձին-առանձին կարդացվելե հետը կզառնա ամբողջ խումբի ընդհանուր քննութեան նյութ: 4) Որոշ երկ մը, գրական կտոր մը, բանաստեղծութիւն մը կենթարկվի համրական վերլուծման առանց որևէ նախապատրաստութեան:

Գրական ճյուղին պատկանողները, բացի այս զուտ գրական աշխատանքներեն, կունենան չաբաթական երկու պահ՝ հայ ժողովրդական բարբառներու և գրաբար լեզվի ուսումնասիրութեան նվիրված: Երկու պահ ալ՝ հայ լեզվի դիտական-քերականական համեմատական ուսումնասիրութեան:

Իսկ պատմական-ընկերաբանական ճյուղին աշակերտները, բացի նախորդի հետ միասին ունեցած պատմական գործնական աշխատանքներեն, կունենան նաև գործնական աշխատանքները՝ ընկերային կյանքի, վարչական, տնտեսական, իրավական կազմերու ուսումնասիրութեանը նվիրված:

ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԼԵԶՈՒՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ա. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Լեզվի ուսուցումը ունի զանազան կողմեր, որ կրնանք երկու խումբի բաժնել՝ լեզվի ուսուցման գործնական կողմերը և լեզվի ուսուցման տեսական կողմերը:

Լեզվի ուսուցման գործնական կողմերը կձգտին ուղղակի լեզուն յուրացնել տալու, անմիջական կերպով, ըսել տալով, կապկել ու կրկնել տալով, պարզ գործադրութիւնմբ, առանց բացատրութիւններու ու կանոններու. կխոսին, կխոսեցնեն, կհարցնեն, պատմել կուտան, կարդալ ու գրել կուտան և այդ գործնական ճամբով կհարստացնեն ու կնրբացնեն փոքրերու արտահայտական կարողութիւնը:

Լեզվի ուսուցման տեսական կողմերը իսկապես լեզու չէ, որ կսորվեցնեն, լեզվի գործադրութիւնը չէ, որ կուտան, այլ կուսումնասիրեն լեզուն, անոր տարրերը, արտահայտութեան բաղադրիչ մասերը, ատոնց բոլորի՝ իրարու վրա ունեցած ազդեցութիւնը, անոնց կապակցութիւնները և փոփոխութեան օրենքները: Կձգտին մայրենի լեզվի կազմին ու էութեան ավելի խոր ըմբռնումին:

Այս տեսական կողմերը գիտութիւն են, ո՛չ գործադրութիւն, թեև անշուշտ այդ ավելի խոր ու պատճառական հասկացողութիւնը հետզհետե ավելի կամ պակաս չափով կաղդե նաև լեզվի ավելի ճիշդ, ավելի կոկ և ավելի նուրբ գործածութեան, որով բացի գիտականեն կտանա նաև հետագային որոշ աստիճանի գործնական արժեք:

Ուրիշ խոսքով՝ լեզվի ուսուցման այս գործնական ու տեսական կողմերը թեև իրարմե տարբեր բաներ են և ընդհանրապես տարբեր ուղիներով կքալեն, բայց ըլլալով միևնույն լեզվի և

միևնույն լեզվական երևույթներու արտաքին ու ներքին խորացումը՝ իրար կլրացնեն ու իրար կամրապնդացնեն:

Ուսուցիչը հաստակ կերպով միշտ իր մտքին մեջ պետք է իրարմե զանազանե այդ երկու երևոյթները երևույթի և պետք չէ երբեք իրար խառնե ներքնապես, երբ դասերու միջոցին երբեմն զան և իրարու հյուսվին արտաքուստ. օրինակ՝ երբ խոսելու, գրելու կամ կարդալու միջոցին մեկնություն մը, կանոն մը, բացատրություն մը ներս սպրդի, կամ օրենքի լեզվական կապակցության մը էությունը հանելու համար բանավոր ու գրավոր գործադրություններ մեջ կքաշենք՝ իբրև վարժություն, իբրև օրինակ, իբրև հիմք ու լուսաբանություն:

Ուսուցիչը իր դասական ամբողջությունը չխառնակելու համար և իր գծած շիտակ ճամբան չկորսնցնելու համար միշտ շատ որոշ պետք է դիտնա, թե հիմա ինչ գործի վրա է, լեզվի ո՛ր խնդրովը կզբաղի, ո՛ր կողմը ունի աչքի առաջ և այս ու այն կողմի տեսակները, թե՞ գործնականը յուրացնել տալու վրա կաշխատի:

Դպրոցի մեջ լեզվի մը յուրացման գործնական կողմերը էապես չորս են՝ ընթերցման յուրացում, գրության յուրացում, բանավոր արտահայտության յուրացում և գրավոր արտահայտության յուրացում, այսինքն կարճ ընթերցում, գրություն, բանավոր արտահայտություն և շարադրություն:

Դպրոցի մեջ լեզվի մը գիտական ուսումնասիրությունը նորեն էապես չորս է. 1) բառերու կազմին ու կապակցություններուն ուսումը, 2) լեզվի ծագման, զարգացման և ուրիշ լեզուներու հետ ունեցած կապերուն ծանոթացումը, 3) լեզվական ստեղծագործություններու և գրական երկերու մեջ գործադրվող կերպերուն, եղանակներուն ու տեսակներուն ուսումը և 4) վերջապես, որոշ լեզվով մը կատարված գրական կերտումներուն պատմական դերն ու ղիրքը, այսինքն քերականություն, լեզվաբանական ծանոթություններ, գրաբանություն և տեղեկություններ գրականության պատմութենեն:

Ինչպես լեզվի մը գործնական ու տեսական կողմերը ընդհանրապես իրարմե խիստ պետք է զատ պահվին ու զանազանվին, այնպես ալ անոնց տեսակ մը ննթաբաժանումը եղող այս կրկնակ չորս երևոյթները միշտ հաստակ կերպով պետք է իրարմե անջատ

պահվին: Նույն դասին մեջ կարելի է և՛ ընթերցում ընել, և՛ պատմել, և՛ խոսեցնել, և՛ գրուելիւն կամ քերականութիւն, գուցե գրաբանական կամ գրապատմական բացատրութիւն մը, միայն թե պետք չէ ատոնք իրարու խառնված ըլլան. ուսուցիչը միշտ շատ աղեկ պիտի գիտնա, թե այդ ումը կողմերեն ո՞րն է իսկապես իր աշխատանքի առարկան, ո՞րը վերջացուց և որո՞ւն պիտի անցնի հիմա:

Ո՛չ միայն ինքը իրար խառնակելու չէ ատոնք՝ ընթերցման վարժութիւններու ատեն արտահայտութեան եղանակներու մասին խոսելով, գրելու ատեն քերականական բացատրութիւններ մեջ քչելով, տղոց պատմութիւնը ընդհատել գրաբանական մեկնութիւններ հյուսելով նյութին, այլ առաջվընե մտածված կերպով մեկը ավարտելեն ետքը միայն անցնելու է մեկեն մյուսին և այդ անցումն ալ հարկ է, որ զգացնել կամ գիտակցիլ տա տղոց: Սկզբունքով դասի մեջոցին պատահական, միջանկյալ կամ փակագծի մեջ աշխատանքներ պետք չէ կատարվին, լեզվի այդ դանազան կողմերը բոլորն ալ պետք է դան խոսքի իրենց հատուկ տեղը, իրենց հատուկ ժամանակին, անջատ մեկը մյուսեն:

Մեծ կարևորութիւն ունեցող հարց է, որ տղաքը կանուխեն վարժվին երևույթի մը տարբեր կողմերուն ուսումնասիրութիւնը իրարմե խիստ զանազանելու, իր խոսքը միայն այս կամ այն կողմին վրա կեդրոնացնելու, մեկ կողմի մասին խոսելու ատեն ուրիշ կողմերե առնված բաներ իր ըսածին մեջ չխճողելու և գիտակից կերպով նյութի մեկ կողմեն մյուս կողմերուն անցնելու: Դատողութեան հստակութիւնը, ուսումնասիրութեան խորացումը և մտքի տեսութիւնը մեծ չափերով նպաստավորված կըլլա ատով:

Մտքի կրթութեան, զարգացման և գիտական մտածումի նշան է իր խոսքն ու գատումը սահմանափակել ու կեդրոնացնել գիտնալը և անգամ մը սահմանդ քաշելեն ետքը այդ սահմանեն ոչ մեկ պայմանով դուրս չգալը: Ամեն ինչ ըսել ուզել, նյութը նյութի մեջ խառնել, մեկ կողմեն մյուսը ցատկել և սահմանները ավրել՝ անմշակ մտքի ու տգիտութեան նշան է:

2. Լեզվի ուսուցումը ընդհանուր կրթութեան մեջ երկու ճյուղ ունի՝ մայրենի լեզվի ուսուցում և օտար լեզվի մը կամ լեզուներու ուսուցումը: Եվ մայրենի լեզվի ուսուցումը ունի հոգեբանական

խոր տարբերություն մը դպրոցներու մեջ օտար լեզուներու ուսուցումին, որ միշտ պետք է աչքի առաջ ունենալ:

Մայրենի բառերու, քերականական ձևերու, առույթներու և արտահայտական եղանակներուն յուրացումով մենք ո՛չ միայն մեր մտածումները ուրիշներուն արտահայտել կսորվինք, այլև մեր մտածումները ձևակերպել կսորվինք: Մայրենի լեզուն ո՛չ միայն արտահայտության միջոց մըն է, այլև մարդու ներքին մտածելու դործիքը: Մայրենի լեզուն միայն լեզու չէ, այլև բանականություն է. մենք կզատենք, կպատկերացնենք, դաղափարներ կկազմենք և առանք իրարու կհյուսենք մեր մայրենի լեզվի պարտադրած ձևերով ու եղանակով, մեր մայրենի լեզվի պրիսմակի միջով, մեր մայրենի լեզվի ոգիով: Մայրենի լեզվի յուրացումը միայն արտահայտական յուրացում չէ, այլև մտավոր կաղապարում, մտածողության որոշ ու մնայուն ձևաւորություն:

Օտար լեզուներն ալ շատ ավելի համեստ չափով մը այդ դերը կկատարեն ավելի ուշ, երբ օտար լեզվին կտիրանանք, երբ մտերիկ չփման կուգանք այդ լեզվի գրականության հետ և այդ լեզուն խոսող ժողովուրդին հետ, բայց դպրոցի մեջ, երբ իբրև օտար լեզու մը կսորվինք, ան չունի այդ զարգացնող, ձևակերպող հոգեբանական արժեքը. անիկա միայն լեզու մըն է, այսինքն բառերու, առույթներու, օրենքներու և դարձվածներու ամբողջություն մը, որ պետք է միտք պահենք այդ լեզվով ալ մեր մտածումները կերպ մը արտահայտել կարողանալու համար: Եվ երկար, շատ երկար ժամանակ մենք կմտածենք միշտ մեր լեզվով և օտար բառերով ու օտար ձևերով մեր մտածածը թարգմանելու համար:

Ասոր համար է, որ օտար լեզուներու ուսումը դպրոցի մեջ ամենեն առաջ հիշողության հարց է և մտքի ու մտածումի զարգացման տեսակետեն լուրջ արժեք մը չունի: Մինչդեռ մայրենի լեզվի ուսուցումը զարգացողական մեծ դեր կխաղա, և ինչքան փոքր է մարդ էակը, այնքան մեծ է լեզվի այդ զարգացնող դերը: Կրնանք ըսել, որ երեխայական և մեծ չափերով նաև մանկական տարիներու ընթացքին ուսում ու լեզու միևնույն բանն է. լեզուն սորվելով կկազմվին դաղափարներն ու դատողությունները:

Բ. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԵՋ

Ի. ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Փոքրիկներու լեզվի մշակումը կկատարվի մանկապարտեզի մեջ նախ և առաջ մեծերու և փոքրերու կենակցութիւնմբ, վարժուհիներու և երեխաներու մշտական ազատ շփումով ու ազատ խոսակցութիւնմբ բոլոր պահերուն, բոլոր խաղերու միջոցին և բոլոր ձեռական աշխատանքներու պահերուն:

Մանկապարտեզի ամեն վարժուհի պարտական է խիստ ուշադրութիւն դարձնելու իր մայրենի խոսքի մաքրութիւնը, կանոնավորութիւնը և իր արտահայտութիւններու հայութիւնը: Ասիկա պահանջ մըն է, որ կրնա գործադրել միայն այն վարժուհին, որ մեծցած է հայ ու հայախոս ընտանիքի մեջ, որ գոնե իր մանկական տարիներու կրթութիւնը ստացած է հայ վարժարաններու մեջ, որ ծանոթ է հայ գրականութեան, և որուն ձեռքը միշտ հայ գիրք կա ու հայ պարբերական: Եթե վարժուհին հայ ընտանիքի ու հայ միջավայրի մեջ չէ մեծցած, այլ ուղը անհատական ջանքերով է ձեռք բերած հայերենը և մասնավոր կերպով չի հետևիր հայ մամուլին ու գրականութեան կամ բնավ չգիտե հայերեն, կամ օտար ու տգեղ հայերեն մըն է ունեցածը, օտար լեզվով կմտածե և կարկառուն կերպով կթարգմանե, ըսել է՝ անոր հայերենը չունի հայ լեզվի շունչն ու կենդանութիւնը, զուրկ է հայ ոգիե, ուրեմն և իր չունեցածը ուրիշներուն տալ չի կրնար, իր փոքրիկներուն միայն եղծված, չինծու հայերեն միայն կուտա: Այս տեսակ անձը ինչքան ալ խելացի ըլլա, դիցուք և պատրաստված, հայ մանկապարտեզի մը հայ վարժուհին ըլլալ չի կրնար. նախ պետք ունի ինքը հայ վարժուհիի մը:

Հայ ընտանիքի ու հայ միջավայրի մեջ մեծցած ըլլալը անշուշտ մեծ առավելութիւն մըն է լեզվի տեսակետե, բայց ամեն անգամ բավարար չէ վարժուհի դառնալու համար պզտիկներուն: Ընտանիքի ու միջավայրի լեզուն խառնակված ու աղավաղված կրլլա հաճախ, մանավանդ մայր հողեն կտրված, գաղութային պայմաններու մեջ օտար տիրապետութեան և օտար լեզուներու ազդեցութեան տակ: Այդ բոլոր օտարութիւններեն ու խորթութիւն-

ներսն իր լեզուն մաքրելը վարժուհիի պարտականութիւնն է հատուկ խնամքով և մշտական ուշադրութեամբ:

Ինքը միշտ մաքուր, կանոնաւոր ու հայատարի խոսելին նոքը միևնոյնը պիտի պահանջի իր փոքրիկներեն, բայց պետք է պահանջն գործով, ո՛չ թէն քարոզով: Երբ փոքրիկը սխալ կըսե, անճիշդ կամ ոչ գեղեցիկ, վարժուհին իսկույն ինքը պիտի ըսե ավելի գեղեցիկը և փոքրիկին կրկնել պիտի տա: Պետք չէ պատասխանել փոքրիկի հարցին, մինչև իր ծուռ արտահայտութիւնը չսրբագրե, պետք չէ պատասխան մը իբրև պատասխան ընդունվի, մինչև պզտիկը չի չտկն իր լեզուական անհարթութիւնը: Ա՛ս է միակ ճամբան, որուն պարտական է հետևելու վարժուհին առանց ծուլանալու, առանց աչք գոցելու և առանց համբերութենե ելլելու:

Իսկ հատկապես հայերեն լեզվի մշակումով ու հարստացումով զբաղվող տեղը մանկապարտեզի մեջ գիտութեան և պատմութիւններու հատկացված պահերն են: Գիտութիւնը դիտողութիւններու և դատողութիւններու անվերջ հյուսք մըն է, որ կկատարվի բառերու և բառային կապակցութիւններու նուրբ ու ճիշդ գործածութեամբ. գիտական աշխատանքներով զբաղվիլ՝ կնշանակե արտահայտութեան մշակումով զբաղիլ:Իսկ պատմութիւն անվանածնիս միմիայն բառերով դոյութիւն ունեցող ամբողջութիւն մըն է, այսինքն զուտ լեզվական կերտվածք մը, արտաքին աշխարհի մեջ կատարվող եղելութեան մը ստացումը, բայց ո՛չ անմիջապես դոյութիւններով, այլ ուրիշի մը կողմեն մեզի հաղորդված բառերու և անոնց կապակցութիւններու միջոցով: Այս պատճառով ալ թէ՛ իրական և թէ՛ գեղարվեստական պատմութիւններու լսելն ու ըսելը մեծ դեր ունի լեզվի զարդացման վրա:

Գիտական նյութերը կսրեն ավելի դիտողական, նկարագրական ու տրամաբանական հատկութիւնները լեզվի. պատմութիւնները կմշակեն ավելի լեզվի գեղարվեստական կողմերը և ըսվելիքի հաջորդական հյուսքը: Գիտութիւնը հետզհետե իրարու կցվող մանր ու հատուկ նկարագրութիւններու ամբողջութիւն մըն է, պատմութիւնը՝ իրար հաջորդող եղելութիւններու և վիճակներու կանոնաւոր հյուսք մը:

Լեզվի մշակմանը նպաստող միջոց մըն է նաև գեղեցիկ ու դրավիչ, արձակ ու ոտանավոր կտորներ գոց ընել տալը, ինչպես և

մանկական փոքրիկ ներկայացումներ կազմակերպելը, պայմանով, որ այդ բոլորը կատարվի սիրով, իբրև խաղ ու զվարճություն, առանց երեխաներու միտքը ծանրաբեռնելու և առանց որևէ դժկամակություն պատճառելու:

II. ԿԱՐԴԱԼ-ԳՐԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԻՆ ՅՈՒՐԱՑՈՒՄԸ

Գրել-կարդալը թեև լեզվի ուսուցման մեկ մասը կկազմեն անշուշտ, բայց իսկապես բուն լեզվեն շատ տարբեր բան մըն է: Լեզվի մը մեջ լսվող ամեն մեկ հնչյունին համար հնարված է պայմանական նշան մը. երբ այդ նշանը կտեսնենք, կհանենք իրեն կապված ձայնը, երբ այդ ձայնը կլսենք, կգրենք իրեն համապատասխանող նշանը, այդ պայմանական նշանները ճանչնալը և ճիշդ կերպով իր ձայնին կապելն է, ահա՛, որ կանվանենք գրել-կարդալ սորվիլ: Ինքնին շատ չոր և անհրապույր ուսում մը, որուն հրապույրը կսկսի հոն, երբ այդ նշաններու համապատասխան ձայները հանելով կստանանք մեզի ծանոթ բառեր ու խոսքեր, որոնց միջոցով կհասկնանք հեռու եղողներու մտածումներն ու զգացումները, այսինքն երբ կուգա գրի ու գրքի քիչ-շատ ազատ գործածութիւնը:

Եթե լեզվի մը ամեն մեկ հնչյունը միայն մեկ նշան մը ունենար, և երբ ամեն մեկ նշան ամեն տեղ միայն մեկ հնչյուն մը արտահայտեր, այդ նշաններու ուսուցման արվեստը շատ կկրճատվեր ու կդյուրանար: Դժբաղդաբար այդպես չէ և ո՛չ մեկ լեզվի մեջ: Տառեր կան, որ չեն գրվիր որոշ տեղեր. տառեր կան, որ չեն հնչվիր որոշ տեղեր. տառեր կան, որ քանի մը տեսակ կկարդացվին՝ նայելով տեղին. տառեր կան, որ որոշ կապակցութիւններու մեջ ուրիշ կերպով կհնչվին, և հնչյուններ կան, որ տարբեր բառերու մեջ տարբեր կերպով կգրվին: Այս բոլոր հինեն եկած ու գրքերու մեջ արմատացած օրենքներն ու սովորութիւնները գիտնալը և ատոնց համեմատ կարդալ ու գրել փորձելը կդառնա շատ բարդ գործ մը:

Եվ վերջապես մարդկային հնչյունները կազմված են զուտ ձայներե և չշուկներե: Եթե ամեն տառ միայն զուտ ձայնի մը արտահայտիչը ըլլար, ընթերցումն ու գրութիւնը շատ կպարզվիր,

բայց չշուկ հնչյունի մը արտահայտությունը եղող տառերը, որոնք առանձին հնչվիլ չեն կրնար և միշտ ձայնավոր հնչյունի մը կից թթվիլին անոր հետ միասին հնչվիլ կարողանալու համար, կարդալու գործողությունը ավելի ևս կբարդացնեն. տառ գաղափարեն գատ կառաջանա նաև վանկ գաղափարը. բառ մը, եթե խորը դիտենք, հնչյուններն չէ, որ կկազմվի, այլ վանկերե:

Հնչական սիստեմի թերի ըլլալը և ձայնավոր ու բաղաձայն հնչյուններու դոյությունը կարդալ-գրել սորվիլը և՛ կդժվարացնեն, և՛ կերկարաձգեն: Հասուն մարդը ավելի վարժ է ինքզինքը բռնադատելու շատ մը անհամ ու անախորժ գործեր հանձն առնելու՝ վերջը անկե օգտվիլ կարողանալու և զանազան տեսակի բավականությունններ ստանալու ակնկալությամբ. մանուկը ինչքան փոքր է, այնքան ավելի նվազ է անոր մեջ վերջը վայելելու հասկացողությունը. անոր համար արժեքավորը հոսող վայրկյանն է, ինչ որ այդ վայրկյանին իրեն դժվարություն ու անախորժություն կպատճառե, այդ տեսակ բաներով զբաղվիլ չի սիրեր, կխուսափի: Հոսկե ալ կառաջանա գրել-կարդալ սորվեցնելուն նման սրտին ու մտքին ոչինչ չխոսող անհամ ու երկարատև աշխատանքը հնար եղածին չափ համեմելու, դյուրացնելու ուքիչ մը ավելի գրավիչ գարձնելու անհրաժեշտությունը, քանի որ ստիպված ենք այդ բոլորը փոքրիկներուն սորվեցնելու. ստիպված ենք, որովհետև առանց գրի ու գրքի դպրոց ու դպրոցական աշխատանք չկա գոնե մեր արդի քաղաքակրթական պայմաններուն մեջ:

Դպրոցական դասն սեմին տղան պետք է ձեռք բերե գրքերու և ուսումներու այդ բանալին, որ է գրել-կարդալը: Ուր մանկապարտեզ դոյություն չունի, դպրոցական աշխատանքը աւոով ալ կսկսի. տարրական շրջանի առաջին տարվան մեծագույն մասը կխլե կարդալ-գրել սորվեցնելու աշխատանքը՝ բուն լսվի ուսուցումեն շատ ժամանակ գողնալով: Ուր մանկապարտեզ կա, այդ աշխատանքը կկատարվի շատ ավելի հանգիստ կերպով մանկապարտեզի վերջին տարվան ընթացքին:

Գիրք ու թերթ շատ ունեցող ընտանիքներու մեջ, ուր մեծերը շարունակ ընթերցում ունին իրենց ձեռքը, փոքրիկները շատ ավելի կանուխեն, վեց տարեկանեն, նույնիսկ հինգ տարեկանեն կսկսին տառերով հետաքրքրվիլ, կարդալու և գրելու փորձեր կընեն և քանի

մը տառերու ընթերցումը և կարդալու գաղտնիքը ձեռք կբերեն: Մանկապարտեզներու մեջ ալ անփորձ ու անպատրաստ վարժուհիները, չգիտնալով ազեկ մը, թե փոքրիկները ամբողջ օրը ինչով զբաղեցնեն, շատ հաճախ առաջին տարիեն կսկսին գրել-կարդալ սորվեցնելու: Եվ սորվեցնելն ալ անկարելիություն մը չէ, թեև փոքրիկներու մեծ մասին համար անհետաքրքիր ու անհրապույր բան մըն է և կհոգնեցնե. հետևանքն ալ այն կըլլա, որ այբուբենի լրիվ յուրացումը կձգձգվի ամբողջ երկու տարի, մինչև մանկապարտեզին վերջը, որ արդեն չափազանց երկար ժամանակ է:

Ամենեն հարմարը մանկապարտեզի վերջին տարին է, երբ բոլորովին անկախ լեզվի արտահայտական մյուս ջանքերեն, օրական պահ մը կհատկացվի միմիայն գրել-կարդալու ուսուցման. և աշխատանքը պետք է տանիլ դանդաղ, հանգիստ, նկարելու ու խաղալու նման, թեթև ու կաթիլ-կաթիլ, մանավանդ սկիզբները. տարվան կեսերեն ավելի կզարգանա ու կլրջանա գործը. երբ բավական տառեր յուրացուցած են արդեն և կարդալեն սկսած են փոքրիկները համ առնել, և շատերը իրենք առաջ կվազեն հաջորդ տառերն ալ ճանչնալու փափաքով, տարվան վերջերը օրական այդ մեկ պահը կարելի է երկուքի վերածել, քանի որ հետզհետե գրելիքն ալ կսկսի շատնալ, և քանի որ ամբողջ աշխատանքը պետք է կատարվի վարժուհիի ներկայության:

Իսկ այն դպրոցները, որ մանկապարտեզ չունին, անհրաժեշտ է, որ ունենան գոնե վարժոց դասարան մը, իբրև նախապատրաստական կարգ մը տարրական վարժարանի կարգերեն առաջ, որ համապատասխանե ըստ էության մանկապարտեզի վերջին տարվան, ուր և ձեռք բերեն փոքրիկները կարդալ-գրելու արվեստը:

Հին ժամանակները այբուբենը սորվեցնելու անկենդան ու մեքենական ձևը անտանելի չարչարանք կպատճառեր փոքրիկներուն և համեմված էր միշտ ծեծով ու պատիժներով. գիր ու կարդալ սորվողները համեմատաբար շատ քիչերն էին, և այդ բացառիկ կարողության տիրանալու համար քաշված տառապանքները բնական կհամարվեին: Ժե դարու կեսերեն սկսած, երբ դպրոցները սկսան ընդհանրանալ ու պարտադիր դառնալ, բոլոր ազգերու մեջ ալ դպրոցին կապված մարդիկ սկսան ճիգ թափել, որ պակսեցնեն դաժանությունները ու դժվարությունները, որ քիչ մը ավելի կեն-

դանագիններն թե՛ գործածված բառերով, թե՛ նկարներով, թե՛ չարժական տառերով և թե՛ ուսուցման զանազան եղանակներով: Թեև հին ձևի հետևողություններ, խարխափումներ և ժամանակին նոր մնացած ուսուցման ձևեր ու այբբենարաններ մինչև հիմա ալ բնավ չեն պակսիր ամեն տեղ:

Հայերին այբուբենի ուսուցումը վերջին հիսուն տարիներու ընթացքին մեծ հառաջդիմություն ունեցավ նախ արևելյան հայերենի համար, ուրկե և անցավ արևմտյան հայերենին: Այդ ուղղությամբ առաջին մեծ քայլը ըրավ Ղազարոս Աղայան, որուն այբբենարանը ամեն դասին միայն մեկ նոր տառ մը կուտա. այդ նոր տառով և նախորդ արդեն սորված տառերով կարդացնել ու գրել կուտա քանի մը բառեր ու խոսքեր, որով աշխատանքը կաստիճանավորվի ու կդյուրիննա, ընտրված և մանուկներուն սիրելի բառերն ու նկարներն ալ նյութը կկենդանացնեն:

Այբուբենի ավանդման երկրորդ կարևոր քայլը կառնվի, երբ տառերը սորվեցնելու հաջորդականությունը պատահականության ու քմայքի չի թողնվիր, ինչպես ըրած է Աղայանը, այլ կենթարկվի որոշ սկզբունքներու: Այս ձևով կազմված է «Լուսաբեր» այբբենարանը Ստ. Լիսիցյանի, Հովհ. Թումանյանի և իմ համագրությամբ, և իր սկզբունքներն են. ա) Ամենեն առաջ կավանդվին ամենեն պարզ գրության տարրեր պարունակող տառերը, որոնք բ) միևնույն ժամանակ շատ գործածական են մեր լեզվին մեջ և գ) որոնք միշտ ու ամեն տեղ մեկ ձևով կկարդացվին և պարզ ու դյուրին հնչյուն ունին. և, վերջապես, դ) սկիզբները կգրեն ու կկարդան միայն ձեռագիր և միայն հասարակ գիր (ո՛չ գլխագիր)՝ բազմաոճությունները և չփոթի ազատելու համար փոքրիկները:

Երեխաները այս ճամբով կգրեն ու կկարդան հետզհետե աճող մոտ քսան տառերով բազմաթիվ բառեր ու նախադասություններ՝ հնար եղածին չափ մանուկներու հոգին հետաքրքրող իրերու շուրջ և պատկերներով ալ ավելի գրավիչ դարձուցած: Ուրկե նոքը կուգա գրել- կարդալ սորվեցնելու երկրորդ աստիճանը. 1) կուգա գլխագիրներու գրությունը իրենց գրության նոր տարրերով. 2) գլխագրի հետ նաև գլխագիրը գործածելուն օրենքները. 3) գլխագրին հետ հատուկ անուններու գործածությունը, և ընթերցման նյութերը կդառնան արդեն ամբողջություններ, փոքրիկ, կենդանի

պատմություններ. 4) կսկսին երկչար բաղաձայններու գործածությունը՝ հնչեղն ու չնչեղը միշտ իրար հետ համեմատելով և վերջապես 5) և ձայնավորի կրկնակ գործածությունը:

Եվ քիչ-քիչ ու աստիճանաբար ավելցող այս նորություններով տղան կկարդա ու կգրե բազմաթիվ էջեր և արդեն ըմբռնած է առանց որևէ մեկնության ու փիլիսոփայության կարդալուն ալ, գրելուն ալ մեքենականությունը, երբ կանցնինք գրել-կարդալու երրորդ աստիճանին: 1) Կուգա տպագիրը՝ թե՛ հասարակ, թե՛ գլխագիր, 2) Կլրացվին բաղաձայններու հնչեղ ու չնչեղ զույգերը, 3) Ը-ի կրճատումը գրության մեջ և 4) ո ձայնավորի կրկնակ գործածությունը:

Չորրորդ ու վերջին աստիճանը կկազմեն հայ լեզվի գրության բոլոր բարդությունները. 1) օ ձայնավորը, 2) յ բաղաձայնի չկարդացվիլը և իբրև հ կարդացվիլը, 3) եռաշար բաղաձայններեն միջնակ շարքը, որոնք արևմտյան բարբառին մեջ կհնչեն ընդհանրապես նուրբերուն նման՝ որոշ պայմաններու տակ հնչեղներու նման գրության և ընթերցման մեծ դժվարություններ առաջացնելով և վերջապես 4) ձույլ ձայնավորներու ընթերցումն ու գրությունը:

«Լուսաբերը», այսպեսով, Աղայանի աստիճանաբար ու տառտառ սորվեցնելու բեղմնավոր սկզբունքը կատարելագործած ու դրած է ավելի գիտական հողի վրա: «Լուսաբերը» կազմողներուս համար խիստ հիմնական արժեք ուներ նաև ուսուցման նոր ըմբռնում մը, որուն համեմատ բաղաձայնը ընթերցման ու գրության ժամանակ երբեք առանձին չի հնչվիր, այլ միշտ ձայնավորի մը հետ. ասիկա գործնականապես կնշանակե՝ գրել-կարդալու արվեստը պետք է ուսուցվի վանկերով, աչքը պետք է վարժվի վանկեր բռնելու և այդ վանկերը արտասանելու, և վանկերը պիտի միանան իրար բառեր կազմելու համար. ուրիշ խոսքով՝ տառերը հնգելու իրողությունը կվերնա կարդալ-գրելու ուսուցման մեջեն. օրինակ՝ ո՛չ թե «կը-ա=կա», այլ պարզապես ու միայն «կա». առանձին ո՛չ կգործածվի, ո՛չ կհնչվի. տառին անունն է կեն կամ կը, բայց ո՛չ հնչյունը:

Այս նոր ու կարևոր սկզբունքը, որ սաստիկ կպարզե ու կդյուրացնե կարդալ-գրելու ուսուցումը, ես ավելի մանրամասն բա-

ցաւրած եմ «Կարդալ-գրել սորվեցնելու եղանակը» գրքիս մէջ: Բայց այդ գիրքը ծանոթ է չատ քիչ ուսուցիչներու, և «Լուսաբեր» այբբենարանին մէջն ալ այդ մասին ոչինչ ըսված չէ, մեր «Լուսաբերի» այդ խիստ կարևոր պահանջը դեռ չատ քիչ տեղ գործադրութեան կդրվի, նոյնիսկ «Լուսաբերը» իբրև դասագիրք գործածողներու կողմե:

Իմ նոր կազմած «Մանկական աշխարհ» այբբենարանին մէջ, որ բոլորովին հիմնված է «Լուսաբերի» մէջ մեր մշակած սկզբունքներուն վրա, այդ կետը հստակ չեչուված է ուսուցչի համար, և ընդհանրապես ջանացած եմ գրել-կարդալ սորվեցնելու հետ առնչուած հանգամանքներուն հիմնական առանձնահատկութիւնները ցայտուն ու բացահայտ դարձնել ամենուն համար:

Գ. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԵՋ

Ի. ԿԱՐԴԱԼՈՒ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԻՐ ՀԵՏԶՀԵՏԵ ԻՋՆՈՂ ԳԻՏԸ

Լավ է խոսինք ընթերցման մասին, որովհետև դպրոցական աշխատանքին մէջ լեզվի ուսուցումը չատ սերտորեն կապված է ընթերցումին և հյուսված ընթերցման օրվա նյութին:

Եվ կարդալ սորվեցնելն է դպրոցին առաջին ու դժուար դերերեն մեկը, այսինքն գիրեն ու գիրքեն օգտվելու բանալին տալը տղուն ձեռքը, գիրեն ու գիրքեն օգտվելու եղանակը սորվեցնել տղուն:

Տարրական նախակրթարանի մեջ ամենեն չատ կատարվելիք և ամենեն ուրիպողական պահանջներեն մեկն է վարժ ու կանոնավոր կարդալ սորվեցնելը: Շրջանի երկրորդ երկամյակեն սկսած՝ հետզհետե կշեչավի կարդալ կարողանալու դերը մյուս ուսումներու յուրացման միջոցին, իսկ բարձր նախակրթարանին մեջ դասագրքերու և ընթերցման դերը կդառնա ուղղակի տիրապետող դպրոցական բոլոր աշխատանքներու մեջ:

Տարրական նախակրթարանի մեջ եղող բոլոր առարկաներուն ավանդումը կարելի է սեղմել, կրճատել, մեկ մասը նույնիսկ

բոլորովին հասկանալի. անշուշտ կդառնա խեղճացած ու կրճատած դպրոց մը, բայց դպրոց մը ըլլալն չի դադրիր, ինչքան ատեն որ կարդալ մը կսորվեցնես: Եվ դպրոցը իր սկիզբը առած է էապես ատոր համար. մինչև հիմա ալ ժողովուրդի գիտակցութեան մեջ դպրոցը ամենեն առաջ կարդալ սորվելու տեղն է, և վերջապես դպրոց կամ դպրանոց անունն ալ կուգա դպիր բառեն, որ կարդացող ըսել է:

Այսպես ալ մայրենի լեզվի դասերեն կարելի է շատ բան գեղջել՝ և՛ տեսական բոլոր ուսումնասիրութիւնները, և՛ բանաւոր ու բառագիտական աշխատանքները. նույնիսկ գրելուն կարելի է շատ քիչ ու խեղճ տեղ տալ, բայց կարդալը զեղջելուդ պես աշխատանքի հիմքն ու առանցքը կկորսվի:

Եվ լեզվի դասերու առեն ալ լեզվական բոլոր կողմերուն ուսուցումը ավելի կամ պակաս սերտութեամբ կապված են կամ կղառնան ընթերցման հետ: Ան է տեսակ մը դասավանդման բոլոր կողմերը իրարու զոդող օղակը: Եվ ինչքան վարի կարգերը իջնենք, այնքան չնչուված է ընթերցանութեան այդ դեկավար դերը:

Բարձր նախակրթարանի առաջին երկամյակին թեև նորեն ընթերցումը կարևոր դեր ունի, բայց առաջնութիւնը քիչ-քիչ կսահի դեպի գրութիւնը, դեպի շարադրութիւնը, իսկ բարձր նախակրթարանի վերջին երկամյակին ընթերցման դերը արդեն երկրորդական է լեզվի ուսուցման աշխատանքներուն մեջ, և շատ քիչ չափերով ընթերցումը ինքը կմնա ուսուցման ու մարզանքի առարկա:

Կարդալ սորվելու իսկական ժամանակը՝ դպրոցական առաջին շրջանը, 7-են 11 տարիները տղու: Տղան կուգա դպրոցական առաջին դասարանը կա՛մ ուրեմն մանկապարտեզեն, կա՛մ վարժուհին և կբերն իր հետ կարդալու արվեստին ամենեն հիմնական մասը. դիտե բոլոր նշաններուն արժեքը, դիտե կարդալու մեքենականութիւնը, բայց չունի կարդալու դյուրութիւնը, ճշդութիւնը, վարժութիւնը, բաներ, որոնք ձեռք կբերվին կարդալով, հաճախ կարդալով: Ահա՛ այդ աշխատանքին է նվիրված առաջին շրջանի լեզվական դասավանդման գլխավոր հոգերեն մեկը: Այս շրջանի մեջ լեզվի դասին հատկացված ժամանակի գոնե 1/3-ը պետք է տրամադրվի ընթերցման վարժուհին ու մարզուհին:

Բ. ԸՆԹԵՐՑՄԱՆ ՍՏԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Ընթերցումն ալ բնական կերպով ունի իր ավանդման երեք աստիճանները. ամեն կտորի, ամեն հոդվածի ընթերցում կանցնի երեք աստիճաններեն. ուրիշ է առաջին ընթերցումները, ուր դվխավոր ջանքը տառերը ճիշդ հնչելուն և ճիշդ իրարու հետ կապելուն վրա կկենդրոնանա, ուրիշ է յուրացման ընթերցումը, ուր արդեն կարդացած ու ճշդածը կրկին ու կրկին կարդալով վարժութիւն ու դյուրութիւն ձեռք բերելուն կաշխատվի, և վերջապես ուրիշ է խորացման ընթերցումը, որ արդեն ճիշդ ու վարժ կարդացածին կուգե արտահայտութեան խորութիւն ու նրբութիւն տա, կուգե ըստ իմաստի կարդա, կուգե զեղեցիկ կարդա:

Առաջման աստիճանին վրա աշխատանքը կարելի է տանիլ երկու ճամբով: Առաջին ճամբան ուսուցչեն կանցնի աշակերտին: Նախ ուսուցիչը ամփոփ կպատմե կարդացվելիքը, որ տղոց հետաքրքրութիւնը հազնա, և ընթերցման միջոցին նյութի մասին խոսելու կարիք չմնա: Ուրիկ եղբը կբացվի կարճ խոսակցութիւն մը կարդացվելիք կտորին մեջ պատահող մեկ-երկու անծանոթ կամ կես-ծանոթ բառերու շուրջ, միայն թեթև ու մոտավոր, որպեսզի չատ ժամանակ չվալե և բառագիտութեան դաս չդառնա. լավագույն է՝ ուսուցիչը իր պատմելուատեն այդ բառերը գործածե և պատմելու ատեն ալ մերձիմաստ բառերու և արտահայտութիւններու զուգադրումով հասկնալի դարձնե ու անցնի:

Այս նախապատրաստութենեն եղբն է, որ բանալ կուտա դրքերն ու էջ. կկարդա ինքը վերնագիրը և ամբողջական պարբերութիւն մը երկու-երեք տողեն ո՛չ ավելի: Այդ կտորը կարդացնել կուտա մեկ-երկու անգամ բերնե բերան. տղայե տղա պետք չէ անցնիլ նախադասութեան կեսին, այլ անպատճառ գոնե միջակետե մը եղբը: Նույն ձևով կկարդա ու կկարդացնե հաջորդ կտորը, վերջն ալ երրորդը, մինչև որ լրանա հոդվածը: Անհրաժեշտութիւն մը չկա, որ ամբողջ հոդվածը անպատճառ մեկ դասի մը մեջ լրանա, կրնա լրանալ երկու կամ երեք պահերու ընթացքին, պայմանով, որ հոդվածը բնական կերպով կարելի ըլլա երկու կամ երեք կտորի բաժնել ըստ իմաստի:

Ընթերցման այս աշխատանքը պետք է այնպես տարվի, որ ամբողջ պահ մը ընթերցումով չբռնվի. պահի մը 1/3-ը նվիրել

ընթերցման ամենեն սովորականն է, բացառիկ կերպով կարելի է քիչ մը ավելի: Կարդացված կտորի այս առաջին ընթերցումեն ետքը ուսուցիչը կպատվիրե, որ տունը սերտեն, այսինքն կարդան բարձրաձայն նույն կտորը մեկ-երկու անգամ. ուրկե ետքը դասարանը կանցնի լեզվական ուրիշ կողմերու ուսման, որոնց մասին հաջորդ էջերու մեջ պետք է խոսվի:

Ընթերցման ստացման աստիճանի երկրորդ ճամբան կսկսի անմիջապես աշակերտեն, այս ճամփան կարելի է բռնել առաջին երկամյակին, երբ շատ պարզ ու դյուրին է ընթերցման նյութը և՛ հասկնալու, և՛ կարդալու տեսակետեն, իսկ հաջորդ երկամյակին ընդհանրապես տիրողը այս ճամբան է:

Նախ ուսուցիչը ամփոփ կպատմե հոդվածին ամբողջական բովանդակությունը, որ հետաքրքրություն հագենա, և կարդալու ախորժը գրգռվի. պատմելու ատենը գործածելու է անպատճառ անծանոթ ու խախուտ բառերն ու դարձվածքները՝ ջանալով հասկնալի դարձնել անոնց հաջորդող մերձիմաստներով: Եվ տղաքը կհանեն գրքերը. աշակերտներեն մեկը կկարդա առաջին պարբերությունը երկու-երեք տող: Շարունակությունը քանի մը տող կկարդա ուրիշ աշակերտ մը, և այդպես բերնե բերան մինչև հոդվածին կամ հատվածին վերջը՝ նայելով երկարության: Առաջին երկամյակին այնպես պետք է հոդվածը մասերու բաժնել, որ կարելի ըլլա դասարանին մեջ երկրորդ, դուցե և երրորդ անգամ կրկնել ընթերցումը: Երկրորդ երկամյակին, մանավանդ չորրորդ տարվան մեջ այդ կրկնակի ընթերցումները ավելորդ են. տղոց կողմեն կատարված ստացման մեկ ընթերցումը հերիք է:

Գ. ԸՆԹԵՐՑՄԱՆ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Յուրացման ընթերցումը կկատարվի գլխավորապես տունը. ամեն օր տղաքը կարզալիք բան մը պիտի ունենան դուրսի համար կա՛մ յուրացման, կա՛մ խորացման աստիճանի, մանավանդ առաջին երկամյակին: Դեռ ուսուցչի հետ չկարդացած կտորները պետք չէ տալ տղոց, որ դուրսը կարդան իրենք իրենց. լավ է, որ միշտ ուսուցչի հնչած ու արտասանած ձևովը վարժվի: Անհրաժեշտ է, որ տղաքը սովորություն ընեն տունը կրկնվելիք ընթերցումը կատարեն բարձր ձայնով. մտքով կարդալու ատեն շատ հաճախ կկարծենք, թե ճիշդ

կկարդանք. սխալը ղդալու համար պետք է լսենք մեր արտասանածը: Եվ մտքով կարդալը առանձին տեսակի վարժություն մըն է, ան իսկապես կարդալ չէ . կարդալ՝ կնշանակէ աչքով տեսած նշաններդ ձայնով արտահայտել. մինչև որ բերնի ու ձայնի բոլոր շարժումները կատարյալ ճշդությամբ ու նրբությամբ չկատարվին, նուրբ ու ճիշդ կարդալ չենք սորվիր. ինչ որ չէ արտասանված, չէ կարդացված: Մտքով կարդալը առանձին ընթերցական վարժություն մըն է, որ ինքն իրենը կզարգանա, և որու ճիշդ զարգացման համար ալ կարևորություն ունի, որ առաջին տարիները տղան միշտ բարձրաձայն կարդա: Իր քույր ու եղբայրները չխանգարելու կամ այլ պատճառով մը երբ անհարմարություն մը կա բարձրաձայն ընթերցման, տղան պետք է կարդա դոնե չչնջելով, շրթունքով, թեև առանց ձայնի:

Այս կերպով տունը քանի մը անգամ կրկնվածը հաջորդ դասին ուսուցիչը կպահանջև, որ անգամ մը նորեն բերնե բերան դասարանին մեջ կարդացվի. եթե ընթերցումը գոհացուցիչ վարժությամբ չի կատարվիր, կարելի է երկրորդ ընթերցում մըն ալ, բայց պետք է զգուշանալ, որ ձանձրույթ չառաջանա արդեն չնորհքով կարդացողներուն հոգիին մեջ. այլև կպահանջվի լայնսիրտ ու հանգիստ վերաբերում դժվար կարդացողներուն դեմ, ո՛չ թե նեղսրտիլ, հանդիմանել ու սևերեսել, այլ ընդհակառակը, իր ջերմ ու բարյացակամ օժանդակությամբ վստահություն ներշնչել և տկարներուն ուժը բազմապատկել: Բարկանալն ու հանդիմանելն միայն վախ կծնի, որ ավելի ևս կչփոթե փոքրիկին ճիզերը:

Յուրացման ընթերցումներուն ատեն աչքի առաջ ունենալիք կետ մըն ալ այն է, որ վարժ ընթերցումը պետք չէ չփոթել արագ ընթերցման հետ: Թեև խոսքի ատեն հաճախ վարժի համար արագ ալ կըսենք, բայց այդ երկուքը տարբեր բաներ են: Յուրացման աստիճանին նպատակը վարժ ընթերցում ձեռք բերելն է, այսինքն բառերուն մասերը դյուրին ու ճիշդ կապել իրարու և առանց կակազելու. կանոնավոր ու դյուրին ընթերցումը պայման է և մեր նպատակը, բայց արագ ընթերցումը ո՛չ պայման մըն է ընթերցման, ո՛չ ալ դպրոցին ու դասին նպատակը: Որոշ աստիճանի արագություն մը արդեն ինքնին կկատարվի, ինչքան որ տղան ճիշդ ու կանոնավոր ընթերցման վարժվի. այդ ուղղությամբ ուսուցիչը

պետք չունի հոգ քաշելու: Ընդհակառակը, ուսուցիչը պետք չէ թույլ տա, երբ փոքրիկը արագ կարդալու ճիգեր կընե: Այդ ճիգերը կրլլան սովորաբար իրենց խախուտ ու անվստահ ընթերցումը քողարկելու համար, կերպով մը վրայեն սահիլ անցնելու համար: Այդ ճիգերը կրլլան «ջուրի պես» կարդալու և ուսուցչի աչքը մտնելու համար և կվարժեցնեն տղաքը անհստակ արտասանելու, որոշ տառեր ուտելու, վերջավորութիւնները սխալ կարդալու և ամբողջը լպրտելու. այլև շատ հաճախ արագ կարդալու ճիգերուն արդիւնքը կրլլա կակազում, տղան իր ուզած արագութեամբ կարդալ չկարողանալով՝ ստիպված կրլլա բառին կարդացած մասը կրկնելու, մինչև որ հաջորդ մասն ալ աչքով գրկել ու արտասանել կարողանա:

Ուսուցիչը միշտ պիտի պահանջէ հանգիստ ու կանոնաւոր ընթերցում, առանց որևէ չտապի և հուզմունքի. պետք է պահանջվի նախ մտքով ամբողջ բառը ընդգրկել և ետքը արտասանել ամբողջը միասին. և արտասանել միայն մեկ անգամ ու հանգիստ. բառը պետք չէ կտրտվի և երբեք պետք չէ կրկնվի ընթերցման ատեն: Ասոնք պահանջներ են, որոնց եթե փոքրիկը չվարժվեցավ այդ առաջին տարիներուն, ալ մինչև վերջը կապված կմնան իր ընթերցման այդ թերութիւնները նույնիսկ դպրոցական տարիներեն ալ անդին:

Դ. ԸՆԹԵՐՑՄԱՆ ԽՈՐԱՑՆՈՂ ԱՍՏԻՃԱՆԸ

Երբ Հոդվածի մը բոլոր հատվածները անցած են արդեն ստացման ու յուրացման ընթերցումի վարժութիւններեն, հաջորդ դասին պետք է անցնիլ խորացման ընթերցումին, այսինքն ըստ իմաստի ու գեղեցիկ ընթերցումի:

Ըստ իմաստի ու գեղեցիկ ընթերցում կնշանակե. 1) տալ բառերուն ու նախադասութեան շեշտերը ճիշդ և ըստ իմաստի պահանջին, 2) հարց, ժխտում, զարմանք, բարկութիւն և այլ զգացումներ արտահայտվին պատշաճ կերպով, 3) տալ ձայնին ելևէջները, ձայնին կախումներն ու ընդհատումները, ինչպես որ բնական է խոսելու ընթացքին, 4) և վերջապես տալ կարդացվող բառերուն ու արտահայտութիւններուն ընթերցողի սեփական զգացական հավելվածները, կարդացողի հոգիին թրթիռը. ընթերցման մեջ պետք է հնչէ ընթերցողի գնահատանքն ու հոգեկան մասնակցութիւնը:

Ընթերցումը չոր, կրավորական ու անսիրտ բան մը կդառնա առանց ընթերցողի այդ հոգեկան ճուլման, առանց անոր տված գույնին, շունչին, կյանքին: Պաղ, չոր ու մեքենական ընթերցումը ինչքան ալ վարժ ըլլա ու կանոնավոր, դեռ ընթերցում չէ: Ճշդության ու վարժության պետք է միացած ըլլան ըստ իմաստի ընթերցման ոգևորող և զգացումով օծուն այս չորս կետերն ալ, որ կարդալը իսկապես դառնա ընթերցում:

Ինքը ուսուցիչը տղոց համար երբեք ոչինչ պետք չէ կարդա առանց այս պահանջներուն լիովին բավարարութիւն տալու: Իսկ տղաքը մանավանդ առաջին երկամյակին չեն կրնար անմիջապես իրենց առաջին ընթերցման վրա դնել այդ բոլոր հոգեկան պահանջները. նույնիսկ հաջորդ կրկնութիւններու ժամանակ դժվար է անոնց համար այդ բոլոր պահանջներուն բավարարելը, թեև ինքնաբերաբար հոս ու հոն բառ մը, նախադասութիւն մը, հարց մը կրնա կարդացվիլ շատ ճիշդ արտահայտութիւնով:

Ընթերցման բոլոր արտաքին դժվարութիւնները հաղթահարելեն ու հարթելեն ետքն է ուրեմն, որ ուսուցիչը առանձին դասով մը կպահանջե այդ հոդվածի սիրուն ու արտահայտիչ ընթերցումը: Առաջին երկամյակին բնական կերպով այս խորացման դասին սկիզբը նախ ինքը կկարդա, տղոց ուշադրութիւնը կդարձնե իր կարդալու ձևին վրա, երբեմն բացատրելով ինչուն, և լավ է, որ նորեն կարդա հատված-հատված. երկար ընթերցումը ամբողջովին կհոգնեցնե, և չեն կրնար տղաքը նույն ուշադրութիւնով հետևիլ, և ականջը վերջը շատ բան կմոռնա: Կտոր մը կկարդա, անոնց ալ կարդալ կուտա մեկուն, մյուսին և կանցնի հաջորդ կտորին: Երբ ամբողջը լրանա, լավ է, որ տղոց անգամ մը ամբողջութիւնը մեկ ծայրեն մյուսը կրկնել տա՝ հնար եղածին չափ առանց իր միջամտութեան ու մասնակցութեան:

Պետք չէ երբեք պահանջվի, որ անպատճառ ուսուցչի նման ըսեն տղաքը և ամենքը. ասիկա թե՛ անկարելի է և թե՛ անցանկալի. ուսուցչի տվածը օրինակ մըն է, բացատրութիւն մը, որուն կհետևին ու կնմանցնեն աշակերտները ամեն մեկը իր չափով ու իր ձևով. կարևորը տղոց կողմեն գրվածքի մտավոր և զգացական կողմերուն ճիշդ ըմբռնելն է և այդ ըմբռնածը ճիշդ ու նուրբ արտահայտելու ջանքը:

Երկրորդ երկամյակին աշակերտներեն շատերը արդեն յուրացման դասարանական ընթերցումներու միջոցին ինքնին կփորձեն նաև ըստ իմաստի կարդալու: Ուսուցիչը ուրախ պիտի ըլլա և առարկելու չէ բնականաբար, բայց սրբագրելու ճիգեր ընելու չէ հոտ: Եվ Հոդվածի երկրորդ աստիճանի ընթերցումներեն ետքը պետք է անցնի անպատճառ. հատուկ ըստ իմաստի ընթերցման, ինչքան ալ նյութը պարզ ու սովորական երևա և տղոց կողմեն կարծես թե արդեն ըմբռնված:

Երկրորդ երկամյակին արդեն կարիք չկա, որ ամեն անգամ ինքը տա օրինակը. ընդհակառակը, լավ է, որ տղաքը ազատ ձգվին, իրենք ճիգ ընեն, իրենք գտնեն իմաստին նրբությունը և արտահայտելու եղանակը. ուսուցիչը կմիջամտե միայն այս կամ այն կտորին մեջ իր ընթերցումովը, երբ ավելի նուրբ, ավելի խոր կամ ավելի բնական ձև մը ունի ցույց տալու:

Այս դասարանական ըստ իմաստի ընթերցումով կլրանան Հոդվածի կարդալուն հետ կապված աշխատանքները, և պետք է անցնիլ նոր Հոդվածի: Սակայն հանձնարարելի է, որ տարվան ընթացքին մեկ-երկու անգամ կես-կես դաս մը ուսուցիչը հատկացնե նորեն այդ հին անցած-գացած կտորներու վարժ ու գեղեցիկ ընթերցման: Փոքրիկները մեծ հաճույքով կկատարեն այդ «քաղը», և առանց օգուտի չէ այդ աշխատանքը. ազատ ու խոր ընթերցման մը հաճույքեն զատ, տղաքը կունենան հիմա նաև ավելի խոր ըմբռնելու հաճույքը. քանի մը ամիսներու բերած հասունությունը, հաջորդ Հոդվածներուն բերած իմաստությունը նոր լույսի մը տակ կդնեն հին սորվածը, հին նյութը, և փոքրիկը կզգա, որ հիմա և՛ ավելի ադեկ կհասկնա, և՛ ավելի ալ աղվոր կարտահայտե իր ընթերցումով:

Եվ ընդհանրապես արժեքավոր բան մըն է, որ փոքրիկները սիրեն իրենց սորվածն ու իրենց գիրքը, և դուրան ալ, նոքերն ալ կրկին ու կրկին թղթատեն ու վերստին կարդան իրենց հին ընթերցումները: Խորացման, իմաստնացման և գեղարվեստական հաճույքի մեծ աղբյուր մըն է ատիկա և՛ փոքրիկներուն համար, և՛ մեծերուն, որ պետք է մշակվի:

II. ԳՐԵԼՈՒ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԳԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գրութեան ուսուցումը տարրական նախակրթարանի մէջ երկու երես ունի՝ գեղագրութիւն եւ ուղղագրութիւն:

Գեղագրութիւն ըսելով կ'հասկնանք մաքուր ու կանոնաւոր գրել, որով եւ գրուածքը կըլլա դիւրին ընթեռնելի եւ աչքի համար հաճելի: Գեղագրութեան դաղափարն դուրս է բացարձակապես ամէն տեսակի զարդագրութիւնը, նկարչագրութիւնը եւ գրութեան բաղմատեսակութիւնները: Ասոնք մասնագիտական աշխատանքներ են եւ դպրոցական ծրագրին դուրս:

Գեղագրութեան սորվեցնելիքը միայն մեկ տեսակ մը գրութիւն է, անփոփոխ ու մշտական, ամէնուն պարզն ու բնականը, այլեւ հնար եղածին չափ դիւրինը: Դիւրութեան, պարզութեան եւ բնականութեան կարելիին չափ աւելի մոտենալու համար գիրերու ընտրութեան ատեն պետք է առաջնորդվիլ հետեւեալ սկզբունքներով՝ միշտ աչքի առաջ ունենալով մեր հայերեն մայրենի լեզուն:

1) Գիրերուն մէջին հիմնական մասերը աւելի խոշոր ըլլան, իսկ դեպի վար ու դեպի վեր երկարեցումները չատ աւելի կարճ, ասոր համար անհրաժեշտ է, որ տառերուն դիրքն ու ձեւերը պատկերացնենք մեզի քառատող տողաշարի մը վրա գրուած. տողաշարին չորս գուգահեռ գծերը բոլորն ալ իրարմե հաւասար հեռաւորութեան վրա եւ ո՛չ թէ երկրորդ ու երրորդ տողերը իրարու աւելի մոտիկ, իսկ առաջին ու չորրորդ տողերը նախորդներեն աւելի հեռացած, որուն հետեւանքը կըլլա տառերու հիմնական ու կարեւոր մասերուն աւելի փոքր գրուիլը եւ վեր ու վար երկարուած մասերուն բոլորովին աւելորդ երկարեցումը:

2) Պետք է չնչել լ, գ, դ, վ, չ եւ նման տառերուն վարի ոլորները, որոնք անպետք պոչեր են եւ միայն աշխատանքը կըբարդացնեն: Այդպես ալ մ, ճ, ն, եւ նման դիրերուն դեպի վեր երկարող վիզերը պետք է կարճել եւ ազատել գրչի աւելորդ ու կամայական խաղերէ: Նմանապես գլխագիրներու հաւելուկ մասերը պետք է մերկացնել աւելորդ ոլորումներէ ու զարդարումներէ, եւ պետք է միշտ նույն հիմնական տարրերով գլխագիրը զատել սովորական

դիրեն. և բոլոր գլխագիրներու գրութիւնը պետք է պահել քառատող տողաշարի սահմաններուն մէջ:

3) Բոլոր տառերը պետք է դրվին թեթևակի թեք՝ աջեն դեպի ձախ իջնող, այդ թեքութիւնը բնական հետևանք է տետրակի շեղ կերպով սեղանի վրա դրվելուն, վարի ձախակողմյան սուր ծայրը դեպի գրողի կուրծքը: Տետրակը չենք կրնար դնել սեղանի եզերքին զուգահեռ դիրքով, որովհետև սեղանին հենած արմունկով ձեռքը վերեն վար շեղ շարժում մը կկատարե: Եթե տետրակը սեղանին եզերքին զուգահեռական դնենք և տետրակին վրա ուղղահայաց շարժումով գրել ուզենք, հարկադրված կըլլանք թևը սեղանին չհենելու, այսինքն ո՛չ թե ձեռքով, այլ ամբողջ թևով գրելու, որ չափազանց հոգնեցուցիչ է: Այնպես որ թեք ըսված գրութեան ժամանակ, իրավ է, տետրակը թեք է, և գրերն ալ տետրակին վրա թեթև մը թեք են, բայց գրելը ինքը թեք չէ, քանի որ գրելու ատեն բոլոր տառերը ուղղահայաց կիջնեն դեպի սեղանին հորիզոնական եզերքը:

4) Ավելորդ է բոլորովին տառերուն դեպի վեր բարձրացող մասերը բարակ գրելու և դեպի վար իջնող մասերը աւելի հաստ գրելու պահանջը. տառերը պետք է գրվին սկզբունքով հավասար. այդ հաստ ու բարակի պահանջը ավելորդ ուշադրութիւն մըն է և ավելորդ տգեղութեան պատճառ, քանի որ երեխաները իրենց չափազանց եռանդին մէջ պետք եղածեն հաստ կգրեն, տգեղութեան հետ նաև անմաքրութեան պատճառ. հաստ գրված մասերը ուշ կչորնան, չորցնելու ատեն կպաղին և կաղտոտեն թե՛ տետրակը, թե՛ գրութիւնը: Գիր ու տառ ըսվածը որոշ դասավորութեամբ գրութեան տարրեր են, մասնավոր հաստ ու բարակի կարևորութիւն չկա. մատիտով գրելու ատեն դժվար իրագործելի: Երբ ձեռքը գրի կվարժվի, ամեն մարդու բնավորութեան համաձայն որոշ մասեր, որոշ տառերու մէջ քիչ մը ավելի հաստ կգրվին, քան մյուսները. մասամբ բնավորութեան հարց է, մասամբ ավելորդ վարժութեան, մասամբ ալ մատիտի ու գրիչի հատկութիւններն է կախված. այս ուղղութեամբ հատուկ աշխատանք թափել տալու և ավելորդ պահանջներ դնելու կարիք չկա:

5) Գրերը իրարու կապելը շատ ու արագ գրելու պահանջ մըն է. այդ պահանջը մասամբ կրնա գալ բարձր նախակրթարանի

մեջ. բայց տարրական նախակրթարանի մեջ, որ դիւր նոր գրելու կվարժեցնեն, տղաքը պետք է շատ հանգիստ գրեն ու դանդաղ. արագագրությունը տարրական դպրոցի մեջ տեղ չունի. և այդ պատճառով ալ տառերը իրարու կապակցելը պահանջ մը չի կրնար ըլլալ հոս: Ընդհակառակը, պահանջը տառերը իրարմէ անջատ գրելն է, որ ամեն մեկ տառի պատկերը հստակ գրոշմվի, և տառի մը բաղադրիչ մասերուն կազմը ճիշդ ու պարզ ըլլա միշտ. հոսկէ կուգա գրության զգուշցկությունն և կարդալու դյուրությունն: Իրարու կապակցված տառերուն բաղադրիչ մասերը իրարու կվտանվին, և ենթադրությամբ միայն կարելի է կարդալ, ո՛չ թե բնական ընթերցումով, իսկ տարրական դպրոցի մեջ ենթադրական ընթերցում պետք չէ տեղի ունենա: Առաջին երկամյակին միշտ զատ պիտի գրեն տառերը. երկրորդ երկամյակին մասամբ ինքնաբերաբար, մասամբ տունեն ու դուրսեն եկած հետևողությամբ որոշ տառեր որոշ հաջորդականության տակեն իրարու հետ կապ կստանան: Եթե անշնորհք ու անբնական չեն և ընթերցման հատկությունը կպահեն, ուսուցիչը պետք չունի հակառակելու և անպատճառ զատ-զատ գրել պահանջելու, քանի որ գրությունը վերջ ի վերջո հոս պիտի հանգի: Առանց պահանջելու, առանց չնշտելու կհանդուրժե:

6) Պետք է միշտ ցույց տալ տղոց տառերուն բաղադրիչ մասերը, պետք է պահանջել համառորեն, որ անոնք հարգին այդ տարրերուն փոխադարձ հարաբերությունը ըստ երկարության և ըստ լայնքի, որ տարրերը միշտ նույն հեռավորությունը ունենան իրարմե և երկարություններուն հարաբերությունն ալ միշտ ըլլա նույնը: Այդպես ալ տառը տառեն միշտ զատ գրեն և բառին մեջ իրարմե հավասար հեռավորության վրա: Եվ անպատճառ բառը բառեն հեռացնեն ավելի, քան բառի մը տառերը: Լայնք ու երկայնքի այս պահանջներուն դումարն է, որ կանվանենք կանոնավոր գիր: Կանոնավոր գրության մաս կկազմեն կիսատ տողեր չթողնելը, տողի կեսերեն չսկսիլը, նոր տող քիչ մը ավելի ներսեն սկսիլը: Գրություն ըսածը պայմանական նշաններու շարքեր են, որոնք ինչքան միատեսակ ու միանման ըլլան, այնքան գրվածքը գեղեցիկ կըլլա և այնքան ավելի կծառայե իր նպատակին:

7) Գրության վերջին պայմանը մաքրությունն է: Բացի

տառերու տարրերեն և կնոտագրական օրենքներու գործադրութենեն, ուրիշ ո՛չ մեկ բիծ, ո՛չ մեկ գիծ, ո՛չ մեկ կեռ, ո՛չ մեկ հավելված պետք չէ ըլլա գրվածի մասերուն մեջն ու շուրջը: Տետրակի մեջ ուսուցչի հրահանգեն ավելի բառ մը անգամ պետք չէ գրված ըլլա: Նույնը և տետրակի կափարիչին վրա. միմիայն ուսուցչի պատվիրածը և անոր ցույց տված տեղն ու ձևովը: Եվ ամբողջ դասարանը պետք է ունենա նույն ձևի տետրակներ, և լավ է, որ ուսուցիչը ինքը հոգա և բերե, անոնց բաժնե, ո՛չ թե տղաքը իրենք դուրսերը գնեն և հարկադրաբար տարբեր ձևի ու գույնի թղթերով: Իսկ թղթի կտորներու վրա, պատռտած երեսներու վրա, տետրակեն հանած էջերու վրա երբեք պետք չէ թույլ տալ, որ պարտավորություններ կատարեն: Եվ տետրակներեն երբեք երես մը անգամ պետք չէ պակսի: Անմաքուր ձեռքով պետք չէ տետրակ բռնվի: Տետրակին ու գրքերուն մաքրությունը, հագուստի ու մարմնի մաքրության նման, պետք է պահանջվի խիստ: Պետք չէ թույլ տալ, որ գիրքերն ու տետրակները մերկ վիճակի մեջ ձեռքերնին բռնած տղաքը տուն տանին, բերեն. անկարելի է, որ մաքուր մնան. անպատճառ պայուսակ պետք է ունենան կամ մոմլաթի կտոր մը, որուն մեջ կանոնավոր դասավորությամբ կապոց չինեն: Եվ պայուսակին մեջն ալ անփույթ ու խառնակ պետք չէ դրվին, թե չէ կծալծվին, կկոտրվին, ու ծայրերը կոլորվին: Եվ գրքե ու տետրակե զատ պայուսակին մեջ ո՛չ խաղալիք, ո՛չ ուտելիք, ո՛չ հագուստ և ո՛չ կոշիկ պետք չէ դրվին:

Բ. ԳԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ

Գալով դասավանդման եղանակին՝ ամենեն առաջ պետք է չնչտել, որ տղաքը միշտ ինչ ալ որ գրեն, վերի պահանջներուն համեմատ պիտի գրեն, և մաքրությունն ու կանոնավորությունը կիրակի օրվան հագուստ պետք չէ նկատվի, որ միայն գեղագրության դասին կհագնին. տղաքը պետք է վարժվին միշտ ալ մաքուր ու կանոնավոր գրելու, ինչ ալ որ գրեն, առանց ժամանակ շատ խլելու պատճառաբանության կարևորությունն տալու:

Այնպես որ Հայերենի ամեն գրավոր դաս գեղագրության դաս է ինքնին. բայց և այնպես շաբաթական երկու կես պահ լավ

է, որ տրամադրվի Հատուկ դեղագրութեան մասնաւոր ուշադրութեամբ, մասնաւոր խնամքով և մասնաւոր կեդրոնացումով գրութեան վարժութիւնները ընել տալու համար, երբ ուսուցիչն ալ, աշակերտներն ալ Հատկապես զնդեցիկ գրելու կճգնին: Առաջին երկամեակին տասիկա Հաւելեալ մարզանք մը կըլլա, իսկ երկրորդ երկամեակին չատ աւելի չեչտված պետք մը, որովհետև աշակերտական գրութիւնները քանի կերթան, կչատնան, նոյնիսկ Հայերենի դասեն դուրս, և ինչքան գրելիքը կչատնա, գրելու խնամքը նոյն համեմատութեամբ կպակսի, որչափ ալ որ Հակառակ ուղղութեամբ ջանք գործ դնենք. այնպես որ չաբաթական երկու պահ Հարկ կըլլա Հատուկ գրի կանոնաւորութեան ու զնդեցկութեան վարժութիւններու տրամադրել, որ անփուլթ գրութեան բերած խաթարումները սրբագրվին:

Դեղագրութեան դասերուն ուսուցիչը կգրե գրատախտակին վրա օրինակը, առաջին տարին միչտ քառատողի մեջ. երկրորդ տարին երբեմն քառատողի, երբեմն երկու տողի մեջ, որոնք քառատողի միջին երկու գծերը կներկայացնեն. երկրորդ երկամյակին կգրե միայն մեկ տողի վրա:

Կգրե միչտ իմաստ ունեցող և աղվոր իմաստ ունեցող արժեքավոր խոսք մը մեկ կամ երկու տողանի: Բնական կերպով ամեն անգամ աչքի առաջ կունենա որոշ տառի մը, գրութեան որոշ կապակցութեան մը, որոշ դիմաստառի մը գործածութիւնը, ուրիչ խոսքով՝ առաջինն սիսթեմի ենթարկված պետք է ըլլա գեղագրութեան Հաջորդականութիւնը ըստ գրութեան Հիմնական տարրերուն և առանձնահատկութիւններուն: Իբրև օրինակ՝ չատ Հարմար են առակները, առածները, սրամիտ խոսքեր, նոր սորված դասի մը երկտող ամփոփումը, գիտական ճշմարտութեան մը սեղմ արտահայտութիւնը: Անմիտ ու տափակ խոսքեր գրել տալու չէ երբեք:

Գրատախտակի վրայի ուսուցչի օրինակեն կարտագրեն տղաքը մեկ-երկու անգամ ըստ ուսուցչի թելադրանքին: Լավ է դասարանը ունենա երկու գրատախտակ, և գրատախտակին վրայի օրինակները ուսուցիչը առավընե գրած ըլլա, որ տղաքը բնավ պարապ մնալ չկարողանան, և որ ամեն մեկը աշխատանքի իր բնական արագութեամբը շարժվիլ կարողանա առանց ուրիշները սպասցնել տալու:

Ասով ուսուցիչը ամբողջ դասին ինքը կըլլայ ազատ սեղանե սեղան և աշակերտե աշակերտ անցնելու և ամեն մեկուն թերին ու ոտիդը չտկելու: Երկար խոսելու կարիք չունի. իր կատարած սրբագրությունը տղու տետրակին վրա կբացատրե ամեն ինչ. իսկ երբ հարկադրվի բան մը ըսելու մեկուն կամ մյուսին, պետք է խոսի չատ ցած, որ դասարանի ուշադրությունը չգրավե և մյուսներուն աշխատանքը չխանգարե. դեղագրության պահը նկարչության պահերուն նման ամենեն լռիկ ու անձայն դասն է, իսկ երբ բացատրել ուզենա բոլորին՝ բնականաբար նախ պետք է ընդհատել տա տղոց աշխատանքը և ամենուն ուշադրությունը իր վրա կեդրոնացնե:

Դեղագրության տետրակները կբաժնվին դասեն առաջ և կհավաքվին դասին վերջը ու կպահվին դասարանական դարակին մեջ. այդ տետրակները պետք չունին տուն ու դպրոց ընելու:

Գ. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԵՆԻ

Ուղղագրություն ըսված տառապանքը գոյություն չէր ունենար, եթե գրեինք այնպես, ինչպես որ կարտասանենք, և դրելու համար ալ ամեն մեկ հնչյունին միայն մեկ նշան մը կապված ըլլար: Բայց ասիկա անկարելիություն մըն է, որովհետև ժողովուրդի մը շրթունքին վրա հնչյունները իրենք ապրող ու փոփոխվող բաներ են. ո՛չ ամեն տեղի մարդիկը մեկ տեսակ կհնչեն և ո՛չ ալ տարբեր դարերուն մարդիկը:

Սկիզբը, երբ ժողովուրդի մը լեզուն առաջին անգամ գրի կառնվի, բնականաբար գրի առնողները կջանան ամեն տարբեր հնչյունի համար տարբեր նշան մը գործածեն և միևնույն նշանին ամեն տեղ նույն հնչյունը կապեն: Բայց շատ չանցած՝ բառի մը հնչյունները շրթունքներուն վրա կփոփոխվին, իսկ գրվածքը կմնա հին ձևով. հետևանքը կըլլա խառնակում, նույն նշանը տարբեր հնչյուններ կմարմնավորե: Եթե քանի մը դարը անգամ մը սրբագրել ուզելով գրության եղած ձևերը փոխենք, կառաջացնենք մեր գրականության մեջ նույն բառի քանի մը տեսակ գրությունը, այսինքն կավելացնենք դժվարությունները. մեկ հնչյունին մեկ տառ սկզբունքը անիրականալի սկզբունք մըն է, որուն կարելի է քիչ մը

ավելի կամ քիչ մը պակաս մոռնալ, բայց միշտ ալ չեզումներ ու թևքումներ և ուղղագրական պայմանավոր ձևեր ըլլան պիտի. հնչյունը շատ նուրբ, շատ քմայնոտ և շատ փոփոխական կենդանի բան մըն է, մինչդեռ տառը հնչական որոշ վայրկյանի մը քարացումն է, անշարժ ու գործնականապես անփոփոխ: Ուղղագրությունը դիր ըսված գյուտի ժառանգական թերությունն է, ուրկե խուսափիլ չի կրնար ոչ մեկ լեզու:

Հայերեն լեզվի արդի ուղղագրական դժվարությունները կրնանք խմբել երեքի. ա) ունինք երկարժեք տառեր, բ) ունինք նղող ու չեզող տառեր, գ) ունինք պայմուցիկ բաղաձայններու ամբողջ շարք մը՝ բ, գ, դ, ճ և ջ, որոնք իրենց ձայնը կորնցուցած են արևմտյան Հայերու համար և իրենց հնչյունը խախտված շարք մը կիներկայացնեն արևելյան Հայերու համար:

Առաջին խումբին կպատկանին և, ո, յ տառերը, որոնք բառերուն սկիզբը կհնչվին յև, ուո և հ, իսկ բառերուն մեջը՝ ե, օ և եը:

Է հնչյունի Հայերեն գրության սովորական տառն է ե, սմենն տեղ պետք է պահանջենք, որ տղան իր լսած է հնչյունը ե-ով գրե և օտար բառերն ու անուննները ե-ով տառադարձե: Է-ով գրվող բառերը բացառություն պիտի նկատվին, և տղան Հատուկ միտքը պիտի պահե առանք. առաջին երկամյակին աչքի ու ձեռքի պարզ հիշողությամբ, մեքենական ճանապարհով, որուն օգնության կուգան երկրորդ երկամյակին բառակազմական և քերականական որոշ կանոններ:

Օ հնչյունի Հայերեն տառը ո գիրն է. տղաքը միշտ ո-ով պիտի գրեն օ հնչյունը լսելու ատեն և ո-ով պիտի տառադարձեն օտար բառերու և անուններու մեջ լսվող օ ձայնավորը: Օ տառը Հայերենի մեջ բացառություն պիտի նկատվի և Հատուկ կերպով պետք է միտք պահվի, որոնք բարեբաղդաբար շատ չեն:

Հը հնչյունի Հայերեն տառը հ գիրն է. յ տառի հ հնչվիլը բացառիկ բառերու Համար է և միայն բառերուն սկիզբը. այդ բացառիկ բառերը պետք է մեկիկ-մեկիկ միտք պահվին նախ մեքենական հիշողությամբ, վերջերը նաև բառակազմական օժանդակությամբ:

Այս խումբի տակ պետք է դնել նաև վը հնչյունին զանազան տեսակի գրությունները: Վը հնչյունի Հայերեն գիրը ւ տառն է. վ

տառը, որ իսկապես իրարու կցված երկու է է, եվրոպական W-ի նման, Հայերենի մեջ կգործածվի կա՛մ բառին սկիզբը, կա՛մ ո-օ հնչյունին նաքը: Յուրացնել տալը դժվար չէ: Ավելի բարդ է փոքրիկներու համար ու գրութիւնը իրրև վ հնչելը. դյուրութեան համար թե՛ գրելու և թե՛ կարդալու առեն սկիզբները պետք է հնչել պարզապես ու:

Եղող ու չեղող տառերը երկու հատ են. ը հնչյունը բառի վերջեն զատ ամեն տեղ և յ տառը բառերուն վերջը, որ չի կարդացվիր ընդհանրապես:

Ը հնչյունը գրենք թե ոչ՝ պետք է գիտնանք, որ կա միշտ, գրելը կամ չգրելը երբեք պետք չէ սխալ համարվի. սովորութեան մըն է, տեղի թե անտեղի կրճատում մըն է գրութեան, ուրիշ ոչինչ:

Ձկարդացվող յ-երու պարագան շատ ավելի անհամ է, անիմաստ ու երեխաներու ըմբռնումը խանգարող. բայց քանի դեռ չեն արտաքսված մեր գրքերեն, պետք է ամեն անգամ ուսուցչի օգնութեամբ գրել տանք կամ գրելու արգիլենք, մինչև որ քերականութիւնը հաջորդ տարիներուն ինքն ալ գա օգնութեան:

Ինչ կվերաբերի պայթուցիկ բաղաձայններու միջնակ շարքին՝ ատոնք բ և ռ բաղաձայններեն և բոլոր ձայնավորներեն առաք չնչեղ կզառնան, կկարդացվին իրրև փ, ք, թ, չ, ց թե՛ արևելյան և թե՛ արևմտյան Հայերենի մեջ, իսկ ձայնավորներե առաջ և ուրիշ բաղաձայններե առաքը արևելյան բարբառներուն մեջ պահած են իրենց հարազատ ձայնը, մինչ արևմտյան բարբառները կորսնցուցած են բոլորովին ատոնց հատուկ հնչյունները. ոմանք ավելի արվեստական կերպով ամեն տեղ կհնչեն չնչեղ, իսկ ժողովուրդը անոնց հնչյունները հավասարեցուցած է իրենց հնչեղներուն, իրրև պ, կ տ, ծ և ճ:

Այս պատճառով ալ ոչ մեկ բառի գրութեան առեն հաստատ կերպով կարելի չէ ըսել կ-ո՞վ է, թե՞ գ-ով կամ ք-ով: Միակ միջոցը հիշողութիւնն է, աչքի ու ձեռքի հիշողութիւնը, ուրիշ հնար չկա. վերջերը օգնութեան կուգա բառակազմութիւնը, բայց ո՛չ ամեն տեղ: Իսկ օտար բառերու և անուններու տառադարձութեան առեն լավագույնն է խուսափիլ այդ իր սեփական հնչյունը կորսնցուցած տառերու գործածութենեն, այլ տառադարձել միշտ հնչեղ ու չնչեղ պայթուցիկներով:

Այսպիսով առաջին երկամյակին ուղղագրությունը կդառնա էապես հիշողության աշխատանք. երկրորդ երկամյակին է միայն, որ կսկսին բառակազմական և բառաթևքության կանոնները բավական օժանդակություն մը բերել: Բայց միշտ ալ հիմնականը կմնա տղու աչքին ու ձեռքին մեջ հիշողությամբ դրոշմվածը, որով տղան պիտի գրե առանց երկար-բարակ մտածելու:

Այդ մեքենականությունը հնար եղածին չափ ամրացնելու համար պետք է աչքի առաջ ունենալ և իրականացնել միշտ հետևյալ պահանջները:

1) Առաջին վայրկյաններն խիստ պետք է հետևիլ ուղղագրության. տղան երբեք իրմեն ոչինչ պետք չէ գրել, որու գրությունը արդեն քանի մը անգամներ տեսած ու արտագրած չէ: Ուրեմն ամեն նոր բառ նախ պիտի տեսնե ու կարդա և արտագրե. այդ նախապատրաստական յուրացումեն ետքն է, որ տղուն նաև հիշողությամբ նոր բառը գրել պիտի տանք:

2) Այդ արդեն «գիտցած» բառն ալ երբ հիշողությամբ պետք է գրե, լավ է ամեն անգամ գրելեն առաջ հարցնենք կամ ըսենք, թե ինչպես կգրվի: Երբեք պետք չէ ըսենք կամ հարցնենք, թե ինչպես չի գրվիր, այլ միշտ, թե ինչպես կգրվի. «Սէր կգրվի է-ով»: Եթե քանի մը դժվարություններ կան նույն բառին մեջ, օրինակ՝ «նվիեր» բառը, ամենեն լավը ուղղակի գրատախտակին վրա գրելն է արտասանելով. տղաքը այդ բառը կգրեն գրատախտակին նայելով: Այսինքն դիմել ամեն միջոցի, որ տղաքը սխալ չգրեն, սխալ չտեսնեն, այլ միայն ճիշդը, որպեսզի գրվելիք բառին միայն աչքի ու ականջի ճիշդ տպավորությունները կապվին և մատներու ալ ճիշդ գրության շարժումները:

3) Աչքի հիշողության նպաստելու համար հանձնարարելի է, և մանավորապես երկարժիք հնչյուններու համար, պատրաստել անոնց ցանկը հատ ու խոշոր թուղթի մը վրա ածուխ-մատիտով գրված և կախել դասարանին մեջ աշակերտներուն դիմը: Այսպես երբ չորս-հինգ հատ օ-ով գրվող բառեր սորված են արդեն, այդ չորս հինգ բառերը կգրե ուսուցիչը տակն տակ հատ թուղթին վրա ու կկախե, և անկե ետքը ամեն անգամ, որ օ-ով գրվող նոր բառ մը կսորվին, ուսուցիչը այդ բառն ալ կավելցնե նախորդներուն տակը: Այսպես ալ առանձին ցանկ մը կշինվի ե-ով գրվող բառերուն

համար, առանձին չարք մըն ալ յ-ով սկսող բառերուն համար: Պայթուցիկներուն համար այս ցանկերը անօգուտ են, որովհետեւ բառերը չատ են: Է-ով գրվող բառերուն ցանկն ալ, որ շատ կերկարի, երբ կմոռնանա քանի, պետք է ցանկը նորվի, այսինքն արդեն վարժված, տղոց արդեն բավարար կերպով յուրացուցած բառերը կջնջենք ցանկեն ու հետզհետե տեղը կդնենք նորերը:

Այս գուտ հիշողական միջոցներուն կարելի է ավելցնել քանի մը ժամանակավոր-պայմանական օրենքներ ուղղագրական, որոնք կա՛մ թերի են, կա՛մ ոչ գիտական արժեքով, բայց մինչեւ քերականության հասնիլը տղուն կնպաստեն: Օրինակ՝ «կը և պիտի բառերեն ետքը եկող բառը, երբ էր վերջանա, է-ով կգրվի»:

Դ. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ուղղագրություն և ընդհանրապես գրություն սորվելուն միջոցը չատ գրելն է՝ նախորդ պահանջները հարգելով: Այնպես որ տղաքը անպայման ամեն օր գրավոր աշխատանք մը պետք է ունենան թե՛ ուսուցչի աչքի տակ և թե՛ դուրսի աշխատանք:

Առաջին երկամյակի ընթացքին երեք տեսակ են ուղղագրական աշխատանքները. 1) Արտագրել գրքեն փոքրիկ հոդվածը կամ հատված մը, ընդամենը 6-7 տողեն ո՛չ չատ ավելի: Պետք է արտագրեն միայն այն տեսակ կտոր մը, որ կարդացած են քանի մը անգամ, բացատրված է, ու լիովին կհասկնան: Սովորություն պետք է դարձնել որ արտագրեն բառ-բառ և ո՛չ տառ-տառ. տառեւ տառ արտագրությունը ուղղագրական արժեք չունի: Տղան պետք է նայի ուշադրությամբ բառին, պիտի կարդա և այդ կարդացած բառը պիտի գրե իր տետրակին վրա տեսակ մը հիշողությամբ, տեսակ մը ինքնաթելադրումով. այս պարագային է, որ բառին ուղղագրությունը ավելի ճիշդ ու ավելի խոր դրոշմվելու հավանականություն ունի բնականաբար և՛ աչքին մեջ, և՛ գրության շարժումներուն: Դասարանական արտագրության առեն ուսուցիչը կպտտի նստարաններուն մեջ և կհետևի, որ սխալներ չսպրդին. սխալ մը տեսած պարագային տակը կգծե անցողակի, որ տղան սրբագրե, երկար- բարակ խոսիլ չո՛ւզեր. կարիք չկա նաև տետրակները վերջը նայելու: Կատարված տառասխալներուն վրա երկար կանգ առնելեն և անպատճառ սրբագրել տալեն մեծ օգուտ

մը չկա. կարևորը սխալ չգրելն է ու շատ գրելը: Շատ գրելով և հսկողության տակ շատ գրելով՝ տղան հետզհետե կվարժվի և՛ շիտակ տեսնելու, և՛ շիտակ գրելու, և՛ պատահած սխալները նկատելու, և՛ ինքզինքը սրբագրելու:

2) Առաջին երկամյակի ընթացքին գրավոր աշխատանքի երկրորդ ձևն է թելադրությունը. տղոց արդեն գրած, արդեն սրտագրած և արդեն գիտցած բառերով կազմված փոքրիկ հատված մը կթելադրենք, որ գրեն. աշակերտ մը կգրկի գրատախտակին, մյուսները՝ իրենց տետրակներուն վրա: Ամեն նախադասության կամ պարբերության վերջ ուսուցիչը կհարցնե, թե ի՞նչ տարբերություններ ունին գրատախտակի վրա գրվածին, և սրբագրել կուտա ամեն մեկուն իր գրած սխալը: Իսկ գրատախտակի վրա աշխատողին կհետևի գրելու ատեն և չի թողներ, որ սխալ բան գրվի. մատի ցուցումով մը կամ գիրքը ցույց տալով կօգնե տղուն, որ ամեն ինչ շիտակ գրվի:

3) Այս երկամյակի գրության երրորդ ձևն է տրված գրավոր հարցերուն գրավոր կերպով պատասխանելը: Նախ՝ հարցերը կըլլան իրարմե անջատ և անկախ, բայց կամաց-կամաց հարցերը կիմբվին որոշ նյութի մը շուրջը, և պատասխանելով այդ հարցերուն՝ տղան փոքրիկ շարադրության նման բան մը գրած կըլլա: Այս բոլոր հարցերը պետք է ըլլան այն տեսակի, որ տղաքը առանց որևէ դժվարության պատասխանել կարողանան, որ պատասխանը հարցին մեջ ըլլա արդեն կամ իրենց նոր տրված հատվածներուն մեջ. հարց ու պատասխան պետք է կազմված ըլլան բառերով, որոնց գրությունը տղան արդեն գիտե:

Ամենեն առաջ դասարանին մեջ կարդալ կուտա այդ հարցերը և բանավոր կերպով պատասխանել կուտա հարցերուն, որ ոչինչ չմնա դժվար ու անորոշ: Տղաքը կգրեն պատասխանները սովորաբար դասարանեն դուրս, և հաջորդ դասին ուսուցիչը մեկուն ու մյուսին կարդացնել տալով գրածը՝ պատասխանները կճշդե, կհարցնե բոլոր քիչ մն շատ կասկածելի ուղղագրական տեղերը, մն ինչպես է գրած. կարևոր համարած պարագային կգրե կամ գրել կուտա բառը գրատախտակին: Տարրական նախակրթարանի երկրորդ երկամյակին գուտ արտագրությունը քիչ-քիչ ետ կքաշվի՝ գլխավոր տեղը թողնելով թելադրության և հարցերու գրավոր պա-

տասխանին, նորեն միայն ծանոթ բառերու գործածութեամբ: Ասոնց կմիանան հետզհետե չարաղրական ու քերականական գրաւոր աշխատանքներ, որոնք կղառնան գրաւոր աշխատանքներուն կնդրոնը, և որոնց մասին խոսվելու է հաջորդ գլուխներուն մեջ:

III. ՄՏՔԵՐՈՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Ա. ՁԱՅՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Լեզու անվանածնիս բառերով կատարված հոգիի արտահայտութիւնն է, որուն առաջին, հիմնական ու էական ձևը մարդկային կենդանի շրթունքներով կատարված արտահայտութիւնն է: Շատ ավելի ուշ մարդը հնարած է գիրը, որով հնչական արտահայտութեան վրա ավելցած է նաև գրաւոր արտահայտութիւնը, խոսելու արվեստին վրա ավելցած է գրել-կարդալու արվեստ մը, որ խոսելու արվեստին հետ համեմատած շատ ավելի երկրորդական բան մըն է, քանի որ գրի նշաններով արտահայտել ուզածնիս նորեն միևնույն բառերն են, որ մենք ձայնով կարտահայտենք: Լեզվական տեսակետեն կարևորը, խորը, էականը հնչական արտահայտութիւնն է:

Գիրը, որու գյուտով կսկսին պատմական դարերը, ահա՛ հինգվեց հազար տարիե ի վեր շատ աչքի իյնող դեր է խաղցած մարդկային քաղաքակրթութեան զարգացման ու պահպանման գործին մեջ և հետզհետե ավելի ու ավելի շեշտված չափերով: Եվ մեր այս օրվան մարդկային քաղաքակիրթ կյանքին մեջ այն աստիճան մեծ է գրի, գրքի ու մամուլի և ատոնց վրա հիմնված ամեն տեսակի հաստատութիւններու դերն ու ազդեցութիւնը, որ մենք հիմա շատ դժվար կպատկերացնենք բարձր քաղաքակրթութիւն մը առանց գրի գործածութեան:

Բայց վաղը ավելի քան հավանական է, որ ատիկա դառնա իրականութիւն մը. գիր ըսվածը գրել-կարդալու արվեստին հետ դուրս գա գործածութենեն մարդկային նոր գյուտերու և ավելի կատարելագործ հնարամտութիւններու առջև: Օրինակ, ենթադրենք, ձայնագիր գործիքը՝ ֆոնոկրաֆը, շատ ավելի կատարելագործվի, նրբանա, աժաննա և ընդհանրանա. մարդիկ, փոխանակ աչքով կարդալու մանր-մանր բիծերով անհարմար գիրքերը, օր

մը այդ գիրքերու բարակ ու ոլորուն ժապավէնները անցնեն գործիքի մը, որ գնդեցիկ ու կենդանի ձայնով բան մըն ալ, ինչ որ կարդալ կուգինք. և մի՞թե հրապուրիչ բան մը չէ՝ բարեկամիդ հարազատ շնչառովն ու ձայնովը առանաս խոսող նամակ մը, փոխանակ հիմակվան մեքենագրված պաղ տողերուն:

Ասիկա արդէն կիսովին իրականացած գյուտ մըն է, բայց դեռ ո՞վ գիտե՝ ինչ նորութիւններ կրնան բերել վաղը հրաշագործ գիտութիւնները, որու մասին երազել անգամ չենք կրնար հիմա. ասկե կես դար առաջ ո՞վ կրնար որևէ հավատք ընծայել մեր արդի ռատիոյի նման հեքիաթական գործիքի մը հնարավորութեանը, երբ սենյակիդ մեջ նստած կապված ես աշխարհիս բոլոր անկյուններուն հետ և կլսես լավագույն երաժիշտները, երգիչները, խոսողները:

Այո՛, ինչքան ալ մեզի հիմա տարօրինակ թվի, գրել-կարդալը կրնա դառնալ շուտով շատ խեղճուկ, շատ դանդաղ, շատ սուղ և շատ անկենդան ու անհարմար միջոց մը մարդկային զգացումներու և մտածումներու փոխադրութեան, ինչպես և ամբարման համար. գիրն ու գիրքը կղառնան այն տեսակի երկրորդական բան մը, ինչ որ են հիմա սյլակն ու ջորին ապրանքներու համաշխարհային փոխանակութեան համար:

Քաղաքակրթութեան բերած նոր գյուտերը կրնան գրել-կարդալը մեջտեղեն վերցընել, բայց ո՛չ մեկ մարդկային գյուտ մարդու շրթունքներեն խլել չի կրնար կենդանի խոսքը, որովհետև ան է լեզվի ու բանականութեան հիմքն ու էութիւնը:

Այս պարզ ճշմարտութիւնը ամուր պետք է դրոշմել մեր մտքին մեջ, երբ լեզվի ուսուցման մասին կխոսինք: Լեզու ուսուցանել՝ մտքերու հնչական արտահայտութիւն ըսել է ամենեն առաջ ու ամենեն վեր: Գրել-կարդալու արվեստին պայմանավոր դժվարութիւնները և հատկապես ուղղագրութեան բերած անհամութիւնները հաղթահարելու համար թափվող ճիգերը հաճախ այնքան կգրավին լեզվի ուսուցիչներուն ուշադրութիւնը դպրոցներուն մեջ, այնքան աշխատանք ու ժամանակ կխլեն, որ լեզվի իսկական ու հիմնական կողմերու մշակման պահանջները մեծ չափերով աչքե կվրիպին:

Լեզու սորվեցնելու առեն ամենեն կարևորը խոսիլ սորվեցնելն է և խոսելեն ետքն ալ չարադրել սորվեցնելն է, այսինքն նախ

Հոգեկան աշխարհի անմիջական և առօրյա արտահայտությունը, և երկրորդ այ՝ ատոր կից հոգեկան աշխարհի ավելի մտածված, ավելի կապակից և ավելի ամբողջական արտահայտությունը:

Խոսքը տղան իր կարևոր մասերովը հետը կբերե ընտանիքեն, և մեծ չափերով կազդվի տղու միջավայրեն, բայց և այնպես դպրոցին կմնա շատ խոշոր բաժին մը արտահայտության մշակման գործին մեջ, իսկ շարադրական տեսակետեն ավելի ևս մեծ է դպրոցին դերը:

Մտքերու արտահայտման համար դպրոցի թափած ջանքերը կարելի է կեդրոնացնել երկու կետի վրա՝ բառերու գործածությունը և ձևերու ընտրությունը:

Բ. ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տղու մտքին մեջ հետզհետե բառերը կշատնան, և բառերուն շատացումը ընդհանուր առումով անշուշտ զարգացում մըն է, պայմանով, որ ամեն բառ իր հատուկ իմաստը ունենա, իր հատուկ գործածությունը ունենա: Իմաստ չունեցող, իմաստը տղուն անծանոթ եղող կամ շատ անորոշ ու խախուտ իմաստ ունեցող անստույգ բառերուն կուտակումը մտքին մեջ ո՛չ միայն մտավոր զարգացում և հարստացում չէ, այլ քեռ է, մտքի ճամբաները խցկող ցեխ է ու թափթփուկ. կխարանե մտքի հստակ հոսումը և հոգիի արտահայտությունը այդ տեսակ անիմաստ կամ անստույգ բառերով, կդառնա կեղծ ու չինծու պարապ խոսքեր, այսինքն ճոռոմաբանություն:

Բառերը ճիշդ ու որոշ իմաստով մը գործածելու այս պահանջեն կբղխի նաև բառերու իմաստին նուրբ ու նրբին զանազանումը իրենց նույնանիշ կամ մերձիմաստ մյուս բառերեն: Իսկապես, նույնանիշ բառեր պետք չէ ըլլային լեզվի մը մեջ, որովհետև սովորություն մըն է և չփոթության պատճառ. ատոնք կներկայացնեն դեռ բոլորովին չմեռած կամ դեռ բոլորովին չարմատացած հին ու նոր բառերու մրցակցությունը, կամ բառեր են, որ կուգան տարբեր բարբառներե և տարբեր հեղինակներու նախասիրությամբ կթափին գրականության ծովը. այդ նույնանիշները ժամանակ մը կապրին իրարու կից, մինչև որ ատոնցմե մեկուն հաղթանակովը մյուսները

հրապարակին քաշվին: Մարդկային արտահայտության խոհայր հոն կերթա, որ ամեն իր ու գաղափար միայն մեկ բառ մը ունենա իբրև արտահայտիչ. հոմանիշ բոլած բառերը այն ժամանակ միայն արժեք կստանան, երբ ըմբռնումի կամ գեթ գործածության որոշ տարբերություն մը, որոշ նրբություն մը ունենան իրենց վրա:

Անիմաստ կամ, որ նույն է, իմաստը չգիտցված բառ չգործածել, բառերը միշտ իրենց ճիշդ իմաստովը գործածել, մերժիմաստ բառերու գործածության առեն անոնց նրբությունները միշտ հարցնել, աս է, որ կանվանենք բառագիտական ճշդություն, և ամենեն առաջ ասոր է, որ պիտի ձգտի ամեն ուսուցիչ. բառագիտական մթերքի իսկական հարստացումը ասիկա է. արտահայտության և՛ հստակությունը, և՛ խորությունը, և՛ դեղեցկությունը ամենեն առաջ այս կետին վրա կկայանա: Տղաքը կլսեն ու կկարդան շատ ու շատ բառեր ու պիտի լսեն ու պիտի կարդան, անխուսափելի է, բայց իրենք պետք է գործածեն ո՛չ ամեն լսածը անխտիր, այլ ընտրելով, ստուգելով, միայն իրենց հաստատ գիտցած բառերը, միայն իրենց նրբորեն ըմբռնածը և միայն իրենց ըմբռնած իմաստով. լավ է, որ աշակերտները իրենց նոր սորված բառերու գործածության մեջ կարելիին չափ համեմատ, քան հախուռն կերպով ամեն նոր լսած բառ իսկույն գործածեն: Գործածության այդ շտապն ու անփութությունը շատ հաճախ ծաղր ու ծիծաղ կառաջացնեն և գրեթե միշտ թեթևամտության կնանեի, և այդ երկուքն ալ շատ աննպատակ բաներ են ամեն մարդու համար:

Ուսուցիչը բառագիտական այս անհրաժեշտ ճշդության ու նրբության հասնիլ կարողանալու համար պարտական է հետևելու հետևյալ պահանջներուն.

1) Ինքը միշտ ուշադիր հետևելու է իր ամեն լսածին, երբեք անփույթ ըլլալու չէ իր խոսելու առեն, թե՛ խաղի ու խոսակցության և թե՛ դասերու առեն. պետք է միշտ աչքի առաջ ունենա, որ ինքը օրինակ մըն է, և որ իր ամեն լսածները պիտի կապկեն փոքրիկները: Այդպես ալ երբեք թողնելու չէ, որ փոքրիկները սխալ ու անճիշդ բառեր գործածեն կամ սխալ ու անճիշդ դարձվածքներու մեջ. պետք է իսկույն ըսե չիտակ ձևը ու կրկնել տա. ավելորդ է ամեն ուրիշ բացատրություն թե՛ դուրսը, թե՛ դասերու առեն:

2) Հատկապես մայրենի լեզվի ընթերցման վարժություններու

առանձին մեծ ուշադրությամբ հետևելու է, որ կարդացված բոլոր բառերը ճիշդ և հստակ ըմբռնվին, թե՛ նոր հանդիպող բառերը, որ նոր պիտի հասկնան, և թե՛ հին բառերը, որ նորեն կհանդիպին. պետք է զանազան ձևի հարցերով ըսել ու գործածել տալ նույն բառերը զանազան դիրքերով, տարբեր կապակցություններու մեջ, մինչև ապահով դառնա, որ յուրացուցած են բառին ճիշդ իմաստը: Ընթերցման առեն միայն կհետապնդենք, որ կարդացածը ճիշդ հասկնան:

3) Իսկ ընթերցումներեն ետքը ամեն հոդվածին պետք է հաջորդեն բազմատեսակ բառագիտական վարժություններ, որոնք այս կամ այն կերպով կապված են հոդվածի մեջ գործածված բառերուն և կրնան խորացնել կամ ավելի պայծառացնել անոնց իմաստը: Պետք է հանվին արմատները բառերուն, պետք է զուգադրվին նույնարմատ բառերը, պետք է համեմատվին ու տարբերությունները ընդգծվին մերձիմաստ բառերուն հետ, պետք է դիտել տրվի արդեն ծանոթ արմատներուն մասնակցումը, մասնիկներու առած զանազան իմաստները և արմատներուն տրված տարբեր իմաստները. պետք է ընդգծվին «համանիշ» բառերուն ինքնահատուկ գործածության տեղերը. պետք է խմբել տալ նույն բառին տարբեր նշանակությունները և մատնանշել այդ տարբեր ասումներուն առաջացումը. պետք է հստակ կերպով զատվին հայերեն ասույթները, ասույթային բառերը, ասույթային բայերը և դիտել պետք է տրվի, թե ո՞ր բայերն են և ո՞ր անունները, որ ասույթ կկազմեն:

4) Իրերու, ձևերու, ամաններու, գործիքներու և նման առարկաներու և մասերու նկարները կամ մոտերը պետք է միշտ ցույց տալ, եթե իրականը ցուցադրելու կարելիություն կամ հարմարություն չկա: Այդպես ալ բոլոր պատմական անձերու, տեղերու և իրերու անունները, որ ընթերցման առեն կհանդիպին, պետք է խնամքով բացատրել և ցույց տալ նկարով, քարտեզով, որ իբրև պարապ բառ մը չմնա միայն տղոց գլխուն մեջ:

5) Այս բոլոր թե՛ բանավոր և թե՛ գրավոր կերպով կատարվող բազմատեսակ վարժություններեն անկախ՝ տարրական նախակրթարանի երկրորդ երկամյակին աշակերտները պետք է ունենան իրենց բառարան-տետրակը. ուսուցիչը ամեն նոր հանդիպած բառ

կզբի դրատախտակին և դիմը իր նշանակութիւնը. աշակերտները տախտակին կարտագրեն իրենց «բառարան»-տետրակին մէջ: Եվ կպահանջվի, որ դուրսը հաճախ աշակերտները սովորութիւն ընեն, թղթատեն տետրակին հին ու նոր էջերը ու կարդան:

Այս «բառարան»-տետրակի գործածութիւնը կարելի է սկսիլ աւելի կանուխ, օրինակ՝ տարրական նախակրթարանի երկրորդ տարուան սկիզբեն, եթե գրել-կարդալու վարժութիւնը բաւականաչափ առաջացուցած է արդեն. եթե դեռ շատ դանդաղ կզբեն և անվարժ, դերադասելի է աւելի ուշ սկսիլ «բառարան»-տետրակի մը կանոնաւոր գործածութիւնը:

Գ. ԱՐՏԱՀԱՅՏԱԿԱՆ ՁԵՎԵՐՈՒՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Միևնոյն գաղափարը շատ զանազան ձևերով կարելի է արտահայտել. նախ՝ բառի ընտրութեան տեսակետեն կրնամ ըսել՝ քաղաքացի, քաղաքի բնակիչ, քաղաքի մէջ ապրողներ, որոնք որ քաղաքի բնակչութիւնը կկազմեն, մեր քաղաքը և քիչ մը աւելի ազատութեամբ և փոխաբերութեամբ կարելի է շատ երկարել այս ցանկը, և ասոր նման է դրեթե ամեն գաղափարի արտահայտութիւն. եթե հոմանիշներն ու մերձիմաստները ալ որ հաշվի առնելու ըլլանք՝ ցանկը կերապատկվի, կքառապատկվի. արդ՝ բան մը ըսելու առեն ասոնցմե ո՞րը պիտի ընտրվի:

Երկրորդ՝ բառերու ընտրութենեն ետքը կուգա բառերու կապակցութեան ընտրութիւնը:

1) Կարելի է կազմել լրիվ, կրճատ, թերի նախադասութիւններ միևնույն բանը արտահայտելու համար. կարելի է ըսել միայն ամենեն անհրաժեշտը սեղմ նախադասութիւններով, կարելի է կազմել փեշավոր և ընդարձակ նախադասութիւններ ածականներու ու մակբայներու շատյլ գործածութեամբ:

2) Կարելի է միևնույն բանը ըսել դրական ձևով, բացասական ձևով, հարցական ձևով, հարցական-բացասական ձևով, զարմանքով, արհամարհանքով, հեգնանքով, հիացումով, հրճվանքով կամ ուրիշ որևէ զգացումով մը թաթխված:

3) Կարելի է ամեն ինչ ըսել դիմավոր նախադասութիւններով, ամեն ինչ հատակ իրարմե զատած, կարելի է նույն նախադասու-

թյունները կծկել և կոխել իրարու մեջ իբրև բարդ մեծ նախադասություն մը:

4) Միևնույն նախադասությունները կարելի է անջատ պահել, կարելի է զանազան շաղկապներով զոդել իրարու ամբողջ տողեր, կես էջ կամ էջ մը. նույնը կարելի է շաղկապ ու հարաբերական «որ»-երով: Այնպես որ միևնույն մտածումներն ու եզրակացությունը հնարավոր է արտահայտել հազարավոր ձևերով. արդ՝ բան մը ըսելու առեն ասոնցմե ո՞րը ընտրվի:

Այդ ընտրությունը կախված է շատ մը պայմաններե. հոս դեր կկատարեն խոսած լեզվիդ արդեն քարացած պահանջները. հոս դեր կկատարեն խոսողին հարազատ եղող գավառաբարբառները և հին ու նոր գրական լեզուներուն ազդեցությունը. հոս դեր կկատարեն ավելի նեղ շրջապատի և հատկապես ընտանիքին մեջ տիրող լեզվական սովորությունները. հոս դեր կկատարեն խոսողի ստացած կրթությունը, վարժարանը, ընթերցումը. հոս դեր կկատարեն խոսողի հոգեբանական կազմը, անոր մտածելու և զգալու ներքին հիմնական հյուսքը, ունակություններն ու հակումները. և վերջապես խոսողի այդ վայրկյանի տրամադրությունը, վիճակը և այդ վայրկյանի շրջապատող անձերն ու պայմանները:

Այս աստիճան բարդ ու բազմատեսակ դրդիչներե դեկավարվող երևույթ մը ընդհանուր հայտարարի բերել և օրենքներ հանել կարելի չէ: Ուսուցիչը իր բռնելիք ուղղության համար ունի միայն քանի մը շատ ընդհանուր սկզբունքներ:

ա) Զբռնադատել երբեք տղոց արտահայտության եղանակը. ազատ ընթացք տալ, որ ամեն մեկը իր ձևով ըսե իր ըսելիքը ըստ իր կազմին ու տրամադրության, այսինքն պահել տղոց արտահայտության բնականությունն ու անձնականությունը:

բ) Բայց այդ սահմաններուն մեջ թույլ չտալ երբեք, որ սխալ խոսի. պետք է միշտ հարգե մեր արդի գրական լեզվին քերականական օրենքներն ու կանոնները. պետք է հարգե լեզվական ընդունված սովորությունները և տրամաբանական բնական պահանջները, այսինքն գործածե կանոնավոր գրական լեզու:

գ) Թույլ չտալ, որ աղճատե մայրենի լեզուն օտար բառերով, օտարաբանություններով, բառերու օտար հնչումով, օտարաձև, ասույթներով: Աղճատում մըն է մեր արդի գրական լեզվի համար

նույնիսկ դրաբարե առնված հոլովներու, խոնարհումներու, որոշ հինցած ու գործածութենեն ելած արտահայտական ձևերու ու բառերու գործածությունը, ուրկե նույնպես պետք է խուսափիլ: Ինչպես և ժողովրդական բարբառներեն առնված և մեր գրական լեզվին մեջ չիրացված բառերու և ձևերու գործածությունը: Աստոնց մեջ շատ գեղեցիկ բառեր, ասույթներ և ձևեր կան անշուշտ, որ դեռ մտած չեն գրական լեզվին մեջ, բայց և կան տգեղ ու կոպիտ ձևեր ու տարրեր, ասոնք մաղելն ու ընտրելը կիրթ ականջ կպահանջե և զարգացած հայ ղգացում. պետք է մոտենալ ատոնց մեծ զգուշությամբ:

դ) Պետք է հետևիլ, որ տղոց արտահայտությունը ըլլա միշտ պարզ ու հստակ, գործածե այն տեսակի բառեր, դարձվածքներ և հաջորդականություն, որ տեղի չտան երկմտության, կիսատ ու անորոշ չըլլան, ընդգծված ըլլա հիմնական իմաստը: Հնար եղածին չափ խուսափիլ երկարաձիգ, ոլորուն, գալարուն ու մեջեմեջ արտահայտություններե, որոնք միշտ խոսքը կմթագնեն: Լեզուն այնքան ուժեղ է, որքան որ արագ ու անմիջապես կհասկցվի, կհասկցվի չիտակ և միայն մեկ ձևով: Այս օրենքեն ամեն չեղում, կեղծ կամ անկեղծ խճողում ու գալարում ու մթնացնում թերություն ու տկարություն է լեզվի:

ե) Պետք է չանալ, որ տղոց արտահայտությունը չըլլա միակերպ ու միաձև, որ գործածե արտահայտության զանազան ձևեր ու եղանակներ, որ լեզուն բուռով վերցնե բառերը, ասույթներն ու դարձվածքները իր մտքի զանճարանեն: Արտահայտության բուն հարստությունը, ոճի բազմազանությունը կուգա անշուշտ ավելի ուշ դպրոցական վերջին շրջանին, իբրև արդյունք դպրոցական երկարամյա աշխատանքներու և տևական ընթերցման, բայց առաջին իսկ օրեն ուսուցչի հոգածության առարկան պետք է ըլլա նաև տղոց արտահայտության բազմազանությունը, նրբությունը և գեղեցկությունը, որչափ որ հնար է, որչափ որ կներե տղոց արդեն ունեցած մտավոր ու լեզվական պաշարը:

Այս հիմնական սկզբունքներու իրագործման ձգտելու են բոլոր ուսուցիչները անխտիր և տղոց հետ ունեցած իրենց բոլոր հարաբերություններու ժամանակ, բայց անշուշտ ինքնին հասկնալի է, որ մասնավորապես լեզվի ուսուցչի վրա կիյնա այդ ընդհանուր

ճիգերով կատարված աշխատանքին արդյունքները մայրենի լեզվի դասերու ընթացքին դիտակից դարձնելը, ճշդելը, լրացնելը և ընդգծելը:

Աշխատանք մը շատ կարևոր, որ կկատարվի 1) կարդացված հոդվածի մը կամ հատվածի մը ըստ իմաստի վերլուծման ժամանակ, 2) յուրաքանչյուր հոդվածի ընթերցումին հաջորդող և հոդվածի նյութին շուրջը կատարվող խոսակցության ու մտքերու փոխանակության ժամանակ, 3) յուրաքանչյուր հոդվածի վերլուծումին ու խոսակցության հաջորդող շարադրական բանավոր այլազան մարզանքներու ժամանակ և վերջապես 4) գրավոր շարադրություններուն շուրջ ուսուցչի տրված բացատրություններու և սրբագրություններու միջոցին:

IV. ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. ԲԱՆԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՄ ՇԱՐԱԴՐՈՒԹՅԱՆ

Նույն նյութի շուրջ քիչ-շատ կապակից և քիչ մը ավելի երկարաշունչ արտահայտությունը հոդիի, խոսիլ ըլլալեն կդառնա ըսել, խոսակցությունը կվերածվի մենախոսության, և կծնի շարադրությունը, այսինքն իրար ետևե ըսվելիք բաները դասավորելու, կապակցելու և ատոնցմով ամբողջություն մը կազմելու ճիգը:

Երբ շարադրություն կըսենք, սովորաբար հոդիի գրավոր արտահայտությունը աչքի առաջ կունենանք, որովհետև գրավոր օրինակներու վրայեն կհանենք շարադրական կանոններն ու պահանջները, գրավորի վրա անոնք ավելի պարզ նկատելի են: Թե չէ կյանքի մեջ բանավոր շարադրությունը այնքան կարևոր է, որքան գրավորը, գուցե և ավելի, և գրավորեն շատ ավելի գործադրություն ունի ընկերական բազմատեսակ շփումներու ընթացքին: Եվ դպրոցական կրթությունը մեծ պարտավորություն ունի մշակելու ինչպես գրավոր կերպով, այնպես ալ բանավոր շարադրական կարողությունները տղոց:

Մեծ առավելություն մըն է և հաջողելու մեծ զենք մը կյանքի մեջ ինչպես գրավիչ խոսիլ ու խոսակցիլ գիտնալը, այնպես ալ գրավիչ կերպով ու կենդանի կերպով պատմել ու նկարագրել գիտնալը,

երևույթ մը հասակ ու սուր կերպով մեկնել, ապացուցել, համեմատել և եզրակացութիւն հանել դիտնալը, հասարակութեան առջև քիչ-շատ երկար խոսք մը շնորհքով ըսել կարողանալը, իր մտածումները, դատումները, զգացումները ճիշդ ու կանոնավոր հաջորդականութեամբ ունկնդիրներուն առջևը արտահայտել կարողանալը:

Շարադրելու բազմատեսակ կերպերը, ըլլա բանաւոր թե գրաւոր, կրնանք խմբել հինգի՝ պատմական շարադրութիւն, նկարագրական շարադրութիւն, դատողական շարադրութիւն, քնարական շարադրութիւն և թատերական շարադրութիւն: Առնցմէ ամեն մեկը իր մշակման ու կատարելագործութեան բարձր աստիճաններուն վրա մեյ-մեկ մասնագիտական արվեստ կպահանջէ, առանձին տեսակ մը դիտարվեստի և կպահանջէ հատուկ շնորհք ու տաղանդ և իր արտահայտութիւնն ալ կդառնա հանրային ու աղգային մնայուն սեփականութիւն, իր մէջին աստիճաններուն վրա հասանելի ու դործածելի է շատ-շատերուն համար կյանքի հանդիսաւոր վայրկյաններուն, երբեմն և առօրյա, ավելի կամ պակաս լայն հասարակութեան մը առջև: Իսկ ավելի համեստ որոշ աստիճան մը կա, որուն կրնա տիրանալ ամեն անհատ թե՛ չրթունքով, թե՛ դրիչով, և որուն տիրանալը մարդավայել ապրելու, իր նմաններուն մեջ դիրք ու աղդեցութիւն ունենալու և իր ծրագիրներուն մեջ հաջողելու անհրաժեշտ պայման մըն է, և որուն ուսուցումը դպրոցական կրթութեան ամենակարևոր պարտավորութիւններեն մեկն է:

Եվ շարադրական այդ կարողութիւններու մշակմանը մեծ ուշադրութիւն պետք է դարձվի դպրոցական առաջին իսկ օրեն, թե՛ բանաւոր շարադրութեան, թե՛ դրաւոր: Առաջին երկամյակին, երբ տղաքը դեռ ազատ ու շնորհքով դրիլ չդիտեն, բնականաբար շարադրելու մշակումը կկատարվի միայն բանաւոր կերպով: Երկրորդ երկամյակին թեև կսկսի դրաւոր շարադրութիւնը և հետզհետե կմարզվի ու կզորանա, բայց շարադրելու բուն մշակումը դեռ կկատարվի ու կկատարելագործվի էապես բանաւոր կերպով: Ուրիշ խոսքով՝ տարրական դպրոցի մեջ բանաւոր շարադրութեան վրա կիյնա այդ ուղղութեամբ կատարվելիք հիմնական աշխատանքը:

Ինչպես լեզվի արտահայտական կողմերու զարդացման հա-

մար, այնպես ալ մասնաւորապես շարադրութեան մշակման համար դպրոցը ունի նախ և առաջ երեք ընդհանուր միջոցներ:

Առաջինը՝ ուսուցիչներուն օրինակը: Անհատիր ամեն ուսուցիչ պարտական է մեծ խնամքով պատրաստելու իր պատմելիքի, նկարագրելիքի ու բացատրելիքի կանոնաւոր հաջորդականութիւնը, մասերու բնական ու տրամաբանական կապակցութիւնը, մտքի բռնած հստակ ընթացքը և հանվելիք եզրակացութիւնները: Անպատրաստ դասարան մտնելը, վստահ միայն իր շնորհքին ու կարողութեան, հանցանք է նաև լեզուական ու շարադրական տեսակետեն:

Երկրորդ՝ նույն խորութեամբ ու հարատեւութեամբ չարունակ հստակութիւն, կանոնաւորութիւն և ամբողջութիւն պետք է պահանջվի աշակերտներեն. բոլոր դասերուատեն միշտ պետք է լուրջ ուշադրութիւն դարձնել ո՛չ միայն տղոց պատմած ու նկարագրած բաներու իմաստի ճշդութեանը, այլև դասաւորութեան ու շարադրութեան կանոնաւոր, կոկիկ ու ամբողջական ըլլալուն: Եվ արդեն ներքին խոր կապ ունի մտածման ու դաստիարակութեան ճշդութիւնն ու հստակութիւնը կապակից ու ամբողջական կերպով արտահայտել կարողանալուն հետ. պարզ և խոր ըմբռնված բաները ավելի պարզ ու դյուրին կտանան իրենց շարադրական ձևակերպումը, և անգամ մը շարադրութեան ենթարկված նյութերը կըմբռնվին ավելի խոր ու ավելի լրիվ:

Շարադրական զարգացման երրորդ ընդհանուր միջոցը ընթերցումն է, ամեն տեսակի ընթերցումները պարտադիր ու ազատ, գիտական, պատմական ու գեղարվեստական: Աշակերտական ընթերցումները իրենց ուրիշ բազմատեսակ կարևորութեան և օգտակարութեան շարքին կներկայանան նաև իբրև խիստ լուրջ օժանդակ մը տղոց լեզվական ու շարադրական կարողութիւններու հարստացման: Ուսուցիչներու կենդանի խոսքեն ետքը սիրված գրքերու ընտիր լեզուն և մշակված շարադրութիւնն է, որ խորապես կազդե տղոց արտահայտութեան և մտքերու դասավորման եղանակին վրա:

Շարադրական այս երեք ընդհանուր միջոցներուն զուգընթաց՝ առաջին իսկ տարվընե սկսած դպրոցի մեջ կգործեն բանաւոր շարադրութեան նվիրված հատուկ դասերը: Մայրենի լեզվի

ուսուցման պահերին չարաթվան մեջ գոնե երկու անգամ ժամանակ պետք է հատկացվի չարադրական վարժութիւններու: Ամեն անգամ, որ կարդացվող հոդվածը կրկնես, և իր շուրջը տարվող խոսակցութիւնը կավարտի, կարգը կուգա չարադրական մարզանքներուն:

Նախ կպատմվի հոդվածը տղոց կողմեն հնար եղածին չափ հարազատորեն, երկրորդ անգամ մը պատմել կրնանք տալ ավելի ամիսուի կերպով, կարելի է երրորդ անգամ մը շատ ավելի սեղմ:

Հարմար հոդվածները բաժնել կուտանք տղոց քանի մը մասերու և տղոց դանազան կերպով կատարած բաժանումներուն վրայեն կհասնինք ընդհանուր վերջնական բաժանումի մը՝ անշուշտ միշտ բացատրելով մեր ալած գերադասութեան պատճառները: Մնջեմեջ բաժնել կուտանք նաև յուրաքանչյուր մասը իր ենթաբաժանումներուն, որով կստացվի հոդվածին հատակագիծը:

Պատմել կուտանք ամբողջը կամ անոր մեկ մասը մեջը կարևոր պայման մը փոխելով, որով չարադրութիւնը կստանա քիչ մը տարբեր, նոր ուղի: Նույնը, երբ նկարագրութիւն մըն է կամ բացատրութիւն մը: Արտաքին պայմանի փոխարեն կրնանք փոխել ներքին պայման մը, այսինքն ուրիշ անուն, ուրիշ տարիքի կամ ուրիշ բնավորութեան անձ մը դնելով գործող անձին տեղը, որով պատմութիւնը, դեպքը կամ նկարագրութիւնը անպատճառ պետք է նոր ճամբա գոնե մի՛ մտածման, թե՛ արտահայտական և թե՛ մասամբ չարադրական: Կարելի է գործող անձ մը բոլորովին կրճատել, կարելի է անձ մը կամ անձեր նոր ավելցնել և այդպես պատմել տալ:

Կարելի է պահանջել, որ տղաքը ըսեն, հնարեն ու չարադրեն «Հետագան», այսինքն բաներ, որ հոդվածին մեջ չկան, բայց ավելի կամ նվազ հավանականութեամբ կարելի է ենթադրել, երևակայել, հնարել:

Տալ ուրիշ նյութ մը, որ հոդվածի հետևողութեամբ ու նմանութեամբ իրենք նոր չարադրեն. մեկ-երկու աշակերտի պատմածը լսելեն ետքը դասարանական խմբական հավելվածներով սրբագրել, լրացնել և այդ ձևով նորեն մեկուն պատմել տալ:

Խոսակցութեան ձևով պատմված նյութ մը պատմել տալ առանց որևէ խոսակցութեան և նյութեն առանց ոչինչ փոխելու:

Եվ ընդհակառակը, պարզորեն պատմված բան մը ամբողջովին կամ մասամբ խոսակցական ձևով շարադրել տալ առանց իմաստին ոչինչ փոխելու:

Հոդվածի ամբողջութենեն ներշնչված կամ անոր մեկ որևէ կետին տված դրդումովը տղոց պատմել տալ անձնական կյանքեն դեպքեր, իրական, ապրված դեպքեր: Կամ ուղևորության մը, հանդեսի մը, ընտանեկան տոնի մը, ամառվան մը նկարագրություններ՝ միշտ հավատարիմ մնալով իրականության:

Երկու-երեք խոսքով տալ նյութի մը, որ տղաքը կենդանացնեն, խոսակցական ու նկարագրական գծերով հարստացնեն, իրենցմե գործողության մեկ-երկու մանրամասնություններ ավելացնեն, միայն առանց մեր տված նյութի սահմանեն դուրս գալու: Աշակերտներեն մեկուն-մյուսին նկարագրել տալ իր չտեսած ծանոթներեն կամ ազգականներեն մեկը, որու մասին սակայն իր ընտանիքին ու շրջանակին մեջ շատ է խոսված: Այդպես ալ իրենց չտեսած մեկ տեղը, մեկ պտուղը, մեկ կենդանին, որու մասին սակայն շատ են լսած:

Հարցնել բանի մը պատճառը, բացատրությունը և պահանջել, որ մտածեն և լրիվ կարողանան պատասխանել առանց ուսուցչի միջամտության ու հարցերուն: Նույն պայմանով կարելի է տալ առած մը, իմաստուն խոսք մը, բնականաբար միշտ փոքրիկներու դատողության ու հասկողության հարմարվելով:

Շարադրական այս բանավոր մարզանքներուն կկապվի նաև գոց ընել տալը, որ լեզվի արտահայտական ու շարադրական տեսակետեն կարևոր օժանդակ մըն է, իբրև արդեն պատրաստ ձևերու և ընտիր օրինակներու յուրացում: Գոց պետք է տալ հաճախ, բայց ո՛չ միշտ ուտանավոր. ընդհակառակը, ավելի լավ է տալ սովորաբար արձակ, բայց լեզվական ու շարադրական տեսակետեն մասնավորապես զեղեցիկ և օրինակելի կտորներ:

Բայց որպեսզի գոց ընել տալը տղոց համար տաժանելի բեռ մը չդառնա, պահանջը պետք է կատարվի կարելիին չափ ներողամիտ ոգիով: Ուսուցիչը դիրքը ձեռքը բռնած բարեխիղճ հուշարարի դերը պիտի կատարե տղոց գոց ըսելու միջոցին, օգնելով, կանխելով, կատարյալ զվարթությամբ ու բարյացակամությամբ. մռայլ ու պահանջկոտ խստութենեն ատելություն միայն կծնի դեպի

գոյ ընելը. այնպես պետք է տանիլ գործը, որ փոքրիկները սիրով ու հաճույքով գոյ ընեն, խաղալու պես բան մը, զվարճալի պարտականութիւն մը: Եվ ամեն անգամ գոյ պետք է տալ 8-10 տողեն ո՛չ ավելի, այսինքն մաս-մաս, եթե ավելի երկար ամբողջութիւն մըն է, որ կցանկանք գոյ ընել տալ:

Գոյ սորված կտորներեն լավագույնները ցանկալի է, որ տղաքը արտասանեն ավելի մեծ բազմութեան առջև դպրոցական երեկույթներուն, հավաքույթներուն, տոներուն ու հանդեսներուն՝ ավելի վստահութիւն ու համարձակութիւն ձեռք բերելու համար:

Գոյն ու արտասանութիւնը, երբ կկատարվի բերնե բերան երկու կամ ավելի դերակատարներով, կդառնա ներկայացում, որ նմանապես չատ զվարճալի, մանուկներեն ու մեծերեն չատ սիրված, տղոց խոսքին ու շարժուձևներուն ուշադրութիւն տվող չատ դրամիչ խաղ մըն է ու վարժութիւն մը միաժամանակ:

Շարադրութեան դասերու ատեն մեջեմեջ կարելի է կազմակերպել այդ ներկայացումները, այդ մեկ-երկու հոգիով կատարվող գոյները: Մասնավոր կերպով հաջողած կտորները կարելի է նաև ամբողջ դպրոցի առջև կրկնել տալ՝ օգտվելով դպրոցական հանդեսներեն և արդեն դիմակներով ու հագուստներով, որու համար թե՛ մեծերը և թե՛ փոքրիկները հոգի կուտան:

Այս բեմադրութիւնները բազմակողմանի օգուտներ ունին. նախ՝ մեծ զվարճութեան ու հափշտակութեան աղբյուր են մասնակցողներուն համար. կզորացնեն ձեռներեցութեան ոգին ու կազմակերպված գործակցութիւնը. խոսքին ու շարժուձևներուն համարձակութիւն կուտան և բազմութիւններ դիմագրավելու վարժութիւնը. կնպաստեն ընկերական զգացումներու զարգացման և վերջապես խոր ուրախութիւն մը կկապեն դպրոցական տարիներու հուշերուն, որ արդեն ինքնին թանկագին բան մըն է:

Բ. ԳՐԱՎՈՐ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական առաջին երկամյակին գրավոր շարադրութիւն տեղի ունենալ չի կրնար: Գրավոր աշխատանքները արտագրութիւն են ու թելադրութիւն. չատ-չատ՝ առանցքի մը շուրջը խմբված քանի մը հարցերու պատասխանը իրենց արդեն ծանոթ

բառերու գրութիւմբ: Այս ամենը ինչպես որ գրութեան և ուղղագրութեան վարժութիւններ են, են նաև շարադրական նախնական պատրաստութիւններ:

Շրջանի երկրորդ երկամյակին սակայն կսկսի գրավոր շարադրութեան կանոնավոր աշխատանքը: Այդ շարադրութիւնները պետք է տրվին չաբաթը գեթ մեկ անգամ, պետք է ըլյան ծավալով փոքր, տաս-տասնհինգ տողեն ո՛չ ավելի: Նյութը՝ մանուկներու կյանքեն, անոնց տեսածեն, դիտածեն, անմիջական շրջապատեն և իրենց ապրումներեն, պարզ, սովորական, հարազատ և մանկական հոգիին համար սիրելի ու հետաքրքիր եղող նյութեր: Նյութին նման լեզուն ալ, շարադրութիւնն ալ պարզ ու սովորական. պետք է խուսափիլ ամեն սեթևեթե, ամեն արվեստական ճիգերե: Գրել տալե առաջ պետք է հոգալ, որ նոր պատահելիք բառերուն գրութիւնը տեսնեն ու գիտնան որքան որ հնար է նախատեսելը: Նմանապես պետք է նախապես ըսել տալ ու մատնանիշ ընել գրվելիք գլխավոր մտքերը և անոնց ընդհանուր հաջորդականութիւնը, այսինքն կազմել միասին շարադրութեյան հատակագիծը:

Բոլորովին սկիզբները ամբողջ շարադրութիւնը միասին կմտածվի դասարանին մեջ. խմբովին հավաքված մտքերը խմբովին ալ կդասավորվին. այս ամբողջի միասին խմբագրումեն ետքն է, որ ուսուցիչը կգրե գրատախտակին միասին կատարված խմբագրութեյան հատակագիծը. տղաքը կարտագրեն և այդ հատակագծի համեմատ և դասարանական խմբագրումի վերհուշով կգրեն իրենց առաջին շարադրութիւնները:

Երբ քիչ մը կվարժվին, դասարանին մեջ նախապես կխոսվի տրված նյութի մասին, կհարցնենք ու կըրացնենք, ինչ որ պիտի գրեն, առանց սակայն վերջնական խմբագրութեյան ենթարկելու. ուսուցիչը կուտա պատրաստ հատակագիծը, ու տղաքը դուրսը պիտի գրեն:

Ավելի ուշ, երբ նյութը պարզ է, և ուսուցիչը՝ վստահ, որ աշակերտները ինքնուրեննին նյութը կազմել կրնան, կուտա միայն պատրաստ հատակագիծը: Կամ ընդհակառակը, դասարանի մեջ կխոսվի գրվելիք նյութի մասին, պետք եղած ատաղձը կհավաքվի, բայց չի տար մտքերու հաջորդականութիւնը. տղաքը դուրսը կխմբագրեն այդ ընդհանուր նախապատրաստութենեն ետքը

առանց ընդհանուր ու պարտադիր հատակագծի:

Կարելի է նկարները վերածել չարադրության, այսինքն պատկերին մեջ եղածը կամ կատարվածը պատմել ու նկարագրել տալ տղոց, պայմանով, որ ամեն ինչ ըլլա պարզ, տղոց կյանքեն կամ մտաշխարհեն ըլլա առնված և լիովին անոնց ծանոթ ու հասկընալի: Ա՛ս ալ կարելի է կատարել նախնական ընդհանուր խմբագրությամբ և ընդհանուր ծրագրով կա՛մ միայն ընդհանուր խոսակցությամբ ու հատակագծով, կա՛մ միայն առաղձը հավաքելով նախապես և առանց հատակագծի, կա՛մ առանց առաղձը նախապես քրքրելու, բայց հատակագիծը տալով:

Գրված չարադրությունները սրբագրելու համար ուսուցիչը կժողվե տետրակները ու կտանի հետը. ուղղագրական սխալներուն տակը կընդգծե, որ տղան վերջը ինքը սրբագրե, իսկ չարադրական նկատողությունները հիշեցնելու համար տետրակի լուսանցքին վրա կդնե որոշ պայմանական նշաններ: Հաջորդ դասին, տետրակները թղթատելով, ըստ այդ նշաններու կբացատրե, թե ինչը անճիշդ է, անկարգ, անբնական կամ սխալ, և թե ինչպես պետք է ըներ, որ ավելի լավ ըլլար: Երբեմն գրված այս ու այն կտորը ենթարկել ընկերներու դատողության, թե ինչի մեջն է թերությունը, և թե ինչպես պետք է շտկել կամ լրացնել: Բացառիկ կարևորություն ներկայացնող պարագաներուն սրբագրելի կտորը կարելի է գրել տալ դրատախտակին և գրավորի վրա տալ իր բացատրությունները: Այս շրջանի չարադրական սրբագրություններու սովորական եղանակը սա է:

Բայց երբեմն կարելի է ուրիշ կերպ ալ կատարել սրբագրությունը. ընդհանուրի տեսակետեն սրբագրական արժեք ներկայացնող սխալներ պարունակող չարադրություններեն մեկը ուսուցիչը կթելադրե սրբագրության դասին. մեկը կգրե դրատախտակին, մյուսները՝ իրենց սեպագրության տետրակներուն մեջ. ինքը կթելադրե իր ուզած, սրբագրված, կանոնավոր ձևովը: Տղոց գրելենետքը ինքը կկարդա աշակերտի գրած ձևովը և կպահանջե, որ տղաքը բացատրեն, թե ինքը ի՞նչ է փոխած և ինչո՞ւ: Անշուշտ շատ ավելի ժամանակ խլող ձև մըն է սոսկա սրբագրության, բայց իր օգուտներն ալ շատ ավելի մեծ են:

Սրբագրության այս երկու ձևերն ալ դասարանական են.

նույն նյութին է ամենուն ալ գրածը, մոտավորապես նույն հաջորդականությամբ և նախապես ալ միասին խմբագրված կամ քրքրված, անհրաժեշտ է և հնարավոր, որ սրբագրությունն ալ կատարվի հավաքական կերպով: Անհատական սրբագրության մը պահանջը կուգա հաջորդ շրջանին, երբ չարադրություններու նյութերը և մանավանդ մշակման եղանակները դարձած կըլլան արդեն անհամեմատ ավելի անհատական:

V. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԵՋ

Լեզվի տեսական կողմերեն միայն քերականությունն է, որ լուրջ ու առանձնակի տեղ կբռնե տարրական նախակրթարանի մեջ. մյուս երեք տեսական կողմերու վրա մայրենի լեզվի դասերու ատեն հոս ու հոն երբեմն կրնա խոսք ըլլալ շատ տարրական և շատ նախնական ձևով մը, իբրև լրացուցիչ տեղեկություններ. դեռ իրենք չեն կրնար դառնալ դասին առանցքը:

Տարրական շրջանի առաջին երկամյակին քերականությունը ինքն ալ դեռ չունի անկախ դիրք. գրություններու և ընթերցման զուգընթաց քերականական քանի մը հիմնական ըմբռնումներու մասին թեև խոսք կըլլա, նույնիսկ որոշ բացատրություններ ու կանոններ կհանվին, բայց զուտ ուղղագրական նպատակներով ու ցրիվ, ո՛չ թե լեզվին կազմը ըմբռնելու համար. դեռ կանուխ է: Այսպես ուղղագրական դրդումով հարկ կըլլա մեկ հատի ու մեկե ավելիի գաղափարը տալու, հրաման եղող բառերու վրա ուշադրություն դարձնելու, ից, ած, եր, էր մասերը առանձնացնելու՝ առանց անշուշտ մասնիկի, բայի կամ դերբայի մասին ոչինչ ըսելու:

Տարրական շրջանի երկրորդ երկամյակեն է, որ կսկսի քերականական հիմնական ըմբռնումներու նախնական ուսումնասիրությունը. քերականության անունը դեռ մեջտեղ չկա, բայց քերականական եզրերը հետզհետե կսկսինք գործածել, և քերականական դասավանդումն ալ կդառնա սիսթեմատիկ իր հատուկ ուրույն պահերով, մոտավորապես չաբաթական երկու անգամ:

Եվ տղոց դիտողության նյութ պիտի դառնան քերականու-

թյան երեք մասերն ալ: Ամենեն առաջ՝ բառահյուսութիւնը, այսինքն բառերը իրարու կապակցելու ու նախադասութիւններ կազմելուն կանոնները, ուրիշ խոսքով՝ նախադասութեան մէջ ամեն մեկ բառի բռնած դիրքն ու խաղցած դերը. թե՛ խոսքի էութիւնը ըմբռնելու, թե՛ նախադասութիւնները առանձնացնել կարողանալու և թե՛ բառերու փոխադարձ ազդեցութիւնները ըմբռնելու համար ամենեն կարևորը աս է: Քերականութեան երկրորդ մասն է բառաթեքութիւնը, այսինքն բառերու հոլովելն ու խոնարհելը, խոսքի ժամանակ նախադասութիւններու մէջ միևնույն բառին զանազան ձևերը. քերականութեան այս ձևաբանական մասը անհրաժեշտ է թե՛ տրամաբանական և թե՛ ուղղագրական տեսակետեն: Բառաթեքութենեն ավելի հետաքրքիր է քերականութեան երրորդ մասը՝ բառակազմութիւնը, այսինքն բառերու արմատին առանձնացումը, մասնիկներուն դերը և բարդ բառերուն կազմութիւնը, որովհետև հոս է բառերու արտաքին ու ներքին էութեան բանալին, ուղղագրական տեսակետեն ալ մեծ նպաստ է բառին արմատն ու մասնիկը ճանչնալը:

Բառահյուսութենեն ամենեն գրավիչն է նախադասութեան բաղադրիչ անդամներուն որոշումը. տղաքը պետք է կարողանան զանազանել ստորոգիչը, ենթական, խնդիրները, մակբայներն ու մակդիրները՝ առանց ներքին ստորաբաժանումները թողնելով հաջորդ շրջանին: Այս հիմնական աշխատանքը կատարած չըլլալն է գլխավոր պատճառը, որ քերականութիւններու մէջ նախադասութեան անդամները կշփոթվին և իբրև բառերուն տարբեր տեսակներ կներկայացվին, ինչ որ իսկապես նույն բառի տարբեր դիրքերն են տարբեր նախադասութիւններու մէջ: Միևնույն կինը մեկ ընտանիքի մէջ տան աղջիկն է, մյուսին մէջ ընտանիքին մայրն է, երրորդ ընտանիքի մը մէջ քույր մըն է միայն, ասով չի դադրիր կինը միշտ միևնույն կինը ըլլալե. նոր տեսակի արարած մը չկա մեջտեղը:

Բառերը քերականորեն միայն երկու տեսակ ունին՝ անուն եղող բառեր և բայ եղող բառեր, այսինքն հոլովվող ու խոնարհվող բառեր: Հոլովումեն այս երկրորդ երկամյակին մէջ անհրաժեշտ է տալը եզակիի ու հոգնակիի կազմը, չորս հոլովներուն էութիւնը,

որոշիչ հողին գործածութիւնը և անձնական դիւրանուններ: Խոնարհումեն բավական է տալ ավարտ ու անավարտ գործողութիւններուն հասկացողութիւնը, ներկա ու անկատար ժամանակները, հրամայականն ու կատարյալը, երեք դեմքերը բայերու, եզակի ու հոգնակի:

Իսկ բառակազմութենեն դյուրութեամբ կարելի է ավանդել արմատի ու մասնիկի զանազանումը, բարդ ու ածանց բառերուն տարբերութիւնը և բարդության ու ածանցման միջոցին տեղի ունեցող ամենեն կարևոր հնչյունները:

Քերականական այս նյութերը ավանդելու ժամանակ պետք է հարգվին հետևյալ երեք հիմնական պահանջները:

Նախ՝ քերականական բոլոր դիտողութիւնները տղաքը իրենք պիտի կատարեն, իրենք պիտի հանեն բոլոր կանոններն ու ըմբռնումները, իրենց ոչինչ պիտի չտանք պատրաստ: Պատրաստ տալ՝ գոց ընել տալ ըսել է. նույնիսկ երկար-բարակ ուսուցչի կողմեն բացատրված բաները շատ հաճախ կմնան կիսովին հասկցված և գրեթե միշտ կըլլան անկենդան:

Քերականական բոլոր կանոններն ու դիտողութիւնները տղաքը իրենք պիտի հանեն ընտրված օրինակներուն վրայեն և լավագույն է գրավոր կերպով, իբրև գրավոր աշխատանք, իբրև գրավոր վարժութիւն, որովհետև իր դիտածն ու նկատածը գրավոր կերպով արտահայտելը և իր գրածին վրա վերստին մտածելը կրկնակի խորութիւն կուտա ըմբռնումին:

Երկրորդ՝ ամեն դիտողութիւն ու ամեն քերականական գրավոր աշխատանք պետք է խիստ կեդրոնացած ըլլա մեկ կետի մը, մեկ հարցի մը վրա. պետք է խուսափիլ ամեն բարդութենե, որ կրնա դիտողության հստակությունը աղոտել և դժվարացնել հանվելիք եզրակացությունը: Եվ ամեն ինչ նախ պետք է դիտել ու ըմբռնել տալ իր ամենեն պարզ և ընդհանուր ձևին մեջ. շատ բան այդ պատճառով ալ կըլլա բնական կերպով մոտավոր ճշդությամբ:

Քերականական ավելի նուրբ ու խոր զանազանումները, մանատումները և ստորաբաժանումները, ինչպես և բոլոր չեղումներն ու բացառությունները այս շրջանի նյութ չեն, կուտան հետզհետե հաջորդ տարիները: Այս շրջանի նպատակը քերականություն

սրվեցնելը չէ, այլ հիմքը դնելը, քերականական ամննին ընթացիկ հասկացողութիւններուն հետ ծանոթացնելը:

Երրորդ՝ վերի պահանջները հնարաւոր դարձնելու համար քերականական այդ դիտողական աշխատանքները գոնե այս երկամյակին պետք չէ կատարել ընթերցարանի հոդվածներուն վրա. այդ հոդվածները կենդանի դրուագներ են, շատ հաճախ սեղմ ու կրճատ ձևերով կամ, ընդհակառակը, փռված ու բարդ ասութեան ձևերով, որոնց վրայեն քերականական օրենքները քաղելը շատ կդժուարանա: Ասոր համար անհրաժեշտ է ավելի կամ պակաս արվեստական կերպով կազմած փոքրիկ պատմութիւններու շարք մը, ուր ամեն անգամ պահանջված քերականական կանոնը նշմարելի ու ցայտուն ըլլա: Անջատ-անջատ նախադասութիւններու վրա աշխատիլը անհետաքրքիր է. նախադասութիւնները իրար կապվելով ամբողջութիւն մը պիտի կազմեն, որ կենդանի դրուագի տպավորութիւն ընեն և հրապուրէ տան և՛ գրվածքին, և՛ անոր վրա կատարվող աշխատանքին:

Անհրաժեշտ է այս ուղղութեամբ կազմված քերականական գրաւոր աշխատանքներու դասագիրք մը տղուն ձեռքին տակը, կամ ուսուցիչը ամեն անգամ ինքը պիտի պատրաստե այդ նյութերը, տղոց տա արտագրելու, որ ետքը վրան աշխատիլ կարողանան:

Դ. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ԲԱՐՁՐ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՄԵՋ

Նախորդ շրջանի մայրենի լեզվի ընթերցման նյութը պետք է առնվեր մանկական աշխարհեն, ետքն ալ տղու կյանքեն ու ընտանեկան աշխարհեն, ինչպես և գեղարվեստի դյուցազնական աշխարհեն: Այս պատանեցման շրջանի մայրենի լեզվի ընթերցարաններուն նյութը մայրենի գրականութիւնն է:

Մայրենի գրականութեան լավագույն էջերեն, հարազատ հեղինակներու լավագույն երկերեն առնված ամբողջական կտորներ և հայ գրականութեան բոլոր տեսակներեն՝ թե՛ գեղարվեստական, թե՛ դիտական և անոնց բոլոր ճյուղերեն, բայց տիրապետողը բնական կերպով կըլլա գեղարվեստական գրականութիւնը իր բո-

վանդակության մասնավոր գրավչության պատճառով, ինչպես և դրական երկերու մեր լեզվի վրա դարձված հատուկ ուշադրության պատճառով:

Եվ հատկապես կընտրվին ազգային կյանքը, ազգային միջավայրը, ազգային կարևոր դեմքերն ու գծերը, ազգային ոգին ու սովորությունները պատկերացնող կտորներ. այս շրջանին է, որ հետզհետե հասունցող պատանին իր երկրի, իր ժողովուրդի, իր պատմության անցյալին ու ներկային ավելի մոտիկեն ծանոթանալու ու անոր հետ շաղկապվելու կձգտի:

Ժողովուրդի մը լեզվին ամենաբարձր ու ամենաազնիվ արտահայտությունը իր գրականության մեջն է, և ազգային գրականությունը պիտի ըլլա լեզվի ուսուցման հիմքը. թարգմանական կտորներ կրնան մեջ գալ շատ բացառիկ կերպով և ան ալ հայտնի հեղինակներու ձեռքով կատարված:

Բնականաբար նյութերը թե՛ բովանդակության և թե՛ լեզվի տեսակետեն կընտրվին ու կբաշխվին քառամյակի չորս տարիներուն վրա իրենց ներկայացուցած աստիճանական դժվարության համեմատ:

Ավանդման տեսակետեն տարրական շրջանի համար ըսվածներուն պետք է ավելցնել կամ ընդգծել.

1) Ընթերցումը պետք է ըլլա վստահ, առանց կակազելու, առանց վանկերն ու բառերը երկու անգամ արտասանելու և առանց միջանկյալ «ը»-երու: Եվ պիտի կարդացվի միշտ իմաստի, ձայնի բնական անկումներով, աչքերով և ընդհատումներով, և երբեք՝ միալար ու մեքենական, հարգելով չեչտերը, հարցերը և զգացական նրբություննները: Ամեն դասի նյութ անպատճառ դուրսը մեկ-երկու անգամ կարդացված պիտի ըլլա բարձրաձայն և խնամքով, իբրև անհրաժեշտ լեզվական պարտավորություն:

2) Մասնավոր կերպով պետք է մատնանշվին շարադրության, արտահայտության կամ լեզվական որևէ տեսակետե գեղեցիկ և օրինակելի կտորները: Հոդվածին մեջ ո՛չ մեկ բառ, ո՛չ մեկ միտք ու ասություն պետք չէ մնա երբեք, որ պարզ ու հստակ հասկցված չըլլա: Որևէ թերի, պղտոր կամ կասկածոտ հասկացողության առջև իսկույն պետք է կանգ առնել, վերլուծել, համեմատել հարակից

ձևերու և արտահայտութիւններու հետ և առանձնահատկութիւնները ընդգծել: Երբևք պետք չէ բավականանք «մոտավոր իմաստով», մոտավոր հասկացողութեան ժամանակը մինչև տարրական վարժարանի վերջերն է. բարձր նախակրթարանի մէջ լեզուն կձգտի խստորեն ճիշդ ու նուրբ արտահայտութեան:

3) Եվ արտահայտութեան ճիշդ ու նուրբ ըմբռնումին դասավանդումը կձգտի ո՛չ միայն գործնական ճանապարհով, որ արտահայտական մշակման հիմնական ձևն էր մինչև հիմա, այլ աւտոր կմիացնի նաև գիտական-վերլուծական ճանապարհը, բառակազմական, լեզվաբանական և իմաստներու ճյուղավորման ուսումնասիրութիւնը:

Հետզհետե կազատվին ամենեն կարևոր մասնիկները, և կդիտվին անոնց առած ու տված իմաստները: Կդիտվին բարդ բառերուն կազմը և անոնց արմատներուն իրարու հետ ունեցած հարաբերութիւնները ըստ իմաստի: Կդիտվին աւտյթներուն կազմը, կազմին ու իմաստին կապը և այդ աւտյթներու առաջացման ճամբան:

Նույնարմատ բառերու համեմատութեամբ կհանվին արմատներու հիմնական նախնական իմաստը և անոր կրած աստիճանական փոփոխութիւնները ըստ իմաստի: Կդիտվի ժողովուրդի գլխավոր զբաղումին և բառերու նշանակութեան մէջ եղած սերտ կապը:

Միևնույնատ բառերուն, աւտյթներուն և դարձվածքներուն տարբերութիւնները կընդգծվին: Կդիտվին բառերուն կրած հնչյունները, հնչական սղումներն ու անկումները և աւտոնց բերած իմաստի փոփոխումները: Կվերլուծվին մաշված ու աղճատված կամ ձուլված հնչյուններ ունեցող բառերը ըստ արմատի, ու կճշդվին հին իմաստները: Կգատվին օտար բառերը, որոնք հայացած են և ինչ ձևով. կգատվին օտար բառերը, որ կգործածվին, բայց դեռ չեն մարսված մայրենի լեզվին կողմե: Ո՞ր լեզուներեն կուգան, ի՞նչ տեսակի բառեր, ինչո՞ւ:

4) Գրութեան տեսակետեն, իբրև գեղագրութիւն, միշտ պետք է պահանջվի, որ ինչ ալ գրելու ըլլան, գրեն միշտ ու անպայման մաքուր, լրիվ և հստակ ընթեռնելի: Դժվար կարդացվող գրութիւն-

նները, անմաքուր տետրակները, թղթի կտորներու վրա գրված բանները, ինչպես և արագագրությունը, կրճատ գրությունը և զանազան զարդագրություններ մշտապես պետք է հալածվին. գրվածք մը միշտ ուրիշին ներկայացվելու համար է սովորական պայմաններու մեջ և միշտ պետք է ըլլա ներկայանալի ու պարկեշտ վիճակի մեջ և ամենեն առաջ դյուրին ընթեռնելի: Այս պահանջներեն որևէ մեկուն դեմ մեղանչող գրությունը պետք է վերադարձնել աշակերտին իբրև չկատարված աշխատանք և պետք չէ առնվի ուշադրության:

Թելադրությունը ուղղագրական իբրև վարժություն բարձր նախակրթարանի առաջին երկամյակին որոշ դեր մը կրնա ունենալ, բայց պետք է ջանալ, որ դասեն դուրս կատարվի: Ուսուցիչը կնշանակե թելադրելի կտորը և տղաքը դուրսը իրարու կթելադրեն ընկեր ընկերոջ կամ խումբերով, կամ նույնիսկ ամբողջ դասարանով, և վերջը ամեն մեկը գրքին վրա իր գրածը կսրբագրե: Դասարանական թելադրություն ուսուցչի շրթունքեն կրնա տեղի ունենալ տարվա ընթացքին մեկ-երկու անգամ տղոց ուղղագրական կարողությունը փորձելու համար և թերի կողմերը լրացնելու ջանքով: Թելադրությունը բարձր նախակրթարանի վերջին երկամյակին այլևս դեր չունի:

5) Բարձր նախակրթարանի հիմնական գրավոր աշխատանքը շարադրություններն է. շաբաթը անգամ մը տղաքը պետք է շարադրություն մը գրեն. շարադրություններուն նյութը պետք է առնվի աշակերտներու շրջապատեն, զանազան դեպքերու, եղելություններու և պատահարներու պատմություններ, տեղերու, բնության, արվեստներու, աշխատանոցներու, արհեստավորներու, զանազան դեմքերու նկարարություններ, տղոց ապրումներեն, մտածումներեն հուշերեն ու ձգտումներեն առնված նյութեր, վերջապես իրենց սորված գիտական աշխատանքներեն կամ գրական ընթերցումներեն քաղված նյութեր: Բոլոր նկարագրությունները՝ իրական, բոլոր ապրումները՝ անկեղծ ու ճշմարիտ, բոլոր գիտական նյութերը՝ բարեխիղճ ճշդությամբ: Ոչինչ չինծու, անճիշդ, անհոգ ու անխնամ: Լավ է գրեն երես մը, երես ու կես, քան գրեն չուզած կամ չկրցած բաներ երկար-երկար երեսներով, և ընդհանրապես դպրոցական

այս չարադրութիւնները երբեք պետք չէ անցնի տետրակի երեք-չորս թիվլին անդին:

Տղաքը պետք է վարժվին անգամ մը իրենց մտքերը կենդրոնացնել դրվելիք նյութին վրա և անմիջապես գծել ընդհանուր ծրագիր մը, այսինքն որոշել դրվելիք հիմնական կտորներուն հաջորդականութիւնը և անցնիլ սևագրութեան. սևագրութիւնը ավարտելեն ետքը լավ է մեկդի դնել մեկ-երկու օր, ետքը կարդալ վերստին իր գրածը, սրբագրել, կոկել, լրացնել և անկե ետքը միայն արտագրել չարադրութեան տետրակին մեջ և արտագրել միշտ իմաստին հետևելով, միշտ ոճին ու լեզվին ուշադիր և առանց շտապելու: Խորհելով ու կշռելով արտագրութիւնը խորացումն է գրութեան, արագ ու մեքենական արտագրութիւնը թեթևամիտ աշխատանք է, և սովորաբար լեցուն կըլլա թերիներով ու տափակ սխալներով:

Բոլոր տետրակները ուսուցիչը կհավաքե ու կտանի տուն ու թղթատելով թեթևակի աչքի կանցընե. այս ստուգումը անհրաժեշտ է. աշակերտները պետք է գիտնան, որ ուսուցչի աչքն ու միտքը անցած է անգամ մը իրենց բոլորի ալ գրածներուն վրայեն, բայց այդ բոլոր տետրակները ամեն անգամ մեկիկ-մեկիկ սրբագրելու կարիք չկա. ամեն անգամ ուսուցիչը կսրբագրե միայն երեք տետրակ կամ չորս, այսինքն մեկ-երկու անգամ կկարդա՝ մեծ ուշադրութեամբ հետևելով մտածման ընթացքին, մասերու մշակման և դրվածքի ամբողջականութեան. կհետևի հատուկ լեզվի ու ոճի անհարթութիւններուն, անտեղութիւններուն, ինչպես և ունեցած առավելութիւններուն: Տետրակի լուսանցքին վրա իրեն համար կինշանակե իր դիտողութիւնները և դասարանին մեջ բոլորի առաջ կկարդա կամ մաս-մաս, կա՛մ ամբողջը, մատնանիշ կընե կա՛մ փնտրել կուտա թերին ու սխալը, ճշդել կուտա կամ կբացատրե ինքը, թե ինչպես պետք է և՛ դատողութեան տեսակետեն, և՛ շարադրական կողմերեն, և՛ ոճի ու լեզվի տեսակետեն: Մեծ արվեստ է այս դասարանական սրբագրութիւնները ամբողջ դասարանի կենդանի հետաքրքրութեան առարկա դարձնելը, որ ամենքը լարված հետևին ու մասնակցին և ո՛չ թե անտարբեր նստին մեկ անկյունը ուսուցչին ու տետրակին տերը թողնելով երես երեսի:

Անհատական շարադրության անհատական սրբագրություն մըն է ասիկա, որ կղառնա դասարանական վերլուծման նյութ, դասարանական ուսուցման միջոց և կուտա առիթը շարադրական ամեն տեսակի մեծ ու փոքր հարցերը քննության քաշելու և մանրամասն բացատրելու:

Տետրակին վրա կարմիր մելանով սրբագրություններ կատարել և մեկ-երկու խոսքով տետրակը տիրոջ վերադարձնելը չնչին օգուտ չունի ամբողջ դասարանի համար. կորսված աշխատանք մըն է ուսուցչի կողմեն: Իսկ այս մանրամասն դասարանական բացատրությունն ու քննությունը, շաբթե շաբաթ կրկնված, լուրջ աշխատանք է լուրջ հետևանքով:

Ահ ալ պետք է աչքի առաջ ունենալ, որ ուսուցիչը երբ կհարկադրենք անպատճառ ամեն անգամ բոլոր տետրակները սրբագրելու, այնքան կքեռնավորվի սրբագրելի տետրակներով, որ անկարող կըլլա լուրջ ու բարեխիղճ կերպով այդ սրբագրությունները կատարելու և կխուսափի ամեն շաբաթ շարադրություն տալե. կձգձգե երկու շաբաթը անգամ մը, եթե հնար է՝ ավելի ուշ: Մինչդեռ շարադրել սորվելու առաջին պայմանը հաճախ շարադրելն է. հաճախ շարադրություն գրողը արդեն քիչ-քիչ ինքզինքը կսրբագրե, նույնիսկ առանց ուսուցչի մասնավոր միջամտության:

6) Քերականությունը իբրև սիստեմատիկ ու ամբողջական գիտություն կավանդվի բարձր նախակրթարանի չորս տարիներու ընթացքին. առաջին երկամյակին առանցքն է հոլովումն ու խոնարհումը, վերջին երկամյակին՝ նախադասության ուսումը և բառակազմություն:

Ավանդումը հիմնված է ինքնաշխատության վրա, աշխատանքին գլխավոր մասը կկատարվի դասե դուրս. դասագրքի վրա կկարդան ուսուցչի ցույց տված գլուխն ու հատվածը, ամեն աշակերտ ինքն իր համար, և կկատարե այդ հատվածին կապված բոլոր գրավոր վարժությունները. այս աշխատանքի վերջնական ստուգումն է միայն, որ կկատարվի դասարանին մեջ խմբական աշխատանքով, որու ընթացքին ուսուցիչը կփորփրե նյութը և կուտա իր լրացուցիչ բացատրությունները: Եվ յուրաքանչյուր գլուխ կամ մեկ խոշոր ամբողջություն ավարտելեն ետքը լավ է, որ շարադրության մը նյութ դարձնեն իրենց սորված նոր լեզվական

օրենքները նոր խմբագրությամբ, նոր օրինակներով և համեմատելով ու կապակցելով նախորդ տարածներուն:

7) Բարձր նախակրթարանի մէջ հաճախ խոսքի կուգան նաև լեզվական մյուս տեսական կողմերը, ո՛չ առանձին ժամերով և ո՛չ սիստեմատիկ ավանդությամբ, բայց հոս ու հոն մէջեմէջ իբրև փոքր և ուրույն ամբողջություններ, իբրև դասավանդության ինքնամփոփ ու լրացուցիչ մասեր:

Գրականութենեն, այսինքն բանահյուսության տեսութենեն անհրաժեշտ է, որ բացատրենք՝ 1) ի՞նչ բան է բանահյուսությունն ու գրականությունը, 2) գրականության երեք տեսը՝ գործնական, գեղարվեստական ու գիտական գրության տարբերությունները, 3) գիտական գրության ու գիտական երկերու հիմնական առանձնահատկությունները, 4) գեղարվեստական երկերու հիմնական տեսակները, 5) իրականի և ո՛չ իրականի հարցերը գեղարվեստական գրականության մէջ և 6) տաղաչափության էությունը, չափ, հանգ, տուն:

Գրապատմական տեսակետեն, այսինքն գրականության պատմութենեն 1) պետք է տալ հոդվածի հեղինակին կենսագրությունը իր էական գծերով, 2) իր ժամանակի ու տեղի կենդանի պատկերացումը, որ հեղինակի դեմքը լուսավորվի, և կարդացված կտորի ըմբռնումը խորանա, 3) պետք է տալ ամփոփ ուրվագիծ մը իր գրական գործունեության, իր աշխատասիրության, իր ամենեն կարևոր երկերը, և ինչո՞ւ են կարևոր, ինչո՞վ և 4) օգտվելով հարմար քնարական կամ վիպական կտորներե և համեմատելով հեղինակի իրական կյանքի պայմաններուն հետ՝ ցույց տալ, թե ինչպե՞ս կատեղծվին գրական-գեղարվեստական երկերը և թե ինչո՞ւ մեզի կգրավեն:

Լեզվաբանական տեսակետեն անհրաժեշտ է հանգամանորեն խոսիլ լեզվի ծագման մասին, լեզվի զարգացման ընական օրենքներու մասին, լեզուներու դիտական ու աշխարհագրական բաժանման մասին, մայրենի լեզվի բռնած տեղի ու դիրքի մասին լեզուներու այդ ճյուղավորության մէջ: Պետք է մատնանիշ ընել ամեն անգամ մեր և քույր լեզուներու բառական ու քերականական նմանությունները և այդ նմանություններուն մէջ եղած տարբերությունները: Պետք է դիտել տալ օտար բառերու, ձևերու և ատյլներու կրած փոփոխությունները , երբ կյուրացվին ու կհայանան:

Ե. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԱՎԱՆԴՈՒՄԸ ԼՍԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԵՋ

Նեղ մտքով լեզվի ուսուցումը լրացած պիտի նկատենք բարձր նախակրթարանի մեջ. լսարանական առաջին երկու տարիներուն տեղի ունեցող մայրենի լեզվի դասերը կդառնան էապես երկու կետի շուրջ՝ գրական վերլուծութիւն և շարադրութիւն:

Մինչև հիմա կարդացվող ու քննվող հոդվածներուն մեջ ուշադրութիւնը էապես կեդրոնացած էր գրութեան լեզվական կողմերուն վրա. հիմա, ընդհակառակը, ծանրութեան կեդրոնը լեզվականեն կանցնի դեպի գրականը:

Մայրենի գրականութեան լավագույն էջերը կկարդանք դասարանեն դուրս թէ դասարանի մեջ և կջանանք հանել, թէ ո՞րն է հեղինակի նյութը, ի՞նչ ըսել կուզե, ինչի՞ կձգտի, ի՞նչ դեմքեր կգծե, ինչպե՞ս կգծե, դեպքերուն ընթացքը ինչպե՞ս կչարժի, ի՞նչ կյանքե է առած, ի՞նչ չափով իրական, որո՞նք են իր մտածելու և արտահայտելու առանձնահատկութիւնները, ի՞նչ լեզու ունի, ի՞նչ ոճ:

Ասոնքն մեկ կողմեն ճանչնալ, դիտել ու վայելել կսորվեցնենք մայրենի գրականութեան լավագույն հեղինակներուն ընտիր երկերը և մյուս կողմեն ալ միաժամանակ այդ փոքրիկ օրինակներուն վրա ցույց կուտանք, թէ ինչպես պետք է մոտենան գրական երկերուն և ի՞նչ ու ինչպե՞ս պետք է փնտրեն այդ երկերուն մեջ:

Այս աշխատանքը անշուշտ շատ կդյուրանա, երբ ուսուցիչ ու աշակերտ ձեռքի տակ ունենան մայրենի գրականութեան ամենեն արժեքաւոր էջերովն հյուսված ու բանահյուսական ու գրապատմական տեղեկութիւններով լուսաւորված հմուտ հավաքածու մը, ուր բերված ըլլան նաև օտար գրականութիւններե կարևոր ու դասական կտորներու հայող թարգմանութիւններ, որ գրական ստեղծագործութիւններու մասին կազմվելիք գաղափարը հնար եղածին չափ լրիվ ըլլա ու բազմակողմանի: Այս տեսակ քաղ ըրած ու մշակված մատյանի մը չգոյութեան պարագային բնականաբար ուսուցիչը ստիպված է հեղինակներու ամբողջական գրքերուն մեջեն ինքը էջեր ընտրելու դասարանական ու դուրսի աշխատանքներուն համար:

Այս աշխատանքներուն ինքնին կհյուսվին բազմատեսակ բանավոր ու գրավոր մանր ու մեծ ուսումնասիրություններ գրաբանական, լեզվական, ոճային, կենսագրական ու պրապատմական, որոնք կմշակվին այս ու այն աշակերտի կողմեն, կա՛մ մեկ-երկու խումբերով, կա՛մ ամբողջ դասարանի համար պարտադիր կերպով. այդ բոլոր ուսումնասիրության ենթարկված նյութերն ալ վերջը կդառնան ընդհանուր քննության ու վերլուծության առարկա:

Այս գրական ուսումնասիրական գրություններեն անկախ ամեն աշակերտ երկու շաբաթը անգամ մը պետք է ունենա իր ընթացիկ շարադրությունները, որոնց նյութը ընդհանրապես կուտա ուսուցիչը, կա՛մ պարտադիր նյութ մը ամենուն համար, կա՛մ որոշ տեսակի նույնացնող նյութեր մեկ-երկու հատ, ամեն մեկը կընտրի իր ուզածը, կա՛մ վերջապես ուսուցիչը կհայտնե միայն նյութին ցեղն ու տեսակը, նյութը կընտրե այդ սահմանին մեջ ինքը՝ աշակերտը: Ուսուցչի ընտրած նյութերն ու ցեղերը պետք չէ ըլլան պատահական, ինչ որ միտքը եկավ, ո՛չ ալ վերացական-դատողական փիլիսոփայություններ, այլ գործնական, պիտանի, դիտական, պատմական, նկարագրական բոլոր ձևերը կարդով պետք է գան գործադրության՝ միշտ հիմնվելով դիտողության և կյանքի իրականության վրա, և պետք է պահանջվի, որ վարժվին կարճ ու կուռ գրելու, լուրջ մտածումով, հնար եղածին չափ լրիվ ու ամբողջական: Գրության ամենեն հասարակ ու անփույթ ձևը էջեր ու էջեր լեցնելն է պարապ դատողություններով, անհամ ու ավելորդ նկարագրություններով և անտեղի անձնական-զգացական զեղումներով. ամենեն արժեքավորը կուռ ու խիտ գրելն է, մեկ-երկու էջի մեջ բոլոր ըսելիքը ամփոփած, ուրիկ ոչինչ պակսեցնել չես կրնար առանց նյութի ամբողջության վնասելու, և ուր չկա բուն նյութեն որևէ շեղում:

Սրբագրությունը կկատարվի ամեն անգամ միայն երկու-երեք տետրակի վրա, բայց խիստ մտածված և ետքն ալ դասարանի առջև մանրամասն վերլուծված, բացատրված և հարստացած ու ուսուցչի բերած օրինակներով ու խորհուրդներով:

Երրորդ լսարանը չունի այլևս լեզվական այս վերջին դասերն ալ. ընդհանուրի համար չկա այլևս մայրենի լեզվի դաս: Բայց գրական լեզվական ճյուղին հետևող աշակերտները կունենան

չաբաթական չորս պահ գործնական-լեզվական աշխատանքներ՝ երկու ժամը հատկացված գրաբարի ուսումնասիրության, երկու ժամն ալ մեր բարբառներու ուսումնասիրության:

Ուսուցչի ղեկավարությամբ աշակերտները որոշ գրքերու վրա կյուրացնեն գրաբարի քերականությունը, իրենց ջանքերով կթարգմանեն կտորներ գրաբարե աշխարհաբար: Նմբական աշխատանքներու ատեն արագ կստացվի այդ թարգմանությունները. մնջևմեջ կարելի է նաև աշխարհաբարը վերածել գրաբարի՝ տարբերությունները ավելի ճիշդ ու ավելի խոր ըմբռնելու համար:

Գրաբարի հավաքական-գործնական աշխատանքներուն առանցքը հին գրաբար հեղինակներե ընտրված կտորներ միասին կարդալ ու միասին խորանալն է անոնց ընթերցման մեջ:

Այս թե՛ դուրսի և թե՛ միասին կատարված աշխատանքներուն նպատակն է՝ 1) գրաբարը ազատ կարդալ ու հասկնալ, 2) գրաբարի քերականությունը, բառագիտությունը, բառակազմությունը, ատյմաբանությունը, արտահայտության ձևերը չարունակ համեմատության դնել աշխարհաբարի հետ՝ լեզվի զարգացման և փոփոխման օրենքները հանել ջանալով և 3) ծանոթանալ գրաբար հեղինակներուն, անոնց գործին, նյութին, ոճին ու ոգիին:

Նման ձևով կկատարվի մեր արդի կարևոր բարբառներուն, ինչպես նաև միջնադարյան աշխարհաբարի և վերջին դարերու աշուղական լեզվին ուսումնասիրությունները: Տղաքը իրենք պիտի հանեն ատոնց քերականությունները, ինչպես և պետք է կազմեն մեր գրական գործածություններեն տարբերվող անոնց բառերը, արտահայտություններն ու ձևերը, ինքնահատուկ շաղկապներն ու մակբայները, մակդիրներու յուրահատուկ գործածությունը և այլևայլ ինդրահատկությունները և ընդհանրապես ժողովրդական ոճի բոլոր առանձնահատկությունները:

Այս բոլոր դուրսը առանձնակի կատարված աշխատանքներուն արդյունքը խմբական պահերուն կհամեմատվի, կքննվի և իր վերջնական եզրակացության կբերվի ընդհանուր աշխատակցությամբ:

Այս բարբառական աշխատանքներուն նպատակն է՝ 1) ազատ կարդալ, հասկնալ և վայելել կարողանալ այդ բարբառներով

գրի առնված երգերը, հեքիաթները, դյուցազնավեպերը և այլ նշխարները, 2) Հոլովման, խոնարհման, բառակազմական և բառահյուսական տարբերությունները ընդգծել և համեմատության դնել մեր գրական լեզվին հետ և 3) Հանել այդ բոլորի մեջեն աշխարհաբարի բուն կենդանի ձևերը և աշխարհաբար ոգին՝ օգտագործելու համար մեր նոր գրական լեզվի բարձրացման, երբացման ու աղնվացման համար:

Երկու կամ մեկ պահ ալ գրական ճյուղի համար քերականության դիտական-համեմատական ուսուցումը հայ լեզվի:

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՄԸ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

I. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆ

Օտար լեզվի ուսուցումը մանկապարտեզի մեջ անշուշտ որ բնաւ մըն է հավելվածական, ինչպես և կյանքի մեջ, բայց քանի որ հարկ է նոր սերունդին սորվեցնել օտար լեզու մը, գերադասելի է ամեն տեսակետե, որ այդ ուսուցումը շուտ սկսի և գործնական ճամբով, մանկական տարիներեն, ուրեմն և մանկապարտեզեն: Նախ՝ մանուկները մեծ դյուրությամբ կյուրացնեն այդ տարիքին մեջ օտար լեզուն հասկնալը և այդ լեզվով արտահայտվիլը, այսինքն օտար լեզվով խոսիլը, որ ամենեն էականն է և ամենեն ալ դժվարը, եթե օտար լեզուն ավելի հասուն տարիներուն սորվիլ կուզենաս: Երկրորդ ալ՝ երբ անգամ մը մանկական տարիներուն մեջ այդ հիմքը դրված է, հաջորդ դպրոցական տարիներուն շատ ավելի հաջող կերպով և շատ ավելի լուրջ ու արդյունավոր ձևով կարելի է կառուցանել այդ հիմքին վրա օտար լեզվի տեսական ու գրական մշակումը, ճիշդ մայրենի լեզվի նման:

Մանկապարտեզը լայնցած ու քիչ մըն ալ մասնագիտացած ընտանիք մըն է, բազմամանուկ ընտանիք մը, և ինչպես բոլոր հարաբերություններու և ներքին կյանքի կենցաղին մեջ ընտանեկան վերաբերումն ու ոգին կտիրապետեն, այնպես ալ ուսուցման եղանակներուն մեջ, այնպես ալ մասնավորապես օտար լեզվի ուսուցման մեջ: Օտար լեզուն պետք է սորվեցնել փոքրիկներուն մանկապարտեզին մեջ ճիշդ ինչպես ընտանիքի մը մեջ, երբ ըն-

տանիքի անդամներեն մեկը, կամ ընտանիքի մեջ ապրողներեն մեկը օտար մըն է կամ օտարախոս մը:

Ախինքն մանկապարտեզի մշտական ու հիմնական վարժուհիներեն մեկը միշտ ու բացառապես պետք է խոսի այդ օտար լեզվով կամ ուղղակի օտար մը պիտի ըլլա իր ծննդով, իր ընտանեկան ու դպրոցական կրթությամբ, մեծցած իր լեզվին ու իր ժողովուրդին մեջ, կամ գեթ հայ մը, օրինակ, որ իր մանկական ու դպրոցական տարիները օտար կրթությամբ է անցած ու մեծցած: Ուղղակի օտար մը ըլլալը երկու մեծ առավելություն ունի. նախ՝ իր հնչյուններն ու արտահայտության ձևերը կըլլան հարազատ ու գուտ. երկրորդ՝ բնական կերպով ստիպված է միայն ու միայն իր լեզուն խոսելու միշտ, որչափ ալ երեխաներուն կողմե դժվար հասկցվելու և չհասկցվելու անախորժության մեջ գտնվի: Եթե հայ վարժուհին ընտիր ու տանելի արտասանություն և զսպել կարողանա իր ջիղերը, որ երբեք ոչ մեկ պայմանով մանկապարտեզի մեջ հայերեն չխոսի ո՛չ պզտիկներուն հետ, ո՛չ իսկ իր պաշտոնակից ընկերներուն հետ պաշտոնական ժամերուն, անշուշտ որ վարժուհիի հայ մը ըլլալը գերազասելի է. ազգային հզոր կապերով կապված կըլլա իր միջավայրին, ազգակից ընտանիքներուն, մանուկներու հոգիին և իր պաշտոնավարած հաստատության:

Օտար լեզվի վարժուհին մանկապարտեզի մեջ իր աշխատանքով ու դիրքով բոլորովին նման է իր մյուս ընկերուհիներուն. անոնց պես կվարե խաղերը, ձեռական աշխատանքները և մասնակից է ամեն կերպով այդ մեծ ընտանիքի ամբողջ առօրյա կյանքին. միակ տարբերությունը հոն է, որ ամեն բան կընե, ամեն բան կսորվեցնե և ամեն տեղ ու ամենուն հետ կխոսի իր օտար լեզվով:

Եթե աշակերտներուն թիվը մանկապարտեզին մեջ փոքր է, մեկ վարժուհին հերիք է, որ փոխնիփոխ օրվան ընթացքին բոլոր երեք կարգերուն հետ ալ խաղ ու զբաղում ունենա: Եթե աշակերտներուն թիվը մեծ է, անհրաժեշտ կդառնա, որ օտար լեզվի վարժուհին ունենա գոնե իր օտար լեզվի համար օգնական մը. վերջինս բնականաբար միշտ ու ամենուն հետ նմանապես պետք է խոսի օտար լեզվով և պետք է կատարե հարկ եղած ամեն տեսակի աշխատանքները կարգե կարգ, իբրև գլխավոր վարժուհին փոխարինող կամ անոր աշխատանքը շարունակող. մեկ-երկու տարիներու

փորձառութենն ու վարժութենն ետքը ինքն ալ կղառնա հետզհետե անկախ ու հավասար, որով հաստատուությունը կունենա կամ կրնա ունենալ երկու օտար լեզվի վարժուհի:

Մանկապարտեզի առաջին կարգի փոքրիկները այդ երկու վարժուհիներու հետ ունեցած պահերուն, խաղերուն, պտույտներուն և ամեն չփման ատեն կլսեն օտար լեզուն և բնական կերպով իրենք ալ կրկնելով ու ճիզեր ընելով ստիպված են անոնց հետ այդ օտար լեզվով խոսելու: Դիտմամբ հնար եղածին չափ պարզ ու սովորական աստուիյան ձևեր կընտրվին, և կկրկնվին միևնույն բանները միևնույն ձևով, որ արագ ու դյուրին յուրացվին փոքրիկներեն: Օտար լեզվի վարժուհիները միշտ պատրաստակամ դեմ կուգան փոքրերու ճիզերուն, ըսելիքը անոնց շրթունքներուն կդնեն, կրկնելով ու կրկնել տալով: Հետզհետե կպատմեն անոնց մեկ-երկու պարզ նախադասուիյուններով կազմված փոքրիկ մանկական զվարթ պատմուիյուններ, կատակներ, մանկական ոտանավորներ, որոնք խմբովին կամ բերնեն բերան կկրկնվին, դուց կըլլան ու կերգվին:

Երկրորդ կարգի փոքրիկներուն հետ այս պզտիկ պատմուիյուններն ու անոնց վրան ու չուրջը կապվող խոսակցուիյունները հետզհետե սիսթեմատիկ ձև կառանան. ամեն օր, օրական որոշ պահ մը կվամբն վարժուհին իր չուրջը՝ ներսը, դուրսը, պարտեզը՝ «պատմուիյուն պատմելու». նախապես ծրագրած կըլլա, թե ինչ բառեր, ինչ ըսելու ձևեր, ինչ դարձվածքներ պիտի տա այդ օրը իրեև նորուիյուն, իրեև նոր քայլ՝ միշտ աչքի առաջ ունենալով այդ ճամբով արդեն իր ավանդածները և հաջորդ եռևեն գալիքները: Սիսթեմը վարժուհիի դեկավարութեան համար է, թե չէ փոքրիկներուն համար նոր պզտիկ կատակ մըն է, նոր պզտիկ երգ մը կամ փոքրիկ սիրուն պատմուիյուն մը, ուրիշ ոչինչ: Թե՛ այդ նոր սորվեցուցած մանր կտորները և թե՛ մանավանդ ատոնց հետ կապված բառերն ու արտահայտուիյունները ալ անկե ետքը ամեն առիթե օգտվելով շարունակ կկրկնեն և կրկնել կուտա: Հաճախ կթղթատե անոնց հետ պատկերազարդ գրքեր ու կզրգռե փոքրիկները խոսեցնելու: Արդեն իրենց սենյակի պատեն կախված կըլլա միշտ մեկ-երկու պատկեր հատուկ նպատակով ընտրված: Եվ

խաղերն ու ձեռական աշխատանքներն ալ իրենց կողմեն նյութ ու առիթ կուտան թե՛ խոսակցական մարզանքի և թե՛ նոր բառերու ու դարձվածքներու:

Մանկապարտեզի երրորդ տարին աշխատանքը անշուշտ շատ ավելի կխորանա: Խաղերու, զբաղումներու և պտույտներու և պարտեզի աշխատանքներու ատեն օտար լեզուն հիմա ավելի հաստատ կլսվի, փոքրիկները արդեն «կկոտրտեն» օտար լեզուն. շատ անգամ միջնորդ են ու թարգման մանկապարտեզի առօրյա կյանքին բերումով. մեկուն հայերեն ըսածն ու ուզածը պիտի գան, հայտնեն օտար լեզվի վարժուհիին օտար լեզվով և անոր տված պատասխանը պիտի տանին, հայտնեն հայերեն լեզվով. և վարժուհիները անշուշտ այս խաղը հաճախ կընեն: Նախորդ տարիներուն պատմությունները՝ արձակ ու ոտանավոր, հիմա ալ կչարունակեն հետզհետե ավելի երկարաշունչ դառնալով և իրենց արտահայտությամբ ալ քիչ մը ավելի ազատ: Թե՛ բառերը, թե՛ ասույթ ու արտահայտության ձևեր օրե օր կավելնան ու կհարստացնեն լեզվի հիմնական պաշարը:

Պատկերներու գործածության կմիանան ձևացում խաղերը, իբրև լեզվի հարստացման միջոց. «Հյուր» կխաղան, «կայարանը ճամբու դնելու կերթան», կխաղան «կոշկակար», որուն կոշիկ պատվիրելու կերթան, ահա՛ նստած են «հանրակառքի մեջ» ու դեմ դեմի կխոսակցին, իբրև երկու ուղեկից: Այս ու ասոնց նման անվերջ խաղերուն իմաստն է ստեղծել այդ վիճակները և այդ վիճակներուն մեջ գործածվող ամենեն անհրաժեշտ բառերն ու ասույթները ըսելու ու կրկնելու առիթը ընծայել: Օրինակ՝ ներս մտնող հյուրը ի՞նչ կըսե, տան տերը ի՞նչ կպատասխանե, սովորաբար ինչի՞ մասին կխոսին, օրինակ, ինչե՞ր կըսեն օդի մասին: Ի՞նչ կխոսի կոշիկ պատվիրելու եկողը, ինչե՞ր կըսե կոշկակարը, ինչպե՞ս չափը կառնե, ի՞նչ պատվերներ և ինչպե՞ս կըժնվին իրարմե: Օրինակ, նստած են նավակը ու կթիավարեն երևակայությամբ. ինչքա՜ն նյութ, ինչքա՜ն բառ ու արտահայտություն, ուրկե վարժուհին ամենեն ընթացիկները կընտրե, կըսե և ըսել կուտա: Թե՛ երևակայության սքանչելի խաղ է և թե՛ լեզվի զարգացման: Ի՞նչ ըսել կուզե, որ մեջեմեջ այս խաղերը կարելի է և իրականության վերածել, կապել իրական այցի մը, պտույտի մը, կոշիկի իրական

պատվերի մը, որով խաղն ու լեզուն կրկնակի հրապուրիչ կդառնան:

Ուրեմն մանկապարտեզի մեջ ո՛չ դիր, ո՛չ դիրք և ո՛չ քերականութիւն օտար լեզվի ուսուցման համար: Միայն վերջին տարվան վերջին ամիսները, երբ արդեն դիրերուն մեծամասնութիւնը կճանչենան, արդեն կկարդան ու կգրեն հինգ-վեց ամիսե ի վեր, լավ է իբրև առաջ նախապատրաստական աշխատանք մը տալ անոնց քանի մը օտար տառերու դրութիւնն ու ընթերցումը:

Ամենեն հարմար ձևն է, երբ դրատախտակին վրա ուսուցիչը կգրե ամենեն պարզ ձայնավորը՝ i, կըսե, որ սա օտար լեզվով ի է, քովը կդնե հավասարութեան նշան մը ու կգրե հայերեն ի; Տակը կգրե նորեն քանի մը i-եր տարբեր տառերով իրարմե զատված և տղոց ալ գրել կուտա: Քանի մը դաս վերջը նուն ձևով կգրե, կկարդացնե ու գրել կուտա a ձայնավորը, վերջը՝ e, վերջը՝ o: Երբ արդեն վստահ կգրեն ու կճանչենան այդ ձայնավորները, կընտրե բազաձայններեն մեկը՝ l, m կամ n և, միացնելով արդեն սորված ձայնավորներուն, կկարդա ու կարդացնել կուտա, օրինակ՝ ma, mi, mama, mimi՝ միշտ հայերենի պես երբեք բազաձայնը առանձին չհնչելով, միշտ ձայնավորին հետ ձույլ, իբրև վանկ:

Պետք չէ ձգտիլ ամբողջ այբուբենը լրացնելու, պետք չէ չտապել գրքի ու ընթերցման անցնելու: Ասոնք հաջորդ տարվան գալիք աշխատանք է. մանկապարտեզի այս գրութեան փորձերը քիչ մը խաղ է հաճելի, քիչ մը վարժութեան ձեռքի, քիչ մը համեմատութեան հայերեն գրերուն, քիչ մըն ալ բերանփոխ օտար լեզվի միշտ բանավոր աշխատանքներուն:

II. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆ ՏԱՐԲԱԿԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՄԵՋ

Ա. ԱՅԲՈՒԲԵՆԻ ՍԻՍԹԵՄԱՏԻԿ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Եթե փոքրիկը մանկապարտեզ չէ եկած և հոն օտար լեզվի նախնական բանավոր ծանոթացումը ձեռք չէ բերած, բնականաբար չի կրնար հետևիլ տարրական նախակրթարանի օտար լեզվի աշխատանքներուն, որոնք հիմնված են այդ անհրաժեշտ նախապատրաստութեան վրա: Այս պատճառով ալ մանկապարտեզ չունե-

ցող դպրոցական հաստատութիւնները ստիպված են նախապատրաստական կարգ մը ունենալու՝ «վարժոց» մը, որ կհամապատասխանէ մանկապարտեզի վերջին տարվան, քիչ մը ավելի դպրոցացած: Եթե այդ վարժոցը չունենա և օտար լեզուն անմիջապես նախակրթարանեն առնէ իր սկիզբը, մեծ բեռ մը կդառնա օտար լեզուն տարրական նախակրթարանի չորս տարիներուն մէջ՝ պետք եղածեն ավելի տեղ ու աշխատանք խլելով, և գործնական կողմը մինչև վերջն ալ կաղ կմնա և ընդհանրապես երկու տարվան չափ ետ կմնա իր ծրագրեն:

Վարժոցին մէջ առնվազն օրական երկու պահ պետք է հատկացվի օտար լեզվին, ուր աշխատանքը կտարվի մանկապարտեզի մէջ նկարագրված կերպով, անշուշտ քիչ մը ավելի խտացած. և մոտավորապես մանկապարտեզեն եկողներու օտար լեզվի պատրաստութիւնեմբ հաջորդ տարին կմտնե տարրական նախակրթարանի առաջին տարին:

Նախակրթարանի առաջին երկամյակը օտար լեզվի ամեն տեսակի աշխատանքներուն համար պետք է հաշվել շաբաթական ութը պահ. հաջորդ երկամյակին կարելի է բավականանալ շաբաթական յոթը պահով:

Առաջին տարվան երկու-երեք շաբաթները կնվիրվի այբուբենի յուրացման աշխատանքներուն: Ամբողջ գրել-կարդալ սորվեցնելու ուսուցումը պետք է կատարել գրատախտակին վրա. ուսուցիչը կարտասանե ու կգրե, իր գրածը արտասանել, այսինքն կարդացնել կուտա, տղաքը կարտագրեն գրատախտակեն, վերջն ալ ուսուցիչը նույն հնչական տարրերով, բառեր կուտա թելադրութիւնեմբ: Այբբենարանի գործածութիւնը ավելորդ է. թե՛ աշխատանքը շատ կձգձգվի և թե՛ մեր ուզած այբբենարանը չեք կրնար գտնել. մենք լեցուն կըլլա տղոց համար անծանոթ բառերով. եթե այդ բոլոր բառերը բացարձակ բացատրել ուզենք, կդառնա շատ անտեղի ու անհամ աշխատանք մը, եթե կարդացնենք ու գրել տանք, անցնինք առանց հասկնալու, կդառնա անօգուտ ու չոր աշխատանք մը:

Կարդալ-գրելու արվեստին յուրացումը կկատարվի մայրենի լեզվի դասավանդման մեջ բացատրված եղանակով, միայն շատ ավելի արագ ու թեթև, քանի որ տառի, հնչյունի, ընթերցման ու

գրութեան էութիւնը, ինչպես և դասերուն տարրերը ծանոթ են փոքրիկներուն թէ՛ մայրենի լեզուի այբուբենին և թէ՛ մանկապարտեզի վերջին ամիսներու իրենց նախնական վարժութիւններին:

Ամենեն արագ ու գործնական ձևն է, որ գրենք գրատախտակին վրա բոլոր պարզ ձայնաւորները. տղաքը կկարդան, կարտագրեն ու կգրեն թելադրութեամբ: Ուրկե եաքը որոշ դասակարգումով հետզհետե դասի դաս և մեկիկ-մեկիկ կաւելին պարզ բաղաձայնները և վերի ձայնաւորներուն հետ եաևեն ու առջևեն կցվելով՝ կկազմեն միավանկներ, կկարդան, կգրեն արտագրութեամբ ու թելադրութեամբ և կամաց-կամաց նաև երկվանկ բառեր իրենց ծանոթ իմաստով: Շուտով կլրանան պարզ բաղաձայնները, որոնք եվրոպական լեզուներուն մեջ անհամեմատ քիչ են, քան հայերենը:

Պարզ ձայնաւորներու և պարզ բաղաձայններու յաջորդումեն եաքը՝ ամենեն գործածական երկբարբառները և երկու գրով մեկ բաղաձայն մը ներկայացնող ձևերը: Բայց միայն ամենեն հաճախ գործածվող, գլխաւոր ձևերը. լեզուի բոլոր հնչական գրութիւնները սպառելու չանքը բոլորովին ավելորդ է այս նախնական աշխատանքի աստեն: Ավելի ուշ ընթերցարանի հոդվածներու ընթերցման միջոցին պատահած տեղը և իրենց պատահելու կարգովը պակաս մնացած և արտասովոր ընթերցումները հետզհետե կլրացվին. այդպես ալ շատ մը տառերու գրութիւնը, որոնք չեն կարդացվիր, բայց պետք է գրվին:

Այս բոլոր աշխատանքներու միջոցին բնականաբար պետք է խոսվի միշտ բացարձակապես օտար լեզուով: Եվ ամեն օր մեկ կամ երկու կես պահեր պետք է հատկացվի այս գրաւոր աշխատանքին. օրական մեկ կամ երկու կես պահեր ալ պիտի նվիրվի բանաւոր զուտ լեզվական աշխատանքներու, այսինքն պատմութիւններու, խոսակցութեան և փոքրիկ բանաստեղծական կտորներու. այս պատմութիւններն ու կտորները կանվին իրենց ընթերցարանեն, որով նախապատրաստական աշխատանք մը կդառնան և կդյուրացնեն ընթերցարանի առաջին էջերուն և կտորներուն ընթերցումը՝ իմաստի ամեն դժվարութիւն կանխորեն մեջտեղեն վերցնելով և ամբողջ ճիգը կենդրոնացնելով միայն կարդալու վրա:

Այս նախապատրաստական այբբենարանական աշխատանքին նպատակն է ուղղակի կանցնինք ընթերցարանին: Շատ պարզ լեզվով, հնար եղածին չափ մտածված հաջորդականությամբ նոր բառեր ավելցնող և արտահայտություններու վարժությունն ու սովորականութիւնը պահող փոքրիկ ու կենդանի պատմություններ, որոնց պատմելը դյուրին է, այսինքն որոնք բանի մը կամ գործողության մը հաջորդական նկարագրությունը կներկայացնեն:

Եվ ալ ասկե ետքը, ուրեմն մոտավորապես չորս տարի շարունակ, մինչև տղայական շրջանին վերջը, աշխատանքի հիմնական ուղղությունը նույն է, և որուն առանցքը կկազմեն ընթերցարանին հոդվածները:

1) Ուսուցիչը դասարանին մեջ կկարդա նոր հոդվածին առաջին մեկ-երկու տողերը, որ ամբողջություն մը կներկայացնե, կբացատրե իմաստը, բառերը, այսինքն կհասկցնե տղոց արդեն գիտցած բառերուն պաշարովը, ներկայացնելով և ցույց տալով, ինչպես որ պիտի ըներ հայերեն չգիտցող վարժուհի մը: Նույն կտորը նորեն կկարդա անգամ մը՝ տղոց ուշադրությունը հատուկ իր ընթերցման և արտասանության վրա դարձնել տալով:

2) Ուրկե ետքը կպահանջե, որ տղաքը կարդան, մեկ-երկու հոգի: Հարցնելով կջանա, որ ամենքն ալ հստակ ըմբռնեն կարդացածին իմաստը և բառերուն հիմնական արժեքը. քերականական որոշ ձևեր և արտահայտական որոշ նրբություններ կրնան շատ չիտակ չըմբռնվիլ, ինչ որ սովորական բան մըն էր նաև մինչև հիմա բանավոր խոսակցության միջոցին:

Վնաս չունի, ատիկա լեզվի զարգացման բնական ընթացքն է. ամեն նրբություն հետզհետե կհստակի. բավական է, որ կարդացած բառերուն ու կտորին իմաստը ըստ էության հասկնան. երբեք տղաքը բան մը պետք չէ կարդան կամ գրեն, երբ դեռ ըմբռնած չեն հասկնար: Կարդալ միայն կարդալու վարժության համար և գրել միայն ձեռքի վարժության համար, առանց գրածի իմաստը հասկընալու, հակառակ է կարդալ-գրելու ոգիին և ցամաք, մեռած ու անպետք աշխատանք մըն է: Այդ նույն վարժությունները միշտ կարելի է ընել տալ հասկցվող բառերով և արդեն խոսված նախադասություններով. օգուտը կըլլա կրկնակի և կենդանի:

3) Այս ձևով կկարդացվի, կբացատրվի և կարդալ կտրվի տղոց դասարանի մնչ ամբողջ Հոդվածի բոլոր 4-5 հաջորդական կտորներն ալ: Ուրկե ետքը տղաքը դուրսը պետք է կարդան ամբողջը քանի մը անգամ և անպատճառ արտասանելով և անպատճառ հետևելով միշտ կարդացածի իմաստին:

4) Հաջորդ դասին սերտած դասը կկարդան տղաքը նորեն, անշուշտ շատ ավելի վարժ ու իմաստալից: Ուսուցիչը կսկսի հարցեր տալ, որոնց պատասխանը կարդացվածի մեկ նախադասությունն է: Ամեն նախադասություն մեկ-երկու տեսակ հարցերու պատասխան կրնա դառնալ և պետք է դառնա: Այս աշխատանքը, որ երբեք պետք չէ խնայել կամ կրճատել, ամենեն առաջ բանավոր վարժության կծառայի, բայց միևնույն ժամանակ նաև բառերու և արտահայտություններու ավելի խոր ըմբռնումին շատ կնպաստի:

5) Տղոց կպատվիրվի, որ դուրսը իրենք իրենց և միշտ արտասանելով պատմեն ամբողջը. հաջորդ դասին ալ տղաքը պետք է պատմեն, և ինչքան գրքին նման ըլլա պատմածը, այնքան ավելի աղեկ: Տղոց պատմելու միջոցին ուսուցիչը հնար եղածին չափ քիչ պետք է միջամտե: Շարադրական անկանոնություններ, մոռացումները, ետ ու առաջը մատնանիշ կարելի է ընել ավարտելեն ետքը, հաճախ իր ընկերներու սրբագրությամբ, իսկ լեզվական սխալները ուսուցիչը անմիջապես պետք է ուղղե պարզապես ճիշդը ըսելով, որ բնականաբար կկրկնե աշակերտը, ուրիշ ոչ մեկ նկատողություն:

6) Շատ մը Հոդվածներ ու կտորներ պատմելու այս ձևերեն ետքը շատ դյուրին կըլլա գոց ընել տալը, բայց միշտ լայնասիրտ ու ներողամիտ վերաբերումով տղոց գոց ըսելու միջոցին. ուսուցչի պարտավորությունը բարյացակամ հուշարար մը դառնալն է: Մնչևմնչ մեծ օգուտով և հաճույքով կարելի է վերադառնալ հին Հոդվածներու ընթերցումին կամ պատմվելուն կամ գոց ըսվելուն: Հարմար նյութերը կարելի է արտասանել տալ խոսակցության ձևով, այսինքն վերածել ներկայացման դասարանին մնջ, ինչպես և ամբողջ դպրոցի առջև՝ օգտվելով տոներեն ու հանդեսներեն:

Գ. ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գրությունը առաջին տարվան առաջին մեկ-երկու չաբաթներուն հյուսված է հնչյուններու աստիճանական յուրացումին.

դրատախտակի վրա կատարված ընթերցման վարժութիւններուն միչտ պիտի հետևի այդ վարժութիւններեն լավագոյններուն գրութիւնը նախ արբագրելով, հաջորդ դասին ալ թելադրելով:

Այբուբենը լրացնելի ետքը գրութիւնն ալ կապված է ընթերցարանին. կարդացված բոլոր կտորները, որոնք արդեն բացատրութեան ու խոսակցութեան նյութ են դարձած, պետք է դառնան նաև արտագրութեան նյութ: Ամեն օր տղան դուրսը արտագրելու կտոր մը պիտի ունենա. արտագրութիւնը գրութեան հիմնական ձևն է դպրոցական առաջին շրջանին օտար լեզվի համար:

Առաջին երկամյակին պարզ արտագրութիւն է եղածը. պետք է պահանջենք, որ բառ-բառ կարդան ձայնով ու ետքը գրեն. տառ-տառ պետք չէ արտանկարեն, որ անօգուտ աշխատանք մըն է մեքենական: Իսկ երկրորդ երկամյակին այս պարզ արտագրութեան կմիանա նաև ավելի սքողված արտագրութիւն մը, որ կկայանա տրված գրավոր հարցերուն գրավոր կերպով պատասխանելուն մեջ. հարցերը բոլոր կդառնան ընթերցման նյութին չուրջը, և պատասխանները բոլորն ալ անպատճառ կան ընթերցարանի հոդվածին մեջ. այնպես որ աշակերտը կարտագրե գրատախտակեն ուսուցչին տված հարցը և տակը պետք է պատասխանե՝ մեկ կամ երկու նախադասութիւն արտագրելով կամ նայելով դասագրքին: Շատ ավելի կենդանի ու գրավիչ է այս սքողված արտագրութիւնը, քանի որ կուտա մտքին որոնում, այդպես ալ ինքը գրած ու պատասխանած ըլլալու բավականութիւնը, միևնույն ժամանակ նոր գրավոր կրկնութիւն մըն է արդեն սորված խոսակցութեան:

Երբ հարցերը պատասխաններու գլխուն դնել չտանք և իրար դնենք միայն պատասխանները և հարցերն ալ որոշ ընտրանքով հաջորդել տանք, տղուն գրածը կդառնա հոդվածի ամփոփ բովանդակութիւնը, հոդվածի ըստ էութեան վերապատմումը հարցումներուն պատասխանելով:

Գրութեան երկրորդ ձևը թելադրութիւնն է, ո՛չ նույն հաճախութեամբ և ո՛չ ամեն օր, բայց չաբաթական մեկ-երկու անգամ պետք է թելադրութեամբ գրել տալ առաջվընե տղոց մատնանշած կտոր մը, ուրեմն նախապատրաստված թելադրութիւն. մեջեմեջ կարելի է նաև առանց նախապես տղոց հայտնելու, բայց անշուշտ անոնց արդեն կարդացած, խոսակցութեան նյութ դարձած, պատ-

մած և արտագրած կտոր մը. թելադրելու ատեն ալ միշտ պետք է օգնել, պետք է հարցնել կասկածելի տեղերը և հիշեցնել, որ հնար նղածին չափ սխալ քիչ ընեն:

Այս անպատրաստ թելադրութեան ատեն մեկը միշտ կաշխատի գրատախտակին, որու գրածին համեմատ ետքը տղաքը կրնեն իրենց սրբագրութիւնները: Պատրաստուած թելադրութեան համար գրատախտակին վրա աշխատողի մը պետքը չկա. վերջը տղաքը կրանան իրենց դասագրքերը և գրքին վրայեն կրնեն իրենց համեմատութիւնն ու սրբագրութիւնը կա՛մ հոն՝ դասարանին մեջ, կա՛մ դուրսը՝ ամեն մեկը իր համար:

Մեջեմեջ ուսուցիչը թելադրութեան տետրակները կժողվի, կտանի տուն՝ ստուգելու համար մաքրութիւնը տետրակին ու գրութեան, կանոնաւորութիւնը գիրին և սխալներուն ուշադիր սրբագրութիւնը: Աշակերտներու աշխատանքն ու բնաւորութեան գծերը ճանչնալու անհրաժեշտութիւն մըն է ասիկա. աշակերտներն ալ միշտ պետք է զգան իրենց տետրակներուն վրա ուսուցչին աչքը: Ան աչքն անցընելու միջոցին ուսուցիչը կրնա հոս ու հոն նկատողութիւն մը գրել կամ վերջը դասարանին մեջ այդ մասին խոսիլ, բայց եղած բոլոր սխալները սրբագրել ուզելը կամ անպատճառ այդ անցած դասերուն անուշադիր համեմատուած սխալները սրբագրել տալ ուզելը ավելորդ ջերմեռանդութիւն է և արդիւնք չունեցող հոգնութիւն: Պետք է չանալ, որ տղաքը գրելու ատեն սխալ չընեն, պետք է չանալ, որ սրբագրելու ատեն ուշադիր ըլլան,. այդ միջոցին է, որ ուսուցիչը ճիգ կընէ ամեն կերպ անոնց օգնութեան գալու՝ հնարաւոր սխալները կանխելով, սխալներուն մեջ չարունակ դառնալով և կատարուած սխալը իսկույն մատնանիշ ընելով տղու տետրակին վրա:

Արտագրութիւններու և թելադրութիւններու ատեն ալ անտարակույս միշտ պետք է պահանջվի, որ տղաքը կանոնաւոր ու համաչափ գրեն, որ ուշադիր ըլլան ո՛չ միայն ուղղագրութեան, այլև դեղագրութեան, բայց բնական է, որ այդ պահանջը միայն մասամբ և միայն որոշ աստիճանով մը հնարաւոր է իրագործել, քանի որ տղոց միտքը գրելիքի ներքին իմաստին և տառասխալ չընելու ճիգին վրա է կեդրոնացած: Իսկ տղոց գիրը կոկելն ու գեղեց-

կացնելը պարտավորություն մըն է, որու իրականացմանը կձգտինք գեթ շաբաթը երկու կես-պահ հատկացնելով մասնավորապես գեղագրության:

Մայրենի լեզվի գեղագրության դասին նման, դասեն առաջ ուսուցիչը կգրե գրատախտակներուն վրա անպայման տղոց համար հասկնալի և իմաստալից մեկ-երկու նախադասություն ըստ գրության բոլոր պահանջներուն: Աշակերտներու արտագրության միջոցին ուսուցիչը կշրջի նստարաններուն մեջ և կուտա ամեն մեկուն իր խորհուրդն ու օգնությունը: Կարելի է գործածել նաև գեղագրության հատուկ տետրակներ, ուր արդեն որոշ սիսթեմով գրությունը առաջ կտարվի: Այս տետրակներեն մեծ օգուտով կարելի է օգտվիլ, եթե տետրակներուն ուսուցման սկզբունքները կհամապատասխանեն ուսուցչի բռնած ճամբուն, եթե գիրերն ու գլխագիրները պարզ են ու սովորական, եթե իբրև օրինակ ծառայող նախադասությունները տղոց համար ուղղակի հասկնալի են կամ գեթ իսկույն երկու խոսքով կարելի է հասկցնել:

Պետք է սկիզբը գեղագրությունը կատարվի չորս տողի մեջ կաշկանդված գրությամբ, որ ձեռքն ու աչքը վարժվին մանրակրկիտ ճշդության. երկրորդ տարին կարելի է միայն երկու տողի մեջ պահված գրությամբ բավականանալ. իսկ երկրորդ երկամյակին լավ է, գոնե մեծ մասով, անցնիլ մեկ տողի վրա գրելուն:

Դ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամեն լեզու ունի իր քերականությունը, ինչքան ալ որ իրարու հետ ընդհանուր գծեր ունենան, իրարմե կզանազանվին շատ զգալի խոշոր տարբերություններով. իրարմե կտարբերին նաև իրենց ուսուցման ժամանակովն ու նյութերու հաջորդական ընտրությամբ: Ամեն լեզու ինքը պիտի հոգա իր պետքը և մյուս լեզուներուն պահանջներ պետք չէ դնե, իբրև իր աշխատանքին անհրաժեշտություն: Օրինակ՝ անուններու իբրև գոյական և իբրև ածական զանազանումը հայերենի մեջ տղոց բացատրելու բնավ կարիք չկա մինչև բարձր նախակրթարանի դասարանները, որովհետև գործնական ո՛չ մեկ արժեք չունի, անոր արժեքը տրամաբանական է մեզի համար, և ինչքան ուշ խոսվի այդ մասին, այնքան խոր

կխոսվի: Մինչդեռ, օրինակ, փրանսերէն լեզուի մէջ ածականի ու գոյականի թիւով ու սեռով իրար համաձայնեցնելու օրէնքը կպահանջէ, որ հնար եղածին չափ շատ լուրջ բացատրութիւն մը այդ մասին տրվի տղոց: Փրանսերէնը ինքը իր գործը պիտի կատարէ. փրանսերէնի պատճառով մայրենի լեզուի ուսուցիչէն կարելի չէ պահանջել, որ ան արդէն տված ըլլա այդ հիմնական գաղափարները: Ամեն լեզու միայն իր մասին կմտածէ ու կընթանա:

Տարրական նախակրթարանի առաջին երկամյակին օտար լեզուի քերականութենէն հարկ կըլլա միշտ տալ քանի մը կարևոր ըմբռնումներ՝ բոլորն ալ զուտ գործնական և ուղղագրական պահանջներով: Առանց քերականական առանձնացման, հյուսված ընթերցումին կամ գրութեան: Գրատախտակին վրա կտրվին անհրաժեշտ բացատրութիւնները, օրէնքը կձևակերպվի, և կկատարէն քանի մը դրավոր վարժութիւններ իրենց սեագրութեան տետրակին վրա տրված կանոնը յուրացնելու համար: Ուրեմն մնջեմնջ դասի ինքնամփոփ մաս մըն է քերականական ուսուցումը առաջին երկամյակին, իսկ անգամ մը կանոնը տալեն ետքը ամեն անգամ, երբ ընթերցման կամ գրութեան առեն կհանդիպինք այդ կանոնին, ամեն անգամ ալ պետք է հիշեցնենք կամ հարցնենք և ուշադրութեան առնենք մինչև կատարելապես օրէնքի յուրացվիլը:

Երկրորդ երկամյակը օտար լեզուի քերականութեան բոլոր հիմնական ըմբռնումներուն և մասնաւորապես հոլովական ու խոնարհական ամենագործնական ձևերուն յուրացումը կուտա պարբերական հաստուկ դասերով կես-կես պահ, շաբաթը մեկ-երկու անգամ: Օրէնքները կհանվին միասին խմբական աշխատանքով դրատախտակի վրայի գրված օրինակներեն. հանված կանոնը կձևակերպվի ու կկրկնվի և ընականաբար ամեն ինչ օտար լեզվով. մայրենի լեզուն պետք չէ երբեք միջամտե: Կանոնի ձևակերպումեն ետքը կուգան վարժութիւնները. նախ՝ քանի մը օրինակներ գրավոր կերպով դասարանին մեջ, ետքն ալ՝ դուրսը, դասագրքի մը վրայեն, եթե բոլոր օրինակներու լեզուն տղոց լեզվական զարգացման աստիճանին կհամապատասխանե և դասարանական նախնական թեթև բացատրութեամբ մը հասկնալի է ամենուն: Եթե քերականական վարժութիւններու դասագրքին լեզուն, օրինակներուն բովանդակութիւնը լավ չի հարմարիր մեր դասարանին, լավագույն է ուսուցիչը

ինքը կազմէ իր վարժութիւնները, որ թղթի կտորի մը վրա ամեն անգամ կուտա, որ տղաքը դուրսը արտագրեն և վարժութիւնը լրացնեն: Բայց այս թղթի կտորով մը կատարվող աշխատութիւնը հնարավոր է միայն հոն, ուր աշակերտ և ուսուցիչ վարժված են աշխատակցութեան այդ ձևին, և թղթին կտորը արագ կանցնի ձեռքե ձեռք, և տղաքը բոլորն ալ կարտագրեն ուսուցչի օրինակեն և օրինակեն ուշադրութեամբ: Եթե տղաքը իրարմե կարտագրեն և քիչ մըն ալ չտապելով ու ցրիվ, ուսուցչի տված գրութիւնը կարտագրվի բազմաթիվ սխալներով ու թերիներով, չի ծառայեր իր նպատակին և կուտա վնաս: Կմնա վարժութիւններ կատարելու վերջին ձևը. տված կամ մեքենագրված վարժութիւնները բազմաթիվ օրինակներով պետք է բաժնվին աշակերտներուն, ամեն մեկուն օրինակ մը:

Ե. ԲԱՆԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Երբեք պետք չէ մոռնանք, որ լեզու մը իրապես լեզու է միայն այն ժամանակ, երբ այդ լեզվով կրնանք խոսիլ, և ինչ չափով որ ազատ, դյուրին ու ճիշդ արտահայտել կարողանանք մեր մտածումները այդ լեզվի օրենքներուն և սովորութիւններուն համաձայն, այնքան կենդանի է այդ լեզուն մեր շրթունքին վրա: Լեզվի մը ուսուցման վերջնական ճիգը և անոր ամենեն արժեքավոր մասը այդ լեզվով չնորհքով արտահայտվիլ կարողանալն է: Այս շատ կարևոր կետին ուղղված պիտի ըլլան նաև դպրոցին ջանքերը ամենեն առաջ: Ամբողջ տարրական նախակրթարանի շրջանին այս ուղղութեամբ կատարվող աշխատանքները կրնանք խտացնել հետևյալ քանի մը կետերուն մեջ, որոնք ըստ էութեան դուդ կերթան մայրենի լեզվի բանավոր արտահայտութեան պահանջներուն:

1) Օտար լեզվի ուսուցիչը դուրսը ամեն տեղ, առանց որևէ բացառութեան, իր աշակերտներուն հետ պետք է խոսի իր օտար լեզվով, իսկ դասերու ատեն ավելի ևս բացարձակ պահանջ մըն է ատիկա:

2) Յուրաքանչյուր հոդվածի ընթերցումեն ու բացատրութիւններու լրացումեն ետքը, ինչպես տեսանք, պետք է սկսվի հատուկ խոսակցութիւն մը, հարց ու պատասխանի, ուր հոդվածի

դրեթե ամեն մեկ նախապատմությունը քանի մը ձևերով խոսքի նյութ կդառնա. երբեք պետք չէ թեթև վերաբերվիլ այս աշխատանքին. ուսուցչի ամենագլխավոր պարտավորություններեն մեկն է այս հարցերը երկարելը, բազմաձևելը, հարստացնելը. հոդվածի բոլոր նախապատմությունները զանազան համբաներով բազմապատիկ անգամներ պետք է կենդանի կերպով դործածվին, սկիզբները իբրև պատասխան. բայց հետզհետե տղաքը պետք է կարողանան նաև զանազան տեսակի հարցեր տալ, որոնց պատասխանը ըլլա գրքին նախապատմությունը: Այսինքն նախ ինքը ուսուցիչը աշակերտներուն հետ խոսելեն ետքը հոդվածի նախապատմություններուն չուրջը, ետքն ալ տղաքը իրարու հետ պետք է խոսեցնել տա նույն նախապատմություններուն չուրջը նույն հարց ու պատասխաններով:

3) Ներածական այս աշխատանքներուն պետք է հաջորդե քիչ մը ավելի երկար ու կապակից պատմելը: Նախ կպահանջվի, որ պատմեն մեկ-երկու անգամ առաջին կտորը, երկրորդ կտորը և հաջորդը. երբ բոլոր կտորները կրկնված են արդեն քանի մը անգամներ, պետք է հանձնարարել, որ դուրսըամեն մեկը մեկ կամ երկու անգամ պատմե ինքնիրենը, բայց բարձր ձայնով, կամ ընկերոջ մը և ամբողջը. հաջորդ դասին դասարանին մեջն ալ պետք է կրկնել տալ սիրուն ու արտահայտիչ կերպով ամբողջությունը մեկ-երկու աշակերտի. և այս կոկ ու դեղեցիկ պատմել կարողանալը պետք է նկատվի աշակերտի աշխատանքին պսակը, լեզվի դասերուն ամենեն դնահատելի մասը, և ո՛չ թե կես-սուտ, կես-իրավ քանի մը նախապատմություն ըսե տղան, կարծես ձևի համար միայն, ու նստի վար: Լուրջ, դգուշ, մանրակրկիտ և հարատև աշխատանք է պետք, եթե կուզենք, որ տղոց լեզուն բացվի:

Այս բանավոր աշխատանքներուն դույդ կերթա նույն հոդվածի բառացի արտագրությունը կտոր-կտոր, նույն հոդվածի կարևոր մասերուն թելադրությունը և այս բոլոր աշխատանքներեն ետքը նույն հոդվածի դրավոր վերապատմումը: Բայց դիրքը իրենց դնմը դրած՝ կնային գրքին ուղղագրական սխալ չընելու համար: Մինչև այս բոլոր դործնական վարժություններն ու մարզանքները լուռի չկատարվին, ուսուցիչը իրավունք չունի նոր հոդվածի անցնելու: Հոդված մը կարդալ, բացատրել ու հասկնալը հերիք չէ լեզու սորվելու համար:

III. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆ ԲԱՐՁՐ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՄԵՋ

Օտար լեզուն, որ մանկապարտեզին կուգա, ամեն պարագայի տարրական դպրոցի սկիզբեն, բոլոր հիմքերը դրած է արդեն թե՛ գործնական-արտահայտական տեսակետեն, թե՛ ընթերցման ու գրության տեսակետեն և թե՛ քերականական ուսման տեսակետեն: Այս տարրական նախնական աշխատանքը իր կատարելագործումը, լրացումն ու ամբողջացումը կստանա բարձր նախակրթարանի չորս տարիներուն մեջ:

Ընթերցման համար աչքի առաջ ունենալիք ընդգծումներն ու փոփոխությունները հետևյալ կետերուն մեջ կարելի է ամփոփել.

1) Ընթերցման հոդվածները պետք է առնվին օտար լեզվի հարազատ գրականութենեն. անշուշտ գրական արժեք ներկայացնող կտորներ, բայց պետք չէ մոռնանք, առայժմ գլխավորը պարզ ու ընթացիկ լեզվի յուրացումն է, և այդ կողմեն պետք է մտածենալ բազմատեսակ նյութերու ընտրության մեջոցին:

2) Ամեն հոդված չատ պիտի կարդան դասարանի մեջ կպահանջվի բնական ու վարժ ընթերցում: Գեղեցիկ արտասանության և ընթերցման ճաշակը տալու համար ուսուցիչը կկարդա կտորներ դասարանին առջև, պայմանով որ լեզվական բացատրություններու տեղի չտա ընտրված կտորը և ըլլա լեզվի տեսակետեն լրիվ հասկնալի:

3) Նույն նպատակով պետք է գործածել խոսող գործիքը. մեծ դերասաններու և ընթերցողներու կողմե պատրաստված սկավառակներու ունկնդրել տալով, վերջին երկամյակին նաև կարևոր քաղաքական ղեմքերու ճառերուն և հայտնի գիտնականներու դասախոսություններուն. նպատակը միշտ լեզուն է, արտասանությունն ու արտահայտությունը, իմաստի խնդիրներով պետք չէ զբաղիլ:

4) Օտար լեզվի ուսուցչի պարտավորությունն է նաև հետևիլ տղոց՝ իր սորվեցուցած լեզվով կատարած ընթերցանության այդ դասարանի դաստիարակ-ուսուցչին հետ համախորհուրդ, գրքերը ինքը կմատնանչե ամեն մեկուն, և երբ գիրքը դասարանի մեծամասնության կողմե կարդացված է արդեն, կրնա դասարանական

խոսակցության նյութ դարձնել մասնավորապես շրջանի երկրորդ կիսամյակին: Ամեն աշակերտ չորս տարիներու ընթացքին ալ տարեկան գոնե երկու դիրք պետք է կարդացած ըլլա օտար լեզվով, իբրև ազատ ընթերցում:

5) Գրության տեսակետեն արտագրությունը այլևս դեր չունի: Թելադրությունը կշարունակվի ամբողջ առաջին երկամյակին. նախապատրաստված թելադրությունը բուն ուսուցման նպատակով է. անպատրաստ թելադրությունները ավելի քննական դիտավորությամբ կտրվին՝ դիտնալու համար, թե տղաքը ինչը արդեն հաստատ յուրացուցած են, և ինչը դեռ խախուտ է: Նախապատրաստված թելադրությունները տղաքը իրենք կսրբագրեն դասարանը կամ դուրսը իրենց դիրքերուն վրայեն. անպատրաստ թելադրությունը ուսուցիչը տուն կտանի և կգծե սխալներուն տակը, որ տղաքը վերջը իրենք սրբագրեն:

6) Շարադրություն նեղ իմաստով չկա ուսուցման առաջին երկամյակին, վերջին երկամյակին ալ՝ շատ քիչ և մեծ զգուշությամբ. աշակերտներեն ինքնուրույն շարադրություն պահանջել՝ կնշանակե սուտ ու սխալ արտահայտություններու վարժեցնել տղաքը. շարադրելու արվեստը աշակերտները մայրենի լեզվի վրա պիտի ձեռք բերեն. օտար լեզվով բոլոր գրությունները լեզուն սորվեցնելու համար են: Այդ նպատակով ալ ամբողջ շրջանի ընթացքին վերջն ալ թե՛ դուրսը և թե՛ դասարանի մեջ աշակերտներու կողմե պատմված հոդվածներուն ուսուցումը պետք է լրանա նույն հոդվածի գրավոր վերապատմումով. սկիզբները բոլորովին նման ու մոտիկ կըլլա այդ վերապատմումը բնագրին, բայց քիչ-քիչ կմնծնա շեղումը բնագրի բառերեն ու ձևերեն դեպի ավելի անկախ գրությունը՝ օգտագործելով արդեն յուրացուցած ասույթներն ու դարձվածքները, բայց խիստ պիտի պահանջվի չշեղիլ դրքի արտահայտական ձևերեն, եթե իրենցմե մեջ բերելիքը հաստատ ու վստահ կերպով չգիտեն:

7) Վերապատմության ու շարադրության բոլոր տեսակները ուսուցիչը ստիպված է ուշադրությամբ կարդալու, սխալները ընդգծելու, տեղ-տեղ նույնիսկ սրբագրելու, որ ուսուցիչն ալ, աշակերտներն ալ վստահ ըլլան գրվածքի լեզվական ճշդության: Եվ եթե այս սրբագրությունները շատ են, ու սխալները՝ կարևոր, ան-

հրաժեշտ է, որ աշակերտը նորեն գրե այդ շարադրութիւնը իր սրբագրված ձևով:

Թե՛ մայրենի լեզվով և թե՛ օտար լեզվով քիչ-քիչ անկախ ու ինքնուրույն գրութիւնները կանվանենք ընդհանուր բառով մը շարադրութիւն, բայց այդ երկուքը իրարմե տարբեր բաներ են. մայրենի լեզվով շարադրելու առեն տղան ընդհանրապես գիտե լեզուն, տակաւ կողմը շարադրութիւնն է. օտար լեզվով բան մը շարադրելու առեն մտքերու հաջորդականութիւնը, կապակցութիւնն ու ամբողջականութիւնը երկրորդական տեղ կբռնե, գլխավոր թևերին և հատկապես փնտրվածը լեզուն է, արտահայտութիւնը. սրբագրութեան ձևն ալ ստիպված է հարմարվելու այդ պահանջին:

8) Բառագիտական բացատրութիւնները առաջին երկամյակին կտրվին սկիզբեն, կապված դասարանական առաջին ընթերցումին, և կտրվին ընդհանրապես ուսուցչի կողմեն: Բոլոր նոր բառերուն արմատը և նշանակութիւնը, ինչպես և զանազան ածութիւններն ու արտահայտական դարձվածքներուն նշանակութիւնը ուսուցիչը կգրե գրատախտակին վրա կանոնավոր ձևով, բառարանի մը պես, տղաքը կարտագրեն նույն ձևով իրենց «բառարան»-տետրակին մեջ և անոր համեմատ դուրսը կպատրաստեն իրենց դասերը:

Երկրորդ երկամյակին բառագիտական աշխատանքը կբռնե հակառակ ուղղութիւնը. տղաքը դուրսը բառագիրքերու օգնութեամբ կկարդան ու կսորվին իրենց նոր դասը, այս պատրաստած կտորներն են, որ դասարանին մեջ կկարդացվին ու իրենց նշանակութեամբ կվերլուծվին. ուսուցիչը կուտա իր վավերացումը, իր լրացումը աշխատութեան միջոցին, որ կավելցնեն տղաքը իրենց «բառարան»-տետրակներուն մեջ դուրսը իրենց աշխատանքով դատած ու գրածներուն կից:

Այս աշխատութեան միջոցին է, որ կհավաքվին նույնարմատ բառերը, նույնիմաստ բառերը, բառերուն կազմական տարբերութիւնները, նախադաս ու ետադաս մասնիկներուն տված զանազան իմաստները և ընդհանրապես բառագիտական ու բառակազմական բոլոր նրբութիւններն ու համեմատութիւնները:

9) Լեզվի բանավոր արտահայտական զարգացման համար

բարձր նախակրթարանի մնջ բնականաբար ավելի լայն կարելիութիւն կայ: Նախ՝ շատ ավելի ազատ, շատ ավելի բազմակողմանի կերպով հնարաւորութիւն ունի ուսուցիչը կարդացված հոդուածի թէ՛ ամբողջի, թէ՛ նյութի ու նպատակի, թէ՛ մնջը ներկայացված իրողութիւններու և երևոյթներու մասին ավելի երկար և ավելի հետաքրքիր խոսակցութիւն մը վարելու՝ աղոց կարծիքն առնելով, վեճի դրդելով, մտածման մղելով և հանված եզրակացութիւնները ամփոփել ու ձևակերպել տալով:

Հոդուածի վերապատմումնն եաքը նույնը ավելի ամփոփ ու ավելի սեղմ ձևերով կրկնել կուտա. հոդուածին պայման մը փոխելով նույնը պատմել կուտա, նույն եղելութիւնը ուրիշ դործող անձի մը կողմեն դիտել ու պատմել կուտա, պատմութիւնը լրացնել կուտա, տեսակ մը շարունակելով, նկարագրութիւն մը ավելի մանրամասնել կուտա, նույնը պատմել կուտա հարմար մակդիրներ ու մակբայներ ավելցնելով. ոճավոր ու ոլորուն արտահայտված կտոր մը կարճ ու կտրուկ ձևերով արտահայտել կուտա:

Առաջին երկամյակին հաճախ դոց կուտա ընտիր կտորներ, որ և բազմութեան առջև կարտասանվին. կկազմակերպե փոքրիկ ներկայացումներ: Երկրորդ երկամյակին կկազմակերպե փոքրիկ դասարանական դասախոսութիւններ, օրվան նյութը կդարձնե եաքը մտքերու փոխանակութեան առարկա, անշուշտ միշտ օտար լեզվով: Գոցերը հետզհետե կպակսին, բայց ներկայացումները ավելի խորք ու արժեք կստանան .

10) Քերականութեան լրիվ ու գիտական ուսուցումը կկատարվի այս շրջանին և երկու համակեդրոն շրջանակներով: Առաջին երկամյակին քերականական բոլոր հիմնական կողմերը ուսումնասիրութեան կառնվին և բազմատեսակ վարժութիւններով կմարզվին: Երկրորդ երկամյակին քերականական նույն կողմերը ավելի խոր, ավելի նուրբ և ավելի գիտական ուսումնասիրութեան կենթարկվին նորեն բազմաթիվ վարժութիւններով ու մարզանքներով:

Այս բոլոր աշխատանքները կկատարվին օտար լեզվի՝ այդ տարիներուն համար պատրաստված հատուկ դործնական քերականութիւններու օդնութեամբ և ընթացքով:

11) Գրաբանական տեսակետեն հոս ու հոն հարկ կըլլա ավելի

կամ նվազ խորութիւնով բացատրութիւններ տալ գրական սեռերու և տեսակներու մասին, չափի ու հանգի և ստվար գրութիւններու այլ հատկութիւններու մասին: Ավելի պատահական կերպով խոսք կըլլա գրական երկերու գրութեան եղանակներու, ոճերու և նման հարցերու շուրջ:

Այլև շատ ավելի չեչտված կերպով մեջ կուգան հետզհետե գրապատմական բացատրութիւններ զանազան դարերու հեղինակներու մասին: Ժամանակներու բնորոշ գրական գծերու մասին, ժամանակի մը գործածական եղող գրական տեսակներու և ձևերու մասին. մասնավորապես հոդվածի հեղինակի կենսագրութիւնը մեջ պիտի գա, ինչպես և նույն հեղինակի մյուս կարևոր գործերու մասին ամփոփ ուրվագիծ մը:

VI. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆ ԼՍԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԵՐԿԱՄՅԱԿԻՆ

Բարձր նախակրթարանի մեջ պետք է լրանա օտար լեզվի քերականական ուսումը. պետք է լրանան կարդալ-գրելու բոլոր ուսանելիքները, և տղաքը պիտի կարողանան իրենց մտածումները արտահայտել առանց կոպիտ սխալներու և առանց կմկմալու:

Լսարանական առաջին երկու տարիներուն կմնա այդ բոլորի վերջնական հղկումը, ավելի ազատ ու համարձակ գործածումը այդ լեզվին գրավոր ու բանավոր: Այլև մոտիկ ծանոթացում այդ լեզվով սեփական գրականութեան կարևոր գլուխգործոցներուն:

Լսարաններուն մեջ, առաջին երկու տարին, օտար լեզվին համար բավական է, որ հատկացվի շաբաթական չորսական պահ վերի երկու նպատակներուն հասնիլ կարողանալու համար: Լսարանական երրորդ տարին լավ է, որ բնավ լեզվի դաս չըլլա:

Օտար լեզվի այդ չորս պահերեն երեքը կըլլա այդ ժողովուրդի սեփական գրականութեան դասական երկերեն ընտրված տասնյակ մը գրական երկերու ընթերցումն ու գրական վերլուծումը, ինչպես և այդ լեզվի առանձնահատկութիւններուն ու նրբութիւններուն ուսումնասիրումը. հիմնական պայման է, որ աշխատանքին բոլոր ծանրութիւնը, բոլոր որոնումն ու դիտողութիւնները կատարվի աշակերտներու ձեռքով. ուսուցիչը ստուգող ու վավերացնող:

Ուսուցիչը ամեն մեկ երկի ուսումնասիրության առեն ամեն մեկ աշակերտի կուտա հատուկ խնդիր մը աշխատանքի. մեկուն գործող անձերու հոգեբանական, իրական կամ բարոյական վերլուծությունը, մյուսին՝ գրվածքի գործողության ընթացքին քննությունը, երրորդ աշակերտի մը, օրինակ, որոշ մասի մը, տեսարանի մը իմաստը, ուժը, մշակումը, ուրիշ աշակերտի մը հանել կուտա գրվածքին ոճը կամ երկին գեղարվեստական արժեքը, կամ համեմատություն մը ամբողջ երկի կամ երկի մեկ որոշ կողմին համապատասխան ուրիշ երկի մը հետ, վերջապես հանել կուտա երկի մարմնավորած իմաստը:

Այս և առնչ նման հարցերը տղաքը իրենք պիտի մշակեն դուրսը, հանեն պիտի իրենց եզրակացությունները և գրավոր կերպով պետք է ներկայացնեն հետզհետե իրար հետևե իրենց դասարանի ամբողջության առջև: Ընկերները, որոնք բոլորն ալ կարդացած են այդ երկը քանի մը անգամ իրենց հարցերուն պատասխանը քաղելու համար, որ քիչ-շատ այդ բոլոր հարցերուն վրան ալ մտածած են արդեն, ընկերոջ ներկայացուցածը լսելեն ետքը կհայտնեն իրենց տարբեր ըմբռնումները, իրենց լրացումները կամ քննադատությունները :

Ուսուցիչը այս բոլորի մեջ արծարծողի ու դեկավարի դերը ունի: Երբ աշակերտները կլրացնեն ամենքը իրենց ըսելիքը, և ինքն ալ նոր հարցերով նոր տեսակետ ստանալու այլևս անկարող կըլլա, կրնե անշուշտ իր վերջնական դիտողությունները և կուտա վավերացումը:

Շատ համեստ օգուտ մը միայն ունի, երբ ուսուցիչը երկարբարակ ինքը կվերլուծե երկերը, և տղաքը լսող ականջ մըն են միայն: Հասկնալու տեսակետեն այդ բացատրությունները կրնան իրենց արժեքը ունենալ, բայց լեզվի մշակման տեսակետեն ո՛չ մեկ արժեք չունին, իսկ օտար լեզվի մը ուսուցչին լեզվի մշակման ու նրբացման նպաստել կպահանջվի ամեն բանե առաջ: Մտածողը, արտահայտողը, ձևակերպողը, տողեր կարդացողը, մեջբերումներ ընողը, ինչպես և տարբեր կարծիքներ հայտնողը, փաստողն ու պաշտպանողը պետք է ըլլան աշակերտները:

Օտար լեզվի չորս ժամերեն վերջինը պետք է հատկացվի շարադրություններու սրբագրության: Տղաքը անպատճառ չսբամբ

անգամ մը պետք է չարադրեն. չարադրութեան նիւթերը կընտրէ ուսուցիչը բազմազան բովանդակութեամբ և զանազան գրական տեսակներու պատկանող և գրական երեք սեռերով ալ՝ գործնական դրութիւններ, դիտական աշխատանքներ և գրական փոքրիկ փորձեր: Եվ այս բոլոր նիւթերը պետք չէ կապված ըլլան դասերուն, դրքերուն և ընթերցանութեան, այլ ուղղակի կապված պիտի ըլլան կեանքին ու շրջապատին, անձնական ապրումներուն, դիտողութեան և մտածողութեան: Այս չարադրութիւնները պետք է ըլլան միշտ սեղմ ու կարճ. ո՛չ մեկ ավելորդ բառ, ո՛չ մեկ ավելորդ խոսք և ամեն անգամ տետրակի երկու-երեք երեսեն ո՛չ ավելի:

Այս տետրակները ուսուցիչը ստիպված է բոլորը ուշադրութեամբ կարդալու. հոս ու հոն կրնա դիտողութիւն մը ընել, լեզուական սխալները հարկադրված է ուղղելու, բայց ամեն ինչ մանրամասն տետրակին մեջ սրբագրելու և գրել-չնջելու կարիքը չունի: Աւտոր փոխարեն իր տեսած բոլոր սխալները, անճշդութիւնները, թերիները, տգեղութիւնները հատկապես լեզուական տեսակետեն կդարձնե հաջորդ՝ տետրակները վերադարձանելու դասին բացատրութեան ու խոսակցութեան մանրամասն նիւթ: Հին քերականական օրենքները, բառակազմական նրբութիւնները, բառագիտական զանազանումները, ինչ որ երկար տարիներու ընթացքին հետզհետե սորված են, բոլորը կուգա խոսակցութեան քիչ մը ավելի բարձրեն դիտված, ավելի խոր ըմբռնումով և ճաշակի նոր պահանջներով: Այնպես որ չարադրութիւններու շաբաթական այս մեկ պահը կդառնա գործնականապես լեզվի քերականական ու արտահայտական բոլոր կողմերուն տեսակ մը կրկնութիւնը, ամփոփումը և լրացումը:

Շարադրութիւնները կըսեն ուսուցչին, թե ո՞ր կողմերն են թերի, թե ինչը դեռ չեն ըմբռնած, ինչպես հարկ է, և ինչ բաներու վրա պետք է կեդրոնացնեն աշակերտները իրենց ուշադրութիւնը: Յուշ կուտա ուսուցիչը քերականութեան էջերը, որ տղաքը վերստին աչքե անցընեն, կուտա այն բառերուն ցանկը, որ բառարաններուն մեջ երթան հատուկ ուսումնասիրելու, որոնք տարբեր-տարբեր ձևերով բոլորովին տարբեր իմաստներու արտահայտիչ կդառնան, և հատկապես տղոց հետ տղոց բառատետրներուն համար կհամախմբե արտահայտական ինքնուրույնութիւնները, խեղճ դարձ-

վածքները, սուր ու այլակերպ ասույթները, ինքնատիպ ըսելու ձևերը:

Կընճե բնականաբար նաև իր շարադրական նկատողությունները քիչ-քիչ, կտրուկ ու հակիրճ: Այսինքն գործնական ու տրամաբանական մատնանշումներ, որ տղաքը աչքի առաջ ունենան հաջորդ շարադրություններու մէջոցին:

Բայց ուսուցիչ մը ինչքան ալ ուզենա բարեխիղճ ըլլա և իր աշակերտներուն շարադրությունները իր խոչորացույցին տակը պահէ և ամեն բան բացատրել և օգնել ուզենա, նորեն պետք է պարզ դիտակցի, որ իրմեն չատ ավելի կարևոր ուսուցիչ մը կա, որուն անունը վարժություն է և ինքնաշխատություն: Ինչպես որ լեզուն խոսելով ու կարդալով կսորվի, այնպես ալ շարադրելը շարադրելով կսորվի. ամենեն բարեխիղճ ուսուցիչը չատ սրբագրող ուսուցիչը չէ, այլ չատ գրել տվող ուսուցիչը, ան, որ ամեն շաբաթ անպատճառ շարադրություն մը գրել կուտա, մտածված, աշխատված ու սիրով գրված շարադրություն մը:

ՅՈԹՆԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԳԵՂԱՐՎԵՍՏՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Սորվելիք բաներուն մէջ երեխաներուն ամենեն ավելի սիրածը ընելու բաներն են, ուր բան մը պետք է կատարվի, ուր բան մը պետք է ձևացվի, ուր բան մը պետք է ներկայացվի, ուր բան մը պետք է չինվի: Բոլոր խաղերը բան մը ընել է. բոլոր ձեռարվեստները բան մը ընել է. բոլոր ըսել, խոսիլ, խնդալ, արտասանել ու ներկայացնելը բան մը ընել է:

Ո՛չ միայն իրենց բան մը ընելը շատ կսիրեն երեխաները, այլև ուրիշներուն բան մը ընելուն նայիլը, դիտելը, ականջ դնելը, ըլլա ատիկա իրապես բան մը հյուսել, տաշել, չինել, նկարել, ըլլա երգել, նվագել, պարել, խաղալ, ըլլա ատիկա ներկայացնել կամ խոսքով պատմել, և այս ամենուն մեջն ալ ինչքան շատ չարժում ըլլա, ինչքան ընելիք բաները շատ ըլլան, այնքան ավելի գրավիչ կըլլա ու սիրելի:

Երեխայի հոգեբանության մեջ տիրապետողը մկանայինն է, որով և ընական կերպով խաղերը, ձեռական աշխատանքները և դեղարվեստները հիմնական զբաղումներն են մանկապարտեզի մեջ, և անկե ետքն ալ շատ մեծ չափերով դեր ու տեղ ունին անոնք միշտ հասունացման հաջորդ շրջաններուն: Եվ ընդհանրապես կյանքի բոլոր հատվածներուն մեջ միայն հետզհետե ծանրության կեդրոնը մկանայինեն դեպի զուտ հոգեկանը, դեպի զգայականը և դեպի մտածականը կփոխադրվի:

Մանկապարտեզի առաջին տարին ղեկավարված խաղերը օրական երկուքուկես պահ կբռնեն՝ առտուն և իրիկունը. վրան եթե ավելցնենք երեխաներու ազատ խաղերն ու վազվզուքը, կբռնե օրվան մեկ խոշոր մասը: Մանկապարտեզի երկրորդ տարին կրնանք հաշվել օրական երկուքուկես պահ կամ քիչ մը ավելի պակաս ղեկավարված խաղեր, իսկ վերջին տարին չաբաթական չորս պահ:

Տարրական դպրոցի առաջին երկամյակին ղեկավարված խաղերը կըլլան չաբաթական երեք պահ. վրան հաշված երեխաներուն ազատ խաղերը՝ կըռնեն ժամանակի գոնե քառորդը: Երկրորդ երկամյակին քիչ մը ավելի կպակսի թե՛ ղեկավար մասեն և թե՛ ազատ խաղերեն:

Բարձր նախակրթարանի մեջ առաջին երկու տարին նորեն երեք ժամվան չափ է, մեկ մասը՝ մարզանքի համար, մյուս մասը՝ նոր խաղերու: Երկրորդ երկամյակեն սկսած այլևս ավելորդ է խաղ ու մարզանքի մասնավոր ղեկավարություն, իբրև դպրոցական ծրագրի մաս: Մարմնամարզը տղաքը իրենք պիտի վարժվին ընելու առանց ամեն օր դեռ կիսամերկ վիճակի մեջ օրական 10-15 վայրկյան: Իսկ խմբական զանազան տեսակի խաղերն ալ նորեն տղաքը իրենք պետք է կազմակերպեն դպրոցական ժամերեն եաքը դիցուք և իրենց մարզանքի ուսուցչի մասնակցությամբ կամ օժանդակությամբ: Եվ ասիկա մինչև դպրոցական կյանքին վերջը:

Զանազան տեսակի ձեռարվեստները, նկարչությունն ալ մեջը հաշված, մանկապարտեզի ղվսավոր ըրազումները կներկայացնեն. առաջին տարին՝ օրական երեք պահու չափ, երկրորդ տարին՝ քիչ մը պակաս, իսկ երրորդ տարին՝ օրական երկու պահ: Տարրական նախակրթարանի առաջին երկու տարիները ձեռական աշխատանքները կըռնեն օրական պահ մը նկարչություն, դեղագրություն, հյուսք, կար ու ծեփ, ամեն ինչ մեջը հաշված: Երկրորդ երկամյակին կլինեն չաբաթական չորս պահի տղոց համար՝ նկարչություն ու դեղագրություն, քանի որ ձեռագործը կզատվի միայն աղջիկներու համար, որոնք ուրեմն կշարունակեն նորեն չաբաթական վեց պահ:

Բարձր նախակրթարանի չորս տարիներն ալ աղջիկները կունենան միշտ ձեռագործ չաբաթական երկուական պահ: Շաբաթական պահ մը լավ է պահել գեղագրության համար առաջին երկամյակին և երկու պահ ալ նկարչության: Բարձր նախակրթարանի երկրորդ երկամյակին նկարչության պետք է հատկացվի նորեն չաբաթական երկուական պահ, և պետք է ջանալ ու համոզել տղաքն ու աղջիկները, որ ամենքն ալ շարունակեն նկարելը, չմոռնեն, բայց սկզբունքով պետք է նկատվի կամավոր. չուզող, չկրցող ու չհետաքրքրվողները ստիպելեն օգուտ չկա. բեռ մը կդառնա թե՛ ուսուցչին, թե աշակերտին:

Երգը մանկապարտեզի մէջ, ըլլա մյուս խաղերուն հյուսված, ըլլա պարերու հետ կամ մարզանքի, թե բոլորովին առանձին, կարելի է հաշվել օրական պահ մը : Տարրական նախակրթարանի առաջին երկամյակին խաղերուն հյուսված երգերն ալ միասին առնելով՝ չարաթական երեք պահ: Երկրորդ երկամյակին կիջնե երկու պահի: Երկու պահ է նմանապես բարձր նախակրթարանի առաջին երկամյակին:

Երկրորդ երկամյակեն սկսած՝ կղադրի պարտադիր ըլլալե: Ով քիչ-շատ երգելու շնորհք ու սեր ունի, պետք է դրդել, որ միանա երգեցիկներու խումբին: Ով քիչ-շատ սեր ունի ու տրամադրություն նվագի, պետք է տալ ամեն դյուրություն, որ սորվի գործիքի մը վրա նվագել: Եվ պետք է դրդել բոլոր միջոցներով, որ ամեն աշակերտ անպատճառ իր դպրոցական վերջին տարիներուն գեղարվեստի մը հետևի՝ երգ, նվագ, նկար կամ որևէ ձեռական ուրիշ արվեստ մը: Ըլլա իբրև հոգեկան պահանջ, ըլլա իբրև ճաշակի կրթություն, ըլլա իբրև բարձր ու ազնիվ տեսակի խաղ մը:

Բանահյուսության գործադրական մասը, բանահյուսությունը ընելը կապված է, ինչպես տեսանք, մայրենի լեզվի դասերուն դպրոցական տևողության ամբողջ ընթացքին. խոսիլ, առարկել, պատմել, նկարագրել, վիպել, արտասանել ու ներկայացնել, լեզվի արտահայտական աշխատանքները կներկայացնեն և միևնույն ժամանակ բանահյուսական գործադրական ճիգեր են: Ընթերցումն ալ շատ մեծ չափերով կհարստացնե, կդրդե ու կկրթե արտահայտական-բանահյուսական կարողությունները:

Իսկ բանահյուսական կրավորական մասը, բանահյուսական երկերու վայելքը հիմնապես ու էապես կապված է ընթերցանության հետ: Ընթերցարաններու հոդվածներեն ստվար մեծ մասը, ինչպես և իբրև ազատ ընթերցում, մասամբ ալ իբրև պարտադիր ընթերցում կարդացվող գրքերուն մեկ խոշոր մասը գեղարվեստական երկեր են: Բայց ընթերցումը լրջորեն կրնա սկսիլ միայն տարրական նախակրթության վերջերը. նախ պետք է տիրանան վարժ ու ազատ կարդալ-հասկնալու և առանձին կարդալու և կարդացածին տևականորեն հետևելու: Մինչև այդ աստիճանին հասնիլը ընթերցանության տեղը կբռնե ունկնդրությունը:

Թե՛ տունը, թե՛ մանկապարտեզի մեջ և թե՛ տարրական նախակրթարանի դռնե առաջին երեք տարիներու ընթացքին պատմություններ լսելը, բանահյուսական ստեղծագործություններու ունկնդրելը մանկական տարիքի ամենամեծ հրապույրներեն մեկն է: Երեխաները ամեն ինչ կմոռնան, նույնիսկ իրենց խաղերը պատրաստ են ձգելու և երկար ժամանակ լուռ ու անշարժ դեմդ նստած մնալու վառվռող աչքերով, եթե քիչ-չատ կենդանի բան մը լսատմես անոնց:

Մանկապարտեզի մեջ առաջին տարին պատմություններու համար կհատկացնենք մոտավորապես օրական պահ մը, երկրորդ տարին՝ քիչ մը ավելի պակաս, շաբաթական չորս պահի չափ, իսկ երրորդ տարին՝ շաբաթական երեք պահ՝ երկու օրը անգամ մը:

Տարրական նախակրթարանի մեջ այդ «պատմության դասերուն», այսինքն բանահյուսական ընթերցումներու ունկնդրության պետք է հատկացնել շաբաթական երկ-երկու պահ չորս տարվան ընթացքին:

Բ. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

I. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԵՋ

Ա. ՆՊԱՏԱԿԸ

Ինչո՞ւ համար փոքրիկները շարունակ կլսնդրեն, որ իրենց պատմություն պատմենք: Միևնույն է, եթե հարցնենք, թե ինչո՞ւ համար մեծերը վեպ կկարդան, թատրոն ու սինեմա կերթան:

Ինչպես ընտանիքի մեջ իր հարազատներու ծունկերուն վրա, այնպես ալ մանկապարտեզի մեջ վարժուհիի դեմը խմբված փոքրիկներուն խնդրածը հոգևկան շարժում է, հուզումներ և երևակայության թափառումներ: Ինչպես մկանները գործելու պահանջ ունին, ինչպես միտքը անգործ մնալ չի սիրեր, այնպես ալ զգացումները կարիք ունին գործելու. մկաններու, մտքի և զգացումներու չգործելը, քիչ ու թույլ գործելը ձանձրույթ է, անախորժություն. մտքի և զգացումներու բավարար չափով և աշխուժ գործելը հաճույք է, ուրախություն: Պատմություններ ու բանահյուսական կտորներ երեխաներուն տալու նպատակը ինչպես ամեն տեղ,

այնպես ալ մանկապարտեզին մեջ փոքրիկներուն հաճույք, հուզում, մտքի խաղ և ուրախություն պատճառելն է, այսինքն բավարարել անոնց գեղարվեստական պահանջը:

Ան է էականն ու հիմնականը՝ առաջին նպատակը, որուն սակայն մանկապարտեզի մեջ կավելնա նաև երկրորդ՝ կրթական նպատակ մը: Այդ պատմություններու միջոցով կրնանք շատ նպաստել փոքրիկներու լեզվի զարգացմանն ու գեղեցկացմանը: Ամեն պատմված բան լեզվի դաս մըն է, ուզենա թե ոչ. արտահայտության ձևեր, կենդանի ասություններ, մտքերու կապակցության կերպեր, ներկայացնելու որոշ հաջորդականություն, և ինչքան առակներ, առածներ, ասույթներ ու դարձվածքներ կըսվին ու կկրկնվին: Լսելով ու ըսելով կդրոշմվին և կսկսին ուրիշ պարագաներու ալ գործածվիլ, սկիզբները քիչ մը խախուտ և ո՛չ ամեն անգամ ճիշդ իր տեղը, սակայն շատ չանցած կյուրացվին լիովին և կատարելապես ճիշդ կերպով:

Այս երկուքին հաճախ կմիանա նաև երրորդ առավելություն մը, ինչպես իրենց չուրջի իրերն ու երևույթները, ինչպես պատկերներուն մեջի իրերն ու երևույթները, այնպես ալ այդ պատմություններուն մեջ հիշված ու նկարագրված իրերն ու երևույթները կրնան դառնալ գիտության նյութ, քննության ու վերլուծման առարկա, այսինքն կհարստացնեն մտավոր պաշարը, կսրեն ու կմարզեն մտածողությունը: Ասիկա ամենեն առաջ դուրսի տեսանելի իրերուն և երևույթներու վերաբերմամբ, բայց որոշ չափով նաև մեջ կուգան, անշուշտ ավելի թեթևակի, նաև մարդկային հոգեկան ներքին ապրումները և մարդկային ընկերական կյանքի դրած պայմաններն ու պահանջները: Ուրիշ խոսքով՝ այդ պատմություններուն մեջ շատ-շատ բաներ կան, որոնք դիտելու, մտածելու կդրդեն, մտածումներ կուտան, եզրակացություններ կառաջացնեն և՛ արտաքին առարկաներու, և՛ շրջապատի վերաբերմամբ, և՛ ընկերական ու բարոյական ըմբռնումներու տեսակետեն:

Բ. ՆՅՈՒԹԵՐՈՒՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին հիմնական նպատակն է անշուշտ, որ պետք է ղեկավարե մեր պատմելիք նյութերուն ընտրությունը:

Նախ՝ առանց առաջվընն մտածելու, պատահական կամ հանկարծական կերպով ոչինչ պետք չէ պատմվի մանկապարտեզի մէջ փոքրիկներուն: Նախապես բոլոր նյութերը հավաքված, կշռված, երեք տարիներու վրա բաժնված և ցուցակագրված պիտի ըլլան: Ամեն նոր նյութ՝ արձակ կամ ոտանավոր, մինչև ամեն կողմին քննութեան չառնվի, և այդ ցանկին մեջ իր որոշ տեղը չի նշանակվի, տղոց պետք չէ պատմվի: Այսպես հարյուր կտորի չափ նյութ պետք է միշտ պատրաստ ունենա վարժուհին իր ցանկերուն մեջ:

Երկրորդ՝ բոլոր նյութերը պետք է համապատասխանեն 5-են 7 տարեկան մանուկներու տեսնելու, ըմբռնելու, մտածելու և զգալու եղանակին : Ամենեն դժվար պահանջն է ասիկա և՛ գտնելու, և՛ ընտրելու տեսակետեն. կարելիին չափ քիչ սխալանքով հավաքել կարողանալու համար հավաքողը պետք է ունենա ինքը թարմ ու մանկամոտ հոգի և երկար փորձառութեամբ ձեռք բերված հասկացողութեան, թե ինչը մանկական հոգիին կվտոսի և ինչը՝ ոչ: Ինչ որ մեծերուս համար «հիմար» և «անմիտ» է, փոքրիկներուն համար շատ հաճախ և՛ գրավիչ է, և՛ իմաստ ունի. ինչ որ մեծերուս համար խոր է և իմաստալից, շատ անգամ բոլորովին անտարբեր կձգի փոքրիկները, և շատ մը մանր-մունր դեպքեր, բառեր ու նկարագրութիւններ, որ մեր կիրթ ականջին ու հոգիներուն մերժելի են կամ անարժեք, փոքրիկները բավականութեամբ կլսեն: Իր ընտրութիւններու ընթացքին վարժուհին այս իրողութիւնները միշտ աչքի առաջ պետք է ունենա, նեթե ազդել ու թափանցել կցանկա:

Երրորդ՝ պետք չէ պատմվի փոքրիկներուն տխուր պատմութիւններ, և «տխուր» բառն ալ նորեն միշտ մանկան տեսակետեն պետք է առնվի: Շատ բան, որ մեծերուս համար սարսափելի տխուր է, մանուկները կլսեն մեծ հանդիստով, և հանկարծ մեզի համար աննշան դեպք մը կամ նկարագրութիւն մը փոքրիկներուն աչքերը կլեցնեն արցունքով: Տղոց պատմվելիք նյութերը պետք է ըլլան ուրախ. հիմնական պահանջ մըն է ասիկա. փոքրիկներուն բացարձակ իրավունքն է խնդալը, զվարթ նայիլը կյանքի վրա և հնար եղածին չափ մարմնի ու հոգիի ցավերեն ազատ ապրիլը: Բոլոր պատմութիւններու մեջ լավատես, լայնատես հոգի մը պետք է

թևածի. բոլոր նկարագրությունները, բոլոր գործողությունները իրենց մեջ հոգիին թեթևություն տվող, սիրտ բացող ու բարձրացնող գծեր պետք է ըլլան: Անշուշտ անկարելի է, որ պատմություններուն մեջ տխուր, դժբաղդ և խեղճ մարդիկ ու դեպքեր նկարված չըլլան, բայց այդ բոլորը հաշտ ու տանելի չափերով պետք է ներկայացվի և, մանավանդ, ամեն ինչ պետք է հաջողությամբ վերջանա: Ինչքան հաճախ ու թարմ ըլլա ծիծաղը, կատակը, անսպասելին ու հաճելին, այնքան բարձր է մանկական պատմության մանկավարժական արժեքը:

Չորրորդ՝ այդ բոլոր պատմությունները երբեք պետք չէ արվեստական կերպով շինված ըլլան խրատ մը տալու, բարոյականություն մը քարոզելու, թերություն մը սրբագրելու ծածուկ կամ բացահայտ դիտավորությամբ: Ամեն պատմություն բնական կերպով օրինակ մըն է ինքը գէշ ու աղեկ վարմունքի, ազնիվ ու անազնիվ հոգիի, որով պատմություններուն շատ-շատերը, մենք ուզենք թե չուզենք, բարոյական դեր կկատարեն և պետք է խաղան: Բայց պատմությունը ինքը, ներկայացված կյանքի կտորը ինքը իր էությամբ պետք է խոսի, ինքնին պիտի բղխի, ինքնին պիտի ազդե, ինչպես ուրիշ շատ մը կողմերով, այդպես ալ իր բարոյական էությամբը առանց արտաքին հավելյալ միջամտության: Թուքով փակցված բացատրությունները, բռնազբոսիկ մեկնությունները, պատմության մեջ մտցրած շինծու հավելվածները, փոխանակ պատմությունը բարոյական դարձնելու, կեղծ ու շինծու կդարձնեն, կանհամցնեն ու կնվաստացնեն կտորի գեղարվեստական արժեքը, և տղաքը իսկույն և միշտ սառն են այդ կարգի բարոյախոս արվեստական արտադրություններու դեմ. չեն սիրեր:

Հինգերորդ՝ այդպես ալ իրական չըլլայու մտահոգությունը «առանկ բան չըլլար»-ի հասուն մարդու տափակ դիտողությունը, «սուտ ու փուտ» բաներ ըսելու վախը և «երեխայական անմտություններով» երեխաներու հոգին չծռելու խորին իմաստությունները բնավ տեղ պետք չէ ունենան երեխաներուն պատմվելիք նյութերու ընտրության ժամանակ: Ինչ որ մեծերուս համար անիրական, անկարելի ու ցնդի-փնդի կհամարվի, փոքրիկներու համար շատ հասարակ ու պարզ ու բնական բան մըն է: Մանուկներու համար մարդու, կենդանիներու, բույսերու և անշունչ իրերու մեջ քաշված

սահմանները դեռ շատ են անորոշ ու պայմանական: Մանուկները բնավ առարկություն չունին, որ արջը կխոսի, կամ աղվեսը բազմատեսակ դառ մարդկային գործեր կկատարե, կամ որ գորգը օդին մեջեն հրաշալի կթռչի: Եվ շատ պարզ ալ կըմբռնեն, որ այդ բոլորը «պատմություններ» են, հոգեկան խաղեր, հոգեկան հաճույքներ տալու համար հնարված: Վախենալու ոչինչ կա: Պետք է խորհուրդ տալ այդ «երևակայական անմտություններեն» վախցող մեծերուն, որ իրենք ալ կարդան քիչ մը այդ մանկական պատմությունները, իրենց համար ալ շատ զվարճալի է: Եվ մեր այդ մեծերը թող շատ բարձրեն չնային մեր պզտիկներուն վրա, քանի որ իրենք շատ ավելի անմիտ ու անկարելի բաներու կհավատան կատարյալ լրջությամբ:

Այս պայմաններուն բավարարող և գեղարվեստական արժեք ունեցող նյութեր ճարելը դյուրին գործ չէ. շատ քիչ հեղինակներ կան, որ կրցած են մտանոթել մանկան հոգիին, ո՛չ միայն մեր, այլև համաշխարհային դրականության մեջ: Եվ եղածն ալ իր եղած ձևովը մանկան առջևը դնել կարելի չէ, այսինքն ինչ որ կրնանք հանել մեր ժողովրդական ու մեր մանկական դրականության մեջեն: Իսկ օտար ժողովուրդներու ունեցած նույնպես հազվագյուտ հաջող կտորները պետք է հայացվին մեծ զգուշությամբ, որ պահել կարողանան և՛ բնագրին գրավչությունը, և՛ հարմարին հայ միջավայրին և հայ չունչին: Այս է պատճառը, որ փոքրիկներուն մեր պատմել ուզած կամ ստիպված կտորներուն մեկ խոշոր մասը շատ միջակ բաններ են բոլոր թափվող ջանքերուն հակառակ:

Մանկապարտեզի մեջ իբրև պատմություն ներկայացվող նյութերը կրնան ըլլալ արձակ կամ ոտանավոր, բայց արձակի եղած պարագային ալ այն աստիճան մշակված և գրկված կազմություն մը կունենան անոնք և այն աստիճան կուռ ու պարզ լեզու մը, որ շատ դժվար է մեջեն բառ մը փոխելը. փոխներնուս պես պատմվածքը իր գեղեցկություններեն ու իր դիմացկունություններեն անտարակույս բան մը կկորնցնեն:

Արձակ թե ոտանավոր՝ մանկական բանահյուսության կտորները ընդհանրապես միաձույլ, անփոփոխ ու վերջնական կերտվածք մը ունին, և այդ ձևով ալ շատ շուտով դող կըլլան փոքրիկներուն կողմե: Փոքրիկները խախտում ու փոփոխական

«առանկ ալ կըլլա, անանկ ալ» բանները չեն սիրեր: Ամեն բան իր որոշ ձևը, իր կերպը, իր աստյիճը պիտի ունենայ Հաստատ. ամեն ինչ բյուրեղացած վիճակի մեջ ըմբռնել ու յուրացնել կսիրեն այդ տարիքին մեջ. երևույթները հոսուն վիճակի վերածելը և ամեն բան շարժուն ու փոփոխելի պատկերացնելը Հասուն տարիքի իմաստություն է: Արձակ թե ոտանավոր՝ այդ բոլոր նյութերը կարելի է երկու խումբի բաժանել դործնական տեսակետեն: Մանկապարտեզի մեջ պատմվող նյութերուն մեկ մասը Հյուսված են խաղերուն, այդ խաղերուն առանցքն ու իմաստը կներկայացնեն. մեկ ուրիշ մասը. ըլլան խաղերուն Հյուսված թե ոչ, կապված են եղանակի մը, այսինքն երգի մը բառերը կկազմեն, և վերջապես կան նյութեր ալ, որոնք Հատուկ ներկայացնելու Համար կավանդվին, մանկական բնական ներկայացման մը խոսքերն են: Այս բոլոր պարագաներուն ալ պատմված նյութը անկախ չէ բոլորովին, գործակից մըն է ուրիշ գործողություններու և բնական կերպով իր ավանդումը պիտի Հարմարցվի այդ մյուս աշխատանքներու պահանջին:

Երկրորդ խումբը կկազմեն այն նյութերը, որոնք գուտ պատմություններ են՝ արձակ կամ ոտանավոր, որոնք կպատմվին միայն պատմվելու Համար: Եվ ընդհանրապես քիչ մը ավելի երկարաշունչ են, մեկ, մեկուկես, երկու երեսնոց, երբեմն քիչիկ մը ավելի երկար, բայց չատ երկար պետք չէ որ ըլլան. առանց փոքրիկները Հոգնեցնելու կարելի պիտի ըլլա մեկ չունչով, այսինքն առանց ընդհատելու մեկ ծայրեն մյուսը լրիվ պատմել, որ անոնք միշտ ամբողջական տպավորություն ունենան: Երկարատև պատմվածքներն ու Հեքիաթները, որոնք քանի մը անգամ պետք է ընդհատվին, Հաջորդ օրերը չարունակվելու Համար, մանկապարտեզի նյութ չեն:

Մանկապարտեզի վերջին տարվան մեջ եթե պատահի, որ նյութ մը տալ ուզենանք, որ մեկ անգամեն անկարելի է, այնպես պետք է կտրվի, որ յուրաքանչյուր անգամ որոշ վերնագրով ուրույն ամբողջության մը վերածվի, թեև նույն է Հերոսը, իսկ խաղերուն Հյուսված և երգի մը բառերը կազմող նյութերը ընդհանրապես կարճ են, Հազիվ կանցնին կես երեսը, եթե արձակ են, և երեք տունը, եթե ոտանավոր են, երբեմն նույնիսկ քանի մը նախադասութենե անդին չեն անցնիր, կամ քառյակ մըն է, օրինակ, ամբողջ ոտանավորը: Ներկայացնելու Համար եղած նյութերը քիչիկ

մը ավելի երկար կըլլան բնական կերպով, մեկ-երկու երես և միայն բացառաբար քիչ մը ավելի:

Գ. ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ՊԱՏՄՎԻ

Խաղերուն կապված նյութը պետք է պատմվի խաղին տեղը. կկենան երեխաները չրջանաձև կամ այն դիրքով, որ խաղը կպահանջե, ու վարժուհին մեկ-երկու նախապատրաստող բացատրություններ տալեն ետքը, որ խաղի էությունը ու պատմության դերը հասկնալի դառնա, կարտասանե ոտանավորը կամ խաղին խոսքերը, կկրկնե անգամ մը և իսկույն կսկսի խաղը. երբ բառերը պիտի ըսվին, վարժուհին կկրկնե նորեն, խաղցող երեխան ալ կամ խումբն ալ իր հունեն կրկնել տալով, և քանի մը օր ամեն անգամ, որ այդ խաղը խաղցվի, վարժուհին ինքն ալ կկրկնե միշտ խաղացողներուն հետ, մինչև ապահով ըլլա, որ ամենքն ալ կըսեն ճիշդ ու կանոնավոր: Մեծ ուշադրություն պետք է դարձնել, որ փոքրիկները ծուռ, սխալ, անճիշդ չարտասանեն, արտահայտության չնշտերն ու կնրպերը ճիշդ դնեն և բառերը չուտեն, չդեղադացնեն, ամեն ինչ հստակ, ճիշդ ու արտահայտիչ, ճիշդ վարժուհիի ըսածին պես:

Երգերուն բառերը սորվեցնելուն տեղը դաշնամուրին առջևն է, եղանակը սորվեցնելեն առաջ: Մեկ-երկու բացատրական խոսքերեն ետքը, թե պատմությունը ինչի՞ շուրջն է և ի՞նչ ըսել կուզե, վարժուհին ինքը կարտասանե անգամ մը ամբողջ ոտանավորը, առանց ոտանավորի ձևին կարևորություն տալու, ըստ իմաստի, կարծես արձակ ձևով դրված ըլլար: Ամբողջի մասին այս ընդհանուր տպավորությունը տալեն ետքը կարտասանե միայն առաջին տունը մեկ կամ երկու անգամ և երեխաներուն կուտա մեկ-երկու անգամ: Եվ իսկույն կանցնի առաջին տան եղանակին, հաջորդ դասին, եթե մնա շարունակությունը, պետք է նորեն անգամ մը ինքը ըսե ամբողջ ոտանավորը տպավորությունը թարմացնելու համար, ուրկե ետքը կերգե ինքը առաջին տունը, կերգեն և փոքրիկները: Եվ ահա նոր կարտասանե միայն երկրորդ տունը և տղոց ալ ըսել կուտա: Եվ անմիջապես կանցնի երկրորդ տան երգելուն, որ ընդհանրապես առաջին տան եղանակով կըլլա: Ետքը կերգեն միասին երկու տունը

իրար եւեւն՝ հաջորդ դասին թողնելով վերջին տան յուրացումը նույն ձեւով:

Գալով գուտ պատմվելիք նյութերուն՝ ամենեն առաջ պետք չէ երեւակայել, որ ամեն անգամ նոր պատմութիւն մը, նոր հեքիաթ մը կամ նոր ուսանավոր մը պետք է պատմվի փոքրիկներուն: Երեք կարգերուն մեջ իր բոլոր պատմութեան պահերը միասին առած՝ շաբաթական 10-12 նյութ պիտի հասցներ այդ հաշվով վարժուհին, որ բոլորովին ավելորդ շռայլութիւն մըն է և անկարելի բան մը, եթե իրավ որ կուզենք արժեքավոր կտորներ տալ փոքրիկներուն: Այդ շռայլութեան բնավ կարիք չկա, խեղճ պզտիկներուն երեւակայութիւնն ու հիշողութիւնը կողողվի այդքան շատութեան տակ. ո՛չ լուրջ օգուտ մը և ո՛չ ալ խոր վայելք մը ստանալ կկրնան այդ հագիվ երեցող ու աներեւութացող պատկերներուն, դեմքերուն և դեպքերուն շարունակ փոփոխվող հոսանքին մեջ: Այդ արագ փոփոխութիւնները միայն վնաս կուտան, ամեն ինչ կիսատ ու թերի դիտելու և ապրելու գեշ սովորութիւն մը կառաջացնեն, ամեն ինչին միայն քաւելու և վրայեն ցատկելու շտապ մը կուտան, իրերու և նյութերու վրա խորանալ չգիտնալու մեծ պակասութիւն մը և նուրբ ու տեւական վայելքներու անկարողութիւն մը:

Մեկ անգամ մը միայն լսած երգը, մեկ անգամ մը միայն տեսնված նկար մը կամ տեսարան մը երբեք տալ չի կրնար մեր հոգիին այն խոր, նուրբ ու բազմակողմանի վայելքները, որ մենք կստանանք նույն երգի, նույն նկարի, նույն խաղի երկրորդ, երրորդ և հաջորդ կրկնութիւններու ատեն. գեղեցկութիւն մը իսկապես ճաշակել կարողանալու համար, ինչպես որ պետք է, անհրաժեշտ է, որ ենթարկվինք իր ազդեցութեան ու համյքին կրկին ու կրկին անգամներ: Առաջին վայելքը անշուշտ իր նրբութեամբ ունի իրեն հատուկ առավելութիւն մը, բայց երկրորդ, երրորդ և հաջորդ կրկնութիւններն ալ ունին այն տեսակի սպասումի հաճույքներ, արդեն գալիքը գիտնալու բավականութիւններ, նոր ու նոր մանրամասնութիւններ տեսնելու անակնկալներ, նոր ու նոր բարդութիւններ նկատելու հաճույքներ, որ առաջին վայելքը, նույնիսկ առաջին վայելքները տալ չեն կրնար:

Եվ այս բացահայտ ճշմարտութեան առաջին ապացույցն ու վկան ինքը մանուկն է: Մանուկները, որ շարունակ պատմութիւն

կ՚ընդրէն ու կ՚ապահանջեն մեզմէ, նոր պատմուէյուններ չէ, որ կ՚ընդրէն, ամէկս մեծնալուս առաջուան վայրկեաններս կրթուէյան բերած հասկացողուէյունն է: Մանուկներուն խնդրածը իրենց արդէն պիտցած պատմուէյուններուն վերատին ունկնդիրը ըլլալն է ամենեն առաջ: Եվ ինչքան պատմուէյուն մը սիրուած է, ինչքան հաճախ որ կրկնուած է, այնքան հաճախ կ՚ընդրէն երեխաները, որ նուչնը իրենց նորեն պատմէ: Առանց մեր գիտնալուն երեխան ամբողջ նյութը դուց է ըրած արդէն, բայց նորեն կ՚ընդրէ մեզմէ, որ պատմենք իրեն: Եվ երբ պատմելու առեն անհուսթութեամբ կամ մեծ մարդու դատողուէյուններով բառ մը կ՚ուռնանք, կ՚փոխենք կամ նախադասուէյան մը վրայեն կ՚ցատկենք,, երեխան իսկոյն կ՚ընդհատե մեզի, թե այդպես չէ, թե «սխալ կ՚ըսես»:

Պետք է հաչվել ամեն կարգի համար շաբաթական մէյ-մէկ նոր նյութ, որ կուգա ու կ՚ցուսէ հին նյութերուն: Այսինքն նոր պատմուէյուն մը պատմելեն ետքը հաջորդ օրը կամ օրերը կ՚կրկնուին հին պատմուէյունները, մինչև որ նորեն կրկնուի նորը, չատ սիրուած կտորները կ՚ապահանջուին երկու-երեք անգամ իրար ետեւե: Քանի մը շաբաթուան ընթացքին «նոր» պատմուէյունը չորս-հինգ-վեց անգամ կրկնուելով կդառնա արդէն հին պատմուէյուն: Այդ մէջտեղին եկած կ՚ըլլան արդէն մեկ-երկու ավելի նոր պատմուէյուններ: Մեկ կամ երկու ամսուան ընթացքին մոտաւորապես տասնյակ անգամ մը պատմելեն ետքը կարելի է ալ հանգիստ թողնել արդէն բոլորովին յուրացված նյութերուն մեծ մասը, միայն չատ սիրուած կտորներն են, որ կարծես մշտապես կմնան ընթացիկ ցանկին վրա, և որոնց կրկնուէյունը մեջտեղէ սիրով կուննկնդրուի: Բավական ժամանակ անցնելեն ետքը, օրինակ՝ տարուան վերջերը, երբ հանկարծ կպատմես տարուան սկիզբը պատմած և երկար տասն չկրկնուած մը, միշտ մեծ ուպաւորուէյուն կ՚ընե և ունի ինքնահաստուկ ախորժելիուէյուն մը. հին ծանոթի մը, սիրելի ու հեռակա բարեկամի մը այցելուէյան կնմանի, որուն տեսնքը սիրով կ՚ընդառաջեն:

Նոր նյութը վարժուհին լրջորեն պետք է պատրաստե, որպեսզի անթերի ու լրիվ պատմել կարողանա: Մանկապարտեզի պզտիկներուն համար դրքին վրայեն կարդալը կենդանի տպաւորուէյուն չ՚ըներ. պատմուէյունը պիտի դա վարժուհիի հոգիեն:

Բայց պետք է պահվին ժողովրդական ու գրական կտորներու բոլոր բանահյուսական ու լեզվական առանձնահատկությունները. երբեք պետք չէ «սրբագրություններ» կատարեն վարժուհիները ըստ իրենց հասկացողության ու քմքին. չատ դժվար հարց է գեղարվեստական ստեղծագործության ձեռք զպցնելը. գանազան պատճառներով եթե հարկ ըլլա բան մը կրճատել, պետք է կատարել կրճատումը լուրջ խորհելեն ետքը, երբ բացարձակ կերպով անհրաժեշտ կհամարվի: Քիչ գործածվող կամ տղոց դեռ անծանոթ բառերն ու խոսքերը կամ պատմելու ատեն իր չեչտով հասկնալի դարձնել եթե անկարելի է, պատմությունը սկսելե առաջ հատուկ ու առանձին խոսիլ այդ մասին, և երբ բառն ու գաղափարը ըմբռնված է արդեն, անցնիլ բուն պատմության. մեկ կողմեն անհրաժեշտ է, որ պատմության մեջ մութ ու անորոշ բան չմնա, մյուս կողմեն ալ պետք չէ երբեք պատմության ամբողջությունը ընդհատվի:

Պատմության ավանդումը տեղի կունենա մանկապարտեզի առաջին տարին, ուր և երբ որ վարժուհին հարմար դատե. երկրորդ տարին հետզհետե սովորություն կդառնա որոշ ժամանակի մը վրա կանդ առնել, օրինակ՝ առաջին պահը կամ ճաշեն առաջ վերջին պահը կամ բոլորովին վերջին պահը՝ իրիկունը: Երրորդ տարին արդեն նշանակված պահեր կունենան ըստ նախապես պատրաստածված ժամացուցակի: Տեղը կրնա ըլլալ իրենց սրահը, պատշգամի մեկ կողմը, բակը՝ արևոտ կամ ստվերոտ անկյուն մը՝ նայելով տարվան եղանակին, կամ պարտեզը՝ ծառի մը տակ: Կամ վարժուհին կըլլա նստած, ու փոքրիկները՝ իր մոտիկը խռնված, կամ բոլորը կըլլան նստած հանգիստ դիրքերով վարժուհիին դեմը. ինչքան սեղմ խմբված որ ըլլան, այնքան դյուրին կհասնի վարժուհիին ձեռքը ամենուն, և այնքան դյուրին կըլլա առանց պատմությունը ընդհատելու ձեռքի թեթև շոշափումով մը վերջ դնել կամ առաջն առնել մեկ կամ մյուս պզտիկի ցրվածության և ավելորդ շարժումներուն: Եվ բուն պատմությունը երբեք պետք չէ սկսիլ, մինչև որ բոլորն ալ բացարձակապես անշարժացած չըլլան, և բոլորի ուշադրությունն ու աչքերը վարժուհիին հառած չըլլան. և պետք է ամեն կերպ հոգալ, որ մուռը ուշադրություն գրավող իրեր ու ձայներ չգտնվին:

Եվ վարժուհին պետք է պատմե միշտ սրտանց և իր պատմածը

ինքն ալ ապրելով, կենդանի շնչառով և լուրջ վերաբերումով, վարժուհիի ապրումն ու վերաբերումը իսկույն կփոխանցվի փոքրիկ ունկնդիրներուն: Ամենազեղուն պատմությունը երբ անսիրտ կամ անփույթ կպատմվի, հոգնած շնչառով, պարտք մը կատարելու պես կամ կարծես մեծ կարևորություն չտալով, երբեք իր նուիրն քաշել չի կրնար փոքրիկներու սիրտն ու հոգին: Շատ միջակ պատմություն մը, սրտանց ու ապրելով երբ կպատմվի, կրնա խոր տպավորություն թողնել և մեծ հաճույքի աղբյուր դառնալ: Ինչպես որ թատերական բեմերուն վրա մեծ դեր ունին դերասաններուն խաղն ու վերաբերումը, այդպես ալ վարժուհիի հոգին ու վարմունքը մեծ կարևորություն ունին իր պատմելու ընթացքին:

Պատմությունը երբ կլրանա, վարժուհին պետք է պարզ հասկցնե, որ վերջացավ, թե չէ փոքրիկները միշտ կսպասեն: Վայրկյան մը հանդիստ պետք է թողնել, որ ինքզինքնին գտնեն ու վերադառնան իրականության: Հաճախ կպատահի, որ պզտիկները հարց մը կուտան. երբեք անպատասխան պետք չէ թողնել, բայց միշտ կարճ ու կտրուկ պատասխան մը. պետք չէ, որ բուն պատմության երկար-բարակ բացատրական պոչ մը փակչի և տպավորության ամբողջականությունը մթագնե:

Հաջորդ կրկնություններու առնն, երբ նյութը ավելի է մարսված, ավելի անվախ կերպով կարելի է ընթացք տալ լրացուցիչ հարցերու: Եվ վերջապես հինգ ու վեց կրկնություններն ետքը վարժուհին ինքը հարցեր կուտա, կխոսեցնե տղաքը պատմության մեջի մարդոց, անոնց վարմունքին, անոնց գործերուն, պատահարներուն և անոնց մտածումներուն շուրջը, այսինքն ինչպես որ դիտության պահերուն չրջակա իրերն ու երևույթները դիտողության կառնվին, այնպես ալ այս պատմություններուն մեջ երևցող ընկերական պայմանները, վիճակները, հասարակական երևույթները կառնվին դիտողության տակ:

Իր քանի մը անգամներ արդեն պատմած պատմությունը, երբ կհուսա, որ փոքրիկները կրնան հիմա իրենք ալ լրիվ պատմել, փորձել կուտա: Անոնք զրեթե գոց կլսեն, այդպես ալ պետք է, ինչքան ճիշդ ու նման ըսեն վարժուհիի ըսածին, այնքան ավելի աղեկ: Վարժուհին իրեն կվերապահե հուշարարի դերը՝ պատմող փոքրիկին բերանը դնելով չարունակությունը կազմող մեկ-երկու

բառ, երբ փոքրիկը կդժվարանա վրա բերելու: Իսկ երբ կնկատես, որ պատմողը դեռ լավ չի կրնար, պետք չէ եւեւէն իյնա, աննկատելի կերպով շարունակութիւնը պետք է անցնես ընկերոջը. արդէն միշտ լավ է բերնէ բերան պատմել տալ ինքնամփոփ խոշոր կտորներով, որ ամենքն ալ արթուն ըլլան և իրենց մտքին մեջ կրկնեն ու հետեւին:

Պատմող աշակերտներեն ո՛չ միայն պահանջելի է, որ բան չմոռնան, չաղճատեն ու ամբողջութիւնը պահեն, այլև կպահանջվի արտահայտութեան բնական կենդանութիւն. հարց, շեշտ, զարմանք, հրաման՝ ամեն ինչ պետք է արտասանվի ըստ իմաստի, ձայնի բնական ելևէջներով և ընդհատումներով. տղաքը ճիշդ իրենց վարժուհիին պես պետք է պատմեն սրտանց և ապրելով:

Երբ տղաքը արդեն գրեթե բոլորն ալ կկրկնեն ու կըսեն հեքիաթը, պատմութիւնը, կատակը, ոտանաւորը իր ամբողջութեամբ և տանելի արտահայտութեամբ, արդեն ժամանակ է նյութը ցանկին հանելու: Ամենեն լավ պատմողներն ու արտահայտվողները լավ է փոխնիփոխը վարժեցնել մանկապարտեզի ամբողջ հասարակութեան առաջ բեմ ելլելու, որ փոքր տարիքեն վարժվին բազմութեան ներկայութիւնը դիմագրավել:

Գալով ներկայացնելու համար հարմար եղող նյութերուն, պատմելն ու բացատրելը կկատարվի բոլորովին նույն ձևով. նույն պատմողը կխոսի երկու-երեք անձերու փոխարեն՝ ներկայացնելով բոլոր անձերն ալ: Երբ հասած են արդեն որոշ աստիճանի վարժութեան և գոց կըսեն արդեն հարկ եղած շեշտով ու ձևով, կսկսի «նոր խաղը». խոսակցութիւնները կկիսվին. փոքրիկ մը մեկ դերը միայն կըսե, մյուս անձերը կըսեն ուրիշ փոքրիկներ. հեղինակի փոխարեն ալ կխոսի ուրիշ մը, և պատմութիւնը կդառնա ներկայացում, խմբական, խոսակցական պատմութիւն մը:

Ամենեն հաջող ներկայացնողները կհանվին բեմ մանկապարտեզի առաջ, միայն այնպես պետք է ընել, որ հետզհետե բոլոր պզտիկներն ալ արժանանան այդ բաղդավորութեան: Իրավ որ այդ թատերական խաղերը փոքրիկներուն համար մեծ ուրախութեան աղբյուր են, երբ մանավանդ ավելի գրավիչ կդառնան թղթե ու կտորե զանազան գույնանի հագուստներով, փայլփլուն զարդերով և արտասովոր դիմակներով ու ծպտումով:

II. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՊԱՀԵՐԸ ՏԱՐԲԱԿԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՄԵՋ

Ա. ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԵՆ

Հոս ալ անշուշտ առաջին և հիմնական նպատակը նույնն է՝ գեղարվեստական վայելք, հոգիի հուզում, երևակայության խաղ: Երկրորդ նպատակն է, որ մեծ փոփոխության կենթարկվի. գոյ ըսել տալու, հաճախ կրկնելու և լեզվի զարգացման տեսակետները կկորնչեն իրենց առաջնակարգ կարևորությունը: Գեղարվեստական երկերուն ունկնդրությունն ու ընթերցումը անշուշտ որ միշտ ալ պիտի մնա լեզվի զարգացման վրա ազդող մեծ իրողություն մը, բայց ատիկա չէ այլևս այս բանահյուսական պահերու աշխատանքին ուղղակի նպատակը: Լեզվի մշակման ու զարգացման հատուկ հոգերով տարվող պահերը լեզվի դասերն են նախակրթարանի մեջ ամեն օր ժամ մը և ավելի. չարաթական այս երկու պահերը, որ կհատկացվին բանահյուսության, լեզվական մասնավոր պարտականություններ չունին իրենց ուսին. լեզուն կպղտե ինքնիրենը:

Լեզվի մշակման հոգերուն տեղը կբռնեն ընթերցանությունը մշակելու հոգերը: Ընթերցանությունը սիրելի դարձնել փոքրիկներուն, ընթերցումը փնտրել, ընթերցման պահանջ ունենալ, մշտական ու կանոնավոր ընթերցանությունը սովորություն դարձնել, հետաքրքրվիլ գրքերով, կապվիլ գրքերուն: Դպրոցական կրթության ամենագլխավոր պարտականություններեն մեկն է գրքի ու գրականության խորունկ պահանջը դրոշմել տալու Հոգիին մեջ, ներշնչել գրքի ու գրականության մեր մշտական չփման մեջ ապրելու սերն ու բաղդավորությունը:

Ըլլա դպրոցին մեջ թե դպրոցեն ետքը, այլևս չկրնա տղան ապրիլ առանց գրքի, գրականության: Խորունկ վայելքներու, բարձր թռիչքներու, մարդկային անսահման մտածումներու և զարավոր իմաստություններու, ինչպես և գործնական առաջնորդության և օժանդակության աննման գանձարաններ են գրքերը: Ով իր ամբողջ կյանքի ընթացքին օրև օր գրքերու մտերմությամբ կապրի, մարդկության լավագույն և անոնց ստեղծած ամենաազնիվ

դէմքերուն հետ մշտական շփման ու մտերմութեան մէջ կապրի: Եվ մեկ կեանքով մը չապրիր, այլ բազմաթիվ կեանքերով կապրի: Հարուստ է իր հոգին և բազմակողմանի, լայն է իր տեսողութեան շրջանը, հուսալից է ու լավատես, որովհետև լայն ու խոր է մարդկային հոգիի մասին իր ունեցած ծանոթութիւնը: Ցավին ու վշտին եթե ո՛չ մոռացում, գեթ մեղմացում կուտան գրքերը, սփոփանք ու մխիթարութիւն և ազատ ու անգործ պահերն ալ կլեցնեն հաճելի զբաղումով: Ով աշխարհքի մասին կարդալու և աշխարհի մասին մտածելու է վարժված, իր միայնակ պահերուն այլևս մինակ չէ և աւորր Համար ալ ձանձրույթը բավածը գրեթե չգիտե:

Դպրոցական կեանքի առաջին իսկ օրերեն պետք է սկսվի գրքերու հետ այդ մտերմութիւնը: Մանկապարտեզի մեջ ազատ ըսել ու պատմելն էր զերազասելի՝ փոքրիկներու սերն ու հոգին ըսող ու պատմող վարժուհիին կապելով. հոս չանք կրլյա այդ սերն ու կարոտը կապել ավելի տևական ու մնայուն անձի մը՝ գրքին. գիրքն է, որ կխոսի, գիրքն է, որ կպատմե, ուսուցիչը ետ կքաշվի, ան միջնորդ մըն է միայն, էականը պետք է դառնա գիրքը: Այս պատճառով ալ նախակրթարանի մեջ, մանկապարտեզի մեջ եղածին հակառակ, պատմութիւնները պետք չէ պատմվին, պետք է կարդացվին: Այս հիմնական պատճառեն զատ կան անշուշտ գեղարվեստական ու գործնական ուրիշ պատճառներ ալ, որ նախակրթարանին մեջ պատմութիւնները կարդալ կստիպեն, ո՛չ թե պատմել:

Եվ ուսուցիչները խորապես պիտի ըմբռնեն, որ իր այդ ընթերցման պահերը կանոնավոր կերպով կրկնվող և ամբողջ ապագայի Համար խորը դրոշմվող օրինակներ են, և որ ինքը իրավունք չունի անպատրաստ ու անփույթ դասարան մտնելու և գիրք մը բանալու, որ Հատված մը կարդա դասարանին. պարտական է ամեն ինչ խնամքով պատրաստած, մտածած ու հոգացած ըլլալու:

Գեղարվեստական վայելքեն և գրքերու մտերմութիւն ընտելացնելեն զատ՝ բանահյուսական այդ դասերը տարրական նախակրթարանի մեջ ունին նաև երրորդ նպատակ մը: Միևնույն բանը, ինչ որ կար մանկապարտեզի մեջն ալ, միայն չատ թեթև ու համեստ չափով մը ու չատ մեղմ ու զգուշ ձևով: Հոս արդեն կշեշտվի ու կընդգծվի: Այս ընթերցումներու երրորդ նպատակն է ազնիվ

զգայուններու, ազնիվ վարմունքի, ազնիվ աշխատանքի, ազնիվ մտածողութեան, ազնիվ խոսքի ու արուեստագիտութեան սերը ներշնչել և ազնիվ մարդոց կենդանի օրինակը մշտապես բարձրացնել տղոց հոգիներուն դէմը, այսինքն տղոց բարոյական կրթութիւնը կհյուսվի անոնց հոգիի գեղարուեստական կրթութեան, անոնց ճաշակին ու բանահյուսական զարգացման: Ինչքան հաճախ որ մնծ ու անձնվեր, խոր ու ազնվական դէմքեր, գործեր ու ձգտումներ և այդ բարձր դէմքերուն կրած տառապանքներն ու հալածանքը ու արիութիւնը ցուցադրվի տղոց, այնքան խոր կըլլա անոնց հոգիին մեջ բարձր, վեհ ու մաքուր զգայուններու հանդեպ իրենց ունեցած հափշտակութիւնը:

Բ. ԱՎԱՆԴՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Ստացման առաքինանը ուրեմն նյութի ընթերցումն է ուսուցչի կողմեն դասարանի առջև. ո՛չ թե պատմել, այլ կարդալ, և կարդալ դրքին վրայեն վերը բացատրված պատճառով, և տպավորութիւնն ալ բոլորովին ուրիշ է, տետրակը, թղթի կտորները, անկազմ քանի մը էջ, այս բոլորը դեռ չինվող, դեռ ի լինելութեան եղող բանի մը տպավորութիւններ կընեն: Տպված, աղվոր կազմված, իր վերջնական ձևով աղվոր դիրքն է, որ վերջնականի, կատարյալի, մնայուն ու հաստատ, կայուն բանի մը կնիքը ունի իր վրա:

Գրքի աղվոր տեսքը բովանդակութեան հաճելիութեան վրա անշուշտ կազդե, և բովանդակութեան գրավչութիւնն ալ կկապվի գրքին, կնպաստե գիրքը սիրելուն, նույնիսկ արտաքինը: Գրքին ըմբռնումը և աղվոր պատմութիւններուն ըմբռնումը անքակտելի կհյուսվին իրարու և կնպաստեն ընթերցանութեան պահանջին, ընթերցանութեան ծարավին:

Ուսուցիչը նախապես տունը ո՛չ միայն անհրաժեշտ է, որ ուշադրութեամբ կարդացած ըլլա մտովի, այլ պետք է նաև, որ անգամ մը-երկու կարդա նաև բարձրաձայն: Փորձ ընողը միայն կնկատե, թե ինչքան ընթերցման թերութիւններ ու անհարթութիւններ կան, որ միայն աչքով կարդալու ատեն վրայեն կսահինք առանց նկատելու. բարձրաձայն կարդալու ատեն միայն կզգանք, որ պարզ ընթերցումը շատ տեղ նյութը հստակ ըմբռնել

չի տար, անհրաժեշտ է հստակ շեշտ ու արտահայտական մասնավոր երանգ ու զգացականություն: Եվ վերջապես մտովի կարդացողը բնական միտում ունի արագ կարդալու, ուրիկ կառաջանա ձայնով կարդալու միջոցին որոշ հնչյուններու ձուլումը բերնին մեջ, բառերու չփոթ ու անհստակ արտասանությունը, և տեղ-տեղ ալ այն աստիճան ցած ու մեղմ կարտասանվի, որ կարդացվածը պարզ չլսվիր: Այս բոլոր թերություններուն առջևը առնելու, այլև իր ընթերցման ջերմությունը ավելցնելու, հոգեկան մասնակցություն բերելու և կարդացվածի բոլոր նրբություններն ու գեղեցկությունները լիովին արտահայտել կարողանալու համար պահանջ է, որ դասարանին մեջ կարդացվելիքը նախապես ամբողջությամբ և բարձրաձայն կարդացած ըլլա ուսուցիչը ամեն բանի վրա մտածելով:

Իսկ բառերը սխալ կարդալ, սխալը կերպ մը պարտկելու համար անպատրաստից նոր նախադասություն մը չինել կարդացած միջոցին կամ կենալ ու սխալածը նորեն կարդալ, այս ամենը ներելի չեն բացարձակապես: Այս նուրբ ու մանր բաներով է, որ կխանգարվին ու կաղարտվին գեղեցկությունները: Ջափով գրված կտորներու ընթերցման ատեն ամեն կերպ պետք է խուսափիլ արտասանության միակերպութենեն, իբրև թե չափը պահելու համար. չափերը ինքզինքնին կպահեն, պետք է կարդալ ըստ իմաստի և ապրելով: Բայց պետք է խուսափիլ և մյուս ծայրահեղութենեն՝ դեմքի, մարմնի, ձայնի չափազանցումներեն. այդ բոլորը ինչքան զուսպ ըլլան, քիչ ու խնայելով, այնքան ավելի աղնիվ տպավորություն կընե ընթերցումը:

Բացատրություն պահանջող բառերը, գաղափարները և հատուկ անուններու մասին պետք է խոսիլ ընթերցումը սկսելեն առաջ, կարճ ու կտրուկ, լեզվի դասի չվերածելու պայմանով: Հաճախ ընթերցանության ատեն կարելի է բացատրող բառը բնագրին հյուսել, իբրև բացահայտիչ մը, առանց ընթերցումը ընդհատելու:

Ընթերցման դասի համար ստացումն ու յուրացումը նույն բանն է, այսինքն ուսուցչի կարդացածին ունկնդրելը, և ճիշդ ատոր համար ալ անհրաժեշտ է, որ ամեն բառ լիովին արժեցված ըլլա, ճիշդ ըմբռնված և պարզ ու հստակ: Եվ պետք չէ երբեք տղոց պատմել տալ, որ չդառնա լեզվի դաս:

Պզտիկ դաշտարի մը եւոքը, որ ընթերցման տպավորութիւնը նատի, պետք է անցնիլ ուղղակի խորացման հարցերու: Նախ գեղարվեստական տեսակետեն քանի մը քննական հարցեր, որ առուզվի, թէ լրիվ ըմբռնած են գրվածքին էութիւնը, գլխաւոր շեշտը, պատմվածքին աղը, ըմբռնած են դիմքերը ճիշդ, ներկայացված գործողութեան կամ վիճակներուն իմաստը. կհաջորդեն գնահատական հարցերը. ի՞նչը.ավելի հաւնեցան, կարդացածի ո՞ր մասը, ո՞ր կողմը, և գեղարվեստական համեմատութիւն մը այս կամ այն կողմեն նախորդ ընթերցման հետ:

Այս գեղարվեստական հարցերուն կավելնան, երկրորդ, ընկերական-բարոյական տեսակետեն մոտեցող հարցերը, սիրելին ու մերժելին վարմունքի ազնվութեան, մտածումի ու վերաբերումի բարձրութեան տեսակետեն. ինչո՞ւ այսինչ դիմքը կամ այսինչ գործը գեշ էր, ստոր ու դատապարտելի. և գեշ էր որո՞ւ համար. և հետզհետե դնշերն ու աղեկները իմքելով՝ կհանվին բնական կերպով ընկերական սկզբունքները վարմունքի ու բարոյականութեան, և հետզհետե կկազմվի տեսակ մը ցանկը ընկերութեան դրած պահանջներուն:

Գ. ԻՆՉ ԿԱՐԴԱՆՔ

Տան ու դուրսի ընթերցումը ենթակա է ամեն տեսակի պատահականութեան, և լավ ու պիտանի գրվածքներու հետ շատ հաճախ երկրորդական ու անկարևոր կտորներ ալ կկարդացվին փոքրիկներուն իրենց ծնողներու և հարազատներու կողմեն, որովհետև ընթերցումը ժամանցի և հանգիստ պահելու միջոց կնկատվի, ինչպես մնծերուն համար ալ ձանձրույթը փարատելու կամ չեկող քունը բերելու միջոց:

Դպրոցի մեջ տեղի ունեցող այս դասարանական ընթերցումները կռիվ մըն է ըլլալու այդ տեսակի ըմբռնումին դեմ: Այս ընթերցման պահերուն, ինչպես և եոքը, դպրոցի դրդումով կատարված ընթերցումներու առեն, ամեն ջանք գործ կդրվի, որ տղաքը լսեն ու կարդան միայն այն բանահյուսական երկերն ու կտորները, որոնք գրական լուրջ արժեք ունին ու թանկագին են, որոնց կրկին ու կրկին ընթերցումը գա պիտի հաջորդ շրջաններուն ալ, բնականաբար հետզհետե ավելի խոր ըմբռնումով:

Այս շրջանի համար հատկապես պետք է մատնանշել հետևյալ տեսակի նյութերը:

1. Հայ ժողովրդական հեքիաթներ, ընտիրները, անշուշտ վերածված գրական բարբառի, միայն մեծ զգուշությամբ, որ համն ու ոճը չկորչի:

2. Եվրոպական օտար ժողովուրդներու հեքիաթներեն նորեն մեծ ինամքով և զգուշությամբ վերածված հայերենի, որ չկորչի ժողովրդական ինքնահատուկ կնիքը, պարզությունն ու գեղեցկությունը:

3. Հին ու միջնադարյան առասպելներեն ու վիպերգություններեն ընտիրները, հունական, քաղդեական, հրեական, արաբական, հնդկական ու ճապոնական. «Նալ ու Դամայանտի», «Զինպատ նավորդը», «Պրոմեթեոս», «Ոտիսևս», «Աշխարհի ստեղծումը», «Զրհեղեղ», Հովսեփ Գեղեցիկ», «Դավիթ ու Գողիաթ» և նման չատեր:

4. Ժողովրդական նյութերու գրական մշակումներ, ինչպես Ղ. Աղայանի Արեգնազանը», «Անահիտը» և Հով. Թումանյանի ամբողջ չարքը՝ «Զարին վերջը», «Գառնիկ եղբայր», «Քաջ Նազար», «Քեֆ ընողին քեֆ չի պակսիր», «Կաթիլ մը մեղր», «Զախչախ թագավոր»: Այդպես ալ ուրիշ ժողովուրդներու նման գործերը, ինչպես Ա. Պուշկինի «Ոսկի ձկնիկը»:

5. Կենդանիներու կյանքը ներկայացնող հին ու նոր պատմություններ, ուր կպատկերացվին անոնց իրական վիճակը, անոնց ապրումներն ու զգացումները. այսպես՝ միջատներու կյանքեն, թռչուններու կյանքեն, չորքոտանիներու կյանքեն:

6. Եզովպոսի, Լաֆոնտենի ու Քռիլովի առակներեն՝ միայն մեկզի դնելով սկզբի ու վերջի բարոյական մասերը:

7. Մանուկներու կյանքեն առնված պատմություններ, օրինակ՝ Ամիչիսի «Սիրտը», Տոտեի «Լրտես տղան», Հով. Թումանյանի «Գիքորը»: Այդպես ալ մեծ մարդոց մանկության և պատանեկության մասին իրենց անձնական հուշերը, դեպքերը կամ ուրիշներու գրած կենսագրական գրավիչ տողերը:

8. Եվ վերջապես միջազգային գրական ստեղծագործություններուն մեջեն գեղարվեստական մեծարժեք երկերու փոքր տարիքի

համար հարմարցված հրատարակութիւնները՝ «Ոսկինդոն», Շևքսպիրի երկերուն, «Դոն Քիշոտ»:

Այս նյութերուն մեկ կարևոր մասը առնված են սովորաբար ընթերցարաններու մեջ. այս իրողութիւնը պատճառ պետք չէ ըլլա, որ ընթերցման դասերուն առանց չմոռնանք. ընդհակառակը, մեր ընթերցումին քանի մը ամիս ետքը կամ հաջորդ տարվան սկիզբները, երբ նույն պատմութիւնները կդառնան լեզվի աշխատանքներու նյութ, հավելյալ հետաքրքրութիւն մը կբերեն իրենց հետ, իբրև արդեն ծանոթ նյութ, խոշոր չափով մը կթեթևացնեն լեզվի դասերուն նախապատրաստական աշխատանքը և գլխավոր ուշադրութիւնը կկենդրոնացնեն բուն լեզվական, արտահայտական ու շարադրական կողմերուն վրա: Նախընթաց այս ընթերցումները նպատակ մըն են միայն հաջորդող լեզվի դասերուն:

Գ. ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

I. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԵՋ

Մանկական հասակին երգը խաղի տեսակ մըն է և շատ հաճախ մյուս խաղերուն հյուսված, ճիշդ ինչպես որ է քաղաքակրթութեան վարի աստիճաններուն վրա գտնվող ժողովուրդներուն համար:

Խաղերուն հյուսված երգերը երբեմն ամբողջ խաղին զույգ կերթան, երբեմն կմասնակցին խաղի մեկ մասին, երբեմն կարծես շարժումներուն ռիթմ տալու համար են միայն, երբեմն ալ խաղերուն մեջի դադարը կլեցնեն:

Այս կարգի երգերուն ինչպես բառերը, այնպես ալ եղանակները կսորվին տղաքը խաղի ընթացքին, խաղալով: Վարժուհին պետք է հետևի միայն, որ բառերն ալ, եղանակն ալ ճիշդ ըլլան:

Առանձին երգվող երգերը բնականաբար պետք է առանձին ալ սորվեցնենք, թե՛ բանաստեղծութիւնը, թե՛ եղանակը: Ինչ որ բառերուն կվերաբերի, փոքրիկներուն երգերը պետք է առնված ըլլան փոքրիկներու հարազատ աշխարհեն, իրենց ապրումներեն ու մտածումներեն, մեծերուն երգերը անոնց պետք չէ սորվեցնել:

Թե՛ հայ գրականութեան, թե՛ հայ լեզուի, ինչպես և փոքրիկներու կրթութեան հանդեպ գործուած հանցանք մըն է անիմաստ, աղաւաղուած ու չհասկցուած բառերով տարօրինակ նախադասութիւններ երգել տալը փոքրիկներուն:

Առանց բառերու, միայն եղանակ, գործնականապես գոյութիւն չունի այդ տարիքի համար: Հաճախ բառեր ունեցող երգը կերգուի նաև լա-լայով կամ տո-ռե-ով. ասիկա անբառ ըսել չէ, քանի որ փոքրիկը ատոր բառերը գիտե, և իմաստներ ու զգացումներ կապուած են արդէն այդ եղանակին:

Պետք է խուսափիլ անարտահայտիչ կամ տկար արտահայտութիւն ունեցող եղանակներէ, իսկ տխուր եղանակներ պետք չէ սորվեցնել երբեք. փոքրիկներուն պահանջը ուրախութիւնն է. զուարթ, շարժուն, եռանդուն եղանակներ, ամբողջովին խաղ ու կատակ, բայց միշտ անոնց սրտին խոսող:

Թե՛ ականջի ճիշդ կրթութեան, թե՛ ռիթմի հաստակութեան և թե՛ ավելի գեղեցկութիւն ու հաճոյք տալու համար երգերուն միշտ պետք է ընկերանա նվագը: Ամենէն վստահելի գործիքը դաշնակն է, որովհետև նոթերը մնայուն կերպով լարված են, և սխալ նոթ հանել չես կրնար. իր մեծ անհարմարութիւնը՝ տեղէն չշարժիլը: Եթե երգերը ղեկավարող վարժուհին բավականաչափ ջութակ նվագել գիտե, անշուշտ որ կունենա իր ձեռքը նոր մեծ առավելութիւն մը. շատ ավելի մարդկային ձայնին մոտեցող է ջութակը, շատ ավելի անմիջական կերպով մեր զգայութիւններուն կզարնէ և դյուրին ալ կարելի է տանիլ-բերել ամեն տեղ:

Երբեմն դաշնակով, երբեմն ջութակով, երբեմն երկուքը միացած, անտարակույս որ շատ ավելի գրավչութիւն ունին երգերը և շատ ավելի ճիշդ ու խոր ըմբռնել կուտան եղանակն ալ, եղանակի արտահայտել ուզած իմաստն ալ:

Երաժշտական տեսական բացատրութիւններու տեղը չէ անշուշտ մանկապարտեզը, բայց պատճառ մը չկա, որ վարժուհին երգերու ընթացքին մեջեմեջ ձայնական վարժութիւններ ընել տա ձայնն ու ականջը ավելի կրթելու համար:

Երգը մանկապարտեզի կյանքին անխզելի մեկ մասն է: Օրը պետք է սկսվի աշխատանքի կանչող, գործն ու շարժումը դրվատող

աշխուժ երգով մը: Խաղերը հաճախ պետք է հյուսված ըլլան կամ միջակեսային երգերով, ձեռական աշխատանքներու ատեն կարելի է երգել տալ. պտույտներու ատեն փոքրիկները պետք է ունենան իրենց երգերը ազատ պահերուն, պարտեզը ծառի մը տակ խմբված իրենց վարժուհիի շուրջը հնչեն պիտի զվարթ եւվէջները մանկական ձայներուն: Եվ օրն ալ արդեն պետք է վերջանա աղմոր երգով մը՝ տան ու հարազատներու կարոտով, վաղը գալու ուրախանքով, ընկերներու հետ անցված օրվան գովանքով:

Եվ լավ է, որ առտվան ու իրիկվան այս «ծիսական» երգերը քանի մը հատ ըլլան թե՛ բառերով, թե՛ եղանակով, փոխնիփոխ երգվելու համար:

II. ՏԱՐՐԱԿԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՄԵՋ

Երգեցողության ուսուցումը դպրոցի տարրական շրջանին մեջ կհետապնդի 1) ականջի երաժշտական զարգացումը, 2) ձայնի երաժշտական զարգացումը, 3) չափի ու ռիթմի ըմբռնումը. 4) յուրացումը արժեքավոր և ճաշակավոր երգերու և 5) ըմբռնումը, թե եղանակը զգացումներու արտահայտություն մըն է:

Ականջի երաժշտական զարգացման համար տղաքը պետք է հաճախ երգ ու նվագ լսեն թե՛ ուրիշներու շրթունքեն և թե՛ իրենց շրթունքեն և թե՛ գործիքներու վրա նվագված: Ձայնի երաժշտական մշակման համար պետք է երգեն, պետք է հաճախ երգեն ղեկավարությամբ. նույնը նաև չափի ու ռիթմի զգացումին զարգացմանը համար:

Մանուկ հոգիի և մանկական ապրումներու արտահայտությունը եղող երգերու հաճախակի ունկնդրելը և հաճախակի իրենց ալ կրկնելը, սիրելն ու հաճույք զգալը բնական կերպով կամրացնեն եղանակի և երգողի արամադրության մեջ եղող սերտ կապը, և կամաց-կամաց կզգան, որ երգը հոգիի արտահայտություն է: Մեկ կողմեն լեզուն է, բառերը, որ հոգին կարտահայտեն, մյուս կողմեն ալ՝ եղանակը. արդեն ատոր վրա է հիմնված երգի բառերուն ու եղանակին մեջ ներդաշնակություն գտնվելու պահանջը: Բառերը պիտի պատմեն եղանակին ըսել ուզածը, և եղանակն ալ չունչ ու

խորութիւն պիտի տա բառերու ըսածին: Բառերն ու եղանակը նույն զգացումները, նույն որոնումները, նույն կարոտը, նույն հուզումները պետք է արթնցնեն. հակառակ պարագային կխանգարուին իրար, փոխանակ գործակցելով նույն զգացումը ուժեղցնելու և ավելի ցայտուն դարձնելու՝ միասին գալով իրարու ուժն ու հատկութիւնը կչեզոքացնեն:

Ինչքան ալ ազնիվ ու բարձր ըլլա բառական բանաստեղծութիւն մը, երբ վրան տափակ եղանակ մը կդնես կամ դիցուք արժեքով, բայց տարբեր տրամադրութեան ծնունդ եղող եղանակով մը կերգես, իր գեղեցկութենեն շատ բան կտուժե: Եվ ընդհակառակը, հոգիի խորքեն բղխած աղվոր եղանակ մը, ինչքան ալ թրթռուն ըլլա, երբ անմիտ կամ ծիծաղելի կամ չինծու, ուռած ու ճարտասանական բառերու կույտի մը վրա կդնես, կկորսնցնես իր համայքին բան մը. այս տեսակ պարագային գերադասելի է, որ բառերը օտար ըլլան, խրթին ու անհասկնալի, որ բան մը չբռնեն ու եղանակը ազատ ձգեն:

Այս իրողութիւնը անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ նաև այն պարագային, երբ փոխառութիւն մը ընել կուզենք ուրիշ ժողովուրդներու մանկական երգերեն: Մանկական երգերը անխտիր բոլոր ազգերու մեջ ալ հաղվագյուտ են, երբ մանավանդ ընտիրները կփնտրենք և բնական կերպով ուսուցիչները իրենց ազգային դանձարանը բավական մը խառնելեն ետքը ձեռք կերկարեն օտար ազգերու մանկական երգարաններուն և հավնած եղանակները փոխանցել կուզեն մայրենի գրականութեան. հոս է, որ մեջ կուգա բառական մասի թարգմանութեան կարևորութիւնը: Այդ գործը անպատճառ պետք է կատարվի գրական նուրբ ճաշակ ունեցող մարդու մը ձեռքով, որ միևնույն ժամանակ եղանակի ոգին ըմբռնած ըլլա և եղանակը ականջին մեջն ունենա թարգմանութեան կամ փոխադրութեան ատեն: Ազգայնացնելու ու հարազատ դարձնելու համար շատ մը բառեր, ձևեր ու համեմատութիւններ հարկադրված է փոխելու. պարզ թարգմանութիւնը պաղ ու օտար բան մը կդառնա, միակ առողջ միջոցը նմանվիլն է, հետևիլը, ազատ փոխադրութիւնը:

Առաջին երկամյակին մեջ եղանակները կըլլան ու պիտի ըլլան դուռ հատուկ մանկական, մանկական ապրումները, մանկական

զգացումներու հարազատ արտահայտութիւնը եղանակով ու բառով: Մեծերու համար դժուար է մանկան հոգիին ծալքերը այդքան խոր զգալը, և ատոր համար ալ ընտիր ու իրական մանկական երգերը առատ չեն: Իսկ իբրև թե մանկական, բայց մեծերու հասկացողութիւններով և թուքով փակցված եղանակները կեղծ ու չինծու կՀնչեն, կփճացնեն փոքրիկներու ճաշակը, կկտրեն զգացումներու և երգի մէջ եղած բնական սերտ կապը և երգը կդարձնեն զանազան ելևէջներով պոռալու հաճոյք մը:

Երկրորդ երկամյակին այս դուռ մանկական եղանակներուն ու բանաստեղծութեան կարելի է միացնել մեծ զգուշութեամբ և ընտրանքով մեկ-երկու ժողովրդական ու ազգային երգեր, որոնք իրենց ոգիով ու կաղմով մոտիկ ըլլան այդ թարմ տարիքի հասկացողութեան ու սիրվին:

Երաժշտական քերականութեան տեսակետեն այս չորս տարիներու ընթացքին և մասնաւորապես վերջին երկամյակին երկու կարևոր նախապատրաստական աշխատանք կա. մեկը եղանակը բաղադրող ձայներու առանձնացումն է, այսինքն նոթաներու ըմբռնումը, մյուսը՝ ամեն եղանակի մեջ տիրող ռիթմի ու չափի ըմբռնումը: Այս երկուքն ալ պետք է կատարվին սակայն ո՛չ թե տեսական բացատրութիւններով և դատողութեամբ, այլ նորեն գործնական ճամբով:

Եվ ատոր համար առանձին պահեր հատկացնելու կարիք չկա, ո՛չ ալ կարելիութիւն. ամեն երգեն ետքը, երբ արդեն ազատ տիրացած են երգին, ուսուցիչը կանգ կառնե այդ կետերուն վրա, կերգե ու երգել կուտա՝ չափին վրա տղոց ուշադրութիւնը կեդրոնացնելով, նախորդ երգերու չափերուն հետ համեմատելով: Այդպես ալ երգելով ու երգել տալով կընդգծե երգին մեջ տիրող և իրար հաջորդող գլխավոր ձայները, որոնք հետզհետե երգեն կառանձնացվին, ու կամաց-կամաց կկազմվին դամմանները՝ իբրև ուրույն երաժշտական վարժութիւն. Հին մանկապարտեզի մեջեմեջ կրկնվող վարժութիւններն են նորեն ընդհանրապես, միայն այս անգամ արդեն առանձին նոթաներու էութիւնը ըմբռնած: Տղաքը պիտի կարողանան մինչև այս շրջանին վերջը ութնյակ մը ճիշդ ելևէջել և տված նոթաներուն ձայնը ճիշդ հանել:

Ամբողջ աշխատանքը բանավոր, նոթաները գրելու դեռ պետքը չկա. նոթաները իբրև արտահայտող նշան ուսուցիչը կգործածե իր յոթը մատները. ճկուլթը ժո է. իսկ գրատախտակի վրա կրնա գործածել պարզապես յոթը առաջին թիվերը՝ իբրև նոթաններ:

ԵՐԳԵՐԸ ՍՈՐՎԵՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑՔԸ

Ստացման աստիճանին վրա 1) ուսուցիչը կըսե անգամ մը երգին խոսքերը ամբողջովին, պարզ ու հատակ և որ 10-12 տողեն ավելի չէ ըլլալու. 2) կարճ խոսակցություն մը նյութին ու էության շուրջ, ուր կըացատրվին բնականաբար նոր ու դժվար բառեր, եթե կան, միայն ամեն ինչ կտրուկ, որ լեզվի դաս չդառնա. 3) կգրե տախտակին առաջին տունը և կպատվիրե, որ արտագրեն իրենց երգի տետրակին մեջ. կուտա երկրորդ ու հաջորդ տուներն ալ արտագրելու, մինչև լրանա: Այս արտագրությունները կսկսին երկրորդ տարվընե, բայց անկե անդին պետք է ըլլան պարտավորիչ. ժամանակ շահելու համար չտապելը կամ «եղանակի տեսակետեն կարևորություն չունի» ըսելով խուսափիլը պարզապես սխալ դատողություն է. երգը երգ է իր բառերուն ու եղանակովը, և երկու կողմերն ալ պետք է ավանդվին մեծ խնամքով և դպրոցը շտապելու տեղ չէ, և շտապելու ալ ոչինչ չկա. դիցուք տարվան մեջ երկու երգ պակաս թող սորվին, բայց սորվածները ազեկ սորվին:

Այս բառական աշխատանքեն ետքն է, որ կուգա երգի եղանակին ավանդումը. 1) ուսուցիչը նախ ինքը կերգե լրիվ եղանակը մեկ կամ երկու տուն. 2) կերգե առանձին եղանակին մեկ նախադասությունը և քանի մը անգամ իրեն հետ կրկնել կուտա տղոց. նույն ձևով և եղանակին հաջորդ կտորը, կերգվի ամբողջ տունը միասին, 3) նույն կերպով կերգվի հաջորդ տունը, ետքն ալ վերջին տունը և վերջապես 4) ամբողջ երգը կերգեն միասին մեկ ծայրեն մյուսը:

Յուրացման աստիճանին վրա նորեն անգամ մը կերգեն ամբողջը միասին. դժվար կամ ձախորդ կտորները կկրկնվին մեկ-երկու անգամ առանձին, ուրկե ետքը երգել կուտա տարբեր խում-

բերու տարբեր տուները և վերջապես կփորձեն, որ աշակերտները առանձին-առանձին երգին մեկ-մեկ տուն:

Խորացման աստիճանը երկու որոշ մաս ունի: Առաջին մասը կ'ըլլայ 1) նախ զգացումի ու եղանակի, բառի ու եղանակի մէջ կապը ցայտուն զարձնել տղոց՝ երգին տված իր չեշտերովը և մեկ-երկու թեթև բացատրութեամբ. 2) կերգեն ինքը եղանակին բաղադրիչ կտորները, երգել կուտա՝ մատնացույց ընելով կամ հանել տալով, թե ինչ արտահայտել կուզի այդ եւևէջը, ինչո՞ւ կըարձրանայ, ինչո՞ւ կ'իջնէ և ի՞նչ ձևով. 3) կհարցնե՝ երգին ու եղանակին որ կտորներն են ամենեն զեղեցիկը, այսինքն իրենց ամենեն ավելի սիրածը. պատասխանները կըլլան հաճախ շատ զանազան. եթե չեշտված մեծամասնութիւն մը կա, կարելի է փնտրել, թե ինչո՞ւ համար այդ կտորը ավելի կսիրեն, ինչո՞վ է ավելի զեղեցիկ, անշուշտ եթե պարզ ըմբռնելի բան մըն է:

Խորացման աստիճանին երկրորդ մասը չափի ու նոթայի բերականութեան շուրջը կդառնայ. 1) դիտել ու հանել կուտանք երգին չափը. 2) կփնտրեն ամենեն բարձր կետերը ձայնի, ամենեն վարի ձայնը և մյուս ձայներու սովորական դասավորութիւնը այդ երգին մեջ. 3) կկատարեն վարժութիւններ նոթաներու այդ ինքնահատուկ դասավորութեամբ և վեր ու վարի այդ սահմաններուն մեջ, որով ինքնին հետզհետե զգալի կդառնայ տարբեր եղանակներուն ինքնահատուկ կողմերը. 4) ուրկե ետքը զգուշութեամբ կարելի է մատնանիշ ընել, թե որոշ զգացումներ ձայներու ի՞նչ դասավորութեամբ կարտահայտվին:

III. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ

Երաժշտութեան դասը բարձր նախակրթարանի առաջին երկամյակին երկու նպատակ կհետապնդե: Մեկ կողմեն՝ գործնական ճամբով նոր ու նոր երգերով ու եղանակներով կրթել աշակերտներուն ականջն ու հոգին, ինչպես և կոկորդը, հետզհետե ավելի նուրբ ու ավելի բարդ երաժշտականութեամբ: Մյուս կողմեն ալ ավանդել աշակերտներուն երաժշտական հիմնական կանոններուն

տարերքը, որ սոլֆեժ կանվանենք. եղանակները գրելու և կարդալու արվեստը, ինչպես և եղանակներու կազմութեան քանի մը ամենապարզ օրենքները:

Ընդհանուր կրթութեյունը գոնե այսչափ մը պետք է տա բոլոր աշակերտներուն անխտիր թե՛ իբրև երգելու կարողութեյուն, թե՛ իբրև երաժշտական տեսութեյուն: Բայց ասկե անդին դժվար է և իմաստ չունի երաժշտական կրթութեյունը պարտադրել ամենուն: «Ձայն չունեցողին», «ականջ չունեցողին» կամ որևէ հակում ու հետաքրքրութեյուն չունեցողին ստիպելը անօգուտ է ու վնասակար և ժամավաճառութեյուն: Այդ պատճառով ալ բարձր նախակրթարանի երկրորդ երկամյակեն սկսած այլևս ընդհանուր դաս չկա երաժշտութեյան:

Ձայն ունեցողներու, սեր ունեցողներու համար կա և պիտի ըլլա խմբական երգեցողութեյան մեկ-երկու պահ շաբաթական, ուր գործնական ճամբով կշարունակվի երգելու կարողութեյան մշակումը թե՛ մելոտիկ և թե՛ հարմոնիկ տեսակետեն: Այդ երկու կամ ավելի ձայներով նրգվող երգերուն ուսուցիչը կկցե հաճախ քանի մը տեսական բացատրութեյուններ և ձայնագրութենեն օգտվելու քիչ մը ավելի խոր ծանոթութեյուն: Այս խմբական երգեցողութեյան դասերը կշարունակվին դպրոցին մեջ հինգ տարի, մինչև դպրոցական ընթացքին վերջը:

Աշակերտներեն անոնք, որ մասնավոր հակում կզգան որևէ գործիքի վրա նվագելու, կրնան ունենալ մասնավոր դասեր, դիցուք և դպրոցի հոգածութեյամբ և ընձեռած դյուրութեյուններով: Փոխարենը օգտագործելով անոնց հետզհետե կատարելագործած շնորհքն ու կարողութեյունը դպրոցի կազմակերպած աշակերտական հանդեսներու ատեն:

Ասիկա ինչ կվերաբերի ձայնական գեղարվեստի գործնական կրթութեյան դպրոցական վերջին հինգ տարիներուն: Բայց եթե երաժշտութեյան ներգործական յուրացումը ամենուն համար չէ որոշ սահմանե մը անդին, ընդհակառակը, երաժշտութեյան կրավորական վայելքն ու զարգացումը ամենուն համար է և ամենուն իրավունքը. դպրոցը պարտական է լրջորեն հոգալու այդ մասին:

Ընդհանուր կրթութեյան նվիրված հաստատութեյուններուն մեջ բարձր նախակրթարանի երկրորդ երկամյակեն սկսած հինգ

տարի չարունակ պետք է տեղի ունենա երաչտական կանոնավոր ու պարտադիր ունկնդրություն երկու շաբաթը անգամ մը: Վերին հինգ կարգերուն աշակերտությունը պետք է ներկա ըլլա այդ պարբերական ունկնդրություններուն, ուր պետք է նվադվին երաժշտական ընտիր կտորներ ընտիր տիկերու վրա որոշ կարգով ու խմբումով. ունկնդրության կկցվին ուսուցչի տված բացատրությունները արտահայտված զգացումներու երաժշտական արժանիքի, հեղինակի հոգիին, ստեղծագործելու եղանակներուն և նման հարցերու շուրջ և տարբեր դարերու, շրջաններու ու ժողովուրդներու հոգեկան առանձնահատկությունները աչքի առաջ ունենալով:

Այս պարբերական ունկնդրություններուն ներկա կրնան գտնվիլ նաև նախակրթարանի ավելի վարի կարգերու պատկանող աշակերտներ ալ երաժշտության ուսուցչի ցուցումով:

Ասկե զատ լսարաններու երեք տարիներու ընթացքին դեղարվեստի պատմության պահերուն կծանոթանան աշակերտները ավելի մոտիկեն ու ավելի սիսթեմատիկ կերպով երաժշտության զարգացման ընդհանուր հոսանքին, որոշ ժողովուրդներու այդ ուղղությամբ խաղացած մասնավոր դերին և ամենեն դլխավոր երգահաններու կյանքին ու գործին:

Դ. ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ի. ՁԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ա. ԻՐ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մանկապարտեզի զբաղումներուն առաջին տեսակը մտածումի և լեզվի հետ կապված աշխատանքներ էին: Երկրորդ տեսակը կկազմեն ձեռական աշխատանքները, զբաղումներ, ուր դլխավոր աշխատողը ձեռքերն են, ավելի ճիշդ արտահայտությամբ՝ մատներն ու աչքերը:

Այդ երկուքն են, որ կգործեն դլխավորապես. մյուս մկաններուն աշխատակցությունը երկրորդական է. բոլորն ալ նատուկ զբաղումներ են:

Մարդկային մարմնի արտաքին մասերեն ամենեն անարգել

ու ազատ գործողը մատներն են, իրերը բռնել գիտեն, իրերը իրարմէ զատել ու իրար ամրացնել, կապել, իրարու մէջ անցընել գիտեն, որով և նորանոր տեսակի բաներ կշինեն: Մարդկային քաղաքակրթութեան ամբողջ նյութական ստեղծագործութիւնը մատներով է ձեռք բերված, բոլոր գործիքներն ու մեքենաները մատներու շինած են. մարդկային ղույգ ձեռքերն են բոլոր գործիքներու մայր գործիքը:

Բայց մատները միայն շինող և ստեղծող չեն, այլև ուսուցող. մատներով կկատարվին բոլոր փորձերը, բոլոր դիտողութիւնները, բոլոր փոփոխութիւնները. մատները մարդուս մտավոր զարգացման ալ գլխավոր գործիքներն են:

Մատներ, աչք ու ականջ՝ այս երեքի սերտ գործակցութեան վրա է հիմնված էապես մարդուս ուղեղին մէջ ամբարված զգայութիւնները և այդ զգայութիւններուն կապակցութիւնները, այսինքն մարդկային մտքի կազմած դիտավորութիւններն ու գաղտողութիւնները: Այդ երեքի սերտ գործակցութեամբ է, որ կճանչենանք մենք մեզ շրջապատող աշխարհը:

Մարդկային մանուկը, երբ դեռ ո՛չ քալել կրնա, ո՛չ խոսիլ, կգործածէ սակայն իր այդ երեք կարևոր գործարանները շարունակ, երբ քուն չէ, և աստոնց բերած լուրերով կկանոնավորե արագ աշխատանքով իր ներքին հոգեկան աշխարհը, ըստ արտաքին շրջապատող աշխարհի իրականութեան:

Մատները չոշափող, դիտող ու տեղեկացնող են, ձեռքերը փոփոխող, քանդող ու շինող են. և՛ իբրև զգայարանք կգործեն, և՛ իբրև ուղեղին հրամաններն ու փորձերը իրագործող գործիք. կրկնակի դեր ունին ու կրկնակի արժեք և կրկնակի ալ հաճույքի աղբյուր են. զգալն ու հասկնալն ալ հաճույք է, ընելն ու ձևափոխելն ալ հաճույք է և ավելի ևս խոր հաճույք:

Մանուկներուն ձեռքերը անդադար կգործեն. խորին պահանջ ունին բռնելու, քաշելու, կոտրելու, փրցնելու, ծակելու, կապելու, փնջելու, դիզելու, շինելու, փեթթելու, տեղափոխելու, ձևափոխելու: Ասիկա իր շատ կարող գործարանը գործածելու բնական խորին պահանջ մըն է, միևնույն ժամանակ և ուսում ու դիտողութիւն, այլև միևնույն ատեն խաղ, զբաղում ու հաճույք:

Մանկավարժական այս աստիճանի բազմակողմանի ու

կարևոր գործիքի մը զարգացումը չօգտագործել չի կրնար մանուկներուն կրթարանը:

Ասոր համար է, որ խաղերուն հետ ու խաղերուն քովը մանկապարտեզի մասնավոր ուշադրութեան նյութ կդառնան ձեռարվեստները: Եվ իրենց նախնական վիճակին մեջ ձեռարվեստներն ալ խաղ են արդեն, որոշ տեսակի նստուկ խաղեր: Ուր սակայն մատներուն չինարար դերը շատ աչքի կիյնա, և բան մը շինելու և առաջացնելու դիտակցութիւնը կշեշտվի. կատարվող խաղը կզգացվի իբրև ընորհք, իբրև հատուկ բան մը ստեղծելու, բան մը շինելու կարողութիւն, իբրև արվեստ, իբրև աշխատանք:

Մատներու այդ զանազան տեսակի աշխատանքներուն շատերը հետզհետե անջատվելով, նրբանալով ու կատարելագործվելով ու վարպետանալով ապագային քիչ-քիչ կդառնան ինքնուրույն արվեստ ու գեղարվեստ:

Մանկապարտեզի մեջ գործադրվող բոլոր տեսակի ձեռարվեստները կբաժնենք երկուքի՝ ձեռական աշխատանքներ և նկարչութիւն:

Բ. ՇԻՆԵԼ ՈՒ ՇԱՐԵԼ

Ձեռական աշխատանք ընդհանուր անունը կուտանք մանկապարտեզի այն բոլոր զբաղումներուն, որոնք նյութ ու մարմին ունեցող առարկաներով կկատարվին և զանազան տեսակի նոր դասավորութիւն կուտան անոնց կամ ուղղակի նոր առարկա մը կառաջացնեն անոնցմե զանազան միջոցներով:

Այդ զբաղումները կրնանք բաժնել երեք խումբի. 1) շինել ու շարել. 2) կտրել ու վակցնել և 3) հյուսել, կարել ու բանել:

Առաջին խումբի հիմնական հատկութիւնն այն է, որ հիմնական նախնական առարկաները իրենք որևէ փոփոխութեան չեն ենթարկվիր, միշտ կմնան նույնը. փոփոխութեան ենթարկվողը անոնց զանազան դասավորութիւններն են. այլազան ու բազմատեսակ դասավորութիւններով կստացվին բազմատեսակ նոր ձևեր կամ նմանեցումներ զանազան շինութիւններու կամ առարկաներու: Շինածդ ու շարածդ երբ քանդես, կստանաս նույն հին նյութերը, որով կրնաս նոր նմանեցումներ ու նոր իրեր շինել ու շարել:

Շինելու գլխաւոր միջոցներն են.

1. Իրարու վրա զանազան ձեւով դիզելն է, նախ՝ ինը փոքր խորանարդներով, ետքը ալ՝ տասնվեց խորանարդով:

2. Այդ խորանարդներու տարբեր երեսներուն փակցված նկարներուն կտորները իրար բերելով՝ պատկերը վերականգնել նախ օրինակին նայելով, ետքն ալ հիշողութեամբ:

3. Քառանկիւնի զանազան երկարութեան փայտիկներով այուններ, տուներ, պատեր, պատշգամ, գմբեթ և այլն շինել ըստ օրինակի և ազատ խաղով մտքի:

4. Լուցկիանման զանազան երկարութեան ձողիկներով առարկաներ շինել հատուկ երկաթե հանգոյցներու միացնող կապերով:

5. Թուղթի քառակուսի կտոր մը կանոնավոր ծալելով զանազան առարկաներու նմանութիւն ստանալ՝ նավակ, թռչուն, սակառ:

6. Լուցկիի ու ծխախոտի պարապ տուփերով, ինչպես և թելի պարապ կոճերով այուններ ու չենքեր բարձրացնել:

7. Ատոնց կարգին կղզակի նաև ավազի մէջ փորած այրերը, ուղիները, կամուրջները, լեռ, լճակ, գետ:

8. Մեծ խորանարդներով ու փայտերով մեծ չենքեր շինել:

9. Տիկնիկներ:

Շարելով շինված իրերն ու ձևերն են.

1. Լուցկիներ, ձողիկներ, կոճակներ, կորիզներ իրարու կից շարելով ստանալ զանազան իրերու պատկերներ:

2. Մաստուր կամ ձմերուկի կուտ, ուլունքներ, կոճակներ իրար կցելով կամ մնջեն թել անցընելով կարել շարան զանազան գույնի ու ձևի դասավորութեամբ:

3. Մոզաիկ շինել զանազան գույնի եռանկիւնի, քառանկիւնի ու վեցանկիւնի քարերով, ոսկորներով ու խաւաքարտով: Նմանեցում ու պատկեր:

Գ. ԿՏՐԵԼ ՈՒ ՓԱԿՑՆԵԼ

Շատ ավելի մնայուն են, որով և շատ ավելի արվեստի կնմանին կտրելով ու փակցնելով առաջացած գործերը:

1. Սնկ-երկու տակ ծալված թուղթը մկրատելով ձեռք ձեռքի

ուած մարդոց կամ ծառերու կամ այլ առարկաներու իրարու կպած չարքեր ստանալ:

2. Պարբերականներն, հրատարակութիւնները և անպետք դարձած գրքերն մկրատով կարել ու առանձնացնել իրենց, կենդանիներու և անձերու նկարները, որ վերջը կփակցնեն տետրակի մը մեջ ու կստանան հետզհետե պատկերազիրք մը:

3. Այդ ըստ իրենց չրջագծի կտրված զանազան իրերն ու կենդանիները ճերմակ էջի մը վրա այնպես փակցնել, որ նոր պատկեր մը առացվի:

4. Գունաւոր թղթերը կտրտելով և իրար փակցնելով զանազան տեսակի տերևներ, ատեր, կանաչեղեն և պտուղներ ստանալ:

5. Մոմային խոտեր, խեցիներ ու ժժմակներ իրար փակցնելով զանազան գործածելի իրեր կամ զարդեր կամ չրջանակ չինել:

6. Խաւաքարտի հաստութիւնը կիսաւին կտրած կամ ծալելով տուփեր, ամաններ և այլ իրեր պատրաստել:

7. Գունաւոր և անգոյն նկարներ կարել իրենց ամրողջութեամբ և ժողվել տետրակի մեջ իբրև հաւաքածու:

Դ. ԿԱՐԵԼ, ՀՅՈՒՍԵԼ ԵՎ ԱՐՁԱՆԵԼ

Ձեռական աշխատանքներու առանձին խումբ մը կկազմեն ասեղով ու մկրով կատարվող քանի մը տեսակները:

1. Ամենեն առաջ՝ պարզ կար:

2. Զանազան գոյնի բուրդերով նկարներ բանել քանզայի վրա ըստ օրինակի:

3. Զանազան գոյնի բուրդերով կամ թելով լաթի վրա իրեր ու պատկերներ ձևացնել:

4. Խաւաքարտի վրա իր նկարածը ծակծկել ասեղով կամ արդեն պատրաստ ծակծկած խաւաքարտին վրա զանազան գոյնի բուրդերով ծակերը միացնել, որ պատկերը դուրս ցայտե:

5. Գուլպա հյուսել, հագուստի մասեր ու գոտակ միլերով:

Ձեռական աշխատանքներու ուրույն խումբ մը կկազմեն այն գլաղուները, որոնց ձգտումը որևէ նյութով մը իրեր ու առարկաներ արձանելն է:

1. Լաթի կտորտանքով գնդակ չինել, տիկնիկ չինել:

2. Բարակ թուղթի սեղմուցքով մարդուկներ շինել:

3. Թաց կավով կամ մեղրամոմով, թղթի եփոցով զանազան առարկաներ կամ կենդանիներ, մարդ կերտել:

4. Տիկնիկներ լաթով, մոմլաթով:

5. Մարիոնեթ:

6. Տուներու համար պետքի իրեր:

Մանկապարտեզի ձեռական աշխատանքներուն վերջին խումբը կկազմեն իրերը իրար հյուսելով գոյացած ստացումները:

1. Ամենեն առաջ զանազան ոստեր, ցողուններ, հասկեր, տերևներ ու ծաղիկներ իրար հյուսելով փունջեր կազմել, պսակ հյուսել, պատկեր մը, սեղան մը, սենյակ մը զարդարել:

2. Թուղթի զանազան գույնի երիզները զանազան կերպերով իրար անցընելով ստանալ մոզաիկի նման պատկերներ:

3. Բուրդի թելերով կարպետ հյուսել, չյուղերով ու սեղերով խսիր հյուսել:

4. Զամբյուղ, գլխարկ, կողով հյուսել:

5. Հաստ թելերով կտավ հինել:

Ե. ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Ինչպես ընդհանրապես բոլոր աշխատանքներն ու զբաղումները, այս ձեռական աշխատութիւններու ո՞րը, ի՞նչը, ո՞ւրը, ե՞րբը վարժուհին նախապես մտածած, որոշած ու դասավորած է իր մտքին, բայց գործադրութեան միջոցին ամեն ինչ կհարմարեցնի վայրկյանի պահանջին, փոքրիկներու տրամադրութեան և շրջապատի պայմաններուն:

Նախ պետք չէ մտածվի, որ նույն պահուն ամբողջ դասարանը միևնույն աշխատանքը պիտի կատարե անպատճառ: Զանազան խումբեր կկատարեն տարբեր աշխատանք՝ հարմարվելով փոքրիկներու հակումներուն ու ցանկութեան: Բայց բնական կերպով կա ընդհանուր ձգտում մը, որ առանց ճնշումի այդ զբաղումները գան ընդհանուր հայտարարի մը, երբ որ եղածին չափ զբաղումներու նույն սեռին պատկանին:

Նույն զբաղումը ուզող փոքրիկները պետք է իրարու բերել, որ միասին աշխատին, զուգընթաց աշխատին, իրենց ըրածի մասին խոսակցին, ոգևորվին և իրար ոգևորեն:

Շատ ավելի ցանկալի է, որ նույն խումբի աշխատողները, եթե հնար է, մյուս խումբի աշխատավորներն ալ, նույն ընդհանուր նպատակին համար աշխատին: Երբ ամբողջ կարգը կամ գոնե ամեն խումբ որոշ ընդհանուր բան մը ունի չինելիք, և այդ ընդհանուր չինվելիքի մեկ մասը կղառնա ամեն մեկուն կատարած աշխատանքը:

Ընդհանուր նպատակի մը համար աշխատիլը արդեն ինքնին մեծ կարևորություն ունեցող զգացում է. ատ է, որ խաղը գործի կվերածե: Նույն նպատակին իրականացման աշխատիլը ամեն մեկու ըրածին իմաստ կուտա, կառաջացնե ընդհանուր ոգևորություն և ընդհանուր խոսակցություն, կբերե նոր առաջարկներ և, վերջապես, փոքրիկները կվարժեցնեն գործակցության, ընկերային ու հանրային գործունեության: Եվ այս բոլորը միացած կուտան ուրախություն կատարվող աշխատանքին ու ճիգերուն:

Պետք է ըրդել, որ այդ ընդհանուր չինվելիքը որոշելեն ետքը ինչ ու ինչ ձևով ընելիքը որոշեն, ճամբան, մտածեն մանրամասնություններ, հնարեն միջոցներ, միտքը որոնումի մեջ ըլլա, և երևակայությունը ազատ գործե:

Երբ այս տեսակ ընդհանուր նպատակ և ընդհանուր աշխատակցություն չի հարմարիր, գոնե նույն ու նման աշխատանքով զբաղողներուն մեջ պետք է արթնցվի կենդանի հետաքրքրություն, կատարվող աշխատանքի շուրջ խոսակցություն, ըրածի համեմատում և բնական մրցակցություն, որ միտքը նորեն որոնումի մեջ ըլլա, և երևակայությունը նոր ու նոր փորձեր ընե, նոր հնարներ մտածե: Եվ որ լեզվին բացվի, միտքն ու արտահայտությունը արվի. պետք է պահանջել, որ բացատրեն, թե ինչ ընել կուզեն, ինչո՞ւ այդ ձևով ընել կուզեն, ինչի՞ հասնիլ կցանկան, պատմեն իրենց երևակայածը:

Եվ աշխատանքը լրանալեն ետքն ալ ամբողջ խմբի ընդհանուր գնահատության պետք է ենթարկել ամեն մեկուն ըրածը, թե՛ խումբի և թե՛ նույնիսկ մյուս խումբերու կողմե ամենեն հաջող համարվածն ու գնահատվածը պետք է պատվի արժանանա. պետք է ցուցադրվի սեղանին վրա կամ կախվի պատին:

Միայն պետք է չանալ, որ քիչ-շատ ամենքն ալ հետզհետե արժանանան այդ պատվին: Նույնիսկ մրցումին չհաջողածներու

ըրածին վրա լավ ու գիղեցիկ ու հաջող մասերը պետք է ընդգծվին ու դնահատվին վարժուհիին կողմե, որ ոչ մեկուն մեջ տկարութեյան և անկարողութեյան ոգին չառաջանա, և որ ամենքը վստահութեյամբ ու թափով աշխատին և հետզհետե հաջողելու, բարձրանալու, ավելի լավը կարողանալու ձգտին:

Պետք է միշտ մատնանիշ ընել այդ երկրորդական ու մասնակի հաջողութեյունները, խոսիլ ատոնց մասին, թե ի՞նչն է իսկապես լավ և ինչո՞ւ է լավ, ինչո՞վ է լավ: Եվ միշտ ընդգծել ամեն մեկուն ձեռք բերած առավելութեյունները՝ իր նախորդ ըրածներուն հետ համեմատելով:

Բնականաբար ամեն բերել, տանիլ և ամեն ընել ու պատրաստել կկատարեն իրենք՝ փոքրիկները՝ ըլլա իրենց մասնավոր գործոցներեն, ըլլա բուն ուսմունքի ընդհանուր մթերքեն ու կայքեն:

II. ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ա. ԳԻԾ

1. Ձեռական աշխատանքներու մեկ ինքնահատուկ և ուրույն տեսակը կկազմե այն արվեստը, որ ո՛չ թե իրերու մեջոցով նոր իր մը կառաջացնե կամ իրերու նոր դասավորում մը, այլ իրի մը վրա գծեր քաշելով կամ գույներ քսելով առարկաներու, կենդանիներու կամ անձերու նմանութեյունը կջանա առաջացնել:

Ո՛չ թե իրերով կաշխատի, այլ գծերով, գույներով:

Գծերով ու գույներով պատկերներ ստեղծող արվեստը կանվանենք նկարչութեյուն, որ իր էութեյամբ ամենեն նախնական վիճակին մեջն անգամ գեղարվեստ մըն է: Արվեստները նյութական են և արտաքին պետքի մը կծառայեն, գեղարվեստները նյութեղեն չեն, ձայն են, եղանակ են, գծեր են, բառ են և հոգիի արտահայտութեյանը կծառայեն:

Ամեն արվեստի մեջ ալ կա մտքի ու զգացումի արտահայտութեյան բաժին մը, և ինչքան շատ է այդ բաժինը, արվեստի ստեղծածը այնքան կմոտենա գեղարվեստի: Գեղարվեստի ստեղծագործութեյուններուն մեջն ալ կա որոշ չափով կյանքի արտաքին մեկ որևէ պետքին ծառայելու ձգտում մը, և որքան ընդգծած ըլլա այդ ձգտումը, գեղարվեստը այնքան կմոտենա սովորական արվեստի:

Հիմնական գեղարվեստները երեք են՝ 1) նկարչություն, այսինքն գծերով և գույներով հոգիի արտահայտությունը, 2) երաժշտություն, այսինքն ձայնով ու եղանակով հոգիի արտահայտությունը և 3) բանահյուսություն, այսինքն բառերով ու խոսքով մարդկային հոգիի արտահայտությունը:

Այս երեք գեղարվեստներն ալ մարդկային կյանքի ընթացքին մեծ դեր կկատարեն, կծառային հոգեկան խոր պահանջի անխափոր մարդկային կյանքի բոլոր շրջաններուն: Շատ մեծ է անոնց հրապույրն ու տված ուրախությունը նաև հատկապես մանկական հոգիներու, և ատոր համար ալ անոնք կկրթռնական դեր ունին մանկապարտեզի պրպտումներուն մեջ:

Նկարչությունը աչքի ու ձեռքի աշխատանք է:

Աչքին տեսնել, դիտել և հատակ ու որոշ տեսնել և տեսած հիմնական գծերը ըմբռնել կսորվեցնեն:

Թե՛ տեսնել դիտնալը և թե՛ դիտնալու վարժվիլը և թե՛ երևույթի մը հիմնական գիծերը ըմբռնելը հոգեկան կարևոր գործ է և կրթական բարձր ազդակ՝ ըլլա գիտական աշխատանքի ատեն, ըլլա գեղարվեստական գործունեության տեսակետեն: Այս կարողություններու զարգացման զուգընթաց կկատարվի և աչքի գեղարվեստական զարգացումը, կնրբանա տեսողական ճաշակը, գեղեցիկի ավելի խոր գնահատանքը:

Իսկ ձեռքի նկարչական կրթությունը աղբյուր է մեծ ուրախության, իբրև ընող, գործադրող աշխատանք, իբրև նմանեցում, իբրև վերակերտում, իբրև ստեղծագործություն, թե՛ անմիջապես ընելու վայրկյանին և թե՛ ապագային համար, իբրև ձեռք բերված կարողություն:

Որով նկարչությունը մանկապարտեզի մեջ կդառնա և՛ գրավիչ, և՛ շատ կարևոր զբաղում մը:

2. Նկարչության գինքերն են գիծն ու գույնը, նախ՝ գիծը:

Գիծ կքաշե ամեն սրածայր իր, որ իր հետք կթողնե, այսպես օրինակ՝ կարելի է գծեր քաշել մատի ծայրով ավազի վրա, գամի մը ծայրով խավաքարտի վրա, տաքցուցած երկաթով փայտի կտորի մը վրա: Բայց ամենեն սովորական և ընդհանրացած գործնական միջոցներն են կաճն ու ածուխը: Մաքրած կաճը, որ կավիճ կանվանենք, սև մակերևույթներու վրա գծելու համար և

մանավանդ մաքրած ու պնդած ածուխը, որ մատիտ կանվանենք, ճերմակ մակերևույթներու վրա գծելու համար և հատկապես քիչիկ մը հաստ թուղթի:

Այն աստիճան ընդհանուր է նկարչության համար մատիտի գործածությունը, որ դարձած է մատիտը նկարչական արվեստին խորհրդանիշը:

Ամեն գծված պատկեր պարզ միացում մըն է մեկ-երկու տեսակ գծերու:

Գծերը ըստ էության կարելի է բաժնել երկու խումբի՝ կոր գծեր և չիտակ գծեր:

Կոր գծեր քաշելը շատ ավելի դյուրին է, նվազ ճիգ կպահանջե և, այսպես ըսեմ, ամենեն բնական գիծն է: Երբ արմուկը տեղ մը հենած, մատիտը բռնած ձեռքը շարժել ուզենք, կառաջանան միշտ կոր գծեր, որովհետև ձեռքը կշարժի շրջանակի մը շառավիղով, կարկինի ազատ շարժվող ծայրին նման:

Երբ մանուկը մատիտի հետ կխաղա, ընդհանրապես կոր գծեր կքաշե, և բնության մեջ ալ տիրապետողը կոր գիծն է. ուղիղ գիծը մարդկային քաղաքակրթություն է: Մանկական նկարչության մեջ կտիրապետե կոր գիծը, որ երբ շրջանաձև իր ամբողջությունը ստանա, կդառնա կլոր գիծ, կոր ու կլորն է մանուկներու գծել սիրածը:

Շիտակ գիծերն ալ երկու տեսակ են՝ թեք և ուղիղ: Ավելի դյուրին և ավելի ալ գործածական են թեք գծերը. կարելի է քաշել վարեն վեր, բայց, մանավանդ, շատ ավելի հաճախ՝ վերեն վար. կարելի է քաշել ձախեն աջ, բայց շատ ավելի սովորական՝ աջեն ձախ:

Ուղիղ գծերն ալ երկու տեսակ են՝ ուղղահայաց և հորիզոնական: Երկուքն ալ՝ շատ դժվար մանուկներու համար. ընդհանրապես ծուռ դուրս կուգան ու կոտրտավոր, որովհետև փոքրիկները նկարել կուզեն արագ ու մեկ շարժումով, նոր ոտքի ելլող երեխաներու նման, որոնք երբ քալել կուզեն, կվազեն. հանգիստ և ընդհատ-ընդհատ, երբ լրացնող շարժումներով ուղիղ գիծ քաշելը վարժության գործ է և արվեստ է:

Ուղիղ գծերը մանուկներու նկարներու մեջեն բոլորովին հանել չենք կրնար, քանի որ շատ կան մեր շուրջը ուղիղ գծերով

գործածութեան առարկաներ, որ պետք է նկարվին: Լավ է խուսափիլ հնար եղածին չափ ուղիղ գծերու հաճախութենեն, մանավանդ երկար ուղիղ գծերն:

3. Երեխաները պետք է նկարեն իրենց անմիջական շրջապատեն առած առարկաներ, կենդանիներ, բույսեր ու մարդիկ:

Մարդն ու կենդանիները շատ ավելի սիրով կնկարեն միշտ փոքրիկները, որովհետև ապրող, զգացող ու շարժվող արարածներ են. կյանք ու կենդանութիւն ունին: Եվ շատ ավելի դրավչութիւն ունին մարդն ու կենդանիները, երբ որևէ շարժումի մը մեջ, երբ բան մը կընեն, քան իրենց անշարժ կանգնած վիճակը:

Անկյանք առարկաներն ալ ավելի հրապույր կտանան միշտ, երբ շարժուն վիճակի մեջ նկարվին. երբ բան մը կլինա, կկատրի, երբ ծառերը հովեն կծռին, և ջուրերը երբեմն քարերուն վրա վար կժայթքին:

Նկարելու ամենեն նախնական, բնական ու պարզ ձևը մարմնի մը եզերագիծը տալն է. մարմնի մեջին մասերը կնշվին միայն մեկ-երկու կետեն, ինչպես աչքերը, քիթը, մեկ-երկու կոճակ:

Իսկ եզերագիծը բռնել ու ըմբռնել տալու համար ալ կան նախապատրաստական միջոցներ:

Թաց թելով սև գոնի վրա կարելի է ձևացնել կենդանիներու և առարկաներու շրջագիծը. նույնը կարելի է ժամացույցի ճկուն ու նուրբ շղթայով:

Իրի մը ստվերը նետել պատին ամրացած թուղթին վրա և հանել շրջագիծը մատիտով:

Դնել իրը ուղղակի թղթին վրա և հանել տալ շրջագիծը:

Կարել պատկերը ըստ իր շրջագծին, դնել թղթին վրա և մատիտով հանել շրջագիծը:

Այս բոլորը շատ հաճելի և օգտակար խաղեր են փոքրիկին համար, բայց նկարչութիւն չեն:

Նկարչութեան էութիւնը աչքով տեսածդ ձեռքով գծել ու ձևացնել կարողանալուն մեջն է:

Եվ այդ կարողութիւնն ալ դժվարութեան իր որոշ աստիճաններն ունի:

Շատ ավելի դյուրին է, երբ վարժուհին գծած է նկարը կամ

դնմդ դրած իր ամենեն պարզ վիճակին մեջ, առանց ստվերներու ու նրբին բարդություններու, և երբ փոքրիկները կընդօրինակեն այդ պատրաստ նկարեն: Գծել տալու այս ձևը ամենեն ավելի մոտիկն է նախորդ նախապատրաստական աշխատանքին:

Կգառնա բուն նկարչություն, երբ նկարվելիք առարկան դրված է դնմը, վարժուհին ցույց կուտա հիմնական գիծերը իրականին վրա և տղոց դնմն իսկ կնկարե այդ առարկային պատկերը: Իր նկարած պատկերը չի վերցներ դիմացեն, բայց երեխաներուն կդիմե, որ նկարեն իրականեն:

Վերջին աստիճանն է, երբ փոքրիկները կնկարեն իրականեն առանց որևէ օգնության, ինչ չափով որ իրենք աչքով բռնել և ձեռքով արտահայտել կարողանան: Անոնցմե ամեն մեկուն ըրածին վրա վարժուհին իր օժանդակությունը կբերե:

4. Այս ամենը կվերաբերի իրականեն նկարելուն, բուն նկարչության:

Տարբեր բան մըն է հիշողությամբ ու երևակայությամբ նկարելը, որ մասամբ նկարչական խաղ մըն է՝ երեխաներեն սաստիկ սիրված, մասամբ ալ իրապես նկարչական ճիգ ու աշխատանք:

Խաղ է այն չափով, ինչ չափով որ փոքրիկին տեսած, ապրած կամ երևակայած տեսարան մը, դնմք մը, շենք մը, պարտեզ մը կամ իր մը, անձ մը, կենդանի մը նկարի վերածելու կճդնի իր կրցած ձևով, իր խելքը հասածին չափ, իր մատիտի կրցածին չափ, իր մտածած ու կարծած ձևով:

Գեղարվեստ է այն չափով, ինչ չափով որ կյանք ու իրական դիտողություն կա այդ բոլորին մեջ, արտաքին իրականության նմանություն և ճիշդ արտահայտություն, ինչ չափով որ մտածումի ու ստեղծագործության ներքին համաձրում կա ու շարադրում:

Հիշողությամբ նկարելու այդ խաղն ու արվեստը շատ է նման վայրենի ժողովուրդներու նկարչական փորձերուն. երկուքն ալ անտեղյակ են դեռ նկարչության արվեստի բոլոր հիմնական օրենքներուն, և իրենք իրենց ներսեն հորդող պահանջով արտահայտել կջանան իրենց դիտածն ու մտածածը ու կջանան խարխափող քայլերով ձեռք բերեն նկարչական արվեստի այդ իրենց դեռ չունեցած միջոցներն ու կարողությունները:

Եվ ճիշդ այդ մշտապես որոնող, երկու ուղղությամբ ալ

կատարելագործումի ձգտող ճիպերուին ալ հիշողությամբ ու երևակայությամբ կատարվող նկարչությունը և՛ շատ գրավիչ է փոքրիկին համար, և՛ շատ կրթիչ ու արժեքավոր մանկավարժական տեսակետեն:

Բ. ԳՈՒՅՆ

1. Նկարչության երկրորդ միջոցն է գույնը: Աչքի բռնած ղգայություններուն մեջ ձևերուն կից կա միշտ գույնը: Առարկայի դրոշմած պատկերը մեր հոգիին մեջ լրիվ է միայն այն ատեն, երբ ձևն ու գույնը կզրկեն իրար:

Մեծ է գույներուն ըրած ուղղած ազդեցությունը մեր ներքին աշխարհի վրա, շատ ավելի մեծ, քան մենք սովորաբար կկարծենք, որովհետև ժառանգական է, բնազդական ու բնածին, մեր զգայական էության խորքերեն կուգա. սորվված, նոր ձեռք բերած բան մը չէ, որ շատ ավելի դյուրին աչքի իյնող կըլլա ընդհանրապես և գիտակցության ենթակա:

Շատ ավելի մեծ է անշուշտ գույներուն ազդեցությունը ու հրապույրը հատկապես մանուկներու թարմ և դյուրզգա հոգիին վրա:

Գույները միշտ մեծ ձգողություն ունին մանուկներու համար, շատ կսիրեն մանուկները գույնը և գունավոր իրերու հետ խաղալը:

Ուրախության հորդ աղբյուր է և զգացումներու նուրբ զարգացում գույներուն երանգները կենդանի ու գիտակից կերպով դանազանելը և այդ գույներու իրարու զուգորդվելուն և իրարու հյուսվելուն և իրարու արժեք բարձրացնելուն արվեստը ձեռք բերելը, որ մեկ բառով մը կանվանենք ճաշակ:

Գույներով նկարչությունն ալ գծերով նկարչության նման միշտ աչքն ու ձեռքը ունի աչքի առաջ:

Գույներու հարուստ ըմբռնումը և գույներու նուրբ վայելքը նախ կրավորական իրողություն մըն է, ստացում մը դուրսեն դեպի ներս մեր աչքերուն միջոցով:

Այդ ստացված և դիտված իրողության համեմատ գունավոր պատկերներ ստեղծելու կամ գծած պատկերները գունավորելու պահանջն ու կարողությունը արդեն ներգործական մաս է

նկարչական արվեստին և կկատարվի ձեռքերու միջոցով: Եվ իբրև ընող, ստեղծող, նոր բան մը առաջացնող հոգեբանական գործողութիւն, խոր հաճույք ու գրավչութիւն ունի իրեն կապված:

Հաճույք ու բարձրացում է գույներով խաղալը, գույներով դուրսի աշխարհին պատկերը վերստեղծելու ճգտումը, հաճույք ու բարերար է իր ճիգերուն հաջողութիւնը տեսնելը, այսինքն իրական դուրսի երևույթներուն և իր նկարածի գույներուն մէջ եղած նմանութիւնը ստուգելը, տարբեր եղած պարագային ալ իր ներկերուն բերած տարօրինակ նորութեան գրավչութիւնն ու գնահատանքը:

Գծերով ստեղծված պատկերի մը երբ գույներու հրապույրն ալ կավելնա, թե՛ ստեղծելու և թե՛ վայելելու հաճույքը կբազմապատկվի:

2. Գույներով նկարչութեան նախապատրաստական աշխատանքներ են մանկապարտեզի մէջ՝

Զանազան գույնի թղթերու, նեղ ու երկար կտրված թղթերու երիզները ուղղահայաց ու հորիզոնական իրար հյուսելով գույներու ցանց ու զարդեր չինելը:

Գունավոր թուղթերը կտրտելով և իրար փակցնելով զանազան պտուղներ ձևակերպելը:

Զանազան գույնի բուրդերով կտոր հինելը:

Զանազան գույնի բուրդերով գնդակներ գործելը:

Զանազան գույնի լաթի կտորներով սփռոց կարելը:

Զանազան գույնի քառակուսի ոսկորներով կամ փայտիկներով զանազան զարդեր, մոզաիկներ ու շրջանակներ ձևացնելը:

Զանազան գույնի ծաղիկներով փունջեր հյուսելը:

Զանազան գույնի հատիկներով համրիչ չինելը:

Տերևներ հավաքել տարբեր գույնի:

Ուրկէ եւքը նկարչական առաջին փորձերը:

Կնկարեն գունավոր մատիտներով՝ փոխանակ սև մատիտի:

Արդեն պատրաստ տպված գծավոր պատկեր գույնով լեցնել նախ եղած օրինակին նայելով, եւքն ալ իրմեն, անկախ:

Նույն ձևով իր գծերով նկարածը գունավոր մատիտով լեցնելը:

Մատներով ու ձեռքով թաց թուղթին վրա գնդիկ մը ներկը

տարածելով ու քսելով ու եղունգով զանազան ձևեր առաջացնել:

Ասոր ավելի նախնական պարզ ձևն է՝ երկուքի ծալած թղթի մը ծալքին մեջ կաթիլ մը մելան դրած թուղթը դուրսեն սեղմելով զանազան ուղղութեամբ՝ թուղթի մէջին երևսին վրա երկու համաչափ ու խմբական ձևեր առաջացնել:

Ջրաներկի մեջ թաթխած վրձինի հպումով զանազան գույնի թղթերու վրա ծաղիկներ չինել կամ զարդեր ու չրջանակներ:

Շրջագիծ նկարը կենդանացնել զանազան գույներով ջրաներկ քսելով, վրձինով ու ջրաներկով՝ փոխանակ մատիտի:

Շատ պարզ ու թեթև փորձեր ուղղակի վրձինով ու ջրաներկով պզտիկ տեսարան մը տալու՝ նայելով դեմը դրված դունավոր օրինակին:

Նկարել նույնը հիշողութեամբ կամ անոր նման տեսարան մը հիշողութեամբ ու երևակայութեամբ:

Գ. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

1. Ձեռարվեստի համար հատկացված պահերուն նույն կարգի բոլոր փոքրիկներն ալ ձեռարվեստով կզբաղվին, բայց ոչ ամենքը միևնույն ձեռարվեստով, ո՛չ ալ անպատճառ միևնույն ձեռարվեստի զանազան ձևերովն ու տեսակներովը: Այլ մեկ-երկու խումբեր տարբեր գործերով, երբեմն նույնիսկ քանի մը անհատ բոլորովին տարբեր ձեռարվեստով:

Աշխատանքներուն ընդհանուր նմանութեան կամ նույնութեան աստիճանը մանկապարտեզի երեք կարգերուն մեջ բնականորեն պզպալի կերպով իրարմե կտարբերվի:

Նորեկները, այսինքն ամենեն պզտիկները, բնականորեն ավելի չեշտված կերպով անհատականութեուն կունենան. խումբերը կըլլան ավելի ցրիվ ու փոքրաթիվ, և աշխատանքներուն տեսակներն ալ՝ շատ ավելի իրարմե հեռու:

Միջին կարգին մեջ քիչ մը ավելի մեծաթիվ կըլլան խումբերը և ավելի չեշտված կըլլա զանազան աշխատանքներուն իրարու ավելի մոտիկ տեսակի ըլլալը:

Մնծերուն կարգը մեկ-երկու խումբ կըլլա ընդհանրապես, և խումբերուն կատարած քիչ մը տարբեր աշխատանքներն ալ

կպատկանին ընդհանրապես միևնույն հիմնական տեսակին:

Փոքրիկները երկու-երեք տարիներու աշխատանքով հետզհետե կվարժվին բաժանմունքին ամբողջուիթյունը նույն գբաղումին վրա կեդրոնացնելու. կվարժվին նույն ժամանակի ընթացքին նույն գրաղումները գործադրելու, անհատական ճիգն ու աշխատանքը ամբողջության աշխատանքներուն ավելի սերտորեն կապելու: Ամեն անհատ միշտ ալ իհարկե անհատապես կգործե, բայց նախ խումբի մը հետ նույն ու նման գործ կտեսնե կամ խումբի ձգտած ընդհանուր նպատակի իրագործմանը համար կգործե: Եվ հետզհետե ամբողջ բաժնին ամբողջության հետ գործակցությամբ կաշխատի, ուրեմն նույն նպատակին կձգտին բոլոր անհատներն ըստ իրենց կարողության, երբեմն նույն կարողությունները կլարեն տարբեր նպատակի հասնելու համար:

Այսինքն կարողություններու սկզբնական ավելի ցրիվ ու ազատ մարզանքեն հետզհետե կերթանք կարողություններու ավելի զուգահեռ, ավելի միասին և ավելի միախումբ մարզանքին:

Ուրիշ խոսքով՝ բոլոր երեք կարգերուն մեջն ալ թե՛ անհատական-ցրիվ աշխատողներ ու աշխատավորներ և թե՛ ամբողջ կարգով նույն գործին վրա կեդրոնացած աշխատանքներ: Բայց այդ երեք աստիճանները երեք կարգերուն մեջ նույն համեմատությունը չունին: Նախասիրությունն ու ձգտումը նախնական-անհատական է փոքրերուն կարգին մեջ. գերադասությունը կանցնի խմբականին միջին կարգին մեջ, իսկ վերջին կարգին մեջ ձգտում կա ընդհանուր հետաքրքրություն, ընդհանուր լարում և ընդհանուր գործակցություն առաջ բերելու ամբողջ կարգին համար:

Եվ ամեն անգամ աշխատանքի նյութերուն, ձևերուն ու տեսակներուն ընտրությունը կհիմնվի միշտ փոքրիկներու տարիքին, ավելի ճիշդ խոսքով՝ անոնց ունեցած իրական կարողություններուն վրա:

Ինչպես բոլոր ուսման ծրագիրներու մեջ, և ավելի մեծ հարկադրանքով հոս ալ ամբողջ աշխատանքին ծրագիրը կմշակվի փոքրիկներու իրական կարողության վրա, փոքրիկներու հոգին հետաքրքրող գրավիչ ու կենդանի աշխատանքներու վրա և այդ տարիքի հոգեբանության դրած պահանջներուն վրա:

2. Բոլոր ձեռարվեստները այնպես պետք է տանիլ, որ երեխան իր ըրածը ինքը ուզե, ինքը մտածե, ինքը արտահայտե, ինքը երեւակայե և ստեղծե: Վարժուհին դրդումի տվողն է, հարմարութիւնները տվողն է, նյութերը ու միջոցները հայթայթողն է: Եվ տղոց մտածած և ըրած բաները անոնց ընելեն ետքը ավելի լավ կերպով մտածելու և ընելու կերպերը մատնանիշ ընողն է, որ փոքրիկը իր խոսքի ու ցուցումին տակ իր առաջին մտածածն ու ըրածը ինքը սրբագրե ու շտկե:

Նուազագիտակ օրինակ տալե, խուսափիլ անոր ընելիքը ինքը թելադրելե. պետք է թողնել, որ հոգեկան կարողութիւնները, միտքը, երեւակայութիւնները իրենք աշխատին, իրենք ուզին, իրենք որոնեն, իրենք արտահայտվին:

Պետք է ձգտիլ ու դրդել, որ փոքրիկը վարժվի իր ընել ուզածը և ըրածը և երեւակայածը խոսի, ըսե, պատմե, ընկերներու հետ դատե:

Եթե երկու-երեք կամ քանի մը հոգիով նույն կառուցումին ու աշխատանքին վրա ամեն բան իրենք մտածեն, իրար լրացնեն, իրարմով ոգևորվին և իրենք խոսին ու արտահայտեն, վարժուհին միշտ այդ խումբին հետ ու նյութ հայթայթողն է և անոնց քննելեն ետքն ալ անոնց հետ խոսող, անոնց իրենց տպավորութիւններն ու ըմբռնումները ձևակերպել, արտահայտել ու պաշտպանելու դրդողն է, այլև ավելի լավ կերպով ընելու մատնանշումներ տվողն է, որ տղաքը նորեն և ավելի լավը մտածեն, փոխեն, շտկեն ու կատարելագործեն իրենց ընել ուզածը, սրբագրեն, լրացնեն, լավացնեն:

Իսկ այն պարագաներուն, երբ խումբ մը կաշխատի նույն գործին վրա, բայց ամեն մեկը զատ անհատապես, վարժուհին դրդե պիտի, որ անոնք խոսին իրարու հետ, ամեն մեկը արտահայտե իր խոսքը իր ըրածի մասին, ամենուն ըրածները համեմատվին, դատումի ենթարկվին, գնահատվին ամենեն հաջողները և ընդգծվին միշտ՝ ինչո՞վ է հաջող, ինչո՞ւ է հաջող, և ընտրվին ամենեն հաջողները, որ կդրվի ցուցադրութեան:

3. Հավաքածուներ կազմել տալ, տանիլ պտուտներու և ժողվել ու բերել, դասավորել ու խնամքով պահել, մեջտեղ քննութեան ու լրացման ենթարկել:

Տերևներ, ցողուններ, չոր պտուղներ, սերմեր, ծաղիկներ: Խնձիներ, ծովային խոտեր, ժժմակներ:

Գունավոր և այլաձև տարօրինակ կամ չերտավոր քարեր:

Կենդանիներու զեղեցիկ նկարներ կամ նույն տեսակ կենդանիի շատ մը նկարներ կամ որոշ խումբերու՝ միջատ, թռչուն, չորքոտանի, ընտանի, վայրենի:

Մանկական դեմքերու նկարներ, զանազան մանուկներուն սիրելի զբաղումներու նկարներ. իրենց ծանոթ տեղերու ու տեսարաններու:

III. ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՄԵՋ

Ա. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԿՈՂՄԵՐԸ

Տարրական ու բարձր նախակրթարաններուն մեջ նկարչության դասը կհետապնդե քանի մը նպատակներ: Ամենեն առաջ՝ կզարգացնե դիտողությունը, կսրե աչքը, տեսնել կսորվեցնե, ուշադրության առնել. ո՛չ թե աչքը սահի իրերուն ու առարկաներուն վրայեն, հազիվ ընդհանուր ու անորոշ ու խախուտ, հաճախ անճիշդ պատկեր մը միայն բռնելով, որ և՛ դժվար, և՛ աղոտ կերպով կդրոշմվի մտքին մեջ, այլ ընդհակառակը, աչքը վարժվի ամեն տեսած իրի ու առարկայի վրա կանգ առնելու, բռնելու անոր հիմնական հատկությունները և իբրև. հստակ ու որոշ ամբողջություն մը պահելու հիշողության մեջ: Որով և մեծ կարևորություն ունի և՛ հոգեկան պատկերներու ճշդության ու ճշմարտության տեսակետեն, և՛ այդ պատկերները ճիշդ ու դյուրին վերարտադրելու տեսակետեն, և՛ ընդհանրապես հոգեկան ընդհանուր հստակության ու պայծառության տեսակետեն:

Դիտողությունը զարգացնելու, դիտել սորվելու և ճիշդ ու հստակ տեսնելու արդյունքներեն մեկն ալ ան կըլլա, որ աչքը կվարժվի առարկայի մը հիմնական ձևերը անոր երկրորդական կարևորություն ունեցող մասերեն զանազանելու. աչքն ալ, միտքն ալ չնչտել ու բռնել կսորվին հիմնական կողմերը, հատկանիշ գծերը, առաջնակարգ հատկությունները տեսածին ու դիտվածին վրա: Իսկ ասիկա հիմքն է նյութականեն վերացական մտածումի անցումին և ընդհանրապես ավելի խոր մտածումի, գիտական

մտածումի, աչքը սրել՝ մտածումը սրել է. դիտողությունը զարգացնել՝ դատողությունը զարգացնել կնշանակէ: Նկարչությունը ճիշդ ու հստակ տեսնել սորվեցնելով՝ միևնոյն ժամանակ ճիշդ ու հստակ դատել կսորվեցնէ: Լավ տեսնելը նաև լավագույն պայմանն է լավ հիշելուն, որով ու ճիշդ հիշելուն. սուր աչք ունենալ՝ կնշանակէ սուր հիշողություն ունենալ աչքի բռնած պատկերներուն: Նկարչությունը կուժեղցնէ աչքով հիշողությունը:

Այս բոլորին մէջ դերակատարը աչքն է, տեսնելը, ուղեղի տեսողական-զգայական կեդրոնները. նկարչի մը ամենակարևոր ու ամենաբարձր կարողությունը տեսնել գիտնալն է: Բայց իր այդ տեսածը նկարի մը վերածելու համար անխուսափելի կերպով պետք ունի իր ձեռքին, իր ձեռքի նուրբ ու վարժ շարժումներուն, այսինքն ուղեղի շարժիչ կեդրոններու ձեռքի հատվածին: Աչքով բռնածը ձեռքի որոշ շարժումներու պիտի վերածվի. այդ շարժումները նյութի մը վրա հետք մը պիտի թողնեն, և այդ թողած հետքը այս կամ այն աստիճանի տեսնված իրին պիտի նմանությունը բերի, որ նկար դռյանա, և տեսնողը նկարող դառնա:

Նկարողի մը համար տեսնել դիտնալեն ետքը տեսածը իր ձեռքի շարժումներուն թողած հետքերովը արտահայտել դիտնալն է. տեսնված ձևերը պետք է թարգմանվին որոշ թողնված հետքերու, որ և կդառնա բոլորովին նոր տեսակի բան մը, նոր գործություն մը, բնության մէջ չեղած իրողություն մը, մարդկային հոգիեն ծնունդ առած ստեղծագործություն մը, մարդկային հոգիի արտահայտություններուն մեկ տեսակը: Նկարչությունը կզորացնէ հոգիի այդ արտահայտական, ստեղծագործական կարողությունը:

Սկիզբը բնականորեն մեծ ջանք գործ կդրվի տեսածը ճիշդ տեսածին նման դուրս բերելու, ինչքան հնար է, այսինքն ճիշդ ու իրականին հավատարիմ նկարելու, և աս ալ կմնա նկարչության առաջին ու հիմնական հատկությունը: Բայց այդ նմանությունը միշտ ալ պայմանական նմանություն մըն է, քանի որ իրի մը վրա քաշված գիծը ու տարածության մէջ գոյություն ունեցող մարմինը բոլորովին տարբեր բաներ են և չափերով ալ տարբեր են արդեն, և արտաքին ու պատահական պատճառներով ալ խոշոր զանազանություններ կմտնեն բնատիպին ու իր նկարին միջև: Ասոնց վրա հետզհետե կավելնա հոգեբանական ներքին

դրդումներով նկարչի՝ իր կողմեն մտցուցած դիտավորյալ տարբերությունները նկարը ավելի հատակ, ավելի արտահայտիչ ու ավելի գրավիչ դարձնելու ջանքով:

Այսինքն հարազատ ու ճշգրիտ թարգմանության ճիգին կմիանա շուտով փոփոխելով, սրբագրելով ու կամայական հավելվածներով թարգմանություն մը տեսնվածի, որ ըսել է հորինում: Նկարչությունը աչքեն ձեռքին անցնելով, տեսածը գծերու վերածելով՝ կկրթե գծերով արտահայտելու չնորհքը, տեսածը ճիշդ ու նուրբ արտահայտելու չնորհքը, տեսածը գեղեցկացնելով, այլափոխելով, լրացնելով ավելի ազատ արտահայտելու չնորհքը: Այս երկու ձևերն ալ թանկագին հատկություններ են հոգեկան արտահայտության համար, արվեստի և գեղարվեստի համար, ստեղծագործության, հորինման, հնարման համար:

Նկարչության դասերուն ալ նպատակը մեկ կողմեն կդառնա դիտողության, հիշողության ու դատողության զարգացմանը նպաստել, մյուս կողմեն ալ ձեռքի քաշած գծերով դուրսի իրականությունը ճիշդ ներկայացնել և գծերու նոր ստեղծագործումով, նոր հորինումներով մտածումներն ու զգացումները արտահայտել:

Այսպեսով՝ նկարչության առանձնահատուկ սեփականությունն է գիծը: Գիծ կարելի է քաշել շատ տեսակի բաներով՝ որևէ սուր իրով մը կավի, քարի, ցեխի ու փայտի վրա. կարելի է գծել ածուխով, կավիճով կամ ուրիշ որևէ դյուրին փշրվող գունավոր նյութով մը, երբ կքսենք հարթ մակերևույթի մը վրա. ասոր քիչ մը ավելի կատարելագործված ձևն է մատիտը՝ թե՛ սև, թե՛ գունավոր, հատկապես թուղթի վրա նկարելու համար. կարելի է նկարել և դրիչով, այսինքն գունավոր հեղուկի մը մեջ թաթխելով սուր ծայր ունեցող իր մը. գունավոր հեղուկը կրնանք գործածել գծեր քաշելու համար նաև ծայրը ճկուն իրով մը, որուն կատարելագործված ձևն է վրձինը: Վրձնի գործածությամբ գիծեն կանցնինք բիծին, այսինքն փոխանակ գծելու կրնանք դնել ներկն ու գույնը, կրնանք քսել ներկն ու գույնը:

Ներկերը քսելով կամ ներկերը դնելով՝ նկարչությունը արդեն մասնագիտություն է և դուրս է դպրոցական կրթության ծրագրեն. վրձինի գործածությունը կարելի է ընդհանուր կրթության մեջ և

ան ալ շատ համեստ չափերով ջրաներկի համար, բայց ո՛չ յուղաներկի:

Եվ ընդհանրապես կրթական ընդհանուր արժեք ունեցողը գծերով նկարչությունն է, և հատկապես մատիտն է ամենեն էականը դպրոցի համար:

Տարրական նախակրթարանի մեջ ավանդվելիք նկարչական աշխատանքները կարելի է վերածել հինգ տեսակի. 1) պետք է սորվեցնենք գծելու, գծագրելու, 2) պետք է վարժեցնենք տարրելու, այսինքն ամեն առարկայի ու նկարի հիմնական գծերը տեսնելու, 3) պետք է վարժեցնենք զուգորդելու զատված տարրերը, ինչպես և դույները, 4) պետք է վարժեցնենք մտածումներն ու զգացումները գծերով ներկայացնելու և վերջապես 5) իբրև վրձինով աշխատանք՝ պետք է ծանոթացնենք ջրաներկի գործածության:

Բ. ԳԾԵԼ

Առաջին հարցը գծագրելիք նյութն է. ի՞նչ պետք է գծեն: Նկարել տալու համար պետք է ընտրենք փոքրիկներու չրջապատեն ու առօրյա կյանքեն իրենց հարազատ եղող առարկաներ. պետք է ընտրել անոնց հոգիին համար հետաքրքրություն ներկայացնող առարկաներ, անոնց համար սիրելի ու գրավիչ իրեր, ամաններ, գործիքներ, բույսեր ու կենդանիներ, և ինքնին մասնավոր հետաքրքրություն մը չունեցող իրերուն ալ պատմվածքով մը, կատակով մը, երևակայությամբ պետք է չանանք քիչ մը կյանք ու գրավչություն տալու:

Պետք է ընտրվի ամենեն առաջ զատ առարկա մը. ամենեն պարզն է և՛ դիտելու, և՛ ըմբռնելու, և՛ արտահայտելու համար: Սակայն քիչ մը վարժվելե ետքը բնականաբար կուգան նաև նյութեր, որոնք մեկ-երկու տարբեր բաներ են, բայց բնականորեն միացած՝ ճյուղ մը իր տերևներով ու պտուղով, պնակի մը մեջ մեկ-երկու պտուղ, տնակ մը ծառերու տակ, նավակ մը եզերքին կամ ժայռին մոտիկ: Եվ այդ միասին նկարված բաները պետք է նկատվին իբրև ամբողջություն մը, իրարու կապված միություն մը: Ինչպես չարադրությունը հիմնված է իրարու կապված

խոսքերու ամբողջականութեան մը վրա, այնպես ալ ամեն նկարված բան պետք է իրմով ամբողջութիւն մը ներկայացնի:

Պետք է ընտրվին առարկաները նկարչական տեսակետեն դյուրին նկարվող, դյուրին տարրերով կազմված նկարներ, և անգամ մը յուրացված տարրերուն աստիճանաբար պետք է ավելնան ուրիշ նոր տարրեր. ինչպես ամեն բանի մեջ, հոս ալ ուսուցման հիմնական զենքը կրկնութիւնն է. իրար պիտի հաջորդեն նկարչութեան դասերուն նույն նկարչական տարրերով նկարներ, մինչև ձեռքն ու աչքը լավ մարզվին:

Ամեն ինչ պետք է նկարեն միշտ բնականեն՝ իր դեմը դրած ծաղկամանը, գիրքը, մուրճը, բույսը. նկարված օրինակե մը արտանկարելը նկարչութիւն չէ, այլ շատ երկրորդական արժեքով խաղ մը. նկարչութիւնը առարկայի մը հիմնական գիծերը բռնել կարողանալն է և այդ իր աչքով բռնած գծերով արտահայտելը, ինչպես վերը չեշտվեցավ: Եվ այս բնականեն նկարելու պահանջը կհարկադրե, որ տղաքը հաճախ բաց օդի մեջ առնեն այդ դասը՝ դպրոցի բակին մեջ, պարտեզ, երբեմն մերձակա բլուրի մը վրա, դաշտը, ծովեզերքը: Եվ ինչ ըսել կուզե, որ այս տեսակի նկարչութեան դասը ո՛չ միայն կրթական բարձր արժեք մը կներկայացնի, այլև տղոց հրճվանքն է և ուրախութիւնը:

Եվ նկարչութեան դասի չարունակութիւնը աչքի առաջ ունենալով՝ պետք է հարմարցնենք նաև իրենց նկարչական տետրակներուն ձևն ու չափը, հաստատութիւնը, որ ծունկի վրա դրած աշխատանքի հարմարի, կամ ըլլա անջատ թուղթ մը ամրացուցած բարակ ու թեթև տախտակի մը, խավաքարտի մը վրա, որ գրքի մը նման կարելի ըլլա դյուրին անուխին տակը պատցնել:

Նկարչութեան դասավանդումը, այսինքն յուրաքանչյուր ընտրված նյութի տղոց նկարել տալը, պիտի հետևի սովորական երեք աստիճաններուն:

Նախապատրաստութիւնը սովորաբար հետևյալն է. 1) առարկան ցուցադրել, 2) առարկայի գործածութեան, դերի, գեղեցկութեան մասին կարճ մեկ-երկու հարց ու խոսք, 3) որուն կարելի է կցել պզտիկ պատմութիւն մը, դեպք մը, որ գծվելիք

առարկայի հիմնական մեկ կողմը ցայտուն կդարձնեն, հետաքրքրությունն ու համակրանք կառաջացնեն:

Ստացման աստիճանին վրա 1) մատնանիշ կընեն առարկան դիտել տալով, հարցնելով ու պարզելով առարկային հիմնական գիծերը. 2) կըսեն ու կցուցադրեն, թե ինչ ձևով նկարելը ավելի դյուրին է ու հարմար և 3) աշակերտներուն աչքին առջևը իր բացատրած կերպով ինքը կնկարե դրատախտակին վրա: 4) Իր նկարածն ու բուն առարկան համեմատել տալեն, հիմնական գծերը և նկարելու ձևը տղոց հետ անգամ մըն ալ ստուգելեն ետքը լավ է, որ ջնջե իր գծածը, ուրիշ ետքը 5) տղաքը կնկարեն բուն օրինակեն. այդ միջոցին ուսուցիչը կշրջի տղոց մեջը և ամեն մեկուն անհատապես կուտա իր խորհուրդները և իր օժանդակությունը:

Նույն կամ հաջորդ դասին յուրացումն է նույն նյութի: 1) Նույնը կնկարեն երկրորդ ու երրորդ անգամ, բոլորովին նույնը, նույն ուշադրությամբ և նույն ջանքով. տղաքը պետք է ըմբռնեն, որ այդ կրկնությունը մեծ արժեք ունեցող վարժություն մըն է, և իրրև ձանձրույթ չմոտենան. և իրավ ալ, այնքան կրկնել պետք չէ տանք, որ ձանձրալի դառնա: 2) Կարելի է վերջին կրկնությունը պահանջել, որ ավելի փոքր նկարեն կամ ավելի մեծ՝ նայելով պարագային, բայց ճիշդ միևնույնը: 3) Կարելի է փոխել թեթև մը առարկային դիրքը՝ գծագրական հիմնական տարրերը անփոփոխ պահելու պայմանով, կամ վրան թեթև բան մը ավելցնել, օրինակ՝ ամանին կափարիչ կամ ծաղկամանին պարզ ծաղիկ մը, տուփին բերանը բանալ, եթե դոց էր, կամ հակառակը, անշուշտ միշտ ջանալով, որ գծագրական դեռ չմարզած տարրեր չմոցնենք այդ յուրացման աստիճանին վրա: 4) Ասոր ուրիշ մեկ ձևն է նոր նկարած առարկան արդեն նկարած ուրիշ առարկայի մը հետ քով-քովի միասին նկարել տալը. անշուշտ ներքին իմաստով պետք է իրար բռնեն, պետք է միասին ամբողջություն մը ներկայացնեն, որ անկյանք ու արվեստական չըլլա, օրինակ՝ շիշն ու ջուրի բաժակը կամ երկու արդեն նկարված ծաղիկներ իրարու կապած:

Նկարելու սկսելե առաջ մատիտները խնամքով սրված պիտի ըլլան և միշտ բավականաչափ երկար. կարճ մատիտով պետք չէ նկարվի: Ռետինի գործածությունը պետք է հասցնել նվազագույնի. երկրորդական ծառայություն մը, պատահական բիծի մը և հավելյալ

սրբագրության մը անհրաժեշտ կըլլա երբեմն ռետինը, բայց բուն նկարելու միջոցին, հիմնական գծերու արտադրության միջոցին ռետինը պիտանիութիւն մը չունի, միայն ունի: Ձեռքը պետք է վարժվի աչքին տեսած գծերը մեկ-երկու գծով տալու, գծել-ջնջելը կարկտել է, ո՛չ թե գծագրել. ձեռքին անվստահութիւն կուտա ու վարանք: Պետք է վարժվին տղաքը իրենց գծածին վրայեն նորեն գծելով, վերեն անցնելով, քովեն անցնելով տալու ու գտնելու հարկ եղած չափն ու ուղղութիւնը ամբողջական շարժումներով. երբ գծերը շատ իրար խառնվին, ջնջելը ավելորդ աշխատանք է, անմաքուր աշխատանք ու ժամավաճառութիւն. պետք է թողնել և այդ կիսատ մնացածին քովը նույն թղթին վրա, քիչ մը վերը, քիչ մը վարը պետք է փորձել նորը: Ռետինը շատ քիչ գործածող փոքրիկներու ձեռքը ռետինը կարելի է թուլլատրել, ռետինի գործածութիւնը հաճախ դիմողներուն ձեռքեն ռետինը պետք է առնվի:

Գ. ՏԱՐԲԵԼ

Նկարելը զանազան տեսակի գծերու միացում մըն է միշտ: Սկիզբները այդ բաղադրիչ գծերու մասին չի մտածվիր անշուշտ, բայց հետզհետե ավելի ու ավելի որոշ կերպով կսկսին նկատելի դառնալ. ինչքան աչքը շատ առարկաներ բռնի, և ձեռքը շատ առարկաներու հիմնական գծերը արտահայտե, այնքան այդ բաղադրիչ տարրերը աչքի կիյնան ու կառանձնանան նկարին վրա. և ինչքան նկարված առարկան իբրև քանի մը որոշ տեսակի գծերու փնջում նկատվի, այնքան նկարելու արվեստը կխորանա ու գիտակից կդառնա: Նկարներն ալ ունին տեսակ մը իրենց քերականութիւնը, իրենց ներքին կապակցութիւններուն կանոնները:

Գծերու ամենեն սովորական տեսակներն են կոր գիծը, կեռ գիծը, կեռաշրջան գիծը, ալեգիծը, կլոր գիծը, տափակ կլոր գիծը, խիստ տափակ կլորը, ձվաձև գիծը, տանձաձև գիծը, և երկրորդ մեծ խումբ մը կկազմեն ուղիղ գծերը՝ հորիզոնական, ուղղահայաց, չեղ՝ աջեն ձախ, չեղ՝ ձախեն աջ, կոտրտած ուղիղ գիծը, անկյունավոր գիծը, ուղիղ գծերու որոշ դասավորումներ են եռանկյունիները՝ սուր, բութ, հավասարասրունք, ուղիղանկյուն, քառանկյուններն ու քառակուսիները. կոր և ուղիղ գծերու որոշ կապակցու-

թյամբ ալ կառաջանան երկրաչափական ու բնական ավելի բարդ կապակցութիւնները:

Արդ՝ այս գծային տեսակները և անոնց ամենագլխաւոր կապակցութիւնները տարրական շրջանի չորս տարիներու ընթացքին հետզհետե պետք է առանձնացվին, իբրև բազմաթիվ նկարներու բաղադրիչ հիմնական տարրեր, և պետք է ստանան իրենց մասնաւոր անունը: Եվ պետք է առանձնացնեն տղաքը իրենք իրենց նկարներուն վրայեն՝ իրենք դիտելով, իրենք համեմատելով, և լավ է, որ իրենք ալ գտնեն ու դնեն այդ գծերուն ու ձևերուն մասնաւոր անունները:

Տարրելու դասը բնականաբար գծելու դասին պես հաճախ պատահող բան չէ, այլ մեջտեղ մեկ-երկու չաբաթը անգամ մը: Նույն տարրերը պարունակող քանի մը նյութեր նկարել տալեն եւրքը կանցնինք այս կամ այն տարրի ու ձևի առանձնացումին զատ դասով մը, որ կունենա նորեն իր երեք աստիճանները:

Ստացման աստիճանին վրա տղոց նորեն նկարել կուտանք վերջերս իրենց նկարած առարկաներեն մեկը, ուր չեչտված կերպով կա մեր առանձնացնել ուզած ձևն ու տարրը. մեկը կնկարե դրատախտակին: Փնտրել կուտանք, թե քանի տեսակ գծեր ու հիմնական գծեր կան նկարին վրա, կամ թե ինչ բաղադրիչ մասեր ունի նկարը: Գծերուն մեկ մասը, որ արդեն ծանոթ է իրենց, իսկույն կանվանեն: Ուշադրութիւնը կդարձվի իրենց չանվանածի, նորի վրա. երբեմն տղաքը ուղղակի իրենք մատնանիշ կընեն: Ուսուցիչը այդ նոր դիտուածը դրատախտակին վրա կառանձնացնե, ինչի՞ կնմանի, ի՞նչ տեսակ գիծ է, ի՞նչ տեսակ ձև է, անունը ի՞նչ դնենք. երբեմն այս հարցին ալ պետք չմնար. անունը ինքնիրենը կտրվի արդեն խոսակցութեան միջոցին: Տղաքը իրենց տետրակներուն մեջ կգծեն բոլորն ալ այդ նոր տարրը, այսինքն ձեռքի մարզանք կընեն նոր տարրը վարժ գծելու:

Յուրացումն ու խորացումը կկատարվի նույն տարրերը պարունակող առարկաներ ու նկարներ ցույց տալով, ուր տղաքը բռնեն ու մատնանիշ ընեն նույն տարրը: Ուրիկ եւրքը կնկարեն առարկան: Իրենց ծանոթ տարրերն ու հիմնական ձևերը նոր տարրի հետ զուգորդելով՝ ստանալ նոր առարկայի մը նկարը: Հարցնել իրենց, թե նոր տարրը ինչ ուրիշ տարրերու հետ կրնան

միացնել, որ նոր առարկաներ առացվին: Պահանջել տղոցմեն, որ իրենք մատնանիշ ընեն առարկաներ, ուր նոր սորված տարրը կարևոր դեր ունի:

Դ. ՁԵՎԱՁԱՐԴԵԼ

Առանձնացված տարրերեն մեկը երկու տարբեր մեծութիյամբ իրարու քով դնելով, բայց մանավանդ երկու տարբեր տարրեր իրար կապակցելով և նույն կապակցութիյունը քանի մը անգամ կրկնելով՝ կստանանք գծային զարդեր:

Ավելի բարձր տեսակի գծազարդեր կստացվին, երբ քանի մը հիմնական տարրերու միաձույլ ամբողջութիյուն մըն է, որ կկրկնվի՝ ըլլա շարքով լայնքին կամ երկայնքին կամ մոզաիկի ձևով:

Ըստ էութիյան միևնույն բանն է, երբ որոշ հիմնական գծերու ձույլ ամբողջութիյան մը փոխարեն որոշ առարկայի մը մեկ որոշ մասն է, որ կկրկնվի, ինչպես տերև մը, ինչպես ճյուղ մը, ինչպես տերև ու ծաղիկ մը, կենդանիի մը շրջագիծը կամ մեկ-երկու իրերու կամ գործիքներու ուրվագծեր, քանի որ այդ առարկաներեն ամեն մեկը քանի մը հիմնական տարրերու բաղադրութիյուն մըն է ինքնին: Միակ տարբերութիյունը այն է, որ առաջին պարագային մենք ունինք անկյանք տարրի մը կրկնութիյունը, մինչդեռ երկրորդ պարագային իրական առարկայի մը կենդանութիյունը ունի իր վրա, բացի իր գծերու ու դասավորութիյան գեղեցկութիենեն:

Արհեստի, արվեստի ու գեղարվեստի աշխարհներու մեջ չափազանց մեծ է թե՛ գծազարդերու, թե՛ պատկերազարդերու խաղցած դերը, որով և արժանի հատուկ մշակման ու զարգացման ընդհանուր կրթութիյան մեջ, մանավանդ որ խիստ կարևոր են ատոնք նաև ձևերու ավելի խոր ըմբռնումին և ճաշակի զարգացման տեսակետեն:

Գծերեն զատ գույներն ալ ունին երկու-երեք տեսակներու որոշ հաջորդականութիյամբ ու կապակցութիյամբ որոշ հյուսքով ու գալարումով զարդեր կազմելու կարողութիյունը, որ կուգա կավելնա գծային կապակցութիյան՝ ավելի ևս բարդացնելով և ավելի ևս շեշտելով գեղազարդերուն հրապույրը: Ինչպես գիծերու հյուսքն ու գուգորդումը մեծ արվեստ է, այնպես ալ գույներու հյուսքն ու

զուգորդումը նուրբ արվեստ է և կպահանջի ճաշակի հատուկ զարգացում:

Գծագարդերու դասավանդումը նույնպես կըլլա երեք աստիճաններով: Ստացման աստիճանին ուսուցիչը ըզբաղախտակին վրա կուտա այն երկու կամ երեք տարրերը կամ այն հիմնական առարկային պարզ նկարը, որով պետք է կազմվի զարդանկարը. կուտա նաև ինչ երկարութեան ու ձևի որ պետք է ըլլա ամբողջ զարդը, ինչպես և ինչու համար ըլլալը: Տղաքը ամեն մեկը իր համար, իր երևակայութեամբ ու իր ճաշակով կփորձեն հորինել, ուսուցիչը մեկեն մյուսը անցնելով կղիտե, կըբազդրե և ուղղութեան կուտա անոնց մտածումներուն: Նկարները ձեռքէ ձեռք կանցնին և կենթարկվին փոխադարձ գնահատութեան. ամենեն հաջողվածները կառնվին ընդհանուր ուշադրութեան, և կփնտրվի հաջողութեան պատճառը:

Յուրացման աստիճանին կպահանջվի, որ բոլորն ալ նորեն կազմեն ամեն մեկը իր համար հաջողած օրինակներու բնութագրությամբ, նույն սկզբունքներով, այսինքն անոր գտած առավելութիւններեն օգտվելով: Կրնա ուսուցիչը ինքը օրինակ մը գծել, ինքը տալ հորինումին ուղղութիւնը, երբ տղոց նկարածները իր նպատակին համար նպաստավոր չըլլան:

Մեկ կամ մյուս ճամբով ստացված համեմատաբար ավելի հաջող զարդանկարները կրնա դունավորել տալ գունավոր մատիտներով. օրինակները նորեն կանցնին ձեռքէ ձեռք և կենթարկվին ընդհանուր գնահատման՝ այս անգամ նաև գույներու ընտրութեան ու զուգորդութեան տեսակետեն, և ուսուցիչը կուտա անշուշտ իր բացատրութիւններն ու մատնանշումները:

Այս բոլոր աշխատանքի վրա հիմնված՝ ուսուցիչը կանցնի խորացման աստիճանին. տղաքը պատուեր կստանան դուրսը նոր մեկ-երկու փորձ ընելու՝ թե՛ անգույն, թե՛ գունավոր, թե՛ բոլորովին նույն տարրերով, և թե՛ երբեմն որոշ թեթև հավելումով կամ փոփոխութեամբ: Այս նոր նկարները ուսուցիչը հաջորդ դասին կրնա ընդհանուր ուշադրութեան նյութ դարձնել, կրնա թեթևակի նայիլ ու անցնիլ նոր աշխատանքի: Այս բոլոր ինքնաշխատութենեն ետքը ուսուցիչը ցույց կուտա նույն տարրերով կազմված ընտիր ու արժեքավոր զարդանկարներ՝ տպված կամ գունավոր. փնտրել

կուտա գեղեցկութիւններուն պատճառը, այլև կրնա արտանկարել տալ մեկ կամ մյուս օրինակը:

Ե. ՊԱՏԿԵՐԵԼ

Գծելը միշտ կկատարվի իրականեն, առարկային վրայեն, բայց երբ նույն առարկան քանի մը անգամ կնկարես, շատ մը կետեր ու մասեր կբլյան նկարին վրա, որ կնկարվին ո՛չ ամենքը նոր ուշադիր դիտումով, այլ հին դիտողութիւններու հիման վրա, այսինքն կունենան հիշողությամբ նկարված մասեր իրենց վրա: Եվ հետզհետե ամբողջը կարելի է նկարել հիշողությամբ:

Իսկ երբ բան մը շատ ու շատ անգամներ կնկարենք, աննկատելի կերպով կսկսինք կոկել, լրացնել, գեղեցկացնել, իտեալացնել, այսինքն ամենեն տիպիկ, ամենեն աղվոր, ամենեն արտահայտիչ գծերը գտնել՝ հետզհետե զտելով ու մաքրելով իրականութեյան պատահական կողմերեն, թերի, տխեղծ կողմերեն և չեշտելով կարևոր գծերուն ցայտքը և կատարելագործելով նկարելու շարժումներուն համարձակությունը: Հիշողությամբ նկարելուն առաջին մեծ արդյունքն է այդ կատարելագործումը, հին տեսածներեն օգտվիլը:

Հիշողությամբ նկարելուն երկրորդ մեծ արդյունքն ալ արտաքին իրականութեյան հանդեպ ավելի ու ավելի ազատ վերաբերումն է և նկարներու մեջ հետզհետե ներքին մտածումներու ստացած կարևորությունը: Հիշողությամբ նկարը, նախ, ըստ էութեյան իրականութեյան մը վերարտադրությունն է գուցե քիչ մը իտեալացումով կամ թերացումով: Իրականութենեն արդեն դպալի կերպով հեռացում մըն է, երբ հիշողությամբ նկարին մեջ իրականին մեջ եղած մասերուն վրա իրականին մեջ չեղած մասեր կավելնան, երբ երկու իրարմե տարբեր իրականություններ ամբողջովին կամ մասամբ իրար կմիացնին: Հիշողությամբ գծված նկարի՝ իրականութենեն ունեցած անջատումը շատ ավելի կշեշտվի, երբ նկարին ամբողջությունը դասավորված ու կազմված կբլյա ըստ ներքին մտածումի, ըստ հաճույքի, ըստ ներքին մասնավոր դիտավորության, այսինքն երբ դուրսի իրականության մը փոխարեն կնկարվի ներքին պատկերացում մը, ներքին ըմբռնում մը, ներքին մտածում մը:

Նկարչութիւնը այս աստիճանին վրա կդադրի այլևս պարզ հիշողութիւամբ գծել մը ըլալև ու կդառնա Հորինուած, ստեղծագործութիւն գծերով. հիշողութիւամբ գծելը հետզհետե կդառնա մտածումներու և զգացումներու արտահայտութիւն պատկերներով, նկարելու այս կողմն է, որ կանվանեմ պատկերել: Հիշողութիւամբ գծելը կտանի դեպի պատկերում, և պատկերումը հիմնված է հիշողութիւամբ նկարելու վրա: Եվ այս երկուքն ալ պետք և իրավունք ունին Հատուկ ուշադրութեան և Հատուկ մշակման նկարչութեան դասերու ընթացքին:

Հատուկ դասեր պետք է նվիրել հիշողութիւամբ գծելուն: Նախ՝ անփոփոխ կերպով իրենց առարկային վրա գծածները նորեն ու նորեն գծել տալով հիշողութիւամբ. նկարելեն ետքը իրենց նկարածը և իրականը կհամեմատեն ու կսրբագրեն: Նույն առարկաները կարելի է նկարել տալ հիշողութիւամբ միայն որևէ մաս մը փոխած կամ ուրիշ դիրքով կամ իրեն համապատասխան ուրիշ առարկայի մը հետ համադրված:

Այս դասեր հիշողութիւամբ գծելու վարժութիւններուն կարելի է ավելցնել հիշողութիւամբ և Հորինելով նկարչութիւնը. իրենց հիշողութիւամբ արդեն նկարած պատկերներու սահմանին մեջ կհանձնարարվի այսինչ մտածումը, այսինչ զգացումը, այսինչ գաղափարը արտահայտել, արտահայտելու փորձն ընել: Այս մտածումն ու զգացումը կրնա ուսուցիչը ուղղակի իրմեն թելադրել. ավելի արժեքավոր է, երբ ամբողջ դասարանը, իրենց գծած իրերն ու պատկերները աչքի առաջ ունենալով, իրենք խմբական աշխատակցութիւամբ կհասնին այս կամ այն համադրութիւնը տալու գաղափարին, և վերջապես մեջեմեջ կարելի է ձգել, որ ամեն մեկը տրված որոշ հիշողական պատկերներով ինքը փորձե ամբողջութիւն մը Հորիններու, որ իմաստ մը ունենա, որ միտք մը, զգացում մը, բան մը արտահայտե:

Հաջող օրինակները ընդհանուր քննութեան կենթարկվին, հաջողութեան պատճառները կլինտրվին, ուսուցիչը կընե իր լրացնող սրբագրութիւնները և կրնա պատվիրել, որ ամենքն ալ այդ ուղղութիւամբ իրենք ալ փորձեն հետևողութիւն մը:

Դպրոցական նկարչության հիմքը գծերով նկարելն է, ուրեմն՝ մատիտով: Վրձինով նկարելը շատ ավելի մասնագիտական բան մըն է, ո՛չ նյութ ընդհանուր կրթության: Եվ մասնավորապես յուղաներկով վրձնի աշխատանքը, բայց ջրաներկով աշխատիլը որոշ տեղ պետք է ունենա և հատկապես դպրոցական տարրական շրջանին. նախ՝ վրձնի գործածության չափով մը վարժվելու համար, երկրորդ՝ գույներու իրար հետ ունեցած հարաբերության ու բաղադրության մասին տարրական առողջ դատողություն մը ունենալու համար. երրորդ՝ շատ հաճելի խաղ մըն է, ճաշակ կրթող և չունի որևէ անառողջություն:

Նկարչության դասերեն մեկը մեջեմեջ կարելի է հատկացնել ջրաներկի, այսինքն ջրաներկի մեջ թաթխած վրձինի դրվածքով գանազան ծաղիկներ, զարդեր, զարդանկարներ պատկերելու վարժեցնելու տրված օրինակի մը հետևողությամբ, այդ օրինակները կա՛մ կըլլան տետրակի մը մեջ, կա՛մ կուտա ուսուցիչը ազատ թղթի կտորի մը վրա:

Ստացման աստիճանին վրա՝ ներկերը պատրաստելու, գույները բաղադրելու, վրձինը բռնելու, ուրկե սկսելու և ինչ կերպով չարունակելու նախապատրաստական աշխատանքեն ետքը, կանցնին տղաքը վրձինը գործածելուն և ընդօրինակելուն:

Նույն կամ նման օրինակներու քանի մը կրկնություննները թե՛ ուսուցչի ներկայության, ինչպես և տունը ամեն մեկը իր համար, կկազմեն յուրացման աստիճանը:

Արդեն սորված տարրերու ու նկարներու միջոցով գանազան նոր համադրություններ, շրջանակներ ու զարդեր հորինելը կզառնա խորացման աշխատանք:

IV. ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԻՆ ԿԱՐԳԵՐՈՒՆ ՄԵՋ

Բարձր նախակրթարանի երկրորդ կեսեն այլևս դժվար է նկարչությունը պարտադիր դարձնելը: Շատ է ցանկալի, որ հնար եղածին չափ շատերը չարունակեն նկարչության դասերը և ձեռք

բնբեն կյանքին մեջ հաճախ ու շատ մը կողմերով պետքի եկող կարողութիւն մը, որ և միևնոյն ժամանակ շատ հաճելի ու ազնիվ պրոսանք մըն է: Պետք է համոզել ու դրդել տղաքը, որ հետևին նկարչութեան, բայց պետք չէ պարտադրել, արդյունքը կըլլա դժգոհութիւն ու բանադատում առանց որևէ լուրջ հետևանքի:

Ընդհանրապես պետք է ջանք գործ դնեն ընդհանուր կրթարանը, որ բարձր նախակրթարանի կեսեն սկսած՝ ամեն աշակերտ հետևի անպատճառ գեղարվեստի մը՝ կա՛մ խմբական երգ, կա՛մ նվագ մը, կա՛մ նկարչութիւն, կա՛մ քանդակ, կա՛մ ուրիշ՝ ավելի «գործնական» գեղարվեստ մը, որոնց տեսակները շատ են:

Բարձր նախակրթարանի ճիշդ կեսեն սկսած, ուրեմն, գեղարվեստները կդադրին պարտադիր ուսում ըլլալե իրենց ներդործական մասով: Հարյը բոլորովին տարբեր է, երբ կմտածենանք գեղարվեստներու կրավորական կողմին. ճարտարապետական, արձանագործական, նկարչական, ինչպես և զանազան իրերով ու նյութերով պատրաստված գեղարվեստական արտադրութիւնները ամենուն համար են, անխտիր ամենքի վայելքին համար: Եվ ընդհանուր կրթութիւնը պարտական է տալու ամենուն և՛ ծանոթութիւնը գեղարվեստական կարևոր արտադրութիւններուն և արտադրողներուն, և՛ ճաշակը այդ բոլորը ըմբռնել, գնահատել և վայելել կարողանալու, և՛ պահանջը իր ամբողջ կյանքին մեջ այդ վայելքը փնտրելու:

Տեսողական գեղարվեստներու համար ալ ընդհանուր կրթութեյան մեջ բռնվելիք ճամբան երկուք է: Նախ՝ ամեն աշակերտ բարձր նախակրթարանի կեսեն սկսած երկու շաբաթը անգամ մը պարտադիր կերպով պետք է ներկա ըլլա գեղարվեստական երկերու՝ լուսարձակով կատարվող և խիստ ընտրութեյամբ ու սիստեմով տարված ցուցադրութիւններուն ուսուցչի ղեկավարութեյան տակ և անոր տված բացատրութիւններուն ու մեկնութիւններուն լուսարձակին դեմ: Տեսողական գեղարվեստներու կրավորական յուրացմանը ծառայող երկրորդ միջոցն է դպրոցական երեք լսարաններու մեջ ամանդվող գեղարվեստներու պատմութեյունը, ուր պատմական լուսաբանութեյամբ և հաջորդականութեյամբ և բոլոր հին ու նոր ժողովուրդները աչքի առաջ ունենալով՝ ջանք կըլլա ամփոփել ու ամբողջական ընդհանուր ակնարկ մը տալ տեսողական գեղարվեստ-

ներու ծագման, զարգացման և աստիճանական փոփոխությունների ընթացքի մասին, որուն զույգ կերթան բնական կերպով օրենքներու, որոշ ընդհանուր երևույթներու ու կանոններու մատնանշումը, ինչպես և ժողովուրդե ժողովուրդ եղած տարբերություններու ցեղական, տեղական ու հոգեբանական բացատրությունը:

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՁԵՌԱԳՈՐԾԸ

Մանկապարտեզի տարիքեն ետքն ալ բազմաթիվ են անշուշտ ձեռական խաղերուն ու աշխատանքներուն տեսակները և՛ աղջիկներուն համար, և՛ մանչերուն, շատ ալ հետաքրքիր են և օգտակար բաներ են, հաճելի ժամանց են և ապրուստի միջոց, բայց ընդհանուր կրթության համար չեն. ավելի կամ պակաս չեշտված կերպով մասնագիտական աշխատանքներ են, կմնան մասնավոր հակումներու և մասնավոր սերերու սահմանին մեջ: Դպրոցը կրնա այդ կարգի մեկ-երկու ձեռական աշխատանքներու համար ալ հարմարություններ ստեղծել իր շրջափակին ու իր խնամքին տակ, եթե աշակերտներու կողմեն լուրջ ցանկություն ըլլա և ինքն ալ բավարարելու հարմարություն ունենա, ասկե ավելին ընել չի կրնար:

Ձեռական աշխատանքներուն մեջ սակայն կան ասեղով աշխատանքի տեսակներ, որոնց գիտնալն ու վարժված ըլլալը բոլոր աղջիկներուն համար անհրաժեշտություն մըն է իրենց անձի և իրենց տան հագուստ-կապուստի պետքերը հոգալու տեսակետեն: Ըստ էության, ընտանիքի պարտավորության մեկ մասն է սա ալ, և արդեն շատերը ընտանեկան շրջանակին մեջ կսորվին ու կվարժվին միլի, կեռ ասեղի և ասեղի զանազանակերպ գործածությանը: Բայց ամեն ընտանիք նույն կարողությունը, նույն պայմանները և նույն հոգածությունը չունի, և կյանքը տեսակ մը դպրոցին է փոխանցեր այդ կարողությունները մշակելու պարտավորությունն ալ, իբրև բոլոր աղջիկներու համար ընդհանուր եղող պետքի մը բավարարումը: Աղջիկներուն համար այդ ձեռագործի աշխատանքները մասնավոր դասի սահմաններեն դուրս կուգան և կդառնան ընդհանուր ծրագրային պարտավորություն:

Տարրական նախակրթարանի մեջ հարկ կըլլա հատկացնել

չաբաթական երկու պահ, բարձր նախակրթարանի երկրորդ երկամյակին կարելի է մեկ պահով ալ բավականանալ: Դասի առեն պետք է ցույց տալ աշխատելու եղանակը, նյութը, ձևը, գործը և կատարվածի ալ ստուգումն ու սրբագրական բացատրությունները. բուն աշխատանքը պետք է կատարվի դուրսը, ամեն մեկը իր համար:

Եվ աշխատանքներու ընտրության ու կատարման առեն առաջին սկզբունքը պետք է ըլլա խուսափում ամեն մասնագիտականե. տալ, ինչ որ պիտանի ու անհրաժեշտ կենսաուվի բոլորի համար, իբրև ճաշակի, մատներու և ըմբռնողության զարգացում, այսինքն ինչ որ պիտանի պիտի ըլլա կյանքի մեջ ամենուն համար, առանց մասնավոր կերպով այս ու այն արվեստը և գործը աչքի առաջ ունենալու: Անշուշտ հանգամանք մը չէ այս ու այն աղջկան մասնավոր շնորհքին կամ ձգտումին ընթացք տալը, բայց առիկա կըլլա ծրագրե դուրս, անհատական ու բացառիկ բան մը, առանց մյուսներեն ալ նույնը պահանջելու, առանց ընդհանուր աշխատանք դարձնելու:

Բարձր նախակրթարանի վերջին երկամյակը հատկապես պետք է հատկացվի կար ու ձևի ուսուցումին. նորեն ամեն տեսակի մասնագիտական-մուտիատական ձգտումներե դուրս. սորվեցնել անոնց ներքին ու արտաքին ամեն տեսակի հագուստներ ձևելու ու կարելու եղանակը թե՛ իրենց համար և թե՛ փոքրիկներու: Նպատակը գործնական կարողությունը տալն է տան առօրյա պետքերուն բավարարելու, որով և՛ մասնավոր հակում ունեցողներուն ապագա ճամբան կհարթվի, և՛ որոշ աստիճան մը ճաշակի զարգացում:

ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԽԱՂ ՈՒ ՍԱՐՋԱՆՔ

Ա. ԻՆՉ Է ԽԱՂԸ

I. ԽԱՂԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԵՋ

Խաղը միայն մարդկային երևույթ չէ, ո՛չ ալ մարդուն հնարածը՝ իբրև քաղաքակրթական ստեղծում:

Գիտենք, որ կիսաղան կենդանիներն ալ. ողնաւոր կենդանիներուն մէջ շատ օրինակներ ունինք. անոնցն կենդանիներու վրա ալ կան բավական դիտողութիւններ, որոնք համապատասխան կուգան ողնաւորներու խաղին, բայց ընդհանրապես շատ ավելի քիչ են դիտված, և դիտողութիւններն ալ այն լրջութիւնն ու խորութիւնը դեռ չունին, քանի որ անոնց կենդանիներու կազմն ալ, ապրուստն ալ շատ ավելի հեռու ու տարբեր է մերինեն:

Բայց եղած առօրյա դիտողութիւնները կամ գիտական կատարված փորձարկութիւնները աչքի առաջ ունենալով՝ կրնանք ըսել, որ խաղալու երևույթը գոյութիւն ունի գրեթե ամբողջ կենդանական թագավորութեան մէջ, հոս ու հոն շատ ավելի հստակ կամ ընդգծված կերպով, ուրիշ շատ տեղեր ալ սաստիկ նվազ աստիճանով մը, դժվար նկատելի ու կասկածելի ձևով մը, երբ չենք կրնար որոշ կերպով ըսել, թե կենդանիին ըրածը խա՞ղ էր, թե՞ կյանքի պետքին ծառայող շարժում մը:

Մեզի համար, կենդանիներու վրան, խաղը կապված է բացառապես շարժումին. այն պարզ պատճառով, որ անոնց ներքին մտածական, զգացական խաղերու մասին ոչինչ գիտնալ չենք կրնար. մեր դիտողության ենթակա են միայն անոնց կատարած շարժումները:

Այնպես որ կենդանական աշխարհի մեջ խաղը բացառապես կապված է մկանային դրության հետ: Եվ կրնանք ըսել խաղի համար, հենվելով գիտական դատողության վրա, թե ուր մկան կա, հոն ալ խաղ կա, պիտի ու ապացուցանել կարողանանք թե ոչ. ուր որ գործող մկաններ կան, հոն խաղն ալ ավելի նկատելի կդառնա. ուր բարդ ու զարգացած մկաններ են առաջացած, ուրեմն մկանային բարդ ու զարգացած աշխատանք կկատարվի, հոն ալ խաղ ըսածը շատ ավելի չեչուված կերպով մեջտեղ կուգա:

Մկանի մը կատարած շարժումը սովորաբար կանվանենք աշխատանք: Արդ՝ ո՞րն է աշխատանք-շարժումի և խաղ-շարժումի մեջ եղած տարբերությունը: Շարժումի տեսակետեն, կատարված մկանային աշխատանքի տեսակետեն ո՛չ մեկ տարբերություն չկա և չի կրնար ըլլալ: Երկու պարագային ալ բոլորովին նույն մկանային գործողությունն է, որ կկատարվի: Տարբերությունը կատարված աշխատանքին մեջ չէ, այլ այն նպատակին մեջ է, որու համար որ այդ մկանային շարժումը կկատարվի: Եթե շարժումը կկատարվի կյանքի արտաքին պետքի մը բավարարելու համար, շարժումը կդառնա գործ, աշխատանք: Եթե մկանային շարժումը կկատարվի՝ ո՛չ թե արտաքին կյանքի որևէ անմիջական պետքին պատասխանելու համար, երբ արտաքին, կյանքի ու ապրուստի դրդում չկա, այլ կկատարվի գործող գործարանի ներքին դրդումով, գործարանի՝ իրեն ներքին պետքին բավարարելու, ներքին զարգացման նպաստելու, գործարանի մեջ ներքին հավաքված ուժերը գործադրելու, ապրելու համար, կատարված մկանային շարժումը կանվանենք ո՛չ թե գործ կամ աշխատանք, այլ խաղ:

Ուրեմն խաղ ըսածը մկանային ներքին դրդումով, ներքին ուժերու բնական պահանջով, ներքին զարգացման բնական անհրաժեշտությամբ կատարվող մկանային շարժումներն են:

Այս ըմբռնումով կենդանական խաղերու առաջին պատճառը բնախոսական է. կենդանին այսինչ մկաններն ունի որոշ կազմով ու զարգացումով, և իր ստացած սնունդով ուժեր են հավաքված այդ մկաններուն մեջ, որոնք անգործ ու անաշխատ են մնացած. այդ հավաքված ուժերը սպառելու, իր գործելու վարժված մկանները գործածելու, բանեցնելու բնախոսական անհրաժեշտությունն է, որ կենդանին կդրդի շարժումներ ընելու, շարժումներ ընելու

համար որոշ իրեն սովորական ձևով ու հաջորդականութեամբ, և անշուշտ որ ինչքան շատ որ այդ ձևով խաղա ու իր ունեցած մկաններըը գործածէ, բնական կերպով, ինքնին, առանց որևէ դիտաւորութեան վարժված, մարզած, զարգացուցած կըլլա կենդանին իր այդ որոշ մկնային խումբերը որոշ ուղղութեամբ:

Խաղի առեն ալ կգործեն նույն մկանային խումբերը, նույն, ինչ որ կյանքի պետքով կատարված աշխատանքի առեն, խաղի առեն ալ կգործեն նույն հաջորդականութեամբ, ինչ աշխատանքի առեն, կգործեն նույն ձևով ու կերպով, ինչ իրական արտաքին պետքի մը ծառայելու առեն: Հետևանքը կըլլա, որ խաղի համար կատարված աշխատանքը, որ ինքը արտաքին դրդում ու նպատակ չունի, արտաքին պետքերու ծառայելու համար ստեղծած ու առաջացուցած մկանային դրութեան ուժեղացմանը, զարգացմանը և մարզումին կծառայե:

Եթե քիչ մը ուշադրութեամբ դիտելու ըլլանք կատվի մը, շան մը, կապիկի մը կամ որևէ այլ կենդանիի մը խաղերը, իսկույն բացահայտ կդառնա, որ անոնցմե ամեն մեկուն խաղացածը որևէ պատահական խաղ մը չէ, մկանունքները պատահական շարժումներ չեն, հիմար ցատկռտուքներ ու պատահական վազվզուքներ չեն, այլ ինչքան ալ հիմար վազվզուք ու ցատկռտուք ըլլան, որոշ իմաստ մը ունին. կենդանին որոշ բան մը կխաղա. կատուն մուկ բռնել կխաղա, շունը որս բռնել կխաղա, այծերը իրենց կռտոչները դեմ-դեմի տված կռիվ կխաղան, կյանքի կռիվը, իր գոյութիյունը պահելու կամ իր սեռը ապահովելու կռիվը. այսինքն կենդանիները ամենքն ալ կխաղան այն բաները, որ կյանքին մեջ իրենց գլխավոր ընելիքն է: Ամեն մեկը իր գլխավոր ընելիքը կխաղա, իր ընելիքին կվարժվի, կպատրաստվի, իր ընելիքը կսորվի: Այսինքն խաղ ըսվածը բնազդորեն կատարվող անհրաժեշտութիյուն մըն է, կյանքի կռվին համար անհրաժեշտ նախապատրաստութիյուն մը:

Հարցի այս երեսը ավելի ցայտուն կդառնա, երբ աչքի առաջ ունենանք, որ կենդանական ձագուկներու այդ խաղերուն շատ հաճախ մասնակից են նաև իրենց ծնողները: Ծնող ու ծնված կխաղան միասին, և միշտ ալ իրենց խաղցած խաղը կյանքի ու գոյութիյան կռվին մեջ իրենց կատարելիք գլխավոր գործն է, որ կխաղան:

Եվ երբեմն անոնց խաղին մեջ այն աստիճան գործնական տարրեր կմտնեն, որ ակամա ստիպված ենք մտածելու, որ ծնողները զիտեն, թե ինչ կընեն: Երբ կաուն իր բռնած և կիսովին խեղդած մուկը կբերե ու կձգե իր ձագերուն առջևը, որ հետը խաղան, ակամա կմտածես, որ մայրը մուկ բռնելու դաս կուտա, մուկ բռնելու ձևերը վարժեցնել ու մարդել կցանկա իր փոքրիկներու հոգիին մեջ:

Այնպես որ կենդանական խաղերուն մեջ հիմնական բնախոսական պատճառին սերտորեն հյուսված, փաթթված է կրթական նպատակ մը՝ ընդհանրապես անդիտակից ու բնազդական, երբեմն կարծես թե նույնիսկ զիտակից ու զիտավորյալ: Անվար կրթութեյան կարծես երբեմն կմիանա զեկավար կրթութեյունը նույնիսկ կենդանական աշխարհին մեջ:

II. ԽԱՂԸ ՀԱՍՈՒՆ ՍԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ

Մարդն ալ կենդանի մըն է ամենեն առաջ, որով և նույնն է խաղին դերն ու էութեյունը մարդուն համար:

Հասունացման տարիքը հասած մարդուն համար խաղալու դրդող հիմնական պատճառը բնախոսական է՝ իր կուտակված ու անգործ մնացած եռանդին սպառումը:

Եվ հոս արդեն մեր ներքին զիտողութեյամբ և մեր նմաններու բառական արտահայտութեյան չնորհիվ զիտենք արդեն, որ միայն մկանային գործունեութեյունը չէ խաղ դարձողը, այլև մեր բոլոր հոգեկան կարողութեյունները՝ և՛ մտավոր, և՛ զգացական:

Ինչպես մեր ուսած մկաններուն անգործութեյունը պահանջ կծնի խաղ-շարժումներու, այնպես ալ մեր մտավոր կարողութեյուններուն անգործութեյունը պահանջ կծնի խաղ-մտածումներու, մտքի խաղերու, և մեր զգացումներու անգործութեյունն ալ պահանջ կծնի խաղ-զգացումներու:

Մարդկային մկանային խաղերը հասուն մարդոց բազմատեսակ շարժուն խաղերն են, ուր աշխատանքին կմասնակցեն մարմնի մկաններուն բազմաթիվ խմբեր:

Մտքի խաղերն ալ բազմատեսակ են, հանելուկներեն, զանազան կատակներեն, զանազան հնարամիտ խնդիրներեն սկսած, որոնք զուտ մկանային խաղեր են, ինչպես և երևակայական պատ-

մուխյունն ու աստուխյուններ հնարեին ու պատմելը, մինչև զանազան տեսակի իրերու միջոցով կատարվող մտային խաղերը՝ հաշվի խաղերը, թղթի խաղերը, նարտի ու ճատրակ ու տամա:

Իսկ հուզազգացական չգործածված ուժերու սպառումը եղող խաղերը մեր առօրյա առանց պատճառի սուտերն են, բամբասանքները, շատ մը խաղեր ու կատակներ, որոնց նպատակը հուզում ու զգացում գրգռելն է նախ ըսողին ու հնարողին մեջ, ետքն ալ լսողին ու հետևողին մեջ: Այդ հուզազգացական խաղերուն ամենեն ազնիվ ու բարձր տեսակները կներկայացնեն մեր գեղարվեստները, և ամենեն շատ ու ամենեն ընդհանուր եղողը՝ բանահյուսական ամեն տեսակի ու աստիճանի ստեղծագործուխյունը, այլև ամեն տեսակի ձայնով ու գործիքով բոլոր երաժշտական ստեղծագործուխյունները, թատրոնը, ընթերցումը, սինեման, երաժշտական ունկնդրուխյունները, ցուցահանդեսները:

Ինչքան ալ հետզհետե բանահյուսական ստեղծագործուխյուններու իրենց ավելի բարձր ու ավելի բարդ տեսակներուն մեջ ուսումնասիրական, գիտական և նույնիսկ որոշ աստիճանի գործնական տարրեր խառնվին, իր խորքին մեջ բանահյուսուխյուն արտադրող պատճառը իր մեջը կուտակված հուզումներն ու զգացումները թափել, սպառել ու ազատվիլն է հեղինակին համար, ընթերցողին ու լսողին համար ալ ուրիշի այդ թափված հուզումներու պատկերացումով իր մեջը արվեստական ճամբով հուզումներ առաջացնելն է:

III. ԽԱՂԸ ՄԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Հասուն մարդոց խաղերուն մեջ քիչ կպատահի խաղերուն փաթթված կրթական տարրը: Հասուն մարդու համար խաղը կրթական միջոց մը չէ ընդհանրապես. խաղը ժամանց է, ձանձրույթ փարատող, պարապ ու անգործ մնացած միջոցը բանով մը լեցնելու պահանջ, կամ ամենեն ազնիվը հոգին բարձր զգացումներով, բարձր հուզումներով ու գեղարվեստական ամենաընտիր ստեղծագործուխյուններով «զբաղեցնելու» ցանկուխյուն:

Ընթերցում, թատրոն, սինեմա, ցուցահանդես և քոնսեր,

այսինքն հուզագրգռացական ամենեն բարձր և ազնիվ տեսակներուն մեջ է միայն, որ կրթական կամ ինքնակրթական տարր մը փաթթված կըլլա պարզապես նայելու, լսելու, խնդալու, հուզվելու հաճույքին:

Կրթութիւնը մեծերուն համար երկրորդական դեր ունի և ո՛չ ամեն անգամ: Մանուկներու համար, այսինքն կրթվելու հատուկ տարիքին մեջ եղող մանուկին համար ան ալ կստանա առաջնակարգ կարևորութիւն և մշտական գործոն մը:

Մանուկներու կյանքին պետքերը, ըլլան սննդական, առողջական թե պաշտպանողական, բոլորը կհոգացվին իր ծնողներուն կողմե, իր ուժերն ու հասողութիւնն ալ դեռ այն աստիճան անզարգացած ու տկար վիճակի մեջ է, որ ինքը կատարել չի կրնար, որով մանուկը արտաքին պետքերը բավարարելու համար ընելիք չունի. մանուկի առաջին 6-7 տարիները իրեն ու ընտանիքին համար պիտանի գործի բնավ «աշխատանք» չունի. հետևանքը ան կըլլա, որ մանուկներուն բոլոր ըրածը կդառնա խաղ, այսինքն մարմնական ու հոգևկան բոլոր կարողութիւններու գործունեութիւնը միայն, այդ կարողութիւնները գործադրելու համար, եղած գործարանները գործել տալու պահանջ և այդ գործարաններուն մեջ ամբարված եռանդը սպառելու պահանջ:

Սակայն ինչպես կենդանիներուն համար ըսի, խաղի բնախոսական այս բնազդական ու անհրաժեշտ գործունեութիւնը ինքնին ու բնական կերպով կդառնա գործող օրգանիզմը կատարելագործող միջոց մը, այդ օրգաններուն գործունեութիւնը սրող, զարգացնող, վարժող ու մարզող միջոց մը, այսինքն բնախոսական երևույթը ինքնիրենը անխուսափելի կերպով կդառնա կրթական երևույթ:

Նախ խաղը կըլլա և կգործե մեծ մասով իբրև անվար կրթութիւն, բայց ինչպես ընտանիքի ծոցին մեջ, այդպես ալ մանավանդ հանրային կրթական հաստատութիւններու մեջ իսկույն կօգտվին խաղի այդ մեծ կրթական հատկութիւնեն, որով խաղը կդառնա նաև ղեկավար կրթութեան հիմքն ու էութիւնը:

Մանկական կրթութիւնը մանկապարտեզի մեջ, ինչպես որ էր ընտանիքի մեջ, կգործե իբրև խաղ: Մանկապարտեզի կյանքն ալ բոլոր զբաղումներն ալ, ամբողջ ուսուցումն ու դաստիարա-

կութիւնն ալ կկատարվի խաղի ձևի տակ. ամեն ինչ իբրև խաղ: Մանկապարտեզի մեջ ապրիլը խաղալ է, սորվիլը խաղալ է, զբաղվիլը խաղալ է:

Անշուշտ առաջին տարին ավելի շեշտված կերպով կյանքն ու խաղը, զբաղումն ու խաղը կնույնանան իրարու:

Միջին կարգին մեջ քանի մը թեթև պահանջներ, քանի մը կարգ-կանոն և որոշ զբաղումներ հոս ու հոն կսկսին աշխատանքի ձև առնել, այսինքն փոքրիկները կկատարեն գիտակից կերպով որոշ նպատակի մը համար, օրինակ՝ ամենեն կարևորը՝ սորվիլը. բաներ կընեն հատկապես ու գիտակցորեն սորվելու համար, այսինքն այդ կետերուն մեջ խաղը կվերածվի աշխատանքի:

Թե՛ կարգ-կանոնի, թե՛ ընկերային պարտավորութիւններու և թե՛ զբաղումներուն մեջ աշխատանքը շատ ավելի հաստակ կերպով և շատ ավելի կանոնավոր կերպով կսկսի երևալ երրորդ տարին տղոց հասունացման զուգընթաց, երբ կսկսին նաև գիրն ու կարդալը և սիսթեմատիկ հաշիվը:

Մանկապարտեզի վերջին կարգին մեջն ալ ընդհանուր առումով դեռ ընդհանուր տիրապետութիւնը խաղինն է, ամեն ինչ խաղի ձևով, բայց հետզհետե խաղը կառնե ինքը աշխատանքի ձև, որովհետև կբարդանա, որովհետև գիտակից կդառնա, որովհետև սորվելու զաղափարը կշեշտվի, «եկած են բաներ մը սորվելու համար»: Մանկապարտեզը դպրոց դառնալու վրա է: Վերջն են մանկական տարիքին:

IV. ԽԱՂԸ ԼԱՅՆ ՈՒ ՆԵՂ ԻՄԱՍՏՈՎ

«Խաղ» բառը սակայն երկու գործածութիւն ունի, իր լայն ու իր նեղ իմաստով:

Մինչև հիմա այդ բառն առած էինք իր լայն իմաստով, իր գիտական իմաստով, իբրև կենդանական ղիզված ուժերու սպառում նևրքին գործարանին պահանջով: Եվ այդ ըմբռնումով մանկապարտեզը իր բոլոր էական կողմերով, իր կյանքով, իր զբաղումներով գրեթե ամբողջովին կներկայանա իբրև խաղ. աշխատանքին կմնա համեմատաբար շատ փոքր մաս մը, այդ աշխատանքն ալ կկատարվի խաղի ձևով, խաղի ոգիով:

Բայց ինչպես կյանքի, այնպես ալ մանկապարտեզի առօրյա կյանքին մեջ «խաղ» բառը չենք գործածեր այդ լայն իմաստով, որ դիտական մտածում է. կգործածենք իր առօրյա, շատ ավելի նեղ գործնական իմաստով:

Մանկապարտեզին մեջ հոսող կյանքը, ապրուստը, վարմունքը կանվանենք կյանք, ապրուստ, վարմունք. մնծերու աշխատանքին հետ համեմատելով է, որ ատոնք խաղի կվերածվին, խաղի կնմանին. այդ բոլոր խաղերը մանուկի կյանքն են ու մանուկին ապրուստը, կենցաղը և այդպես ալ պիտի կոչվին ու կկոչվին մանկապարտեզին մեջ:

Այդպես ալ մանկապարտեզին մեջ կատարվող ամեն տեսակի ղբաղումներուն ստվար մնծագույն մասը, որ խաղի պես, խաղի ձևով ու խաղի, հաճույքի ձևով կկատարվին, երբեք չենք անվաներ խաղ, այլ ատոնք զանազան ղբաղումներ են մանուկի, անոր կատարած զանազան մտավոր ճիգերն ու ջանքերն են, որ կանվանենք «հոգեկան աշխատանք», կամ իր մատներու գործածութիյամբ առաջացուցած գործերն են, կերտվածքներ, որ կանվանենք «ձեռական աշխատանք»: Չէ՞ որ խաղն ու աշխատանքը բոլորովին միևնույն գործունեութիյունն են, բոլորովին միևնույն գործադրութիյունը՝ ըլլա մկանային, ըլլա հոգեկան. կատարքերին իրարմե միայն իրենց նպատակով. ինչ որ խաղ է մնծերու տեսակետեն, կյանք ու աշխատանք է փոքրերու համար:

Այնպես որ մանուկներուն համար «խաղ» բառը կմնա միայն շատ նեղ իմաստով կատարվող որոշ գործ ու վարմունքի, շատ նեղ իմաստով որոշ ղբաղումներու:

Եվ մանկապարտեզի մեջ ալ բնականաբար միայն այն ղբաղումները կկոչվին խաղ, որոնք մանուկի տեսակետեն իրրև խաղ կնկատվին, մանուկը գիտե, որ այդ իր ըսածն ու ըրածը իրական կյանք ու իսկական գործ ու ղբաղում չէ, այլ ժամանակի համար, զվարճանալու համար, այնպե՛ս խաղալու համար եղած բան մըն է:

Եվ մենք ալ հիմա, որ մանկապարտեզի խաղերուն մասին խոսիլ կուզենք, բնականաբար այդ նեղ մտքով այդ գուտ ու իսկական խաղերու մասին է մեր խոսքը, մանկապարտեզի այն

զբաղումները, որոնք մանուկներու տեսակետեն իբրև խաղ կնկատվին:

Այդ խաղերուն մեկ մասը ազատ խաղեր են, այսինքն փոքրիկները իրենց ազատ պահերուն իրենք առանձին իրենք իրենց մեջ կխաղան, ինչ որ հինեն ու նորեն լսած են կամ տեսած, շատ անգամ ալ բոլորովին ինքնուրույն ու իրենցմե հնարած:

Մնզի հոս զբաղեցնողը այն խաղերն են, որ մանկապարտեզի մեջ կգործադրվին, իբրև հաստատութեյան կողմե ծրագրված ու ղեկավարած կամ հաշվի առնված զբաղումներ, իրենց բերած, իրենց տված բազմատեսակ շատ մեծ օգտակարութեյուններուն համար, իրենց կրթական շատ մեծ արժանիքներուն համար:

Բ. ԽԱՂԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

I. ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ-ԽԱՂ

Ինչպես տեսանք նախորդ գլխուն մեջ, խաղերը բնախոսական պատճառներե կծառայեն և ընկերական պատճառներու, որով և բնական կերպով կբաժնվին երկու տեսակի: Առաջին՝ բնախոսական խաղեր, այսինքն պարզապես ներքին չգործածված և կուտակված ուժերն ու եռանդը սպառելու խաղեր: Երկրորդ՝ ընկերական խաղեր, որոնք այդ պարզապես իրենց կարողութեյուննները գործածելու բնախոսական պատճառին կմիացնեն նաև մարդու ընկերական կյանքի պետքերուն ու պատճառներուն նախապատրաստվելու, հարմարվելու, վարժվելու դրդումը:

Բնախոսական խաղերը կանվանենք ավելի պարզ սովորական շարժում-խաղեր: Իսկ ընկերական գունավորումով խաղերը կանվանենք սովորաբար պատկերացում-խաղեր, որովհետև ատոնք բոլորն ալ կյանքի որևէ գործ մը, վիճակ մը, հարաբերութեյուն մը ներկայացնելու, ցուցադրելու, նմանցնելու, ձևացնելու ավելի կամ նվազ հաջող փորձեր են:

Այդ ձևացումներն ու պատկերացումները երբեմն կըլլան շատ մանրամասն, ճիշդ ու նուրբ ներկայացումով, երբեմն կըլլան թեթևակի նմանութեյամբ, մոտավոր ճշդութեյամբ, հարևանցի ներկայացումով. երբեմն ալ պատկերացում-խաղը պարզ ակնարկու-

թյուն մըն է միայն, որոշ իրականութեան, կյանքի որոշ գործի մը կամ վիճակի մը, փոփոխած ու լրացուած է երևակայական ու կամայական հավելումով. մնացած է կյանքին առնված մեկ-երկու գիծ և կյանքին գործին կամ վիճակին անունը:

Արդ՝ ինչ բաներ կպատկերացնեն, կձևացնեն փոքրիկները իրենց խաղերուն մեջ:

Մարդը ընդհանրապես և մեր մանուկները մանավորապես ուժեղ չափերով ունին իրենց հոգիին մեջ այն հատկութիւնը, որ կապիկներու հոգեկան կյանքին մեջն ալ շատ ցայտուն կերպով տիրապետող է, և ատոր համար կանվանենք կապկել:

Մանուկը կրկնել կսիրե, ինչ որ կլսե, ընել կսիրե, ինչ որ իր շուրջը կտեսնե, որով կրկնելն ու կապկելը կդառնա առաջնակարգ գործոն մանուկի հոգեկան զարգացման մեջ:

Իր շրջապատին մեջ լսած խոսքերն ու դատողութիւնները կրկնելը և իր շրջապատի մեջ տեսածները կրկնելով ձևացնելը, ճգնիլը կդառնա իր խաղերուն առանցքը:

Փոքրիկները կխաղան մեծերուն ըսածն ու ըրածը:

Ամեն փոքրիկ մեծերու նեղ շրջանակ մը միայն ունի իր ընտանիքին կապված, որ ամենեն հաճախ ու մոտեն կտեսնե ու կճանչնա, որով իր խաղերն ալ այդ նեղ շրջանակի մեծերուն ըսածներն են ու ըրածները, կներկայացնեն անոնց խոսքը, վազքը, սովորութիւնը, աշխատանքները, զվարճութիւնները, կատակներն ու ըղաղումները:

Ասոնք ամեն մեկ մանուկի մանավոր ընտանեկան կապկումներն ու ներկայացումներն են: Ասով է, որ ամեն մեկ ընտանիքի երեխաներու լեզուն, սովորութիւնները, չարժումներն ու վարքը, ըրած կատակներն ու խաղերը կտարբերին մյուս երեխաներու ըսածեն ու ըրածեն:

Սակայն նույն ժողովուրդի և նույն ցեղի ընտանիքները ինչքան ալ տարբեր անձնավորութիւններ որ անհատական տարբեր գծեր ունենան, բայց և այնպես այդ բոլոր կողմերուն մեջն ալ կան ամենուն համար սովորական եղող, ընկալու, ընելու, կատակելու, վարվելու և չարժվելու ընդհանուր կողմեր: Այս կողմերու, գործերու, վարմունքի ու խոսքի կապկումն ու ձևացումը դուրս կուգա արդեն

ընտանեկան մասնավոր խաղերու սահմանագծեն ու կդառնա ընդհանուր խաղանյութ, սովորական ընդհանուր խաղեր գոնե նույն վայրին մէջ, ընդհանրապես նույն ժողովուրդին մէջ և հաճախ բոլոր ժողովուրդներու համար. այսինքն մասնավոր ընտանեկան-տեղական խաղերուն քովը կան ավելի ընդհանուր-ազգային խաղեր և անոնց քովն ալ՝ շատ ավելի տարածված ու բոլոր ժողովուրդներու հատուկ, ընդհանուր մանկական խաղեր:

Մանուկներու հոգիները շատ ավելի նման են իրար, քան հասուն մարդոց հոգեբանութիւնը. մանուկներու կյանքն ու շփումները շատ ավելի նեղ ու իրարու նման շրջանակի մը մեջ կդառնա, քան հասուն մարդոց գործը, կյանքն ու շրջանակն է: Այս պատճառով ալ կապկում ու պատկերացում եղող շատ մը մանկական խաղեր կա՛մ միջազգային են իրենց ծագումով, կա՛մ արագ կտուրացվին, շատ չուտով կդառնան միջազգային:

Պատկերացում-խաղերը ընդհանրապես ազատ խաղեր են, ինչպես տունը, այնպես ալ մանկապարտեզին մէջ:

Փոքրիկները կխաղան իրենք իրենց՝ ըլլա դաղարներուն, լավ եղանակին դուրսը՝ պարտեզը, բակը, ծառերուն տակ մեկ-երկու հոգիով, երբեմն ավելի մեծ խումբով, իսկ գեշ օրերուն ալ ներսը՝ իրենց սենյակին մէջ:

Ներսը՝ իրենց բաժանմունքին մեջ եղած պարագային, այդ ազատ խաղերը երբեմն շատ կմոտենան դեկավարված խաղին. վարժուհին շատ է մոտիկ և բնական կերպով հոս ու հոն կմասնակցի իր ժպիտով, դրդելով, հավանութիւյամբ, ծուռ ըսված խոսք մը շտկելով: Բայց այս բոլորը երկրորդական է ու կողմնակի, դեկավար խաղեր չեն ասոնք:

Դեկավար կդառնան, երբ վարժուհին նախապես մտածած դիտավորութիյամբ դրդում կուտա այսինչ կամ այնինչ ներկայացում-խաղին. խորքը վարժուհին որևէ նպատակ ունի ուսուցման: Օրինակ՝ դուրսը իբրև թե սաստիկ անձրև է, փոքրիկները իբրև թե դուրսեն կուգան, ամեն մեկը ինչպես կձևացնե դուրսի վիճակն ու իր թրջած ըլլալը, և ինչեր կըսեն այդ առիթով: Կամ կխաղան կայարան, եկած են «Հայրիկը» դիմավորելու, որ ուրիշ քաղաքի պիտի գա: Կամ, օրինակ, սիրելի հին ընկեր մըն է, որ հյուր կուգա:

Արտահայտելու, արտահայտվելու, ձևացնելու, ապրած ու դիտած երևույթները արտավորելու ու դիտակցիլ տալու աղվոր խաղեր են ասոնք, որ և՛ լեզվի մշակումին, և՛ հնարամտության կծառայեն:

Իսկ վերջին կարգի մեծերուն հետ պատկերացում-խաղերը շատ անգամ վարժուհին կհյուսե դիտողության և հատկապես հաշվի աշխատանքներուն, առ ու ծախ կխաղան, խանութ կխաղան, տոմսակ կցրվեն, ուր շատ մը առարկաներու գինները, չափերը, հատկությունները մեջ կուգան, և բազմակողմանի հաշիվներ կտեսնվին դասի սահմաններուն մեջ: Անշուշտ բոլորը նախապես մշակված ու նախատեսված վարժուհիին կողմե:

Խաղը այս պարագաներուն կդառնա կես-խաղ, կդառնա կենդանացնող միջոց մը դիտողությունը, դատողությունն ու հաշվելը մարզելու:

Վերի օրինակներու մեջ արտահայտության մարզանք էր, հոս կդառնա դատողական մարզանք, մտածումի, մտքի:

Իսկ դուրսը պատկերացում-խաղերը միշտ կծառայեն չափման: Կըլլան ազատ կամ դեկավարված: Երկու պարագային ալ պատկերացումը կջանա կատարվող շարժումներուն իմաստ մը տա, պարզ շարժում չըլլա, որևէ նպատակի մը ձգտող շարժում մը ըլլա, երևակայությամբ իրական կյանքի ձևացում մը ըլլա:

Ինչքան փոքր են խաղացողները, այնքան մեծ դեր ու արժեք ունի այդ երևակայական հավելյալ տարրը. մեծ հրապույր կուտա կատարվող շարժումներուն. շատ է դյուրաշարժ նոր կազմվող մտքերուն մեջ երևակայությունը, և մեծերուս կարծրացած մտածումին համար անկարելի, անհավանական ու միջեմեջ չեղած բանները իբրև իրական և իբրև ներկա եղող պատկերացնելը շատ դյուրին բան է: Փոքրիկները մուկ ու կատու կխաղան, նապաստակ կձևացնեն թուփերուն խորքը բան մը կրծելու վրա, թևերը թափահարելով թռչունի պես կթռչին, ձի կդառնան, կառք կքաշեն, սանձի կուզան, հեծվոր մը կկրեն:

Ավելի մեծերն ալ, որ դող կխաղան, գող կբռնեն ու կալանավորած կփոխադրեն բանտ, կփախչի, կիյնան եռևեռն, պարզապես վազվզուք է ու քաչքչուկ, բայց կենդանացած, իմաստ հագած, բոլորովին ուրիշ բան է պարզ վազվզուքը, ուրիշ բան է բանտեն փախչիլ ձևացնելը:

Կա և այս կարգի խաղերուն ավելի կանոնավորված և որոշ օրենքներով կազմակերպված որոշ և հստակ խաղերը, ինչպես, օրինակ, «գերի» խաղալը:

II. ՇԱՐԺՈՒՄ-ԽԱՂԵՐ

Շարժում-խաղերը ավելի ընդարձակ տեղ կպահանջեն, որով և կղառնան դուրսի խաղեր, առողջապահական տեսակետեն ալ բաց օդի մեջ ըլլալը, այսինքն մաքուր ու աղվոր օդ շնչելը անհրաժեշտություն մըն է, մանավանդ խոր ու արագ շնչառության առեն, ինչ որ շարժում-խաղերու առեն սովորական վիճակն է:

Շարժում-խաղերը էապես կծառայեն մարդու ու մանուկներու բնախոսական պահանջին. ընկերաբանական վիճակներ պատկերելու ո՛չ մեկ ճիգ ու հակում չունին, թեև երբեմն կենդանական կամ մարդկային գործի մը կամ աշխատանքի անունը կրնան կրել, բայց պարզ ու հարևանցի արտաքուստ նմանության մը վրա հենված անվանում մըն է, ո՛չ իսկապես պատկերացում:

Շարժում-խաղերը կրնանք խմբել երեք տեսակի. 1) պարզ մարմնով խաղեր, 2) զանազան իրերու օժանդակությամբ մարմնով խաղեր, 3) գործիքներով մարմնի խաղեր:

Առաջին տեսակը ամենեն պարզն է ու անմիջականը, քանի որ ո՛չ մեկ օժանդակ առարկայի պետք չկա, և իսկույն ամեն տեղ կարելի է կազմակերպել, երբ քանի մը փոքրիկներ եկած են իրար:

Շատ անգամ ո՛չ մեկ կազմակերպության ալ պետք չկա, ինքնին կստեղծվի. փոքրիկ մը վար կցատկե սանդուղի վարի ոտքեն, իսկույն ընկերները կհետևին օրինակին, և բոլորն ալ նույն ձևով կսկսին վար ցատկել. մեկը հանկարծ թևերը բացած կվազե, մյուսները ետևեն կվազեն իսկույն նույն ձևով թևերնին բացած՝ թռչող իրանի մը նման: Մեկը կսկսի մեկ ոտքով ցատկել, մյուսները իսկույն կկապկեն, ու բոլորը միասին մեկ ոտքի վրա կցատկեն. մեկը հանկարծ կզարնե ընկերոջը ու կփախչի, մյուսները կիյնան ետևեն:

Այս պարզ ու ինքնաբեր վազել-ցատկելներուն ավելի կազմակերպ ձևերն ալ կան սակայն, իրենց որոշ պարզուկ օրենքներով և հաճախ նաև իրենց որոշ անունով:

«Մեկ ուռք» կխաղան, իր բունեն դուրս եկող փոքրիկը մեկ ուռքով պետք է հասնի ու բռնե ընկերներեն մեկը, որ ինքը ազատվի. մյուս ուռքը զետնին դպչի թե չէ, պետք է փախչի բույնը, թե չէ կենթարկվի ընկերներու հարվածներուն:

«Աչքակապուկ» կխաղան, «անկյուն» կխաղան, «պահվըտուք» կխաղան, «ուրուր ու ձագուկ» կխաղան, երբ մայրը կպաշտպանի իր ետևը իր ձագուկները, որ ուրուրները ձեռք չդպցնեն իր ձագերեն որևէ մեկուն. որուն որ ուրուրը դպավ, այն ձագուկը խաղեն կելլե, իբրև ուրուրեն տարված:

Շարժում-խաղերուն երկրորդ տեսակը շատ ավելի հարուստ է զանազան օժանդակ իրերու բերած նորութիւններով:

Ամենեն նախնականը՝ «նետել» նշանի քարով, քարը ցատկեցնել ջրի երեսին, նետելուն մեկ ուրիշ ձևը՝ շրջանակներ «անցընել» կա՛մ անշարժ ցիցի մը, կա՛մ դեմ-դիմի կեցած իր ձեռքի ձողով դիմացինի բռնած ձողին: Շրջանակ դարձնել:

Նետելու զանազան ավելի բարդ ձևերն են «ընկույզ», «վեգ» և «դնդիկ» խաղալը, շատ մը ձևերով: «Փոսիկը նետել», զետինը գծած շրջանակեն հանել, իրարու դնդիկի նշան առնել:

Խումբ մը խաղեր պարանով են. պարան քաշել երկու խումբի բաժնված, պարան ցատկել առանձին կամ զույգով, պարան դարձնել խումբով:

Բայց օժանդակ իրերուն առաջնութեան պատիվը անշուշտ կպատկանի գնդակին:

Գնդակով խաղերը բազմատեսակ են, թե՛ մինակ կարելի է, թե՛ երկու հոգիով և թե՛ խումբով:

Գնդակներուն կլորութիւնը, գնդակներուն առաձգականութիւնը և գնդակներուն վարիկութիւնը հնարաւորութիւն կուտան բազմատեսակ գործածութեան ու շարժումներուն առանց որևէ վտանգի ու վախի: Եվ ամեն ժողովուրդի մեջ ալ մեծի ու փոքրի շարժում խաղալու բնական առարկան է:

Այս բոլոր խաղերուն մեջ փոքրիկը միշտ իր ուռքերուն վրա է:

Երբ չինված դործիքները մեջ կուգան, երեխայի ուռքը գետնին կկորվի:

Ամենեն սովորական գործիքը՝ օրվիլը. նախ՝ նստած տախտակի մը վրա, այլև կախված երկու կախած օղակի, այլև երկու զուգահեռ փայտին մեջ կեցած իր երկու թևերուն վրա:

Օրվելեն ետքը չուլվիլը, այունի մը վրա վեր մագլցիլը, ինչպես և թևք մակերևույթի մը վրայեն նստած վար սահիլը: Գերանի մը երկու ծայրերուն նստած ելևէջելը:

Ավելի բարդ գործիքներ ալ կան՝ «Հսկայի քայլերը». գետինը ցցված գերանի մը վերի ծայրեն կախված չորս-հինգ պարան՝ ծայրը օղակ մը, ուրկե բռնած և ոտքերը գետին զարնելով կդառնան չորս-հինգ հոգի գերանին շուրջը հսկայական քայլերով:

Շատ գեղեցիկ ու մանուկներուն շատ սիրելի խաղարան մըն է «կապիկներուն տունը»՝ երկաթե ձողերով շինված երկու-երեք մեթր լայնք ու երկայնքով գետնին ամրացված շատ լայն անցքերով տախտակի նման շինվածք մը, խորանարդ մը, որուն ամեն կողմերեն փոքրիկները կրնան վեր մագլցիլ, ձողերուն մեջեն մտնել ելնել, իջնել ու բարձրանալ:

Այս խաղերուն մեծագույն մասը կվսաղցնեն ու պետք է խաղցնեն ազատ, այսինքն կա՛մ բոլորովին առանց վարժուհիի միջամտության, կա՛մ շատ-շատ վարժուհիի դրդումով ու հավանությամբ, բայց միշտ վարժուհիի աչքին և ուշադրության տակ: Եվ բնականաբար միևնույն ժամանակ կրնան խաղցվիլ մեկ-երկու տարբեր խաղեր տարբեր խումբերու կողմե:

Երբեմն միայն վարժուհիի հրավերով ու ղեկավարությամբ ամբողջ բաժանմունքը կվմբվի կամ շրջան մը կկազմե ընդհանուր խմբական խաղի մը համար, հաճախ հյուսված երգի մը կամ պատմված նյութի մը:

Շարժում-խաղերու մեկ տեսակը ըլյա կարծես մարմնամարզ ըսվածը, որ խաղ չէ սակայն, այլ առողջապահական նպատակներով կատարված որոշ չափով ու ձևով կատարվող շարժումներու շարք մը: Բուն նպատակը ներքին գործարաններու աշխատանքը աշխուժացնելն է:

Մանկապարտեզի մեջ մարզանքը տեղ ունի որոշ պայմանով:

Նախ, եթե դուրսն է, որ կկատարվի խմբով, պետք է խաղի վերածվի իբրև խաղի մը մասը՝ շատ անգամ երևակայության օգնությամբ նմանցնելով մարդկային գործունեության մը: Շատ աղվոր

օրինակ է «Գիտնք, թե ինչպես դյուղացին» երգն ու խաղը, ուր մանուկները և՛ կերգեն, և՛ շրջանակաձև կեցած կներկայացնեն, թե դյուղացին ինչպես կցանե, ինչպես կքաղհանի, ինչպես կհնձե ու ինչպես կխուրձե ու կկրե տուն իր բերքը:

Մարզանքը մերկ, իբրև մարզանք, որոշ դեր մը միայն կրնա ունենալ մանուկներ. երբ գնչ եղանակի պատճառով դուրսը ազատ շարժվելու հնարավորություն չկա, և ահա՛ ներսը փոքրիկները կխմբեն չուրջ. ու ինքդ ալ անոնց հետ կսկսիս մարզանք խաղալ, այսինքն քանի մը հարմար ձևեր ընել տալ թևերով, ոտքով ու մնջքով քիչ մը թարմանալու համար, կես կատակ, կես լուրջ:

Գ. ԽԱՂԵՐՈՒ ԴԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ի. ՕԳՈՒՏՆԵՐԸ

Հաստուն մարդուն համար խաղը էապես ամբողջ ժամանակի համար հնարված զբաղում մըն է, իբրև ժամանց: Հաստնացման տարիներուն, մանավանդ ամենեն թարմ մանկական տարիներուն, նույնիսկ նեղ իմաստով, խաղը շատ ավելի բարձր ու կարևոր բան մըն է:

Մանկական կարողություններուն զործադրումն է, անոր կարողություններուն զարգացումն է և անոր առողջությունը:

Նեղ մտքով խաղերը, որոնք ընդհանրապես ամբողջ մարմնի մկանները շարժման մեջ կդնեն ու շարժման կպահեն, ամենեն առաջ կճկեն, կկրթեն, կմարզեն մանկան մկանային դրությունը: Մեկ կողմեն ուժ և ամրացում կուտան մկաններուն, մյուս կողմեն նուրբ ու ճարպիկ գործածության վարժություն, միևնույն ժամանակ իր շարժումներուն, իր կեցվածքին կուտան կորով, հրապույր ու զվեղկություն:

Առույգ, կերթ ու ճկուն մարմինը ինքնին անփոխարինելի գանձ մըն է ամեն մարդու համար և ամբողջ կյանքի համար:

Բայց միայն մկաններուն զարգացում չէ, որ կուտան խաղերը. անոնք ահագին դեր ու ազդեցություն ունին նաև մանկան ջղային դրության բոլոր կողմերուն վրա:

Արագ մտածել, արագ որոշել, նոր պայմաններուն հարմարվիլ, ուշադրութիւնը կեդրոնացնել ձգտիլ, հարատեւել, կամքը լարել որոշ կետի մը հասնելու համար, ասոնք բոլորը թանկագին հատկութիւններ են կեանքի կռվին համար և ասոնք մշտական հատկութիւններ են ամեն մեկ խաղի:

Բացի կամքի ու մտքի այս մարզանքեն ու կրթանքեն, խաղերը կկրթեն ու կզարգացնեն նաև մարդուս ընկերական զգացումներն ու հակումները և ըմբռնել կուտան մեզի մեր ընկերական պարտաւորութիւնները, եթե օգտվիլ կուզենք ընկերական կեանքի վայելքներեն ու առավելութիւններեն:

Համակրանք, սեր, գնահատանք, գործակցութիւն, իրար պաշտպանել, իրարմով բարձրանալ, իրարու հետ ուրախանալ ու ոգևորվիլ, ձգտիլ խմբով որոշ նպատակի մը, հաջողիլ ու հաղթել, ասոնք բոլորը հզոր կապեր են, որ մարդիկը իրարու կկապեն, մարդիկը իրարու ընկեր ու հարազատ կդարձնեն և անհատը կմղեն հավատարմութեան, չիտակ ու մտերիմ ըլլալու ընկերական թռիչքներու և բարձր նվիրումի:

Ինչպես ամեն սրտակցութիւն, ինչպես ամեն գաղափարակցութիւն և ինչպես ամեն գործակցութիւն, մանկական խաղերն ալ խոշոր չափով կմշակեն մանուկի հոգիին մեջ ընկերական զգացումներ, ընկերական հակումներ ու բարոյական ազնվացում:

II. ԽԱՂԵՐՈՒՆ ԴՐԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Բայց որպեսզի բոլոր բարձրացումները խաղը տալ կարողանա, ինքը խաղը պետք ունի որոշ պայմաններու: Այդ պայմանները եթե չկան ու չհարգվին, խաղերը, փոխանակ այդ առողջապահական, մարմնական, հոգեկան և ընկերական առավելութիւններուն, կբերեն մարդուն ու մանուկին ատոնց ճիշդ հակառակը՝ վնաս և եսականութիւն ու բռնութիւն:

Ամենեն առաջ խաղերը, ան ալ մանավանդ մանկական խաղերը, պետք չէ ըլլան որևէ կերպով վտանգավոր փոքրիկներու կազմին ու մարմնին և անոնց զգայարանքներու ու ներքին գործարանի բնականոն աշխատանքին:

Ամեն ինչ, որ կկտրե, կկոտրե, կշլացնե, կցավցնե ու կվախցնե, խաղի առարկա դառնալ չեն կրնար: Այս կարգի կատակներն ու «զվարճութիւնները» մեկ անգամ ընդմիշտ դուրս պետք է վտարվին խաղեն:

Նմանապես մարմին ու հագուստ կեղտոտող, փոշոտող ու պատռտող խաղերը մեկ կողմ պետք է դրվին: Մաքրութիւնը, հագուստի վայելչութիւնը և շարժուձևերու մեղմութիւնն ու զգուշութիւնը հրամայական պահանջ է ամեն խաղի մեջ:

Ուժասպառ ընող, քրտնաթոր, չափազանցած շարժուձևերով, հրմշտուքով ու աղաղակներով կատարվող խաղերը իսկույն խաղ ըլլալն կդադրին, կդառնան վայրենութիւն ու կզարգացնեն կոպիտ բնազդներ:

Կիրթ ու վայելուչ խաղերն ալ պետք չէ տևեն չափեն ավելի. փոքրիկները պետք չէ խաղեն ձանձրանան, պետք չէ կշտանան, չափեն ավելի տևող խաղերը անկարգութեան, քմայքներու ու դիտավորյալ չարութիւններու տեղի կուտան: Ինչպես որ սեղանեն պետք է ելլել դեռ միշտ ուտելու տրամադրութեամբ, բոլորովին չհագեցած, այնպես ալ խաղերեն պետք է քաշվին դեռ բոլորովին չկշտացած:

Բծախնդիր կերպով պետք է հարգվին խաղին բոլոր պայմանները անխտիր ամենուն կողմե և միշտ: Նախ՝ խաղը իր հրապույրը կկորսնցնե ու խաղ ըլլալ կդադրի, երբ իր պայմանները չհարգվին կամ թերի հարգվին: Մյուս կողմեն ալ՝ խաղը կկորսնցնե իր ընկերական կյանքի համար ունեցած իր մեծ կարևորութիւնը: Օրենքը հարգելը, ընկերական կանոններու ու ընդհանուր պահանջներուն դեմ չմեղանչելը հիմքն է քաղաքակրթութեան և միացնող շաղախը ամեն աղնիվ ընկերական գործակցութեան:

Այս ընդհանուր ավելի խոշոր պահանջներեն եռքը կուգան խաղերու ուզած ավելի նուրբ ու ավելի անհատական պահանջները:

Պետք չէ բարկանաս խաղալուատեն, պետք չէ ընկճվիս ձախորդ վայրկյաններուն, պետք չէ մեծամտիս ու պոռոտախոսես հաջողութեանդ վայրկյանին: Մեծ ամոթ է քեն ու քինի ընելը խաղի ատեն, ինչպես և համառիլը, երբ ընկերներդ ուրիշ բան կըսեն կամ կուզեն: Ինչ ալ որ պատահի խաղին մեջ, կռիվ ու աղմուկ պետք չէ

մտնե. կիրթ ու վայելուչ ու քաղաքավարի կերպով խաղալ գիտնալը Հոգեկան աղնվութեան նշան է:

Խաղը զվարճանալու համար է, այո՛, բայց ո՛չ միմիայն քու զվարճութեանդ համար, քու զվարճութիւնդ բոլորի զվարճութեան պետք է հյուսված ըլլա. ջանա՛ բոլորը զվարթ ըլլան: Պետք չէ թողնվի, որ խաղացողներեն մեկը դառնա միատեր, ու ամեն ինչ ինքն ընե՝ ուրիշները ետ հրելով. ամենքը պետք է մասնակցին. ինչպես կյանքի, այնպես ալ խաղի մեջ մեծութիւնը, բարձրութիւնն ու աղնվութիւնը կերևա զիջելուն մեջ, ուրիշներու ընթացք ու ձեռք տալուն մեջ, ընդհանուր ուրախութիւնը բարձրացնելու ձգտումին մեջ և ո՛չ թե տիրելու, բռնանալու, ավելի տկար կամ ավելի համեստ եղողները ոտքի տակ տալու ու զրկելուն կամ ուրիշներու վրա խնդալուն մեջ, ինչ որ բնական հակումն է դեռ կրթված ավելի ուժեղ երեխաներու:

Դ. ԽԱՂԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԵՋ

I. ԽԱՂ-ԱՇԽԱՏԱՆՔ

Մանկապարտեզի կյանքը կենակցութիւն մըն է, ապրիլ մըն է, ո՛չ ուսանիլ:

Այդպես ալ մանկապարտեզի մեջ կատարվող բոլոր զբաղումները խաղ են, ո՛չ աշխատանք:

Ամեն բան, ինչ որ կընեն, ինչ որ կսորվին, կվարժվին, կյուրացնեն, ամեն ինչ կկատարվի իբրև խաղ, իբրև զբոսանք, զվարճութիւն, ամեն ինչ խաղի ձևի տակ:

Փոքրիկները մանկապարտեզի մեջ կապրին իրենց կյանքը իրարու հետ, իրենց վարժուհիներուն հետ, կապրին, կզվարճանան, ուրախ և օգտակար ժամանակ կանցընեն:

Ան է մանկապարտեզը, ճիշդ ինչպես ընտանիքի մեջ, ըստ իր էութեան:

Բայց ինչպես գիտակից ծնողները, հոս ալ շատ ավելի հարատև ու չեչտված կերպով վարժուհիները այդ մանկական կենակցութեան և այդ մանկական խաղերու և զանազան մանկական զբաղումներու միջոցով ու միջոցին կկրթեն փոքրիկներուն զգա-

թարանքները, կմարդին անոնց մատները, կսրին դիտողութիւնը, կզրդէն մտածելու, երեւակայութիւնը օգտագործելու, զգացումները ապնվացնելու, բնավորութիւններն ու անհատականութիւնները զորացնելու, ընութիւնը տեսնելու, վայելելու, գնդեցիկը զգալու:

Եվ իրենք ալ կդիտեն փոքրիկներու անհատական գծերը, թերութիւնները, կարողութիւնները, ամեն մեկուն չնորհքն ու ուժը, մտքի, սրտի, բնավորութեան և իրենց այդ դիտողութիւնը կօգտագործեն սրբագրելու համար թերին, մշակելու համար չնորհքն ու շիտակը նույն այդ խաղերու և կենակցութեան միջոցին ու միջոցով:

Մանկապարտեզի մեջ ամեն ինչ ապրիլ մըն է ու խաղ ու զբոսանք փոքրիկներու համար: Լուրջ, չափազանց լուրջ աշխատանք մըն է վարժուհիներուն համար:

Մանկապարտեզի մեջ «ուսում» ալ կա, ավանդվի նյութեր և ծրագիր ալ կա, այսինքն թե ինչ բաներ պետք է դիտեն փոքրիկները, ինչ ձևով ու ինչ հաջորդութեամբ, ինչ բաներ մտածման նյութ պիտի դարձնեն, ինչ պատմութիւններ պետք է պատմվին: Ձեռական ինչ աշխատանքներ պիտի կատարեն, երբ, ինչ ձևով. նույնիսկ խաղերը և ամեն զբաղում իր որոշ տեղը ունի, իր դործադրութեան կերպն ու ժամանակը: Բայց այս բոլորը միայն վարժուհիի տետրակներուն մեջ ու վարժուհիի գլխուն մեջ:

Հոս ալ անշուշտ համր քայլերով առաջացում մը կա խաղեն դեպի աշխատանք:

Առաջին տարին աշխատանք խաղ ըսել է լիովին: Մինչեն կարդին մեջ տեղ-տեղ երբեմն կերևա հանկարծ աշխատանքը, երբ որոշ զբաղում մը որոշ պայմաններու մեջ պարտադիր կդառնա, բայց երրորդ տարվան մեջ է նորեն, որ աշխատանքը դիտակից կերպով քիչ կամ շատ կսկսի գործել խաղեն: Անշուշտ տիրողը խաղն է միշտ նաև մեծերուն համար, բայց ամեն օր որոշ պահեր դիտեն, որ հատկացված է որոշ աշխատանքի, և այս պահերուն ուզեն թե ոչ, պետք է նստին, ճիգ ընեն այդ գործին վրա: Նորեն հաճելի ու խաղի նման բաներ են ատոնք ալ, բայց արդեն իբրև խաղ չեն, այլ որոշ գիտակցված նպատակով գործեր:

Գիտեն, որ այդ աշխատանքները անհրաժեշտ են, չէ՞ որ

աչնան պիտի անցնին դպրոց ուսում ստանալու: Հոն ալ պիտեն, տեսած ենն, լսած ենն, որ խաղ ալ կա, այս ընկերական կյանքն ալ, ուրախութիւն ալ կա, ինչպես հոս մանկապարտէզի մէջ, միայն թէ հոն, պիտեն, չեչտված է աշխատանքը, ուսում առնելը, սորվիլը:

II. ՇԱՐԺՈՒՄ-ԽԱՂԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԵՋ

Մանկապարտէզի մէջ շարժում-խաղերը երկու ձեւով կիներկայանան. կա՛մ ազատ խաղեր են, որ դպրոցական դաստիարակութեան և մեծ զբոսանքի ատեն երեխաները ազատ իրարու հետ կվազեն, կցատկեն ու կզբաղվին. կա՛մ խմբական խաղեր են վարժուհիի ղեկավարութեամբ ամբողջ կարգ մը կամ մեկ-երկու կարգ միասին և անշուշտ որոշ ծրագրով, որոշ հաջորդական ընտրութեամբ:

Ղեկավարված շարժում-խաղերուն առաջին տեսակը կկազմեն բուն խմբական խաղերը, որոնք ընդհանրապես մարդկային կամ կենդանական կյանքի պատկերացումներ են, նմանեցումներ, կյանքի կտոր մը կներկայացնեն կամ առնվազն կակնարկեն. երբեմն շատ պարզ ու բացահայտ շատ մը մանրամասնութիւններով և իրենց վրա ալ կկրեն այդ վիճակին ու այդ գործին անունը. երբեմն նմանեցումն ու հետեւութիւնը տկար է, անունը պահած է, բայց իրական վիճակի հետ քիչ կապ ունի, տեսակ մը զաղափարն է առած, ներշնչումը իրականութենեն և անունը, մնացածը հորինված է ավելի ազատ: Կան անշուշտ շատ մը խաղեր ալ, ուր դժվար է կյանքի իրականութեան հետ որևէ կապ գտնել, բայց ընդհանուր առումով կամ գոնե իրենց ծագումով մանկական խաղերուն էութիւնը կյանքի իրականութիւն մը վերարտադրելու ջանքն է: Թե այդ ջանքը ինչ աստիճան հաջողութեամբ և շոշափելի կերպով կիրականանա, տարբեր հարց է անշուշտ: Երեխաները իրենց վառ երևակայութեամբ և իրականութեան իրենց շատ թերի ծանոթութեամբ այն տեսակ բաներ կկապեն իրարու, որ մեծերուս տրամաբանութիւնը դյուրաւ հետևիլ չի կրնար անոնց թափին:

Շարժում-խաղերուն երկրորդ տեսակը կներկայացնեն զնդակի, շրջանակի, պարանով, գունդերով, գնդիկներով, հոլով ու

քարերով կատարվող խաղերը, ուր երևակայությունը շատ քիչ դեր ունի. դվխավորը որոշ շարժումներու ճարպիկությունն է, նշանառությունը, ճկունությունը, թեթևությունը. հոս ալ թեև երևակայական անուններ ու կոչումներ չեն պակսիր:

Երրորդ խումբը մարմնամարզական խաղերն են՝ որոշ ձևով ու պայմանով քալել, վազել, ցատկել, շարքեր կազմել և մարմնի զանազան մասերով ճկումներ ու շարժումներ կատարել պարզապես այդ շարժումները կատարելու նպատակով, կա՛մ նկրքին գործարաններու աշխատանքին նպաստելու առողջապահական դիտավորությամբ, կա՛մ մարմնի շարժումներուն, կեցվածքին ու ձևերուն ավելի վայելչություն ու չնորհք տալու ցանկությամբ:

Ինչպես ձեռական աշխատանքներու ատեն, այնպես ալ հոս այս միաձև շարժումներու կրկնության ժամանակ կարելի նղածին չափ հազիցում ու ձանձրույթի խուսափելու համար կդիմենք նորին փոքրիկներու երևակայության: Փոխանակ ըսելու, որ հիմա ձեռքերով, մեջքով կամ ոտքով այսինչ շարժումը պիտի կատարենք, կըսենք՝ հիմա խոտ պիտի հնձենք, ալյուր պիտի մաղենք կամ փայտ պիտի կոտրենք մեր ձեռքի կացինով. փոխանակ ըսելու՝ «վազեցե՛ք բլուրն ի վեր», կըսենք՝ «հիմա գրավենք պիտի թշնամիին բերդը. տեսնենք ձեզմե ո՞վ պիտի առնե բերդը»: Փոքրիկի կատարելիք շարժումները նույն մարմնամարզական շարժումներն են, միայն այս պարագային անոնք այլևս անիմաստ ու մեքենական շարժումներ չեն փոքրիկի համար, այլ իսկական խաղ են, այսինքն կյանքի իսկական պատկերացում, դեղարվեստի տեսակ մը:

Խմբական շարժում-խաղերու չորրորդ տեսակը կկազմեն խումբ մը փոքրիկներու բռնած դիրքերովը զանազան ձևեր, փունջեր և հյուսկեր առաջացնելը, ուր երեխաներու բռնած դույզդույն ժապավենները, շրջանակները, թաշկինակները, ձողերը ավելի ևս կնպաստեն տպավորությունը ուժեղցնելու և կազմվող ձևերը ցայտուն դարձնելուն: Հոս ալ կարելի է խաղը կապել պատմության մը, երևակայական նմանեցումի մը, բայց հիմնական նպատակը, բացի խաղալու ու ցատկելու հաճույքին, շարժումներու, դիրքերու, դույներու և ձևերու հյուսվելեն ու ձուլվելեն առաջացած դեղագիտական վայելքն է, ճաշակի զարգացումը,

այլև անշուշտ գեղեցիկ կեցվածքի ու կիրթ շարժումներու մշակումը:

Շարժում-խաղերուն հինգերորդ տեսակը պարերն են՝ հայկական կենտապարերը, զույգպարերը և շուրջպարերը, ինչպես նաև եվրոպական զույգպարերը և մինուետի ու գատրիլի ձևակերտ պարերը: Մասնավորապես գնահատելի են այն պարերը, որոնք բանի մը պատկերացումն են, մտածումի մը, զգացումի մը արտահայտությունը, անշուշտ արտահայտված մանկական հոգիին հասկնալի թարգմանությամբ. պարն ալ գեղարվեստ է, ուրեմն և հոգիի արտահայտություն. առանց այդ հոգիի արտահայտության կատարվող պարերը կկորսնցնեն իրենց գեղարվեստական իմաստը և շատ բան իրենց գրավչությենեն: Բայց միշտ սիրելի են փոքրիկներուն, որովհետև ցատկել ու դառնալ է, ան ալ խմբով: Իսկ երբ ատոնց կմիանա զգեստավորում, երեխաներուն զվարճությունը կքառապատկվի, որովհետև փոքրիկներուն ալ ամենեն սիրած բաներեն մեկն է ինքն իր անձեն դուրս գալը, բարեկենդան խաղալը, ուրիշ բան մը դառնալը և ան ալ մանավանդ աղվոր գույներով, ծաղիկներով և տարօրինակ հագուստներով զարդարված:

Այս հինգ տեսակի շարժում-խաղերը հաճախ հյուսված են երգի կամ երգանման ասույթներու. մեկ քանի տեսակներն ալ արդեն հատկապես կապված են երաժշտության, կկատարվին նվագի մը տված ռիթմով ու ոգևորությամբ, իսկ պլաստիկ կոչվող պարերը կձգտին արդեն ուղղակի եղանակին արտահայտել ուզածը մարմնավորել մարմնի զանազան շարժումներու միջոցով:

Շարժում-խաղերուն պետք է դասել նաև պատույտները, մոտիկ ու հեռու, մեկ-երկու պահով կամ ամբողջ օրով բնության գիրկը, պատմական վայր մը, գործարան մը, դիտարան մը՝ ըլլա պարզ պտույտի համար, ըլլա ծովու ու անտառի օդի համար, ըլլա բան մը տեսնելու որոշ դիտավորությամբ:

Ե. ԽԱՂՆ ՈՒ ՄԱՐԶԱՆՔԸ ԴՊՐՈՑԻՆ ՄԵՋ

Տարրական նախակրթարանի մեջ ու բարձր նախակրթարանի առաջին երկամյակին խաղ ու մարզանքի համար առանձին պահեր պիտի ըլլան դպրոցական ծրագրին մեջ, որ հատուկ

ուշադրությամբ որոշ կերպով ու հաջորդականությամբ կատարվին, որ չձգվին պատահականության և աշակերտներու ազատ տրամադրության:

Եթե բոլորովին ազատ ձգվի, անոնց դիտցած խաղերը կըլլան սահմանափակ և ո՛չ ամեն անգամ հաջող ու ցանկալի տեսակին: Եվ չեն խաղացվիր ո՛չ այն կանոնավորությամբ, որ անհրաժեշտ է, ո՛չ ալ այն նրբությամբ, ճկունությամբ ու վայելչությամբ, որ խաղը դիտողներուն հրապույրը կկազմե: Եվ շատ-շատերը գործնականապես գրեթե կդրկվին շարժում-խաղերե՝ բնականեն հակամետ չըլլալով խաղի մեջ նետվելու:

Ամենեն հարմարն է այդ տարիքին համար մարզանքը զատել բուն խաղեն: Մարզանքի համար նշանակել քանի մը կարգեր միասին շաբաթական երեք անգամ քանոնական վայրկյան առաւոտները դասերեն առաջ օրընդմիջ. կեցվածք, քալվածք, շարք, սիսթեմատիկ շարժումներ ձեռքերու, ոտքերու ու մարմնի ճիշդ, նուրբ ու կանոնավոր գործադրությամբ:

Եվ նշանակել տարրական նախակրթարանի առաջին երկամյակի համար երկու կարգերուն միասին շաբաթական երեք անգամ իրիկունները, բոլոր դասերեն ետքը նորեն քանոնական վայրկյան զանազան տեսակի խաղերու վարժեցնելու համար:

Տարրական երկրորդ երկամյակի աշակերտներն ալ նորեն միասին կունենան շաբաթական երկու անգամ նույն նպատակով: Բարձր նախակրթարանի առաջին երկու կարգերուն համար ավելի հարմար է լրիվ պահ մը շաբաթը անգամ մը, նորեն վերջին պահուն, և աղջիկներն առանձին, տղաներն առանձին:

Պետք է ունենալ ամեն տեսակի շարժում-խաղերու լայն ընտրություն, որ շուտ-շուտ փոխվի, և՛ օգուտի, և՛ զվարճության տեսակետեն: Պետք է խուսափիլ բոլոր վտանգավոր խաղերեն, կոշտ ու անքաղաքավարի դիրքեր ու շարժումներ ունեցող խաղերեն, վայտով, քարերով և այլ «զենքերով» խաղերեն, հաղուստները ապականող և իրար քաշքշող խաղերեն, իրարու մեջք հեծած կամ իրարու վրայեն ցատկող խաղերեն, ծնծ ու ծնծկվուք խաղերեն, պոռացող, ոռնացող և շատ աղմկարար խաղերեն: Շատ մեծ արժանիք է խաղը վայելչությամբ կատարելը:

Իսկ բարձր նախակրթարանի կեսեն այլևս ավելորդ է խաղն ու մարզանքը դպրոցական ծրագրին մեջ պահելը: Ո՛չ խաղը կվնասէ, ո՛չ ալ պետք է մարզանքը դադրի, այլ դուրս պիտի գա միայն դասերու պարտադիր շարքեն: Տղաքն ու աղջիկները իրենք պետք է կազմակերպեն խաղերը, անշուշտ վերին լսարանցիներու ղեկավարութեամբ. կրնան ըլլալ մեկ-երկու խումբ, և միշտ տղաքն առանձին և աղջիկներն առանձին: Դպրոցը պետք է դրդէ, նպաստէ ու հարմարութիւններ տա, անհրաժեշտ է բաց դաշտ ոտքի գնդակի և զանազան վազքի խաղերու համար, տեղ ու հարմարութիւն զամբյուղ-գնդակի և ցանց ու գնդակի համար: Ամեն խումբ չաբաթվան մեջ իր որոշ օրերը կունենա, կունենա իր վարչութիւնը, որ անշուշտ կրնա օգտվիլ ուսուցիչներու խորհուրդներեն և պետք է վավերացված ըլլա դպրոցի վարչության կողմեն:

Գալով նեղ մտքով մարզանքին՝ կատարվելիք մարմնական շարժումները, այդ շարժումները կատարելու եղանակը և անոնց առողջապահական արժեքը պետք է գիտնան ամենքը մինչև բարձր նախակրթարանին կեսը: Պետք է ըմբռնել տալ, պետք է պնդել ու դրդել, որ ամեն մեկը տունը առտուն տաս-տասնհինգ վայրկյան սովորութիւն դարձնե հիմնական քանի մը շարժումները կրկնելու բաց պատուհանով և շատ ազատ ու թեթև հագված: Եվ բնականաբար ամեն մեկը ընթացք կուտա շարժումներու այն խումբին, որ իր կազմին ու իր առողջական պայմաններուն ավելի անհրաժեշտ են, միշտ ալ բժիշկի խորհուրդով:

Պուլյոնները դպրոցական կյանքի ամենեն աղվոր մեկ մասը կկազմեն՝ ըլլա դպրոցի կողմեն կազմակերպված, ըլլա ընկերական ավելի ազատ խումբերով. թե՛ ավելի հաճախակի, սովորական ու մոտակա շրջագայութիւնները և թե՛ երկար քալվածքով, ճաշով ու պատրաստութեամբ, ինչպես և շատ ավելի հեռավոր գյուղերը՝ գիշերները դուրսը մնալով: Մեծ հաճույք են բոլորն ալ, ընկերական սերտ շփում և առատ դիտողութիւններու ու տպավորութիւններու աղբյուր, մտերմութիւն բնութեյան հետ և մոտիկ ծանոթութիւն իր հայրենի հողին ու ջրին: Միայն թե փորձված մեկու մը խորհրդովը, առաջվընե ամեն ինչ մտածված, նախատեսված ու հոգացած ըլլա հնար եղածին չափ անտեղութիւններու առջևը առնելու համար:

Խաղ ու մարզանքի նման բան մըն է նաև դպրոցական աշխատանքներուն կից արհեստի մը հետևիլը՝ կազմարարութիւն, ատաղձագործ, երկաթի գործ կամ ուրիշ՝ մասամբ մկանային աշխատանք ունենալու համար, մասամբ իբրև փոփոխութիւն ու ժամանց, մասամբ ալ գուցէ կեանքի ու ապրուստի համար պետքի եկող բան: Մանաւանդ անոնք, որ դեղարվեստի մը չեն հետևիր, լաւ է, որ այս կարգի աշխատանք մը ունենան, և ամենեն լաւն է բուն, իրական աշխատանոցի մը մեջ: Տունը կամ դպրոցը կազմակերպված այս կարգի արհեստանոցները միշտ ալ խաղալիքի տպաւորութիւն կընեն, կարծես կտրված ըլլան կեանքեն: Այս արհեստներու շարքը պետք է դնել նաև հողի աշխատանքը, այգիի ու պարտէզի խնամքը, որոնք բոլորն ալ խիստ հանճնարարելի, առողջ ու օգտակար, հրաշալի զբաղումներ են:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկա հատորն ընդգրկում է Լևոն Շանթի մանկավարժական աշխատությունները, որոնք 2 հատորով տպագրվել են Բեյրութում (Լևոն Շանթի երկերը, հ. 6-րդ, Կրթությունը ընդհանրապես, Պեյրութ, 1951, հ. 7-րդ, Ուսում և կրթություն դպրոցական, Պեյրութ, 1952: Այս 2 հատորները Բեյրութում նույնությամբ հրատարակվել են նաև 2008 թվականին): Երկու հատորների տիտղոսաթերթերում էլ գրված է. «Գրված է ու դասախոսված Պեյրութի Հայ ճեմարանին մեջ 1933– 1950 թվականներուն»: Բացի այս 2 հատորից, ժամանակին մամուլում տպագրվել են նաև հոդվածներ՝ «Կրթության էությունը և տեսակները» («Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1923, թ.1, էջ 88-109, թ.2, էջ 107-125), «Կյանքի դպրոցը» («Հայրենիք», 1924, թ.10, էջ 92–99, թ.11, էջ 90-97, թ.12, էջ 86-95), «Ընդհանուր կրթություն և ինքնաշխատություն» («Հայ վարժարան» ամսագիր, Կահիրե, 1926, թ. 4, էջ 98-102, թ.5, էջ 137-140): Հոդվածների և հատորների տեքստերի համեմատությունից երևում է, որ հոդվածները որոշ փոփոխություններով տեղ են գտել Լևոն Շանթի երկերի 6-րդ հատորում:

Մեկ անվերնագիր հոդված էլ տպագրվել է «Ակոս» ամսագրի 1952 թ. 2-3-րդ միացյալ համարում (էջ 158-164), որը բառացիորեն համընկնում է ներկա հատորի 545-553 էջերի տեքստին (այսինքն՝ տեղ է գտել Շանթի երկերի Բեյրութի հրատարակությունների 7-րդ հատորում, էջ 168-175 և 179-185): «Ակոս» ամսագրում հոդվածից վեր տպագրված է. «Անտիպ հատված մը մանկավարժական այն հատորեն, որուն ամբողջացման համար Լ. Շանթ աշխատեցավ մահվան անկողնին մեջն անգամ, հևիհև, մինչև 16 նոյեմբեր, իր պայծառ գիտակցության մթագնումը»:

Լևոն Շանթը ոչ միայն տաղանդավոր գրող էր, այլ նաև ականավոր քաղաքական գործիչ և մանկավարժ: Նրա մուտքը մանկավարժության ասպարեզ տեղի է ունեցել 1891 թ., Ռոդոսթոյի Ազգային վարժարանում: «Ակոս» ամսագրի 1952 թ. Շանթին նվիրված բացառիկ համարում (թ. 2-3) այսպես է ներկայացված այդ իրողությունը. «Առաջին օրը, տեսչարանին մեջ, դպրոցին

հոդաբարձությունն ու թաղականները կոպասին ընդունելու ավագ ուսուցիչը, երբ նրան կմտնի 22-ամյա Լևոն Շանթը՝ նիհար ու միջահասակ: Ոչ մորուք, ոչ բեղ և ոչ այլ ակնոց, ինչպես կոպասին հյուրընկալները, ու կոտրակուսան: Բայց որքան օրերը կանցնին, այնքան ավելի խոր կըլլա իրենց հիացումն ու գնահատումը: Աշակերտներն անգամ, որոնց հետ Լևոն Շանթ կսիրև խաղալ «գնդի» խաղը, կսիրեն, բայց կհարգեն նաև զրեթե իրենց տարեկից այդ երիտասարդը, որ ընկերը մըն է իրենց առանց ավագ ուսուցիչի պատվանդանին վար իջնելու: Կպաչտոնավարե այդ հաստատության մեջ հազիվ 2 տարի» (էջ 8-9): Հետագայում երկար ընդմիջումից հետո Շանթը դարձյալ զբաղվել է մանկավարժությամբ. 1906-1908 թթ. պաշտոնավարել է Թիֆլիսի Գայանյան դպրոցում որպես տեսուչ, 1908-1910 թթ. դասավանդել է Երևանի թեմական դպրոցում, իսկ 1911-ին՝ Պոլսի Կեդրոնական և Եսայան վարժարաններում: Դարձյալ բավական երկար ընդմիջումից հետո Շանթը կրկին վերադարձել է մանկավարժության տալարելով 1924 թ.: Այդ թվականից մինչև 1925 թ. նա դասավանդել է Մարսելում, 1926-ին տեղափոխվել է Ալեքսանդրիայի Պողոսյան Աղգային վարժարան, և, ի վերջո, 1929 թ. Լ. Շանթը և Նիկոլ Աղբալյանը Բեյրութում հիմնել են Հայ ճեմարանը, ուր Շանթը աշխատել է մինչև 1951 թ.՝ մինչև իր մահը:

Լ. Շանթը եղել է սիրված ու հարգված մանկավարժ, հմուտ ղեկավար և կրթական գործի կազմակերպիչ: Որտեղ էլ որ նա աշխատել է, նրա առաջին հոգսը եղել է հայ երեխաներին հայեցի կրթություն տալը: Դա հատկապես երևում է Հայ ճեմարանի գործունեությունից, որը բացման օրից եղել և այսօր էլ մնում է Մերձավոր Արևելքում հայեցի կրթության լավագույն օջախներից և հայապահպանման կարևորագույն կռվաններից մեկը: 1929-1951 թթ. Շանթը եղել է ճեմարանի տեսուչը (1929-1947 թթ.՝ Ն. Աղբալյանի հետ), միաժամանակ ճեմարանում դասավանդել է տարբեր առարկաներ, այդ թվում մանկավարժություն: 1933-1950 թթ. կարդացած նրա դասախոսությունները 1950-ին հավաքվեցին, խմբագրվեցին (1-ին հատորը Շանթի կողմից) և հրատարակվեցին 1951 և 1952 թթ.:

Շանթի մանկավարժական հատորները բարձր են գնահատվել և՛ անցյալում, և՛ հիմա: Ավելորդ չէ մեջբերել Լ. Շանթի աշակերտներից մեկի՝ սիւռւռքահայ տաղանդավոր բանաստեղծ Մուշեղ Իշխանի խոսքը իր ուսուցչի և նրա մանկավարժական դրքերի մասին. «Մանկավարժական գիտութեան մեջ եթե Շանթ հեղաշրջող միտք մը չէր, հեղափոխական մը եղավ սակայն և շատ հանդուգն հեղափոխական:

Կարդացեք մանկավարժութեան նվիրած իր գեղեցիկ հատորը. ղարմանքով պիտի տեսնեք, թե հոն արծարծված բոլոր գաղափարները մեր ժամանակներու ամենեն արդիական ըմբռնումներու հետ կքալեն: Անցյալի կրթական սովորամոլութեանց մեջ ոչ մեկ համեցում, ոչ մեկ հնաբույր նախադասութեուն:

...Շանթի մանկավարժական տեսութեունները որքան ալ ականավոր հեղինակներու ընթերցումին շատ բան պարտական ըլլան, կյանքեն քաղված ըլլալու և ուղղակիորեն կյանքին կապվելու ղորութեունը և կենդանութեունը ունին իրենց մեջ:

Իսկ մանկավարժական գիտութեան նվիրված իր 2 հատորները... կրթական երևույթները կընդգրկեն իրենց բոլոր երեսներով, իբրև կյանքի և ընտանիքի կրթութեուն, իբրև ինքնակրթութեուն և իբրև դպրոցական կրթութեուն: Այս իմաստով առաջին լուրջ և ամբողջական ձեռնարկը կկազմեն մեր մեջ, հայ մանկավարժի մը կողմե գրի առնված» (Մուշեղ Իշխան, Երեք մեծ հայեր, Լևոն Շանթ, Պեյրութ, 1952, էջ 90,91,92):

Լևոն Շանթը իր ձեռքով խմբագրել, պատրաստել է մանկավարժական աշխատութեունների առաջին հատորը (երկերի 6-րդ հատորը, ներկա հրատարկութեան 25-347 էջերը), իսկ երկրորդը վերջնականապես խմբագրելուն նրան խանգարել է հիվանդութեունը: Ճշմարիտ մտավորականն ու մարտիկը, մինչև վերջին օրերը պայքարելով անողոք հիվանդութեան դեմ, ձեռքից բաց չի թողել գիրքն ու երբ անկարող է եղել գրիչ բռնելու, փորձել է թելադրելով ամբողջացնել հատորը. «Հիվանդութեան երկարատև շրջանին, տատապանքի և աստիճանական չիջումի անհույս օրերուն անգամ գիրքն ու գրիչը ձեռքեն չճգեց երբեք: Իսկ երբ անկարող էր այլևս գրիչ շարժելու, փորձեց թելադրելով աշխատիլ և անպայ-

ման ավարտել մանկավարժության երկրորդ հատորը, որ կիսատ մնացած իր վերջին գործն էր» (Մուշեղ Իշխան, վերը նշված գիրքը, էջ 78):

Գրողին օգնել է Պարգև Շերինյան անունով մի երիտասարդ ճեմարանի սաներից, որը գրի է առել նրա թելադրածը: Հետագայում այդ երիտասարդը, նկարագրելով իր աշխատանքը Լ. Շանթի հետ, գրել է. «Պետք է ըսեմ, որ Լևոն Շանթ իր մանկավարժության այս երկրորդ գրքի առաջին երկու սևագրությունը կատարած էր: Կալակաւեին քանի մը գլուխներ, որոնք նոթագրած էր պզտիկ թղթիկներու վրա: Մեր աշխատանքը վերջին սևագրությունն էր, սրբագրությամբ և լրացումներով, և համաձայն իր ցուցմունքներուն ու շարադասումին՝ պետք էր մաքուր և վերջնական արտագրեի ամբողջ հատորը՝ ստուգումները կատարելով» (Պարգև Շերինյան, Լևոն Շանթի վերջին աշխատության օրագիրը, «Ակոս», 1952, թ.2-3, էջ 227): Աշխատանքը, սակայն, չի ավարտվել, քանի որ սկսելուց կարճ ժամանակ անց՝ նոյեմբերի կեսերին, Շանթը վերջնականապես կորցրել է գիտակցությունը: Դա հաստատում է նաև գրողի որդին՝ Սուրեն Շանթը, որը երկերի 7-րդ հատորի սկզբում այդ առիթով տվել է հետևյալ ծանոթագրությունը. «Հանգուցյալ հայրս այս հատորի պատրաստությանը աշխատիլ սկսավ իր հիվանդության ծանր օրերուն: Մինչև մահը անկողնեն կրցավ թելադրել առաջին 4 հատվածները միայն: Մնացյալ հատվածները իր թողած ձեռագիրներն են, որ եղածին պես հանձնած եմ տպագրության: Բայց, դժբաղդաբար, հայրս պետք եղած ուժն ու ժամանակը չունեցավ կատարելու իր ծրագրած ընդլայնումները և ամբողջ գործը ենթարկելու վերջնական սրբագրության: Իր իսկ պահանջքին վրա այս կետը կհանձնեմ ընթերցողի ուշադրության» (Լևոն Շանթի երկերը, հ.7, էջ 5):

Ներկա հրատարակության տեքստը պատրաստելիս կատարվել են ուղղագրական և կետադրական չնչին փոփոխություններ, ճշտվել են բազմաթիվ վրիպակներ: Օտարաբեղու բոլոր բառերը, որ օգտագործել է Շանթը, հիմնականում թողնված են նույն տառադարձությամբ, ինչպես, օրինակ, ալճեպրա (հանրահաշիվ), տիսսիպլին (կարգապահություն), պյուտճե, պյուտճեական,

փունկսիոն (գործառույթ), օթո (ավտոմոբիլ), չիմի (քիմիա), նոթերը (նոտաները), քոնսեր (համերգ), սոլֆեժ (սոլֆեջիո), սինեմա (կինո) և այլն:

ԷՀ 61, տող 8 ն.: «Հազար ու մեկ գիշերներ»...–միջնադարյան արաբական հեքիաթների ժողովածու, որը լայնորեն հայտնի է աշխարհում:

ԷՀ 76, տող 13-14, 17-18: ...Աստվածային հին վճիռը՝ «Եվ եղիցին երկոքեան ի մարմին մի» - Ծննդոց, Բ, 24-25:

«Եվ եղիցին երկոքեան ի հոգի մի»՝ Շանթի հավելումն է:

ԷՀ 91, տող 3 ն.: «Ոտիսական» («Ոդիսական») - անտիկ հույն բանաստեղծ Հոմերոսի (մ.թ.ա.IX դ.) հանրահայտ պոեմը:

ԷՀ 164, տող 2: ... Կամ Տանցիգ քաղաքը հիշելու համար - Տանցիգ (Դանցիգ)՝ լեհական Գդանսկ քաղաքի գերմանական (նախկին) անունը:

ԷՀ 166, տող 3-6: ... Թե երևակայությունը ինչպես է ստեղծեր ... դժոխքներ, եղիսյան դաշտեր և երկնային արքայություններ - եղիսյան դաշտեր՝ ըստ հունական առասպելների՝ երանելյաց դաշտեր, ուր չկան փոթորիկ և վատ եղանակ, և ուր մահվանից հետո տեղափոխվում են հերոսների և բարեպաշտ մարդկանց ստվերները:

ԷՀ 184, տող 10: ... Հետ նայվածքներու, նույնիսկ Հալածանքի ու թշնամանքի -Հետ՝ կոչտ, խոժոռ:

ԷՀ 235, տող 11-13 ն.: ... Բոլորովին թարմ մանուկները «պապուվկի», «խառախոնճոլոսի» և նման ապուշություններով վախցնելը- պապուկ՝ մուրացկան, խեղճ ծերուկ, խառախոնճոլոս՝ ինչ-որ (առասպելական) կենդանի է:

ԷՀ 249, տող 2: Մինչ մասնագիտական վարժարաններու ջամբած ուսումը շատ ավելի դյուրին ըմբռնելի բան մըն է - ջամբած՝ ներարկած, տված:

ԷՀ 296, տող 4: ...Պուպրիկներու թատրոն - պուպրիկ՝ տիկնիկ, խամաճիկ:

ԷՀ 324, տող 6-7 ն.: ... Տասը վայրկյանի դադարով մը պետք է ընդմիջվի -այստեղ, ինչպես և հետո մի քանի այլ տեղերում վայրկյան ասելով Շանթը նկատի ունի րոպեն:

Էջ 367, տող 7: ... Նույնիսկ վեթոյի իրավունքով - վեթո (լատ. veto)՝ արգելում եմ:

Էջ 385, տող 2-3 ն.: Կաթոլիկ փրերը իր նման գործակիցներ միայն կառնեն իր հաստատության մեջ .... - Փրեր՝ եղբայր (գերմ.):

Էջ 385, տող 1 ն.: Այսպես ալ «լայիք» դպրոց մը ... - լայիք՝ աշխարհիկ (փր.):

Էջ 406, տող 5 ն.: ...Ներկվիլ, փոշի գործածիլ, անքուվիլ... - անքուվիլ՝ պչրել, ծևքծևքել:

Էջ 471, տող 11: ...Ուր տղաքը կատանան միշտ ամեն բան պատրաստ և մինչև քանի-քանմեկ տարեկանը կմնան պոնպոլոշ - պոնպոլոշ՝ տհաս, թերաճ, թերզարգացած:

Էջ 499, տող 4-8 ն.: ...2) Արթին ամիրա, 3) Ներսես Աշտարակեցի, 4) Ներսես Վարժապետյան և Խրիմյան Հայրիկ, 5)Սասունի ապստամբությունը՝ Հրայր ու Գևորգ Ջավուշ, 6)Արամ Վանի և Երևանի, Վանի հերոսական դիմադրությունը և Երևանի մեջ հայ պետականության հիմնվիլը - Արթին ամիրա՝ Շանթը նկատի ունի Պեզճյան Հարություն ամիրային, որը XIXդ. I կեսում մեծ հարգանք էր վայելում իր ազգանպաստ գործունեության համար (տե՛ս Ա.Պերպերյան, «Պատմություն հայոց», Կ.Պոլիս, 1871, էջ 202-203, 247-248, 251-258):

Ներսես Աշտարակեցի (1770-1857)՝ հայոց կաթողիկոս 1843-ից, նշանավոր եկեղեցական, հասարակական և ազգային ազատագրական շարժման գործիչ:

Ներսես Վարժապետյան (1837-1884)՝ հայ եկեղեցական, հասարակական- քաղաքական գործիչ, Կ.Պոլսի հայոց պատրիարքը 1874-ից:

Խրիմյան Հայրիկ, Մկրտիչ Խրիմյան (1820-1903)՝ հայոց կաթողիկոս 1892-ից, նշանավոր կրոնական և հասարակական-քաղաքական գործիչ:

Սասունի ապստամբությունը՝ Հրայր և Գևորգ Ջավուշ - Հրայրը (Հրայր Դժոխք, Արմենակ Ղազարյան, 1864-1904) և Գևորգ Ջավուշը (1870-1907) արևմտահայ ազատագրական պայքարի, մասնավորապես Սասունի ինքնապաշտպանության (1895 թ.) նշանավոր դեմքերից են:

Արամ Վանի և Երևանի - խոսքը Հայոնի քաղաքական գործիչ, Հայաստանի առաջին հանրապետության փաստացի ստեղծող Արամ Մանուկյանի մասին է (Սարգիս Հովհաննիսյան, 1879-1919):

Վանի հերոսական դիմադրությունը-1915 թ. ապրիլ-մայիսին Վանի հայերը մեկ ամիս հերոսաբար դիմադրեցին թուրքական զորքին և անկանոն հրոսակախմբերին, մինչև որ օգնության եկան ռուսական զորքն ու հայ կամավորականները: Վանի հերոսամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի ամենափայլուն էջերից է:

Երևանի մեջ հայ պետականության հիմնվիլը -1918 թ. մայիսի 28-ին՝ Սարդարապատի ճակատամարտից հետո, Հայաստանը առաջին անգամ հռչակվեց անկախ Հանրապետություն:

էջ 524, տող 9-10: Այդ ուղղությամբ առաջին մեծ քայլը ըրավ Ղազարոս Աղայանը, որուն այբբենարանը ամեն դասին միայն մեկ նոր տառ մը կուտա - Շանթը նկատի ունի Ղ. Աղայանի «Ուսումն մայրենի լեզվի» այբբենարանը, որը ավելի քան 40 տարի (1875-1916) եղել է ամենատարածված այբբենարանը հայ դպրոցներում:

էջ 524, տող 18-19: Այս ձևով կազմված է «Լուսաբեր» այբբենարանը Ստ. Լիսիցյանի, Հովհ. Թումանյանի և իմ խմբագրությամբ - խոսքը «Այբբենարան և առաջին ընթերցարան» գրքի մասին է (1 հրատ.՝ Թիֆլիս, 1907):

Ստեփան Լիսիցյան՝ հայ բանասեր, պատմաբան, մանկավարժ, ազգագրագետ (1865-1947), Շանթի մտերիմ բարեկամներից մեկը:

էջ 526, տող 1: ...Ես ավելի մանրամասն բացատրած եմ «Կարդալ-գրել սորվեցնելու եղանակը» գրքիս մեջ - Շանթը ակնհայտորեն նկատի ունի իր «Հայերենի գրավոր դասեր» գիրքը, Փարիզ, 1927 թ.:

էջ 526, տող 7: ...Իմ նոր կազմած «Մանկական աշխարհ» այբբենարանին մեջ -Ա գիրք, Բոստոն, 1928:

էջ 531, տող 7-8: ...Վերջավորությունները սխալ կարդալու և ամբողջը լպրտելու - լպրտել՝ արագ սահելով անցնել:

Էջ 617, տող 15-18: «Նալ և Դամայանտի»,«Ջինպատ նավորդը», «Պրոմեթեոս», «Ոսիսևս»,«Աչխարհի ստեղծումը», «Ջրհեղեղ», «Հովսեփ Գեղեցիկ», «Դավիթ ու Գողիաթ» և նման շատեր - «Նալ և Դամայանտի»՝ Նալը հին հնդկական արքա է, Դամայանտին նրա կինը: Նրանց սիրո մասին պատմող պոեմը «Մահաբհարաթայի» մասերից մեկն է (XVIII, 291):

«Ջինպատ նավորդը»-երևի Շանթը նկատի ունի Սինդիբադ ծովագնացի հեքիաթը արաբական «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթների ժողովածուից:

Պրոմեթեոս, Ոսիսևս (Պրոմեթևս, Ոդիսևս)՝ հին հունական դիցաբանության մեջ հայտնի հերոսներ են:

«Աչխարհի ստեղծումը», «Ջրհեղեղ», «Հովսեփ Գեղեցիկ», «Դավիթ ու Գողիաթ»՝ աստվածաշնչյան հայտնի այուժեներ (Ծննդոց, Ա,Բ,Զ,Ը, Լէ-Ծ, Ա թագավորաց, ԺԷ):

Էջ 617, տող 7 ն.: Եզովպոսի, Լաֆոնտենի, Քռիլովի առակներեն ... - Եզովպոս՝ հույն առակագիր (մ.թ.ա. VI դար):

Լաֆոնտեն՝ ֆրանսիացի բանաստեղծ, առակագիր (1621-1695), որը 1668- 1694 թթ. հրատարակել է առակների 12 գիրք:

Քռիլով (Կռիլով)՝ ռուս առակագիր (1769-1834):

Էջ 617, տող 4 ն.: ...Ամիչխի «Սիրտը», Տուռի «Լրտես տղան» - Ամիչխ՝ Էդմոնդո դե Ամիչխ (1846-1908), իտալացի հայտնի դրող, նրա «Սիրտը» վիպակը (1886) գրված է դպրոցականի օրագրի ձևով:

Տուռի (Ալֆոնս Դոդե, 1840-1897), ֆրանսիացի դրող:

Էջ 630, տող 12: Ծովային խոտեր, խեցիներ ու ժժմակներ ... - ժժմակներ՝ ջրային և ցամաքային ճճի, պեռուն, սողուն (ՆՀԲ):

Էջ 630, տող 11-12 ն.: ...Բանիլ քանզայի վրա ըստ օրինակի - քանզա՝ մի տեսակ կտոր ասեղնագործելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լեւոն Շանթի մանկավարժական հայեացքները 5
Կրթութիւնը ընդհանրապես 25
Ուսում և կրթութիւն դպրոցական 349
Ծանոթագրութիւններ 685

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՈՒՍՈՒՄ ՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ

Համակարգչային շարվածքը և էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր՝ N 370
Հանձնված է արտադրության՝ 10.07.2012թ.:
Չափսը՝ 60 x 84 $^{1}/_{16}$: Թուղթ՝ օֆսեթ N 1:
43,5 տպագր. մամուլ: Տպաքանակը 500 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Բաղրամյան 24:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0224695

II
A98297